ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅ ՀԱՐԱՆՑ

(ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ)



ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ



ՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանություն գրաբարից

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

2016

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Ս 970

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
Թարգմանիչներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ (Նանա)
Գրիգորյան, Վաղարշակ Թանգամյան
Խմբագիրներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան,
Սիրանուշ (Նանա) Գրիգորյան
Լեզվաոճական խմբագիր և սրբագրիչ՝ Արմինե Սահակյան

Ս 970 ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ: Թարգմ. գրաբարից/Թարգմանիչներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ (Նանա) Գրիգորյան, Վաղարշակ Թանգամյան; խմբագիրներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ (Նանա) Գրիգորյան; Լեզվաոճական խմբագիր և սրբագրիչ՝ Արմինե Սահակյան.-Սուրբ Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2016.
Հտ. Ա: - 600 էջ:

Ժողովածուի ներկա աշխարհաբար թարգմանությունն իրականացվել է միայն ժողովածուի՝ «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց»-ի (Վենետիկ, 1855) կորիզը կազմող «Բանք եւ պատմութիւնք հարանց» հատվածի համար: ԺԹ գլուխներում ամփոփված վանական-անապատական բարոյախոսությունն ըստ այսմ յուրահատուկ մի թեմատիկ ուղեցույց է բոլոր նրանց համար, ովքեր փափագն ունեն անապատական հայրերի հոգեւոր փորձառությանը ծանոթանալու եւ դրանք առօրյա կյանքում իբրեւ լուսաբանող օրինակներ ունենալու: Յուրաքանչյուր գլխի ներսում կատարվել են համապատասխան պարբերությունների թվաբաժանումներ՝ ընթերցանությունն ավելի հեշտացնելու նպատակով: Թարգմանվել են թե՛ առաջին եւ թե՛ երկրորդ թարգմանության բնագրերը, ինչպես նաեւ երկրորդ թարգմանության «մնացորդք»-ները՝ իբրեւ «Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից»: Այսու թարգմանիչների հիմնական նպատակն է եղել ընթերցողին հասանելի դարձնել գրաբար թարգմանությամբ մեզ հասած այս ժողովածուի բոլոր հատվածները:

Լիահույս ենք, որ ժողովածուի նմանատիպ առաջին թարգմանությունը պիտի ծառայի իր նպատակին:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-171-1
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Անապատի հայրեր» հասկացությունը Վաղ քրիստոնեական եկեղեցու պատմության ամենակարևոր և միևնույն ժամանակ ամենաքիչ ուսումնասիրված հատվածներից է: Ինչո՞ւ քիչ ուսումնասիրված, որովհետև հիմնականում անապատական և վանական հոգեկանությունը ոչ այնքան աստվածաբանական-վարդապետական և կամ քաղաքական հայացքներին, որքան հավատացյալի ներքին՝ հոգևոր աշխարհին վերաբերող մի իրողություն է: Ըստ այսմ, այն կարիք չունի պատմական ճշգրտումների, դավանական-վարդապետական հարցերի մասին հստակեցումների…. անապատի հայրերի իմաստությունն ու խրատը կարդացվում են պարզապես, որովհետև դրանք կենցաղից, առօրյայից վերցված հասարակ օրինակներով մարդուն կարող են հասցնել հոգևոր կյանքի բարձրագույն ոլորտների: Հենց այս փաստի մեջ է թաքնված եկեղեցու պատմության մեջ անապատի հայրերի թողած ժառանգության գաղտնիքը. այստեղ կարևոր չեն ոչ հեղինակը, ոչ գրվածքի թվականը կամ դարաշրջանի համատեքստը, ոչ էլ առավել ևս բնագրական-գիտական հստակությունը: Քրիստոնեական ոգեկանության անզուգական գանձ նկատվող այս ժառանգությունն ընթերցվում է ինքնին, իբրև հարատև արդիականացող և երբեք իր ժամանակակից ոգին չկորցնող կյանքի ուղեցույց:

Սակայն սա բնավ էլ չի կարող նշանակել, որ «Վարք հարանց» ժողովածուի հրատարակությունը պետք է վերարտադրվի այնպես, ինչպես սովորաբար արվել է նոր ժամանակներում՝ ԺԷ և ԺԸ դարերում հրատարակվելով առանց համապատասխան ճշգրտումների[1]: «Վարք

[1] «Վարք հարանց»-ի առաջին տպագրությունը կատարվել է 1641 թ. Խաչատուր Կեսարեցու հիմնած տպարանում՝ Նոր Ջուղայում, եւ ունի բավական երկար խորագիր. «Ցանկ Է: Գլխաւոր բանից: Հարանց վարուց սուրբ գրոց: ….ի քաղաքն Շոշ, որ է Սպահան, յանապատն Նոր Ջուղայոյ»: Երկրորդ հրատարակությունն իրականացել է 1720-1723 թթ., Կոստանդնուպոլսում՝ «Գիրք որ կոչի Վարք հարանց»: Այս վերջինի լուսապատճեն վերահրատարակությունը լույս է տեսել բոլորովին վերջերս, տես «Վարք հարանց», Երուսաղէմ 2012:

հարանց» ժողովածուի համեմատաբար խնամված և ճշգրտված, առավել ամբողջական ու լիակատար հրատարակությունն իրականացել է Վենետիկում, 1855 թ., Ն. Սարգսյանի ձեռամբ[1]: Հենց այս վերջին հրատարակությունն է, որ մեզ քիչ թե շատ ամբողջական տեղեկություն է հաղորդում ժողովածուի՝ հայերեն թարգմանության և վերջնական խմբագրման վերաբերյալ[2]:

2. «Վարք հարանց» ժողովածուն ստեղծվել է արդեն Դ դարի կեսերից Եգիպտոսի անապատներում ծավալվող անապատական-ճգնակեցական շարժման արդյունքում առաջացած յուրահատուկ դասակարգի՝ անապատականների կամ միայնակյացների կողմից: Անապատականության առաջացման աշխարհագրական սահմանները տարածվում էին հիմնականում Հյուսիսային Աֆրիկայի անապատներում, որոնք այդ ժամանակաշրջանում կազմում էին Հռոմեական կայսրության այսպես կոչված Աֆրիկյան տարածքները: Անապատականության նշանավոր կենտրոններ էին Ալեքսանդրիայի շրջակայքում և Նեղոսի հովիտով ձգվող անմարդաբնակ անապատները: Միջերկրական ծով թափվելու Նեղոսի լայնածավալ հովտում շատ շուտով առաջանում են մի քանի խոշոր վանական-անապատական քաղաքներ՝ *Նիտրիան*՝ Ստորին Նեղոսի արևմտյան գետաբերան-դելտայում, *Կելիան*՝ Ստորին Նեղոսի արևմտյան դելտայից դեպի հարավ-արևմուտք, և *Սկիթիան*՝ Ստորին Նեղոսի դելտայից դեպի հարավ: Դեպի վերին Եգիպտոս ձգվող տարածքներում, այնտեղ, որտեղ սկիզբ էր առնում Նեղոսը, առաջանում են ևս երեք նշանավոր կենտրոններ՝ *Փաբոն*՝ Վերին Նեղոսի արեւելյան ափից դեպի հյուսիս-արևելք, *Թեբեյան*՝ Վերին Նեղոսի արևելյան ափից դեպի արևելք, և *Ապրիպիան*՝ Վերին Նեղոսի արևմտյան գետաբերանին[3]:

---

1 «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», Ա-Բ հատորներ, Վենետիկ 1855:

2 Այստեղ պետք է նշել նաեւ Louis Leloir գիտնական-վանականի կատարած հայերեն «Վարք հարանց» ժողովածուի լատիներեն թարգմանությունը՝ առաջաբանով եւ ծանոթագրություններով՝ **Louis Leloir**, *Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita*, CSCO (*Corpus Scriptorum Christianorum Orientalium)*, t. I, vol. 353, subs. 42, 1974; t. II, vol. 361, subs. 43, 1975; t. III, vol. 371, subs. 47, 1976; t. IV, vol. 379, subs. 51, 1976, Louvain: Գրախոսության համար տես **L. Տեր-Պետրոսյան**, Պատմաբանասիրական հանդես 1 (1979), էջ 255-257:

3 Այս մասին տես W. Harmless, Desert Christians : An Introduction to the Literature of Early Monasticism, Oxford University Press, 2004, էջ 5-8:

Նեղոսի դելտաների և Կարմիր ծովի, ինչպես նաև Նեղոսի և Կարմիր ծովի միջև տարածված անապատներում ու անապատային տարածքներում ապրող այս մարդկանց մասին վաղ քրիստոնեական եկեղեցին առաջին անգամ պաշտոնական կերպով լսում է Դ դարի կեսերին, երբ մի քանի նշանավոր եպիսկոպոսներ իրենց ստեղծագործություններում որոշ անապատականների դասում են սրբերի շարքը, և ավելին, գրում նրանց վարքը՝ կատարելով անհրաժեշտ աստվածաբանական շեշտադրումներն ու հստակեցումները: Այսպես, մոտավորապես 356 թ. Թմուիսի եպիսկոպոս Սերապիոնը, Անտոն անապատականի աշակերտներին ուղղված իր նամակում, նրան հոչակում է «տիեզերաց բարեխօս երանելի Անտոն»[1]: Ալեքսանդրիայի մեկ այլ մեծանուն հայր՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացին, կերտում է անապատականության հիմնադրի՝ Ս. Անտոնի հոգևոր-գրական կերպարը՝ «Վարք Ս. Անտոնի» երկով (356-362 թթ.)[2]: Այստեղ նույնպես Անտոնը հոչակվում է վանականության և անապատականության կատարյալ օրինակ. «քանզի բաւական է առ ի գեղեցիկ օրինակ ի վարս միայնակեցութեան կրօնքն Անտոնեայ»[3]: Ըստ այսմ, արդեն Դ դարի երկրորդ կեսից Ս. Անտոնի անվան շուրջ ստեղծվում էր անապատական վանականության յուրօրինակ մի ավանդություն, որը հետագայում ծնունդ էր տալու եգիպտական վանականության նոր ձևերի և ավանդույթների:

3. Ընդհանրապես, եգիպտական վանականությունը զարգանում էր հիմնականում հետևյալ ձևերի մեջ:

Ստորին Եգիպտոսում (ներկայիս Եգիպտոսի հյուսիսում, Նեղոսի դելտայում) ավելի տարածված էր *hermit* կամ *միայնակեցական* վանականությունը, որի հիմնադիրն ու օրինակը համարվում էր Ս. Անտոնը (մահ. 356 թ.): Հենց նրան է վերագրվում «Բանք հարանց» ժողովածուի ստեղծումը[4]: Մեծ համարում ունեին նաև Ս. Անտոնի անունով պահպանված թղթերը, որոնք ըստ էության ամփոփում էին վանականության այս ձևի ավանդույթներն ու ոգեկանությունը: Սովորաբար Անտո-

1 Տես «Վարք սրբոց հարանց», էջ 81. «Թուղթ Սերեպիոնի սուրբ հօրն առ աշակերտս երանելոյն Անտոնի, առ Մակար եւ առ Ամատաս»: Հմմտ. նաեւ **René Draguet,** "Une lettre de Sérapion de Thmuis aux disciples d'Antoine (A.D. 356) en version syriaque et arménienne," Le Muséon 64 (1951), էջ 1–25:

2 Տես «Վարք սրբոց հարանց», էջ 17-80. «Վարք երանելոյն Անտոնի եգիպտացւոյ միայնակեցի եւ թուղթ Աթանասի»:

3 «Վարք սրբոց հարանց», էջ 18:

4 Տես "The Sayings of the Desert Fathers. The Alphabetical Collection", translated with a foreword by Benedicta Ward, SLG, Cistersian Publications 1984, էջ xviii:

նը համարվել է գրել-կարդալ չիմացող մեկը: Սակայն որոշ սկզբնաղբյուրների հավաստմամբ նա բազմաթիվ թղթեր է գրել վանական համայնքների և նույնիսկ՝ Կոստանդին Մեծ կայսեր և նրա որդիներին[1]: Ընդհանուր հաշվով Անտոն Մեծին վերագրվում են յոթ թղթեր, որոնք տարբեր սկզբնաղբյուրների տվյալներով գրվել են հիմնականում հին եգիպտերեն՝ ղպտերեն լեզվով[2]:

Վերին Եգիպտոսում՝ Թեբեյում կամ Թեբայիդում (ներկայիս Եգիպտոսի հարավում, Նեղոսի աջ և ձախ գետաբերաններին) տարածվում էր *coenobitic* կամ *համայնակեցական* վանականությունը, որի հիմնադիրն էր Պախոմիոսը (290-347): Այստեղ արդեն չկային մենակյացներ, որոնք հավաքվում էին հոգևոր հոր առաջնորդության ներքո, այլ յուրաքանչյուր վանական համայնք միացած էր համատեղ աշխատանքի ու աղոթքի մեջ: Պախոմիոսի վարքն ու նրա նամակները նույնպես կարևորագույն նշանակություն ունեցան հետագայի վանական կյանքի ձեւավորման ու զարգացման վրա[3]:

Եգիպտական վանականության երրորդ կարևոր ճյուղն այսպես կոչված *լավրայի* կամ *սկեթեի* վանականությունն էր: Վանական այս տիպին հիմնականում բնորոշ էր վանականների համայնակեցական ձևը, որոնք ապրում էին իբրև այս կամ այն աբբայի՝ հոգևոր հոր աշակերտներ: Վանական այս ճյուղի առավել նշանավոր ներկայացուցիչն էր Եվագր Պոնտացին (345-399): «Բանք հարանց» ժողովածուների մեծ մասը ծագել են հենց այս միջավայրում, քանի որ դրա մեջ նկարագրված կերպարների ճնշող մեծամասնությունը՝ Մակար Մեծ, Պամբո, Մովսես ևն, ապրել են վանական այս ավանդության մեջ[4]:

4. Ինչպես արդեն նշեցինք, վանական-անապատական ոգեկանության ձևավորման վրա մեծապես ազդել են տարբեր անապատական

---

1 Տես **W. Harmless,** նշվ. աշխ., էջ 78:

2 Տեղեկությունը հիմնականում պահպանվել է Հերոնիմոսի «Նշանավոր մարդկանց մասին» երկում, որտեղ նա Անտոնին համարում է իր ժամանակի ամենակրթված հայրերից մեկը, հմմտ. **W. Harmless**, նույն տեղում: Անտոնի յոթ թղթերի ամբողջական մի ժողովածու պահպանվել է ԺԵ դարի լատիներեն տարբերակով, իսկ առավել ամբողջական եւ հավաստի տարբերակը՝ ղպտերեն եւ վրացերեն լեզուներով, տես **Gérard Garitte,** Lettres de Saint Antoine: version géorgienne et fragments coptes, CSCO 148–149 (Louvain: L. Durbecq, 1955):

3 Պախոմիոսի վարքն ու նամակները պահպանվել են ղպտերեն, հունարեն եւ արաբերեն լեզուներով, տես W. Harmless, նշվ. աշխ., էջ 79-80:

4 Տես “The Sayings of the Desert Fathers. The Alphabetical Collection”, էջ xviii:

հայրերի վարքերը, հատկապես Ս. Աթանաս Ալեքսանդրացու կողմից գրված Ս. Անտոնի վարքը, որոնք, սակայն, իրենց բովանդակությամբ և ժանրով ավելի շուտ աստվածաբանական ու մեկնաբանական բարձր որակի երկեր էին: Իսկ «Բանք հարանց» ժողովածուն արտահայտում է անապատական ոգեկանության բուն էությունը. կյանքի և մարդկային հոգեբանության վերլուծություն ամենապարզ, բայցև ամենախորունկ օրինակներով: Հենց այս ժողովածուն է կազմում «Անապատի իմաստություն» հասկացության բուն արտահայտիչը, որն իր ազդու կրողներն ունեցավ ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում, ի դեմս Հովհան Կասսիանոսի[1]:

Ի սկզբանե «Բանք հարանց» ժողովածուն կազմվել է իբրև ոգեկանության և անապատական կյանքի ամենատարբեր թեմաների շուրջ հարց ու պատասխանի ժողովածու: Այն ստացավ Apophtegmata (Ἀποφθέγματα) Patrum հունարեն անունը, այսինքն՝ «Ի բանից հարանց»՝ մատնանշելով անապատի հայրերի խոսքերից քաղված իմաստների նշանակությունը[2]: Այս ժողովածուն իր բնագրային ձևով մեզ է հասել հունարեն և ղպտերեն, առկա են նաև ասորերեն ու հայերեն վաղ շրջանի, ինչպես նաև արաբերեն և հին սլավոներեն ավելի ուշ շրջանի թարգմանությունները[3]: Սովորաբար այս ժողովածուն բաժանվել է հունարեն երկու խմբի՝ այբբենական և անանուն կարգով, իսկ արևմտյան իրականության մեջ տեղի է ունեցել ժողովածուի համակարգված, այսինքն՝ թեմատիկ բաժանում: Տարբեր դարերում այն ձեռք է բերել տարբեր անվանումներ, ինչպես, օրինակ, Gerontikon՝ «Ծեր մարդկանց գիրք», Paterikon՝ «Հայրերի գիրք», իսկ ասորական ավանդության մեջ, սկսած Զ դարից՝ նաև «Դրախտ հարանց»[4]:

Հայ մատենագրության մեջ այն առավել հայտնի է դարձել «Վարք հարանց» անվանումով: Բայց այս խորագիրը, բովանդակային առումով, վերաբերում է միայն ժողովածուի առաջին մասին, որտեղ ամփոփվել են շուրջ 55 վարքեր: Ժողովածուի երկրորդ մասը կրում է «Բանք և պատմութիւնք սուրբ հարանց» խորագիրը՝ ներառելով ԺԹ գլուխներ ամենատարբեր թեմաների շուրջ՝ կատարյալ առաքինու-

1 Տես “The Sayings of the Desert Fathers. The Alphabetical Collection”, էջ xix:

2 Apophtegmata Patrum-ծագում է հունարեն apo-ից, phtheggomai-աղերսել, խնդրել մի բան ասելու, pater-հայր բառերի համադրումից:

3 Տես “The Sayings of the Desert Fathers. The Alphabetical Collection”, էջ xix:

4 Տես **W. Harmless**, նշվ. աշխ., էջ 169:

թյուն, արիություն, աղոթք և այլն: Երրորդ մասն ավելի շատ բովանդակում է անապատական հայրերի թղթեր ու «հարց-պատասխանի»-ներ, որոնց թվում նաև Ամոնի երեք թղթերը, Մակար Մեծի թուղթը, Սերապիոն Թմուիսացու և Նեղոս Անապատականի խրատները: Ժողովածուի վենետիկյան հրատարկչի առաջաբանում հայերեն թարգմանության վերաբերյալ առկա սակավաթիվ տվյալները կարելի է ամփոփել ըստ այսմ[1]: Միջնադարում հունարեն և ասորերեն աղբյուրներից թարգմանվել են անապատական հայրերի վարքերի ու խոսքերի տարբեր խմբագրություններ, ընդհուպ մինչև կիլիկյան ժամանակաշրջան, երբ առկա բոլոր թարգմանությունները հավաքվել և միախմբվել են իբրև մեկ, ընդարձակ ու միասնական մատյան: Ձեռագրերում առկա տվյալները որոշ վարքերի թարգմանություններ, ճառընտիրներում պահպանված վկայությունների համաձայն, հասցնում են մինչև Ը դար՝ Սողոմոն Մաքենացի: Այսպիսով, հնագույն այս թարգմանությունները պայմանականորեն կարելի է տանել մինչև Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոս (1066-1105)՝ տալով դրանց «հին թարգմանութիւն» պայմանական անվանումը: Ձեռագրերից մեկում առկա հիշատակարանի համաձայն՝ ժողովածուի համախմբման, վերանայման ու դասակարգման ներշնչողներից և նախաձեռնողներից մեկը եղել է Ներսես Լամբրոնացին: Ժողովածուի վերջին, և թերևս որոշակի նորարարություններով ճոխացած խմբագրումը կարելի է թվագրել ԺԴ դարով, երբ նորենոր թարգմանվել են վարքեր ու խրատներ հունարենից և ասորերենից՝ այդպիսով վերջնականապես համալրելով ժողովածուն: Այնուամենայնիվ, հակառակ միասնական ժողովածու ստեղծելու այս ջանքերին՝ ձեռագրական ավանդության մեջ պահպանվել են իրարից անկախ երկու թարգմանություններ՝ հին և նոր կամ առաջին ու երկրորդ: Վենետիկյան հրատարակիչը բուն բնագրում զետեղել է առաջին թարգմանությունը, իսկ երկրորդը՝ տողատակում՝ մանր տառերով: Երկրորդ թարգմանությունից պահպանված և առաջինում չարտացոլված հատվածները զետեղել է բնագրից հետո՝ իբրև «մնացորդք» երկրորդ թարգմանության: Առաջին խմբագրության բնագիրը պատրաստված է վեց, իսկ երկրորդինը՝ չորս ձեռագրերի հիման վրա:

5. Ժողովածուի ներկա աշխարհաբար թարգմանությունն իրականացվել է միայն ժողովածուի կորիզը կազմող «Բանք և պատմութիւնք հարանց» հատվածի համար: ԺԹ գլուխներում ամփոփված վանական-անապատական բարոյախոսությունն ըստ այսմ յուրահատուկ

[1] «Վարք սրբոց հարանց», էջ Ա-Ը:

մի թեմատիկ ուղեցույց է բոլոր նրանց համար, ովքեր փափագն ունեն անապատական հայրերի հոգևոր փորձառությանը ծանոթանալու և դրանք առօրյա կյանքում իբրև լուսաբանող օրինակներ ունենալու: Աշխարհաբար այս թարգմանությունը փորձել է հնարավորինս հավատարմորեն վերարտադրել անապատական հայրերի փորձառությունը՝ շատ հաճախ հետևելով գրաբարյան խոսքի կառուցվածքներին ու տրամաբանությանը: Յուրաքանչյուր գլխի ներսում կատարվել են համապատասխան պարբերությունների թվաբաժանումներ՝ ընթերցանությունն ավելի հեշտացնելու նպատակով: Թարգմանվել են թե՛ առաջին և թե՛ երկրորդ թարգմանության բնագրերը, ինչպես նաև երկրորդ թարգմանության «մնացորդք»-ները՝ իբրև «Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից»: Այսու թարգմանիչների հիմնական նպատակն է եղել ընթերցողին հասանելի դարձնել գրաբար թարգմանությամբ մեզ հասած այս ժողովածուի բոլոր հատվածները: Ներկա թարգմանության վերջում դրվել են նաև անձնանունների ու տեղանունների ցանկեր, որով ավելի է հեշտացել այս ծավալուն հատորի ընթերցումը:

Լիահույս ենք, որ ժողովածուի նմանատիպ առաջին թարգմանությունը պիտի ծառայի իր նպատակին: Աղոթում ենք, որ մոտ ապագայում Աստծո շնորհով ու ողորմությամբ աշխարհաբար նոր թարգմանությամբ կարող լինենք լույս ընծայելու «Վարք հարանց» ժողովածուի Ա և Գ բաժինները նույնպես:

Օգնեա Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ. ամէն:

Շահե Ծ. վրդ. Անանյան
25 Մարտի, 2016 թ.
Յիշատակ չարչարանաց և խաչելութեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐՔԷՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

ԿԱՏԱՐՅԱԼ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ոմն եղբայր հարցրեց աբբա Անտոնիոսին և ասաց. «Ի՞նչ պահեմ, որ արժանի լինեմ Աստծուն»: Պատասխան տվեց ծերը և ասաց. «Ինչ պատվիրեմ քեզ՝ պահիր և կապրես: Քո բոլոր ճանապարհներում Աստծո՛ւն ունեցիր աչքիդ առաջ, և ինչ էլ որ գործես՝ Սուրբ Գրքի վկայությամբ ձեռնարկի՛ր: Ամեն տեղ, ուր նստես, դյուրաշարժ մի՛ եղիր. այս երեքը պահի՛ր և կապրես»:

2. Աբբա Անտոնիոսն ասաց. «Երեք գործ կա Տիրոջ առաջ պատվական. առաջին՝ երբ մարդը տկարանա, և նրա վրա փորձություններ գան, ու գոհությամբ ընդունի դրանք, երկրորդ՝ երբ մեկը սրբությամբ կատարի իր գործը Տիրոջ առաջ և ոչ թե մարդահաճությամբ, երրորդ՝ երբ մեկը նստի հոգևոր հոր մոտ և ամբողջովին հրաժարվի իր կամքից»:

3. Ոմն եղբայր հարցրեց մի ծերի և ասաց. «Ո՞րն է բարի գործ, որ կատարեմ և դրանով ապրեմ»: Եվ ծերն ասաց. «Աստված գիտե բարին, որդյա՛կ, սակայն լսեցի, որ մեկը մեծապես սիրելի աբբա Անտոնիոսի հետ բնակվող աբբա Նեսթերինոսին հարցրեց, թե՝ ո՛րն է բարի գործը, որ անեմ: Նեսթերինոսն ասաց. "Ամեն կենցաղավարություն տարբեր է, քանզի Աբրահամը օտարընկալ և հյուրասեր էր, և Աստված նրա հետ էր, Դավիթը հեզ էր, և Աստված նրա հետ էր, Եղիան սիրում էր լռություն, և Աստված նրա հետ էր. դու ևս ջանա պահել այս ամենը և կապրես"»:

4. Հայր Նեսթերոնը դարձյալ ասաց. «Տառապանք և նեղություններ. սրանք են այն միջոցները, որ բարձրացնում են մենակյացի հոգևոր աստիճանը, քանզի գրված է, թե երեք այրեր կան՝ Հոբը, Դանիելը, Նոյը: Հոբը պատկերն է վշտերի, Դանիելը՝ իրավունքի, Նոյը՝

անընչության: Եթե այս երեք վիճակները լինեն մարդու մոտ, ապա և Աստված կբնակվի նրա մեջ»:

5. Մի ծեր ասաց. «Մարդս միշտ պետք է մի որևէ գործով զբաղված լինի. և երբ բարի գործ է անում, գալիս է նրա մոտ բանսարկուն, սակայն տեղ չգտնելով՝ թողնում-գնում է, իսկ երբ գործերը չար են, ստեպ-ստեպ գալիս է Աստծո Հոգին, սակայն տեղ չգտնելով՝ հեռանում է: Սակայն եթե մարդը դարձյալ խնդրի Նրան, իսկույն կվերադառնա»:

6. Ծերն ասաց. «Ատի՛ր քո որովայնը և աշխարհիկ կարիքներն ու պատիվը, և հանգիստ կունենաս»: Երկրորդ անգամ ասաց. «Գլխավոր ախտերը չորսն են»: Եղբոր հարցին՝ որո՞նք են դրանք, ծերը պատասխանեց. «Տրտմությունը՝ երբ երկարաձգվում է, արծաթասիրությունը, սնափառությունը և պոռնկությունը. առաջնահերթ սրանցի՛ց պետք է պաշտպանվել»:

7. Նույն ծերն ասաց. «Եթե մենակյացը կամենա երկու բան ատել՝ նա կկարողանա ազատվել այս աշխարհից»: Եղբոր հարցին, թե՝ ի՞նչ բան է այդ, պատասխանեց. «Մարմնական հանգիստն ու սնափառությունը»: Նաև ասաց. «Մարդու բարկությունը բնական է՝ եթե ախտերից չէ, այլ ախտի վրա զայրանալու ու այն արմատախիլ անելու պատճառով է: Բնական է մարդու քաղցը՝ եթե մարմնի կարիքից է, և ոչ թե՝ ախտերից: Ինչպես Դավիթն է ասում. «Ով ծածուկ խոսեց իր ընկերոջ դեմ, նրան բացեիբաց հալածեցի, ով ամբարտավան էր աչքով և ագահ՝ սրտով, նրա հետ հաց իսկ չկերա» (Սաղմ. ճ, 5)»: Նույն ծերն ասաց. «Քունը բնական է մարդու համար, բայց ոչ՝ հագենալու աստիճան»:

8. Ոմն եղբայր դիմեց աբբային, թե. «Ինձ մի խո՛սք ասա»: Աբբան պատասխանեց նրան և ասաց. «Ձանք գործադրենք քայլ առ քայլ ու չծուլանա՛նք և կապրենք»: Եվ աբբան նրանց մի այսպիսի բան պատմեց. «Մի մեծահարուստ հողագործ կար, որը, կամենալով իր որդիներին հողագործություն սովորեցնել, նրանց ասաց. «Որդյակնե՛րս, տեսե՛ք, թե ինչպես ես հարստացա, և դուք էլ եթե կամենաք լսել ինձ՝ կհարստանաք»: Եվ նրանք ասացին. «Աղաչում ենք, հա՛յր, ասա՛ մեզ՝ ինչպե՞ս առաջադիմենք և հարստանանք»: Հայրն իմաստությունը գործի դրեց, որ չծուլանան՝ գիտենալով, որ եթե ամեն ոք աշխատի հանապազօր՝ կառաջադիմի: Եվ ասաց նրանց. «Տարվա մեջ մեկ օր կա, որ եթե մեկը աշխատի՝ կհարստանա և կառաջադիմի: Ես մինչ ծերությանս օրը այդ օրվան էի նախանձախնդիր և հետամուտ: Ահա դուք

և գործեցե՛ք և մի՛ ծուլացեք, և կգտնեք այդ օրը հաստատապես: Իսկ եթե գեթ մեկ օր ծուլանաք, զգո՛ւյշ եղեք. դա հենց այդ օրհնյալ օրը կարող է լինել, և չլինի թե՝ զուր տքնած լինեք ողջ տարին»: Այդպես և մենք՝ եթե հանապազ գործենք, կենաց ճանապարհը կգտնենք»:

9. Պատմում էին ոմանք Պախիոսի մասին, թե մի անգամ, վերցնելով կողովը, գնաց կալը և տանուտերին ասաց. «Ինձ ցորե՛ն տուր»: Տանուտերը նրան ասաց. «Դո՞ւ հնձեցիր, հա՛յր»: Նա ասաց. «Ո՛չ, տե՛ր»: Տանուտերն ասաց. «Իսկ ինչպե՞ս ես կամենում ցորեն ստանալ, եթե չես հնձել»: Ծերը նրան ասաց. «Ի՞նչ է, ով չի հնձում՝ վարձ չի՞ ստանում»: Տանուտերն ասաց՝ ո՛չ: Ծերը ետ դարձավ իր ճանապարհով: Եղբայրները, տեսնելով հայր Պախիոսի արարքը, ընկան նրա առաջ՝ աղաչելով և հարցնելով, թե ինչի՞ համար արեց այդ: Ծերն ասաց նրանց. «Խրատելու համար արեցի այդ, որովհետև եթե մեկը չգործի և չաշխատի՝ Աստծուց վարձ չի ստանա»:

10. Ոմն եղբայր դիմեց Թեոդորոս Փերմացուն և պատմեց բաներ, որ գործնականում չէր կատարել: Ծերը նրան ասաց. «Դեռ ո՛չ ճանապարհն ես գտել, ո՛չ նավն ես վարձել, ո՛չ քո կարասիներն ես բարձել, սակայն արդեն քաղաքին ես ուզում հասնել: Երբ գործը կատարես, այնժամ կհասնես նրան, ինչից պատմում էիր»:

11. Հայր Մակարիոսն ասաց, թե Գրիգոր եպիսկոպոսն ասում էր. «Աստված բոլոր մարդկանցից այս երեք բանն է պահանջում. բերանի ճշմարտացիություն, մարմնի սրբություն և ուղիղ հավատք»:

12. Հայր Պիմենն ասաց. «Մենակյացները պետք է երեք որակ ունենան. առաջինը՝ խոնարհություն, երկրորդը՝ հնազանդություն և երրորդը՝ արթնություն: Մենակյացները պետք է փութաջան լինեն, որպեսզի չարհամարհվեն:

13. Հայրերից ոմանք ասում էին, թե մինչ վախճանվելու վրա էր մենաստանի երեց հայր Իսահակը, նրա շուրջը հավաքված ծերերը լալիս էին և ասում. «Քեզանից հետո ի՞նչ անենք, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Տեսե՛ք, թե ինչպես ընթացա ձեր առջևից: Եթե դուք ևս կամենում եք ընթանալ և պահել ձեր հայրերի պատվիրանները, ապա Աստված կառաքի իր շնորհները և կպահպանի այս տեղը, իսկ եթե չպահեք՝ այս տեղում չեք մնա: Երբ մեր հայրերը հասան վախճանի օրվան, մենք տրտմում և լաց էինք լինում, սակայն, նրանց պատվիրանները պահելով, հաստատուն մնացինք՝ որպես թե նրանք մեզ հետ էին: Ահա այդպես արեք նաև դո՛ւք, և կապրեք»:

14. Հայր Իսիդորոսի մասին, որ միաբաններիհետ էր բնակվում, աբբա Պիմենն ասաց. «Ինչպես պղնձե օձն էր, որ Մովսեսը չինեց ժողովրդի առողջության համար (Թվ. ԻԱ 9)*, այնպես էլ հայր Իսիդորոսն է՝ ամենայն առաքինություններով լեցուն, որ լուսավորելով ամենքին՝ օգնում է առաջադիմել»:*

15. Հայրերից մեկն ասաց. «Եթե նախ չատես՝ չես կարող սիրել, եթե մեղքը չատես՝ չես կարող արդարություն գործել, ինչպես և գրված է. «Հեռացի՛ր չարից և բարի՛ն արա» (Սաղմ. ԼԳ 15)*: Սակայն այս ամենի համար կամքի հոժարություն է պահանջում Աստված ամենուրեք: Ադամը դրախտում էր, սակայն պատվիրանազանց եղավ, իսկ Հոբը աղբանոցի մեջ էր, բայց պահեց պատվիրանը, քանզի Աստված մարդկանցից հոժարակամություն է պահանջում, որպեսզի երկնչեն Իրենից ամենայն ժամ»:*

16. Հայր Սիղվիանոսի աշակերտ Զենոնն ասում էր. «Նշանավոր վայրում մի՛ բնակվիր, մեծանուն մարդու մոտ մի՛ նստիր և քեզ համար որևէ տեղ խուզ չինելու հիմքեր մի՛ գցիր»:

17. Ծերն ասաց. «Եթե քո և ընկերոջդ միջև վիճաբանություն լինի, և ընկերդ ուրանա և ասի, թե՝ չեմ ասել այդ բանը, մի՛ հակառակվիր նրան և մի՛ ասա, թե՝ ասել ես, ապա թե ոչ՝ հանդուգն կդառնա և կասի՝ այո՛, ասել եմ, և այդպիսով մեծ խռովություն կլինի»: Եվ այսպիսի բան պատմեց. «Երկու ծերեր խցում Սուրբ Գրքից էն խոսում, և մեկը խոսքի մեջ մեղանչեց, իսկ մյուսը դա հայտնեց երեցին: Երեցը գալով նրա մոտ՝ հարցրեց. «Դո՞ւ ես ասել այս բանը»: Եվ նա ասաց՝ այո՛: Երեցը նրան ասաց. «Եթե եկեղեցի գաս, և քեզ հարցնեմ, ուրացի՛ր այդ բանը»: Մյուս ծերի մոտ գալով՝ երեցն ասաց. «Եթե եղբայրը գա և ուրանա այդ բանը, ավելորդ չխոսես»: Երբ եղբայրը եկավ եկեղեցի, երեցը կանչեց նաև այն եղբորը, որը նրա մասին հայտնել էր: Երեցը հարցրեց եղբորը. «Դո՞ւ ես ասել այս բանը»: Եվ նա ասաց՝ ո՛չ: Երեցը հարցրեց մյուսին. «Դու լսե՞լ ես այս բանը»: Սա էս ուրացավ: Սրանք իրար առաջ ընկնելով՝ հաշտվեցին»:

18. Մենաստանի երեց հայր Հովսեփը հայր Թեոդորոսի մասին ասում էր, թե. «Նա ոչ միայն հիմա է մեծ, այլև՝ երբ Սկյութիայում էր: Նրա մասին ասում էին, թե այս երեք գլխավոր բաները բոլոր մարդկանցից ամենաշատն ինքն ուներ. այն է՝ անընչություն, կրոնավորություն և մարդկանցից խույս տալը: Նրա մասին ասում էին, թե երբ Սկյութիան ավերվեց, նա եկավ Փերմիայում բնակվելու: Երբ ծերա-

նալով հիվանդացավ, ինչ բերում էին նրան՝ առաջինի բերածը տալիս էր երկրորդին, ինչ առնում էր մեկից՝ տալիս էր մյուսին. ու այսպես հերթով: Իսկ ճաշի ժամին, ով ինչ բերեր՝ այն էր ճաշակում: Նրա աշակերտը պատմում էր, թե մի անգամ եկավ մեկը, որ սոխ էր վաճառում, և լիքը լցրեց իմ սկավառակը: Ծերն ինձ ասաց. «Լցրո՛ւ դա ցորենով և տո՛ւր նրան»: Ցորենի երկու շեղջեր կային. մեկը՝ մաքուր, մյուսը՝ անմաքուր: Ես լցրի խառը ցորենի շեղջից, որ այդ մարդուն տամ, իսկ ծերն ինձ էր նայում տրտմությամբ ու ամոթով: Ես նրա ահից վայր ընկա, շուռ տվեցի սկավառակը և ծնկի եկա նրա առաջ: Ծերն ինձ ասաց. «Վե՛ր կաց, որովհետև մեղքը քոնը չէ, այլ ես մեղանչեցի, որ քեզ ասացի»: Եվ ծերը գոգը լիքը մաքուր ցորեն լցրեց և տվեց նրան, նույնպես և սոխը տվեց նրան»:

19. Սուրբը հայրեր աբբա Պափնոտիոսի, աբբա Բեսարիոնի, աբբա Եսայու և աբբա Պաիսիոսի մասին ասում էին, թե հույժ զորավոր էին: Մի անգամ նրանց հանդիպեց Նիտրիա լեռան երեց Հաթրին և հարցրեց, թե ինչպե՞ս պետք է եղբայրները վարեն իրենց կյանքը: Եվ նրանք ասացին. «Խիստ ճգնակեցությամբ և մերձավորի հանդեպ խիղճը մաքուր պահելով»:

20. Ծերերից մեկն ասում էր. «Մեր հայրերը չափավոր խստակեցությամբ ներս մտան, իսկ մենք, եթե կարող ենք՝ քաղցրությա՛մբ մտնենք»:

21. Մի ծեր ասաց. «Ամեն բանի հավանություն մի՛ տուր և լծակից մի՛ եղիր, այլ լռելյա՛յն հավատա և հաճախակի՛ ասա ճշմարտությունը»:

22. Հայր Պիմենն ասաց. «Գործի մասին, որը դեռ չես արել, մի՛ խոսիր. հանուն Աստծու կրած ամեն մի բռնություն խոստովանություն է Աստծուն»: Հայր Ովր Նիտրացու մասին ասում էր, թե երբ վերջինս մահանում էր, ասաց. «Այն օրվանից, ինչ եկա այստեղ, ոչ մի օր չմնացի առանց ձեռագործի, որևէ մեկի ձեռքից ձրի հաց չկերա և չզղջացի իմ ասած որևէ խոսքի համար»: Եվ այսպես ասաց. «Այժմ վախճանվում եմ այնպես, կարծես թե աստվածպաշտության սկիզբն իսկ չեմ դրել»: Նրա մասին նաև լսել էին, որ ավելին գիտեր, քան բազում մարդիկ, սակայն երբ մեկը մի բան էր հարցնում Սուրբը Գրքից կամ հոգու մասին, շուտափույթ պատասխան չէր տալիս, այլ ասում էր՝ ես դա չգիտեմ, և մեկ ամիս և ավելի՝ պատասխան չէր տալիս:

23. Ծերերից ոմանք ասում էին, թե. «Սկզբում երբ հավաքվում էինք իրար մոտ, մեր օգտի համար էինք խոսում, միմյանց շահում էինք և դաս-դաս լինելով՝ երկինք էինք բարձրանում: Իսկ այժմ, երբ հավաքվում ենք, չարախոսությամբ ենք զբաղվում, և ընկերն ընկերոջը խորխորատ է գցում»:

24. Հարցրին մի անգամ հայրերը հայր Սիղվիանոսին և ասացին. «Ինչպիսի՞ ընթացք վարեցիր, որ այդպիսի իմաստություն ամբարեցիր»: Եվ ծերն ասաց. «Իմ սրտում չթողեցի այնպիսի խորհուրդներ, որոնցով բարկացնեի Աստծուն»:

25. Հայրերից մեկն ասաց. «Եթե մեր ներքին մարդն արթուն լինի, կարող է մեզ պահել նաև արտաքուստ: Իսկ եթե դա չենք կարողանում անել, գոնե մեր լեզուն զսպենք՝ որքան կարող ենք»: Նույն ինքն ասաց. «Հոգևոր գործեր են հարկավոր՝ ինչի համար և եկանք այստեղ: Մեծ տառապանք է՝ դուրս գալ մարմնից, սակայն հոգու գործեր չգործել»:

26. Ծերն ասաց. «Ով չարհամարհի նյութական բարիքները, մարմնական փառքը և հանգիստը, ով չկարողանա հատել իր կամքը և չզսպի բարկությունն ու զայրույթը և չհանդարտեցնի մերձավորին՝ չի կարող ապրել»: Դարձյալ ասաց. «Եթե մարդը սկսում է փախչել իր կամքից, թողնում է իր մեղքերը և գնում է առ Աստված, նախ նրա կամքը սկսում է մարտնչել իր հետ և հորդորում է նրան դառնալ դեպի իր մեղքերը: Իսկ եթե մերժի իր կամքը՝ անարատությամբ կընթանա առ Աստված. և եթե անարատությամբ ընթանա, ժուժկալություն կդրսևորի, իսկ ժուժկալությունը պահելը՝ մարմնական տառապանք է: Այնժամ մարդը գոհություն է առաքում առ Աստված և ասում՝ ոչ թե ես, այլ Դո՛ւ՝ օգնական իմ: Պետք է գիտենալ, որ միայնակյացն անկարող է պահպանել իր ջանքերը՝ առանց լռության և իրեն ոչինչ համարելու»: Դարձյալ ասաց. «Նեղությունը շարժում է Աստծու ողորմածությունը դեպի մարդը, ինչպես որ հողմն՝ անձրևը»: Դարձյալ ասաց. «Եթե մի եղբայր տկարություն ունենա և թուլանա, պետք է հանդուրժել նրան, իսկ եթե գող լինի՝ արտաքսել նրան, քանզի նրա անձը գայթակղեցնում է, և բոլոր նրանց, որ այդ տեղում են գտնվում, խռովեցնում է:

27. Հայր Պամբոսը իր աշակերտին ուղարկեց Ալեքսանդրիա՝ վաճառելու ձեռագործը. և նա տասնվեց օրում կատարեց այդ գործը: Ապա գնում-նստում էր սուրբ Մարկոսի տաճարում և դիտում ընդհանրական եկեղեցու ծիսակարգը. սովորեց նաև երգասացություն-

ներն ու վերադարձավ ծերի մոտ: Ծերը նրան ասաց. «Քեզ խռովված եմ տեսնում, որդյա՛կ, գուցե փորձա՞նք է պատահել քեզ քաղաքում»: Եղբայրն ասաց ծերին. «Ինչո՞ւ այսպես վատնեցինք մեր օրերն անապատում և ոչ կանոն, ո՛չ շարականների երգասացություն չուսանեցինք. գնացի Ալեքսանդրիա և տեսա եկեղեցական դասը, թե ինչպես էին սաղմոսում, և մեծապես տրտմեցի, քանզի մեզանում ոչ մեղեդիներ և ոչ էլ շարականներ են երգվում»: Ծերը նրան ասաց. «Վա՜յ ինձ, որդյակ, այս օրին հասնելուս համար, քանզի կրոնավորներից ոմանք, թողնելով հաստատուն կերակուրը, որ Սուրբ Հոգուց սահմանվեց, երգերի ու ձայների հետևից են գնում. ի՞նչ է հաստատում շարականների երգը, կամ ի՞նչն է, որ լուսավորում է մենակյացներին. երբ եկեղեցում կանգնի և բարձրացնելով իր ձայնը՝ որպես զվարակ բառաչի՞, թե՞ կանգնելով Աստծո առաջ՝ բազում խոսքեր պտղաբերի մտքում: Քանզի մենք չպետք է աղոթքի կանգնենք մռնչալով և այդպես հոգիներս կոկորդներս հասցնելով, քանի որ կրոնավորներն այս անապատ ելան ոչ թե ձայներ հնչեցնելու, կամ երգեր երգելու, կամ մեղեդիներ գոչելու, կամ ձեռքերը շարժելու և ոտքերով դոփելու, այլ բազում երկյուղով ու դողությամբ, արտասուքներով ու հեծությամբ բարեպաշտության և մտքերի սրբության մեջ մնալու և յուրաքանչյուրն իր խոնարհության չափով աղաչանքների ձայնը Աստծուն մատուցելու համար: Եվ արդ, ասում եմ քեզ, որդյա՛կ, որ կգան օրեր, երբ քրիստոնյաները կաղավաղեն Ավետարանի և սուրբ առաքյալների ու մարգարեների Աստվածային Գրքերը, կջնջեն և կգրեն հելլենական բանաստեղծություններ ու հելլենացիների շարականները: Սրա համար էլ մեր հայրերը մեզ պատվիրեցին, որ անապատի իմաստուն գրագիրները սուրբ հայրերի ու մարգարեների վարքն ու խոսքը մագաղաթների վրա չգրեն, այլ պապիրուսե թղթերի վրա, քանզի հաջորդ սերունդը, որ պիտի գա, կջնջի սուրբ հայրերի վարքն ու իր կամքի համաձայն կգրի այն»: Եվ եղբայրը նրան հարցրեց. «Իսկ ի՞նչ կլինի, հա՛յր, կփոփոխվե՞ն քրիստոնյաների կարգն ու օրենքը, և չե՞ն լինի եկեղեցիներ և քահանաներ, երբ այս կատարվի»: Նա պատասխանեց. «Այնժամ շատերի սերը կնվազի, շատ նեղություններ կլինեն, հեթանոսների հարձակումներ և ժողովուրդների խռովումներ, թագավորների անհաստատություն և իշխանների անկարգություն, քահանաներն՝ այպանող, և կրոնավորները հեղգ կլինեն, և եկեղեցու հայրերն իրենց և իրենց հոտերի փրկությունն արհամարհողներ կլինեն, փութաջան և առաջինը վազող՝ դեպի սեղանները, կռվազան և ծույլ՝ աղոթքների մեջ, պատրաստակամ՝ շատախոսության և համարձակ՝ հայրերի

կարգն ու խոսքը դատապարտելու մեջ. ոչ հայրերին նմանվել կցանկանան և ոչ էլ նրանց խոսքը լսել, այլ մանավանդ կպատասխանեն և կասեն՝ եթե մենք լինեինք նրանց ժամանակ՝ մենք էլ կջանայինք: Եվ եպիսկոպոսներն այն օրերին կլինեն բռնակալների պահանջները կատարող, դատաստանը կանեն կաշառքով և չեն ողորմի աղքատին դատաստանի ժամին, այրիներին կտրտմեցնեն և որբերին կկսկծացնեն: Անհավատություն կգա նաև ժողովուրդների վրա. անառակություն, ատելություն, թշնամություն, նախանձ, արբեցողություն, պոռնկություն, չնություն, սպանություն, գողություն»: Եվ եղբայրն ասաց. «Ի՞նչ անեն նրանք, ովքեր այդ օրերի ու ժամանակների մեջ կհայտնվեն»: Եվ ծերն ասաց. «Կապրի նա, ով կապրեցնի իր հոգին, և նա մեծ կկոչվի Երկնքի Արքայություն մեջ»:

28. Աբբա Պիմենը հարցրեց աբբա Նեսթերոնին, թե՝ «Որտեղի՞ց ուսանեցիր այդպիսի վարք, որ երբ միաբանությունում վշտացնում են քեզ, ոչինչ չես խոսում և լռությամբ տանում ես»: Եվ աբբա Նեսթերոնն ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, հա՛յր, երբ եկա այս միաբանություն, մտքիս մեջ ասացի ինքս ինձ. «Դու և ավանակը մեկ եք. ինչպես ավանակը ծեծվելիս չի խոսում, անարգվելիս չի պատասխանում՝ նույնպես և դու, ինչպես սաղմոսում է ասվում «Որպես մի անասուն եղա քո առաջ, և ես ամենայն ժամ քեզ հետ եմ» (Սաղմ. ՀԲ 22-23)*»:*

29. Աբբա Պիմենն ասաց. «Խոնարհությունը, նեղությունն ու վշտերը մենակյացին տանում են դեպի հանգիստ»: Դարձյալ ասաց. «Որչափ կարող ես, գործիր ձեռքերո՛վ, որովհետև դրանցով կարող ես ողորմություն անել, որովհետև գրված է. «Ողորմությունն ու հավատքը թո՛ղ չպակասեն քեզանից»:

30. Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս սուրբ Հովհաննու մասին, ով իր վարդապետական խոսքի շնորհիվ արժանավորապես Ոսկեբերան կոչվեց և պայծառապես փայլեց, ասում էին, թե փրկչական մկրտությունն առնելուց հետո ո՛չ երդվեց, ո՛չ երդվեցրեց որևէ մեկին, ո՛չ բամբասեց, ո՛չ ստեց, ո՛չ տգեղ խոսք դուրս հանեց իր բերանից, ո՛չ էլ մեկնումեկից ամաչելու առիթ ունեցավ:

31. Աստծո մեծ քաղաքի պատրիարք Գրիգորի մասին ծերերից ոմանք ասում էին, թե իր կյանքն ուղղեց դեպի ողորմությունը, անհիշաչարությունը և արտասուքը: Նա մեծ գթասրտություն ուներ մեղավորների հանդեպ:

32. Հայր Հովհաննես Կարճահասակն ասում էր. «Ես կամենում եմ, որ մենակյացը քայլ առ քայլ ընթանա առաքինությունների հետևից և ստիպի իրեն ամեն օր, քանզի ես ինքս էլ առավոտից սկսած՝ ինձ ստիպում եմ պահել Աստծո պատվիրանները: Ջանք գործադրելով՝ մնում եմ ժուժկալության մեջ՝ երկյուղով և համբերատարությամբ: Հոգով և մարմնով խոնարհության մեջ եմ լինում, սրտի նեղության եմ դիմանում՝ բազում աղոթքների ու հեծեծանքների մեջ, լեզվի սրբություն եմ սիրում, աչքերս եմ պահում, անարգվելիս չեմ բարկանում, չարի փոխարեն չարով չեմ հատուցում, իմ դեմ մեղանչածների դեմ ոխ չեմ պահում և ոչ էլ չափվում նրանց հետ, այլ բոլորից հետինն եմ կոչում ինձ, դեպի խաչն եմ ձգտում, դեպի հոգու աղքատությունը՝ կամովին և սիրահոժար, դեպի պահքը՝ ապաշխարության հառաչանքների մեջ, դեպի ճգնությունը՝ մարտի և հոգու գիտության համար, որով ստանում եմ լռության քաղցրություն: Ձգտում եմ դեպի ձեռագործը, դեպի գիշերային հսկումը, դեպի քաղցը, դեպի ծարավը, դեպի ցուրտը, դեպի մերկությունը, դեպի ցավերը: Մահվան գիտությամբ դեպի գերեզմանն եմ խոնարհվում և վախճանին եմ մերձենում ամեն ժամ»:

33. Աբբա Երենիոսն ասաց եղբայրներին. «Ջանանք համբերել մեծ պատերազմին, քանզի զինվորներն ենք Քրիստոսի՝ երկնավոր թագավորի: Երկրավոր թագավորի զինվորներն սաղավարտներ ունեն իրենց գլխին, իսկ մեր զինվորությունը երկնային շնորհներն են: Նրանք երկաթապատ վահաններ ունեն, իսկ մենք՝ հավատ, նրանք՝ գեղարդներ, մենք՝ աղոթքներ, նրանք՝ կապարճներ, իսկ մենք՝ հույս առ Աստված: Նրանց խրախուսողներն ու պսակադրողները զորագլուխներն են, իսկ մեր հավատքի զորագլուխն ու նվիրագործողը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է: Նրանք մարտի մեջ արյուն են հեղում, իսկ մենք բարեհաճ մտքեր ենք մատուցում: Երկնային թագավորը թույլ է տալիս դևերին մարտնչել մեր դեմ, որպեսզի չմոռանանք Նրա օգնականությունը. ուստի զգուշանանք մեր մտքերը աղտեղի խորհուրդներով ապականելուց: Եթե Աստծո հետ շուրթերով խոսենք և մեր սրտերը աշխարհի մեջ թափառեն, ապա ինչպե՞ս Նա կլսի մեզ: Խաղաղության և անդորրի մեջ եղած ժամանակ բնավ չենք աղոթում, իսկ երբ ընկնում ենք նեղության մեջ, այնժամ ողջ սրտով, արթնությամբ ու զղջման արտասուքներով մտնում ենք աղոթքի առագաստ: Եվ եթե շուրթերով չենք աղոթում, գոնե մտքով աղոթենք, Տիրոջը մատուցենք մեր սրտի խոսքն ու հեծեծանքները: Ո՞վ կա մեր մեջ, եղբայրնե՛ր, որ չի մարտնչում երկնքի արքայությանը հակամարտ զինվորների դեմ: Ուստի նմանվենք երեք

երիտասարդներին և չարչարանքների հնոցը համարձակությամբ ոտնակոխ անենք (Դան. Գ 19-95)*: Փորձանքների կայծակներն աղոթքով մարենք և աներևույթ Նաբուգոդոնոսորին ամաչեցնենք: Մեր մարմինը պատարագ մատուցենք կենդանի Աստծուն և մեր բարեպաշտ միտքը՝ որպես ողջակեզ, նվիրենք Նրան»:*

34. Երանելի Մակարիոսը պատմում էր, թե. «Մի ծեր եկավ ինձ մոտ, և միասին նստեցինք ընթերցելու առաջին հայրերի գրությունները: Հասանք այն տեղին, որտեղ պատմվում էր մի հոր առաքինության մասին, թե մի անգամ ավազակները գիշերով եկան նրա մոտ և ասացին. «Եկանք վերցնելու այն ամենն, ինչ ունես»: Եվ նա, վառելով լույսը, սենյակը հանձնեց նրանց: Իսկ նրանք, ամեն ինչ վերցնելով, գնացին: Ծերը, սենյակ մտնելով, անկյունում թողնված մի բրիչ գտավ և վերցնելով այն՝ վազեց նրանց հետևից՝ ասելով. «Սա՛ էլ է իմը»: Եվ նրանք զղջալով՝ ամենը վերադարձրին նրան՝ մեծամեծ աղաչանքներով և ընկնելով նրա առջև՝ ասացին. «Արդարև Աստծո ծառա ես դու»: Երբ հյուր եկած ծերը լսեց այս պատմությունը, ուրախացավ և ասաց. «Ես բնակվում էի Հորդանանի ափին գտնվող մի խրճիթում: Մի օր կարդացի այդ պատմությունը և Աստծուց խնդրեցի՝ ինձ էլ տա այդ շնորհը: Նույն օրն իսկ ինձ մոտ եկան ավազակները, և ես բացեցի դուռը, տվեցի նրանց՝ ինչ որ ունեի, իսկ նրանք հարցրին. «Ոսկի ունե՞ս»: Ասացի՝ այո՛, երեք դահեկան ունեմ, և տվեցի նրանց: Նրանք գնացին, իսկ ես մեծ խնդություն ապրեցի»: Ես հարցրի նրան. «Իսկ ունեի՞ր այն միտքը, թե՝ կվերադառնան ինձ մոտ»: «Բնա՛վ, բնա՛վ այդ բանը մտքովս չանցավ. Աստվա՛ծ վկա»: Այս բաների համար փառաբանեցինք Աստծուն»:

35. Ծերերից մեկը բրդյա գործվածք գնեց. տակը դնելով՝ նստեց վրան և կրպակատիրոջը տալիք դրամն էր հաշվում: Ինչ-որ մեկը ուզում էր գողանալ կտավը և հետևում սպասում էր: Հասկանալով այդ՝ ծերը կռացավ դեպի կրպակատերը, ում պետք է տար դրամը, և գողը, վերցնելով գործվածքը, գնաց: Ծերը ո՛չ փնտրեց այն, ո՛չ էլ որևէ բան խոսեց այդ մասին, այլ վճարեց գինը և գնաց խնդությամբ, քանզի՝ քանի դեռ ուներ՝ իբրև թե ոչինչ չուներ, իսկ երբ կորցրեց՝ բոլորովին չցավեց՝ իբրև թե մի բան պակասել է իրենից:

36. Մի ծերի ունեցվածքն ու գրությունները գողացավ նրա դրացին: Ծերը, նույն պահին մտնելով և բացահայտելով կատարվածը, գնաց նրա մոտ՝ գանգատվելու՝ չգիտենալով, թե ո՛վ է գողը: Դրացին դեռևս չէր թաքցրել գողոնը: Տեսնելով իր կարասիները՝ ծերը դուրս

եկավ՝ իբր թե բնական կարիքից դրդված, և այնքան հապաղեց, մինչև դրացին թաքցրեց իրերը, ապա ներս մտնելով՝ բոլորովին ուրիշ բաներից խոսեց և անտրտում գնաց իր տուն: Օրեր անց գողը բանտ ընկավ: Ծերը, վերցնելով հինգ ձու և հաց, գնաց նրան մխիթարելու՝ չգիտենալով բանտարկվելու պատճառը: Եվ դրացին, ընկնելով նրա ոտքերը, խոստովանեց հանցանքը: Ծերը, լսելով եղելությունը, ներեց նրան: Ծերը, գնալով ավագի մոտ, արձակել տվեց նրան՝ ի փառս մեր Քրիստոս Աստծո:

37. Մակարիոս երանելին մի գրագրի մոտ Գիրք պատվիրեց իր համար: Վճարելուց հետո մեկը, գիտենալով դա, Մակարիոսի անունից գնաց և վերցրեց այն: Մակարիոսը եղբայրներից մեկին ուղարկեց Գրքի հետևից, իսկ գրագիրը, սաստիկ բարկանալով, կամեցավ գնալ խաբողի մոտ, անպատվել նրան և Գիրքը ետ վերցնել: Լսելով այդ՝ Մակարիոսն աղերսագին խնդրանքներ ուղարկեց գրագրին՝ ասելով. «Մենք Գիրքը վերցնում ենք, որպեսզի դրանից հեզություն և համբերություն սովորենք: Թո՛ւյլ տուր, թող նա այն իր մոտ պահի և օգուտ ստանա դրանից»:

38. Հայր Պիմենը պատմում էր, թե. «Ինձ մոտ բնակվում էր մեկը, ով ինձնից վերցրել էր մեծ սքեմն ու ահագին ուտելիք: Նա ինձ ասում էր, թե սաստիկ սիրում է ինձ: Ես նրան ասում էի, թե՝ չգտա մեկին, որ սիրեր ինձ այնպես, ինչպես ես՝ նրան. եթե դու նեղանաս ինձնից, կհեռանաս սիրուցդ, իսկ ես, որքան էլ վիրավորանքներ ստանամ քեզնից՝ չեմ հեռանա քո սիրուց: Եվ որոշ ժամանակ անց նա սկսեց չարախոսել և զրպարտել ինձ, ինչը շատերից էի լսում, որոնք գալիս-պատմում էին ինձ. իսկ ես պատասխանում էի՝ այն ամենն, ինչ ասում է, ճշմարիտ է, քանի որ իր տեսածն է պատմում, սակայն դրանից ավելին էլ կա, որ միայն Աստված գիտե: Նա արդեն հեռացել էր ինձնից, երբ մի օր տեսանք միմյանց: Սիրով ողջագուրվեցինք և սկսեցինք վերստին միասին բնակվել՝ մաքուր սիրով՝ ոչինչ չհիշելով նախկինում տեղի ունեցածից: Օրերից մի օր, խղճմտանքից ձաղկված՝ ընկավ իմ առաջ և խոստովանեց իր բոլոր ասածները: Ես նրան հիշեցրի իմ կանխավ ասածը և այն, թե շատերից էի լսել նրա չարախոսությունները, սակայն բնավ չէի վրդովվել, այլ միշտ իմ աղոթքներում թողություն էի խնդրում իր համար: Եվ ցույց տալու համար նրան սրտիս անհիշաչարությունը՝ ասացի. "Մի օր ցավեց աչքս, և ես խաչակնքեցի ու առ Քրիստոս բարեխոս վերցրի քեզ և քո աղոթքները, և իսկույն առողջացա"»:

39. Հայր Դանիելն ասաց. «Այդքան ժամանակ մեզ հետ էր հայր Արսենը, և մենք չկարողացանք հասնել նրա առաքինի վարքին»: Ասաց դարձյալ. «Շաբաթ երեկոյան՝ լույս կիրակի, թողնում էր արեգակն իր թիկունքում և աղոթքի մեջ բարձրացնում էր ձեռքերը՝ մինչև նորից արեգակը ծագում էր իր դիմացից»:

40. Հայր Պիմենին մեկը հարց ուղղեց, թե. «Եթե մեկն ինձնից դժգոհություն ունենա, և ես ընկնեմ նրա առաջ, բայց նա չլսի ինձ, ինչպե՞ս վարվեմ»: Հայրը նրան ասաց. «Վերցրո՛ւ քեզ հետ ևս երկու եղբայրների և ընկի՛ր նրա առաջ»: Նա ասաց. «Իսկ եթե նրանց ներկայությունն էլ չօգնի՞»: Պիմենն ասաց. «Վերցրո՛ւ քեզ հետ հինգ եղբայրների: Եթե նրանց էլ չլսի, քեզ հետ վերցրո՛ւ նաև երեցին»: Նա ասաց. «Իսկ եթե նրանց էլ չլսի, ի՞նչ անեմ»: Հայր Պիմենն ասաց. «Դրանից հետո անխռով աղոթքի կանգնի՛ր առ Աստված, որպեսզի այն եղբայրը կատարի Աստծո կամքը, իսկ դու անհո՛գ եղիր»:

41. Մեկ ուրիշը հարցրեց ծերին. «Ի՞նչ անեմ, որ ապրեմ հոգով»: Ծերը պատասխանեց և ասաց. «Զսպի՛ր որկորդ ու լեզուդ, փախի՛ր երիտասարդներից ու կանանցից, իշխանություն մի՛ վերցրու և նյութական ստացվածք մի՛ ունեցիր, քեզ մի՛ համեմատիր եղբայրների հետ՝ գործի և խոսքի մեջ, ոչ մեկին մի՛ հակառակվիր, այլ գովի՛ր ճշմարիտն ու արդարը, իսկ ստի մասին ասա՛՝ դո՛ւ գիտես: Արա՛ այս ամենը և կապրես»:

42. Հայր Մովսեսն ասաց. «Առանց ջանադրության, խոնարհության և անդադար աղոթքների մարդն անկարող է ընդունել Քրիստոսին»: Դարձյալ ասաց նույն ծերը. «Ինչ էլ որ մարդ անցկացնի իր մտքով՝ երկնքից մինչ երկիր, ինչ էլ որ ամբարի՝ ունայն է: Ով միշտ փութաջան է Աստծուն հիշելու մեջ, այդպիսին գտնվում է ճշմարտության մեջ»: Նույն հայրն ասաց դարձյալ. «Ով մերձ է Քրիստոսին և Նրանով է խորհում՝ բարին է գործում, իսկ եթե ոչ՝ իր սենյակ ներս կթողնի կռիվ ու պայքար»:

43. Խրճիթներում բնակվող մի եղբայր եկավ հայրերից մեկի մոտ և պատմեց նրան իր խորհուրդները, որից նեղվում էր: Ծերն ասաց նրան. «Մեծ ու կարևոր գենքը, որ Աստծո երկյուղն է, դու գետնին ես թողել և ձեռքդ ես վերցրել եղեգնյա գավազանը, որը չար խորհուրդներն են: Ուստի քեզ մոտ վերցրո՛ւ նախ Աստծո երկյուղը, որ հուր է, իսկ երբ եղեգնը գա քեզ մերձենալու՝ կայրվի հրից, որովհետև չարությունը չի կարող հանգրվանել նրա մոտ, ով Աստծո երկյուղն ունի»: Եվ այս ծերը

մեծ էր ա՛յն աստիճան, որ նրա աշակերտն ասում էր նրա մասին, թե քսան տարի չընկողմանեց, այլ ննջում էր նստած տեղում, որտեղ գործում էր: Ճաշակում էր երեք օրը մեկ: Այդպես կենցաղավարեց քսան տարի: Ճաշակելիս մի ձեռքը դեպի երկինք էր բարձրացնում և մյուսով՝ ճաշակում: Եվ մի անգամ իմ հարցին, թե՝ ինչո՞ւ ես այդպես անում, հա՛յր, նա ինձ ասաց. «Աստծո դատաստանն եմ դնում առջևս և չեմ կարողանում դիմանալ. դրա համար եմ այդպես անում»: Մի անգամ պաշտամունքի ժամանակ պատահեց, որ ես սաղմոսի մեջ սխալվեցի: Երբ ավարտեցինք պաշտամունքը, ծերն ինձ ասաց. «Երբ ես պաշտամունք եմ մատուցում, կարծում եմ, թե հուր կա իմ տակ և այրում է ինձ, և իմ խորհուրդները չեն կարողանում խոտորվել ո՛չ աջ, ո՛չ ձախ: Իսկ ո՞ւր էին քո խորհուրդները, երբ պաշտամունք էինք կատարում, որովհետև սխալվեցիր սաղմոսի մեջ: Դու չգիտե՞ս, որ Աստծո առջև ես և Աստծո հետ ես խոսում»: Մի անգամ էլ գիշերը դուրս գալով՝ տեսավ ինձ գավթում ննջելիս: Սկսեց լալ ու հեծեծալով ինձ ասաց. «Ո՞ւր են քո խորհուրդները, որ այդպես անհոգաբար ննջում ես»:

44. Երանելի հայր Հովհաննես Ոսկեբերանն ասաց. «Աստվածային Գրքերն ընթերցելուց առաջ, նախ Աստծուն օգնության կանչիր, որպեսզի Նա բացի քո սրտի աչքերը՝ ոչ միայն ընթերցելու Գրվածքները, այլև գործադրելու, որպեսզի սրբերի վարքերն ու խոսքերը մեր անձերին որպես դատապարտություն չընդունենք»: Նույն երանելին ասաց. «Բոլոր այրերն ու կանայք գիտեն ապրել, սակայն հոգիների հեղգության պատճառով կորստյան են մատնվում»: Ասաց դարձյալ. «Եթե մեկը գովում է մենակյացին, նրան դարձնում է սատանայի որս»:

45. Ասաց դարձյալ երանելին. «Մենակյացը երբ եղբայրների հետ է, պետք է մշտապես ներքև նայի և մարդու դեմքին չնայի երբեք՝ մանավանդ երիտասարդների, իսկ երբ առանձին է, պետք է մշտապես վերև նայի, քանզի դևերը սաստիկ խռովվում և երկնչում են, երբ վերև՝ մեր Հորն ենք նայում»:

46. Հայրերից մեկը հարցրեց մի իմաստուն բժշկի և ասաց. «Բոլոր ցավերին դեղ գիտե՞ս, ո՛վ իմաստուն»: Բժիշկն ասաց. «Գիտեմ, եթե ինձ լսես: Վերցրո՛ւ ապաշխարության շաքարը, եղբայրասիրության ծաղիկը, աղքատասիրության տերևը, խոնարհության պտուղը և լցրո՛ւ ողորմության խնկաղացի մեջ ու ծնրադրած աղա՛ այն: Քամի՛ր տվայտանքի դաստառակի մեջ և արտասվախառն ըմպի՛ր ամեն գիշեր: Այս է ցավերի դեղը, որը ոչ միայն մարդու ներսն է բժշկում, այլև արտաքինն է սրբում, նորոգում և մաքրում»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

47. Հայր Պամբոն հարցրեց հայր Անտոնիոսին և ասաց. «Ի՞նչ անեմ, որ առավել հոգեշահ լինի»: Ծերը նրան ասաց. «Մի՛ հուսա քո արդարությանը, մի՛ ափսոսիր անցած-գնացած գործերիդ համար և զգուշորեն պահո՛ղ եղիր լեզուդ, որովայնդ և որկորդ»:

48. Հայր Անտոնիոսն ասաց. «Մեր առաջին հայրերը գնացին անապատ. նախ իրենք բժշկվեցին, ապա դարձան հոգևոր հմուտ բժիշկներ և վերադառնալով այնտեղից՝ այլոց բժշկեցին: Իսկ մենք, աշխարհից դուրս գալով, նախքան մեզ բժշկելը՝ ուզում ենք ուրիշներին բժշկել: Ուստի մեզ է վերադառնում այն ախտը, որն ուզում էինք բժշկել, իսկ հետինն ավելի չար է լինում, քան առաջինը (հմմտ. Մատթ. ԺԲ, 45)*: Ապա մեզ վրա է գալիս Տիրոջ խոսքը, թե՝ «Բժի՛շկ, բժշկի՛ր քո անձը»* (Ղուկ. Դ, 23)*:*

49. Հայր Անդրեասն ասաց. «Այս երեքն են վայել կրոնավորին. օտարասիրություն, աղքատություն և լռություն՝ համբերությամբ»:

50. Ալեքսանդրիայի եպիսկոպոս հայր Աթանասն ասաց. «Մեզանից շատերն ասում են, «Ո՞ւր են հալածանքները, որ վկայենք և մեռնենք»: Սակայն ես ասում եմ. «Ուզո՞ւմ ես վկայել՝ մեռի՛ր մեղքերի համար, մեռցրո՛ւ և երկրավոր անդամներդ, քո մտքո՛վ սրբվիր և կվկայես Քրիստոսին: Քրիստոսի սուրբ վկաները թագավորների ու բռնակալ իշխանների դեմ էին պատերազմում: Դու էլ ունես ոսոխներ. մեղքերի իշխան Սադայելը ու նրա իշխանները՝ չար դևերը: Սրբերի առջև կուռքերի մեհյաններն էին ու նրանց զոհասեղանները՝ պղծություններով լեցուն: Իսկ դու մեհյան համարիր որկրամոլությունը, զոհասեղան համարիր փափկասիրությունը, իսկ կուռք՝ մեղքերի ցանկությունը, որովհետև ով պոռնկության և ցանկությունների հետևից է գնում՝ ուրացել է Քրիստոսին և կուռքերին է երկրպագում, և իր հոգում Ափրոդիտեին ունի՝ որպես մեղքերի ցանկության մարմնացում և մարմնի պղծություն: Եվ դարձյալ, ով տեղի է տալիս զայրացկոտությանն ու բարկությանը և իրենից դուրս չի հանում այդպիսի խստության ախտը, նա ևս ուրացել է Քրիստոսին և իր հոգու մեջ Արեսն է որպես աստված, քանզի տեղի տվեց բարկացկոտությանը, որը նրան թունավորող կուռքն է: Իսկ եթե որևէ մեկը արծաթասեր է ու նյութապաշտ

և փակել է ողորմության դուռն իր եղբոր առջև ու չի բացում այն ընկերոջ համար, ապա նա նույնպես ուրացել է Հիսուս Քրիստոսին և պաշտում է կուռքերին: Նրա հոգում Հերմեսն է որպես աստված, քանզի դեռևս արարածներին է ծառայում, և ոչ թե՝ Արարչին, քանզի արծաթասիրությունն է իրապես արմատն ամենայն չարիքի: Իսկ ով այս ախտերից հեռացել է, նա ոտնակոխ է արել կռապաշտությունը, ուրացել է անօրենությունը և վկայել է Քրիստոսին: Նա կատարյալ և ճշմարիտ մարտիրոս է և խոստովանել է բարի խոստովանությամբ»:

51. Հայր Բեսարիոնն ասաց. «Երբ խաղաղության մեջ լինես և ոչ մեկի հետ պատերազմ չունենաս, այնժամ առավել ևս պիտի խոնարհվես, միգուցե ինչ-որ օտար ուրախություն ներս մտնի՝ ուրիշների գովաբանության կամ պարծենկոտության պատճառով, և ընկնես պատերազմի մեջ: Դրա համար էլ շատ անգամ Աստված մեր տկարության պատճառով թույլ չի տալիս, որ պատերազմ գա մեզ վրա, որպեսզի դրա պատճառով չկորչենք»:

52. Ոմն եղբայր, որ բնակվում էր եղբայրների հետ, հարցրեց հայր Բեսարիոնին և ասաց. «Ի՞նչ պետք է անեմ, ո՛վ հայր»: Հայր Բեսարիոնն ասաց նրան. «Լո՛ւռ մնա, ոչ մեկին ծանրութեթև մի՛ արա, այլ միայն քո ա՛նձը քննիր»:

53. Վախճանվելու ժամին հայր Բեսարիոնն իր աշակերտներին ասաց. «Միշտ ուրա՛խ եղեք, անդադար աղոթեցե՛ք, ամեն ինչի համար գոհացե՛ք և կապրեք»:

54. Մեկը հայր Բեսարիոնից խրատատական խոսք խնդրեց: Ծերը նրան ասաց. «Գնա մի քիչ կե՛ր, մի քիչ ձեռագո՛ծ արա քո սենյակում, անխռո՛վ եղիր և կապրես»:

55. Հայր Դիմակրատոսն ասաց. «Եթե հագնենք երկնավոր հանդերձները, մարմնից դուրս գալու օրը մերկ չենք լինի այդ հանդերձներից: Ի՞նչ պետք է անենք, եղբայրներ, քանզի լսելու ենք այն սոսկալի խոսքը, որ ասում է. «Հանե՛ք, դո՛ւրս գցեք դրան արտաքին խավար: Այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (հմմտ. Մատթ. ԻԲ, 13)*: Որքա՜ն ամոթ ու խայտառակություն կլինի մեզ, որ այսքան տարի այս տեսակի ու կարգի զգեստներ կրելով՝ ընտրության ժամին հարսանյաց հանդերձներից մերկ լինենք և դուրս գցվենք: Ո՜վ սարսափ. ինչպիսի՜ ահ ու դող կգա այնժամ մեզ վրա, ինչպիսի՜ զղջում կհամակի մեզ, ինչպիսի՜ զարհուրանքով կբռնկվենք, երբ մեր կարգակից հայրերին և եղբայրներին տեսնենք հարսանյաց փառք ու պատիվների մեջ,*

իսկ մեզ՝ անողորմ հրեշտակների ձեռքում տանջանքների մատնված: Ինչպիսի՜ տրտմությամբ պիտի լցվեն հայր Անտոնիոսն ու հայր Ամոն Նիտրացին, հայր Պողոս Փոտեցին ու Ամոն Արաբացին, Մակարիոս Ալեքսանդրացին ու Որսիսիոս Իթիղոնեցին, Մովսես Թեբայիտացին, Ամոն Քերենիտացին և բոլոր սուրբ հայրերն ու արդարները: Ինչպիսի՜ տրտմությամբ ու հառաչանքներով պիտի գալարվեն, երբ իրենք վեր՝ երկինք պիտի հրավիրված լինեն, իսկ մեզ հրմշտելով՝ արտաքին խավարը պիտի հանեն»:

56. Հայր Եպիփանն ասաց. «Եթե եղբայրների արմատ Մելքիսեդեկը, որ օրինակն էր Քրիստոսի, օրհնեց Աբրահամին (հմմտ. Ծննդ. ԺԴ 19)*, ապա որչափ առավել ճշմարիտ Աստված կօրհնի և կսրբի իրեն հավատացողներին»: Դարձյալ ասաց. «Քրիստոնյան, որքան կարող է, պետք է սերտի և յուրացնի Սուրբ Գիրքը: Միայն Գիրքը տեսնե՛լն իսկ մարդուն ետ է պահում մեղքերից, էլ ուր մնաց ընթերցելը, և դեպի արդարություն է մղում ու բարձրացնում հոգին»: Ասաց դարձյալ. «Սուրբ Գրքի ընթերցումը հաստատում է անմեղության մեջ»: Նույն ինքն ասաց. «Աստծո օրենքների անգիտությունը կյանքի լքում է և կորուստ»:*

57. Նույն հայր Եպիփանն ասաց. «Արդարների և գիտունների մեղքը մինչև շրթունքներն են միայն, իսկ անօրեններինն ու տգետներինը՝ բովանդակ մարմինն ու միտքը: Սրա համար էր աստվածային Դավիթը երգում ու ասում. «Տե՛ր, պահապա՛ն դիր իմ բերանին, և շրթունքներիս՝ դուռ, որպեսզի լեզվով չմեղանչեմ» (Սաղմ. ՃԽ, 3-4)*»:*

58. Դարձյալ հայր Եպիփանն ասաց. «Մեղավորներին Աստված դյուրությամբ է թողություն շնորհում, երբ ապաշխարում են (ինչպես պոռնիկին և մաքսավորին) (հմմտ. Հեսու Զ 17-25, Հովհ. Ը 4-10, Ղուկ. ԺԸ 10-14)*, իսկ արդարի մեղքերի համար տոկոսներ է պահանջում՝ ըստ Տիրոջ խոսքի, որ առաքյալներին ասաց. «Եթե ձեր արդարությունն ավելին չլինի, քան դպիրներինն ու փարիսեցիներինն է, Երկնքի Արքայություն չեք մտնի»* (Մատթ. Ե 20)*»:*

59. Հայր Եպրեպիոսն ասաց. «Եթե քո մեջ ունես Աստծո հավատը, լիովին հավատա՛ Նրան, և դրանով կստանաս ամեն ինչ: Եթե խնդրածդ չստանաս, ուրեմն կարճամիտ ես և չես հավատում Նրան: Իսկապես հավատում ենք, թե այն ամենը, ինչ կա, Աստծու կողմից է ստեղծված: Նրա կողմից ստեղծվեցին բոլոր տեսանելի արարածները, ինչպես նաև նրանք, որ չեն երևում: Նա կարող է անել այն ամենը, ինչ կամենա»:

60. Ոմն եղբայր հարցրեց նույն ծերին և ասաց. «Աստծո երկյուղն ինչպե՞ս է գալիս բնակվելու մարդու մեջ»: Ծերն ասաց. «Եթե մարդն ունի խոնարհություն և անընչություն, ապա սրանց միջոցով Աստծո երկյուղը գալիս է մարդու մեջ»: Դարձյալ ասաց. «Աստծո երկյուղը ընդմիշտ մեզ հետ է բնակեցնում և՛ խոնարհությունը, և՛ կերակրի պակասությունը, և՛ ողբը, և՛ զղջումը»:

61. Նույն այս հայր Եպրեպիոսը մի անգամ գնաց մի ծերի մոտ և ասաց նրան. «Մի խո՛սք ասա ինձ, հա՛յր, որ նրանով ապրեմ»: Ծերը նրան ասաց. «Եթե կամենում ես ապրել, ուր էլ որ գնաս, ոչ մի բան մի՛ արա՝ նախքան քեզ դիմելը»: Նա այս խոսքի վրա սաստիկ զղջում ապրեց և ընկնելով ծերի ոտքերն՝ ասաց. «Իսկապես, հա՛յր, բազում գրքեր եմ կարդացել, սակայն այսքան շահեկանություն ոչ մեկից չստացա»: Եվ գնաց՝ մեծապես շահած:

62. Հայր Եվգենիոսն ասաց. «Մեզ համար ավելի լավ է մուրացիկ լինել և միայն Քրիստոսի՛ն մերձավոր լինել. և իսկապես մեծ է նա, ով մերձավոր է Քրիստոսին, թեկուզ նյութապես աղքատ լինի: Իսկ ովքեր երկրայինը առավել են պատվում, քան երկնայինը, երկուսից էլ կզրկվեն. նույնպես և նա, ով երկնայինին է տենչում, երկուսն էլ կունենա՝ այս երկրավոր կյանքն ու հավիտենական կյանքը»:

63. Հայր Մակարիոսն ասաց հայր Զաքարիային. «Ասա՛ ինձ, հայր, և ուսուցանի՛ր ինձ կրոնավորության գործը»: Հայր Զաքարիան պատասխանեց և ասաց. «Եվ այդ դո՞ւ ես ինձ հարցնում»: Մակարիոսն ասաց նրան. «Ես հավատում և վստահում եմ քեզ, ո՛վ որդյակ Զաքարիա. մի բան կա, որ ճմլում է սիրտն իմ և ստիպում է հարցնել քեզ»: Զաքարիան նրան ասաց. «Ես այսպես եմ կարծում, հայր, որ ամեն գործի մեջ իր անձը բռնադատելն է մեծ կրոնավորությունը»:

64. Քահանա հայր Եսայիասն ասաց. «Հայրերից մեկը մեզ ասում էր, թե կրոնավորը ամեն ինչից առաջ պարտավոր է ստանալ հավատ առ Աստված, սեր և հաստատուն փափագ առ Աստված, անմեղություն, և չարին չարով չհատուցի: Այսպես դարձյալ՝ պետք է ստանա ճգնություն՝ ըստ կարողության, խոնարհություն, սրբություն, մարդասիրություն և սեր ամենքի հանդեպ, հեզություն, երկայնամտություն և համբերություն: Եվ ունենա կարոտ առ Աստված, աղաչի Նրան մշտապես ցավագնած սրտով, երբեք ետ չնայի, զգուշություն ունենա, չհուսա իր արդարությանը և միշտ աղերսներով խնդրի Աստծո օգնությունը՝ գալիք փորձություններից ազատվելու համար»:

65. Ասաց դարձյալ. «Մարմնի տքնությունը, աղքատությունը, օտարությունը, արիությունը և լռությունը խոնարհություն են ծնում, իսկ խոնարհությունը ջնջում է մեղքերի բազմությունը. ով չի պահում սրանք՝ նրա մենակեցությունն ընդունայն է»:

66. Ասաց դարձյալ. «Ատի՛ր աշխարհիկ ամեն գործ և քո մարմնական հանգիստը, քանզի դրանք կարող են քեզ Աստծո թշնամի դարձնել. ինչպես, օրինակ, մարդ թշնամի է ունենում և անընդհատ պայքարում է նրա դեմ, այդպես և հարկավոր է պայքարել մեր մարմնի դեմ, որպեսզի հանգիստ չտանք նրան»:

67. Ոմն եղբայր հարցրեց հայր Եսայիասին «Հայր մեր, որ յերկինս ես ...» աղոթքի մասին: Ծերը նրան ասաց. «Այդ աղոթքը կատարյալներինն է, քանզի ով մարմնական ախտերի դեմ է պայքարում, նրա մոտ չի կարող սուրբ լինել Տիրոջ անունը»:

68. Հայր Եսայիասը պատմեց մեզ Հայր Մակարիոսի մասին և ասաց. «Մի անգամ նստած էինք հայր Մակարիոսի հետ՝ երկուսով, և այդ ժամանակ Ալեքսանդրիայից յոթ եղբայրներ եկան և փորձելով հայր Մակարիոսին՝ ասացին նրան. «Խրատական խոսք ասա մեզ, հա՛յր, որ դրանով ապրենք»: Իսկ ես տախտակ վերցրի և սկսեցի գրել նրա խոսքերը, որ ասում էր նրանց: Իսկ ծերը հառաչելով ի խորոց սրտի՝ լուսավոր խոսքերով բացեց իր բերանն ու ասաց նրանց. «Ո՛վ եղբայրներ, մեզանից յուրաքանչյուրը գիտե ճանապարհը, որով պետք է փրկվի, իսկ դուք կամենո՞ւմ եք ապրել»: Նրանք ասացին. «Շատ ենք ուզում ապրել, սակայն մեզ բռնել և չեն թողնում մեր չար խորհուրդները»: Ծերն ասաց նրանց. «Արդ, եթե կրոնավոր եք, ինչո՞ւ եք աշխարհականների հետ շրջում և նրանց հետ բնակվում, կամ ինչո՞ւ եք ընդհանրապես մոտ լինում այն տեղին, ուր աշխարհականներն են, և կամ մի՞թե չգիտեք, թե ով հրաժարվում է աշխարհից, այս սուրբը կերպն է ընդունում և սուրբը կենցաղավարություն է ստանձնում, իսկ եթե դարձյալ խառնվում է աշխարհականների հետ՝ յուրայինների թե օտարների, այսպիսիք Աբրենց են խաբում, և Աստծուն, և սուտ ու ընդունայն է նրանց կրոնավորությունը: Քանզի ի՞նչ են շահում աշխարհականներից, եթե ոչ՝ միայն վշտեր ու մարմնական հանգիստ. այնտեղ չի կարող բնակվել Աստծո երկյուղը, քանզի ո՞վ է կրոնավորը, եթե ոչ՝ նա, ով միայն Աստծո հետ է ապրում ու միայն Նրա հետ խոսում գիշեր ու ցերեկ: Որովհետև կրոնավորը մեկ ժամ իսկ չպետք է մնա աշխարհականների հետ, իսկ եթե անհնարին իրավիճակ է՝ թող մեկ օր մնա, և այս էլ այն դեպքում, եթե այդ գործն անհնար է հետաձգել, կամ՝ եթե

վաճառում է իր ձեռագործը և գնում կենսական անհրաժեշտության իրեր, վերադառնալով իր խուցը՝ թող ջերմ արտասուքներով ապաշխարի այդ օրվա համար, որ քաղաքում մնաց՝ իր ձեռագործը վաճառելու համար, որովհետև ոչինչ չշահեց դրանից: Քանզի կրոնավորը, որ աշխարհականների հետ է բնակվում, նրանց համար է իր առաքինությունները ավելացնում, քանի որ նախքան նրանց հարելը՝ նրա կենցաղի սկիզբն այսպես է լինում. պահպանում է լռություն և հեզություն, քչախոսություն և հանգիստ նայվածք, խիստ պահեցողություն է անում՝ մինչև որ ամենքին հայտնի դառնա, և նրա համբավը դուրս է գալիս, և անունը հռչակվում է, թե՝ այսինչ անուն կրոնավորը սուրբ է և առաքինի: Դրանից հետո սատանան դրդում է այնտեղի աշխարհականներին՝ աշակերտելու նրան և լիացնելու նրա պետքերն ու ունեցվածքն առատորեն, ինչպես նաև՝ հացի, գինու և ձեթի կարիքները, և սկսում են գովել և ասել. սուրբ, սուրբ, սուրբ է: Իսկ նա՝ եղկելի կրոնավորն այն, ինչպես որ բնորոշ է ամբարտավանությանն ու սնափառությանը, լսելով սուրբը և գովեստի խոսքերը՝ փքվում է, այնուհետև սկսում է նստել նրանց հետ, ուտել, խմել և պարարտանալ, և կեղծավորներից նյութական բարիքներ ստանալով՝ նախապես պահքով սկսածը վերջացնում է հղփացած գինարբուքներով՝ այդ ամենը հյուրընկալություն և հոգեշահություն կոչելով: Ապա արբենալուց հետո վեր կենալով՝ սկսում է հսկման աղոթքներն անել և երգելիս բարձրացնում է ձայնը, մինչև որ իր հետ եղող խաժամուժը սկսում է գովել նրան և ասել, թե իբր այս մենակյաց սուրբը հրեշտակային ձայնով է բարեպաշտություն անում և խիստ հսկում ու աղոթում է: Եվ դրանից ավելի է գոռոզանում եղկելին ու հանկարծակի դեն է նետում իր խոնարհությունը, և դիվական ամբարտավանության հոգին է համակում նրան. և եթե մեկը ոչ մեղմորեն մի բան ասի նրան, խիստ ու կոպիտ պատասխան կտա՝ ահեղ ձայնով, գոռոզ խոսքերով և վայրագ հայացքով: Եվ մինչ նա այսպես համառում է աշխարհականների մեջ և գիրանալով լցնում է որովայնն ու հոգին՝ կրկնակի ախտերով, գինին սաստիկ կերպով նրա սիրտն է մխրճում պոռնկության նետերը՝ դեպի կանայք ու երիտասարդները, և խեղդում ու նեղում է նրան դրանով և կենցաղային ամեն տեսակ հոգսերով, ձգում է նրան մինչև մեղքերի խորխորատները, կամ նրանում, ինչ որ Տերն ասաց, թե՝ «Ամեն մարդ, որ կնոջ նայում է՝ նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե 27-28)*: Ապա թե այս էլ արհամարհելով առասպել համարի, այնժամ դևից գայթակղվելով՝ ամբողջապես կընկնի շնության մեջ՝ կամ մարմնավոր ազգակիցների հետ, որն ուրիշները*

չեն էլ կասկածի, կամ խոստովանաքույրերի ու դուստրերի հետ, կամ իրեն աշակերտող երիտասարդների հետ, և այսպես կտրվելով Աստծուց՝ կհեռանա Նրանից, հեշտասիրության մեջ կընկնի և արհամարհելով մեղքը՝ կկորչի իսպառ: Այնուհետև կսկսի ամբողջ տարին ունեցվածք կուտակել՝ պատճառ բռնելով իր կարիքներն ու շատ հյուրեր ունենալը, և այդպես՝ երկու-երեք տարի, և մեծամասամբ կսկսի աշխարհիկ գործեր անել, բազում ոսկի ու արծաթ և ամեն տեսակ իրեր հավաքել, մինչև որ դևերը նրա մեջ սերմանեն ամենայն չարիքների արմատը՝ արծաթասիրությունը, ինչը կրկնակի կռապաշտություն է: Եթե մեկը նրան փոքր-ինչ ոսկի, արծաթ կամ այլ բան տա, ետ կդարձնի՝ ասելով. «Դա ինձ պետք չէ, որովհետև ոչ մեկից բնավ որևէ բան չեմ վերցնում»: Այսպես կտրտմեցնի ու ամոթով կթողնի բերողին: Իսկ եթե մեկը նրան բերի բազում ոսկի ու արծաթ, որը հաճո թվա իրեն, հապշտապ կվերցնի ցնծությամբ, շուտափույթ ճոխ և ամեն բարիքներով լի սեղան կդցի, ծաղկահոտ գինիներ կբերի և կսկսի հղփացածությամբ ուտել ու խմել և հյուրերին հրամցնել: Իսկ աղքատներին, առավել ևս Քրիստոսին, որ դրսում կանգնած բախում է դուռն ու խնդրում, ոչ ոք չի լսի և ոչ ոք չի ողորմի նրան: Այսպիսիների մասին մեր Տեր Հիսուս Քրիստոս ասաց. «Ավելի դյուրին է, որ ուղտն ասեղի ծակով անցնի, քան թե հարուստը Երկնքի Արքայություն մտնի» (Մատթ. ԺԹ 24, Մարկ. Ժ 25, Ղուկ. ԺԸ 25)*»: Մի՞թե ձեզանից մեկը կարող է ասել՝ ես մեծատուն չեմ և ոչ էլ հարուստ, իսկ մեկ ուրիշը, թե՝ ինձ ոչինչ պետք չէ ուրիշից, այլ իմ ձեռքերով կստեղծեմ, Աստված տվեց ինձ, ու ես իմն ունեմ: Այժմ ասացե՛ք ինձ, ո՞վ հայրե՛ր, հրեշտակները երկնքում երբևէ ոսկի հավաքո՞ւմ են: Ո՛չ, այլ միայն Աստծուն են փառաբանում: Եվ արդ, մենք, ո՞վ եղբայրնե՛ր, ինչո՞ւ ենք հանդերձավորված նրանց պես: Կերպարանափոխվեցինք, որ ձեռք բերենք ու հավաքենք բազում ոսկի ու արծա՞թ, թե՞ նրա համար, որ հրեշտակների պես սուրբ ու անինչ լինենք: Մի՞թե չգիտեք, որ այն դասը, որից նրանք ընկան երկիր, կրոնավորները պետք է լրացնեն: Ուրեմն՝ ինչո՞ւ հրաժարվեցինք աշխարհից, իսկ եթե հրաժարվում ենք, ինչո՞ւ ենք երկմտում ու ետ դառնում խոնարհության ճանապարհից: Կամ՝ չգիտե՞ք, որ գինին, ոսկին ու արծաթը, կանայք, մարմնի հանգիստն ու նրա հեշտանքները, ինչպես նաև աշխարհականների հետ խառնվելը և նման այլ բաները մեզ հեռացնում են Աստծուց. «Քանզի բոլոր չարիքների արմատը արծաթասիրությունն է* (Ա Տիմ. Զ 10)*, և այնչափ չար է, որ արծաթասեր կրոնավորը հեռու է Աստծուց այնքան, որքան երկիրը՝ երկնքից: Եվ իսկապես, չկա՛ ոչինչ ավելի չար, քան արծաթասեր մենակյացն է: Եվ*

ովքեր կանանց, երիտասարդների և աշխարհականների խոսակից կրոնավորներ են, բոլոր մարդկանցից առավել ողբալի են: Հենց սրանցից պետք է փախչեն կրոնավորները. դրանք Աստծուց մերժվածներ և դևերի բաժին դարձածներ են: Զե՞ն լսում՝ ինչ է ասում Հովհաննես առաքյալն ու ավետարանիչը. «Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մեջ կա: Եթե մեկը սիրում է աշխարհը, նա Աստծո սիրո մեջ չէ» (Ա Հովհ. Բ 15-16)*: Այսպես նաև Հակոբոս առաքյալն է խրատում մեզ և ասում. «Ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կանի»* (Հակ. Դ 4)*: Փախե՛ք, ով եղբայրնե՛ր, փախե՛ք աշխարհից, ինչպես մեկը կփախչի քարը օձից, քանզի օձերն ում խայթում են, դժվար է բուժվում, այդպես էլ՝ աշխարհը: Եթե կամենում ենք կրոնավոր լինել, փախչե՛նք աշխարհից, քանզի լավ է մեզ համար մեկ պատերազմ ունենալ, քան՝ բազում և անթիվ պատերազմներ: Ուրեմն, ասացե՛ք, ո՞վ հայրե՛ր և եղբայրնե՛ր, որտե՞ղ ստացան առաքինություն սուրբ հայրերը՝ քաղաքներում ու գյուղերո՞ւմ, թե՞ անապատներում ու անտառներում: Եթե նրանք այնտեղ ստացան առաքինություն, մենք ինչպե՞ս կարող ենք ստանալ քաղաքներում ու գյուղերում: Եթե չքաղցենք և չծարավենք, չմրսենք և գազանների հետ չբնակվենք, կարճ ասած՝ եթե մարմնով չմեռնենք, ինչպե՞ս կապրենք հոգով: Եվ ինչպե՞ս ենք կամենում ժառանգել Երկնքի Արքայությունը. աշխարհականների հետ բնակվելո՞վ: Նայեցե՛ք թագավորների զինվորներին: Եթե զինվորը չպատերազմի և չհաղթի, պատվի չի արժանանա: Մենք՝ առավել ևս. ուտելով ու խմելով, աշխարհականների ու էգերի հետ խառնակվելով՝ չենք մտնի Երկնքի Արքայություն: Թ՛ող մեզ չհամոզեն չար դևերն իրենց խորհուրդներով՝ ասելով, թե՝ ունեցվածք հավաքեցե՛ք, որ ողորմություն անեք, քանի որ եթե մեկը ճրագուի յուղից ողորմություն չի անում, նա բյուր տաղանդներից էլ չի անի: Մի՛ եղեք այդպես, եղբայրնե՛ր, մի՛ եղեք, դա աշխարհականների գործ է: Աստված չի կամենում, որ մենք՝ կրոնավորներս, արծաթ և ոսկի ունենանք, ոչ էլ թանկարժեք հագուստներ կամ նյութական այլ ունեցվածք, և ոչ էլ ողորմող լինենք, քանզի Տերն ինքն ասում է. «Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որոնք ո՛չ վարում են, ո՛չ ցանում, ո՛չ էլ շտեմարաններում են հավաքում, սակայն ձեր Երկնավոր Հայրը կերակրում է նրանց»* (Մատթ. Զ 26)*: Կրոնավորը, որ կուտակում է ոսկի կամ արծաթ կամ այլ ունեցվածք, չի հավատում, թե Աստված կարող է կերակրել իրեն: Իսկ եթե մեզ հաց չի կարող տալ Աստված, ապա և Արքայություն էլ չի կարող տալ: Նաև սա՛ իմացեք, որ եթե մեկն ունենա ինչ-որ պետքական իր, և որևէ աշխարհական դրանից մեկ ուրիշը բերի նրան, դա Աստծուց չէ,*

այլ սատանայի ազդեցությամբ է, իսկ եթե չունենա և խնդրի մեկ-երկու անգամ, և ինչ-որ մեկը բերի՝ դա Աստծուց է ուղարկված, ինչպես որ Դանիելին՝ առյուծների գբի մեջ (Դան. Զ), *քանզի Աստված գիտե ճիշտ ժամանակին շնորհել պետք եղածը: Իսկ եթե մեկը կարիքի մեջ չէ, կամ թե ունի ոսկի, արծաթ կամ այլ ունեցվածք և չի բաժանում այն, այլ սպասում է, որ մեկը գա և ինչ-որ բան բերի իրեն, նա մեղսակից է լինում Հուդա Իկարիովտացուն, ով թողեց բժշկության շնորհն ու առաքելական վիճակը, որ Տիրոջից էր ստացել, և արծաթասիրության ցանկությունից խեղդվեց: Այս գիտենալով՝ երանելի Պողոսը բոլոր չարիքների արմատ և կռապաշտություն անվանեց այն* (հմմտ. Ա Տիմ. Զ 10)*: Տեսե՛ք, ո՛վ եղբայրնե՛ր, թե ինչպիսի գբի մեջ է գցում կրոնավորին այս ախտը, մինչև իսկ կռապաշտության մեջ է գցում նրան, քանզի այդպիսին ճշմարտապես հեռանում է Աստծուց և ոսկուն ու արծաթին է երկրպագում, որը ձեռագործ կուռքերի և մարդկանց ստեղծածն է»: Ո՛վ չար արծաթասիրություն, որ կրոնավորներին հեռացնում ես Աստծո սիրուց: Ո՛վ արծաթասիրություն, որ դառնագույն նենգություն ես, որ զրկում ես մենակյացներին հրեշտակների դասակարգությունից: Ո՛վ արծաթասիրություն, որ բոլոր չարիքների արմատ կոչվեցիր, որ կրոնավորներին դարձնում ես ավելորդ ունեցվածք կուտակող: Ո՛վ արծաթասիրություն՝ բոլոր չարիքների ժողովարան, որ մենակյացի լեզուն սրում ես անարգանքների, ատելության, խառնակչությունների և կռիվների համար, մինչև որ հասնի աշխարհիկ ատյան: Վա՜յ արծաթասեր կրոնավորին, քանզի նրա մեջ է բնակվում հղփության ու կռապաշտության դևը: Վա՜յ արծաթասեր մենակյացին, քանզի Աստծո օրենքը լուծարեց, որ ասում է. «Մի՛ վերցրեք ոսկի և արծաթ»* (Մատթ. Ժ 9)*. վա՜յ նրան, որ մեծամեծ օրենքները պահելով՝ այս մեկում Աստծուն ուրացող եղավ: Բազում անգամ դևը խորհուրդ է գցում արծաթասեր կրոնավորի սիրտը և ասում. «Այս գիշեր հսկո՛ւմ արա և լուսաբացին հրավիրի՛ր եղբայրներին և ընդունելություն ու հյուրասիրություն արա: Տո՛ւր ունեցվածքդ եղբայրներին և կարոտյալներին»: Եվ դարձյալ թուլացնում է և ասում. «Չե՛ս կարող նման բան թույլ տալ, ծանուցի՛ր ինձ լռություն և պահք. երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերի աղոթական կարգը կկատարեմ, և ողջ ցերեկը պահեցողություն կանեմ»: Եղկելին չի հիշում Տիրոջ խոսքը, որ ասում է. «Ոչ բոլորը, որ ինձ Տե՛ր, Տե՛ր են ասում, կմտնեն Երկնքի Արքայություն, այլ՝ ով կկատարի իմ Հոր կամքը, որ երկնքում է»* (Մատթ. Է 21)*: Այս էլ են ասում, թե ինչ վնաս կտան ոսկին ու արծաթը, որոնք ողորմության նյութ են: Չեն կարողանում գիտակցել այն, որ ուր ժողովված են ոսկին, արծաթը*

և երկրային նյութը, այնտեղ կսողոսկեն ամեն տեսակ ախտեր, և նրանց հետ կմտնեն բազում դևեր, որը և հոգու և մարմնի հեղձումն է, քանզի ոչ մի բարի բան չի կարող բնակվել այնտեղ, ուր ագահությունն է, այլ՝ կոծ մշտնջենավոր և վայ անպակասելի: Եվ ինչպե՞ս կարող է Նրա մոտ բնակվել ագահ և արծաթասեր կրոնավորը, քանզի թողեց իր Արարչի կամքը, Ով իրեն կանչեց հավիտենական կյանքի, և ոսկի պաշտելով՝ հավաքում է այն: Բազում անգամներ այսպիսի կրոնավորի սիրտը զղջում են գցում դևերը, և նա սկսում է տրտմել ու հոգոց հանել, կուրծքը ծեծել, արտասվել ու ասել. «Ահա՛ Աստված տվեց ինձ շատ ոսկի ու արծաթ, ինչո՞ւ չտամ սրանից աղքատներին»: Հետո զղջալիս շուտափույթ հիշում է ոսկու սերը, թողնում է զղջումն ու արտասուքը: Ո՛չ կարողանում է մեկ դանկ անգամ տալ ուրիշներին, ո՛չ էլ կարողանում է չարն արմատախիլ անել սրտից»: Ո՛վ իմ սիրելի՛ եղբայրներ, ինչի՞ց է, որ մենք՝ մենակյացներս, ունենք ոսկի, արծաթ և բազում հանդերձներ, սակայն չենք դադարում հավաքել, իսկ աղքատը՝ նույն ինքը Քրիստոս, տկար, մերկ ու քաղցած շրջում է դրսում, բայց ոչ մի բարի բան չենք գործում Նրա համար: Արդ, ի՞նչ պատասխան ենք տալու այն ահավոր օրը: Թեև հրաժարվում ենք աշխարհից, սակայն դարձյալ նրա մեջ ենք դեգերում ու շրջում, և՛ երկմտում ենք, և՛ ստում մեր տեսակի ու կարգի մեջ. սա հրեշտակային է, բայց մենք այն դարձնում ենք երկրավոր-կենցաղային, առավել սիրում ենք անցավորները, քան վերնայինները: Բնավ բարի բան չենք անում. եթե անում ենք էլ, ապա՝ մի կերպ և այն էլ կեղծավորությամբ և մարդկանց ցուցադրելով, որպեսզի փառավորվենք մարդկանցից: Իսկ արծաթասիրությունը ոչ թե անպայման մեծաքանակ ոսկով ու արծաթով կամ մեծ ունեցվածքով է որոշվում, այլ՝ մինչև իսկ մեկ դանկով, քանզի ով փոքրն իսկ սիրի, նա չար է ու արծաթասեր: Եվ ողորմությունն էլ ոչ թե ունեցվածքի առատությունից է, այլ՝ տվողի կամքից, նույնը և արծաթասիրությունը՝ ոչ թե շատությունից է, այլ՝ սիրողի կամքից: Մի՛ արեք այդպես, սիրելի՛ եղբայրներ, մի՛ արեք այդպես, այլ փախեք աշխարհից, քանզի եթե անապատում հոգով ապրելը դժվար է, որչա՛փ դժվար կլինի աշխարհի մեջ: Եվ ինչպե՞ս կարող ենք աշխարհականների և խառնաշփոթի մեջ ապրել: Արդարև հայտնի է, որ հնարավոր է ապրել ըստ Տիրոջ խոսքի, որ ասում է. «Ամեն ոք, որ չի հրաժարվում աշխարհից և նրա բոլոր գործերից և չի ատում իր անձը, ինձ արժանի չէ» (Ղուկ. ԺԴ 33)*: «Կենդանի եմ ես»,– ասում է Տերը* (Հովհ. ԺԴ 19)*, «Ելե՛ք նրանց միջից և գնացե՛ք, մերժեցե՛ք ձեր անձանցից չարը»: Տեսե՛ք, ո՛վ իմ սիրելի՛ եղբայրներ, թե որքա՛ն շահաբեր է աշխարհականների*

խոսակցություններից փախչելը: Նրանց խոսքերը՝ գնելու և վաճառելու, տնկելու և սերմանելու, շինելու և վիճելու, կանանց և մանուկների, ունեցվածքի, ոսոխների և ատյանների, հոտերի և ոչխարների մասին են, իսկ այսպիսի մտավարժանքներն ու դրանց ունկնդրությունները հեռացնում են մեր խորհուրդներն Աստծուց: Եթե միայն նրանց խոսակցությունները հեռացնում են մեր խորհուրդներն Աստծուց, ապա նրանց հետ ուտելն ու խմելը և ապրելը որքա՜ն վնաս կտան մեզ: Սա բնավ չի նշանակում, թե նրանք անսուրբ են ու պիղծ, քավ լիցի. այլ նրանք ուտում են օրը երկու-երեք անգամ, ուտում են և պարարտ կերակուր, և միս, և ըմպում են անհագորեն, բայց դա նրանց չի վնասում: Իսկ մենք հրաժարվել ենք մսից, ամեն տեսակ գիրացնող կերակուրներից, ճաշում ենք օրական մեկ անգամ: Ի հավելումն այս ամենի՝ եթե տեսնում են մեզ ուտելիս ու հագենալիս, իսկույն ևեթ բամբասում են մեզնից և ասում. «Ահա՛ ուտող, հարբեցող և որկրամոլ կրոնավորներ»: Նրանք չեն էլ հասկանում, որ մենք էլ իրենց նման տկար մարմին ենք: Իսկ եթե տեսնեն՝ չենք ուտում և պահեցողություն ենք անում, բամբասելով կասեն. «Ահա՛ սնափառ և մարդահաճո կրոնավորներ»: Նրանք մեր պատճառով իրենց հոգին են կորցնում: Եվ դարձյալ՝ եթե մեզ տեսնեն անլվա ուտելիս կամ անարգ զգեստներով և բոբիկ, կասեն. «Ահա՛ խենեշներ և ախտաժետներ, գարշահոտներ ու խաբեբաներ»: Իսկ եթե մեկին տեսնեն լվացված և հագնված, կասեն. «Ահա՛ պճնվողներ, գիրուկներ և միմոսներ»: Նրանք այսպես ասելով՝ կորցնում են իրենց հոգիները մեր պատճառով, իսկ մենք դառնում ենք պարտական և պատճառ նրանց կորստյան: Ուրեմն՝ փախչելով փախչենք նրանց հրավերքներից ու սեղաններից, ո՛վ եղբայրներ, և զատենք մեզ նրանցից. և նախընտրենք նրանց պարսավանքները, աղաչում եմ, քան թե գովաբանությունները, թեկուզ հայր կամ եղբայր կամ ազգականներ լինեն, քանզի նրանց սերը, ողորմելը կամ գովելը մեզ հավիտենական տանջանքների են մատնում, իսկ նրանց ատելն ու բամբասելը մեզ համար փառաց պսակի պատճառ են: Որովհետև՝ ի՞նչ կշահենք, եթե մարդկանց հաճո լինենք, սակայն մեր Տեր Աստծուն բարկացնենք: Եվ այս ամենը վկայում է Պողոս առաքյալը և ասում. «Եթե տակավին մարդկանց հաճո լինեի, ապա Քրիստոսի ծառա չէի լինի» (Գաղատ. Ա 10)*: Ուրեմն, աղոթենք ամենքս առ Տեր և ասենք. «Հիսո՛ւս Քրիստոս, Աստված մեր, հեռացրո՛ւ մեզանից մեր նեղիչներին ու թշնամիներին, մեկուսացրո՛ւ մեզ աշխարհականներից, փրկի՛ր մեզ մարդկանց գովեստներից ու պարսավանքներից»: Եվ չանե՛նք որևիցե մի գործ նրանց հաճոյանալու համար, քանզի նրանց*

գովեստները ո՛չ կարող են մեզ Երկնքի Արքայություն տանել, ո՛չ էլ նրանց պարսավանքները կարող են փակել մեր մուտքը դեպի կյանք: Եվ ա՛յս իմանանք, եղբայրնե՛ր, որ ամեն դատարկ բանի համար վերջին օրը հաշիվ ենք տալու մեր Տեր Աստծո և Արարչի առջև»: Հայր Մակարիոսը դադարեց խոսել, իսկ նրանք գնացին՝ երանելիի լուսազարդ խոսքերից հոգով ու մտքով նորոգված»:

69. Ոմն եղբայր եկավ հայր Եղիա մենակյացի մոտ, որ բնակվում էր սուրբ Սաբբայի այրում, և ասաց նրան. «Կյանքի խոսք ասա՛ ինձ, ով հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Մեր հայրերի օրոք այս երեք առաքինություններն էին փայլում. անընչություն, անմեղություն և պահեցողություն: Այժմ կրոնավորներին տիրել են ագահությունը, որկրամոլությունն ու լիրը հանդգնությունը: Արդ, սրանցից որը կկամենաս, այն էլ վերցրու քեզ համար»:

70. Հայր Թեոդորոս Փերմացին ասաց. «Կրոնավորը, որ միշտ ապաշխարության մեջ է, օրենքի կողմից չի դատապարտվի»:

71. Կրոնավորներից մեկը խնդրեց եպիսկոպոսին՝ մենակյաց Թեոփիլոսին, մեկնել առաքյալի խոսքը, որ ասում է. «Գնե՛ք ժամանակը, քանզի օրերը չար են» (Եփես. Ե 16)*: Ծերն ասաց. «Բնությագրումն իսկ (օրերը չար են) բացահայտում է այդ խոսքի զորությունն ու օգտակարությունը: Հիրավի դա այսպես է. հասավ քեզ վրա արհամարհանքների ժամանակը՝ գնի՛ր ժամանակը պատկառանքով, խոնարհությամբ և երկայնամտությամբ, և շահ կլինի քո հոգուն: Դարձյալ. հասավ անարգության ժամանակը, դու այդ ժամանակը գնի՛ր անհիշաչարությամբ և հեզությամբ, և օգուտ կքաղես քո հոգու համար: Այսպես ներհակ են միմյանց առաքինություններն ու ախտերը. ախտին ներհակ առաքինությամբ գնե՛նք ախտի շարժվելու ժամանակը և կշինվենք՝ եթե կամենանք»:*

72. Ասաց դարձյալ. «Ջանանք մտնել նե՛ղ դռնով: Եթե ծառերն ու տունկերը չընդունեին ձմեռ ու անձրև, չէին կարողանա պտղաբերել. այդպես էլ մենք: Եվ քանի որ մեր այս կենցաղը ձմեռ է, այս ընթացքում եթե չկրենք և հանձն չառնենք բազում վշտեր և ճգնություններ, Երկնքի Արքայություն չենք կարողանա մտնել»:

73. Նույն հայրը դարձյալ ասաց. «Վարդապետ եղբայրներին հարկ է հեռու լինել իշխանասիրությունից, ամբարտավանությունից և հպարտությունից, չծաղրել այլոց աղաչանքները, չբռնադատվել իր իսկ որովայնից, բարկությունից ու սրտմտությունից, այլ հարկ է լինել

երկայնամիտ, հեզ և խոնարհ, ինչպես նաև՝ պահեցող՝ ամբողջ զորությամբ, հարցախույզ, ողորմած և հոգու շահը փնտրող»:

74. Վանահայր Հովհաննու մասին հայր Կասիանոսը ասում էր, թե մեծ էր նա երկրի վրա: Երբ մոտ էր այս աշխարհից առ Աստված փոխադրվելու պահը, իր վերջին շնչում սաստիկ ուրախ էր և փափագում էր գնալ: Նրա շուրջը եղբայրներ կային և աղաչում էին, որպեսզի մի կարճառոտ և կենսուսույց խոսք ասի իրենց և իբրև ժառանգություն թողնի իրենց, որով կարողանան դեպի վեր բարձրանալ՝ առ աստվածային կատարելություն: Իսկ նա հառաչեց և ասաց նրանց. «Երբեք իմ կամքը չկատարեցի և երբեք որևէ մեկին չուսուցանեցի այն, ինչը նախապես ինքս չարեցի»:

75. Հայր Հովհաննես Կիլիկիացին, որ Ռայիթա լեռան առաջնորդն էր, ասաց. «Ինչպես աշխարհից փախանք, նույնպես և փախչե՛նք մարմնական ցանկություններից: Մեր հայրերին նմանվե՛նք՝ հիշելով, թե ինչպիսի խստագույն ճգնակեցությամբ էին ընթանում նրանք, և չպղծե՛նք, ո՛վ եղբայրներ, այս տեղանքը, որը մեր հայրերը ճգնությամբ ու իրենց քրտինքով սրբեցին դևերից: Քանի որ սա ճգնավորների ու անմարմին սրբերի վայր է, և ոչ թե կրպակավոր փերեզակների վաճառատեղի»:

76. Մի անգամ Գեթսեմանիից ելնում էինք Ձիթենյաց լեռը: Այնտեղ էր հայր Աբրահամի վանքը, որի վանահայրն էր հայր Հովհաննես Կոզիկեցին: Հարցրինք նրան, թե ինչպե՞ս կարող է մարդը ձեռք բերել առաքինություն: Պատասխանեց մեզ ծերը և ասաց. «Եթե մեկը ուզում է առաքինություն ստանալ, չի ստանա, եթե նախ չհատի նույն դռնից մտնող չարությունը, այսինքն՝ եթե տենչում ես ստանալ ողբ, հատի՛ր և դեն նետի՛ր քեզնից ուրախությունն ու հրճվանքը, եթե ուզում ես խոնարհություն ձեռք բերել, ատի՛ր և հատի՛ր ամբարտավանությունը, իսկ եթե կամենում ես պահեցողության վարժվել, ատի՛ր հեշտասեր որկրամոլությունը: Եթե կամենում ես սրբություն ստանալ, ատի՛ր պղծությունն ու ցանկությունը, եթե անընչություն ես ուզում, ատի՛ր արծաթասիրությունը, եթե սիրում ես մենակեցությունը, ատի՛ր քաղաքներն ու գյուղերը և նրանց գայթակղությունները, եթե սիրում ես օտարություն, հեռացի՛ր քո հարազատներից ու ընտանիքից: Ով ուզում է հեզություն ստանալ, թո՛ղ ատի ընկերոջը դատելն ու բամբասելը, ով սիրում է անդորը ու անխռովություն, թո՛ղ առանձին բնակվի: Ով սիրում է լռություն, թո՛ղ խցի իր ականջները, որպեսզի չլսի շատերի խոսքը: Ով սիրում է գամել իրեն Աստծո երկյուղին, թո՛ղ

մշտապես ատի մարմնի հեշտանքները և իր վրա վերցնի՛ հանապազօրյա վշտեր ու նեղութիւններ»:

77. Ոմն եղբայր հարցրեց հայր Հովսեփին և ասաց. «Եթե հալածանքներ և տանջանքներ սկսվեն, հա՛յր, ո՞րն է ավելի լավ՝ փախչել անապա՞տ, թե՞ քաղաքներ ու գյուղեր»: Ծերը նրան ասաց. «Որտեղ լսես՝ ուղղափառներ կան, այնտեղ էլ գնա՛: Բնավ չունենաս երիտասարդական սեր քո սրտում, նրանց երբեք մոտ չնստես, այլ ատի՛ր և փախի՛ր այդ սիրուց, ինչպես չար գազանից: Եթե կարողանաս հանդարտվել քո սենյակում, դա էլ բարի է: Քո բանջարն ի՛նքդ մշակիր, որպեսզի ստիպված չլինես ուրիշի մոտ գնալ և նրանից խնդրել»: Եղբայրը նրան ասաց. «Ուզում եմ նստել եղբայրների մեջ և առանձնանալ իմ խցում. և տա՞մ նրանց իմ ձեռագործը և ստանամ նրանցից ինձ անհրաժեշտ բաները»: Ծերը նրան ասաց. «Մեր հայրերը հավանություն չտվին այդ գործին և չթույլատրեցին, որովհետև եթե այդ անես, ոչ մեկին չես տա քո հացը, քանզի թույլ չի տա քեզ սատանան»:

78. Ոմն եղբայր հարցրեց հայր Հիերաքսոսին և ասաց. «Հա՛յր, ինձ խոսք ասա՛, որով ապրեմ»: Եվ ծերը նրան ասաց. «Նստի՛ր քո խցում, քո մեղքերը ողբա՛ և ոչ մեկին մի՛ դատիր: Եթե քաղցես՝ կե՛ր, եթե ծարավես՝ խմի՛ր, ոչ մեկի մասին չար բան մի՛ խորհիր և կապրես»:

79. Ոմն եղբայր հարցրեց հայր Կրոնոսին և ասաց. «Ինձ խրատական խոսք ասա՛, հա՛յր»: Հայր Կրոնոսն ասաց նրան. «Երբ Եղիսեն գնաց այն սոմնացի կնոջ մոտ և իմացավ, որ նա ոչ մեկի հետ գործ չունի, կինը հղիացավ ու ծնեց Եղիսեի՝ իր մոտ գալու ժամանակ» (Դ Թագ. Դ 8-17)*: Եղբայրը նրան հարցրեց. «Ո՞րն է այդ խոսքի իմաստն ու զորությունը, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Երբ մարդն արթուն ու զգաստ է լինում, հեռու է պահում իրեն մարդկային խառնաշփոթից և հատում է իր կամքը, այնժամ նրա վրա գալիս է Աստծո Հոգին, և այնժամ կարող է ծնել առաքինություն, քանզի ամուլ է»: Եղբայրն ասաց հայր Կրոնոսին. «Ի՞նչ անեմ մոռացությանս հետ, որը միշտ գերում է իմ խորհուրդները և չի թողնում գիտենալ, մինչև որ գցում է մեղքերի մեջ»: Հայր Կրոնոսն ասաց նրան. «Երբ Իսրայելի որդիների չար գործերի պատճառով այլազգիները տարան ուխտի տապանակը և քարշ տալով՝ հասցրին Դագոն չաստվածի տունը, այնժամ Դագոնը երեսնիվայր ընկավ նրա առաջ, և այլազգիներն էլ՝ իր հետ»* (Ա Թագ. Դ 11, Ե 1-12)*: «Ի՞նչ է նշանակում դա»,– հարցրեց նրան եղբայրը: Ծերը նրան ասաց. «Երբ դևերն առաջանում են և գերում են մարդու միտքն իրենց պատճառաբանություններով, այնքան են քարշ տալիս նրան, մինչև որ*

գլխիվայր գցում են չարաչար մեղքերի մեջ: Եվ հենց այդ ժամանակ, երբ միտքը զղջմամբ է համակվում և դառնալով խնդրում է Աստծուն և հիշում հավիտենական տանջանքները, հանկարծակի խորտակվում են այդ ախտերը և աներևութանում, քանզի գրված է. «Եթե դառնաս և հառաչես, այնժամ կապրես և կիմանաս, թե որտեղ ես» (Եսայի Լ 15)*»: Հայր Կրոնոսն ասաց դարձյալ. «Եթե Մովսեսը ոչխարները չհաներ Սինա լեռը, չէր տեսնի հուրն ու կիզվող մորենին»* (Ելից Գ 1-2)*: Եղբայրն ասաց. «Եվ ի՞նչ է խորհրդանշում մորենին, հա՛յր»: Ծերունին ասաց. «Մորենին մարմնավոր գործերի նշանակն է, ինչպես գրված է. «Երկնքի Արքայությունը նման է ագարակում թաքցրած գանձի»* (Մատթ. ԺԳ 44)*»: Եղբայրն ասաց ծերին. «Ինչպես երևում է, առանց մարմնավոր տքնության մարդը չի կարող Աստծուց պատվի արժանանալ»: Ծերն ասաց. «Զէ՞ որ գրված է. «Նայեցե՛ք մեր հավատի առաջնորդ և կատարող Հիսուսին, որ հանուն հանդերձյալ փառքի խաչի համբերեց»* (Եբր. ԺԲ 2)*, իսկ Դավիթն էլ ասում է. «Զեմ տա քուն իմ աչքերին և ոչ նինջ՝ իմ արտևանունքներին»* (Սաղմ. ՃԼԱ 4)*»:*

80. Հայր Մակարիոսն ասաց. «Մի՛ ննջիր վատահամբավ կրոնավորի սենյակում»:

81. Ոմն եղբայր հարցրեց հայր Մակարիոսին մեծ կատարելության մասին: Ծերը նրան ասաց. «Եթե մարդը չստանա մեծ խոնարհություն՝ հոգով ու մարմնով, և եթե ամեն գործի մեջ իր անձը ոչինչ չհամարի և իրեն բոլոր մարդկանցից ամենավատթարը չդիտի, եթե չվարվի այնպես, որ ոչ մեկին չդատի խոսքով, այլ միայն իր գործերը քննի և դատի, եթե չհամբերի ամեն տեսակ ամոթի ու նախատինքի, եթե իր ետևը չգցի ամենայն չարություն և չնեղի իր անձը հանուն երկայնամտության, քաղցրության և եղբայրասիրության և չդառնա սուրը ու պահեցող, ինչպես գրված է. «Բռնադատողներինն է Երկնքի Արքայությունը, և հզորներն են հափշտակում այն» (Մատթ. ԺԱ 12)*, եթե չլինի աչքով ուղիղ նայող և լեզվով՝ զգաստախոս, եթե հեռու չփախչի ամեն տեսակ ունայնաբանություններից, չունենա ձեռքերի արդարություն և սրտի սրբություն Աստծո առաջ, մարմնի անբծություն, աչքի առջև միշտ չունենա մահվան հիշողությունը, չհրաժարվի հոգու և մարմնի ամենայն բարկությունից ու խստությունից, չհրաժարվի ամեն տեսակ մարմնական նյութից և նրա ընձեռած վայելքներից, չփախչի սատանայից և նրա բոլոր գործերից, եթե անսասան չհավատա ամենքի Աստծուն և չկատարի Նրա պատվիրանները, անդադար չաղոթի, իր բոլոր*

օրերում և ամեն գործի և մտածության մեջ սևեռված չլինի առ Աստված, չի կարող կատարյալ լինել»:

82. Հայր Մարկոսն ասաց. «Ազատությունն ամեն մարդու ուսուցանում է ճշմարտությունը: Շատերն են, որ ընթերցում են այն, բայց քչերն են, որ ճանաչում են այն, որովհետև ըստ պատվիրանների կատարման է տրվում նրանց գիտություն: Մի փնտրիր դրանց կատարումը մարդկային առաքինությունների մեջ, քանզի դրանք նրանց մեջ կատարյալ չեն, որովհետև դրանց կատարելությունը Քրիստոսի խաչի տակ է թաքնված»:

83. Ասաց դարձյալ. «Ոչ ոք չի կարող Քրիստոսի սերը վայելել այլ կերպ, եթե ոչ՝ միայն ջանքերով ու քրտինքով, խոնարհությամբ ու մշտական աղոթքներով»:

84. Հայր Մատոյեն ասաց. «Երեք եղբայրներ գնացին հայր Պափնոտիոսի մոտ, ում Կեփալա են կոչում, որպեսզի նրանից շահեկան խոսք լսեն: Ծերը նրանց ասաց. «Ի՞նչ եք ինձանից կամենում լսել, որ ասեմ ձեզ՝ հոգևո՞ր, թե՞ մարմնավոր խոսք»: Նրանք ասացին՝ հոգևոր: Ծերն ասաց նրանց. «Գնացե՛ք, սիրեցե՛ք առավել վիշտը, քան հանգիստը: Ավելի լավ համարեցե՛ք արհամարհանքը, քան փառքը: Առավել սիրեցե՛ք բարին տալը, քան առնելը»:

85. Հայր Պիմենն ասաց. «Պատվիրանապահություն, անձի զգուշություն և սեփական գործերի քննություն՝ այս երեք առաքինություններն են հոգու վարդապետները»:

86. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչպե՞ս պետք է մարդը կենցաղավարի»: Ծերն ասաց. «Դանիելի նման, քանզի ոչ ոք նրանից մատնություն չտեսավ, այլ միայն՝ աստվածապաշտություն»:

87. Դարձյալ ասաց. «Եթե երկու գործի հաղթի կրոնավորը, կկարողանա ազատվել աշխարհից»: Եղբայրն ասաց. «Մեկնի՛ր մեզ այդ խոսքը»: Ծերն ասաց. «Որքան կարող ես՝ ջանա՛ ձեռագործիդ մեջ, որպեսզի ողորմություն անես, քանզի գրված է. «Ողորմությամբ և հավատով են սրբվում մեղքերը» (Առակ. ԺԵ 27)*: Եղբայրը հարցրեց. «Եվ ի՞նչ է հավատը»: Ծերը պատասխանեց. «Հավատը խոնարհությամբ ապրելն ու ողորմություն անելն է»:*

88. Ասաց դարձյալ. «Որ գործի վրա քո սիրտը հաստատված չէ, այդ գործը երբեք չթողնես մտնի քո սիրտը»:

89. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, այս հեղգ եղբայրներին, որ ինձ հետ են»: Ծերը նրան ասաց. «Մի՞թե երկրի վրա կա մեկը, ով մտածում է իր մահվան վերջին շնչի մասին և քննում է աշխարհիս ընկերներին: Մի՛ մերձենա և մի՛ առնչվիր նրանց հետ, և իրենք իրենց կհեռանան քեզանից»:

90. Ասաց դարձյալ. «Եթե մեկը ուզում է տուն շինել, նախևառաջ պետք է հավաքի ողջ շինանյութը, ապա նոր կսկսի կառուցել, իսկ որ չհավաքի, եթե սկսի էլ, չի կարողանա շինել: Այդպես և մենք՝ պետք է հավաքենք բոլոր առաքինությունները, որպեսզի կրոնավոր դառնանք»:

91. Դարձյալ ասաց. «Դավիթը գրեց Հովաբին. «Զգոն եղի՛ր պատերազմի մեջ, հաղթի՛ր այդ քաղաքին և ավերի՛ր այն»: Հովաբն էլ իր հերթին Իսրայելի զորքերին ասաց. «Արիացե՛ք և եղեք զորությա՛ն որդիներ, պատերազմեցե՛ք այլազգիների դեմ հանուն Աստծո ժողովրդի, որ մենք ենք»:

92. Ասաց դարձյալ. «Եթե տեսիլք տեսնես կամ որևէ լուր լսես, մի՛ պատմիր այն քո ընկերոջը, որովհետև հետևանքը պատերազմ կլինի»:

93. Ասաց դարձյալ. «Փախի՛ր մեկ անգամ կամ երկու, սակայն երրորդին եղի՛ր սրած թուր»:

94. Դարձյալ հայր Պիմենն ասաց Իսահակին. «Թեթևացրո՛ւ արդարության քո կողմը և հանգիստ կգտնես սակավ օրերում»:

95. Ոմն եղբայր գնում էր ձեռագործ վաճառելու և հայր Պիմենին հարցրեց. «Ի՞նչ ես կամենում, որ անեմ վաճառքի ժամանակ»: Ծերը նրան ասաց. «Սիրալի՛ր եղիր նրա հետ, ով բռնադատում է քո անձը, և հանդարտությամբ կվաճառես քո ձեռագործը»:

96. Ասաց դարձյալ. «Այն մարդուն, ում չես հավատում, որ սուրբ է, մի՛ վստահիր քո խորհուրդները»:

97. Դարձյալ ասաց. «Աստված նախապես այնպիսի օրենքներ տվեց Իսրայելին, որոնք արգելում են այն գործերը, որ դուրս են բնությունից, այն է՝ բարկություն, սրտմտություն, նախանձ, ատելություն, եղբորը դատել և նման այլ բաներ»:

98. Մի անգամ հայր Պալատիոսի մոտ եկավ մի իշխան, քանզի շատ էր ցանկանում տեսնել նրան այն բարի համբավի համար, որ տարածված էր նրա մասին: Նա իր հետ բերեց նաև մի արագագիր դպիրի

ու նրան ասաց. «Ես կմտնեմ հոր մոտ, իսկ դու նստի՛ր դռան մոտ և ստուգությամբ գրի՛ առ նրա բերանից ելնող բոլոր խոսքերը»: Մտավ Լավոս իշխանը (այսպես էր նրա անունը) հայր Պալատիոսի տուն և ասաց նրան. «Օրհնի՛ր, հա՛յր, աղոթի՛ր ինձ համար, որովհետև բազում մեղքեր եմ գործել»: Ծերը նրան ասաց. «Անմեղ է միայն Աստված՝ Հիսուս Քրիստոս»: Իշխանը հարցրեց. «Ստո՞ւյգ է, հա՛յր, որ ամեն մեղքի համար դատվելու ենք»: Ծերն ասաց. «Գրված է. «Կհատուցե՛ս ամեն մեկին ըստ իր գործերի» (Առակ. ԻԴ 12, Մատթ. ԺԶ 27)*»: Իշխանը նրան ասաց. «Մեկնի՛ր ինձ այդ խոսքը»: Ծերն ասաց. «Խոսքն ինքնին պարզ և հայտնի է, սակայն դու խոհեմաբար լսի՛ր: Վշտացրիր քո եղբորը՝ սպասիր փոխարենն ստանալու Աստծուց, զրկեցիր նկունին և խեղդեցիր աղքատին, ատյանում անիրավ բերան բացեցիր, տնանկին ամաչեցրիր, ուղիղ չդատեցիր և չքննեցիր, սուտ վկայեցիր, աչառություն արեցիր հարուստի նկատմամբ, կեղծեցիր արդարությունը, օտար ամուսնու հարկը մտար, սուտ երդում տվեցիր, հայրերի սահմանները շարժեցիր, որբերի ունեցվածքն ու իրավունքը խլեցիր, այրիներին նեղեցիր, այստեղի փափկությունն ու համադամությունը գերադասեցիր հավիտենականից, այսպիսի և սրա նման բաներ արեցիր, սպասիր դրանց հատուցումն ստանալու, քանզի ինչ ցանես, այն էլ կհնձես: Նույնպես, եթե բարի բան ես արել, ակնկալիր, որ հարյուրապատիկ վարձ կստանաս, քանզի ասված է. «Յուրաքանչյուրին դու կհատուցես ըստ իր գործերի»* (Առակ. ԻԴ 12, Մատթ. ԺԶ 27)*: Եվ եթե սրանք մտքումդ միշտ հիշես քո կյանքի բոլոր օրերում, կկարողանաս փախչել քո բազում մեղքերից»: «Եվ ի՞նչ պետք է անել, հա՛յր»,– հարցրեց իշխանը: Ծերը պատասխանեց. «Միշտ մտքումդ պահիր բարիքները՝ անհատնում ու անփոփոխ, ուր ո՛չ գիշեր կա, ո՛չ մեղքերի խավար, ո՛չ ուտել կա, ո՛չ ըմպել, ո՛չ ննջել և ո՛չ էլ քուն, որ դրացի է մահվան: Ո՛չ կերակուրներ կան և ո՛չ տկար բնությանս ծառաներ, ուր ո՛չ ախտեր կան, ո՛չ ցավեր, ո՛չ խոցեր, ո՛չ բժիշկ և ոչ էլ հիվանդությունների դեղամիջոցներ: Ուր չկան դատ ու դատավոր, ատյաններ ու հավաքատեղիներ, ոչ էլ ինչքի չար իշխանություն, որ պատճառն է պատերազմների և արմատը թշնամության: Այն երկիրն է ողջերի և բնակատեղին արդարների, Աստծո պատվելիների վայրը, որտեղ չկա մեղքերի դառը մահը, այլ բոլոր ողջերի և փրկվածների համար՝ ճշմարիտ կյանք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է»: Այս ամենի վրա հառաչեց իշխանն ու ասաց. «Հիրավի այդ ամենն այնպես է, ինչպես ասացիր, հա՛յր»: Եվ մեծապես շահեց, քանզի հոգով շինվեց, և ուրախությամբ գնաց իր տունն ու գոհացավ Աստծուց:*

99. Հայր Պամբոյի մասին պատմում էին, թե երբ փոխադրվելու էր հանդերձյալ աշխարհ, հոգին ելնելու ժամին նրանց, ովքեր նրա շուրջն էին, ասաց. «Այն օրից, երբ եկա այս անապատը, չինեցի խրճիթ և բնակվեցի նրանում, չեմ հիշում, որ հաց կերած լինեմ՝ առանց իմ ձեռագործի, և ոչ էլ խոսքերիս համար ապաշխարության կարիք ունեցա: Սակայն այժմ այնպես եմ գնում Աստծո առաջ, կարծես թե բնավ չեմ էլ սկսել ճգնել»: Մինչդեռ նա ամենքից ավելի ջանադիր էր: Երբ մեկը ինչ-որ բան էր հարցնում նրան Սուրբ Գրքից կամ խրատ, շուտափույթ պատասխան չէր տալիս, այլ ասում էր. «Չգիտեմ այդ բանը»: Դրանից անցնում էր մեկ ամիս և ավելի, նոր պատասխանում էր:

100. Մի եղբայր հարցրեց հայր Պամբոյին և ասաց. «Դևերն ինչո՞ւ են արգելում, հա՛յր, բարիք անելու իմ ընկերոջը»: Ծերը նրան ասաց. «Այդ բանը մի՛ ասա, ապա թե ոչ՝ սուտ կհանես Աստծուն: Ավելի լավ է ասա՝ ես չեմ կամենում բարիք անել ընկերոջս և ոչ էլ ողորմություն անել, որովհետև նախ Աստված մեզ այցելեց և ասաց. «Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխելու օձերին ու կարիճներին ու թշնամու ողջ զորությունը» (Ղուկ. Ժ 19)*»:*

101. Հայր Սիսոյեն ասաց. «Եղի՛ր արհամարհված, քո կամքը հեռո՛ւ վանիր քեզանից, անհո՛գ եղիր ամեն ինչում և հանգիստ կունենաս»:

102. Նույն հայրն ասաց. «Նրանք, ովքեր ծուլությամբ ու հեղգությամբ են անցկացնում իրենց օրերը, խոսքով ու մտքով են կյանք խնդրում, սակայն գործով հանձն չեն առնում: Սուրբ հայրերի կյանքն ու խոսքն են ընթերցում, սակայն նրանց խոնարհության ու անընչության, աղոթքների ու տքնությունների, պահքերի ու հանդարտության, մերկ գետնին պառկելու ու ծնրադրելու և այլ կարգի ճգնությունների մեջ չեն ուզում նմանվել, այլ իրենց հատուկ հպարտությամբ ասում են. «Սուտ է եղած և գրված նրանց այս վարքը: Անկարելի է՝ որևէ մեկը այսպես ապրի և համբերի»: Չեն կարողանում հասկանալ և գիտակցել այս բանը, թե ուր Աստված է բնակվում մկրտության շնորհով և իր պատվիրանների կատարելությամբ, այնտեղ հեշտությամբ են կատարվում բնությունից վեր բոլոր գործերն ու շնորհները»:

103. Հայր Պախոմիոսի մասին ասում էին, թե երբ մոտ էր հանդերձյալ կյանք փոխադրվելու, իր հոգևոր որդիներին ասաց. «Մի՛ բնակվեք հերձվածող մարդու հետ և մի՛ ծանոթացեք իշխանների հետ: Ձեր ձեռքերը թող չմեկնվեն ունեցվածք հավաքելու, այլ առավելապես թո՛ղ մեկնվեն ցրելու ու տալու»:

104. Դարձյալ ասաց. «Քաղի՛ր քո բանջարը և բաժանի՛ր»: Եղբայրը նրան ասաց. «Իմ ախտերն ինձ թույլ չեն տալիս այդ անելու»: Ծերը նրան ասաց. «Գրված է. «Քո նեղության օրը կանչի՛ր ինձ, և ես կփրկեմ քե՛զ և դու կփառավորես ինձ» (Սաղմ. Խթ 15)*: «Եվ նա կփրկի քեզ քո բոլոր փորձություններից»* (Հայտ. Գ 10)*»:*

105. Ասաց դարձյալ. «Կնգուղը օրինակն է անմեղության, սքեմը՝ խաչի, իսկ գոտին արիության և քաջության նշանակն է: Ուստի կենցաղավարենք ըստ մեր կերպի և ամեն ինչ ջանադրաբար անենք, որպեսզի օտար կերպի մեջ զգեստավորված մեզ չգտնեն»:

106. Մի եղբայր հարցրեց հայրերից մեկին և ասաց. «Ինչպե՞ս լինենք հիմար հանուն Աստծո»: Ծերը նրան ասաց. «Մի երիտասարդ եկավ եղբայրների միաբանություն և հանձնվեց մի բարի ծերի, որպեսզի այս ծերը նրան ուսուցանի Աստծո երկյուղը: Ծերը նրան ասաց. «Եթե մեկը քեզ անարգի, որդյա՛կ, օրհնի՛ր նրան, սեղան նստելիս վա՛տը կեր և լավը թո՛ղ, եթե քո առջև հանդերձներ լինեն, թո՛ղ լավագույնը և վատթա՛րն ընտրիր»: Երիտասարդն ասաց. «Մի՞թե ես հիմար եմ, հա՛յր, որ դու ինձ նման բաներ ես ասում»: Ծերը նրան ասաց. «Նրա համար եմ քեզ ասում՝ նման բաներն անես, որդյա՛կ, որ հիմար լինես հանուն Տիրոջ, իսկ Տերը կիմաստնացնի քեզ»: Ահա և հայտնեց ծերը, թե ինչպես լինել հիմար հանուն Աստծո»:

107. Նույն հայրն ասաց դարձյալ. «Այս վեմի վրա հաստատուն կանգնենք, եղբայրնե՛ր, և եթե գետերի հեղեղներ մեզ բախվեն, չերկնչենք, քանզի չեն կարող տանել կամ ծածկել մեզ, այլ հանդարտությամբ երգենք և ասենք. «Ով Տիրոջն է հուսացած, չի սասանվի, որպես Սիոնի լեռը՝ Երուսաղեմում հավիտյան կանգուն» (Սաղմ. ՃԻԴ 1)*:*

108. Դարձյալ ասաց. «Քեզ համար, ո՛վ մարդ, Քրիստոս մարդ եղավ և եկավ աշխարհ, որպեսզի դու փրկվես. մանուկ եղավ, Ով անսկիզբ Աստծո Որդին էր, ընթերցող եղավ, երբ Գիրքը տվեցին, և նա ձեռքն առնելով՝ կարդաց և ասաց. «Տիրոջ Հոգին ինձ վրա է» (Եսայի ԿԱ 1)*, կիսասարկավագ եղավ քեզ համար այնժամ, երբ չվանից խարազան սարքեց և տաճարից դուրս հանեց արջառներին ու ոչխարներին, սարկավագ եղավ այնժամ, երբ սրբիչը մեջքին կապեց և աշակերտների ոտքերը լվաց ու պատվիրեց, որ նրանք էլ իրենց ընկերների ոտքերը լվանան, քահանա եղավ այնժամ, երբ նստել էր վարդապետների հետ և լսում էր նրանց ու հարցեր տալիս, եպիսկոպոս և քահանայապետ եղավ այնժամ, երբ օրհնեց հացն ու բաժակը և բաշխեց աշակերտնե-*

րին, քեզ համար ավազակ եղավ, երբ ավազակ համարվեց. գանահարվեց քեզ համար, խաչվեց, մեռավ, թաղվեց, և այս ամենը կրեց ըստ կարգի: Նա այս ամենը հանձն առավ մեզ համար, իսկ մենք փոքր-ինչ նախատինք և ամոթանք չենք ուզում կրել Նրա համար: Զգո՛ն և արթո՛ւն լինենք, եղբայրնե՛ր, գնե՛նք մեր անձերի փրկությունը, վարժեցնե՛նք մեզ աղոթքի և ամենայն բարեգործությունների, որպեսզի միշտ Աստծուն հաճելին կատարենք»:

109. Ասաց դարձյալ. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որպեսզի դադարեք մեղքեր գործելուց, նույնպես և դադարեք չար նենգություն խորհելուց»:

110. Ասաց դարձյալ. «Այս է գրվածի իմաստը, որ ասում է. «Տյուրոսցիների երկու և երեք մեղքերը կների Աստված, սակայն չորրորդին հետ չի դառնա». այսինքն՝ նախ՝ չարը մտածելը, ապա՝ խորհուրդը հաստատելը, հետո՝ հաստատվածն ասելը, իսկ չորրորդը՝ կատարումն է մեղքի, որ խորհել էր, որից ետ չի դառնա Աստծո բարկությունը, եթե ջերմեռանդորեն չապաշխարի ըստ պատշաճի»:

111. Ասաց դարձյալ. «Հենց որ կրոնավորը գործի պակասություն ունենա, այնտեղ կընակվեն և կավելանան դևերը, որովհետև բնության բազմամյա սովորությունը զորություն կառնի, հատկապես՝ ծույլերի վրա: Այն կերակուրները, որոնք ախորժում ես, մի՛ կեր, մանավանդ եթե առողջ ես մարմնով, այլ՝ կարևորը միայն: Եվ ամեն տեսակ չքեղազարդ զգեստներ մի՛ հագիր, իսկ երբ մերկ լինես, Աստծո՝ քեզ տվածով գոհանալով՝ հանդերձավորվիր և կերակրվիր, և ամեն գործի մեջ և ամենայն ժամ գոհացի՛ր Աստծուց: Կրոնավորի կարգը, ձևն ու տեսակը ունենք կատարելապես, սակայն դեռևս կրոնավոր չենք. արիանա՛նք, եղբայրնե՛ր, և քա՛ջ լինենք, որպեսզի օտարոտի հանդերձներ չհագնենք, այլ Քրիստոսի կնիքը վերցնենք, այսինքն՝ Նրա խոնարհությունը, քանզի կրոնավորը պարտավոր է մինչև ի մահ պատերազմել ճանճրության և կարճամտության դևի դեմ, առավել ևս աղոթքի ժամին: Եվ եթե Աստծո կամքով և Նրա օգնությամբ հաղթես դևերին, զգույշ կլինես անձնահաճության, ամբարտավանության և սնափառության դևից, և քո խորհուրդների մեջ կասես. «Եթե Տերը չշինե տունը, զուր են չարչարվում այն շինողները» (Սաղմ. ՃԻԶ 1), *և թե՝ «Ոչինչ է մարդը, բայց միայն հող ու մոխիր»* (Սիրաք. ԺԷ 31). *Նաև այս կհիշես, թե՝ «Տերն հակառակ է ամբարտավաններին, և խոնարհներին է շնորհներ տալիս»* (Առակ. Գ 34, Հակոբ. Դ 6)*:*

112. Ասաց դարձյալ. «Թե՛ ննջես, թե՛ վեր կենաս, կամ ինչ էլ անելու լինես՝ եթե միշտ Աստծուն ունենաս քո աչքի առաջ, թշնամին ոչ մի բանով չի կարողանա վախեցնել քեզ, և եթե քո խորհուրդն անբաժան լինի Աստծուց՝ Աստծո զորությունը ճշմարտապես կմնա քեզ հետ, քանզի կրոնավորը չպետք է լինի ո՛չ հետաքննող, ո՛չ մատնող, ո՛չ խարդախաբարո, ո՛չ չարախոս և ո՛չ էլ ուրիշներին գայթակղեցնող»:

113. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինձ խո՛սք ասա, որով կարողանամ ապրել»: Ծերը նրան ասաց. «Փութա՛ հանապազ աշխատել և բարիք գործել և կապրես: Աստված պահանջում է մարդուց, որ նա հավատա Սուրբ Գրքին և ըստ կարելվույն կատարի նրանում գրվածները, ինչպես նաև՝ հնազանդ լինի առաջնորդներին և հոգևոր հայրերին»:

114. Ոմն եղբայր նրան դարձյալ հարցրեց և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի պատերազմում են իմ դեմ խորհուրդներս՝ ստիպելով ինձ դուրս գալ շրջելու և լեռան կրոնավորներին տեսնելու»: Ծերը նրան ասաց. «Եթե տեսնես՝ խորհուրդդ քո մարմնավոր կարիքների սղության և նեղության պատճառով է քեզ հանում քո սենյակից, դու քո անձին մխիթարություն արա քո սենյակում, և խորհուրդդ այլևս չի բռնադատի քեզ: Եթե ի շահ քո հոգու ես կամենում գնալ ծերերի մոտ, նախ փորձի՛ր քո խորհուրդը, ապա նոր՝ ելի՛ր դուրս, քանզի լսեցի ես մի ծերից, թե երբ նրա խորհուրդը ստիպում էր իրեն դուրս գալ եղբայրներին տեսնելու, վեր էր կենում, վերցնում էր իր մախաղը և դուրս ելնելով՝ մեկ անգամ պտտվում էր իր խցի շուրջը, ապա մտնելով ներս՝ ուրիշներին տեսնելու ցանկությունից սփոփվում էր: Այսպես էր վարվում այդ երանելի այրը, և իր տեղից բնավ չհեռացավ»:

115. Ոմն եղբայր ջանադրաբար նստում և միշտ լսում էր սուրբ հայրերի առաքինությունները և ջանում էր նմանվել նրանց, և կարծում էր՝ առանց մեծ տքնության ու ճգնությունների չի կարող ուղղել դրանք: Այդպես և դու, մի ամբողջ տարի պայքարիր մի բանի դեմ, որպեսզի չթողնես որովայնդ հագենա. և երբ սա ուղղես Աստծո օգնականությամբ, հաջորդ տարին դարձյալ աշխատիր իսպառ կտրել քեզանից՝ իբրև Աստծո թշնամիների՝ հպարտությունն ու ամբարտավանությունը: Եվ երբ այս երկուսը ուսանես, այնժամ ճգնի՛ր հանուն երրորդի և հեռացրո՛ւ քեզանից նյութեղեն բոլոր ինչքերը: Վստահի՛ր քո անձը Աստծուն և իսկապես հավատա, որ եթե մարդը այս երեքին հասնի, ուրախությամբ Քրիստոսի առաջ կելնի, երբ Նա փառքով գա:

116. Ոմն եղբայր փորձության մեջ ընկավ և գնալով մի ծերի մոտ՝ պատմեց նրան այդ փորձության մասին, որ կրել էր: Ծերը նրան ասաց. «Թո՛ղ քեզ չվախեցնի այն փորձությունը, որ պատահեց քեզ, քանզի որքան տեսնեն մեր թշնամիները մարդուս հոգին վեր ելնելիս և Աստծուն հարելիս, այնքան չարակնումով ու տրտմությամբ նախանձելով՝ կռիվ կմղեն նրա դեմ: Եվ իսկապես իմացի՛ր, եղբա՛յր, որ անհնար է՝ այնտեղ չլինի Աստված իր հրեշտակները հետ, ուր հանուն Նրա փորձություն է լինում, միայն թե չդադարես մեծ խոնարհությամբ կանչել Ողորմածի և Բարերարի անունը և օգնությունը: Եվ երբ քեզ այսպիսի բան պատահի, իսկույն տկարությանդ մեջ հիշի՛ր քո զորավոր Օգնականին և մեր թշնամիների չարությունը, և ստուգապես օգնություն կգտնես Աստծո փառքից»:

117. Ծերը դարձյալ ասաց. «Ուրիշի տունն, օրինակ, ոչ ոք չի կարող ոտք դնել, եթե չհարցնի տանտիրոջը. այդպես էլ թշնամին՝ եթե մեկն իր անձը չմատուցի նրան, չի կարող ներս մտնել: Սակայն դու աղոթելով ասա՛. «Տե՛ր, Դու գիտես, թե ինչպես ինձ գտար, իսկ ես անբան և անմիտ անասուն եմ և ոչինչ չգիտեմ: Դո՛ւ ինձ գցեցիր Քո այս կանչված ոչխարների գնդի մեջ, Դո՛ւ էլ ապրեցրո՛ւ ինձ՝ ինչպես որ գիտես: Որովհետև ես Քո ծառան եմ, ծառան և որդին Քո աղախնի, փրկի՛ր ինձ Քո կամքի համաձայն, քանզի օրհնյալ է Քո անունը հավիտյան»:

118. Ասաց դարձյալ. «Աստված աշխարհականների մեղքերին համբերում է, սակայն անապատականների մեղքերին չի համբերի: Տեսե՛ք, ո՛վ եղբայրներ, որ կրոնավորներն աշխարհականների նման չեն դատվում, քանզի ովքեր աշխարհի մեջ են, բազում պատճառներ ունեն, իսկ մենք ի՞նչ պատճառ պետք է բերենք: Իսկապես զարհուրելի է հուրը, և բազում են տանջանքները նրանց, ովքեր գիտեն Աստծո կամքը և չեն կատարում, այլ իրենց կամքն են բավարարում: Քանզի ովքեր փափկակենցաղության, համերի ունայնության, աշխարհիկ վայելքների ու հանգստի են տալիս իրենց անձերը, սուտ պատճառներով խարդախում են ու ասում. «Մեր մարմնի տկարության համար ենք ոսկի և երկրային ստացվածք հավաքում, որպեսզի բարվոք պահենք մեր մարմինը»: Նրանց խոսքից իսկապես երևում է, որ իրենց մարմնի կարիքներն են հոգում: Այնինչ կրոնավորին հարկավոր չէ բազում ունեցվածք և ոչ էլ համադամ կերակուրներ, այլ միայն մարմնի ծայրահեղ անհրաժեշտ բաները, որը և հեշտությամբ կարող է ձեռք բերել. այսինքն՝ անհրաժեշտը: Ուրեմն ո՞ւր են նրանք, որոնք այդչափ ունեցվածք կուտակե-

ցին և դեռ որոնում են, և որքան ուտում են, այնքան ուրիշների համեղ պատառներն են ցանկանում»:

119. Ասաց դարձյալ. «Աշխատիր չվերցնել այն, ինչ ուրիշներն են բերում քեզ, իսկ եթե վերցնես ուրիշներինը՝ աշխատիր խռովքի մեջ չդցես ինքդ քեզ: Եթե քեզ ախորժելի է այն ամենը, ինչ բերում են քեզ, և դու վերցնում ու ցնծում ես, ուրեմն չես գիտակցում, թե որքան պատճառներ և որքան ախտեր ես բարդում ինքդ քեզ վրա: Այդ ամենը բերում են քեզ այն պատճառով, որ դու կրոնավոր ես, իսկ դու ըստ էության կրոնավոր չես, այլ ավելի չար ես, քան աշխարհականները, ուստի կդատապարտվես: Բազում աշխարհականներ սրբությամբ ու պարկեշտությամբ են ապրում և ոչ մեկից թյուր բան չեն վերցնում, բազում ողորմություններ են անում, իսկ դու ամենքից մեղքերի գինն ես վերցնում: Դու պիղծ ես հոգով ու մարմնով, որովհետև ո՛չ քո եղբորն ես ողորմում, ո՛չ քո հորը, այլ որկրամոլությամբ ես զբաղվում, պճնվում ես ու հեշտանում: Աստծո տունը վաճառատուն ես դարձնում, եթե կարելի է ասել՝ պղծության վայր, սպանդանոց ու կրպակ, քանի որ հարկ է ունայնության այս գործերից յուրաքանչյուրն իրենց իսկական անուններով կոչել, որպեսզի ճանաչենք նրանց նենգությունը և փախչելով նրանցից՝ ապրենք: Քանզի մեր եղբայրներից ոմանք կարծում են, թե եթե կրոնավորի կերպը ընդունենք, կամ՝ «Տե՛ր, Տե՛ր» ասենք կամ կրոնավոր հորջորջվենք, ապա դրանով մեր ուխտը կատարյալ կլինի: Արդարև, ասում եմ ձեզ, եղբայրնե՛ր, եթե խորապես չզգուշանանք մեր անձերի համար, առավել չարաչար կդատապարտվենք, քան հանցավոր աշխարհականներն ու անօրենները, հավիտենական տանջանքներն ու մթին խորխորատները կընկնենք, որտեղից այլևս չենք կարողանա մեր Աստծուն կանչել, Ումից հարկ է խոնարհությամբ երկնչել, քանզի մեր եղբայրներից շատերը ձևացնում են, թե խոնարհ են և կրոնավորին վայել կերպով են ապրում, սակայն իրականում իրենց կամքն են ուզում կատարել և իրենց անձերն են կորցնում, թեև Աստծուց ապաշխարության կարգն առան, որը մի փոքր անց պիտի արտասուքով փնտրեն և չգտնեն»:

120. Ասաց դարձյալ. «Ամենայն զգուշությամբ ջանա, որ չմեղանչես, որպեսզի քո մեջ բնակվող Աստծուն չանարգես և չվանես քո հոգուց»:

121. Ասաց դարձյալ. «Հսկե՛նք, ո՛վ եղբայրներ, և արթո՛ւն լինենք և աղոթքի՛ վարժվենք, որպեսզի ապրենք, բարի՛ն գործենք, որպեսզի հաճո լինենք Աստծուն. նմանվե՛նք զինվորի, որ զինավառված է պա-

տերազմի մեջ և ուրիշ ոչ մի բանի մասին հոգ չի տանում, բացի իր կյանքից և հաղթանակից: Այսպիսին է նաև որսորդը, որը միմիայն որսին է հետամուտ. ուրեմն՝ սրա՛նց նմանվենք: Եվ ով պահում է Աստծո խոսքը, նա Աստծո մեջ է բնակվում, քանզի գրված է. «Կբնակվեմ նրանց մեջ, Աստված կլինեմ նրանց, և նրանք ինձ ժողովուրդ կլինեն» (Բ Կորնթ. Զ 16)*»:*

122. Ասաց դարձյալ. «Մի՛ ձգտիր ժամանակից շուտ վարդապետել, ապա թե ոչ՝ քո բոլոր օրերին գիտության պակաս կունենաս»:

123. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ասա՛ ինձ, հա՛յր, ի՞նչ բարիք գործեմ, որպեսզի կատարեմ Աստծո կամքը»: Ծերը նրան ասաց. «Որդյա՛կ, եթե կամենում ես Աստծո կամքը կատարել, հրաժարվի՛ր անիրավությունից ու ագահությունից, արծաթասիրությունից ու բոլոր չար գործերից: Չարին չարով մի՛ հատուցիր, մի՛ անարգիր քեզ անարգողին, մի՛ ապտակիր քեզ ապտակողին և անեծքով մի՛ փոխադարձիր քեզ անիծողին, այլ հիշի՛ր Տիրոջ ասածը. «Թողե՛ք,— ասում է,— և կթողնվի ձեզ, ողորմացե՛ք, և ողորմություն կգտնեք» (Ղուկ. Զ 37-38)*: Եվ հաստատապես այս իմացեք, որ Տիրոջ աչքը հարյուրապատիկ ավելի լուսավոր է, քան արեգակը, և մարդկանց բոլոր որդիներին տեսնում է, և ոչինչ չի կարող թաքնվել նրանից՝ ո՛չ միտք, ո՛չ խորհուրդ և ո՛չ էլ սրտում ծածկված որևէ բան: Եվ հիրավի, պետք է կանգնենք Աստծո աթոռի առաջ և յուրաքանչյուրս ստանանք ըստ մեր գործերի: Ուստի, որդյակ, պարտավոր ես ծառայել Նրան ահուդողով և մեծ զգուշությամբ, ինչպես Տերն Ինքը և Նրա աշակերտները ուսուցանեցին մեզ, որ զգաստ լինենք և արթուն՝ աղոթքի մեջ, քաջ և հաստատակամ՝ պահեցողության մեջ, ահուդողով ամեն ժամ աղաչենք ամենատես Աստծուն՝ չտանել մեզ փորձության: Քանզի Նա ասաց. «Ով կամենում է ուսուցանել այլոց, նախ իր փրկության մասին թո՛ղ հոգա, քանզի նախ ինքը պետք է քաղի իր վարդապետության պտուղը: Քանզի նա, ով նախ իր անձը չի սրբում, ինչպե՞ս կարող է ուրիշներին սրբել: Եվ եթե նա արծաթասիրությունից է բռնված միշտ ու ագահության դևից՝ խեղդված, ինչպե՞ս կարող է ուրիշներին ուսուցանել՝ լինել ողորմած: Եվ եթե մեկը գնելուն և վաճառելուն, տալուն և առնելուն և ամենայն կենցաղային հոգսերին է սովոր և ունայնության մեջ է վատնում իր օրերը, ինչպե՞ս կարող է այլոց ուսուցանել հավիտենական բարին: Քանզի եթե նա, որ վարդապետ է, թողել և մի կողմ է գցել երկնային այդ գործը և կենցաղայինի ու անցավորի մեջ է վատնում իր անձը, ապա պարզ է, որ բոլոր աշակերտողներն ու*

նրան հետևողներն էլ ոչ թե նրա խոսքերին և ուսուցանածներին կհետևեն, այլ նրա գործերին, և առավել ևս կուսանեն մոռանալ և անտեսել հավիտենականն ու իրենց բոլոր հոգածությունները ուղղել դեպի կորստական երկրավորը: Իսկ այսպիսի ուսուցիչներին Աստված ասում է. «Իսկ դու ինչո՞ւ ես ընդհանրապես պատմում իմ արդարությունը կամ քո բերանն առնում իմ ուխտը. չէ՞ որ դու ատեցիր իմ խրատը, մերժեցիր և անտեսեցիր իմ բոլոր խոսքերը» (Սաղմ. Խթ 16)*: Եվ դարձյալ ասում է Աստված. «Վա՜յ նրանց, ում պատճառով հայհոյվում է իմ անունը»: Բարի է ուսուցանելը, այո՛, չափազանց բարի, սակայն այն ժամանակ բարի կլինի, երբ նախ ինքը կատարի այն, ինչ այլոց է ուսուցանում, իր խոսքը հաստատի գործով և լռելյայն ճանաչեցնի իր առաքինությունը, քանզի երանելին նա չէ, ով ուսուցանում է, այլ նա, ով կատարում է և ուսուցանում»:*

124. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Այդ ինչպե՞ս է, հա՛յր, որ նրանք, ովքեր աշխարհականներ են, պահքի մեջ հեղգ են, աղոթքների մեջ՝ ծույլ, ամեն տեսակ զգոնությունից՝ խորթ, ինչպես նաև ամենահամեղ կերակուրներով առատորեն լցնում են իրենց որովայնները և իրենց ախտամոլ ցանկությունների հետևից են գնում: Արբենում են, ամուսնանում, շնանում, պոռնկանում ու անառակություն անում, հանուն առ ու ծախի իրար միս են ուտում, վաճառում են, խաբում, վաշխառություն անում, գողանում, սպանում, երդումների ու սուտ երդումների մեջ ողջ օրն անցկացնում, ոչ մեկի առաջ չեն ընկնում ու մեղա չեն ասում, չեն ապաշխարում և սուրբ հաղորդության խորհրդից էլ ամենևին հրաժարվում են: Մենք՝ կրոնավորներս, պահքերի ու աղոթքների հետևելով, չոր ճաշակելով, գետնին պառկելով, քուրձեր հագնելով ու մարմնական ամեն տեսակ հանգստից կտրվելով՝ դեռ ողբում և կոծում ենք՝ ասելով՝ կորանք, դուրս ընկանք Արքայությունից և գեհենին պարտական դարձրինք հոգիներս»: Ծերը, ի խորոց սրտի հառաչելով, ասաց նրան. «Ճիշտ ասացիր, եղբա՛յր, որ աշխարհականները չեն ընկնում, որովհետև ամբողջովին ընկած են դառնագույն անկումի մեջ և այլևս վեր բարձրանալ չեն կարող: Նրանք ոչ էլ գիտեն, թե որտեղից կամ ուր ընկան, քանզի ի՞նչ հոգս ունեն դևերը վայր գցելու նրանց, ովքեր մշտապես ընկած են, ովքեր երբեք չեն հառնի: Կրոնավորները երբեմն հաղթվում են, երբեմն հաղթում, երբեմն ընկնում են և երբեմն հառնում, նեղվում են ու նեղում, պատերազմում են և պատերազմին դիմակայում, սակայն, այնուամենայնիվ, չեն դադարում պատերազմել դևերի հետ: Իսկ աշխարհական-

ներն առաջին իսկ մարտից խոցվեցին և ընկան, իսկ առավել մեծ անմտության պատճառով մինչ այժմ էլ այդ անկյալ վիճակի մեջ են և չեն էլ կարողանում հասկանալ, որ ընկած են գետնամած: Որպեսզի գիտենաս, որդյա՛կ, որ մենք, որ կրոնավորներ ենք մեզ կարծում, թեպետ հեռու ենք կրոնավորների կենցաղավարությունից, բայց պետք է մենք միշտ ողբանք, և ոչ միայն մենք, այլև մեծամեծ հայրերը, ճգնավորներն ու մենակյացները, անապատականներն ու կատարյալները ևս պարտավոր են լալու և ողբալու: Իսկ թե ինչու՝ լսի՛ր խոհեմաբար. Աստված ասաց, թե սուտը սատանայից է, ով կնոջը նայի և նրան ցանկանա՝ նա կատարյալ շնացող է, եղբոր վրա բարկանալը մարդասպանություն է, ամեն մի դատարկ խոսքի համար պետք է պատասխան տալ: Արդ, ո՞վ կա այդպիսին կամ ո՞րտեղ գտնենք այնպիսի մարդու, ով բոլոր ախտերից հեռացել է, ով ո՛չ ստության փորձ է ունեցել, ո՛չ ցանկություն է անցել նրա մտքով, ո՛չ իզուր բարկացել է եղբոր վրա և ո՛չ էլ դատարկ խոսք է դուրս եկել նրա բերանից, որպեսզի չունենա ապաշխարության կարիք: Եվ ա՛յս իմացիր. ով չխաչի իր անձը կատարելապես և չտա իրեն խոնարհության և արհամարհանքների և չմատնի իրեն ամեն տեսակ նախատինքների, որպեսզի նախատեն իրեն ամենքն ու ծաղրեն, և ինքն այդ ամենին գոհությամբ ու խոնարհությամբ չհամբերի հանուն Աստծո, մարդկային ոչինչ չփնտրի բնավ՝ ո՛չ փառք, ո՛չ կերակուր, ո՛չ ըմպելիք, ո՛չ զգեստ, չի կարողանա ճշմարիտ կրոնավոր լինել: Սակայն դու ջանա գործել բարի՛ն և մի՛ երկնչիր քո տկարությունից»:

125. Ասաց դարձյալ ծերը. «Եթե հրաժարվեցիր աշխարհից հանուն Աստծո և հեռացար ընտանիքից և քո ազգից, նրանց համար ողորմության տեղ մի՛ թող քո սրտում, մի՛ գթա քո մոր կամ հոր, եղբոր կամ քրոջ արտասուքներին: Մի՛ հիշիր քո մտքում քո կնոջ կամ մեկ այլ կնոջ սերը, երբ նստես քո խցում, քանզի ամեն բան պիտի ուրանաս հանուն Աստծո սիրո: Պետք է միշտ հիշես միայն քո մահվան օրը, և այդ օրը նրանցից ոչ ոք չի կարող քեզ օգնել»:

126. Ասաց դարձյալ. «Հզոր մարդը, օրինակ, փորձվում է մարտի մեջ. այդպես և կրոնավորն է փորձվում խորհուրդների պատերազմում, ուստի պետք է օր ու գիշեր ձեռքերը կարկառած լինեն դեպի երկինք և այնտեղից խնդրի Աստծո օգնությունը»:

127. Ասաց դարձյալ. «Ըմբիշը մերկ է մտնում մարտի ասպարեզ՝ մարմինը յուղով օծած, և մարտի վերաբերյալ ցուցումներ է ստանում մարզիչի կողմից: Գալիս է նրա հակառակորդը՝ մարտնչելու նրա հետ և ձեռքերն ավազոտելով՝ բռնում է նրան, որպեսզի տապալի: Իսկ դու

իմացի՛ր, մենակյա՛ց, քեզ է վերաբերում առակը. ամենքի վերակացուն Աստված է, որը մեզ տալիս է հաղթության զորություն, ըմբիշը մենք ենք, իսկ հակառակորդը՝ սատանան, ավազը՝ աշխարհիս հարստությունն է: Տեսնում ես թշնամու հմտությունը, մե՛րկ կանգնիր մարտի մեջ և կհաղթես նրան, քանզի ում միտքը ծանրանում է երկրային նյութով, չի կարող իր հոգու մեջ կրել կրոնավորական աննյութեղեն խոսքը»:

128. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչո՞ւ, երբ ելնում եմ աշխատելու, ծուլանում եմ անել այն, ինչ շահեկան է հոգուս»: Ծերը նրան ասաց. «Որովհետև չես կամենում կատարել Գրքի խոսքը, որ ասում է. «Կօրհնեմ Տիրոջը ամեն ժամ, ամեն ժամ նրա օրհնությունն իմ բերանում կլինի» (Սաղմ. ԼԳ 2)*: Թե՛ տանը, թե՛ դրսում երբեք մի՛ դադարիր օրհնել և փառաբանել Աստծուն: Ոչ միայն խոսքով, այլև մտքով ու գործերով միշտ փառավորի՛ր քո Տիրոջը, քանզի Աստված չի կարող պարփակվել և արգելափակվել մի տեղում, այլ ամեն ինչում է և ամեն ինչ լցնում է Իր զորությամբ»:*

129. Ոմն եղբայր մեզ պատմեց, թե. «Հարցրի մի ծերի և ասացի՝ ի՞նչ անեմ իմ ծուլության հետ»: Ծերն ինձ պատասխանեց. "Եթե քո ագարակից արմատախիլ անես այն փոքր փուշը, որ ծուլությունն է, մեծ արտեր կունենաս"»:

130. Ծերը դարձյալ ասաց. «Եթե մեկին կենաց խոսք ասես, ապա զղջումով, արտասուքով և հեզ ձայնով ասա լսողին, ապա թե ոչ՝ մի՛ ասա, որպեսզի չմեռնես և անօգտակար լինես, երբ օտարոտի խոսքերով ուրիշներին բժշկել կամենաս»:

131. Ասաց դարձյալ. «Ուր էլ որ գնաս, զգո՛ն եղիր և հիշի՛ր, որ բույնը բարի ապաստան է ճագուկների համար, այսինքն՝ կրոնավորը ուր էլ որ գնա, այն իր բնակավայրն է, միայն թե պիտի ջանա կատարել իր կանոնը գիշերվա և ցերեկվա ժամին և չծուլանա հիշել բարին իր մտքում և ամենքի վիշտը ունենա իր աչքի առաջ, իսկ այս ամենն առանց մեծագույն ջանքերի չի ստացվի»:

132. Ասաց դարձյալ. «Եղի՛ր դու իբրև ուղտ, որ տանես քո մեղքերը, և քթիդ սանձ դրած՝ հետևի՛ր նրան, ով գիտե Աստծո ճանապարհը և կտանի քեզ»:

133. Ասաց դարձյալ. «Եթե փոքրերն արհամարհենք, մեծամեծների մեջ կընկնենք: Հիշի՛ր՝ ինչ կասեմ քեզ. մեզանից մեկը լկտիաբար կծի-

ծաղի, մյուսը կհանդիմանի նրան, բայց նա դարձյալ առանց երկնչելու կասի. «Ի՞նչ կա ծիծաղելու մեջ»: Դրանից կծնվի լկտիություն, լկտիությունից կծնվեն տգեղ խոսքեր, իսկ խոսքերից կառաջանան ամոթալի ու անօրեն գործեր: Ահա այսպես փոքր հանցանքներից առավել մեծամեծերը կներմուծեն չար դևերը և այնուհետև մեծամեծ մեղքերի վրա կավելացնեն հուսահատությունը: Քանզի ով մեղանչում է, բայց ապաշխարում և ուղղվում է, ջնջվում են այդ հանցանքները, և մարդը փրկվում է: Իսկ ով մեղքերից հետո հուսահատվում է, նա իսպառ կորչում է: Մի՛ մոռացեք և մի՛ անտեսեք փոքր հանցանքները, որպեսզի մեծամեծների մեջ չընկնեք, քանզի նենգությամբ են պատերազմում մեզ հետ դևերը: Եթե հայտնապես երևան նրանց խաբեության պատրանքները, ավելի դյուրին կլինի նրանց դեմ պայքարելն ու հաղթելը, մանավանդ եթե արթուն և զգաստ լինենք: Արդ, դյուրին է, քանզի Աստված, զրահավորելով մեզ, զորացրեց ախտերի դեմ, որպեսզի ամենափոքրն իսկ չանտեսենք: Լսի՛ր, թե ինչ է ասում Փրկիչը և ուսուցանում՝ ով իր եղբորն ասի հիմար, պարտական կլինի դժոխքի կրակին (Մատթ. Ե 22)*, և ով թեկուզ անառակաբար աչքով նայի՝ շնանում է* (Մատթ. Ե 27)*: Այսպես և վայ է ասում ծուլացողներին, նաև՝ ամեն դատարկ խոսքի համար հաշիվ եք տալու* (Մատթ. ԺԲ 36)*: Դրա համար էլ արդար Հոբը իր որդիների մտովի մեղանչումները բժշկում էր՝ քավության ընծաներ մատուցելով* (հմմտ. Հոբ. Ա 5)*: Փորձե՛նք այս ամենը, եղբայրնե՛ր, և զգուշանա՛նք թշնամու պատերազմներից, որպեսզի երբեք չընկնենք դրանց մեջ:*

134. Դարձյալ ծերն ասաց. «Քանի դեռ մարդը վալելում է այս աշխարհի քաղցրությունը, անկարելի է, որ նա ճաշակի Աստծո քաղցրությունը: Եվ դարձյալ. եթե ճաշակի Աստծո քաղցրությունը՝ ընդմիշտ կատի այս աշխարհի հաճույքները, ինչպես գրված է Ավետարանում. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել» (Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 15)*: Այդպես և մենք. քանի դեռ ունենք մարդկանց և աշխարհի սերը և տենչում ենք մարմնավոր հանգստի, Աստծո քաղցրությունը չենք կարող ճանաչել: Բայց այս էլ ասեմ Տիրոջ հույսով. եթե մեկը նստի իր սենյակում և լռությամբ ու աղոթքով ապրի, զգոն լինի և անձանձրույթ իր գործը կատարի ողջ կարողությամբ՝ կկարողանա ապրել»:*

135. Ասաց դարձյալ. «Ժամանակից շուտ սեղան մի՛ դիր, քանի դեռ մենակ ես, ոչինչ մի՛ ասա, քանի դեռ քեզ չեն հարցրել, իսկ երբ հարցնեն, պատասխանիր վայելուչ կերպով և իմաստությամբ»:

136. Ասաց դարձյալ. «Տեսնո՞ւմ ես, թե ինչպես առաջին հարվածը, որ սատանան ուղղեց Հոբի վրա, ընչազուրկ անելն էր: Երբ տեսավ, որ չի կարողանում նրան կտրել Աստծուց, երկրորդ հարվածն ուղղեց մարմնին՝ տանջանքների մատնելով: Սակայն դրանից հետո էլ չմեղանչեց Աստծո քաջ մարտիկն ու ճգնավորը և ոչ էլ իր բերանի խոսքով հանցանք գործեց, քանի որ իր սրտում ամբարել էր Աստծո շնորհների գանձերը, որոնցով էլ բոլոր դժնի պատահարները հեշտությամբ արհամարհեց»:

137. Ասաց դարձյալ. «Եթե մեկը մտնի կաթսայատուն, որտեղ անուշահոտ խունկ են եփում, թեկուզ և չգնի, այնուամենայնիվ կհոտոտի նրա անուշահոտությունը: Այսպես էլ նրանք, ովքեր կգնան հոգևոր և արթնամիտ հայրերի մոտ, կշահեն: Եթե կամենան ճգնել, հայրերը նրանց ցույց կտան փրկության ու խոնարհության ճանապարհը, որը նրանց համար կլինի պարիսպ ընդդեմ դևերի պատերազմների»:

138. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Իմ խցում կատարում եմ այն ամենը, ինչ հարկավոր է, սակայն Աստծո մխիթարությունը չեմ ստանում»: Ծերն ասաց նրան. «Երկու պատճառով է դա մեզ հետ պատահում. առաջինը՝ որ շրջում ենք անգործ ու անպիտան մարդկանց հետ, երկրորդը՝ որ կամենում ենք մեր կամքը հաստատել, և ոչ թե՝ ուրիշներինը»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ խորհուրդ կտաս, որ կատարեմ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Գնա՛, միաբանվի՛ր Աստծո երկյուղն ունեցող մարդու հետ, խոնարհեցրո՛ւ քո անձը նրա առաջ և քո կամքը հանձնի՛ր նրա ձեռքը և այնժամ Աստծուց մխիթարություն կգտնես»:

139. Ոմն ծեր բնակվում էր Սկիտեում և մի անգամ գնաց Ալեքսանդրիա՝ իր ձեռագործը վաճառելու: Այնտեղ տեսավ մի երիտասարդ կրոնավորի, որը մտավ պոռնկատուն: Ծերը շատ ծանր տարավ այդ բանը և սաստիկ տրտմած՝ մնաց դրսում, որպեսզի երբ երիտասարդը դուրս գա այնտեղից՝ խոսի նրա հետ: Եվ այդպես էլ եղավ: Երբ երիտասարդը դուրս ելավ այնտեղից, ծերը բռնեց նրա ձեռքը և առանձին մի տեղ տանելով՝ ասաց նրան. «Տե՛ր իմ և եղբա՛յր, չգիտե՞ս, որ հրեշտակային կերպարանք ես առել, չգիտե՞ս, որ երիտասարդ ես, չգիտե՞ս, որ բազում են չարի որոգայթները, չգիտե՞ս, որ տեսողության միջոցով ու զգայարանների շարժումով մեծապես վնաս են կրում կրոնավորները գյուղերում ու քաղաքներում: Ինչպե՞ս առանց երկյուղի մտար պոռնկատուն, ուր ինչ չես ուզում՝ լսում ես, զազրելի և ատելի գործեր ես տեսնում և անկարգ ու գարշելի արանց ու կանանց հետ ես առնչվում: Մի՛, աղաչում եմ, որդյա՛կ իմ, մի՛ արա այդպես, գուցե

զրկես և ընկղմես քո անձը, այլ փախի՛ր անապատ, ուր և կկարողանաս ապրել Աստծո օգնությամբ»: Երիտասարդը ծերին պատասխանեց և ասաց. «Գնա՛, բարի՛ ծեր, գնա՛, քանզի Աստված ուրիշ բան չի ուզում, այլ միայն՝ սուրբ սիրտ»: Այնժամ ծերը դեպի երկինք բարձրացրեց իր ձեռքերն ու ասաց. «Փա՛ռք քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք քեզ, որ հիսուն տարի Սկիտեում լինելով՝ սուրբ սիրտ չկարողացա ստանալ, իսկ այս երիտասարդը անառականոցում լինելով՝ սուրբ սիրտ ստացավ»: Ապա դառնալով դեպի երիտասարդը՝ ասաց. «Աստված փրկի քեզ, որդյա՛կ, և ինձ ամոթով չթողնի»: Եվ ավելացրեց. «Որդյա՛կ, աղը ջրից է գոյանում, սակայն եթե ջրին մերձենա, կհալչի և կկորչի: Այսպես էլ կրոնավորը. կնոջից է ծնված, սակայն եթե մերձենա կնոջը՝ կհալչի և կկորչի»:

140. Ասաց դարձյալ. «Երբ աղոթում ենք առ Աստված և ասում՝ մի՛ տանիր մեզ փորձության, ոչ թե նրա համար ենք ասում, որ չփորձվենք, քանզի դա անհնար է, այլ խնդրում ենք, որ չտապալվենք այդ փորձությունից, այսինքն՝ չանենք դրանով այն, ինչ հաճելի չէ Աստծուն: Ինչպես, օրինակ, գազանի դեմ մարտնչողին եթե գազանը չի կերել, ուրեմն նա գազանի երախը չի մտել: Իմացի՛ր, որ բոլոր ախտերի դեպքում է այդպես. եթե մեկը նրանցից մեկնումեկից չի պարտվել, ապա նրա փորձության մեջ չի մտել, այլ փրկվել է չարից»:

141. Զոսիմոս երանելին եղբայրների հետ էր: Իր բերանը խաչակնքելով՝ ասաց. «Երբ Աստված մարդացավ, այսպիսի և այսքան շնորհներ տվեց նրանց, ովքեր հավատացին և հավատում են Նրա անվանը, որոնց թիվ չկա: Ուստի մեզ պարտ է հավատալ և սկսել բարին գործել, եթե կամենում ենք: Որովհետև երբ Աստծո շնորհը, մեր կամքը և բարու ցանկությունը ժողովվեն մարդու մեջ, բոլոր դժվարություններն այնտեղ հեշտությամբ կլուծվեն: Ուրեմն, ամեն ոք, ով կամենում է այս, պետք է բովանդակ աշխարհը ոչինչ համարի և մի անպետք շյուղ վերցնելով ձեռքը՝ ասի՝ ում այսպիսի կամ այսչափ բան է հարկավոր կամ ջանում է ունենալ՝ նա փրկության հնար չունի: Քանզի նա, ով ընթանում է բարու ճանապարհով և ուզում է ծառայել Աստծուն, նա այս աշխարհի ամեն ցանկալի ու ատելի բան իբրև այս շյուղը թող համարի, թեկուզ և այս աշխարհի իշխանը լինի և ամեն ինչ ունենա, քանի որ ոչ թե ինչ-որ բան ունենալն է կորստյան մատնում մարդուն, այլ չարաչար ունենալն է վնասում: Քանզի ո՞վ չգիտե, որ բոլոր զգալի գոյերից մեր մարմիններն ամենալավն ու պատվականն են, սակայն երբ ժամանակը պահանջի, պարտավոր ենք այն նույնպես ատել և արհամարհել. եթե մեր այս մարմինը պարտավոր ենք ատել, ապա որ-

չափ ևս առավել՝ մեր ունեցվածքը: Եվ ինչպես որ պարտավոր ենք մեր ունեցվածքը զուր, անօգուտ և վայրենաբար չցրել, այլ աղքատների բարի կարիքների և մեր անձի համար ծախսել, այնպես էլ պարտավոր ենք մեր մարմինը զուր չտալ մահվան, ինչպես նրանք, որ կորցնում են մտքի զգոնությունն ու հիմարանում, այլ պետք է մնալ և սպասել այն ժամին, երբ կվերցվի այն»: Այստեղ հիշեց նաև այն եղբորը, որ բանջարանոց ուներ և ասում էր. «Մի՞թե նա ինքը չսերմանեց, մի՞թե նա ինքը չքնեց կամ չտնկեց և չխնամեց. սակայն նա ուներ այն այնպես՝ կարծես թե չուներ: Դրա համար էլ երբ ծերը գնաց նրա մոտ՝ փորձելու նրան և սկսեց ոչնչացնել բանջարեղենը, նա դուրս չեկավ, որպեսզի ծերի աչքին չերևա, այլ թաքնվեց նրանից, իսկ երբ մնաց ընդամենը մի բանջարապտուղ, հեզաբար ասաց. «Հա՛յր, եթե կամենում ես՝ թո՛ղ այդ մեկը, որ դու և ես սիրով ճաշակենք»: Այնժամ ծերը ճանաչեց, որ նա կատարյալ ծառա է Աստուծո և ոչ թե՝ բանջարի, և ասաց նրան. «Աստծո Հոգին է քո մեջ հանգչում, ո՛վ եղբա՛յր»: Իսկ եթե եղբայրն այդ բանջարանոցը հանցավոր ախտերի միջոցով ձեռք բերած լիներ, իսկույն տրտմություն և հոգու խռովք կցուցաբերեր, սակայն գործով ցույց տվեց, թե այնպես ուներ՝ որպես թե չուներ»: Եվ ասաց երանելին. «Երբ դևերը տեսնում են այսպիսի մեկին, որ ոչինչ է համարում երկիրն ու նրա ողջ նյութական բարիքները, չի խռովվում և դույզնինչ չի մտահոգվում դրանց համար, այնժամ ճանաչում են նրան, որ թեև երկրի վրա է շրջում այդպիսին, սակայն նրա կյանքն ու բարքը երկնքում են»:

142. Դարձյալ ասաց. «Կրոնավոր կա՝ մտքերի այնպիսի ջերմագույն թռիչք ունի, որ մի ժամում ավելին է ընծայում Աստծուն, քան ծույլ միտքը կարող է ընծայել հիսուն տարում: Եվ երբ դևերը տեսնում են, որ մեկը անգոսնվում է, անարգվում, արհամարհվում, զրկվում, տուժում կամ չարչարվում ու ո՛չ տրտմում է դրանից և ո՛չ էլ բանի տեղ դնում, այլ խիզախաբար և ուրախությամբ կրում է այն, այդպիսինից երկնչում են դևերը, քանզի հասկանում են, որ նա մերձեցել է ճշմարիտ ճանապարհին և կամենում է ընթանալ Աստծո պատվիրանների մեջ»:

143. Նաև մի դեպք հիշեց հայր Պախոմիոսից, երբ սաստեց նրան իր ավագ եղբայրը և ասաց. «Վե՛ր կաց դատարկամտությանդ, դու՝ մեծամիտդ ու սնափառդ: Ինչո՞ւ ես կամենում ընդարձակել վանքը», այն դեպքում, երբ հայր Պախոմիոսն Աստծուց էր ստացել վանք կառուցելու հրաման: Եվ երբ նա ստացավ եղբորից այդ նախատինքը, մի՞թե բարկությամբ ըմբոստացավ՝ որպես թե բարի գործն Աստծո հրամանով

է անում: Ո՛չ, այլ նրան ոչ մի բանով չհակադարձեց և լռեց: Երեկոյան իջավ ներքև՝ իր փոքրիկ բնակարանափոսը, սկսեց արտասվել և լալ, ապա աղոթեց ու ասաց. «Աստվա՛ծ իմ և Արարի՛չ իմ, մտքերս տակավին մարմնավոր են, տակավին մարմնավոր կյանքով եմ ապրում: Վա՜յ ինձ՝ եղկելուս, քանզի ինձ համար մահ է պատրաստված, ինչպես և գրված է: Այսքան ճգնությամբ ջանում եմ պատրաստել սիրտս, սակայն դեռևս բարուց ու հույսից դեպի բարկություն եմ հափշտակվում: Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, որ չկորչեմ: Եթե թշնամին ինձ վրա գեթ փոքր-ինչ խոցելի տեղ գտնի, հեշտությամբ կհափշտակի ինձ, եթե դու չզորացնես ինձ, Տե՛ր, քանզի «եթե մեկը պահի բոլոր օրենքները, բայց մեկում սայթաքի, բոլոր օրենքներին պարտական կլինի» (Հակոբ. Բ 10)*: Սակայն ես քո ողորմությանն եմ հուսացել: Եթե օգնես ինձ, Տե՛ր, կկարողանամ գնալ Քո ճանապարհով: Կամ՝ ինչպե՞ս ուսուցանեմ նրանց, ում ժողովել ես՝ ինձ հետ դեպի կենաց շավիղները գնալու, եթե նախ ես ինքս չընթանամ դրանցով և չպահեմ քո երկյուղը»: Այսպես էր աղոթում մինչև առավոտ, երբ ծովացած քրտինքներից ու արտասուքներից ոտքերի տակ կավ դարձավ գետինը, ուր կանգնած էր, մանավանդ որ ամառ էր, և տեղն էլ՝ խիստ տոթ: Եվ երանելին հիացմունքով ասաց. «Մի՞թե նրա արտասուքներին չափ կար: Ուրեմն ինչպե՞ս Աստված չշնորհեր այսպիսի մտազեղումին այն ամենն, ինչ նա խնդրում էր: Ես հավատում եմ, որ այդ գիշեր Աստված նրան շնորհեց այն ամենը, ինչ նա խնդրեց, քանզի դրանից հետո նա մեռավ բոլոր ախտերի համար: Եվ Զոսիմոս երանելին ասաց դարձյալ. «Եթե մեկն իր սրտում որևէ մեկի հանդեպ չար խորհուրդ պահի՝ ինչ-որ տրտմության, զրկանքի, անարգանքի կամ այլ չար բանի համար և խորհի նրան վնասելու հնար գտնել, նա ինքն է իր հոգին սպանողը, և նրան դևեր պետք չեն, այլ ինքն է իր անձը սպանողը: Եվ միայն այդ չար խորհուրդն ունենալը նկատի չունեմ, այլ եթե նրան հոգու բարեգործ ու բժիշկ չհամարի, մեծապես կվնասի իր անձը: Քանզի ի՞նչ ասաց, որ վնասեց քեզ. բնա՛վ, ամենևին չվնասեց, այլ առավել ևս սրբեց քեզ: Այսպե՛ս պետք է վերաբերվել նրան՝ իբրև Քրիստոսից առաքված բժիշկի: Որովհետև պարտական ես Քրիստոսին և պետք է չարչարվես Նրա Անվան համար, ինչպես նաև պարտավոր ես նրան բարեգործ համարել, իսկ եթե ոչ՝ ուրեմն ախտերից չես ազատվել և ոչ էլ ուզում ես ազատվել: Քո արյունից անպարտ է քո Տեր Աստվածը, քանզի այն, ինչ վշտացրեց քեզ՝ քո հոգու հիվանդությունից է, որովհետև եթե հիվանդ չլիներիր, ապա չէիր երկնչի: Եվ սրա համար առավել ևս պարտավոր ես գոհանալու նրանից, որովհետև նրանց միջոցով ճանաչվեց քո հոգու*

հիվանդությունը, և քեզ հարկավոր է վերցնել նրանից ապաքինման դեղը, որ նրա միջոցով քեզ համար ուղարկեց Հիսուս Քրիստոս: Իսկ եթե ոչ միայն չգոհանաս, այլև չար բան խորհես նրա մասին, պարզ է, որ դու հակառակ ես Հիսուս Քրիստոսին և Տիրոջն ասում ես. «Ինձ պետք չէ Քո դեղը, որովհետև կամենում եմ նեխել իմ վերքերի մեջ, կամենում եմ հնազանդվել դևերին և ոչ թե՝ Քեզ»: Եվ ի՞նչ պետք է անի քեզ Տերն այնուհետև: Նա բարերար է և ողորմած և մեր մեղքերի դիմաց՝ որպես դեղ, տվեց իր պատվիրանները, որոնք մաքրող և կիզող դեղերի նման բժշկում են մեր խելագարությունը: Ուրեմն, ովքեր կամենում են արդար լինել, ակամա պետք է համբերեն այն ամենին, ինչ բժիշկն է ասում ու անում, քանզի հիվանդներին էլ հաճելի չէ իրենց անդամների հատումն ու կիզումը, և ոչ էլ մաքրագործող դառը դեղերն են հաճույքով խմում, այլ երբ հիշում են, սրտխառնոց են զգում: Սակայն այս ամենին հավատալով՝ նեղություն են կրում՝ գիտակցելով, որ առանց դրանց չեն ազատվի ցավերից, դրա համար էլ իրենց անձը հանձնում են բժշկի ձեռքը, որովհետև գիտեն, որ այդ փոքր դժվարությունները կրելով՝ կազատվեն երկարատև հիվանդությունից: Հիսուսի մաքրող ու կիզող դեղերը ունեցվածքից զրկումն է, տանջանքի արհամարհումը, մարմնի և ողջ նյութականի նկատմամբ ատելությունը և բոլոր ախտերից վեր կանգնելը: Իսկ եթե հանձն չառես, քեզ կվնասես, ուստի քե՛զ մեղադրիր և ընկերոջդ պատճառ մ՛ի բռնիր: Սակայն մենք՝ անփորձներս ու անմիտներս, մեզանից հեռու ենք վանում Հիսուսի կենդանացնող դեղերը, թողնում ենք ինքնամեղադրանքը, նենգում և չարն ենք խորհում մեր բարերարի հանդեպ»: Եվ նա ասաց. «Եթե փորձությունները վերանան երկրից, ոչ մի տեղ սուրբ չի գտնվի, քանզի փորձություններն են սրբում անձերը: Ով չփորձվի, չի կարող սուրբ լինել, ով փախչի փորձության օգուտից, չի կարող ազատվել հավիտենական փորձությունից: Քանզի ո՞վ տվեց վկաներին փառքի պսակ, եթե ոչ՝ միայն նրանց դատողները, կամ՝ ո՞վ այնպիսի փառքի արժանացրեց Ստեփանոսին, եթե ոչ՝ նրան քարկոծողները»: Եվ հիշում էր Եվագրիոսի խոսքը, որ ասում էր. «Ես ոչ միայն չեմ մեղադրում մեզ չարիք անողներին, այլև բարերար եմ անվանում և չեմ հեռացնում հոգիներ բուժող դեղը, այլ վախենում եմ, թե գուցե Տերն իմ հոգուն ասի. «Բժշկում էի Բաբելոնին, բայց չբժշկվեց»: Եվ ասում էր՝ Եվագրիոսը վախենում էր իր համար, թե միգուցե դատապարտվի Քրիստոսից, և ասում էր իր անձին. «Եղկելի՛ Եվագրիոս, հիվանդ ես սնափառությամբ և ամբարտավանությամբ: Հիսուս Քրիստոս ընկերոջից արհամարհանքի դեղ ուղարկեց քեզ, բայց դու չբժշկեցիր»: Եվ

ա՛յս էլ իմացեք, որ ուրիշ ոչ ոք չի ասում մեր մասին ճշմարտությունը, ինչպես ասում են մեզ բամբասողները, քանզի Տերը գիտե մեր ծածուկ մեղքերը, և Նրան են միայն հայտնի, Ով քննում է սրտերն ու երիկամունքները: Ու թեկուզ ամբողջ աշխարհը գովի մեզ ու երանի տա՝ ի՞նչ օգուտ մեզ, քանի որ մեր ներքինը լի է ամոթով, ատելի է և գարշելի, և ոչ ոք այնպես չի ստում և անարդարացի չի խոսում, ինչպես նա, ով գովում է մեր գործը և երանի է տալիս մեզ, և ոչ ոք այնպես չի ճշմարտախոսում, ինչպես նա, ով բամբասում ու նախատում է մեզ: Եվ նրանք չգիտեն մեր բոլոր գաղտնիքները, որպեսզի իրավացիորեն ասեն, այլ՝ հազարից մեկը: Եթե կարողանային մեր մեղքերի խորքը իմանալ կամ դրանց գեթ փոքր մասը տեսնել՝ կփախչեին մեզնից՝ ինչպես նեխած դիակից, իսկ իմ հոգուց կփախչեին՝ իբրև չար դևից: Եվ եթե բոլոր մարդկանց բոլոր անդամները լեզուներ լինեին, համոզված եմ, որ չէին կարողանա ըստ արժանվույն մեր բոլոր հանցանքներն ասել, որովհետև ամեն չարախոս ու նենգադավ մարդ մեր վատի սոսկ մի փոքր մասն է ասում, բայց ամբողջն Աստված գիտե միայն: Եվ եթե արդար Հոբն անգամ ասում էր, թե «լի եմ ամենայն գարշելիություններով», ապա մենք ի՞նչ ասենք, որ ամեն տեսակ ախտերի ու մեղքերի խորը ջրհոր ու խորխորատ ենք, որի մեջ բոլոր ժահրահոտ մեղքերը գցեց սատանան: Իսկ նրանք, ովքեր գիտակցում են և խոնարհությանն են դիմում, ազատվում են դևերից: Եվ, ինչպես հայրերն ասացին, ով խոնարհությամբ իջնի մինչև դժոխքի խորքերը, մինչև երկինք կբարձրանա, և հակառակը՝ եթե ամբարտավանությամբ մինչև երկինք բարձրանա, մինչև դժոխքի խորքը կիջնի: Եվ ո՞վ կարող է ստիպել խոնարհին՝ չարը խորհել որևէ մեկի մասին, քանզի ինչ էլ որ պատահի խոնարհին կամ ումից էլ վնաս կրի կամ լսի, նրանց արհամարհանքին պատճառ կդտնի և առավել կխոնարհվի: Նա հիշում էր նաև հայր Մովսեսին և ասում էր. «Տեսե՛ք, թե ինչպես վարվեց նա, երբ եկեղեցու սպասավորները «Դո՛ւրս, դո՛ւրս եկեղեցուց,– ասացին նրան,– դո՛ւրս ել դո՛ւ՝ սևամորթ». Թե ինչպես սկսեց մեղադրել իր անձը և ասաց. “Մոխրագո՛ւյն մորթ՝ սևագույն, դիվանման, ճիշտ ասացին քեզ. եթե դու մարդ չես՝ ինչո՞ւ համարձակվեցիր մարդկանց մեջ մտնել”»:

144. Եվ ասաց. «Ինչ էլ որ պատահի խոնարհին՝ փութաջանորեն աղոթքի է կանգնում և իրեն վնաս հասցրած ամեն մի մարդու իր բարերարն է համարում: Սակայն մենք, թողած ճշմարիտ շավիղն ու սրբերի ուսմունքը, խոտոր ու մոլար ճանապարհներով ենք գնում՝ հետևելով մեր թյուր ու խեղված մտքերին: Մինչդեռ ի՞նչն է ավելի

ախորժելի, քան լսել վարդապետ հայր Ամոնի բարի փորձառությունը, որ ասում է. «Զգո՛ւյշ եղիր քո անձի համար, որպեսզի եթե մեկը տրտմեցնի քեզ որևէ արարքով, լուռ լինես և բնավ որևէ բան չասես, մինչև որ աղոթքով հեզանա ու հանդարտվի քո սիրտը, և դրանից հետո աղաչես եղբորը հաշտվել քեզ հետ»: Քանզի ով ճշմարտության ճանապարհի ցանկությունն ունի, մտքում սրտմտությունը շարժվելիս՝ առավել հարվածում և տանջում է իր անձը, միշտ նախատում է իրեն և ասում. «Ինչո՞ւ ես հիմարացել, իմ գոռո՛զ անձ, կատաղած մոլագարի պես եռում ու զայրալից փրփրում ես: Արդարև, այդ ի հայտ է բերում քո հիվանդությունը, քանզի եթե հիվանդ չլինեիր, այդ բաների վրա չէիր զայրանա: Ինչո՞ւ քո անձը մեղադրելը թողած՝ եղբորդ ես մեղադրում, որ քեզ խոսքով ու գործով ցույց տվեց քո հիվանդությունը: Ո՛վ անձ իմ, սովորի՛ր Քրիստոսի պատվիրանները, Նրա, ով անարգվում էր և փոխարենը չէր անարգում, չարչարանքների էր ենթարկվում և չէր հակառակվում, չլսեցի՞ր խոսքը, որ ասում և գործով կատարում էր. «Թիկունքն իմ դրեցի հարվածների տակ և երեսս չդարձրի ապտակներից ու նախատինքի թքից» (Եսայի Ժ 6)*: Իսկ դո՛ւ, եղկելի ու հեղգ անձ իմ, ընկերոջիցդ ոչ մի նախատինք ու հանդիմանություն չես ընդունում հեզաբար, այլ բյուր ու բազում չար խորհուրդներ ես հյուսում և դևերից առավել ես վնասում քո անձը: Ահա տեսնում ենք Քրիստոսի խաչը, ամեն օր ընթերցում ենք Նրա չարչարանքները, լսում, թե որքան չարչարանքներ կրեց Նա մեզ համար, բայց մենք ամենաչնչին անարգանքն իսկ չենք հանդուրժում հանուն Նրա: Իսկապես չեղվեցինք ուղիղ ճանապարհից»:*

145. Եվ դարձյալ ասաց. «Եթե մարդ անգամ Մաթուսաղայի տարիքին հասնի, բայց չընթանա ճշմարիտ ճանապարհով, որով ընթացան մեր հայրերը, այն է՝ նախատինք ու արհամարհանք, զրկանք և ամեն տեսակի վշտեր ու չար պատահարներ, և խնդությամբ չընդունի այս ամենը, բնավ ո՛չ ճշմարիտ կյանքի կհասնի և ոչ էլ որևէ առաքինության, այլ զուր կվատնի իր ժամանակը»:

146. Եվ պատմեց, թե. «Մի անգամ սրբուհի Դիոնիսիայի մոտ էի: Մինչ նստած էինք, ոմն աղքատ նրանից ողորմություն խնդրեց, և նա տվեց՝ որքան կարող էր: Սակայն քանի որ չէր կարող տալ նրան այնքան, որքան նա էր խնդրում, աղքատն սկսեց անարգել նրան և նրա ու իմ հասցեին սաստիկ աղտեղի ու տգեղ բաներ ասաց, որոնք պետք չէ լեզվով հիշել: Երբ լսեց դրանք սրբուհի կինը, սաստիկ տրտմեց և մտածում էր, թե ինչպես նրան մի չար բան անի: Ես հասկացա այդ և

ասացի նրան. «Ինչո՞ւ ես ուզում նման բան անել և կորցնել հոգիդ ու մերկանալ առաքինություններից...Ի՞նչ ես անում. համբերի՛ր հանուն Քրիստոսի, ինչպես Քրիստոս համբերեց հանուն քեզ: Գիտեմ, որ ցրեցիր ողջ գանձերդ՝ իբրև աղբ, սակայն եթե դու չստանաս հեզությունն, կնմանվես սաստիկ շիկացած երկաթի, որի վրա ջանք է թափում դարբինը, բայց չի կարողանում պիտանի գործիք պատրաստել, քանի որ, ինչպես աստվածակիր Իգնատիոսն է ասում, ամենից առաջ պետք է հեզ լինել, որովհետև հեզությունը ջախջախում է այս աշխարհի իշխանի բոլոր զորությունները: Աշխարհը թողած կրոնավորի նշանը այս է. լինել չբարկացող և անխռով, քանզի կան ոմանք, ովքեր թողեցին ոսկու շեղջեր, սակայն մի ասեղի համար բարկացան և այդ ասեղի պատճառով խռովք ապրեցին, իսկ այդ ասեղը լրացնում է թողած ոսկիների և դրամների տեղը: Այդ մարդը ծառա է դառնում ասեղի կամ կնգուղի, գրքերի կամ այլ երկրային նյութի և դրանից հետո նա այլևս Աստծո ծառա չէ: Եվ ճիշտ ասաց ծերերից մեկը, թե որքան ախտեր որ կան հոգու մեջ, այնքանն էլ տիրում են նրան: Իսկ առաքյալն էլ ասաց. «Ով ումից հաղթված է, նրան էլ ծառայում է» (Հռոմ. Զ 15)*»: Երբ սրբուհին լսեց այս ամենը, զարհուրեց, նայեց ինձ և ասաց. "Դու գտար Աստծուն, Ում փափագում էիր"»:*

147. Եվ երանելին ասաց. «Հոգին կամենում է ապրել, սակայն սիրում է նաև այս կյանքի ունայնությունը և հեշտությունը, իսկ վշտերը հեռացնում է իրենից: Իսկ եթե վշտերից ու նեղություններից չփախչեր անձը, Աստծո պատվիրանները ծանր չէին լինի, պարզապես մեր չար կամքն է ծանր ու դժվարին, որը դժվարանում ենք հատել: Ապա թե ոչ՝ ինչպե՞ս է, որ ծովի, բարբարոսների կամ ավազակների երկյուղից ամեն ինչ արհամարհում ենք և շտապ ցրում ու մեզանից հեռացնում ենք մեր ողջ գույքը՝ հանուն մեր կյանքի օրերը մի փոքր երկարաձգելու: Թեև իսկապես գիտենք, որ ոչ շատ ժամանակ անց մեռնելու ենք, սակայն ամեն պարագայում հանուն փոքր-ինչ կյանք շահելու՝ ամեն ինչ մոռանում ենք և երանելի ենք համարում մեզ, որ ամեն ինչ կորցրինք, բայց անձերս փրկեցինք՝ թե՛ ծովից, թե՛ թշնամուց և թե՛ մահից: Եվ հանուն այդ վաղանցուկ փոքր ժամանակը ապրելու՝ ամեն ինչ հոժարությամբ նույն պահին ցրում ենք: Սակայն ինչո՞ւ չենք հիշում և այդպես վարվում հանուն հավիտենական կյանքի, ինչո՞ւ մեզ չի համակում Աստծո երկյուղը, ինչպիսի ահով մեզ համակում է, ինչպես սրբերից մեկն ասաց, ծովի կամ շան երկյուղը: Եվ ի հաստատումն սրա՝ երանելին մեզ պատմեց այս պատմությունը, որ լսել էր վստահելի

մարդկանցից: Ասաց. «Մի մարդ կար, ով ակնագործ էր և մեծագին ու պատվական մարգարիտների ու քարերի ակնավաճառ: Տարիներով հավաքած այս գանձերը վերցնելով՝ նավ մտավ իր ծառաների հետ, որպեսզի այլ երկրներում վաճառի և մեծ շահ ստանա: Եվ այնպես եղավ, որ նա շատ սիրեց այդ նավապետի սպասավոր մի պատանյակի, իսկ այդ պատանյակը մեծ սիրով սպասարկում էր նրան այնպես, ինչպես կսպասարկեր հորը: Ակնագործը միշտ նրան կերակրում էր իր հետ և նրան կերպասե զգեստներ էր հագցնում: Մի օր պատանին լսեց, որ նավարարները ծածուկ խորհրդակցում են, որ վաճառականին և նրա ծառաներին ծովը նետեն ու նրա գանձերը վերցնեն: Պատանին լսելով այս՝ սաստիկ տրտմեց: Երբ սովորականի պես սպասարկման և հյուրասիրության կանչվեց վաճառականի կողմից, չկարողացավ թաքցնել իր տրտմությունը, ինչը չվրիպեց վաճառականի աչքից, և նա հարցրեց. «Ի՞նչ է եղել քեզ այսօր, քանզի սաստիկ տխուր եմ տեսնում քեզ»: Իսկ պատանին ծածկեց իրողությունը և ասաց. «Ես ամենևին տխուր չեմ»: Սակայն վաճառականը պնդեց. «Ասա՛ ինձ ճիշտը, ի՞նչ է պատահել քեզ»: Այնժամ տղան արտասուքներով լցված ասաց. «Նավապետներն այսպիսի բան են որոշել»: Վաճառականն ասաց նրան. «Իսկապե՞ս այդպես է, և դու հաստատ համոզվա՞ծ ես դրանում»: Տղան նրան ասաց. «Այո՛, իսկապես այդպե՛ս է»: Այնժամ վաճառականը կանչեց իր ծառաներին և ասաց. «Ինչ ասեմ ձեզ՝ անմիջապես կատարեք՝ առանց հարցուպատասխանի: Շուտ մի սփռո՛ց բերեք և փռե՛ք իմ առջև»: Եվ բերեցին: Ասաց. «Բերե՛ք այստեղ արկղերը»: Եվ երբ բերեցին, բացեց սնդուկները և հանելով բոլոր ակներն ու մարգարիտները՝ շաղ տվեց սփռոցի վրա: Եվ երբ ամենքի առաջ դրեց ամեն ինչ, սկսեց բարձրաձայն այսպես ասել. «Մի՞թե սրանք են իմ կյանքը և հանուն սրա՞նց եմ դառնագին դատում ծովերում ու ցամաքներում: Սրանց համա՞ր եմ ծովերի խորքը ճեղքում ու մշտապես մաշվում երկյուղից, մի՞թե չեմ մեռնելու ոչ շատ ժամանակ անց, և ինչպես որ ոչինչ չբերի ինձ հետ աշխարհ, նույնպես և մերկ ու ամոթահար դուրս եմ գալու աշխարհից»: Ապա ծառաներին ասաց. «Առե՛ք այս ամենն ու շա՛ղ տվեք ծովը»: Եվ այս խոսքի վրա ամեն ինչ թափեցին ծովը: Զարմացան նավապետները, և նրանց մտադրությունն ի չիք եղավ»: Եվ ասաց երանելին. «Տեսե՛ք, եղբայրնե՛ր, երբ շտկեց իր խորհուրդները՝ շատ հեշտությամբ իմաստնացավ խոսքով և գործով: Եվ սա արեց, որպեսզի մի փոքր ժամանակ շահի ապրելու համար: Իհարկե, ճիշտ և իմաստնաբար վարվեց, քանզի խորհեց իր մտքում, թե՝ եթե այսօր մեռնեմ, ակնեղեններս ո՞ւմ պիտի մնան: Իսկ մենք մի փոքր զրկանք

չենք կամենում կրել հանուն Աստծո պատվիրանների: Եվ եթե պետք է տրտմել ունեցվածքի կորստյան համար, ապա պետք է զրկողի համար տրտմել, և ոչ թե ունեցվածքի կորստի համար, որովհետև ով զրկեց՝ նա զրկվեց Երկնքի Արքայությունից, քանզի գրված է. «Անիրավներն ու ագահները Արքայությունը չեն կարող ժառանգել» (Ա Կորնթ. Զ 7-9)*: Դու, որ զրկվեցիր, հավիտենական կյանքը շահեցիր, քանզի գրված է. «Խնդացե՛ք և ուրա՛խ եղեք, քանզի մեծ է ձեր վարձքը երկնքում»* (Մատթ. Ե 11)*: Բայց մենք թողնում ենք Քրիստոսի գամված ձեռքերն ու ոտքերը տեսնելը և տրտմում ենք անպետք ու ապականացու ինչքերի համար, որոնք ընավ հիշելու արժանի չեն, և իրավամբ դատապարտվում ենք: Բայց չէ՞ որ Աստված մեզ ստեղծեց ըստ մարմնի անդամների հերթականության, իսկ մեր գլուխը Քրիստոս Աստված է: Ինչպես առաքյալն է ասում, թե բոլոր անդամների բազմությունը մի մարմին է կազմում, իսկ մեր գլուխը Քրիստոս Աստված է* (Ա Կորնթ. ԺԱ 3)*: Եվ երբ տրտմեցնում է քեզ եղբայրդ, նույնն է թե՝ ձեռքդ կամ աչքդ ցավեցնելով տրտմեցնում է քեզ: Ինչքան էլ մեր ձեռքը կամ աչքը ցավի ու նեղություն տա մեզ, չենք կարող կտրել կամ պոկել այն, քանզի մեծ վնաս կհամարենք դրանցից զրկվելը, այլ ցավող անդամը կնքում ենք պատվական խաչի նշանով և օրհնություն ու դեղ ենք դնում վրան և դրանց համար միշտ աղոթում ենք առ Աստված, որպեսզի լավանան: Արդ, ինչպես որ համբերում ես ցավին և աղոթում ես առ Աստված աչքիդ բուժման համար, այնպես էլ պարտավոր ես քո եղբոր համար աղոթել: Իսկ մենք, տեսնելով Քրիստոսի անդամին ցավագնած, ոչ միայն ցավակից չենք լինում, այլև ջանում ենք և աղոթքով խնդրում, որ առավել վշտանա: Եվ սա նրանց գործն է, ովքեր ո՛չ իրենց աղիքների մեջ գալարք ունեն և ո՛չ էլ հույս առ Աստված: Իսկ նրանք, ովքեր ողորմած են և աստվածասեր, նախ իրենց հոգիներն են շահում և ուրախանում, ապա և եղբայրներին են շահում: Զարությունը, սակայն, սրան հակառակ է. ով իր հոգու մեջ չարություն ունի, նա նախ իր անձն է խորտակում ու մաշում, ապա՝ ընկերոջը: Հանուն ունեցվածքի, փառքի կամ այլ բաների կամենում է տապալել ընկերոջը, բայց չգիտե եղկելին, որ զրկվում է Երկնքի Արքայությունից, իսկ ով իր հոգին չի վնասում, նա նաև եղբորը չի վնասի»:*

148. Եվ դարձյալ ասում էր, թե մեկն իրեն հարցրեց, թե. «Հա՛յր, մեծ են պատվիրանները և չափազանց շատ, դրանից իմ միտքը մթագնում է և չգիտեմ՝ ո՞րը կատարեմ և ո՞րը թողնեմ»: Իսկ ինքը պատասխան տվեց. «Թող այդ քեզ չվախեցնի, եղբա՛յր, այլ իմացի՛ր, որ եթե քո

մեջ ատելություն մշակես դեպի ունեցվածքը, հեշտությամբ կհասնես բոլոր առաքինություններին, որովհետև ով ոչինչ է համարում աշխարհիս նյութեղեն բարիքները, նա ոչ ոխակալ կլինի, ոչ կռվարար և ոչ էլ մեկնումեկին ատող: Սակայն ասա՛ ինձ՝ ի՞նչ դժվարություն ունի թշնամու համար աղոթելը: Քեզ պետք չէ ո՛չ փորել երկիրը, ո՛չ հեռավոր ճանապարհ գնալ, այլ միայն ատել ունեցվածքը, որովհետև այնտեղ, ուր չկա ունեցվածք, որտեղի՞ց թշնամություն պետք է լինի: Անարգե՞ց քեզ՝ գոհացի՛ր, քանզի առաքյալների աշակերտը եղար, ովքեր ցնծում էին, երբ Հիսուսի անվան համար գանահարվելու էին արժանանում (Գործք Ե 40-41)*: Նրանք՝ գանահարվողները, արդար էին, իսկ մենք անարգանքների ու գանահարության արժանի ենք, թեկուզ ամենքն էլ մեզ պատվեն. նաև անիծյալ ենք, քանզի գրված է. «Անիծյալ են նրանք, ովքեր շեղվեցին քո պատվիրաններից»* (Սաղմ. ՃԺԸ 21)*: Մի՛ կարծիր, թե ամենքին է տրված անարգվել Քրիստոսի անվան համար: Վստահաբար՝ ոչ ամենքին, այլ արդարներին ու սրբերին միայն, ինչպես ասացի, իսկ մեզանից ովքեր իմաստուն են, խոստովանում են և ասում՝ իրավացիորեն ենք անարգվում մեր բազում չար և ապիրատ գործերի համար: Սակայն, որքան եղկելի է այն անձը, ով գիտե իր բոլոր չար գործերը և գիտե, որ ամեն բան, որ կատարվում է իր հետ, արդարացիորեն է կատարվում, սակայն իր մտքերի մեջ հիմարանալով՝ մոռանում է իր բոլոր մեղքերը և նստած՝ չար ու դիվական խորհուրդներ է խորհում և ասում. «Այս մեկն ինձ այս բանն ասաց, կամ այսինչն ինձ անարգեց»: Չի հասկանում եղկելին, որ սրանով կորստյան է մատնում իր անձը՝ ինքն իր դևը դառնալով: Քանզի՝ ով արվեստի գործն է տեսնում, նա նաև գործի մեջ արվեստագետի անձն է տեսնում: Ինչպես ուսուցիչներն են աշակերտներին հանձնարարում արվեստի գործ և թույլ են տալիս, որ աշակերտները գործեն, և չեն նստում նրանց կողքին, այլ ժամանակ առ ժամանակ գալիս են տեսնելու, թե ինչպես են աշխատում, որ չլինի թե ինչ-որ բան սխալ անեն կամ ծուլանան աշխատանքի մեջ, այնպես էլ՝ դևերը. երբ տեսնում են՝ մեկը հեշտությամբ հնազանդվում է իրենց և իր մտքի մեջ է առնում իրենց խորհուրդները, տալիս են նրա սրտին իրենց դիվային և թունավոր չար խորհուրդները և կարիք չեն ունենում մոտ գտնվելու՝ գիտենալով, որ այդպիսի չար անձը բավական է ինքն իրեն սպանելու համար, այլ ժամանակ առ ժամանակ գալիս և նրա սրտում նորոգում են չարը, որպեսզի հանկարծ չծուլանա: Ուրեմն ո՞ր գործն է ավելի դյուրին՝ սիրե՞լ ամենքին և սիրված լինել ամենքից, թե՞ ատել ու մշտապես մարտնչել: Ոչ թե Տիրոջ պատվիրանները մեզ հանգիստ չեն*

բերում, այլ մենք մեր միտքն ու կամքը չենք ուղղում դեպի բարին, իսկ եթե ուղղվեն, ամեն բարիք հեշտությամբ կտրվի: Եվ, ինչպես ասացի, մի փոքրիկ հոժարությունը մեծամեծ առաքինություններ կբերի մեր սիրտը: Ինչպես ասաց մեծն Անտոնը՝ առաքինությունների համար միայն մեր կամքն է անհրաժեշտ, և պետք չէ հեռու ճանապարհ գնալ և որոնել Աստծո Արքայությունը, ոչ էլ ծովեր անցնել՝ առաքինության համար: Ո՞ր հանգիստը չունեն հեզերն ու խոնարհները, քանզի հեզերը կժառանգեն երկիրը և բազում խաղաղությամբ կբնակվեն այնտեղ» (Մատթ. Ե, 5)*:*

149. Դարձյալ ասաց երանելին. «Մի անգամ ես և մի եղբայր աշխարհականների հետ էինք գնում Նեապոլիս: Հասանք մի տեղ, ուր կայսեր մաքսն էին առնում: Աշխարհիկները սովորականի պես երբ տեսան մաքսավորներին, տվեցին իրենց սահմանված բաժինը: Ինձ հետ եղող եղբայրը խիստ տրտմեց, սկսեց վիճաբանել մաքսավորների հետ և ասել. «Նույնիսկ համարձակվում եք կրոնավորի՞ց հարկ վերցնել»: Իսկ ես նրան ասացի. «Ի՞նչ ես անում, եղբա՛յր, դու նրանց ուրիշ բան չես ասում, քան այս՝ կամենում եք թե ոչ՝ պատվե՛ք ինձ որպես սրբի: Հատկապես սրանք պետք է տեսնեն քո խոնարհությունը և քո խոնարհությունից պատկառելով՝ ասեն. «Թողությո՛ւն տուր մեզ»: Ուրեմն, եթե ուզում ես ինձ լսել իբրև Հիսուսի հեզ աշակերտ՝ տո՛ւր նրանց հարկը և գնա՛ խաղաղությամբ»: Մեկ ուրիշ անգամ դարձյալ եկա սուրբ քաղաք Երուսաղեմ: Ինձ մոտ եկավ մի կրոնավոր և ասաց. «Ես և իմ եղբայրը փոքր-ինչ գժտվել ենք, և այժմ նա չի կամենում հաշտվել ինձ հետ, սակայն աղաչում եմ քեզ, հա՛յր, որ կանչես նրան, և մենք հաշտվենք սիրով»: Ես ուրախությամբ ընդունեցի նրա խնդրանքը և կանչեցի եղբորը, և որքան հնարավոր էր՝ նրա հետ խոսեցի խաղաղության և սիրո մասին: Թվում էր՝ հավանություն է տալիս իմ խոսքերին, սակայն հետո ասաց. «Չեմ կարող հաշտվել նրա հետ, որովհետև Քրիստոսի խաչի վրա երդվել եմ բնավ չհաշտվել նրա հետ»: Իսկ ես ժպտալով ասացի նրան. «Քո երդումն այսպիսի մի բան է, իբր ասելիս լինես. «Քո խաչի զորությունը վկա, Քրիստո՛ս, որ Քո պատվիրանները չեմ պահի, այլ ամեն ինչում կկատարեմ դևերի կամքը»: Ուրեմն՝ քեզ հարկավոր է ոչ միայն դրժել ու սուտ հանել քո երդումը, այլև երդվելու համար դու պետք է ապաշխարես, ինչպես սուրբը Վասիլն է ասում. «Եթե Հերովդեսը չհաստատեր իր երդումը, պարտական չէր լինի Հովհաննես Մկրտիչի արյանը (Մարկ. Զ 22-27)*: Նույնպես և Պետրոսը, եթե ոտնվայի ժամանակ փութով չապաշխարեր, թեև*

պատվելու համար ասաց «ոչ», առաքելական վիճակից զրկված կլի-ներ» (Հովհ. ԺԳ 4-9)*:*

150. Մի անգամ հարց տրվեց այդ երանելուն, թե ինչպես կարող է մարդ զսպել բարկությունը, իսկ նա այսպես պատասխանեց. «Բարկությունը զսպելու և արգելելու սկիզբը այն է, երբ մարդ ինչ-որ բան լսի, և նրա սիրտը բորբոքվի, բայց ոչինչ չխոսի, ինչպես հայր Մովսեսն արեց, երբ երեցների կողմից անարգվեց: Նա այդ պահին ոչինչ չասաց, թեև մտքում բարկացավ: Սակայն հետո հանդարտեցրեց իր սիրտը և ինքն իրեն մոխրամորթ, սև ու դիվանման անվանեց: Իսկ մենք այնքան ենք մանրանում, որ նորեկներին ենք հավասարվում և մեր ծուլության պատճառով ծանր ու անիրագործելի ենք կարծում Աստծո պատվիրանները: Քանզի բարկությունից խռովք ապրելը և ոչինչ չասելը ոչ թե կատարյալներինն է, այլ՝ նորեկներինը, իսկ կատարյալներինն է՝ մտքով անգամ իսկ չբորբոքվելը, չսրտնեղելն ու չզայրանալը՝ ըստ մարգարեի, թե. «Զգուշացա և չխռովվեցի» (Սաղմ. ՃԺԸ 60)*: Սակայն մենք բնավ չենք էլ սկսել բարիք գործել և չենք կամենում, որ Աստծո շնորհը մեզ օգնության հասնի: Թեպետ երբեմն կամենում ենք ինչ-ինչ բարիք գործելու հոժարություն ցուցաբերել, սակայն այն ևս ծուլությամբ և անփութորեն ենք կատարում և ոչ թե՝ աստվածավայել կերպով: Այն, ինչ անում ենք, նման է սերմի, որը ցանում ենք, և արդյունք է տալիս, և ինչպես օրինակ՝ մշակը, թեկուզ և քիչ սերմանի, սակայն եթե Աստված հաջողություն տա՝ բազմապատիկը կհավաքի, ինչպես դրա մասին գրված է. «Սերմանեց անդաստանը, և մեկի դիմաց հարյուրապատիկը եղավ»* (Առակ. ԺԱ 24)*, այնպես էլ եթե սերմի վրա ավելանա նաև մեր հոժարությունը՝ բյուրապատիկը կստացվի: Այսինքն՝ եթե հոժարությամբ և անախտ կերպով կատարենք մեզ համար գրվածները՝ կշահենք ամեն ինչի մեջ: Քանզի կամքի բռնադատմամբ, վշտերով և համբերությամբ արված աղոթքն ինքնաբերաբար հետագայում վերաճում է սուրբ, սիրահոժար և կամավոր աղոթքի, երբ այլևս հարկավոր չի լինում բռնություն, քանզի բռնությամբ ու վշտով աղոթքը մեր հոժարության արգասիքն է, իսկ հաղարտությամբ աղոթքը՝ Աստծո պարգևների ու շնորհների: Այդպես է նաև բոլոր առաքինությունների պարագայում: Ինչպես օրինակ՝ մեկը գալիս է արհեստ սովորելու և կամենում է հեշտությամբ սովորել, սակայն նախ տքնում է վշտանալով և չի կարողանում աշխատել՝ բազում անգամ գործը ձախողելով, այնուամենայնիվ չի ձանձրանում և լքում, այլ բռնադատում է իրեն և դարձյալ սկսում աշխատել, թեկուզ բազմիցս ձախողվում է,*

սակայն, հոժարությամբ ստանձնած լինելով, չի դադարեցնում, այլ իր ջանադրությունն է միշտ ցույց տալիս ուսուցչին: Իսկ եթե ձանձրանա և լքի ու թողնելով հեռանա՝ չի կարողանա ուսանել այդ արհեստը, բայց եթե դարձյալ դառնա իր արհեստին և ձախողվելու դեպքում չձանձրանա և չհեռանա, այլ աշխատի և գործի ողջամտությամբ, այնժամ կնայի Աստված նրա ճիգերին և կտա նրան այդ կարողությունը, շատ արագ կհմտանան ձեռքերը, և հեշտությամբ կգործի և հեշտությամբ կկերակրվի իր վաստակով: Այդպես է նաև բոլոր հոգևոր գործերի պարագայում: Եթե մեկը ցանկանում է առաքինություն գործել, չպետք է կարծի, որ դա նույն պահին կստացվի, քանզի հնարավոր չէ, այլ կրկին ու կրկին պետք է ճգնի, ինչպես այն արհեստավորը: Իսկ եթե բազմիցս փութա և մեծ ջանքեր գործադրի, համբերի ու չձանձրանա և չթողնի առաքինության գործը, այնժամ կնայի Աստված նրա վաստակին և բարի ձգտումներին և կողորմի նրան, որպեսզի նա հեշտ ու առանց ջանքերի գործի: Ինչպես և հայր Մովսեսն է ասում. «Այս է կարգն ու զորությունը նրանց, ովքեր կամենում են առաքինություն ձեռք բերել. երբ ընկնում են, չպե՛տք է վհատվեն և կարճամտորեն հեռանան, այլ վերստին նույնը սկսեն գործել, քանզի ամեն մի առաքինություն մեծ ջանքեր է պահանջում, երկար ժամանակ, կամք և մեծ հոժարություն, իսկ ամենից առաջ Աստծո օգնությունն է պետք, որովհետև եթե Տերը չօգնի մեր հոժարությանը՝ զուր են թե՛ մեր ջանքերը, թե՛ մեր վաստակը և թե՛ մեր ձգտումը»: Եվ ինչպես մշակների օրինակով ենք տեսնում, թե որքան էլ մշակն աշխատի հողը փորել, սերմանել ու մաքրել, բայց Տերն անձրև չտեղացնի և արեգակը չծագեցնի՝ ընդունայն կլինեն մշակի ջանքերը, այնպես էլ անհրաժեշտ է Աստծո օգնականությունը մեր աղոթքների, պահքի և բոլոր բարի գործերի մեջ, քանզի դրանք են մեզ օգնում, որ հասնենք Աստծո ողորմությանը, ինչպես Դավիթն է ասում. «Քո երեսի լույսով ենք լույս տեսնում» (Սաղմ. ԼԵ 10)*: Իսկ եթե ծույլ լինենք աղոթքների և բոլոր բարի գործերի մեջ, ինչպե՞ս պիտի Տերն օգնի մեզ, որովհետև եթե հեղգ, թուլակամ և ծույլ լինելով ու ձանձրանալով հեռու քաշվենք՝ Աստծու ոչ մի բարիքին արժանի չենք լինի, քանզի Աստված միշտ մեր մտքերի հոժարությանն է նայում և նրանց չափով էլ բաժանում է պարգևները: Մի՞թե ավազակապետ չէր հայր Մովսեսը, մի՞թե բյուրավոր չարիքներ չէր գործել, այն էլ այնքան, մինչև որ տերն արտաքսեց նրան իր չարամտության պատճառով: Սակայն այս ամենից հետո, երբ նա արիաբար դիմեց դեպի առաքինության գործերը, և այն էլ այդպիսի՛ հոժարությամբ, ամենքդ էլ գիտեք, թե ի՛նչ բարձրության հասավ,*

մինչև իսկ գլխավոր սրբերի հետ դասվեց՝ ինչպես որ նրա կյանքի պատմությունն է հայտնում: Իսկ մենք կարծում ենք, թե ջերմեռանդություն ունենք մեր հոգում՝ մինչ ելնում ենք աշխարհից, սակայն մեր հեղգությամբ հապաղելով՝ այդ ևս կորցնում ենք և հետևում ենք նանիր գործերի ու սիրում այս ունայն աշխարհի նյութեղեն ինչքերը, որոնք հիշվելու անգամ արժանի չեն: Աստծո և ընկերոջ սերը ուղղում ենք դեպի դրանք, կարծես թե մեր արժանիքներով ենք դրանք ստացել և ոչ թե՝ Աստծո շնորհով: «Քանզի ի՞նչ ունես, ո՛վ մարդ, որ Աստծուց չես ստացել,– ինչպես առաքյալն է ասում,– և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես» (Ա Կորնթ. Դ 7)*»:*

151. Եվ ասաց. «Մի՞թե աղքատ է Հիսուս և չի կարող մեզ այս կյանքում բազում բարիքներ տալ, ինչպես տվեց նախահայրերին: Եթե տեսներ, որ մենք կշահեինք այդ բարիքներից, մեզ ևս կտար, սակայն տեսնում է, որ մենք ավելի շատ վնասվում, քան թե շահում ենք՝ ամենափոքր բանից անգամ՝ մեր իսկ չարամտության պատճառով, դրա համար էլ մեզ չի վստահում շատը, որպեսզի իսպառ չկորչենք: Իսկ եթե տեսներ, որ մենք այդ փոքրից շահել ենք, կարող էր մեզ շատը վստահել: Եվ եթե դա այսպես չէ, ուրեմն ո՞վ վստահեցրեց առաջին դարձի եկածներին իրենց ունեցվածքը դնելու առաքյալների ոտքերի առաջ (Գործք Դ 34-35)*: Սակայն Աստված, քանի որ ողորմած և մարդասեր է, կամենում է, որ մենք ամեն գործից հոգու շահ ստանանք, իսկ մենք մեր մտքերի չարության պատճառով չարիքի մեջ ենք վատնում բարին, որ մեզ Աստծուց է տրված»:*

152. Եվ ասաց. «Կան բազում հավատացյալ և գոհացող անձինք, ովքեր ոչ միայն չեն վնասվում նյութական իրերից, այլև ինչ էլ տրվի իրենց, ամեն ինչից շահում են: Եվ կան անձինք՝ անգոհ ու անշնորհակալ, որ եթե մի բան էլ անում են՝ իբրև վարձկաններ են անում և այդպիսով դատապարտվում են իրենց գործի մեջ անհավատությամբ: Իսկ այն հավատացյալը, ով և՛ տքնության, և՛ տանջանքի մեջ հավատարիմ է և իր բարիքների պսակ ու տքնությունների վարձ է համարում տանջանքը, որ կրում է հանուն Աստծո, սրան ի տրիտուր բազում մխիթարություններ է ստանում: Իսկ անհավատը, իր անհուսությամբ կիզված, պատշաճորեն չի տքնում և Տիրոջից մխիթարություն չի ստանում, այլ անկյալաբար նստած՝ նեխում և հոտում է իր սրտի ցանկությունների ու խորհուրդների մեջ: Եվ եթե մեկից փոքր-ինչ վնաս է կրում, իր խորհուրդների մեջ ասում է. «Նա ինձ այս ասաց, և ես այս կասեմ նրան»: Ոխակալություն է խորհում և փուչ բաներ մտածում,

որոնք բնավ չի կարող ի կատար ածել, որովհետև ոչ թե այն ամենը, ինչ խորհում է մարդը՝ կարող է անել, այլ՝ որոնք թույլ կտա Աստված՝ իր անքննելի դատաստանով, Ով ամեն ինչ գիտե: Բազմիցս մարդ կամենում է չարիք անել ընկերոջը, սակայն Տերը չի թողնում, դրա համար էլ ի չիք է լինում նրա դատարկ խորհուրդը, բայց սրանով են փորձվում մարդկանց մտքերը: Քանի՛ քանիսը կամեցան չարիք պատճառել սուրբ նահապետներին, սակայն քանի որ Աստված թույլ չտվեց, ոչնչով չկարողացան վնասել նրանց, ինչպես և գրված է. «Թույլ չտվեց մարդկանց վնասել նրանց, թագավորներին կշտամբեց նրանց համար՝ ասելով. «Մի՛ մերձենաք իմ օծյալին և իմ մարգարեների դեմ մի՛ մեղանչեք» (Ա Մնաց. ԺԶ 21-22)*: Երբ Աստված կամենում է ցույց տալ իր ամենակարող զորությունը, անողորմների սրտերը դեպի գթություն է դարձնում, ինչպես գրված է Դանիելի գրքում. «Աստված ողորմություն և քաղցրություն տվեց ներքինիների իշխանի սրտին նրա համար»* (Դան. Ա 9-14)*: Եվ երանի նրան, որ պատրաստում և սրբում է իր անձը Աստծո համար և միշտ ծարավում է Աստծո սիրուն և զգույշ է լինում ամեն ինչում ընդունելու Աստծո պարգևները: Որովհետև Տերն այսպիսիներին չի թողնում, այլ ամեն բանում օգնական է լինում նրանց, նույնիսկ այն ժամին, երբ ո՛չ գիտեն, ո՛չ էլ խնդրում են, ինչպես իմաստունն է ասում՝ Աստծուց օգնություն ստացավ: Եվ որքան ջանաց Սավուղը սպանել Դավթին, ինչ հնար ասես չգործադրեց, ինչ ասես չխորհեց, սակայն քանի դեռ Տերը Դավթի օգնական էր, Սավուղի բոլոր խորհուրդներն ի դերև եղան: Եվ ոչ միայն այդ, այլև Սավուղը տրվեց սուրբ Դավիթի ձեռքը, սակայն նա խնայեց Սավուղին, որովհետև իր մեջ չարություն չուներ, որ բարկանար նրա վրա* (Ա Թագ. ԺԸ, ԺԹ, Ի)*»:*

153. Մի անգամ մեկը հարցրեց նրան, թե ինչպե՞ս չբարկանալ ընկերոջ չարախոսության վրա, նա պատասխանեց. «Ով իրեն ընկերոջից վատն է համարում, նա չի սրտմտի, ինչպես հայր Պիմենն ասաց. «Եթե քեզ փոքրացնես, ամեն ինչի մեջ հանգիստ կգտնես»: Եվ պատմեց երանելին և ասաց. «Մի ժամանակ ինձ հետ բնակվող մի եղբայր կար, որ ինձնից էր ստացել սքեմը և ինձնից շատ բան էր ուսանել, և քանի որ երիտասարդ էր, ես ներում էի նրա տկարությունները: Մի օր ինձ ասաց. «Հա՛յր, ես քեզ սաստիկ սիրում եմ»: Ես նրան ասացի. «Դեռ չգտա մեկին, որ սիրեր ինձ այնպես, ինչպես ես՝ նրան: Ահա ասում ես, որդյա՛կ, թե՝ սիրում եմ քեզ, և ես հավատում եմ քեզ, սակայն եթե իմ կողմից ինչ-որ բան լինի, որ քեզ դուր չգա, չես կարող այդ

խորհրդիդ մեջ մնալ: Իսկ ես ինչ էլ ակամա տեսնեմ քո կողմից, չեմ կարող դադարել քեզ սիրել»: Խոսակցությունից ոչ շատ ժամանակ անց, չգիտեմ՝ ինչ պատահեց նրան, և նա սկսեց իմ մասին բազում անպատկառ ու աղտեղի բաներ ասել: Լսում էի այդ ամենն ու մտքիս մեջ խորհելով ասում. «Սա հատող և այրող դեղ է, որ Հիսուս առաքեց հոգուս սնափառությունը բուժելու համար: Սրանից մարդ միայն կշահի, եթե զգաստանա, իսկ գովողներից ու երանի տվողներից՝ առավել կվնասվի: Սա իսկապես բարերար և շահեկան է իմ հոգու համար»: Եվ ես նրան իմ հոգու բժիշկ էի համարում և աղոթում էի նրա համար, և ամենքին, ովքեր նրա չար խոսքերն պատմում էին ինձ, ասում էի, թե նա իրավացի է և իմ չարություններից միայն հայտնիներն ու շատ փոքր մասը գիտե, իսկ ծածուկ չարիքներն իմ անթիվ են և միայն Աստծուն են հայտնի»: Օրեր անց Կեսարիայում հանդիպեց ինձ և մոտենալով՝ ըստ սովորության գրկեց ինձ, սկսեց համբուրել, ես էլ՝ իրեն, իբրև թե մեր միջև ոչինչ չէր պատահել: Շատ բաներից խոսեցինք և սեր ցուցաբերեցինք միմյանց հանդեպ, իսկ այնուհետև որտեղ էլ տեսնվեինք՝ սիրով համբուրում էինք միմյանց և գթասրտորեն հարցուփորձ անում: Ես ընավ զգալ չտվեցի նրան, թե ինչ-որ բան եմ լսել և ոչ էլ տրտմության նշույլ ցույց տվի, թեպետ և ամեն ինչ լսել էի: Նա մի օր ընկավ իմ ոտքերը, գիրկն առնելով՝ արտասուքներով համբուրում էր և ասաց. «Նե՛րիր ինձ, հա՛յր, հանուն Աստծո, որովհետև բազում չար բաներ եմ խոսել քո մասին»: Իսկ ես բարձրացրեցի նրան, սիրով գրկեցի և ասացի. «Գիտես, որդյա՛կ, երբ ինձ ասացիր, թե՝ սիրում եմ քեզ, ես էլ քեզ այսպես պատասխանեցի՝ չգտա մի մարդու, որ ինձ սիրեր այնպես, ինչպես ես՝ նրան, և եթե քո կամքին հակառակ մի բան լինի՝ այդ սիրուդ մեջ չես մնա, իսկ ես թեկուզ բազմապատիկ լկանք կրեմ քեզնից՝ չեմ դադարի քեզ սիրել: Հավատա՛ ինձ, որ քո ասածներից ոչ մի բան ծածուկ չմնաց ինձնից, այլ ում և որտեղ ինչ ասել էիր՝ ամենը լսեցի, սակայն երբեք չասացի, թե դա այդպես չէ, և ոչ էլ քո մասին որևիցե վատ բան ասացի, այլ ասողներին ասում էի, թե ամեն բան, ինչ նա ասում է, ասում է սիրով և ճշմարտությամբ, և երբեք չդադարեցի քեզ իմ աղոթքներում հիշել: Ցույց տամ նաև իմ սիրո նշանը քեզ. մի անգամ սաստիկ ցավեց իմ աչքը, և վտանգի մեջ էի: Ցավիս մեջ հիշեցի քո անունը, խաչակնքեցի աչքս և ասացի. «Նրա աղոթքով, Տե՛ր, բժշկի՛ր իմ աչքը». և իսկույն բժշկվեց»:

154. Եվ երանելին բազմիցս ասում էր, թե՝ մարդիկ չգիտեն սեր ու պատիվ, քանզի կորել են մեր միտքն ու գիտությունը. այլապես ինչո՞ւ

ոչ ոք փոքր-ինչ չի համբերում բարկացած ու սրտնեղած եղբորը: Եթե համբերի, եղբայրը մի փոքր անց կզգաստանա, կմտածի ու կհասկանա, թե համբերեց իրեն, և այնուհետև այնպես կսիրի նրան, ինչպես իր անձը:

155. Պատմում էր նաև մի եղբորից լսածը, թե վերջինս մի վարդապետ հայր ուներ՝ հեզ, խոնարհ ու բարի: Նրա մեծամեծ առաքինությունների ու հզոր նշանների համար, որ նրա միջոցով անում էր Աստված, հրեշտակ էր համարվում ողջ երկրում: Սակայն մի օր ոմն եղբայր հաղթվեց չարից նրա հանդեպ և եկավ նրա մոտ: Կռվում էր նրա հետ և դժնադժնի անարգանքներով անարգում նրան. մեծ բազմություն հավաքվեց նրանց շուրջը: Իսկ ծերը մնաց աղոթքի մեջ և նրա երեսին նայելով՝ ասաց. «Աստծո շնորհներն են քո բերանում, եղբա՛յր»: Իսկ նա բարկացած ասաց. «Այո՛, չա՛ր ծեր, շնացող, որկրամոլ ու հարբեցող: Նրա համար ես ասում այդ, որ քեզ հեզ ու խոնարհ ցույց տաս ամենքի առաջ»: Ծերը նրան ասաց. «Ինչ որ ասում ես՝ ճշմարիտ է, որդյա՛կ, արդար և ուղիղ ես ասում»: Ներկաներից մեկը հարցրեց ծերին. «Եվ քո մտքում չբորբոքվեցի՞ր ու չբարկացա՞ր, հա՛յր»: Ծերը նրան պատասխանեց. «Ամենևին ո՛չ, որովհետև տեսնում եմ, որ իմ անձը Քրիստոսից ամուր պաշտպանված է»: Եվ ասում էր երանելին, թե այդպիսիներից պետք է գոհանալ և նրանց բժիշկ համարել, որ բուժում են հոգու ախտերը, և բարեգործ համարել նրանց, քանզի նրանցով ենք մերձենում երկնքի Արքայությանը:

156. Երանելի Մակարիոսն ասաց դարձյալ. «Երբ ես դեռ Կյուրոսի վանքում էի, նախքան իմ այնտեղից դուրս գալը՝ մեզ մոտ եկավ սուրբ և աստծվածահաճո մի ծեր: Մենք ընթերցեցինք սուրբ հայրերի գրքերը, քանի որ ես շատ էի սիրում դրանք և մշտապես կարդում էի, կարծես իմ շունչն ու հոգին այդ գրքերում էր ամփոփված, որոնցից բազում առաքինություններ էի ամբարել: Եվ ընթերցելով՝ հասանք այն տեղին, որ ծերը գրել էր, թե իր մոտ ավազակներ եկան գիշերով և ասացին. «Ինչ որ ունես քո խցում, եկել ենք տանելու»: Իսկ նա ասաց. «Ինչ որ կկամենաք՝ տարե՛ք, որդյակնե՛ր»: Եվ նրանք, ամեն ինչ առնելով, գնացին, բայց մի բրիչ մնաց, որը վերցնելով՝ ծերը վազեց նրանց հետևից, ուժգին ձայնեց և ասաց. «Որդյակնե՛ր, սա՛ էլ տարեք ձեզ հետ, որովհետև սենյակումս էր մնացել»: Իսկ նրանք՝ ծերի անչարությունից զարհուրած ու ապշահար, ամեն ինչ վերադարձրին նրա խուցը և ասացին. «Իսկապես, սա Աստծո մարդն է»: Եվ մինչ ընթերցում էինք, ծերն ինձ ասաց. «Գիտե՞ս, ո՛վ հայր, ինչ մեծ օգուտ

բերեց ինձ այս ընթերցվածը»: Ես հարցրի. «Ինչպե՞ս, հա՛յր»: Եվ նա ասաց. «Մինչ ես շրջում էի Հորդանանի ափերին և բնակվում էի այն-տեղ, ընթերցեցի այս և զարմացա այդ ծերի առաքինության վրա և ասացի. «Տե՛ր, արժանի՛ արա ինձ, որ հետևեմ նրան, քանի որ ես էլ նրա կարգն եմ ընդունել», և այս փափագն ունեի իմ սրտում: Դրանից երկու օր անց եկան ավազակները, և երբ գիշերով բախեցին դուռը, ճանաչեցի, որ ավազակներ են, և ես իմ անձին ասացի. «Գոհությո՛ւն Աստծո, ահա հասավ քո փափագած գործը ցույց տալու ժամը»: Բացե-լով դուռը՝ նրանց ուրախությամբ ընդունեցի և վառելով լույսը՝ ցույց տվեցի նրանց իմ ամբողջ ունեցվածքը և ասացի. «Վկա է Աստված, որ ձեզանից չեմ թաքցնում այն ամենը, ինչ իմն է»: Իսկ նրանք ինձ ասացին. «Ոսկի ունե՞ս»: Ասացի. «Երեք դահեկան ունեմ»: Ապա դա էլ տվեցի նրանց, և նրանք ամեն ինչ վերցնելով՝ խաղաղությամբ գնա-ցին»: Ես լրջորեն հարցրի այս ծերին. «Քո՞նն էլ վերադարձրին ավա-զակները, ինչպես այն ծերինը վերադարձրին»: Իսկ նա ասաց. «Աստ-վա՛ծ չանի, ես վերադարձնելու համար չարեցի այն, և ինձ պետք էլ չէր այն, ինչ առան և գնացին»: Տեսնո՞ւմ եք, թե ծերի պատրաստ լինելու դեպքում ինչ արեցին, որովհետև ծերը ոչ միայն չտրտմեց, այ-լև ցնծաց և գոհացավ Աստծուց այսպիսի բարի դիպվածի համար: Ես հիշեցի նախորդ խոսքը, թե՝ եթե մի փոքր համբերենք մեր եղբայրնե-րին, նրանց անձերը կշահենք: Ուզում եմ ձեզ մի դեպք պատմել, որը մեզ պատմեց Պեդիատոյի առաջնորդ Երանելի Սերգիոսը: Նա ասաց. «Մի անգամ գնում էի մի ծեր սրբի հետ, սակայն ուղուց մոլորվեցինք և չգիտեինք, թե ուր ենք գնում, որովհետև տեղանքում նշաններ չկա-յին: Անսպասելիորեն հայտնվեցինք ճամփեզրին ցանված արտերի մեջ և բազում սերմեր կոխոտեցինք: Այնտեղ աշխատող մշակը նկատեց այդ և սկսեց կռվել մեզ հետ, անարգել բարկությամբ և ասել. «Եվ դուք էլ կրոնավորնե՞ր եք, դուք վախենո՞ւմ եք Աստծուց: Ամենևի՛ն, որովհետև եթե ձեր աչքի առաջ լիներ Աստծո երկյուղը, այդ բանը չէիք անի»: Ծերն ինձ ասաց. «Հանուն Տիրոջ, դու բնավ մի՛ պատաս-խանիր»: Հետո դառնալով նրան՝ հեզաբար ասաց. «Ճիշտ ես ասում, որդյա՛կ, եթե մեր մեջ Աստծո երկյուղը լիներ, այս բանը չէինք անի, սակայն հանուն Աստծո ների՛ր մեզ»: Բայց մշակը դարձյալ անարգում էր մեզ, իսկ ծերը դարձյալ նույն խոսքն էր ասում: Ի վերջո, մշակը զարմացավ ծերի անչարության վրա և ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ հանուն Աստծո, և տարե՛ք ինձ ձեզ հետ»: Եվ հետևելով մեզ՝ այդ պահից իսկ դարձավ կրոնավոր»: Եվ երանելի Սերգիոսն ավելացրեց. «Ահա տեսեք՝ Աստծո շնորհներով ինչ արեցին հոգու հեզությունն

ու քաղցրությունը, ինչպես ապրեցրեց Աստծո պատկերով ստեղծված անձը, որին Տերն առավել է սիրում, քան երկինքն ու երկիրը»:

157. Երբ հայր Սերգիոսի մոտ էի, նա ինձ ասաց. «Կամենում եմ ուսուցանել ձեզ Գրքի խոսքերը»: Եվ սկսեց ուսուցանել «Առակաց» գրքից, որ ասում է. «Փայտի առատությունից ցնծում է կրակը, իսկ որտեղ բարկություն չկա, այնտեղ դադարում է կռիվը» (Առակ. ԻԶ 20)*: Հարցրի նրան և ասացի. «Հա՛յր, ո՞րն է այս խոսքի զորությունը»: Եվ նա պատասխանեց ինձ. «Ինչպես, օրինակ, փայտը հրի և բոցի պատճառ է, այսպես է նաև ցանկացած ախտի պարագայում. եթե մեկը վերացնի դրանց պատճառը, ոչինչ անել չեն կարող: Պոռնկության պատճառը անառակությամբ ուտելն ու խմելն է, քնով հագեցումը, պարապությունը, վայելքը, ունայնաբանությունը և վայելչագեղ հագնվելը: Եթե մեկը վերջ տա այս ամենին, պոռնկության ախտերը կտկարանան: Եվ քանի որ բարկության պատճառն էլ տալն ու առնելն է, վաճառելն ու գնելը և սեփական կամքը կատարելը, վարդապետելու մարմաջը և իր անձը իմաստուն մեկը համարելը, ապա եթե սրանք արմատախիլ արվեն, բարկության և սրտնեղության ախտը կտկարանա, ինչպես ասում էր հայր Մովսեսը»:*

158. Մի եղբայր հարցրեց սուրբ հորը, թե ինչո՞ւ ախտերը չեն հեռանում իրենից: Հայրն ասաց. «Նրա համար չեն հեռանում, որ դրանց արմատները քո մեջ են: Դու թե՛ նրանց անոթն ես դարձել, թե՛ սնուցող նյութը, ուստի ե՛տ տուր վերցրածդ գրավը, և նրանք կհեռանան քեզնից: Իսկ կրկնակի բարկացողը, որ չի ծածկում իր խռովքը, այն անձն է, ով բարկության վրա նորից է բարկանում, և չհագենալով առաջին բակությամբ՝ առավել բորբոքվում է և ջանում է բարկությանը հաղթել բարկությամբ: Իսկ եթե մեկը բարկանա եղբոր վրա, սակայն հետո զղջա, սթափվի և իրեն մեղադրի, թող գնա ընկնի եղբոր առջև և թողություն հայցի բարկանալու համար: Սա չի կոչվի կրկնակի բարկացող, որովհետև այստեղ դադարեց կռիվը, քանի որ մեղադրեց իրեն, խոնարհվեց եղբոր առջև և խաղաղություն հաստատեց: Իսկ ով բարկանում է, բայց չի զղջում և իրեն չի մեղադրում, այլ առավել ևս սրտմտում է և բորբոքվում, որ չկարողացավ խռովքի մեջ հաղթել ընկերոջը, կոչվում է կրկնակի բարկացող: Նա բռնված է ոխակալությամբ և սրտմտությամբ: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոս փրկի մեզ այսպիսի վիճակներից և արժանի անի մեզ հեզերի ու խոնարհների վիճակին, ինչպես նաև նրանց, ովքեր սիրում են խաղաղություն»:

159. Հայր Մակարիոս երանելին ասաց. «Մեծ զգաստություն և իմաստություն է մեզ պետք, որպեսզի դիմակայենք սատանայի բազում հնարքներին: Մարդ կա, որ ամենևին չի բարկանում, թեև մեծ պատճառ ունի դրա համար, սակայն մարդ կա, որ դևերից խաբվելով՝ իրավունք է վերապահում իրեն մանր պատճառների համար բարկանալու և իրեն արդարացի համարելու: Սա թշնամու հնարքն է, և հարիր չէ նրանց վիճակին, ովքեր կամենում են սրբերի ճանապարհով ընթանալ: Բարկությունը կամ եղբորը տրտմեցնելը հեռու է կրոնավորից»:

160. Նույն երանելի Մակարիոսն ասաց. «Մի անգամ արագագիր մի եղբոր պատվիրեցի ինձ համար արտագրել Գիրքը և վարձն էլ տվեցի: Գիրքն ավարտելուց հետո նա ինձ տեղեկացրեց, թե՝ ահա ավարտեցի քո Գիրքը, մա՛րդ ուղարկիր՝ բերեն այն: Այս բանը ինձնից լսեց ոմն եղբայր և գնալով՝ իբր իմ կողմից, վճարեց գինը և տարավ Գիրքը: Իսկ ես, անտեղյակ լինելով, ուղարկեցի մի եղբոր՝ Գիրքը բերելու: Երբ այս բանը լսեց գրագիրը, հասկացավ, որ խաբվել է նրանից, ով տարավ գիրքը, զայրացավ սաստիկ և ասաց. «Գնամ նրա մոտ, անպատվեմ և ծեծեմ, որ այդպես խաբեց ինձ, որովհետև Գիրքն իրենը չէր»: Ես, լսելով այս, լուր ուղարկեցի նրան և ասացի. «Իմացի՛ր, եղբա՛յր, որ նրա համար ենք Գիրքը ձեռք բերում, որպեսզի նրանից սովորենք հեզություն, խոնարհություն և սեր: Եթե Գիրքը հենց սկզբից պետք է կռվով ու դավով ձեռք բերենք՝ համարի՛ր, որ այն չունենք: Պետք չէ կռվարարություն, քանզի Տիրոջ ծառան չպետք է կռվարար լինի. թո՛ղ նրան մնա Գիրքը, և մի՛ նեղիր նրան»: Եվ նա լսեց ինձ»:

161. Մակարիոսը մի անգամ հոգեշահ խրատներ էր տալիս եղբայրներին՝ ձեռքին հայրերի գրքերը: Ընթերցելով հասավ այն տեղին, ուր Պիմենն ասում էր, թե՝ ով մեղադրի իր անձը, ամեն ինչում հանգիստ կգտնի. և դարձյալ այն խոսքը, որ հայրն ասաց Նիտրիա լեռանը, թե՝ պետք է ամեն ինչում խրատել իր անձը և մեղադրել. ովքեր լսում էին՝ ասացին. «Ա՛յդ է կրոնավորի ճանապարհը»: Եվ Մակարիոսն ասաց. «Տեսե՛ք, թե որքան մեծ զորություն ունեն սուրբ հայրերի խոսքերը: Դրանք ճշմարտացի են, որովհետև ինչ ասացին խոսքով՝ նախ փորձեցին գործով, հետո միայն ասացին, փորձով իմացան և ճշմարիտն ասացին. դրա համար է զորավոր նրանց խոսքը: Քանզի նախ իրենք գործեցին, ապա ասացին, ինչպես մի իմաստուն է ասել. «Քո խոսքերը թո՛ղ հաստատվեն քո գործերով»:

162. Երանելին մեզ պատմեց նաև այսպիսի մի մարդու պատմություն. «Մի ժամանակ բնակվում էի հայր Գելասիմեի վանքում: Այն-

տեղ էր նաև իմ ծեր բարեկամը: Մի օր նստած խոսում էինք հոգեշահ բաներից, հիշեցինք հայր Պիմենին և այլ հայրերի, և նա ինձ ասաց. «Ես գործով փորձեցի նրանց խոսքերը և դրանց օգտակարությունը, քանզի մի ժամանակ այս վանքում մի սարկավագ կար, որն իմ սերտ բարեկամն էր: Զգիտեմ ինչպես՝ նա սխալ կարծիք կազմեց իմ մասին: Կարծես ինչ-որ բան տրտմեցրել էր նրան, և նա սկսեց խռովել ինձնից և գրգռվել իմ դեմ: Իսկ ես երբ նրան տեսա տրտմած, ասացի. «Ի՞նչ է եղել քեզ, եղբա՛յր, որ այդպես տրտմած ես»: Եվ նա ինձ ասաց. «Այսինչ բանն ես դու արել և ասել իմ մասին»: Իսկ ես, քանի որ մաքուր էր խիղճս, սկսեցի երդմամբ հավաստիացնել նրան, որ այդպիսի բան չի եղել: Իսկ նա ինձ ասում էր. «Չես կարող ինձ հավատացնել»: Բազմիցս փորձեցի հավատացնել նրան, սակայն նա մնաց անդրդվելի: Ես սկսեցի միտք անել՝ կարո՞ղ է արել եմ նման բան. բայց չէի արել: Մի օր էլ տեսա նրան սուրբ բեմի վրա՝ սկիհը բարձրացրած և եղբայրներին Քրիստոսի մարմնի և արյան հաղորդությունը բաժանելիս: Մոտեցա և Քրիստոսի սուրբ խորհուրդով երդվեցի, որ չեմ արել այդ, սակայն դարձյալ չընդունեց և շարունակում էր տրտմել: Այնժամ սթափվեցի և հիշեցի հայրերի խոսքերը ինքն իրեն մեղադրելու մասին: Հավատացի նրանց խոսքին ու սկսեցի մեղադրել ինքս ինձ և ասել, թե՝ այն սարկավագը ճշմարիտ սեր ունի իմ հանդեպ և այդ սիրուց դրդված ասաց այն, ինչ կրում էր իր սրտում, որպեսզի առաջիկայում ես ավելի զգույշ լինեմ: Եվ ասացի ինքս ինձ. «Ո՛վ եղկելի անձ իմ, որ ասում ես՝ չե՛մ արել այդ բանը, ուրիշ այնքան չարիքներ ես գործել և բոլորն էլ մոռացել, դուցե սա նույնպես արել և մոռացել ես: Ո՞ւր են քո երեկվա և վաղեմի չար գործերը, որ բազում տարիներ չարիքներ գործելով ես անցկացրել: Արդ, ինչպես որ այդ ամենը կատարել և մոռացել ես, այնպես էլ սա ես արել և մոռացել»: Եվ այսպես հավատացրի ինքս ինձ, թե արել եմ այդ բանը և մոռացել, ինչպես մնացած բաներն էի արել և մոռացել: Սրանով գոհանում էի Աստծուց և այն սարկավագից, որով ճանաչեցի իմ մեղքը և զանցանքը, որպեսզի Թերևս ապաշխարեմ: Եվ այս խորհրդով վեր կացա ու գնացի սարկավագի մոտ՝ նրանից թողություն խնդրելու: Դուռը բախեցի, բաց արեց և նա ինքը իսկույն ընկավ երեսի վրա՝ ասելով. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, եղբա՛յր, քանզի դևերը ծաղրեցին ինձ, և ես կամեցա քո հանդեպ անել այդ, սակայն Աստված վստահեցրեց ինձ այժմ, որ դու չես արել այդ բանը»: Եվ ամենևին թույլ չտվեց ինձ՝ իր առջև ընկնելու, այլ ասաց. “Սա բավական է”»:

163. Եվ ասաց երանելին. «Տեսե՛ք, թե ինչպես կատարյալ խոնարհությունը ուղղեց նրա սիրտը իր ընկերոջ հանդեպ, որովհետև բնավ չգայթակղվեց սարկավագի զրպարտություններից, թեև մի քանի անգամ աղաչեց նրան, իսկ նա չընդունեց նրա աղաչանքները: Նա, որ մեղք չէր գործել, իր վրա վերցրեց և գնաց նրա առջև խոնարհվելու և գոհանում էր նրանից: Տեսե՛ք, թե ինչ է գործում առաքինությունը և կամ ինչ բարձրության է հասցնում իր խոնարհ մշակին, որովհետև եթե մտքին դներ, բազում ունայն պատճառներ կգտներ սարկավագին դև համարելու, բայց քանի որ հակվեց դեպի առաքինությունը, ոչ միայն չատեց և չտրտմեցրեց նրան, այլև գոհացավ, քանզի առաքինությունը լուսավորեց նրա միտքը: Այդպես էլ մենք, եթե պատրաստենք մեր միտքն ու հոգին, կակղեցնենք մեր հոգու հողը և սերմանենք հեզություն ու խոնարհություն, այն չի բերի որոմ, որ սատանան է սերմանում: Բայց եթե նա մեզ գտնի բոլոր բարի խորհուրդներից հեռացած և պատրաստ՝ ամեն տեսակ չարության, այնժամ կմտնի և կսերմանի չարիքի իր սերմը, մինչև որ ամբողջովին ծածկի հոգու և մտքի անդաստանները: Այդպես կլինի և առաքինությունների պարագային, քանզի երբ Տերը տեսնի մեկին, ով ծարավ է փրկության և բարի սերմեր է ցանում, այնժամ կընդունի նրա հոժարությունն ու բարի կամքը և կտա նրան իր շնորհներն ու պարգևները»:

164. Հիշեցի նաև այն ծերի դեպքը, որի դրացի եղբայրը գողանում էր նրա իրերը, սակայն նա երբեք չհանդիմանեց նրան, այլ նույնիսկ ասում էր, թե իրոք նա դրանց կարիքն ունի, և նրան պետք են: Եվ բոլորը զարմանում էին նրա սրտի քաղցրության վրա:

165. Դարձյալ պատմեց, թե. «Մի անգամ ես Պեդիադայում էի, և մի վանահայր պատմեց ինձ, թե իրենց վանքի մերձակայքում մի մենակյաց ծեր կար՝ ուղիղ և բարեգործ մարդ, իսկ նրա բնակատեղիին մոտ կար մի այլ եղբայր: Մի անգամ, երբ ծերը դուրս եկավ իր խցից, այդ եղբայրը հաղթվելով սատանայից՝ բացեց դուռը և գողացավ նրա բոլոր իրերն ու գրքերը: Երբ ծերը տուն եկավ և չգտավ իր իրերն ու գրքերը, գնաց եղբոր մոտ, որպեսզի նրան պատմի կատարվածը: Երբ ներս մտավ, տեսավ իր ինչքերը նրա տանը, քանզի դեռ չէր թաքցրել դրանք: Ծերը չկամեցավ ամաչեցնել նրան կամ հանդիմանել. դուրս ելավ՝ իբր բնական կարիքները հոգալու և բազում ժամեր ուշացավ դրսում, մինչև որ նա հասցնի բոլորը թաքցնել և ծածկել: Եվ դարձյալ ծերը եկավ եղբոր մոտ և սկսեց նրա հետ բոլորովին ուրիշ բաների մասին խոսել՝ չհանդիմանելով և չամաչեցնելով եղբորը: Օրեր անց

ծերի կարասին ու գրքերը հայտնաբերեցին այն եղբոր մոտ և նրան տարան բանտ գցեցին: Իսկ ծերը, բանտարկվելու պատճառին անտեղյակ, լուրն առնելուն պես եկավ ինձ մոտ և ասաց. «Տո՛ւր ինձ հինգ ձու և օրհնված հաց»: Եվ ես ասացի նրան. «Մի՞թե օտար մեկն է եկել քեզ մոտ»: Նա ասաց՝ այո՛: Եվ ծերը վերցնելով դրանք՝ գնաց բանտ: Այն եղբայրը, երբ տեսավ ծերին, ընկավ նրա ոտքերը և ասաց. «Քեզ համար եմ բանտում, հա՛յր, որովհետև ես գողացա քո ունեցվածքը. ահա քո գրքերն ու հանդերձներն այնտեղ են»: Ծերը նրան ասաց. «Հավատա՛ ինձ, որդյա՛կ, դրա համար չմտա այստեղ, ոչ էլ գիտեի, որ իմ պատճառով ես բանտում, այլ միայն լսեցի, որ բանտում ես, և եկա այստեղ՝ մխիթարելու քեզ. ահա իմ սերն ինձ հետ է, և հիմա կփորձեմ քեզ այստեղից դուրս հանել»: Եվ գնալով՝ աղաչեց իր ծանոթ իշխաններից մեկին, որն էլ իր հերթին խնդրեց գլխավոր իշխանին, և ծերի հետ գնալով՝ բանտից հանեց եղբորը»:

166. Այդ ծերի մասին նաև պատմում էին, թե մի անգամ գնաց վաճառատեղի, որպեսզի իր համար հանդերձ գնի և չուխա: Վերցնելով դրանք՝ տվեց դահեկանը, սակայն փոքր-ինչ պակասեց դրամից: Նա չուխան դրեց տակը և սկսեց կրպակի դռանը փողերը հաշվել: Եվ մինչ հաշվում էր, եկավ մի գող և կամենում էր նրա տակը դրած կտավը տանել: Ծերը, հասկանալով այդ, քանի որ գթառատ սիրտ ուներ, կորցավ դեպի կրպակը՝ իբր փողերն է հաշվում, և թույլ տվեց, որ գողը տանի կտավը. ո՛չ հանդիմանեց, ո՛չ մատնեց նրան ծերը: Եվ երանելին ասում էր, թե մեծ բան չէր այն կտավն ու իր ունեցվածքը, որ կամովին կորցրեց, սակայն դրանով ամենքին ցույց տվեց ընտիր, հույժ մեծ և բարձրագույն հոժարություն, քանզի սուրբը ծերը գործով ցույց տվեց, որ ինքն այնպես ուներ, կարծես թե չուներ. դրա համար էլ երբ կորավ կտավը, նույն մտքին մնաց, ո՛չ չվրդովվեց և ո՛չ էլ տրտմեց: Ինչպես բազմիցս ասել եմ, ոչ թե ունենալն է մարդուն վնասում, այլ չարաչար ունենալը, քանզի եթե նա ամբողջ աշխարհն էլ ունենար, կլիներ այնպիսին՝ որպես թե բնավ ոչինչ չուներ: Եվ այն, ինչ արեց, ցույց տվեց, որ իր անձը ազատ է բոլոր տեսակի ախտերից: Մենք նույնպես փորձենք անել այս ամենը, եղբայրնե՛ր, և մեր սուրբ հայրերի խրատները հոժարությամբ ընդունենք՝ ի փառս և ի պատիվ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՆԴԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մի եղբայր նստած էր իր խցում, և սատանան նրա մեջ սերմանեց, որ դուրս գա իր խցից՝ ասելով նրան, թե հարկավոր է գնալ այսինչ ծերի մոտ: Իսկ նա ասաց՝ մեկ ուրիշ անգամ կգնամ: Խորհուրդը դարձյալ ասաց նրան. «Եթե հանկարծ ծերը մեռնի, այդպես էլ դու նրան չես տեսնի: Հենց հիմա է պետք գնալ, տեսնել նրան և խոսել հնձի մասին»: Եղբայրն իր խորհրդին ասաց. «Հիմա հնձի մասին խոսելու ժամանակը չէ»: Դարձյալ սատանան նրա միտքը գցեց և ասաց. «Վե՛ր կաց, գնա՛. մինչ ծերին տեսնես և մի քիչ եղինջ հավաքես քեզ համար, հնձի ժամանակը կգա»: Նա ասաց. «Երբ ավարտեմ ձեռքիս մնացած այս մի քանի արմավի ոստերը հյուսելը, կելնեմ»: Իսկ խորհուրդներն ասացին նրան. «Քանի դեռ եղանակը տաք և գարնանային է, վե՛ր կաց, գնա՛»: Եվ նա, ձեռագործը թողած, դուրս եկավ և գնաց, իսկ նրա դրացի ծերը, տեսնելով նրան, կանչեց և ասաց. «Գերյա՛լդ և ավարի՛ գնացողդ, ե՛կ այստեղ»: Երբ եղբայրը մոտեցավ, ասաց. «Դարձի՛ր քո խուցը»: Եղբայրը պատմեց նրան այն պայքարի մասին, որ տեղի ունեցավ իր մեջ: Հետո երբ մտավ իր խուցը, ընկավ գետնին և զղջալով թողություն խնդրեց Աստծուց: Իսկ դևերը բարձր ձայնով աղաղակելով ասացին. «Դո՛ւք, մենակյացնե՛րդ, հաղթեցիք մեզ»: Խսիրը նրա տակ հրի պես այրվեց, դևերը որպես ծուխ ցրվեցին, և եղբայրը հասկացավ նրանց նենգությունը:

2. Ոմն եղբայր հարցրեց հայր Արսենին և ասաց. «Իմ խորհուրդներն ինձ խռովեցնում են, ասելով՝ ո՛չ կարողանում ես աշխատել և ո՛չ էլ պահեցողություն անել. գնա՛ հիվանդներին խնամիր. դա էլ է մեծ գործ»: Ծերը, անմիջապես ճանաչելով սատանայի սերմանածը, ասաց նրան. «Գնա կե՛ր, ըմպի՛ր, ննջի՛ր և մի՛ աշխատիր, միայն թե խցից դուրս մի՛ արի՝ գիտենալով այն, որ խցում մենակ նստելն է մենակյա-

ցին իր կարգի մեջ պահում»: Եվ նա այդպես արեց երեք օր. ուտում էր, ըմպում և քնում: Ապա հագենալով՝ ճանճրացավ, վերցրեց արմավենու տերևներն ու հերձեց: Հաջորդ օրը սկսեց հյուսել, և երբ քաղցեց՝ ասաց. «Քիչ արմավ մնաց, սրանք էլ վերջացնեմ, հետո կճաշեմ»: Եվ երբ վերջացրեց, ինքն իրեն ասաց. «Մի փոքր կարդամ, հետո կճաշեմ»: Երբ կարդաց, ասաց. «Մի քանի սաղմոս էլ ասեմ, հետո կճաշեմ»: Եվ այսպես քիչ-քիչ աճում էր և առաջադիմում՝ իրեն հանձնելով Աստծուն, մինչև որ իր կարգի մեջ մտավ: Այնուհետև գոտեպնդվելով ընդդեմ խորհուրդների՝ հաղթում էր նրանց:

3. Մի անգամ խիստ ծանր հիվանդացավ հայր Հովսեփը և լուր ուղարկեց հայր Թեոդորոսին, թե. «Քանի դեռ չեմ ելել մարմնից, ե՛կ, որ քեզ տեսնեմ»: Քանի որ Ավագ շաբաթն էր, հայր Թեոդորոսը չկամեցավ գնալ և նրան հաղորդեց հետևյալը. «Կսպասեմ մինչև կիրակի օրը, հետո կգամ. իսկ եթե գնաս, այն աշխարհում կտեսնենք իրար»:

4. Մի ծեր պատմում էր, թե երեք մտերիմ ճգնասերներ կային: Երեքն էլ մենակյացներ էին, ակայն իրարից տարբեր խորհուրդներ ունեին. նրանցից մեկը կամեցավ ընտրել ճանապարհորդությունը, և որտեղ վեճ ու կռիվ էր լինում, խաղաղություն էր հաստատում՝ ըստ Տիրոջ խոսքի, թե՝ «Երանի խաղարարներին» (Մատթ. Ե 9)*: Երկրորդը նախընտրեց հիվանդախնամ դառնալ, իսկ երրորդը գնաց անապատ, որպեսզի այնտեղ հանգիստ գտնի: Այս բաժանումից հետո առաջինը՝ չափազանց հոգնատանջ՝ մարդկանց թշնամանքների ու կռիվների պատճառով, չկարողացավ կարգավորել այս ամենը և ճանճրացած՝ եկավ հիվանդախնամի մոտ և նրան էլ գտավ խռովյալ վիճակում, որովհետև նա նույնպես չէր կարողանում կատարել պատվիրանը* (Մատթ. ԻԵ 36-44)*: Եվ նրանք միասին գնացին անապատականի մոտ: Միմյանց տեսնելով՝ ուրախացան, և այս երկուսը նրան պատմեցին իրենց նեղությունների մասին և խնդրեցին, որ պատմի իրենց, թե ինչպիսի արդյունքի է հասել նա: Իսկ անապատականը ոչինչ չպատասխանեց, ապա որոշ ժամանակ անց նրանց ասաց. «Եկեք գնանք մի-մի սափոր ջուր բերենք»: Եվ երբ բերեցին, նրանց ասաց. «Լցրե՛ք այդ ջուրը այս թասի մեջ և կռանալով նայեցե՛ք ջրին: Ի՞նչ եք տեսնում»: Նրանք ասացին՝ ոչինչ: Եվ երբ ջուրը դադարեց շարժվել, նրանց ասաց. «Դարձյալ կռացե՛ք և նայե՛ք ջրին. այժմ ի՞նչ եք տեսնում»: Երբ նրանք պատասխանեցին, թե՝ մեր դեմքերն ենք հստակ տեսնում, նրանց ասաց. «Այդպես է նաև նրա պարագայում, ով մարդկանց մեջ է բնակվում, քանզի խռովքների*

պատճառով չի կարող իր մեղքերը տեսնել, իսկ երբ անապատում հանդարտվի, այնժամ հստակ մտքով կհայի Աստծուն»:

5. Մի անգամ հայր Արսենը անցնում էր եղեգնուտի կողքով, երբ եղեգները շարժվեցին քամուց: Իր հետ գնացող եղբայրներին ծերը հարցրեց. «Այս ի՞նչ աղմուկ է»: Եղբայրները պատասխանեցին. «Եղեգներն են շարժվում քամուց»: Հայր Արսենը նրանց ասաց. «Իր խցում լռությամբ նստող մեկը, եթե լսի թեկուզ մեկ թռչունի ձայն, ուրեմն իր սրտում չունի այդ լռությունը, ինչպես դուք, որ լսում եք այդ եղեգնուտի խշշյունը»:

6. Մի անգամ, երբ հայր Արսենը դեռ Կանոպոսում էր բնակվում, Հռոմից մի մեծահարուստ իշխանի կույս դուստր եկավ տեսնելու հայր Արսենին: Կույսին ընդունեց եպիսկոպոսապետ Թեոփիլոսը, և աղջիկն աղաչեց նրան համոզել ծերին՝ ընդունելու իրեն: Եվ հայր Թեոփիլոսը գնաց ծերի մոտ, աղաչեց նրան և ասաց. «Մի կույս է եկել, որը Հռոմի սենատորներից մեկի աղջիկն է և կամենում է Ձեզ տեսնել և օրհնվել Ձեր կողմից»: Հայր Արսենը չհամաձայնեց ընդունել նրան: Եվ երբ Թեոփիլոսը աղջկան ասաց, որ ծերը չհամաձայնեց ընդունել իրեն, աղջիկը հրամայեց պատրաստել երիվարը՝ այսպես ասելով. «Հավատում եմ Աստծուն, որ կտեսնեմ նրան, որովհետև չեկա այստեղ մարդ տեսնելու, իմ քաղաքում էլ մարդիկ շատ կան, այլ եկա մարգարե տեսնելու»: Եվ երբ եկան ծերի խցի կողմը, Աստծո շնորհով ծերը նրանց հանդիպեց դրսում, իսկ աղջիկը նրան տեսնելուն պես ընկավ նրա ոտքերը: Նա բարկությամբ վեր բարձրացնելով՝ նայեց նրան և ասաց. «Եթե իմ երեսն ես կամենում տեսնել, ահա՛ տեսար»: Իսկ աղջիկն ամոթից չնկատեց նրա դեմքը: Ծերն ասաց նրան. «Ձե՞ս լսել իմ գործերի մասին, քանզի դա է կարևոր տեսնել: Ինչպե՞ս համարձակվեցիր ծովը կտրել-անցնել, չգիտե՞ս, որ կինարմատ ես և քեզ վայել չէ գնալ այս ու այն կողմ: Հիմա էլ թերևս վերադառնաս Հռոմ և ասես ուրիշ կանանց, թե՝ տեսա Արսենիոսին, և ծովով ճանապարհ ցույց տաս նրանց, որ գան ինձ մոտ»: Նա պատասխանեց. «Եթե Աստված կամենա, ոչ մեկին թույլ չեմ տա գալ այստեղ, դու միայն աղո՛թք արա ինձ համար և միշտ հիշի՛ր ինձ»: Ծերն ասաց կնոջը. «Ես կաղոթեմ Աստծուն, որպեսզի ջնջի՛ քո հիշատակն իմ սրտից»: Այս լսելով՝ աղջիկը հեռացավ խռովված: Երբ քաղաք եկավ, սկսեց տրտմությունից ջերմել: Եպիսկոպոսապետին տեղեկացրին, թե այն կույսը հիվանդ է: Հայր Թեոփիլոսը, գալով նրա մոտ, հարցրեց, թե ինչն է ցավում: Եվ նա ասաց. «Երանի եկած չլինեի այստեղ, քանզի երբ ծերին ասացի, թե՝ հիշի՛ր

ինձ, նա ասաց՝ կաղոթեմ Աստծուն, որ քո հիշատակը ջնջի իմ սրտից, և ահա ես տրտմությունից մեռնում եմ»: Եպիսկոպոսապետն ասաց. «Զգիտե՞ս, որ կինարմատ ես, իսկ թշնամին կանանց միջոցով է պատերազմում սրբերի դեմ. դրա համար էլ ծերն ասաց այդ խոսքը, բայց քո հոգու համար հանապազ աղոթք է անում»: Եվ առողջացան կույսի խորհուրդները, և ուրախությամբ վերադարձավ իր տեղը:

7. Հայր Մովսոյիսն ասաց. «Եթե կամենում ես բնակվել անապատում, կամ մեկ այլ տեղ, ուր չի հասնում ամբոխը, կամ վանքում՝ բազում եղբայրների մեջ, և ինչ-որ մեկը հյուր գա այնտեղ, դու պարտավոր ես ընդունել նրան, քանզի նա հանգստյան տեղ չունի, իսկ եթե բազմության հետ ես և չես ընդունում նրան՝ քո խորհուրդները քեզ չեն նեղի, որովհետև նա մեկ այլ տեղ կգտնի հանգստի համար, իսկ եղբայրների բազմությունը քեզ հովանի կլինի, և կարող ես ապահով հանգչել»:

8. Հայր Բիտիմն ասաց. «Մի անգամ ինձ մի քիչ խնձոր տվեցին, որպեսզի տանեմ ծերերին: Ես բախեցի դրացի հայր Աքիլայի դուռը, որ տամ նրան: Նա ներսից ասաց. «Եղբա՛յր, իսկապես չեմ ուզում այս ժամին իմ դուռը բախես, թեկուզ խնձորներդ ոսկյա լինեն, և ուրիշ խցեր էլ մի՛ գնա»: Եվ ես խնձորները տարա եկեղեցի»:

9. Հայր Արսենի մասին ասում էին, թե նրա խուցը եկեղեցուց երեսուներկու մղոն հեռու էր, և ծերը հազվադեպ էր դուրս գալիս, քանզի ուրիշներն էին նրան սպասավորություն անում: Եվ երբ ավերվեց Սկյութիան, լալով դուրս եկավ և ասաց. «Աշխարհը կորցրեց Հռոմը, իսկ մենակյացները՝ Սկյութիան»:

10. Հայր Տիմոթեոսն ու նրա եղբայրը գրագիր էին Սկյութիայում, և եղբայրները ներքուստ խռովվում էին: Տիմոթեոսն ասաց իր եղբորը. «Մեր ինչի՞ն է պետք այս արհեստը, որ ոչ մի օր մեզ հանգիստ չի տալիս»: Ասաց նրան հայր Պողոսը. «Մեզ ավելի քան բավական է գիշերվա լռությունը, եթե մեր մտքերը արթուն լինեն առ Աստված»:

11. Հայր Անտոնիոսն ասաց դարձյալ. «Ով բնակվում է անապատում և ստանում է լռություն, երեք պատերազմ է վանում իրենից՝ լսողության, տեսողության և շատախոսության, և Միակին է միայն պահում իր սրտում»:

12. Աբբա Արսենիոսը, երբ պալատում էր, աղոթեց առ Աստված և ասաց. «Առաջնորդի՛ր ինձ, Տե՛ր, թե ինչպես ապրեմ»: Եվ ձայն եկավ

նրան երկնքից և ասաց. «Արսենիո՛ս, փախի՛ր մարդկանցից և կապրես»:

13. Հարցրեց աբբա Մակարիոսն աբբա Արսենիոսին. «Արսենիո՛ս, ինչո՞ւ ես փախչում մեզանից»: Ծերը նրան ասաց. «Աստված գիտե, որ սիրում եմ ձեզ, սակայն չեմ կարող միաժամանակ և՛ Աստծո հետ լինել, և՛ մարդկանց: Այնտեղ՝ վերևում, հազարավորներն ու բյուրավորները մեկ կամք ունեն, բայց մարդիկ բազմադիմի կամքեր ստացան, ուստի չեմ կարող Աստծուց հեռանալ և լինել մարդկանց հետ»:

14. Ոմն եղբայր գնաց Սկյութիա՝ հայր Մովսեսի մոտ, և խնդրում էր նրան՝ մի խոսք ասել իրեն: Եվ ծերը նրան ասաց. «Գնա՛ և լռությո՛ւն ստացիր քո խցի մեջ, և քո խուցը քեզ կուսուցանի ամեն ինչ»:

15. Աբբա Սիսոյի աշակերտ հայր Աբրահամը ասաց նրան. «Ծերացար, հա՛յր, մի փոքր մոտ գնանք աշխարհին»: Ծերն ասաց նրան. «Որտեղ կին չկա, այնտե՛ղ գնանք»: Աշակերտն ասաց. «Որտե՞ղ կա այդպիսի վայր, որ կին չկա՝ բացի անապատից»: Եվ ծերն ասաց. «Ուրեմն գնա՛նք անապատ»:

16. Ոմն եղբայր հարցրեց ծերին, թե ի՞նչ է լռությունը և ո՞րն է նրա օգտակարությունը: Եվ ծերը նրան ասաց. «Լռությունն այն է, երբ մեկը լռությամբ և Աստծո երկյուղով նստում է իր սենյակում և խուսափում է հիշաչարությունից ու բարձրամտությունից: Այսպիսի լռությունը ծնում է արիություն և մենակյացին պաշտպանում է թշնամու բոլոր հրացայտ նետերից՝ աներկյուղ պահելով նրա հարվածներից: Ո՛վ լռություն՝ սանդուղք դեպի երկինք, ո՛վ լռություն՝ առաքինությունների մայր, ո՛վ լռություն՝ ապաշխարություն ընդունող, ո՛վ լռություն՝ մեղանչածների հայելի, որ ցույց ես տալիս մարդկանց իրենց գործերը: Ո՛վ լռություն՝ հեզության մայր, ո՛վ լռություն՝ արցունքների ու հառաչանքների նպաստացուցիչ, ո՛վ լռություն՝ նվաստության տաղավար, ո՛վ լռություն, որ խաղաղություն ես բերում մարդուն, ո՛վ լռություն՝ հոգու փայլեցուցիչ, ո՛վ լռություն՝ հրեշտակների կցորդակից, ո՛վ լռություն՝ մտքի լուսավորություն, ո՛վ լռություն, որ Աստծո երկյուղին ես լծորդ, մտքերի տեսուչ և դատաստանի ցավակից: Ո՛վ լռություն՝ բոլոր բարիքների ծնող, պահեցողության ջանք, լեզվի երասան և որկրամոլության արգելք, ո՛վ լռություն՝ աղոթքների մեջ հանդարտեցնող, ընթերցումների մեջ հանգստացնող, անդորր նավահանգիստ, անխռով հանգստարան: Ո՛վ լռություն՝ աղաչանք առ Աստված, երիտասարդների զենք, մտքերի անպղտոր պահապան,

անխռով ուղղորդիչ: Ո՜վ լռություն՝ քաղցր լուծ և թեթև բեռ, որ հանգստացնում և թեթևացնում ես նրանց, ով վերցրել է քո բեռը: Ո՜վ լռություն՝ վայելչագեղ սրտերի և անձանց, ո՜վ լռություն, որ քո մեջ միայն Քրիստոսին ես հիշեցնում և աչքի առաջ ունես մահը: Ո՜վ լռություն՝ աչքերի ու լեզվի զսպող պախուրց, ո՜վ լռություն՝ օր ու գիշեր Քրիստոսին հետևող և լապտերն անշեջ պահող, քանզի միայն նրան ես հարազատաբար տենչում և սաղմոսում. «Պատրաստ է իմ սիրտը, Աստվա՜ծ իմ, պատրաստ է իմ սիրտը» (Սաղմ. ԺԶ 8, ՃԷ 2)*: Ո՜վ լռություն՝ գրգռությանը անվարժ, հառաչանքներ արձակող դեպի Նա, Ով ստեղծեց քեզ, ո՜վ լռություն՝ լրբությունն ատող և Քրիստոսից հանապազ զգուշացող: Ո՜վ լռություն՝ անդաստան Քրիստոսի, ո՜վ լռություն՝ բարեպաշտության մայր, ո՜վ լռություն՝ չարչարանքների կապանք, ո՜վ լռություն՝ կենաց ծառ, բարության պտուղ տվող: Այո՜, այո՜, եղբա՜յր, արա՜ այս ամենը՝ ամեն ինչում հիշելով մահը»:*

17. Ծերն ասաց. «Ինչպես մեկը, որ մեռնում է քաղաքում, ո՛չ ձայնում է և ո՛չ խոսում, այլ սոսկ մեռած է, և նրա դին դնում են քաղաքից դուրս՝ գերեզմանում, այնպես էլ մենակյացը, երբ հագնում է սուրբ սքեմը, պարտավոր է թողնել տուն, քաղաք և ազգականներ, և չտրվել ո՛չ կենցաղային հոգսերի և ո՛չ էլ դրանց համար գործադրվող ջանքերի, ո՛չ խռովության և ո՛չ էլ ապականացու աշխարհի ունայն անցուդարձին: Իսկ եթե կրոնավորը չի ելնում քաղաքից կամ գյուղից, նման է տանը հոտած մեռելի, որի հոտը ով առնի, հապճեպ կփախչի նրանից»:

18. Մեծն աբբա Մակարիոսը եկեղեցուց դուրս գալիս եղբայրներին ասաց. «Փախչե՛նք, եղբայրնե՛ր, փախչե՛նք»: Ծերերից մեկը հարցրեց նրան. «Հա՛յր, ո՞ւր փախչենք այս անապատից»: Նա մատը դրեց բերանին և ասաց. «Սրանի՛ց փախչենք»: Եվ գալով իր սենյակը՝ փակեց դռները և նստեց լռությամբ խոկալու:

19. Մեծն Արսենիոսը, ճանձրացած բազում մարդկանց իր մոտ գնալ-գալուց, թողեց իր աշակերտներ Ալեքսանդրոսին և Զոյիլոսին, գնաց մի հեռավոր վայր և այնտեղ ծանր հիվանդացավ: Առողջանալուց հետո կարոտով վերադարձավ նրանց մոտ և ասաց. «Զլսեցի՞ք իմ հիվանդության մասին»: Նրանք ասացին. «Այո՛, լսեցինք»: Եվ նա ասաց. «Հապա ինչո՞ւ չեկաք ինձ մոտ»: Աշակերտներն ասացին. «Որովհետև շատերը քո պատճառով գայթակղվեցին մեզանից և ասում էին, թե զայրացար մեզ վրա, դրա համար հեռացար մեզանից»: Աբբա Արսենիոսն ասաց. «Հիմա էլ կասեն, թե՝ աղավնին, դաղար առնելու տեղ

չգտնելով, վերադարձավ տապան՝ Նոյի մոտ» (Ծննդ. Ը 9)*: Եվ նրանց մոտ մնաց մինչև իր մահվան օրը:*

20. Ինչ-որ մեկը բախեց հայր Արսենիոսի դուռը, իսկ նա բացեց՝ կարծելով, թե իր աշակերտն է: Երբ տեսավ, որ մեկ ուրիշն է, ընկավ երեսի վրա: Եկողն աղաչում էր, որ նա վեր կենա և իրեն հոգեշահ բան ասի: Ծերն ասաց. «Չեմ բարձրանա, մինչև չգնաս այստեղից»: Եվ այդպես էլ վեր չելավ, մինչև որ նա գնաց:

21. Սկյութիայից մի կրոնավոր եկավ և մոտակա վանքից իրեն առաջնորդ վերցնելով՝ գնաց հայր Արսենիոսի մոտ: Երբ տեսնվեցին, նստեցին լռելյայն, և երբ շատ սպասեցին, վանականն ասաց. «Հա՛յր, աղո՛թք արա ինձ համար, որ գնամ»: Սկյութացին, քանի որ համարձակություն չունեցավ խոսելու, ասաց, թե՝ ես էլ եմ գալիս, իսկ երբ գնացին, սկյութացին ասաց. «Տա՛ր ինձ նախկին ավազակապետ Մովսեսի մոտ»: Հայր Մովսեսը նրանց ընդունեց սիրով ու լրջմտությամբ, սեղանով ու խոսքով: Վերադառնալիս վանականը հարցրեց Սկյութացուն, թե. «Ինչպիսի՞ն են ըստ քեզ հռոմեացին և եգիպտացին»: Նա պատասխանեց. «Այս պահին Մովսեսն ավելի բարվոք թվաց ինձ»: Եվ լսելով այս՝ ծերերից մեկը խնդրեց Աստծուն և ասաց. «Տե՛ր, ինչպե՞ս է, որ Արսենիոսը հանուն Քեզ փախչում է մարդկանցից, իսկ Մովսեսը հանուն Քեզ ընդունում է մարդկանց, մեկնի՛ր մեզ նրանց խորհուրդը»: Եվ Աստված ցույց տվեց նրան երկու նավ. մեկում Աստծո Հոգին էր, և այդ նավի վրա Արսենիոսն էր, որը գնում էր լռությամբ, մյուսում հրեշտակներն էին, և Մովսեսն էլ նրանց մեջ էր, և նրան կերակրում էին սուրբ ու մաքուր մեղրախորիսխով, և այդպես նավում էին դեպի այն կողմ: Բայց Արսենիոսն ասաց. «Կույսը քանի դեռ իր հոր տանն է, բոլորը փափագում նրան և խորհում հարսնախոսության մասին, իսկ երբ կին է դառնում, ոմանք պարսավում են, իսկ ոմանք՝ գովում, և նա նախկինի պես պատվական չէ: Նույնպես և մենակյացը, որ հանրահռչակ է դառնում, հազիվ թե կարողանա հաճոյանալ Աստծուն»:

22. Հայր Իսիդորի մասին ասում էին, թե երբ մեկը գնում էր նրա մոտ, նա փախչում էր խցի խորքը: Նրան հարցրին՝ ինչո՞ւ ես այդպես անում, նա պատասխանեց. «Ովքեր փախչում, թաքնվում են որջում, որսացողներից ազատվում են»:

23. Հայր Դուլասն էլ ասաց. «Կտրի՛ր քեզանից բազմության սերը, որպեսզի քո միտքը չծառայեցնես նրանց սիրաշահելուն, և միտքդ

չկուրանա: Ո՞վ կարող է միաժամանակ հաճո լինել և՛ մարդկանց, և՛ Աստծուն»:

24. Մի ժրաջան կրոնավոր աղոթքի կանգնելու ժամին սարսուռ և գլխացավ ունեցավ, սակայն ասաց. «Ահավասիկ մեռնում եմ, ջանալ է պետք»: Եվ այդպես քաջաբար՝ երկար ժամանակ աղոթք էր անում, մինչև որ Աստված տեսավ նրա հավատը և նրանից վերցրեց փորձությունը Իր փառքի համար:

25. Հայր Մովսեսն ասաց. «Ով փախչում է մարդկանցից, նման է հասուն խաղողի, քանզի ո՛չ աչքը կտեսնի, ո՛չ միտքը կորոնի, ո՛չ մարմինը կշարժվի և ո՛չ էլ ախտերը կտիրեն նրան: Իսկ ով խառնվում է մարդկանց հետ, նման է քացախի և ժանտի»:

26. Հայր Կոզմասին, որ կույս էր, պահեցող և ողորմած, երբ թախանձելով խնդրեցին ասել, թե ո՞րն է իր մեջ մեծագույն բարիքը, ասաց. «Տիրոջ շնորհով երեք առաքինություն ստացա. չծիծաղեցի, չերդվեցի և սուտ չխոսեցի իմ բոլոր օրերում: Եվ պետք է իմանալ, որ ինչպես ճանապարհին, այնպես էլ խորհուրդների կողմից կոխրտված մտքում ոչինչ չի բուսնում»:

27. Մեկը հարց տրվեց ծերին, թե՝ այսքան տարի ինչի՞ հասար քո կյանքում: Նա պատասխանեց. «Գնա՛ և տասն օր հետո արի»: Երբ սա եկավ, նա մեռել էր, իսկ կողքին մի գրություն թողել. «Կանոնը (աղոթակարգ) կատարելիս երբեք թույլ չտվեցի խորհուրդներիս վայր իջնելու»:

28. Ծերերից մեկը, երբ հիշում էր Աստծո դատաստանը, մոլեգնածի նման փախչում էր անապատով: Նրա կողքին մի եղբայր կար, որ նրա հետևից գնալով՝ գտնում, ետ էր բերում նրան այնտեղից՝ ասելով. «Միայն դո՞ւ ես բովանդակ աշխարհի մեղքերը գործել»: Նա պատասխանելով ասում էր. «Ես ևս հավատում եմ, որ Աստված իմ մեղքերը կթողնի, սակայն ո՞վ կարող է դիմանալ ահավոր ատյանին և մեծ դատաստանին»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

29. Հայր Անտոնիոսը ճգնում էր անապատում և ընկավ մեծ ճանճրույթի մեջ, և կուրացան նրա խորհուրդները: Նա սաստիկ նեղվում էր և ասաց Աստծուն. «Տե՛ր, կամենում եմ ապրել, սակայն իմ խոր-

հուրդներն ինձ թույլ չեն տալիս: Ի՞նչ անեմ իմ այս նեղության մեջ կամ ինչպե՞ս ապրեմ»: Եվ մի փոքր շրջելով՝ խցի արևելյան կողմում տեսավ իր նման մեկ այլ Անտոնիոսի, որ նստած իր ձեռագործն էր գործում, փութով աղոթքի էր կանգնում և դարձյալ նստում ու պարան էր հյուսում, ապա դարձյալ վեր էր կենում և աղոթում: Այսպես արեց մի քանի անգամ: Դա Տիրոջ հրեշտակն էր, որ ուղարկվել էր Անտոնիոսին զորացնելու համար: Եվ Անտոնը լսեց հրեշտակի ձայնը, որ նրան ասաց. «Անտոնիոս՛, այսպե՛ս արա և կապրես», և հեռացավ նրա մոտից: Երբ հայր Անտոնը լսեց այս, լցվեց ուրախությամբ, զոհացավ Աստծուց և այդպես արեց՝ մինչև իր վախճանը:

30. Հայր Անտոնն ասաց. «Օրինակ՝ եթե ձկները հապաղեն ցամաքի վրա՝ կմեռնեն: Այդպես էլ կրոնավորները. եթե խցից դուրս գան, ճեմեն դրսում և դեղջուկների հետ շրջեն, հանդարտությունից դուրս կելնեն և կմեռնեն: Ուստի հարկավոր է փախչել դեպի մեր խցերը, ինչպես ձուկն է փախչում դեպի ծովը. գուցե դրսում հապաղելով՝ մոռանանք մեր ներքինը, որ է մտքերի պահպանումը»:

31. Մեծն Թեոփիլոս եպիսկոպոսն ու ոմն իշխան մի անգամ գնացին հայր Արսենի մոտ և նրանից խոսք խնդրեցին: Ծերը փոքր-ինչ լռեց և նրանց ասաց. «Ինչ էլ որ ձեզ ասեմ, կպահե՞ք այն»: Նրանք ուխտեցին պահել: Ծերը նրանց ասաց. «Որտեղ էլ լսեք, թե Արսենիոսն այնտեղ է, բնավ չմերձենաք այդ տեղին»:

32. Մեկ այլ անգամ դարձյալ հայր Թեոփիլոսը կամեցավ գնալ հայր Արսենի մոտ, տեղեկացրեց նրան և ասաց. «Եթե գամ, քո տան դուռը կբացե՞ս իմ առաջ»: Նա պատվիրեց հաղորդել Թեոփիլոսին հետևյալը. «Եթե գաս, կբացեմ դուռը, և եթե քո առաջ բացեցի, բոլորի առաջ կբացեմ, որից հետո այլևս այստեղ չեմ նստի»: Երբ եպիսկոպոսը լսեց այս, ասաց. «Մի՞թե սրբին իր տեղից հալածելու համար եմ գնում. ո՛չ, սրանից հետո այլևս երբեք չեմ գնա նրա մոտ»:

33. Հայր Դուլասն ասաց. «Եթե սատանան նեղի մեզ, որ թողնենք միայնության հանդարտությունը, չհնազանդվե՛նք նրան, քանզի ոչինչ այնպես չի խոցոտում մեր թշնամուն, ինչպես հանդարտությունը, պահքն ու աղոթքը և հոգու աչքը զգաստ ու արթուն պահելը»:

34. Հայր Թեոդորոս Փերմացին ասաց. «Եթե մեկը իր սենյակում նստելու քաղցրության փորձը ձեռք բերի, նա կփախչի մարդկանցից այնպես, ինչպես փախչում է թունավոր օձից: Քանզի եթե չկտրեմ իմ

անձը աշխարհականների սիրուց, չեմ կարող մերձենալ Աստծո սիրուն»:

35. Ոմն եղբայր եկավ հայր Թեոդորոսի մոտ, որպեսզի նրանից սովորի պարան հյուսել՝ իր հետ բերելով արմավի ճյուղեր: Ծերը նրան ասաց. «Հիմա գնա՛ և առավոտյան շո՛ւտ արի»: Վեր կացավ ծերը, թրջեց արմավի ոստերը և պատրաստեց հյուսելու տրցակը, տվեց նրա ձեռքն ու ասաց՝ այսպես կանես: Թողնելով նրան՝ մտավ իր խուցը և ողջ ցերեկը նստեց: Երբ ժամը եկավ, նրան կերակուր տվեց և ուղարկեց տուն: Առավոտյան դարձյալ եկավ եղբայրը, և ծերը նրան ասաց. «Վերցրո՛ւ այստեղից քո արմավն ու գնա՛, դու փորձություն դարձար ինձ համար, քանզի սուտ հոգսերի մեջ ես ինձ գցում»: Ծերը նրան չթողեց իր տուն մտնել:

36. Հայր Թեոդորոսն ասաց դարձյալ. «Հանդարտությունը բարի է, քանզի իմաստուն մարդը հանդարտ է: Իսկապես մեծ կարևորություն ունի կրոնավորի հանդարտությունը, հատկապես՝ եթե նա երիտասարդ է: Նաև ա՛յս պետք է իմանալ. եթե մեկը սկսում է հանդարտվել, դևերը ավելի շատ են կռվում նրա հետ և բերում են նրա վրա ձանձրույթ, նրա մարմինն ու հոգին ծանրացնում են կարճամտությամբ, տկարություններով և հիվանդություններով, թուլացնում ու անգործունյա են դարձնում ձեռքերն ու բոլոր անդամները, վերացնում են նրա զորությունը, նրան խորհուրդներ են ներշնչում, թե՝ տկար ես և չես կարող աղոթել, ննջի՛ր և հանգստացի՛ր: Սակայն եթե գիտակցի, որ այս ամենը թշնամու հարուցած պատրանքներն են, այս ամենը շատ արագ կանցնի»:

37. Հայր Հովհաննես Կարճահասակն ասաց. «Եթե մարդն իր մեջ ունենա Աստծո մխիթարությունը, կկարողանա հարդարտվել իր սենյակում, թեկուզ և աշխարհիկ մխիթարությունից զուրկ լինի: Իսկ եթե աշխարհիկ մխիթարություն ունենա, բայց աստվածայինը չունենա, անցողիկ մխիթարությամբ կկարողանա նստել իր սենյակում: Իսկ նա, ով ո՛չ մարմնավոր մխիթարություն ունի, ո՛չ էլ հոգևոր, ինչպե՞ս կարող է հանդարտությամբ նստել իր խցում»:

38. Միաբանության մեջ բնակվում էր ոմն եղբայր, որը խիստ ճգնակյաց էր: Սկիտացի եղբայրները լսեցին նրա մասին և եկան նրան տեսնելու: Մտան ներս, ուր նա ճգնում էր, և ողջունեցին նրան: Նա էլ նրանց ողջունեց և դարձյալ շարունակեց իր գործը: Եվ երբ տեսան նրան այդպես ժրաջան աշխատելիս, հայր Հովհաննեսը նրան հարցրեց.

«Ո՞վ քեզ այդպես զգեստավորեց կամ ո՞վ քեզ կրոնավոր դարձրեց և ուսուցանեց հանել եղբայրներից նրանց մաղախը»: Իսկ նա ասաց. «Աղոթեցե՛ք կամ նստե՛ք այդտեղ»: Հովհաննեսը նրան ասաց. «Մեղավոր մարդը չի համարձակվի այդ անել»: Եվ քանի որ համարձակություն չգտան նրա մեջ, ելան-գնացին:

39. Սկիտեում հայր Մովսեսն ասաց հայր Մակարիոսին. «Կամենում եմ հանդարտության մեջ մնալ, հա՛յր, սակայն եղբայրներս ինձ թույլ չեն տալիս»: Մակարիոսը նրան ասաց. «Դու թույլ բնավորություն ունես, որ չես կարողանում հեռանալ նրանցից: Բայց եթե ուզում ես փրկվել, գնա՛ անապատի խորքը և ապրի՛ր այնտեղ՝ վեմի մեջ»: Եվ նա այդպես անելով՝ հանդարտվեց:

40. Հայր Եսայիասը հարցրեց հայր Մակարիոսին և ասաց. «Ինձ կյանքի խոսք ասա՛, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Փախի՛ր մարդկանցից»: Իսկ Եսայիասն ասաց. «Ի՞նչ շահ կա մարդկանցից փախչելուց»: Ծերն էլ նրան ասաց. «Նստի՛ր քո սենյակում և ողբա՛, բնավ մի՛ կամեցիր մարդկային ձայն լսել և կապրես»:

41. Հայր Այիոսը հարցրեց հայր Մակարիոսին և ասաց. «Կյանքի խոսք ասա ինձ, հայր»: Մակարիոսը նրան էլ նույնը պատասխանը տվեց. «Փախի՛ր մարդկանցից, հանդարտվի՛ր քո խցում, ողբա՛ քո մեղքերը և կապրես»:

42. Հայր Մակարն ասաց. «Ովքեր կամենում են անցնել երևելի ծովը, նավի կարիք ունեն: Ովքեր կամենում են անցնել աներևույթ ծովը, այս առաքինությունների կարիքն ունեն՝ հավատ, հույս, սեր, երկայնամտություն, խոնարհություն, պահեցողություն և աղոթք: Իսկ ով առանց սրանց մտնի աներևույթ ծովը, մեծամեծ վշտեր և տանջանքներ կկրի և այն կողմ անցնել չի կարողանա: Հանդարտությունն օգտակար է, քանի որ ազատում է չարից: Իսկ ովքեր ստանան այդ առաքինությունները, հեշտությամբ կհասնեն անախտության, քանզի մտքով չի կարող հանդարտվել նա, ով նախ մարմնով չի հանդարտվել: Հոգու և մարմնի այդ միջնապարիսպը չի քանդվի առանց հանդարտության»:

43. Հայր Նեղոսն ասաց. «Թշնամու նետերից չի խոցոտվի այն ծերը, ով հանդարտվում է խցում, իսկ նա, ով շատերի հետ է շփվում, հաճախակի կխոցոտվի: Տրտմությունն ու սրտմտությունը եթե սանձվեն, ցանկությունը կմարի, և եթե համառոտ ասեմ՝ բոլոր ախտերը կնվազեն: Եվ ժամանակի ընթացքում բնությունը կվարժվի բարուն, ախտերը կմոռացվեն, առաքինությունները կաճեն, մեղքերը կհեռանան

նրանցից, ովքեր մեկուսանում են»: Դարձյալ ասաց. «Հանդարտվելն այն առումով է բարի, որ մարդը վատթար բաներ չտեսնի: Իսկ եթե դրանք չտեսնի, ինչպե՞ս միտքը կփնտրի դրանք: Եթե միտքը չքննի և չցնորվի և մարմինը չշարժի, ապա ախտերը չեն կարող հասնել մարդու վրա: Իսկ եթե անշարժ մնա չարից, խիստ կհանդարտվի, և ներքին մարդը կատարյալ խաղաղություն կունենա»:

44. Հայր Հովհաննեսն ասաց հայր Նիսթերոնին. «Ի՞նչ անեմ իմ լեզուն, հա՛յր, որովհետև սրան չեմ կարողանում լռեցնել»: Ծերը նրան հարցրեց. «Երբ ինչ-որ բան ես ասում, հանգստանո՞ւմ ես»: Պատասխանեց՝ ո՛չ: Ծերն ասաց նրան. «Իսկ եթե հանգիստ չունես, ինչո՞ւ ես ասում: Ուրեմն՝ առավել ևս լո՛ւռ մնա: Եթե որևէ տեղ ստիպված լինես ինչ-որ բան ասել, քի՛չ ասա և շա՛տ լռիր ու լսի՛ր, և հանգիստ կգտնես»:

45. Ոմն եղբայր մեկուսացել էր Թեբայիդա անապատում, և խորհուրդները նրան ասացին. «Ի՞նչ ես այստեղ անպտուղ նստել, արի՛ գնա մարդկանց մեջ, որպեսզի այնտեղ գոնե պտուղ տաս»: Ելավ և գնաց հայր Պափնոտիի մոտ և հայտնեց նրան իր խորհուրդները: Ծերը նրան ասաց. «Գնա՛, նստի՛ր քո սենյակում և առավոտյան աղոթք մի՛ արա, մեկ՝ երեկոյան, մեկ էլ կեսգիշերին արա: Երբ քաղցես, կե՛ր, երբ ծարավես, խմի՛ր, երբ նիրհես, ննջի՛ր, բայց մնա՛ քո սենյակում, մի՛ անսա քո խորհուրդներին»: Ապա գնաց հայր Հովհաննեսի մոտ և պատմեց նրան հայր Պափնոտիի խոսքերը, որ սովորեցրել էր իրեն: Հովհաննեսը նրան ասաց. «Աղոթք էլ ամենևին մի՛ արա, միայն թե հանդարտվի՛ր քո խցում»: Այստեղից էլ ելավ եղբայրը և գնաց հայր Արսենի մոտ, ամեն ինչ պատմեց նրան: Ծերը նրան ասաց. «Գնա՛, որդյա՛կ, և արա ա՛յն, ինչ նրանք ասել են, քանզի ես դրանից ավելի բան չունեմ քեզ ասելու»:

46. Մի անգամ հայր Ամոնը Ռայիթայից եկավ Կոլիզմա՝ հայր Սիսոյին տեսակցության, և սաստիկ տրտմած տեսավ նրան, քանզի թողել էր անապատը: Ասաց նրան. «Ինչո՞ւ ես տրտմել, հա՛յր, ի՞նչ իմաստ ունի հիմա անապատում մնալը»: Հայր Սիսոն բարկությամբ նայեց նրան և ասաց. «Այդ ի՞նչ ես ասում, Ամո՛ն, ինձ համար ավելի լավ չէ՞ր անապատում մնալ և ազատ լինել խորհուրդներից»:

47. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ինչպե՞ս հայր Ովրն ու դու թողեցիք Սկիտեն և եկաք բնակվեցիք այստեղ»: Ծերը նրան ասաց. «Երբ Սկիտեում սկսեց շատանալ մենակյացների բանա-

կը, լսեցինք, որ ննջեց հայր Անտոնը: Ելանք և եկանք այս լեռը, որտեղ էլ անդորր գտանք ու բնակվեցինք մի փոքր ժամանակ»: Եղբայրը հարցրեց. «Եվ քանի՞ տարի է, հա՛յր, որ այստեղ ես ապրում»: Ծերը նրան ասաց. «Արդեն յոթանասուներեք տարի»:

48. Հայր Սիսոյե Թեբայեցու մասին ասում էին, թե երբ ավարտում էր աղոթքը եկեղեցում, հապճեպ փախչում էր իր սենյակը այնպիսի փութով, որ մարդիկ ասում էին, թե դիվահար է և մոլագար, բայց նա Աստծո գործն էր միշտ կատարում:

49. Ոմն եղբայր հայր Սարմատային ասաց. «Իմ խորհուրդներն ինձ ասում են՝ դո՛ւրս ել»: Ծերը նրան ասաց. «Մի՛ լսիր նրանց, մի՛ հնազանդվիր, այլ նրանց ասա՝ նախապես լսեցի ձեզ և եկա այստեղ, սակայն այժմյան ձեր խորհուրդը չեմ լսի: Դարձյալ ասաց նրան. «Շատերը կան, որ ապրում են անապատում, սակայն աշխարհիկ գործեր են կատարում և կորստյան են մատնում իրենց հոգիները, որովհետև կարելի է բազմության մեջ լինել, սակայն մտքով հանդարտվել անապատում միայն, կարելի է նաև անապատում լինել, սակայն մտքով լինել ամբոխի հետ և միշտ խռովք ապրել»:

50. Մի ժամանակ հայր Տիթոյին բնակվում էր Կոլիզմայում, և ասաց իր աշակերտին. «Բա՛ց թող ջուրը, որդյա՛կ, և ոռոգի՛ր այդ արմավենիները»: Աշակերտն ասաց. «Կոլիզմայում որտեղի՞ց ջուր, որ ոռոգեմ այդին, հա՛յր»: Հայր Տիթոն ասաց. «Ի՞նչ եմ անում Կոլիզման, տա՛ր ինձ անապատ»: Ոռոգման ջուր ասելով՝ նա նկատի ուներ արտասուքները: Եվ ասաց. «Սենյակում հանդարտությամբ նստելով՝ ծերը լցվում է ամեն տեսակի բարիքներով»: Դարձյալ ասաց. «Կրոնավորը պարտավոր է իր հանդարտությունը գնել, իսկ եթե զրկվի մարմնավոր ինչքից, թո՛ղ չնեղվի, այլ հանգիստ թողնի այդ ամենը»:

51. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի խիստ վշտանում եմ»: Ծերը նրան ասաց. «Հանդարտվի՛ր և նստի՛ր քո տանը, և Տերը քեզ հանգիստ կտա»:

52. Ասաց դարձյալ ծերը. «Կոխոտված ճանապարհի վրա դալար խոտ չի բուսնում, թեկուզ և սերմանվի, քանզի կկոխոտվի անցորդների կողմից: Այդպես լինում է նաև մեզ հետ մեր խորհուրդների պատճառով: Իսկ երբ հանդարտվելով դատարկվես և արգելես քո խորհուրդները, այնժամ բուսնելով կծաղկեն բոլոր հոգևոր գործերը, քանզի դրանք բոլորը քո մեջ էին և այն պատճառով չէին երևում, որ նրանց վրայով քայլում էին ախտերը և կոխոտում դրանք»:

53. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Բարի՞ է, հա՛յր, անապատում բնակվելը»: Ծերը նրան ասաց. «Իսրայելի որդիները, երբ դուրս եկան Եգիպտոսի խառնակություններից և անապատ եկան, այնժամ տրվեց նրանց Օրենքն ու Աստծո երկյուղը ուսուցանվեց: Քանզի նավերն էլ ալեկոծ ծովում դատարկվում են բարիքներից, իսկ երբ ժողովվում են նավահանգստում, այնժամ ճանաչում են իրենց շահը: Այսպես էլ մարդը, եթե մի տեղում չհամբերի, չի ստանա ճշմարտության ճանաչողությունը, քանզի որպես առաջին և ամենաբարձր առաքինություն՝ Աստված ընտրեց հանդարտությունը, ինչպես և գրված է. «Ես ո՞ւմ մեջ բնակվեմ, եթե ոչ հեզերի, խոնարհների և նրանց մեջ, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի ԿԶ 2)*»: Եղբայրը նրան հարցրեց. «Իսկ ինչպե՞ս պետք է հանդարտվել և առանձնանալ»: Ծերը նրան ասաց. «Ամբիշը եթե նախապես չմարտնչի շատերի դեմ, հաղթության արվեստը չի սովորի, իսկ շատերի հետ փորձվելով և ուսանելով՝ կկարողանա մենամարտել և հաղթել: Այդպես էլ կրոնավորը. եթե նախ եղբայրների հետ չսովորի խորհուրդներին դիմակայելու արվեստը, չի կարողանա միայնության մեջ հանդարտվել և խորհուրդներին դիմակայել»: Իսկ եղբայրը հարցրեց. «Եթե որևէ տեղ ստիպված լինի կնոջ տեսնել, ի՞նչ պետք է անի»: Ծերը նրան ասաց. «Այդ ամենը սատանայից է, որովհետև դևը բազում պատճառներ ու հնարքներ է բանեցնում մեր հոգիները կորստյան մատնելու համար, սակայն եթե քեզ այդ փորձությունը պատահի, և դու կանանց հետ ստիպված լինես խոսել, թեկուզ քո քույրը լինի՝ թույլ մի՛ տուր նրան շատ խոսել, ինքդ էլ քի՛չ խոսիր և կա՛րճ կապիր խոսքդ: Խոսքի մեջ փոքր-ինչ վի՛շտ դիր և շուտափույթ փախի՛ր այնտեղից՝ նրան թողնելով այնտեղ: Իսկ եթե քեզ հետ խոսելը երկարի, իմացի՛ր, որ նրա ժահրահոտությունը քարշ կտա և վայր կգցի քո մտքերն ու խորհուրդները: Եթե սատկած օձի գարշահոտությունը ընկնի ռունգերի մեջ, և մարդը հեռանա նրանից, մեկ է՝ հոտը կմնա նրա ռունգերի մեջ: Այդպես էլ կնոջ գարշելի հիշատակը ամբողջովին չի հեռանա նրա խորհուրդներից, թեկուզ և հեռանա նրանից»: Եղբայրն ասաց. «Ո՞ր խորհուրդներով կարող է մարդ ազատվել այդ դատապարտությունից»: Ծերն ասաց. «Եթե մեկը հուր դնի իր ծոցում, կայրվի նրանից և չի մնա առանց դատապարտության՝ ըստ իմաստունի խոսքի»: Եղբայրը հարցրեց. «Ի՞նչ են գիշերային ցնորքներն ու դիվական անուրջները»: Ծերը նրան ասաց. «Ինչպես ցերեկն է դևը մեզ խաբկական ու օտարոտի խորհուրդներով տակնուվրա անում, որպեսզի աղոթքի չվարժվենք, այնպես էլ գիշերն է մեր հոգին պաշարում գարշելի պատրանքերով ու տեսիլքներով ու խավարեցնում է*

մեր մտքերը՝ խափանելով գիշերային աղոթքները»: Դարձյալ եղբայրը հարցրեց ծերին և ասաց. «Մարդն ի՞նչ պիտի անի, հա՛յր, կամ ի՞նչ միջոցով ստանա առաքինության շնորհներ»: Ծերն ասաց. «Եթե մեկը կամենա որևէ արհեստ սովորել, նա կմնա այդ արհեստը ուսուցանող վարպետի մոտ՝ հանդարտ համբերությամբ և իր անձը կխոնարհեցնի նրա առաջ և այդպես կսովորի: Այնպես էլ կրոնավորը. եթե թողնի մարդկային ամեն հոգս և արհամարհի դրանք, իր անձը խոնարհեցնի և իրեն ոչ միայն մեկնումեկին հավասար չկարծի, այլև ամենքից վատթար համարի իրեն, այդպես կատարելապես խոնարհվելով ու արհամարհելով իրեն՝ իր ջանքերի շնորհիվ կգտնի առաքինություն, և առաքինություններն իրենք կգան դեպի նա»:

54. Ասաց դարձյալ. «Եթե մեկը մեղանչի Աստծո դեմ, պարտավոր է իր անձը հեռացնել մարդկային սիրուց, մինչև համոզվի, որ իրեն սիրելի դարձրեց Աստծուն, որովհետև աշխարհի սերը խափանում է մեր մեջ Աստծո սերը»:

55. Ասաց դարձյալ. «Աղ չարված միսն այն աստիճան է նեխում, որ ամենքը ետ են քաշվում նրա գարշահոտությունից: Նեխածությունից թարախաորդեր են ծնվում, որպեսզի ուտելով՝ սպառեն այն, սակայն երբ աղ է լցվում նրա վրա, նեխումից առաջացած որդերը սատկում են, իսկ գարշահոտությունը դադարում է, որովհետև աղը որդերի սատկացնողն ու գարշահոտությունը վերացնողն է: Այսպես է լինում նաև այն կրոնավորի հետ, ով իր անձը տալիս է երկրավոր գործերի և ընկնում է կենցաղի դատարկ հոգսերի մեջ, իր խցում չի հանդարտվում, աղոթք չի ուղղում առ Աստված, պահք չի պահում և ճգնություններ չի անում, որոնք հոգևոր աղ են: Սրա համար էլ նեխում է, հոտում, փտում և լցվում որդերով, այսինքն՝ չար խորհուրդներով, այնքան ժամանակ, մինչև որ ետ է դառնում դրանցից դեպի կենդանի Աստծո և Նրա հրեշտակների կողմը՝ գարշահոտության և խենեշ խորհուրդների պատճառով այսպիսի ախտեր ամբարելուց հետո, որոնցով բռնված էր իր միտքը: Իսկ եթե ուզում ես իմանալ, թե ինչ են այդ որդերը, ապա պատկերացրու դրանք իբրև խավարում շրջող չար դևեր: Հենց այդպես էլ բնակվում են նրա մեջ խենեշ խորհուրդները, մինչև որ քայքայում և իսպառ ոչնչացնում են: Իսկ երբ անձը դիմի առ Աստված և հեռանա երկրային հոգսերից ու խռովքներից, հավատա ողջ սրտով, թե Աստված կարող է կերակրել իրեն, իր բոլոր հոգսերը գցի Նրա վրա, այնժամ նրան կառաքվի Աստծո աղը՝ Սուրբ Հոգին,

բարերար և մարդասեր Հոգին: Եվ երբ նրա վրա իջնի այդ քաղցր և ճշմարիտ Հոգին, նրանից կփախչեն բոլոր որդնանման ախտերը»:

56. Ասաց դարձյալ. «Կրոնավորը չպետք է զբաղվի ծաղկանոցներով, տնկիներով, ծառերի գեղեցկությամբ և պտղաբեր անտառներով, ո՛չ էլ զովասուն տաղավարներով, ականակիտ աղբյուրներով, այգիներով ու բազմապտուղ բանջարանոցներով. ո՛չ հոյակերտ տներ բաղձա, ո՛չ պահեստներ և ո՛չ էլ շուրջը սփռված ոչխարների հոտեր, արջառների նախիրներ և ձիերի երամակներ: Սրանցից ոչ մեկը չպետք է ձեռք բերի կրոնավորը, այսինքն՝ այն ամենը, ինչ երկրավոր է: Այլ պարտավոր է այնչափ աղքատ լինել, որ մինչև իսկ մարմնին անհրաժեշտ պիտույքների պակաս ունենա, բայց և գոհանա Աստծուց: Նաև՝ պետք է գիտակցի, որ հեռավոր ճանապարհ է գնում և պետք է օտարանա ամեն տեսակի կենցաղային հանգստից ու հոգսերից: Սակայն եթե կրոնավորն սկսի կենցաղային հոգսերի համար ջանալ և դրանց նվիրվել, չի կարող Աստծուն սիրելի լինել և ոչ էլ մարդկանց բամբասանքներից ու ատելությունից խուսափել: Եվ շատերի հետ կռիվների, խռովությունների և պատերազմների մեջ կներքաշվի զանազան խոսակցությունների, հանդերի, մարգերի ու այգիների սահմանների պատճառով: Իր գեղեցկաշեն տանը կկամենա մեծամեծներին հյուրընկալել և աղքատներին չի թողնի մտնել այնտեղ: Հոգ կտանի նաև այգիների մասին, ոչխարների հոտերի և նախիրների ու եզների մասին, մշակներ կվարձի և անդաստաններ կգնի, արոր կպատրաստի ու հողը կվարի, այգիների, ջրամբարների ու պարտեզների համար խռովքներ կապրի ու կմաշվի: Եվ եթե մեկը նրա այգու կամ տան ցանկապատը քանդի, նրա հետ կթշնամանա ու կկռվի: Եթե մեկը անասուն մտցնի նրա արտը, կամ մեկ ուրիշը որևէ վնաս հասցնի, ամենքի հետ կկռվի, կզայրանա և ողջ օրը կատաղած ման կգա: Բարկությամբ իշխանին օգնության կկանչի, ուղիներ կորոնի չարով հատուցելու իրեն վնաս պատճառողներին և տրտմեցնողներին, ծառա կդառնա ամեն տեսակ ախտերի և կգերեվարվի սատանայի կողմից: Ի՞նչ շահ ունեցավ մենակյացը, եթե ոչ՝ կորուստ. թեև հեռացավ երկրից, սակայն դարձյալ փարվեց երկրային գործերին, ինչպես և ասվում է. «Ոչ մի զինվորություն անող այս աշխարհի գործերով չի զբաղվում, որպեսզի զորապետին հաճո լինի» (Բ Տիմ. Բ, 4): Ուստի սկսենք հեռանա՛լ մարմնավոր գործերից, մոռանա՛նք նրա ինչքերն ու շահերը, արհամարհե՛նք այն ամենը, ինչը մեր միտքն ընկղմում է կորստյան խորխորատները, թեթևացնե՛նք նավերի և մեր հոգիների բեռը, որպեսզի դյուրությամբ

ուղղորդի մեր նավապետը, որ միտքն է, որպեսզի կարողանանք անցնել ախտերի ծովերը և հասնել երկնային նավահանգիստ»:

57. Ասաց դարձյալ. «Ինչպես լոգարանի դուռն են արագ բացում և փակում, որպեսզի ներսում պահեն գոլորշին, այդպես և կրոնավորի անձն է՝ եթե շատ խոսի, թեկուզ և լավ խոսի, իր ներքին ջերմությունը կհանգցնի, քանզի բոլորից լավը լռությունն է, որովհետև նա է իմաստության մայրը և բազում գիտությունների գանձարանը»:

58. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Հա՛յր, ինչպե՞ս պետք է հանդարտվել խցում»: Ծերն ասաց. «Խցում հանդարտվելն ա՛յս է, որ մարդ հանձնի իրեն Աստծո ձեռքը և մշտապես ընկնի Նրա առաջ, բարին գործի՝ որքան կարող է, կռվի չար խորհուրդների դեմ, որ թշնամին է դնում նրա մտքում: Այս է ճշմարիտ լռելն ու աշխարհից փախչելը»: Եղբայրն ասաց. «Եվ ի՞նչ է աշխարհը»: Ծերն ասաց. «Աշխարհը հոգու բնությանը հակառակ գործելն է, աշխարհը մարմնի կամքը կատարելն է, աշխարհը ինչ-որ երկրավոր անցողիկ բանի մասին խորհելն է, աշխարհը՝ առավել մարմնի, քան հոգու մասին հոգալն է, աշխարհը գործով պարծենալն է: Այս ամենը ես ինձնից չեմ ասում, որդյա՛կ, այլ Հովհաննես առաքյալն է ասում. «Մի՛ սիրեք աշխարհը և ոչ էլ՝ ինչ որ աշխարհին մեջ կա» (Ա Հովհ. Բ 15): Եվ մենակյացը պարտավոր է քննել իրեն մշտապես, թե արդյոք կարո՞ղ է անցնել նրանց միջով, ովքեր օդում են, կամ ազատվել նրանցից, քանի դեռ իր մարմնի մեջ է, քանզի ով պարտվում է որևէ ախտից, նրա ծառան է»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ պետք է անի մենակյացը»: Ծերն ասաց. «Պետք է հանդարտվի, իսկ հանդարտվելու համար այս երեք բաներն են անհրաժեշտ. նախ՝ Աստծո երկյուղը, երկրորդ՝ ողորմություն խնդրել Նրանից՝ անձանձիր, երրորդ՝ երբեք միտքը չկտրել Աստծուց»:

59. Ոմն եղբայր գնաց մի ծերի մոտ, որը նստում էր Ալեքսանդրիայի Տասներկու կոչվող վանքում: Նրա հետ էր նաև մի աշխարհիկ եղբայր, ով ծերին ասաց. «Մեզ խո՛սք ասա, հա՛յր, թե ինչպե՞ս ապրենք իրար հետ, որովհետև իմ այս եղբայրն աշխարհական է և կամենում է կրոնավոր դառնալ»: Ծերն ասաց. «Բարի գործ է անում, որդյա՛կ, նա, ով թողնում է աշխարհը և հնազանդվում Աստծուն: Նստեցե՛ք ձեր սենյակում, որտեղ կամենաք, և ստանձնե՛ք հանդարտություն, տքնություն և անդադար աղոթք, քանզի հուսացած եմ Աստծո շնորհին, որդյա՛կ, որ կառաքի իր պարգևները և կլուսավորի ձեր միտքը ճշմարտության գիտությամբ»:

60. Մի ծեր մենակյացի մասին ասում էին, թե երեսունչորս տարի ապրեց հանդարտությամբ, երկու օրը մեկ էր ճաշակում և բացարձակ անբարբառ լռություն պահպանեց մինչև կյանքի վերջ, իսկ եթե շատ կարևոր դեպք էր լինում, ձեռքերով և թվերով էր հայտնում այն: Սա ինքս տեսա Ելիոնի երկրում և մնացի նրա մոտ տասը տարի:

61. Ծերն ասաց. «Եթե մեկը կամենում է հանդարտվել, պետք է կա՛մ անապատում բնակվի, կա՛մ բազում եղբայրների միաբանության մեջ, որովհետև եթե որևէ բնակավայրին մոտ բնակվի, բազում հոգսեր ու խռովքներ կպատահեն նրան: Եվ եթե մեկն այնտեղ հյուր գա, ակամա ստիպված կլինի ընդունել նրան, քանզի չկա մեկ այլ տեղ, որտեղ նա կարող է հանգստանալ: Իսկ եթե այդ տեղն ընդարձակ լինի, թեկուզ և չընդունի նրան, միտքը չի դատապարտի նրան, քանզի մեկ այլ տեղ կարող է հանգիստ գտնել նա: Այսպես եղբայրների միաբանությունը պարիսպ և պահապան կլինի նրան, և նա հանգիստ կգտնի Քրիստոսի զորությամբ»:

62. Ծերն ասաց. «Բանտարկյալներն են, որ միշտ սենյակում նստում են մենակ, իսկ Աստծո հիշատակն այնտեղ Երկնքի Արքայությունն է, և այս է այդ խոսքը, որ ասում է. «Բանտում էի, և ինձ տեսության եկաք» (Մատթ. ԻԵ 36)*»:*

63. Ծերն ասաց դարձյալ. «Մարդ կա՝ հարյուր տարի նստում է խցում և այդպես էլ չի կարողանում սովորել, թե ինչպես պետք է նստել խցում»:

ԳԼՈՒԽ Գ

ՄՏՔԻ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՉՂԶՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՍՈՒՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աբբա Անտոնիոսն ասաց. «Ձեր աչքի առաջ ունեցե՛ք Աստծո երկյուղը՝ միշտ հիշելով մահը: Ատե՛ք աշխարհը և այն ամենը, ինչ կա նրա մեջ: Ատե՛ք մարմնական հանգիստը՝ հրաժարվելով աշխարհիկ կյանքից, որպեսզի Աստծո մեջ ապրեք, որ այս է պահանջելու մեզնից դատաստանի օրը: Քաղցե՛նք, ծարավե՛նք, մերկանա՛նք, հառաչե՛նք, պահե՛նք, հսկե՛նք և փորձե՛նք՝ թե արդյոք արժանի՞ ենք Աստծուն: Նեղություն սիրենք, որ Աստծուն գտնենք, արհամարհե՛նք մարմնավորները, որ մեր հոգիները ապրեն»:

2. Աբբա Եղիասն ասաց. «Ես երեք բանից եմ երկնչում. երբ իմ հոգին ելնի մարմնից, երբ հանդիպի Աստծուն և երբ պատասխանները դուրս գան ինձանից»:

3. Հայր Սիղվիանոսը նստած էր եղբայրները հետ. հանկարծ նա տեսիլք տեսավ և երեսի վրա ընկավ: Բազում ժամեր անց վեր կենալով՝ լաց եղավ: Եղբայրներն աղաչեցին և ասացին նրան. «Ի՞նչ եղավ քեզ, հա՛յր»: Իսկ նա լռությամբ միայն լալիս էր, և երբ շատ բռնադատեցին նրան, ասաց. «Եղբայրնե՛ր, ես դեպի դատաստան համբարձվեցի և տեսա բազում կրոնավորների, որ դեպի տանջանք էին գնում, և բազում աշխարհականների, որ դեպի հավիտենական կյանք էին գնում»: Եվ ճգնում էր ծերն ու այլևս չէր կամենում դուրս ելնել իր խցից: Եթե ստիպված էր լինում դուրս գալ, կնգուղով ծածկում էր իր երեսն ու ասում. «Ինչի՞ համար եմ ուզում տեսնել այս առօրյա լույսը, որից ոչ մի օգուտ չկա»:

4. Ծերն ասաց. «Ահ, քանի կպատահի հանդերձյալ աշխարհում՝ Աստծո Որդու գալստյան օրը, որովհետև հարությունից հետո մարդկանց հոգիները երկյուղից կելնեն ողջ աշխարհի վրա, ինչպես ասաց Տերը, և կասասնվեն հանդերձյալ դատաստանի առաջ»: Ծերն ասաց. «Ինչպես որ մեր ստվերն ենք ամենուր մեզ հետ տանում, այնպես էլ պարտավոր ենք լալու, զգուշանալու և արթուն մնալու, ուր էլ որ լինենք»:

5. Հանդգնության մասին ծերն ասաց. «Հանդգնությունը խորշակահարող հողմ է, որը ոչնչացնում է մենակյացի վաստակը. սակայն այժմ ծաղրի մասին լսի՛ր: Ծաղրը հեռու է վանում դառնակսկիծ հեծեծանքները, ծաղրը ո՛չ չինում է և ո՛չ էլ պահպանում, այլ կորստյան է մատնում և չինվածն է կործանում: Ծաղրը տրտմեցնում է Սուրբ Հոգին և անձին օգուտ չի բերում, մարմինն ապականում է, արիությունը՝ հալածում, ո՛չ մահվան հիշողությունն ունի և ո՛չ էլ դժոխքի խորհուրդը»:

6. Ծերերից մեկն ասաց. «Մենակյացի առաջին ապաշխարությունը դարձն է սնոտի հոգսերից, իսկ ով ծաղր և համարձակություն ցուցաբերի, կկորցնի ճշմարիտ վաստակը: Ծաղրն ու հանդգնությունը աղտեղի տիղմի մեջ են գցում ոչ միայն երիտասարդ մենակյացին, այլև ծեր: Ծաղրն ու հանդգնությունը ներքև են քաշում մենակյացին»:

7. Ոմն եղբայր հարցրեց Աբբա Անտոնիոսին և ասաց. «Ի՞նչ անեմ իմ մեղքերի հետ»: Ծերն ասաց. «Ով կամենում է փրկվել մեղքերից, հառաչանքներով միայն կազատվի դրանցից»: Նույն ինքը դարձյալ ասաց. «Լա՛ցն է այն ճանապարհը, որ ցույց տվեց մեզ Սուրբ Գիրքը: Մեր հայրերն ասացին. «Լացե՛ք, որովհետև դրանից բացի ուրիշ ճանապարհ չկա»: Եթե ընկնես մեղքի մեջ և ետ դառնաս դրանից, սկսես տրտմել և ապաշխարել, տե՛ս, մինչև մահվանդ օրը չդադարեցնես առ Տեր տրտմությունն ու հառաչանքը, որովհետև միգուցե դարձյալ նույն տիղմի մեջ ընկնես: Եվ հավատա, որ այսպիսի տրտմությամբ Աստծուն մոտ ես, որովհետև դա անձիդ համար երասան է և զգուշացնում ու ետ է պահում ընկղմվելուց: Իմացի՛ր, որ բոլոր չարիքներից առաջ, և մարդկության արարումից էլ առաջ՝ ամբարտավանությունը ծնվեց նախագյուտ դևի կամակոր մտքում, որի պատճառով էլ ինքն ընկավ»:

8. Հայր Արսենի մասին ասում էին, թե նրա մոտ՝ Սկյութիա, եղբայրներ եկան, իսկ նա չկարողացավ ընդունել նրանց՝ իր մեծ սգի և

տրտմության պատճառով, և եղբայրները տեսնելով այդ՝ զարհուրած ետ դարձան:

9. Մեռնելու վրա էր Արեթաս անունով ոմն փարանացի եղբայր, որը կրոնավորության ընթացքում փոքր-ինչ ծույլ էր եղել: Նրա շուրջ նստած հայրերից ոմանք տեսնելով, որ նա խնդությամբ և զվարթությամբ էր ելնում մարմնից, եղբայրների հոգևոր շինության համար հարցրին նրան. «Հավատա՛, եղբա՛յր, ամենքս էլ գիտենք, որ ոչ այնքան զորեղ ջանացող եղար ճգնության մեջ, իսկ այժմ ինչպե՞ս ես այդպիսի հոժարությամբ գնում Տիրոջ մոտ»: Փարանացի եղբայրն ասաց. «Հավատացե՛ք, հայրե՛ր, ճշմարիտ ասացիք, սակայն երբվանից մենակյաց դարձա, ո՛չ մեղանչած մարդու դատապարտեցի, ո՛չ էլ մեկի հանդեպ ոխ պահեցի ողջ օրը, իսկ հիմա կամենում եմ Աստծուն ասել. «Դո՛ւ ասացիր, Տե՛ր, «Մի՛ դատեք, որ չդատվե՛ք» (Մատթ. Է 1), *«Թողե՛ք, և կթողնվի ձեզ»* (Մատթ. Զ 14)*»: Եվ բոլորը, օգուտ քաղելով եղբոր խոսքերից, նրան ասացին. «Գնա՛ խաղաղությամբ, որդյա՛կ, դու և առանց վաստակի փրկվեցիր»:*

10. Մի ծեր ճգնավոր կար, որի սովորությունը և գործը այս էր. միշտ տխուր նստում էր իր խցում՝ դեմքը դեպի գետին խոնարհած, գլուխը շարժելով և հոգոց հանելով ասում էր. «Արդյո՞ք ինչ ես լինելու»: Այսպես էր անցկացնում իր կյանքի բոլոր օրերը: Հետո դարձյալ առժամանակ լռում էր, պարան էր հյուսում, ապա դարձյալ, գլուխը շարժելով, ասում. «Արդյո՞ք ինչ պիտի լինես»: Մի անգամ նրա մոտ եկավ մի եգիպտացի երիտասարդ եղբայր, ով մարտնչում էր պոռնկության դեմ, և աղաչեց ծերին աղոթք անել իր համար, որպեսզի իր միջից դուրս գա այդ պատերազմը: Ծերը աղոթք արեց և արժանավորապես աղաչեց Աստծուն նրա համար յոթ օր, իսկ ութերորդ օրը հարցրեց եղբորը. «Ինչպե՞ս է մարտդ, եղբա՛յր»: Եվ նա ասաց. «Վատ է, ո՛վ հայր, բնավ թեթևություն չզգացի»: Ծերը զարմացավ: Եվ ահա դիշերով ծերին երևաց սատանան և ասաց նրան. «Հավատա՛, ծե՛ր, առաջին իսկ օրը, երբ դու աղաչեցիր Աստծուն, ես նրանից հեռացա, սակայն նա մի առանձին դև ունի, և առանձին պայքար կա նրա որկորի մեջ: Ես նրա պայքարի հետ գործ չունեմ, այդ ինքն է իր դեմ մարտնչում. կուշտուկուռ ուտում է ու ննջում»:

11. Ասաց դարձյալ. «Ապաշխարողը պետք է մեկուսանա, մտորի, վշտանա, աշխարհիկ հոգսերից հեռու մնա, ոչ մեկին բեռ չդառնա, իր անձը արտաքսի և նեղի, քննի և հանդիմանի, անձկության մեջ լինի,

մշտապես դատապարտի իր անձը, հսկի և ցավագնած սրտով Աստծուն աղաչի և Նրա ողորմությունը խնդրի»:

12. Գնացինք Ալեքսանդրիայի Կանոպոն քաղաքից տասը մղոն հեռու և խոսեցինք ճգնասեր և համբերության շնորհն ունեցող մի մարդու հետ, որի անունը աբբա Թեոդորոս էր: Նա մեզ պատմեց Ալեքսանդրիայից դուրս՝ իր խցում բնակվող մի մարդու մասին, ով ստացել էր զղջման և սգի շնորհը: Մի օր՝ սրտի վշտանալու պահին, նրա մոտ հորդաբուխ արցունքներ հեղվեցին: Եղբայրը տեսնելով այս՝ իր մտքում ասաց. «Արդարև, սա նշան է, որ մոտեցել է իմ մահվան օրը»: Եվ երբ այս մտածեց, արտասուքն ավելի հորդացավ, իսկ նա, տեսնելով այդ, կրկին ասաց. «Արդարև, հասավ ժամանակը», և շարունակում էր ավելի ուժգին արտասվել: Մեծ օգուտ քաղելով ծերի պատմությունից, մենք հարցրինք նրան արտասվելու մասին, թե ինչո՞ւ երբեմն ինքնաբուխ է գալիս, իսկ երբեմն էլ նույնիսկ ջանքերը չեն օգնում արտասվել: Եվ ծերն ասաց. «Արտասուքը նման է ձմեռային անձրևի, իսկ մենակյացը մշակ է: Երբ տեսնի, որ անձրև է գալիս, պետք է շտապի և ջանա, որ դրանից ոչինչ չկորչի, այլ մտնի պարտեզ և ոռոգի այն: Քանզի, ասեմ ձեզ, որդյա՛կներ, լինում է անձրևային մի այնպիսի օր, որ ավելին արժե, քան ողջ տարվա անձրևները, որ սնուցում են բոլոր պտուղները: Ուստի, երբ իմանաք, թե եկել է, ջանացե՛ք, պահե՛ք և պարսպե՛ք ձեր անձերը՝ աղերսելով ամբողջ հոգով ու մտքով, քանզի չգիտենք՝ մեկ ուրիշ օր կգտնե՞նք այդ անձրևը»: Մենք դարձյալ հարցրինք նրան. «Հա՛յր, ինչպե՞ս մարդը պահպանի սուգը, երբ այն գա»: Եվ ծերն ասաց. «Ամենից առաջ այդ օրը և այդ ժամանակ ոչ մի մարդու մոտ չպետք է գնալ, որովայնը պետք է զսպել և չհպարտանալ, թե ողջ օրը սգում է, և տրվել աղոթքների ու ընթերցման: Սակայն երբ սուգը գա մեզ մոտ, նա կուսուցանի, թե ինչն է բխեցնում իրեն և ինչը՝ խոչընդոտում»: Եվ պատմեց մեզ հետևյալը. «Մի եղբոր գիտեմ, որ նստում էր խցում և պարան էր գործում: Երբ նրա արտասուքները գալիս էին, աղոթքի էր կանգնում, և իսկույն արցունքները դադարում էին: Հետո դարձյալ նստում էր և պարանը հյուսում, մտքերը հավաքում, և նրանք դարձյալ գալիս էին: Ընթերցելիս նույնպես՝ երբ գալիս էր զղջումը, վեր էր կենում, և զղջումը ցնդում էր, իսկ հենց վերցնում էր գիրքը, զղջումը դարձյալ գալիս էր: Եվ այնժամ եղբայրն ասաց. «Ճշմարիտ ասացին հայրերը, թե սուգը վարդապետ է, քանզի նա է ուսուցանում մարդուն օգտակար բաները»:

13. Այս ծերը մեզ պատմեց նաև հետևյալը. «Իմ վարդապետը սիրում էր հաճախակի գնալ անապատի խորքը և այնտեղ մնալ: Մի օր ես նրան հարցրի, թե. «Ինչո՞ւ ես այդպես փախչում անապատի խորքերը. չէ՞ որ ով մոտ է բնակվում աշխարհին, նա տեսնում է և՛ վիշտ, և՛ փորձություն, և զգուշանում է դրանցից, ուստի ավելի մեծ վարձ է ստանում Աստծուց»: Վարդապետն ինձ ասաց. "Հավատա՛ ինձ, որդյա՛կ, նույնիսկ եթե մարդ Մովսեսի չափին հասնի և գրեթե Աստծո որդի լինի՝ աշխարհից օգուտ չունի: Սակայն ես Ադամի որդի եմ և իմ նախահոր նման՝ երբ տեսնեմ մեղքերի պտուղը, իսկույն կցանկանամ այն, կվերցնեմ, կուտեմ և կմեռնեմ: Սրա համար էին մեր հայրերը փախչում անապատ և այնտեղ սպանում որովայնամոլությունը, որպեսզի կերակուր չգտնեին, որը ախտեր է ծնում"»:

14. Ասաց դարձյալ. «Եթե մարդը կամավոր իր անձը նեղություններին տա հանուն Աստծո, հավատում եմ, որ Աստված նրան մարտիրոսների շարքին կդասի, քանզի Աստված նրանց արտասուքը նրանց արյան փոխարեն կընդունի»:

15. Ասաց դարձյալ. «Բոլոր մեղքերը մարմնից դուրս են, իսկ պոռնիկն իր մարմնի մեջ է մեղանչում, քանզի իրենից է ելնում պղծությունն ու պղծում իրեն: Այսպես էլ բոլոր բարի գործերը, որ անում է մարդը, մարմնից դուրս են, բայց երբ արտասվի, իր հոգին ու մարմինը կմաքրի, քանզի ի վերուստ վայր հոսող արտասուքը լվանում ու սրբում է ողջ մարմինը»:

16. Աբբա Ղոնգինոսի խցին մոտ բնակվող մի եղբայր բազմիցս էր վհատության մեջ ընկնում, քանզի մեծամեծ մեղքերի մեջ էր: Հետո սգում էր, և քանի որ չգիտեր՝ ինչ անել, ասում էր. «Ինչ եղավ, եղավ», իսկ խորհուրդները նրան ասում էին. «Բայց չարով եղավ, սակայն եղավ»:

17. Հայրերից մեկը ճգնում էր Ռայիթում, այն տեղում, որ կոչվում է Քաղկաս: Եկավ նրա մոտ ծերերից մեկը և ասաց նրան. «Աբբա՛, երբ մի եղբոր որևէ գործով տեղ եմ ուղարկում, տրտմում եմ ու մտահոգվում»: Աբբան նրան ասաց. «Երբ ես ինձ սպասարկող եղբորը ուղարկում եմ ինձ անհրաժեշտ բաների համար, նստում եմ դռան մոտ, իսկ երբ խորհուրդներս հարցնում են՝ արդյոք ե՞րբ կգա եղբայրը, ես ասում եմ. «Իսկ եթե նրանից առաջ գա մեկ այլ եղբայր՝ հրեշտակը, որ տանելու է քեզ Տիրոջ մոտ, ի՞նչ կլինի արդյոք»: Այսպես նստելով՝ դուրս եմ նայում, հոգոց հանում, մեղքերս լալիս և ասում. «Ո՞ր եղ-

բայրն առաջինը կգա և ներս կմտնի՝ ներքևի՞նը, թե՞ վերևինը»: Եվ սրանից մեծ օգուտ քաղած՝ ծերի մոտից գնաց այն եղբայրը և այդուհետ ինքն էլ էր նույն կերպ վարվում:

18. Հայր Հովսեփն ասաց, թե հայր Իսահակը պատմում էր, թե. «Մի անգամ նստած էի հայր Պիմենի մոտ, երբ տեսա նրան հափշտակության մեջ: Քանի որ նրա մոտ մեծ համարձակություն ունեի, ընկա նրա առաջ և աղաչեցի նրան ասել ինձ, թե ո՞ւր էին իր խորհուրդները: Եվ նա հարկադրված ասաց. «Իմ խորհուրդներն այնտեղ էին, որտեղ սուրբ Մարիամն էր և լաց էր լինում Տիրոջ խաչի մոտ: Ես էլ էի կամենում այդպես լաց լինել:

19. Երանելի Մակարիոսի աշակերտ հայր Պափնոտիոսը ասում էր, թե ծերը մի անգամ ասաց. «Երբ ես մանուկ էի, այլ մանուկների հետ եղներն էի արածեցնում: Մի անգամ նրանք գնացին իրենց համար սեխ կտրելու. մինչ գնում էին, սեխերից մեկն ընկավ: Եվ ես վերցրի այն ու կերա: Այժմ երբ հիշում եմ այդ, նստում ու լաց եմ լինում»:

20. Հայր Հակոբոսն ասաց. «Ինչպես ճրագն է լուսավորում խավար տունը, այնպես էլ Աստծո երկյուղն է մտնում մարդու սիրտը և լուսավորում այն, ուսուցանում է բոլոր առաքինություններն ու Աստծո պատվիրանները»:

21. Սկյութիայում ոմն հայր Ապոլոնի մասին ասում էին, թե նախկինում գազանաբարո հովիվ էր եղել. տեսնելով ամայի վայրում մի հղի կնոջ՝ սատանայից դրդված ասել էր. «Կամենում եմ տեսնել, թե ինչպես է պտուղը բնակվում նրա որովայնում»: Պատռել էր կնոջ որովայնը, տեսել մանկանը, հետո զղջալով եկել էր Սկյութիա և հայրերին պատմել, թե ինչ ոճիր է գործել: Եվ լսելով, թե ինչպես են սաղմոսում և ասում. «Մեր կյանքի տարիների թիվը յոթանասուն է, առավելը՝ ութսուն, այն էլ՝ ցավերով ու հեծությամբ» (Սաղմ. ՁԹ 10), *ասաց նրանց. «Ահա քառասուն տարեկան եմ և մի ժամ անգամ աղոթքի չեմ կանգնել, եթե սրանից հետո ապրեմ ևս քառասուն տարի, չեմ դադարի Աստծուն աղաչել, որ թողություն տա իմ մեղքերին»: Քանի որ ձեռագործ անել չգիտեր, հանապազ աղոթքի էր կանգնում և ասում. «Տե՛ր, Տե՛ր, իբրև մարդ մեղանչեցի Քո առաջ, իբրև Աստված թողությո՛ւն տուր իմ մեղքերին»: Եվ նա օր ու գիշեր աղոթքների ու խոկման մեջ էր: Ոմն եղբայր, որ նրա մոտ էր բնակվում, լսում էր, թե նա ինչպես էր ասում. «Ձանձրացրի քեզ, Տե՛ր, թողությո՛ւն չնորհիր ինձ, որ գեթ փոքր-ինչ հանգստանամ»: Եվ կատարվեց նրա կամքը, որովհետև*

Աստված ներեց նրա բոլոր մեղքերը, ինչպես նաև՝ կնոջ մահը, բայց մանկան առնչությամբ նրա կամքը չկատարվեց: Ծերերից մեկը նրան ասաց. «Մանկան մեղքն էլ քեզ ներեց Աստված, սակայն Իր կամքով թողեց քեզ տքնության մեջ, քանզի դա օգտակար է քո հոգուն»:

22. Ոմն եղբայր հարցրեց հայր Ամոնին և ասաց. «Ինձ կյանքի խո՛սք ասա, հա՛յր»: Հայր Ամոնն ասաց. «Գնա՛ և քո խորհուրդները դարձրո՛ւ բանտարկված՝ չարագործների պես, որոնք մարդկանց հարցնում են, թե ե՞րբ կգա կամ ո՞ւր է դատավորը, իսկ սպասման երկյուղից դողում են ու զարհուրում: Այդպես պետք է կրոնավորը սպասի ու հանդիմանի իր հոգին և ասի. «Վա՜յ ինձ, ինչպե՞ս եմ կանգնելու Քրիստոսի ատյանի առաջ և ի՞նչ պատասխան եմ տալու»: Այսպե՛ս խորհիր հանապազ և կկարողանաս ապրել»:

23. Մի անգամ հայր Պիմենը անցնում էր Եգիպտոսով, երբ տեսավ մի կնոջ, որ նստած գերեզմանի վրա՝ կոծում և դառնորեն լաց էր լինում: Ծերն ասաց. «Եթե այս աշխարհի բոլոր ցնծաձայն տավիղներն հավաքվեն այստեղ, չեն կարող նրա անձը կտրել այդ սգից: Այսպես և մենակյացը պետք է մշտապես սգա իր վրա»:

24. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչպե՞ս են գալիս մարդու արտասուքները, հա՛յր»: Եվ ծերն ասաց. «Արտասուքը սովորություն է, որդյա՛կ, որը անարատ է պահում նրանց անձերը, ովքեր փնտրում են այն ամենայն ժամ, քանզի փնտրողի միտքը ամեն վայրկյան հիշեցնում է նրան իր գործած մեղքերը, ինչպես նաև՝ դժոխքն ու գերեզմանը: Այսպիսի թշվառ ու ողորմելի մտածությամբ խորհում է նաև իր ծնողների մասին, թե ինչպես գնացին կամ ուր են այժմ»: Եղբայրը հարցրեց. «Օգտակա՞ր է կրոնավորին իր ծնողներին հիշելը»: Ծերն ասաց. «Ում հիշատակը որ արթնություն է բերում անձիդ, աներկյուղ զորացի՛ր նրանով: Եվ երբ արտասուքներդ գան, և խոցոտված ճմլվես նրանցից, ինչ էլ որ եղած լինի՝ կմխիթարվես, որովհետև ես մի ճգնավոր եղբոր տեսա, ով, խիստ սիրտ ունենալով, խփում էր ինքն իրեն և ցավերից արտասվելով՝ հիշում էր իր մեղքերը»:

25. Դարձյալ ասաց. «Եթե Տերը քեզ ողբ պարգևի, դու քո մտքում մի՛ կարծիր, թե մեծ բան ես դարձել, որովհետև երանելի են նրանք, որոնց սուգ պետք չէ: Եթե Աստված տեսնի, որ մարդը պարծենում է արտասուքներով, դրանք ետ կվերցնի նրանից, որից հետո նրա սիրտը կխստանա և անզեղջ կմնա: Սակայն երբ տեսնես՝ Տերը քեզ արտասուքներ է տալիս, այնժամ թո՛ղ քո ձեռագործը և սկսի՛ր ողբալ՝ հույ-

սով. ո՞վ գիտե, գուցե մերձեցել է քո մահվան օրը, և դրա համար Տերը շնորհեց քեզ արտասուք, որպեսզի դրանով ողորմության արժանանաս Նրա կողմից: Սատանան առավել ջանում է բռնել մարդուն վախճանի ժամին, սակայն Աստված այդ ժամին բազում միջոցներ է գործադրում փրկելու մարդուն»:

26. Դարձյալ ասաց. «Երբ սատանան տեսնում է, որ Աստված քեզ ողորմելով՝ արթնություն է տվել հոգուդ, այնժամ քեզ մտցնում է քո սենյակը՝ գործի համար, բռնադատում է և ասում. «Գործի՛ր այս գործն այսօր, որովհետև անհրաժեշտ է», կամ՝ «Գնա՛ այսինչի մոտ», կամ՝ «Տե՛ս այսինչ բանը»: Այս ամենն անում է, որպեսզի չթողնի քեզ քո լռության մեջ և հափշտակի քո հառաչանքների քաղցրությունը: Եվ եթե սատանայի ծառաները իմանան, որ դու հոժարությամբ երկարատև աղոթքների մեջ ես մնում, այնժամ քեզ կփորձեն կա՛մ մարդկանցից, կա՛մ դևերից եկող փորձություններով, որովհետև այն ժամանակ է սատանայի պայքարը ուժեղանում, երբ մարդը բարին է գործում, և բարկության զենքերն օգտագործելով՝ մթագնում է խոնարհ անձի մտքի արթնությունը, քանի որ բարկությունը բոլոր ախտերից զորավոր է, քանզի մարում է զղջումն ու խաթարում է անձի խոնարհությունը: Պատահում է նաև, որ հանդարտության և սգի մեջ նստելու ժամանակ քեզ շուրջանակի պաշարում են դիվային խորհուրդները: Այդ պահին աղոթքի կանգնի՛ր և շրջի՛ր սաղմոսելով. «Աստված հարություն առավ, և ցրվեցին Նրա բոլոր թշնամիները» (Սաղմ. ԿԷ 2)*: Եվ իսկույն կհեռանան քեզանից»:*

27. Ռայիթայից մեզ մոտ եկած եղբայրները պատմեցին, թե մի ողբացող ծեր կար, որ նստում էր այրում, և Նա այնքան արթուն էր մտքով, որ ուր էլ գնար, ամեն քայլափոխի քննում էր իր անձն ու ասում. «Ի՞նչ է, եղբա՛յր, որտե՞ղ ենք մենք հիմա»: Եվ եթե իր մտքերը գտնում էր աղոթելիս և սաղմոսելիս, ասում էր. «Ահա՛ բարի է», իսկ եթե բռնացնում էր իրեն սնոտի խորհուրդներով տարված՝ անարգում էր իրեն, նախատում և ասում. «Արի՛ այստեղ և քո գործերի՛ն հետևիր, չա՛ր ծեր»: Այսպես խոցոտում էր իրեն, խփում էր իր երեսին և ասում. «Եղբա՛յր, մերձ է քո գնալու ժամանակը, սակայն դեռ միջնորմ կա քո և Աստծո միջև»: Մի օր հայտնվեց նրան սատանան և ասաց. «Ինչո՞ւ ես տառապում, քանի որ, հավատա՛ ինձ, չես փրկվելու»: Ծերն ասաց. «Քո ի՞նչ գործն է իմ փրկվելը կամ չփրկվելը: Թեկուզ չփրկվեմ էլ, դժոխքում քո գլխի վրա կկանգնեմ և քեզ իմ ոտքերի տակ դատապարտված կտեսնեմ»:

28. Եվ հայր Արսենի մասին էլ էին ասում, թե իր կյանքի բոլոր օրերին, երբ նստում էր ձեռագործի, իր ծնկների վրա սպունգ ուներ, որով չորացնում էր իր աչքերից հոսող արտասուքները:

29. Հայր Եսայիասի աշակերտը, տեսնելով նրան ծանր հիվանդության մեջ, սաստիկ տրտմեց: Հայր Եսայիասն ասաց. «Մի՛ տրտմիր, սրանով ենք կարողանում հիշել դատաստանի օրը. իսկ մարմինները նրա համար են առողջություն խնդրում, որ Աստծուց հեռանան, որովհետև ոռոգվող ծառը երբեք չի գոսանում և անպտուղ չի լինում»: Իսկ սուրբը Խորհրդի մասին ասում էր. «Վա՜յ մեզ, ո՞վ է նրան արժանի, քանզի քահանան «ի Սրբություն Սրբոց» է կանչում»: Եվ ասաց. «Վա՜յ ինձ, վա՜յ, քանզի իմ մատնիչներն իմ առջևից են գնում, և չեմ կարող իմ մեղքերն ուրանալ: Վա՜յ ինձ, վա՜յ, ինչպե՞ս կարող եմ հանդիպել Աստծուն և Նրա սրբերին: Վա՜յ ինձ, վա՜յ, քանզի իմ և ոչ մի անդամը սուրբ չէ Նրա առաջ»:

30. Մի անգամ եղբայրները ճաշում էին միասին, երբ նրանցից մեկը ծիծաղեց: Հայր Հովհաննեսն սկսեց լաց լինել և ասաց. «Օ՜հ, արդյոք ի՞նչ կա քո սրտում, որ ծիծաղեցիր, երբ տեսար, որ եղբայրները ճաշում են, մինչդեռ պետք էր ահավոր ատյանից վախենալ՝ ինչպես ավազակը, որ բանտ է գցված և դողում է դատավորից: Եվ ինչպես Աբրահամը նախապես գերեզման ստացավ Ավետյաց երկրում (Ծննդ. ԻԳ 4-11), *այնպես էլ մենք՝ մեր սուգն ու ողբը»:*

31. Հայր Սիղվիանոսին հարց տրվեց, թե՝ ինչ անենք մեր քնի, ծուլության ու անզգջության հետ, քանզի մեզ գիշերը չեն թողնում առանց ձայնի ու երգելու աղոթել: Եվ նա ասաց. «Երգով պաշտամունք մատուցելը հպարտություն է ծնում, խստասրտություն և մտքերի մթագնում, որովհետև ասում է. «Ես պաշտում եմ, իսկ նա՝ ոչ, իմ ձայնն ու բառը քաղցր է, նրանը՝ ոչ»: Եթե կամենում ես զղջում և արտասուքներ ստանալ, մի կողմ դի՛ր երգն ու ձայնը, իսկ երբ Աստծո առաջ աղոթքի կանգնես, քո բերանը թող անմռունչ սաղմոսի, իսկ միտքդ թող քննի Խոսքի զորությունը: Եվ միշտ իմացի՛ր, որ Աստծո առաջ ես կանգնած, Ով սրտերն ու խորհուրդներն է քննում, և հիշի՛ր քո մեղքերը, մահն ու դատաստանը: Գիշերը, երբ վեր կենաս, դուրս արի՛ և շրջի՛ր՝ Աստծուն օրհնելով, «Հայր մեր» ասելով, ապա մտի՛ր սենյակ և անձայն կատարի՛ր կանոնը»: Եղբայրն ասաց. «Ես ամբողջ ժամանակ ութ ձայնով կատարեցի սաղմոսը»: Ծերն ասաց. «Դա անզգջություն է ծնում. հիշի՛ր սուրբ հայրերին, որ նրանցից շատերը ամուսնությունից եկան, նրանցից ոմանք ո՛չ Գիրքը գիտեին, ո՛չ ձայն ունեին, ո՛չ

սաղմոսներ գիտեին, բայց և այնպես հաճո եղան Աստծուն և բազում զորություններ գործեցին, ինչպես Պողոս Պարգամիտը, մյուս Պողոսը, Անտոնիոսը, Պամբոն և ուրիշ շատերը, ովքեր ո՛չ երգով և ո՛չ էլ քաղցրաձայնությամբ էին նշաններ ցույց տալիս: Երգով պաշտամունք մատուցելն աշխարհի եկեղեցիներինն է և ոչ թե՝ անապատականներինը: Եվ երկնավորների մասին էլ գրված չէ, թե ուժ ձայնով են պաշտում, այլ գրված է, թե նրանց մի մասը «Սուրբ, սուրբ, սուրբ» են ասում, ոմանք՝ «Ալելուիա», մի մասն էլ՝ "Օրհնյալ է Տիրոջ փառքն Իր տեղում"»:

32. Ոմանք եկան հայր Փիլիկիոսի մոտ և ասացին. «Մեզ խոսք ասա՛, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Նախկինում ծերերից խոսք էին խնդրում գործադրելու համար, և Աստված խնդրողների համար ծերերին խոսք էր տալիս, բայց այժմ ծերերի մոտ խոսք չկա, որովհետև ոչ ոք գործադրելու համար չի խնդրում, այլ՝ գիտենալու, որպեսզի իրեն գիտուն ցույց տա»:

33. Ծերեր Ովրն ու Թեոդորոսը կավ հունցեցին խրճիթը ծեփելու համար, ապա միմյանց ասացին. «Եթե Աստված տեսնի և կանչի, ի՞նչ պետք է անենք»: Եվ սկսեցին լաց լինել ու թողեցին խրճիթ ծեփելը:

34. Ոմն պատանի ուզում էր կրոնավոր դառնալ, սակայն նրա այրի մայրն արգելում էր նրան: Բայց և այնպես նա կոտրեց մոր դիմադրությունը, գնաց և դարձավ մի ծույլ կրոնավոր: Մոր մահից հետո նրան նույնպես մահացու ցավ դիպչեց, և նա տեսիլքի մեջ տեսավ իրեն տանջանքի վայրում, որտեղ իր մայրն էլ էր և ասաց իրեն. «Այս ի՞նչ բան է, որդյա՛կ, դու է՞լ ես այստեղ տանջվում. ո՞ւր մնացին քո խոսքերը, որ ասում էիր ինձ, թե կամենում ես քո հոգին փրկել»: Եվ նա չկարողացավ պատասխան տալ, սակայն հանկարծ վերևից ձայն եկավ, թե՝ «Դրան չկանչեցի, այլ դրան անվանակից ծերին»: Նա զարթնեց ու առողջացավ, իսկ այն համանուն ծերն իրոք վախճանվեց: Դրանից հետո նա այնպիսի տքնաջան կյանքով ու ճգնությամբ էր սգում գիշեր ու ցերեկ, որ եղբայրներն աղաչում էին նրան՝ գոնե մի քիչ հանգստանա, որպեսզի խելացնորության չհասնի, սակայն նա չէր լսում նրանց՝ ասելով. «Եթե իմ մորը չկարողացա պատասխան տալ, հապա իմ Տեր Արարչի առաջ ի՞նչ պետք է անեմ ես՝ հեղգս»: Եվ տեսնողներից մեկն ասաց. «Եթե Աստված Ադամի որդիներին անմահություն չհագցներ Իր ահավոր գալստյան ժամանակ, և այժմյան կյանքով լինեին, ապա անասելի երկյուղի սոսկումից վերջին օրը՝ երկրորդ գալստյանը, մսեղենների հոգիները կքաղվեին երկնային Դատավորի անհանդուրժելի

երևումից, երկնքի ու երկրի և այն մեծ հրապարակի սասանումից, ուր ի մի հավաքված կլինեն ադամորդիները՝ Ադամից մինչև աշխարհի վախճանը եղածները, և անթիվ երկնային զորքերը: Եվ մենք պարտավոր ենք ապրել՝ գիտակցելով, որ ամեն ինչի համար հաշիվ ենք տալու»:

35. Մի կրոնավորի ծիծաղը տեսնելով՝ ավագ կրոնավորն ասաց. «Աստծո և երկնքի ու երկրի առաջ հաշիվ ես տալու խորհուրդներիդ, խոսքերիդ ու գործերիդ համար, իսկ դու այդպես անհոգ ծիծաղո՞ւմ ես»:

36. Ոմն ծեր ասաց. «Ինչպես որ պոռնիկն է իր մարմնի մեջ մեղանչում, այնպես էլ արտասվողը ինքն իր մեջ պտղաբերում է Աստծու համար: Իսրայելի որդիները տառապեցին քառասուն տարի և հետո մտան Ավետյաց երկիր. այսպես պետք է տքնել, մինչև որ Տերը տա այդ շնորհը, և հնարներով իր մեջ լաց առաջացնել, ապա այն ուղղել դեպի մեղքերը, ինչպես մշակը, որ ուր կամենա, կտանի ջուրը և կոռոգի»:

37. Ոմն եղբայր բնակվում էր միաբանությունում և սատանայի ներգործությամբ հաճախակի էր ընկնում պոռնկության մեջ: Եվ համբերելով՝ բռնադատում էր իրեն չթողնել կրոնավորությունը, և աղոթքը սկսելուն պես հառաչանքով աղաչում էր Աստծուն և ասում. «Տե՛ր, տեսնում ես իմ նեղությունը. բռնադատի՛ր ինձ, Տե՛ր, կամենամ թե չկամենամ՝ փրկի՛ր ինձ, Տե՛ր, քանզի ես՝ որպես հող, մեղքն եմ սիրում, իսկ Դու՝ որպես Աստված և որպես ամենազոր, արգելի՛ր ինձ: Եթե արդարին ողորմես՝ մեծ բան չէ, եթե սրբերին փրկես՝ հրաշք ու զարմանք չէ, քանզի նրանք արժանի են ողորմության: Ինձ՝ անարժանիս, Տե՛ր, սքանչացրո՛ւ Քո ողորմությամբ, քանզի աղքատը Քո հույսին է թողնված, իսկ որբի օգնականը Դո՛ւ ես»: Այսպես էր ասում մշտապես՝ ընկներ թե չընկներ: Եվ մի գիշեր էլ, ըստ սովորության ընկնելով մեղքի մեջ, վեր կացավ նույն կերպ և սկսեց սաղմոսել: Իսկ դևը, զարմացած նրա հույսի և բարի հանդգնության վրա առ Աստված, կանգնեց նրան դեմ հանդիման՝ մինչ նա սաղմոսում էր, և ասաց նրան. «Ինչպե՞ս ես համարձակվում կանգնել Աստծո առաջ կամ Նրա անունը տալ»: Եղբայրը նրան ասաց. «Իմ խուցը դարբնոց է. մեկ դու ես հարվածում, մեկ՝ ես: Մինչև մահ պետք է համբերեմ՝ մարտնչելով քո դեմ, մինչև որ հասնեմ վերջին օրվան: Երդվելով հավատացնում եմ քեզ, Նա գիտե, որ եկավ մեղավորներին ապաշխարությամբ փրկելու, չե՛մ դադարելու Աստծո առաջ կանգնել՝ քո դեմ պայքարելու համար, մինչև որ դու դադարես իմ դեմ մարտնչել: Տեսնենք, թե ո՛վ

կհաղթի՝ դո՞ւ, թե՞ Աստված»: Դևը լսելով այս՝ ասաց. «Այսուհետև չեմ մարտնչի քո դեմ, որպեսզի քո իսկ համբերությամբ քեզ համար պսակ չպատրաստեմ»: Եվ այդ օրվանից հեռացավ նրանից: Ահա թե որքան բարի է համբերությունը, եթե մարդը չվհատվի, թեկուզ և փորձության, պատերազմի կամ մեղքի մեջ ընկնի: Եղբայրը դրանից հետո զղջման գալով՝ նստում և լաց էր լինում իր մեղքերը, իսկ երբ լաց էր լինում, նրա խորհուրդները նրան ասում էին, թե՝ բարի բան ես անում: Իսկ նա իր խորհուրդներին պատասխանում էր. «Զուսենայի այդպիսի բարին, քանզի ի՞նչ պետք է Աստծուն, որ մարդ կորցնի իր հոգին և նստի սուգ անի դրա համար, և ի՞նչ իմանա՝ կփրկվի՞ հետագայում իր հոգին, թե՞ ոչ»:

38. Մեկ այլ եղբոր, որ առանձին նստում էր նույն վանքում, ամենօրյա աղոթքն այս էր. «Տե՛ր, քանի որ Քեզանից չեմ երկնչում, ուղարկի՛ր ինձ հրափայլ բոց կամ այլ նեղություն, հիվանդություն կամ դև, որպեսզի գոնե այդպես երկյուղի իմ կորուսյալ հոգին»: Այսպես էր ասում և սաստիկ աղաչում էր Աստծուն. «Գիտեմ, որ անհնար է թողություն տալ ինձ, Տե՛ր, քանզի անթիվ են իմ մեղանչումները Քո առաջ, սակայն հանուն Քո բազում գթության՝ գեթ մի մասին թողությո՛ւն տուր, իսկ եթե դա անհնար է, տանջանքներով ինձ՝ այստեղ, ոչ թե այնտեղ խրատի՛ր, իսկ եթե դա ևս անհնար է, հատի՛ր ինձանից դրանց մի մասը և թեթևացրո՛ւ ինձանից այնտեղի տանջանքների մասը: Այժմվանից իսկ սկսի՛ր խրատել ինձ, սակայն ո՛չ Քո բարկությամբ, Տե՛ր, այլ՝ Քո մարդասիրությամբ»: Այսպես տարին բոլոր ժուժկալելով, սրտամաշ լինելով և անդադար Աստծուն աղոթելով, պահեցողությամբ և մեծ խոնարհությամբ՝ մտածում էր ու ասում. «Ի՞նչ է այն խոսքը, որ Հիսուսն ասաց. «Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ. Ե, 4): Մի օր, երբ նա նստած գետնին՝ սգում էր ըստ սովորության, տրտմությունից քուն մտավ, և նրան երևաց Քրիստոս և զվարթ ձայնով ասաց. «Ի՞նչ է պատահել, մա՛րդ, ինչո՞ւ ես լալիս»: Եվ նա Տիրոջն ասաց. «Լալիս եմ, քանզի ընկա, Տե՛ր»: Հիսուս նրան ասաց՝ վե՛ր կաց: Նա, որ ընկած էր, պատասխանեց. «Չեմ կարող, Տե՛ր, եթե ձեռքդ չտաս ինձ»: Եվ Հիսուս, մեկնելով ձեռքը, բարձրացրեց նրան և դարձյալ զվարթությամբ ասաց. «Դո՛ւ, մա՛րդ, ինչո՞ւ ես լաց լինում և տրտմում»: Եղբայրը նրան ասաց . «Տե՛ր, չե՞ս կամենում, որ տրտմեմ ու լաց լինեմ, որ այնքան տրտմեցրի քեզ»: Այնժամ Տերը մեկնեց իր ձեռքը դեպի նա, ափը դրեց նրա սրտին, օծեց և ասաց. «Մի՛ խռովվիր, Աստված կօգնի քեզ, քանի որ դու տրտմեցիր: Ես նույնպես

այլևս չեմ տրտմի քեզ վրա, քանզի Իմ արյունը տվեցի քեզ համար, որքա՜ն առավել ևս կտամ Իմ ողջ մարդասիրությունը տառապող հոգուն»: Եվ սթափվելով այդ տրտմությունից՝ եղբայրն իր սիրտը գտավ ուրախությամբ լցված և հավատաց, որ Աստված իրեն ողորմություն արեց: Սրանից հետո ապրեց հանապազօրյա մեծ խոնարհությամբ՝ գոհանալով Աստծուց:

39. Դանիելի աշակերտ Եղպիդորոս Սկյութացին պատմեց հետևյալը. «Սկյութապոլիս քաղաքից մեկը, ով բազում չարիքներ էր գործել և իր անձը շաղախել անհամար մեղքերով, զղջաց Աստծո առաջ և սկսեց դատապարտել իր գեխությունը: Եվ հրաժարվելով աշխարհից՝ գնաց անապատ և մի ձորում իրեն խուց շինեց՝ հոգ տանելով իր հոգու մասին: Ծանոթներից ոմանք, գիտենալով նրա կենալու վայրը, սկսեցին նրա համար հաց, արմավ և այլ անհրաժեշտ բաներ տանել: Իսկ երանելին, երբ տեսավ իրեն հանգստավետության մեջ, իր անձին ասաց. «Ո՛չ, եղբա՛յր, քավ լիցի, ոչ մի բարի բան չենք գործել, իսկ այս հանգիստը հանդերձյալ հանգստից կզրկի մեզ, և ես սրան արժանի էլ չեմ»: Եվ թողեց իր խուցն՝ ասելով. «Գնա՛, ա՛նձ իմ տառապյալ, դեպի նեղություն և անձկություն, քանզի մենք պետք է անասունների խոտ ուտենք, որովհետև անասունների գործեր կատարեցինք»: Եվ վերցնելով մի փոքրիկ խաչ, մի հրավառելիք ու մի հնոտի քուրձ՝ ցերեկները շրջում էր թռչունների ու անասունների հետ, իսկ գիշերները, մտնելով անտառ, հենվում էր ծառին և մինչև առավոտ այս էր ասում. «Ո՛վ ինձ Ստեղծողդ, ողորմի՛ր ինձ»: Իսկ երբ կերակուրի կարիք էր ունենում, անտառում պտուղներ էր քաղում և փոքրիկ կաթսայի մեջ եփելով՝ լցնում էր ժայռերի վրա գոյացած խոռոչի մեջ և ուտում: Նա շինեց նաև գետնափոր մի խորշ, ուր հավաքած բանջարն էր պահում: Եվ այսպիսի տքնությամբ մնաց տասներկու տարի: Իսկ երանելի Պիմենը տեսավ նրա հոգին մարտիրոսների դասում, քանզի Տերը արդարություն է շնորհում զրկյալներին»:

40. Ոմն ճգնասեր եղբայր օտար տեղից եկավ և բնակվեց Սինա լեռանը՝ մի առանձին խցում: Եվ երբ առաջին օրը մտավ այնտեղ, իրենից առաջ այնտեղ բնակվածի կողմից գրված մի տաշեղ գտավ. «Մովսեսի եղբայր Թեոդորոսն է. ահավասիկ կա՛մ և վկայո՛ւմ եմ»: Եվ եղբայրը, ողջ օրը տաշեղն իր առջև դնելով, հարցնում էր գրողին՝ իբրև կենդանի արարածի. «Ո՞ւր ես արդյոք այժմ, ո՛վ մարդ, որ ասել ես, թե՝ ահավասիկ կամ և վկայում եմ: Արդյոք ո՞ր աշխարհում ես այս ժամին, արդյոք ո՞ւր է այն ձեռքը, որ գրել է»: Եվ ողջ օրն այսպես

անելով ու գերեզմանը հիշելով՝ նստում էր սգալով: Նրա ձեռագործը գրչությունն էր և բազում եղբայրներից գրելու պատվերներ էր ստանում: Սական մեռավ՝ ոչ մեկին գրություն չթողնելով, այլ միայն յուրաքանչյուր մագաղաթի վրա գրած ուներ. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, տե՛ր եղբայր, քանզի մեկի հետ փոքր-ինչ գործ ունեի, դրա համար էլ ժամանակ չունեցա գրելու»: Սրա խցի մոտ մի եղբայր էր բնակվում, որը մի օր ինչ-որ գործով տեղ գնալու պատրվակով գրագիր եղբորն ասաց. «Բարի՛ եղիր, եղբա՛յր, ոռոգի՛ր ու պահպանի՛ր պարտեզս, մինչև վերադառնամ»: Գրագիրն ասաց. «Հավատա՛, եղբա՛յր, որքան կարող եմ՝ չեմ ծուլանա»: Եվ երբ եղբայրը գնաց, ասաց իրեն. «Տառապյա՛լ, քանի ժամանակ ունես, հոգ տար պարտեզիդ մասին»: Առավոտից մինչև երեկո կանգնելով աղոթքի՝ չէր դադարում արտասուքներով սաղմոսել և աղոթել, նույնպես և հաջորդ ամբողջ օրը, քանզի սուրբ կիրակի էր: Դրացի եղբայրը, երեկոյան գալով, տեսավ, որ խոզերը ավերել ու ապականել են ողջ պարտեզը, և նրան ասաց. «Աստված թողությո՛ւն տա քեզ, եղբա՛յր, որ խնամք չտարար իմ պարտեզին. արդարև, ողջը ապականվեց»: Գրագիր եղբայրն ասաց. «Գիտե Աստված, որ իմ կարողության չափով արարեցի, ոռոգեցի և պահպանեցի, բայց Աստված տա՛, որ մեր պարտեզը պտղաբերի: Գիտեմ, որ ավերվեց, բայց հավատում եմ Աստծո Որդուն, որ կծաղկի»: Պարտեզի տերն ասաց. «Ե՛կ ոռոգենք այն»: Գրագիրն ասաց. «Գնա՛ ոռոգիր, իսկ ես գիշերը կոռոգեմ»: Այդ ժամանակ երաշտ եղավ, իսկ դրացին իր գրագիր եղբորն ասաց. «Հավատա՛, եղբա՛յր, եթե Աստված չօգնի, ես ջուր չունեմ սրա համար»: Գրագիրն ասաց. «Վա՛յ մեզ, եղբա՛յր, եթե մեր պարտեզի աղբյուրները ցամաքեն, արդարև փրկություն չենք ունենա». նա արտասուքները նկատի ուներ: Երբ մեռնելու վրա էր, աղաչեց իր դրացուն և ասաց. «Ոչ մեկին մի՛ ասա, թե հիվանդ եմ, այլ այսօր մնա՛ այստեղ: Երբ գնամ առ Տեր, վերցրո՛ւ իմ մարմինը և գցի՛ր բաց անապատ, որպեսզի ուտեն գազաններն ու թռչունները, քանզի բազմիցս մեղանչեցի Աստծու դեմ և արժանի չեմ թաղվելու»: Պարտիզպանն ասաց նրան. «Հավատա՛, եղբա՛յր, որ խիղճս թույլ չի տալիս նման բան անել»: Պատասխանեց հիվանդն ու ասաց. «Այդ մեղքդ ինձ վրա կընկնի, միայն թե ինձ խոստացի՛ր, որ կլսես ինձ և այդպես կանես»: Եվ երբ մահացավ, եղբայրը նույն օրն իսկ արեց այնպես, ինչպես պատվիրել էր գրագիր եղբայրը, և գցեց նրա մարմինը բաց անապատ, քանզի հեռու էին քսան մղոնով այն բերդից, որ կոչվում է Մետեմիր: Հաջորդ օրը առ Տեր գնացած եղբայրը երևաց նրան տեսիլքի մեջ և նրան ասաց. «Աստված ողորմի քեզ, եղբա՛յր, ինչպես որ

դու ի՛նձ ողորմեցիր: Հավատա՛ ինձ, որ Աստված մեծ ողորմություն արեց ինձ, որ անթաղ մնաց իմ մարմինը, և ինձ ասաց. «Ահա քո խոնարհության համար կարգադրեցի, որ դու Անտոնի հետ լինես»: Արդ, ես աղաչեցի քեզ համար. հիմա թո՛ղ քո արտաքին պարտեզը և մյուս՝ ներքին պարտեզի համար հո՛գ տար, որովհետև իմ մահվան ժամին, երբ ելավ հոգիս, տեսա, որ իմ արտասուքները հանգցրին այն հուրը, որի մեջ ես պետք է այրվեի»:

41. Երկու արյունակից եղբայրներ՝ աշխարհից հրաժարված, գնացին Նիտրիա լեռը՝ ոմն ծերի մոտ: Սրանց երկուսին էլ Աստված տվեց զղջման և արտասուքի շնորհը: Մի օր ծերը երազում տեսավ, որ երկու եղբայրներն էլ՝ յուրաքանչյուրն առանձին, աղոթքի մեջ էին և արտասուքներով թրջում էին իրենց մագաղաթները. մեկի գիրը հեշտությամբ ջնջվում էր, իսկ մյուսինը՝ տքնությամբ, քանզի պինդ թանաքի պես էր: Եվ ծերն աղաչեց Աստծուն մեկնել երազը: Եվ հրեշտակը գալով՝ նրան ասաց. «Մագաղաթների վրա գրվածները նրանց մեղքերն են, նրանցից մեկը, սակայն, բնական մեղքերով մեղանչեց, դրա համար էլ հեշտությամբ են ջնջվում, իսկ մյուսը պիղծ և աղտեղի հանցանքների մեջ շաղախվեց, դրա համար էլ նրան առավել ջանքեր ու տքնություններ են հարկավոր ապաշխարության և մեծ խոնարհություն համար»: Դրանից հետո ծերն այն եղբորն ասաց. «Ջանա՛, եղբա՛յր, քանզի քո գրերը թանձր թանաքով և տքնությամբ են ջնջվում, բայց և այնպես կջնջվեն»: Եվ մինչև մահ չհայտնեց նրան իրողությունը, որպեսզի չխաթարի նրա հոժարությունը, այլ միայն այ՛ս էր ասում նրան. «Տքնի՛ր, եղբա՛յր, և տքնությամբ կջնջվեն»:

42. Մեկ այլ ճգնավոր, երբ կատարում էր կանոնն իր եղբոր հետ, լցվում էր արտասուքներով և թողնում էր սաղմոսի տունը: Մի օր աղաչեց նրան եղբայրը՝ ասել իրեն, թե ի՞նչ է մտածում կանոնի ժամանակ, որ այդպես դառնորեն լաց է լինում: Եվ նա ասաց նրան. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, եղբա՛յր, ես իմ կանոնի ընթացքում միշտ տեսնում եմ Դատավորին նստած և ինձ՝ որպես դատապարտյալ, առջևը կանգնած և քննվելիս: Նա ինձ հարցնում է՝ ինչո՞ւ մեղանչեցիր, իսկ ես, պատասխան չգտնելով, գոցում եմ իմ բերանը և այստեղից կորցնում եմ սաղմոսի տունը: Սակայն դու թողությո՛ւն տուր ինձ, որ խռովք պատճառեցի քեզ, իսկ թե հարմար կգտնես, ամեն մեկս առանձին անենք մեր կանոնը»: Եղբայրը նրան ասաց. «Քա՛վ լիցի, հա՛յր. թեև ես չեմ սգում և քարի պես կարծրացել է իմ սիրտը, սակայն քեզ

տեսնելով՝ վայ եմ տալիս իմ անձին»: Եվ Աստված, տեսնելով նրա խոնարհությունը, շնորհեց նրան եղբոր սգին զուգակշիռ սուգ:

43. Ոմն եղբայր գնաց մի ծերի մոտ, որ Սինա լեռանն էր բնակվում, աղաչեց նրան՝ ասելով. «Հա՛յր, ասա՛ ինձ, ինչպե՞ս պետք է աղոթել»: Ծերը նրան ասաց. «Ես, որդյա՛կ, երբ աղոթում եմ, այսպես եմ ասում. "Տե՛ր, արժանի՛ արա ինձ ծառայելու Քեզ այնպես, ինչպես սատանային ծառայեցի: Արժանի՛ արա ինձ սիրել Քեզ այնպես, ինչպես մեղքը սիրեցի"»: Ծերը նորից ասաց. «Բարի է ձեռքերը վեր բարձրացնել և աղաչել Աստծուն, որ հոգին մարմնից ելնելիս անխաթար անցկացնի նրանց ամենքի միջով, որոնք օդում ամեն ինչ ձեռնարկում են հոգու բարձրանալը խափանելու համար»:

44. Մի երիտասարդ եղբայր իր աբբայի կողմից ուղարկվեց ոմն եղբոր մոտ, որը պարտեզ ուներ Սինեա լեռան մոտ, մի քիչ միրգ բերերու աբբայի համար: Երբ մտավ պարտեզը, հարցրեց պարտեզի տիրոջը. «Իմ աբբան հարցնում է. "Մի քիչ միրգ ունե՞ս ինձ համար"»: Պարտեզի տերը պատասխանեց. «Այո՛, որդյա՛կ, ինչ էլ որ կամենաս, կա այստեղ»: Երիտասարդն ասաց. «Իսկ այստեղ Աստծո ողորմությունը կա՞, հա՛յր»: Իսկ նա, երբ լսեց այս հարցը, տխուր նայեց դեռնին և երիտասարդին հարցրեց. «Ի՞նչ ասացիր, որդյա՛կ»: Երիտասարդն ասաց. «Աբբա՛, ասացի՝ կա՞ արդյոք այստեղ Աստծո ողորմությունը»: Աբբան երկրորդ անգամ կրկնեց նույն հարցը և երիտասարդի պատասխան հարցը, երրորդ անգամ լսելով, մի պահ լռեց գլխահակ, ապա, ոչինչ չգտնելով ի պատասխան, հոգոց հանելով ասաց. «Աստված օգնի, որդյա՛կ»: Եվ երիտասարդին ետ դարձնելով դեպի իր վանքը՝ վերցրեց թիկնոցն ու թողնելով պարտեզը՝ դուրս եկավ անապատ՝ ասելով «Գնա՛նք անապատ՝ Աստծո ողորմությունը փնտրելու: Եթե երիտասարդ եղբորը չկարողացանք պատասխան տալ, ի՞նչ պիտի անենք, երբ Աստված հարցնի»:

45. Ոմն եղբայր, որ բնակվում էր Ջիթենյաց լեռանը, մի օր իջավ սուրբ քաղաք Երուսաղեմ և գնալով իշխանի մոտ՝ խոստովանեց իր մեղքերը և ասաց նրան. «Պատժի՛ ենթարկիր ինձ ըստ օրենքի»: Իսկ իշխանը զարմացավ և եղբորն ասաց. «Որովհետև ինքդ խոստովանեցիր, չեմ համարձակվում դատել քեզ Աստծուց առաջ. գուցե Աստված քեզ արդեն թողություն շնորհեց»: Եղբայրը վերադառնալով՝ իր պարանոցին երկաթակապ դրեց և իրեն արգելափակեց խցում: Եվ եթե մեկը հարցնում էր նրան, թե՝ ո՞վ քեզ այդչափ ծանր երկաթների մեջ արգելափակեց, պատասխանում էր՝ իշխանը: Նրա վախճանվելուց մեկ օր

առաջ իրենք իրենց բացվեցին երկաթներն ու ընկան նրա վրայից: Եվ մի եղբայր տեսնելով՝ զարմացավ և հարցրեց նրան. «Աբբա՛, ո՞վ արձակեց երկաթները քո վրայից»: Աբբան նրան ասաց. «Ով իմ մեղքերն արձակեց, Նա երեկ հայտնեց ինձ և ասաց. «Ահա քո համբերության համար լուծարեցի քո բոլոր մեղքերը»: Եվ իր մատով հպվեց երկաթներին, իսկ դրանք նույն պահին ընկան իմ վրայից»: Այս ասելով՝ իսկույն փոխվեց առ Տեր:

46. Հարցրին ոմանք հայր Մակարիոս Եգիպտացուն, թե. «Հա՛յր, ինչի՞ց է, որ ինչքան էլ ուտես կամ պահեցողություն անես, քո մարմինը միշտ ցամաք է»: Ծերը նրանց ասաց. «Փայտը՝ չոր լինի թե թաց, հրի մեջ միշտ էլ սպառվում է: Նույնպես և մտքերը՝ եթե Աստծո ահով են սրբվում, ուտում են նրանց մարմինն ու ոսկորները»:

47. Աբբա Իգիլիոսն ասաց, թե խցում բնակվող մի եղբայր կար, ով այնտեղ մնաց քսան տարի՝ օր ու գիշեր Սուրբ Գիրքն ընթերցելով: Հետո ամեն ինչ վաճառելով՝ վերցրեց իր թիկնոցն ու գնաց ներքին անապատ: Աբբա Եսայիասն հանդիպեց նրան ու հարցրեց. «Ո՞ւր ես գնում, որդյա՛կ»: Եղբայրն ասաց. «Ահա քսան տարի է, հա՛յր, որ Սուրբ Գրքի խոսքերն եմ լսում միայն, իսկ այժմ կամենում եմ գործով կատարել այն ամենը, ինչ լսեցի Սուրբ Գրքից»: Եվ ծերը, աղոթք անելով նրա վրա, արձակեց նրան:

48. Աբբա Ղոնգինոսն ասաց. «Պահքը նվաղեցնում է մարմինը, հսկումը սրբում է միտքը, լռությունը սուգ է հարուցում, իսկ սուգը մարդուն պահում է առանց մեղքերի»: Եվ ինքը՝ աբբա Ղոնգինոսը, իր մեջ մեծ սուգ ուներ սաղմոսելիս և աղոթելիս: Մի օր նրա աշակերտը նրան հարցրեց. «Այսպե՞ս է հոգևոր կարգ ու կանոնը, հա՛յր, որ իր պաշտամունքի մեջ մենակյացը պետք է լաց լինի»: Եվ ծերն ասաց. «Այո՛, որդյա՛կ, ա՛յս է կանոնը, որը, սակայն, Աստված չի պահանջում, քանզի Աստված մարդուն չարարեց սգալու համար, այլ խնդության և ուրախության համար, որպեսզի սրբությամբ և անմեղությամբ փառավորի Աստծուն, ինչպես հրեշտակները: Մարդը, սակայն, երբ մեղքի մեջ ընկավ, այնժամ նրան անհրաժեշտ եղավ սուգը, քանզի որտեղ մեղքեր չկան, այնտեղ լաց լինելու կարիք էլ չկա»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

49. Հայր Ամոնն ասաց. «Երբ նստես քո սենյակում, ժողովի՛ր քո մտքերը և հիշի՛ր քո մահվան օրը, կնքի՛ր քո սրտի մեջ հոգու ելնելն ու մարմնի մահը, միտքդ ա՛ռ այդ փորձությունը և քո սրտի մեջ դի՛ր երկյուղ և զղջում, ատի՛ր ունայնությունը և քո մտքում դի՛ր բարեգործության ջանքը, որովհետև այսպիսով կարող ես մնալ ճշմարիտ առաքինության մեջ, որպեսզի միշտ հոժար կամքով հանդարտվես և նստես քո սենյակում: Այս ամենից բացի, հիշի՛ր նաև ահեղ Դատաստանի օրը և թե ի՛նչ վիճակում կլինեն այնտեղ հոգիները. ոմանք դռոը լռության մեջ, ոմանք ծանր հառաչանքների մեջ, ոմանք՝ ահուդողի, և ովքեր հարությունից հետո կմնան հավիտենական տանջանքների մեջ, այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում: Հիշի՛ր նաև այն համընդհանուր հարության օրը և Աստծո առջև կանգնելը. մտածի՛ր նաև ահավոր ու անաչառ դատաստանի մասին, միտքդ ա՛ռ նաև հանցավորներին սպասվող ամոթը, որ լինելու է Աստծո, հրեշտակների դասի, դևերի, ողջ ադամական սերնդի և արդարների հոգիների առջև: Հիշի՛ր նաև բոլոր տեսակի տանջանքները, անշեջ հուրն ու անքուն որդերը, մթին տարտարոսն ու խավարը, ատամների կրճտումը, ահը, երկյուղը, անհատնում ու անվախճան պատիժը: Հիշի՛ր նաև արդարների համար պատրաստված բարիքները, հանգիստն ու համարձակությունը, որ ունեն Աստծո և նրա հրեշտակների առջև, և ցնծությունը, որ Երկնքի Արքայությունում է: Այս երկու հիշատակումները ամբարի՛ր քո մտքում և մեկին հետևի՛ր, իսկ մյուսից՝ փախի՛ր: Եվ հարաժամ ողբա՛, լա՛ց եղիր, արտասվի՛ր ու միշտ երկյուղի՛ր, թե՝ գուցե դու էլ դատապարտյալների շարքում հայտնվես, թեկուզ և արդար լինես. այս մտածության մեջ եղի՛ր, իսկ դա լավ է և օգտակար քեզ համար: Իսկ արդարների համար պատրաստված բարիքները միշտ խորհի՛ր քո մտքում և բարիքների հույսով բարձրացրո՛ւ քո հոգին և ջանա բարի գործերով քեզ խառնել նրանց հետ: Տե՛ս և միտքդ ա՛ռ և զգո՛ւյշ եղիր, որպեսզի Աստծո հիշատակը երբեք չնվազի քո մտքից, և մի՛ մոռացիր Նրա դատաստանը: Գուցե սրանցով ազատվես քո չար խորհուրդներից»:

50. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի իմ խորհուրդներն ինձ խռովքի են մատնում, չեն թողնում ինձ մեղքերիցս ձերբազատվել և դրդում են ինձ քննելու ընկե-

բոլոր հանցանքները»: Ծերը նրան ասաց. «Մի ծեր կար, որ նստում էր իր սենյակում, իսկ նրա աշակերտը նստում էր նրանից հեռու՝ մեկ այլ խցում: Երբ նա գնում էր ծերին տեսնելու, նրան գտնում էր լացի ու արտասուքի մեջ: Մի անգամ աշակերտը նրան հարցրեց. «Ինչո՞ւ ես միշտ ողբում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Իմ բազում մեղքերի համար եմ լալիս, որդյա՛կ»: Աշակերտն ասաց. «Դու մեղքեր չունես, հա՛յր»: Ծերն նրան ասաց. "Ի՞նչ ես ասում, որդյա՛կ. եթե հնար լիներ տեսնելու իմ մեղքերը, ապա տասը մարդ բավական չէր լինի ողբալու դրանք: Սակայն դու ես միշտ հիշի՛ր քո վախճանի և Աստծո դատաստանի օրը և չես կարողանա դատել ընկերոջդ"»:

51. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Աբրահամը, երբ գնաց Ավետյաց երկիր, նախ իր համար գերեզման գնեց (Ծննդ. ԻԳ 4-17) *և դրանով ժառանգեց այն»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ է գերեզմանը»: Ծերը նրան պատասխանեց. «Ողբի, կոծի, սգո և արտասուքների վայր»:*

52. Հայր Եղիա մենակյացն ասաց. «Աստծո երկյուղը ավելի մոտ պետք է լինի, քան շունչը, քանզի եթե մարդու մտքերը դառնան դեպի մեղքերը, ուրեմն նա իր մտքում չունի Աստծո երկյուղը և հեռու է Աստծո ողորմությունից»:

53. Թեոփիլոս եպիսկոպոսն ասաց. «Ինչպիսի՜ ահուդողի մեջ կլինենք, եղբայրնե՛ր, երբ մեր հոգիները հեռանան մեր մարմիններից, որովհետև այդ ժամին հապշտապ կգան հակառակորդ զորությունների գնդերն ու զորավարները, այս աշխարհի իշխանը և խավարի դևերը, որոնք դատաստան կանեն մեղանչած հոգուն, և բերելով գիտակցաբար թե անգիտակցաբար, հայտնի թե անհայտ գործված մեղքերը՝ կդնեն նրա առջև, և քանի որ հակառակորդներ են, կմատնեն նրա բոլոր գործերը՝ ասելով. «Այսքան չարիքների գործողը սա՛ է»: Ուստի ինչպիսի՜ ահուդողի մեջ կլինի այն հոգին, մինչև որ վճիռը կայանա, և ազատվի նրանցից: Այդ ժամը դժվարին է, դառն ու չար, և բոլոր աղամորդիներիս երկյուղը մեծ կլինի, մինչև որ հոգին տեսնի այդ գործի ավարտը, որովհետև կգան նաև սուրբ հրեշտակների աստվածային զորքերը և կբերեն բոլոր այն բարի գործերը, որ նա կատարել է: Հոգին դողալով կնայի մե՛կ այս կողմ, մե՛կ այն կողմ և սաստիկ կվախենա խավարի զորքից, մինչև որ անաչառ և արդար Դատավորի կողմից դատաստանը հռչակվի: Եվ եթե հոգին ողորմության արժանի լինի, այնժամ չար դևերը կսաստվեն Աստծո ակնարկումից, և իսկույն Աստծո սուրբ հրեշտակները կհափշտակեն այդ հոգին դևերի ձեռքից,

իսկ նա այսուհետև այլևս չի երկնչի: Եվ այնժամ կամբողջանա Գրքի խոսքը, որ ասում է. «Ուրախացողների բնակությունը Քեզ մոտ է», և դարձյալ, թե՝ «Ումից փախչում են բոլոր վշտերը, հեծությունն ու հառաչանքը» (Եսայի, ԼԵ 10, ԺԱ 11)*: Իսկ երբ ազատվի այն հալածիչներից, կտանեն նրան անպատմելի ուրախության և աննկարագրելի փառքի մեջ՝ Աստծո և Քրիստոսի առաջ և կտեղավորեն նրան երանելի արդարների օթևաններում: Իսկ եթե անձը եղկելի գտնվի և երկրավոր վատթար գործերի մեջ՝ թաղված, նա կլսի այն դառը խոսքը, թե՝ «Կվերանա՛ ամբարիշտն ու չի տեսնի Աստծո փառքը»: Եվ այնժամ կպատի նրան բարկության դառն օրը, վշտերի և նեղության օրը, մթության և խավարի օրը. օր, որը հանում է դեպի արտաքին խավարն ու գեհենի կրակը, որպեսզի տանջվի նրա մեջ հավիտյան: Եվ ո՞ւր կմնան այս աշխարհի պարծանքը, մեծության զորությունն ու հանգիստը, ո՞ւր կմնա բարձրապարանոց հպարտությունը, ո՞ւր կմնան ունեցվածք, գանձեր ու հարստություն, զորքերի, ծառաների և մարդկանց բազմությունները, ո՞ւր կմնա ազնվականությունը, հոր, մոր և ազգի ազնվազարմությունը... Եվ այն ամենը, որ այստեղ անցողիկ ու ապականացու են, սիրելի և ցանկալի են մարմնին՝ ինչո՞վ կարող են օգնել այնժամ կամ փրկել սոսկալի հրակիզման կամ այլևայլ բազում և տեսակ-տեսակ տանջանքներից: Եվ արդ, քանի որ այդպես է լինելու, ուրեմն՝ սնվե՛նք սրբությամբ, միշտ աստվածապաշտության մեջ մնա՛նք, ստանա՛նք կատարյալ սեր առ Աստված և դեպի բոլոր մարդիկ, սուրբ կենցաղավարություն ստանա՛նք, ճգնության ճանապարհը իմաստությամբ ընթանա՛նք՝ աղոթքով, պահքով և զգոնությամբ, և փութա՛նք, որպեսզի առանց հապաղելու բարի՛ն ստանանք և չարից փախչե՛նք, որպեսզի արժանի լինենք լսելու այս քաղցր ձայնը մեր Հիսուս Աստծո բերանից, որ ասում է. «Եկե՛ք, ի՛մ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք Արքայությունը, որ պատրաստված է ձեզ համար աշխարհի սկզբից»* (Մատթ. ԻԵ 34)*, և սրանից հետո ասվածը»: Այս Թեոփիլոսը իր մահվան օրն ասաց. «Երանի է քեզ, հա՛յր Արսենիոս, որովհետև միշտ հիշում էիր այս օրը»:*

54. Հայր Աբրահամն ու հայր Իսահակը միասին էին բնակվում: Մի անգամ հայր Աբրահամը, ներս մտնելով, գտավ հայր Իսահակին սաստիկ ողբալիս և նրան ասաց. «Ինչո՞ւ ես այդպես լալիս, հա՛յր»: Հայր Իսահակն ասաց. «Ինչպե՞ս լաց չլինեմ, երբ ուր էլ որ գնանք, տեղ չունենք, քանզի ննջեցին մեր սուրբ հայրերը, և մեր ձեռագործի վարձը բավարար չէ նավի համար, որպեսզի տանք նավավարներին և գնանք

նրանց տեսնելու և նրանցից խրատ առնելու: Իսկ այժմ, նրանցից որբ մնալով, տեղ չունենք գնալու. սրա՛ համար եմ ողբում»:

55. Լեռան ծերերը մի անգամ խնդրանք հղեցին Սկիտե՝ հայր Մակարիոսին և ասացին. «Որպեսզի այսքան եղբայրները նեղություն չքաշեն, աղաչում ենք քեզ՝ դո՛ւ արի մեզ մոտ, որ նախքան քո՝ առ Տեր գնալը՝ արժանի լինենք քո տեսությանը»: Ելավ հայր Մակարիոսը և գնաց լեռը՝ նրանց մոտ: Ողջ բազմությունը հավաքվեց նրա մոտ, և աղաչեց նրան կենաց խոսք ասել: Իսկ նա, երբ տեսավ նրանց և լսեց այս, ասաց. «Լացե՛ք, եղբայրնե՛ր, և թո՛ղ ձեր աչքերից արտասուքների վտակներ հոսեն՝ նախքան մեր՝ այս աշխարհից ելնելը և այն երկիր գնալը, ուր մեզ այլևս չեն օգնի ողբ ու արտասուք, այլ կիզող հուրը կպարուրի մեզ»: Եվ սաստիկ ողբաց ողջ բազմությունը, և ամենքն ընկան երեսի վրա և ասացին. «Աղոթի՛ր մեզ համար, հա՛յր»:

56. Պատմեց հայր Մակարիոսը, թե. «Մի անգամ անապատում քայլում էի, երբ մարդու մի չորացած գանգ գտա և նստելով նրա մոտ՝ հարցրի նրան. «Ո՞վ ես դու»: Իսկ նա պատասխանեց ինձ և ասաց. «Ես հեթանոսների կուռքերի քահանայապետն էի, իսկ դու հոգևոր հայր Մակարիոսն ես: Երբ դու աղոթում ես հոգիների համար, որ դժոխքում են, նրանք փոքր-ինչ հանգիստ և մխիթարություն են առնում»: Ես նրան հարցրի. «Ինչպիսի՞ն է այդ մխիթարությունը և իսկ ինչպիսի՞ն են տանջանքները»: Գանգն ասաց. «Որչափ որ բարձր է երկինքն ու երկիրը՝ խոր, երկրից ավելի խորն է այն տեղը, ուր մենք դատապարտված ենք մնալու, և մինչև պարանոցներս թաղված ենք անշեջ հրի մեջ և հնար չունենք միմյանց դեմքին նայելու, այլ յուրաքանչյուրս նայում է իր ընկերոջ թիկունքին, և սաստիկ խավար է այնտեղ: Սակայն երբ դու սկսում ես աղոթել մեզ համար, այնժամ փոքր-ինչ տեսնում ենք միմյանց դեմքերը, և դա՛ է մեր մխիթարությունը»: Եվ ողբում էր ու ասում. «Վա՜յ այն օրվան, երբ ծնվեց մարդը»: Ես նրան ասացի. «Ավելի ծանր տանջանքներ կա՞ն, քան այն, որի մեջ եք դուք»: Գանգն ինձ ասաց. «Առավել խիստ տանջանքներ կան մեզանից ներքև»: Եվ ես հարցրի. «Ո՞ր եղկելիներն են դրա մեջ»: Գլուխն ասաց. «Մենք՝ Աստծո անգետներս, փոքր-ինչ ավելի ողորմության ենք արժանացել, իսկ նրանք, ովքեր գիտեին Աստծուն և ուրացան Նրան, նրանք են մեր ներքևում»: Եվ ես, վերցնելով այդ գանգը, թաղեցի հողի տակ»:

57. Ոմն եղբայր հարցրեց հայր Մովսեսին և ասաց. «Ի՞նչ պետք է անի մարդ, երբ փորձություններ են գալիս նրա վրա, կամ երբ թշնամին իր խորհուրդներն է բերում նրա մտքում»: Ծերը նրան ասաց.

«Պետք է ընկնել Աստծո առջև և լաց լինել, որպեսզի օգնի և փրկի իրեն: Եթե այս անի, արագորեն հանգիստ կգտնի, եթե զղջումով և իմաստությամբ աղոթի, ինչպես որ գրված է. «Զվախեցա ես նրանց բյուրավոր զորքերից» (Սաղմ. Գ 7)*, նաև՝ «Ինձ ի՞նչ կանի մարդը, քանի որ դու ինձ հետ ես, Տե՛ր»* (Սաղմ. ՃԺԷ 6)*. և որքան էլ հաղթվենք մարմնավոր ախտերից, ողբալն ու կոծելը չդադարեցնե՛նք, որպեսզի չհասնենք հավիտենական ողբին»: Դարձյալ ասաց. «Մարդն արտասուքներով է ստանում առաքինություն, որովհետև արտասուքներով է ստանում մեղքերի թողություն: Իսկ մինչ ողբում ես, քո հառաչանքների ձայնը մի՛ բարձրացրու, և թո՛ղ քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը* (Մատթ. Զ 3)*. և այս էլ է հայտնի, որ ձախը՝ ամբարտավանությունն է»:*

58. Ոմն եղբայր հարցրեց հայր Մատոյին և ասաց. «Ինձ մի խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Հեռացրո՛ւ քեզանից հակառակությունը ամեն բանում, լա՛ց եղիր ու ողբա՛, որովհետև մոտ է վախճանը»:

59. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, ո՛վ հայր»: Պիմենը նրան ասաց. «Երբ Աստված այցելեց մեզ և կանչեց, մենք այլևս ինչի՞ համար պետք է հոգս անենք»: Եղբայրն ասաց. «Մեր մեղքերի մասին պետք է հոգ տանենք, հա՛յր»: Պիմենն ասաց. «Մտնենք մեր խուցը, նստենք, հիշենք մեր մեղքերը և լաց լինենք մեր Տեր Աստծո առջև, և Նա կօգնի մեզ»:

60. Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս երանելի Աթանասն աղաչեց հայր Պամբոյին լեռից իջնել քաղաք: Երբ նա իջավ, այնտեղ մի պոռնիկ կին տեսավ և սկսեց լաց լինել: Նրան տեսնողները հարցնում էին, թե ինչո՞ւ է ողբում հայրը: Եվ նա ասաց. «Երկու պատճառով եմ լաց լինում. մեկը՝ սրա հոգու կորստյան համար, մյուսը՝ որ ես այնքան ջանադիր չեմ Աստծուն հաճոյանալու մեջ, որքան սա՝ մարդկանց»:

61. Հայր Պամբոն ասաց. «Մինչև պարանոցս տիղմի մեջ եմ թաղված. դրա համար եմ միշտ լալիս Աստծո առջև, որպեսզի ինձ հանի այստեղից»:

62. Հայր Սրապիոնի մասին ասում էին, թե նրա կյանքը նման էր միայնակ թռչունի կյանքին, քանզի ոչ մի երկրային ինչք չունեցավ, երբեք խցում չբնակվեց, այլ մի մազեղեն քուրձ հագին և մի փոքրիկ ավետարան ձեռքին՝ շրջում էր՝ ինչպես անմարմին մի էակ: Շատ անգամ նրան տեսնում էին բնակավայրերից դուրս՝ ճանապարհների վրա նստած և դառնապես լաց լինելիս: Երբ անցորդներն հարցնում էին,

թե նա ինչու է այդպես ողբում, նա պատասխանում էր և ասում. «Իմ Տերն ինձ բազում ունեցվածք վստահեց, բայց ես կորցրի այն ամբողջությամբ և երկնչում եմ, քանզի պատրաստվում է տանջել ինձ»: Ճանապարհորդները, երբ լսում էին այս, կարծում էին, թե ոսկի և հարստություն նկատի ունի, և հաց էին տալիս նրան ու ասում. «Վերցրո՛ւ, կեր՛ այս, եղբա՛յր, իսկ հարստությունդ, որ կորցրիր, Աստված կարող է տալ քեզ նորից»: Եվ ծերն ասում էր՝ ամեն:

63. Ծերն ասաց. «Մեծ ճգնություն և տառապանք ունեն կրելու նրանք, ովքեր դառնում են դեպի Աստված, բայց հետո անպատմելի խնդություն կգտնեն, ինչպես որ՝ երբ ջանում են կրակ վառել՝ նախ ծխահարվելով արցունքակալվում են, իսկ հետո վառում են իրենց հուրն ու լապտերը: Այդպես կլինի նրանց հետ, ովքեր կարոտում են Աստծուն և աստվածային սերը, ինչպես և գրված է, թե՝ «Մեր Աստվածը մաշող կրակ է» (Եբր. ԺԲ 29)*: Մենք պետք է այն երանելի ու փափագելի հուրը վառենք մեր մեջ՝ մեծամեծ տքնություններով և արտասուքների վտակներով, որպեսզի լուսավորի մեզ»:*

64. Հայր Հիպերիքսոսն ասաց. «Արթուն կրոնավորը գիշերը ցերեկ կդարձնի՝ աղոթքների մեջ հսկելով, իր միտքն ու հոգին կխոցոտի և արտասուքների հեղեղներ կհոսեցնի, մինչև որ երկնքից դեպի իրեն ձգի Աստծո ողորմությունը»:

65. Ոմն եղբայր եկավ ծերի մոտ և ասաց նրան. «Ինչո՞ւ է իմ սիրտը խիստ, հա՛յր, և Աստծուց չեմ երկնչում»: Ծերը նրան ասաց. «Եթե մարդ կարողանա իր մտքում արհամարհանք ունենալ իր անձի հանդեպ, ապա կստանա Աստծո երկյուղը»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ է արհամարհանքը»: Ծերն ասաց. «Այն է, երբ մարդն ամեն գործի մեջ նախատում է իրեն և ասում. «Քաջալերվի՛ր, եղկելի՛, որովհետև կանգնելու ես Քրիստոսի աթոռի առջև, և ի՞նչ ունես մարդու հետ ընդհանուր»: Եթե նրա մտքում ամրագրվի այսպիսի խորհուրդ, կստանա Աստծո երկյուղը»:

66. Ծերն ասաց. «Ուր էլ որ գնանք, չարությունը մեզ հետ է գալիս: Այդպես և պարտավոր ենք մեզ հետ ունենալ զղջումն ու արտասուքը, ուր էլ որ գնանք»:

67. Հայրերից մեկը պատահաբար մահացավ, և բազում ժամեր անց կրկին վերստացավ իր հոգին: Մենք նրան հարցրինք. «Ի՞նչ տեսար, հա՛յր»: Իսկ նա արտասվելով պատմեց. «Ողբ ու կոծի ձայն լսեցի, որ

անդադար ասում էր՝ վա՛յ, վա՛յ, վա՛յ»: Կրոնավորն էլ պետք է այդպես անի:

68. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչի՞ց է, որ իմ անձը փափագում է արցունքների, ինչպես որ հայրերն էին փափագում, սակայն դրանք չեն գալիս, իսկ միտքս ծանրանում է»: Ծերը նրան ասաց. «Իսրայելի որդիները հազիվ քառասուն տարի հետո մտան Ավետյաց երկիր, ուր բնակվելով՝ այլևս չվախեցան իրենց դեմ պատերազմողներից: Այդպես էլ Աստված կամենում է տխրեցնել մարդուն, որպեսզի այդպես մտնի կենդանության երկիր»:

69. Ծերն ասաց. «Ապաշխարելու համար անհրաժեշտ է, որպեսզի մարդն առանձնանա և անհոգ լինի բոլոր աշխարհական գործերից, լինի զղջասիրտ և ողբացող, ոչ մեկին չնեղի և չձանձրացնի, այլ նախատելով նեղի իր անձը և արթուն ու զգաստ լինի լինի մտքով, և ջերմագին արտասուքներով մշտապես խնդրի Աստծո ողորմությունը»:

70. Ոմանք հարցրին հայր Սիսոյին և ասացին. «Եթե որևէ եղբայր ընկնի, պետք է մեկ տարի ապաշխարի՞»: Ծերն ասաց. «Զափազանց խիստ է այդ խոսքդ»: Նրանք ասացին. «Լա՞վ է, եթե վեց ամիս ապաշխարի»: Ծերն ասաց. «Այդ էլ շատ է»: Նրանք ասացին. «Լավ, բայց կարելի՞ է, որ նա մեղանչի և մեզ հետ սեղան նստի»: Ծերն ասաց. «Ո՛չ, թող մի քանի օր ապաշխարի, և հավատում եմ, որ եթե կատարյալ մտքով և սրտի զղջումով երեք օր ապաշխարի, Աստված կընդունի նրա ապաշխարությունը և կթողնի նրա հանցանքները»:

71. Ծերն ասաց. «Նա, ով նստում է սենյակում և սաղմոսում, նման է այն մարդուն, ով Տիրոջն է փնտրում, իսկ ով լալիս և ողբում է, նա, ինչպես պոռնիկ կինը, Տիրոջ ոտքից կառչած՝ ողորմություն է խնդրում»:

72. Ասաց դարձյալ. «Վարժեցրո՛ւ քո միտքը ամեն եղբոր մասին ասելու. «Այս եղբայրն ինձանից լավն է Աստծո առաջ, այս մյուսը ավելի ջանադիր է, այն մյուսն ավելի առաքինի է»: Այդպես կհասնես բարձր չափի՝ քեզ ամենավատթարը համարելով, և դրա շնորհիվ Աստծո Հոգին կբնակվի քո մեջ: Իսկ եթե արհամարհես մեկնումեկին, Աստծո շնորհը կհեռանա քեզանից, և կընկնես մարմնական պղծության մեջ, քո սիրտը կխստանա, զղջում ամենևին գոյություն չի ունենա քո մեջ»:

73. Դարձյալ ասաց. «Երբ մարդը ճգնավոր է դառնում, Աստված նրանից պահանջում է բոլոր առաքինությունները. և մտքում չպե՛տք է ունենա նույնիսկ մի ասեղ, քանզի այդ ասեղը կարող է նրա խորհուրդը խափանել և նրանից կտրել զղջումը, ողբն ու արտասուքները»:

74. Ասաց դարձյալ. «Վա՜յ քեզ, ա՜նձ իմ, որ սովոր ես միայն լսել Աստծո խոսքը, սակայն դրանից ոչ մեկը չես ուզում գործադրել: Վա՜յ քեզ, մարմի՛ն իմ, քանզի ճանաչեցիր քեզ ապականողին ու պղծողին և ամեն ինչի մեջ դրանք ես փնտրում, ինչը հագեցնում է, համեղ է, պարարտ ու աղտեղի: Եվ վա՜յ երիտասարդ կրոնավորին, որ իր որովայնն է լցնում և իր կամքին է հետևում, քանզի ունայն է նրա կրոնավորությունը»:

75. Ոմն եղբայր կրոնավոր դարձավ և բնակվեց Նիտրիա լեռան մոտ: Նրա խուցը մոտիկ էր մեկ այլ եղբոր խցին, և վերջինս լսում էր, թե ինչպես է նա օրըստօրե ողբում իր մեղքերը: Իսկ երբ արցունքներ չէին գալիս, իր անձին ասում էր. «Ինչո՞ւ չես ողբում քեզ վրա, եղկելի՛ ու ստո՛ր, իսկ եթե ինքդ չես կամենում ողբալ, ես կլացացնեմ քեզ»: Նա չվանից մի ոլորապինդ խարազան ուներ. վեր էր կենում, վերցնում այդ խարազանն ու իրեն ուժգին հարվածում, մինչև որ հարվածների ցավից վշտանում և լաց էր լինում: Դրա վրա սաստիկ զարմանում էր դրացի եղբայրը և աղաչում էր Աստծուն՝ հայտնել իրեն, թե արդյոք ճի՞շտ է անում նա, որ տանջում է իրեն: Եվ մի գիշեր տեսիլք տեսավ նա, որ այդ եղբայրը մարտիրոսների գնդում է դասված, և նրա գլխին պայծառ պսակ կա, և ինչ-որ մեկն իրեն ասաց. «Տեսնո՞ւմ ես այս բարի նահատակին, որ իր անձը նեղում և ծեծում է հանուն Քրիստոսի սիրո, ինչպես է վկաների շարքը դասվել»:

76. Ոմն ծեր ասաց. «Եթե զղջում չունես քո սրտում, իմացի՛ր, որ դու ամբարտավան ես, և դա թույլ չի տալիս քո սրտին՝ զղջալ»:

77. Ասաց դարձյալ. «Եթե քո բնակատեղիին մոտ գերեզմաններ կան, հաճախ գնա՛ այնտեղ, որպեսզի տեսնես թաղվածներին և խորհես՝ հատկապես քո մարմնի պատերազմի և ախտերի բորբոքման ժամանակ: Եվ որտեղ էլ լսես, թե եղբայր է վախճանվում, շուտափույթ գնա՛ և նրա մոտ նստի՛ր, որպեսզի տեսնես, թե ինչպես է հոգին դուրս գալիս մարմնից»:

78. Ոմն եղբայր ծերին ասաց. «Ինձ խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Երբ Տերը հարվածեց Եգիպտոսին, այնտեղ տուն չկար, ուր ողբ ու

կոծ չլիներ: Եվ դու քո խցում նստելու ընթացքում միշտ Աստծո երկյուղն ունեցի՛ր քո մեջ, որպեսզի Նա պահպանի քեզ և քո անձից հալածի քո բոլոր մեղքերն ու անօրենությունները: Նա, ով իր մեջ ունի Աստծո երկյուղը, նա գանձարան ունի՝ լի անհաշիվ գանձերով, քանզի Աստծո երկյուղը փրկում է անձը մեղքերից»:

79. Ոմն ծեր նստում էր իր խցում, և թեև արդեն վաթսուն տարվա կրոնավորության մեջ էր, սակայն իր կյանքի բոլոր օրերին չէր դադարում ողբալ, այլ միշտ նստում ու լաց էր լինում և ասում. «Տերն այս ժամն ինձ տվեց ապաշխարության համար, որը հետո որքան էլ ջերմեռանդ խնդրեմ՝ չեմ ստանա»:

80. Մեկ այլ ծեր առանձին էր բնակվում անապատում: Սա, մինչ երիտասարդ էր, եղբայրների ջորիներին էր խնամում: Մի անգամ սա ջորիներով իջավ Երիքով. այնտեղ՝ իջևանատանը, մի մանուկ կար, և նա, չարի ազդմամբ, ջորիներից ոտնակոխ լինելով՝ մեռավ: Երբ եղբայրն իմացավ, խիստ տրտմեց դրա համար և հեռանալով այնտեղից՝ գնաց Առնիա, որտեղ էլ մենակյաց դարձավ: Նա միշտ ողբում էր ու ասում. «Մանկանը ես իմ ձեռքով սպանեցի և իբրև մարդասպան եմ դատվելու»: Նրան մերձակա քարայրում մի չար առյուծ էր բնակվում: Նա ամեն օր գնում էր առյուծի քարայրը, խփում էր նրան և գրգռում, որ վեր կենա և ուտի իրեն, սակայն առյուծը բնավ չէր վնասում նրան: Երբ եղբայրը տեսավ, որ առյուծը չի մոտենում իրեն, խիստ տրտմեց և գնաց-նստեց այրի մուտքի մոտ, որ գուցե առյուծը քաղցի և ուտի իրեն: Իսկ առյուծը, երբ քաղցեց, եկավ այնտեղ և տեսմելով եղբորն իր ճանապարհի վրա՝ հեզությամբ և սիրով անցավ նրա վրայով և գնաց որսի: Այնժամ եղբայրը հավատաց, որ Աստված ներեց իր այդ մեղքը: Եվ գալով իր վանքը՝ լրացրեց իր մնացած օրերը մեծագույն զղջումով և ուսուցանում էր ամենքին:

81. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի երբ տեսնում եմ մեղսավոր մեկին, դատում եմ նրան, իսկ երբ ծույլ եղբոր եմ տեսնում, ատում եմ նրան, և այդպիսով իմ հոգին կորստյան եմ մատնում»: Ծերը նրան ասաց. «Երբ այդպիսի բան լսես, նույն պահին իսկ միտքդ հեռացրո՛ւ դրանից և ուղղորդի՛ր քո՝ խորհելու ահավոր Դատաստանի օրվա մասին, հիշի՛ր նաև սոսկալի Աթոռը և անաչառ Դատավորին, հրեղեն գեհենը, որ Նրա առջևում է, և տանջանքները, որ նրանում են, հրեղեն սուրը և անողորմ դահիճներին, աչքերի լացն ու ատամների կրճտոցը, անքուն որդերն ու բոլոր դառն ու անվախճան տանջանքները, հավիտենական ողբն ու կոծը: Այս ամենն

հիշի՛ր և ընկերոջդ դատելու փոխարեն՝ ինքդ քե՛զ դատիր, քննի՛ր քո մեղքերը ու խորհի՛ր, թե ինչ ահավոր են Աստծո դատաստանները: Քանզի եթե սուրբ և անմարմին հրեշտակների զորքերն են ահուդողով լցվում այդ ժամին, ապա մեղքի մեջ ծնված և նրանով սնուցված մարդն ի՞նչ կանի: Այնտեղ ոչ մեկը չի կարող ուրիշին օգնել կամ վնասել, և ոչ ոք չի կարող տանջանքներից փրկել մեկնումեկին. ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ եղբայր, ո՛չ քույր, ո՛չ որդի, ո՛չ ազգատոհմ, ո՛չ փառք, ո՛չ մեծություն՝ ընավ ո՛չ ոք և ոչինչ, այլ միայն՝ Աստծո ողորմությունը, արդարության գործն ու ուղիղ հավատը: Եվ առհասարակ, մեծ հիմարություն է թողնել սեփական մեղքերը և դատել ընկերոջը, քանզի մեզանից յուրաքանչյուրն իր բեռն է տանում և մեզանից յուրաքանչյուր ոք իր մեղքերի ցանցով է բռնվում, և ամեն մեկն էլ Տիրոջինն է՝ արդար լինի, թե մեղավոր: Եվ Աստված կարող է ապրեցնել թե՛ մեղավորին և թե՛ արդարին, ինչպես արեց մաքսավորին, պոռնիկին, ավազակին և այն մշակներին, որոնք տասնմեկերորդ ժամին վարձվեցին (Մատթ. Ի 6-16)*: Այս ամենը խորհի՛ր, որդյա՛կ, և հրաժարվի՛ր ընկերոջը դատելուց և ատելուց, քանզի դա ամենաչարն ու դժնդակն է բոլոր մեղքերից, քանզի Միածնի աթոռի և դատաստանի մենաշնորհի հափշտակումն է այդ: Եվ եթե կամենում ես զերծ մնալ դրանից՝ դա՛տ դիր քո առաջ և ասա՛՝ այսինչ բանն ինչո՞ւ արեցի, կամ՝ ինչո՞ւ խորհեցի այսինչ բանը: Քեզ դատելու համար բազում պատճառներ կգտնես, որովհետև դու մարդ ես: Այսպես անելով և խորհելով՝ չես զբաղվի ուրիշներին դատելով և ատելով և կհանդարտվես Աստծո շնորհով»:*

82. Ավազակներից մեկը զղջալով եկավ ոմն մեծ և սքանչելի ծերի մոտ, որը վանահայր էր: Վանահայրը պատվիրեց նրան յոթ օր հանդարտության մեջ մնալ՝ տեղի հաստատության կարգուկանոնը ճանաչելու համար: Յոթ օր հետո վանահայրը նրան կանչելով հարցրեց, թե արդյոք նրան հաճելի՞ է բնակվել այնտեղ, իսկ նա ուղիղ սրտով կամեցավ մնալ: Ապա հարցրեց նրան հանցանքների մասին, և նա խկույն մեծ հոժարությամբ խոստովանեց նրան: Վանահայրը դարձյալ փորձեց նրան՝ ասելով. «Կամենում եմ քեզ հրապարակավ ցույց տալ եղբայրներին», իսկ նա հոժարությամբ հանձն առավ: Այնժամ հավաքվեցին բոլոր՝ երկու հարյուր հիսուն եղբայրները, և բերելով այն անբիծ դատապարտյալին՝ եղբայրներից ոմանք քարշ էին տալիս նրան, ոմանք՝ չափավոր հարվածներով նեղում, քանզի քուրձ էին հագցրել նրան և գլխին՝ մոխիր ցանել, որպեսզի բոլոր նրան տեսնողները զար-

հուրեին և արտասուքներով աղաղակեին: Իսկ նա դողալով մեկառ-մեկ խոստովանում էր իր մեղքերը, որը լսելով՝ բոլորը զարմանում էին, քանզի խիստ ծանր հանցանքներ էր գործել: Այնժամ վանահայրը պատմեց եղբայրներին, թե՝ «Տեսնում էի ահավոր մեկին, որն իր ձեռ-քին գրված թուղթ և եղեգնյա գրիչ ուներ. բոլոր մեղքերը, որ խիստ ազնվորեն խոստովանում էր ավազակը, նա բոլորը ջնջում էր, քանզի գրված է. «Իմ անօրենությունները կպատմեմ, և Դու կթողնես իմ մեղ-քերն ու հանցանքները, Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ» (Սաղմ. ԼԷ 19)»:

ԳԼՈՒԽ Դ

ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մի քանի ծերեր գնացին հայր Անտոնիոսի մոտ և ճանապարհին անդադար խոսում էին սուրբ հայրերի գործերից և ինչից ասես: Նրանց ուղեկից էր մեկ ուրիշ ծեր, որը նրանց հետ լռելյայն գնում էր: Երբ տեղ հասան, սուրբ Անտոնը լռակյաց ծերին ասաց. «Լավ է, որ եղբայրներին քեզ ուղեկից ընտրեցիր»: Ծերը նրան ասաց. «Սակայն դրանց ախոռներն անդուռ են, և գայլերը կուտեն դրանց ավանակներին»: Եվ դա նրանց անզգույշ խոսելու համար էր ասում:

2. Ոմանք պատմում էին հայր Մոյսիի մասին, թե նա հիվանդացավ և բազում տարիներ ջերմում էր, սակայն երբեք մտքովն իսկ չանցկացրեց նայել ներքին սենյակը և տեսնել, թե ինչ կա այնտեղ, որովհետև շատերն էին նրա համար անհրաժեշտ բաներ բերում: Իսկ իր աշակերտ Հովհաննեսի մտնել-ելնելու ժամանակ փակում էր աչքերն ու երեսը, որպեսզի չտեսնի, թե նա ինչ է անում, քանզի գիտեր, որ նա վստահելի և հավատարիմ մենակյաց է:

3. Հայրերից մեկը, գնալով հայր Աքիլասի մոտ, տեսավ, որ նա արյուն է թքում բերանից, և հարցրեց նրան, թե ի՞նչ բան է այդ: Եվ ծերն ասաց. «Դա այն եղբոր խոսքն է, որ ինձ տրտմեցրեց, և ես որոշեցի ոչ ոքի չպատմել այդ և պաղատեցի Աստծուն վերցնել ինձնից այն: Եվ ահա այդ խոսքն արյուն դարձավ իմ բերանում, և երբ թքեցի, հանդարտվեցի և տրտմությունը մոռացա»:

4. Մի եղբայր կար վանքում, որը, երբ երեցն արձակում էր ժողովրդին, ամենավերջինն էր դուրս գալիս՝ ակնկալելով, թե մեկնումեկն իրեն կհրավիրի իր մոտ: Սակայն մի օր ժողովրդից առաջ դուրս եկավ և շտապեց իր խուցը, իսկ երեցը, նկատելով այդ, զարմացավ: Եվ երբ կրկին նա եկեղեցի եկավ, երեցը նրան հարցրեց. «Ճշմարի՛տն ասա ինձ, այդ ի՞նչ է, որ դու անում ես, որովհետև մշտապես, երբ հավաք էր

լինում, դու մնում էիր մինչև վերջ, իսկ նախորդ օրը ամենքից առաջ դուրս եկար»: Եղբայրը նրան ասաց. «Որովհետև ես ինձ զսպում էի, որ ուտելիք չպատրաստեմ, դրա համար մնում էի մինչև վերջ, որպեսզի թերևս մեկը հրավիրի ինձ: Երեկ, նախքան հավաքին գալս, ինձ համար մի քիչ ոսպաթան եփեցի, դրա համար, երբ Հաղորդությունն առա, անմիջապես դուրս եկա»: Երբ երեցը լսեց այս, պատվեր տվեց եկեղեցուն և ասաց. «Եղբայրնե՛ր, նախքան ձեր՝ եկեղեցի գալը, թո՛ղ ձեզնից յուրաքանչյուրն իր խցում մի քիչ թան եփի, որպեսզի դրա համար հոժարությամբ վերադառնաք ձեր խցերը»:

5. Մի ժամանակ հայր Աղաթոնը երկու աշակերտ ուներ, որոնք առանձին էին ապրում: Մի օր նրանցից մեկին հարցրեց, թե ինչպե՞ս է կենցաղավարում իր խցում, իսկ նա պատասխանեց. «Պահում եմ մինչև երեկո, ապա ճաշակում եմ երկու պաքսիմատ»: Հայր Աղաթոնն ասաց. «Բարի է կարգդ և առանձնապես մեծ տքնություն չէ»: Ապա մյուսին հարցրեց. «Դո՞ւ ինչպես ես ճգնում»: Մյուսը պատասխանեց և ասաց. «Երկու օր պահում եմ և երկու պաքսիմատ եմ ուտում»: Ծերը նրան ասաց. «Սաստիկ տքնում ես, որդյա՛կ, երկու պատերազմ մղելով: Եթե կրոնավորը օրական մեկը ճաշակի և չհագենա՝ տքնանք է: Կան, որ երկու օր են կամենում պահել, սակայն ուտելիս հագենում են, իսկ դու երկու օր պահում ես և ճաշակելիս էլ չես հագենում»:

6. Մի անգամ Սկյութիայի երեցը գնաց Ալեքսանդրիա և այնտեղից վերադառնալով՝ կամեցավ հաստատել եղբայրներին և ասաց նրանց. «Ոմանցից լսում եմ, թե Ալեքսանդրիայում մարդկանց մեծ բազմություն կա. սակայն ես, արդարև, մտնելով այնտեղ՝ ոչ մի մարդկային դեմք չտեսա, բացի եպիսկոպոսապետից»: Իսկ եղբայրները, լսելով այս, տագնապեցին և հարցրին. «Մի՞թե մարդիկ ջրասույզ են եղել, հա՛յր»: Եվ նա պատասխանեց և ասաց. «Ո՛չ, այդպես չէ, պարզապես իմ խորհուրդները չկարողացան հաղթել ինձ և ստիպել աչքերս վեր բարձրացնել և մարդկանց նայել, որպեսզի չպղծվեն խորհուրդներս»: Եվ նրանք սքանչացան և հաստատվեցին նրա խոսքից, որպեսզի պահեն իրենց աչքերը՝ չտեսնելու աշխարհիկ ունայնությունը:

7. Հայր Սերենիոսի մասին ասում էին, թե շատ էր աշխատում և օրական երկու պաքսիմատ էր ճաշակում: Նրա մոտ եկավ նրա գործակից հայր Իովը, որը նույնպես մեծ ճգնավոր էր, և ասաց նրան. «Իմ խցում ես իմ կարգով եմ ընթանում, սակայն երբ դուրս եմ գալիս՝ եղբայրներին եմ հավասարվում»: Եվ հայր Սերենիոսը նրան ասաց. «Եթե

քո խցում ժուժկալես՝ մեծ առաքինություն չէ: Մեծ առաքինություն կլինի, երբ քո խցից դուրս դա անես»:

8. Հայր Սիսոյ Թեբայեցու մասին ասում էին, թե Արսենոյիտի եղեգնուտում էր բնակվում, և այդ ժամանակ մի ուրիշ ծեր հիվանդացավ վանքերից մեկում: Այդ լուրը առնելով՝ նեղ կացության մեջ հայտնվեց, քանի որ երկու օր էր պահում, իսկ այդ օրը չէր ճաշակելու: Եվ ինքն իր մտքում ասաց. «Եթե այնտեղ գնամ, միգուցե եղբայրներն ինձ ստիպեն ճաշակել, իսկ եթե սպասեմ մինչև վաղը, միգուցե վախճանվի: Բայց և այնպես, այսպես կանեմ. կգնամ, բայց չեմ ճաշակի»: Գնաց, բայց չճաշակեց՝ թե՛ Աստծո պատվիրանը կատարելով և թե՛ իր կանոնակարգը չխախտելով, որ դարձյալ հանուն Տիրոջ էր:

9. Մի ծերի մասին ասում էին, որ ինքն իրեն այնպես էր արգելափակում խցում, որ անգամ եկեղեցի չէր գնում: Նա մի արյունակից եղբայր ուներ, որ մեկ այլ խցում էր բնակվում: Սա հիվանդացավ և մարդ ուղարկեց եղբոր մոտ, որպեսզի գա և իրեն տեսնի՝ նախքան մարմնից ելնելը: Ծերը պատասխանեց. «Չեմ կարող խցից դուրս գալ, քանի որ նա իմ արյունակից եղբայրն է»: Հիվանդը դարձյալ լուր ուղարկեց և խնդրեց գեթ գիշերով գալ, որ տեսնի իրեն: Եվ նա պատասխանեց. «Չեմ կարող, որովհետև գուցե իմ սիրտը մաքուր չգտնվի Տիրոջ առջև»: Հիվանդ եղբայրը վախճանվեց, և այդպես էլ իրար չտեսան:

10. Հայր Պիմենը պատմեց հետևյալը. «Երբ պտղակութից վերադարձանք Սկյութիա, Ալեքսանդրիայից մեզ ամենքիս համար մի-մի դորակ ձիթապտղի ձեթ բերին՝ որպես պտղաբաժին, իսկ դորակների բերանները սվաղած էին կրով: Երբ դարձյալ եկավ հնձի ժամանակը, ինչ ավելացել-մնացել էր, բոլորը բերին և դրին եկեղեցում: Ես իմ դորակի բերանը չէի բացել, այլ փոքրիկ ծակ էի բացել ասեղով, և ինքս իմ մեջ պարծենում էի, որպես թե մեծ բան էի արել: Երբ մյուս եղբայրները բերին իրենց դորակները նույնությամբ՝ կիրը անխաթար, իսկ իմը՝ ծակված, այնպիսի ամոթ ապրեցի, կարծես պոռնկության մեջ ընկած լինեի»:

11. Հայր Եսային կանչեց մի եղբոր ոտնլվայի և հյուրասիրելու համար բռով ոսպ լցրեց պուտուկի մեջ և դրեց կրակի վրա՝ եռալու: Դեռ եռ չեկած՝ հանեց կրակի վրայից: Եղբայրն ասաց. «Դեռ չի եփել, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Միթե՞ քեզ բավական չէ այն, որ կրա՛կը տեսար, և դա մեծ մխիթարություն է»:

12. Ոմն եղբայր իր խուցը տարավ տաք հացեր և կանչեց մի քանի ծեր կրոնավորների: Երբ նրանք կերան մի երկու կտոր, դադարեցին ուտել: Իսկ եղբայրը, տեսնելով նրանց ճգնավորական զսպվածությունը, ընկավ նրանց առջև՝ աղաչելով. «Հանուն Տիրոջ, կերե՛ք այսօր և կշտացե՛ք»: Եվ նրանք էլի կերան տասական պաքսիմատ: Ահա, տե՛ս, թե որքան սակավակյացության էին սովորեցնում իրենց:

13. Ես ճանաչում էի հայր Պետրոս Պիոնացուն, որը գինի չէր ըմպում: Երբ նա ծերացավ, եղբայրները փոքր-ինչ աղտեղի ջուր էին վերցնում և նրան պարտադրում էին խմել: Նա ասում էր. «Հավատացե՛ք ինձ, որ դա անուշ գինի է թվում ինձ»: Եվ դատապարտում էր իրեն աղտեղի ջուրն ըմպելու համար:

14. Հայր Պիմենն ասաց. «Եթե Նաբուզարդան դահճապետը չգար, ապա հրով երբեք չէր այրվի Աստծո տաճարը (Դ Թագ. ԻԵ 8-9)*: Այսինքն՝ եթե նախ հոգու մեջ չգար որովայնամոլության հեշտությունը, խորհուրդները երբեք չէին վնասվի թշնամու պայքարից»:*

15. Հայր Ելադիոսի մասին վանքում ասում էին, թե խցում ապրեց քսան տարի և երբեք աչքերը վեր չբարձրացրեց և եկեղեցու ձեղունը չտեսավ: Ասում էին, որ միայն հաց և աղ էր ճաշակում: Երբ զատկական պահքի օրերը եկան, տեսավ, որ եղբայրները միայն հաց ու աղ են ճաշակում, ասաց. «Այժմ ես պետք է պահքի համար ավելացնեմ տքնությունս. ուրիշ օրերին նստած էի ճաշակում, այժմ, քանի որ պահք է, ոտքի վրա կճաշակեմ հացս, որպեսզի չկորցնեմ վաստակս»:

16. Հայր Պիմենի մասին ասում էին, թե երբ նրան ճաշելու էին հրավիրում, անտեսում էր իր կամքը և գնում էր արտասվելով, որպեսզի իր եղբորը անհնազանդ չերևա և չտրտմեցնի նրան: Թողնում էր իր կամքը և իրեն խոնարհեցնելով՝ գնում էր նրա հետևից:

17. Ծերերից մեկն ասաց. «Խցերից մի եղբոր գիտեմ, որը պահեց զատկի բոլոր շաբաթները, իսկ երբ Հաղորդություն վերցրեց, փախավ, որ եկեղեցում չճաշակի: Առանց հացի՝ աղով խաշած մի ճակնդեղ ճաշակեց իր խցում՝ թաքցնելով իր ժուժկալությունը»:

18. Կիպրոսի եպիսկոպոս Եպիփանը լուր ուղարկեց հայր Հելիարոնին՝ խնդրելով, թե՝ ե՛կ տեսնենք իրար՝ նախքան այս մարմնից ելնելը: Եվ գնացին հանդիպելու իրար և խիստ ուրախացան միմյանց տեսությամբ: Երբ ճաշում էին, թռչուն դրին սեղանին, իսկ Եպիփան եպիսկոպոսը, վերցնելով այն, մատուցեց հայր Հելիարոնին: Հայր Հելիարոնն

ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, քանզի այն օրից ի վեր, երբ այս կարգն ընդունեցի, մորթված որևէ բան կերած չկամ»: Եպիփանը նրան ասաց. «Երբվանից ես այս կերպն ընդունեցի, ոչ մեկին չթողեցի իմ հանդեպ թշնամություն ունենալով՝ քուն մտնել, ոչ էլ ինքս մեկնումեկի հանդեպ թշնամություն ունենալով՝ քուն մտա»: Հայր Հելիարոնն ասաց. «Թողությո՛ւն շնորհիր, քանզի քո վարքը առավելագույն է, քան իմը»:

19. Մի անգամ բանջարեղեն և դդում բերին Սկյութիա և դրին եկեղեցում, որպեսզի երբ եղբայրները դուրս գան, փոքր-ինչ վերցնեն և տանեն իրենց խուղերը: Մի ծեր ևս վերցրեց մի փոքր բանջարեղեն և դդում և քաղցելով՝ ճանապարհին դրանք հում-հում կերավ: Նրան հանդիպած մի եղբայր հարցրեց. «Ո՞ւր է քո բանջարեղենը»: Նա պատասխանեց. «Կերա այն»: Եղբայրն ասաց. «Ահա՛ ես իմը պահում եմ»: Ծերը նրան ասաց. «Դու քաղցած չես, եղբա՛յր, դրա համար էլ պահում ես»:

20. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ իմ խցում»: Ծերը նրան ասաց. «Մի փոքր աղաջո՛ւր կեր, և կարիք չես ունենա որևէ բան եփելու»:

21. Հայրերից մեկը, որ բնակվում էր եղեգնուտում, պատմեց հայր Սիսոյի մասին, թե մի անգամ նա, կամենալով հաղթահարել քունը, ժայռից կախեց իրեն: Տիրոջ հրեշտակը եկավ, վայր իջեցրեց նրան, քանդեց կապերը և ասաց. «Այլևս այդպես չանես և ուրիշներին էլ չսովորեցնես այդպիսի բան»:

22. Ոմն եղբայր հարցրեց հայր Աբրահամին և ասաց. «Եթե ճաշակելու առիթ լինի, և մեկը սեղան դնի իմ առջև, և ես երեք պաքսիմատ ուտեմ՝ շա՞տ կլինի արդյոք»: Ծերն ասաց նրան. «Ի՞նչ ես խոսում, եղբա՛յր, այդքան շա՞տ ես ուտում, թե՞ մտածում ես, որ կալսելու ես եկել»:

23. Մի եղբոր մասին հայր Պիմենին ասացին, թե նա գինի չի խմում: Հայր Պիմենը նրան ասաց. «Գինին ամենևին մենակյացների համար չէ»:

24. Եղբայրներին կանչեցին Սկյութիա՝ չվան մաքրելու: Նրանցից մեկը հիվանդ էր և հազալիս՝ խորխ էր բերում և թքում, իսկ թուքը, ոչ իր կամքով, ցայտում էր եղբոր վրա: Այս եղբոր խորհուրդները նրան հուշում էին, թե՝ ասա հիվանդ եղբորը, որ դադարեցնի իր վրա թքելը: Իսկ նա առավ այդ թքից և իսկույն տարավ իր բերանը, այնժամ խորհուրդներն ասացին՝ մի՛ կեր, և այլևս դադարեցին նրան ասել այդ բանը:

25. Եղբայրներից մեկը քաղցեց առավոտյան և իր խորհուրդների դեմ պայքարեց մինչև ժամը երեքը: Երբ ժամը երեքը եղավ, բռնադատեց իրեն մինչև ժամը վեցը: Երբ ժամը վեցը եղավ, թրջեց հացը և նստեց ուտելու, բայց դարձյալ վեր կացավ և իր մտքում ասաց՝ համբերեմ մինչև ժամը ինը: Ժամը իններին աղոթքի կանգնեց և տեսավ, որ աղոթքի զորությունն իբրև ծուխ բարձրանում էր հացի զամբյուղից, և նրա քաղցը դադարեց:

26. Աբբա Արսենի մասին աբբա Դանիելն ասաց, թե նա ամեն գիշեր հսկում էր կատարում, իսկ առավոտյան, երբ կամենում էր փոքր-ինչ նստել, քնին ասում էր. «Հեռո՛ւ ինձնից, չա՛ր ծառա», և նստած՝ մի փոքր քունն առնում էր ու վեր կենում:

27. Աբբա Արսենիոսն ասաց. «Գործ ունեցող մենակյացին մեկժամյա քունը բավական է»:

28. Աբբա Արսենիոսի մասին դարձյալ ասում էին, թե արմավենի թրջելու ջուրը չէր փոխում, այլ միշտ նույնի մեջ էր դնում և հյուսում ու կարում էր պարանը՝ մինչև ժամը վեցը: Ծերերը խնդրեցին և ասացին. «Ինչո՞ւ արմավենու ջուրը չես փոխում, դա արդեն հոտել է»: Նա պատասխանեց. «Խունկի անուշահոտության փոխարեն, որ առա աշխարհում, ինձ արժան է այս հոտն առնել այստեղ»:

29. Աբբա Թեոդոսն ասաց. «Հացի սակավությունը կիզում է կրոնավորի մարմինը»: Մեկ այլ ծեր ասաց. «Հսկումն ավելի է կիզում մարմինը»:

30. Աբբա Հովհաննես Կարճահասակն ասաց. «Թագավորը եթե կամենում է ընկճել քաղաքը, նախ կտրում է ջուրն ու ուտելիքը, և այդպիսով անհնազանդ թշնամիները սովից և ծարավից կորստյան են մատնվում: Նույնը և մարմնի չարչարանքի պարագային՝ եթե կրոնավորը պահեցողությամբ և ծարավով կենցաղավարի՝ թշնամիները կտկարանան նրա անձի մեջ, և ախտերը կհեռանան նրա հոգուց»:

31. Ոմն եղբայր հարցրեց հայր Պամբոյին և ասաց. «Բարի՞ է, հա՛յր, դրացուն գովելը»: Ծերն ասաց. «Բայց ավելի բարի է լռությունը»: Նույն հայր Պամբոն ասաց. «Ինչպես ծուխն է հալածում մեղվին, և այնժամ վերցնում են նրա ժրաջանության արդյունքը՝ քաղցր մեղրը, նույնպես և մարմնական հանգիստն է հոգուց հալածում Աստծո երկյուղը, և բոլոր բարի գործերը կորչում են»:

32. Աբբա Տիթոնիոսն ասաց. «Ով իր լեզուն չի կարողանում զսպել բարկության ժամին, վիշտ էլ չի կարող ունենալ իր մեջ»: Դարձյալ

ասաց. «Ավելի լավ է միս ուտել և գինի ըմպել, քան շատախոսությամբ՝ ընկերոջ անձն ուտել»: Դարձյալ ասաց. «Շողոմ, քսու և ականջաշշունջ խոսքերով օձը Եվայի միջոցով Ադամին հանեց դրախտից, այս օրինակով էլ՝ ով չարախոսի դրացուն, իր անձը կկորցնի, իսկ ովքեր ականջալուր լինեն՝ չեն ապրի»:

33. Ծերն ասաց. «Զորավոր գազան է առյուծը, սակայն հանուն իր որովայնի որոգայթն է ընկնում և իր ողջ զորությունը կորցնում. նույնպես և մենակյացը՝ եթե լցնի որովայնը, հակառակորդի որոգայթը կընկնի և կկորչի»:

34. Մի անգամ Սկյութիայում տոն էր: Մի եղբոր բաժակով գինի մատուցեցին, իսկ նա ասաց. «Այդ քո մահն ինձնից հեռո՛ւ տար, եղբա՛յր»: Եղբայրներն այս տեսնելով՝ նրանք էլ չընդունեցին:

35. Ծերերից մեկը գնաց մեկ այլ ծերի մոտ: Վերջինս իր աշակերտին ասաց. «Մեզ համար ոսպնաթա՛ն պատրաստիր»: Աշակերտը կատարեց՝ ինչ պատվիրել էր, և նրանք այդպես էլ մնացին մինչև հաջորդ օրվա ժամը վեցը՝ միմյանց հետ հոգեշահ բաներից խոսելով: Ապա դարձյալ ասաց աշակերտին. «Մեզ համար մի քիչ ոսպնաթա՛ն պատրաստիր, որդյա՛կ»: Աշակերտն ասաց. «Երեկ պատրաստել էի, հա՛յր»: Եվ վեր կացան ճաշակելու:

36. Ծերն ասաց. «Որկրամոլությունը պոռնկության արմատն է. ով զսպի որովայնը, կարող է զսպել նաև պոռնկությունն ու լեզուն»: Ծերն ասաց. «Հոգու հարստությունը ժուժկալությունն է: Ա՛յս արեք խոնարհությամբ և փախե՛ք ամբարտավանությունից, որ մայրն է բոլոր չարիքների»:

37. Աբբա Դեոսկորոս Ինաքաստեոսի մասին, որ հռետորություն էր ուսանել նախկինում, ասում էին, թե նրա ուտելիքը գարի ու ոսպ էր, և ինքն իր համար կենցաղավարություն էր սահմանել և ասում էր. «Այս մի տարին բնավ չեմ խոսի մեկնումեկի հետ, այս տարում եփած կերակուր չեմ ուտի բնավ, այս անգամ միրգ կամ բանջարեղեն չեմ ճաշակի»: Սա անում էր ինքնակամ, և կատարեց այն, ինչ սկսել էր:

38. Աբբա Մակարիոս անապատականի մասին ասում էին, թե բնակվում էր Պենթուկլայի վանքի մերձակայքում: Վաթսուներեք տարվա ճգնավորության ընթացքում այս էր նրա գործը՝ ողջ շաբաթը պահում էր և միայն կիրակի էր ուտում, մինչև իսկ ոմանց թվում էր՝ անմարմին է. ողջ օրը գործում էր և տալիս աղքատներին, և ոչ մեկից ոչինչ

չէր վերցնում: Լսեցին նրա մասին քրիստոսասերները, եկան և նրան ուտելիք տվեցին, իսկ նա չվերցրեց և ասաց. «Զե՛մ վերցնի, որովհետև իմ ձեռագործը կերակրում է ինձ և նրանց, ովքեր հանուն Աստծո են գալիս ինձ մոտ»:

39. Այս անապատում ոմն մեծ ծերի՝ աբբա Պետրոսի մասին ասում էին, թե հիսուն տարի նստեց իր այրում. ո՛չ հաց կերավ, ո՛չ գինի ըմպեց, այլ միայն թեփ կերավ, այն էլ՝ շաբաթը երկու անգամ:

40. Հայր Աղաթոնիոսի մասին ասում էին, թե երեք տարի քար պահեց իր բերանում, մինչև որ լռության վարժվեց և այդպես էլ վախճանվեց:

41. Մի օր հայր Եսային հաց էր ուտում ու հացը թրջում էր աղաջրով, և տեսնելով հայր Աքիլասին՝ թաքցրեց: «Այդ ի՞նչ էիր ուտում», — հարցրեց հայր Աքիլասը: Եվ նա ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, հա՛յր, որովհետև այսօր տոթին արմավ էի կտրում, և կոկորդս չորացավ, ու չկարողացա հացը աղով կուլ տալ, ուստի պնակի մեջ աղաջուր սարքեցի և հացը թրջեցի»: Եվ Աքիլասը հեկեկալով ասաց. «Եկե՛ք, տեսե՛ք Եսայիասին, որ Սկյութիայում սպաս է ուտում: Եթե այդպես պիտի անես, ապա ինչո՞ւ ես այստեղ, ե՛լ գնա՛ Եգիպտոս, ո՛վ մարդ»:

42. Հայր Սերապիոնը պատմեց, թե. «Երբ երիտասարդ էի և հայր Թեովնայի մոտ էի, հաց ուտելիս մի պաքսիմատ էի դնում ծոցս և գաղտնի ուտում: Օրերից մի օր ոմն ծեր եկավ իմ վարդապետի մոտ՝ հոգևոր օգտի համար: Այլևայլ բաների շարքում իմ վարդապետը հիշեց նաև այս, թե ոչ մի բանի վրա Աստված այնպես չի բարկանում, ինչպես այն բանի վրա, երբ մեկն իր հոգևոր հորից որևէ բան է ծածկում: Երբ ես լսեցի այս, խռովք ապրեցի, հանեցի պաքսիմատը ծոցիցս և նրա ոտքերն ընկնելով՝ լացով խոստովանեցի, իսկ իմ ծերն ինձ բարձրացրեց և ասաց. «Քրիստոս Աստված ազատի քեզ այդ մեղքի ծառայությունից»: Դևը ճչալով հրի պես դուրս ելավ իմ ծոցից, և տունը լցվեց ծխով ու ծծումբի հոտով: Իսկ իմ վարդապետն ինձ ասաց. "Ահա՛ իմ Աստված տվեց քեզ իր Արքայությունը, որովհետև անսացիր իմ խոսքերին"»:

43. Մեկը հարցրեց հայր Զոյիլոսին. «Եթե երեք բաժակ գինի ըմպեմ, շա՞տ է, հա՛յր»: Եվ նա պատասխանեց. «Եթե դևերը կենդանի չեն՝ շատ չէ»:

44. Հայր Սիսոն ասաց. «Տասներկու այրեր գնում էին միասին: Առաջնորդը մոլորվեց, և դա բոլորն իմացան, սակայն այդպես մոլորված գնացին ևս տասներկու մղոն, և բոլորը լռություն պահպանեցին»:

45. Ոմն ծեր ասաց. «Տիրոջ ասածը, թե՝ ով վերարկու ունի, թո՛ղ տա և իր համար սուսեր առնի (Ղուկ. ԻԲ 36)*, այն է, թե՝ ով հանգիստ ունի, թո՛ղ նեղություն փնտրի՝ մտնելով անձուկ ճանապարհ, որ դեպի կյանք է տանում: Եվ եթե Դավիթը չբռներ առյուծի բերանից ու կոկորդից, չէր կարողանա խեղդել* (Ա Թագ. ԺԷ 34-35)*: Այսպես էլ՝ եթե մեկը չզսպի իր լեզուն ու որկորը, չի կարող հաղթել նրան, ով մռնչում է որպես առյուծ* (Սաղմ. ԻԱ 14, Ա Պետ. Ե 8)*»:*

46. Հայր Սիլովանեն իր աշակերտի հետ գնում էր, երբ եղբայրների հանդիպեց և հաց կերավ նրանց հետ: Երբ նորից շարունակեցին ճանապարհը, ջրի հանդիպեցին, և աշակերտը կամեցավ խմել: Հայր Սիլովանեն հարցրեց. «Այսօր պահքի օր չէ՞»: Նա ասաց. «Ուտելով չլուծարվե՞ց»: Հայրը պատասխանեց. «Ո՛չ, որովհետև ոչ թե կերանք, այլ սեր ցուցաբերեցինք»:

47. Գինի բերեցին Սկյութիա, և եղբայրները հավաքվեցին՝ փոքրինչ ճաշակելու: Երբ այս տեսավ մի եղբայր, փախավ և բարձրացավ մի կտուրի վրա, բայց այդ կտուրը փլվեց, ու նա սալջարդ ստացավ: Տեսնելով այդ՝ մյուսներն սկսեցին հանդիմանել նրան, իսկ առաջնորդը, նրան իր գիրկը առնելով, գովեց և ասաց. «Կենդանի՛ է Տերը, որ այս կտուրն այլևս չի շինվի, որպեսզի բոլորը իմանան, որ անձը գինուց պահելու համար է փլվել սա»:

48. Մի մենակյաց լեռան վրայից իջնելիս տեսավ մի հավատավոր կնոջ և փոխեց ճամփան: Վերջինս ասաց. «Եթե դու կատարյալ կրոնավոր լինեիր, չէիր մտածի, թե կին տեսար»:

49. Ծերն ասաց. «Որկորի խորհուրդը պետք է հապաղեցնել և ուտել մեղմորեն և ոչ թե՝ անասնաբար»:

50. Ոմն ծեր ծանր հիվանդացավ այն աստիճան, որ արյուն էր փսխում: Մի եղբայր բոված ալրախյուս պատրաստեց և նրա մեջ փոքրինչ միրգ խառնելով՝ բերեց հիվանդին և խնդրեց ճաշակել այն՝ ասելով. «Ա՛ռ, կե՛ր, հա՛յր, հանուն սիրո, քանզի այն օգտակար է քեզ»: Ծերը երկար ժամանակ ապշած մնալուց հետո ասաց. «Ո՞ր գրքում գտար այդ բանը. ճշմարիտ եմ ասում, որ իմ ցանկությունն այն է, որ Աստված ինձ այս հիվանդության մեջ թողներ ևս երեսուն տարի»: Եվ չընդունեց խյուսը:

51. Ոմն ծեր ճգնում էր հեռավոր անապատում: Մի եղբայր գնաց նրա մոտ և նրան հիվանդ գտավ: Անկողնուց հանելով՝ լվաց նրան և իր հետ բերածից մի փոքր ճաշ եփեց, որ նա ուտի: Ծերն ասաց. «Հիրավի, եղբա՛յր, մոռացել էի, որ մարդիկ այսպիսի հանգիստ ունեն»: Իսկ երբ այցելած եղբայրը իր բերած գինին մեջտեղ բերեց, ծերը, տեսնելով այդ, լաց եղավ և ասաց. «Չէի ակնկալում մինչև իմ մահը գինի ըմպել»:

52. Աբբա Իլիգիոսն իր աշակերտին ասաց. «Որդյա՛կ, քիչ առ քիչ պահքերի վարժեցրո՛ւ քո որովայնը, քանզի, ինչպես տիկը ուռչելով ավելի է ընդարձակվում, այնպես էլ որովայնը գերառատ կերակուրներից է ընդարձակվում, իսկ եթե ընդունածը սակավ լինի՝ կսեղմվի և քիչ կպահանջի»:

53. Մի անգամ Սկյութիայում հայտարարվեց քառասունօրյա պահքի շրջանը: Մեկը, գալով մեծն ծերի մոտ, ասաց. «Աբբա՛, պահքը սկսվեց»: Ծերը նրան ասաց. «Ո՞ր պահքն սկսվեց»: Եղբայրն ասաց. «Քառասնօրյան, հա՛յր»: Այնժամ ծերն ասաց. «Արդարև, որդյա՛կ, ահա արդեն հիսուներեք տարի է, որ չգիտեմ, թե երբ են մտնում և կամ երբ են ելնում պահքից, քանզի իմ ողջ կյանքը պահք է»:

54. Ոմն ծեր կամեցավ քառասուն օր առանց ջուր ըմպելու ճգնել: Երբ տոթ էր լինում, լվանում էր կուժը, լցնում ջրով և դնում էր իր առջև: Երբ եղբայրների հարցին, թե ինչո՞ւ է դա անում, ծերը պատասխանեց և ասաց. «Որպեսզի առավել տանջվեմ ծարավից և առավել վարձ ստանամ Աստծուց»:

55. Հայր Մակարիոս Եգիպտացու մասին ասում էին, թե երբ եղբայրների հետ ճաշելիս էր լինում, իր վրա կանոն էր դրել, որ եթե այնտեղ գինի լինի, և ինքը ըմպի եղբայրների հետ, ամեն մի բաժակի դիմաց մեկ օր ջուր չպետք է ըմպի: Եղբայրները նրան գինի տալիս էին՝ մխիթարության համար, իսկ նա ուրախությամբ ընդունում էր, որպեսզի հետո տանջեր իրեն: Իսկ նրա աշակերտը, քանի որ գիտեր, որ նրան վնասում են, ասում էր. «Ի սեր Աստծո, նրան գինի մի՛ տվեք, այլապես խցում ինքն իրեն կտանջի»: Եվ եղբայրները, իմանալով իսկությունը, նրան այլևս գինի չէին տալիս:

56. Ոմն ծերի մոտ բնակվում էր մի ծույլ եղբայր: Սա, տեսնելով ծերին շաբաթը մեկ անգամ ուտելիս, մի օր ասաց նրան. «Աբբա՛, ոմանք ասում են, թե առավել ժուժկալությունը մարդուն ամբարտավան է դարձնում»: Ծերը նրան ասաց. «Որդյա՛կ, իսկ եթե հեղգությամբ

է գալիս խոնարհությունը, ուրեմն գնանք կանանց մոտ, ուտենք և արբենք: Վա՜յ մեզ, որ ծաղրվում ենք ու չենք իմանում, չենք լսում Դավթի ասածն առ Աստված, թե. «Տե՛ս իմ խոնարհությունն ու տառապանքը, և թողությո՛ւն տուր իմ մեղքերին» (Սաղմ. ԻԴ 18)*: Ասաց դարձյալ. «Ով մեղանչել է Աստծո առջև, պարտավոր է իր անձը հեռացնել մարդկային սիրուց, մինչև հավաստիանա, որ Աստված իրեն բարեկամ դարձավ, քանզի մարդկանց սերը շատ անգամ մեզ հեռացնում է Աստծո սիրուց»:*

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

57. Հայր Դանիելը հայր Արսենիոսի մասին ասում էր, թե այդքան ժամանակ, որ նա մեզ հետ էր բնակվում, մենք տարեկան մեկ պարկ ալյուր էինք տանում նրան: Իսկ երբ գնում էինք նրա մոտ, մենք ևս դրանից էինք ուտում, և նրան բավականացնում էր:

58. Նրա մասին դարձյալ ասաց. «Երբ լսում էր, որ այգեկութը վերջացավ, ասում էր. «Բոլոր մրգերից բերե՛ք ինձ»: Եվ տարվա մեջ մեկ անգամ բոլորից համտես անելով՝ գոհանում էր բոլոր բարիքները Տվողից»:

59. Հայր Աղաթոնն ու իր աշակերտները ճանապարհ էին գնում, երբ նրանցից մեկը ճանապարհին ընկած մի փոքրիկ դալար ոլոռ տեսավ և ծերին ասաց. «Հա՛յր, եթե կամենում ես՝ թո՛ւյլ տուր ինձ վերցնել սա»: Ծերը զարմացած նայեց նրան և ասաց. «Դա դո՞ւ դրեցիր այդտեղ»: Եղբայրն ասաց. «Ո՛չ, հա՛յր»: Եվ ծերն ասաց. «Եվ ինչպե՞ս ես կամենում վերցնել այն, ինչը դու չես դրել»:

60. Նրա և հայր Մովսեսի մասին ասում էին, թե երբ վաճառում էին իրենց ձեռագործները, մեկ անգամ էին ասում գինը, և ով ինչ տալիս էր՝ լռությամբ վերցնում էին: Նույնպես և՝ ապրանքատերերն ինչ գին ասում էին՝ այն լռությամբ տալիս էին և հակառակ ոչինչ չէին խոսում:

61. Հայր Անուբն ասաց. «Այն օրվանից, ինչ քրիստոնյա կոչվեցի, երբեք սուտ դուրս չեկավ իմ բերանից»:

62. Վանական քահանա Բենիամինը պատմեց. «Մի անգամ գնացինք Սկիտե՝ մի ծերի մոտ, և կամեցանք նրանից մի քիչ ձեթ վերցնել: Եվ երբ խնդրեցինք, մեզ ասաց. «Տեսեք՝ ո՞ւր է այն ձեթի ամանը, որ երեք տարի առաջ բերեցիք ինձ, որովհետև ինչպես դրեցիք՝ այնպես

էլ մնում է»: Եվ մենք, տեսնելով ձիթամանը, ապշեցինք ծերի կենցաղավարության վրա»:

63. Հայր Զենոնի մասին ասում էին, թե նա մի անգամ շրջում էր Պաղեստինում և հոգնելով՝ նստեց մի թզենու տակ, որ հաց ուտի: Խորհուրդները նրան ասացին. «Այդ թզից վերցրո՛ւ և կե՛ր»: Իսկ ինքն իր խորհուրդներին պատասխանեց. «Բայց ինչպե՞ս անեմ, քանզի գողերը տանջանքների են մատնվում. ահա դու փորձի՛ր քեզ, թե կարո՞ղ ես դիմանալ տանջանքներին»: Եվ փութկոտ վեր կենալով՝ հինգ օր մնաց արևի կիզիչ տոթի տակ, և ողջ մարմինն արևահարվեց: Եվ ինքն իրեն ասաց. «Եթե հրի ու տանջանքների չես կարող դիմանալ, եթե տանջանքների մեջ չես կարող ժուժկալել՝ երբեք գողացված բան մի՛ կեր»:

64. Հայր Եսայիասն ասաց. «Դու լռությունը ավելի՛ սիրիր, քան խոսելը, քանզի լռությունը հավաքում է մտքերը, իսկ խոսելը ցրում է ու կորցնում»:

65. Հայր Թեոդորոսն ասաց. «Մի՛ նստիր կամ ննջի՛ր այնտեղ, ուր կին կամ երիտասարդ կա: Հացի պակասությունը ցամաքեցնում է մարմինը, իսկ տքնությունը ոչնչացնում է ախտերը»:

66. Հովհաննես Կարճահասակն ասաց. «Մի անգամ իմ՝ արմավենուց գործած զամբյուղներն առած՝ դուրս եկա Սկիտեի ճանապարհի վրա, որտեղ և տեսա մի ուղտարածի, որ չարամիտ դիտավորություն էր դրսևորում և ինձ բարկության էր մղում, բայց ես թողեցի զամբյուղներն ու փախա նրանից»:

67. Դարձյալ ասաց. «Սկիտեի հայրերը միայն հաց ու աղ էին ճաշակում և ասում էին, թե՝ դա էլ է մեզ շատ: Տեսե՛ք, թե որքան զորավոր էին նրանք Աստծո գործերի մեջ»:

68. Ոմն եղբայր հարցրեց հայր Իսիդորոսին և ասաց. «Ինչո՞ւ են դևերն այդպես երկնչում հեզերից»: Ծերը նրան ասաց. «Այն օրվանից, ինչ կրոնավոր դարձա, ձգտեցի չթողնել, որ իմ նեղսրտությունը կոկորդիցս դուրս գա»:

69. Հայր Իսիդորոս քահանայի մասին ասում էին, թե նրա մոտ եկավ մի եղբայր և հրավիրեց նրան սիրո ճաշի: Ծերը չկամեցավ գնալ, այլ ասաց նրան. «Ադամը կերակուրից հաղթվեց և ընկավ դրախտից»: Եղբայն ասաց. «Դու և՞ս երկնչում ես կերակուրներից և խցից ելնելուց, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ինչո՞ւ չվախենամ, որդյա՛կ, մի՞թե դևը որպես մռնչացող առյուծ չի շրջում և փնտրում, թե ո՛ւմ կուլ տա

և կորստյան մատնի»: Եվ բազմիցս ասում էր. «Եթե մեկն իրեն տա ճաշկերույթների ու գինարբուքի, չի կարող ցանկությունների պատրող խորհուրդներից ազատվել: Ղովտն էլ երբ իր դուստրերի կողմից հարկադրված՝ հարբեց գինով, դևը հեշտությամբ հարբածությունից նրան գցեց անօրեն շնության մեջ»:

70. Հայր Իսահակն ասաց. «Մի եղբոր տեսա, որ ցորեն էր հնձում և կամեցավ այդ ցորենից մի հասկ ուտել: Դիմելով ցորենի տիրոջն՝ ասաց. «Թույլ կտա՞ս սրանից մի հասկ ուտել»: Իսկ տերը, երբ լսեց հարցը, զարմացավ և ասաց. «Ցորենը քոնն է, ինձ ինչո՞ւ ես հարցնում»: Ահա այս աստիճան հնազանդությամբ էր ճգնում այդ երանելի եղբայրը:

71. Հայր Իսահակի մասին ասում էին, թե հացը խառնում էր բուրվառի մոխրով, որով խնկում էին եղբայրները, և այդպես ուտում. դա էր նրա մշտական ուտելիքը:

72. Մի անգամ հայր Իսահակը տկարացավ ծանր հիվանդությունից և այդպես մնաց երկար ժամանակ: Մի եղբայր նրա համար մի փոքր կերակուր պատրաստեց և նրան հորդորեց ուտել, սակայն ծերն ասաց. «Թո՛ւյլ տուր ինձ, եղբա՛յր, քանզի կամենում եմ այս տկարությանս մեջ մնալ ևս երեսուն տարի»:

73. Ոմն ծեր մի անգամ գնաց մեկ այլ ծերի մոտ և ասաց նրան. «Արի՛ գնանք հայր Հովսեփին տեսակցության: Ասա՛ քո աշակերտին, որ մեզ համար ավանակը պատրաստի»: Իսկ նա ասաց. «Դո՛ւ ասա նրան, հա՛յր, նա քո կամքը կկատարի»: Ծերն ասաց. «Ի՞նչ է նրա անունը»: Իսկ ծերը պատասխանեց. «Ուղիղ եմ ասում քեզ՝ չգիտեմ նրա անունը»: Մյուս ծերն ասաց. «Քանի՞ տարի է, որ նա քեզ մոտ է մնում»: Ծերն ասաց. «Երեք տարի»: Մյուսն ասաց. «Եթե դու երեք տարում չգիտեցար քո աշակերտի անունը, ապա որքա՞ն անպատշաճ կլինի՝ եթե ես մեկ օրում իմանամ նրա անունը»:

74. Հայր Կասիանոսը պատմեց մեզ, թե մի անգամ վանական համալիրի առաջնորդ հայր Հովհաննեսը եկավ հայր Պասիոսի մոտ, որը միայնակ բնակվում էր ներքին անապատում՝ քառասուն տարի: Հայր Հովհաննեսը նրան շատ էր սիրում, ուստի նաև մեծ համարձակություն ուներ նրա մոտ: Սա նրան ասաց. «Այս էլ քանի՞ տարի է, որ հեռացար մարդկանցից և մարդաբնակ տեղերից և մարդկանցից երբեք նեղություն չկրեցիր: Այդքան ժամանակում ի՞նչ ձեռք բերեցիր»: Ծերը նրան պատասխանեց. «Այն օրվանից, ինչ կրոնավոր դարձա, արե-

գակը չտեսավ իմ կերակրվելը, և ոչ էլ գիշերը՝ միտքս սրտմտության մեջ»:

75. Ոմն ծեր, որի անունը Կոնոն էր, բնակվում էր սուրբ հայր Թեոդոս վանահոր միաբանությունում: Նա երեսունհինգ տարի շաբաթը մեկ անգամ էր ճաշակում, այն էլ՝ միայն հաց ու ջուր, միշտ աշխատում էր և եկեղեցուց բնավ դուրս չէր գալիս:

76. Հայր Ղունկիանոսն անդամալույծ դարձավ բազում հիվանդությունների հետևանքով և իր անձին ասաց. «Զարչարեցիր և կմեռնես, իսկ եթե դու ժամանակից շուտ ես կերակուր խնդրում, ես ժամանակին էլ քեզ չեմ տա քո կերակուրը»:

77. Հայր Մակարիոսն ասաց. «Եթե կամենաս տեսնել որևէ ծերի, և նա ցնորված լինի, մի՛ բարկանա և քո կամքը կատարելով՝ մի՛ հանդիմանիր նրան, որովհետև պետք չէ ուրիշին ապրեցնել և սեփական անձը կորստյան մատնել»:

78. Հայր Մակարիոս Քաղաքացին և մի քանի այլ եղբայրներ մի անգամ գնացին Կափատբա լեռը: Երբ օրը մթնեց, եղբայրները նրան ասացին. «Ե՛կ, մեզ հետ ճաշակի՛ր, հա՛յր», իսկ նա նստելով նրանց հետ՝ հաց կերավ: Երկրորդ օրը դարձյալ հրավիրեցին նրան, սակայն նա հրաժարվեց և ասաց. «Դո՛ւք կերեք, որդյակնե՛ր, քանզի նորեկներ եք, իսկ մեզ վայել չէ տարաժամ ճաշակել, որովհետև ծեր ենք»:

79. Հայր Մինասը մեզ պատմեց հետևյալը. «Նստած էի մի անգամ իմ սենյակում, երբ ինձ մոտ եկավ մի անծանոթ եղբայր և խնդրեց տանել իրեն հայր Մակարիոսի մոտ: Ես նրան տարա ծերի մոտ: Երբ ծերը աղոթեց մեզ վրա, և նստեցինք, եկվոր եղբայրը ծերին ասաց. «Արդեն երեսուն տարի է, հա՛յր, որ միս չեմ ճաշակել»: Ծերը նրան ասաց. «Սակայն թո՛ւյլ տուր ինձ, որդյա՛կ, նաև իմանալ, թե որքա՞ն ժամանակ չես դատել քո եղբորը, չես բամբասել կամ չես չարախոսել քո մտքում, կամ դատարկ խոսք դուրս չի եկել քո բերանից»: Այնժամ նա, ընկնելով ծերի ոտքերը, ասաց. «Աղո՛թք արա ինձ համար, հա՛յր, գուցե թե կարողանամ բարի ընթացքի սկիզբ դնել»:

80. Հայր Պիմենն ասաց. «Եթե մենակյացը հավատա Տիրոջ խոսքին, որ ասում է. «Քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ 37)*, ապա նա կընտրի լռությունը»:*

81. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Հաց չեմ ուտում, այլ միայն բանջարեղենով եմ կերակրվում: Սա բարի՞ է»: Ծերը նրան

ասաց. «Ո՛չ, բարի չէ. սակայն ավելի լավ է՝ դու քիչ հաց ու բանջար ուտես, բայց քո կարիքների համար չգնաս քո հարազատների ու բարեկամների մոտ»:

82. Ասաց դարձյալ. «Այս երեք բանը չենք կարող արմատապես կտրել՝ կերակուր, հագուստ և քուն, սակայն սրանց մի մասը պետք է պակասեցնենք»:

83. Մի անգամ Սկիտեում միասին նստած էին հայր Բեսարիոնը, հայր Պամբոն, հայր Պայեսոն ու հայր Աթերիսը և խոսում էին իրար հետ: Ոմն եղբայր հարցրեց նրանց, թե ինչպե՞ս պետք է կենցաղավարեն եղբայրները: Ծերերը նրան ասացին. «Բազում ճգնություններով և ժրաջանությամբ, և միտքը պիտի պահեն ընկերոջը դատելուց»:

84. Մի անգամ հայր Պիորը գնում էր և միաժամանակ՝ ուտում: Ոմանք հարցրին. «Ինչո՞ւ ես այդպես ուտում, ծե՛ր»: Իսկ նա ասաց. «Ձեմ կամենում սա գործ դարձնել ինձ համար, որովհետև սա անարգ գործ է, թո՛ղ իմ հոգին չկարծի, թե սա մարմնի հանգիստ է»:

85 Նաև հայր Պողոսի մասին էին ասում, թե նա քառասուն օր մնաց մի քիչ ոսպով, մի դորակ ջրով և մի զամբյուղով, որը քանդում էր ու կրկին հյուսում ու կրկին քանդում, մինչև որ զատկի տոնը մոտեցավ, և նա դուրս ելավ խցից:

86. Ոմն եղբայր հարցրեց հայր Պալատիոնին և ասաց. «Ի՞նչ անեմ, ասա՛, հա՛յր, քանզի արդեն երեք տարի է՝ երկուական օրով պահեցողություն եմ անում և չեմ կարողանում ազատվել պոռնկության դևից»: Ծերը նրան ասաց. «Որդյա՛կ, երբ Տերը Եսայի մարգարեին ուղարկում էր Իսրայելի ժողովրդի մոտ, նրան ասաց. «Գոչի՛ր ողջ զորությամբ և մի՛ խնայիր, շեփորի պես բարձրացրո՛ւ ձայնդ և պատմի՛ր ժողովրդին իր՝ Հակոբի տան մեղքերն ու անօրենությունները ... որովհետև ինձ են փնտրում և կամենում են մերձենալ ինձ և ասել. «Մենք ծոմ պահեցինք, բայց դու չիմացար, խոնարհեցրինք մեր անձերը, բայց դու չնայեցիր մեզ» (Եսայի ԺԸ 1-3)*: Սրանց պատասխան տվեց և ասաց. «Ձեր պահեցողության օրերին ձեր չար կամքն էիք կատարում, վշտացնում էիք նրանց, ովքեր ձեր ձեռքի տակ էին, դատաստանների ու կռիվների մեջ էիք պահում»: Եվ Տիրոջից այս լսեցին. «Ես ինձ համար այդպիսի պահեցողություն չընտրեցի,– ասում է Տերը,– եթե քո պարանոցը կորացնես երկաթի լծողակի նման և քուրձերով նստես մոխիրների վրա, այդ ևս պահեցողություն չեմ համարի»* (Եսայի ԺԸ 5)*: Ուրեմն, որդյա՛կ, երբ դու պահեցողություն ես անում,*

ինչպե՞ս ես ապրում կամ ի՞նչ ես անում»: Եղբայրն ասաց. «Ես առավոտյան արմավաճյուղեր եմ գործում և բերանացի սաղմոսում, ապա ժամը երեքին և վեցին վեր եմ կենում և աղոթում, մի փոքր ննջում, հետո դուրս եմ ելնում և մի քիչ շրջում, ապա դարձյալ ներս մտնելով՝ նստում եմ ու շարունակում ձեռագործս՝ մինչև որ երեք մախաղ ավարտեմ: Հետո՝ ժամը իններին և երեկոյան, աղոթում եմ, հարյուր անգամ ծունր եմ իջնում, մի փոքր ննջում, վեր կենալով՝ ողջ գիշեր՝ մինչև առավոտ, աղոթում եմ: Երկրորդ օրը՝ ժամը իններին, մի փոքր եփած կերակուր եմ ուտում՝ մինչև հաջորդ լուսաբաց»: Ծերը նրան ասաց. «Դա կատարյալ պահք չէ, քանզի եթե քեզ պահես կերակուրներից, իսկ մեղքերից՝ ոչ, և կամ ինչ-որ մեկին չար բան ասես, դատես կամ չարախոսես, ախորժես՝ որևէ մեկին չար բան անել և կամ խորհես ախտաժետ, զազիր և պիղծ գործերի մասին, ապա քեզ համար ավելի լավ է՝ օրը հինգ անգամ կերակրվել և զգուշանալ սրանցից, որ թվեցի, քան թե քաղցած լինել հացից և հագենալ այդպիսի զազրելի մեղքերով ու չարիքներով, որովհետև ի՞նչ շահ, եթե կերակուրներից զրկվես, սակայն լի լինես ամեն տեսակ ախտերով: Ըստ հայրերի՝ ճշմարիտ պահքը ամեն տեսակ մեղքերի դադարեցումն է: Իսկ դու չգիտե՞ս, որ ով սրտով ու մտքով ցանկություններն է կատարում, թեկուզ հացաքաղց և ցամաքած էլ լինի, նա մեղքով հագեցած է և արբած: Սակայն եթե դու կամենում ես Աստծուն հաճելի պահք պահել, նախ ա՛յս պահիր. թո՛ղ երբեք քո բերանից տգեղ խոսք դուրս չգա, հրաժարվի՛ր ըկերոջդ դատելուց և ամեն տեսակ չարախոսությունից, ամեն տեսակ դատարկաբանություն լսելուց, որքան կարող ես՝ սրբի՛ր քո սիրտն ու միտքը, մաքրի՛ր քեզ բոլոր գարշելի ու աղտեղի խորհուրդներից, որոնք հոգին ու մարմինը պղծողներն են, ինչպես նաև՝ ամեն տեսակ ոխակալությունից ու ագահությունից: Եվ որ օրը պահես, հացն ու ջուրը թո՛ղ քեզ բավական լինեն, իսկ որ օրը չուտես, հաշվի՛ր այդ օրվա կամ օրերի ուտելիքի ծախսը և այն տո՛ւր տառապած եղբորն ու բաժանի՛ր աղքատներին, որպեսզի նրանք էլ աղոթեն քեզ համար: Թառամեցրո՛ւ մարմինդ տքնությամբ, ծնրադրությամբ, աշխատանքով և մահվան հիշողությամբ, իսկ երբ ննջես, նստա՛ծ ննջիր, այն էլ՝ մի փոքր: Մախաղի գործը թո՛ղ և զամբյո՛ւղ հյուսիր, և հիշի՛ր, որ եթե երիտասարդությունը չվարժեցվի մեծամեծ վշտերով, նեղություններով, պահքերով, ճգնությամբ, տքնությամբ ու գետնախշտությամբ, չի կարողանա դևերից ազատվել: Սրա համար էլ մեր երանելի հայրերը երիտասարդներին սենյակներ չէին կանչում և ոչ էլ թույլ էին տալիս առանձնախցերում ընակվել, այլ կարգադրում էին եղբայրների

միաբանությունում կենալ, համբերել և վարժվել: Փափուկ հագուստներ չէին հագցնում, այլ՝ հին, կարկատված և խարազն, և ճգնավոր ծերի էին հանձնում և խիստ զգուշացնում, քանզի պարապությունն ու մարմնի հանգիստը, երկու անգամ ուտելն ու քունը և նմանատիպ բաները ոչ միայն պոռնկության դևերին են մեզ վրա գրոհել տալիս, այլև ճանձրույթ, ամբարտավանություն և այլ բազում չարիքներ են արմատավորում մեր մեջ, և թո՛ղ այդ ամենից մեզ Տերը փրկի»:

87. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, եթե դուրս գամ՝ եկեղեցի գնալու և հրավիրեն ինձ ճաշկերույթի. լսե՞մ նրանց, թե՞ ոչ»: Ծերն ասաց. «Խիստ ծանր է այդ գործը»:

88. Մի անգամ հայր Սիսոյին նրա աշակերտ Աբրահամը հարցրեց. «Եթե եղբայրների հավաք լինի ու դա համընկնի շաբաթ կամ կիրակի օրվան, մեկնումեկը երեք բաժակ գինի ըմպի՝ շա՞տ կլինի, հայր»: Ծերն ասաց. «Եթե դև չկա, շատ չէ»: Հաճախ էր աշակերտը նրան ասում. «Ճաշակենք փոքր-ինչ, հա՛յր», և ծերն ասում էր. «Մի՞թե չկերանք, որդյա՛կ. եթե չենք կերել, ապա ուտենք»:

89. Երբեմն հայր Սիսոն իր աշակերտին ասում էր. «Արիացի՛ր, եղբայ՛ր. ես ահա երեսուն տարի երբեք իմ մեղքերի համար չաղոթեցի Աստծուն, այլ, մշտապես աղաչելով, այս եմ ասել. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, պահի՛ր և պահպանի՛ր ինձ իմ լեզվից». և մինչ այսօր էլ դեռ գետնատարած ընկնում և դա եմ աղաչում»:

90. Մի անգամ սուրբ խորհուրդ էր մատուցվում հայր Անտոնի լեռանը, և այնտեղ մի փոքրիկ ամանով գինի կար: Ծերերից մեկն այդ գինուց մի բաժակ լցրեց և տվեց հայր Սիսոյին, և նա ըմպեց: Մի բաժակ ևս լցրեց, և հայր Սիսոն այդ էլ ըմպեց: Երբ կամենում էր երրորդ անգամ լցնել, ծերը նրան ասաց. «Դադա՛ր տուր, եղբա՛յր, չգիտե՞ս, որ դևերը կենդանի են»: Եղբայրը նրան հարցրեց սուրբ կենցաղավարության մասին: Ծերը նրան ասաց. «Դանիելը գրել է. «Իմ սրտին ցանկալի կերակուրները չկերա» (Դան. Ժ 3)*: Եղբայրը հայր Սիսոյին հարցրեց. «Եթե մենք ճանապարհ գնանք, և մեր առաջնորդը մոլորվի, պե՞տք է, որ մենք նրան զգացնել տանք»: Ծերը նրան ասաց. «Ո՛չ, քա՛վ լիցի»: Եղբայրն ասաց. «Ուրեմն թողնենք, որ նա մեզ խոտորի՞ ճանապարհից»: Ծերն ասաց. «Իսկ ի՞նչ է, կամենում եք նրան բրածե՞ծ անել: Ասեմ քեզ, որդյա՛կ, տեսա ես եղբայրների, որ ճանապարհ էին գնում, և նրանց առաջնորդը, գիշերով մոլորվելով, չեղվեց ուղուց: Նրանք տասներկու հոգի էին, և բոլորն էլ գիտեին, որ սխալ են գնում, սա-*

կայն նրանցից յուրաքանչյուրը ճգնում էր առանձին, որպեսզի չասի և չհանդիմանի: Երբ այսպես եղավ, առաջնորդը հասկացավ, որ մոլորվել է ուղուց, և նրանց ասաց. «Թողությո՛ւն տվեք ինձ, եղբայրնե՛ր, որովհետև չեղվել ենք»: Այնժամ բոլորն ասացին. «Մենք նույնպես գիտեինք, սակայն լռեցինք և չասացինք»: Իսկ առաջնորդը, երբ լսեց այս, հույժ զարմացավ և ասաց. «Օ՜հ, իմ այս եղբայրները մինչև մահ կճգնեին՝ լռություն պահելու համար»: Եվ գոհանում էր Աստծուց նրանց համբերության համար: Նրանց չեղված ճանապարհը կազմում էր շուրջ տասներկու մղոն»:

91. Հայր Սիսոյ Թեբայեցու մասին ասում էին, թե երբեք հաց չճաշակեց, իսկ մեծ Զատիկի օրը եղբայրներն աղաչում էին նրան՝ ճաշակել իրենց հետ: Ծերը նրանց ասաց. «Միայն հա՞ց ուտեմ, թե՞ ամենն էլ՝ ինչ պատրաստել եք»: Նրանք ասացին. «Միայն հա՛ց կեր»: Եվ նա այդպես էլ արեց:

92. Մի անգամ սկիտացիները եկան հայր Սառռայի մոտ, և նա նրանց համար սեղան դրեց, իսկ նրանք, համեղ և որակյալ կերակուրները թողած, միայն վատթարները կերան: Հայր Սառռան, երբ այս տեսավ, ասաց. «Դուք իսկապես սկիտացիներ եք»:

93. Մայր Սինկլիտիկեն ասաց. «Մենք, որ այս կրոնավորական կերպով զգեստավորվեցինք, պարտավոր ենք կատարյալ սրբություն ձեռք բերել, քանզի աշխարհականները նույնպես կարծում են, թե սրբությամբ են ընթանում, սակայն պղծությամբ են լցված: Ինչպես որ զգայարանները ակամայից են մեղքի մեջ ընկնում, որ են՝ տեսանելիքը, լսելիքը և ծաղրը, այնպես էլ նրանք կամովին են մեղանչում»:

94. Ասաց դարձյալ. «Գիշատիչ գազաններն, օրինակ, կարողանում են թույնը ետ դարձնել, այդպես էլ պահքն ու աղոթքը մտքերից հեռացնում են չար խորհուրդները: Թող քեզ չխաբեն աշխարհի մեծությունն ու պատրանքը, որովհետև անցավոր և ունայն են, մինչդեռ պահքով կարող ես առավել ախորժելի դարձնել կերակուրը, քանզի հագենալիս՝ սիրտը տաղտկանում է, իսկ սովելիս՝ զվարճանում է ուտելու համար: Եվ մի՛ հագեցիր հացով, որպեսզի գինի չփափագես»:

95. Հայր Տիթոն ասաց. «Օտարությունը կատարյալ առաքինություն է, եթե զսպես քո բերանը»:

96. Ոմն եղբայր հարցրեց հայր Տիթոյին և ասաց. «Ինչպե՞ս պահեմ իմ մտքերը, հա՛յր, քանի որ իմ բերանն ու լեզուն մոտիկ են որովայնիս»:

97. Հայր Հիպերիքսոսն ասաց. «Ինչպես որ առյուծն ավելի ահագդու է, քան վայրի էշը, այնպես էլ փորձված կրոնավորն ավելի բարձր է կանգնած, քան դևերը, ցանկություններն ու իր ախտերը: Ծերերի համար պահքը մեղքերի սանձ է. ով մի կողմ ձգի պահքը, վրնջացող հովատակի պես կլինի»:

98. Ասաց դարձյալ. «Եթե ծերի մարմինը ցամաքի պահքից, նրա հոգին ախտերի խորքից կվերականչվի, քանզի պահքը ախտերի հեղեղը ցամաքեցնում է, իսկ պահքով սրբված կրոնավորը երկրի վրա կփառավորվի և երկնքում կպսակադրվի»:

99. Դարձյալ ասաց. «Զար խոսք թող երբեք չելնի քո բերանից, քանզի որթը խաղող է բերում, և ոչ թե՝ փուշ»:

100. Ոմն Փիլորիմոս, որը ընտիր կրոնավոր էր, մեծ համարձակությամբ հանդիմանում էր Հուլիանոս Անօրենին, ումից և բազում չարչարանքներ կրեց: Երբ Անօրենի կապանքներից ազատվեց, նրա դեմ սաստկորեն պատերազմի մեջ մտան պոռնկության և որկրամոլության դևերը, որոնց հաղթեց բազմատեսակ ճգնություններով՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ: Երբեմն իրեն կապում էր երկաթյա շղթաներով, երբեմն արգելափակում էր խցում, երբեմն հրաժարվում էր կերակուրներից և սուրբ հացից, մինչև անգամ ամբողջ տասնութ տարի տաք կերակուր բնավ չճաշակեց, մինչև որ հաղթեց դևերին ու պոռնկության ու որկրամոլության մեղքերին: Եվ ասում էր. «Քառասուն տարի է՝ միրգ չեմ ճաշակել: Մի ժամանակ դիվային հարձակումներ ունեցա, որից մինչև անգամ ցերեկն էի վախենում, և ինձ մեռելի գերեզմանի մեջ արգելափակեցի վեց տարի և հաղթեցի դևերին»:

101. Երկու եղբայրներ միասին բնակվում էին մի լեռանը: Նրանցից մեկը սովորություն ուներ գողանալ մյուսի դրամները, հացը և արմավը, որոնք պահում էր իր սենյակում: Մյուս եղբայրը չգիտեր այդ մասին, սակայն զարմանում էր նրա հարստանալու վրա: Մի օր էլ վրա հասավ գողության պահին և սկսեց վիճել նրա հետ՝ ասելով. «Ինչո՞ւ ես այդ բանն անում և մարմնավոր ախտերի հետ գողանում ես նաև հոգևորը»: Եվ ոչինչ ետ չվերցրեց նրանից, այլ միայն խնդրեց չանե՛լ այլևս այդ:

102. Մի եպիսկոպոս սովորություն ուներ ամեն տարի ելնել Սկիտե՝ եղբայրներին տեսնելու: Մի օր ելնելիս նրան ընդառաջ ելավ մի եղբայր և տարավ նրան իր տուն, հաց և աղ դրեց նրա առջև և ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, ուրիշ ոչինչ չունեմ քո առջև դնելու»: Եպիսկոպոսն ասաց. «Իմ հոգին այսպես է կամենում, որ դարձյալ գամ այստեղ և աղ էլ չլինի քո տանը»:

103. Եգիպտոսի վանքում խնդիր առաջացավ եղբայրների մեջ: Մինչ ամենքը մի բան ասում էին, եղբայրներից մեկը ոչ մի բան չխոսեց: Եվ երբ տեղից վեր կացավ, եղբայրները նրան ասացին. «Ինչո՞ւ բոլոր եղբայրները խոսեցին, իսկ դու ոչինչ չասացիր»: Նա դարձյալ լռեց, և երբ շատ պնդեցին, ասաց. «Այսպես ասացի իմ մտքում. «Եթե այս քարը, որ իմ տակ է, որևէ բան ասի, ես ևս կասեմ, իսկ եթե ոչ՝ կլռեմ», և այդպես էլ լռեցի ու ոչինչ չասացի»:

104. Մի անգամ եղբայրները ճաշակում էին եկեղեցու գավթում ու խցերում, երբ մի եղբոր բաժակով գինի մատուցեցին և ստիպեցին ըմպել: Իսկ նա ասաց. «Թողությո՛ւն շնորհեք ինձ, եղբայրնե՛ր, անցած տարի էլ ինձ այսպես արեցիք, և բազում փորձությունների ու վշտերի մեջ ընկա»:

105. Ոմն եղբայր դուրս եկավ Սկիտեից, իսկ մեկ այլ եղբայր նրան ճանապարհակից եղավ: Երբ հասան այն տեղը, որտեղից պիտի բաժանվեին, ծերը նրան ասաց. «Այսօր մի բան ճաշակենք միասին, եղբա՛յր, հետո բաժանվենք միմյանցից»: Եվ քանի որ շաբաթվա առաջին օրն էր, այդպես էլ արեցին, իսկ երբ եկավ շաբաթը, ծերն առավոտյան շտապեց գնալ այն եղբոր մոտ և ասաց. «Դեռ չե՞ս քաղցել, որ մի բան ուտենք»: Եղբայրը նրան ասաց. «Սոված չեմ, հա՛յր, քանզի ամեն օր ճաշակում եմ»: Ծերը նրան ասաց. «Ներո՛ղ եղիր ինձ, եղբա՛յր, այն մեր՝ միասին ճաշակելուց հետո ոչինչ չեմ կերել»: Երբ եղբայրը լսեց այդ, խիստ զղջաց, և նրան մեծ օգուտ եղավ:

106. Մեկ այլ եղբայր գնաց հայրերից մեկի մոտ: Սա նրա համար ոսպնաթան պատրաստեց ու հյուրին ասաց. «Մի փոքր սաղմոսե՛նք»: Նրանցից մեկը կարդաց ողջ Սաղմոսագիրքը, իսկ մյուսը անգիր ասաց երկու մարգարեների գրվածքները: Եվ երբ ավարտեցին, գնաց այն եկվոր ծերը, և այդպես էլ մոռացան իրենց հաց ուտելու մտադրությունը:

107. Մի անգամ ծերերից մեկը հիվանդացավ և բազում օրեր չէր կարողանում սնվել: Այնժամ նրա աշակերտն սկսեց աղաչել, որ նրա համար մի փոքր կերակուր եփի, և գնալով՝ պատրաստեց այն և բերեց

ծերին, որ ուտի: Այնտեղ երկու ամաններ կային. մեկի մեջ մեղր էր, մյուսում՝ նեխած ու գարշահոտ ձեթ, որն օգտագործում էին ճրագ վառելու համար: Աշակերտը չփոթեց ամանները և մեղրի փոխարեն կերակուրի մեջ հոտած ձեթը լցրեց և տարավ դրեց ծերի առաջ: Երբ ծերն համտեսեց, ոչինչ չասաց, այլ լռելյայն վերցրեց և փոքր-ինչ կերավ: Աշակերտը նրան ստիպում էր ուտել, իսկ ծերը, դարձյալ մի փոքր վերցնելով, դադար տվեց: Աշակերտը երրորդ անգամ սկսեց հորդորել ծերին, իսկ նա չվերցրեց և ասաց. «Թո՛ղ ինձ, որդյա՛կ, որովհետև չեմ կարող»: Եղբայրն սկսեց համոզել ծերին և ասաց. «Ճաշակի՛ր, հա՛յր, համեղ ու քաղցր է, ես էլ կուտեմ քեզ հետ»: Եվ երբ կերավ, հասկացավ, թե ինչ է արել, ընկավ ծերի ոտքը և ասաց. «Վա՜յ ինձ, հա՛յր, քանզի ես սպանեցի քեզ, իսկ դու չհանդիմանեցիր ինձ»: Ծերը նրան ասաց. «Մի՛ տրտմիր, որդյա՛կ, քանզի եթե Աստված կամենար, որ մենք մեղր ճաշակեինք, դու կերակուրը մեղրով կքաղցրացնեիր»:

108. Մի ծերի մասին ասում էին, թե ցանկացավ թուզ ուտել և առնելով թուզը՝ կախեց իր աչքերի առաջ և ինքն իրեն ասաց. «Հագեցի՛ր, մոլագա՛ր ու չա՛ր ծեր»: Այսպես վշտացրեց իր անձը և իր մտքից ջնջեց ցանկությունը, ու թեև չկերավ, սակայն ապաշխարում էր, թե ինչու ցանկացավ ուտել:

109. Ոմն եղբայր գնաց կանանց վանք՝ իր հիվանդ քրոջը տեսնելու: Նրա քույրը սուրբ և աստվածահաճո էր, որն ամենևին հանձն չառավ տղամարդու երես տեսնել և ոչ էլ կամեցավ՝ եղբայրը կանանց մեջ մտնի իր համար, այլ պատվիրեց նրան և ասաց. «Գնա՛ խաղաղությամբ քո սենյակը, եղբա՛յր, գուցե այստեղ մեկնումեկին խոցես կամ ինքդ խոցվես: Աղոթի՛ր ինձ համար Տիրոջը, և Քրիստոսի շնորհով միմյանց կտեսնենք Երկնքի Արքայությունում»: Եվ եղբայրը շինված նրա խոսքերից՝ գնաց:

110. Մի անգամ սուրբ հայրերն եկան Ալեքսանդրիա, ուր կանչվել էին սուրբ Թեոփիլոս եպիսկոպոսի կողմից, որպեսզի աղոթք անեն և այդ աղոթքներով քանդեն կուռքերի մեհյանները: Եվ մինչ միասին ուտում էին, հորթի միս դրվեց սեղանին, իսկ եպիսկոպոսը, մի կտոր վերցնելով, դրեց իր կողքին նստած ծերի առջև և ասաց. «Վերցրո՛ւ, կե՛ր, հա՛յր, շատ լավն է»: Ծերը նրան ասաց. «Մենք մինչ այժմ բանջարով ենք ապրել, որովհետև մեր միսը բանջարն է»: Եվ նրա ժուժկալությունն ու վարքը շատերի համար օգտակար եղավ. այսպիսին էին երանելի հայրերը, և նրանց միայն տեսքն անգամ շահավետ էր ամենքի համար:

111. Բարձր լեռան վրա մի ծեր էր ապրում, որը ոչ մեկից ոչինչ չէր վերցնում: Փոքրիկ առու ուներ, որով բանջարն էր ջրում և նրանով կերակրվում հիսուն տարի: Նա ցանկապատից երբեք էլ դուրս չեկավ, իսկ Աստված մեծամեծ նշաններ էր անում նրա միջոցով այն բանի համար, որ բանջարով էր բավարարվել այնքան տարիներ և իր մարմինը ճնշելով պահքով՝ մաքուր տաճար էր դարձրել Նշանագործի համար:

112. Ասաց դարձյալ. «Լսել եմ, թե Սողոմոնը կնասեր էր և այդպես էր ապրում: Բնությամբ ամեն մի արու սիրում է էգին, սակայն մենք բռնադատում և տանջում ենք մեր բնությունը, մեր խորհուրդները և ամեն տեսակի դատարկ սեր վերափոխում ենք առ Աստված սիրո և չենք հնազանդվում պիղծ ու խենեշ խորհուրդներին»:

113. Ոմն եղբայր աղքատ էր: Երբ մեկը նրան տալիս էր օրվա անհրաժեշտը, ուրիշից այլևս ոչինչ չէր վերցնում, այլ ասում էր. «Այսօր կերակրեց ինձ Աստված, վաղվա համար դարձյալ Նա կհոգա»: Քանզի հույժ սիրում էր աղքատությունը և ուրախ էր դրա համար, քանի որ գիտեր, որ կրոնավորի աղքատությունն ավելի մեծ պարծանք է:

114. Իր ծեր վարդապետի մասին մի եղբայր պատմում էր, թե մի անգամ ծերը ժամը իննին քաղցեց, և սեղան դնելով՝ կամենում էինք ճաշակել: Ծերն աղոթքն սկսեց սաղմոսներով և այնքան երկարեցրեց աղոթքը, որ եղավ երեկո, հետո՝ առավոտ: Ժամը իննին հազիվ կարողացավ դադարեցնել աղոթքը, քանզի նրա միտքը զմայլված էր աստվածային տեսիլքով:

115. Ծերն ասաց. «Ես այցելեցի այս անապատ՝ ծերերի մոտ, ուր նրանք յոթանասուն տարի հանդարտությամբ ապրում էին և միայն բույսերով ու արմավով էին սնվում: Այսպիսի աստվածահաճո վարքով էին զարդարված, քանզի ոչինչ այնպես չի միավորում միտքն Աստծո հետ, ինչպես սրբությունը և հրաժարումը ամեն տեսակի երկրավոր նյութից և նրա զմայլելի կերակուրներից, ինչպես և վկայում է Սուրբ Հոգին՝ Պողոսի բերանով»:

116. Ասաց դարձյալ. «Աստվածային խոսքո՛վ կերակրվենք, սրբերի պատմությա՛մբ տոնախմբվենք, այլ ոչ թե՝ կերակուրներով»:

117. Պատմում էին հայրերը մի եղբոր մասին, թե հեթանոսները նրան բռնեցին և տարան սպանելու, ապա հավատից ու սրբությունից կտրելու խորհուրդ արեցին: Սպառնում էին մահով և չէին կարողանում հոժարեցնել, ուստի որոշեցին ապականությամբ հեռացնել սրբին կեն-

դանի Աստծուց: Քանի որ շատերից էին լսել, թե այն Աստվածը, որին նրանք պաշտում են, սրբություն սիրող է, և նրան ատելի է պղծությունը, այսպես արեցին. մի գեղեցիկ այգում դրեցին փղոսկրյա մահճակալ: Վրան փափուկ և շքեղ անկողին գցեցին, սրբին, ոտքերն ու ձեռքերը կապված, դրին նրա վրա, և մի հույժ գեղեցիկ լիրբ ու անօրեն պոռնիկ կին բերին նրա մոտ, որպեսզի տեղի փափկությունից, այլևայլ հաճույքներից ու տռփակեզ կնոջ ձեռնամերձությունից չկարողանար խուսափել մեղքից, և նրան ակամա գցեն իրենց պղծությունների ցանցը: Եվ կինը գալով՝ սկսեց փարվել նրան, խաղալ և նեղել: Սակայն Աստծո սրբասեր և հավատարիմ ծառան հեռու վանեց դևի որոգայթները, քանզի, մինչ կինը բարձրացավ նրա վրա և տռփանքի մեղքեր էր բորբոքում, սուրբը, կապանքներով կաշկանդված, անճարակությունից այլ բան չկարողանալով անել՝ իր լեզուն ատամներով խածեց-կտրեց և ծամելով՝ թքեց նրա երեսին. մեծ ամոթ եղավ այն լրբին: Սուրբը ցավի, կսկիծի միջոցով ազատվեց գարշելի ցանկությունից, իսկ լեզվից բխած արյունն ու անբիծ սրբությունը ընծայաբերեց Աստծուն, և կնոջը ևս ապրեցրեց: Այսպիսի՜ն է աստվածային սերը, որ, վեր լինելով աշխարհի բոլոր վայելքներից և ցանկալի գեղեցկություններից, հաղթում է և հասնում աստվածային երանելի փառքին:

118. Ոմն մենակյաց վաթսուն տարի բնակվում էր անապատի խորքերում՝ առանձնության մեջ, և միայն բանջարով էր կերակրվում: Հետո խորհուրդ արեց ինքն իր մեջ և ասաց. «Իզուր եմ նստում այստեղ և այսքան տարիներ կորցնում: Այս վաթսուն տարիներին այս վայրում ոչինչ չճաշակեցի, բացի բանջարից՝ այն էլ մահաբեր, և ո՜չ երբևէ տեսիլք տեսա, ո՜չ էլ հրաշքներ գործեցի, որ մեր առաջին հայրերն էին անում: Վեր կենամ այստեղից և գնամ մի մարդաբնակ վայր, քանզի իմ նստելն այստեղ բարի չէ»: Եվ մինչ այս էր մտածում, Տիրոջ հրեշտակը եկավ կանգնեց նրա մոտ և ասաց նրան. «Ի՞նչ ես խորհում կամ ասում, ո՜վ մարդ»: Եվ նա ասաց իր մտածածը: Հրեշտակն ասաց. «Եվ այդ ի՞նչ հրաշք ես կամենում անել, քան այն, որ ապրում ես, կամ՝ ո՞վ զորացրեց քեզ՝ այսքան տարիներ համբերելու այստեղ, ո՞վ օրհնեց այն մահաբեր բանջարը, որով դու կերակրվում էիր: Հանդարտվի՛ր այս վայրում և խնդրի՛ր Աստծուց, որպեսզի քեզ խոնարհություն տա»: Եվ նա զորացավ հրեշտակի խոսքերից, մնաց այն տեղում՝ մինչև իր մահվան օրը, քանզի պահքով սրբված, թեկուզ և գայթակղվի, չի կործանվի, քանի որ Աստված բռնել է նրա ձեռքից:

119. Հայրերից ոմանք պատմեցին մեզ ազգությամբ պոնտացի ոմն ծերի մասին, որը մեծամեծ առաքինություններ էր գործել: Այս ծերի մասին Ռուս քաղաքի եպիսկոպոս Հովհաննեսն ասում էր. «Մի անգամ նա եկավ ինձ մոտ, երբ ես Հորդանանի ափին՝ Պիրզոյի վանքում էի, և ինձ ասաց. «Բարի՛ եղիր, եղբա՛յր Հովհաննես, և ե՛կ ինձ հետ Սինա լեռը, քանզի ուխտեցի աղոթել այնտեղ»: Իսկ ես չկարողացա չհնազանդվել ծերին: Ասացի. «Արի՛ գնանք»: Երբ Հորդանան գետն անցանք, ծերն ինձ ասաց. «Եղբա՛յր Հովհաննես, ե՛կ աղոթք անենք, որպեսզի մինչև մեր այնտեղ հասնելը՝ ոչի՛նչ չուտենք»: Ես նրան ասացի. «Ես դա չեմ կարող անել, հա՛յր»: Եվ երբ ես չկամեցա անել այդ, ծնկի իջա ծերի առջև, և մենք ճամփա ընկանք և գնացինք: Մինչև Սինա հասնելը, ծերը բնավ ոչինչ չճաշակեց, իսկ Սինայում հաղորդվեց Տիրոջ Մարմնին և Արյանը, ապա կերակուր ճաշակեց: Այդպես էլ սուրբ լեռ Սինայից գնացինք Ալեքսանդրիայի սուրբ Մինա վանքը, և ծերը դարձյալ ոչ մի տեղ կերակուր չճաշակեց, մինչև որ հաղորդվեց այնտեղ, ապա՝ կերավ: Ալեքսանդրիայի սուրբ Մինայից դարձյալ եկանք սուրբ քաղաք Երուսաղեմ, և ողջ ճանապարհին ծերը ոչինչ չճաշակեց, դարձյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության տոնին հաղորդություն վերցրեց, ապա նոր ճաշակեց կերակուրը: Ահա այսքան երկար ճանապարհին երեք անգամ ճաշակեց ծերը. մի անգամ՝ Սինայում, երկրորդը՝ սուրբ Մինայում, երրորդ անգամ՝ մեր Տիրոջ և Աստծո սուրբ Հարության տոնին՝ Երուսաղեմում: Ահա սրանից հայտնի է դառնում, որ Աստծո շնորհներն էին բնակվում այն ծերի մեջ, քանզի բոլոր բարի բաշխումներն ու կատարյալ պարգևները լույսի Հորից են ելնում, Սուրբ Հոգուց և Միածին Որդուց»:

ԳԼՈՒԽ Ե

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՁԳՈՒՇԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Աբբա Անտոնիոսն ասաց. «Ես կարծում եմ, որ մարմինն ունի բնական շարժում, որը խռովեցնում է նրան, որը հոգունը չէ, այլ՝ միայն մարմնինը՝ իբրև անչարչարելի շարժում: Այլ շարժում էլ կա, որ կերակուրներից է, երբ մարմինը զվարճանում է կերակուրներով և ըմպելիքներով, որից առաջանում է արյան եռք, ինչն էլ մարմնի մեջ արթնացնում է չվայտություն և աշխարհիկ ոգի: Այլ է խորհուրդներից ու աղտեղի խոսքերի ուկնդրությունից առաջացած շարժումը: Իմացե՛ք, որ այս երեքն են մարմինը շարժողը. մեկը՝ բնությունից, երկրորդը՝ կերակուրների առատությունից, երրորդը՝ դևերից»:

2. Աբբա Երոնտիոս Վիմացին ասաց. «Շատերը փորձության ենթարկվեցին մարմնական կրքերից, բայց իրենց մարմինը չտվեցին արտաքին պոռնկության, պահեցին մարմնական կուսությունը, սակայն իրենց անձերի մեջ պոռնկացան: Սիրելինե՛ր, բարի է, ըստ Գրքի, զգուշությամբ պահպանել հոգին և մարմինը, սիրտն ու միտքը»:

3. Ոմն եղբայր հարցրեց մի ծերի և ասաց. «Եթե մարդը, Աստծո թույլտվությամբ, փորձության մեջ ընկնի՝ հոգու օգտի համար, ի՞նչ պետք է անի իր՝ փորձությունից գայթակղվելու համար»: Ծերը նրան ասաց. «Եթե ապաշխարի և ապաշխարության մեջ գոհացնի Աստծուն և ասի, թե՝ ճշմարտապես խոնարհվեցի, Աստված կարող է գայթակղվածին վերստին հաստատել»: Եվ ծերը հետևյալը պատմեց. «Եգիպտոսում՝ միաբանության մեջ, մի անվանի սարկավագ կար: Մի քաղաքապետ, իշխանից հալածվելով, իր ընտանիքով ապաստանեց միաբանությունում, և այն սարկավագը շնացավ նրա կնոջ հետ, որը մեծ խայտառակություն և ամոթ եղավ ողջ միաբանությանը: Գիտակցելով

իր արարքի ողջ անօրենությունը՝ սարկավագը գնաց իր մի մտերիմի մոտ, պատմեց նրան եղելությունը և աղաչեց՝ թաքցնել իրեն, որպեսզի ոչ ոք չիմանա, թե ինքն ուր է: Այդ մտերիմի տանը թաքստոցներ կային, և նա նրան ասաց. «Կենդանի թաղի՛ր ինձ այստեղ»: Եվ իջնելով այդ խավար գբի մեջ՝ Աստծո առաջ ապաշխարեց ողջ սրտով ու ճշմարտությամբ: Բավական ժամանակ անցավ, բայց Նեղոս գետը չվարարեց: Բոլորն ուխտի և աղոթքների մեջ էին դրա համար, իսկ այդ ընթացքում մի սրբի հայտնություն եկավ Տիրոջից և ասաց. «Եթե չգա այն սարկավագը, որ թաքնված է այսինչ տանը, ջուրը չի վարարի»: Եվ մարդիկ, այս լսելով, ապշեցին, եկան-հանեցին սարկավագին իր թաքստոցից, նա աղոթք արեց, և գետի ջուրը վարարեց: Եվ նրանք, ովքեր երբևէ պարսավել էին նրան, այժմ առավել ևս օգուտ քաղեցին և փառավորեցին Աստծուն»:

4. Ոմն ծեր ելավ եղբայրներին տեսնելու: Այս ծերը կույս էր և ամենևին տեղյակ չէր, որ մարդկանց մեջ պոռնկություն կա: Մինչ նա նստած էր իր խցում, դևերն սկսեցին նրա մեջ պոռնկական խորհուրդների պատերազմ հարուցել, և նա, շուրջը հայելով, տեսնում էր դևերին՝ չորս կողմից շրջապատած իրեն սև եթովպիացիների տեսքով: Եվ նրա դեմ պատերազմ էին հարուցում և ախտեր էին բորբոքում, իսկ նա ասում էր. «Այս անդամն ունի մարդը՝ ինչպես օրինակ՝ որևէ ման ունի փողանցք, որով ջուր է բաց թողնում, կամ խողովակ, որի միջոցով տանիքի ջուրն է թափվում. ա՛յս նշանակությունն ունի մարմնի այդ անդամը»: Այդ պահին ձեղունից քար ընկավ նրա առջև, և նա ձայն լսեց, որ ասում էր. «Ինչ հեշտալի է»: Այդ ձայնից ծերը ցանկություն զգաց իր մարմնի մեջ: Եվ երբ նահանջեցին ցանկական խորհուրդները, վեր կացավ և գնաց մի ծերի մոտ և պատմեց այդ ամենը: Ծերն ասաց. «Չգիտեմ, թե ինչ բան է այդ»: Ապա գնաց մեկ ուրիշի մոտ, որը նույնպես ասաց, թե չգիտի, թե դա ինչ բան է, և նրան ուղարկեց հայր Պիմենի մոտ, որին էլ նա պատմեց կատարվածը: Պիմենն ասաց. «Տեսա՞ր դևերին. այն քարը, որ ընկավ, բանսարկուն է, ձայնը, որ լսեցիր, ցանկությունն է: Նայի՛ր քո հոգու մեջ և պաղատի՛ր Տիրոջը, որպեսզի քեզ օգնի, և քեզնից հեռանա այդ պատերազմը»: Եվ նրան սովորեցրեց պայքարել դևերի դեմ, աղոթք արեց և արձակեց նրան: Եվ նա, վերադառնալով իր խուցը, օրնիբուն պայքարեց՝ պաղատելով առ Աստված: Տերը լսեց նրան և այնպիսի առաջադիմություն շնորհեց նրան, որ երբ նա վախճանվում էր, ընդառաջ եկավ նրան և հայտնեց, որ նրա հոգին բարի է:

5. Ոմն եղբայր, չարքերի հարուցած պոռնկությունից տագնապած, գնաց մի մեծն ծերի մոտ և ասաց. «Բարի՛ եղիր և աղո՛թք արա ինձ վրա, քանզի պոռնկությունից փոթորկվում եմ», իսկ ծերը նրա համար աղաչեց Աստծուն: Հետո կրկին եկավ ծերի մոտ՝ նույն խնդրով, և ծերը չհապաղեց նորից խնդրել նրա համար Աստծուն: Եվ այսպես բազում անգամ պոռնկությունից խռովահույզ՝ շտապում էր ծերի մոտ: Եվ ծերն աղաչեց Աստծուն և ասաց. «Տե՛ր, հայտնի՛ր ինձ այս եղբոր նիստուկացը և թե՝ որտեղի՞ց է գալիս այդ դատարկությունը, որովհետև աղաչեցի Քեզ նրա համար, սակայն այս եղբայրը հանգիստ չգտավ»: Եվ Աստված հայտնեց նրա խնդրածը, և նա տեսավ, որ նստած էր եղբայրը, իսկ նրա մոտ բազմել էին պոռնկության դևերը, և նա զվարճանում էր նրանց հետ: Նրա մոտ էր Տիրոջ հրեշտակը, որ առաքված էր օգնելու նրան, և բարկանում էր եղբոր վրա, որ իրեն չէր հանձնում Աստծուն, այլ հեշտանում էր իր խորհուրդների մեջ և իր բովանդակ միտքն ու խորհուրդները խոնարհեցնում էր դեպի պոռնկությունը և ոչ թե բարձրացնում էր դեպի Աստված: Եվ ծերը հասկացավ, որ եղբայրն էր պատճառը, նրան ևս հասկացնելով՝ ասաց. «Դո՛ւ ես քո խորհուրդների պատճառը», և ուսուցանեց նրան, թե ինչպես ընդդիմանա խորհուրդներին: Եվ եղբայրը, ծերի խրատներից ու աղոթքներից սթափված, գտավ հանգիստ և ողորմություն:

6. Ոմն եղբայր հայրերից մեկին հարցրեց, թե ինչպե՞ս է բանսարկուն փորձություններ բերում սրբերի վրա: Եվ ծերը նրան ասաց. «Լսեցի Նիկոն անունով սրբի մասին, որը բնակվում էր Սինա լեռանը: Մի մարդ գնաց փարանացու վրանը և այնտեղ միայնակ գտնելով նրա դստերը՝ խառնակվեց նրա հետ և ասաց. «Եթե մեկը քեզ հարցնի, թե ո՞վ էր, ասա՛, թե անապատական հայր Նիկոնն արեց»: Եվ երբ եկավ աղջկա հայրը և իմացավ կատարվածի մասին, դստերը վերցնելով՝ գնաց ծերի մոտ, բախեց դուռը, և երբ ծերը դուրս եկավ, քաշեց սուրը, որ հարվածի նրան, սակայն այդ պահին նրա ձեռքը չորացավ: Զկարողանալով սպանել՝ փարանացին գնաց եկեղեցի և պատմեց երեցներին, իսկ երեցները մարդ ուղարկեցին՝ ծերին կանչելու: Եկավ ծերը, և նրան սաստիկ դանահարեցին և կամենում էին հալածել: Իսկ նա աղաչում էր, թե. «Թողությո՛ւն տվեք ինձ, հանուն Աստծո, որպեսզի այստեղ ապաշխարեմ»: Եվ նրան երեք տարվա ապաշխարություն սահմանեցին և պատվիրեցին, որ ոչ ոք չգնա նրա մոտ: Եվ այդ երեք տարին կիրակիից կիրակի գալիս էր եկեղեցի, ապաշխարում էր և աղաչելով ասում. «Աղո՛թք արեք ինձ համար»: Եվ դրանից հետո դիվահարվեց

այն փարանացին, որ մեղքը գործեց և փորձությունը գցեց անապատականի վրա, և խոստովանեց եկեղեցում և ասաց. «Ե՛ս գործեցի այդ մեղքը և Աստծո ծառային զրպարտեցի»: Եվ ողջ ժողովուրդը ողբալով գնաց ընկավ ծերի ոտքերն ու ասաց. «Թողությո՛ւն տուր մեզ, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Ինչ մնում է թողությանը՝ թողնված է ձեզ, ինչ վերաբերում է իմ՝ այստեղ մնալուն, ապա այլևս չեմ բնակվի ձեզ հետ, որովհետև ոչ մեկը չգտնվեց ձեր մեջ, որ ինձ վշտակցելու քաջությունն ունենար»: Եվ այդպես գնաց այնտեղից»: Եվ ծերն ասաց. «Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է բանսարկուն փորձություն բերում սրբերի վրա»:

7. Աբբա Պոլիքրոնիոսը մեզ պատմեց և ասաց. «Պենթուկլայի միաբանությունում մի եղբայր կար՝ սաստիկ զգոն, որը պոռնկության պայքարի մեջ էր: Երբ շատ ծանրացավ պայքարը նրա վրա, ելավ վանքից և գնաց Երիքով՝ կատարելու իր ցանկությունը, իսկ երբ մտավ պոռնկանոցի ներքնատունը, նույն պահին ամբողջովին բորոտեց: Տեսնելով, որ ինքը արժանին ստացավ, Աստծուց գոհացած՝ վերադարձավ իր վանքը և ասաց. «Աստված բերեց ինձ վրա այս խրատը, որպեսզի իմ հոգին փրկվի»:

8. Սկյութիայում մի ծեր կար, որ մեծ տկարության մեջ ընկնելով՝ աղաչում էր եղբայրներին, որ թույլ տան իրեն՝ գնալ Եգիպտոս, բայց եղբայրները չէին արձակում նրան: Աբբա Մովսեսը նրան ասաց. «Մի՛ գնա, այլապես պոռնկության մեջ ընկնելու վտանգը կգա քո առաջ»: Իսկ նա տրտմած ասաց. «Մեռած է իմ մարմինը, իսկ դու նման բա՞ն ես ինձ ասում»: Գնաց Եգիպտոս, իսկ քաղաքացիները լսելով՝ շատերը եկան նրան ընդառաջ: Մի հավատացյալ կույս՝ ջերմից տառապող, նույնպես եկավ ծերի մոտ և առողջացավ: Իսկ ծերը, մի տարի անց, փոքր-ինչ զորանալով, սատանայից բորբոքված՝ ընկավ նրա վրա և հղիացրեց: Քաղաքացիներից ոմանք տեսնելով՝ հարցրին նրան. «Ումի՞ց ես հղիացել»: Նա պատասխանեց՝ ծերից: Չէին հավատում նրան, բայց ծերն ասաց. «Ես արեցի, սակայն պահեցե՛ք նրան, և երբ ծծկեր լինի, ես կվերցնեմ նրան». և այդպես էլ եղավ: Մի տոն օր եկավ ծերը և ծծկերին վերցնելով իր ուսի վրա՝ գնաց Սկյութիա, մտավ եկեղեցի և կանգնեց ժողովրդի առաջ: Նրանք, երբ տեսան նրան, ուժգին լաց եղան: Ծերը նրանց ասաց. «Տեսնո՞ւմ եք այս մանկանը, որը անհնազանդության որդի է: Վերցրե՛ք սրան ձեզ մոտ, եղբայրնե՛ր, քանզի իմ ծերության ժամանակ արեցի այս, և աղո՛թք արեք ինձ համար»: Եվ գնալով իր խուցը՝ վերսկսեց նախկին գործը:

9. Մի վաղեմի անապատական կար՝ ամեն տեսակ բարեպաշտության մեջ մեծապես առաջադիմած, որը բնակվում էր Անտոնի լեռանը: Նրան ճանաչող բազմաթիվ անապատականներից նրա մասին լսեցինք հետևյալը: Նա իր խոսքով ու օրինակելի վարքով շատերին էր օգտակար լինում. այդպիսին էր նրա կենցաղավարությունը: Իսկ թշնամին, որ նախանձում է ամեն բարի գործին, նրա միտքն այսպիսի խոհ դցեց. «Այդպես ուրիշներին ծառայելուց և ուրիշների՝ քեզ ծառայելուց ոչ մի օգուտ չունես, այլ դու գնա՛ և միայն քե՛զ ծառայիր: Գնա՛ քաղաք, վաճառի՛ր զամբյուղներդ և գնի՛ր քեզ համար այն, ինչ հարկավոր է, արագ դարձի՛ր քո տեղը և ոչ մեկին բեռ մի՛ եղիր»: Նենգավորը սա դցեց նրա մեջ՝ նրա լռությունն ու առ Աստված աղոթքները ապականելու համար: Եվ նրան, որ ամենքին վշտակից էր խոսքով ու բարի վարքի օրինակով, թշնամին ջանում էր որսալ և բռնել: Իսկ նա հավատալով՝ ընդունեց այն իբրև բարի խորհուրդ: Իջավ իր արգելախցից, որը երբեմնի սքանչելավայր էր և անփորձանք էր պահում նրան թշնամու որոգայթներից, քաջ հայտնի էր ծանոթներին և լսողներին՝ երկար տարիներ, գալով քաղաք՝ մտերմացավ մի կնոջ հետ և անսպասելիորեն անարժան գործի մեջ գլորվեց՝ իրեն ուղեկից ունենանալով այն նենգավոր վիշապին ու թշնամուն: Այսպես ընկած ու ընկղմված՝ կրոնավորը հեծեծանքներով ողբում էր իր գործածի համար, և նրա համար, որ իր անկման վրա հրճվում էր թշնամին, որը և ուզում էր ահռելի տրտմությունից անդառնալիորեն կործանել նրան և անհույս թողնել, մանավանդ՝ տրտմեցնել Աստծո Սուրբ Հոգին, հրեշտակներին և սուրբ հայրերին, որոնցից շատերը նաև քաղաքում կարողացան հաղթել թշնամուն: Իսկ սա, սրանցից և ոչ մեկին չնմանվելով, սաստիկ տրտմությունից խռովահույզ՝ չէր բացում իր հոգին, սակայն Աստված, որ բոլոր հիվանդների օգնականն է, տեսնում էր, որ նա ինքը ամենքի հույսը լինելով՝ մերձեցնում էր Աստծո հետ: Փորձեց իրեն ընկղմել մերձակա գետի մեջ՝ վերջ տալու համար կյանքին, սակայն ողորմած Աստված պահպանեց նրան և չթողեց, որ թշնամու ուրախությունը կատարյալ դառնա, չանտեսեց իր ծառայի երբեմնի վաստակն ու ջանքերը, ետ դարձրեց նրա սիրտը չար ցանկություններից: Իսկ սա, ինքն իր մեջ սթափվելով, իր պիղծ գործերին ասաց. «Մեծ ջանքեր ինձ արժեցաք և կորստյան վիհի եզրին ինձ կանգնեցրիք, սակայն Աստված է ինձ օգնական»: Դարձավ իր սենյակը, փակեց դռները, լաց էր լինում և ողբում իր անձի վրա՝ որպես մեռելի, ողբում և աղաչում էր Աստծուն, պահում ու հսկում էր՝ տոչորվելով ու նվաղելով՝ մինչ իսկ մարմինը սպանելու աստիճան, ծնկի էր գալիս և թողության

հույս չուներ: Բազմիցս գալիս էին նրա մոտ եղբայրները, բախում էին դռները, բայց նա ասում էր. «Չեմ կարող բացել, և յուրաքանչյուրն իր անձի մեջ թո՛ղ ճանաչի. աղո՛թք արեք ինձ համար, որ կարողանամ պատասխան տալ»: Եվ սա գայթակղություն էր լսողների համար, քանզի նա նրանց կողմից հարգված էր որպես խիստ մեծ մենակյաց, սակայն նա կարևորություն չէր տալիս դրան և իր ճգնությունն էր կատարում՝ խիստ զգաստությամբ ապաշխարելով: Եվ Տիրոջ Հարության օրը վերցրեց ճրագը, պատրաստեց և դրեց նոր ճրագակալի վրա, և ողջ գիշեր աղոթք մատուցելով՝ ինքն իրեն ասաց. «Եթե Քրիստոս կամենա և ճրագը վառի, կհավատամ, թե Տիրոջից ինձ թողություն տրվեց»: Եվ ողջ գիշերվա ընթացքում աղոթք էր մատուցում Քրիստոսի առջև և ասում. «Գթա՛ծ և ողորմա՛ծ Աստված, որ բարբարոսներին կամենում ես ապրեցնել և Քո ճշմարիտ գիտությամբ դեպի Քեզ բերել, Քեզ մոտ եմ աճապարում հավատով, Փրկի՛չդ: Ողորմի՛ր ինձ, որ մեծապես դառնացրի Քեզ՝ ի ուրախություն դևերի, և ահա մեռցրեց ինձ թշնամին: Բայց Դու, Տե՛ր, անհավատներին ու անողորմներին ես ողորմում, և մերձավորներին ես ողորմում, գթածություն ես անում և ուսուցանում, շարժի՛ր Քո գութն իմ տառապանքների վրա, քանզի Քեզ համար անկարելի ոչինչ չկա: Մինչև դժոխք իջավ իմ անձը: Ողորմությո՛ւն արա Քո ձեռքի գործին, քանզի քաղցր ես Դու, և եթե կամենաս՝ կարող ես հանդերձյալում եղծանված մարմինն անգամ հարություն տալ: Լսի՛ր ինձ, Տե՛ր, քանզի նվաղեց իմ հոգին, իմ անձը նվաստացավ, կիզված է նաև իմ մարմինը, որ ապականեցի և չեմ էլ համարձակվում կենդանի մնալ Քո երկյուղից, չեմ էլ ակնկալում կենդանի համարվել և ապաշխարությամբ մեղքերիս թողություն գտնել, քանզի կրկնակի հուսահատության մեջ եմ: Բժշկի՛ր ջախջախվածիս և Քո հրին հրամայի՛ր, որպեսզի վառի այս ճրագը, որով քաջալերվեմ Քո ողորմության մեջ՝ ի պատասխան այս ժամանակի ապաշխարության, որի մեջ ապրում էի Քո պատվիրաններով՝ պահելով Քո երկյուղը, որով զգուշանում էի հանցանքներից և հավատարմորեն միայն Քեզ էի պաշտում»: Հորդ արցունքներով այս էր ասում Տիրոջ Հարության գիշերը: Եվ վեր կացավ՝ տեսնելու, թե վառվում է ճրագը: Բացեց և տեսավ, որ չի վառվում: Դարձյալ ընկնելով երեսի վրա՝ աղաչեց Տիրոջն ու ասաց. «Գիտեմ, Տե՛ր, որ առաջ ինձ կանչում էիր՝ պսակի արժանացնելու, սակայն ես չզգուշացա իմ ոտքերի համար, և իմ քայլերն ինձ մարմնական տիղմի մեջ մխրճեցին և ինձ ամբարիշտների դժոխքը գցեցին: Ապրեցրո՛ւ ինձ, Տե՛ր, քանզի դարձյալ խոստովանում եմ Քո քաղցրության, հրեշտակների և արդարների առջև իմ անամոթու-

թյունը, և եթե գայթակղություն չլիներ դա մարդկանց համար՝ նրանց առջև էլ կխոստովանեի: Սակայն Դու Քո գթությամբ գթա՛ ինձ, այո՛, Տե՛ր, կենդանություն պարգևի՛ր ինձ, որպեսզի ուրիշներին էլ խրատեմ ապաշխարության հույսի համար»: Եվ այսպես երեք անգամ աղաչելով՝ տեսավ լույսը վառված և փայլելիս, ուրախացավ լույսի վրա, զորացավ սրտով, զվարճացավ և հրճվեց ինքն իր մեջ և սքանչացավ շնորհների վրա, որոնցով լցվեց իր պակասությունը: Եվ ասաց. «Գոհանում եմ Քեզանից, Տե՛ր, որ աշխարհում վարած կյանքիս համար կորստյան էի արժանի, սակայն ողորմացիր ինձ, և նոր ու մեծ նշան հայտնելով՝ խնայեցիր իմ անձը, որ Քոնն է»: Եվ այսպիսի խոստովանությամբ հեղում էր իր հոգին Տիրոջ առջև՝ մինչև լույսը բացվելը: Եվ ուրախ էր Տիրոջով՝ մոռացած մարմնական կերակուրը: Իսկ ճրագի լույսը պահեց իր կյանքի բոլոր օրերին. ձեթ էր լցնում և պատրաստում, որ չհանգչի: Եվ այսպես դարձյալ բնակվեց նույն տեղում և ամենքի առաջ նշանավոր եղավ և խոնարհամիտ՝ խոստովանության և առ Տեր գոհության մեջ: Իսկ երբ կամենում էր արձակել հոգին, օրեր առաջ հայտնություն ստացավ:

10. Արևելքում ազգությամբ ասորի, Եփրեմ անունով մի եղբայր կար, որը աստվածապաշտ և ամեն տեսակ չար գործերից հեռու մարդ էր: Նա ցանկացավ տեսնել Եդեսիա քաղաքը և աղոթք անելով՝ ասաց. «Տե՛ր և Աստվա՛ծ Հիսուս Քրիստոս, արժանացրո՛ւ ինձ տեսնելու Եդեսիա քաղաքը, և իմ՝ այնտեղ գնալուց հետո արժանացրո՛ւ ինձ քաղաքում այնպիսի մարդու պատահելու, որ սիրահոժար ինձ հետ քննության առնի Գրքերը»: Երբ հասավ քաղաքի դռներին, նրան հանդիպեց մի կին, որը պոռնիկ էր: Աստծո ծառան, տեսնելով նրան, կանգնեց տրտում և ինքն իրեն ասաց. «Տե՛ր, անտեսեցիր ծառայիդ աղաչանքը. ինչպե՞ս կարող է դա Գրքով խոսել ինձ հետ»: Իսկ պոռնիկը կանգնած նրան էր նայում: Սուրբ Եփրեմը նրան ասաց. «Ասա՛, կի՛ն, ինչո՞ւ ես ապշած նայում ինձ»: Եվ պոռնիկն ասաց. «Ես պետք է քեզ նայեմ, որովհետև քեզնից դուրս եկա, բայց քեզ վայել չէ նայել ինձ, այլ՝ հողին, որտեղից առնվեցիր»: Այս լսելով՝ սուրբ Եփրեմը զարմանքով փառավորեց Աստծուն, որ կինը այդպիսի իմաստուն պատասխան բարբառեց՝ հասկանալով, որ Աստված անտես չառավ իր աղաչանքը: Քաղաք մտնելով՝ իջևանեց իշխանական վաճառատան մոտ, և այնտեղ՝ ոչ շատ օրեր անց, տեսավ մեկ այլ պոռնիկի, որը, սատանայից դրդված, մոտեցավ նրա պատուհանին, որպեսզի գայթակղեցնի նրան: Երբ տեսավ, որ սուրբը տաք կերակուր էր պատրաստում, ասաց. «Օրհնի՛ր, հա՛յր»:

Եփրեմն ասաց. «Ամենասուրբն Աստված օրհնի քեզ, դո՛ւստր»: Պոռնիկն ասաց.. «Քո կերակուրից ի՞նչ է պակաս»: Եվ սուրբն ասաց. «Երեք քար և մի քիչ ցեխաշաղախ, որպեսզի գոցեմ և ծեփեմ այդ պատուհանը, որին դու կոթնել ես»: Կինն ասաց. «Ինչո՞ւ ես ինձ այդպես բարկությամբ պատասխանում. ես կամենում եմ ննջել քեզ հետ, իսկ դու ինձ հետ այդպես ես խոսում»: Սուրբն ասաց. «Եթե այդպես ես կամենում, ուր ես ասեմ՝ ե՛կ, և կննջենք միասին»: Պոռնիկն ասաց. «Ասա՛ ինձ տեղը, և կգամ՝ ուր կամենաս»: Հայր Եփրեմն ասաց. «Եթե ցանկանում ես ննջել ինձ հետ, ուրիշ տեղ չկա, բացի քաղաքի հրապարակից»: Կինն ասաց. «Չե՞նք ամաչում մարդկանցից, որ այդ գործը քաղաքի մեջտեղում անենք»: Հայր Եփրեմն ասաց. «Եթե մարդկանցից ամաչում ենք, ապա որքա՜ն ևս Աստծուց պետք է ամաչել և զարհուրել, որ գիտե մարդկանց գաղտնիքները, քանզի նա Ինքն է, որ դատում է ողջերին և մեռածներին և յուրաքանչյուրին հատուցում է ըստ իր գործերի»: Այս լսելով պոռնիկը և սթափվելով այդ խոսքերի վրա՝ եկավ և ընկավ սուրբի ոտքերը, լաց եղավ և ասաց. «Ծառա՛ Աստծո, առաջնորդի՛ր ինձ դեպի փրկության ճանապարհը, որպեսզի իմ բազում և չար գործերից փրկվեմ»: Իսկ հայր Եփրեմը մեծապես հուսադրեց նրան Սուրբ Գրքով և հաստատելով նրան ապաշխարության մեջ՝ վանք մտցրեց և ապրեցրեց նրա հոգին:

11. Աբբա Եղիա Բանիկտացին պատմեց մեզ և ասաց. «Մի անգամ նստած էի սուրբ Հորդանանի՝ ներքինիների վանքին մերձակա այրերից մեկում: Օգոստոս ամսվա սաստիկ խորշակահար և տոթակեզ մի օր՝ ժամը իններին, մեկը բախեց իմ այրի դուռը. ելա, տեսա՝ կին է, և ասացի նրան. «Ի՞նչ խնդիր ունես այստեղ»: Նա ասաց. «Ես, Տե՛ր աբբա, ճգնելու համար եկա այս անապատ և քո այրի նման փոքրիկ մի այր ունեի»: Ցույց տվեց ինձ դեպի հարավի կողմը և ասաց. «Երբ գալիս էի այս անապատով, խորշակի խստությունից ծարավեցի. բարի՛ եղիր, հա՛յր, մի քիչ ջո՛ւր տուր ինձ»: Մատուցեցի նրան բաժակը, վերցրեց, ըմպեց և արձակեցի նրան: Նրա գնալուց հետո դևն սկսեց մարտնչել ինձ հետ և գցել պոռնկական մտածումների մեջ, տիրեց ինձ, և չկարողացա հեռացնել տապը: Վերցրի գավազանը և այդ խորշակին, որ քարերն անգամ կիզում էր, դուրս եկա այրից և գնացի իմ ցանկությունը կատարելու: Եվ երբ գնացի մի մղոնի չափ՝ ցանկությունից շնչահեղձ, տեսիլքի մեջ ընկա և տեսա՝ երկիրը պատռված, որ կամենում էր կլանել ինձ, և տեսա այնտեղ ընկած մեռելների հերձված մարմիններ՝ յուրաքանչյուրը զազրելի գարշություններով լցված: Ոմն բարե-

վայելուչ քահանա ինձ ցույց տվեց այդ խորխորատների բնակատեղերը և ասաց. «Սա կանանցն է, սա՝ տղամարդկանցը, սա՝ երիտասարդներինը. վերցրո՛ւ դրանցից, որքան կամենաս՝ քո այդ զազիր ցանկությունը կատարելու համար: Տե՛ս, որքա՜ն վաստակ ես կամենում կորցնել, որովհետև հեշտանքի համար ուզում ես զրկվե՞լ Երկնքի Արքայությունից և ընկնել մարդկայինի մե՞ջ. մի պահի համար այդքան վաստակդ կամենում ես քամուն տա՞լ»: Եվ ես ահռելի վշտից երեսնիվայր գետնին ընկա: Եկավ ինձ մոտ այն սքանչելի քահանան, կանգնեցրեց ինձ, և մարտը դադարեց: Ետ դարձա և գոհացա Աստծուց»:

12. Մի մենակյաց կամեցավ լինել մի կնոջ հետ, որը լվացք էր անում: Կինն ասաց. «Տե՛ս, դրանից հետո կա՛մ հուսահատյալ կվերադառնաս աշխարհ և գլխովին կընկղմվես այնտեղ, կա՛մ բազում ճգնություններով ու արտասուքներով անգամ չես հասնի այժմյան չափիդ»: Եվ նա զղջալով՝ օրհնեց Աստծուն և այնտեղից դարձավ իր վանքը:

13. Մեկ այլ մենակյաց գետում տեսավ լողացող մի կնոջ և պառկեց նրա հետ, իսկ երբ վերադառնում էր իր խրճիթը, նրան շրջապատեցին դևերն ու ասացին. «Այդ ո՞ւր ես գնում. փրկության հույս չկա քեզ համար, գոնե մի՛ զրկիր քեզ այս աշխարհի վայելքներից և գնա՛ աշխարհ»: Եվ երբ ելավ գնալու, դարձյալ միտք արեց և ասաց. «Որտեղի՞ց եկաք, դիվակա՛ն խորհուրդներ, եկաք, որ նեղեք և հուսահատեցնե՞ք ինձ: Ի՞նչ մեղք եմ գործել, բնավ չեմ մեղանչել և չգիտեմ էլ, թե ինչ եք ասում»: Եվ վերստին մտնելով իր խուցը՝ սկսեց ճգնել առաջվա պես անհոգ և նույն եռանդով: Եվ Աստված տեսիլքով մի ծերի հայտնեց, թե այսինչ եղբայրը անկումից հետո հաղթեց դևերին: Երբ ծերը տեսիլքից սթափվեց, գնաց այն եղբոր մոտ և ասաց. «Ինչպե՞ս ես, որդյա՛կ»: Եղբայրն ասաց. «Լավ եմ, հա՛յր»: Ծերն ասաց. «Աստված հայտնեց ինձ, որդյա՛կ, որ դու ընկնելով՝ հաղթեցիր դևերին»: Այնժամ եղբայրը պատմեց նրան այն ամենը, ինչ պատահել էր իր հետ: Եվ ծերն ասաց նրան. «Հավատա՛ ինձ, եղբա՛յր, քո իմաստնալից դատողությամբ դու խորտակեցիր թշնամու զորությունը, քանզի ամենամեծ չարիքը հուսահատությունն է, իսկ հավատով Տեր Աստծուն ապավինելը՝ փրկում է ամեն տեսակի մեղքերից և ազատում թշնամու որոգայթներից»:

14. Ոմն ծեր ասաց. «Պոռնկական խորհուրդները մեր ծուլության պատճառով են գալիս մեզ վրա. ես լսեցի, որ թշնամին Քրիստոսին ասաց. «Կառաքեմ իմոնց քոնոնց մոտ. եթե չկարողանամ էլ տապալել, գոնե պիղծ խորհրդով և գիշերային փորձությամբ աղտեղի կդարձ-

նեմ նրանց»: Եվ Տերն ասաց. «Ես սիրում եմ Ինձ սիրողներին, և ով գա Ինձ մոտ՝ նրան դուրս չեմ հանի, և իմոնց ոչ ոք չի կարող հափշտակել իմ ձեռքից» (Հովհ. Ժ 28)*»:*

15. Ոմն եղբայր գնաց գյուղ, կին առավ, իսկ երբ կամենում էր նրա հետ լինել, Աստված վերցրեց նրա հոգին, քանզի նրա վերակացու ծերը խնդրեց Աստծուն, որ նա իր սրբությունը չկորցնի:

16. Ոմն ծեր ասաց. «Նմանվի՛ր անցորդ մարդու, որը թեկուզ և խոհանոցի հոտն առնում է, բայց չի ուտում և այդպիսով չի լուծարում իր պահքը. նույնպես և եթե տիղմի գարշահոտություն առնի՝ չի ցեխոտվի: Նույնպես և դու՝ եթե քեզ աղտեղի խորհուրդ այցելի, մի՛ հեշտացիր և մի՛ հապաղիր դրա մեջ»:

17. Ոմն իմաստասեր մեռնելիս իր որդուն ավանդեց իր ընկերոջը: Այս որդին, նրա տանը մեծանալով, մեղանչեց նրա կնոջ հետ, իսկ նա դուրս արեց նրան իր տանից, իսկ տղան աղաչեց, որ իրեն ապաշխարություն տա և տուն թողնի: Իմաստասերն ասաց. «Երեք տարի մերկ կնստես ջրի մեջ, ևս երեք տարի վարձ կտաս մարդկանց, որ քեզ անարգեն»: Եվ նա արեց այդպես և գնաց Աթենք: Այնտեղ իմաստասերների դռան մոտ նստած էր մեկը, որ բոլորին անարգում էր, ովքեր մտնում էին այնտեղ: Սա անարգեց և այս երիտասարդին, իսկ վերջինս սկսեց ծիծաղել: «Ինչո՞ւ ես ծիծաղում»,– հարցրեց անարգողը: Երիտասարդն ասաց. «Երեք տարի է՝ վարձ եմ տալիս, որ ինձ անարգեն, իսկ դու առանց վարձի անարգեցիր ինձ, դրա համար էլ ծիծաղում եմ»: Այդ դուռը Աստծո դուռն է, անարգողը՝ սատանան և ախտերը, իսկ քաղաքը Երկնային Երուսաղեմն է, և դժվար է այնտեղ մտնելը: Հայրերը բազում վշտերով և անարգանքներով մտան այնտեղ. մենք ևս պետք է այդպես վարվենք:

18. Մի մանուկ բերեցին հայր Եսայիասի մոտ՝ դևից բժշկելու համար, և նա տեսավ, որ մի ծեր մեղանչեց այդ տղայի հետ, և չհանդիմանեց նրան, այլ ասաց. «Եթե Նա, Ով ստեղծել է նրան, չի կիզում հրով, ես ինչո՞ւ դատեմ նրան»:

19. Մի եղբայր և մի կույս քույր, ըստ սովորության, գնացին մի անվանի ծերի մոտ՝ խոստովանության: Գիշերը մնացին այնտեղ և քնեցին՝ մեկը՝ նրա աջ, մյուսը ձախ կողմում: Սատանայի ազդմամբ՝ շնացան իրար հետ, իսկ հաջորդ օրը ծերը նրանց սովորական լրջմտությամբ ճանապարհեց: Ճանապարհին ասացին. «Ով գիտե՝ իմացա՞վ ծերը, թե՞ ոչ»: Դարձան նրա մոտ և ընկնելով նրա առջև՝ ասացին.

«Իմացա՞ր, հա՛յր, թե ինչպես սատանան խայտառակեց մեզ»: Ծերն ասաց. «Այո՛, իմացա»: Եվ նրանք հարցրին. «Եվ ո՞ւր էին այդժամ քո խորհուրդները»: Ծերը նրանց ասաց. «Այնտեղ էին, ուր խաչված էր Արարիչն Աստված. այնտեղ էի և լաց էի լինում»: Եվ նրանք, ծերից ապաշխարության կարգ վերցնելով, վերադարձան իրենց՝ արանց և կանանց վանքերը, որտեղից գալիս ուղեկցել էին նրանց դևերը, սակայն դրանից հետո դարձան ընտիր անոթներ:

20. Ոմն ծեր խնդրում էր Աստծուց, որ ինքը հասնի Իսահակի չափին, և լսեց. «Չես կարող հասնել. լո՛ւռ կաց»: Իսկ հետո ասաց. «Հասցրո՛ւ ինձ Հոբի չափին, և պատրաստ եմ կռվել դևերի դեմ», բայց չասաց՝ «Քո զորությամբ, Տե՛ր»: Եվ Տիրոջ հրեշտակն ասաց. «Սպասի՛ր մի փոքր»: Եվ ահա եկավ մի զինվոր՝ իր հետ բերելով երկու հարյուր լիտր ոսկի, մի տղայի և աղջկա, և ասաց. «Ողորմի՛ր ինձ և պահի՛ր սրանց, որովհետև թագավորը ուզում է սպանել ինձ. ես գնամ թաքնվեմ և դարձյալ կգամ»: Կրոնավորը հանձն առավ և շնացավ աղջկա հետ, ապա երկյուղի մեջ ընկնելով՝ սպանեց աղջկան և տղային, որ իր արարքը չմատնեն, վերցրեց ոսկին ու գնաց և դրանով վանք շինեց: Զինվորը վերադառնալով՝, եկավ շինված վանքը և ասաց. «Այս բոլոր շինվածքներն իմն են, որովհետև իմ ոսկով են կառուցված: Իսկ ո՞ւր են կույսն ու մանուկ ծառաները»: Եվ հալածեցին նրան այդտեղից, բայց ծերը փախավ ավելի հեռու երկիր, որտեղ մի դահճապետի փեսա դարձավ: Սա սրով ու հրով դաժանագույն տանջանքների էր ենթարկում թե՛ հանցավորներին, թե՛ թեթև զանցանք գործողներին: Հետո նաև զինվորը եկավ այնտեղ և քարշ տվեց նրան իշխանի մոտ և բացահայտեց նրա բոլոր գործերը: Երբ իշխանի հրամանով տանում էին նրան կախելու, փողոցում նրա դեմ դուրս եկավ զինվորը և հարցրեց. «Ճանաչո՞ւմ ես ինձ, կրոնավո՛ր, թե ո՛վ եմ ես»: Նա պատասխանեց. «Կարծեմ այն զինվորն ես, որ չար ժամին հայտնվեցիր ինձ մոտ՝ այնտեղ»: Զինվորն ասաց. «Ես բանսարկու սատանան եմ, որ նախաստեղծ Ադամին խաբեցի և այժմ որքան կարողություն ունեմ՝ թույլ չեմ տալիս մարդկանց հասնելու Իսահակի, Հակոբի կամ Հոբի չափին, այլ ջանում եմ բոլորին դարձնել Աքիտոբել, Հուդա Իսկարիովտացի կամ Կայեն: Այժմ գնա՛, կրի՛ր այդ պատիժդ և ե՛կ մեր շղթաներով շղթայվելու, որպեսզի սրանից հետո Աստված ինչ տա՝ մենակյացները բավական համարեն»: Ուրեմն, զգուշանա՛նք, եղբայրնե՛ր, ամեն ինչի մեջ և չխոսենք առանց Աստծո շնորհների: Տեսա՞ք՝ ինչ արեց դևն այն մենակյացին, որն, իր անձին ապավինելով, մեծամեծ բաներ էր խնդրում:

21. Զորս եղբայրներ ուխտեցին սիրով մնալ կրոնավորության մեջ, որպեսզի Աստված մի տեղում հանգչեցնի իրենց: Նրանցից երկուսը մեռան և գնացին հանգստի, իսկ ողջ մնացածներից մեկն ընկավ պառնկության մեջ: Եվ մինչ սա վերադառնում էր այնտեղից, ի Քրիստոս գնացածներն աղաչում էին, որ առյուծն ուտի նրան մեղքերի դիմաց, որպեսզի գա իրենց մոտ, իսկ խցում մնացած եղբայրն աղաչում էր Աստծուն, որ նա ողջ գա տուն: Եվ Տերը պատասխանեց իր մոտ եղող հոգիներին, թե Ինքը պետք է նրան լսի, ով տակավին պայքարի մեջ է, և ոչ թե՝ իրենց, որ հանգստի մեջ են: Մեղանչած եղբայրն ազատվեց առյուծից, որ հարձակվել էր նրա վրա, գալով խոստովանեց իր հանցանքը և հասավ իր նախկին սրբության չափին: Այս ամենը տեսան երկու ծերեր և պատմեցին մեզ:

22. Ոմն եղբայր վանքից վանք շրջելու ընթացքում գարշելի մեղքերի մեջ ընկավ և վանք վերադառնալուց հետո՝ մեռավ, իսկ նրա երեսը սևացած էր: Վանահայրը հոգով իմացավ իրողությունը, և բոլոր վանականների հետ միասին, երեք օր անդադար խնդրեց Աստծուն: Եվ ահա տեսավ, որ Տերը թոթափում էր նրա հոգին դևերից՝ ասելով. «Վանական գործերի մեջ լինելով՝ մեղանչեց, և այժմ ողջ միաբանությունն է խնդրում: Եթե մի ողջ քաղաք խնդրի մի մահապարտի համար, թագավորը չի մերժի, ապա ես, որ ողորմած Աստված եմ, ինչպե՞ս արգելեմ իմ գութը»: Վանահայրն իր տեսիլքը պատմեց եղբայրներին, և նայեցին մեռելին և տեսան, որ նրա դեմքը պայծառացած էր, և թաղեցին նրան ի փառս մեր Քրիստոս Աստծո:

23. Լիբիայում ոմն եպիսկոպոս եկեղեցական մեծ ժողովում ասաց. «Իմացե՛ք, որ ես պառնկության մեջ ընկա և այլևս եպիսկոպոս չեմ»: Եվ հանելով եմիփորոնը՝ (խաչանիշ ուսանոցը) դրեց սեղանին: Ողջ ժողովուրդը լաց եղավ և ասաց. «Քո մեղքը մեզ վրա լինի, մնա՛ և մի՛ հեռացիր»: Այնժամ եպիսկոպոսն ասաց. «Եթե կամենում եք, որ ես դուրս չգամ ձեր միջից, արե՛ք այն, ինչ կասեմ»: Ժողովուրդն ասաց. «Կանենք այն, ինչ կամենաս»: Այնժամ եպիսկոպոսը փակել տվեց եկեղեցու մյուս դռները և միայն մեկը բաց թողնելով՝ ինքը գլուխը դրեց դռան շեմին և ասաց. «Աստծուց մաս չունի նա, ով առանց իմ գլուխը կոխելու՝ դուրս կելնի այստեղից»: Եվ երբ վերջին մարդն էր դուրս գալիս, ձայն եկավ երկնքից, որ ասաց. «Քո խոնարհության համար ներեցի քո մեղքերը»:

24. Մի անգամ Եգիպտոսի մի գյուղով անցնում էր հայր Սրապիոնը և այնտեղ մի պառնիկ կնոջ տեսավ: Ծերը նրան ասաց. «Սպասի՛ր ինձ

այս երեկո քեզ մոտ»: Պոռնիկն ասաց. «Շատ լավ, հա՛յր»: Պատրաստվեց, հարդարեց անկողինը և սպասեց, որ ծերը նվերներով գա: Երբ երեկո եղավ, ծերը եկավ՝ ոչինչ չունենալով իր հետ, և ներս մտնելով՝ ասաց. «Պատրաստեցի՞ր անկողինը»: Նա ասաց. «Այո՛, հա՛յր», և դռները փակեցին: Հայր Սրապիոնն ասաց կնոջը. «Սպասի՛ր մի փոքր, որովհետև պաշտամունք ունենք կատարելու. նախ ա՛յն կատարենք»: Եվ ծերն սկսեց իր պաշտամունքը սաղմոսներից, և սաղմոսները ընդմիջում էր աղոթքներով՝ պաղատելով Քրիստոսին այդ կնոջ համար, որ ապաշխարի և փրկվի: Եվ Աստված լսեց նրան: Կինը կանգնած էր ծերի մոտ և դողալով աղոթում էր: Եվ երբ ծերն ավարտեց սաղմոսները, կինն ընկավ գետնին: Իսկ ծերը սկսեց բազում ժամեր քարոզել նրան առաքյալից և այդպես ավարտեց աղոթքը: Կինը հասկացավ, որ նա ոչ թե մեղանչելու համար էր եկել իր մոտ, այլ՝ իր հոգին փրկելու: Արտասուքներով ընկավ նրա առջև՝ ասելով. «Ո՛վ սուրբ հա՛յր, տա՛ր ինձ այնտեղ, որտեղ, քո գիտենալով, կարող եմ փրկվել»: Այնժամ ծերը տարավ նրան մի կուսանաց վանք, հանձնեց նրան վանամորը և ասաց. «Մա՛յր, վերցրո՛ւ այս քրոջը, բայց պատվիրաններ և լուծ մի՛ դիր նրա վրա, ինչպես մյուս քույրերին, այլ՝ ինչ ինքը կուզի՝ այն կտաս նրան»: Եվ այնտեղ մի փոքր մնալուց հետո, կինն ասաց. «Ես մեղավոր եմ և կամենում եմ ուշ-ուշ ճաշակել»: Մի քանի օր անց ասաց. «Ես բազմամեղ եմ և չորս օրը մեկ եմ կամենում ճաշակել». և այդպես արեց: Մի քանի օր անց աղաչեց վանամորը և ասաց. «Քանի որ իմ գործերով բազում անգամ բարկացրի Աստծուն, բարի՛ եղիր ինձ գցել մի խրճիթ և փակել բոլոր կողմերից և պատուհանից կտաս ինձ մի փոքր հաց և ձեռագործ»: Վանամայրը լսեց նրան և այդպես արեց: Եվ այսպես հաճո եղավ Աստծուն իր կյանքով:

25. Մի մենակյաց շուրջ երեք տարի շնության մեջ էր. թեև վանահայրը հոգետես էր, սակայն չէր կարողանում իմանալ այդ: Եվ մի օր հայրն իմացավ նրա չար գործը, կանչեց նրան իր մոտ և ասաց. «Ասա՛ ինձ՝ ո՞ւր էիր այս գիշեր և ինչո՞ւ բարկացրիր Աստծուն»: Եվ եղբայրն, ընկնելով նրա ոտքերը, ասաց. «Մեղանչեցի Աստծո առաջ: Արդեն երեք տարի է, ինչ աղտեղի գործերի մեջ եմ»: Հայրն ասաց. «Եվ ի՞նչ էիր անում, որ Աստված ինձնից ծածկում էր այն չարիքները, որոնց մեջ էիր»: Եվ նա ասաց. «Իմ սովորությունն էր, որ ամեն գիշեր գնայի աղտեղության գործին, ութ կանոն սաղմոս և ապաշխարության շարական ասեի լալով՝ թե՛ գնալիս և թե՛ ետ դառնալիս, սակայն այս գիշեր ծուլացրեց ինձ չար դևն ու անհույս թողեց: Շշնջաց, թե

անօգուտ են իմ աղոթքները, և ես բոլորովին ո՛չ Աստծուն հիշեցի, ո՛չ էլ սաղմոսեցի»: Եվ հայրն ասաց. «Օրհնյալ է Աստծո քաղցրությունն ու ողորմությունը, որ չի կամենում մարդու կորուստը: Եվ արդ, քանի որ Աստված չի հիշում քո երեք տարվա աղտեղի գործերը, ես նույնպես ներում եմ քեզ Աստծո ողորմությամբ»: Եվ նա դարձավ դեպի Աստված և հասավ կատարելության՝ ապաշխարությամբ և բարեգործությամբ:

26. Մեկ այլ մենակյաց, նախանձող չարի ազդմամբ, գլորվեց մեղքերի մեջ՝ բազում տարիներ մնալով այն գործի մեջ, որն ախորժում է շնությունը: Սա մի բարի սովորություն ուներ. երբ այդ նանիր գործերից հետո գալիս էր իր խուցը, կնգուղը քաշում էր գլխին, հավաքում էր մտքերը, սկսում էր սաղմոսել և եռանդուն ծնրադրել, ջերմ արտասուքներով և հառաչանքներով լաց լինել, կուրծքը և երեսը ծեծել, փետել մորուքն ու թքել դրա վրա: Ձանձրացավ սատանան նրա աղոթքներից. և մի օր գիշերը գնալով նրա մոտ՝ ասաց նրան. «Ա՛յ գարշելի պիղծ, ինչքա՞ն պիտի ինձ անհանգստացնես և նեղես. գալիս իմ կամքը կատարում և շնանալով՝ ինձ ուրախացնում ես, հետո դառնալով՝ ինձնից տրտնջում ես առ Աստված, լաց ես լինում, հառաչում և տրտմեցնում ես ինձ»: Մենակյացն ասաց. «Ո՛վ դու, նզովյա՛լ շուն, որ մեղքով չես հագենում: Այս խուցը դարբնոց է. գալիս ես ու մուրճով հարվածում ես իմ գլխին, իսկ ես հիմարացած՝ մեղքեր եմ գործում, իսկ երբ սթափվում եմ, և խելքս գլուխս է գալիս, ես եմ քեզ մուրճով հարվածում, քանզի իմ Աստվածը ողորմած է և քո ձեռքում չի թողնի ինձ»: Եվ Աստծո շնորհով հալածվեց նրանից պոռնկության դևը:

27. Եփրատ գետի ափին Շրջապատված անունով վանք կար, որտեղ բազում կրոնավորներ կային: Վանահայրն արձակեց հինգ կրոնավորների, որպեսզի քաղաքում վաճառեն ձեռագործը և անհրաժեշտ պիտույքներ բերեն: Երբ գնացին, նրանցից մեկն ինչ-որ անհրաժեշտությամբ բաժանվեց և մի փոքր հեռանալով՝ հանդիպեց մի պոռնիկ կնոջ, հրապուրվեց և ընկավ նրա հետ, իսկ եղբայրները, գտնելով նրան, չկարողացան իրենց հետ տանել վանք, որովհետև նա հույսը կտրել էր: Երբ չորսը վերադարձան, մեծ սուգ պատեց վանականներին, իսկ վանահայրը տեսիլքի մեջ տեսավ, որ եկան սուսերավոր մարդիկ, ծակեցին իր սրունքները, կապեցին երկաթյա կապանքներով, սաստիկ տանջանքներով տանջեցին և ասացին. «Բե՛ր Քրիստոսի պատկերը, որի համար երաշխավոր եղար»: Եվ հայրն ասաց. «Ձեմ հասկանում՝ ինչ եք պահանջում»: Եկողներն ասացին. «Քրիստոսի պատկեր կրոնավորին ենք պահանջում, որին կտրեցիր Քրիստոսի մարմնից»: Եվ բազում

օրեր նրան տանջում էին այսպես, որ կիսամահ էր լինում և աղաչում էր եղբայրներին՝ օգնել աղոթքներով: Եղբայրները մի ողջ շաբաթ մեծաջան տքնությամբ աղաչեցին Աստծուն, և Աստված ողորմեց նրան ու ազատեց տանջանքներից: Դրանից հետո առաջնորդության մեջ չմնաց վանահայրը, այլ խոնարհությամբ ապրեց եղբայրների հետ:

25. Հայր Հովհաննեսը պատմեց և ասաց. «Մեծատուն և հույժ գեղեցիկ մի պոռնիկ կար Եգիպտոսում, որի մոտ իշխաններն էին մտնում: Մի օր նա անցնում էր եկեղեցու կողքով և կամեցավ ներս մտնել, իսկ կիսասարկավագները, որ դրսում էին, թույլ չտվեցին ներս մտնել՝ ասելով. «Արժանի չես մտնելու Տիրոջ տունը, որովհետև պիղծ ես»: Եվ մինչ նրանք վիճում էին իրար հետ, եպիսկոպոսը լսեց աղմուկը, և եկավ նրանց մոտ: Կինը նրան ասաց. «Թույլ չեն տալիս ինձ եկեղեցի մտնել»: Եպիսկոպոսը նրան ասաց. «Դու արժանի չես մտնելու, քանզի պիղծ ես»: Կինը զղջալով ասաց. «Այլևս պոռնկություն չեմ անի»: Եպիսկոպոսը նրան ասաց. «Եթե այստեղ բերես քո կարասիները, կհամոզվեմ, որ զղջում ես»: Եվ նա շուտափույթ բերեց դրանք, իսկ եպիսկոպոսը վերցնելով՝ այրեց բոլորը: Պոռնիկը լալով մտավ եկեղեցի՝ ասելով. «Եթե այստեղ այսպես եղավ ինձ հետ, այնտեղ ինչ՞ր կկրեմ»: Եվ ապաշխարելով՝ ընտիր անոթ դարձավ»:

29. Երեց Տիմոթեոսը հայր Պիմենին ասաց. «Մի կին կա Եգիպտոսում, որ պոռնկությամբ է զբաղվում և իր՝ դրանով վաստակածը տալիս է աղքատներին»: Հայր Պիմենն ասաց. «Պոռնկության մեջ չի մնա, որովհետև հավատի պտուղ է երևում նրա մոտ»: Մի օր Տիմոթեոսի մայրը եկավ որդու մոտ, և նրա՝ մորը տված հարցին, թե՝ այն կինը տակավին պոռնկության մե՞ջ է, մայրը պատասխանեց. «Ավելացրել է իր հոմանիների թիվը, սակայն ավելացրել է նաև ողորմածությունը»: Եվ երեցը գնալով՝ պատմեց այդ հայր Պիմենին, իսկ նա դարձյալ ասաց. «Պոռնկության մեջ չի մնա»: Երեց Տիմոթեոսի մայրը, դարձյալ գալով որդու մոտ, ասաց նրան. «Այն պոռնիկ կինն այսօր ինձ խնդրեց՝ հետս գալ, որ դու նրա վրա աղոթք անես»: Եվ Տիմոթեոսն այդ մասին հաղորդեց հայր Պիմենին: Պիմենն ասաց. «Ավելի լավ կլինի, որ դու ինքդ գնաս և տեսնես նրան»: Տիմոթեոսը գնաց, տեսավ կնոջը, և վերջինս հոժարությամբ ընդունեց նրան և լսեց նրանից աստվածային խոսքեր, ապա սաստիկ լաց եղավ, զղջաց և ասաց. «Այսուհետև ես Աստծո երկյուղին կմերձենամ և կդադարեմ պոռնկություն անել»: Անմիջապես գնաց և մտավ կանանց վանքը և մեծապես հաճո եղավ Աստծուն:

30. Մի վանական ամուսնացած որդի ուներ և ստեպ-ստեպ գնում էր նրա մոտ: Վանահայրն ասաց. «Գյուղ մի՛ գնա, եթե ոչ՝ սատանան կգտնի քեզ»: Ծերն ասաց. «Գրքին հմուտ եմ և ծեր եմ, որդուս մոտ եմ գնում միայն »: Վանահայրն ասաց. «Դու ծեր չես և ոչ էլ՝ Գրքին ավելի հմուտ, քան սատանան»: Եվ երբ վանականը չանսաց, բերեց նրան եղբայրների առջև և ասաց. «Ձեր վկայությամբ անպարտ եմ ես այս ծերի արյունից: Եթե կամենա նչխար վերցնել, չեմ արգելի, սակայն Աստծո առջև պատասխանատու չեմ սրա համար, քանզի վկա չեմ սրա գործերին»: Մի օր ծերը, գնալով տուն, հարսին մենակ գտավ, ցանկացավ նրան և ասաց. «Եղի՛ր ինձ հետ»: Հարսն ասաց. «Աստծուց երկյուղի՛ր և կարգիդ նայի՛ր, չկա ավելի չար բան, քան այն, ինչ ասում ես: Խաչի՛ր զգայարաններդ և հեռացրո՛ւ սատանային»: Եվ երբ չենթարկվեց ծերին, սա սրով սպանեց հարսին և ինքն էլ կուրացավ: Եկան դրացիները և տեսան կատարվածը: Ծերն ասաց. «Վա՜յ ինձ, հանուն պոռնկության սպանեցի որդուս և ինքս կուրացա»: Տարան նրան իշխանի մոտ, սաստիկ տանջեցին և բանտ գցեցին: Լուրը հասավ վանք. վանահայրը եկավ և վանք տարավ ծերին, իսկ սուրբ հարսին մեծ պատվով թաղեցին իրենց գերեզմանում: Եվ տեսիլքի մեջ ասացին վանահորը. «Երբ չար խորհրդով նեղվի եղբայրներից մեկը, ուղարկի՛ր նրան Քրիստոսի աղախնի գերեզմանին, այնտեղ թո՛ղ աղոթի և կառողջանա»: Եվ այդպես էլ անում էին. և մեծ ուրախություն եղավ: Ծերը երկու տարի ապաշխարելով՝ մեծաջան ճգնությամբ և արտասուքներով լվաց իր մեղքը: Եվ աղջիկը երևալով վանահոր տեսիլքում՝ ասաց. «Ասա՛ ծերին, թե՝ մի՛ տրտմիր, Աստված հաշտվեց քեզ հետ, որովհետև ես աղաչեցի նրան»: Եվ դրանից հետո վանահայրը ոչ մի կրոնավորի չէր թողնում որևէ տեղ գնալ:

31. Հայրերից մեկը պատմեց, թե Թեսաղոնիկեում մի կուսանաց վանք կար: Այնտեղի կույսերից մեկը, բանսարկուից գրգռված, կամեցավ դուրս գալ վանքից: Սա ելնելով՝ ընկավ պոռնկության մեջ, հետո զղջալով բարերար Աստծո առաջ, Ով և աջակից եղավ նրան ապաշխարության համար, եկավ իր վանքում ապաշխարելու, սակայն դռան առջև ընկավ և վախճանվեց: Նրա վախճանը հայտնությամբ երևաց մի եպիսկոպոսի, որը տեսավ սուրբ հրեշտակներին, որ վերցրին նրա հոգին, և դևերին, որոնք հետապնդում էին և վիճաբանության մեջ էին հրեշտակների հետ՝ ասելով. «Մե՛րն է և մեզ ծառայեց այսքան ժամանակ»: Եվ երկար ժամեր վիճեցին սուրբ հրեշտակներն ու ասացին. «Ապաշխարեց», իսկ դևերն ասացին. «Ձհասցրեց վանք մտնել, ինչ-

պե՞ս եք ասում, թե ապաշխարեց»: Եվ հրեշտակներն ասացին. «Այն պահից ի վեր, երբ տեսավ Աստված սրա կամքն ու զղջումը, ընդունեց նրա ապաշխարությունը. իսկ նրա և ամենքի կենդանության տերն Աստված է»: Եվ դևերն այս խոսքերից ամոթահար՝ հեռացան: Տեսիլքը տեսնող սուրբ եպիսկոպոսը այս ամենը պատմեց ոմանց, որոնցից էլ մենք լսեցինք և պատմեցինք ձեզ: Այս իմանալով, եղբայրնե՛ր, նախ Աստծո օգնությամբ զգուշանանք մեր անձերի համար և թույլ չտանք որևէ խորհրդով մեղանչել, այլ ընդդիմանանք և մարտնչենք, մանավանդ՝ վանքերից դուրս չգանք, քանզի ուր ենք գնում՝ գիտենք, բայց ինչի մեջ ենք ընկնելու՝ չգիտենք:

32. Ծերն ասաց պոռնկության մասին. «Բազմազան և բազմատեսակ են պոռնկության ձևերը»: Եղբոր հարցին, թե որպիսիք են դրանք, ասաց. «Առաքյալն ասում է. «Պոռնկություն, պղծություն և ագահություն թո՛ղ ամենևին չլինեն ձեր մեջ, որպես և վայել է սրբերին» (Եփես. Ե, 3)*, քանզի պոռնկությունը մարմնի մեջ է կատարում մեղքը, իսկ պղծությունը մարմնի շոշափումն է, ծաղրը և համարձակությունը: Բազում անգամ խոսելով բարու կամ արդարության մասին՝ ահա քո հակառակությամբ պղծություն ես գործում, աճեցնում ախտերն ու պատերազմ հարուցում: Սկզբում, արդարության հանդեպ երկյուղածություն ունենալով, ասում է՝ բարի է եղբայրս, ինքն իր մեջ լռում է, ապա համարձակություն ստանալով ուտելու և ըմպելու՝ ավելի է թանձրացնում սրտի ախտերը, և նախանձ է ծնվում նրա մեջ: Եվ եթե ընակվում է եղբոր հետ և տեսնում է, որ մեկը խոսում է նրա հետ՝ նեղվում է և ասում. «Ինչի՞դ է պետք ուրիշների հետ խոսելը»: Իսկ եթե մենակ է ընակվում, և մեկ այլ եղբայր գնում է նրա մոտ, և ինքը տեսնում է նրան համարձակ խոսելիս, դարձյալ խռովվում է՝ ասելով. «Ի՞նչ ունես դու նրա հետ»: Եվ իր հոգին դարձյալ զբաղեցնում է դրանցով, և նրա խորհուրդները խավարում են աղոթքի և Աստծո երկյուղի նկատմամբ»: Եվ դարձյալ ասաց. «Բազում անգամ խոսում է աստվածապաշտությունից և չիտակությունից՝ ըստ գրված օրենքների, սակայն իր ցանկությունն է կատարում»:*

33. Երկու եղբայրներ գնացին վաճառելու իրենց ձեռագործը: Երբ նրանցից մեկը գնաց իր պաշտամունքն անելու, մյուսը դևերի պայքարի և փորձության մեջ ընկավ: Եղբայրը գալով նրա մոտ՝ ասաց. «Գնա՛նք մեր խուցը, եղբա՛յր»: Նա պատասխանեց և ասաց՝ չեմ գա, իսկ նա աղաչեց ու ասաց . «Ինչո՞ւ չես գալիս, ի՛մ եղբայր»: Նա ասաց. «Նրա համար, որ մեղքի մեջ ընկա»: Իսկ եղբայրը, կամենալով շահել

նրա հոգին, սկսեց երդվել և ասաց. «Ես ևս, երբ բաժանվեցի քեզնից, այդպիսի բանի մեջ ընկա. սակայն ե՛կ գնանք և ապաշխարե՛նք, քանզի Աստված իշխանություն ունի թողություն տալու մեզ»: Եվ վերադառնալով իրենց խցերը՝ պատմեցին ծերերին, թե ինչ փորձություններ պատահեցին իրենց: Ծերերը նրանց ապաշխարության կարգ սահմանեցին, և մյուս եղբայրը նույնպես ապաշխարում էր մեղանչած եղբոր հետ, իբր՝ ինքն էլ էր մեղանչել: Եվ Աստված, տեսնելով նրա սիրո ապաշխարությունը, քիչ ժամանակ անց տեսիլքով հայտնեց ոմն ծերի նրանց գործերը՝ ասելով. «Անմեղի սիրո համար թողություն արեցի մեղանչածին»: Այս է սեփական անձը եղբոր համար զոհաբերելը:

34. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Եթե կրոնավորն ընկնի մեղքի մեջ և հետո դարձյալ ջերմեռանդորեն ապաշխարի և ոտքի կանգնի, իսկ մեկ ուրիշը աշխարհիկ կյանքից գա կրոնավորության և սկսի ճշմարիտ ընթացքը, այդ երկուսից ո՞ր մեկն առավել առաջադեմ կլինի»: Ծերը պատասխանեց և ասաց. «Մեղանչած կրոնավորը փլուզված ապարանքի է նման, որը, եթե կամենա ջանալ և արթուն լինել իր խորհուրդներով և վերստին կառուցել փլուզված ապարանքը, փլատակների միջից բազում շինանյութ կգտնի: Հիմքերը հաստատուն կգտնի, քարերը՝ հղկված, հողը՝ պատրաստի, և շուտափույթ առաջ կգնա, քան նա, ում հողը դեռ փորված չէ, հիմքերը դեռ դրված չեն, և տակավին սկիզբը չի դրել և առաջիկայի համար անհրաժեշտ նյութերն էլ չունի, այլ միայն կառուցելու կամքն ունի: Եթե կրոնավորը սայթաքի մեղքի մեջ և դառնա դեպի ապաշխարություն, ունի պատրաստի նյութերն ու գործիքները, որոնք են՝ խրատ, աղոթք, սաղմոս և ձեռագործ, որոնք իր շինվածքի հիմքերն են: Իսկ նորեկը, քանի որ դեռևս սրանցից զուրկ է, մինչև այս ամենը սովորի և սրանց վարժվի, այն ընկած կրոնավորը արագորեն կգա իր նախկին վիճակին»:

35. Ոմն եղբայր իր պառավ մոր հետ ճանապարհ էր գնում: Երբ հասան գետի մոտ, մայրը չկարողացավ անցնել գետը, և որդին, հանելով իր թիկնոցը, փաթաթեց ձեռքերին և այդպես վերցնելով մորը՝ անցկացրեց մյուս ափը: Մայրը նրան հարցրեց. «Որդյա՛կ, ինչո՞ւ ծածկեցիր քո ձեռքերը»: Նա պատասխանեց. «Կնոջ մարմինը հուր է, և քո մարմնի հետ շփումը իմ մտքում կարթնացներ այլ կանանց հիշողությունը. դրա համար այդպես արեցի»: Տեսնո՞ւմ ես, որ մինչև իսկ սեփական մոր հանդեպ այսպիսի հաստատակամություն ունի ճշմարիտ մենակյացը:

36. Ոմն եղբայր, գնալով ծերերից մեկի մոտ, նրան ասաց. «Իմ եղբայրն ինձ խռովքի է մատնում՝ այս ու այն կողմ թափառելով»: Եվ

ծերը աղաչեց նրան ու ասաց. «Համբերի՛ր, և Աստված, տեսնելով քո համբերության տքնությունը, նրան ուղիղ ճանապարհի կբերի, քանզի ոչ ոք ոչ մեկին խստությամբ չի ուղղի, ոչ էլ դևը դևին կհանի: Միայն քաղցրությա՛մբ տար նրան, որովհետև Աստված ևս մխիթարությամբ է մարդկանց հոժարության բերում»: Եվ նրան պատմեց հետևյալը. «Թեբայիդում երկու եղբայրներ կային. նրանցից մեկը պատերազմ ունենալով՝ ասաց. «Գնամ աշխարհ», իսկ մյուսն ասաց. «Թո՛ւյլ չեմ տա, եղբա՛յր, որ գնաս և կորցնես հոգիդ, կուսությունդ ու վաստակդ»: Առաջինը, սակայն, չէր համաձայնում նրա հետ, այլ ասում էր. «Չեմ նստի այստեղ, այլ պետք է գնամ, եթե կամենում ես՝ դու էլ արի ինձ հետ, և երբ կատարեմ ցանկությունս, միասին դարձյալ կվերադառնանք, իսկ եթե ոչ՝ արձակի՛ր ինձ, որ աշխարհում բնակվեմ»: Եվ մյուս եղբայրը, գնալով մի մեծն ծերի մոտ, պատմեց նրան եղելությունը: Ծերը նրան ասաց. «Գնա՛ նրա հետ, և Աստված քո ջանքերի համար չի թողնի նրան՝ ընկնել փորձության մեջ»: Եվ երկուսով վեր կացան ու գնացին աշխարհ: Երբ եկան մի գյուղ, Աստված, տեսնելով նրա ջանադրությունը, հեռացրեց եղբոր միջից պատերազմը: Եվ պատերազմից ազատված այս եղբայրն ասաց մյուսին. «Եղբա՛յր, ե՛կ դարձյալ գնանք մեր անապատը. ասենք թե կատարեցի իմ ցանկությունը՝ դրանից ի՞նչ օգուտ»: Եվ այնտեղից անվնաս վերադարձան իրենց խուցը»: Արդ, ով մի բան անի հանուն Աստծո՝ Տերը չի կորցնի նրա վաստակը»:

37. Մի եղբայր ընկավ մեղքի մեջ և գնալով հայր Ղովտի մոտ՝ փոթորկվում էր, դուրս ու ներս էր անում և չէր կարողանում տեղում նստել: Հայր Ղովտը նրան հարցրեց. «Ի՞նչ է եղել քեզ, եղբա՛յր»: Եվ նա ասաց նրան. «Մեծ մեղք գործեցի և չեմ կարողանում հայրերին խոստովանել այն»: Ծերը նրան ասաց. «Խոստովանի՛ր ինձ, և ես քեզ հետ կվերցնեմ քո մեղքը»: Այնժամ նա պատմեց նրան, իսկ ծերն ասաց. «Քաջալերվի՛ր, որովհետև ապաշխարություն կա: Ուրեմն գնա՛, նստի՛ր այրում և երկուական օրով պահեցողությո՛ւն արա, իսկ ես կվերցնեմ քո մեղքի կեսը»: Երբ լրացավ երեք շաբաթը, ծերն իմացավ, որ Աստված ընդունեց եղբոր ապաշխարությունը, և այն եղբայրը մնաց ծերի մոտ՝ մինչև նրա մահը, և հնազանդ էր նրան:

38. Դարձյալ հայր Ամոնը հայր Պիմենին հարցրեց պիղծ խորհուրդների և ունայն ցանկությունների մասին: Եվ հայր Պիմենը ասաց նրան. «Արդյոք կացինը կբարձրանա՞ առանց կտրողի. ուստի դու ձեռքդ մի՛ վերցրու դրանք, և ի չիք կլինեն»:

39. Հայր Եդեմոնը Սկյութիայի վանահայր հայր Պափնոտիոսի մասին ասում էր, թե. «Երբ ես դեռ երիտասարդ էի, գնացի նրա մոտ, իսկ նա ինձ թույլ չտվեց մնալ՝ ասելով. "Թույլ չեմ տա երիտասարդի՝ մեկ օր անգամ լինել Սկյութիայում՝ թշնամու պատերազմի պատճառով"»:

40. Երեց հայր Իսահակն ասաց. «Այստեղ մի՛ բերեք երիտասարդներին, որովհետև Սկյութիայի չորս եկեղեցիներ ավերվեցին երիտասարդների պատճառով»:

41. Հայր Կյուրոնն ասաց. «Եթե կրոնավորը երիտասարդի հետ բնակվի և զորություն չունենա, վայր կընկնի, իսկ եթե զորություն էլ ունենա և չընկնի, այնուամենայնիվ առաջադիմել չի կարողանա»:

42. Ոմն եղբայր հարցրեց Պիմենին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, քանզի պոռնկության դեմ պատերազմում եմ և բարկությունից՝ հափշտակվում»: Ծերն ասաց. «Այդ մասին Դավիթն ասում էր. «Առյուծներին էի սատկեցնում և ահեղ արջերին էի հեղձախեղդ անում» (Ա Թագ. ԺԷ 35-36), *այսինքն՝ բարկությունն կտրում էի և պոռնկությունը՝ տքնանքով ընկճում»:*

43. Նույն Պիմենն ասաց. «Կրոնավորը, որ իր խցում երիտասարդ ունի և գիտե նրանից եկող վնասը, բայց չի արտաքսում նրան, նման է փայտի, որի բունն ու միջուկն ուտում են որդերը»:

44. Ծերերն ասացին. «Սատանան երեք զորություն ունի՝ մոռացություն, ծուլություն և ցանկություն»:

45. Հայր Մովսեսը, որ քարայրում էր ապրում, մի անգամ ընկավ պոռնկական պատերազմի մեջ և, չկարողանալով հանդարտվել իր տեղում, գնաց և այդ մասին պատմեց հայր Իսիդորոսին: Հայր Իսիդորոսն աղաչեց նրան՝ վերադառնալ իր խուցը, սակայն նա հանձն չառավ՝ ասելով. «Չե՛մ հանդարտվի, հա՛յր»: Այնժամ հայր Իսիդորոսը հրավիրեց նրան բարձրանալ տանիքը և ասաց. «Նայի՛ր արևմուտք»: Հայր Մովսեսը, նայելով այն կողմ, տեսավ դևերի մի բազմություն, որ փոթորկվում էին՝ ինչպես պատերազմում: Ապա հայր Իսիդորոսն ասաց. «Նայի՛ր արևելք»: Եվ նա նայելով՝ տեսավ սուրբ հրեշտակների բազմությունը: Հայր Իսիդորոսն ասաց. «Ահա սրանք, որ արևմուտքում են, սրբերի դեմ են պատերազմում, իսկ որոնց արևելքում տեսար, Աստծուց են առաքված՝ օգնելու համար սրբերին»: Եվ հայր Մովսեսը տեսավ, որ բազում են նրանք, ովքեր սրբերի հետ են: Եվ այդպես գոհացած Աստծուց՝ քաջալերվեց հայր Մովսեսը և կրկին դարձավ իր այրը:

46. Հայր Պիմենն ասաց. «Մենակյացի նշանը փորձությունների մեջ է երևում»: Ասաց դարձյալ. «Ինչպես որ թագավորի թիկնապահն է միշտ պատրաստ կանգնած նրա կողքին, այնպես էլ հոգին պարտ է միշտ պատրաստ լինել ընդդեմ պոռնկության դևի»:

47. Մի մեծն ծերի աշակերտ պոռնկության պատերազմի մեջ էր: Եվ ծերը, տեսնելով նրա տքնանքը, ասաց նրան. «Կամենո՞ւմ ես, որ աղաչեմ Աստծուն՝ թեթևացնի պատերազմդ»: Եվ նա ասաց. «Հայր, թեև տքնում եմ, սակայն դրա պտուղը տեսնում եմ իմ մեջ: Միայն ա՛յս պաղատիր քո աղոթքներում, հա՛յր, որ զորություն տա ինձ, և ես համբերեմ»: Հայրը նրան ասաց. «Այսօր իմացա, որ առաջադիմել ես և ինձանից կանցնես»:

48. Մեկը եկավ Սկյութիա՝ մենակյաց դառնալու, և իր հետ բերեց կրծքից նոր կտրած որդուն: Եվ երբ որդին պատանի դարձավ, նրա մեջ սկսեց շարժվել սեռական անհանգստությունը, և ասաց իր հորը. «Գնա՛մ աշխարհ, քանզի չեն հանդարտվում պոռնկության պատերազմից և չեմ դիմանում»: Իսկ հայրն աղաչում էր, որ համբերի: Որոշ ժամանակ անց դարձյալ հորն ասաց. «Հա՛յր, այլևս չեմ դիմանում, արձակի՛ր ինձ, որ գնամ»: Հայրը նրան ասաց. «Լսի՛ր ինձ, որդյա՛կ, այս անգամ: Վերցրո՛ւ քեզ հետ քառասուն նկանակ հաց և քառասուն օր գործելու համար՝ արմավի ճյուղեր, գնա՛ ներքին անապատ և այնտեղ քառասուն օր նստի՛ր, և թո՛ղ կատարվի Աստծո կամքը»: Որդին լսեց նրան, և այնտեղ մնում էր գործելով ու չոր հացն ուտելով: Այդպես մնաց քսան օր: Եվ ահա զգաց, որ իրեն է մոտենում պոռնկության ներգործությունը, և նրա առջև կանգնեց եթիոպացի մի ժանտահոտ կին: Տղան չկարողացավ տանել այդ ժանտահոտությունը և հալածեց նրան: Կինը նրան ասաց. «Ես բոլոր մարդկանց սրտին քաղցր եմ թվում, սակայն քո հնազանդության և տքնության համար Աստված թույլ չտվեց ինձ խաբել քեզ, այլ հայտնեց քեզ իմ ժանտահոտությունը»: Տղան վեր կենալով եկավ իր հոր մոտ և ասաց. «Այլևս չեմ կամենում գնալ աշխարհ, հա՛յր, քանզի զգացի և տեսա նրա գարշահոտությունը»: Իսկ նրա հայրն արդեն հոգով տեղյակ էր այդ մասին և նրան ասաց. «Եթե դու իմ պատվիրանը պահելով՝ քառասուն օր մնայիր, ապա ավելի մեծ բան կտեսնեիր»:

49. Ոմն եղբայր ընկավ պոռնկության պատերազմի մեջ: Երբ անցնում էր եգիպտական մի գյուղով, տեսնելով հեթանոսների մի քուրմի աղջկա՝ սիրահարվեց նրան և նրա հորն ասաց. «Քո դստերը կնության տո՛ւր ինձ»: Քուրմն ասաց. «Չեմ կարող նրան քեզ տալ, մինչև

չհարցնեմ իմ աստվածներին»: Գնալով դևի մոտ՝ նրան ասաց. «Ահա մի մենակյաց իմ դստերն ուզում է կնության առնել»: Դևն ասաց. «Քննի՛ր նրան, տես՝ կուրանա՞ իր Աստծուն, մկրտությունը և մենակեցության ուխտը»: Եվ քուրմը գալով՝ հարցրեց. «Կուրանա՞ս մենակեցության ուխտդ և քո Աստծուն»: Եվ մենակյացը հանձն առավ: Քուրմը դարձյալ հարցրեց. «Կուրանա՞ս մկրտությունը, որով մկրտվեցիր»: Նա ասաց՝ այո՛: Եվ նույն պահին էլ քուրմը տեսավ, որ սուրբ Հոգին՝ ինչպես աղավնի, ելավ նրա բերանից և թռավ երկինք: Եվ քուրմը, գնալով դևի մոտ, ասաց նրան. «Քո երեք պահանջներն էլ հանձն առավ»: Դևն ասաց. «Քո դստերը մի՛ տուր նրան, քանզի նրա Աստվածը չի հեռացել նրանից, այլ այժմ էլ օգնում է նրան և կընդունի նրա ապաշխարությունը»: Քուրմը գալով՝ նրան ասաց. «Չեմ կարող իմ դստերը տալ քեզ, որովհետև քո Աստվածը այժմ էլ քեզ հետ է և չի հեռացել քեզանից, այլ օգնում է քեզ»: Եվ եղբայրը, լսելով այս, ինքն իր մեջ ասաց. «Այսքա՜ն բարություն ունի Աստված իմ հանդեպ, իսկ ես՝ երախտամոռս, ուրացա թե՛ Նրան, թե՛ սուրբ մկրտությունը, թե՛ մենակեցության ուխտս, սակայն բարերար Աստված դարձյալ օգնում է ինձ»: Եվ իր հոգու մեջ զգաստացած՝ զորացավ եղբայրը, գնաց անապատ՝ մի մեծն ծերի մոտ, և պատմեց նրան ողջ եղելությունը: Եվ ծերը նրան ասաց. «Նստի՛ր այստեղ՝ ինձ մոտ, երեք շաբաթ պահեցողություն արա՛, և ես քեզ հետ միասին քեզ համար կաղաչեմ Աստծուն»: Եվ ճգնեց ծերը եղբոր համար, աղաչեց Աստծուն և ասաց. «Աղաչում են քեզ, Տե՛ր Աստված, շնորհի՛ր ինձ այս հոգին և ընդունի՛ր նրա ապաշխարությունը»: Եվ Աստված լսեց նրան: Առաջին շաբաթն ավարտելուց հետո եկավ ծերը եղբոր մոտ և հարցրեց նրան. «Տեսա՞ր որևէ բան, թե՞ ոչ»: Եղբայրն ասաց. «Այո՛, տեսա աղավնուն վերին բարձունքներում, որ գալիս էր դեպի իմ գլուխը»: Ծերն ասաց. «Նայի՛ր քո հոգու մեջ և անդադար աղաչի՛ր Աստծուն»: Երկրորդ շաբաթ դարձյալ եկավ ծերը և հարցրեց. «Տեսա՞ր ինչ-որ բան»: Եղբայրն ասաց. «Տեսա աղավնուն, որ իմ գլխին մոտ էր եկել»: Ծերը կրկին պատվիրեց. «Արթո՛ւն կաց և անդադար աղո՛թք արա»: Երրորդ շաբաթի ավարտից հետո, երբ ծերը դարձյալ եկավ և հարցրեց, թե՝ ի՞նչ տեսար, նա ասաց. «Տեսա աղավնուն, որ եկավ և նստեց իմ գլխին, ձգեցի ձեռքս, որ բռնեմ նրան, իսկ նա՝ թևելով մտավ իմ բերանը»: Եվ ծերը, գոհանալով Աստծուց, եղբորն ասաց. «Ահա Աստված ընդունեց քո ապաշխարությունը. այսուհետև պահպանի՛ր քո հոգին»: Եվ եղբայրն ասաց. «Այսուհետև ես քեզ հետ եմ, եղբա՛յր և հա՛յր իմ՝ մինչև իմ վախճանը փառավորելով Հիսուս Քրիստոսին հավիտյանս հավիտենից»:

50. Աբբա Կասիանոսն ասաց. «Աբբա Հովհաննես Կարճահասակը մեզ ասում էր. "Թաքցրած խորհուրդը պիղծ է. այն պետք է դուրս բերել հոգևոր դատաստանի առաջ և պատմել ոչ միայն որևէ ժամանակահատվածում գործածը, այլև այն ամբողջը, որը տեսնում է՝ իր վրա դրված կանոնի չափով, և մտածությունները, որ իր մեջ կա, դուրս բերել՝ ըստ սահմանված կարգի ապաշխարելու համար"»:

51. Ոմն եղբայր հարցրեց ծերին. «Ի՞նչ անեմ, հա՛յր, իմ սիրտը մշտապես խռովվում է պոռնկությունից և մի պահ անգամ հանգիստ չի տալիս ինձ, իսկ դրանից խիստ տրտում է իմ հոգին»: Ծերն ասաց. «Երբ դևերը մտածություններ կսերմանեն, նրանց հետ մի՛ խոսիր, քանզի նրանք անդուլ կերպով չարություն են սերմանում, սակայն կընդունենք դրանք, թե ոչ՝ մեզանից է կախված: Տե՛ս, թե ինչպես մադիանացիները զարդարեցին իրենց դուստրերին և առաքեցին իսրայելացիների բանակատեղին, սակայն ոչ բոլոր իսրայելացիները խառնակվեցին նրանց հետ, այլ բարկացան նրանց վրա և սրով սպանեցին խառնակվողներին, իսկ հետո տրտունջ եղավ այդքան սպանվածների համար. նույնն էլ մտածություններն են» (Թվեր ԻԵ 1-17)*: Եղբայրն ասաց. «Ի՞նչ անեմ, որ տկար եմ, և արյանս շարավն ինձ հաղթում է»: Եվ ծերն ասաց. «Հեռացրո՛ւ դրանք, և երբ նորից սկսեն, պատասխան մի՛ տուր, այլ աղոթքի կանգնի՛ր և ծնրադրելով ասա՛. «Որդի՛ Աստծո, ողորմի՛ր ինձ»: Եղբայրն ասաց. «Ահա խոկում եմ, հա՛յր, սակայն իմ սիրտն ու միտքը չեն զարթնում, քանզի չեմ հասկանում խոսքերի զորությունը»: Ծերն ասաց. «Դու միայն աղոթի՛ր և սաղմոսի՛ր, որովհետև քո անելիքը դա է: Լսել եմ, որ աբբա Պիմենն ու բազում այլ հայրեր ասում էին, թե՝ թեկուզ և մեկը սաղմոսելիս չհասկանա խոսքերի զորությունը, գազանը լսում և ասածների միտքը գիտենալով՝ հեռանում է: Ուրեմն, եթե նույնիսկ չենք էլ հասկանում մեր խոսքերի իմաստը, դևերը լսում և հեռանում են»:*

52. Հայր Հովհաննես Կարճիկն ասաց. «Հագեցած աչքը, որ խոսում է մանկան հետ, արդեն իսկ շնացավ իր սրտի մեջ: Այս իսկ պատճառով պարտավոր ենք ամեն կերպ զգուշանալ, որպեսզի չհաղթվենք սատանայի նյութած չարիքներից»:

53. Հայր Կասիանոսն ասում էր, թե հայր Մովսեսն ուսուցանում էր մեզ և ասում. «Լավ չէ թաքցնել խորհուրդները հոգևոր հորից, այլ պետք է դրանք պատմել նրանց, ովքեր ի զորու են հոգին խոստովանությամբ քննել: Անհրաժեշտ և խիստ օգտակար է՝ միայն նրանց ասել, իսկ նրանց, ովքեր միայն տարիքով են ծեր, սակայն աստվածա-

գիտության չնորհներից թափուր են, հարկավոր չէ ասել: Քանզի շատերը, տեսնելով ալեհերությունն ու ծերությունը, հայտնեցին նրանց իրենց խորհուրդները և ապաքինման փոխարեն խոցվեցին և չարաչար հուսահատության մեջ ընկան այն պատճառով, որ անմիտներին ու անփորձներին խոստովանեցին: Այսպես, ոմն եղբայր, նեղվելով պառնկության դևից, գնաց մի ծերի մոտ և պատմեց այդ մասին: Իսկ նա բարկացած դուրս հանեց նրան՝ ասելով. «Պի՛ղծ մարդ, ինչո՞ւ ես այդպիսի ցնորամտությամբ տարված. քեզ փրկություն չկա՛»: Եվ նա հուսահատվելով՝ կամեցավ գնալ աշխարհ և հանդիպեց հայր Ապողոնիոսին, ով հարցուփորձ արեց և ետ դարձրեց նրան՝ մխիթարելով խոսքով, թե. «Մի՛ հուսահատվիր, որդյա՛կ, և թո՛ղ արտառոց չթվան քեզ քո խորհուրդները: Տե՛ս՝ այս ծերության հասակիս և տկարությանս մեջ ես նույնպես նեղվում եմ նման խորհուրդներից: Դու մի կարճամտի՛ր քո արյան եռքի պատճառով. դա մարդկային է, սակայն աստվածային չնորհներն առավել են և կարող են օգնել: Դու դարձի՛ր քո խուցը, և թո՛ղ Աստծո կամքը լինի»: Դարձրեց եղբորը, և ինքը գնաց այն տխմար ծերի խցի մոտ և ասաց. «Աստվա՛ծ իմ, Հիսո՛ւս, փորձություն ուղարկիր եղբորը տրտմեցրած այս ծերին, որպեսզի այն, ինչ չճանաչեց և չիմացավ երիտասարդ տարիքում, ճանաչի և գիտենա ծեր հասակում»: Եվ նույն պահին տեսավ այն եղբոր սենյակից դուրս եկող մի հնդիկի, որը եկավ տխմար ծերի մոտ և ուժգին նետահարեց նրա սիրտն ու անհետացավ: Այդ օրվանից ծերն սկսեց այրվել և չէր կարողանում ո՛չ համբերել, ո՛չ էլ ամոթից որևէ մեկին պատմել, այլ վեր կացավ գնաց՝ պառնկանալու: Սուրբ Ապողոնիոսը, հոգով իմանալով այդ, գնաց նրա հետևից և ասաց. «Ո՞ւր ես գնում, չա՛ր ծեր»: Իսկ նա, դողալով, հասկանալով, որ հայտնի դարձավ իր հոգու չար խորհուրդը, ամոթից պատասխան չտվեց: Հայր Ապողոնիոսն ասաց նրան. «Քո խո՛ւցը դարձիր, ծե՛ր, և սրանից հետո ճանաչի՛ր քո տկարությունը և քեզ համարի՛ր որպես ոչինչ չգիտեցող անարգ մեկը, քանզի չկարողացար օրվա մեկ ժամն անգամ դիմակայել քո խորհուրդներին և մարտնչել դևի դեմ, ինչի մեջ այն եղբայրն է արդեն բազում օրեր: Եվ սա այն պատճառով եկավ քեզ վրա, որ հուսահատության հասցրիր եղբորդ, որը ընդհանուր թշնամու դեմ էր պատերազմում, մինչդեռ պարտավոր էիր զորակցելու նրան, իսկ դու նրա հույսը կտրեցիր: Չե՞ս լսել իմաստունի խրատը, որ ասում է. «Փրկի՛ր նրանց, ում մահվան են մղում և օգնի՛ր վհատվածին» (Առակ. ԻԴ 11), *և Տիրոջ ձայնը չլսեցի՞ր, որ ասում է. «Ջախջախված եղեգը չի բեկանի և առկայծ պատրույգը չի հանգցնի»* (Եսայի ԽԲ 3, Մատթ. ԺԲ 20), *քանզի ոչ ոք չի կարող դիմա-*

կայել թշնամու պատերազմին և բնության եռքին, եթե Աստծո շնորհ-ները չպահեն նրան: Ուրեմն դարձի՛ր քո խուցը, և աղաչենք Տիրոջը, որպեսզի բժշկի քո սրտից այդ խոցը, որովհետև Նա է, որ հարվածում է և բժշկում, խոնարհեցնում է և բարձրացնում, դժոխք իջեցնում և այն-տեղից դուրս հանում»: Աղոթեցին, և այդպես էլ եղավ: Արդ, անգետին՝ թեկուզ և ծեր, պետք չէ փորձությունները պատմել»:

54. Խրճիթներից մեկում մի ծեր կար, որին խորհուրդներն ասացին. «Գնա՛, կի՛ն առ քեզ համար»: Եվ նա կավ վերցրեց, դրանից սարքեց կին և խրճիթում դնելով՝ խոսում էր ինքն իր հետ և ասում. «Ահա՛ քո կինը. հիմա պետք է շատ աշխատես, որ կնոջդ կերակրես»: Եվ գոր-ծում ու շատ էր աշխատում: Մի տարի անց դարձյալ կավ հունցեց և դուստր սարքեց իր համար ու իր խորհուրդներին ասաց. «Ահա՛ քո կինը ծնեց, այժմ առավել ժրաջան պետք է աշխատես, որպեսզի կարողանաս քո դստերը կերակրել և հագցնել»: Եվ այդպես անելով՝ տքնությունից հալումաշ արեց մարմինը և իր մտքում ասաց. «Այլևս չեմ կարող տանել այս տքնությունը»: Եվ իր խորհուրդներին ասաց. «Իսկ եթե չես կարող տանել, կին էլ մի՛ փնտրիր»: Եվ Աստված, տես-նելով նրա այս տքնությունը, վերացրեց նրանից այդ խորհուրդները, և նա հանդարտվեց՝ գոհանալով Աստծուց:

55. Հայր Կյուրոսին ասաց մեկը. «Պոռնկության խորհուրդների սաստիկ պատերազմ ունեմ, հա՛յր»: Եվ նա ասաց. «Եթե այդպիսի խոր-հուրդ չունենայիր, ապա փրկության հույս էլ չէիր ունենա, եղբա՛յր»:

56. Ոմն ծեր ասաց. «Մարդու միտքը մագաղաթ է. եթե գա չարը և ցանկանա չար խորհուրդներ գրել դրա վրա՝ բերելով իր հետ խոսքեր ու թանաք, չպետք է թույլ տալ, որ գրի: Նրա խոսքերը մեր մտքում ընդունել պետք չէ, և այդժամ նրա հնարքները կանհետանան: Քանի որ մագաղաթը թե՛ չար, թե՛ բարի խոսքերը կարող է հավասարապես ընդունել, ուստի բարի՛ն պետք է գրել նրա վրա, և ոչ թե՝ չարը: Քան-զի ովքեր հնազանդվեն չարին և մեղքերին, նրանց փրկության հույս չկա, իսկ ովքեր հնազանդվեն բարուն և անհնազանդ լինեն չարին, Աստծո Արքայությունն է պատրաստված նրանց համար»:

57. Սուրբ Պիմենն ասաց. «Ոչ այլ ոք է երիտասարդներին բերում ծերերի մոտ՝ անապատ, եթե ոչ ինքը՝ սատանան, որպեսզի նրանցով փորձի ծերերին»:

58. Ծերն ասաց. «Չար խորհուրդները նման են ճանճերի, որ տուն են մտնում. եթե ճիշտ ժամանակին նրանց մեկ առ մեկ սպանես, չես

դժվարանա, իսկ եթե թույլ տաս՝ մինչև տունը լցվի, շատ պիտի տանջվես, մինչև որ հեռացնես դրանք: Կա՛մ կկարողանաս, կա՛մ էլ ճանճրացած կթողնես, և տունն ամբողջովին կապականվի»:

59. Մի ծերի մասին ասում էին, թե սա երբ եկավ Սկյութիա, հետը բերել էր որդուն, որը տակավին ծծկեր էր և կինարմատ չէր ճանաչում: Երբ մեծացավ, դևերը գիշերը նրան տարբեր կանանց էին ցույց տալիս. նա այդ մասին պատմեց հորը, և հայրը զարմացավ: Երբ մի անգամ հոր հետ գնում էր Եգիպտոս և կանանց տեսավ, հորն ասաց. «Սրա՛նք են, որ գիշերը Սկյութիա են գալիս՝ ինձ մոտ»: Հայրը նրան ասաց. «Սրանք գյուղական զվարակներ են, որդյա՛կ, այստեղ, սակայն, այլ տեսք ունեն, անապատում՝ այլ»: Եվ զարմանում էր, թե ինչպես Սկյութիայում իր որդուն ցույց տվեցին կանանց կերպարանքը:

60. Ոմն եղբայր ծերին ասաց. «Ճանապարհակից եղա մի կնոջ և կամեցա խառնակվել նրա հետ, սակայն երկյուղեցի Աստծուց: Բայց սիրտս չի ամոքվում, քանզի պղծեցի իմ խորհուրդները»: Ծերն ասաց. «Մի վանական վանքի գործերով գնաց մի գյուղ և հինգ տարի պատերազմելով պիղծ խորհուրդների դեմ՝ հաղթեց և մնաց անարատ: Վանք գալով՝ պատմեց վանահորը, թե ընկավ պոռնկության մեջ: Եվ հայրը նրան ասաց. «Մի՛ ստիր, որդյա՛կ, քանզի հինգ պսակ տեսա քո գլխին (քանզի հայրը տեսանող էր): Մի՛ տրտմիր, որդյա՛կ, որովհետև չհաղթվեցիր. մի՞թե չգիտես, որ մինչ տիկինը լլկում էր Հովսեփին, Քրիստոս Փրկիչն ու իր ողջ զորքն կանգնած էին նրա աջակողմում, իսկ Բելիարն ու իր զորքը՝ ձախակողմում, և հետևում էին իրադարձությանը (Ծննդ. Լթ 7-13)*: Երբ հաղթեց սուրբ Հովսեփը, հրեղենների ողջ զորքը երկրպագեցին Քրիստոսին և ասացին. «Փա՛ռք քեզ, Թագավո՛ր անմահ»:*

61. Ցանկությունների խորհուրդների մասին, որ սրտում են և ի կատար չեն ածվում, ծերերից մեկն ասաց. «Ինչպես օրինակ՝ մեկը այգի տեսնի և ամբողջ սրտով ցանկանա ճաշակել խաղողից, սակայն մտնել չհամարձակվի՝ կասկածելով, որ կարող է բռնեն և սպանեն: Եթե այգուց դուրս բռնեն՝ չի սպանվի, քանզի չմտավ և չկերավ, այլ միայն ցանկացավ. միայն կծեծեն նրան, բայց չեն սպանի»:

62. Մովսեսը մեծահարուստ հնդիկ էր, ով բաղձաց մենակեցության և իր ողջ ունեցվածքը տվեց վանքերին, իսկ ինքը գնաց հայր Մակարիոսի և հայր Իսիդորոսի մոտ: Երեք տարի անց նրան սկսեցին նեղել պոռնկության խորհուրդները, և նա գալով Երանելի Մակարիոսի մոտ՝ պատմեց իրողությունը: Երանելին նրան ասաց. «Չգիտե՞ս, որ եթե

ծառի արմատը դալար և կենդանի է՝ պտուղը չի չորանա, և շունը, որ սովոր է դառնում խոհանոցին, առանց ծեծի չի հեռանա: Ուրեմն, դու քեզ դի՛ր պահքերի և աղոթքների մեջ, և կտեսնես, թե ինչ կլինի»: Եվ Մովսեսը մտավ պահքի մեջ, այն էլ այնպիսի, որպիսին ոչ ոք չէր պահել թե՛ մինչ այդ, թե՛ դրանից հետո: Աբբա Մակարիոսն ասաց. «Եղբա՛յր Մովսես, ամեն բան իր չափն ունի. մի քիչ կերակուր վերցրո՛ւ» (որովհետև օրական արմավի յոթ կորիզ էր թրջում և այդ էր միայն ուտում): Եվ նա լեռանը վանք չինեց, որը Եգիպտոսի և Հնդկաստանի միջև է գտնվում, և իր վանքում ժողովեց հարյուր յոթանասուն հոգու: Այնտեղ էր նաև Սկյութիայի Պողոս մենակյաց ճգնավորը, որը ձեռագործ չէր անում և ոչ ոքից ոչինչ չէր խնդրում, այլ օրվա իր հացը իր ձեռքով էր պատրաստում և իր համար օրական հինգ հարյուր աղոթքի կարգ էր սահմանել: Եվ մի օր նա գնաց հայր Մակարիոսի մոտ և ասաց. «Հա՛յր, իմ խորհուրդն ինձ նեղում է, որովհետև մի կույս կա գյուղում՝ քառասուն տարի ինքն իրեն արգելափակած, և շատերը նրա մասին պատմեցին ինձ, թե իր կյանքի ողջ ընթացքում շաբաթը մեկ անգամ է ճաշակում և օրական հազար աղոթք է անում: Ես ևս ցանկանում եմ այդպես անել, սակայն այդպիսի կարգ չկա, որ կնոջից սովորենք»: Եվ Մակարիոսն ասաց. «Պողո՛ս եղբայր, վաթսուն տարի է, որ ես կարգ եմ դարձրել ինձ համար օրական հարյուր աղոթքը, օրվա կերակուրն իմ ձեռքով եմ պատրաստում, եղբայրներին եմ սպասավորում, և իմ խորհուրդներն ինձ դատապարտում են, իսկ դու ասում ես՝ հինգ հարյուր. մի՞թե դա քիչ է»: Եվ Պողոս եղբայրը հանդարտվեց:

63. Աբբա Կրոնիոսը պատմեց մեզ և ասաց. «Իմ վարդապետից փախա և գնացի-հասա այնտեղ, ուր նստում էին Մակարիոսը և սուրբ Անտոնի աշակերտ Մանգիսը: Այնտեղ հանդիպեցի նաև Եվագրոս մենակյացին, եկավ նաև Պաքմոն անունով մեկը, որը լեռան մյուս կողմում էր նստում և յոթանասուն տարեկան էր: Այդ ժամանակ եկավ մի ծեր, ընկավ ծերերի ոտքերը և ասաց. «Դառնության դևն ինձ հարվածեց և ինձ նեղում է կանանց ցանկությամբ. այսպես մահու չափ նեղում է ինձ գիշեր ու ցերեկ»: Եվ հայրերը նրան ասացին. «Իսկ դու քեզ պահքի և աղոթքի մեջ դի՛ր, և տե՛ս՝ ինչից է դա լինում»: Պաքմեոս մենակյացն ասաց. «Ես հասկանում եմ քեզ, որովհետև ինքս էլ մի ժամանակ այդ վիճակում հայտնվեցի. դա ուրիշ ոչ մի բանից չի լինում, այլ միայն՝ ծուլությունից: Ահա տեսնում ես ինձ ծերացած: Քառասուն տարի է՝ ծերանում եմ այս խրճիթում և միայն իմ փրկության մասին եմ հոգ տանում, և փորձիչը մինչև հիմա չի հեռանում

ինձնից: Տասներկու տարի օր ու գիշեր ինձ դադար չտվեցին իմ խորհուրդները, և արդեն կարծում էի, թե Աստված թողեց ինձ ձեռքից: Ես դրի իմ մտքում՝ լավ է մեռնել, քան մարմնիս կամքը կատարել: Ելա խրճիթիցս ու գնացի անապատ, այնտեղ գտա մի քարայր ու նրա ներսում տեսա ինձի երկու կորյուններ, մերկ ընկա մուտքի առջև՝ մտածելով, թե երբ դուրս գան, կուտեն ինձ: Եվ երբ երեկո եղավ, ինչպես և գրված է՝ «Արեգակը իմացավ իր մուտքը. առյուծների կորյունները մռնչում են և իրենց կերակուրը փնտրում և արևածագին հավաքվում են և հանգչում իրենց որջերում» (Սաղմ. ՃԳ 21-22)*, ուրիշ ինձեր ևս եկան հավաքվեցին դրսում, ներսիններն էլ դուրս եկան: Կեսն այս կողմում էր, կեսն՝ այն, և ես՝ մեջտեղում: Նրանք սկսեցին հոտոտել ինձ ոտքից մինչև գլուխ, մի մասն սկսեց լիզել, և մինչ սպասում էի, որ ինձ կուտեն, թողին և հեռացան ինձանից: Ես այդպես մերկ մնացի երեք օր ու գիշեր, և չմոտեցան ինձ: Եվ ես հասկացա, որ Աստված պահեց ինձ: Այնժամ վեր կացա և վերադարձա իմ խուցը, և դադարեցին չար խորհուրդները: Իսկ հետո դարձյալ այլ խորհուրդներ սկսեցին խռովահույզ անել ինձ՝ ավելի չար, քան նախորդները. քիչ էր մնում ինձ հայհոյել տային Աստծուն: Դևը, մի աղջկա կերպարանքով, որին տեսել էի իմ մանկության շրջանում, եկավ և նստեց ինձ մոտ, և թվաց՝ իմ ազգականն է: Երբ տեսա նրան՝ իմ կողքին նստած, ապտակեցի նրան, և նա ի չիք եղավ իմ առջև: Եվ դարձյալ, խորհուրդներից խռովահույզ՝ ելա անապատ, շրջեցի և գտա մի օձի ճուտ, վերցրի և գցեցի ծոցս, որպեսզի թերևս խայթեր ինձ, և մեռնեի: Այնքան ճմռեցի նրա գլուխը, որ սպունգի պես փափկեց, սակայն չխայթեց ինձ: Սրանից հետո ձայն լսեցի, որ ինձ ասաց. «Այսուհետև գնա՛, դադարի՛ր և այլևս մի՛ հպարտացիր, անձնապաստան մի՛ եղիր և քո անձի զորությանը մի՛ հուսա, այլ Աստծո օգնականության վրա դի՛ր հույսդ»: Դարձա այնտեղից և նստեցի իմ խրճիթում, քաջալերվեցի, և մոլորությունն այլևս չմերձեցավ ինձ»:*

64. Ոմն մենակյաց՝ անունը Եղիաս, հույժ սիրեց կուսությունը և ասում էր. «Լավ է իմ մարմնի անդամներից մեկը կորցնեմ, քան իմ կուսությունը»: Նա երկու վանք շինեց. մեկը քաղաքում, մյուսը՝ անապատում: Եղբայրներին հավաքեց անապատում, իսկ կույսերին՝ քաղաքում, և հոգում էր նրանց կարիքների մասին, ինչպես նաև՝ պարտեզների ու ջրհորների: Սակայն սատանան խռովություններ գցեց եղբայրների մեջ, և սրանք վիճաբանեցին միմյանց հետ: Նրանց թիվը հինգ հարյուր էր, իսկ կույսերինը՝ յոթանասուն: Ի վերջո Եղիաս մե-

նակյացը ձանձրացավ ամեն օր նրանց հաշտեցնելուց և համոզելուց, ելավ վանքից գնաց և երկու օր մտամոլոր շրջեց անապատում և հետևյալը խնդրեց՝ ասելով. «Տե՛ր, կա՛մ սպանի՛ր ինձ, որպեսզի չտեսնեմ նրանց նեղսրտած, կա՛մ ցավեր տո՛ւր ինձ, որպեսզի ես միայն իմ հոգու հետ լինեմ»: Երբ երեկո եղավ, փոքր-ինչ ննջեց, և երեք հրեշտակներ եկան, ինչպես ինքն էր պատմում մեզ, բռնեցին նրան և ասացին. «Ինչո՞ւ ելար կանանց վանքից»: Եվ նա պատմեց նրանց՝ ինչպես որ եղել էր, և ասաց. «Վախեցա, թե միգուցե մեղանչեմ նրանց հանդեպ»: Եվ հրեշտակները նրան ասացին. «Եթե քո վրա այժմ ցավեր գան, կվերադառնա՞ս, թե՞ ոչ»: Իսկ նա պատասխան չէր տալիս: Նրան դարձյալ ասացին. «Երդվի՛ր մեզ և ասա՛, որ եթե նրանք հոգան քո մասին, դու նույնպես կհոգաս նրանց մասին»: Եվ նա երդվեց: Այնժամ հրեշտակները բռնեցին նրան՝ մեկը ձեռքերից և մյուսը ոտքերից, իսկ երրորդ հրեշտակը դանակով հարվածեց նրա ամորձիներին. (ո՛չ իրապես, այլ երևութապես), ապա բժշկեցին նրան հրեշտակները և ասացին նրան. «Սիրեցիր կուսությունը, և այն քեզ հետ կլինի»: Հինգ օր հետո ուղարկեցին նրան իր վանքը, և բոլորն ուրախացան, և նրա սրտում այլևս ցանկություն չեղավ:

65. Հայր Իսիդորոսն ասաց. «Քառասուն տարի մտքիս մեջ մեղսական ցանկություններ ունենալով՝ ո՛չ ցանկությանս հետևից գնացի, ո՛չ էլ սրտմտության»:

66. Միաբանության եղբայրներից մեկը զրպարտվեց շնության մեղադրանքով և վեր կենալով եկավ հայր Անտոնի մոտ: Միաբանության մի քանի եղբայրներ եկան, որպեսզի նրան համոզեն և տանեն այնտեղից. սկսեցին հանդիմանել նրան և ասել, թե՝ «Կատարեցիր այդ բանը»: Իսկ նա պատասխանեց. «Անտեղյակ եմ դրանից»: Այդ ժամանակ հայր Պափնոտիոսն էլ էր այնտեղ, և այսպիսի առակ պատմեց. «Տեսա մի մարդու, որ գետեզերքին մինչև ծնկները խրվել էր տիղմի մեջ, և մի քանիսը եկել էին նրան դուրս քաշելու, սակայն մինչև պարանոցն ընկղմեցին նրան»: Եվ հայր Անտոնը հայր Պափնոտիոսի մասին ասաց. «Ահա իսկապես Աստծո մարդն է, որ կարող է ապրեցնել և առողջացնել հոգիները»: Եվ եկողները, ծերի խոսքերից զղջում ապրելով, ընկան եղբոր առջև, և ծերից մխիթարված՝ եղբորը տարան միաբանություն:

67. Հայրերից մեկը պոռնկության պատերազմի մեջ ընկավ և փակելով խցի դուռը՝ ելավ անապատ և այնտեղ շրջեց քսանմեկ օր, ոչինչ չճաշակեց, այլ միայն պայքարում և նահատակվում էր, որպեսզի տեղի չտա խորհուրդներին: Դրանից հետո աղոթք արեց առ Աստված՝

ասելով. «Տե՛ր, օգնի՛ր ինձ, քանզի չեմ հանդարտվում, ողորմի՛ր ինձ և թեթևացրո՛ւ պատերազմն իմ»: Եվ գտնելով մի այր՝ մտավ այնտեղ և ասաց. «Լավ է՝ ես մեռնեմ այստեղ, քան թե մեղանչեմ»: Եվ նույն պահին թեթևացավ պատերազմը, և այլևս չէր տագնապում:

68. Պոռնկության խորհուրդները պատերազմում էին մի եղբոր հետ: Պատերազմը՝ ինչպես տոչորող ու վառող հուր, այրում էր նրա սիրտը օր ու գիշեր, իսկ մեկ այլ եղբայր խնդրում էր նրան՝ չելնել խցից: Աստծո կամքով հալածվեց պատերազմը նրանից, և լուսավորվեց նրա սիրտը, քանզի դիմացավ և համբերեց պատերազմին:

69. Մեկ այլ եղբայր պոռնկության դևի հետ պատերազմում էր և գիշերով վեր կացավ գնաց սուրբ ծերի մոտ և ասաց նրան այդ մասին: Ծերը մխիթարեց նրան և դարձրեց իր խուցը՝ ասելով. «Տեղի մի՛ տուր, այլ իսկույն հանդիմանի՛ր դևին, և եթե նեղվես, ե՛կ ինձ մոտ և մի՛ ամաչիր, որովհետև եթե հայտնես, չարն ամոթով կմնա, իսկ եթե թաքցնես, դևերին կուրախացնես»: Եվ դադարեց եղբոր պատերազմը ծերի աղոթքներով:

70. Ալեքսանդրիայի Անտեոնում բնակվող սաստիկ ժուժկալ մի եղբայր մեծ մեղքի մեջ ընկավ, և այդ տրտմությունից դևերը նրան վհատության մեջ գցեցին: Եվ երբ հասկացավ, որ ինքը տրտմությունից պարտվել է, իբրև իր անձի հմուտ բժիշկ՝ բարի հույս տվեց իրեն և ասաց. «Հավատում եմ Աստծո գթառատությանը, որ ինձ ողորմություն կանի»: Երբ այս ասաց, դևերը նրան հարցրին. «Որտեղի՞ց է հայտնի, թե քեզ ողորմություն կանի»: Եվ նա նրանց ասաց. «Իսկ դուք ո՞վ եք, և ձեր ի՞նչ գործն է՝ ողորմություն կանի, թե չի անի: Դուք գլխովին գեհենի և կորստյան որդիներ եք, իսկ եթե Աստված բարի է, ձեր ի՞նչ գործն է»: Եվ այսպես ամոթահար լինելով՝ դևերը հեռացան: Մեկ այլ ժամի հայտնվեց բանսարկուն և նրան ասաց. «Ասեմ քեզ, ծե՛ր, դու քրիստոնյա չես»: Ծերը նրան ասաց. «Ինչ էլ որ կամ՝ համենայն դեպս քեզնից բավականին լավն եմ»: Սատանան նրան ասաց. «Ասում եմ քեզ, որ դատաստանի ես գնալու»: Ծերը նրան ասաց. «Դու ո՛չ իմ դատավորն ես, ո՛չ էլ իմ Աստվածը»: Երբ լսեց այս ամենը, խարդախության դևը փախավ նրանից:

71. Ծերերն ասացին. «Բանսարկուի որոգայթը մենակյացների դեմ առավել երիտասարդներն են, քան կանայք»:

72. Աբբա Ղոնգինոսն ասաց. «Ուր գինի և երիտասարդներ կան, այնտեղ սատանայի կարիքը չկա»:

73. Գնաց մի դև և բախեց վանքերից մեկի դուռը: Մի պատանի եկավ բացելու, իսկ դևը, տեսնելով պատանուն, ասաց. «Եթե դու այստեղ ես, իմ կարիքն այլևս չկա. դու այստեղ բավական ես», և ինքն հեռացավ այնտեղից:

74. Ոմն ծեր՝ մոտ վաթսուն տարեկան, որի անունն էր Վիտալիոս, Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս Հովհանի մասին լսեց, թե, ասեկոսների հետևելով, բամբասում և դատապարտում է մենակյացներին, ովքեր մտնում և շրջում են քաղաքում: Կամեցավ ստուգել, թե իրո՞ք դատապարտում է մեկնումեկին, ինչպես իրեն է հասել: Թողեց իր վանքը սուրբ Սերիդոնում, ուր բնակվում էր, և եկավ Ալեքսանդրիա ու այնպիսի վարք հանձն առավ, որը մարդկանց գայթակղեցուցիչ էր թվում, սակայն Աստծուն ընդունելի էր, ինչպես Դավիթն է ասում. «Ով տալիս է յուրաքանչյուրին ըստ իր սրտի» (Սաղմ. ԺԹ 5)*: Մտնելով քաղաք՝ բոլոր բոզերին հերթով գրի առավ: Եվ սկսեց մշակություն անել, և օրական առնում էր կես դրամ փող, իսկ երբ արևը մայր էր մտնում, այդ փողից մի քիչ ընդեղեն էր առնում իր համար, իսկ մյուսը մասը վերցնելով՝ մտնում էր բոզերից մեկի մոտ, տալիս էր փողը նրան և ասում. «Այս գիշերն ինձ շնորհի՛ր և մի՛ պոռնկիր»: Գիշերը օթևանում էր նրա մոտ և պահում էր նրան պոռնկանալուց, կանգնում էր մի անկյունում, ուր կինն էր, և սկսում էր սաղմոսել նրա համար, ծունր դնել մինչև առավոտ, իսկ երբ դուրս էր գալիս, նրանից երդում էր վերցնում, որ ոչ մեկին չասի իր արածը: Նրանցից մեկը հայտնեց նրա վարքը՝ ասելով, թե. «Ոչ թե պոռնկության համար է մտնում մեզ մոտ, այլ՝ մեզ փրկելու»: Եվ ծերի աղոթքով դիվահարվեց այդ կինը, որպեսզի դրանից հետո մյուսները երկնչեն և նրա կենդանության օրոք այլևս չհայտնեն իրողությունը: Իսկ մարդիկ ասում էին. «Ահա Աստված հատուցեց այդ կնոջը, որը սուտ խոսեց, որովհետև այդ չար ծերը՝ պոռնկության, այլ ոչ թե ուրիշ բանի համար է մտնում նրանց մոտ»: Եվ սուրբը Վիտալիոսը, կամենալով մարդկային փառքից խորշել և իր հոգին այնտեղի խավարից փրկել, երբ մշակության գործն ավարտեց և իրեն վարձողից ազատվեց, ի լուր ամենքի՝ ասաց. «Տե՛ր Վիտալիոս, գնա՛ քո գործին, քանզի տիկնայք կան, որոնք քեզ են սպասում»: Իսկ երբ շատերը պարսավում էին նրան, կատակելով նրանց ասում էր. «Ի՞նչ է, ես մարմին չունե՞մ, ինչպես ամենքը, կամ միայն մենակյացների վրա՞ բարկացավ Աստված, որ իրենց բռնադատելով մեռնեն. հիրավի նրանք էլ մարմին են, ինչպես ամենքը»: Ոմանք նրան ասում էին. «Դու քեզ կի՛ն առ և փոխի՛ր քո զգեստը, քանզի քեզ համար լավ*

է, որ Աստված քեզնով չհայհոյվի, այլապես քեզնով գայթակղվածների համար դատապարտություն կկրես»: Եվ նա դարձյալ պատասխանում էր նրանց կեղծ խռովմունքով և երդմամբ, թե. «Ականջ չե՛մ դնի ձեզ, հեռո՛ւ կացեք ինձնից. հիմա ոչնչի հոգս չեմ քաշում, ի՞նչ է, գնամ կին առնեմ, տունուտեղի հոգս քաշեմ և սև օրե՞ր ապրեմ: Աստված ո՛չ անի. ով կամենում է գայթակղվել՝ թող գայթակղվի և գլուխը քարովը տա: Ի՞նչ եք ուզում ինձնից. մի՞թե Աստծո դատավորներն եք. գնացե՛ք ձեր անձերին հո՛գ տարեք, դուք չեք իմ փոխարեն պատասխան տալու: Դատավորը Մեկն է, և դատաստանի օրը՝ նույնպես. եթե Աստված չկամենար, ես Ալեքսանդրիա չէի գա»: Եվ այս ամենն ասում էր աղմկելով ու սաստելով, որպեսզի այնուհետև բոլորը խորշեին և զգուշանային իրենից: Եվ դարձյալ ասում էր. «Արդարև, եթե ինձնից չհեռանաք, անեծքով կցրվեք»: Քորեպիսկոպոսներից ոմանք, այս բաները նրանից լսելով, տեղեկացրին նրա մասին սրբասեր Հովհան հայրապետին: Իսկ Աստված, որ չէր կամենում արդար մենակյացի խոտորումը, խստացրեց հայրապետի սիրտը, և նա ոչ մեկին չհավատաց, այլ սաստեց և արտաքսեց նրանց, ովքեր չարախոսում էին աբբա Վիտալիոսին, և նրանց ասաց. «Վե՛րջ տվեք մենակյացներին բամբասելուն. մի՞թե չեք լսել մեծն Կոստանդիանոսի վարքագրությունը, ուր նրա մասին գրվածքն ասում է. «Աստծուց չերկյուղողներից ոմանք սուրբ ժողովի ավարտից հետո սկսեցին միմյանց վերաբերյալ չար զրպարտագրեր տալ սուրբ Կոստանդիանոսին. նրանցից ոմանք եպիսկոպոսներ էին, ոմանք՝ մենակյացներ: Իսկ նա, երես առ երես բերելով չարախոսներին և չարախոսվածներին, չարախոսին ստիպում էր ասել մեղքը մեղավորի երեսին՝ լիներ շնություն թե մահապարտություն: Եվ երբ գտնում էր, որ ճիշտ էր ամեն ինչ, հիշելով առաքյալի խոսքը, ասում էր. «Ով տկարանա, առավել ևս ոչ ես», և Տիրոջ օրինակը, որ շնացած կնոջը չդատեց, այլ նրան ասաց. «Ես էլ չեմ դատապարտում քեզ», նրան նմանվելով՝ հրամայեց բերել վառվող մոմը, և նրանց առջև վառելով մեղադրագիրը՝ ասաց. «Եթե իմ աչքով տեսնեի Աստծո քահանային կամ նրանց, ովքեր հրեշտակային կերպն են զգեցած՝ մեղանչելիս, քղամիդովս կծածկեի, որպեսզի ոչ ոք չտեսներ: Ահա այդպես արեք և դո՛ւք այն Աստծո ծառային՝ ներքինի մենակյացին, և մի՛ գցեք ինձ պատիր վիճակի մեջ, որ մեծ մեղք է իմ անձին»: Եվ սաստելով նրանց՝ արձակեց: Իսկ Աստծո ծառա Վիտալիոսն իր գործը չէր դադարեցնում և այս էր աղաչում Աստծուն, որ մեղք չհամարի նրանց, ովքեր գայթակղվում էին իրենից, քանզի գործը, որ նա անում էր, գայթակղելի էր: Եվ ոչ մի մարդու մեղք չհամարեց այն, ինչ խոսեց

որևէ մեկը իր մասին, և բազում անպարկեշտ կանանց զղջումի բերեց, մանավանդ՝ երբ տեսնում էին գիշերը ձեռքերը տարածած և աղոթելիս իրենցից յուրաքանչյուրի համար: Դրա համար նրանցից ոմանք դադարում էին պոռնկանալուց՝ խրատվելով նրանից, ոմանք ամուսնանում էին և այնուհետև ապրում ազնվորեն, ոմանք էլ հրաժարվում էին աշխարհիկ կյանքից և ընտրում կրոնավորությունը: Մինչև նրա վախճանը, ոչ ոք մարդկանցից չիմացավ, որ նրա իսկ վարդապետությամբ և գործով էին անարգ կանայք դադարում մեղքեր գործելուց: Եվ մի օր՝ այդպիսի կանանցից մեկի մոտից դուրս գալիս, առավոտյան նրան հանդիպեց մի պիղծ մարդ, որ կամենում էր մտնել նույն այդ կնոջ մոտ՝ նրա հետ պոռնկությամբ զբաղվելու համար: Երբ սա տեսավ տեր Վիտալիոսին, որ ելնում էր կնոջ մոտից, նրան ապտակեց և ասաց. «Զա՛ր և Քրիստոսին խայտառակո՛ղ ծեր, մինչև ե՞րբ պիտի չթողնես քո հանցավոր գործերը»: Հայր Վիտալիոսն ասաց. «Հավատա՛ ինձ, տառապյա՛լ, թեկուզ և լռելյայն, սակայն մի ապտակ պիտի ստանաս, այն էլ այնպիսի, որ ողջ Ալեքսանդրիան պետք է հավաքվի այդ քո ստացած ապտակի վրա»: Դրանից որոշ ժամանակ անց երանելի Վիտալիոսը իր խցում խաղաղությամբ ննջեց, քանզի փոքրիկ խուց ուներ, որ կոչվում էր Արեգակի դուռ: Ուստի, ամեն անգամ, երբ պատարագ էր մատուցում եկեղեցում, որը մոտ էր իր խցին, այդ պոռնիկ կանանցից շատերը հավաքվում էին միասին և ասում. «Գնա՛նք, քանզի աբբա Վիտալիոսը պատարագ ունի»: Եվ երբ գալիս էին, ուրախությամբ ընդունում էր նրանց, ուտում և ըմպում էր նրանց հետ, այդ պատճառով շատերն էին չարանում նրա դեմ և ասում. «Բոլորն այնպե՞ս են սիրում այս սուտ աբեղային և խոնարհվում նրա առաջ՝ առանց գիտենալու նրա ծածուկ գործերը»: Քանզի բոլորն տեսնում էին նրա՝ այդ կանանցից յուրաքանչյուրի տուն մտնելը, բայց չգիտեին, թե ինչ արիությամբ ու պարկեշտությամբ էր նրանց դեպի փրկություն առաջնորդում: Իսկ երբ վախճանվեց, ինչպես ասացի, իր խցում, որը ոչ ոք չիմացավ, նույն այդ ժամին եթովպացու պես սև ու չարադեմ մի դև հարձակվեց այն մարդու վրա, որն ապտակել էր աբբա Վիտալիոսին, մի ապտակ հասցրեց նրան և ասաց. «Ընդունի՛ր ապտակը, որ քեզ վերադարձրեց աբբա Վիտալիոսը»: Եվ սա, վայր ընկնելով, սկսեց փրփրել, և, ըստ աբբա Վիտալիոսի մարգարեության, հավաքվեց ողջ Ալեքսանդրիան՝ դևից ապտակվածի ձայնի վրա, մանավանդ՝ ապտակի շառաչյունից, որը լսելի եղավ մի ամբողջ ասպարեզ հեռավորությամբ: Որոշ ժամանակ անց ապտակվածը սթափվեց, պատռեց իր հանդերձները, մերկացրեց կուրծքը, գնաց դեպի սրբի խուցն ու աղաղակելով ասաց.

«Մեղա՛ քեզ, Աստծո ծառա Վիտալիո՛ս, ողորմի՛ր ինձ»: Եվ նրանք, ովքեր լսում էին, գնում էին նրա հետևից: Եվ երբ հասան սրբի խուցը, դևը դարձյալ դուրս եկավ և հալածեց նրան՝ ի տես բոլորի: Երբ մտան խուցը, տեսան սրբին՝ ծնկաչոք աղոթքի կանգնած և հոգին Աստծո ձեռքն ավանդելիս, իսկ հատակին այսպես էր գրված. «Ալեքսանդրիացինե՛ր, ժամանակից առաջ մի՛ դատեք, մինչև որ գա Տերը»: Եվ իսկույն դևը թողեց այն մարդուն, որը բոլորի առաջ խոստովանեց, թե ինքն ինչ արեց սրբին, և թե նա ինչ ասաց իրեն: Եվ այս ամենը հայտնեցին սրբասեր Հովհան հայրապետին, որը ողջ ուխտի հետ միասին եկավ պատվելու սուրբ Վիտալիոսի մարմինը: Երբ տեսավ հատակի գիրը, ասաց. «Հանուն Աստծո, ես՝ տառապյալ Հովհաննեսս, ազատվեցի. եթե ոչ՝ ապտակը, որ ստացավ այս թշվառը, ես էի ստանալու»: Այնժամ բոլոր պոռնիկները, ովքեր հեռացել էին նրանցից, և ովքեր ամուսնացել և զգաստացել էին, մոմերով ու լապտերներով հուղարկավորում էին նրան՝ լալով, և ասում էին. «Կորցրինք մեր փրկությունն ու մեր ուսուցչին»: Այդ ժամանակ բոլորին պատմեցին նրա վարքը, թե վատ ու ապիրատ գործերի համար չէր մտնում իրենց մոտ, և որ իրենք երբեք չտեսան նրան պոռնկանալուց կամ գինի խմելուց, գիշերը գեթ երկու ժամով ննջելուց կամ իրենցից որևէ մեկին ձեռք տալուց: Իսկ ոմանց մեղադրանքին, թե ինչու այդ մասին չէին ասում, որի պատճառով ողջ քաղաքը գայթակղվեց, պատմեցին այն կնոջ մասին, որը դիվահարվեց, և ասացին, թե այդ պատճառով են վախից լռել: Երբ պատվով թաղեցին նրան, եկավ այն նույն մարդը, որը խրատվեց նրանից և բժշկվեց՝ հարգելու համար նրա հիշատակը: Հետո նա կրոնավոր դարձավ Գազայի սուրբ Սերիդոնի վանքում, հավատքով վերցրեց սուրբ Վիտալիոսի խուցը և այնտեղ մնաց մինչև իր վախճանը: Իսկ սրբասեր հայրապետը մեծապես գոհացավ Աստծուց, որ թույլ չտվեց իրեն մեղանչելու Իր ծառա Վիտալիոսի հանդեպ, և շատերն օգուտ քաղեցին այդ պատմությունից՝ ընդունելով մենակյացներին, և զգուշանում էին նրանցից որևէ մեկին իզուր դատելուց: Սուրբ Վիտալիոսի գերեզմանը բժշկություններ էր անում և հրաշքներ գործում, ում աղոթքով Տերը թո՛ղ պարգևի մեզ իր ողորմությունը:

75. Երկու մենակյացներ սպասավորության նպատակով շրջում էին Տյուրոսում: Երբ նրանցից մեկն անցնում էր փողոցով, մի պոռնիկ ձայն տվեց նրան և ասաց. «Ապրեցրո՛ւ ինձ, հա՛յր, ինչպես որ Քրիստոսն ապրեցրեց պոռնիկին»: Իսկ մենակյացը, բոլորովին չքաշվելով մարդկանցից, նրան ասաց. «Ե՛կ իմ հետևից»: Եվ բռնելով նրա ձեռքից՝

բոլորի աչքի առաջ գնաց նրա հետ՝ ամենևին չմտահոգվելով նրանց պարսավանքներից: Եվ համբավը տարածվեց, թե աբբան իրեն կին արեց տիկին Պորփյուրային, քանզի այդպես էին կոչում նրան: Աբբան նրան տարավ, որպեսզի որևէ վանք մտցնի, իսկ կինը եկեղեցում մի ընկեցիկ մանուկ գտավ և վերցրեց նրան՝ խնամելու: Մի տարի անց ոմանք քաղաքից եկան այդ կողմերը, ուր աբբան ու Պորփյուրան էին, տեսան մանկանը և նրան ասացին. «Արդարև, «ազնի՛վ» աբեղա, որդի ունեցար. այլևս արժան չես այդ սուրբ սքեմը կրելու»: Եվ վերադառնալով Տյուրոս՝ տարածեցին, թե տիկին Պորփյուրան աբբայից որդի է ծնել, և որ իրենք իրենց աչքով են տեսել մանկանն ու աբբային: Իսկ երբ աբբան Աստծուց հայտնություն ստացավ իր մոտալուտ վախճանի մասին, Ամաղեգեին (քանի որ նրա անունը փոխեց այն ժամանակ, երբ նրան սուրբ սքեմ տվեց) ասաց. «Ե՛կ գնանք Տյուրոս, որովհետև այնտեղ մի փոքր բանի կարիք ունեմ և կամենում եմ, որ դու էլ գաս ինձ հետ»: Նա ասաց. «Ինչպես կհրամայես»: Եվ նրանք մանկան հետ եկան, որն արդեն մոտ յոթ տարեկան էր: Եվ լուր տարածվեց քաղաքում, թե եկել է Պորփյուրան իր մենակյաց ամուսնու հետ: Մի քանի օր անց մենակյացը հիվանդացավ, և քաղաքից մոտ հարյուր մարդ եկան նրան հիվանդատես: Աբբան խնդրեց ածուխներ վառել, և երբ բերին լի ամանով, վերցնելով՝ թափեց իր պարեգոտի վրա և ասաց. «Ինչպես որ Աստված անկեզ մորենին պահեց հրի մեջ (Ելից Գ 2-3)*, այնպես և այս ածուխները չմերձեցան իմ պարեգոտին, և ես կնոջ մեղք չգիտեմ՝ իմ ծննդից ի վեր»: Եվ երբ այս ասաց, խաղաղությամբ Աստծո ձեռքն ավանդեց իր հոգին, և բոլորը՝ սքանչացած հրաշքի վրա, քանի որ ամենևին չայրվեց պարեգոտը հրից, փառավորեցին Աստծուն, որ այնքան ծածուկ ծառաներ ունի: Իսկ Ամաղեգեի դարձի շնորհիվ, ում Պորփյուրա էին անվանում, այլ պոռնիկներ ևս, նրան հետևելով, գնացին և կրոնավորություն հանձն առան և բարեպաշտորեն ճգնում էին վանքում: Սա նրա համար եմ ասում, որդյակնե՛ր, որ չշտապեք դատել որևէ մեկին, քանզի բազմիցս պոռնկացածների, գողերի կամ երդմնազանցների մեղքերը իմացաք, սակայն ապաշխարությունը, հառաչանքներն ու արտասուքները, որ ծածուկ մատուցեցին նրանք Աստծուն և ընդունելի եղան Աստծո առջև՝ չիմացա՛ք:*

76. Մի մեծն ծեր՝ Հովհաննես անունով, այսպիսի մի դեպք պատմեց. «Ժամանակներ առաջ մի երիտասարդ եկավ ինձ մոտ և ինձ ասաց. «Հանուն Աստծո, ընդունի՛ր ինձ, քանզի կամենում եմ ապաշխարել». և այս ասում էր մեծամեծ հառաչանքներով: Իսկ ես, երբ տեսա նրան

այդպես տրտմած, թախանձելով ասացի նրան. «Ինչո՞ւ եկար այսպիսի զղջման, ասա՛ ինձ պատճառը, և Աստված կարող է օգնել քեզ»: Նա ինձ ասաց. «Արդարև, տե՛ր իմ, սաստիկ մեղավոր եմ»: Ես դարձյալ ասացի նրան. «Հավատա՛ ինձ, որդյա՛կ, որքան շատ և բազմապիսի են մեղքերը, նույնքան շատ և բազմապիսի են նաև բժշկություններ-ը. սակայն եթե ուզում ես բժշկվել, ճշմարտապես ասա՛ ինձ քո բոլոր գործերը, և նրանց պատշաճող դեղերը կկիրառենք, քանզի այլ կերպ է բժշկվում պոռնիկը, այլ կերպ՝ մահապարտը, ուրիշ կերպ՝ կախարդը, այլ կերպ՝ զրպարտողը, այլ է ագահի բժշկումը, այլ է ոխակալինը, այլ է գողինը և այլ՝ շնացողինը: Բոլոր ախտերը չէ, որ քո մեջ կան: Ինչպես մարմնական հիվանդություններն են տարբեր՝ իրենց համապատասխան դեղամիջոցներով, նույնպես և հոգևոր ախտերը, տարբեր լինելով, տարբեր բժշկություններ ունեն»: Իսկ նա, հոգոց հանելով, կուրծքը ծեծելով, մեծ խռովքից հառաչանքներն ու արտասուքները խառնած սրտի մեջ՝ չէր կարողանում պարզորոշ խոսել: Երբ տեսա, որ նա այսպիսի ծանր ու անտանելի տրտմության մեջ է և չի կարողանում իր գործած չար գործերը հստակորեն պատմել, նրան ասացի. «Լսի՛ր ինձ, որդյա՛կ, փոքր-ինչ հավաքի՛ր մտքերդ և պատմի՛ր եղածը, և Քրիստոս կպարգևի քեզ իր օգնությունը, քանզի Հանուն Իր անճառ մարդասիրության և անչափ գթության, ամեն ինչ կրեց, և մաքսավորներին խոնարհաբար հաղորդակից եղավ, և պոռնիկից չխորշեց, և ավազակին ընդունեց, և մեղավորներին սիրելի եղավ. Նա Ինքը նաև քեզ կընդունի, որդյա՛կ, ապաշխարությունից նվաղած և առ Նա դարձած անձդ, քանզի մեղավորի մահը չի ցանկանում, այլ նրա դարձն ու կենդանությունը»: Այնժամ, փոքր-ինչ հավաքելով իրեն և արտասուքները զսպելով, ասաց. «Տե՛ր աբբա, ամեն տեսակի մեղքերով լցված, երկնքին ու երկրին անարժան, երկու օր առաջ լսեցի, որ Անտիոք քաղաքի նախարարներից մեկի դուստրը կուսության մեջ վախճանվեց և պատվական ու մեծագին հանդերձներով թաղվեց քաղաքից դուրս գտնվող գերեզմանում: Այս լսելով՝ իմ ոճրագործ սովորությամբ գիշերով գնացի գերեզման և մտնելով այնտեղ՝ սկսեցի մերկացնել նրան: Երբ բոլոր հանդերձները, մինչև իսկ ներքնաշապիկը հանեցի, որով ծածկված էր նրա մերկությունը, և թողեցի մերկ՝ ինչպես ծնվել էր, և կամեցա ելնել գերեզմանից, մեռելը կանգնեց իմ առջև և ձախ ձեռքը մեկնելով՝ բռնեց իմ աջ ձեռքից և ինձ ասաց. «Ո՛վ դու մարդ, ինչի՞ համար էր պետք այսպես մերկացնել ինձ, ինչպե՞ս չվախեցար Աստծուց, ինչպե՞ս անգիտացար դատաստանի հատուցման սպառնալիքը, ինչպե՞ս գթասիրություն չընկավ քո սրտի մեջ մեռյա-

լիս հանդեպ, ոչ էլ մարդկային բնությունից պատկառեցիր, այլ՝ քրիստոնյա լինելով հանդերձ՝ այսպես մերկ թողեցիր ինձ Քրիստոսի առաջ և ոչ էլ կանացի բնությունից ամաչեցիր: Մի՞թե այդ նույն բնությունը չծնեց քեզ. արդյոք ինձանով չանարգեցի՞ր քո մորը և ի՞նչ պատասխան պիտի տաս ինձ համար Քրիստոսի ահեղ ատյանի առաջ, թշվա՛ռ մարդ. իմ կենդանության օրոք իսկ մարդ չէր տեսել երեսս, իսկ ետմահու դու ինձ մերկացրիր և իմ մարմիը տեսար: Վա՜յ մարդկանց, որքա՜ն տառապանք տեսա: Ի՞նչ սրտով, ո՛վ մարդ, կամ ո՞ր ձեռքով վերցնելով պիտի հաղորդվես սուրբ և պատվական Մարմնին ու Արյանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի»: Իսկ ես, լսելով այս խոսքերը, զարհուրեցի և խպառ պապանձվեցի: Հետո հազիվհազ ահով ու դողով ասացի նրան. «Արձակի՛ր ինձ, և այլևս նման բան չեմ անի»: Նա ինձ ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. ինչպես կամեցար՝ այնպես մտար այստեղ, բայց ինչպես կամենում ես՝ այնպես դուրս չես գա այստեղից, այլ իմ գերեզմանն ընդհանուր կլինի ինձ և քեզ համար, սակայն մի՛ կարծիր, թե հենց այս պահին կմեռնես, այլ՝ երկար օրեր տանջվելով, քիչ առ քիչ, չարից չարչարվելով՝ դառնապես պետք է ավանդես հոգիդ»: Իսկ ես աղաչեցի արտասուքներով՝ արձակել ինձ, բազում անգամ երդվելով ամենակալ Աստծով, որ այլևս այս անօրեն գործն ու ոճիրը չեմ գործի: Այնժամ իմ բազում աղաչանքներից ու արտասուքներից հետո պատասխանեց և ասաց ինձ. «Եթե կամենում ես ապրել և այս նեղությունից փրկվել, ինձ խոստացի՛ր, որ եթե արձակեմ քեզ, ոչ միայն այսպիսի պիղծ և գարշելի գործերից կհրաժարվես, այլև հենց իսկ այս ժամին կգնաս, կհրաժարվես աշխարհից, մենակյաց կդառնաս, կապաշխարես այս գործածիդ համար և կծառայես Քրիստոսին»: Իսկ ես երդվեցի նրան՝ ասելով. «Աստծով եմ երդվում, որ ընդունելու է իմ հոգին, ոչ միայն այն կանեմ, ինչ դու ասացիր, այլև այսօրվանից իմ տուն այլևս չեմ վերադառնա, այլ առանց հապաղելու վանք կգնամ»: Այնժամ աղջիկն ինձ ասաց. «Հագցրո՛ւ ինձ՝ ինչպես որ տեսար»: Երբ հագցրի նրան, այնժամ բազմելով՝ անմիջապես ննջեց, իսկ ես, ահա՛, եկա քեզ մոտ. ապրեցրո՛ւ ինձ՝ ինչպես կամենաս»: Այս լսելով երիտասարդից և մխիթարելով նրան ապաշխարության խոսքով՝ ժուժկալությամբ կրթեցի նրան և դարձրի մենակյաց, տեղավորեցի լեռան մի այրում, որ քաղաքի մյուս կողմում է, մեծապես գոհանալով Աստծուց և ջանալով նրա հոգու փրկության համար»:

77. Կյուրակոս անունով ոմն մենակյաց եղբայր, որ Ալեքսանդրիա քաղաքից էր, մի քույր ուներ՝ Պարասկևա անունով: Երբ մեռան նրանց

ծնողները, Կյուրակոսը ցանկացավ կրոնավորական վարքով ապրել և, թողնելով հայրական ողջ ունեցվածքն ու քրոջը, գնաց Սկյութիայի անապատը՝ մեծն Դանիելի մոտ, և ճգնավորական վարքով կրոնավորեց ու հաճո եղավ իր կրոնավորական վարքով, և կատարյալ սեր ուներ առ Աստված: Իսկ նրա քույր Պարասկևան, որ գեղեցիկ էր տեսքով, խաբվեց բանսարկուից և իր անձը տվեց պոռնկության գործին և անառակ վարքով բազում հոգիներ էր կորստյան մատնում: Նրա եղբայր Կյուրակոսը, լսելով այս ամենը, շատ տրտմեց իր քրոջ կորստյան համար և ուրացավ նրան՝ նրա անառակ ընթացքի համար: Մոտ մեկ տարի անց, լսելով այս, Մեծն Դանիելն ու անապատի այլ ծերեր խիստ մեղադրեցին Կյուրակոսին, թե՝ «Ինչպե՞ս թողեցիր քո քրոջն անտեր ու տվեցիր սատանային՝ կորստյան մատնելու նրան»: Լսելով այս հանդիմանությունները՝ Կյուրակոսը սուգ անելով հառաչում էր իր քույր Պարասկևայի կորստյան համար: Այնժամ ծերերը նրան ասացին. «Եղբա՛յր Կյուրակոս, հարկ է քեզ անձամբ գնալ փնտրելու այն կորսվածին և դուրս բերել մոլորված ոչխարին սատանայական գործերից»: Այնժամ Կյուրակոսը, ծերերի հրահանգով ու աղոթքներով, վեր կացավ գնաց Ալեքսանդրիա, հարցրեց ու որոնեց իր քույր Պարասկևայի տունը, և ի վերջո գտավ այն: Կանգնել-մնացել էր մենակյացը պոռնկանոցի դռանը՝ ամոթալի պատկառանքով, իսկ քույրը ներսում ուրախանում էր բազում տղամարդկանց հետ՝ գինարբուքով, երգ ու պարով: Կյուրակոսը, լսելով ներսից եկող ձայները, արտասվալից ողբով դեպի երկինք էր նայում և աղաչում Աստծուն՝ օգնել կորուսյալ հոգուն: Ապա մի պատանու ուղարկեց ներս՝ իր քրոջ մոտ՝ ասելու, թե՝ քո եղբայր Կյուրակոսը դրսում՝ դռան մոտ է և քեզ է կանչում: Պարասկևան, որ գլխաբաց և բոկոտն՝ անառակաբար պարում էր և խաղում մեղսասեր երիտասարդների հետ, երբ լսեց իր եղբոր մասին, սաստիկ ուրախացավ և դուրս վազելով՝ ողջունեց եղբորն ու իր երեսի վրա երկրպագեց նրան: Կյուրակոսը, տեսնելով նրան այդպիսի տեսքով, արտասվելով բարձրացրեց ձեռքերն առ Աստված և ողբալով ասաց. «Ո՜վ քույր իմ Պարասկևա, այս ինչպե՞ս եմ տեսնում քեզ, որ և՛ Աստծուն արհամարհեցիր, և՛ հոգիդ անարգեցիր. ահա դու կորար և քեզ հետ շատերին կորցրիր: Վա՜յ ինձ, քո՛ւյր իմ, որ այսպես եմ տեսնում քեզ, ինձ համար լավ էր, որ քո առջև մեռած լինեի: Վա՜յ ինձ, քո՛ւյր իմ, որ նայում եմ քեզ և տեսնում եմ՝ հավիտենական կորուստն ես բարձել անձիդ»: Իսկ Պարասկևան, երբ լսեց այս, կուրծքը ծեծելով ընկավ նրա ոտքերը և ողբալով ասաց. «Վա՜յ ինձ՝ թշվառականիս, վա՜յ ինձ, որ իսպառ կորա և մեղքով անցկացրի իմ կյանքի օրերը: Աղաչում

եմ քեզ, հա՛յր իմ՝ ըստ հոգու և եղբա՛յր՝ ըստ մարմնի, եթե գիտես, որ Աստված կընդունի ինձ և գթությամբ կտեսնի պոռնիկի զղջումն ու անառակ կնոջ ապաշխարությունը, մի՛ թողնիր ինձ այստեղ, աղաչում եմ քեզ, տե՛ր իմ և հա՛յր իմ: Լսող կլինեմ և կհնազանդվեմ քո հրամաններին և ամբողջ սրտով ու կամքով կծառայեմ Տիրոջը»: Երբ Կյուրակոսը լսեց այս խոսքերը, սաստիկ ուրախացավ և նրան ասաց. «Մտի՛ր քո տունը, ծածկի՛ր քո գլուխը, հագի՛ր կոշիկներդ, քանզի ճանապարհը երկար է, խիստ քարքարոտ և լեռան խորշակն էլ սաստիկ է, մինչև որ տանեմ քեզ և կուսանաց վանքը մտցնեմ»: Այնժամ աղջիկը նրան ասաց. «Կենդանի է Տեր Աստվածն իմ, որ ինչպես գլխաբաց ու բոկոտն դուրս ելա քեզ մոտ, այդպես էլ կգամ քո ետևից: Իմ տուն չեմ մտնի և ոչինչ չեմ վերցնի այն սատանայական իրեղեններից. ե՛կ գնանք, եղբա՛յր, ինչպես որ կամ՝ գլխաբաց ու բոկոտն: Ինձ համար, եղբա՛յր իմ, լավ է մերկ գալ քո հետևից, քան ետ դառնալ և մտնել իմ կորստյան տունը»: Կյուրակոսն առավել մեծ խնդություն և ուրախություն ապրեց քրոջ այս խոսքերից՝ գոհանալով Աստծուց, որ լուսավորեց նրա խավարած սիրտը: Եվ ճանապարհ ընկնելով՝ գնացին դեպի լեռը և մտան ներքին անապատը, որպեսզի գնան տոնիտացիների վանք: Ճանապարհին Պարասկևան հարցրեց իր եղբորը. «Ո՞վ հա՛յր իմ և եղբա՛յր, ասա՛ ինձ՝ կա՞ ինձ ողորմության հույս առ Աստված, թե՞ ոչ»: Եվ Կյուրակոսն իր քրոջն ասաց. «Այո՛, կա՛, և անգամ՝ մեծ հույս, և ոչ միայն քեզ, այլև բոլոր մեղավորներին, ովքեր ապաշխարությամբ դառնում են դեպի Քրիստոս: Քանզի Քրիստոս ավետիս բերեց մեզ իր երկնային Հորից և այսպես ավետարանեց ու ասաց. «Զեկա արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության» (Մատթ. Թ 13, Մարկ. Բ 17, Ղուկ. Ե 32)*: Դարձյալ ավետարանեց և ասաց. «Մեղավորի մահը չեմ կամենում, այլ չար ճանապարհից դառնալը և ապրելը»: Դարձյալ հաստատում է մեղավորներին իրենց կյանքի հույսի մեջ և ասում. «Ուրախություն կլինի երկնքում՝ Աստծո հրեշտակների մեջ, մի մեղավորի համար, որը կապաշխարի իր մեղքերը»* (Ղուկ. ԺԵ 10)*: Եվ մեղքով կորսված ներին նկատի ունենալով՝ ասաց. «Եթե մեկը հարյուր ոչխար ունենա, և նրանցից մեկը մոլորվի, մի՞թե չի թողնի ինսունիններ անապատում և չի գնա փնտրելու մոլորվածին, մինչև որ գտնի: Իսկ երբ գտնի, իր ուսերի վրա կառնի նրան և կտանի կխառնի իր հոտին»* (Ղուկ. ԺԵ 4-7)*: Այսպես և Քրիստոս բոլոր մեղավորներին, որ դառնում են դեպի Իրեն, իր ուսերի վրա կառնի և կտանի-կխառնի երկնքի հրեշտակներին»: Լսում էր այս ամենը Պարասկևան և արտասուքներով դիմելով ու հառաչանքներով աղաչելով՝ ապավինում էր*

ողորմաբաշխ Քրիստոսին: Եվ Կյուրակոսը, տեսնելով իր քրոջ ապաշխարությունը, սրտի խորքից աղաչում էր Աստծուն՝ ընդունել նրա ապաշխարությունը: Իսկ Պարասկևան գնում էր գլխաբաց և երկու ձեռքը կապած գլխավերևում: Եվ մինչ գնում էին անապատի խորդուբորդ ու դժվարին ճանապարհով՝ ճաքճքվեցին նրա ոտքերի ներբանները, և արյուն էր սաստիկ հորդում նրա մարմնից, արտասուքների վտակներ էր հոսեցնում անդադար և հառաչում առ Աստված՝ հիշելով իր մեղքերը, իսկ գլուխն ու դեմքը տոթից ու կիզիչ արևից խորշակահարվել և ինչպես հրից՝ վառվել էին: Ապա սկսեց բռունցքներով ծեծել իր կուրծքը, որը և կապտելով ուռեց և պատռվեց. արյունը հոսելով լցվում էր ծոցը և հանդերձներին, լաց էր լինում և ասում հառաչելով. «Ընդունի՛ր, Տե՛ր իմ Հիսուս Քրիստոս, իմ ապաշխարությունը, ինչպես ընդունեցիր պոռնիկ կնոջ ապաշխարությունը»: Եվ մինչ գնում էին, նրա եղբայրը տեսավ, որ այլ կրոնավոր անապատական եղբայրներ էին գալիս անապատի ճանապարհով, իր քրոջն ասաց. «Շեղվի՛ր ճանապարհից մի փոքր և թաքնվի՛ր, մինչև նրանք անցնեն, որպեսզի չգայթակղվեն, քանզի չգիտեն, որ դու իմ քույրն ես»: Պարասկևան դուրս եկավ ճանապարհից և թաքնվեց: Իսկ երբ անապատականներն անցան, Կյուրակոսը գնաց կանչելու քրոջը և տեսավ, որ նա մեռած է: Հառաչելով հոգոց հանեց և ասաց. «Վա՜յ ինձ՝ մեղավորիս, որ արժանի չեղա իմ տառապյալ քրոջ հոգին ապրեցնելու»: Ապա գերեզմանափոս փորեց, սաղմոսներով ու օրհնաբանություններով թաղեց նրան և մեծ տանջանքներից ու տրտմությունից հոգնաբեկ՝ ննջեց նրա գերեզմանի վրա: Եվ երազում զարմանալի տեսիլք տեսավ: Տեսավ, որ Տերը նստած էր բարձր աթոռի վրա, իսկ Նրա շուրջը հրեշտակների բազմությունն էր, Քրիստոսի առջև Պարասկևան՝ պատառոտուն հանդերձներով և գլխիկոր: Եվ Տերն ասաց. «Բերե՛ք այդ պոռնիկ կնոջ բոլոր գործերն իմ առջև»: Եկան սևադեմ մարդիկ և բերին գրված մատյաններ, բացեցին նրա առջև և ընթերցեցին նրա բոլոր մեղսագործությունները: Այնուհետև եկան երկու լուսավոր այրեր և Տիրոջը մատուցեցին շիշ՝ լցված արյամբ և արտասուքներով, և ընթերցեցին մի փոքրիկ մագաղաթ, թե ինչպես նա լսող և հնազանդ եղավ իր եղբորը, ինչպես բաց գլխով և բոկոտն գնաց անապատի դժվարին ու քարքարոտ ճանապարհով, ինչպես կոծելով ծեծեց իր կուրծքը, մինչև որ խպառ վիրավորեց մարմինը: Այնժամ այն սևադեմ մարդիկ ասացին. «Ահա այսքան ժամանակ մեզ հետ էր և մեզ հաճելին էր կատարում, և այս մատյանների բոլոր էջերը լցրին նրա հանցանքները, մինչդեռ երեկվա մեկ օրվա համար կամենում եք նրան խլե՞լ մեզանից»: Եվ Տերն ասաց. «Բերե՛ք կշեռքը»,

և բերին: Եվ սևերը, որպես քթոցից, թափում էին կնոջ մեղքերը մատյանից և լցնում կշեռքի մի նժարի վրա: Նույնպես և լուսավորները դրեցին շիշը մյուս նժարի վրա, և այս նժարը ծանրորեն վայր իջավ և բարձրացրեց չարալից նժարը. բոլոր չարիքները ցրվեցին ծխի նման և փոշու պես անհետացան: Այդ ժամանակ անուշահոտություն բուրեց, և հրեշտակները մոտենալով՝ խլեցին Պարասկևային թշնամիների ձեռքից, որոնք կամենում էին նրան տանել դեպի տանջանքների վայր, և բերելով կանգնեցրին նրան Քրիստոսի առջև: Տերը հրամայեց հանել նրա վրայից հին, աղտեղի ու պատառոտված հանդերձները: Նրան հագցրին բեհեզ և ծիրանի, նրա գլխին պսակ դրին, և լուսավորները վերցնելով նրան՝ թռան-բարձրացան երկինք: Զարթնեց Կյուրակոսը քնից և սաստիկ ուրախացավ տեսիլքից: Գնալով պատմեց այն Մեծն Դանիելին ու Սկյութիայի մյուս սուրբ հայրերին, և բոլորը փառավորեցին Աստծուն: Եվ երանուհի Պարասկևային գրառեցին տախտակի վրա՝ կրոնավորների ու սուրբ կանանց հիշատակների շարքում՝ մարտի քսանութին:

78. Ելեգեոս անունով մի մենակյաց իր խցում նեղվեց ձանձրույթի դևից, և երբ երկարեց այդ վիճակը, վեր կենալով գնաց Ելոս կոչվող անապատը և շրջելով այնտեղ՝ տեսավ մի մերկ մարդու՝ խիստ ծերացած, որը տեսնելով նրան՝ փախավ: Աբբա Ելեգեոսը համառորեն հետապնդեց նրան, իսկ նա աղոթքի կանգնելուց հետո հարցրեց. «Ինչպե՞ս եկար այստեղ և ինչո՞ւ չարչարվեցիր այսքան»: Ելեգեոսն ասաց. «Իմ խցում տաղտկացա ձանձրույթից և եկա այս անապատը՝ շրջելով և աղոթելով, որպեսզի ինձանից հեռանա ձանձրույթի դևը: Խորհում էի, թե կգտնվի՞ մի Աստծո ծառա, որ աղոթի ինձ համար: Ահա անտես առնելով իմ մեղքերը՝ ուղարկեց քո սրբասիրությունը: Արդ, Աստծո մաղթանքով աղոթի՛ր ինձ համար և ընդունի՛ր ինձ, որպեսզի քեզ մոտ բնակվեմ»: Իսկ նա, ողջունելով և աղոթելով, ասաց. «Դա անհնար է, որովհետև Աստծուց տրված չէ քեզ»: Այնժամ Ելեգեոսն ասաց. «Ասա՛ ինձ, աղաչում եմ քեզ, ինչպե՞ս եկար այստեղ, որքա՞ն ժամանակ ես այստեղ և ի՞նչ շնորհ տվեց քեզ Աստված»: Իսկ նա հոժարությամբ պատասխանեց նրան. «Թե ինչպես եկա և ինչ պատճառով՝ պարզ է. եկա իբրև մեղավոր, որը կամենում է փրկվել, այսինքն՝ Աստված առաջնորդ եղավ իմ տկարությանը: Ավելի քան յոթանասուն տարի այստեղ եմ, և մինչ օրս մարդու երես չեմ տեսել: Իսկ ինչ-որ ժամանակ առաջ հպարտացավ իմ սիրտը թշնամու ներգործությամբ՝ իբրև թե ավելի մեծ չափի եմ հասել՝ քան շատերը, և Աստծո նախախնամությամբ խորհուրդ մտավ սիրտս՝ աղաչել Աստծուն, թե ո՞ւմ հետ ունեմ

բաժին, և թե աշխարհում կա՞ մեկը ինձ հավասար: Եվ համառորեն յոթ օր աղաչելով Աստծուն՝ աներևույթ ձայն եկավ ինձ, թե՝ «Ալեքսանդրիայում ապրող խաղամոլ և պոռնկապետ Սերգիի հետ է քո բաժինը»: Իսկ ես, սաստիկ տրտմած, ասացի իմ մտքում. «Վա՜յ քեզ, տառապյալդ Պյուռիոս, ահա այսքան տարի ծառայում ես Աստծուն այսպիսի խստակեցությամբ, և պոռնիկների վերակացուի հետ դասվեցիր»: Սակայն ամբարտավան մտքով՝ սատանայից եկած ձայն համարեցի այդ, որի պատճառով և երկմտանքի մեջ էի: Յոթ օր ևս աղոթք անելով՝ նորից լսեցի նույն ձայնը, որ ինձ ասաց. «Ասացի քեզ, որ Ալեքսանդրիայում պոռնկապետ Սերգիի հետ է քո բաժինը»: Այնժամ ինքս ինձ ասացի. «Եթե սա հաճո եղավ Աստծուն, ապա Նա թույլ կտա, որ ես տեսնեմ, թե ո՛վ է այդ Սերգին և ի՛նչ է նրա գործը»: Եվ վեր կենալով գնացի Ալեքսանդրիա, հարցուփորձ արեցի, և ինձ ցույց տվեցին նրան, որ կապելլայում նստած՝ պոռնիկների հետ գինարբուքով զվարճանում էր, իսկ պոռնիկներից ոմանք ներսուդուրս էին անում, քանզի նա նրանց բոլորի վերակացուն էր: Երբ մտա կապելլա, հարցրի, թե նա՞ է Սերգի անառակը: Եվ նա ասաց՝ ե՛ս եմ: Այնժամ նրան ասացի. «Կամենում եմ քեզ հետ ճաշել»: Նա ասաց. «Համեցի՛ր խաղաղությամբ»: Եվ հրամայեց բերել՝ ինչ կար կապելլայում, և ես այդքան տարիներ անց հարկադրված եղա հանուն Աստծո սիրո ամեն ինչին հաղորդ լինել՝ համարելով, որ եթե սա հաճո եղավ Աստծուն և ինձ հետ դասվեց, ինչո՞ւ չճաշակեմ սրա հետ: Եվ երբ զվարճացանք, նրան ասացի. «Տուն ունե՞ս»: Ասաց՝ այո՛: Ասացի. «Հիմա գնանք քո տուն, որովհետև բան ունեմ քեզ ասելու»: Իսկ նա իր մտքում գայթակղվեց, թե ես, միգուցե թշնամուց փորձվելով, կամենում եմ մեղքի մեջ ընկնել, և ստեպ-ստեպ ինձ նայելով՝ իր մտքում պարսավում էր ինձ և զարմանում, ինչպես որ հետո պատմեց ինձ, թե ինչպես, այսպիսի ծերության ու կրոնավորության մեջ լինելով, համակվեցի այդպիսի ախտով: Երբ գնացինք նրա տուն, ես աղոթք անելուց հետո ասացի նրան. «Հանուն Աստծո, պատմի՛ր ինձ քո վարքը, առանց խորշելու կամ քաշվելու, և թե՝ ինչ բարի գործ ես արել»: Իսկ նա, դրանից զարմացած, ասաց. «Մա՛րդ Աստծո, կապելլայում ինձ գտար պոռնիկների հետ ուտելիս, խմելիս և զվարճանալիս, քանզի իսկապես նրանց վերակացուն եմ, և առանց ինձ նրանցից ոչ մեկին ոչ ոք չի կարող մերձենալ: Ինձ են դիմում, և ես ում կամենում եմ՝ նրան էլ տալիս եմ, և դեռ այսքանից հետո, ինչպես ասում ես, կամենում ես իմ վարքի մասին իմանա՞լ: Ահա ինքդ տեսար, այլևս ինչո՞ւ ես կամենում ինձնից տեղեկանալ»: Իսկ ես, առավել սաստիկ աղաչելով, երդվեցնում էի

նրան չծածկել ինձնից, եթե բարի բան է արել: Ապա ինձ հասած ձայնի մասին պատմեցի նրան: Այնժամ նա, հիացած Աստծո մարդասիրության վրա, հոգոց հանելով ասաց. «Թողությո՛ւն չնորհիր ինձ, եթե այդպես է: Հիշում եմ, որ մի օր սովորականի պես մտա կապելլա և մի սաստիկ գեղեցիկ կին տեսա, որ կտավ էր գործում: Ցանկացա նրան և կապելուհուն ասացի. «Որտեղի՞ց է այս կինը»: Նա ասաց՝ այսինչ քաղաքից: Ես նրան ասացի. «Խոսի՛ր նրա հետ, որ ինձ հետ լինի»: Ասաց. «Ձե՛մ կարող այդպիսի բան ասել նրան, որովհետև թեկուզ և այժմ աղքատության մեջ է, սակայն խիստ ազնվական է»: Նրան ասացի. «Իսկ ինչո՞ւ է այդպիսի կարգի մեջ հայտնվել»: Եվ նա ասաց. «Դրա ամուսինը իշխանին պարտք է եղել հարյուր դահեկան, և երբ չի կարողացել հատուցել, նրան բանտ է գցել, իսկ երկու որդիներին ծառայության է վերցրել: Այժմ օր ու գիշեր շրջում է և աշխատում, որ թերևս կարողանա ազատել նրանց»: Այս լսելով՝ նրան ասացի. «Գնա՛ նրան ասա, որ եթե ինձ հետ լինի, ես կտամ հարյուր դահեկանը»: Նա դարձյալ ասաց. «Ձե՛մ կարող, քանզի, ինչպես կարծում եմ՝ երբեք չի համաձայնի, քանի որ սրտով սգավոր է»: Ես նրան ասացի. «Թերևս համաձայնի, իսկ եթե չհամաձայնի, ոչինչ չես կորցնի»: Եվ նա համաձայնելով ինձ հետ՝ գնաց ասելու նրան: Կինը հոգոց հանելով և արտասվելով համաձայնեց՝ ասելով. «Որքան ժամանակ է՝ աշխատում եմ օր ու գիշեր, որպեսզի ազատեմ նրանց, բայց չեմ հասնում դրան: Արդեն ձանձրացա և չգիտեմ՝ ինչ անեմ. կարծում եմ, որ մարդասեր Աստված կների ինձ այս մի մեղքը՝ հանուն երեք հոգու, որովհետև գիտե, որ մինչ այս՝ օտար տղամարդ չճանաչեցի, այլ հարկադրաբար եմ մատնում իմ մարմինը մեղքի՝ հանուն նրանց»: Երբ կապելուհին եկավ և ինձ ասաց, թե՝ հանձն առավ, գնացի բերեցի հարյուր դահեկանը և հաշվելով տվեցի նրա ձեռքը: Նա մեծամեծ հառաչանքներով ու արցունքներով վերցրեց, մտանք սենյակ, և աչքերը վեր բարձրացնելով երկինք՝ ասաց. «Տե՛ր, դո՛ւ գիտես իմ նեղությունը»: Երբ լսեցի այս, խիղճս շարժվեց, և մտքիս մեջ ասացի. «Եթե սա այսպիսի նեղության մեջ է, ինչպե՞ս ես այդպիսի պիղծ ու անօրեն բան անեմ դրան»: Եվ թողնելով՝ արձակեցի նրան՝ հարյուր դահեկանով հանդերձ, և ազատեցի նրա ամուսնուն ու որդիներին»: Այս լսելով՝ ասացի. «Փա՛ռք մարդասեր Աստծուն, ճիշտ էր քեզ հետ դասվելը»: Իսկ նա դարձյալ հոգոց հանելով՝ ասաց ինձ. «Եթե սա հաճո եղավ Աստծուն, ինչպես ասում ես, և Աստծով եկար ինձ՝ մեղավորիս մոտ, սրանից ավելի լավը՝ ուրիշ ի՞նչ հիշեմ: Զարաբարո, մեղսասեր ու Աստծո եկեղեցուն անհաղորդ մի իշխան եկավ Ալեքսանդրիա և ամեն օր ինձանից երկու կամ

երեք պոռնիկ էր վերցնում: Մի օր, երբ անցնում էր կուսանոցի մոտով, նրանցից մի քանի մանկամարդ կույսի տեսավ՝ պատուհանին կռթնած, և նրա ցանկությունից վառված՝ հրամայեց զինվորներին շրջապատել վանքը և ուշադիր հսկել, որպեսզի նրանցից ոչ ոք չփախչի: Ներս մտնելով՝ հաշվեց նրանց և գիտցավ, որ յոթանասուն հոգի են, հանձնեց ինձ և պատվիրեց՝ ասելով. «Ահա սրանք ձեռքիդ տակ են, ինչ կուզես՝ արա, և ամեն օր քանիսին պահանջեմ՝ կբերես ինձ մոտ, մինչև որ յոթանասուն թիվը լրանա»: Երբ տեսա այս ամենը և լսեցի հրամանը, մտքումս ասացի. «Վա՜յ ինձ՝ մեղավորիս. այս հրեշտակակերպ էակները այսքան տարի հանուն Աստծո պահել են իրենց կուսությունը, իրենց մարմինն են մաշել պահքերով, հսկումով ու ամեն տեսակ ճգնությամբ, որպեսզի իրենց անձերը սրբորեն կանգնեցնեն Երկնային Փեսայի առջև, իսկ այժմ իմ միջոցով պիտի կորցնեն այդքան ջանքն ու վաստակը՝ այսպիսի ապերասան գազանի կողմից պղծվելով: Քավ լիցի, ես այդպիսի բան չեմ անի»: Շատ խորհելուց և հնար չգտնելուց հետո, աղաչեցի Աստծուն՝ ինձ միտք շնորհել, որ մի ճար գտնեմ՝ ազատելու կույսերին այդպիսի պղծությունից: Ամենաողորմած Աստված գթալով՝ մտքումս մի բարի խորհուրդ գցեց, և վեր կենալով գնացի քաղաքի բոզերի մոտ և նրանց բաժանելով իմ ունեցվածքն ու դրամը՝ հազիվ կարողացա համոզել նրանց՝ մազերը կտրել և կրոնավորական զգեստ հագնել: Նրանց փակեցի վանքում և թողնելով այնտեղ՝ կույսերին դուրս հանեցի և ուրիշ տեղ թաքցրի: Եվ թշվառական իշխանին ամեն օր տալիս էի մազերը կտրած պոռնիկներին, մինչև որ յոթանասուն թիվը լրացավ, որից հետո այն չարափառն ու պիղծը հեռացավ քաղաքից: Այնժամ կույսերին դարձյալ վերադարձրի իրենց վանքը, իսկ մյուսներին ուզում էի արձակել, սակայն նրանք, տեսնելով մեր Քրիստոս Աստծո աղախիններին ու հարսնացուներին, չկամեցան այնտեղից դուրս գալ՝ ասելով. «Եթե Աստված այս պատրվակով արժանացրեց մեզ հագնելու սուրբ կրոնավորության այս զգեստը, քա՜վ լիցի, որ մենք այսուհետև դառնանք դեպի այն պղծությունն ու մեր անձանց կորուստը»: Եվ մնացին նույն վանքում՝ սուրբ զգեստների մեջ՝ ապաշխարությամբ հաճո լինելով ամենազոր և գթաառատ Աստծուն»: Այս ամենը լսելով և առավել ևս փառավորելով Աստծուն, Ով միակ փրկիչն է Իրեն հուսացողների և ճշմարիտ հավատացյալների, նրան ասացի. «Արդարև, եղբա՜յր, թեև շատ վաստակ ունեմ, սակայն հասկացա, որ ոչ թե ինձ հավասար ես, այլ առավել ես ինձնից: Բայց դու աղոթի՛ր ինձ համար, որ ես իմ տեղը վերադառնամ»: Եվ նա ասաց. «Իմ Տիրոջով կաղոթեմ քեզ համար, որպեսզի վերադառնաս քո տեղը: Սա-

կայն, եթե քեզ հետ դասվեցի՝ ինչպես ասում ես, ապա քեզ չեմ թողնի, այլ քեզ հետ կգամ»: Եվ աղաչեց ինձ՝ սպասել իրեն մեկ-երկու օր, և իր ունեցվածքը տալով աղքատներին՝ եկավ իմ հետևից և ինձ հետ բնակվեց այս այրում երեք տարի, իսկ վախճանը կնքեց չորս օր առաջ: «Հիմա աղաչում եմ քեզ, որպեսզի երբ ելնի հոգիս՝ նրա կողքին ինձ դնես: Այժմ գնա՛ և երեք օր հետո արի՛, որովհետև քեզ հետ կարևոր բան ունեմ խոսելու»: Երբ երեք օր հետո վերադարձա՝ ըստ ծերի խնդրանքի, նրան առհավետ ննջած գտա, և թաղելով նրան աբբա Սերգիի կողքին, ինչպես ինքն էր պատվիրել, գոհացա Աստծուց այս սքանչելի հրաշքների համար և վերադարձա՝ փառաբանելով Աստծուն»:

79. Մեր օրերում կատարված առավել հիանալի նշանները ձեզ համար գրի առնելը՝ հաճո թվաց ինձ՝ Հակոբ սարկավագիս ու մեղավորիս, հոգևո՛ր եղբայրներ, որպեսզի լսելով այն՝ առավել շահվեն ձեր հոգիները, և փառավորե՛ք մարդասեր Աստծուն, Ով ոչ մեկի կորուստը չի կամենում: Լսեցե՛ք ինձ և ձեր մտքերում դրե՛ք իմ առաջիկա ասելիքը, քանզի իմ խոսքերը լի են շնորհներով: Անտիոքի սուրբ եպիսկոպոսը հրավիրեց քաղաքի շրջակա վանքերի եպիսկոպոսներին՝ որոշ խնդիրների պատճառով: Հավաքվեցին ութ եպիսկոպոսներ, որոնց հետ էր նաև եպիսկոպոս սուրբ Նոնոսը՝ սքանչելի մի այր, որ մենակյաց էր եղել աբեղեմենացիների բազմաթիվ վանքերում և անարատ վարքի ու առաքինի ընթացքի համար արժանացել էր այդպիսի պատվի: Սրանք, հավաքվելով վերոհիշյալ քաղաքում, իջան սուրբ Հուլիանոսի մատուռը. ես էլ էի նրանց հետ: Եվ կիրակի օրը եպիսկոպոսներն իջնելով՝ աղոթքի նստեցին մատուռի դռանը և հարցումներ ուղղեցին իմ եպիսկոպոս Նինոսին, որպեսզի նրանից հոգեշահ խոսք լսեն և նրա միջոցով խոսող Սուրբ Հոգուց փրկության շահն ընդունեն: Այդ պահին մեր առջևից անցնում էր Անտիոքի վարձու պոռնիկների ու կաքավող կանանց բոզապետուհին՝ նստած գրաստի վրա, հրաշալի և թանկարժեք հանդերձների մեջ, անթիվ ոսկեղենով ու մարգարիտներով պճնված, շուրջը՝ արանց և կանանց բազմություն, որոնք պարանոցներին ունեին ոսկեհուռ մանյակներ, հագել էին պատվական և ընտիր զգեստներ և սպասարկում էին նրան: Ոմանք ընթանում էին նրա առջևից, ոմանք՝ հետևից, և նրան տեսնել ցանկացողներն ու նրան տենչացողները անհագուրդ հայացքով նայում էին նրան: Անցնելու ընթացքում ողջ շրջակա օդը լցվել էր մուշկի ու հոտավետ պատվական յուղերի անուշահոտությամբ: Եպիսկոպոսների դասը, տեսնելով նրան՝ այդպես բաց երեսով, արձակ-համարձակ, գլուխն անգամ բաց, և թանկարժեք գլխա-

նոցը ուսն ի վար անփութորեն գցած, դարձրին իրենց երեսները՝ որպես սաստիկ մեղքից»: Բայց իմ տեր և Աստծո սուրբ Նոնոսը սրտի աչքով նայեց նրան, հետո երեսն իջեցրեց ծնկներին և իր գոգն ամբողջովին թրջեց արտասուքներով, ապա սաստիկ հառաչեց և իր հետ նստած եպիսկոպոսներին ասաց. «Տեսե՛ք, եղբայրնե՛ր, թե որքա՜ն ջանք է թափել այդ կինը երկրավոր բաների համար»: Իսկ նրանք լուռ խոնարհվեցին և ոչ մի պատասխան չտվեցին: Նա նորից երեսը դրեց ծնկներին, հառաչելով ծեծեց իր կուրծքը և ողջ մազեղեն պարեգոտը թրջեց արցունքներով: Ապա դարձյալ ասաց. «Արդա՛ր և, Աստված այս դեպքն իր առջև է դնելու Դատաստանի օրը՝ մեզ և մեր եպիսկոպոսությունն ու մեր վարքը դատելու համար: Ինչպե՞ս եք կարծում, սիրելինե՛ր, որքա՜ն ժամանակ է այս կինն անցկացրել իր առանձնասենյակում՝ լվանալով, սրբելով, մաքրելով ու պճնելով իրեն, պեսպես զարդարանքներով պճնագեղելով և սիրագորով հայացքով հայելու մեջ իրեն զննելով, որպեսզի իր բարեկամների առաջ դուրս գալիս՝ որևէ պակասություն չունենա իր հարդարանքի մեջ և տգեղ չերևա իրեն տենչացողների աչքին: Այս ամենն արել է մարդկանց հաճոյանալու համար, որոնք այսօր կան և վաղը չեն լինի: Իսկ ես, որ անմահ Փեսան և անապատական առագաստն ունեմ երկնքում, Փեսան, որ իր պատվիրաններով զարդարվողներին անապականություն է տալիս՝ երկնավորներին մեծ բաժին պահած ունենալով, որ մտքով հասանելի չէ, «որ ո՛չ աչքը տեսավ, ո՛չ ականջը լսեց և ո՛չ մարդկանց սիրտը ընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ, 9): Էլ ի՞նչ ասեմ. մենք, որ խոստում ունենք՝ անքնին և անհաս Գեղեցկությունը տեսնելու, Ում սերովբեներն ու քերովբեներն իսկ նայել չեն կարող: Այսպիսի խոստում ունենալով հանդերձ՝ ո՛չ պատրաստվում ենք, ո՛չ զարդարվում և ո՛չ էլ մեր տառապյալ հոգիների աղտեղությունն ենք մաքրում, այլ թողնում ենք սուգի և տխրության մեջ»: Այս ասելով՝ վերցրեց ինձ և մեր խրճիթը վերադարձանք, և ընկնելով մի քարի վրա ու գետնին նայելով՝ սաստկապես լաց եղավ ու աղաչելով ասաց. «Աստվա՛ծ, քավի՛ր իմ՝ մեղավորիս մեղքերը, քանզի պոռնիկի մեկ օրվա զարդարվելը հաղթեց իմ՝ տարիներով տքնությամբ զարդարուն վարքը: Ի՞նչ երեսով նայեմ Քեզ, Աստվա՛ծ իմ, կամ ինչպիսի՞ խոսքերով արդարանամ Քո առջև, Տե՛ր, Դո՛ւ, որ տեսնում ես գաղտնին ու ծածուկը. Տե՛ր, չեմ մատուցել հոգուս գեղեցկությունը Քո առաջ, Տե՛ր, ինչպես Դու ես պահանջում ինձնից, Աստվա՛ծ իմ: Քո սոսկալի ու ահավոր սեղանի հանդեպ եմ կանգնած, սակայն ինձ չեմ զարդարել Քո կամքի համաձայն, Տե՛ր, Աստվա՛ծ իմ, որ անգոյություն-

նից գոյության կոչեցիր ամեն ինչ, և իմ անարժան թշվառությունն արժանի համարեցիր ծառայելու քեզ: Մի՛ հեռացրու ինձ Քո երկնային սեղանից. թո՛ղ պոռնիկի զարդարումը չդատապարտի ինձ ահավոր ու վեհասքանչ Քո ատյանի առջև, քանզի այդ կինը՝ հանուն երկրավորի և հողեղենի, մեծապես ջանք գործադրեց, իսկ ես Քեզ՝ անմահ Փեսայիդ արհամարհելով՝ անփութության մատնեցի իմ անձը և ծուլության պատճառով զրկվեցի Քո պատվիրանների զարդերից: Նա խոստացավ հաճոյանալ մարդկանց և իսկապես հաճոյացավ, որովհետև հանուն դրա զարդարվեց երկրի վրա, իսկ ես մարդասեր Աստծուն խոստացա հաճո լինել և ստեցի. դրա համար իմ գործածներին չկա՛ փրկության հույս, սակայն քո ամենագթությանը ապավինելով՝ կամենում եմ ճանաչել այն, և Քո իսկ ողորմությամբ՝ Քո տառապյալ ծառան եմ»: Լալով ու հառաչելով, բազում խոստովանություններով անցկացրեց շաբաթվա բոլոր օրերը»: Եվ հաջորդ օրը, որ սուրբ կիրակի էր, գիշերային պաշտամունքը կատարելուց հետո, իմ սուրբ հայր Նոնոսն ասաց ինձ. «Եղբայ՛ր սարկավագ, տեսիլք տեսա և սաստիկ խռովված եմ: Այն պատմել չեմ կարող, սակայն Աստված Իրեն հաճելին թո՛ղ կատարի և մեզ՝ ի օգուտ»: Հետո ասաց. «Երազում տեսա, որ ես կանգնած էի սեղանի անկյան մոտ, և մի ցեխաթաթախ աղավնի ճոճվում էր իմ գլխավերևում: Նրանից եկող ժահահոտությունը չէի կարողանում տանել. նա շարունակ պտտվում էր իմ գլխավերևում, մինչև որ կատարեցին երախայից աղոթքը, իսկ երբ սարկավագը քարոզեց, նույն պահին անհետացավ իմ մոտից: Պատարագի ավարտից հետո ժողովուրդը հեռացավ, և իմ դուրս ելնելու ու դեպի տուն վերադառնալու ժամանակ ցեխաշաղախ աղավնին եկավ և դարձյալ պտտվեց իմ վերևում: Ես ձեռքս պարզելով՝ բռնեցի նրան և գցեցի եկեղեցու գավթի ավազանի ջրի մեջ: Նա, այնտեղ թողնելով իր ողջ գարշահոտ աղտեղությունը, դուրս ելավ՝ ինչպես ճերմակ ձյուն և թռչելով՝ վեր բարձրացավ: Ես, աչքերս վեր հառելով, տեսա, որ դեպի վեր է սլանում, մինչև որ կորավ իմ հայացքից, և այլևս չկարողացա տեսնել նրան»: Նրա՝ այս ասելուց հետո, գնացինք մեծ եկեղեցին՝ այլ եպիսկոպոսների հետ, և ողջունեցինք քաղաքի եպիսկոպոսներին: Երբ Ավետարանի ժամը եկավ, եպիսկոպոսները նստեցին բեմում և պաշտամունքի կարգը, Գրքերի և սաղմոսների ընթերցումներն ավարտելուց հետո, Ավետարանը հանձնեցին սուրբ Նոնոսին՝ աղաչելով նրան՝ իր մեկնությունները տալ: Եվ նա վեր կենալով՝ բացեց աստվածաշունչ բերանը, և ոչ թե ինքն էր խոսում, այլ՝ Սուրբ Հոգին, որ բնակվում էր նրա մեջ: Ոչ թե ճարտասանություն էր անում, քանզի չուներ օտար ուսմունք-

ների բառապաշար, այլ լի էր Սուրբ Հոգով և Աստվածային շնորհներով, և նրա վարդապետությունը լուսավորում էր ժողովրդին ավետարանական խոսքերով՝ մեղավորների դատաստանի և բարի հույսի վերաբերյալ, որ կա և մնում է արդարների համար: Եվ այնպիսի զղջում ընկավ ժողովրդի սիրտը այն սուրբ խոսքերից, որ Սուրբ Հոգին էր բարբառում նրա շուրթերով, որ մինչև անգամ եկեղեցու ողջ հատակը թրջվեց մարդկանց արցունքներից»: Եվ ըստ Աստծո՝ իր արարածների հանդեպ մեծ մարդասիրության և հոգատարության, եկեղեցում էր գտնվում նաև պոռնկապետ կինը, որի մասին է մեր խոսքը: Սա ոչ միայն երբեք մեղքի գիտակցում չէր ունեցել, այլև եկեղեցի էլ երբեք չէր մտել, իսկ այժմ սուրբ հոր վարդապետությամբ Աստծո երկյուղից զղջում ապրեց և հուսադրելով իրեն՝ այնքան արցունքներ թափեց, որ գետինը թրջվեց, որովհետև առվակների պես հոսում էին աչքերից: Եվ երկու երիտասարդների պատվիրեց և ասաց. «Մնացե՛ք այստեղ այնքան ժամանակ, մինչև որ ժողովուրդը հեռանա, և սրբի հետևից գնացե՛ք, մինչև որ գտնեք նրա բնակության վայրը»: Պատանիները եկան մեզ հետ և վերադարձան՝ նրան ասելու, որ սրբի օթևանը սուրբ Հուլիանոսի մատուռում է: Նա նրանց իսկ ձեռքով ուղարկեց մի երկթերթ գրություն, որտեղ այսպես էր գրված. «Քրիստոսի սուրբ աշակերտիդ. բանսարկուի աշակերտս ու մեղավորս ծնկի եմ իջնում սուրբ գարշապարներիդ առջև: Լսելով լսեցի Աստծո մասին, Ում պաշտում ես, որ երկինքն ի վայր խոնարհվեց և իջավ երկիր՝ ոչ արդարներին, այլ մեղավորներին փրկելու համար, և մաքսավորների ու մեղավորների հետ բազմեց: Դու պարկեշտությամբ սուրբ ես, և թեպետ մարմնավոր աչքով չես տեսել Տեր Հիսուս Քրիստոսին, որ ջրհորի մոտ երես առ երես խոսեց սամարացի պոռնիկի հետ (Հովհ. Դ 7-27), *սակայն Նրա ճշմարիտ պաշտոնյան ես, ինչպես լսեցի քրիստոնյաներից: Եթե այդպիսի Աստծո պաշտոնյա ես, շատ եմ ցանկանում տեսնել քո հրեշտականման երեսը և քո առաջնորդությամբ փրկության հասնել»: Իսկ իմ տերը՝ եպիսկոպոս Նոնոսը, պատասխան գրեց նրան. «Ով էլ որ ես՝ հայտնի ես Աստծուն, ինչպես և քո կամքն ու քո առաջիկա խորհուրդները, բայց մի՛ կամեցիր փորձության մատնել իմ տառապյալությունը, քանզի ես մեղավոր մարդ եմ: Սակայն, եթե կամենում ես տեսնել ինձ, ինձ հետ կան յոթ եպիսկոպոսներ. նախքան ինձ տեսնելը՝ այցելի՛ր նրանց յոթին էլ»: Նա նույն պահին իսկ վեր կացավ և եկավ մեզ մոտ՝ մատուռ: Սուրբ Նոնոսը, նախքան նրա գալը, իր մոտ ժողովեց եպիսկոպոսներին և նրան ներս հրավիրեց: Երբ այս կինը ներս մտավ, գետնատարած գրկեց Նոնոսի ոտքերը, լաց եղավ և հառաչեց, արտա-*

սուքներով լվաց և մազերով սրբեց նրա ոտքերը, հողը գետնից վերցրեց և ցանեց իր գլխին, մեծաձայն աղաղակեց ու ասաց. «Ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս, նմանվի՛ր քո Տեր և վարդապետ Քրիստոսին և հեղի՛ր ինձ վրա քո քաղցրությունը և ինձ քրիստոնյա՛ դարձրու, քանզի ես մեղքերի ժողովատեղի եմ և անօրենությունների անդունդ, որն առնելով՝ ընկղմիր քո Աստծո ավազանի մեջ և ինձ գցիր հայրապետ Աբրահամի գիրկը»: Եվ նրանք, ովքեր այդտեղ էին, արտասվում էին՝ տեսնելով այդքան երիտասարդ և հաստատուն հավատով պոռնիկին, և հազիվ կարողացան հորդորել նրան՝ թողնելու սրբի ոտքերը և ոտքի կանգնելու: Եվ սուրբն ասաց նրան. «Մեր հայրապետության կանոնակարգում այսպես է. չմկրտե՛լ պոռնիկին՝ առանց երաշխավորության, որպեսզի դարձյալ նույնի մեջ չընկնի»: Իսկ նա, լսելով այս, դարձյալ գետին ընկավ և գրկելով սրբի ոտքերը՝ ասաց. «Պատասխան ես տալու Աստծո առաջ իմ հոգու համար, եթե այժմ չմկրտես, և քո ձեռքից պիտի պահանջի Աստված իմ արյունը և քո վրա պիտի գրի իմ դժնդակ գործերը, եթե չհոժարես այսօր ինձ քրիստոնյա դարձնել: Իմ անարժան գործերին գործակից պիտի դառնաս, եթե չհեռացնես ինձ իմ չար գործերից. Աստծուն ուրացած կուռքերին պիտի երկրպագեմ, եթե վերստին չծնես ինձ այսօր՝ որպես Քրիստոսի հարսի»: Մյուս եպիսկոպոսներն ու բոլոր ներկաները զարհուրած և սքանչացած էին Քրիստոսի անբավ մարդասիրության վրա՝ տեսնելով այսպիսի մեղավորին երկնային տեսչությանն ձգտելիս և տենչալիս: Այնժամ սուրբ Նոնոսն ինձ՝ մեղավոր Հակոբոս սարկավագիս, ուղարկեց քաղաքի եպիսկոպոսի մոտ և ինձ պատվիրեց ծանուցել նրան ամեն ինչի մասին ըստ կարգի. և պատվիրեց սարկավագուհիներից մեկին ինձ հետ ուղարկել: Ես ամենը պատմեցի քաղաքի եպիսկոպոսին, որը մեծ ուրախություն ապրեց և սուրբ Նոնոսին այսպիսի թուղթ գրեց. «Պատվակա՛ն հայր և երանելի՛ վարդապետ, Աստված քեզ համար էր պահում այդպիսի գործը, և քեզ էր վիճակված, քանզի գիտեմ որ Աստծո բերան ես, ինչպես և ասում է. «Ով պատվականը դուրս բերի անարգից՝ նա Աստծո բերան կկոչվի» (Երեմիա ԺԵ 19)*»: Ապա իր մոտ կանչելով տիկին Հռովմինային, որ սարկավագուհիների գլխավորն էր, ուղարկեց ինձ հետ: Գալով՝ նրան գետնատարած, սուրբի ոտքերի մոտ լաց լինելիս գտանք: Տիկին Հռովմինան նրան հորդորեց ոտքի ելնել՝ ասելով. «Ե՛կ, քո՛ւյր իմ, որպեսզի ձեռնադրվես»: Նա անմիջապես ոտքի ելավ, և եպիսկոպոսը նրան ասաց. «Խոստովանի՛ր քո մեղքերը»: Նա պատասխանեց. «Եթե քննես իմ խղճմտանքը, իմ անձի մեջ բարի գործ չես գտնի, այլ գիտեմ, որ իմ մեղքերը ծովի ավազի պես անթիվ են և նրա չափ՝ ծանր,*

և ծովի ջրերը ավելի նվազ են, քան դրանք, բայց հավատում եմ Աստծուն, որ Իր մարդասիրությամբ վշտակից կլինի ինձ և թողություն կտա իմ բազում մեղքերին»: Եպիսկոպոսն ասաց նրան. «Ասա՛ քո անունը»: Նա ասաց. «Իմ ծնողներն ինձ Պելագեա են կոչել, բայց անտիոքցիների քաղաքն ինձ Մարգարիտ կոչեց՝ իմ բազում զարդերի պատճառով, որով զարդարում էր ինձ բանսարկուն իր վաճառատան համար»: Եպիսկոպոսն ասաց. «Քո ծննդյան անունով կկոչվես»: Ձեռնադրեց նրան և կոչեց Պելագեա, կնքեց և օծեց սուրբ յուղով և տվեց նրան մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Ըստ հավատի՝ նրան մայր եղավ տիկին Հռովմինա սարկավագուհին: Եվ վերցնելով նրան՝ բարձրացանք վանք, որտեղ քույրերն էին: Իմ հայր Նոնոսն ինձ ասաց. «Ե՛կ, տե՛ր սարկավագ, որ ուրախանանք Աստծո հրեշտակների հետ, նաև ձեթ ճաշակենք եղած հրաշքների համար, որ վերստին ծնվեց Քրիստոսի հարսը»: Եվ մինչ ճաշակում էինք, եկավ բանսարկուն՝ մերկ, ձեռքերը գլխավերևում կապված, աղաղակեց ու ասաց. «Ո՜վ բռնություն ինձ՝ սրանից պատուհասվածիս ու ցնորվածիս. մի՞թե քեզ բավական չեղան երեսուն հազար հագարացիները, որոնց դուրս բերիր իմ իշխանության տակից և մկրտեցիր Աստծո առջև, մի՞թե բավական չեղավ քեզ Հելիոպոլիս քաղաքը, որն իմն էր, սակայն այդ քաղաքն էլ հափշտակեցիր իմ ձեռքից և մկրտելով՝ մատուցեցիր քո Աստծուն և հույսս էլ կատարելապես կտրեցիր: Ո՜վ բռնություն ինձ՝ չար ալևորիս, որ գարշում եմ սրանից, այլևս չեմ կարող համբերել քո նենգություններին: Անիծյա՛լ լինի այն օրը, երբ ծնվեցիր երկրի վրա, խորտակեցիր ինձ և գողացար իմ հույսն ինձանից»: Ե՛վ նորադարձը, և՛ սարկավագուհին, և՛ մենք բոլորս՝ եպիսկոպոսներով հանդերձ, տեսանք նրան, որ այս ամենն ասում էր աղաղակելով ու ողբալով: Բանսարկուն դարձյալ ասաց նորընծային. «Դու ինչո՞ւ իմ հանդեպ արեցիր դա, ա՛յ տիկին Պելագեա, և դու էլ նման եղար իմ Հուդային, որին փառքով ու պատվով էր պսակել իր Աստված, սակայն նա մատնեց նրան. նույնն էլ դո՛ւ ինձ արեցիր»: Իսկ հայր Նոնոսն ասաց Քրիստոսի սուրբ աղախնուն. «Պելագեա՛, սաստի՛ր դրան»: Եվ Քրիստոսի գառը, խաչակնքելով իրեն, սաստեց նրան, իսկ նա հեռացավ մեզանից: Երկու օր հետո դարձյալ եկավ բանսարկուն և գտավ նրան, որ քնած էր իր հավատամայր սարկավագուհու մոտ, արթնացրեց նրան և ասաց. «Տիկի՛ն Մարգարիտ, քեզ ի՞նչ արեցի, մի՞թե չզարդարեցի քեզ ոսկով ու մարգարիտով, չբազմացրի՞ քո արծաթը, ոսկին ու հանդերձները: Աղաչում եմ քեզ՝ ասա ինձ՝ ինչի՞ համար ես նեղացել ինձանից. ես հաճույքով կկատարեմ քո կամքը,

միայն թե մի՛ թող ինձ և մի՛ խայտառակիր ինձ բոլորի առաջ»: Իսկ Պելագեան, կնքելով իրեն սուրբ խաչի նշանով, փչեց նրա վրա և անհետացրեց՝ ասելով. «Թո՛ղ քեզ սաստի Տերն իմ Հիսուս Քրիստոս, որ հափշտակեց ինձ քո ձեռքից, որպեսզի ես մտնեմ Երկնավորի առագաստը»: Ապա արթնացրեց Հռովմինա սարկավագուհուն և ասաց նրան. «Աղոթի՛ր ինձ համար, տիկի՛ն իմ և մա՛յր, քանզի բանսարկուն հարձակվում է ինձ վրա»: Եվ նա ասաց. «Մի՛ երկնչիր նրանից, ի՛մ ցանկալի դուստր, քանզի այսուհետև նա քո ստվերից իսկ կերկնչի»: Եվ Պելագեան, իր մոտ կանչելով տան ավագ և կառավարիչ երիտասարդին, պատվիրեց նրան գնալ իր ապարանքը, իր սենյակում եղած հանդերձները, ոսկեղենը, արծաթը և ամենը, ինչ կա, հաշվառել և բերել վանք: Երիտասարդն արեց՝ ինչպես պատվիրվել էր իրեն, և բերելով՝ հանձնեց իր տիկնոջը: Պելագեան երիտասարդի և սարկավագի միջոցով կանչեց Նոնոս եպիսկոպոսին և ամեն ինչ հանձնեց նրան՝ ասելով. «Ա՛յս է իմ ունեցվածքը, որով հարստացրեց ինձ բանսարկուն՝ իմ չար գործերին ի տրիտուր: Սակայն այժմ ինձ բավական է Քրիստոս փեսայի փառքի մեծությունը»: Եվ կանչեց իր բոլոր աղախիններին ու ծառաներին, արձակեց նրանց՝ ասելով. «Ահա ես ազատեցի ձեզ ժամանակավոր և անցողիկ ծառայությունից, իսկ դուք փութացե՛ք ազատել իմ հոգին մեղքերից»: Նրանց ոսկի տվեց և արձակեց: Իսկ սուրբ եպիսկոպոսը կանչեց եկեղեցու վերակացուին, Պելագեայի աչքի առաջ նրա ողջ ունեցվածքը տվեց նրան և ասաց. «Երդվեցնում են քեզ անարատ ու սուրբ Երրորդությամբ, որ այս ունեցվածքից ոչինչ չի մտնի եկեղեցի, եպիսկոպոսներին կամ կղերիկոսների դասից ոչ մեկին չի հասնի ոչինչ և ոչ էլ քո տուն կմտնի: Եթե արհամարհելով արհամարհես այս երդումը և գողանաս դու կամ մեկ ուրիշը սրանից որևէ բան՝ նզովք կմտնի քո տուն, և նրանց հետ կդասվես, ովքեր աղաղակում էին. «Խա՛չ հանիր դրան, խա՛չ հանիր դրան» (Մարկ. ԺԵ 13-14, Հովհ. ԺԹ 6)*: Այրիներին, որբերին ու կարոտյալներին բաշխի՛ր դա, որպեսզի՝ ինչը չարով է հավաքված, բարիով արդարության գանձեր կուտակի»: Իսկ Քրիստոսի աղախին Պելագեան յոթ օր ոչինչ չկերավ իր հետ բերածից, այլ նրան կերակրում էր նրա հավատամայր Հռովմինան, քանզի երդվել էր ոչինչ չճաշակել մեղսավոր վաստակից: Իսկ երբ լուսացավ ութերորդ օրը, հանեց իր մկրտության պատմուճանը և մի եպիսկոպոսի մագեղեն քուրձը վերցնելով՝ հաջորդ օրը մեզանից գաղտնի անհետացավ Անտիոք քաղաքից: Իսկ տիկին Հռովմինան լացում էր նրա համար, և յուրաքանչյուրս գնացինք մեր տեղերը: Երեք տարի անց ցանկություն ունեցա գնալ Երուսաղեմ և երկրպագել Քրիստոսի սուրբ*

Հարությանն ու պատվական սուրբ Խաչին և աղաչեցի իմ տեր Նոնոսին՝ արձակել ինձ: Իսկ նա ինձ պատվիրեց և ասաց. «Ի՛մ սարկավագ եղբայր, երբ գնաս սուրբ վայրերը, որոնի՛ր մի աբեղայի, որի անունն է Պիլիգիոս, և տե՛ս նրան, որովհետև մեծ օգուտ կքաղես նրանից, քանզի իսկապես Աստծո ծառա է ճշմարիտ ճգնողը»: Եվ սա ասում էր Քրիստոսի աղախին Պելագեայի մասին, իսկ ես չգիտեի նրանց գաղտնի խորհուրդը, և ինքն էլ չէր կարող հայտնել ինձ: Հասնելով սուրբ վայրերը, արժանանալով սուրբ Հարության և պատվական ու սուրբ Խաչի երկրպագությանը, հաջորդ օրը վեր կենալով որոնեցի սուրբ Պիլիգիոսին և գտա նրա խուցը, որ Զիթենյաց լեռան վրա էր, ուր Տերն աղոթքի կանգնեց: Տեսա խուղը, որը դուռ չուներ և բոլոր կողմերից շարված էր, միայն մի փոքրիկ պատուհան կար որմի վրա: Երբ մի թեթև բախեցի, նույն պահին էլ Քրիստոսի աղախինը բացեց այն և տեսնելով ինձ՝ ճանաչեց, իսկ ես նրան չճանաչեցի, որովհետև նրա սքանչելի գեղեցկությունը թառամել էր, և երեսի պայծառությունը՝ թարշամել, աչքերը խորն էին ընկել և ճգնությունից ու խստակեցությունից ձեռքերի և մարմնի ոսկորները երևում էին: Ողջ Երուսաղեմը կարծում էր, թե նա տղամարդ է. ես էլ էի այդպես կարծում և միայն նրանից՝ տղամարդուց օրհնություն ստանալու համար էի գնացել, քանզի Քրիստոսի ճշմարիտ և կատարյալ ծառա էր: Նա, բացելով բերանը, ասաց. «Տե՛ր եղբայր, դու Նոնոս եպիսկոպոսի աշակե՞րտն ես»: Ես ասացի. «Այո՛, նրա ծառան և ճշմարիտ աշակերտն եմ»: Նա ասաց. «Աղաչում եմ քեզ, որ նա աղոթք անի ինձ համար, քանզի Աստծո մարդն է: Դու ինքդ էլ աղոթի՛ր ինձ համար, ո՛վ տե՛ր իմ եղբայր»: Ներսից փակեց պատուհանը և սկսեց ժամը երեքի աղոթքը: Ես, նրա խուղի մոտ աղոթքի կանգնելով, գոհացա Տիրոջից և հեռացա այնտեղից մեծ հոգեշահությամբ: Շրջելով վանքերն ու անապատները՝ սուրբ հայրերից օրհնություն ստանալու համար, այլևս չէի մտածում նրա մասին, սակայն նրա՝ իբրև տղամարդու սրբության և ճգնության համբավը ամենուրեք էր: Երբ ութ օր անցավ, Երուսաղեմում լուր տարածվեց, թե սուրբ Պիլիգիոսը մահացավ: Հավաքվեցին ողջ Երուսաղեմի վանականները, ինչպես նաև Նիկոպոլսից և Երիքովից ու Հորդանանի այն կողմից, ժողովվեց մենակյացների մեծ բազմություն, ովքեր այդ օրը Աստվածային նախախնամությամբ Երուսաղեմում էին: Քանդեցին խուղը, հանեցին մարմինն ու պատվական նշխարները և դրին սփռոցի վրա: Հայրապետն ու սուրբ հայրերը մոտենալով՝ պատանեցին և օծեցին սուրբ յուղով. և գիտենալով, որ բնությամբ կինարմատ է, իրենց ձայնը բարձրացրին առ Աստված՝ բարբառելով. «Փառք քեզ,

Տե՛ր, որ Քո մեծ ողորմությամբ գաղտնի սրբերիդ հայտնի ես դարձնում ոչ միայն տղամարդկանց, այլև՝ կանանց»: Ուզում էին ժողովրդից թաքցնել այդպիսի հրաշքը, բայց չկարողացան, ինչպես Տերն է ասել սուրբ Ավետարանում. «Չկա ծածուկ բան, որ հայտնի չդառնա» (Մատթ. Ժ 26, Մարկ. Դ 22, Ղուկ. Ը 17, ԺԲ 2)*, կա՛մ անկյունում թաքցվի, կա՛մ գործվի՝ և հայտնի չդառնա: Հավաքվեցին բոլոր կուսանոցների միաբանությունները՝ լապտերներով, խաչերով և մոմերով, ուսերին առած՝ բերին սուրբ, պատվական ու երկյուղած հայրերի նշխարները, և իրո՛ք կատարվեց Տիրոջ կողմից ասվածը, թե՝ «Թո՛ղ փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերը և փառաբանեն ձեր Հորը, որ երկնքում է»* (Մատթ. Ե 16)*: Եվ այսպես նա մտավ Քրիստոսի հանգստի մեջ: Ահա ա՛յս է պոռնիկի վարքագրությունն ու նրա վախճանը: Արդ, նմանվո՛ղ լինենք ոչ թե նրա առաջին վարքին, այլ՝ վերջին ճգնությանն ու քաջ հավատին, և նրա բարեխոսությամբ վայելենք երկնային բարիքները Հիսուս Քրիստոսի միջոցով, տղամարդի՛կ և կանա՛յք և հավատացյալների գնդե՛ր, ի Հիսուս Քրիստոս՝ ի Տեր մեր, Որին փառք հավիտյանս. Ամեն»:*

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

80. Ոմն եղբայր հայր Աղաթոնին հարցրեց պոռնկության մասին: Ծերը նրան ասաց. «Գնա՛ քո տկարությունը դիր Աստծո առջև և հանգիստ կգտնես»:

81. Մի մեծն ծեր մի անգամ գնաց հայր Աքիլա Թեբայիդացու մոտ և նրան ասաց. «Մի մեծն ծերի դեմ պատերազմ ունեմ, հա՛յր»: Աքիլայոսն ասաց. «Դա պոռնկություն չէ, այլ դևերի նախանձ, որոնք ջանում են ընտրյալներին մոլորեցնել»:

82. Ոմն եղբայր հայր Դանիելին հարցրեց և ասաց. «Հա՛յր, ինձ պատվիրա՛ն տուր, որ պահեմ»: Ծերը նրան ասաց. «Քո ձեռքը երբեք կնոջ հետ մի՛ մտցրու պնակի մեջ, նրա հետ մի՛ կեր, մի՛ տես և մի՛ խոսիր նրա հետ՝ լինի անգամ քո մայրը, և սրանով փոքր-ինչ կազատվես պոռնկության դևից»:

83. Հայր Մատոյեն ասաց, թե իր մոտ եկավ մի եղբայր և հարցրեց, թե՝ եղբորը դատելն է ավելի չա՞ր, թե՞ պոռնկությունը: Ինքը նրան պատասխանեց. «Խիստ ծանր է այդ ասածդ, եղբա՛յր»: Եղբայրն ասաց. «Հապա ինչպե՞ս է, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ընկերոջը դատելը չար

բան է, բայց հեշտ է բուժումը, քանզի նա, ով դատել է, կընկնի դատված ընկերոջ ոտքերը և կասի. «Թողությո՛ւն տուր ինձ», և նույն պահին էլ կսրբվի, իսկ պոռնկությունը բնական մահ է և դժվար քավելի»:

84. Հայր Սիսոյի աշակերտ հայր Աբրահամը մի անգամ փորձության ենթարկվեց դևերից և ընկավ պոռնկության մեջ: Երբ ծերը լսեց, վեր կենալով ձեռքերը պարզեց դեպի երկինք և ասաց. «Աստվա՛ծ իմ, կամենաս թե չկամենաս, չե՛մ թողնի քեզ, մինչև որ սրան չբժշկես»: Եվ նույն պահին էլ հայր Աբրահամը բժշկվեց պոռնկության ախտից այնպես, որ իսպառ ազատվեց այդ չար մեղքից և ոչ մի անգամ այլևս չմտաբերեց:

85. Հայր Հովհաննես Կարճահասակի մասին հետևյալ պատմությունը պատմեցին: Մի մանկամարդ աղջկա ծնողները վախճանվեցին, և նա որբ մնաց, իսկ նրա տունը Սկիտեի հայրերի իջևանատունը դարձավ: Որոշ ժամանակ աղջիկը հանդարտությամբ ապրում էր տանը և սպասարկում իջևանած եղբայրներին: Որոշ ժամանակ հետո աղջիկն սկսեց աղքատանալ, և նրան սկսեցին չար մարդիկ այցելել, տունը դարձավ պոռնկանոց, և ինքն էլ դարձավ պոռնիկ: Սկիտեի հայրերը, լսելով այս, խիստ տրտմեցին և հայր Հովհաննես Կարճահասակին ասացին. «Լսե՞լ ես, որ այն մեր քույրը բարի ընթացք չի բռնել. նա որքան կարող էր՝ իր սերը ցույց տվեց մեր նկատմամբ, հիմա էլ մե՛նք նրա հանդեպ մեր սերը ցույց տանք և մեր կարողության չափով օգնենք նրան: Այժմ դու նեղություն քաշի՛ր և գնա՛ նրա մոտ և քո իմաստությամբ, որ ունես Աստծուց, հորդորի՛ր նրան»: Եվ հայր Հովհաննեսը վեր կենալով գնաց նրա մոտ և դռնապան պառավին ասաց. «Հաղորդի՛ր իմ մասին քո տիկնոջը»: Իսկ նա նախատեց նրան և ասաց. «Դուք սկզբում կերաք նրա ունեցվածքը, և հիմա նա աղքատ է: Էլ ի՞նչ ես ուզում նրանից»: Ծերը նրան ասաց. «Գնա՛ և նրան ասա՛, որ ես մեծապես օգտակար կլինեմ նրան»: Իսկ երիտասարդները ծիծաղեցին նրա վրա ու ասացին. «Ի՞նչ կարող ես տալ նրան, որ ուզում ես տեսնել»: Եվ ծերն ասաց նրանց. «Դուք չգիտեք, թե ես ինչ եմ պատրաստվում տալ նրան»: Եվ պառավը, ներս մտնելով, հաղորդեց նրա մասին, իսկ աղջիկը մտածեց. «Այս կրոնավորները միշտ շրջում են կարմիր ծովի ափերին և մեծագին մարգարիտներ են գտնում այնտեղ»: Եվ աղջիկը վեր կացավ, զարդարեց իրեն ու պառավին ասաց. «Բե՛ր նրան ինձ մոտ»: Եվ ծերը ներս մտավ, նստեց նրա մոտ՝ մահճակալին, նայեց նրա երեսին և ասաց. «Ինչո՞ւ թողեցիր Հիսուս Քրիստոսին և այս խենեշ պղծությանը գնացիր»: Աղջիկը սոսկում ապրեց, երբ լսեց այդ խոսքը, իսկ հայր Հովհաննեսը, գլուխը խոնարհած, դառնապես լաց եղավ:

Աղջիկը հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, ծե՛ր»: Իսկ նա դարձյալ նայեց նրան և խոնարհելով գլուխը՝ շարունակեց լաց լինել և ոչինչ չասաց: Հետո ասաց. «Տեսնում եմ՝ քո երեսի վրա դևեր են խաղում, և դրա համար եմ ողբում»: Աղջիկը, երբ լսեց այս, ասաց. «Ապաշխարության հնար կա՞, հա՛յր»: Ծերն ասաց. «Այո՛, դյուրավ կա»: Աղջիկն ասաց. «Տա՛ր ինձ՝ ուր կամենում ես»: Ծերն ասաց. «Գնա՛նք միասին»: Աղջիկը իսկույն հետևեց նրան, և ծերը խիստ հիացավ, որ նա ոչ մեկին ոչինչ չասաց և ոչ մի բան չվերցրեց տանից: Երբ անապատ հասան, մութն ընկավ: Ծերը փոքր-ինչ փորելով ավազը՝ սնար պատրաստեց նրա համար, և նրանից փոքր-ինչ հեռու՝ պատրաստեց և իր համար: Ապա խաչակնքեց նրան և ասաց. «Ննջի՛ր և հանգչի՛ր այդտեղ»: Ինքն էլ, կատարելով գիշերային աղոթքը, ննջեց: Կեսգիշերին ծերը մի մեծ լույս տեսավ, որը սյունի նման երկնքից իջել էր աղջկա վրա, և Աստծո հրեշտակներն այդ լույսով՝ իբրև ճանապարհով, ելնում էին վեր և իրենց հետ տանում էին նրա հոգին: Ծերը գնաց նրա մոտ, ոտքով խթեց նրան, որ արթնացնի, և տեսավ, որ մեռած է: Եվ գետին ընկնելով՝ ծերն աղաչեց Աստծուն, որ իրեն հայտնի նրա մասին: Ձայն եկավ երկնքից առ նա և ասաց. «Դրա մեկժամյա ապաշխարությունն առավել ընդունեցի, քան այլոց բազմաժամանակյա ապաշխարությունը, ովքեր այսպես ջերմորեն չապաշխարեցին»: Աղջկա անունը Պայեսիա էր: Այսպե՛ս պետք է սեր ցուցաբերել մերձավորի հանդեպ:

86. Ոմն ծեր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի նեղվում եմ պոռնկությունից և դա պատմեցի հայր Վստիոնին, իսկ նա ինձ ասաց. «Բնավ չթողնես խորհուրդներիցդ ներս, և նրանք բնավ չեն մերձենա քեզ»: Հայր Պիմենը նրան ասաց. «Հայր Վստիոնի այդ խոսքը երկնքի հրեշտակներին է վերաբերում, և մոռացել է, որ ես և դու մարդ ենք և միշտ պոռնկության մեջ ենք: Սակայն, եթե զսպենք մեր որովայնը, լեզուն և պահենք առանձնությունը, չենք մեռնի»:

87. Ոմն եղբայր հայր Պիմենին հարցրեց պոռնկական խորհուրդների մասին: Պիմենն ասաց. «Անբավ է Աստծո գթությունը, որ շրջապատում է մարդուն, թեպետ և մենք չենք տեսնում. ապա թե ոչ՝ ոչ մի մարմին չէր ազատվի դրանից»:

88. Սկիտեում՝ հայր Պափնոտիոսի մոտ, մի եղբայր էր բնակվում, որը պոռնկության այնպիսի պատերազմ ուներ իր մեջ, որ մինչև անգամ ասաց. «Եթե տասը կին էլ ունենամ, չեն կարողանա բավարարել իմ ցանկությունը»: Իսկ ծերը նրան ասաց. «Մի՛ արա այդ, որդյա՛կ, քանզի դա դևերի պատերազմ է»: Սակայն նա չհնազանդվեց, այլ գնաց

Եգիպտոս և միացավ կնոջ հետ: Մի անգամ հայր Պափնոտիոսը, ինչ-ինչ գործերով գալով Եգիպտոս, հանդիպեց նրան, որ կավե անոթներ էր բարձած տանում: Ծերը, սակայն, չճանաչեց նրան, քանզի հույժ աղքատ էր, ընկճված, մերկ, բոկոտն և ամբողջովին փոշեկոլոլ: Սակայն նա ճանաչեց ծերին և լալագին ասաց. «Ես քո աշակերտն եմ»: Երբ ծերը տեսավ նրան այդչափ անարգ տեսքով, ողբաց և ասաց. «Ինչպե՞ս թողեցիր քո պատվական վիճակն ու ընկար այդ անարգ վիճակի մեջ: Իսկ հիմա ճիշտն ասա՛՝ ունեցա՞ր տասը կին»: Իսկ նա, ի խորոց սրտի հառաչելով, ծերին ասաց. «Թո՛ղ այդ, հա՛յր, մի կին ունեցա, և մեծամեծ չարիքների մեջ եմ, որովհետև չկարողացա հացով կշտացնել նրան»: Ծերը նրան ասաց. «Ե՛կ դարձյալ իմ հետևից»: Երիտասարդն ասաց. «Ինձ ապաշխարության հնար կա՞»: Ծերն ասաց. «Այո՛, այն էլ շատ մեծ»: Երբ եղբայրը լսեց այս, ընկավ ծերի հետևից և գնաց. և դարձավ ընտիր ճգնավոր:

89. Հայր Սառռայի մասին ասում էին, թե տասներեք տարի պոռնկության դևից դաժան պատերազմի մեջ էր և երբեք չաղոթեց Աստծուն՝ այն իրենից վերցնելու համար, այլ միշտ այսպես էր աղոթում Տիրոջը. «Տե՛ր, տո՛ւր ինձ համբերություն, որ հաղթեմ նրան»: Մի օր էլ սաստիկ պատերազմ ունեցավ և բարձրացավ տանիք՝ աղոթելու: Այդժամ նրան հայտնապես երևաց դևը և ասաց. «Դո՞ւ ես ուզում ինձ հաղթել, Սառռա»: Սառռան ասաց նրան. «Ե՛ս չեմ ուզում քեզ հաղթել, քա՛վ լիցի, այլ Հիսո՛ւս Քրիստոս, Ով Տերն է ամեն բանի»:

90. Հայր Փոկասը պատմեց հետևյալը. «Հայր Հակոբը, երբ Սկիտե եկավ, ուժգին պատերազմ ունեցավ պոռնկության դևից, մինչև իսկ փոքր-ինչ պարտվեց նրանից: Գալով ինձ մոտ՝ պատմեց և ասաց. «Գնում եմ մտնեմ այն այրը. բարի՛ եղիր իմ հանդեպ և ինձ հարցնողներից ոչ մեկին ցույց չտաս իմ տեղը, իմ հորը՝ նույնպես, և դու էլ չտեսնես ինձ: Քառասուն օրը լրանալուց հետո ե՛կ ինձ մոտ և քեզ հետ բե՛ր սուրբ խորհուրդը. եթե ինձ մեռած գտնես, կթաղես, իսկ եթե կենդանի լինեմ, կհաղորդես ինձ սուրբ խորհուրդին»: Իսկ ես այսպես արեցի. երբ լրացավ քառասուն օրը, վերցրի ինձ հետ սուրբ խորհուրդը՝ սուրբ հաց և փոքր-ինչ գինի, և գնացի նրա մոտ: Երբ մերձեցա այրի դռանը, սաստիկ գարշելի հոտ առա, որ այրից էր գալիս, և կարծեցի, թե մեռել է ծերը: Երբ մտա այրը՝ նրա մոտ, նրան գտա նվաղած և գրեթե վերջին շնչում: Երբ տեսավ ինձ, հազիվ աջ ձեռքը շարժելով՝ նշանացի հասկացրեց ինձ, որ սուրբ Խորհուրդը տամ իրեն: Եվ ես, հազիվ բացելով նրա բերանը, սուրբ Խորհրդի բաժակից մի փոքր կաթեց-

րի նրա մեջ: Իսկ սուրբ խորհրդին հաղորդակից լինելով՝ զորացավ, և փոքր-ինչ հետո, սուրբ հացի կտորները թրջելով գինու մեջ, քիչ առ քիչ կերակրեցի նրան, և այդպես զորացավ Աստծո կամքով: Մեկ օր հետո նա ինձ հետ եկավ իր սենյակը և այնուհետև Աստծո շնորհով ազատվեց այն ախտից և անդորրությամբ մնում էր իր խորհուրդների մեջ, քանզի հաղթեց դևին՝ նվաղեցնելով իր մարմինը»:

91. Ոմն ծեր մի աշակերտ ուներ, որը պոռնկության պատերազմի մեջ էր: Ծերն աղաչեց նրան և ասաց. «Համբերի՛ր, որդյա՛կ, քանզի նախանձահույզ չարի պատերազմն է այդ»: Իսկ նա ասաց. «Եթե իմ կամքը չկատարեմ, չեմ կարող համբերել»: Երբ ծերը տեսավ, որ այլև հնար չունի, խաբեց նրան և ասաց. «Ես նույնպես, որդյա՛կ, պատերազմի մեջ եմ այդ ախտից. երկուսով գնանք անելու այդ գործը և ապա վերադառնանք մեր խուցը»: Ծերը մեկ դահեկան ուներ, և այն վերցնելով իրենց հետ՝ գնացին: Երբ հասան մեղքի վայրը, ծերն իր աշակերտին ասաց. «Դու մնա՛ դրսում, որդյա՛կ, որպեսզի նախ ես մտնեմ, իսկ դու կմտնես ինձանից հետո»: Եվ մտավ ծերը պոռնիկի մոտ, տվեց նրան դահեկանը, աղաչեց նրան և ասաց. «Մի՛ պղծիր, խնդրում եմ, իմ աշակերտին»: Կինը խոսք տվեց և դաշինք կապեց ծերի հետ, և ծերը դուրս գալով՝ եղբորն ասաց. «Դո՛ւ էլ մտիր, որդյա՛կ»: Երբ սա ներս մտավ, պոռնիկ կինը նրան ասաց. «Կանգնի՛ր այդպես դռան մոտ և ի՛նձ լսիր. ես թեև մեղավոր եմ, սակայն օրենք ունեմ և պարտավոր եմ այն կատարել: Դու այդտեղ մնա՛ և հիսուն անգամ ծնրադրի՛ր, իսկ ես այստեղ կծնրադրեմ»: Եվ յուրաքանչյուրն առանձին սկսեցին ծնրադրել: Երբ եղբայրը ծնրադրեց երեսուն անգամ, Տերը նայեց նրան, և նա զղջաց իր սրտում և ասաց. «Ինչպե՞ս հաղգնեմ աղոթել առ Աստված, երբ այս մեղքը գործելուն այսքան մոտիկ եմ», և շուտափույթ դուրս եկավ՝ առանց պղծվելու: Քանզի Տերը նայեց ծերի ջանքերին և վերցրեց եղբոր այդ պատերազմը, և նրանք վերադարձան իրենց սենյակը՝ ազատված ապականությունից՝ շնորհիվ ծերի սիրո և աղոթքների:

92. Հայրերից ոմանք մեզ պատմում էին, թե հասարակաց վանքում մի եղբայր կար, որին ուղարկում էին մոտակա գյուղը՝ եղբայրների կարքիների համար: Այդ գյուղում աստվածավախ մի մարդ կար, որը հավատով և սիրով միշտ հյուրընկալում էր այդ եղբորը՝ երբ էլ նա գալու լիներ, և իր տանը հանգստանալու հնարավորություն էր տալիս: Եվ այդ մարդը շատ գեղեցիկ մի այրի դուստր ուներ, որը երկու տարի էր ապրել իր ամուսնու հետ: Որքան եղբայրը մտներ այնտեղ, ցանկանում էր նրան և մտքում պատերազմում, իսկ կինն իմաստուն

էր և իրեն հեռու էր պահում նրանից: Զգալով եղբոր կամքի գայթակղությունը՝ ներսի սենյակից դուրս չէր գալիս կինը և չէր երևում նրա աչքին: Մի օր, սակայն, աղջկա հայրը քաղաք գնաց՝ ինչ-որ բան վաճառելու, և նա մենակ մնաց տանը: Եղբայրն, ըստ սովորության, եկավ այնտեղ և նրան մենակ գտնելով տանը՝ հարցրեց. «Ո՞ւր է քո հայրը»: «Քաղաք գնաց»,– պատասխանեց նա: Եվ եղբայրը սկսեց փոթորկվել պատերազմից և հարձակվեց նրա վրա: Աղջիկը հեզաբար նրան ասաց. «Մի՛ խռովվիր. հանդարտվի՛ր, մինչև իմ հայրը գա, քանի որ մենք երկուսով ենք տանը, և գիտեմ, որ դուք՝ կրոնավորներդ, առանց աղոթքի ոչինչ չեք անում: Արդ, աղոթի՛ր Աստծուն, և ինչ դնի քո սրտի մեջ՝ այն էլ կանենք»: Իսկ նա չկամեցավ այդ անել, քանզի անչափ մոլեգնած էր: Աղջիկը նրան ասաց. «Դու կնոջ փորձն ունե՞ս», իսկ նա պատասխանեց. «Զգիտեմ և դրա համար էլ գալիս եմ քեզ մոտ, որպեսզի իմանամ, թե ինչ է դա»: Եվ աղջիկն ասաց. «Իրոք դու հենց այդ պատճառով ես բորբոքվում, քանի որ չգիտես կնոջ ժանտահոտությունը». այդպիսով կամենում էր մարել նրա ցանկությունը: Աղջիկը դարձյալ ասաց. «Հեռո՛ւ մնա ինձնից, որովհետև կանանց կարգի մեջ եմ, այսինքն՝ արյունահոսության, դրա համար էլ չեմ կարող մերձենալ քեզ և ոչ էլ կարող եմ իմ ժանտահոտությունը հրապարակել»: Երբ եղբայրը լսեց այս խոսքերն այն զգաստ և սուրբ կնոջից, սաստիկ զղջաց և դառնորեն ողբաց: Եվ երբ պարկեշտ աղջիկը տեսավ նրա զղջումը, նրան ասաց. «Եթե հիմա կատարեիր այդ մեղքը, ի՞նչ կլինեիր արդյոք և ի՞նչ երեսով պիտի նայեիր իմ հորը կամ ի՞նչ ձևով և ինչպե՞ս պիտի վերադառնայիր վանք՝ սուրբ հայրերի դասի մոտ, և ինչպե՞ս պիտի կկանգնեիր դասի մեջ՝ աղոթքի: Աղաչում եմ քեզ, սթափվի՛ր և քե՛զ նայիր, որպեսզի չկորցնես քո մեծ վաստակը մի փոքր և ամոթալի գործի պատճառով և չզրկվես հավիտենական բարուց»: Եղբայրը այս ամենը լսելով իմաստուն կնոջից՝ գոհացավ Աստծուց, որ չթողեց իրեն ամբողջովին ընկնելու: Օրհնեց նաև խելացի կնոջը, որ ապրեցրեց իրեն, և գալով՝ այս ամենը պատմեց ինձ: Եվ դուք, որ լսում եք, զգուշացե՛ք, և որ տանը կին կա, երկար մի՛ մնացեք այնտեղ, այլև ընավ մի՛ գնացեք այնտեղ»:

93. Ոմն եղբայր նույնպես պոռնկական խորհուրդների պատերազմի մեջ էր և սաստիկ ընդդիմանում էր դրանց: Որքան կարող էր՝ ճգնում էր, պահեցողություն և աղոթք էր անում և չէր հետևում իր չար խորհուրդներին: Սակայն, ի վերջո, ձանձրացավ, վեր կենալով գնաց եկեղեցի և բոլորին ասաց իր փորձության մասին: Իսկ նրանք ապաշխա-

բությանն կարգ դրեցին նրա վրա և մի շաբաթ աղոթեցին նրա համար, և այսուհետ դադարեց պատերազմը:

94. Ոմն եղբայր բնակվում էր Սկիտեում, և դևը նրա սիրտը մի գեղեցիկ կնոջ հիշողություն գցեց, և դրանով սաստիկ նեղում էր նրան: Աստծո կամքով մեկ այլ եղբայր ելավ Եգիպտոսից և եկավ Սկիտե՝ նրա մոտ, ու մինչ խոսում էին իրար հետ, եկվոր եղբայրն ասաց. «Այսինչ անունով կինը վախճանվեց՝ այստեղ գալուցս առաջ»: Դա այն կինն էր, որի մասին հիշողությունը նեղում էր եղբոր միտքը: Երբ այս լուրը լսեց եղբայրը, պատրաստեց իրեն ու մի օր վերցնելով իր փիլոնը՝ գիշերով գնաց այնտեղ, բացեց նրա գերեզմանը, վերցրեց նրա հոտած ու նեխած թարախից և ծրարելով փիլոնի մեջ՝ վերադարձավ իր խուցը: Ամեն օր այն հոտած ու գարշելի շարավը դնում էր իր առջև և իր խորհուրդներին ասում էր. «Ահա նենգավո՛ր և անառա՛կ, սրա՛ն էիր տենչում: Արդ ա՛ռ քո կարոտը և հագեցի՛ր դրանով»: Եվ այդ գարշահոտությամբ տանջեց իրեն այնքան, մինչև որ ազատվեց պատերազմից, քանզի ուր զգաստությունն ու Տիրոջ երկյուղն են, այնտեղ են հանգիստն ու ազատությունը չարից»:

95. Մի ծերի մասին ասում էին, թե աշխարհից գալով՝ դարձյալ իր կնոջն էր տենչում, և այդ մասին պատմեցին հայրերին: Իսկ նրանք գիտեին նրան, որ սահմանվածից առավել տքնող էր, քանզի ժիր մշակ էր, դրա համար էլ նրա վրա նորանոր կանոններ դրին: Իսկ նա այդ լուծը կրում էր, մինչև որ նրա մարմինը տկարացավ այն աստիճան, որ չէր կարողանում անգամ կանգնել: Եվ ապա հայրերից մեկին միտք եկավ՝ Սկիտե գալու և տեսնելու այնտեղի ծերերին: Երբ անցնում էր նրա սենյակի մոտով, տեսավ, որ դուռը բաց է, և խիստ զարմացավ, թե ինչու իրեն ընդառաջ դուրս չեկավ, ետ դարձավ՝ ասելով. «Գուցե հիվանդ է, դրա համար դուրս չեկավ. մտնեմ՝ տեսնեմ նրան»: Երբ ներս մտավ, նրան գտավ ծայրաստիճան տկարացած և ասաց. «Քո ի՞նչն է ցավում, հա՛յր»: Իսկ նա սկսեց պատմել նրան ամեն ինչ և ասաց. «Ես գավառական եմ և գյուղից եկած, և քանի որ կարոտում էի իմ կնոջը, այդ մասին պատմեցի հայրերին, իսկ նրանք բազմաթիվ կանոններ դրին ինձ վրա՝ յուրաքանչյուրն իր պատկերացումով, և ես, դրանք կատարելով, այսպես տկարացա, իսկ պատերազմն իմ մեջ առավել ուժգնացավ»: Ծերը, երբ լսեց այս, խիստ տրտմեց և ասաց նրան. «Սուրբ հայրերն այդ ամենը բուժման միջոց համարելով են քեզ ասել, սակայն եթե դու լսես ինձ, քեզնից դեն կնետես այդ ամենը, ժամանակին փոքր-ինչ կերակուր կընդունես, քո չափով կանես

քո աղոթքը և Տիրոջ վրա կդցես քո հոգսը, քանզի քո ջանքերով ու տքնությամբ չես կարող ազատվել քո խուրհուրդներից, այլ՝ Աստծո ողորմությամբ: Քանզի մեր մարմինները մեր հանդերձներն են. եթե պահպանենք դրանք, բարվոք վիճակում կլինեն և կծառայեն մեզ, իսկ եթե անտես առնենք՝ կփտեն և կվերանան»: Եվ եղբայրը, լսելով ծերի խորհուրդը, այդպես արեց, և ոչ շատ օրեր անց վերացավ պատերազմը նրա սրտից, որովհետև ովքեր իրենց չափով են տքնում, կարելիից ավելին կվաստակեն, քանզի հանդուգն վաստակը հաճո չէ Աստծուն:

96. Ոմն եղբայր ընկավ դիվային պատերազմի մեջ և գնալով մի ծերի մոտ՝ նրան ասաց. «Այսինչ եղբայրները միմյանց հետ մեղանչում են»: Իսկ ծերը, գլխի ընկնելով, որ դևից էր պատրվել, մարդ ուղարկեց և կանչել տվեց նրանց: Եվ երբ երեկո եղավ, մի խսիր փռեց նրանց տակ և մեկ ուրիշով ծածկելով նրանց երկուսին՝ ասաց. «Իսկապես սուրբ են Աստծո որդիները, քանզի ճանաչել տվեց և հաստատեց նրանց անբծությունը»: Սրա համար իր աշակերտին ասաց. «Այս եղբորը, որ զրպարտեց եղբայրներին, տա՛ր և առանձին փակի՛ր մի խցում, որովհետև նա իր անձի մեջ մեղքերի ախտն ունի, քանզի՝ ով դատի, բամբասի կամ կասկածի իր եղբորը՝ իր անձի մեջ ունի այդ նույն վնասակար ախտը, որն ուռճանալով՝ այդ նույն ախտը վերագրել է տալիս ուրիշին»:

97. Ոմն եղբայր ասաց ծերին. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև իմ խորհուրդներն ինձ խեղդում են»: Ծերը նրան ասաց. «Մայրը, երբ կամենում է մանուկին կտրել ստինքից, ստինքներին ցմախի (ջրակարոսի) հյութ է քսում, և երբ մանուկը ձգվում է՝ կերակրվելու, նրա դառնությունից փախչում է»: Եղբայրը նրան ասաց. «Եվ ո՞րն է այն ցմախը, որը պետք է խորհուրդների վրա լցնել»: Ծերն ասաց. «Մահվան և հավիտենական տանջանքների հիշողությունը»: Նույն եղբայրը այս խորհուրդների մասին հարցրեց մեկ այլ ծերի ևս: Ծերը նրան ասաց. «Ես երբեք դրանցից պատերազմի մեջ չընկա և չգիտեմ նույնիսկ՝ ինչ բան է դա»: Եղբայրը՝ խոցված նրա խոսքերից, գնաց մեկ այլ ծերի մոտ և ասաց. «Այսինչ ծերն այսպիսի բան ասաց ինձ, և ես խոցված զգացի ինձ, որովհետև ընությունից վեր էր նրա ասածը»: Ծերը նրան ասաց. «Այդ Աստծո մարդն անմտորեն չասաց քեզ այդ բանը, գնա՛, աղաչի՛ր նրան, որ քեզ բացատրի դրա իմաստը»: Եվ եղբայրը գնաց նրա մոտ, ծնկի իջավ նրա առաջ և ասաց նրան. «Ների՛ր ինձ, հա՛յր, քանզի անմտություն արեցի և չհարցրի քեզ քո խոսքի իմաստի բացատրությունը: Հիմա աղաչում եմ, մեկնի՛ր ինձ, թե ինչպես ոչ մի անգամ պոռնկական խորհուրդներից պատերազմի մեջ չընկար»: Ծերը նրան

ասաց. «Այն ժամանակից ի վեր, ինչ ես կրոնավոր դարձա, երբեք չհագեցա ո՛չ հացով, ո՛չ ջրով և ո՛չ էլ քնով, և քանի որ սրանց հոգսն ինձ միշտ սաստիկ նեղում է, սրանցից դուրս ուրիշ բաների մասին ես չեմ խորհում, որոնց մասին դու ասացիր»: Եղբայրը երբ լսեց այս, խիստ օգուտ քաղեց դրանից և շահած՝ գնաց ուրախությամբ:

98. Ոմն ծեր բնակվում էր անապատի խորքերում, իսկ գյուղում մի ազգական կին ուներ, որը շատ ժամանակ էր, ինչ կամենում էր տեսնել ծերին, հարցուփորձ էր անում նրա մասին, թե որտեղ է բնակվում, և լսեց, որ անապատում խորքում է: Վեր կենալով բռնեց անապատի ճանապարհը և մի ուղտապան ուղեկից ճարելով՝ նրա հետ մտավ անապատ. և սա եղավ չարի դրդմամբ: Երբ մտավ ծերի սենյակը, սկսեց ինքն իրեն ներկայացնել ծերին և ճանաչեցնել, թե ինքը նրա ազգական այսինչ կինն է. ուստի և բնակվեց նրա մոտ: Իսկ երբ մի քանի օր մնաց նրա մոտ, ծերի մեջ մտավ պոռնկության պատերազմը, և նա խառնակվեց նրա հետ: Անապատի խորքում նրան մոտիկ բնակվող մեկ այլ ծեր կար: Եվ սա իր բաժակը լցնում էր ջրով, սակայն ուտելու ժամին այն թափվում էր: Երբ սա կրկնվեց բազում անգամ, գնաց այն ծերի մոտ՝ հարցնելու, թե ինչու է այդպես լինում: Երբ գնաց անապատը, արդեն երեկո էր, ուստի իջևանեց վանքի եղբայրների մոտ և գիշերը լսեց, որ դևերը միմյանց ասացին. «Այս գիշեր ծերին գցեցինք պոռնկության մեղքի մեջ»: Իջևանած ծերը, լսելով այս, խիստ տրտմեց, որովհետև նրա մոտ էր գնալու, բայց, այնուամենայնիվ, գնաց և ծերին գտավ սաստիկ տրտմության մեջ, և նրան ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի ամեն օր իմ բաժակը լցնում եմ ջրով, սակայն երբ ճաշակում եմ և կամենում եմ ըմպել, այն շրջվում է, և ջուրը՝ թափվում»: Ծերը նրան ասաց. «Դու եկար ինձ հարցնելու ջրի մասին, թե ինչ անես, որ միշտ թափվում է, իսկ ես ի՞նչ անեմ, որ այս գիշեր ընկա պոռնկության մեջ»: Եվ նա ասաց. «Ես այդ իմացա, հա՛յր»: Ծերը հարցրեց. «Եվ ինչպե՞ս իմացար, հա՛յր»: Նա ասաց. «Մինչ ննջում էի վանքում, լսեցի դևերից, որ քո մասին էին պատմում»: Ծերը նրան ասաց. «Հիմա, հա՛յր, ես գնում եմ աշխարհ, քանզի չարաչար խորտակվեցի»: Իսկ մյուսն աղաչեց նրան ու ասաց. «Մի՛ գնա, հա՛յր, այլ դադա՛ր առ քո տեղում, իսկ կնոջն ուղարկի՛ր գյուղ: Տերն այնքան չի մեղադրի քեզ, քանզի այդ պատահարը դևերից էր»: Ծերը լսեց նրան և մնաց իր տեղում, ավելացրեց ճգնություններն ու արտասուքները, մինչև եկավ իր առաջվա վիճակի չափին և ստացավ թողության ու արդարների դասում դասվելու նշանը: Ահա տե՛ս, թե որքան բարի է հաստատուն

հույսն առ բարերար և ներող Աստված, իսկ հուսահատությունը անվերադառնելի կորուստ է:

99. Երկու եղբայրներ պոռնկության չար խորհրդի պատերազմի մեջ ընկան և գնալով աշխարհ՝ իրենց համար կին գտան: Հետո միմյանց ասացին. «Ի՞նչ շահեցինք, որ թողեցինք հրեշտակային կարգն ու այս աղտեղության մեջ ընկանք, իսկ հետագայում էլ մեզ համար կա և մնում է հավիտենական հուրը: Հիմա ե՛կ դարձյալ գնանք անապատ և ապաշխարենք այս մեղքը»: Եվ վեր կենալով գնացին անապատ, հայրերին խոստովանեցին իրենց հանցանքները և խնդրեցին ապաշխարության կարգ սահմանել: Իսկ նրանք արգելափակեցին նրանց առանձին-առանձին՝ մեկ տարով, և երկուսին միատեսակ հաց ու ջուր էին տալիս, որովհետև մեղքերով էլ էին իրար նման: Երբ նրանց ապաշխարության ժամանակը լրացավ և դուրս եկան, հայրերը տեսան, որ մեկը դեղնած ու խիստ նվաղած էր, իսկ երկրորդը գեղեցկացած և պայծառացած էր դեմքով, և զարմացան, որովհետև միատեսակ կերակուր էին ստանում: Հարցրին նվաղածին և ասացին. «Քո արգելարանում դու ի՞նչ էիր խորհում քո մտքում»: «Զարիքներս էի հաշվում, որ գործեցի, և տանջանքների մասին էի մտածում, որոնց մատնվելու եմ, և դրա համար չորացան իմ մարմինն ու ոսկորները»: Հարցրին և նրան, որ գեղեցկացել էր. «Իսկ դու ի՞նչ էիր խորհում քո խցում»: Եվ նա ասաց. «Ես գոհանում էի Աստծուց, որ ինձ ազատեց աշխարհի պղծություններից ու տանջանքների հրից և ինձ բերեց հրեշտակային այս կարգի մեջ, հիշում էի Աստծուն և ուրախանում»: Եվ հայրերն ասացին. «Երկուսիդ ապաշխարություններն էլ հավասար են. մեղքերի համար տրտմությունը բարի է, իսկ աշխարհից և մեղքերից հեռանալու համար ուրախությունն առավել ևս լավ է»:

100. Ոմն եղբայր սաստիկ պատերազմի մեջ ընկավ պոռնկության դևից, քանզի չորս դևեր գեղեցիկ կանանց կերպարանք ստացան և նրա դեմ խստագույնս պատերազմեցին մի ամբողջ քառասուն օր: Ստիպում էին պղծվել իրենց հետ, իսկ նա արիաբար ընդդիմացավ և չհաղթվեց նրանց հետ խառնակվելու ցանկությունից: Ողորմած Աստված, երբ տեսավ նրա ճգնությունը, պարգևեց նրան մարմնի և խորհուրդների լիակատար հանդարտություն: Այդպես է, քանզի հավատքով գոտեպնդվածները չեն տապալվում, այլ առավել ևս պարգևատրվում են:

101. Ոմն մեծանուն մենակյաց մոտ էր Եգիպտոսին և ընակվում էր մի փոքրիկ խցում, իսկ նրա համբավը տարածվեց ողջ երկրով մեկ: Եվ ահա չարի ազդմամբ՝ նրա համբավի վրա մտաշարժվեց մի պիղծ ու

լիրը կին: Երբ լսեց նրա մասին, ասաց իր հոմանիներին. «Ի՞նչ կտաք ինձ, եթե տապալեմ ձեր մենակյացին»: Եվ նրանք խոստացան նրան տալ ամեն ինչ: Եվ նա, երեկոյան դուրս գալով, գիշերով եկավ ծերի սենյակը՝ իբր թե մոլորվել է, և երբ բախեց դուռը, ծերը դուրս ելավ և նրան տեսնելով՝ շփոթվեց և հարցրեց. «Ինչպե՞ս եկար այստեղ»: Իսկ նա կեղծաբար ողբաց և ասաց. «Շեղվեցի ճանապարհից և մոլորվելով եկա այստեղ»: Ծերը գթաց նրան և տարավ խուղի բակ, իսկ ինքը ներս մտնելով՝ փակեց դուռը նրա առաջ: Իսկ այն մոլագարը լալով գոչում էր ու ասում. «Գազաններն ինձ կուտեն այստեղ, ծե՛ր»: Իսկ ծերն, Աստծուց երկյուղելով, շփոթմունքի մեջ էր և ասում էր. «Որտեղի՞ց եկավ այս փորձությունն ինձ վրա», և դուռը բացելով՝ ներս ընդունեց նրան: Այնժամ կինն սկսեց պատերազմել նրա հետ, և դևը սկսեց պոռնկության մղել ծերի միտքը: Ծերը հասկացավ, որ սա դևի խաբեությունն է, վեր կացավ, վառեց մեծ լապտերը և դրեց իր առջև: Նրա սիրտը այրվում էր ցանկությունից, բայց իր մտքում ասում էր. «Ովքեր այսպիսի բան են գործում՝ հավիտենական հուրն են գնալու, իսկ դու փորձի՛ր քեզ, թե կարո՞ղ ես դիմանալ անշեջ կրակին»: Եվ մատները, պահելով կրակի բոցի վրա, կիզեց դրանք, սակայն մատների կիզումը չէր զգում՝ այնպես էր այրվում սիրտը ցանկությունից: Այդպես կիզեց ողջ մարմինը ամբողջ գիշեր՝ մինչև առավոտ: Իսկ այն կինը, երբ տեսավ, թե ինչ արեց ծերը, սարսափահար եղավ և ընկնելով մեռավ: Դրանից հետո երիտասարդները եկան ծերի խուղը և ասացին. «Այս գիշեր քեզ մոտ մի կի՞ն է եկել»: Ծերն ասաց. «Այո՛, եկել է և ահա ննջում է տանը»: Երբ տուն մտան և մեռած գտան կնոջը, ասացին. «Սա մեռած է, հա՛յր»: Իսկ նա ցույց տվեց նրանց իր ձեռքերն ու ոտքերը և ասաց. «Տեսե՛ք՝ ինչ արեց ինձ հետ սատանայի դուստրը. և լքեց ինձ՝ մինչ ես ինձ այրելով՝ Աստծով հաղթեցի այդ լրբին»: Եվ նրանց ցույց տվեց իր այրված մատներն ու մարմինը և պատմեց նրանց ամեն ինչ և ասաց. «Գրված է. «Զարին չարով մի՛ հատուցիր» (Ա Պետ. Գ 9) *ապա ուրեմն պետք չէ սրան ոխով հատուցել»: Այնժամ աղոթք արեց այդ կնոջ համար, որպեսզի հարություն առնի: Աստված լսեց սուրբ ծերի աղոթքը և հարություն տվեց մեռյալ այդ կնոջը՝ ի տես երիտասարդների, մինչ նրանք սքանչացած օրհնում էին Տիրոջը, որ պահպանում է իր ծառաներին չար ցանկություններից, ովքեր սիրում են Նրան ողջ սրտով: Եվ կինն էլ զգաստացած՝ օրհնեց Տիրոջը, և այնուհետև գովելի կյանքով ապրեց ու գոհացավ Աստծուց: Այսպես ազատվում և փրկվում են չար ցանկությունից բոլոր նրանք, ովքեր արիանում և ապավինում են Տիրոջը:*

102. Մի եղբայր ծերին հարցրեց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև նեղվում եմ պոռնկության ցանկությունից»: Ծերն ասաց. «Զգո՛ույշ եղիր այդպիսի ցանկություններից, որովհետև դրանցից են ծագում հուսահատությունը, կյանքից լքվածությունը և մեղքերից հաղթվելը. սրա՛նք են դրա պտուղները: Եթե նավն ընկնի ծովի ալեկոծության մեջ, թեկուզև նավը տարուբերվի, թեկուզև խորտակվեն նրա մասերը՝ թևը, սյունը կամ մեկ այլ բան, դեռևս կընթանա, եթե նավավարն զգոն լինի և հսկի իր կյանքը: Այդպես էլ կրոնավորը՝ եթե հեղգ լինի դեպի այլ ախտերը, հուսով կընթանա և կմնա ապաշխարության մեջ, իսկ եթե պոռնկության ախտով տապալվի, կընկնի հուսահատության անդունդը և կկործանվի՝ ինչպես բազում մեղքերի անհատակ ծովի մեջ, որովհետև չկա այնպիսի անագորույն կործանում, ինչպիսին հուսահատությունն է, որն անել արգելարան է և խավարչտին անդունդ»:

103. Ծերն ասաց. «Բնավ հարիր չէ կրոնավորին, որ եղբայրների հետ բնակվելով՝ առանձին աշխարհիկ մեկը ունենա, որին ավելի սիրի, քանզի թե՛ նրանց և թե՛ շատերի համար վնասակար է՝ ախտերի, բամբասանքների և դատելու պատճառով»:

104. Ոմն եղբայր հարցրեց իր ծերին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի պոռնկության պատերազմի մեջ եմ»: Ծերն ասաց. «Եթե բարի է այն, ինչո՞ւ ես փախչում նրանից, իսկ եթե չար է՝ ինչո՞ւ ես փնտրում այն»:

105. Մի ծերի մասին ասում էին, թե ճանապարհ գնալիս կնոջ ոտնահետք տեսավ և ծածկեց այն՝ ասելով. «Միգուցե եղբայր անցնի այստեղով և տեսնի ու պատերազմի մեջ ընկնի դրանից»: Որովհետև սուրբ ծերունիները հոգաբարձուներ էին և ամեն մի փոքրագույն մեղքի համար սաստիկ ցավ էին ապրում:

106. Մի եղբայր հարցրեց հայր Աղաթոնին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, հա՛յր, քանզի իմ որովայնը փորձություն է իմ գլխին. երբ լցնում եմ այն, մոլեգնում և կիզում է իմ մարմինը»: Ծերը նրան ասաց. «Որդյա՛կ, մարմինը հոգու անոթ է և պետք է նրան իր կարգի մեջ պահել, որպեսզի գիրանալով՝ մեղքերի ժայռից ցած չգլորի նրան, և ոչ էլ պետք է տկարանա, որ անգործության մատնվելով՝ անպիտան չդառնա բարի գործերի և ջանքերի համար, այլ մինչև մահ պետք է հավասարակշիռ վիճակում պահել: Ուստի ջերմ արտասուքներով աղոթե՛նք, որպեսզի Աստված օգնի մեզ»:

107. Մի մենակյաց կույս էր, որովհետև բնավ կին չէր տեսել և ոչ էլ ճանաչում էր: Սրան խստագույնս նեղում էր պոռնկության դևը, քանզի սաստիկ այրվում էր և սիրում էր ինչ-որ մեկին, իսկ թե ում՝ չգիտեր: Դևերը հնարամիտ ձևով որոշեցին տեսիլքով ցույց տալ նրան մի մարդու, որ ընկած կնոջ վրա՝ մեղք էր գործում, բայց ողորմած Աստված տեսավ ծերի անմեղությունը, դևերի նենգությունը և հեռացրեց ծերից այդ պատերազմը, և նա ազատվեց դրանից: Քանզի դևերի պատերազմի պատճառն ու նյութը մենք ենք և զորացնում ենք նրանց՝ մեզ նեղելու և մեր հոգին դառնացնելու պիղծ ցանկություններով, քանզի կա՛մ մեր կամքի թուլության պատճառով ենք տեղիք տալիս, կա՛մ ծուլությունից, կա՛մ մարմնի հանգստությունից, կա՛մ կերակրի առատությունից: Իսկ երբ այսպիսի պատճառներ չկան մեր մեջ, այնժամ նրանց շուտափույթ փախուստն ու անպատմելի տկարությունն կտեսնենք՝ հալածական եղած մեր Փրկիչ Քրիստոս Աստծո կողմից:

108. Ոմն մեծ ծերի մասին ասում էին, թե մի անգամ գնաց միաբանների վանք և տեսնելով այնտեղ մի երիտասարդի՝ բնավ չկամեցավ մնալ կամ օթևանել այնտեղ: Եղբայրը, որ նրա հետ էր, ասաց նրան. «Ի՞նչ է, հա՛յր, դու և՞ս երկնչում ես սրանից»: Ծերն ասաց. «Թո՛ւյլ տուր, եղբա՛յր, չեմ երկնչում, սակայն շահ չկա անմիտ պայքարից. ավելի լավ է նրանից հեռու մնալ և Քրիստոսի հետ պայծառ սրբությամբ լինել, քան թե պատերազմի բռնվել այդ ախտի հետ և տքնությամբ դիմակայել դրան: Իսկ եթե մեր կամքից անկախ վրա հասնի այդ պատերազմը, բարի պսակ առնելու առիթ է. հաղթությա՛մբ զինվենք նրա դեմ և հալածե՛նք՝ մինչև անբիծ սրբության հասնելը»:

109. Հայր Պիմենը մի անգամ նավով անցավ ծովի այն կողմը, ուր կրոնավորների անապատն էր: Մի կին, դուրս գալով նավից, նստեց մի բլրակի վրա: Այդ պահին մի եղբայր գնաց ջրի, և երբ տեսավ կնոջը, գնաց և պատմեց հորը՝ ասելով. «Հա՛յր, ահա գետի ափին՝ բլուրի վրա կին է նստած. այստեղ երբե՛ք կինարմատ չի եղել»: Ծերը, երբ լսեց այս, վերցնելով իր գավազանը՝ դուրս ելավ, գնաց ու բարձրաձայն գոչեց. «Օգնեցե՛ք, եղբայրնե՛ր, օգնեցե՛ք, ավազակներ են եկել այստեղ»: Երբ տեսան այդ՝ ամենքը մահակներ վերցրին և գնացին նրա հետ, ապա գոչելով դիմեցին դեպի նավը, իսկ նավորդները սաստիկ վախեցան, վերցրին կնոջն ու փախան-մտան նավը, իսկ եղբայրները, կտրելով նավի պարանները, նրան գետի ալիքներին հանձնեցին տանելու:

110. Մի քաղաքում իր մոր հետ մի աստվածապաշտ ու սուրբ կույս էր բնակվում, իսկ նրանց մոտիկ բնակվում էր ոմն չար զինվոր, որը

տուփանքով էր համակված դեպի այս կույսը և հարմար պահ չէր գտնում գործելու այդ մեղքը: Օրերից մի օր ճանապարհ գնաց կույսի մայրը, և երբ զինվորը այդ տեսավ, որը վաղուց լրտեսում էր, մտավ տուն և բռնությամբ պղծեց նրան: Իսկ երբ այդ նենգավորը հեռացավ այնտեղից, աղջիկը մերկացավ իր կրոնավորական հանդերձից, պատառոտված նստեց մի խսիրի վրա ու դառնորեն լաց եղավ: Երբ մայրը եկավ և լսեց կատարվածի մասին, սկսեց սգալ, և ադպես ողբի ու կոծի մեջ մնացին բազում օրեր: Լսեցին այդ մասին նաև կույսերն ու եկեղեցու քահանաները և գալով նրա մոտ՝ մխիթարեցին և ասացին. «Քո կամքով չեղավ, մեղք չկա քեզ վրա»: Սակայն նա չէր լսում, ողբում էր ու ասում. «Ատեց և մերժեց ինձ Աստված, և ինչպե՞ս կրեմ այն կրոնավորական զգեստը, որն Աստվա՛ծ չկամեցավ: Մի՞թե Աստված չէր կարող խափանել այդ, սակայն ինձ անարժան համարեց. և ահա ես այսպես կմնամ մինչև մահ»: Եվ այդպես մնաց մինչև վերջին շունչը, և այդպես բարի ու գովելի զղջումով իր ողբն էր անում: Սա գրվեց նրա համար, որ եթե ակամա մեղքի համար այդպես անմխիթար ողբալ ու լացել է պետք մինչև մահվան օրը, ապա որքան առավել ևս պետք է ողբան և կոծեն անմխիթար սգով մինչև մահ՝ նրանք, ովքեր կամովին և հոժարությամբ տվեցին իրենց անձերն ցանկության մեղքին և ապականությանը:

111. Ոմն եղբայր, որ բնակվում էր անապատում, սաստիկ բռնադատված լինելով պոռնկության ցանկությունից, գնալիս՝ գտավ մի ինձի որջ, մտավ ու մնաց այնտեղ վեց օր՝ առանց ճաշակելու և ասաց. «Տե՛ր, Տե՛ր, եթե պղծությունը պիտի տիրի մարմնիս, ինձ կերակուր դարձրո՛ւ այս ինձին, իսկ եթե ոչ՝ փրկի՛ր ինձ նրանից և լուծարի՛ր իմ պատերազմը»: Եվ ինձը գալով՝ չմոտեցավ նրան, ապա ձայն լսվեց, որ ասաց. «Դրան ներքինի՛ դարձրեք և թողե՛ք գնա»: Եվ նույն պահին իսկ դադարեց պատերազմը, և նա վերադարձավ իր սենյակը:

112. Ոմն եղբայր, որ պոռնկության պատերազմ ուներ, գնաց ծերերից մեկի մոտ և աղաչեց նրան՝ աղոթել իր համար, որպեսզի թեթևանա պատերազմը: Ճգնեց ծերը յոթ օր՝ աղոթելով նրա համար և հարցրեց եղբորը, թե ինչպես է հիմա նրա վիճակը: Նա ասաց. «Ավելի սաստիկ է դարձել, հա՛յր, և ընավ չթեթևացավ»: Եվ ծերը խիստ զարմացավ, իսկ դևը կանգնեց ծերի առջև և ասաց նրան. «Հավատա՛ ինձ, ծե՛ր, առաջին իսկ օրը, որ աղոթեցիր նրա համար առ Աստված, ես հեռացա նրանից, սակայն նա ինքն իր մեջ դև ունի և դրա պատերազմը իր որկորի ու որովայնի մեջ է, իսկ ես այլևս չեմ պատերազմում նրա դեմ,

այլ ինքն՝ իր դեմ, քանզի անհագ ուտում է, ըմպում և ննջում, իսկ այդ պատերազմը բավական է նրան կորստյան մատնելու համար»:

113. Սկիտեում մի եղբայր պոռնկության դևից սաստիկ պատերազմի մեջ ընկավ և գալով՝ պատմեց ծերին: Ծերը նրան ասաց. «Դու գնա՛ Ալեքսանդրիայի Տասներկուսի վանքը և մտնելով այնտեղ՝ ընկի՛ր հայրերի գերեզմանի վրա և ասա՛. «Մեր հայրերի Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ և փրկի՛ր այս պոռնկության փորձությունից», և, հուսամ ի Տեր, որ կազատվես այդ փորձությունից»: Եվ երիտասարդը, ծերի աղոթքն առած, գնաց Տասներկուսի վանքը և արեց այն ամենն, ինչ պատվիրեց ծերը: Երեք օր հետո դարձյալ եկավ Սկիտե և ծերի ոտքերն ընկնելով՝ ասաց. «Աստծո շնորհով և քո աղոթքով ազատվեցի պոռնկության դևից, հա՛յր»: Ծերը նրան հարցրեց. «Ինչպե՞ս և ի՞նչ կերպ»: Եղբայրը պատասխանեց. «Ինչպես որ դու պատվիրեցիր, հա՛յր, տասներկու անգամ ծնրադրեցի և ընկնելով հայրերի գերեզմանի վրա՝ մի փոքր ննջեցի. մի աղջիկ եկավ ինձ մոտ և ասաց. «Կրոնավո՛ր, ա՛ռ իմ այս օրհնությունը և խաղաղությամբ գնա՛ քո սենյակը»: Եվ երբ առա այդ օրհնությունը, նույն պահին թեթևացավ իմ պատերազմը, իսկ թե ուրիշ ինչ առա՝ չգիտեմ»: Եվ ծերն ասաց. «Այդպիսի համարձակություն ունի Աստծո մոտ այն աղջիկը, որ մեռավ հանուն սրբության»:

114. Ոմն եղբայր ծերին հարցրեց ախտերի ու ցանկությունների մասին: Ծերը նրան ասաց. «Դրանք են, որ երգվում են Նաբուգոդոնոսորի լեզվով, քանզի եթե այն ժամանակ մարդիկ չլսեին երգերի ու պարերի ձայնը, չէին երկրպագի կուռքերին (Դան. Գ 1-7)*: Այդպես էլ մարմնի ախտերը՝ թովում են հոգին և նրան գլորում մարմնական մեղքերի մեջ, և ինչպես մեկ կաթիլ օշինդրը դառնացնում է մի ողջ կարաս մեղր, այնպես և մեղքի մի փոքր համը մեզ արտաքսում է Աստծո արքայությունից»:*

115. Ոմն ծեր ասաց. «Լռությունը, հեզությունը և ոչնչի մասին չմտահոգվելը ծնում են սրբություն. ա՛յս պահիր մինչև մահ և կապրես: Հաց մի՛ կեր կնոջ հետ և մի՛ խոսիր նրա հետ, մի՛ բնակվիր երիտասարդի հետ և նրան սիրելի մի՛ եղիր, մի՛ մտիր, նստի՛ր կամ ննջի՛ր այն տանը, որտեղ երիտասարդ կա: Մի՛ թող քո աչքերը նայեն քո մարմնին՝ հանդերձներդ փոխելու ժամանակ, այլ սաստի՛ր քո աչքերին: Եթե մեկի կողմից հարկադրվես՝ երկու բաժակ գինին քեզ բավական է, և մի՛ լուծարիր քո հոր պատվիրանները՝ մեկնումեկի պարտադրանքի պատճառով: Մի՛ բնակվիր այնտեղ, որտեղ մեղանչում են Աստծո դեմ, մի՛ մոռացիր քո ծառայությունը, որպեսզի չընկնես քո

թշնամիների ձեռքը: Նեղի՛ր քո անձը սաղմոսերգությամբ և սիրի՛ր ամեն տեսակ վիշտ ու տառապանք, այնժամ կհնազանդվեն քեզ ախտերը, և քո անձը բնավ լավը չհամարես, երբ բարի գործերի մեջ լինես, այլ համարիր քեզ նվաստ, որպեսզի բարին չհեռանա քեզանից, և այդ նվաստությամբ ջանա՛ ողբալ քո մեղքերը: Եվ քո լեզուն էլ ե՛տ պահիր սուտ խոսելուց, քանզի սուտ խոսելը վանում է մարդուց Աստծո երկյուղը: Քո սրտի խորհուրդները հաճախ հայտնի՛ր քո հոգևոր հորը, որպեսզի Աստծո հովանին ծածկի քեզ, ջա՛նք թափիր քո ձեռագործի վրա, և Աստծո երկյուղը կբնակվի քո մեջ»:

116. Պատմեցին, թե ոմն մենակյաց անապատում խայթվեց օձից և գնաց քաղաք՝ բժշկվելու: Նրան իր տուն ընդունեց մի աստվածավախ ու սուրբ կին, որպեսզի բժշկի նրան: Երբ օձի թույնից փոքր-ինչ ապաքինվեց, պոռնկության դևը դարշելի ու խենեշ խորհուրդներ դցեց նրա սիրտը դեպի իրեն բուժող կինը, և մինչև անգամ ցանկացավ մերձենալ նրա հետ: Կինը նրան ասաց. «Մարմինդ բժշկելու համար եկար այստեղ, հա՛յր. իսկ եթե հոգով մեռնես, ի՞նչ կշահես. մարմինն սպանող թույնից վախեցար, իսկ հոգին սպանող թույնից չե՞ս վախենում: Չե՞ս հիշում քո տքնությունները, որ կրեցիր անապատում հանուն քո հոգու փրկության, և քո պատվական կարգին է՞լ չես նայում: Ինչո՞ւ մոռացար առ Աստված քո մշտական հառաչանքներն ու արտասուքները»: Այսպիսի և սրա նման շատ այլ խոսքեր լսելով իմաստուն կնոջից՝ եղբայրը սաստիկ ամոթահար եղավ և կամեցավ փախչել, որովհետև ամոթից վեր չէր կարողանում նայել: Երբ այն բարի կինը հասկացավ այդ, մխիթարեց նրան և ասաց. «Մի՛ ամաչիր դրա համար և մի՛ գնա, քանզի դեռևս քեզ բժշկվել է պետք: Այդ խորհուրդը քո սուրբը մտքերի արգասիքը չէր, այլ թշնամու հնարքն ու նրա պատրանքն էր»: Եվ բժշկելով նրան՝ արձակեց խաղաղությամբ, սրբությամբ՝ գնալու իր խուցը: Դրա համար քա՛ջ և պատրա՛ստ պիտի լինենք ամեն ժամ, քանզի տե՛ս այն թուլացածին, որ ոչինչ էր համարել իր առաջին կարգը, որ ուներ, իսկ ով զգաստ է, չի գայթակղվի, այլ ուրիշներին էլ կփրկի սատանայի փորձություններից:

117. Մի մեծն ծեր տասներկու աշակերտ ուներ, և դիվական փորձության բերումով՝ նրանցից մեկը մեղքի մեջ ընկավ մի կնոջ հետ: Քանի որ վանքի մոտ էր նրանց գյուղը, ամեն գիշերային աղոթքից հետո գնում էր այնտեղ, անցկացնում էր նրա հետ և նախքան լուսանալը՝ վերադառնում էր իր խուցը, քանզի վաղ առավոտյան աղոթքի էին կանգնում: Այս բանն իմացան եղբայրները, իմացավ նաև հայրը, սա-

կայն պաշտպանեց եղբորը մյուսներից և չհանդիմանեց: Բազում անգամ եղբայրները դեմ դուրս եկան նրան և կռվեցին հոր հետ, սակայն հայրը քաղցրությամբ հանդարտեցրեց նրանց և խրատելով ծածկեց գործը: Գնաց դարձյալ եղբայրն ըստ սովորության և բավական երկար մնաց այնտեղ: Արդեն լուսանում էր, երբ եղբայրը շտապելուց թողեց իր սանդալներն ու կնոջ կոշիկները գցելով ոտքերը՝ վերադարձավ իր խուցը: Երբ տեսավ ծերը, որ նա գալիս է, և ոտքերին էլ կանացի հողաթափեր են, գնաց նրա խուցը, իսկ եղբայրը կախել էր դրանք պատից: Ծերը նախ լռեց, ապա եղբորն ասաց. «Ո՞ւր էիր, որդյա՛կ»: Իսկ նա շփոթմունքի մեջ ստեց ու ասաց. «Այսինչ տեղը»: Ծերը նրան հարցրեց. «Եվ ո՞ւմն են այս կանացի հողաթափերը, որ կախված են քո սնարի վերևում»: Երբ նա նկատեց, որ կնոջ հողաթափերն է բերել, որը շտապելուց չէր նկատել, ընկավ նրա ոտքերն ու ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, հա՛յր, այլևս չե՛մ անի այդ բանը»: Ծերն ասաց. «Այսուհետև զգույշ եղի՛ր քո հոգու համար, քանզի ի՞նչ շահ եղավ քեզ այդ պղծությունից: Միայն ամոթ և նախատինք մարդկանցից՝ այստեղ, իսկ այնտեղ՝ անչեջ հուր, արտաքին խավար և անքուն որդ: Որդյա՛կ, սրանից հետո մի՛ թավալվիր այդ տիղմի մեջ և մի՛ անարգիր իմ ծերությունը»: Այս բանից հետո Աստծո կամքով դադարեց եղբայրն այդ մեղքը գործելուց և մեծ ճգնավոր դարձավ: Եղբայրներն հարցրին ծերին. «Ինչո՞ւ այդքան համբերատար եղար այս եղբոր նկատմամբ»: Ծերը նրանց ասաց. «Տեսնում էի, որ դևը, նրա ձախ ձեռքից բռնած, ձգում է դեպի աշխարհ, իսկ ես բռնել էի նրա աջ ձեռքից և դեպի ինձ էի ձգում, դրա համար էլ չէի հանդիմանում, որպեսզի դեպի աշխարհ չգնա, մինչև որ Աստված հաճեցավ. այժմ ես նրա երկու ձեռքն էլ բռնած ունեմ դեպի հավիտենական կյանք: Բարի է, որդյակնե՛ր, երկայնամիտ լինել և աղոթել եղբոր համար, մինչ նա փորձության մեջ է, առավել ևս ջերմորեն աղոթել առ Աստված, և Աստված իր մեծ գթությամբ կդարձնի նրա միտքը»:

118. Քաղաքում մի եպիսկոպոս կար, որը ծանր հիվանդացավ: Այնչափ ծանրացավ նրա հիվանդությունը, որ մինչև անգամ բժիշկերն էլ թողեցին նրան, և նա կտրեց ապրելու հույսը: Երբ այս մասին լսեց մայրավանքի սարկավագուհին, թե եպիսկոպոսը մերձիմահ է, և բժիշկներն էլ թողեցին նրան, իր հետ վերցնելով երկու քույրերի՝ գնաց նրա հոգու ավանդմանը ներկա գտնվելու: Երբ տուն մտան, մայրապետը նստեց նրա սնարի մոտ և խոսեց նրա հետ: Քույրերը նստեցին ոտքերի մոտ, և քույրերից մեկը, ձեռքը մեկնելով, բռնեց եպիսկոպոսի ոտքը՝

ստուգելու, թե գուցե արդեն սառել է: Երբ ձեռքը մոտեցրեց ոտքին, եպիսկոպոսն իր անձի մեջ պատերազմ ունեցավ: Երբ սարկավագուհին վեր կացավ գնալու իր վանքը, եպիսկոպոսը նրան աղաչեց և ասաց. «Ձունեմ մեկը, որ իմ տկարության ժամին սպասավորի ինձ: Աղաչում եմ, բարի՛ եղիր թողնել այս քրոջն ինձ մոտ մի երկու օր՝ սպասավորելու ինձ»: Մայրապետը չգիտեր նրա չար մտադրության մասին. թողեց քրոջն այնտեղ և գնաց իր վանքը: Իսկ եպիսկոպոսը զորացավ, չարի ազդմամբ բորբոքվեց մեղքը նրա սրտում, և քրոջն ասաց. «Ինձ համար տաք կերակո՛ւր պատրաստիր, որ ուտեմ»: Եվ նա պատրաստեց, իսկ սա կերավ, ըմպեց և հետո ասաց. «Բարձրացի՛ր իմ անկողինը»: Քույրը բարձրացավ, նա խառնակվեց նրա հետ, կատարեց մեղքը, և քույրը նույն պահին հղիացավ: Իսկ եկեղեցու սպասավորները, երբ տեսան նրան հղիացած, հարցրին. «Ասա՛ մեզ՝ ո՞վ հղիացրեց քեզ», իսկ նա չկամեցավ ասել, այլ լռեց: Եպիսկոպոսն ասաց նրանց. «Ոչինչ չկա ձեր և դրա միջև, թո՛ւյլ տվեք թող գնա. ե՛ս գործեցի այդ մեղքը»: Եվ երբ առողջացավ հիվանդությունից, վեր կացավ անկողնուց, մտավ եկեղեցի, դրեց իր զգեստը սուրբ սեղանի վրա և ձեռքն առնելով ցուպը՝ շուտափույթ դուրս եկավ քաղաքից և գնաց անապատի հեռավորագույն վանքը, ուր ոչ ոք չէր ճանաչում նրան: Իսկ այն վանքի վանահայրը, ում մոտ նա գնում էր, հոգետես էր և իմացավ, որ մի եպիսկոպոս է գալիս իրենց վանք, պատվիրեց դռնապանին և ասաց. «Երբ եպիսկոպոսը գա, իմա՛ց արա ինձ, որպեսզի ուխտով հանդերձ ելնեմ նրան ընդառաջ»: Եվ դռնապանն սպասում էր՝ կարծելով, թե երիվարներով, ամբոխով շրջապատված ու փառքով էր գալու, քանզի չգիտեր այդ գործը: Երբ եպիսկոպոսը եկավ վանքի դուռը՝ մերկ, բոկոտն ու մենակ, չճանաչեց և չտեղեկացրեց նրա գալստյան մասին, սակայն վանահայրը, հոգով իմանալով նրա գալուստը, ելավ նրան ընդառաջ, սիրով ողջունեց նրան, համբուրեց ու ասաց. «Բարի եկար, տե՛ր եպիսկոպոս»: Եպիսկոպոսը զարմացավ և վհատվելով ամաչեց, որ ճանաչվեց, և ինքն իր մեջ ասաց. «Ով իմ անունը գիտե, նա նաև իմ գործը գիտե», և սկսեց ամոթից փախչել, որ այլ վանք գնա: Վանահայրը նրան ասաց. «Դու ուր էլ որ գնաս, ես կգամ քեզ հետ»: Եվ աղաչեց նրան ու մտցրեց վանք, մեծ ուրախությամբ եղբայրների շարքում դասեց նրան: Իսկ նա ապաշխարեց կատարելապես, ճշմարտապես և ջերմ արտասուքներով և այնտեղ վախճանվելով՝ որպես սուրբ գնաց Աստծո առաջ, որովհետև նրա մահվան օրը բազում նշաններ ու բժշկություններ եղան՝ Հիսուս Քրիստոսի շնորհներով: Այսպիսին

է ապաշխարության հույսը. մեղավորները ոչ միայն թողություն են գտնում, այլև շնորհների և փառքի են արժանանում:

119. Մի ծեր գյուղում մի մատակարար ուներ, որն այնքան ժամանակ ուշացավ և չգնաց նրա մոտ, որ ծերի մոտ պակասեց ուտելիքն ու ձեռագործը: Նա, երկար ժամանակ նեղվելով սովից ու պարապությունից, իր աշակերտին ասաց. «Կկամենա՞ս գնալ գյուղ»: Աշակերտն ասաց. «Կանեմ այն, ինչ դու կկամենաս», և թեև վախենում էր մարմնի պատերազմից, սակայն, որպեսզի ծերին անհնազանդ չգտնվի, հանձն առավ գնալ: Եվ ծերն ասաց. «Գնա՛, որդյա՛կ, մեր հայրերի Աստծու վրա հույս ունեմ, որ կպահպանի քեզ փորձությունից»: Եվ աղոթք անելով՝ արձակեց նրան: Երբ նա եկավ գյուղ, պարզվեց, որ մատակարարն իր ընտանիքով հանդերձ գնացել էր գյուղից հեռու՝ մի սրբի տոնակատարության, և միայն նրա դուստրն էր մնացել տանը: Երբ աղջիկը լսեց դռան թակոցը, բացեց դուռը, ներս առավ եղբորը, փակեց դուռն ու սկսեց մաքառել նրա հետ: Իսկ եղբայրը, տեսնելով, որ ինքը հարկադրվում է պղծություն գործել, իր խորհուրդներից նեղված՝ դառնագին հոգոց հանեց և դիմելով Աստծուն՝ ասաց. «Տե՛ր, իմ հոր աղոթքներով փրկի՛ր ինձ այս փորձությունից»: Եվ երբ այս ասաց, նույն պահին իրեն գտավ գետափին՝ իր վանքը տանող ճանապարհին: Նա այսպես ազատվեց Աստծո օգնությամբ և այն սուրբ ծերի աղոթքների շնորհիվ, որ եղբոր հնազանդության համար աղոթելով՝ փրկեց նրան: Այսպիսի զորություն ունի հնազանդությունը:

120. Հայր Պիմենն ասաց. «Գրված է. «Ինչ տեսնի քո աչքը, ա՛յն էլ վկայիր», իսկ ես ասում եմ, որ եթե նույնիսկ իմ աչքով տեսնեմ և ձեռքով բռնեմ, չեմ վկայի այն: Որովհետև մի եղբայր կար, որ դևերից ծանակվեց այս կերպ: Տեսավ մի եղբոր, որ մեղանչում էր մի կնոջ հետ, և պայքարում էր իր խորհուրդի դեմ, որ համբերի և չհանդիմանի նրան, սակայն մինչև վերջ չկարողացավ համբերել և մոտենալով՝ ոտքով հարվածեց նրանց՝ կարծելով, թե նրանք են իրար հետ՝ քուրձով ծածկված, և ասաց. «Դադարեցրե՛ք վերջապես, ինչքա՞ն կարելի է այդ մեղքը գործել»: Եվ ահա պարզվեց, որ ցորենով լի պարկեր են ծածկված քուրձի տակ: Սա նրա համար ասացի, որ եթե աչքով էլ տեսնեք, մի՛ հանդիմանեք ձեր եղբորը»:

121. Ծերին հարցրին գիշերային երազախաբության մասին, որը երազում հոսում է առաջացնում կանանց տեսության միջոցով: Ծերը պատասխանեց. «Այդ երևույթին բնավ նշանակություն մի՛ տուր, այլ դա համարի՛ր այնպիսի մի բան, ինչպիսին մարմնից արտաթորանքն է՝

հիվանդության կամ բնական պահանջմունքների հետևանքով: Նույնն է, թե, օրինակ, շրջես փողոցով և մսի կաթսայից եկող հոտը շնչես, սակայն չճաշակես, այլ միայն հոտն առնես, այդպես էլ երազում տեղի ունեցած հոսումը չի կարող քեզ պղծել, եթե խորհրդով հեռու ես նրա գործերից: Եթե այդպես չլիներ, ոչ ոք չէր կարող փրկվել: Այլ բան է, եթե թշնամին քեզ տեսնի դրանից վախեցած, ավելի կզորանա քո հանդեպ: Դու զգույշ եղի՛ր, որպեսզի արթուն ժամանակ ևս մտքով չշաղախվես ախտեղի խորհուրդների հետ»:

122. Սկիտեի հայրերին ոմանք հարցրին պոռնկության մասին և ասացին. «Եթե գեղեցիկ դեմք տեսնենք, պետք է հիանա՞լ դրանով, թե՞ բարկանալ»: Ծերերը պատասխանեցին. «Զափից ավել հիանալը կամ բարկանալը՝ երկուսն էլ տոփանքի արգասիք են: Այդ գործը նման է այն բանին, որ մեկը, տեսնելով ամեն տեսակ բարիքներով բեռնված սեղանը, կամենա ճաշակել դրանից, բայց ձեռքը չմեկնի դեպի այն, չվերցնի և չճաշակի ու սոված մնա: Այդպես են և ցանկությունները. եթե մարդը գործով չմեղանչի, դա նրան մեղք չի համարվի»:

123. Մեկը աշխարհից հրաժարվելով՝ դարձավ կրոնավոր, և մինչ գնում էր անապատ՝ հեռվում ոմն կրոնավոր ծերի մի նշանաբան տեսավ և մտքում ասաց. «Գնամ դեպի այդ սյունը և այնտեղ բնակվող ծերին սպասավորեմ՝ մինչև իմ մահվան օրը»: Հասնելով տեղ՝ բախեց դուռը, և մի ծեր մենակյաց դուրս գալով՝ հարցրեց. «Քեզ ի՞նչ է պետք, եղբա՛յր»: Եղբայրն ասաց. «Աղոթքի եմ եկել, հա՛յր»: Երբ ծերը լսեց պատասխանը, ընդունեց նրան և բարվոք հանգստացրեց նրան: Հետո ասաց. «Դու որևէ տեղ անելիք ունե՞ս, եղբա՛յր»: Եղբայրն ասաց. «Ո՛չ, հա՛յր, այլ կամենում են այստեղ բնակվել»: Ծերը, սակայն, թույլ չտվեց այնտեղ մնալ կամ բնակվել իր հետ, որովհետև պոռնկության մեջ էր ընկել և դեռևս այնտեղ թաքցրած կին ուներ, դրա համար եղբորն ասաց. «Եթե կամենում ես դու քո հոգին փրկել, գնա՛ վանքում մնա՛, որովհետև ես այստեղ կին ունեմ ինձ հետ և մեղանչում եմ նրա հետ»: Եղբայրը նրան ասաց. «Նա քո քույրն է, թե կինը՝ չգիտեմ, սակայն եկել եմ ցմահ սպասավորելու քեզ»: Ծերը, երբ տեսավ նրա ջերմ սերն ու պատրաստակամությունը, թույլ տվեց բնակվելու այնտեղ: Երբ մի տարին լրացավ, ծերը կնոջն ասաց. «Մեր մեղքերի այս ծանր բեռը մեզ բավական չէ, նաև այս եղբոր հոգու կորուստը պիտի պահանջեն մեզանից: Ե՛կ գնանք այստեղից և սենյակն էլ թողնենք այս եղբորը»: Եվ իրենց հետ վերցնելով այն ամենը, ինչ կարող էին տանել, ելան գնալու և եղբորն ասացին. «Մենք ուխտի ենք գնում և քո խնամքին ենք թող-

նում սենյակը»: Երբ մի փոքր հեռացան, եղբայրն հասկացավ նրանց խորհուրդը, որ այլևս հետ չեն դառնալու, գնաց և հասավ նրանց հետևից: Տեսնելով նրան՝ շփոթվեցին նրանք և ասացին. «Մինչև ե՞րբ, եղբա՛յր, պիտի դատես մեզ: Ահա մեր սենյակը քեզ լինի. նստի՛ր և մնա՛ այնտեղ»: Եղբայրը պատասխանեց. «Ես ձեր սենյակի համար չեմ եկել, այլ ձեզ համար եմ եկել, որ սպասավորեմ ձեզ: Այժմ դուք ուր գնաք՝ ես կգամ ձեզ հետ»: Հիացան նրանք եղբոր միամիտ իմաստությամբ ու հնազանդությամբ. այնժամ երկյուղեցին Աստծուց և ամաչեցին աշակերտից: Ուստի բարի և աստվածային խորհուրդ հղացան՝ հեռանալ մեղքից, և դառնալով իրենց խուղը՝ սկսեցին ապաշխարել: Կինը մտավ կանանց վանք, բնակվեց այնտեղ և մեծապես առաքինացավ, իսկ ծերը համբերությամբ ապաշխարեց ժուժկալ եղբոր հետ. և երկուսն էլ փրկվեցին այն եղբոր բարի համբերատարության շնորհիվ:

124. Սկիտեում մի ծեր կար, որի անունը Դանիել էր: Սա մի աշակերտ ուներ, որը բնակվում էր մեկ այլ աշակերտի հետ, որի անունը Սերգի էր: Որոշ ժամանակ անց Սերգին փոխվեց ի Տեր, և նրա մահից հետո ծերն աշակերտին թույլ տվեց իր հետ մնալ, քանզի շատ էր սիրում նրան: Մի օր ծերը, վերցնելով իր հետ իր աշակերտին, գնաց Ալեքսանդրիա, քանզի Սկիտեի առաջնորդները սովորություն ունեին Ալեքսանդրիայի պապի մոտ գնալ Զատկի տոնին: Քաղաք հասան ժամը տասնմեկին: Եվ երբ ճանապարհ էին գնում, Դանիելն այստեղ տեսավ մի մերկ եղբոր, որը քրձի կտորով միայն իր ամոթույքն էր ծածկել և իրեն խենթի պես էր պահում: Ուրիշ հիմարներ ևս կային նրա հետ, և այդ եղբայրը գնում էր նրանց առջևից՝ ինչպես մոլագար, ճանկում էր վաճառականների կրպակներից՝ ինչ ասես և տալիս էր մյուս հիմարներին: Նրա անունը Մարկոս Իպպացի էր: Քանի որ թագավորական ձիարշավարանում էր գիշերում, ննջում էր նստարանի վրա, օրական ծախսում էր հարյուր դրամ, տասը՝ իր կարիքների համար, իսկ մնացածը տալիս էր իր հիմար ընկերներին, նրան կոչում էին նաև Մարկոս Հիմար, և ողջ Ալեքսանդրիան ճանաչում էր նրան՝ նրա մոլի հիմարության պատճառով: Ծերն իր աշակերտին ասաց. «Գնա՛, տե՛ս՝ որտեղ է բնակվում Մարկոս Հիմարը»: Իսկ նա հարցնելով՝ տեղեկացավ և գալով՝ ծերին ասաց, որ այն հիմարը ձիարշավարանում է բնակվում, իսկ ծերն օթևանեց պապի մոտ: Հաջորդ առավոտյան, երբ ծերն այնտեղից դուրս էր գալիս, Աստծո նախախնամությամբ դռան մոտ նրան հանդիպեց Մարկոս Սալոնը (Հիմարը), և ծերը փութով բռնեց նրան և սկսեց բարձր ձայնով աղաղակել. «Ալեքսանդրացիներ, օգնեցե՛ք

ինձ»: Իսկ հիմարը ծաղրում էր նրան: Հավաքվեց ողջ քաղաքն այնտեղ, իսկ ծերի աշակերտն հեռվից ահով հետևում էր անցուդարձին, ոմանք էլ ասում էին. «Գուցե անարգի քեզ, հա՛յր, որովհետև հիմար է ու մոլագար»: Իսկ նա ասաց. «Հիմարը և մոլագարը մենք ենք, որդյակնե՛ր, սակայն ես այլ մարդ չգտա այս քաղաքում, բացի սրանից»: Այդժամ եկան նաև եկեղեցու քահանաները, որոնք ճանաչում էին ծերին և ասացին. «Մի՞թե քեզ որևէ բանով վնասեց այդ հիմարը»: Ծերը նրանց ասաց. «Բերե՛ք դրան իմ հետևից՝ պապի մոտ, քանզի այս քաղաքում այսօր դրանից սուրբ անոթ չկա»: Իսկ պապն իմացավ, որ դա Աստծուց հայտնվեց ծերին, ընկավ հիմարի ոտքերը, երդվեցրեց, աղաչեց և ասաց. «Հայտնի՛ր մեզ քո անձն ու քո գործը»: Իսկ նա, տեղի տալով նրանց աղաչանքներին ու իր մտացնորությունից սթափվելով, ասաց. «Ես կրոնավոր էի և տասնվեց տարի բռնադատվում էի պոռնկության դևից: Ուշքի գալով՝ իմ մտքում ասացի. «Եղկելի՛ Մարկոս, տասնվեց տարի է՝ ծառայում ես թշնամուն: Այժմ ե՛կ և այդպես ծառայի՛ր քո Քրիստոս թագավորին»: Եվ գնացի Պեմպոյի վանք ու այնտեղ ութ տարի մնացի խոր վիրապում: Ութ տարուց հետո իմ անձին ասացի. «Մարկո՛ս աղքատ, մտի՛ր քաղաք և ևս ութ տարի այնտեղ հիմար եղի՛ր: Ահա այսօր լրացավ իմ հիմարության ութ տարին»: Երբ նրանից լսեցին այս, բոլորը ողբացին նրա այս խոսքերի վրա: Իր պատմությունն անելուց հետո նույն օրը Մարկոսը մահացավ ծերի մոտ՝ պատրիարքարանում: Առավոտյան, երբ տեսան, որ Մարկոսը ննջել է և դիացել, ծերն այդ մասին հաղորդեց պապին, որն էլ իր հերթին պատմեց դուքսին, իսկ դուքսը հրամայեց դադարեցնել քաղաքի զվարճանքներն ու առքուվաճառքը, և այնտեղ հավաքվեց ողջ քաղաքը: Ծերն Սկիտե ուղարկեց իր աշակերտին և ասաց. «Հավաքե՛ք բոլոր եղբայրներին և պատմե՛ք այս, որպեսզի ամենքն այստեղ գան և օրհնվեն սրանից»: Եվ դուրս եկավ ողջ Սկիտեն՝ սպիտակ զգեստներով և ձեռքին՝ արմավենու ճյուղեր, այսպես նաև՝ ենետացիք, խցերի, Նիտրիո լեռան վանքի ու Ալեքսանդրիայի բոլոր վանքերի կրոնավորները: Եվ կրոնավորների այնպիսի բազմություն հավաքվեց, որ հինգ օր թույլ չտվեցին թաղելու նրան: Ալեքսանդրիայի բնակիչները արմավենու ճյուղերով ելան և թրջեցին դետինն արցունքներով: Եվ այդպես դուրս բերին երանելի Մարկոս Սալոնի նշխարները՝ թաղելու և փառավորեցին Աստծուն, որ շնորհ և համբերատարություն է տալիս նրանց, ովքեր ընթանում են դեպի Տերը:

ԳԼՈՒԽ Զ

ԱՆԸՆԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ոմն եղբայր թողեց աշխարհը, ունեցվածքը բաժանեց աղքատներին և մի փոքր դրանից թողնելով իր կարիքների համար՝ գնաց աբբա Անտոնիոսի մոտ: Իմանալով այդ՝ ծերը նրան ասաց. «Կամենո՞ւմ ես լինել մենակյաց՝ գնա՛ այսինչ գյուղը, մի՛ս գնիր, կապի՛ր մերկ մարմնիդ վրա և ե՛կ այստեղ»: Երբ եղբայրը կատարեց այս, ծերի մոտ գալու ճանապարհին գազաններն ու թռչունները խոցոտեցին նրա մարմինը, և գալով՝ նա ցույց տվեց իր խոցոտված մարմինը: Սուրբ Անտոնիոսը նրան ասաց. «Նրանք, ովքեր թողնում են աշխարհը և կամենում են ինչք ունենալ, այսպես կխոցոտվեն դիվական մարտից»:

2. Հայր Թեոդորոս Փերմացու մասին ասում էին, թե երիտասարդ հասակում երեք Սուրբ Գիրք ստացավ և հայր Մակարիոսին ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, տե՛ր, պահե՞մ Գրքերն ինձ մոտ՝ իմ օգտի համար, որպեսզի կարդամ և ուրիշներն էլ տամ՝ ովքեր կկամենան կարդալ, թե՞ վաճառեմ դրանք և տամ աղքատներին»: Հայր Մակարիոսն ասաց նրան. «Առաջին երկու մտադրություններն էլ ազնիվ են, սակայն մեծագույնը անընչությունն է»: Լսելով այս՝ Հայր Թեոդորոսը շուտափույթ վաճառեց Գրքերը և տվեց աղքատներին»:

3. Հայր Մարկոսն հարցրեց հայր Արսենին. «Բարի՞ է, որ ոչ ոք մխիթարություն չունենա իր խցում, քանզի մի եղբոր գիտեմ, որ մի քիչ բանջարեղեն ուներ տնկած և այն էլ արմատախիլ արեց»: Հայր Արսենն ասաց. «Ազնիվ է, սակայն մարդու բնավորությունից է կախված, քանզի եթե ոք չունի այդ կարգի զորություն, նորից կտնկի»:

4. Ոմն մեծահարուստ հեռավոր կողմերից եկավ Սկյութիա և մեծ քանակությամբ ոսկի բերեց իր հետ ու երեցին աղաչեց, որ այն բաշխի եղբայրներին: Վերջինս, երբ շատ բռնադատվեց նրա կողմից, ոսկին լցրեց զամբյուղի մեջ, դրեց եկեղեցու դռանը և ասաց. «Եղբայրնե՛ր,

եթե որևէ մեկին պետք է սրանից, թո՛ղ վերցնի»: Ոչ ոք չմոտեցավ դրան, իսկ ոմանք նույնիսկ չնայեցին դրա կողմը: Այնժամ մեծահարուստին ասացին. «Գնա՛ խաղաղությամբ, Աստված ընդունեց քո պատարագը (զոհաբերությունը), և տո՛ւր այդ աղքատներին»: Եվ մեծապես օգուտ քաղած՝ գնաց մեծահարուստը:

5. Հայր Դանիելն ասում էր, թե հայր Արսենը մի անգամ հիվանդացավ Սկյութիայում: Նրան ինչ-որ բան պետք եղավ, բայց քանի որ չէր կարող գնել, մեկ ուրիշից խնդրելով վերցրեց և ասաց. «Գոհանում եմ Քեզանից, Տե՛ր, որ արժանի արեցիր ինձ բարություն ընդունել հանուն Քո անվան»:

6. Դարձյալ պատմեց հայր Դանիելը, թե մեկ ուրիշ անգամ մի մագիստրոս եկավ հայր Արսենի մոտ և նրան հսկայական ժառանգություն թողած մի ազգականի կտակը բերեց: Հայր Արսենը կամենում էր պատռել, իսկ մագիստրոսը նրա առաջ ընկած աղաչում էր ու ասում. «Աղաչում եմ քեզ, հա՛յր, մի՛ պատռիր դա, ապա թե ոչ՝ իմ գլուխը կկտրվի»: Հայր Արսենը նրան ասաց. «Ես այդ մարդուց առաջ մեռա աշխարհի համար, իսկ նա հիմա վախճանվեց», և հետ վերադարձրեց կտակը՝ ոչինչ չվերցնելով իրեն:

7. Սրբերից մեկը՝ Փիլագրիոս անունով, բնակվում էր Երուսաղեմում և գործում էր, որ իր հացը վաստակի: Մինչ փողոցում վաճառում էր իր ձեռագործը, ահա մեկը գցեց իր քսակը, որի մեջ հազար դահեկան կար: Ծերը, գտնելով այն, մնաց նույն տեղում՝ ասելով թե՝ ով կորցրեց, նորից գալու է այս տեղը: Եվ նա եկավ՝ լալով ու արտասվելով: Ծերը տեսնելով նրան՝ մի կողմ տարավ և քսակը տվեց նրան: Իսկ այն մարդը բաց չէր թողնում նրան՝ կամենալով գեթ մի բանով վարձահատույց լինել, իսկ սուրբը չէր կամենում ոչինչ վերցնել: Այնժամ մարդն սկսեց աղաղակել և ասել. «Եկե՛ք, տեսե՛ք՝ ինչ արեց Աստծո մարդը»: Իսկ ծերը գաղտնի փախավ քաղաքից, որպեսզի իր արածի համար չճանաչեն իրեն և պատվի չարժանացնեն:

8. Մի անգամ մարդասեր հելլենացիներից ոմանք եկան Սկիտե՝ եղբայրներին բարերարություն անելու, և իրենց հետ վերցրին վանքի սպասավորներին, որպեսզի նրանք ցույց տան, թե ովքեր են առավել կարիքավորները: Եվ նրանք սրանց տարան մի տկար եղբոր մոտ, որպեսզի նրան տան: Իսկ նա չէր կամենում ընդունել՝ ասելով. «Ահա այս փոքրաքանակ արմավենու ճյուղերն ունեմ, գործում եմ, մանում, և վաստակում եմ հացս»: Եվ դարձյալ տարան մի այրի կնոջ խուղը, որը

մի դուստր ուներ: Բախեցին դուռը, իսկ դուստրը չէր բացում, քանզի մերկ էր, իսկ մայրը գնացել էր գործ փնտրելու, քանզի լվացքարար էր: Երբ նրան մերկ տեսան, ցանկացան փող և հանդերձներ տալ, իսկ նա չկամեցավ վերցնել: Եկավ մայրը և ասաց. «Քաջալերվի՛ր, դո՛ւստր իմ, կամեցավ Աստված, և այսօր գործ գտա. ունենք մեր կերակուրը»: Երբ նրանք աղաչեցին, որ ընդունի իրենց բերածը, չկամեցավ վերցնել՝ ասելով. «Աստված է իմ մասին հոգացողը, և դուք կամենում եք այն վերցնե՞լ ինձնից այսօր»: Եվ նրանք լսելով՝ փառավորեցին Աստծուն:

9. Ոմն հիվանդ ծեր կար, որին ընդունեց միաբանության վանահայրը, քանի որ կարիքները հոգալու համար ոչինչ չուներ: Միաբանության հայրապետը օթևան տվեց նրան և եղբայրներին ասաց. «Փոքր-ինչ նեղությո՛ւն քաշեք հիվանդի խնամատարության համար»: Հիվանդը ոսկով լի մի պուտուկ ուներ, որը, փորելով, թաքցրեց իր մահճակալի տակ: Այնպես ստացվեց, որ առանց խոստովանության՝ մեռավ: Նրա մահվանից և թաղումից հետո հայրապետն ասաց եղբայրներին. «Այդ անկողինը վերցրե՛ք այդտեղից»: Երբ անկողինն իջեցրին, հայտնաբերեցին ոսկին, և հայրապետն ասաց. «Իր կենդանության ժամանակ չխոստովանեց, այլ դրա վրա էր հույսը դրել. մահվան ժամանակ էլ չասաց: Ջմոտենա՛ք դրան, այլ տարե՛ք և այն իր հետ թաղեցե՛ք»: Եվ երբ ոսկին ևս թաղեցին նրա գերեզմանում, երկնից հուր իջավ և բոլորի աչքի առաջ այրեց նրա գերեզմանը, և ովքեր տեսան, զարմացան և փառավորեցին Աստծուն»:

10. Պատմեցին հայրերից ոմանք, թե մի եղբայր, որի հագին կարճ պարեգոտ էր, եկավ հայր Իսահակի մոտ՝ նրա միաբանություն: Ծերը նրան վտարեց՝ ասելով. «Սա միաբանների բնակավայր է, իսկ դու աշխարհական ես և չես կարող բնակվել այստեղ»:

11. Հայր Իսահակը եղբայրներին ասաց. «Մեր հայրերն ու հայր Պամբոն կոշտ հյուսվածքով քուրձեր, կտավ ու արմավահյուս հանդերձներ էին հագնում, իսկ դուք այժմ մեծագին զգեստներ եք հագնում: Հեռացե՛ք այստեղից, քանզի խաթարում եք այս բնակավայրը»: Եվ երբ կամենում էին գնալ հնձի, ասաց նրանց. «Ձեզ պատվիրան չեմ տալիս, որովհետև չեք պահի, սակայն այս եմ աղաչում ձեզ. երբ որևէ տեղ գնաք, ասացե՛ք, թե լեռից ենք, մի՛ ասեք, թե խցերից եք, որպեսզի այս տեղը չհայհոյվի ձեր պատճառով»:

12. Հայր Մովսես Սկյութացու մասին ասում էին, թե երբ պատրաստվում էր մտնել քարայրի մեջ՝ բնակվելու, հոգնեց ճանապարհին

և ինքն իրեն ասաց. «Ես ինչպե՞ս պիտի բերեմ իմ ջուրն այստեղ»: Եվ ձայն եկավ նրան, որ ասաց. «Մտի՛ր և հոգս մի՛ արա»: Մտավ և բնակվեց այնտեղ: Մի քանի ծերեր եկան նրա մոտ, իսկ նա իր ունեցած սափոր ջուրը սպառեց ոսպնաթան եփելու համար: Շատ էր նեղվում ծերը, և անընդհատ ներս ու դուրս անելով՝ աղոթում էր Աստծուն ջրի համար: Եվ ահա մի անձրևաբեր ամպ եկավ վեմի դիմաց, և դրա անձրևից բոլորը իրենց ունեցած ամանները լցրին ջրով: Սրանից հետո ծերին ասացին. «Ասա՛ մեզ, ինչո՞ւ էիր ելնում և մտնում»: Եվ ծերն ասաց. «Դատ էի վարում Աստծո հետ և ասում. «Դու ինձ բերիր այստեղ, և ահա ջուր չունեմ, որ քո ծառաներն ըմպեն». դրա համար էի ելումուտ անում՝ աղաչելով Աստծուն, մինչև որ մեզ ջուր ուղարկեց»:

13. Ծերերից մեկը Հովհաննես Պարսիկի մասին պատմեց, թե նա իր բարձրագույն առաքինության արդյունքում ընկավ պարզամիտ անմեղության մեջ: Երբ սա Եգիպտոսի Արաբիայում էր, մի անգամ մի եղբորից փոխ առավ մեկ դահեկան և կտավ գնեց, որպեսզի գործի: Եկավ մի եղբայր, աղաչեց նրան և ասաց. «Ինձ մի քիչ կտավ չնորհի՛ր, որ ինձ համար հանդերձ կարեմ»: Նա ուրախությամբ տվեց նրան: Մեկ ուրիշը դարձյալ աղաչեց նրան, որ իրեն կտավ տա՝ ղենջակ կարելու համար: Նրան էլ տվեց, ինչպես նաև նրանց, ովքեր խնդրում էին, բոլորին ուրախությամբ տվեց: Դրանից հետո եկավ դահեկանի տերը և պահանջեց փողը: Ծերն ասաց. «Գնամ և բերեմ քեզ քո դահեկանը»: Եվ որովհետև ոչ մի տեղից չէր կարող տալ, գնաց՝ հայր Հակոբից խնդրելու դահեկանը, որ վերադարձնի եղբորը: Մինչ գնում էր՝ մի դահեկան տեսավ գետնին ընկած և չմոտեցավ դրան, այլ աղոթք անելով դարձավ իր խուղը: Եղբայրը, կրկին գալով, նեղում էր նրան դահեկանի համար, նա էլ ասում էր. «Հաստատ կբերեմ»: Եվ դուրս գալով՝ դարձյալ նույն տեղում տեսավ ընկած դահեկանը և դարձյալ աղոթք անելով՝ վերադարձավ խրճիթ: Եղբայրը մյուս անգամ եկավ, նեղեց ու չտապեցրեց նրան: Ծերն ասաց. «Այս անգամ հաստատ կբերեմ դահեկանը»: Եվ վեր կենալով դարձյալ եկավ նույն տեղը, գտավ դահեկանը և աղոթք անելով՝ վերցրեց դահեկանը, եկավ հայր Հակոբի մոտ և նրան ասաց. «Մինչ քեզ մոտ էի գալիս, հա՛յր, այս դահեկանը գտա ճանապարհին: Բարի՛ եղիր, հա՛յր, և հրապարակի՛ր ամենուր, թե ո՞վ է կորցրել այս դահեկանը, և եթե դրա տերը գտնվի, տո՛ւր նրան»: Եվ ծերը գնալով՝ երեք օր աղաղակեց ու ոչ մի տեղ չգտավ դահեկանի տիրոջը: Այնժամ Հովհաննես Պարսիկը հայր Հակոբին ասաց. «Եթե ոչ ոք չի կորցրել դա, ապա տո՛ւր այդ այսինչ անունով եղբորը, քանզի

պարտք եմ նրան. ես քեզնից էի ուզում սիրով առնել դա ու գտա ճանապարհին»: Եվ հայր Հակոբը զարմացավ, թե ինչո՞ւ՝ պարտք էր և գտավ, սակայն նույն պահին չվերցրեց և տվեց, այլ որպես թե՝ սիրով մեկից առնելով տվեց: Եվ այս էր նրա սքանչելի սովորությունը. եթե մեկը գալիս էր նրանից մի բան խնդրելու, ոչ թե ինքն էր տալիս, այլ եղբորն ասում էր. «Գնա ի՛նքդ վերցրու՝ ինչ պետք է», իսկ եթե մեկը մի բան էր վերադարձնում, նրան ասում էր. «Դի՛ր դարձյալ իր տեղը», իսկ եթե չէին վերադարձնում, ամենևին ոչինչ չէր ասում:

14. Աբբա Մակարիոսը, երբ եկավ Եգիպտոսի իր սենյակը, մի մարդ գտավ, որն իր հետ բերած ոչխարը մտցրեց սենյակ, և ոչխարը մայեց: Հայրը, երկար լռությունից հետո, արձակեց ոչխարին և աշխարհականին ասաց. «Զե՛նք մերձենա դրան. Տերը տնօրինեց՝ ինչպես Ինքը կամեցավ, և այդպես էլ եղավ. օրհնյալ է Տերն ամեն ինչում»:

15. Ոմն ծեր ասաց. «Երբ մարդ ճաշակի անընչության քաղցրությունը, ծանր կհամարի նաև այն զգեստը, որ հագին է, և ջրի կուժը, քանզի նրա միտքը այլ կողմի վրա է ժուժկալում: Ով նյութն ատի՝ կարող է ատել նաև իր անձը: Եթե մարմնին անհրաժեշտը պակասի, մի՛ ասա մարդու, որ քեզ տա այն, այլ քո հոգսը գցի՛ր Աստծո վրա, իսկ եթե թողնես Աստծուն և մարդկանցից խնդրես՝ ուրեմն չես հավատում, թե Աստված կարող է օգնել քեզ»:

16. Ոմն ծեր աղոթքի ժամանակ մեծ տեսիլքներ էր տեսնում: Մի զորավար եկավ և նրան դահեկաններ տվեց, իսկ ծերը վերցրեց: Եվ երբ վերցրեց, չէր կարողանում այն նույն տեսիլքները տեսնել ու զարհուրեց: Քննեց իր խորհուրդները և ոչ մի պատճառ չգտավ: Ապա աղաչեց Աստծուն՝ հայտնել իրեն իսկությունը: Հրեշտակը նրան ասաց. «Քանի դեռ քեզ մոտ են դահեկանները, արժանի չես լինի տեսիլքներ տեսնելու, քանզի դահեկանների չափով դու էլ մաս ունես զորավարի չար գործերի մեջ: Եթե կամենում ես՝ վերադարձրո՛ւ զորավարին, կամ՝ եթե կամենում ես՝ տո՛ւր կարոտյալներին: Պահելը կրոնավորի գործ չէ, և ոչ էլ Աստծուն է հաճո»: Եվ ծերը, հավաքելով եղբայրներին, պատմեց նրանց, և այնուհետև ոչինչ չէին վերցնում աշխարհականներից, այլ ասում էին. «Տվե՛ք կարոտյալներին, և մենք կաղոթենք ձեզ համար»:

17. Հայրերից մեկը պատմեց մի պարտիզպանի մասին, որը մշակում էր պարտեզը և վաստակածը բաշխում էր աղքատներին: Դրանից հետո նրա խորհուրդները նրան ասացին. «Մի քիչ դրա՛մ խնայիր քեզ

համար, գուցե ծերանաս, և պետք դա քեզ»: Կուտակեց և լցրեց մի սափորի մեջ: Եվ նրա ոտքը ախտահարվեց, և դրամը ծախսեց բժիշկների վրա, սակայն ոչինչ չօգնեց: Հետո եկավ մի հմուտ բժիշկ և ասաց. «Եթե քո ոտքը չկտրվի, ամբողջ մարմինդ կվարակվի»: Եվ պայմանավորվեցին, որ հաջորդ օրը դա և ոտքը կտրի: Գիշերը մտածմունքների մեջ հոգոց հանեց, լաց եղավ և ասաց. «Հիշի՛ր, Տե՛ր, իմ նախկին օրերն ու իմ վաստակը»: Եվ մեկը կանգնեց նրա կողքին ու հարցրեց. «Ո՞ւր են դրամները»: Եվ նա ասաց. «Մեղանչեցի, թողությո՛ւն տուր ինձ այս անգամ»: Եվ եկողը ձեռքով հպվեց նրա ոտքին, որն իսկույն ևեթ առողջացավ, և վեր կենալով՝ գնաց իր գործին: Երբ առավոտյան բժիշկը եկավ, նրան ասացին. «Գիշերով գնաց իր գործին»: Եվ բժիշկը լսելով այս՝ փառավորեց Աստծուն:

18. Հայր Պամբոն ասաց. «Կրոնավորի զգեստը այնպիսին պիտի լինի, որ երեք օր ընկած լինի փողոցում, և ոչ ոք չվերցնի այն իր վատթարության պատճառով»:

18. Հայր Իսիդորոսն ասաց. «Եթե դու Երկնքի Արքայությանն ես բաղձում, արհամարհի՛ր նյութականը և Աստծո սիրո՛ւն հետևիր, քանզի ոչ ոք չի կարող Աստծո մեջ ապրել, եթե որկրամոլ է և արծաթասեր»:

19. Աշխարհից հեռացած մեկի մասին պատմում էին, թե միայն մի վերարկու ուներ հագին: Սա գնաց անապատ ու երեք օր շրջեց այնտեղ: Ի վերջո նստեց մի ժայռի վրա և տեսավ ներքևում կանաչ խոտ ու մի մարդու, ով անասունի պես արածում էր այն: Գաղտագողի իջավ ժայռից և բռնեց նրան: Նա թափահարում էր իրեն, որպեսզի դուրս պրծնի, քանզի մարդկային հոտը չէր կարողանում տանել, և ի վերջո զորանալով՝ դուրս պրծավ նրանից և փախավ: Եղբայրը վազեց նրա հետևից, աղաղակեց ու ասաց. «Հանուն Աստծո կա՛նգ առ»: Փախչողը ետ դարձավ և ասաց. «Ես հանուն Աստծո եմ փախչում քեզանից», և շարունակեց փախչել: Եղբայրը հանեց և դեն նետեց վերարկուն ու շարունակեց վազել նրա հետևից: Երբ փախչողը տեսավ, որ նա մերկացավ, ետ դարձավ, մոտեցավ նրան և ասաց. «Դեն նետեցիր քեզանից աշխարհի նյութը, դրա համար քեզ սպասեցի»: Եղբայրը նրան աղաչեց և ասաց. «Ինձ խո՛սք ասա, որ փրկվեմ»: Եվ նա ասաց. «Փախի՛ր մարդկանցից և կփրկվես»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

21. Հայր Աղաթոնի մասին ասում էին, թե բազում օրեր իր աշակերտների հետ սենյակ էր չինում: Երբ ավարտեց տունը և կամենում էր բնակվել այնտեղ, այդ օրը տեսիլք տեսավ, որ իր գործը բարի չէ, և աշակերտներին ասաց. «Եկե՛ք գնանք այստեղից»: Իսկ նրանք սաստիկ տրտմեցին և իրենց մեջ ասացին. «Եթե կամենում էր այստեղից գնալ, մենք ինչո՞ւ զուր աշխատեցինք և չինեցինք դա: Հիմա ոմանք կծաղրեն մեզ և կասեն. "Դարձյալ գնացին այդ թափառաշրջիկները"»: Երբ ծերը նրանց տեսավ այդպես տրտմած՝ ասաց. «Թեկուզ և ոմանք ծաղրեն մեզ, սակայն ոմանք էլ օգուտ կքաղեն և կասեն. «Երանի սրանց, որովհետև հանուն Աստծո են շրջում և աշխարհիկ ամեն ինչ արհամարհում են»: Որդյակնե՛ր, եթե դուք չգաք էլ, ես գնալու եմ»: Եվ նրանք գնացին նրա հետևից, և ուր էլ շրջում էր նա՝ ոչինչ չէր վերցնում իր հետ, բացի իր ունեցած արմավահատ մկրատից:

22. Ոմն եղբայր եկավ հայր Աղաթոնի մոտ և ապրում էր նրա հետ: Մի անգամ այս եղբայրը, երբ ճանապարհ էր գնում, գտավ մի կտոր բորակ և վերցնելով այն՝ տարավ հորը: Ծերն ասաց. «Որտեղի՞ց է սա»: Եղբայրը պատասխանեց. «Ճանապարհի վրա գտա սա, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Եթե եկել ես Աղաթոնի հետ բնակվելու, ապա մի՛ վերցրու այն, ինչ որ դու չես դրել»: Եվ ուղարկեց նրան վերցրածը տեղը դնելու:

23. Հայր Գելասիոսի մասին ասում էին, թե իր երիտասարդությունից ի վեր անինչ և մենակյաց ընթացք էր բռնել: Այն ժամանակ շատերը կային, որ նույն առաքինությանն էին հասել, որոնցից էր մի սքանչելի և իսպառ անինչ ծեր, որն իր կյանքի բոլոր օրերն ապրեց մի դատարկ քարայրում: Սա աշակերտ ուներ, և երկուսն էլ երբեք երկու զգեստ չունեցան, ոչ էլ հոգս արեցին վաղվա օրվա մասին: Իսկ հայր Գելասիոսը, երբ տեսիլքի մեջ հրաման ստացավ վանք շինել, գեղջուկները նրա համար բերեցին ամեն անհրաժեշտ մանրուք և վանքի սպասավորության համար՝ ավանակներ, եզներ և մեծաքանակ անհրաժեշտ նյութեր, այնքան, որ մինչև անգամ հայր Պախումեոսին ևս տվեց, երբ վերջինս նույնպես վանք էր կառուցում: Վերոհիշյալ հայրը, երբ տեսավ այս ամենը, նրան ասաց. «Երկյուղում եմ, հա՛յր Գելասիոս, թե դուցե քո մտքերը կապվեն քո վանքի պիտույքների համար ագարակներ և գյուղեր ձեռք բերելու ցանկությանը»: Հայր Գելասիոսը նրան

ասաց. «Եթե քո մտքերը կապվեն այդ հերունին, որով դու կարում ես, ապա իմ մտքերն էլ կկապվեն նյութական ինչ-որ բանի»:

24. Հայր Գելասիոս մենակյացի մասին ասում էին, թե երեսուն տարի բոլորովին մերկ և միայնակ շրջում էր անապատներում:

25. Հայր Եպրեսիոսն ասաց. «Նյութական ամեն բան քաշում-ձգում է դեպի ներքև, և ով որ սիրում է երկիրը, նա նաև նրա նյութն է սիրում: Ով դրա նյութը չի սիրում, եթե նույնիսկ հոգու կարիքների համար պետքական ինչ-որ բանի կորուստ ունենա, դարձյալ մեծապես ուրախ կլինի դրանից ազատվելու համար»:

26. Հայր Իսիդորոսն ասաց. «Ծանր, անխոհեմ և անչափ է նյութականի նկատմամբ սերը, որը բոլորովին հագեցում չունի և վերջին չարության է հասցնում հոգին: Պետք է ամենից առաջ փախչել դրանից, որովհետև եթե բնակվեց քո մեջ, կհաղթի քեզ և կորստյան կմատնի»:

27. Հայր Հուլիանոսի մասին ասում էին, թե յոթանասուն տարի բնակվեց մի փոքրիկ քարայրի մեջ և ոչինչ ձեռք չբերեց աշխարհիկ պիտույքներից, բացի մի մազեղեն հնացած փիլոնից, մի խորից և մի փայտյա թասից:

28. Հայր Կասիանոսը պատմեց, թե մի իշխան կրոնավոր դարձավ, բաժանեց իր ողջ ունեցվածքն աղքատներին և մի փոքր պահեց իր կարիքների համար, սակայն հանձն չառավ կատարյալ հնազանդություն, խոնարհություն, անընչություն և համաձայնություն՝ չունենալու անգամ անձնական մեկ ասեղ: Սրան մեծն Բալիսիոսն այսպես պատասխանեց. «Քո իշխանությունը կորցրիր, սակայն միանձնություն չգտար»:

29. Մի անգամ եղբայրները գնալով Սկիտե՝ հայր Մակարիոսի մոտ, նրա տանը ոչինչ չգտան, բացի հոտած ջրից, և նրան ասացին. «Ե՛կ մեզ հետ, հա՛յր, քեզ տանենք գյուղ, որպեսզի մի փոքր մխիթարություն առնես»: Ծերը նրանց ասաց. «Այդ գյուղում գիտե՞ք այսինչ մարդու հացի փուռը»: Ասացին՝ այո՛: Ծերն ասաց. «Գիտեմ և ես, և երբ կամենամ գալ՝ ինքս կգամ. ձեր առաջնորդության կարիքը ես չունեմ»:

30. Հայր Մեգեթոնի մասին ասում էին, թե երբ դուրս էր գալիս սենյակից և կամենում էր գնալ որևէ տեղ, ետ չէր դառնում տան դուռը փակելու, որովհետև այնտեղ ոչինչ չուներ, բացի մկրատից և արմավի տերևներից:

31. Մեկը հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև տառապում եմ իմ ձեռագործը վաճառելիս»: Ծերը պատասխանեց. «Բոլոր հայրերն էլ ձեռագործ էին վաճառում, և դա հոգուն վնաս չէ, սակայն դու մեկ անգամ գինը ցածր դի՛ր, և ով որքան կտա՝ առանց առարկության վերցրո՛ւ և չես տառապի, այլ հանգիստ կլինես»: Եղբայրը հարցրեց. «Իսկ եթե այլ տեղից ինձ անհրաժեշտը ձեռք բերեմ, պե՞տք է, որ թողնեմ ձեռագործը»: Ծերն ասաց. «Բնավ ձեռագործը չթողնես, այլ անխռով կգործես»:

32. Հայր Սիլովանեի մասին ասում էին, թե նրա աշակերտները առանց նրա հրահանգի քանդեցին պարտեզի ցանկապատը և դեպի դուրս տանելով՝ ընդարձակեցին այն: Երբ ծերն այդ իմացավ, ուսին գցեց իր մաղախը, դուրս եկավ նրանց մոտ և ասաց. «Աղոթե՛ք ինձ համար, եղբայրնե՛ր» և գնաց: Իսկ նրանք, երբ տեսան նրան այդպես, վազեցին ընկան նրա առջև և ասացին. «Ի՞նչ եղավ, հա՛յր, ասա՛ մեզ»: Ծերն ասաց. «Ետ չեմ դառնա և ոչ էլ այստեղ կմնամ, եթե դուք չքանդեք պարտեզի ցանկապատը և չդնեք իր նախկին տեղը»: Եվ նրանք նույն պահին էլ այդպես արեցին:

33. Հայր Սիլովանեն ասաց. «Ես իմ Տիրոջն եմ ծառայում, իսկ իմ Տերը պատվիրեց ինձ և ասաց. «Դու տքնի՛ր իմ գործի մեջ, և ես կկերակրեմ քեզ, և դու ուրիշներից մի՛ խնդրիր որևէ բան»: Արդ՝ եթե աշխատեմ՝ իմ վաստակը կուտեմ, եթե չաշխատեմ՝ ուրիշների արած ողորմությունը կուտեմ»:

34. Մի եղբայր հարցրեց հայր Սրապիոնին և ասաց. «Հա՛յր, ինձ խրատական խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Ի՞նչ ասեմ քեզ, եղբա՛յր, որովհետև դու վերցրել ես սրբերի և այրիների ունեցվածքն ու լցրել քո պատուհանին» (որովհետև տեսավ, որ նրա պատուհանը լի էր գրքերով):

35. Հայր Սինկլիտիկոսին մեկը հարցրեց. «Հա՛յր, բարի՞ է ընդհանրապես ոչինչ չունենալ», և նա ասաց. «Կատարելապես բարի է նրանց անընչությունը, ովքեր կարող են տանել այդ. քանզի ովքեր այդպես են անում, մարմնական նեղություններ են կրում, սակայն նրանց հոգիները մեծապես շահում են և հանգիստ առնում: Ինչպես օրինակ՝ ամուր հանդերձն է, որ լվացվում է, ոտքով տրորվում, շուռ տրվում, քաշքշվում ու քամվում՝ և դրանից չի պատռվում, այդպես էլ անիչք անձը՝ իր վրա եկած փորձություններից առավել է ամրանում»:

36. Տամիաթիայի քահանա հայր Զոյիլոսն ասաց, թե յոթ հռոմեացի սենատոր իշխաններ՝ հայր Արսենիոսի նկատմամբ բարենախանձ, եկան Սկիտեի անապատ և դարձան մենակյացներ: Եվ այնպիսի խոնարհության և աղքատության տվեցին իրենց անձերը, որ մինչև իսկ նրանց ամանը կրիայի պատյանն էր, և ասացին. «Գուցե Աստված տեսնի մեր տքնությունը և թողնի մեր մեղքերը»:

37. Ոմն եղբայր կամեցավ կրոնավոր լինել, գնաց ծերի մոտ և նրան հայտնեց այդ: Ծերը նրան ասաց. «Չե՛ս կարող», իսկ նա ասաց՝ կարո՛ղ եմ: Ծերն ասաց. «Եթե կամենում ես կրոնավոր դառնալ, գնա՛ բաժանի՛ր քո ունեցվածքը և ե՛կ նստի՛ր քո սենյակում»: Եղբայրը գնաց, բաշխեց իր ունեցվածքն աղքատներին, սակայն թողեց հարյուր դահեկան և այդպես եկավ ծերի մոտ: Ծերը ցույց տվեց այն սենյակը, որտեղ նա պետք է նստեր: Եվ նա նստեց: Մի քանի օր անց նրա խորհուրդներն ասացին. «Խցիդ դուռը հնացել է, նորոգի՛ր դա»: Եկավ և ծերին պատմեց, թե խորհուրդներն իրեն հանգիստ չեն տալիս խցի դուռը նորոգելու համար: Ծերը նրան ասաց. «Զասացի՞ քեզ, թե բաժանի՛ր քո ունեցվածքը: Մնացածն էլ գնա՛ բաժանի՛ր»: Եվ եղբայրն արեց պատվիրածը, սակայն դարձյալ պահեց տասը դահեկան: Որոշ ժամանակ անց խորհուրդներն ասացին. «Խուցի ձեղունը հին է և փտած. դու պետք է չինես դա»: Գնաց և պատմեց ծերին: Ծերն ասաց. «Էլի՞ ոսկի ունես. գնա՛ դա էլ բաժանի՛ր, որ հանգստանաս»: Եղբայրը գնաց այդ տասը դահեկանն էլ բաժանեց և գալով՝ ծերին ասաց. «Հրաժարվեցի ամեն ինչից, հա՛յր, ըստ քո խոսքի»: Ծերն ասաց. «Բարի գործ արեցիր: Հիմա գնա նստի՛ր քո սենյակում»: Նա գնաց նստեց այնտեղ և լռության մեջ ապրեց իր ողջ կյանքում:

38. Մի երիտասարդ խորհում էր ելնել աշխարհից և միանձնանալ, և բազում անգամ ելավ, որ գնա վանք, սակայն խորհուրդները նրան արգելեցին, քանզի խիստ մեծահարուստ էր: Մի անգամ էլ, երբ դարձյալ կամենում էր գնալ, դևերն ու իր խորհուրդները շրջապատեցին նրան և ամեն հնարներով ջանացին ետ դարձնել նրան: Երբ տեսավ, որ հաղթվում է դրանցից, ամբողջովին մերկացավ և դեն նետեց իր զգեստները և այդպես մերկ գնաց վանք: Իսկ Տերը հայտնեց վանահորն ու ասաց. «Շտապ դո՛ւրս եկ և նե՛րս ընդունիր իմ ճգնազգյացին»: Ծերը վեր կացավ, որ դիմավորի նրան, և երբ նրանից լսեց ամեն ինչ, հիացավ և նրան կրոնավորի զգեստներ հագցրեց: Դրանից հետո ովքեր գալիս էին ծերին պատմելու իրենց խորհուրդները, ամենքին ինքն էր պատասխան տալիս, իսկ ով նրան հարցնում էր աշխարհից

ելնելու մասին, ծերն ասում էր. «Հարցրո՛ւ այն եղբորը, և նա քեզ կուսուցանի աշխարհից դուրս գալու կերպը»:

39. Ոմն մեծահարուստ եղբայր աղաչում էր ծերին, որ իրենից մի բան վերցնի իր կարիքների համար: Ծերն ասաց. «Ես որևէ բանի կարիք չունեմ, ինձ բավական են իմ ձեռքերն ու նրանց գործերը»: Իսկ մեծահարուստը համառորեն աղաչում էր, որ մի բան վերցնի: Ծերն ասաց. «Դա ինձ համար կրկնակի ամոթ է, եղբա՛յր, նախ՝ որ վերցնեմ այն, ինչ իմը չէ, և երկրորդ՝ որ ուրիշի ունեցվածքով բարեգործություն անեմ և փքվեմ»: Եվ ոչինչ չվերցրեց նրանից, իսկ մեծահարուստը զարմացավ՝ տեսնելով նրան Աստծով զորացած և որևէ բանի անկարոտ:

40. Ոմն եղբայր հարցրեց իր ծերին և ասաց. «Հավանություն տալի՞ս ես, հա՛յր, որ ինձ համար մի երկու դահեկան պահեմ մարմնական տկարությանս համար»: Ծերը նրան ասաց. «Հարկավոր եղածից ավելին պահելը բարի չէ, քանզի եթե պահես այդ երկու դահեկանը, քո հույսը դրա վրա կլինի, և Տերն այլևս չի հոգա քո մասին, այլ մեր ամբողջ հույսը Տիրո՛ջ վրա դնենք, և նա կկերակրի մեզ»:

41. Պատմեցին մեզ հայրերը, թե Աստծո շնորհների արժանացած մեծ մի ծեր կար, և նրա անունը հռչակվեց ողջ երկրում՝ իր մեծ առաքինության և կենցաղավարության համար: Թագավորը, լսելով նրա համբավը, կանչեց նրան իր մոտ՝ օրհնություն ստանալու նրանից, պահեց նրան իր մոտ բազում օրեր, շատ ու շատ բաների մասին խոսեց նրա հետ և մեծապես օգուտ քաղեց, ապա մեծաքանակ ոսկի տվեց նրան և արձակեց: Իսկ ծերը, վերցնելով այն, գնաց իր տեղը և սկսեց գյուղ շինել ու բազմապիսի լավագույն ստացվածքներ ձեռք բերել և շատ հարստացավ: Սրանից հետո նրա մոտ բերին մի դիվահարի, որպեսզի, նախկին սովորության պես, հանի նրա միջից դևը: Ծերը դևին ասաց. «Դո՛ւրս եկ այդ արարածի միջից»: Դևը նրան ասաց. «Այլևս քեզ չեմ լսում»: Ծերը նրան հարցրեց. «Ինչո՞ւ չես լսում»: Դևն ասաց. «Նրա համար, որ դու դարձար մեզանից մեկը, թողեցիր Աստծո ճանապարհը, մոռացար նրան և քո անձը տվեցիր աշխարհիկ հոգսերին. դրա համար չեմ լսում քեզ և դուրս չեմ գալիս սրա միջից»: Եվ չկարողացավ հանել դևին, քանզի ինչքեր ունեցող կրոնավորը իրապես Աստծու ատելիներից մեկն է, ում Տերը ոչ միայն չի լսում, այլև իր երեսը դարձնում է նրանից:

42. Ոմն եղբայր ճանապարհին մի փայտ գտավ, որ բարձած ուղտերի քարավանից էր ընկել, և այն բերեց սենյակ: Նրա ծերն ասաց. «Որտեղի՞ց բերիր դա»: Եղբայրն ասաց. «Ճանապարհին գտա, հա՛յր»: Ծերն ասաց. «Թեկուզ հողմերից քշված էլ գտնեիր՝ տար նորից դի՛ր իր տեղը»: Եվ եղբայրը տանելով՝ դրեց այնտեղ, որտեղից վերցրել էր: Այսպիսի՛ն է կրոնավորական զգուշությունը:

43. Հույժ ճգնավոր մի եղբայր արծաթասիրության պատերազմի մեջ ընկավ և իր ձեռագործից ստացված մեկ դահեկանը դարձրեց հինգ դահեկան, ապա շատ չանցած՝ հիվանդացավ, և նրա ոտքերը նեխեցին: Սկսեց դեղեր գնել և ծախսեց այն հինգ դահեկանը, սակայն դեղերից օգուտ չունեցավ: Երբ ցավերը շատացան, բժիշկները որոշեցին կտրել նրա ոտքերը, իսկ նա չափազանց վշտացավ, հառաչանքով ողբաց առ Աստված և ողջ գիշերը լաց եղավ, որովհետև առավոտյան բժիշկը պետք է կտրեր նրա ոտքերը: Այնժամ նրա մոտ կանգնեց Տիրոջ հրեշտակը, մոտեցրեց ձեռքը և ցամաքեցրեց նրա ոտքերի շարավն ու ասաց. «Ի՞նչ կասես այժմ. կամենո՞ւմ ես ունենալ հինգ դահեկան և ոտքերդ կտրել տալ, թե՞ քո ոտքերն ես ուզում և դահեկանների կորուստը»: Իսկ եղբայրն ամոթից չգիտեր՝ ինչ պատասխան տա, քանզի գիտակցեց, որ հանուն փող կուտակելու էր հեռացրել իրենից Աստծո խնամատարությունը: Իսկ Աստծո հրեշտակը նույն պահին բժշկեց նրան ու անհայտացավ: Դրանից հետո եկավ բժիշկը՝ նրա ոտքերը կտրելու, և տեսնելով նրան առողջացած՝ հիացմունքով սաստիկ զարմացավ և լսելով նրանից առողջանալու պատմությունը՝ հավատաց Քրիստոսին և դարձավ քրիստոնյա, քանզի մինչ այդ կռապաշտ էր: Իսկ եղբայրը, Աստծո խնամատարությունից խրատվելով, ընտիր կրոնավոր դարձավ՝ վերջին աղքատությամբ զարդարված՝:



ԳԼՈՒԽ Է

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մի եղբայր խռովվում էր իր խցում, երբ նստում էր առանձին, և գնալով Թեոդորոս Փերմացու մոտ՝ ասաց նրան այդ մասին: Ծերը նրան ասաց. «Գնա խոնարհեցրո՛ւ քո խորհուրդները և հնազա՛նդ եղիր եղբայրներիդ»: Եվ սա գնալով լեռը՝ բնակվեց եղբայրների հետ: Եվ դարձյալ գալով ծերի մոտ՝ ասաց նրան. «Եղբայրների մոտ ևս չեմ կարողանում հանգիստ գտնել»: Ծերը նրան ասաց. «Եթե առանձին չես համբերում և եղբայրների հետ չես մնում, ինչո՞ւ ելար աշխարհից և մենակյաց դարձար: Ասա՛ ինձ՝ որքա՞ն ժամանակ է, որ այդպես ես»: Ասաց նրան. «Ութ տարի»: Ծերը նրան ասաց. «Ահա յոթանասուն տարի ես այս ձևով եմ ապրում, և ոչ մի օր ինձ հանգիստ չեղավ, իսկ դու ութ տարո՞ւմ ես հանգիստ փնտրում»: Այս լսելով ծերից՝ գնաց զորացած:

2. Մի ծեր կար, որ շատ բարի և խիստ առաքինի աշակերտ ուներ: Մի անգամ մաղախով ծեծելով՝ դուրս հանեց նրան իր խցից: Իսկ եղբայրը համբերեց՝ նստելով դռանը: Եվ ծերը, դուռը բացելով, տեսավ, որ նա նստել էր դռանը, ընկավ նրա ոտքերն ու ասաց. «Օ՜ Պետրե, քո խոնարհությունն ու երկայնամտությունը հաղթեցին իմ նեղսրտությանը: Հիմա նե՛րս արի, այսուհետև դու ծերն ես և հայրը, իսկ ես՝ մանուկը և աշակերտը, քանզի դու քո գործով գերազանցեցիր ինձ»:

3. Ոմն եղբայր ընկավ փորձության մեջ և բազում տրտմությունից կորցրեց իր մենակեցության կարգը: Եվ երբ ուզում էր վերսկսել, սրտի տխրությունը թույլ չէր տալիս, այլ այսպես էր ասում մտքում. «Ինչպե՞ս կարող եմ դառնալ այնպիսին, ինչպիսին էի»: Եվ այդպես վհատվում էր և չէր կարողանում վերսկսել իր մենակցության գործը: Մի օր էլ վեր կենալով գնաց մի ծերի մոտ և պատմեց նրան այդ ամենը: Եվ ծերը նրան այսպիսի մի առակ պատմեց. «Մի մարդ ծուլացավ

իր անդաստանում, իսկ անդաստանը լցվեց փշերով և մոլախոտերով: Հետո ուղարկեց իր որդուն և ասաց. «Գնա մաքրի՛ր անդաստանը»: Որդին, գնալով և տեսնելով բուսած փշերի ու մոլախոտերի վիթխարի քանակությունը, վախեցավ և ասաց. «Ես ինչպե՞ս կարող եմ մաքրել այս ամենը»: Նա պառկեց և քուն մտավ: Եվ շատ օրեր այսպես արեց: Եկավ հայրը, գտավ նրան և տեսնելով, որ ոչինչ չի արել, ասաց նրան. «Այս ի՞նչ բան է, որդյա՛կ, դու ոչինչ չես արել»: Եվ նա պատասխանեց. «Երբ կամենում եմ աշխատել, զարհուրում եմ՝ մացառների բազմությունը տեսնելով»: Եվ հայրն ասաց. «Որդյա՛կ, ամեն օր քո ննջատեղին հավասար տարա՛ծք մաքրիր»: Եվ նա անսալով՝ այդպես արեց: Եվ երբ սկսեց, օրավուր ավելացնում էր աշխատանքը, և քիչ ժամանակ անց ողջ անդաստանը մաքրվեց: Արդ, այդպես էլ դու. մի՛ զարհուրիր, այլ սկսի՛ր, և Աստված իր շնորհներով քեզ կվերահաստատի քո նախկին կարգի մեջ, և այսպես անելով՝ ապահով կլինես փորձություններից»:

4. Ծերն ասաց. «Եթե ամեն կողմից բազում փորձություններ գան մարդու վրա, և նա նեղվի, տրտնջա, թո՛ղ նրա մտերիմները փորձության պատճառով նրանից երես չդարձնեն»: Եվ այսպես բան պատմեց. «Խրճիթում ապրում էր մեկը, որի վրա փորձություն եկավ: Եվ նրա մտերիմներից ով տեսնում էր նրան, չէր կամենում ողջույն տալ և ոչ էլ տուն էր հրավիրում, իսկ եթե երբևէ հացի կարիք էր լինում, ոչ ոք փոխ չէր տալիս նրան, և հնձի գնալիս ու վերադառնալիս հաց չկար նրա խրճիթում: Սովորություն էր խրճիթներում, որ ովքեր վերադառնում էին հնձից, ճաշակում էին եկեղեցուց, իսկ շաբաթ օրերը եկեղեցի գնալ ոչ ոք չէր արգելում նրան, և վերադառնալով իր խուցը՝ գոհանում էր Աստծուց: Եվ Աստված, տեսնելով նրա համբերությունը, հեռացրեց նրանից փորձությունը: Եվ ահա նրա դուռը բախեց մեկը, ով, Եգիպտոսից ուղտը լի բեռնած, հաց էր բերել և ասաց. «Վերցրո՛ւ այս հացը»: Եվ նա սկսեց լաց լինել և ասել. «Մի՞թե արժանի չեմ, Տե՛ր, քո տված նեղությունը կրելու, դրա համար ինձնից վերցրիր այն»: Եվ երբ հեռացավ փորձությունը, ամենքը սկսեցին սիրել նրան, և ուրիշ եղբայրներ էլ աղաչում էին, որ իրենց խուցը գա»:

5. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Եթե կամենամ որևէ գործ կատարել, բայց ինչ-որ խոչընդոտ լինի և խափանի գործը, բարի՞ է համբերել մինչև ավարտը, թե՞ թողնել-հրաժարվել»: Ծերը նրան ասաց. «Եթե աղոթելով համբերես առանց նեղվելու՝ բարի է համբերելը, իսկ եթե նեղսրտություն լինի՝ հրաժարվի՛ր»:

6. Մի անգամ հայր Մակար Սկյութացին գնում էր Տերենութ և ճանապարհին մտավ մի այր՝ ննջելու: Այնտեղ հեթանոս մեռելների հին մարմիններ կային, և վերցնելով դրանցից մի չոր գանգ՝ դրեց գլխատակին՝ որպես սնար, որպեսզի մի փոքր հանգստանա: Իսկ դևերը, տեսնելով նրա քաջությունը, նախանձեցին և կամեցան նրան զարհուրեցնել: Կանչում էին գանգին կնոջ անունով և ասում. «Կի՛ն դու այսինչ, ե՛կ մեզ հետ բաղնիք»: Իսկ մեկ այլ դև գլխի միջից պատասխան տվեց և ասաց. «Օտարական կա ինձ վրա, չեմ կարող գալ»: Իսկ ծերը չզարհուրեց, այլ համարձակ խփեց նրան և ասաց. «Արի գնա՛ դեպի խավարը, եթե կարող ես»: Եվ այս լսելով՝ դևերը բարձր ձայնով աղաղակեցին և ասացին. «Հաղթեցիր մեզ»: Եվ փախան ամոթահար:

7. Մոյին մի անգամ փոքր տուն շինեց՝ հանգիստ առնելու համար, բայց կառուցել չգիտեր, և դարձյալ ավերեց, իսկ Տայիսը գիտեր, բայց չէր ասում նրան: Ի վերջո Տայիսն ասաց. «Կուզե՞ս դա այսպես շինել, հա՛յր»: Եվ հայր Մոյին խփեց նրան ու ասաց. «Ես չգիտեի, որ դա այդպես է արվում»:

8. Մի անգամ հայր Սիսոյի աշակերտ Աբրահամը առժամանակ թողեց սպասավորությունը և գնաց, իսկ հայր Սիսոյը երկար ժամանակ չէր կամենում ուրիշ մեկի կողմից խնամարկվել՝ ասելով. «Բացի իմ եղբորից՝ ուրիշ մարդու չեմ վերցնի ինձ մոտ սպասավորության»: Եվ հանձնառու չեղավ, այլ համբերությամբ տքնեց, մինչ եղբայրը վերադարձավ:

9. Սկյութիայում հայր Քերեմոնի մասին ասում էին, թե նրա այրը ժայռի մեջ էր և հեռու էր եկեղեցուց քառասուն մղոն, և այսպես տանում էր իր ձեռագործը, և երկու սափոր ջուր փոխնիփոխ կրելով՝ տանում էր իր խուցը և նստում էր խաղաղությամբ:

10. Միաբանների մեջ կար մի մենակյաց, որ ինը տարի պատրաստվելով և իր մեջ պատերազմելով՝ ամեն երեկո պատրաստում էր իր մախաղը՝ ասելով. «Վաղը կգնամ այստեղից»: Երբ առավոտ էր լինում, իր մտքում ասում էր. «Բռնադատեմ ինքս ինձ և արգելեմ գնալու այս մի օրն էլ՝ հանուն Աստծո»: Եվ երբ լրացավ ինը տարին, Աստված թեթևացրեց նրա ներքին պատերազմը նրա համբերության համար:

11. Հայր Սիմոնն ասաց. «Տասնչորս տարի եղա Սկյութիայում՝ օր ու գիշեր պաղատելով Տիրոջը, որ ինձ աշխարհին հաղթելու շնորհ տա»:

12. Աբբա Եղիան ասաց, թե ոմն ծեր օթևանեց կուռքերի մեհյանում, և դևերը, գիշերը գալով նրա մոտ, ասացին. «Գնա՛ մեր տեղից»: Ծերն ասաց. «Դուք տեղ չունեք երկրի վրա»: Այնժամ դևերն սկսեցին ցրիվ տալ նրա կուտակած արմավենու ոստերը, իսկ ծերն աշխատում և հավաքում էր: Հետո դևը բռնեց նրա ձեռքից և դուրս քաշեց: Երբ հասան դռանը, ծերը բռնեց դուռը և գոչեց. «Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, օգնի՛ր ինձ»: Եվ նույն պահին փախավ դևը նրանից, իսկ ծերն սկսեց արտասվել: Տերը հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես լալիս»: Նա պատասխանեց. «Լալիս եմ, որ դևերն համարձակություն ունեն մերձենալու մարդկանց»: Եվ Տերն ասաց. «Տե՛ս՝ երբ փնտրեցիր ինձ, ինչպե՛ս գտար, բայց և՝ ոչ առանց տքնելու, որովհետև եթե տքնություն չլիներ, մարդը չէր կարող Աստծուն իր հետ ունենալ, որովհետև ի բնե մարդն ստեղծված է ջանադրության համար, և Աստված էլ նույնն է պահանջում նրանից»: Արդ, ասեմ քեզ, եղբայր, պետք է տքնենք և գտնենք Աստծուն, իսկ ով չի՛ տքնում, նա չի կարող Աստծու օգնությունը ստանալ:

13. Ոմն եղբայր գնաց աբբա Օլիմպոսի մոտ՝ աբբա Գերասիմի վանք, որ սուրբ Հորդանանի մոտ է, և ասաց նրան. «Այսպիսի խորշակի ու մժեղների մեջ ինչպե՞ս ես ապրում, աբբա՛»: Եվ ծերն ասաց. «Նրա համար եմ հանդուրժում սրանց, որպեսզի այնտեղ հալումաշ չլինեմ չարչարանքներից»:

14. Մեկ այլ եղբայր գնաց հայր Գերասիմի վանքը՝ աբբա Ալեքսանդրոսի մոտ, և ասաց նրան. «Աբբա՛, ուզում եմ հեռանալ այնտեղից, որտեղ նստում եմ, որովհետև խիստ նեղսրտում եմ»: Եվ աբբան ասաց. «Զգուշացի՛ր, որդյա՛կ, քանզի դու չունես քո մտքում ո՛չ դժոխքի չարչարանքները, ո՛չ էլ երկնքի արքայության հույսը. եթե սրանց մասին մտածես՝ նեղսրտությամբ չես համակվի»:

15. Հայր Բեսարիոնն ասաց՝ քառասուն օր և քառասուն գիշեր կանգնած մնացի փշերի մեջ և չպառկեցի՝ ննջելու, այլ կանգնած կամ նստած նիրհում էի մի փոքր՝ խնդրելով Տրրոջ ողորմությունը:

16. Գրիգոր Աստվածաբանն ասաց. «Եթե մեկը գա կրոնավորության և իր անձը չպատրաստի վշտերին՝ անփորձ է փրկության ճանապարհին»:

17. Ոմն եղբայր, անարգվելով մեկի կողմից, ասաց. «Քրիստոսի պատվիրանը փակում է իմ բերանը, ապա թե ոչ՝ ինչ դու ես ասում, ես էլ կարող եմ ասել»:

18. Եղբայրների մեջ բնակվում էր մեկը, ով հնազանդ էր եղբայրներին բազում խոնարհությամբ և կատարում էր ինն առաքինություն, բայց մեկը պակասում էր՝ ներքին պայքարի պատճառով: Եվ ելնելով այնտեղից՝ գնաց այլ վանք, որտեղ պակասեց ևս մեկը՝ շահեց ութը, զրկվեց երկուսից: Այնժամ այնտեղից էլ ելնելով՝ գնաց մեկ ուրիշ վանք, որտեղ կատարում էր յոթը՝ զրկվելով երեքից: Ապա այնտեղից էլ ելնելով՝ մեկ այլ վանք գնաց, ուր շահեց վեցը՝ կորցնելով չորսը: Այնտեղից էլ գնաց ուրիշ վանք, և կես եղան առաքինությունները, քանզի շահեց հինգը, բայց զրկվեց հինգից, և հինգի մեջ առաքինանում էր, հինգի մեջ՝ ախտանում: Հետո կամեցավ այլ միաբանության վանք մտնել, և նախքան այնտեղ մտնելը՝ թուղթ վերցրեց ձեռքը և նստելով՝ ասաց ինքն իրեն. «Եթե հնազանդվես քո խորհուրդներին, բոլոր երկրները բավական չեն լինի՝ գնալու համար, իսկ ուր որ գնացիր, ավելի վատթար եղավ: Հիմա ուխտի՛ր ինձ, որ ամեն ինչի կհամբերես և գրի՛ր որպես հուշագիր. "Առաջին վանքից ելա, որովհետև խռովություն կար այնտեղ, ելա և երկրորդից այլ բանի պատճառով, երրորդից էլ ելա այսինչ պատճառով"»: Եվ գրեց բոլոր պատճառները, որոնց համար դուրս էր եկել վանքերից: Իսկ հետո գրեց. «Եթե այս բոլոր պատճառները, որոնցից փախչում էիր, գտնվեն նաև այստեղ՝ կհամբերե՞ս, թե՞ ոչ»: Եվ երբ իր անձի մեջ հաստատապես որոշեց մնալ այնտեղ, այսպես գրեց. «Հանուն Հիսուսի Քրիստոսի՝ Աստծո Որդու, կհամբերեմ ամեն տեսակ չարչարանքների»: Եվ ծալելով նամակը՝ դրեց իր գոտու մեջ ու մտնելով վանքը, ուր եկել էր, բնակվեց այնտեղ: Որոշ ժամանակ անց սկսեց բաներ տեսնել, որոնք հաճելի չէին իրեն: Սիրտը եռում էր զայրույթից, շուտափույթ հանում էր նամակը և կարդում, թե՝ հանուն Հիսուսի Քրիստոսի՝ Աստծո Որդու, ամեն ինչի կհամբերեմ: Եվ երբ կարդում էր, զղջում էր, հանդարտվում և ասում. «Խոստացա Աստծուն, և Նա կօգնի ինձ»: Եվ այս անելով՝ մնում էր անխռով՝ ընդդեմ իր վրա եկած չարքերի: Իսկ դևն իր չարությամբ ականատես լինելով եղբոր համբերությունը՝ չկարողացավ դիմանալ, լկտիորեն համարձակություն տվեց վանական եղբայրներին՝ դարանամուտ լինել նրա գործերին, թե ինչպե՛ս է եղբայրը կարդում նամակը և բժշկություն ստանում: Եվ սկսեցին գրգռվել և ասել. «Սա կախարդ է և ինչոր աղանդավորական բան է կարդում, որ չի խռովվում»: Եվ խմբովին բարձրացան հոր մոտ, պատմեցին այս և ասացին. «Չենք կարող մենք մնալ սրա հետ, որովհետև դյութող է, մոգ և կախարդ, իր գոտու տակ դյութանք ունի: Եթե ուզում ես նրան, դու մնա նրա հետ, իսկ մեզ արձակի՛ր, որ այստեղից գնանք»: Իսկ հայրը սուրբ էր և հմուտ, գի-

տեր եղբոր խոնարհությունը և ճանաչեց, որ դիվական էր նախանձը, ասաց եղբայրներին. «Գնացե՛ք և երեք օր աղո՛թք արեք, կաղոթեմ և ես, իսկ Տերը կհայտնի, թե ինչ է պետք անել»: Գնացին եղբայրները՝ ըստ նրա հրամանի: Իսկ հայրն ինքը հետևում էր եղբորը, որ նրան քնած գտնելով՝ տեսնի գոտում եղող նամակը: Եվ երբ քնած գտավ եղբորը, վերցրեց գոտուց գիրը, կարդաց, նորից դրեց գոտու տակ և գնաց: Եվ ահա երեք օրից հետո դարձյալ հավաքվեցին եղբայրները և հորն ասացին. «Հրամայի՛ր մեզ, հա՛յր, թե ինչ անենք»: Եվ նա ասաց. «Այստե՛ղ կանչեք այն եղբորը»: Կանչեցին նրան՝ ըստ հոր հրամանի: Եվ երբ եկավ, հայրն ասաց. «Ո՛վ եղբայր, ինչո՞ւ տրտմեցրիր քո եղբայրներին»: Եվ նա ասաց. «Մեղա՛, թո՛ղ ներեն ինձ»: Ապա հայրը դիմեց եղբայրներին. «Ի՞նչ ունեք ասելու այս եղբորը»: Եվ նրանք ասացին. «Մոգ է սա և իր գոտու տակ բժժանք ունի»: Հայրն ասաց. «Առե՛ք դրանից իր բժժանքը»: Բայց նա թույլ չէր տալիս արձակել իր գոտին: Ասաց. «Կտրե՛ք գոտին»: Այդպես արեցին և գտան նամակը: Հայրը մի եղբոր ասաց. «Ե՛լ մի բարձր տեղ և բարձրաձայն կարդա՛, որ դևերն ամաչեն»: Սկսեց կարդալ և ասաց. «Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու անունով, ամեն տեսակի չարիքի կհամբերեմ այստեղ»: Երբ լսեցին այս, սքանչացան եղբոր առաքինության վրա և զղջացին չարախոսելու համար: Բոլոր եղբայրները երեսի վրա ընկան և սկսեցին եղբորից ներողություն խնդրել ու ասել. «Մեղանչեցինք, եղբա՛յր, ների՛ր մեզ»: Եվ նա ասաց. «Թող Տերը ների ձեզ և մեզ»: Ասաց հայրը եղբորը. «Խնդրենք Տիրոջից, որ ների սրանց»: Եվ այդպես էլ արեցին, իսկ դրանից հետո մեծ խաղաղություն եղավ:

19. Եղբոր հարցին, թե ինչու է ինքը ճանձրանում՝ խրճիթում նստելով, ծերը պատասխանեց. «Որովհետև դու չգիտես Արքայությունն ու տանջանքները, որ առաջիկայում սպասվում են, քանզի եթե գիտնայիր, թեկուզ աղբով և որդերով լի լիներ քո խուցը, դրանից չէիր նեղվի՝ հանուն առաջիկա հույսի, քանի որ այստեղի հազար տարվա տանջանքները չեն հավասարվի այնտեղի մեկ ժամվա տանջանքներին: Աբրահամը նույնպես, երբ տեսնի ճգնավորների փառքը, կափսոսա, որ ինքը առավել չճգնեց, որպեսզի առավելագույն փառք ստանար»:

20. Ոմն ծեր, ջրի հեռավորությունից ճանձրացած, խորհեց իր բնակատեղին ջրի մոտ հաստատել: Գնալիս՝ ետ նայեց, տեսավ Աստծո հրեշտակին, որ հաշվում էր նրա քայլերը, որպեսզի դրանց համար նա վարձ ստանա: Այս տեսնելով՝ ծերն իր բնակատեղը հեռացրեց ևս հինգ մղոն:

21. Ասաց ծերը. «Եթե փորձության մեջ ընկնես, և դրա պատճառով դուրս գաս քո վայրից, ուր էլ որ գնաս՝ այնտեղ քեզ ավելի մեծը կպատահի: Ուստի՝ մնա քո տեղում, մինչև փորձությունն անցնի, որպեսզի խաղաղությամբ ընթանաս և ոչ մեկին չխռովեցնես»: Սաստիկ զայրացկոտ մեկը կար, որ խիստ տրտմում էր եղբայրների մեջ: Սա ասաց. «Գնամ այսինչ անապատը, ուր բարկության պատճառ չկա»: Այնտեղ գնալուց հետո, երբ ջրամանը գետնին դրեց, այն երեք անգամ շրջվեց: Նա բարկացած՝ ջրամանը խփեց քարին, ապա մտաբերելով՝ ասաց. «Այս բանը դիվական է», և վեր կենալով գնաց իր եղբայրների մոտ: Այդպես անելուց հետո փորձությունը դադարեց:

22. Ոմն ծերի հարց տրվեց. «Ինչպե՞ս վարվեմ ծույլ և քնած անձիս հետ, որովհետև ոչինչ չշահեցի աբեղայությունիցս»: Եվ ծերն ասաց նրան. «Գնա՛ և համբերությամբ լռի՛ր քո խուղի մեջ հանուն Տիրոջ, իսկ Աստված այն ավելի մեծ կհամարի, քան Անտոնին՝ իր բոլոր օրերում, քանզի կրոնավորի խուղը երեք երիտասարդների հնոցն է, որտեղ տեսան Աստծո Որդուն (Դան. Գ 91-92), *և ամպի սյունն է, որտեղից խոսում է Աստված* (Ելից ԼԳ 9)»:*

23. Մի երևելի ծեր, որ բնակվում էր Թեբայիդում, սովորություն ուներ ամեն երեկո խրատել աշակերտին, աղոթել նրա վրա և ապա արձակել՝ գնալու իր մահիճը: Եվ եղավ, որ խոսելիս քունը պատեց նրան, և այդպես մնաց մինչև կեսգիշեր: Եվ աշակերտը, յոթն անգամ նեղսրտելով իր մտքում, կամենում էր գնալ և ննջել, սակայն դիմացավ և չգնաց. և ծերն արթնանալով՝ աղոթեցին և գնացին: Եվ տեսիլք տեսավ ծերը. ահա նրա առաջ կային յոթ թագավորական թագեր, և ասվեց նրան. «Դրանք քո աշակերտն ստացավ այս գիշեր»: Ուշքի գալով՝ ծերը կանչեց աշակերտին և հարցրեց, թե ի՞նչ էր արել այդ գիշեր, և աշակերտը պատմեց իր խորհուրդները: Փառավորեց ծերը Քրիստոսին, որ այսպիսի փոքր համբերության համար տալիս է այդպիսի հատուցում, սակայն աշակերտին չհայտնեց իր տեսիլքի մասին, բայց օգտակարության համար պատմեց մյուս եղբայրներին:

24. Հիվանդացավ ոմն եղբայր, և մյուս եղբայրները չայցելեցին նրան երեսուն օր: Տիրոջ հրեշտակը եկավ և սպասավորեց նրան յոթ օր: Եվ երբ եղբայրներն եկան տեսնելու, թե ինչ եղավ նրան, հրեշտակն անհայտացավ, իսկ եղբայրը վախճանվեց: Ահա այսպես Աստված չի թողնում Իրեն հուսացողներին:

25. Ոմն ծեր ուխտել էր հիսնօրյա պահքի շրջանին այրից դուրս չգալ: Այրը լցվեց մժեղներով ու պիծակներով, որոնք կծում էին նրան: Իսկ ծերն ասաց. «Թեկուզ մեռնելու լինեմ, այստեղից դուրս չեմ գա՝ մինչև Զատիկի օրը»: Պահքի երրորդ շաբաթվա մեջ հրաշք կատարվեց. այնտեղ եկան մրջյունների անթիվ բազմություններ և մտնելով այրը՝ պատերազմողների պես կոտորեցին նրանց և դուրս հանելով՝ մաքրեցին այն տեղը: Տեսեք, թե որքան բարի է համբերելը փորձության մեջ, որպեսզի վախճանը բարի լինի:

26. Ոմն եղբայր ինը տարի պոռնկական խորհուրդների դեմ պայքարելուց հետո գնաց աշխարհ: Եվ նրան ձայն եկավ ի վերուստ և ասաց. «Ահա իննամյա ճգնությանդ համար քեզ պսակ պատրաստեցի. վերադարձի՛ր քո խրճիթը և այլ բան մի՛ արա»: Վերադարձավ և հանգստացավ պայքարից:

27. Ծերն ասաց. «Ալիքը չի կարող ժայռին վնաս պատճառել, ոչ էլ խորհուրդը՝ մենակյացին, եթե չգործադրի և փութով հեռու վանի այն իրենից»:

28. Դարձյալ. «Ձկները չեն կարող այնպես անել, որ ձկնորսն իրենց ցանցը չգցի, բայց եթե իմանան, կարող են խույս տալ և ապրել: Այդպես էլ մենակյացը՝ չի կարող սատանային արգելել փորձելու իրեն, սակայն իմանալով՝ խույս կտա ցանկությունից և բարկությունից»:

29. Ծերին հարցրին. «Ինչո՞ւ եմ վախենում անապատ գնալիս»: Պատասխանեց. «Որովհետև քեզ մենակ ես համարում և Աստծուն չես տեսնում քեզ հետ»:

30. Հարցրին ծերին, թե ինչո՞ւ է սատանան միտքը զբաղեցնում աղոթքի ժամանակ: Ասաց. «Որովհետև սատանան այն պատճառով ընկավ, որ չկամեցավ երկրպագել Աստծուն»:

31. Ոմն ծեր բազում տարիներ բնակվում էր անապատում և մեծապես տքնում էր: Երբ եղբայրներից ոմանք գնացին նրա մոտ, նրանով սքանչացած՝ ասացին. «Ինչպե՞ս ես դիմանում այդպիսի տքնությանը, հա՛յր»: Պատասխան տվեց նա և ասաց. «Այստեղի տքնության ողջ ժամանակը տանջանքների մեկ ժամին իսկ չի հավասարվի»:

32. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Մտքերս այս ու այն կողմ են թափառում և նեղում են ինձ»: Ծերը նրան ասաց. «Դու նստի՛ր քո խուղում, և քո մտքերը դարձյալ կգան քեզ մոտ. ինչպես օրինակ՝ եթե ավանակը կապված լինի, իսկ նրա քուռակը խայտա այս ու այն կողմ,

դարձյալ այնտեղից դեպի իր մայրը կվերադառնա, իսկ եթե մորը արձակես, երկուսն էլ կկորչեն. նույնպես և խորհուրդները»:

33. Հայրերից մեկը պատմեց և ասաց. «Մինչդեռ ես Օքսիրինքոսում էի, շաբաթ երեկոյան եկան աղքատները, որպեսզի ողորմություն ստանան: Եվ մինչդեռ ննջում էին, նրանցից մեկը փսիաթի կեսը տակն էր առել, կեսը՝ վրան: Եվ սաստիկ ցուրտ էր: Երբ ինչ-որ կարիքի համար դուրս եկա, լսեցի նրա ձայնը, որ հառաչում էր ցրտից և դարձյալ կրկնելով իր խորհուրդը՝ մխիթարում էր իրեն և գոհանալով Տիրոջից՝ ասում էր. «Ով գիտե՝ քանի՜ մեծահարուստներ կան բանտերում՝ երկաթներով շղթայված, ոմանց ոտքերը կոճղերի մեջ են պնդված, և իրենց կարիքներն իսկ չեն կարողանում հոգալ: Իսկ ես թագավորի պես եմ, ոտքս մեկնում եմ և գնում՝ ուր կամենամ»: Եվ քանի դեռ նա այսպես խոսում էր, մնացի՝ մինչև լսեմ բոլոր խոսքերը, և մտնելով՝ պատմեցի եղբայրներին, և խրատվեցին աղքատի խոսքերից»:

34. Հավատացյալ Սառան ասաց իր քույրերին. «Իմ հանապազօրյա աղոթքն այս է, որ ոչ թե բոլոր հավատացյալները լինեն ինձ նման, այլ ես լինեմ նրանց բոլորի նման»: Քույրերից մեկը հարցրեց. «Մեղավորնե՞ր էլ ես ուզում նմանվել»: Եվ նա ասաց. «Այո՛, ուզում եմ նմանվել նրանց երկայնամտությանը, որ միշտ հույսով ասում են՝ շուտափույթ ապաշխարենք»:

35. Հավատացյալ Շարուհին ասաց իր քույրերին. «Տղամարդ կրոնավորները երեք առավելություն ունեն մեզանից»: Եվ հարցրին քույրերը. «Որո՞նք են»: Պատասխանեց նրանց. «Առաջինը՝ նրանք շրջում են բաց երեսով, երկրորդը՝ սատանան առավել սաստիկ է պատերազմում նրանց հետ, քան մեզ հետ, երրորդը՝ նրանց խորհուրդները առնական են և քաջարի, և պարզ է, որ նրանք իրենց վաստակի հատուցումը կստանան»:

36. Պատմեցին մի հոր մասին, որ Սուրբ Գիրք ուներ՝ Հին և Նոր Կտակարանները, որն արժեր տասնութ դահեկան: Եկավ մի օտար եղբայր, տեսնելով այն՝ ցանկացավ հույժ և գողանալով՝ գնաց: Իսկ ծերը, գիտենալով հանդերձ, որ նա գողացավ, չհետապնդեց նրան: Եվ գնալով մերձակա քաղաքը՝ եղբայրը կամեցավ վաճառել Գիրքը, որի դիմաց պահանջում էր տասնվեց դահեկան: Նա, ով կամենում էր գնել, ասաց. «Տո՛ւր ինձ, որպեսզի ստուգեմ այն»: Եվ բերելով սուրբ Գիրքը ծերի մոտ, կամեցավ խորհուրդ իմանալ դրա մասին: «Որքա՞ն է ուզում դրա դիմաց»,– հարցրեց նրան ծերը, և լսելով, թե՝ որքան,

ասաց. «Ագնիվ է»: Եվ այս մարդը, գնալով վաճառողի մոտ, ասաց. «Ահա Գիրքդ ցույց տվեցի այսինչ ծերին, և նա ասաց, որ գինը մեծապես հարմար է»: Եղբայրը հարցրեց. «Ուրիշ ոչ մի բան չասա՞ց քեզ»: Եվ նա ասաց՝ ո՛չ: Եվ եղբայրն ասաց. «Ձե՛մ վաճառում դա»: Եվ զղջալով՝ եկավ ծերի մոտ և ընկավ նրա առաջ, որ վերցնի Գիրքը, իսկ նա չկամեցավ: Եվ եղբայրն աղաչեց նրան և ասաց. «Եթե չվերցնես Գիրքը, հանգիստ չեմ գտնի»: Եվ ծերն անսալով՝ վերցրեց Գիրքը, իսկ եղբայրը մինչև մահ մնաց նրա մոտ: Եվ ծերի համբերության շնորհիվ ապրեց եղբայրը:

37. Մի ծերի հարցրին, թե. «Ի՞նչ է նշանակում մարգարեի խոսքը, թե՝ որպես եղջերուն է փափագում աղբյուրների ջրերին» (Սաղմ. ԽԱ 2)*: Եվ պատասխանեց՝ ասելով. «Եղջերուն միշտ ճիճուներից, սողուններից և օձերից խայթվում է, նրանց թույնից այրվում և ցամաքում է, պապակում է աղբյուրների ջրերին: Այդպես էլ մարդկանց միտքը. զանազան ցնորքներից և բանսարկուի խայթոցներից, օձատեսիլ ցանկություններից ու թունալից խուժադուժ ախտերից հալածված և պապակած՝ այն աղբյուրին է տենչում, որ Տիրոջից է ելնում՝ ինչպես ասաց. "Եթե մեկը ծարավ է, թո՛ղ գա դեպի ինձ և խմի* (Հովհ. Է 37)*. և նրան դիմելով՝ կհանդարտվի"»:*

38. Եղբայրներից մեկը հարցրեց ծերին և ասաց. «Ինչո՞ւ եմ ծուլանում, պարապ անցկացնում օրը և չեմ կարողանում արիանալ»: Եվ ասաց ծերը. «Որովհետև դու չես մտաբերում ճգնավորներին սպասվող հանգիստն ու ծույլերին սպառնացող տանջանքները»:

39. Հայր Մակարը հարցրեց Զաքարե Կրտսեր եղբորը. «Ո՞րն է մենակյացի գործը»: Եվ Զաքարեն պատասխանեց. «Փորձությունների համար գոհանալը և լռելը»:

40. Սկյութիայի անապատի խորքերում՝ Սկյութիայից տասնութ մղոն հեռու, մի ներքինի էր ապրում: Մեծն Դանիել ծերունին պատվիրեց իր աշակերտներից մեկին, որ ամեն երեկո փոքր ամանը լցնի ջրով և ղնի քարայրից դուրս: Եվ ներքինին ամեն շաբաթ գիշերով լռելյայն գնում էր տասնութ մղոն, վերցնում էր ջուրը, խմում և դառնում դեպի իր քարանձավը՝ առանց որևէ մեկին տեսնելու և որևէ մեկի հետ խոսելու: Տասնութ տարի անց Դանիելի աշակերտը այրի դռանը գտավ մի խեցի՝ գրված. «Ե՛րբ գաս, հա՛յր Դանիել, բե՛ր քեզ հետ աշակերտներից մեկին և բահ ու բրիչ»: Եվ ծերունին ընթերցելով՝ ասաց. «Վա՜յ ներքին անապատին, որ այսպիսի սյուն է կորցնում»: Եվ իր աշակերտին,

որ քսանուԹ տարի այրի մոտ ջուր էր դնում, ասաց. «Վերցրո՛ւ բահ և բրիչ, և արի շտա՛պ գնանք, ԹերևԵս հասցնենք ծերունուն կենդանի տեսնել և նրա օրհնությունը ստանալ, որովհետև պատրաստվում է երԹալու ի Քրիստոս»: Եվ լացելով ճամփա ընկան: Երբ հասան տեղ, նրան գտան սաստիկ ջերմության մեջ: Ծերունին ընկավ նրա լանջին, հորդաբուխ արցունքներով ողբաց ու ասաց. «Երանի՜ է քեզ, որ այս օրը մտապահելով՝ արհամարհեցիր աշխարհի փառքը»: Ասաց ներքինին. «Երանի՜ է քեզ, Դանիե՛լ, քանզի նախահայր Աբրահամի հետ է դասված քո հոգին, որովհետև տքնության բազում պտուղներ ընծայեցիր Քրիստոսին»: Դանիելն ասաց. «Աղո՛ԹՔ արա մեզ համար և օրհնի՛ր մեզ»: Ներքինին ասաց. «Նախ դո՛ւ աղոԹՔ արա և օրհնի՛ր մեզ»: Դանիելն ասաց. «ԵԹե ես քեզնից առաջ գնայի ի Քրիստոս, կանեի աղոԹՔ, այժմ դու ես առաջ անցել, օրհնի՛ր մեզ»: Եվ նա, բարձրացնելով ձեռքերը, մեծապես օրհնեց նրանց և ծերունուն գրկելով՝ համբուրեց նրա գլուխը և Հաղորդություն վերցնելով՝ պատվիրեց Դանիելին, որ իր վրայից չհանի փսիաԹը, և նույն պահին էլ ավանդեց հոգին առ Աստված, և փայլեց նրա երեսը՝ որպես հուր: Սաստիկ արտասվեցին և փոս փորելով այրի առջևում՝ նրան այնտեղ դրին: Եվ ծերունին, հանելով պարեգոտը, տվեց իր աշակերտին, որպեսզի փռի մարմնի վրա: Երբ աշակերտը բացեց կուրծքը, որպեսզի համբուրի, տեսավ կնոջ ստինքներ՝ տերևի պես չորացած, և սալաքարը դնելով՝ ծածկեց: Ապա հողը կիտեցին վրան, սաղմոսներով և օրհնաբանությամբ ուղարկեցին Քրիստոսի մոտ և վերադարձան ՍկյուԹիա: Աշակերտն ասաց. «Հա՛յր, գիտե՞ս, որ ներքինին կին էր»: Եվ ծերունին ասաց. «Այժմ ես կպատմեմ քեզ նրա մասին»: Եվ ծերը պատմեց, ԹԵ նա մի նշանավոր և խիստ մեծահարուստ պատրիկի կին էր՝ ԹագավորանիստԿոստանդնուպոլիս քաղաքից: Եվ երբ մահացավ նրա ամուսինը, նրա գեղեցկության համար ցանկացավ նրան Հուստիանոս Թագավորը, որը գաղտնի պատգամախոսների ուղարկեց նրա մոտ՝ բազում գանձերով: Սակայն նա, ԹողնելովայնչափՔ մեծությունը, հարստությունը, անունը, ծառաներին ու աղախիններին, գիշերով միայնակ փախավ-գնաց Ալեքսանդրիա քաղաքը և լեռան վրա շինեց մի մեծ վանք, այնտեղ հավաքեց բազմաԹիվ կանանց, և այդ վանքը ցայսօր կոչվում է Պատրիկիա: Եվ ճգնեց մեծ առաքինությամբ, իսկ նրա աստվածային վարքի համբավը դուրս եկավ այդ սահմաններից և հասավ մինչև Թագավորի ականջը: Բազում մարդիկ էին գնում նրա մոտ, որպեսզի աղոԹՔ և օրհնություն ստանան նրանից: Իսկ նա, աբեղայի զգեստ հագած, փախավ գիշերով իր վանքից և եկավ ինձ մոտ, պատմեց ինձ իր բոլոր խորհուրդները

և ինձնից խնդրեց այն քարայրը, և ես տվեցի նրան: Նրա անունն էր Անաստասիա: Եվ քսանութ տարի՝ մինչև իր մահը, ոչ ոք չիմացավ նրա մասին այն, ինչ իմացար միայն դո՛ւ: Ե՛վ թագավորը, և՛ Ալեքսանդրիայի պատրիարքը բազում ցանկացողների էին ուղարկում, որպեսզի գտնեն նրան և օրհնվեն նրանից, սակայն չկարողացան գտնել նրան: Կրոնավոր կանայք նույնպես մեծ բաղձանքով փնտրում էին նրան և չէին գտնում, քանզի Աստված ծածկեց նրան և պահեց մինչև մահ»:

41. Մի ծերունի բնակվում էր Ալեքսանդրիա քաղաքից դուրս՝ մի խցում: Այդ ծերունին սաստիկ ստամբակ էր և կարճամիտ: Եվ մի երիտասարդ, լսելով նրա մասին, պայման կապեց Աստծո հետ՝ խոստանալով. «Բոլոր չարիքների փոխարեն, որ գործել եմ, գնամ հանդիվանեմ ծերունու մոտ, ծառայեմ և հանգստացնեմ նրան»: Եվ գնալով՝ բնակվեց ծերունու մոտ, իսկ ծերունին հանապազօր անարգում էր նրան՝ որպես շան: Աստված տեսավ եղբոր համբերությունն ու խոնարհությունը, և Ծերի հետ բնակվելուց վեց տարի անց եղբայրը երազում տեսավ մի հսկայի, ով մեծ մագաղաթ ուներ, և ցույց տվեց նրան մագաղաթի կեսը ջնջված, իսկ մյուս կեսին դեռ գիր կար, և ասաց նրան. «Ահա կեսը, որ պարտք էիր, ջնջեց Տերը: Ջա՛նք թափիր նաև մյուսների համար»: Մոտերքում բնակվող մեկ այլ հոգևոր ծեր էլ կար, որ ամեն օր լսում էր, թե ինչպես էր այդ ծերը լրբաբար նեղում, անարգում ու տրտմեցնում եղբորը, և թե ինչպես էր վերջինս խոնարհվում, իսկ ծերը չէր հաշտվում նրա հետ: Եվ որքան հանդիպում էր երիտասարդին հոգևոր ծերը, որ դրացին էր, հարցնում էր նրան. «Ինչպե՞ս ես, որդյա՛կ, ինչպե՞ս անցավ այսօր, մի բան շահեցի՞ք արդյոք, մի բան ջնջեցի՞ք այն մագաղաթից»: Եվ գիտենալով, որ հոգևոր ծեր է, եղբայրը ոչինչ չէր թաքցնում նրանից, այլ ասում էր. «Այո՛, հա՛յր, շահեցինք»: Իսկ եթե երբեմն թերի էր անցնում և չէր անարգում, չէր թքում երեսին կամ հալածում իր ծերը, երեկոյան եղբայրը լալով գնում էր հարևան ծերի մոտ և ասում. «Վա՜յ ինձ, աբբա՛, չար էր ինձ համար այս օրը, քանզի ոչինչ չշահեցի, այլ հանգստությամբ անցկացրի»: Վեց տարի անց ննջեց եղբայրը, և հոգևոր ծերը հավաստեց, թե. «Տեսա նրան, որ բազում մարտիրոսների հետ համարձակությամբ կանգնած էր և իր ծերի համար աղաչում էր Տիրոջն ու ասում. "Տե՛ր, ինչպես որ նրա միջոցով ինձ ողորմեցիր, ողորմի՛ր և նրան՝ հանուն քո գթության, որ ես եմ աղերսում նրա համար"»: Եվ քառասուն օր անց Տերն Իր մոտ՝ հանգստյան վայր, առավ նաև ծերին: Ահա ինչպիսի՛ համարձակու-

թյուն ունեն նրանք, ովքեր հանուն Քրիստոսի համբերում են նեղութիւնների:

42. Իսիդորոս Երանելին, գնալով սուրբ Անտոնիոսի մոտ, նրանից լսեց հետևյալ պատմությունը. «Պոտամինեա անունով մի գեղեցիկ մանկամարդ կին Մաքսիմիանոս Հալածիչի ժամանակներում անառակներից մեկի աղախինն էր, և ժամանակ առ ժամանակ նրա տերը ուզում էր գայթակղել նրան, բայց չկարողացավ: Իսկ հետո բարկանալով՝ նրան՝ որպես քրիստոնյայի և նրանց չաստվածներին հայհոյողի, մատնեց դատավորի ձեռքը, որն այդ ժամանակ Ալեքսանդրիա քաղաքում էր: Եվ բազում դանձեր խոստանալով դատավորին՝ ասաց. «Եթե համոզես նրան, որ կենակցի ինձ հետ, նրան բաց կթողնես առանց տանջանքների, իսկ եթե մնա իր առաջվա համառության մեջ, տանջանքներո՛վ սպանիր, որպեսզի կենդանի մնալով՝ չծիծաղի իմ զեխությունների վրա»: Եվ բերման ենթարկվելով ատյանի առաջ՝ կինը արիաբար դիմացավ զանազան տանջանքների՝ տարբեր գործիքներով, բազմապիսի մեղադրանքների դեմ պայքարեց, որի պատճառով դատավորը, տանջանքի ավելի դառը հնարք մտածելով, հրամայեց մի մեծ կաթսա ձեթով լցնել և թեժ կրակի վրա եռացնել: Երբ ձեթը եռաց և ալիքներ կազմեց, իշխանն ասաց. «Կա՛մ կգնաս և կհնազանդվես քո տիրոջ կամքին, կա՛մ իմացած եղի՛ր , որ հրամայելու եմ կաթսայի մեջ գցել քեզ»: Եվ նա պատասխանեց. «Ոչ մի բան երբեք, անիրա՛վ դատավոր, չի կարող ստիպել ինձ հնազանդվելու անառակությանը»: Այնժամ դատավորը հրամայեց մերկացնել նրան և գցել կաթսան: Այդ ժամանակ Պոտամինեան աղաղակեց և ասաց. «Երդվեցնում եմ քեզ թագավորի գլխով, որից դու երկնչում ես. եթե քեզ հաճո եղավ ինձ այսպես դատել, մի՛ հրամայիր մերկացնել ինձ, այլ հրամայի՛ր ինձ քիչ առ քիչ իջեցնել եռացող ձեթի մեջ, որպեսզի տեսնենք, թե որքան համբերություն կշնորհի ինձ Քրիստոս, որին դու չես ճանաչում»: Իջեցրին դանդաղ՝ մոտ երեք ժամ, մինչև որ ձեթը հասավ նրա սուրբ պարանոցին, և նա վախճանվեց: Եվ բազում այլ այրեր և կանայք ևս Քրիստոսի համար նահատակվեցին այն ժամանակ Ալեքսանդրիա քաղաքում՝ ի փառս ամենասուրբ Երրորդության»:

43. Հայր Պիմենը և իր եղբայր Հոբը ապրում էին Եվրակիա անապատում, և նրանց մայրը գնաց նրանց տեսնելու: Երբ որդիներն իմացան, մտան եկեղեցի և փակեցին դուռը, իսկ մայրը ողորմագին ձայնով ու կարոտակեզ խոսքերով լաց էր լինում դրսում, իսկ նրանք լսում էին: Եվ Հոբը, գալով դռան մոտ, ասաց. «Ի՞նչ ես ուզում դու, կի՛ն,

ինչո՞ւ ես լալիս»: Եվ մայրն ասաց. «Կեղեքվում եմ կարոտից և խորովվում եմ գորովից, որով սնուցեցի ձեզ և ծնեցի: Ինչո՞ւ եք փախչում ձեր մորից»: Եվ Հոբն ասաց. «Այստե՞ղ ես կամենում մեզ տեսնել, թե՞ կամենում ես մշտնջենական կյանքը վայելել մեզ հետ»: Եվ մայրն ասաց. «Այստեղ չտեսնե՞մ»: Եվ որդին ասաց. «Եթե կարողանաս համբերել այս աշխարհում, այնտեղ միշտ մեզ հետ կլինես»: Եվ մայրն ուրախացավ ու դարձյալ մխիթարված՝ գնաց խնդությամբ: Եվ եղբայրներն ասացին միմյանց. «Մեր մորը չտեսանք, հետևաբար միմյանցով մխիթարվել և միասին ապրել ևս պետք չէ»: Եվ հեռացան իրարից. Պիմենը՝ դեպի արևելք, Հոբը՝ դեպի արևմուտք՝ ծովեզրի կողմը: Եվ շատ ժամանակ անց, երբ մոտ էր վախճանը, գնաց Հոբը եղբոր մոտ և տեսավ, որ նա արմավ էր ուտում: Հոբն ասաց նրան. «Մորդ անմխիթար թողեցիր, իսկ դու արմավո՞վ ես մխիթարվում»: Եվ Պիմենն ասաց նրան. «Մեղա Աստծո առաջ, որովհետև հասավ իմ մահվան օրը, բարիք խնդրեցի և կերա, այժմ հեռացի՛ր ինձնից, որպեսզի մարմնիս և հոգուս բաժանման ժամին ինձ մխիթարող չլինես»: Եվ Հոբը գնաց, յոթ օր հետո գալով՝ ողբալով ամփոփեց նրա մարմինը:

44. Ամոնի աշակերտ Հովհան Կրտսերի մասին ասում էին, թե տասներկու տարի սպասավորություն արեց ծերին և նրա մոտ էր ապրում՝ ծերպերում, իսկ ծերի տկարության ժամանակ շատ նեղություններ կրեց նրա համար, բայց երբեք ծերից չլսեց, թե՝ կեցցե՛ս: Իսկ երբ մոտ էր վախճանին, և նրա մոտ այլ ծերեր էլ էին նստած, բռնեց ծերը Հովհանի ձեռքը և ասաց նրան. «Կեցցե՛ս, կեցցե՛ս, կեցցե՛ս»: Եվ նրան հանձնելով ծերերին՝ ասաց. «Սա հրեշտակ է, ոչ թե մարդ»:

45. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Եթե ինչ-որ տեղում լինեմ, և ինձ վրա նեղություն գա, և չլինի մեկը, ում հայտնեմ նեղությունս, ի՞նչ պետք է անեմ»: Ասաց նրան ծերը. «Հավատում եմ Աստծուն, որ նա կառաքի իր շնորհները և կօգնի քեզ, եթե դու հավատով խնդրես նրանից: Լսեցի, որ Սկյութիայում եղել է այդպիսի դեպք. մի ճգնավոր կար, և քանի որ չուներ մեկը, որի մոտ գնար և հայտներ իր մտատանջությունները, երեկոյան պատրաստեց իր մախաղը, որպեսզի առավոտյան գնա: Եվ ահա գիշերը նրան հայտնվեց Աստծու շնորհը՝ կույսի տեսքով, մխիթարեց և ասաց. «Ոչ մի տեղ մի՛ գնա, այլ նստի՛ր այստեղ՝ ինձ հետ, որովհետև քեզ չի պատահի այն չարիքներից և ոչ մեկը, որ լսեցիր»: Եվ նա անսալով՝ նստեց, և շատ շուտով ապաքինվեց նրա սիրտը»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

46. Մի անգամ եղբայրները գնացին հայր Անտոնիոսի մոտ և ասացին նրան. «Մեզ խո՛սք ասա, հա՛յր, որով ապրենք»: Ասաց նրանց ծերը. «Դուք լսել եք Ավետարանից, որովհետև այնտեղ ամեն բան գրված է. կատարե՛ք այն և կապրեք»: Եղբայրները նրան ասացին. «Սակայն քեզնից ևս կամենում ենք խոսք լսել, հա՛յր»: Ծերն ասաց նրանց. «Ավետարանում այսպես է գրված. «Եթե մեկը քո աջ ծնոտին հարվածի, դու մյո՛ւսն էլ դարձրու նրան» (Մատթ. Ե, 39, Ղուկ. Զ, 29)*: Այդպե՛ս արեք և դուք»: Եղբայրներն ասացին. «Այդ չենք կարող անել»: Ծերն ասաց. «Եթե չեք կարող մյուսը դարձնել, ապա մի կողմին համբերե՛ք»: Եղբայրներն ասացին. «Ոչ էլ այդ կարող ենք անել»: Ծերն ասաց նրանց. «Եթե այս ևս չեք կարող անել, ապա գոնե դո՛ւք հարվածող մի եղեք»: Նրան ասացին. «Այդ ևս չենք կարող անել»: Այնժամ ծերն ասաց իր աշակերտին. «Այս եղբայրների համար կերակուր պատրաստի՛ր, որովհետև հիվանդ են: Եթե այս ամենն իրենք չեն կարող անել, ես ի՞նչ կարող եմ անել սրանց համար»:*

47. Ոմն եղբայր հարցրեց հայր Աղաթոնին և ասաց. «Պատվիրան հասավ ինձ, և պատվիրյալը պատերազմի վայրում է: Կամենում եմ գնալ այնտեղ, բայց վախենում եմ պատերազմից»: Ծերն ասաց. «Եթե Աղաթոնը լիներ, պատվիրանը կկատարեր և այն պատերազմը կհաղթահարեր հոր աղոթքներով ու հնազանդության զորությամբ»:

48. Հայր Բեսարիոնի մասին աշակերտներն ասում էին, թե նրա կյանքը նման էր թռչունի կամ վայրի կենդանու կյանքին՝ անհոգ և անխռով: Այս հանդարտությամբ էլ ավարտեց իր օրերը, ո՛չ հոգաց տան համար, ո՛չ ցանկացավ մնալ հանգստյան վայրում, երբեք կերակրով չհագեցավ և ո՛չ էլ որևէ բան վերցրեց աշխարհից իր կարիքների համար: Նա, իբրև անմարմին, կատարելապես վեր էր մարմնից և նրա ախտերից: Հանդերձյալ բարիքների հույսով էր կերակրվում և Աստծո հավատով հաստատված էր կենցաղավարում, ամեն տեսակ վշտերին համբերում էր և գերու նման մերկ էր շրջում: Ե՛վ ձմռան սառնամանիքներով էր նեղում իրեն, և՛ ամռան տոթով, շրջում էր նա անկոխ ու անմարդաբնակ վայրերում, դժվարամատչելի փապարներում, ապառաժուտներում ու անձուկ կիրճերում, անմխիթար տեղերում և ծովի ափերին, և որտեղ պատահեր՝ այնտեղ գիշերում էր ու այնտեղից գնում: Իսկ եթե երբեմն էլ վանք էր գալիս՝ մենակյացների մոտ, նստում էր վանքի դռան մոտ և լաց էր լինում, ծովի ալիքներից մազա-

պուրծ պրծածի նման ողբում էր: Եվ եթե եղբայրներից մեկը դուրս էր ելնում և տեսնում էր նրան այդպես մուրացիկի նման գետնատարած ողբալիս՝ խղճում էր, խանդաղատում և ասում. «Ինչո՞ւ ես լալիս, ո՛վ մարդ, ի՞նչ է պատահել քեզ»: Իսկ եթե մեկը ուզում էր նրան տուն տանել կամ կերակրել, նա ասում էր. «Բնավ չեմ կարող հարկի տակ մտնել, եթե նախ չգտնեմ իմ տան հարստությունը, որովհետև կորավ իմ բազմապիսի հարստությունը, քանզի ցամաքում ընկա ավազակների ձեռքը, ծովում նավաբեկ եղա և ընկա աղքատության մեջ, իմ փառքից ու պատվից զրկվելով՝ անպատվության ու աղքատության մատնվեցի»: Իսկ ով լսում էր նրա խոսքերը, նրան հաց էր տալիս ու ասում. «Վերցրո՛ւ այս կերակուրը, իսկ տունդ և ունեցվածքդ, որ կորցրիր, Աստվա՛ծ թող տա քեզ: Իսկ նա, երբ լսում էր այս, առավել ևս ողբում էր և ասում. «Չգիտեմ՝ արդյոք կարո՞ղ եմ գտնել այն, ինչ կորցրի, այլ մահ եմ խնդրում ինձ համար, քանզի հույս չունեմ այսուհետև փարատում գտնելու վշտերիս և տառապանքներիս»:

49. Հայր Բենիամինն ասաց. «Արքայական ճանապարհո՛վ գնացեք, հաշվեցե՛ք մղոնները և մի՛ ճանձրացեք»:

50. Ոմն եղբայր գնաց հայր Բիկտոր մենակյացի մոտ՝ Ելյուզո կոչված վանքը, և ասաց նրան. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև ինձ նեղում են վհատության ու կարճամտության ախտերը»: Ծերը նրան ասաց. «Դա հոգու հիվանդություն է, օրինակ՝ ում աչքերը ցավում են, կարծում է, թե լույսը շատ ուժեղ է, իսկ ում աչքերը առողջ են, լույսը նվազ է տեսնում: Այդպես են և կարճամիտները, որոնք փոքր վշտերից խորտակվում են և կարծում են, թե անտանելի վիշտ եկավ իրենց վրա, իսկ ում հոգին առողջ է, վշտերի և նեղությունների վրա հասնելուց ավելի է ուրախանում»:

51. Հայր Դանիելը մեզ պատմում էր թե մի կրոնավոր կար, որի անունը Դուլաս էր, և նա մեծ հայրերից էր համարվում: Այդ Դուլասը միաբանների հետ ապրեց քառասուն տարի և ասում էր. «Կենցաղավարության բազում տեսակներ եմ փորձել և գտա, որ բազում եղբայրների մեջ հեշտությամբ են կատարվում առաքինության գործերը, եթե ի սրտե գալիս են բնակվելու այնտեղ: Որովհետև մի եղբայր կար՝ տեսակով խոնարհ և արհամարհված, իսկ գործերով՝ բարձր և Աստծուց պատվված: Բնակվում էր միաբան եղբայրների հետ: Սա բոլորի կողմից անարգված էր, քանզի բոլոր եղբայրները չար նախանձով նեղում էին նրան. մեկը խփում էր, իսկ ոմանք՝ թքում, ոմանք էլ նախատում և անարգում էին նրան: Քսան տարի այսպես շարունակվելուց հետո,

այլևս չհամբերեց դևը՝ տեսնելով նրա հոգու մեծությունը, նրա մտքի արիությունն ու սրտի համբերատարությունը, այլ հնար գտավ նրան վհատեցնելու. դրդեց եղբայրներից մեկին, և նա գիշերը, երբ եղբայրները քնած էին, մտնելով եկեղեցի՝ գողացավ քահանայական բոլոր անոթները և վանքից դուրս գալով՝ գնաց: Իսկ երբ աղոթքի ժամը եկավ, սարկավագը մտավ խնկելու և տեսավ՝ ամենը կողոպտված, և դուրս գալով՝ պատմեց վանահորը: Եվ զանգերը հնչեցնելուց հետո հավաքվեցին եղբայրները և սկսեցին վրդովվել, մեծ աղմուկ բարձրացավ, և բոլորն ասում էին, թե ոչ այլ ոք է արել այս բանը, եթե ոչ՝ այսինչ եղբայրը, դրա համար էլ այսօր եկեղեցի չի եկել: Եթե ինքը արած չլիներ այս բանը, ինչպես որ միշտ սովոր էր մեզանից առաջ գալ, նույնպես և հիմա արդեն եկած կլիներ: Մարդ ուղարկեցին նրա մոտ և նրան գտան աղոթք անելիս, կոտրեցին դուռը և ներխուժելով՝ նրան դուրս քաշեցին: Իսկ նա աղաչում էր նրանց և հարցնում. «Ի՞նչ եմ արել, ի՞նչ»: Իսկ նրանք անարգանքով ասում էին. «Արի՛ գնանք մեզ հետ, դո՛ւ, եկեղեցակողոպտի՛չ, արժանի չես ապրելու, արի՛ մեզ հետ: Բավական չէ, որ այսքան ժամանակ նեղեցիր ու վրդովեցրիր մեզ, հիմա էլ ձեռնարկել ես մեր հոգիների կորուստը»: Իսկ նա ասում էր. «Մեղա՛, թողությո՛ւն տվեք ինձ»: Եվ նրան բերելով առաջնորդի մոտ՝ ասացին. «Սա՛ է, հա՛յր, առաջուց իսկ մեր վանքն ավերողը»: Եվ նրանցից յուրաքանչյուրն սկսեց ամբաստանել. մեկն ասում էր. «Ես սրան տեսա գաղտնի բանջար ուտելիս», մեկ ուրիշն ասում էր. «Գողացված հաց էր դուրս հանում», իսկ մեկ այլն ասում էր. «Ես դրան տեսա, որ եկեղեցում գինի էր խմում»: Ահա այսպիսի սուտ բաներ էին վկայում այն արդարի դեմ: Իսկ նա ճշմարիտն էր ասում, թե. «Ես դրանց մասին, ինչ ասում եք, ոչինչ չգիտեմ»: Բայց նրանք ամենևին չէին հավատում նրան: Այնժամ առաջնորդը մերկացրեց նրան կրոնավորի հանդերձներից և ասաց. «Քո այդ գործերը քրիստոնյայի գործեր չեն»: Շղթայեցին նրա ձեռքերն ու ոտքերը և հանձնեցին վանքի տնտեսին՝ տանջանքների ենթարկելու համար: Նա գանահարեց նրան արջառաջիլ մտրակով, ապա հարցրեց նրան ու ասաց. «Ճշմարի՞տ է՝ ինչ ասում են քո մասին»: Իսկ նա ժպտալով պատասխանեց. «Ների՛ր ինձ, որովհետև հանցավոր եմ և չգիտեմ»: Դրա վրա զայրանալով՝ տնտեսը բավական տանջեց նրան, ապա բանտ գցեց, ոտքերը պնդեց կոճղի մեջ և նրա մասին գրեց դուքսին: Դուքսի սպասավորները եկան և շղթայակապ տարան նրան: Երբ կանգնեցին նրա առաջ, դուքսը հարցրեց. «Որտեղի՞ց ես դու, մա՛րդ, ո՞ր աշխարհից, կամ ինչո՞ւ դարձար կրոնավոր»: Իսկ նա ոչինչ չպատասխանեց, այլ միայն այս

ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ»: Բարկացավ իշխանը և հրամայեց մերկացնել արդարին, արջառաջիլ մտրակով ծեծել և թիկունքի մաշկը հերձել: Եվ երբ սկսեցին խփել, նա ժպտալով ասաց իշխանին. «Ծեծելով ես կոփում իմ արծաթը, որ առավել ևս պայծառանա»: Իսկ դուքսն ասաց. «Եվ ես իբրև ճերմակ ձյուն կդարձնեմ քո հիմարությունը»: Եվ հրամայեց կրակ լցնել նրա որովայնի վրա, հրից խոցված տեղերի վրա քացախ և աղ ցանել: Եվ ովքեր կատարում էին այդ հրամանը, զարմանում էին նրա արիության ու համբերության վրա և ասում էին. «Ասա՛ մեզ, ո՞ւր են եկեղեցու անոթները, և մենք կարձակենք քեզ»: Իսկ նա պատասխանում էր. «Ինչ որ չգիտեմ՝ ինչպե՞ս ասեմ. մի բան, որ իմ արածը չէ»: Եվ դուքսը մեծ դժկամությամբ հրամայեց դադարեցնել սրբին ծեծելը և բանտ գցեց: Հաջորդ առավոտյան նա կանչեց իր մոտ վանահորն ու եղբայրներին, և երբ եկան նրա մոտ, ասաց նրանց. «Խիստ ու սաստիկ տանջեցի նրան, բայց ոչ մի բան չիմացա»: Եղբայրներն ասացին. «Ամենապատի՛վ իշխան, շատ ուրիշ չարիքներ էլ է գործել այդ մարդը, բայց մենք համբերելով սպասել ենք նրա դարձին, իսկ նա ամենաստոր չարիքը գործեց»: Եվ դուքսն ասաց. «Եվ ի՞նչ եք կամենում, որ անեմ նրան»: Ասացին նրան. «Ինչ որ օրենքն է ասում»: Դուքսն ասաց. «Օրենքն ասում է, որ եկեղեցու կողոպտիչը պետք է մեռնի»: Եվ նրանք ասացին. «Թո՛ղ մեռնի դա»: Այնժամ դուքսը արձակեց նրանց, իսկ եղբորը հանձնեց դահճին, որպեսզի սպանի նրան: Բռնելով սրբին և արդարին՝ տարան սպանության վայրը: Այդ ժամանակ անոթները գողացող եղբայրը, տեսնելով, որ վճիռ կայացվեց, զղջաց և ասաց. «Գող եղա, մարդասպան էլ կդառնամ: Սա անմեղ կմեռնի և հոգով կապրի, իսկ ես մեղավոր կմնամ և կկորչեմ: Ո՜վ եղկելի անձ իմ, եթե անոթներն այժմ թաքցված են, ապա հետագայում թաքցված չեն մնա, իսկ եթե բացահայտվեց՝ մեռնելու ես: Եթե այստեղ անգամ թաքուն մնա, Աստծուց ծածուկ չի մնա, և ի՞նչ պատասխան պիտի տաս դատաստանի օրը»: Հապճեպ գնաց առաջնորդի մոտ և ասաց. «Օգնի՛ր, հա՛յր, որպեսզի չմեռնի արդարը: Ես գիտեմ, թե որտեղ են անոթները»: Այնժամ վանահայրը լուր ուղարկեց իշխանին և պատմեց նրան այդ ամենը, իսկ իշխանը գնաց դահճի մոտ և տեսավ եղբորը կապված, սուրը՝ մերկացված, և սուրբը՝ պատրաստ մեռնելու: Արձակեց նրա կապանքները և դնելով պատգարակի վրա՝ ուղարկեց վանք: Իսկ եղբայրներն սկսեցին ընկնել նրա առաջ և ասել. «Մեղանչեցինք քո առաջ, թողությո՛ւն շնորհիր մեզ»: Իսկ նա սկսեց ողբալ և ասել. «Թողությո՛ւն տվեք ինձ, եղբայրնե՛ր, որովհետև ես ինձ շնորհապարտ եմ համարում ձեզ, քանզի այս փոքր-ինչ ցավերի

ու չարչարանքների շնորհիվ մնում եմ Աստծո մեծ ողորմության մեջ: Դրա համար էլ ուրախ էի ինձ չարախոսելու համար և ժպտալով էի խոսում, քանզի այս նվազագույն արհամարհանքների դիմաց մեծամեծ վարձք ստացա: Այլ ձեզ համար էի տրտմում, քանզի չէի կամենում, որ ձեր հանցանքների գնով ես արդարանայի»: Եվս երեք օր ապրեց եղբայրն այն մահճում և գնաց Տիրոջ մոտ, Ում կարոտում էր միշտ: Եղբայրներից մեկը գնաց տեսնելու, թե ինչպես է նա, և նրան գտավ ծնկերի վրա աղոթելիս՝ հոգին ավանդած, և դեռևս այդ դիրքում էր մնում: Վերադառնալով՝ պատմեց մեծ վանքի վանահորը, իսկ վանահայրը հրահանգեց նրա մարմինը բերել եկեղեցի: Նրա մարմինը դրին սարկավագանոցում, և դուռը կնքելով՝ սպասում էին վանահորը, որ նա գա, և ապա մեծ պատվով թաղեն նրան՝ որպես Քրիստոսի վկայի: Եվ երբ եկան մեծ վանքի հայրերն ու եղբայրները, և երգիչները կատարեցին թաղման կարգը, մեծ վանքի վանահայրն ասաց տեղի առաջնորդին. «Բացե՛ք սարկավագանոցի դուռը և հանե՛ք սրբի մարմինը, որպեսզի թաղենք, որովհետև արդեն ժամը ինն է»: Եվ երբ բացեցին, ոչինչ չգտան, այլ միայն նրա սանդալները, քանզի Աստված փոխադրել էր նրան կենդանյաց երկիր: Եվ զարմանալով ամենքը հիացան այդ մեծ սքանչելիքի վրա, փառավորեցին Աստծուն և արտասվելով ասացին. «Տեսե՛ք, թե ինչ շնորհներ է մեզ պարգևում երկայնամտությունը և համբերատարությունը, խոնարհությունն ու չարչարանակրությունը»: Եվ մենք, տեսնելով համբերության այս սքանչելի պատիվը, նախանձախնդիր լինելով համբերության և խոնարհության գեղեցիկ շնորհներին՝ գնա՛նք ճգնելու և համբերելով ամոթի և արհամարհանքների՝ քաջալերվելով մխիթարվենք փորձության ժամին, որը մեզ կարժանացնի Երկնքի Արքայության՝ շնորհներով մեր Քրիստոս Աստծո:

52. Հայր Եսայիասն ասաց. «Ոչինչ այնքան շահեկան և խրատատու չէ նորեկ եղբոր համար, որքան անարգանքն ու թշնամությունը. ինչպես օրինակ՝ տունկն է օրըստօրե ոռոգվում և արագ աճ տալիս, նույնպես և նորեկ եղբայրն է առաքինանում, եթե համբերում է թշնամանքին և նախատինքներին»:

53. Դարձյալ ասաց. «Երանի նրանց, ովքեր գիտությամբ են տքնում, որովհետև իմաստությունը նրանց կհանգստացնի ամեն տեսակ դժվարություններից և հետ կդարձնի դևերի պատրանքներն ու դավադրությունները, որոնք բոլոր բարի գործերի խափանիչներն են: Հատկապես աղոթքներից են ծուլացնում նրանց, ովքեր ջանում են Աստծուն

ծառայել. դրա համար երանելի է ամեն ինչում ինքն իրեն դատելը և իմաստությամբ ու չափավորապես ճգնելը»:

54. Ասաց դարձյալ. «Բոլոր ճգնությունների սկիզբը առանձնակեցությունն է, երբ մեկը միայնակ, թողնելով իր բնակության վայրը, փախչում է և այլ վայր գնում: Այդպիսինին անհրաժեշտ է իր հետ ընկեր ունենալ հավատը, հույսը, սերը և հաստատուն սիրտը և կամքի մեջ ամուր լինել: Որովհետև այդ ժամանակ ամեն կողմից նրան կշրջապատեն պատերազմներ և բազմօրինակ վշտեր կբերեն միտքը և կվախեցնեն՝ ասելով. «Կընկնես փորձությունների, աղքատության և հիվանդությունների մեջ և շատ շատերի ատելությանը կարժանանաս: Եթե սրանք պատահեն, ի՞նչ պետք է անես այն ժամանակ, մինչդեռ ոչ ծանոթ չունես և ոչ էլ քո հանդեպ ողորմած մեկը, ոչ քեզ գթացող ունես, ոչ էլ հոգաբարձու: Ունես ո՛չ տուն, ո՛չ էլ ապաստանելու տեղ»: Այս ամենը հիշելով՝ մտահեղձ կլինի: Բազում անգամ այսպես կփորձի նրան Աստծո գթությունը, որպեսզի պարզի նրա ջանքն ու սերը առ Աստված: Սակայն դու այս ամենից մի՛ երկնչիր, քանզի Աստված երբեք չի թողնում ոչ ոքի, ով փնտրում է Իրեն:

55. Հայր Եսայիասն ասաց. «Եթե քո միտքը չաղոթի քո մարմնի հետ, սուտ է քո վաստակը, որովհետև եթե դու սիրես վշտերը, հետո դրանք ուրախության կփոխվեն քեզ համար»:

56. Մի եղբայր խորհուրդները գործադրելու պայքարի մեջ էր, և այն պատմեց հայր Իլակրեին: Իսկ ծերը, կամենալով ամրապնդել նրան, ասաց. «Ոմն կրոնավոր Սկիտեում մի շատ հնազանդ աշակերտ ուներ, որը, նրա մոտ բազում տարիներ ապրելով և ինքն իր մեջ պատերազմ ունենալով, ասաց ծերին. «Ինձ մենակյա՛ց դարձրու, հա՛յր, անապատի մի որևէ խոր տեղում»: Ծերն ասաց. «Գնա՛ քեզ համար տեղ փնտրիր, ուր հաճելի կթվա քեզ, և այնտեղ սենյակ կշինենք քեզ համար»: Եվ աշակերտը փնտրելով մի տեղ գտավ՝ ծերի սենյակից մեկ մղոն հեռու, և միասին գնալով այնտեղ՝ սենյակ շինեցին: Ծերն ասաց աշակերտին. «Ինչ պատվիրեմ քեզ, կատարի՛ր. երբ քաղցես՝ կուտես, երբ ծարավես՝ կխմես, երբ քունդ գա՝ կննջես, միայն թե քո սենյակից դուրս չգաս՝ մինչև շաբաթ, ապա դուրս կելնես սենյակից և կգաս ինձ մոտ»: Երկու օր եղբայրն արեց այնպես, ինչպես պատվիրել էր ծերը: Սակայն երրորդ օրը ձանձրացավ և իր մտքում ասաց. «Այս ի՞նչ արեց ինձ հետ ծերը»: Եվ վեր կենալով սկսեց ավելի շատ սաղմոսել, ապա արևը մայր մտնելուց հետո ճաշակեց և գնաց դեպի մահիճը, որ ննջի, և իր մահճում տեսավ ընկողմանած մի սև հնդիկի, որ ատամ-

ներն էր կրճատացնում իր վրա: Եվ նրա ահից գլխապատառ փախավ ու եկավ ծերի մոտ, բախեց դռներն ու ասաց. «Հա՛յր, ողորմի՛ր ինձ և բա՛ց քո դուռը»: Իսկ հայրը հասկացավ, որ չպահեց իր պատվիրանները: Ուստի չբացեց դուռը նրա առջև մինչ առավոտ: Առավոտյան բացելով՝ տեսավ, որ դրսում կուչ եկած՝ լալիս էր ու աղաչում: Գթաց նրան հայրը և տարավ սենյակ: Եղբայրն ասաց. «Սև հնդիկ տեսա իմ մահճում, երբ կամենում էի ննջել»: Ծերը նրան ասաց. «Դա քեզ հետ պատահեց, որովհետև չպահեցիր իմ խոսքը»: Այնժամ նրա վրա ապաշխարության կարգ սահմանեց՝ նրա կարողության չափով. և այդ աշակերտը ընտիր կրոնավոր դարձավ:

57. Հարցրեց մի անգամ մի եղբայր հայր Թեոդորեին և ասաց. «Եթե հանկարծակի մի երկյուղալի բան պատահի, դու չե՞ս երկնչի, հա՛յր»: Ասաց նրան հայրը. «Եթե երկինքն անգամ ընկնի երկրի վրա, հայր Թեոդորեն բնավ չի երկնչի, որովհետև նա խնդրել է Աստծուն, և Աստված նրանից վերցրել է երկչոտությունը»:

58. Ասում էին հայր Թեոդորեի և հայր Լուկիայի մասին, թե նրանք հիսուն տարի կասեցրին իրենց խորհուրդները՝ ասելով. «Ցմռանից հետո կգնանք այստեղից», իսկ երբ գալիս էր ամառը՝ «Այս ամառվանից հետո կգնանք»: Այսպես լրացրին իրենց կյանքի բոլոր օրերը:

59. Մի եղբայր սաստիկ բորոտեց, և դրա մասին դևերն ասում էին. «Կրոնավորության պատճառով այդ եղավ, ինչո՞ւ ես դու համբերում դրան, որ վերքերդ ծանրանան և որդնե՞ն»: Բայց եղբայրն իր համբերությամբ հաղթեց չար խորհուրդներին ու ազատվեց թշնամու որոգայթից, քանզի Տերը, տեսնելով նրա համբերությունը, ազատեց նրան ցավերից և բորոտությունից, քանզի ովքեր համբերում են հույսով, օգնում է նրանց, քանզի Տերը մոտ է իրենից երկյուղածներին:

60. Հայր Իսիդորեն ասաց. «Սրբերի իմաստությունն ա՛յս է, որ ճանաչեն Աստծո կամքը: Մարդ ամեն ինչ հաղթահարում է իր համբերությամբ, որովհետև հնազանդվում է ճշմարտությանը, և որովհետև մարդը Աստծո պատկերն է: Դրա համար էլ դիվական է իր կամքին հետևելը և իր հաճույքների մասին խորհելը, չհնազանդվելն ու չհետևելը Աստծո օրենքներին: Արդ, հիմա՛ է Աստծուն ծառայելու ժամանակը, և ահա՛ փրկության օրը, երբ վշտեր կան: Եվ ովքեր օրենքներով են ընթանում և համբերությամբ՝ կշահեն իրենց անձերը»:

61. Պատմեց հայր Պիմենը Հովհան Կարճահասակի մասին, թե վերջինս խնդրեց Աստծուն, և Աստված հեռացրեց նրանից մարմնի պա-

տերազմը, և ամեն ինչից ազատ եղավ: Տեսնելով այս՝ գնաց ոմն մեծանուն ծերի մոտ, պատմեց նրան այդ մասին և ասաց. «Ես ինձ մեծ հանգստի մեջ եմ զգում, որովհետև ոչ մի պատերազմ չկա ինձ վրա»: Ասաց նրան ծերը. «Գնա՛ և վերստին աղաչի՛ր Տիրոջը, որպեսզի դարձյալ թողնի քո մեջ ներքին պայքարը, որովհետև այդպիսի պատերազմով են հասնում մեծամեծ բարությունների»: Հովհան Կարճահասակը աղաչեց Տիրոջը, և դարձյալ եկան պատերազմները, և այլևս երբեք չէր աղոթում, որ Տերը վերցներ դրանք իրենից, այլ զորություն էր խնդրում, որպեսզի համբերեր բոլոր փորձություններին:

62. Հայր Պիմենը հայր Կոպրիոսի մասին ասաց, թե այնպիսի վիճակի հասավ, որ հիվանդանալով՝ բազում տարիներ գամվեց անկողնուն, սակայն երբեք չկամեցավ իր կամքը կատարել, այլ ասում էր. «Երանելի է այն մարդը, ով համբերում է փորձություններին»:

63. Մի անգամ հայր Մակարիոսը գնաց հայր Անտոնիոսի մոտ, և երբ բախեց դուռը, հայր Անտոնիոսը դուրս եկավ և հարցրեց. «Ո՞վ ես դու»: Եվ նա ասաց. «Ես Մակարիոսն եմ»: Ծերը փակեց դուռը և նրան թողեց դրսում, իսկ ինքը մեկ ժամի չափ այդպես մնաց խցի ներսում: Բայց երբ տեսավ Մակարիոսի համբերությունը, բացեց դուռը և ուրախությամբ ընդունելով նրան՝ ասաց. «Շատ ժամանակից ի վեր ցանկանում էի քեզ տեսնել, քանզի շատերից էի լսել քո մասին»: Եվ հյուրընկալելով՝ սիրով հանգստացրեց նրան, որովհետև մեծ դժվարությամբ էր եկել հեռվից: Երբ երեկո եղավ, հայր Անտոնիոսը թրջեց արմավենու ճյուղերը, որ գործի: Ասաց Մակարը. «Եթե թույլ տաս, ես էլ ինձ համար կթրջեմ»: Անտոնիոսն ասաց. «Դո՛ւ էլ թրջիր»: Մակարիոսը մի մեծ խուրձ խոնավացրեց, և նստելով երկուսով միասին՝ երեկոյից մինչև առավոտ արմավ էին հյուսում և հոգեշահ զրույց էին վարում, իսկ հյուսվածքը պատուհանից դուրս էին երկարում՝ այրի պատի տակ: Երբ տեսավ Մակարիոսը բավականին երկար հյուսվածքը, ասաց. «Բազում զորություններ են դուրս գալիս այս երանելի ձեռքերից»: Ահա այդպիսին էին երանելիները գործի մեջ և մեծամեծ վաստակներում, հատկապես հոգևորի մեջ և հսկման աղոթքներում:

64. Ոմն եղբայր հարցրեց հայր Մակարիոսին և ասաց. «Ի՞նչ են քաջությունն ու աղոթքը, հա՛յր»: Ասաց ծերը. «Քաջությունն ու աղոթքն այն են, երբ մեկը հաղթում է ամեն տեսակ փորձություններին, որոնք գալիս են նրա վրա թե՛ դևերից, թե՛ մարդկանցից, ինչպես գրված է. «Համբերելով համբերեցի Տիրոջը, և նա լսեց իմ աղոթքները» (Սաղմ. Լթ 2)*: Քանզի բարի են աղոթքները, բարի է և փորձություն-*

ներին համբերելը, որպեսզի Տերը օգնի մեզ, և ձեռնամուխ լինենք բարի գործերի, քանի որ կրոնավորին խորթ է եղբոր վրա բարկանալը, խորթ է նաև ընկերոջը տրտմեցնելը, այլ պետք է նախ անել և հետո՝ սովորեցնել: Եվ պարտ է ունենալ կատարյալ խոնարհություն՝ ըստ առաքյալի, որ ասում է. «Առակ ու նշավակ եղանք ողջ աշխարհին» (Ա Կորնթ. Դ 13)*, և թե՝ «Մենք հիմարներ, իսկ դուք՝ իմաստուններ, մենք անարգներ, իսկ դուք՝ փառավորներ»* (Ա Կորնթ. Դ 10)*. արդ, դրա համար էլ պետք է խնդանք՝ մինչ անարգվում ենք, և միշտ փրկություն համարենք վշտերն ու և տուժանքները, որ հանուն Աստծո են գալիս մեզ վրա: Եվ ինչպես Պետրոս առաքյալն է ասում. «Եթե արհամարհվեք Քրիստոսի անվան համար, երանելի եք դուք, և Աստծո Հոգին է բնակված ձեր մեջ»* (Ա Պետ. Դ 14)*: Ուրեմն, եթե դա այդպես է, ապա պետք է ցնծանք, երբ արհամարհված լինենք Տիրոջ անվան համար, ինչպես ասվում է. «Ուրախանում էին, երբ Տիրոջ անվան համար անարգվում էին»* (Գործք. Ե 41)*: Զգիտե՞ք, որ որդիները պարտավոր են հայրերին նմանվել. նույնպես և մենք պետք է նմանվենք Քրիստոսի առաքյալներին, ովքեր Ավետարանով ծնեցին մեզ: Եվ եթե նրանց որդիներն ենք, պարտավոր ենք նաև գործերով նրանց նմանվել, քանզի երբ նրանք անարգվում էին, ուրախանում էին, երբ զրպարտվում էին, մտքով չէին սասանվում, և երբ լսում էին հրեաներից, թե սրանք իրենց աղանդներով ու դյութանքներով ամբողջ աշխարհը խառնեցին, այս ամենից ոչ միայն չէին տրտմում, այլև ուրախանում էին և անիծողներին՝ օրհնում: Եվ այս ամենը գրվեց նրա համար, որ ընթերցենք և նրա՛նց նմանվենք, և երբ հանդիպեն մեզ չարիքներ կամ անարգանք, երբ տուժենք, ծեծվենք կամ զրպարտվենք, կամ սուտ վկայություններ լինեն մեր դեմ, այս գիտությամբ և հույսով ցնծանք ամբողջ սրտով՝ իբրև բազում պատիվներ շահած, որով արժանի լինենք հաղորդակից լինելու առաքյալների, մարտիրոսների և բոլոր հայրերի ճգնություններին: Եթե վշտերին հաղորդակից լինենք, փառքին էլ հաղորդակից կլինենք: Սրանք պարտավոր է գործադրել ամեն մի քրիստոնյա, քանզի սա համընդհանուր օրենք է, որպեսզի աշակերտները լինենք սրանք քարոզողների: Առավել ևս կրոնավորները, որոնք աղքատ են և կամովին հրաժարված են աշխարհից և նրա բոլոր գործերից, պարտավոր են անել այդ»:*

65. Մի ժամանակ հայր Մելիսին իր երկու աշակերտների հետ բնակվում էր Պարսից սահմանի մոտ: Պարսից թագավորի երկու որդիները մտան մայրիների անտառ՝ որս անելու ըստ սովորության: Որսի մեծ

ցանց դրեցին տասներկու մղոն երկարությամբ և քառասուն մղոն խորությամբ, որպեսզի երբ որս գտնեն, քաշեն ցանցի մեջ և նիզակներով խոցելով՝ սպանեն: Ահա այս ցանցի մեջ հանկարծակի հայտնվեցին ծերն ու իր երկու աշակերտները: Եվ երբ տեսան նրանց՝ մերկ ու վայրենի, ծածկված իրենց մազերով, զարմացան և ապշահար նրանց նայեցին երկար ժամանակ, ապա հարցրին սուրբ ծերունուն. «Մա՞րդ ես արդյոք, թե որսի մի նոր տեսակ, ասա՛ մեզ»: Ասաց ծերը. «Մարդ եմ մեղապարտ և եկել եմ այստեղ՝ ողբալու իմ մեղքերը, և երկրպագում եմ կենդանի Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին»: Արքայի որդիներն ասացին ծերին. «Այլ աստված գոյություն չունի, բացի արեգակից և հրից, որ պաշտում ենք: Դու ևս շտապի՛ր նրանց երկրպագության գալու»: Երբ ծերը լսեց այս, ասաց նրանց. «Դրանք մեր Աստծո ստեղծածներն են, և դևերը ձեզ մոլորության մեջ են գցում դրանց վերաբերյալ, սակայն աղաչում եմ ձեզ, թողե՛ք այդ մոլորությունը, ճանաչե՛ք ճշմարտությունը և խոստովանե՛ք Աստծուն, Ով ստեղծեց երկինքն ու երկիրը և բոլոր արարածներին»: Իսկ նրանք ասացին. «Այն խաչյալին և մեռյա՞լին ես ասում, թե ճշմարիտ Աստված է»: Ծերն ասաց. «Այո՛, նրան եմ ասում ճշմարիտ Աստված, որ խաչվեց և ջնջեց մեղքը, մեռավ և սպանեց մահը: Նրան եմ հավատում՝ որպես ճշմարիտ Աստծո»: Իսկ նրանք խստագույնս տանջեցին նրան և սպառնացին այրել կրակի վրա: Եվ մեծամեծ տանջանքներից հետո սպանեցին նրա երկու երանելի աշակերտներին, իսկ ծերն Մելիսիին շատ այլ տանջանքների ենթարկեցին և հետո կանգնեցրին իբրև նշանառության թիրախ, և երկուսով կանգնելով դեմից և հետևից՝ նետահարեցին՝ մեկը սիրտը, մյուսը՝ թիկունքը: Եվ երանելի ծերն Մելիսին ասաց նրանց. «Քանի որ խորհեցիք Քրիստոս Աստծո անպարտ ծառայիս արյունը թափել, վաղը այս ժամին՝ միևնույն պահին, ձեր մայրը անորդի կմնա, ձեր սիրուց կցամաքի, և դուք ձեր նետերով կմեռնեք՝ միմյանց խոցելով, և մեր արյունը ձեզնից կպահանջվի»: Այս ասելով՝ ննջեց երանելի ծերը՝ սուրբ Մելիսին, նահատակվելով վկայական մահով՝ հանուն Տեր Քրիստոս Աստծո: Հաջորդ օրը այնտեղից որսի ելան թագավորի որդիները, և ահա մեծ անապատից գալիս էր խրտնած մի եղջերու, որի հետևից երիվարներով ընկան եղբայրները: Որսը հայտնվեց նրանց մեջտեղում, և երկուսն էլ միաժամանակ արձակեցին նետերը և միմյանց սրտերը մխրճելով՝ սպանեցին իրար: Եվ նրանց վրա կատարվեց սուրբ նահատակ Մելիսի մարգարեությունը, որ անիծեց նրանց՝ ըստ Տիրոջից ստացած հայտնության:

66. Հայր Մարկելիոսի մասին հայր Թեովնան մեզ պատմեց և ասաց. «Նա հանդարտությամբ բնակվում էր մի այրում, որը մոտ էր մի մեծ գյուղի՝ Լիբանանի լեռան կողմում, իսկ այրը լեռան կատարին էր, ուր բնակվում էր նա: Եվ այս հայր Մարկելեն անսահման հեզ և քաղցրաբարո մարդ էր՝ բազում այլ առաքինություններով հանդերձ, և իր մեջ ուներ Աստծո կատարյալ երկյուղը և մարմնի սրբություն, որի համար էլ նրա նկատմամբ մեծ հավատ ունեին այդ գյուղի մարդիկ, այն աստիճան, որ շատերը ելնում էին նրա մոտ և ուսանում նրանից: Եվ այսքան դժվարին տեղում՝ այրի մեջ, ապրեց նա վեց տարի և բազում փորձությունների համբերեց, սրբությունների թշնամի դևերին դիմակայեց, ինչպես ինքն էր ասում, թե ջանում էին իրեն դուրս հանել այրից և խափանել իր բարի գործերը, սակայն նա դիմացավ ամեն ինչի: Իսկ դևը, նրա վրա փորձանք բերել կամենալով, իր չարությանը բնորոշ գործ հղացավ: Ինքը՝ դևը, ընդունեց ծեր Մարկելեի կերպարանքը և դեպի գյուղ գնալով՝ գյուղից դուրս թաքնվեց, և որտեղ կին էր տեսնում՝ գյուղից մենակ դուրս եկած, ծերի կերպարանքով գնում էր նրա մոտ, խոսում էր նրա հետ և ասում. «Կնոջը մերձենալը մեղք չէ, քանզի բնական է այդ»: Եվ պատրում էր նրան, կենակցում նրա հետ և գնում դեպի լեռը: Եվ կրոնավորի տեսքով դևն այդ անում էր բազում անգամ. որտեղ միայնակ կին էր տեսնում, մոտենում էր նրան՝ Մարկելիոսի տեսքով, բռնանում էր և ննջում նրա հետ: Իսկ կանայք՝ ճանճրացած այս ամենից, պատմեցին իրենց տղամարդկանց: Այս խոսակցությունը տարածվեց ամբողջ գյուղում, մեծ բազմություն հավաքվեց կիրակի օրը եկեղեցում, և մեծ աղմուկ բարձրացավ: Քահանայապետը կանչեց իր մոտ այդ կանանց և ստուգելու համար հարցրեց. «Այդպե՞ս է եղել, ննջե՞լ է ձեզ հետ ծերը»: Եվ այդ կանայք՝ մոտ քսան հոգի, ասացին. «Արդարև, այդպես է եղել՝ ոչ մեկ անգամ կամ երկու, այլ բազում անգամ, որովհետև այս էլ երեք տարի է, որ մեզ բռնելով՝ բռնաբարում և նեղացնում է»: Երբ այս լսեց քահանայապետը, չիմացավ, որ դա դևի խարդախությունն է և ակնապատիր երևույթ է: Ուղարկեցին այդ կանանց երիտասարդ ամուսիններին և ասացին. «Գնացե՛ք և այնտեղից չարաչար հալածե՛ք այն չար ծերին»: Գյուղի տղամարդիկ, երբ հասան այնտեղ, սկսեցին բրերով սաստկապես ծեծել այն անպարտ ծերին, փետում էին մորուքը, գանահարում էին և ասում. «Մոլագա՛ր ու չա՛ր մարդ, մենք հավատացինք քեզ՝ իբրև Աստծո սրբի, իսկ դու քո անառակ գործով խայտառակեցիր մեր կանանց՝ նրանց պղծելով»: Եվ այնչափ վիրավորեցին նրան, որ ոտքից գլուխ ողջ տեղ չէր մնացել նրա վրա: Ոտքերից

բռնած քարշ տվեցին լանջն ի վայր՝ մինչև լեռան ստորոտը, և նրան անշունչ գցեցին ճանապարհի վրա: Այդ ճանապարհով անցնում էին բյուրիտացի ուղևորներ, որոնք տեսան սուրբ ծեր Մարկելիոսին՝ արնաշաղախ ընկած ճանապարհի վրա, և հարցրին. «Ինչո՞ւ և ովքե՞ր են արել այսպես»: Իսկ ծերը ոչինչ չհայտնեց նրանց, այլ միայն խնդրում էր, որ իրեն տանեն այն այրը: Նրանք տարան նրան իր այրը և նրանից օրհնվելով՝ գնացին: Իսկ գյուղի մարդիկ, երբ լսեցին, թե նա կենդանի է, գնացին այնտեղ, հայհոյեցին, նախատեցին և անարգեցին նրան: Բայց սուրբ ծերն իր վրա եկածը ոչինչ էր համարում և գոհանում էր Աստծուց՝ դևերի կողմից իր վրա եկած փորձանքների համար: Սաստիկ ամոթի, պատկառանքի ու նախատինքի մեջ ապրեց սուրբ ծերն իր այրում շուրջ մեկ տարի և միշտ աղերսում էր Աստծուն, որ թողություն շնորհի նրանց: Դրանից հետո տեսիլքի մեջ հայտնություն եղավ քահանայապետին, թե այդ ամենը դիվային պատրանք էր և կանանց աչքին էր երևացել, իսկ ծերը սուրբ է և ոչնչից տեղյակ չէ: Այդ կանայք և նրանց ամուսիններն այդ գիշեր դիվահարվելով՝ սկսեցին փրփրել և լկվելով՝ թավալ տալ, որից էլ համոզվեցին գյուղի բոլոր բնակիչները, թե այն երևույթը դիվական էր եղել, որ տեսել էին այդ կանայք: Կանայք իրենք էին պատմում՝ մտաբերելով, թե իբրև ուրվատեսիլ մեկն էր խառնակվում իրենց հետ, և սրաթռիչ անհետանում էր դեպի լեռնակողմը: Այնժամ մեծապես ցավելով և զղջալով՝ կոծում էին նրանք այն անպարտ սուրբ ծերին տանջելու և գանահարելու համար: Եվ ամենքը ողջ գյուղով՝ կանանց ու երեխաների հետ, վեր կենալով գնացին դեպի այրը՝ ծերից թողություն խնդրելու: Իսկ ծեր Մարկելիոսն իմանալով այդ՝ փախավ և չերևաց նրանց, և գնաց բնակվելու Նիտրա լեռանը, և այլևս նրանց չտեսավ և չխոսեց նրանց հետ: Իսկ գյուղի մարդիկ, երբ չգտան Աստծո մարդուն իր այրում, անմխիթար սգով վերադարձան այնտեղից իրենց գյուղը և միշտ սգում ու լաց էին լինում չար դևերից իրենց հետ պատահած փորձանքի համար և ամեն օր Տիրոջից թողություն էին խնդրում, որ մեղանչեցին սուրբը և անմեղ ծերունու հանդեպ՝ անողորմաբար գանահարելով նրան: Իսկ Մարկելիոս ծերն ասում էր ինձ. "Ասում եմ քեզ, հա՛յր Թեովնա, եթե կամենում ես անխռով մնալ և անսասան՝ բարու մեջ և խաղաղությամբ ավարտել քո կյանքը, քաղաքներին կամ գյուղերին, որտեղ կանայք և երիտասարդներ կան, երբեք մոտիկ մի՛ ապրիր, որովհետև գայթակղեցուցիչ փորձությունները նրանցից են գալիս, իսկ ովքեր կամենում են ազատվել այս ամենից, թո՛ղ փախչեն այն տեղերից, որտեղ նրանք են"»:

67. Ոմն եղբայր հայր Պիմենին ասաց. «Ես ուր էլ գնամ, հա՛յր, Աստծուց օգնություն կգտնեմ, քանի որ փորձով գիտեմ, որ հարաժամ օգնում է ինձ»: Ծերն ասաց նրան. «Ովքեր ձեռքին սուր ունեն՝ մարդ սպանելու համար, նրա՛նք էլ են Աստծուց օգնություն ստանում այս կյանքում: Դու դրանով մի՛ հպարտացիր, այլ ճգնի՛ր և հսկի՛ր, որ հավիտյան ապրես, քանզի բարի չէ հանգիստն ու մարմնական ուրախությունն այս կյանքում»:

68. Հայր Իսիդորեն Սկիտեում հավաքված եղբայրներին ասաց. «Դուք ճգնության և տառապանքի համար չէ, որ հավաքվել եք այստեղ, ուստի ո՛չ վիշտ կա այստեղ և ո՛չ էլ տքնություն: Գնամ այստեղից այլ վայր, ուր կան վիշտ ու տքնություն, գուցե հանգիստ առնեմ հետո»:

69. Ոմն եղբայր հարցեց հայր Պիմենին և ասաց. «Ո՞ւմ է վերաբերում խոսքը, որ գրված է. "Վաղվա մասին հոգ մի՛ արեք" (Մատթ. Զ 34)*»: Ասաց ծերը նրան. «Այս վերաբերում է ամեն մի հավատացյալ մարդու, առավել ևս կրոնավորի, որպեսզի մենք մեր հույսը կապենք Տիրոջ հետ և ոչ թե մեր հոգսերի, որովհետև ով ինչ ունի՝ ամենն էլ Տիրոջն է: Այս վերաբերում է և նրանց, ովքեր փորձության մեջ են ընկնում, որպեսզի լքվելով՝ չվհատվեն, այլ միշտ ակնկալեն Աստծո օգնությունը»:*

70. Հայր Պողոս Գաղատացին ասաց. «Եթե կրոնավորը, որն իր սենյակում ունի բոլոր անհրաժեշտ բաները, դուրս գա հոգալու մեկ այլ բանի համար, նա դևերի ծաղրին կարժանանա, որովհետև ավելորդ իրը, որ կրոնավորի մոտ կա, Աստծուց չէ, այլ սատանայից է»:

71. Մի ծեր գնում էր վաճառելու իր մաղախները, և հանկարծակի հարձակվելով դևը՝ հափշտակեց նրա ողջ ձեռագործը: Իսկ երբ ծերը տեսավ, որ դա դևի արածն է, աղոթքի կանգնեց և ասաց. «Գոհանում եմ քեզանից, Տե՛ր, որ վշտերից փրկեցիր իմ անձը»: Զկարողացավ դևը համբերել ծերի իմաստությանը, ճայնեց և ասաց. «Ահա, այստեղ են քո մաղախները, չա՛ր ծեր»: Դևն ամոթահար եղավ ծերի համբերությունից, քանի որ սա չնեղվեց ձեռագործը կորցնելուց, այլ ուրախացավ: Ծերը, վերցնելով մաղախները, վաճառեց դրանք:

72. Ոմն ծեր ասում էր, թե աղքատ Ղազարոսը ոչ մի առաքինություն չգործեց, այլ միայն՝ չտրտնջաց Աստծուն, թե՝ իմ վշտերից չփրկեցիր ինձ, այլ գոհությամբ կրեց իր վշտերը, և այն մեծահարուստին ևս չբամբասեց. դրա համար Աստված ընդունեց նրան:

73. Հայրերից մեկն ասաց. «Եթե հողմերից չշարժվեր ծառը, չէր մեծանա և բարձր չէր ձգվի և խորը արմատներ չէր դցի: Այդպես էլ կրոնավորը՝ եթե փորձության չենթարկվի և չհամբերի, չի կարող քաջարի առաջամարտիկ լինել»:

74. Մեկ այլ ծեր ասաց. «Մեր չափը չենք ճանաչում այն պատճառով, որ համբերություն չունենք գործերի մեջ, այլ հեշտությամբ ենք ուզում առաքինություն ստանալ, դրա համար էլ շրջում ենք տեղից տեղ՝ գտնելու մի վայր, ուր դև չկա»:

75. Ասաց ծերը. «Եթե, օրինակ, հալված մոմը չճմլվի, կնիքի պատկերը չի ընդունի իր վրա: Այնպես էլ մարդը՝ եթե վշտերի ու տքնության մեջ չփորձվի, Սուրբ Հոգու կնիքը չի ընդունի, ինչպես և Տերն էր ասում Պողոսին. "Բավական են քեզ իմ շնորհները, քանզի իմ զորությունը քո տկարության մեջ է լիարժեք բացահայտվում (Բ Կորնթ. ԺԲ 9)*"»:*

76. Ճգնավոր Մերույժենին բնակվում էր մեծ վանքում և այնքան ճգնությունների ու վշտերի տվեց իր մարմինը, մինչև ջրգողություն ախտով հիվանդացավ: Իրեն մխիթարելու եկող հայրերից բոլորին ասում էր. «Աղոթե՛ք ինձ համար Տիրոջը, հայրե՛ր, քանզի գուցե իմ ներքին մարդը հիվանդանա ջրգողությամբ, ուստի իմ Տեր Աստծուց խնդրում եմ երկարաձգել իմ այս մարմնի ցավը»: Այս մասին լսեց Երուսաղեմի Եվստիքիոս պատրիարքը և կամենում էր նրան անհրաժեշտ դեղորայք ուղարկել: Սակայն Մերույժենի ծերը պատվիրեց նրան և ասաց. «Աղո՛թք արա ինձ համար, տե՛ր, որպեսզի փրկվեմ հավիտենական տանջանքներից. դա բավական է ինձ». և ոչինչ չվերցրեց նրանից: Այսպես անարդ և և խոտան էին համարում հայրերը այս աշխարհի հանգիստը և նեղություն էին սիրում:

77. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանի որ երբ փոքր-ինչ հոգնում եմ, սիրտս թուլանում է և հուսալքվում»: Ծերը նրան ասաց. «Դու չե՞ս սքանչանում Հովսեփի արարքով, թե նա ինչպես Եգիպտոսի երկրում համբերեց փորձություններին, երբ դեռ երիտասարդ էր, և չթուլացավ նրա սիրտը, և թե ինչպես հետո Աստված բարձրացրեց նրան (Ծննդ. ԼԹ, Խ, ԽԱ)*: Այդպես էլ Հակոբը չթուլացրեց իր սիրտը և չկտրվեց Աստծո հույսից, չհեռացավ Նրա կատարյալ սիրուց* (Ծննդ. ԻԸ, ԻԹ, Լ, ԼԱ և այդպես)*: Նույնպես և դու՝ մի՛ թուլացիր և մի՛ հուսալքվիր, որովհետև կրոնավորի առաքինությունները փորձությունների մեջ են փառավորված երևում»:*

78. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Եթե անապատում բնակվեմ, և բարբարոսները գան և կամենան ինձ սպանել, ո՞րն է բարի. ա՞յն՝ որ սպանվեմ նրանցից, թե՞ այն՝ որ եթե կարողանամ նրանցից ոմանց սպանել՝ սպանեմ»: «Ո՛չ,– ասաց ծերը,– այլ թո՛ղ այդ գործն Աստծուն, քանզի ինչպիսի փորձություններ էլ որ գան մարդու վրա, պարտավոր է ասել՝ իմ մեղքերի պատճառով այս բանը եկավ ինձ վրա, իսկ եթե բարի բան գա, թո՛ղ ասի՝ Աստծո՛ւց է այդ եկել»:

79. «Եթե բնակվելու լինես միաբան եղբայրների հետ,– ասաց հայր Սիսոն,– տեղդ մի՛ փոխիր, որովհետև եթե փոխես, խիստ կվնասվես, ինչպես, թռչունը, որ եթե թողնի խակ ձվերը, դրանցից ճագեր չի հանի: Նույնպես և ծերը՝ տեղ փոփոխելուց կցամաքի հավատից և ուխտից: Բազում են թշնամու որոգայթները. եթե չկարողացավ աղքատությամբ որսալ հոգին, հարստության ցանցերն է դնում նրա առջև. եթե անարգությամբ ու պատկառանքով չկարողանա սայթաքեցնել, գովեստներն ու փառքն է դնում որոգայթ. եթե հաջողություններից չհաղթվի, ցավեր ու հիվանդություններ է բերում. իսկ եթե որկրամոլությամբ չկարողանա բռնել, սնափառ պահքերով կորսա հոգին և վրան կթափի ցավեր ու հիվանդություններ, սով ու ծարավ, որպեսզի հոգին դատարկի Աստծո սիրուց: Ուրեմն, եթե մեղավոր լինես, և այս ամենը պատահի քեզ, հիշի՛ր ահռելի տանջանքներն ու անաչառ դատավորին, երբեք մի՛ հուսահատվիր, այլ ցնծա՛, որ այստեղ Աստված կամեցավ ջնջել քո մեղքերի սպիները, և սաղմոսի՛ր. «Խրատելով պատժեց ինձ Տերը, սակայն չմատնեց մահվան» (Սաղմ. ՃԺԷ 18), *երկաթ լինելով՝ հրով սրբի՛ր դու քո ժանգը: Իսկ եթե արդար լինես, և ինչ-ինչ ցավեր պատահեն քեզ, մեծամեծ և գերագույն բարիքների կհասնես: Ոսկի լինելով՝ ինքդ հալածիչների հրով կմաքրես այն աղտերից. թեկուզ և մարմնիդ հարվածի սատանայի հրեշտակը, ուրա՛խ եղիր, որովհետև Պողոսի վիճակին դու հասար* (Բ Կորնթ. ԺԲ 7)*: Եվ որովհետև հրով փորձվեցիր և փորձանքներով մաքրվեցիր՝ ըստ գրվածի. «Անցանք մենք հրի և ջրի միջով, և քո հանգստի մեջ հանեցիր մեզ» (Սաղմ. ԿԵ, 12), ու թե առաջինի մեջ եղար, կմնաս նաև երկրորդի մեջ: Սակայն դու առաքինությո՛ւն գործիր, և ողորմություն կգտնես, ինչպես և գրված է. «Աղքատ և տնանկ մարդ եմ ես»* (Սաղմ. ԼԹ 18, ԿԹ 6), *որպեսզի կրկնապատիկ վշտերի դիմաց նաև կրկնապատիկ հատուցում ստանաս Քրիստոսի շնորհներով»:*

80. Ասաց դարձյալ հայր Սիսոն. «Եթե հիվանդանաս, մի՛ նեղվիր և մի՛ ասա, թե՝ չեմ կարող հսկել և աղոթել: Քանզի պահքը, աղոթք-

ները և չարչարանքները մարմնի մեջ կատարում են այն նույնը, ինչ որ հիվանդությունները: Ուրեմն՝ պետք չէ դրանց համար տխրել, այլ պետք է գոհությամբ համբերել ցավերին և լռելյայն փառաբանել Աստծուն»:

81. Ասաց դարձյալ հայր Սիսոն. «Ովքեր աշխարհիկ կյանքում մեղանչում են, ակամա բանտարկվում են, նույնպես և մենք պետք է կամավոր արգելափակենք մեզ մեր մեղքերի համար, որպեսզի մեր կամավոր վշտերով փրկվենք հավիտենական տանջանքներից: Եվ եթե պահք պահես, հիվանդություն չես պատճառի քեզ, քանզի ովքեր որկրամոլություն են անում և շատ են ուտում, նրանք ավելի շատ են հիվանդանում: Եթե բարի գործ ես ձեռնարկում, ուրեմն մի՛ ծուլացիր, այլ խնդրիր Տիրոջը, և նա կօգնի քեզ և կտա համբերություն ամեն ինչի մեջ, և քո թշնամիները ամոթով կմնան»: Ասաց դարձյալ հայր Սիսոն. «Ովքեր կամենում են նավել և բազմիցս անցնել բաց ծովը, նրանք ճանաչում են հողմերը, և երբ հասնեն ծովի խորքերը, և հակառակ հողմ հանդիպի, հույսը չեն կտրի և ծովը չեն նետվի, այլ՝ որքան հնարավոր է՝ կջանան նավը պահել և կսպասեն օդի խաղաղվելուն: Այսպես էլ մենք անենք և դիմակայենք փորձություններին, և Քրիստոս կօգնի մեզ»:

82. Ոմն ծերունու մասին ասում էին, թե վաթսուն տարի բնակվեց գետի ափին և բնավ չնայեց գետի կողմը, և այդպիսով փորձվելով ժուժկալության և համբերության մեջ՝ հաստատվեց կատարելապես:

83. Գնաց ոմն դիվահար Սկիտե և երկար ժամանակ չէր բժշկվում: Հետո նրան գթաց մի ծեր և խաչակնքելով՝ հալածեց դևին նրանից: Բարկանալով դրա վրա՝ դևն ասաց ծերին. «Քանի որ դու հանեցիր ինձ իմ բնակարանից, ես կգամ քեզ վրա»: Ծերն ասաց. «Եթե գաս, ես դրանից չեմ նեղվի. ե՛կ ինձ վրա»: Եվ եկավ նրա վրա, տասներկու տարի ապրեց ծերը վշտերի մեջ, իսկ դևը նեղում էր նրան, տապալում, հարվածում և ցնցում էր: Եվ ծերի օրական կերակուրը արմավի տասներկու կորիզն էր, և նա ճգնում էր պահեցողությամբ և աղոթքներով: Եվ դևը, տեսնելով նրա այսպիսի հոժարակամությունն ու համբերությունը, չդիմացավ, այլ փաչելով գնաց նրա մոտից: Տեսնելով նրան՝ ծերն ասաց. «Ինչո՞ւ ես գնում, դև՛, և փախչում ես ինձանից. ե՛կ ապրենք միասին»: Դևն ասաց. «Անիծվե՛ս Տիրոջից, չա՛ր ծեր, որ սովամահ էիր անում ինձ. քեզ հետ ոչ ոք չի կարող ապրել, բացի Աստծուց»: Այսպես սիրում էին ժուժկալությամբ համբերել և ուրախ էին նեղությունների մեջ:

84. Ասաց ծերը. «Մեր առաջին հայրերը հեշտությամբ չէին շարժվում իրենց տեղից, այլ միայն հետևյալ երեք պատճառով. առաջին՝ եթե այնտեղ նենգամիտ մարդ էր լինում, որ արագ բարկանում էր և հեշտությամբ չէր հաշտվում ընկերոջ հետ, երկրորդ՝ եթե շատերի կողմից փառաբանվում էին, և երրորդ՝ եթե պոռնկության փորձություն էր պատահում այնտեղ: Միայն սրանց պատճառով էին փախչում և հեռանում իրենց տեղից, և ոչ թե նեղության համար էին հոգս անում, այլ ուրախ էին նեղությունների մեջ և այդ էին փնտրում միշտ ու գտնում էին»:

85. Եղբայր ոմն հարցրեց ծերին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, հա՛յր, քանզի խորհուրդներս նեղում են ինձ և ասում. "Զե՛ս կարող դու պահեցողություն անել և ապաշխարել, գնա՛ և խնամի՛ր հիվանդներին, որովհետև այդ նույպես սեր է"»: Ասաց ծերը նրան. «Գնա՛, որդյա՛կ, չափավոր կե՛ր և ննջի՛ր, բայց քո սենյակո՛ւմ մնա, որովհետև սենյակում համբերելը բոլոր առաքինությունների ծնողն է»: Եվ ծերի հրահանգի համաձայն՝ մնաց եղբայրն իր սենյակում երեք օր: Ապա ճանճրանալով՝ սկսեց արմավենու ոստեր հյուսել, և երբ քաղցեց, ասաց. «Վերջացնեմ պարանը և հետո կուտեմ»: Երբ ավարտեց պարանը, ասաց. «Ընթերցեմ գիրքը և հետո կուտեմ»: Ընթերցելուց հետո ասաց. «Նախ աղոթեմ և հետո կճաշակեմ»: Այսպես սակավ առ սակավ ուղղվեց և եկավ առաջին ճգնության վիճակին՝ համբերելով և ժուժկալելով իր սենյակում:

86. Ոմն ծերի աղաչում էին եղբայրները, որ փոքր-ինչ հանգիստ առնի ծանր ճգնություններից, քանզի չափազանց խստակյաց ճգնավոր էր: Ասաց նրանց ծերը. «Ասեմ ձեզ, որդյակնե՛ր, որ Աբրահամը պիտի ափսոսա, որ առավել շատ չճգնեց, երբ տեսնի ճգնավորների համար Աստծուց պատրաստված պարգևները»:

87. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, հա՛յր, քանզի կրոնավորությունիցս ոչինչ չշահեցի, այլ ծուլությամբ եմ ապրում: Ուտում եմ, ըմպում, քնում և անպատկառ խորհուրդների մեջ եմ դեգերում գիշեր ու ցերեկ, և դատարկ գործերից փոխնիփոխ ընկնում եմ չար գործերի մեջ»: Ասաց ծերը. «Նստի՛ր քո խցում, և ինչ կարող ես անել, արա անխռո՛վ: Աստծուն առավել հաճելի է փոքր առաքինությունը, որ կատարես քո խցում, քան սուրբ Անտոնի մեծամեծ գործերը, որ անում էր նա անապատում, որովհետև ով իր սենյակում նստի հանուն Տիրոջ և իր խորհուրդները պահի անխռով՝ նա հայր Անտոնի տեղում կգտնվի»:

88. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչպե՞ս կարելի է չբամբասել այն եղբորը, որ դառնում է դեպի աշխարհ»: Ասաց ծերը. «Սրա համար պետք է որսորդի շների օրինակը վերցնել, որոնք ընկնում են նապաստակների հետևից: Նրանցից մեկը, տեսնելով նապաստակին, հետևում է նրան և կանգ չի առնում, չի խորշում փշից, քարից կամ ջրից, չի կասեցնում ընթացքը, մինչև որ բռնի նրան: Մյուս շները, տեսնելով նրա ընթացքը, մի փոքր վազում են՝ տիրոջը հաճելի լինելու համար, և ապա կանգ են առնում, որովհետև որսը չեն տեսնում, և դառնում են ետ՝ դեպի որսորդը. և նա է միայն սլանում, ով առաջինը տեսավ և հետևեց նրան: Այսպես պետք է լինի նաև կրոնավորը, որ հետևում է Քրիստոսին, որպեսզի հոժարությամբ ընթանա նրա հետևից, և իր ընթացքին առաջնորդ ունենա Նրա խաչը, անտեսի աշխարհի բոլոր գայթակղությունները և շտապի, մինչև որ հասնի: Այս ու այն կողմ չնայի ու չդատի իր եղբորը կամ չբամբասի, այլ միայն Նրա մասին խորհի, Ում փափագում է հասնել: Իսկ ովքեր չեն հետևում Քրիստոսին և ոչ էլ նրա հետևից են ընթանում, նրա՛նք են, ովքեր այս ու այն կողմ են նայում, եղբայրներին են քննում, բամբասում են նրանց և դատում»:

89. Ասաց ծերը. «Օրինակ՝ եթե ծառը ստեպ-ստեպ արմատախիլ արվի և նորից տնկվի, չի կարող արմատակալել, նույնպես և թափառող կրոնավորը չի կարող առաքինություն ձեռք բերել»:

90. Ոմն ծեր առանձին էր ապրում և շուտ-շուտ հիվանդանում էր: Եվ մի անգամ պատահեց, որ դրանից անցավ մեկ տարի, և նա չհիվանդացավ. տրտմեց սրա համար շատ խիստ և սկսեց լաց լինել ու ասել. «Արդարև մոռացավ ինձ Աստված և անտեսեց ինձ»: Որովհետև վշտերն ու մարմնավոր նեղությունները սրբում են հոգին և մերձեցնում են Աստծուն:

91. Ասաց ծերը. «Դու քեզ համար մարմնի հիվանդություն մի՛ փնտրիր, որպեսզի վհատվելով՝ չթերամտես, որովհետև եթե քո Տերը կամենա ճնշել քո մարմինը, նա կհոգա քո մասին, դու ինչո՞ւ ես մտահոգվում, և ոչ էլ կարող ես ապրել առանց նրա: Դու համբերի՛ր և նրանից խնդրի՛ր այն, ինչ օգտակար է քեզ, և կփրկվես երկայնամտությամբ»:

92. Մի կրոնավոր կար՝ անդադրում ճգնող, և մի օր չարի պատրանքով ընկավ փորձության մեջ, քանզի կուրացան նրա աչքերը: Սակայն նա իր աղոթքներում Աստծուց բնավ լույս չխնդրեց իր աչքերին, այլ

խնդրեց համբերություն: Սրա համար Աստված վերստին լույս շնորհեց նրա աչքերին՝ ավելի պայծառ, քան առաջինը, որովհետև սիրեց նեղությունը, որով կատարելագործվում է համբերությունը, ինչն էլ հաճելի է Տեր Աստծուն, և որի համար շնորհում է բոլոր բարիքները և փառքը:

93. Անտիոք քաղաքում մի երիտասարդ արծաթավաճառ կար, որի անունն էր Անդրոնիկե: Սա ազնվական կին ուներ, որի անունը Աթանասիա էր: Երկուսն էլ մանուկ հասակից Աստծո երկյուղով էին կրթված և լի էին ամեն տեսակ բարի գործերով: Սրանք երկուսն էլ խիստ մեծահարուստ էին: Նրանց կյանքն այսպիսին էր. նրանց ողջ ունեցվածքը բաժանված էր երեք մասի. մի մասը՝ աղքատների համար, մյուս մասը՝ կրոնավորների և եկեղեցու, իսկ երրորդ մասը՝ իրենց և իրենց բոլոր ծառաների համար: Եվ բովանդակ քաղաքը, իշխանավորները և պատրիարքը սիրում էին Անդրոնիկեին իր հեզության, բարեգործության, սրբության և բազում առաքինությունների համար: Նրա կինը ծնեց որդի, որին կոչեցին Հովհաննես, և ծնեց մի դուստր, որին անվանեցին Մարիամ: Եվ այնուհետև երկուսն էլ ուխտեցին Աստծուն այլևս չմերձենալ միմյանց և սրբությամբ կրոնավորական կյանք վարել, մինչև զավակների հասունանալն ու հայրական ունեցվածքը ժառանգելը, հետո ամեն բան կընթանար այնպես, ինչպես Աստծո կամքն էր: Սակայն նրանց ամբողջ ջանքն ուղղված էր աղքատներին ողորմելուն և եկեղեցուն և կրոնավորներին սպասավորելուն: Կիրակի օրը ողջ գիշեր եկեղեցում հսկելով՝ առանց քնելու՝ աղոթքների մեջ էին անցկացնում, և աղքատներին, քահանաներին ու կրոնավորներին նվիրատվություն էին անում, իսկ երկուշաբթին, չորեքշաբթին և ուրբաթը անսվաղ էին անցկացնում: Եվ առավոտից մինչ երեկո շրջում էին քաղաքի փողոցներում, հիվանդանոցներում և բանտերում, խնամում էին, լիացնում էին աղքատներին, հիվանդներին ու կալանավորներին: Ահա այսպես էին կենցաղավարում բազում տարիներ: Տասներկու տարի հետո մի օր՝ հիվանդներին խնամելուց հետո, Աթանասիան վերադառնալով տուն՝ իր երկու երեխաներին գտավ մահաբեր ջերմության մեջ, որոնք հեծում և հառաչում էին անկողնու մեջ: Մտավ նրանց մոտ, տխուր նստեց և նիրհեց: Անդրոնիկեն, եկեղեցուց գալով, տեսավ կնոջը տխրությամբ լի, իսկ երեխաներին՝ ջերմության մեջ: Երբ ձեռքով հպվեց երեխաներին և տեսավ այդպիսի տոչորող ջերմության մեջ, ապշեց, հառաչեց ու ասաց. «Ամեն ինչում Տիրոջ կա՛մքը թող լինի»: Եվ այնժամ դուրս եկավ քաղաքից դեպի Հուլիանոս վկայի եկեղեցին,

որտեղ իր հայրերի գերեզմանն էր, վեց ժամ մնաց այնտեղ՝ հսկելով, լաց լինելով և աղոթելով: Իսկ երբ տուն դարձավ, մեծ ողբ ու կոծի ձայն լսեց, քանզի գիշերը մահացել էին երկու մանուկներն էլ, և ողջ քաղաքը հավաքվել ու ողբում էր նրանց վրա: Եվ երբ տեսավ երկու անշունչ մանուկներին՝ միասին դրված փայտամածի վրա, մտավ իր սենյակը, Փրկչի պատկերի առջև ծունր դրեց և արտասվելով ասաց. «Մերկ դուրս եկա իմ մոր որովայնից, մերկ էլ գնալու եմ երկրից: Տերը տվեց և Տերն էլ առավ, թո՛ղ հավիտյան օրհնյալ լինի Տիրոջ անունը» (Հոբ Ա 21)*: Իսկ երեխաների մայրն իր անձն էր պատառոտում և ասում. «Ի՛նձ էլ թաղեք իմ երեխաների հետ»: Հավաքվել էր ողջ քաղաքը, պատրիարքն իր միաբանության հետ նույնպես այնտեղ էր: Դուրս բերելով մանուկներին՝ տարան քաղաքից դուրս՝ Հուլիանոս վկայի եկեղեցին և թաղեցին իրենց հայրերի գերեզմանոցում: Եվ ո՞վ կարող է պատմել դառնաղի ողբն ու կոծը, որովհետև ողջ քաղաքն այնտեղ էր, և բոլորը ցավում էին մեկ մարդու նման: Իսկ Անդրոնիկեին պատրիարքն իր հետ տարավ պատրիարքարան: Մայրը, սակայն, չկամեցավ իր տուն գնալ, այլ մնաց այնտեղ՝ Հուլիանոս վկայի եկեղեցում՝ երեխաների գերեզմանի մոտ, և շարունակում էր լաց լինել: Եվ ահա գիշերը նրան հայտնվեց սուրբ վկա Հուլիանեն՝ կրոնավորի տեսքով, և ասաց նրան. «Ինչո՞ւ չես թողնում, կի՛ն, որ ննջեն այստեղ եղողները»: Պատասխանեց Աթանասիան և ասաց. «Մի՛ բարկացիր ինձ վրա, Տե՛ր իմ, քանզի ցավագնած է իմ սիրտը, որովհետև երկու զավակ ունեի, և երկուսին էլ միասին թաղեցի այսօր»: Սուրբ վկան նրան ասաց. «Քանի՞ տարեկան էին նրանք»: Եվ նա ասաց. «Մեկը տասներկու, մյուսը՝ տասը»: Եվ Սուրբ վկան ասաց. «Ուրեմն ինչո՞ւ ես ողբում անմեղներին և սրբերին, և քո մեղքերը չես ողբում: Ասեմ քեզ, կի՛ն, անհնար է, որ մարդը մտնի կերակրատուն, և նրան ուտելիք չտան, այդպես կգան քո զավակները Քրիստոսի առջև՝ ընտիր հանդերձներով, և կասեն նրան. «Տե՛ր և սո՛ւրբ, արդա՛ր դատավոր, զրկեցիր մեզ կյանքից, հիմա մի՛ զրկիր քո Արքայությունից»: Եվ Նա կտա նրանց»: Այս ասելով՝ հեռացավ կրոնավորը: Երբ Աթանասիան այս լսեց, մխիթարվեց և ասաց. «Քանի որ իմ զավակները Երկնքի Արքայությունում են, ապա ինչո՞ւ ողբամ նրանց համար: Եթե նույնիսկ մինչև մահ ողբամ, ի՞նչ օգուտ դրանից»: Վեր կացավ և փնտրեց կրոնավորին, բայց չգտավ, քանի որ եկեղեցու դռներն էլ փակ էին: Փնտրելիս մի ձայն լսեց խորանից, որ ասում էր. «Նա Հուլիանե վկան է, և ոչ թե մեկ այլ ծեր»: Այնժամ տեսիլքի վրա գոհությամբ ուրախացած՝ գնաց իր տուն, պատմեց Անդրոնիկեին տեսիլքը և ասաց. «Հավատա՛ ինձ, երեխաների*

կենդանության ժամանակ ամեն օր կամենում էի քեզ ասել այս բանը, բայց ամաչում էի, սպասում էի երեխաների մեծանալուն. քանզի ահա տասը տարի է՝ ուխտել եմ Աստծուն: Այժմ ասում եմ քեզ. լսի՛ր քո աղախնուն և տա՛ր ինձ կանանց վանքը, որ կրոնավոր դառնամ և այնտեղ ողբամ իմ մեղքերը»: Անդրոնիկեն ասաց նրան. «Քո այդ խորհուրդը փորձիր յոթ օր: Եթե այդ մտքին մնաս, կանենք այնպես, ինչպես վայել է»: Եվ Աթանասիան այդպես արեց. յոթ օր հետո եկավ և նույնն ասաց: Այնժամ Անդրոնիկեն կանչեց հայր Հովհաննեսին և ասաց. «Մենք գնում ենք Երուսաղեմ՝ աղոթելու այնտեղի սուրբ վայրերում: Ահա քո ձեռքում է մեր ողջ ունեցվածքը: Եթե մեզ վիճակվի այնտեղ մեռնել, ինչ որ դու այստեղ անես մեզ հետ մեր ունեցվածքով, Աստծո՛ւց վարձք ստանաս այստեղ և հանդերձյալ կյանքում: Ուստի կամենում եմ, որ սրանով շինես հիվանդանոցներ, հյուրանոցներ և վանքեր՝ այս մեր տների տեղում»: Եվ նրան հանձնեցին իրենց ողջ ունեցվածքը, մի փոքր մաս վերցրին իրենց կարիքների համար, ինչպես նաև՝ երկու գրաստ, և գիշերով դուրս ելան քաղաքից: Եվ երբ ելնում էին, նայեց Աթանասիան իրենց տանը, աչքերը դեպի երկինք հառեց և ասաց. «Աստվա՛ծ, որ հրամայեցիր Աբրահամին ու Սառային՝ դուրս գալ երկրից, ազգից և իրենց տանից, նույն Ինքդ, Տե՛ր, առաջնորդի՛ր մեզ Քո երկյուղով, քանզի հանուն Քո անվան բաց թողեցինք մեր տան դռները, և Դու մի՛ փակիր Քո Արքայության դռները մեր առջև» (Ծննդ. ԺԲ 1)*: Եվ երկուսով միասին գնացին Երուսաղեմ, աղոթելով շրջեցին բոլոր ուխտատեղերը, բազում սուրբ կրոնավորների տեսան, օրհնվեցին նրանցից և ողորմություն տվեցին բոլորին: Եվ այնտեղից գնացին Ալեքսանդրիա՝ սուրբ Մինայի տաճարը, որտեղ քահանաները պատվով ընդունեցին նրանց: Ժամը իններին, ելնելով վերնատան վանդակը, Անդրոնիկեն նայեց քաղաքին, տեսավ, որ փողոցում մի կրոնավոր կռվում էր մեկի հետ: Անդրոնիկեն ասաց այն մարդուն. «Ինչո՞ւ ես, մա՛րդ, կռվում կրոնավորի հետ և նեղում նրան»: Այն մարդն ասաց. «Սա վարձով վերցրեց իմ գրաստը՝ Սկիտե գնալու համար, և ես դրան ասացի՝ համաձայնիր գիշերո՛վ գնանք, որպեսզի չշոգենք», իսկ սա չի ուզում գալ»: Ասաց նրան Անդրոնիկեն. «Ունե՞ս այլ գրաստ»: Եվ նա ասաց. «Ունեմ, հա՛յր»: Ասաց նրան. «Գնա այստե՛ղ բեր, ես էլ վարձով կվերցնեմ: Միասին կգնանք, քանզի ես նույնպես Սկիտե եմ գնում»: Դառնալով Աթանասիային՝ ասաց. «Դու մնա՛ այստեղ՝ սուրբ Մինայում, մինչև ես ելնեմ Սկիտե, այնտեղ աղոթեմ, տեսնեմ սուրբ հայրերին և վերստին դառնամ այստեղ»: Կինն ասաց նրան. «Ի՛նձ էլ տար քեզ հետ»: Պատասխանեց Անդրոնիկեն և ասաց. «Կինարմատը*

չի մտնում Սկիտե»: Իսկ Աթանասիան արտասվելով ասաց. «Դու պատասխան կտաս Աստծո և սուրբ Մինայի առաջ, եթե չգաս և ինձ չմտցնես կանանց վանքը»: Այնժամ, միմյանց հրաժեշտ տալով, բաժանվեցին: Անդրոնիկեն բարձրացավ Սկիտե ու լեռան բոլոր վանքերի սուրբ հայրերին տեսավ: Մեծ դժվարությամբ գնաց անապատ՝ հայր Դանիելի մոտ, և հազիվ կարողացավ տեսնել նրան և այս ամենը պատմեց նրան: Ասաց նրան ծերը. «Գնա՛ և այստեղ բե՛ր քո կնոջը, և ես թուղթ կգրեմ, որպեսզի նրան տանես Թեբայիդա՝ սաբենեսացիների կանանց վանքը»: Այնժամ Անդրոնիկեն արեց այնպես, ինչպես նրան ասաց հայրը: Գնաց բերեց Աթանասիային ծերի մոտ, իսկ ծերը օրհնեց նրան և ուղարկեց կույսերի վանքը: Վերադարձավ Անդրոնիկեն հայր Դանիելի մոտ և կրոնավորական կարգ վերցրեց, իսկ հայրը ուսուցանեց նրան կրոնավորական գործը, և տասներկու տարի Անդրոնիկեն մնաց ծերի մոտ: Ապա Անդրոնիկեն խնդրեց ծերից, որ գնա Երուսաղեմ և աղոթի սուրբ վայրերում: Եվ ծերը ողջունելով՝ աղոթք արեց ու արձակեց նրան: Մինչ նա անցնում էր Եգիպտոսի սահմանով, նստեց մի փշապատ տեղում, որպեսզի սաստիկ տապից փոքր-ինչ շունչ քաշի: Ահա Աստծո կամքով եկավ Աթանասիան, որը տղամարդու հանդերձ էր հագել, որովհետև նա ևս Երուսաղեմ էր գնում: Եվ հայացքով զննեցին միմյանց. աղավնին ճանաչեց իր զույգին, սակայն Անդրոնիկեն չճանաչեց նրան, որովհետև նրա կանացիությունն ու գեղեցկությունը թորշոմած էին բազում ճգնություններից, և մաշկը ամբողջովին սևացած էր, և հնդիկի էր նման: Ասաց նրան Աթանասիան. «Ո՞ւր ես գնալու, հա՛յր»: Եվ նա ասաց. «Երուսաղեմ. գնում եմ Տիրոջ սուրբ վայրերը տեսնելու»: Աթանասիան ասաց. «Ես էլ եմ այնտեղ ուղևորվում, և եթե կամենաս, միասին կգնանք և լռությամբ ընթանանք, որպեսզի ոչ մի բան չխոսենք իրար հետ»: Անդրոնիկեն ասաց. «Այդպես էլ կանենք»: Ասաց Աթանասիեն (քանզի այդ անունն էր վերցրել). «Դու հայր Դանիելի աշակերտը չե՞ս»: Եվ նա ասաց՝ այո՛: Եվ Աթանասիեն ասաց. «Եվ Անդրոնիկե չէ՞ քո անունը»: Իսկ նա ասաց՝ այո՛: Եվ Աթանասիեն ասաց. «Ծերի աղոթքը մեզ օգնակա՛ն լինի»: Անդրոնիկեն ասաց՝ ամեն: Եվ գնացին միասին: Եվ գալով Երուսաղեմ՝ աղոթեցին բոլոր վայրերում, ապա դարձյալ գնացին Ալեքսանդրիա և բնավ չխոսեցին միմյանց հետ: Ասաց Աթանասիեն հայր Անդրոնիկեին. «Եթե կամենում ես, միասին կբնակվենք»: Եվ Անդրոնիկեն ասաց. «Կանենք՝ ինչպես ասում ես», քանզի ներքինի էր կարծում նրան, ապա ասաց. «Բայց ես նախ ելնեմ Սկիտե և իմ հորը հարցնեմ»: Աթանասիեն ասաց. «Գնա՛, իսկ ես քեզ կսպասեմ Տասներկուսի վանքում:

Եթե գաս նույնպիսի լռությամբ, ինչպես ճանապարհին եղանք, միասին կբնակվենք և բնավ չենք խոսի, իսկ եթե լռել չես կարող, այստեղ մի՛ արի, որովհետև ես Տասնութի վանքում եմ կամենում բնակվել»: Գնաց Անդրոնիկեն, տեսավ հորն ու պատմեց նրան ամեն բան, նաև ներքինու մասին: Ասաց նրան հայր Դանիելը. «Գնա բնակվի՛ր նրա հետ և լռությո՛ւն պահիր, քանզի նա մեծ ճգնավոր է»: Եվ երբ եկավ ու գտավ Աթանասիեին, բնակվեցին միասին՝ ճգնելով Աստծո երկյուղի մեջ տասներկու տարի, չխոսեցին միմյանց հետ, և Անդրոնիկեն չճանաչեց նրան: Իսկ հայր Դանիելը երբեմն գնում էր նրանց այցի, խոսում էր նրանց հոգևոր օգտի համար և վերադառնում այնտեղից: Մի անգամ դարձյալ գնաց նրանց տեսնելու և ողջույն տալով նրանց՝ դարձավ և գնաց սուրբ Մինա: Իսկ Անդրոնիկեն հասավ նրա հետևից և ասաց. «Հա՛յր, եղբայր Աթանասիեն հիվանդ է և գնում է առ Տեր. նա քեզ է խնդրում»: Երբ այս լսեց ծերը, ետ դարձավ այնտեղից, եկավ և գտավ նրան սաստիկ ջերմության մեջ և դառնապես լաց լինելիս: Ծերը նրան ասաց. «Քեզ պետք էր ցնծալ և ուրախ լինել, որ գնում ես Տիրոջ մոտ, իսկ դու ողբո՞ւմ ես»: Ասաց Աթանասիեն. «Ինձ համար չեմ ողբում, հա՛յր, այլ՝ Անդրոնիկեի. սակայն երբ ինձ թաղես, սնարիս մեջ մի թուղթ կգտնես, կվերցնես և կընթերցես այն, ապա կփոխանցես եղբայր Անդրոնիկեին»: Եվ հաղորդվելով սուրբ Խորհրդին՝ այս խոսքերից հետո ննջեց Աթանասիեն արդարների քնով: Երբ եղբայրները եկան պատանելու նրան, իմացան, որ կին է, իսկ ծերն, ընթերցելով թուղթը, տվեց Անդրոնիկեին: Թղթից իմանալով, որ Անդրոնիկեի լծակիցը Աթանասիան էր, և ոչ թե ոմն ներքինի, օրհնեցին Տիրոջը և գոհացան Նրանից, որ համբերություն է տալիս իր բոլոր ծառաներին: Եվ բոլոր վանքերը տեղեկացան այս մասին: Եվ կանչեց ծերը Սկիտեի վանականներին. եկան բոլոր սկիտացիները՝ սպիտակ հանդերձները հագին: Այնտեղ եկան կրոնավորների բոլոր գնդերը՝ արմավենու ոստերով, և տանելով նրա դին՝ պատվով դրեցին հայրերի գերեզմանոցում: Եվ գոհություն էին առաքում առ Աստված, որ այսպիսի զորություն և քաջություն տվեց կանացի մարմնին, հետո բոլորն էլ գնացին իրենց տեղերը, իսկ հայրը մնաց մինչև Աթանասիայի թաղման յոթերորդ օրը: Այս ամենից հետո կամեցավ հայր Դանիելը իր հետ տանել Անդրոնիկեին, սակայն նա չկամեցավ գնալ նրա հետ և ասաց. «Աթանասիայի գերեզմանի վրա կմեռնեմ»: Այնժամ հայրը հրաժեշտ տվեց և գնաց մինչև սուրբ Մինա: Երբ իջավ այնտեղ, նրա հետևից հասավ մեկ այլ եղբայր և ասաց նրան. «Հա՛յր Դանիել, Անդրոնիկե եղբայրը փոխվում է առ Աստված»: Երբ այս լսեց ծերը, սկիտացիներին պատվիրեց

և ասաց. «Այստե՛ղ եկեք դարձյալ, որովհետև Անդրոնիկե ծերը հետևում է Աթանասիա ծերին»: Երբ այս լսեցին նրանք, շտապով ելան այնտեղ և նրան գտան դեռևս կենդանի, օրհնվեցին նրանից, իսկ նա խաղաղությամբ ննջեց ի Տեր: Այնժամ բանավեճ եղավ Սկիտեի հայրերի և նույն վանքի միջև, որտեղ սրբեր էին ննջել, և այն կոչվում էր Տասնութ: Սկիտացիներն ասացին. «Մեր եղբայրն է, նրա մարմինը այնտեղ կտանենք»: Իսկ նրանք ասացին. «Պատվիրել է իրեն թաղել իր քրոջ մոտ»: Իսկ սկիտացիները շատ էին և համառում էին: Այնժամ լեռան բոլոր առաջնորդներն ասացին. «Ինչ որ ասի հայր Դանիելը, ա՛յն թող անեն»: Իսկ հայրն ասաց. «Այստեղ միասին թաղելու պատգամ տվեց ինձ եղբայրը»: Սակայն Սկիտեի ծերերը չհամաձայնեցին, այլ ասացին. «Հայր Դանիելը երկնքում է և չի վախենում դևերի պատերազմից, իսկ մենք վախենում ենք: Ոմանք դեռ երիտասարդ են, և պետք է, որ սա մեզ մոտ լինի, որպեսզի օգնի մեզ: Ձեզ բավական է սրա քույր Աթանասիան, որ ձեզ մոտ է»: Երբ տեսավ հայր Դանիելը այս խառնաշփոթը, եղբայրներին ասաց. «Եթե սրան չթողնեք այստեղ, ես ձեզ հետ չեմ գա, այլ կմնամ այստեղ՝ իմ որդյակների մոտ, և նրանց կողքին կթաղվեմ»: Երբ այս լսեցին եղբայրները, լռեցին և հանելով երանելի Անդրոնիկեին՝ թաղեցին սուրբ Աթանասիայի մոտ: Եվ ասացին եղբայրները հայր Դանիելին. «Ե՛կ գնանք Սկիտե»: Եվ նա ասաց. «Թո՛ւյլ տվեք ինձ այստեղ կատարելու նրա յոթնօրյակը»: Իսկ նրանք թույլ չտվեցին, այլ նրան վերցրին իրենց հետ ու գնացին: Եվ մենք խնդրում ենք Տիրոջից, որպեսզի ողորմի մեզ Անդրոնիկեի, Աթանասիայի և իր բոլոր սրբերի աղոթքներով և բարեխոսությամբ: Այսպիսին են արիությունը, համբերությունը և աստվածասիրությունը:

ԳԼՈՒԽ Ը

ՈՂԻՆՂ Ի ՅՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ՁԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մի անգամ աբբա Անտոնիոսը լսեց ոմն երիտասարդ կրոնավորի մասին, որ նշաններ արեց ճանապարհին, այսինքն՝ մինչդեռ ճանապարհ էր գնում մի քանի ծերերի հետ, վայրի էշերին հրաման տվեց ետ գալ և վերցնել իրեն: Երբ այս բանը ծերերը պատմեցին աբբա Անտոնիոսին, նա ասաց նրանց. «Ափսոսում եմ այդ եղբորը, որ լի է բարությամբ՝ մեծամեծ բարիքներով բեռնված նավի նման, և չգիտեմ՝ կհասնի՞ նավահանգիստ, թե՞ ոչ»: Իսկ հետո՝ փոքր ժամանակ անց, հայր Անտոնիոսն սկսեց արցունքներ հորդել, մորուքը փետել և կուրծքը ծեծել: Եվ աշակերտները հարցրին նրան. «Ինչո՞ւ ես լալիս, հա՛յր»: Ասաց ծերը. «Ավա՜ղ, այս պահին եկեղեցու մեծ սյունն ընկավ»: Եվ այս ասում էր այն երիտասարդ կրոնավորի մասին: «Իսկ հիմա գնացե՛ք նրա մոտ,– ասաց,– և տեսե՛ք կատարվածը»: Գնացին աշակերտները և տեսան երիտասարդ մենակյացին՝ խսիրների վրա նստած լաց լինելիս իր մեղքերի համար, որ գործել էր: Եվ տեսնելով ծերի աշակերտներին՝ ասաց. «Ասացե՛ք ծերին, որ աղերսի Աստծուն՝ միայն տասն օր ինձ տալ, և հույս ունեմ պատասխան տալ և ապաշխարել մեղքերիս համար»: Եվ հինգ օր հետո վախճանվեց:

2. Մի անգամ մի իշխան եկավ աբբա Սիմեոնին տեսակցության: Եկան կղերիկոսները և ասացին. «Աբբա՛, պատրաստվի՛ր, քանզի մի իշխան է եկել քեզ տեսնելու և քեզանից օրհնություն ստանալու»: Եվ նա ասաց. «Այո՛, հիմա կպատրաստվեմ»: Հագավ իր ցնցոտիները, հաց ու պանիր վերցնելով ձեռքը՝ նստեց դռանը և սկսեց ուտել: Եկավ իշխանն իր սպասավորներով և տեսնելով նրան՝ հայհոյեց և ասաց. «Ա՞յս է անապատականը, որի մասին լսեցինք»: Եվ նույն պահին էլ ետ դարձավ:

3. Մի անգամ հայր Դանիել Սկյութացին իր աշակերտի հետ գնաց Վերին Թեբայիդա՝ աբբա Պողոսի հիշատակի օրը: Եվ հավաքվեցին բոլոր հայրերը՝ թվով մոտ հինգ հազար, և ընդառաջ դուրս եկան նրան: Նրանք նման էին հրեշտակների, որոնք, կանգնած ավազի վրա, սպասում են Քրիստոսին. ոմանք իրենց հանդերձներն էին փռում նրա առջև, ոմանք վերարկուներն էին տարածում, և նրանցից արտասուքներ էին հեղվում, ինչպես աղբյուրների վտակներից: Եկավ վանքերի առաջնորդը և մինչև ծերին մոտենալը՝ յոթ անգամ երկրպագեց նրան: Եվ երբ ողջունեցին միմյանց, աղաչեց, որ եղբայրներին ուղղված մի խոսք ասի, քանզի հայր Դանիելը չէր պատրաստվում որևէ մեկի հետ խոսել: Այնտեղ բոլորը միաբան նստեցին ավազի վրա, որովհետև եկեղեցին չէր կարող տեղավորել նրանց: Եվ ասաց հայր Դանիելն իր աշակերտին. «Գրի՛ր այսպես. եթե ուզում եք ապրել, բռնադատե՛ք ձեր անձերը և գնացե՛ք անընչության և լռության հետևից, քանզի այս երկու առաքինությունից է կախված մենակյացի ողջ արիությունը»: Եվ նրա աշակերտը տվեց այս գիրը եղբայրներից մեկին, և նա թարգմանեց այն եգիպտացիների լեզվով, որովհետև գրված էր հունարեն: Այս խոսքից կարկամեցին բոլորը և ողբացին հույժ, ապա ճանապարհեցին ծերին, և ոչ ոք չհամարձակվեց նրան ասել, թե՝ շնո՛րհ արա, հաց կիսիր մեզ հետ: Եկավ Երիմուպոլիս ծերը և ասաց իր աշակերտին. «Գնա բախի՛ր կուսանաց վանքի դուռը և ասա՛ մայրապետին, թե ես այստեղ եմ», քանզի այնտեղ մի վանք կար, որը կոչվում էր աբբա Երիմի վանք, որտեղ ապրում էին մոտ երեք հարյուր միանձնուհիներ: Գնաց աշակերտը, բախեց դուռը, և դռնապանն ասաց նրան. «Ողջո՛ւյն քեզ: Բարով ես եկել, ի՞նչ կհրամայես»: Նա ասաց. «Մայրապետի հետ եմ կամենում խոսել»: Եվ նա պատասխանեց. «Նա ոչ ոքի հետ չի խոսում երբեք, այլ դու ինձ ասա՛, թե ինչ ես հրամայում, ես կհաղորդեմ նրան»: Եվ աշակերտն ասաց. «Ասա՛ նրան, որ մի մենակյաց է կամենում նրա հետ խոսել»: Վերջինս գնաց և հաղորդեց այդ ամենը, և ետ գալով՝ նուրբ ձայնով ասաց. «Մայրապետը հաղորդեց, որ հրամայես, թե ինչ ես կամենում»: Եվ եղբայրն ասաց. «Շնո՛րհ արեք և օթևա՛ն տվեք ինձ և ինձ հետ եկող մի ծերի, որովհետև գիշեր է, և բացօթյա մնալով՝ գազանները մեզ կուտեն»: Պատասխանեց նրան մայրապետը. «Այստեղ երբեք այր մարդ չի մտել. ավելի լավ է՝ դրսից գազանների կերակուր դառնաք, քան ներսից»: Այնժամ եղբայրն ասաց. «Աբբա Դանիելն է»: Եվ երբ լսեցին, նույն ժամին բացեցին երկու դռներն էլ, շուտափույթ ելան բոլորը և իրենց վերնազգեստները տարածեցին

դռնից մինչև այնտեղ, ուր ծերն էր, նրա ոտքերն ընկնան և համբուրեցին ոտնահետքերը: Եվ երբ վանք բերին նրան, մի կոնք դրեցին և տաք ջուր լցրին՝ անուշահոտ յուղերով, կանգնեցին երկու քույրեր և լվացին ծերի և աշակերտի ոտքերը: Եվ մայրապետը վերցնելով այդ ջրից՝ լցրեց յուրաքանչյուր քրոջ գլխին և վերջում լցրեց նաև իր գլխին: Նրանք կարծես անշարժ և անմռունչ ապառաժ լինեին, իսկ նրանց անցուդարձը հրեշտակային էր, և միայն նշաններով էին իրար հասկացնում, թե ինչ պետք է անեն: Ասաց ծերը մայրապետին. «Մեզնի՞ց են ամաչում քույրերը, թե՞ միշտ են այսպես լուռումունջ»: Մայրապետն ասաց. «Միշտ են այսպես, հա՛յր, բայց դու աղոթի՛ր նրանց համար»: Ծերն ասաց. «Տերը պահպանի սրանց»: Նրանցից մեկը՝ այծամազ քուրձը հագին, ընկած էր սրահի մեջտեղում և ննջում էր: «Ո՞վ է սա, որ քնած է»,– հարցրեց ծերը: Քույրերից մեկն ասաց. «Արբեցող է, և չգիտենք, թե ինչ անենք սրա հետ. եթե հանենք վանքից, մեղանչելուց ենք վախենում, եթե ողորմենք սրան, քույրերին է տրտմեցնում»: Ասաց ծերն իր աշակերտին. «Վերցրո՛ւ կոնքով ջուրը և լցրո՛ւ դրա վրա: Եվ այդպես էլ արեց: Իսկ նա հարբածի նման օրորվելով՝ վեր կացավ: Մայրապետն ասաց. «Տե՛ր, սա ամեն ինչի մեջ այսպիսին է»: Դրանից հետո մայրապետը ծերին ուղեկցեց սեղանատուն՝ ընթրելու: Եվ երբ հավաքվեցին քույրերը, ասաց նրան. «Օրհնի՛ր քո աղախիններին, որ ճաշակեն քո առաջ»: Եվ նա օրհնեց: Եվ սեղան բազմելիս ինքը և իր օգնականը միայն նստեցին ծերի հետ: Ծերի առաջ բերին ամանի մեջ թրջած հում բանջար, արմավ ու ջուր, իսկ նրա աշակերտին՝ տաք ոսպապուր, մի փոքր հաց և գինի: Իսկ քույրերի առջև դրեցին բազմազան կերակուրներ, ձուկ և գինի: Ուտում էին վայելուչ կերպով, և ոչ ոք չէր խոսում ամենևին: Երբ գոհանալով վեր կացան, ծերը հարցրեց մայրապետին. «Ինչո՞ւ այդպես արեցիր, քանզի հենց մեզ՝ հյուրերիս էր հարկավոր կերակրել ձկներով և խորտիկներով, որոնք դուք կերաք»: Ասաց մայրապետը ծերին. «Դու մենակյաց ես, և մենակյացի կերակուր դրեցի քո առաջ, և քո աշակերտը աշակերտ է մենակյացի, և ես աշակերտի կերակուր դրեցի նրա առաջ, իսկ մենք՝ նորեկ և տկար լինելով, ուրախացանք և մխիթարվեցինք ձեր գալստյամբ»: Ասաց ծերը. «Կհիշենք քո սերը, քանզի մեզ համար մեծ շահ եղավ»: Եվ երբ գնում էին ննջելու, աբբա Դանիելն ասաց իր աշակերտին. «Գնա՛ տես՝ որտեղ է ննջել այն արբեցողը»: Վերադառնալով՝ ասաց ծերին. «Կարիքներ հոգալու համար դուրս է եկել»: Եվ ծերն ասաց աշակերտին. «Հսկի՛ր ինձ հետ այս գիշեր»: Երբ ննջեցին բոլոր քույրերը, վերցրեց

ծերն աշակերտին և կանգնեց վանդակապատի հետևում, որտեղ այն կարծեցյալ արբեցողը կանգնած էր: Նա ձեռքերը երկինք էր բարձրացրել, իսկ արտասուքը գետի պես հոսում էր և տարածվում գետնին, շրթունքները շարժվում էին աղոթելիս, բայց ձայն դուրս չէր գալիս նրա բերանից, այլ տխրում և հառաչում էր և ընկնում էր երեսնիվայր, բայց երբ լսում էր, որ քույրերից մեկը գալիս է մարմնավոր կարիքի համար, ընկնում էր գետնին և խռմփացնում էր: Այսպես էր անում նա ամբողջ գիշեր և այսպես էր անցկացնում իր կյանքի բոլոր օրերը, և ոչ ոք չգիտեր այդ: Այնժամ ծերն ասաց իր աշակերտին. «Ծածուկ ինձ մո՛տ կանչիր մայրապետին և նրա օգնականին»: Եկան և ամբողջ գիշեր հետևում էին, թե ինչ է անում կարծեցյալ արբեցողը: Եվ ծերն ասաց. «Այսպիսի արբեցողին սիրում է Աստված, և ես նրա համար եկա այստեղ»: Իսկ մայրապետը լալիս էր և ասում. «Վա՜յ, որքան չարչարանք տվեցինք մենք դրան»: Եվ երբ հնչեցրին զանգերը, հավաքվեցին քույրերը, և ահ ընկավ նրանց մեջ: Իսկ սուրբն իմացավ այդ՝ նախքան լուսանալը և գաղտնի մտավ այնտեղ, ուր ծերն էր ննջում, վերցրեց իր գավազանն ու դուրս եկավ վանքից՝ դռների վրա գրելով. «Աղո՛թք արեք ինձ համար և թողությո՛ւն շնորհեք, քանի որ ձեզ տրտմեցրի». և անհետացավ: Փնտրեցին նրան և չգտան, ապա դուռը բաց տեսնելով և գրվածը կարդալով՝ մեծ լացուկոծ արին և մեկառմեկ խոստովանեցին ծերին այն ամենը, ինչ արել էին նրա հանդեպ: Եվ քույրերի վրա աղոթք անելով՝ դարձավ ծերն իր աշակերտի հետ դեպի անապատ՝ փառավորելով Աստծուն, որ միայն ինքը գիտե, թե ինչպիսի ծառաներ ունի: Սա, որ երբեք գինի չէր ճաշակել, իր անձը արբեցող էր ցույց տալիս, իսկ մենք, որ ոչ մի բարի բան չունենք, նրանց բարեգթությունն ենք աղաչում:

4. Ոմն ծեր, իր սպասավորի սաստիկ թախանձանքներին տեղի տալով, գնում էր մերձակա գյուղը՝ մի հիվանդ երեխայի բժշկության համար, իսկ սպասավորը նրան ընդառաջ հանեց մի բազմություն՝ խաչով ու խունկերով: Եվ երբ այդ տեսավ ծերը, իր ողջ հանդերձները հանեց և սկսեց մերձակա ջրում լվանալ, որը նախ սպասավորը տեսավ, ետ դարձավ և հետ դարձրեց բազմությանը՝ ասելով. «Ցնորվեց ծերը»: Եվ ապա եկավ նրա մոտ և հարցրեց. «Հայր, ինչո՞ւ այդպես արեցիր, քանզի բոլորն ասում էին, թե դիվահարվել է ծերը»: Ասաց ծերը. «Ես էլ հենց այդ էի կամենում լսել, դրա համար էլ այդպես արեցի»:

5. Հայր Ամոն Ռայիթացին հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Երբ կարդում եմ Սուրբ Գիրքը, ուզում եմ գրի առնել խորհուրդներս, որպեսզի ուսուցանեմ այն և պատրաստի ունենամ խոսելիս»: Ասաց նրան ծերը. «Դա քեզ բոլորովին պետք չէ, այլ լռություն ստացիր քո խորհուրդներում և ճգնելն արդեն իսկ ասել է նշանակում»:

6. Մի անգամ տոնական մի օր եղբայրները ճաշում էին եկեղեցում: Այնտեղ մի եղբայր կար, որը կերակրի սպասավորին ասաց, թե ինքը եփված կերակուր չի ուտում, այլ միայն՝ աղ: Եվ սպասավորը կանչեց մեկ այլ եղբոր և ամենքի առաջ ասաց. «Այսինչ եղբայրը եփված կերակուր չկերավ. սրա համար մի քիչ ա՛ղ բեր»: Եվ ծերերից մեկը վեր կենալով նրան ասաց. «Ավելի լավ էր քեզ համար այսօր միս ուտել քո խցում, քան թե այդ բանը լսել բոլորի առաջ»:

7. Ոմն եղբայր հարցրեց հայր Մոտային և ասաց. «Եթե մի ուրիշ տեղ գնամ բնակվելու, ի՞նչ խորհուրդ կտաս, ինչպե՞ս վարվեմ»: Ասաց ծերը. «Եթե ուզում ես մեկ այլ տեղում բնակվել, մի՛ կամեցիր անուն հանել, թե՝ արգելական եմ և չեմ գնում եկեղեցի, ո՛չ ուտում եմ, ոչ ըմպում եմ, ո՛չ քնում եմ և նման այլ բաներ, որովհետև դա սուտ հռչակ է, իսկ հետագայում ճանձրույթ և խռովություն կգտնես, որովհետև մարդիկ, որտեղ գտնում են այդպիսի մեկին, այնտեղ են ձգտում գնալ և շփոթ են առաջացնում: Այլ դու որտեղ էլ լինես, հավասա՛ր եղիր մյուս եղբայրներին, և ինչ որ իրենք են անում, նույնը և դո՛ւ արա և հանգիստ կգտնես, որովհետև խոնարհություն է՝ հավասար լինել բոլորին: Եվ մարդիկ էլ, տեսնելով, որ նրանց նման ես, չեն նեղի և չեն շփոթեցնի քեզ»:

8. Ծերերն ասում էին երանելի հայր Արսենի և հայր Թեոդորոս Փերմացու մասին, թե մեծագույն ատելություն ունեին մարդկային փառքի հանդեպ: Հայր Արսենը երբեք չէր գնում մարդկանց հետ հանդիպման, իսկ Հայր Թեոդորոսը թեև հանդիպում էր, բայց ոնց որ իսկական դաշույն լիներ, քանզի կրակոտ և ցասկոտ էր, և հանդիպողներին ահ ու երկյուղի մեջ էր գցում:

9. Փերմացի հայրերից մեկը պատմեց, թե. «Մի անգամ երեկոյան գնացի հայր Թեոդորոսի մոտ և նրան գտա՝ պատառոտուն վերարկուն հագին, կուրծքը՝ բաց, իսկ կնգուղն էլ առջևի կողմից էր: Այդ պահին ինչ-որ կոմս եկավ նրան տեսնելու և բախեց դուռը: Ծերը ելավ բացելու, և հանդիպելով նրան՝ միասին նստեցին դռանը, և ծերը խոսում էր նրա հետ: Ես, մի թիկնոց վերցնելով, ծածկեցի նրա ուսերը,

իսկ ծերը, վերցնելով այն, նետեց մի կողմ: Եվ երբ կոմսը գնաց, ասացի նրան. «Հա՛յր, ինչո՞ւ այդպես արեցիր. մարդը եկել էր, որպեսզի օգուտ քաղի, բայց դուցե գայթակղվեց մեզանից»: Ասաց ծերը. «Ի՞նչ ես ասում, հա՛յր, տակավին մարդկա՞նց ենք ծառայում: Մենք մերը կատարենք և անցնենք. ով կամենում է շահել, կշահի, ով կամենում է գայթակղվել, կգայթակղվի: Որ պահին ինչպես որ եմ, այդպես էլ ներկայանում եմ»: Իսկ աշակերտին պատվիրեց և ասաց. "Եթե մեկը գա և ինձ տեսնել կամենա, նրան սուտ չասես, այլ՝ եթե ուտում եմ, ասա՛ ուտում է, և եթե ննջում եմ, ասա՝ ննջում է"»:

10. Մի կրոնավորի մասին ասում էին, թե հաց չէր ճաշակում, այլ թրջած սիսեռ էր ուտում: Մի անգամ նա պետք է գնար մի մեծն ծերի մոտ, որտեղ նաև օտարականներ կային: Ծերը նրանց համար մի քիչ ոսպ եփեց: Եվ երբ նստեցին ճաշակելու, սա բերեց դարձյալ իր թրջած սիսեռը, դրեց իր առջև և սկսեց ուտել: Իսկ ծերը, տեսնելով այդ, լուռ մնաց, որպեսզի նրանց առջև չհանդիմանի նրան: Եվ երբ նրանք վեր կացան, առնելով նրան՝ մի կողմ տարավ և ասաց. «Եղբա՛յր իմ, եթե մեկի մոտ հյուր գնաս, մի՛ ցուցադրիր քո վարքը, այլ եղբայրների հետ ճաշակիր, որպեսզի չլինի, թե իբր դատապարտում ես նրանց, իսկ եթե ուզում ես քո վարքով շարժվել, նստի՛ր քո տանը և ուրիշ տեղ մի՛ գնա»: Եվ նա, անսալով ծերի խոսքերին, եղբայրներին հանդիպելիս հավասարապես օգտվում էր նույն կերակուրներից, ինչպես և ասել էր նրան ծերը:

11. Պատմեցին ոմանք Կոստանդնուպոլսի պատրիարք սուրբ Հովհան Ոսկեբերանի երեց աշակերտ հայր Եվլոգիոսի մասին, թե խիստ ճգնում էր՝ երկուական օրով պահեցողություն անելով. երբեմն էլ շաբաթը մեկ անգամ էր ուտում: Ո՛չ գինի էր ճաշակում, ո՛չ ձեթ, այլ միայն աղ ու հաց, և մարդկանց մեջ մեծ փառք ուներ: Սա, լսելով սկյութացիների մասին, թե մեծ վարք ունեն, եկավ նրանց մոտ՝ ակնկալելով, թե ինքը նրանցից շատ ավելի բան գիտե: Եվ գնալով Պիլուզ՝ հարցուփորձ արեց, թե ինչ վիճակում է Սկյութիան: Եվ պատմեցին, թե ավերվեց մազքիթների կողմից, և այս լսելով՝ սաստիկ տրտմեց: Ոմանք էլ ասացին. «Այստեղ՝ Պանեփոսում, մի ծեր սկյութացի կա՝ հայր Հովսեփը, գնա՛ նրա մոտ»: Եվ գնալով հայր Հովսեփի մոտ՝ ակնկալում էր առավելագույն խստակրոնություն տեսնել նրանից: Ընդունեց նրան ծերը խնդությամբ և ասաց իր սպասավորին. «Մխիթարական ի՞նչ ունես, պատրաստի՛ր այսօր մեզ համար՝ հանուն մեր

օտարականների»: Եվ երբ նստեցին ճաշակելու, նրա հետ եկողներն ասացին. «Հայր Եվլոգիոսի համար մի քիչ աղ բերեք, որովհետև նա այստեղ չի ճաշակի»: Իսկ հայր Հովսեփը լուռ կերավ և ըմպեց: Երեք օր մնացին նրա մոտ և ո՛չ սաղմոսելիս լսեցին Հովսեփի աշակերտներին, ո՛չ էլ աղոթելիս տեսան, որովհետև ինչ անում էին, ծածուկ էին անում: Եվ նրանց մոտից գնացին՝ առանց դույզն-ինչ օգուտ քաղելու: Աստծո նախախնամությամբ այդ օրը նրանք մոլորվեցին և երեկոյան կողմ դարձյալ եկան այնտեղ՝ ծերի խուղի մոտ: Եվ նախքան կբախեին դուռը՝ լսեցին, որ նրանք սաղմոսում են, և կանգնած մնալով շատ ժամեր՝ նրանք ի վերջո բախեցին, իսկ ներսինները դադարեցին սաղմոսել: Երբ ներս մտան, ծերը խնդությամբ ընդունեց նրանց, և քանի որ նրանք խիստ խորշակահարվել էին, բերեցին կուժը և ջուր տվեցին նրանց, իսկ ջուրը ծովի և գետի ջրերի խառնուրդ էր: Եվ առանձին միտք անելով՝ Եվլոգիոսը մտավ ծերի մոտ, ընկավ նրա առաջ և աղաչում էր նրան՝ կամենալով հասկանալ նրանց վարքը. «Ինչպե՞ս եղավ, որ առաջին անգամ չէիք սաղմոսում, իսկ երբ գնացինք, բազում ժամեր սաղմոսում էիք, իսկ երբ կամեցա ջուր ըմպել՝ պարզեցի, որ ջուրն աղի է»: Ասաց նրան ծերը. «Եղբայրդ անմիտ է, և չիմանալով՝ խառնեց ծովի ջրի հետ»: Իսկ նա աղաչում էր՝ կամենալով ճշմարիտն իմանալ: Ասաց նրան հայր Հովսեփը. «Այն գինու փոքրիկ բաժակը, որ մենք ըմպեցինք, Քրիստոսի սիրո համար էր, իսկ այս ջուրը եղբայրներն ըմպում են ամեն օր, և աղոթում են անդադար և մշտապես»: Սովորեցրեց նրան նաև իմաստությամբ քննել խորհուրդները և ծածուկ կատարել առաքինության գործերը, այլ ոչ թե՝ մարդկանց առաջ, և հեռացրեց նրանից մարդկային հպարտությունը: Ընտիր կրոնավոր դարձավ նա և հավասար՝ բոլորին, ճաշակում էր այն ամենը՝ ինչ դնում էին նրան առաջ, և սովորեց ծածուկ կատարել առաքինության գործերը: Եվ ասաց ծերին. «Ճշմարիտ են ձեր գործերը»: Եվ խնդությամբ հեռացավ՝ գոհանալով Աստծուց:

12. Հայրերից մեկը եկավ հայր Հովսեփի մոտ և բախեց դուռը. ծերը բացեց՝ կարծելով, թե իր սպասավորն է: Երբ երբ տեսավ նրան, ընկավ երեսի վրա, իսկ եկվորն աղաչեց նրան և ասաց. «Կանգնի՛ր, հա՛յր, որպեսզի ողջունեմ քեզ»: Ասաց նրան ծերը. «Չե՛մ կանգնի, եթե չգնաս»: Եվ բազում անգամ աղաչեց նրան, բայց նա չկանգնեց, մինչև որ նա դուրս եկավ:

13. Ասաց ծերերից մեկը. «Մարդ կա՝ լռություն է պահում՝ ոչ թե առաքինությունից, այլ փառասիրությունից դրդված, իսկ ով Աստծով է լռեցնում իրեն՝ դա՛ է առաքինություն, որովհետև Աստծուց են նրա շնորհները»:

14. Գնաց մի անգամ Նիկոպոլսի եպիսկոպոս հայր Ադելփիոսը հայր Սիսոյի մոտ՝ հայր Անտոնի լեռը: Երբ պատրաստվում էր ելնել այնտեղից, նախքան ճանապարհ ընկնելը՝ հայր Սիսոն նրանց առավոտյան նախաճաշ մատուցեց. պահքի օրեր էին: Երբ սեղան դրեցին, այդ պահին փարանացիք բախեցին դուռը: Եվ հայր Սիսոն ասաց իր աշակերտին. «Մի քիչ փոխնդապո՛ւր տուր նրանց, քանզի հոգնած են»: Ասաց նրան հայր Ադելփիոսը. «Պետք չէ այդպես, հա՛յր, որպեսզի չասեն, թե Սիսոն առավոտյան ճաշակում է»: Ծերը նայեց նրան ու ասաց. «Գնա՛ և տո՛ւր նրանց»: Եվ երբ տեսան փոխնդապուրը, նրան ասացին, թե օտար մարդիկ կան այստեղ, և ծերը ճաշակում է նրանց հետ: Եվ նա նրանց ասաց՝ այո՛: Իսկ փարանացիք սկսեցին տառապել և ասել. «Թող ների ձեզ Աստված, քանի որ ծերին ստիպեցիք ճաշակել այս ժամին. չգիտեք, թե հետո որքան պիտի ճգնի դրա համար»: Այս լսելով՝ եպիսկոպոսը ընկավ ծերի առաջ և ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, հա՛յր, քանի որ մարդկայնորեն խոսեցի, իսկ դու Աստվածայինն ես խորհում»: Ասաց նրան հայր Սիսոն. «Թող Աստվա՛ծ փառավորի մարդուն. մարդկանց փառքը ոչինչ է և երբեք հաստատուն չէ»:

15. Սկյութացիների մասին ասում էին, թե երբ մեկն օգնում էր ընկերոջը և կատարում նրա գործը, դա չէին դիտում որպես առաքինություն, այլ որպես մեղքի քավություն: Ասում էին նաև, թե երբ գնում էին Եգիպտոս և կամենում էին վերցնել հնձի վարձը կամ իրենց ձեռագործի գինը, յուրաքանչյուր ոք իր կարիքների չափն էր սահմանում՝ ըստ անհրաժեշտության, իսկ մնացածը տալիս էին այրիներին և որբերին: Հայր Հովհան Կարճահասակի մասին ասում էին, թե նա ամբողջն էր բերում՝ ասելով. «Իմ այրիներն ու որբերը Սկյութիայում են»:

16. Հայրերի մեջ կար մեկը՝ Ոնոփրիոս անունով՝ մեծ և առաքինի ճգնավոր, որ բազում ճգնություններից կոճղի պես էր դարձել: Ոմն թագավոր լսեց նրա համբավը և կանչեց նրան, սակայն Ոնոփրիոսը չկամեցավ գնալ նրա մոտ՝ ասելով. «Եթե ինչք և հարստություն է խնդրում ինձնից, չունեմ, որ տամ նրան. եթե ուզում է սպանել, պատրաստ եմ մեռնելու Տիրոջ անվան համար, կտրի՛ր գլուխս և տա՛ր

նրան. իսկ եթե խրատ է խնդրում, պատշաճ չէ, որ խրատատուն գնա խրատվողի մոտ, այլ թող ի՛նքը գա և օրհնություն ստանա»:

17. Հայր Պիմենն ասաց. «Սովորեցրո՛ւ քո սրտին պահել այն, ինչ ուսուցանում է քո լեզուն, և սովորեցրո՛ւ քո լեզվին խոսել այն, ինչ կա քո սրտում»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

1. Մի եղբոր գովեցին հայր Անտոնիոսի մոտ, իսկ նա փորձեց նրան, տեսնի՝ կարո՞ղ է համբերել արհամարհանքների: Երբ գտավ, որ չի կարող, ասաց նրան. «Դու նման ես գյուղի, որի երևացող կողմը զարդարված է, իսկ ներսը հափշտակված և գերված է ավազակների կողմից»:

2. Հայր Թեոդորոսի մոտ գնաց ոմն եղբայր և երեք օր այնտեղ մնալով՝ աղաչում էր, որ խոսք լսի նրանից: Սա բնավ չխոսեց նրա հետ և ոչ մի բան չասաց: Այն ժամանակ նա այնտեղից տրտմած դուրս եկավ: Ծերի աշակերտն ասաց նրան. «Հա՛յր, ինչո՞ւ ոչ մի բան չասացիր նրան. ահա տրտմած գնաց»: Ասաց ծերը. «Վերջացրո՛ւ, եղբա՛յր, ի՞նչ ասեի նրան, քանզի նա վաճառական էր և կամենում էր օտար բանի վրա հարստանալ, որովհետև ոչ թե ըմբռնելու համար էր կամենում խոսքն ուսանել, այլ՝ մարդկանց առաջ ձևանալու»:

3. Մեկ այլ եղբայր գնաց հայր Թեոդորոսի մոտ և սկսեց մեծամեծ բաներից խոսել և քննել գործեր, որոնք ինքը բնավ չէր գործել: Ծերը նրան ասաց. «Դու ո՛չ նավն ես գտել, ո՛չ նավի ծախսն ես վճարել, ոչ էլ ծովն է մտել քո նավը, բայց կամենում ես դժվարամատչելի քաղաքը մտնել: Դու նախ գործի՛ր, հետո կխոսես»:

4. Հայր Մովսեսի մասին լսեց ոմն իշխան և գնաց Սկիտե՝ նրան տեսնելու: Այդ մասին ոմանք տեղեկացրին ծերին, իսկ նա փախավ և գնաց դաշտ: Եվ հանդիպեցին նրան իշխանը և իր հեծյալները, մինչ գնում էր ծերը դաշտով, և ասացին նրան. «Ասա՛ մեզ, ծե՛ր, որտե՞ղ է հայր Մովսեսի սենյակը»: Ծերն ասաց. «Ինչո՞ւ եք փնտրում նրան, քանի որ նա մոլագար է»: Եվ երբ իշխանը եկավ եկեղեցի, նրան ընդառաջ ելան եղբայրները: Իշխանը նրանց ասաց. «Լսեցի ես հայր Մովսեսի մասին և եկա տեսնելու նրան: Մեզ հանդիպեց մի ծեր, որ գնում

էր Եգիպտոս, և հարցրինք նրան հայր Մովսեսի մասին, իսկ նա մեզ ասաց՝ ինչո՞ւ եք փնտրում նրան, քանի որ նա հիմար է և մոլագար»: Եվ երբ եղբայրները լսեցին այս, սաստիկ տխրեցին և ասացին. «Ինչպիսի՞ն էր այդ ծերը, որ նման բաներ ասաց մեր սուրբ հոր մասին»: Նրանք ասացին. «Ալևոր էր, հնոտի զգեստներով, մեծահասակ ու սև»: Իսկ նրանք ասացին. «Դա հենց նույն ինքը հայր Մովսեսն է եղել, որ չի կամեցել իրեն ճանաչեք, դրա համար էլ այդպես է ասել»: Եվ հոգեպես մեծ շահ ստացած՝ իշխանը վերադարձավ իր տեղը:

5. Եսթերինոս հայրը գնում էր անապատով, և նրա հետ ուրիշ եղբայրներ էլ կային: Սրանք վիշապ տեսնելով՝ փախան: Եվ երբ կանգնեցին, եղբայրներից մեկն ասաց ծերին. «Դու է՞լ վախեցար նրանից, հա՛յր»: Ծերն ասաց նրան. «Նրանից չէի վախենում, որդյա՛կ, սակայն եթե չփախչեի նրանից, չէի կարողանա հոգու ամբարհավաճությունից ազատվել»:

6. Ալեքսանդրիայի ոմն իշխան կամեցավ տեսնել հայր Պիմենին, իսկ ծերը չցանկացավ ընդունել նրան: Իշխանը որոշեց չար հնարք գործադրել, և կալանավորելով նրա քրոջ որդուն՝ բանտ դցեց և ասաց. «Թող դա Պիմենը և աղաչի՛ ինձ, և ապա ազատ կարձակեմ հանուն նրա»: Այն ժամանակ տղայի մայրը՝ Պիմենի քույրը, գալով Պիմենի մոտ՝ կանգնեց դռան առաջ և ողբալով ասաց նրան. «Օգնի՛ր իմ որդուն»: Իսկ ծերը բնավ չնայեց նրա կողմը և չխոսեց նրա հետ: Իսկ քույրն անարգեց նրան և ասաց. «Պղնձե՛ աղիք, ողորմի՛ր ինձ, ահա իմ անդրանիկն ու քո որդին բանտում է»: Իսկ ծերն ասաց. «Պիմենը որդի չունի»: Եվ այդպես գնաց քույրը: Իսկ երբ այդ լսեց իշխանը, ասաց. «Ուրեմն թող խոսքո՛վ պատվիրի, և ես կարձակեմ նրան»: Եվ ծերն իշխանին այսպես պատվիրեց. «Դատի՛ր դրան ըստ արքունի օրենքների, և եթե մահվան արժանի բան է գործել, թո՛ղ մեռնի, իսկ եթե ոչ՝ շնորհի՛ր ինձ»: Եվ իշխանը շնորհեց նրան իր քրոջ որդուն և ոչ մի հնարքով չկարողացավ տեսնել նրան:

24. Ասաց դարձյալ հայր Պիմենը. «Ով ստանա մարդկանց սերը, նա կհեռանա Աստծո սիրուց, և բարի չէ՝ հաճելի լինել բոլորին, քանզի գրված է. «Վա՜յ ձեզ, եթե բոլոր մարդիկ լավ խոսեն ձեր մասին» (Ղուկ. Զ 26)*:*

25. Ասաց դարձյալ. «Օրինակ՝ թաքցված գանձը հենց ի հայտ եկավ՝ կհափշտակվի: Այդպես էլ առաքինությունը՝ հենց ի հայտ եկավ՝

կկորչի, և ինչպես մոմն է հալվում կրակից, նույնպես և մարդկանց գովեստն է կիզում հոգին և ողորմելի դարձնում»:

26. Հայր Դանիելն ասաց. «Գնացի ես մի անգամ հայր Պիմենի մոտ, և միասին ճաշակեցինք, ապա մեզ ասաց. «Գնացե՛ք փոքր-ինչ հանգստացեք»: Եվ եղբայրները գնացին հանգստանալու, իսկ ես մնացի այնտեղ, որպեսզի առանձին զրուցեմ նրա հետ: Եվ վեր կենալով գնացի նրա սենյակը, իսկ երբ նա տեսավ, որ գնում եմ իր մոտ՝ ձևացրեց, իբր ննջում է, որովհետև ծերի սովորությունն էր՝ ամեն ինչ անել ծածուկ»:

27. Հայր Սիմեոնի մոտ մի անգամ մի իշխան եկավ տեսակցության, իսկ երբ նա լսեց այդ, գոտին մեջքին կապեց և գնաց իր արմավենիները կտրատելու: Նրանք դուռը գալով՝ ձայնեցին. «Ծե՛ր, ծե՛ր, ո՞ւր է այն մենակյացը»: Եվ նա պատասխանեց. «Այստեղ չէ»: Նրանք լսելով պատասխանը՝ գնացին այնտեղից:

28. Մի անգամ հայր Տիթոն նստած իր չուխան էր կարկատում, երբ նրան տեսավ մի եղբայր: Իսկ երբ նա իմացավ, որ եղբայրը տեսավ, սաստիկ ամաչեց և ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, եղբա՛յր, քանզի դեռ կրոնավոր չեմ դարձել, քանի որ ինձ այսպես տեսար՝ ես թուլացա»:

29. Ոմն եղբայր բնակվում էր Պաղեստինի գետեզերքին, որտեղ և բնակվում էր Սիլովանե երանելին: Այս եղբայրը հիմարություններ էր ցույց տալիս այլոց, որովհետև երբ հանդիպում էր որևէ մեկին, հապճեպ սկսում էր ծիծաղել և հրճվել, դրա համար էլ բոլորը խուսափում էին նրանից: Օրերից մի օր երեք հայրեր եկան հայր Սիլովանեի մոտ, և երբ աղոթեցին, ասացին հորը. «Քո աշակերտին տո՛ւր մեզ, որպեսզի մեզ տանի բոլոր եղբայրների սենյակները, որ տեսնենք նրանց»: Իսկ ծերն, ի լուր նրանց, ասաց եղբորը. «Բոլոր եղբայրների սենյակները կտանես սրանց»: Բայց ծածկաբար եղբորն ասաց. «Այն հիմար եղբորը ցույց մի՛ տուր, որ սրանք չգայթակղվեն»: Երբ շրջեցին եղբայրների սենյակները, հայրերն իրենց առաջնորդող եղբորն ասացին. «Բարի՛ եղիր ցույց տալ մեզ բոլոր եղբայրներին»: Եվ նա ասաց. «Շատ բարի, հայրե՛ր»: Այդպես էլ արեց, բոլորին ցույց տվեց, բացի հիմար եղբորից՝ ըստ ծերի պատվերի, և նորից եկան հայր Սիլովանեի մոտ: Եվ ծերը հարցրեց նրանց. «Տեսա՞ք բոլորին եղբայրներին»: Պատասխանեցին և ասացին. «Այո՛, հա՛յր, տեսանք և գոհանում ենք քեզանից, սակայն նեղվում ենք, քանզի ոչ բոլորին տեսանք»: Ծերը հարցրեց առաջնորդող եղբորը. «Մի՞թե բոլորին չտեսան»: Նա պատասխան

տվեց և ասաց. «Ըստ քո ասածի եղավ, հա՛յր»: Եվ երբ արդեն հայրերը գնում էին, դարձյալ նույն բանն ասացին հայր Սիլովանեին. «Եղբայրներին տեսնելու համար ցնծում ենք, իսկ ում որ չտեսանք՝ տրտմում ենք»: Երբ նրանք գնացին, հայրն ուզեց ստուգել եղբորից, թե արդյո՞ք միայն այն հիմարին չտեսան և տրտմեցին, և իմացավ, որ նա հիմար է ձևանում: Եվ վեր կենալով հայր Սիլովանեն գնաց այն հիմար եղբոր դուռը՝ տեսնելու, թե ինչով է նա զբաղված: Դուռը չբախեց, այլ մտավ տուն և տեսավ եղբորը՝ նստած գործ անելիս. երկու զամբյուղ էր դրել՝ մեկը՝ իր աջ, իսկ մյուսը՝ ձախ կողմում: Երբ տեսավ ծերին, ըստ իր սովորության սկսեց ծիծաղել: Ծերն ասաց. «Թո՛ղ այդ ծիծաղը և ասա՛ ինձ քո նստելու նպատակը»: Իսկ նա շարունակում էր ծիծաղել: Հայրը նրան ասաց. «Դու գիտես, որ ես, բացի կիրակի օրվանից, խցից դուրս չեմ ելնում, և ահա շաբաթվա կեսին եկել եմ, քանի որ Աստված ինձ ուղարկեց քեզ մոտ»: Եվ երբ նա լսեց Աստծո անունը, սաստիկ վախեցավ, ընկավ նրա առաջ և ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, հա՛յր, քանզի առավոտից նստում և այս խիճերը դնում եմ առջևս: Երբ բարի խորհուրդ է գալիս, մի խիճ գցում եմ աջակողմյան զամբյուղը, իսկ եթե չար խորհուրդ է գալիս, գցում եմ խիճը ձախակողմյան զամբյուղը: Այս անում եմ ամբողջ օրը, իսկ երեկոյան հաշվում եմ երկկողմյան խիճերը. եթե աջակողմյան խիճերն են ավելի լինում, հաց եմ ճաշակում, իսկ եթե ձախակողմյաններն են ավելանում, այդ օրը ոչինչ չեմ ուտում: Երբ երկրորդ օրը մտքիս ինչ-որ խորհուրդ է գալիս, ինքս ինձ ասում եմ՝ տե՛ս, թե ինչ ես խորհում. հավատա՛ ինձ, որ այսօր էլ չես ուտի»: Եվ երբ ծերը լսեց այդ, սքանչացավ և ասաց. «Իսկապես սուրբ էին մեզ այցի եկած հայրերը, որ սրա առաքինությունը բացահայտեցին՝ ի շահ շատերի, և ինձ մեծ ուրախություն պատճառեց այսօր նրանց՝ մեզ մոտ գալը»:

30. Հայր Եսայիասն ասաց. «Մեծ և պատվական գործ է հպարտության դեմ հաղթանակ տանելը և դեպի աստվածգիտություն դառնալը, որովհետև ովքեր ընկնում են ամբարտավանության չար ախտի ձեռքը, օտարանում են հեզությունից, նրանց սիրտը խստանում է սրբերի հանդեպ և ընկնում են բոլոր չարիքների մոր գիրկը, որ ամբարտավանությունն է: Սակայն դո՛ւ, ծառա՛ Քրիստոսի, ծածո՛ւկ պահիր քո սրտում քո գործերն ու ջանքերը, որպեսզի մարդահաճությամբ չկորցնես քո վարձը, քանզի ով մարդկանց հաճոյանալու համար է ինչ-որ բան անում, իր վարձը կկորցնի՝ ըստ Տիրոջ խոսքի (հմմտ. Մատթ. Զ 1)*: Ով սիրի մարդկանցից եկած փառքը, նա նախանձի մեջ կընկնի, իսկ նա-*

խանձոտը չի կարող խոնարհ լինել: Նա, ով չի խոնարհվում, թշնամու բաժին կդառնա, որոնք էլ նրան կգցեն չարիքների խորքը և կսպանեն, սակայն դու փախի՛ր սնափառությունից և արժանի կլինես հասնելու Աստծո փառքին հավիտենական կյանքում»:

31. Ասաց ծերը. «Մարդահաճությունն սպառում է կրոնավորի ողջ զորությունը և ցամաք է թողնում նրան: Ով իր բարի գործերը հայտնի որևէ մեկին, կնմանվի մարդու, ով իր սերմը սերմանում է վայրի երկրում, և երկնքի թռչունները գալիս ուտում են դրանք, իսկ ով ծածկում է իր առաքինությունը, նմանվում է մարդու, ով իր սերմը սերմանում է բարի երկրում և հնձում է բազմապատիկ: Ուրեմն՝ կա՛մ պետք է փախչելով փախչես մարդկանցից, կա՛մ ծաղրես ու այպանես աշխարհն ու մարդկանց, և դառնաս հիմար ու մոլագար հանուն Աստծո»:

32. Վանական միաբանության մի առաջնորդ կար, որն իր հետ մոտ երկու հարյուր եղբայրներ ուներ: Սա անչափ փառաբանված էր մարդկանցից: Սրան հյուր եկավ Քրիստոս՝ ծեր աղքատի տեսքով, աղերսեց դռնապանին, որպեսզի նա տեղեկացնի վանահորը, թե ոմն աղքատ ծեր՝ քո երբեմնի ծանոթը և ընկերը, եկել է և դռան մոտ է: Դռնապանը խիստ դժվարությամբ կարողացավ մտնել հոր մոտ և ասաց նրան այդ մասին: Հայրը բարկանալով՝ ասաց նրան. «Զգիտե՞ս և չե՞ս տեսնում, որ շատերի հետ եմ խոսում և հոգնած եմ, ինձ հանգի՛ստ թող այս ժամին»: Իսկ նա լսելով այդ՝ դուրս եկավ և գնաց իր տեղը: Տերը երկայնամտեց և մնաց դռանը մինչև ժամը հինգը, որ գուցե թե երևար մեկը: Ժամը հինգին ոմն մեծահարուստ եկավ այնտեղ, և նրա համար հապճեպ բացելով դռները՝ նրան ընդառաջ ելավ վանահայրը՝ մեծ փութաջանությամբ և զգուշությամբ: Եվ տեսնելով նրան մեծահարուստի հետ՝ աղքատը՝ Նա, որ մեծ է ողորմությամբ և մեծաշուք Տերն է, աղաչելով ասաց նրան. «Կամենում եմ քեզ հետ մի փոքր խոսել, հա՛յր»: Իսկ նա բնավ պատասխան չտվեց, այլ մեծահարուստի հետ ներս մտավ, որ ճաշեն, քանի որ այն եկվորների պատճառով շտապում էր և շփոթված էր: Եվ երբ ճաշեցին, ելավ դարձյալ վանահայրը այն մեծահարուստի հետ մինչև վանքի դուռը և ճանապարհեց նրան: Եվ երբ ետ դարձավ այնտեղից, աշխարհիկ հոգսերի գերի լինելով, դարձյալ մոռացավ փոքր-ինչ մխիթարություն պարգևել այն տառապյալ ծերին և անհիշաչար Տիրոջը: Եվ մինչև երեկո ոչ մի օրհնալիր կամ արժանի բան չարեցին այն օրհնյալ աղքատին: Հեռացավ

Նա այնտեղից և պատվիրեց հորը այսպես հաղորդել. «Քանի որ մարդկանց տված փառքը սիրեցիր, հանուն քո նախկին տքնությունների և բազում առաքինությունների, որ գործում էիր դու, աշխարհի չորս կողմերից և երկրի ծագերից մարդիկ կբերեմ, որ գովեն քեզ, քանզի դա ես երազում և դրան ես ձգտում, իսկ այնտեղ Իմ բարիքներից չես ճաշակի և իմ Արքայությունը չես մտնի»: Եվ ճանաչեցին այն աղքատ ծերին, որ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսն էր:

ԳԼՈՒԽ Թ

ԴԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մի եղբոր վրա փորձություն եկավ հայր Եղիության միաբանությունում: Նա, այնտեղից դուրս գալով, գնաց լեռը՝ աբբա Անտոնիոսի մոտ, և նրա մոտ մեկ տարի մնալուց հետո աբբա Անտոնիոսը նրան նորից ուղարկեց միաբանություն, որտեղից եկել էր: Երբ տեսան նրան, դարձյալ հալածեցին: Իսկ նա վհատված գնաց հայր Անտոնիոսի մոտ և ասաց. «Ինձ չկամեցան ընդունել, հա՛յր»: Ծերն ետ ուղարկեց նրան դարձյալ և պատվիրեց ասել հետևյալը. «Շատերը նավարկեցին ծովի խորքերում և կորցրին բեռները և բազում տառապանքներով փրկվելով՝ հասան ցամաք. իսկ դուք ցամաքի վրա էլ եք ուզում ընկղմել փրկվածին»: Եվ երբ նրանք լսեցին հոր խոսքերը, սիրով ընդունեցին նրան:

2. Ոմն եղբայր ծերերից մեկից խրատ հարցրեց. «Եթե տեսնեմ մեկին ինչ-որ բան անելիս և դա պատմեմ մեկնումեկին, և ասեմ ոչ թե նրան դատապարտելու համար, այլ՝ միայն խոսելու. չարախոսությո՞ւն է այդ»: Ծերն ասաց. «Եթե քո խորհուրդներում նրա դեմ ախտավոր բան ունես, չարախոսություն է, իսկ եթե խորհուրդներդ ազատ են մեղանչումից, չարախոսություն չէ, այլ միջոց, որպեսզի չարը չզորանա»: Մեկ այլ եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Եթե դամ հայրերից մեկի մոտ և նրան հարցնեմ, թե արդյոք կարո՞ղ եմ բնակվել այսինչի հետ, բայց ծերը գիտե, որ դա վնաս է ինձ, ի՞նչ պատասխան պետք է տա ինձ. եթե ասի ինձ՝ մի՛ գնա, արդյոք ինքն իրեն չի՞ դատապարտի իր խորհրդով»: Պատասխանեց ծերը և ասաց. «Այդ նուրբ խնդիրդ և տեսությունդ քչերն ունեն: Եթե պատասխանի ներքին մղումը ախտից է՝ վնաս է, և խոսքը զորություն չունի: Իսկ ի՞նչ է, պետք է ասի՝ ես չգիտեմ, և իրեն ազատի՞: Իսկ եթե ուզում է ազատել մեղքից, թող ոչ ոքի չդատապարտի, այլ պատճառն իր վրա վերցնի և ասի. «Ես ինքս

անպիտանի մեկն եմ, սակայն կարծում եմ՝ դա քեզ օգտակար չէ»: Եթե հարցնողը իմաստուն է՝ չի գնա, որովհետև ծերը չարությունից մղված չասաց, այլ՝ որպեսզի չարը չզորանա»:

3. Հայրերից մեկը պատմեց երկու եղբայրների մասին, որոնք չարախոսում էին մի եղբոր մասին, թե իբր մեղք է գործում: Եվ մեկը մյուսին ասաց. «Ես էլ եմ լսել»: Եվ տուն վերադառնալով՝ հանգիստ չգտավ, մինչև որ գնաց և եղբորն ասաց. «Ես ոչինչ չեմ լսել»: Նմանապես և մյուսն ասաց. «Ես էլ հանգիստ չեմ ունեցել»: Եվ երբ զղջացին իրենց զրպարտական խոսքերի համար, ազատվեցին չար խորհուրդներից և հանգստացան:

4. Միաբաններից երկու մեծագույն ճգնավորներ արժանացան հայեցողության, և նրանցից յուրաքանչյուրը տեսնում էր Աստծո զորությունը մյուս եղբոր վրա: Մի անգամ նրանցից մեկն ուրբաթ օրը դուրս ելավ միաբանների վանքից. և հաջորդ օրը սովորականի պես պատրաստ եղավ: Եվ եղբորը հայելով՝ տեսավ, որ զորությունը նրանից հեռացել է, և խռովք ապրեց: Երբ վերադարձան խուղը, նրան ասաց. «Ի՞նչ ես գործել, եղբայր, կամ ի՞նչ խորհուրդ ես ունեցել, որովհետև Աստծո շնորհները չտեսա քեզ վրա սովորականի պես»: Եվ նա ասաց. «Ես ոչ աղտեղի խորհուրդներ եմ ունեցել, ոչ էլ չար բան եմ գործել»: Եղբայրը նրան ասաց. «Գուցե դատարկամիտ խո՞սք է դուրս եկել քո բերանից»: Եվ հիշեց եղբայրն ու ասաց. «Այո՛, երեկ տեսա ոմանց, որ միաբանական վանքից դուրս՝ ուտում էին, և նրանց ասացի. «Ուրբաթ օրով այս ժամին ուտո՞ւմ եք»: Այս է իմ մեղքը. աղաչում եմ քեզ, եղբա՛յր, վշտակի՛ց եղիր ինձ երկու շաբաթ, միասին աղաչենք Աստծուն, որ թողություն շնորհի ինձ»: Այդպես արեցին, և երկու շաբաթից հետո եղբայրը տեսավ Աստծո շնորհներն իր եղբոր վրա:

5. Հարցրեց հայր Հովսեփը հայր Պիմենին. «Ասա՛ ինձ, ինչպե՞ս դարձար մենակյաց»: Ասաց նրան հայր Պիմենը. «Եթե ուզում ես հանգիստ գտնել և՛ այստեղ, և՛ այնտեղ, ամեն պարագայում ասա՝ ես ո՞վ եմ, և ոչ ոքի մի՛ դատապարտիր»:

6. Երեց Պղզոն լսեց եղբայրներից ոմանց մասին, թե հաճախ քաղաք են գնում, բաղնիք են մտնում և անարգագույն բաներ են խորհում՝ մենակյացի վարքին անհարիր: Եվ գալով հավաքի՝ նրանցից վերցրեց մենակյացի զգեստները: Եվ երբ արեց այդ, սիրտն ինքն իրեն դատապարտեց, և նա զղջաց: Ապա խռովահույզ մտքով եկավ հայրերի խուղը և նրանց պատմեց ողջ կատարվածը, և նրանք ուղարկեցին նրան հայր

Պիմենի մոտ: Եվ նա, վերցնելով տասնմեկ զգեստները, եկավ ծերի մոտ և պատմեց նրան կատարվածը և ասաց հայր Պիմենին. «Եղբայրներին, որոնք իրենց կարգի մեջ փոքր-ինչ հեղգացել էին, մերկացրի զգեստներից: Ահա իմ խորհուրդները նեղում են ինձ, որ ազնիվ չեմ վարվել»: Ասաց նրան հայր Պիմենը. «Դու ոչինչ չունե՞ս հին մարդուց, և իսպառ մերկացե՞լ ես նրանից»: Երեցն ասաց «Հին մարդուց դեռ ունեմ»: Այնժամ Պիմենն ասաց. «Ահա դու ևս եղբայրների պես ես, որովհետև եթե փոքր-ինչ ունես հին մարդուց, նշանակում է՝ ենթակա ես մեղքերին»: Այնժամ գնաց երեցը և կանչեց եղբայրներին, և ընկնելով նրանց առջև՝ դարձյալ հագցրեց նրանց մենակյացի զգեստները:

7. Հայր Եսային ասաց. «Եթե մտքովդ անցնում է դատել եղբորդ, դի՛ր քո մեղքերը քո առջև, և այն, ինչ էլ կարծում ես՝ բարի է, ասա՛, թե՝ այն ևս հաճո չէր Աստծուն»:

8. Հայր Եղիասն ասաց. «Տեսա մի եղբոր, որ ձեռքին դդմով գողացված գինի էր պահում: Ես կամեցա ծաղրել դևերին, որ նրան այդ անել էին տվել, և ասացի. «Վե՛ր բարձրացրու ձեռքերդ, եղբա՛յր»: Նա դդումը թաքցրել էր փիլոնի տակ: Նա դողալով բարձրացրեց ձեռքերը, իսկ ձեռքին ոչինչ չկար՝ Աստծո շնորհով: Եվ սա նրա համար եմ ասում, որ ոչ ոք բնավ չդատի իր եղբորը»:

9. Մի անգամ հայր Իսահակը գնաց մի վանք և դատապարտեց այնտեղ մեկին: Եվ երբ վերադարձավ իր խուցը, Տիրոջ հրեշտակը թույլ չտվեց նրան ներս մտնել, կանգնեց նրա դեմ՝ նրա տան դռների առաջ, և ասաց. «Թույլ չեմ տա քեզ մտնել այստեղ»: Իսկ նա աղաչեց և ասաց. «Ինչո՞ւ և ի՞նչի համար»: Տիրոջ հրեշտակն ասաց. «Աստված ուղարկեց ինձ քեզ մոտ և քեզնից հարցնում է՝ ի՞նչ ես հրամայում, ասա՛ ինձ, որտե՞ղ դասեմ այն մեղանչած եղբորը, ում դու դատեցիր»: Այնժամ ահաբեկված ծերն ընկավ իր երեսի վրա և ասաց. «Մեղա՛, Տե՛ր, թողությո՛ւն տուր ինձ»: Եվ ասաց հրեշտակը. «Ներս մտի՛ր, Աստված ներեց քեզ, և այսուհետև չհամարձակվես որևէ մեկին դատել, մինչև որ Աստված դատի բոլորին»:

10. Մեծն Մակարի մասին, ում կոչում էին փարավոնի և Եգիպտոսի երկրորդ աստված, ասում էին, թե այն աստիճան էր ծածկում մարդկանց հանցանքները, որպես թե՝ ո՛չ տեսել էր, ո՛չ էլ լսել:

11. Հայր Մովսեսն ասաց. «Եթե մեռնելու էլ լինես եղբոր ձեռքով, մի՛ դատիր նրան, որովհետև երբ Տիրոջ ձեռքը հարվածեց եգիպտացի-

ներին, տուն չկար, որտեղ մեռել չլիներ (Ելից ԺԲ 30)»: *Սա նշանակում է՝ ամեն ոք թող իր տան մեռելը թաղի:*

12. Ծերն Մարկոս Եգիպտացին երեսուն տարի դուրս չեկավ իր սենյակից, և քահանան ինքն էր երբեմն տոն օրերին գնում նրա մոտ և պատարագ մատուցում: Եվ մի օր նրա մոտ մի դիվահարի բերեցին՝ բժշկվելու համար, ով, նախքան քահանայի ներս մտնելը, ասաց. «Քահանան պոռնկության ոգի ունի, թո՛ղ չպատարագի»: Եվ ծերն ասաց. «Ամեն ոք մեղքը դուրս է հանում, իսկ դու ներս բերիր: Չէ՞ որ գրված է՝ մի՛ դատեք, որ չդատվեք (Մատթ. Է 1, Ղուկ. Զ 37-38)*: Եթե մեղավոր է, Աստված քավություն կտա նրան, քանզի գրված է. "Աղո՛թք արեք միմյանց համար, որ բժշկվեք* (Հակ. Ե 16)*"»: Եվ երբ եկավ քահանան, Տերը կամեցավ գայթակղությունից զերծ պահել ծերին: Եվ պատարագի ժամանակ նա տեսավ, որ Տիրոջ հրեշտակը, երկնքից իջնելով, ձեռքը դրեց քահանայի գլխին, և քահանան լուսավորվեց որպես հուր, և ասաց ծերին. «Եթե թագավորները թույլ չեն տալիս ապականված ձեռքերով սպասարկելու իրենց, ապա Երկնային արքան ինչպե՞ս թույլ կտա արատավորին կանգնելու իր առջև, որչա՛փ առավել ևս աստվածային զորությամբ կմաքրի և կսրբի իր սպասավորներին և կպայծառացնի արժանիներին»: Դիվահարն ազատվեց դևից, արձակվեց խնդությամբ և փառավորեց Աստծուն իր շնորհների մեջ: Եվ այս ամենը տեսնելու արժանացավ հայր Մարկոսը, որովհետև չդատեց քահանային, և այսպիսի հայտնության նա արժանացավ Քրիստոսի շնորհներով:*

13. Մի ծեր օրական երեք պաքսիմատ էր ուտում: Երբ հյուր եկավ նրա մոտ, նրա առաջ դրեց վեց պաքսիմատ, իսկ երբ կերան, հասկացավ, որ եկվորին չբավականացրեց, բերեց ևս երեք հատ նրա համար: Եվ երբ սեղանից վեր կացան, մեղադրեց հյուրին և ասաց. «Կրոնավորը պարտավոր է շատ չուտել»: Հյուրը թողություն խնդրեց և գնաց: Իսկ ծերը հաջորդ օրը կերավ իրեն սահմանված չափով և սաստիկ սոված մնաց, հաջորդ օրն՝ առավել ևս, իսկ երրորդ օրը չկարողացավ տանել սովը, ընկավ Աստծո առաջ և լաց եղավ: Եվ Տիրոջ հրեշտակը, գալով նրա մոտ, ասաց. «Այդպես եղավ, որովհետև դատեցիր եղբորը: Զգիտե՞ս, որ ով ինչ կարողանում է անել, իր անձով չի անում, այլ՝ Աստծո շնորհով: Արդ, այլևս այդպես չանե՛ս»:

14. Ոմն ծեր արգելեց քահանային գալ իր մոտ՝ պատարագ մատուցելու, որովհետև իր մոտ բամբասեցին նրան մասին: Եվ նա ձայն լսեց,

որ ասաց. «Իմ դատաստանը վերցրին մարդիկ»: Եվ տեսավ մի ոսկյա ջրհոր և ոսկյա շղթա, և մի բորոտ ջրհան ոսկե ամանով ջուր էր հանում և տալիս էր ըմպողներին, որից ծերը չէր կարողանում ըմպել: Եվ նրան ասացին. «Քեզ ի՞նչ փույթ, ինչո՞ւ ես ծարավ մնում, քանզի ջուրը սուրբ է, սուրբ է և տեղը, ուր կա, և ամանը, որով տալիս է»: Եվ սթափվելով՝ ծերը հասկացավ տեսիլքը, ապա իր մոտ կանչեց քահանային, թողություն խնդրեց, պատարագ անել տվեց և հաղորդություն վերցրեց նրանից:

15. Ասաց ծերը. «Ով ընդունեց չարախոսությունը, կրակ վերցրեց իր ծոցը»:

16. Դարձյալ. «Եթե տեսնես մեկին ծիծաղելիս կամ շատ ուտելիս, մի՛ դատիր նրան, այլ ասա՛. «Երանի սրան, քանի որ մեղք չունի, դրա համար էլ ցնծում է նրա հոգին»:

17. Հայր Պիմենն ասաց. «Եթե մարդ կարծում է, թե լռությամբ ճգնում է, բայց նրա սիրտը դատատպարտում է ուրիշներին, այնպիսին շատախոս է, թեկուզ լեզուն պահի: Իսկ նա, ով առավոտից մինչև երեկո խոսում է, լռություն է պահում, այսինքն՝ անօգուտ չի խոսում»:

18. Ոմն եղբայր բնակվում էր մի ծերի մոտ, և հացկերույթի ժամանակ մի ոտքը միշտ սեղանին էր դնում, իսկ ծերը չէր հանդիմանում նրան: Որոշ ժամանակ անց ծերը գնաց լավագույն հոր մոտ և պատմեց նրան այդ մասին: Եվ ասաց նրան ավագ հայրը. «Ինձ մոտ ուղարկիր եղբորը»: Այդպես էլ արեց ծերը: Եվ երբ գնաց եղբայրը ավագ ծերի մոտ, և հացի ժամը եկավ, սեղան դրեցին, ավագ ծերը շտապեց և երկու ոտքերն էլ դրեց սեղանին, իսկ նրա մոտ եկած եղբայրը խիստ վիրավորվեց և չկարողանալով համբերել՝ ասաց. «Հա՛յր, պատշաճ չէ այդպես անել»: Եվ ավագ ծերն իջեցրեց ոտքերը սեղանից և ասաց. «Ճիշտ ես ասում, եղբա՛յր, մեծ մեղք էր սա, մեղանչեցի Աստծո առաջ»: Եվ վերադարձավ եղբայրը իր ծերի մոտ և այլևս երբեք չարեց այդ լկտիությունը:

19. Հարցրեցին մի անգամ հայր Մակարին իր աշակերտները, թե ի՞նչ է մեծը և ինչ՝ փոքրը: Եվ նա ասաց. «Ով իր խորհուրդների մեջ փոքր է տեսնում՝ ուրեմն մեծ է, և ով մեծ է պատկերացնում՝ փոքր է»: Եվ նրան ասացին. «Մեկնի՛ր մեզ այդ ասածդ, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Սրբե՛ք ձեր սրտերը և կհասկանաք ասածս»:

20. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ է չարախոսությունը»: Եվ ծերն ասաց. «Եթե ասես. «Այս եղբայրը պինդ, ժրաջան է վարքի մեջ և իմաստուն է, բայց այսինչ բաների մեջ անհաստատ է», ահա չարախոսեցիր քո եղբորից, իսկ եթե ասես. «Այսինչը խաբեբա է և երդմնազանց», սա դատապարտություն է և առավել վատթար է, քան չարախոսությունը»:

21. Ոմն եղբայր սատանայի ազդեցությամբ ընկավ շնության մեջ: Հայրերից մեկն ասաց. «Ո՜հ, ի՜նչ չարիք գործեց»: Որոշ ժամանակ անց ննջեց այն եղբայրը, որ մեղանչել էր, և Տիրոջ հրեշտակը տարավ նրան ծերի մոտ և ասաց. «Ահա, ում որ դատեցիր, ննջեց, և Աստված ասում է. "Ո՞ւր կհրամայես տանել սրան՝ Արքայությո՞ւն, թե՞ գեհեն, որովհետև դու Ինձ իշխանությունից զրկեցիր և ժամանակից առաջ դատեցիր սրան"»: Եվ ծերը մինչև մահվան օրը զղջման արտասուքներ էր թափում այդ խոսքի համար, մինչև որ Աստված թողություն շնորհեց նրան:

22. Աբբա Ղոնգինոսն ասաց. «Երբ եղբայրը կամենում է եղբորը տեսակցության գնալ, չարախոսության դևը կա՛մ նրանից շուտ է տեղ հասնում, կա՛մ նրա հետ է գալիս եղբոր մոտ»: Ասաց դարձյալ. «Չկա ոչինչ ավելի վատթար, քան չար սովորությունը, քանզի մեծ ժամանակ և ջանքեր են պահանջվում մարդուց այն արմատախիլ անելու համար, որովհետև առանց ժամանակի և տքնության անհնարին է սովորությունը արմատախիլ անել: Սակայն տքնություն չատերն ունեն, իսկ ժամանակ՝ քչերը, ոմանց ջանքերն էլ մահվամբ են ընդհատվում, և միայն Աստված գիտե՝ ինչ է անելու նրանց հետ Դատաստանի օրը»:

23. Հարցրին ծերին, թե ինչ է այն խոսքը, թե. «Ամեն դատարկ խոսքի համար պատասխան եք տալու (Մատթ. ԺԲ 36)*», ծերն ասաց. «Նյութեղեն, մարմնավոր իրերի մասին ցանկացած խոսք դատարկաբանություն է: Միայն հոգու փրկության մասին խոսքն է, որ դատարկաբանություն չէ, սակայն լավագույնը լռելն է, քանզի մինչդեռ խոսում ես լավը՝ մեջտեղ է գալիս նաև վատը»:*

24. Մի անգամ ժողով եղավ Սկյութիայում, որտեղ հայրերը միմյանց հետ խոսում էին մի մեղանչած եղբոր մասին, իսկ հայր Հանպիսովը լուռ էր: Հետո վեր կացավ և դուրս գալով՝ վերցրեց մի մեծ կողով, լցրեց այն ավազով և շալակեց, մի փոքրիկ զամբյուղ էլ՝ դարձյալ ավազով լցված, առջևում էր բռնել: Եվ ծերերի հարցին, թե

ինչ է նշանակում այդ օրինակը, նա պատասխանեց. «Այս մեծ կողովը, որ այսքան շատ ավազով է լցված, իմ հանցանքներն են, որովհետև բազում են իմ մեղքերը, և դրանք հետևումս եմ թողել, որպեսզի դրանց համար չճգնեմ և ողբ ու լաց չանեմ, իսկ ահա այս փոքրիկ զամբյուղը իմ եղբորինն է, և սրանով եմ կամենում զբաղվել՝ դատապարտելով եղբորը: Բայց պատշաճ չէ այդպես վարվել, այլ հատկապես սեփականն է անհրաժեշտ առաջ բերել, իսկ եղբոր մասին պետք է հոգ տանել և աղաչել Աստծուն, որպեսզի թողություն շնորհի նրան»: Եվ լսելով այս՝ հայրերն ասացին. «Արդարև, ա՛յդ է փրկության ճանապարհը»:

25. Հարցրին Հովհաննես Կարճահասակին, թե ինչպես կարող է աղտեղի մարդը, իր անձը թողած, բամբասել ուրիշներին: Եվ նա ասաց. «Լսի՛ր առակը. մի մարդ կամեցավ աղքատ կին առնել, քանզի ինքը ևս աղքատ էր: Մեկ այլ կին, նույնպես աղքատ, ևս ցանկացավ նրան, և երկուսին էլ վերցնելով՝ տարավ իր տունը, և երկուսն էլ մերկ էին: Երեկոյան մի կինը դուրս եկավ և սկսեց հավաքել աղբանոցներում և փողոցներում ընկած հնոտի շորեր և կարկատելով դրանք՝ իր ամոթույքների համար ծածկոց սարքեց: Եվ երբ այդ տեսավ մյուս կինը, ամուսնուն ասաց. «Տեսնո՞ւմ ես այս բոզին, որ մերկ շրջում է և չի ամաչում»: Իսկ նա ասաց. "Իսկ դու ամենևին չե՞ս ամաչում քո մերկությունից և բամբասո՞ւմ ես նրան"»:

26. Ասաց հայր Ովրը իր աշակերտ Պողոսին. «Այս խուղը երբեք օտար բան մի՛ բեր»:

27. Ժայռաբնակ աբբա Հովհաննես ծերը աբբա Դանիել Եգիպտացու մասին պատմեց, թե նա մի անգամ գնաց Տերենութ, որպեսզի վաճառի իր ձեռագործը: Մի երիտասարդ աղաչեց նրան և ասաց. «Հանուն Աստծո, հա՛յր, ե՛կ իմ տուն և իմ կնոջ վրա աղո՛թք արա, որովհետև ամուլ է»: Եվ ծերը, երիտասարդի թախանձանքներին տեղի տալով, գնաց նրա տուն, աղոթք արեց նրա կնոջ վրա, և նա Աստծո կամքով հղիացավ: Մարդկանցից ոմանք, որ չէին երկնչում Աստծուց, անզգամաբար հանդգնում էին ասել, թե այն երիտասարդը անմասնակից էր, իսկ կինը աբբա Դանիելից հղիացավ: Ծերն ասաց ամուսնուն. «Երբ քո կինը երեխա կծնի, ինձ տեղեկացրո՛ւ»: Եվ ամուսինը, գալով նրա մոտ, ասաց. «Աստծով և քո աղոթքների շնորհիվ իմ կինը ծննդաբերեց, հա՛յր»: Այնժամ եկավ հայր Դանիելը և երիտասարդին ասաց. «Ճաշկերո՛ւյթ պատրաստիր և հրավիրի՛ր քո բարեկամներին ու հարա-

զատներին»: Եվ երբ հավաքված ճաշում էին, վերցրեց ծերը երեխային ամենքի առաջ և նրան հարցրեց. «Ո՞վ է քո հայրը»: Ծծկերը ձեռքի մատով ցույց տվեց իր հորը: Այդ երեխան դեռ քսաներկու օրական էր: Եվ ամենքը փառավորեցին Աստծուն, որ պահպանում է նրանց, ովքեր ճշմարտությունն են փնտրում իրենց բովանդակ սրտով:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

28. Հայր Անտոնիոսը մարգարեացավ հայր Ամոնի մասին և ասաց. «Դու մեծապես կառաջադիմես Աստծո երկյուղի մեջ»: Հանեց նրան իր սենյակից դուրս, ցույց տվեց մի մեծ ժայռ և ասաց նրան. «Հայ-հոյի՛ր այս վեմին, ապտակի՛ր և հարվածի՛ր դրան»: Եվ նա այդպես արեց: Ասաց նրան հայր Անտոնիոսը. «Քեզ որևէ բան ասա՞ց այդ վեմը»: Նա ասաց՝ ո՛չ: Անտոնն ասաց. «Դու նույնպես ապագայում պետք է հասնես այդ չափին»: Եվ այդպես էլ եղավ, քանզի այնպիսի գերազանցության հասավ հայր Ամոնը, որ իր անմեղության շնորհիվ բնավ մոռացավ՝ ինչ բան է չարությունը: Իսկ երբ նա եպիսկոպոս դարձավ, նրա մոտ մի կույս բերին, որ հղի էր, և ասացին. «Սրա վրա ապաշխարության կարգ սահմանի՛ր, հա՛յր»: Իսկ նա խաչակնքեց նրա որովայնը և պատվիրեց տալ նրան երկու կտավ և ասաց. «Միգուցե ճանապարհ գնալիս մեռնի ինքը կամ զավակը, և պատանք չգտնվի նրանց համար»: Իսկ նրանք ասացին. «Ի՞նչ ես անում, հա՛յր, դրան պատժի կանոն սահմանի՛ր»: Իսկ նա ասաց. «Դուք էլ եք տեսնում, եղբայրնե՛ր, որ նա մահամերձ է, ես ի՞նչ անեմ սրան»: Եվ արձակեց նրան:

29. Հայր Աղաթոնը, եթե որևէ գայթակղեցուցիչ արարք տեսներ, ասում էր. «Աղաթո՛ն, դու մի՛ արա այդ բանը»: Եվ այդպես կանխում էր եղբորը դատելու խորհուրդը:

30. Մի անգամ հայր Ամոնը ինչ-որ տեղ գնաց, որ մի բան ճաշակի: Այնտեղ կար գարշելի անուն հանած մի եղբայր, և այն կինը, որի հետ մեղանչում էր եղբայրը, այնտեղ էր: Մտավ հայր Ամոնը բամբասված եղբոր տունը, իսկ տեղի բնակիչները երբ իմացան, որ կինը, ում բամբասում էին, ահա եկել է այն եղբոր մոտ՝ նրա տուն, խիստ վրդովվեցին և գնացին նրան հալածելու այնտեղից: Երբ իմացան, որ Ամոնն այնտեղ է, նրան աղաչեցին գնալ իրենց հետ: Իսկ այն եղբայ-

ը, տեսնելով ամբոխը, կնոջը մտցրեց մի մեծ կարասի մեջ և թաքցրեց նրան: Եվ երբ եկավ ամբոխը, հայր Ամոնն իմացավ, թե որտեղ է կինը, և որոշեց ծածկել նրան. դրա համար մտավ տուն, նստեց կարասի վրա և պատվիրեց տունը խուզարկել, որ կնոջը գտնեն: Եվ երբ չգտան, հայր Ամոնն ասաց. «Այդ ի՞նչ եք անում. զրպարտում եք անմեղ մարդուն»: Այն ժամանակ նրանց վրա աղոթք անելով՝ արձակեց ամբոխին, և բռնելով եղբոր ձեռքից՝ ասաց. «Զգո՛ւյշ եղիր քո անձի համար»: Եվ միայն այս ասելով՝ գնաց այնտեղից:

31. Հայր Պափնոտիոսն ասաց. «Ես խնդրեցի հայր Մակարիոսին և ասացի. «Ինձ խո՛սք ասա, հա՛յր, որով ապրեմ»: Եվ նա ասաց. "Ոչ մեկին չար բան մի՛ արա և ոչ ոքի մի՛ դատիր: Ա՛յդ արա և կապրես"»:

32. Սկիտեում մի եղբայր մեղանչեց, և նրա համար ժողով հրավիրեցին: Երբ հայր Մովսեսին կանչեցին այդ ժողովին, նա չկամեցավ գնալ: Քահանան դարձյալ լուր ուղարկեց և ասաց. «Քեզ է սպասում ողջ ժողովը»: Իսկ նա, տեղի տալով նրանց պնդումին, եկավ: Նա վերցրել էր մի ծակ կողով, լցրել ավազով, դրել էր իր թիկունքին և այդպես գալիս էր ժողովին: Եվ ողջ ժողովը ընդառաջ ելավ նրան ու երբ տեսան, հարցրին. «Այդ ի՞նչ բան է, հա՛յր»: Նրանց ասաց. «Այդ իմ մեղքերն են, որ ծորում են իմ թիկունքից, իսկ ես չեմ տեսնում: Իսկ ես ահա այսօր եկա դատելու ուրիշի մեղքը»: Իսկ նրանք, երբ այս լսեցին, ոչ մի բան չասացին մեղանչած եղբորը, այլ թողություն շնորհեցին նրան, և ժողովը ցրվեց:

33. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Եթե տեսնեմ ընկերոջը որևէ հանցանքի մեջ, բարի՞ է՝ եթե ծաղրեմ այն»: Ծերը նրան ասաց. «Եթե մենք ծածկենք եղբոր մեղքը, Աստված էլ մեր մեղքը կծածկի»: Ասաց եղբայրը. «Երբ լսում եմ որևէ եղբոր մասին, որ հանցանք է գործել, նրան իմ սենյակ չեմ հրավիրում և նրա հետ չեմ ուրախանում, իսկ երբ տեսնում եմ բարի համբավի տեր այլ եղբոր, խնդությամբ ընդունում և պատվի եմ արժանացնում նրան»: Ծերը նրան ասաց. «Եթե այն բարեհամբավ ունեցողին հաճելի բաներ ես անում, ապա հանցավորին պարտավոր ես կրկնակին անել, քանզի դեղը վիրավորին է պետք, և ոչ թե՝ առողջին»: Այժմ լսի՛ր այս մասին մեկ այլ պատմություն՝ սրա նման: Մի եղբայր կար, որ միաբանության վանքում նստում էր առանձին: Սրա անունն էր Տիմոթեոս, որն ընտրյալ և սուրբ մարդ էր: Վանահայրը լսեց մեկ այլ եղբոր մեղանչման մասին և նրա մասին հարցրեց Տիմոթեոսին, թե ինչպե՞ս վարվի: Իսկ

նա ասաց՝ արտաքսե՛լ նրան վանքից, և եղբորն արտաքսեցին: Եվ երբ այդպես եղավ, այսինքն՝ արտաքսեցին եղբորը Տիմոթեոսի խոսքի համաձայն, այնժամ իսկույն և անմիջապես վտարված եղբոր նույն մեղքի պատերազմը եկավ Տիմոթեոսի վրա, այն աստիճան, որ նա ընկավ: Լաց եղավ Տիմոթեոսն Աստծո առաջ և ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, Տե՛ր, քանզի մեղանչեցի»: Երկնքից ձայն եկավ, որ ասաց. «Տիմոթեո՛ս, դա պատահեց քեզ հետ այն պատճառով, որ փորձության ժամին անտեսեցիր այն եղբորը և փոխանակ օգնելու՝ առավել վնասեցիր և՛ նրան, և՛ քեզ»:

34. Հարցրին ոմանք հայր Պիմենին և ասացին նրան. «Ինչպե՞ս կարողացավ հանդուրժել հայր Եսթերինոսը այնպիսի աշակերտի, որը գիշերային հսկումի ժամին ննջել էր»: Ծերը նրանց ասաց. «Եթե ես լինեի այնտեղ, իմ թիկնոցն էլ կդնեի նրա գլխատակին»: Հայր Պամբոսն ասաց. «Եվ ի՞նչ պատասխան կտայիր դու Աստծուն դրա համար»: Պիմենն ասաց. «Կասեի. “Դո՛ւ ասացիր, Տե՛ր, թե՝ նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը, ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար (Մատթ. Է 5)*”»:*

35. Ոմն եղբայր, որ եղբայրների միաբանության մեջ էր, մեղքի մեջ ընկավ, իսկ այդ մերձակայքում մի մենակյաց կար, որ քառասուն տարի իր սենյակից բնավ դուրս չէր եկել: Սրա մոտ եկավ վանահայրը և պատմեց նրան մեղանչած եղբոր մասին, իսկ նա ասաց՝ արտաքսե՛լ նրան: Եվ երբ արտաքսվեց այն եղբայրը, գնաց նստեց անապատամերձ անտառի թավուտում և բազում օրեր դառնապես լաց եղավ: Եվ Աստծո խորհրդով եղբայրներից ոմանք գնացին հայր Պիմենի մոտ: Մինչ անցնում էին այն տեղով, լսեցին ողբի ձայնը, և մտնելով անտառի եղեգնուտը՝ գտան այն եղբորը մեծ տրտմության մեջ և աղաչեցին նրան գնալ իրենց հետ հայր Պիմենի մոտ, իսկ նա չկամեցավ, այլ ասաց. «Ո՛չ, ես այստեղ էլ կմեռնեմ»: Եվ եղբայրները, գալով հայր Պիմենի մոտ, պատմեցին նրան եղբոր մասին: Իսկ ծերը նրանցից մեկին ուղարկեց՝ իր մոտ բերելու նրան: Երբ եկավ այն եղբայրը ծերի մոտ, տեսավ ծերը նրան խիստ տրտմած, վեր կացավ և ընդառաջ ելավ նրան ուրախությամբ, համբուրեց սիրով և մեծապես մխիթարեց նրան խոսքով և գորովանքով: Ապա մի եղբոր ուղարկեց այն մենակյացի մոտ և պատվիրեց այսպես ասել նրան. «Բազում ժամանակից ի վեր կամենում էի քեզ տեսնել, որովհետև լսել էի քո մասին, սակայն երկուսիս ծուլության պատճառով միմյանց չտեսանք: Այժմ Աստծո կամքով պատճառ մեջտեղ եկավ. նեղությո՛ւն քաշիր և ե՛կ ինձ մոտ, որպեսզի

տեսնենք միմյանց»: Իսկ նա, որովհետև երբեք դուրս չէր եկել, չկամեցավ գնալ, սակայն իր մտքում խորհեց և ասաց. «Եթե Աստծուց ազդված չլիներ Պիմենը, ինձ չէր կանչի»: Եվ ելնելով գնաց նրա մոտ, և ողջունելով միմյանց՝ նստեցին: Ասաց հայր Պիմենը մենակյացին. «Երկու մարդ կային մի գյուղում, որոնցից յուրաքանչյուրն իր առջև ուներ իր մեռելը: Նրանցից մեկը, թողած իր մեռելը, գնացել ողբում էր իր ընկերոջ մեռելը»: Երբ այս լսեց մենակյացը, հասկացավ ասվածը և հիշեց՝ ինչ որ արել էր եղբորը, և ասաց. «Պիմենը երկինքն ի վեր է, իսկ ես՝ վարը՝ անդունդների խորքերում»: Եվ ապաշավելով՝ սաստիկ զղջաց և ապաշխարեց արտասուքներով և սովորեց այնուհետև իմաստությամբ դատել: Բարեխոսեցին վանահոր առաջ և եղբորը վերադարձրին իր սենյակը:

36. Հայրերից ոմանք հարցրին հայր Պիմենին և ասացին. «Եթե տեսնենք եղբորը մեղանչելիս, պե՞տք է, որ մենք հանդիմանենք նրան»: Իսկ ծերը նրանց ասաց. «Ես այսպես կանեմ. եթե ճանապարհս այդտեղով անցնի, և տեսնեմ եղբորը մեղք գործելիս, կանտեսեմ և չեմ հանդիմանի, քանզի այսպես սովորեցի Քրիստոսից՝ մի՛ դատիր, որ չդատվես (Մատթ. Է 1)*»:*

37. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի կարճամտում և նեղսրտում եմ խցում նստածս ժամանակ»: Ծերը նրան ասաց. «Ոչ մեկին մի՛ արհամարհիր և ոչ մեկին մի՛ բամբասիր և կհանդարտվես նստելիս, քանզի գրված է. "Իմ անօրենությունները կպատմեմ և կհոգամ իմ մեղքերի մասին" (Սաղմ. ԼԷ 19)*»:*

38. Գնաց հայր Պիմենը եգիպտացիների կողմը և այնտեղ բնակվեց որոշ ժամանակ: Գտավ այնտեղ մի եղբոր, որը նրա բնակատեղիին մոտ էր բնակվում, և որի խցում կին կար: Ծերը, սակայն, չհանդիմանեց նրան: Գիշերով բռնեցին այն կնոջ երկունքի ցավերը: Երբ ծերն իմացավ այդ, իր աշակերտին ասաց. «Դու կժով գինի կվերցնես և կտանես մեր մերձավոր եղբորը, քանզի նա այսօր դրա կարիքն ունի»: Եվ աշակերտները չհասկացան ծերի արարքը: Իսկ երբ տեսավ եղբայրը ծերի մարդասիրությունը, որ փոխանակ հանդիմանության՝ սեր առաքեց իրեն գթալով, դրանից ազդված՝ զղջաց եղբայրը և խիստ ապաշավեց իր արարքի համար: Եվ մի քանի օր անց տվեց կնոջը՝ ինչ ուներ և ուղարկեց գյուղ, իսկ ինքը սենյակ չինեց՝ ծերի սենյակին մոտ, և նրան աշակերտելով՝ միշտ սովորում էր նրանից: Մեղքերն

ապաշխարելով՝ կատարյալ սուրբ դարձավ, և այնտեղ էլ վախճանվեց եղբայրը:

39. Հայր Պափնոտիոսն ասաց. «Մի անգամ ճանապարհ էի գնում և մոլորվելով՝ հայտնվեցի մի գյուղի մոտ և տեսա ոմանց չարախոսելիս իրար հետ: Աղոթքի կանգնեցի ու աղերսում էի Աստծուն իմ մեղքերի համար: Եվ կանգնեց Տիրոջ հրեշտակը իմ առջև՝ ձեռքին բռնած մի հրեղեն նիզակ, և ասաց ինձ. «Պափնոտիո՛ս, բոլոր նրանք, ովքեր դատում կամ բամբասում են իրենց եղբորը, այս սրով կսատակվեն: Իսկ դու, քանի որ չդատեցիր՝ ինչ որ տեսար, այլ այնպես խոնարհվեցիր իմ առջև, կարծես դու ինքդ էիր գործել այն մեղքը, դրա համար քո անունը հավիտյանս գրվեց կենաց գրքում»:

40. Ասաց ծերը. «Մի՛ դատիր պոռնկացողին, թեկուզ և դու սուրբ լինես, այլապես անօրեն կդառնաս, որովհետև Ով ասաց՝ մի՛ շնացիր, նույն Ինքն ասաց նաև՝ մի՛ դատիր (Մատթ. Ե 27, Է 1)*»:*

41. Հայրերից մեկն ասաց. «Երկնքի տակ չկա այլ ընտրյալ ազգ, քան քրիստոնյաների ազգն է, և ոչ ոք այնքան պատվական չէ երկրի վրա, որքան՝ կրոնավորների ազգը: Միայն սա է վնասակար, եթե հավատանք դևերին, հիշաչար և ոխակալ լինենք եղբայրների հանդեպ, բամբասենք ու դատենք: Մեր մեղքերը չենք տեսնում, իսկ եղբոր մեղքերը հոժարակամ հրապարակում ենք: Սակայն դու, թեկուզ աչքովդ էլ տեսնես որևէ մեկի գործած մեղքը, մի՛ դատիր և մի՛ բամբասիր, այլ ասա. "Ես բոլորից ավելի հանցավոր եմ"»:

42. Ծերերից մեկն ասաց, թե. «Չկա ոչինչ ավելի լավ, քան այս պատվիրանը, թե՝ քո եղբորը մի՛ արհամարհիր, որովհետև գրված է՝ հանդիմանի՛ր քո եղբորը և կշահես նրան (հմմտ. Մատթ. ԺԸ 15)*: Որովհետև եթե տեսնես քո եղբորը մեղքի մեջ և հարմար պահին չխրատես նրան սիրով, նրա արյունը քեզնից կպահանջվի, իսկ եթե հանդիմանես սիրով, և նա մնա նույնի մեջ, դու անպարտ կլինես, քանզի բարի է սիրով հանդիմանելը, քան ատելությամբ գարշելը»:*

43. Ոմն ծեր բնակվում էր ասորիների երկրում՝ Անտիոքի սահմաններին մոտ: Նա մի աշակերտ ուներ, որ հապճեպ դատում էր ամեն մեկին: Եվ եթե տեսնում էր մեկին մեղքի մեջ, անհապաղ դատում էր նրան: Ծերը բազում անգամ խրատում էր նրան, օրենք էր դնում և ասում. «Զգո՛ւյշ եղիր, որդյա՛կ, քանզի այդ մոլուցքով կկորցնես քո անձը, քանի որ ոչ ոք չգիտի մարդուն, այլ միայն նրա մեջ եղող հոգին: Որովհետև շատերը բազմաթիվ չարիքներ գործեցին մարդկանց

առաջ և ծածուկ ապաշխարեցին Աստծո առաջ, իսկ մարդիկ միայն նրանց մեղքերն իմացան, բայց ապաշխարելը չիմացան: Ուրիշներն էլ իրենց կյանքի բոլոր օրերին չարիք գործեցին, բայց մահվան ժամին ապաշխարեցին և թողություն ստացան: Ոմանք էլ մեղանչեցին, սակայն սրբերի պաղատանքներով ու աղոթքներով սրբվեցին: Դրա համար էլ չպետք է դատել ոչ մեկին, քանզի մեկն է բոլորի Դատավորը՝ Աստված: Մարդը, որ դատում է ուրիշին, Աստծուն հակառակ է կանգնում, քանզի պատիվը, որ Աստված տվեց Որդուն, նա հափշտակում է: Դու միայն ասա. «Անիծյա՛լ Բելիար, որ անել տվեցիր այդ բանը, իսկ եղբայրս անպարտ է»: Եվ մտքումդ դի՛ր՝ ոչ ոքի չդատել, քանզի եթե դատես մեկին, Աստծո Հոգին կփախչի քեզանից»:

44. Ասաց դարձյալ ծերը. «Ինչո՞ւ ես դու դատում մարդասպանին կամ շնացողին, գողին կամ որևէ այլ չարագործի, քանզի նրանք իրենց անաչառ դատավորն ունեն: Ինչո՞ւ նրանց մեղքը քննես և դատես, իսկ նրանց գլխին կուտակված չարիքը քո գլխին կուտակես: Եթե հաճախ իմաստությամբ քննելու լինենք, կտեսնենք, որ մեր մեղքերը ավելի չար են, քան նրանցը. անառակ աչքով նայում ենք, դրանով իսկ շնանում ենք, բազում անգամ անարգում ենք եղբորը և պարտական ենք դառնում գեհենի կրակին, որովհետև Տերն այս վճիռն արձակեց՝ ասելով. «Ով նայի կնոջը և նրան ցանկանա, շնացավ նրա հետ (Մատթ. Ե 28)*, և ով իր եղբորն ասի՝ մորոս, պարտական կլինի հետևել գեհենի կրակին* (Մատթ. Ե 22)*»: Եվ որ ամենաահավորն է, բազմիցս անարժանորեն հաղորդվում ենք Տիրոջ մարմնին, իսկ դատում ենք նրան, ով լոկ մարդ է սպանել, իսկ մենք անարժանաբար հաղորդվելու պատճառով՝ քրիստոսասպան ենք դառնում և Նրան սպանողներին՝ հաղորդակից, և արդարացի է, որ թագավորի ծիրանին հերձողն ու այն տղմով շաղախողն ու աղտեղողը՝ երկուսն էլ միևնույն պատիժն են կրում: Այսպես է՝ և՛ նրանք, որ այն ժամանակ Տիրոջը խաչեցին, և՛ նրանք, որ անարժանորեն են հաղորդվում Նրա մարմնին՝ միևնույն տանջանքների պիտի ենթարկվեն՝ ըստ երանելի Պողոսի խոսքի* (Ա Կորնթ. ԺԱ 27-32)*»:*

45. Ասաց ծերը. «Եթե տեսնես քո եղբորը մեղանչելիս, մի՛ կուտակիր նրա վրա մեղադրանքներ, այլ դիր դևի՛ վրա, որ պատերազմում է նրա հետ, և այսպես ասա. «Ինչպես որ սա հաղթվեց և հանցանք գործեց, նույնպես և ես հանցանք գործեցի և հանցագործ եմ»: Եվ ողբալով՝ օգնություն խնդրիր Աստծուց և նրա ակամա հանցանքին ցավակի՛ց եղիր, քանզի ոչ ոք չի կամենում մեղանչել Աստծո առաջ և իր անձը կորցնել, այլ բոլորս էլ բռնադատվում և խաբվում ենք դևերից»:

46. Մի ծեր պատմեց հետևյալը. «Անապատում խորքում մի ծեր էր բնակվում: Ոմն եղբայր վանքից գնաց նրան տեսակցության: Ծերը նրան հարցրեց, թե ինչպե՞ս են եղբայրները: Եվ նա ասաց. «Ողջությամբ են ձեր աղոթքներով, հա՛յր»: Եվ նա դարձյալ հարցրեց եղբայրներից մեկի մասին, որը բարի համբավ չուներ: Եվ նա ասաց. «Այն չար գործերից չի ազատվել, հա՛յր»: Իսկ ծերը, լսելով այս, ասաց. «Այդչափ լկտիացա՞վ եղկելին»: Եվ այս խոսքից անմիջապես հետո ծերը հափշտակվեց հոգով և ննջածի պես եղավ, և տեսիլքի մեջ տեսավ՝ ինքը կանգնած էր Գողգոթայի վրա և տեսնում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ խաչից կախված, երկու ավազակների մեջտեղում: Եվ ասում էր՝ ջանում էի մոտենալ և երկրպագել Նրան: Եվ մինչ այս էի խորհում, լսեցի, որ Տերը բարձրաձայն հրամայում էր իր առջևում նստած հրեշտակներին և ասում. «Դո՛ւրս հանեք դրան, քանզի հակառակ է Ինձ, քանի որ նախքան Իմ դատաստանը՝ դատեց իր եղբորը»: Եվ երբ ինձ հանեցին դուրս և բերեցին դռների մոտ, իմ փիլոնը կառչեց եկեղեցու դռնից և մնաց այնտեղ: Եվ ես մերկացած փախա այնտեղից և երկյուղից արթնացա նույն պահին: Եվ ասացի ինձ մոտ եկած եղբորը. «Չար եղավ այս օրն ինձ վրա»: Եվ նա հարցրեց ինձ. «Ի՞նչ պատճառով, հա՛յր»: Այնժամ պատմեցի նրան տեսածս և ասացի, որ իմ վրայից հանված փիլոնը Աստծո հովանին էր, որ վերցվեց իմ վրայից եղբորը դատելու համար, և ես զրկվեցի նրանից: Եվ վկա ունեմ փառաց Տիրոջը, որ դրանից հետո ես յոթ տարի մոլորված մնացի այն լեռան վրա, ամենևին հաց չճաշակեցի, չմտա հարկի տակ և ոչ էլ խոսեցի որևէ մեկի հետ, մինչև որ առաջին տեսիլքի նման նորից տեսա Տիրոջը, որ հրամայեց ինձ տալ իմ փիլոնն»: Ահա այս պատմեց երանելի ծերն իր մասին: Իսկ մենք, որ լսում ենք այս պատմությունը այսպիսի ծերից, ուրիշ ի՞նչ կարող ենք ասել, բացի միայն այս՝ եթե արդարը հազիվ է ապրում, հապա մեղավորն ու ամբարիշտն ո՞ւր կմնան (Ա Պետ. Դ 18)*: «Արդ,– ասաց ծերը,– ոչինչ այնչափ չի բարկացնում Աստծուն, և ոչինչ այնպես չի հեռացնում Աստծուց, որքան ընկերոջը դատելը, չարախոսելը և արհամարհելը: Եվ այնքան ծանրագույն մեղք է համարում Տերը ընկերոջը դատելը, քան ցանկացած այլ մեղք, որ ասում է. «Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ եղբորդ աչքից շյուղը հանելու համար* (Մատթ. Է 5)*»: Այս չափով Փրկիչը հավասարեցրեց գերանը շյուղին՝ եղբոր մեղքը՝ շյուղ և դատողի մեղքը գերան անվանելով: Իմացե՛ք, եղբայրնե՛ր, որ չկա ավելի չար և ծանրագույն մեղք, քան եղբորը դատելը, բամբասելը և*

արհամարհելը, որի վկան այն փարիսեցին է, որ մաքսավորին դատելու համար իզուր կորցրեց իր բոլոր բարեգործությունները: Նույնպես և ձախակողմյան ավազակը, դատելով ընկերոջը, զրկվեց դրախտ մուտք գործելուց և ապարդյուն կորցրեց փրկության այն պահը, քանզի ոչինչ չի կարող այնպես անարգել գանձերն ու հոգևոր բարիքները, ինչպես ընկերոջը դատելը: Ինչո՞ւ չենք դատում մեր անձերը, ինչո՞ւ չենք քննում մեր չարիքները, որոնք ստուգապես գիտենք, թեկուզ և՝ ոչ բոլորը, քանզի բազում այլ մեղքեր էլ ունենք, որոնք չգիտենք, իսկ որոնք որ գիտենք, դրանք էլ բավական են մեզ դատապարտելու համար: Ինչո՞ւ ենք Աստծո դատաստանը հափշտակում: Ի՞նչ գործ ունենք մենք Աստծո ստեղծածների հետ կամ ի՞նչ պահանջ ունենք ընկերոջից, կամ ի՞նչ օգուտ այլոց մեղքերը դատելուց: Յուրաքանչյուրս մեր մեղքերն ունենք, և դրանց հոգսերը բավական են մեզ. դրա՛նք դատենք և գեհենի մասին մտածենք, որ դրանց պատճառով պատրաստված է մեզ համար, որովհետև դատել մեկին կամ արդարացնել՝ Աստծո իրավունքն է, և ոչ թե՝ մեր, և Նրա ձեռքում է՝ կորցնել կամ ապրեցնել իր արարածներին: Քանզի եթե բոլոր արարածների արարիչ համարում ենք Աստծուն, ապա հայտնի է, որ Ով ստեղծել է նրանց՝ Նա էլ դատում է: Աստծուն կիսատված մի՛ ընկալեք, եղբայրնե՛ր, իբրև թե մեկ ուրիշ է Արարիչը և մեկ ուրիշ՝ Դատավորը, այլ ամբողջական և կատարյալ ճանաչե՛ք, ամեն ինչ Նրա՛ն թողեք: Քանզի եթե մեր գործերն Աստծուն ենք պարտավոր հանձնել, ապա որչա՜փ առավել ևս՝ ուրիշներին, քանզի միայն Աստված իրավունք ունի հատուցելու յուրաքանչյուրին ըստ իր գործերի, որովհետև գիտե ամենքին, նրանց չափը, էությունը, գործը, հոգու և մարմնի բաժանումը: Դրա համար էլ Նրան թողնենք մերն ու ուրիշներինը, Ով քննում է սիրտն ու երիկամները, խորհուրդներն ու մտածումները, և Նրա խոսքը կտրում-անցնում է մինչև հոգու և շնչի, հոդերի և ուղեղի սահմանները, Ում առաջ ծալվում են երկնավորների, երկրավորների և սանդարամետականների ծնկները: Ուրեմն, ով եղբայրնե՛ր, մեր տկարությունը մեր մտքում ունենալով՝ ողբանք մեր անձերը և այս խորհենք, թե ինչպե՛ս պետք է կանգնենք Քրիստոս Աստծո ահավոր ատյանի առաջ և թե ի՛նչ պատասխան պիտի տանք: Սե՛ր ունենանք միմյանց հանդեպ, ողորմությո՛ւն ունենանք գթությամբ, որպեսզի սրանցով փրկվենք մեծ քննության օրը: Եվ զերծ մնանք ընկերոջը դատելուց, բամբասելուց և արհամարհելուց, առավել ևս օգնենք միմյանց և սիրենք, միմյանց բեռը կրենք և որպես մեր մարմնի անդամները՝ խնամենք, քանզի միմյանց մարմնի անդամներ

ենք, ինչպես առաքյալն է ասում՝ Գլուխը Քրիստոսն է, ամենքս՝ մարմինը, իսկ յուրաքանչյուր ոք՝ մի անդամը: Եթե անդամներից մեկը ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները (Ա Կորնթ. ԺԲ 26)*: Իսկ Քրիստոս՝ որպես հանդերձյալ բարիքների քահանայապետ, եկավ և գթությամբ միացավ մեզ հետ և Իր խաչով հաշտեցրեց մեզ Հայր Աստծո հետ և Ինքը եղավ բոլորի գլուխը»:*

ԳԼՈՒԽ Ժ.

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՎ ՈՒՂԻՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Հայր Անտոնիոսն ասաց. «Շատերը ճնշեցին իրենց մարմինները ճգնությամբ, բայց հետո հեռացան Աստծուց, քանի որ չկարողացան քննել Աստծո դատաստանները»:

2. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին. «Իմ հոգին վնասվում է իմ վարդապետի մոտ, շարունակե՞մ մնալ նրա մոտ»: Ծերը գիտեր, որ նա վնասվում է, բայց զարմացած նրա հարցումի վրա, թե՝ մնա՞մ նրա մոտ, պատասխանեց. «Եթե կամենում ես, մնա»: Նա գնաց և մնաց նրա մոտ, հետո դարձյալ եկավ, թե՝ հոգիս վնասվում է, բայց ծերը չասաց՝ հեռացի՛ր նրանից: Իսկ երրորդ անգամ գալով՝ ասաց. «Գիտցի՛ր, որ այլևս չեմ մնա նրա մոտ»: Հայր Պիմենն ասաց նրան. «Ահա հիմա կապրես, գնա՛ և մի՛ նստիր նրա մոտ»: Եվ հայր Պիմենն ասաց նրան. «Ո՞վ է այն մարդը, որ երբ տեսնի իր հոգու վնասը, հարցման կարիք կունենա: Ծածուկ խորհուրդների մասին է հարկավոր հարցնել, քանզի դա միայն ծերերին է վերապահված քննել, իսկ հայտնի մեղքերի մասին պետք չէ հարցնել, այլ հարկավոր է շուտափույթ կտրել-հեռացնել»:

3. Հարցրեց ոմն եղբայր հայր Պիմենին և ասաց. «Իմ նեղության ժամանակ սրբերից ոմանցից խնդրեցի ինձ անհրաժեշտ որոշ բաներ, և տվեցին ինձ սիրով: Արդ, եթե Աստված և ինձ շնորհի, տա՞մ ես էլ այն սիրով մեկ ուրիշին, թե՞ դարձյալ տամ իմ նեղության ժամանակ ինձ տվողին»: Հայր Պիմենն ասաց նրան. «Աստծո առաջ արդարությունն այն է, որ տվողին վերադարձնես, քանզի նրանն է»: Եղբայրն ասաց. «Եթե տանեմ նրան, և նա չկամենա վերցնել, այլ ինձ ասի՝ գնա՛ և տո՛ւր աղքատներին՝ ինչպես կամենում ես»: Ծերն ասաց. «Նրանն են իրերը. եթե ինքը տա քեզ, և ոչ թե դու խնդրես նրանից, այն քոնն է, իսկ եթե դու ես խնդրել մենակյացից կամ աշխարհականից, և նա չի

կամենում դարձյալ ետ վերցնել քեզանից, այստեղ արդեն ընտրության հարց է, քանզի նրա գիտությամբ ես այն տալիս աղքատներին»:

4. Ասաց հայր Պիմենը. «Մարդը, որ ուսուցանում է, սակայն չի անում այն, ինչ ուսուցանում է, նման է ավազանի, որ ամենքին հագեցնում է և լվանում, բայց իրեն չի կարողանում մաքրել, այլ ամեն տեսակ պղծություն և աղտեղություն մնում է իր մեջ»:

5. Հայրերից մեկը հարցրեց Հովհաննես Կարճահասակին, թե՝ ի՞նչ է մենակյացը: Նա պատասխանեց և ասաց. «Տքնություն, որովհետև ինչպես միայնակ մարդն է ամեն ինչի մեջ տքնում, նույնպես և մենակյացը:

6. Երկու գյուղեր Եգիպտոսում կռվում էին միմյանց դեմ: Հայր Պիմենը, գնալով ավելի մեծ և հզոր գյուղը, աղաչեց, որ խաղաղություն պահեն փոքր գյուղի հետ, սակայն նրան լսել չկամեցան: Իսկ նա, իր ոտքերի փոշին թոթափելով նրանց վրա, հեռացավ, իսկ նրանք, ելնելով իրար դեմ պատերազմի, կոտորվեցին, և մեծ գյուղի մարդիկ հաղթվեցին, որովհետև Տերը պահում է զրկվածների իրավունքը:

7. Հայր Ամոնը մի անգամ պատմեց. «Ես և հայր Բիտիմը գնացինք հայր Աքիլասի մոտ և լսեցինք, որ նա ներսում այս խոսքն է կրկնում. «Մի՛ երկնչիր, Հակո՛բ, իջնել Եգիպտոս»: Նա ժամերով նույն բանն էր կրկնում: Երբ բախեցինք դուռը, բացեց մեր առջև և հարցրեց, թե որտեղից ենք, իսկ մենք վախեցանք ասել, թե խուցերից ենք, ասացինք՝ Նիտրեա լեռից ենք: Նա մեզ ասաց. «Ի՞նչ անեմ ձեզ համար, քանի որ հեռվից եք եկել»: Մեզ ներս մտցրեց, և տեսանք, որ այդ գիշեր մեծ քանակությամբ զամբյուղներ էր հյուսել, և խնդրեցինք նրան, որ խոսք ասի մեզ: Եվ նա ասաց. «Երեկոյից մինչ այս ժամը ես քսան գիրկ արմավենու ճյուղ հյուսեցի: Սա ինձ հարկավոր չէր, այլ մտավախություն ունեցա, թե գուցե Աստված զայրանա, հանդիմանի ինձ և ասի՝ կարող էիր գործել, ինչո՞ւ չգործեցիր. դրա համար էլ տքնում և գործում եմ իմ ողջ զորությամբ»: Եվ մենք մեծապես շահած՝ հեռացանք»:

8. Մի ծեր անցնում էր գետի մոտով և եղեգնուտ գտավ, մտնելով՝ բնակվեց այնտեղ և կտրում էր եղեգների ցողունները, պարան էր հյուսում և գցում գետը: Եվ այդպես էր անում, մինչև որ մարդիկ եկան, տեսան նրան և հարցրին. «Ինչո՞ւ ես հյուսում դա, եթե քեզ պետք չէ»: Եվ նա ասաց. «Անում եմ նրա համար, որ աշխատեմ և խաղաղություն գտնեմ, ոչ թե կարիքներս հոգամ»: Եվ գնաց այնտեղից:

9. Հայր Թեոդոսն ասաց. «Եթե սեր ունենաս մեկի հանդեպ, և նա ընկնի պոռնկության մեղքի մեջ, ձե՛ռք մեկնիր նրան և բարձրացրո՛ւ՝ թե կարող ես, իսկ եթե հերձվածի մեջ ընկնի և չլսի քեզ ու ետ չդառնա, կտրի՛ր ու հեռու վանի՛ր նրան քեզանից: Միգուցե նրա հետ դանդաղես՝ քեզ էլ իր հետ դեպի անդունդը քարշ տա»:

10. Պատմում էին մի ծերի մասին, թե Թեբայիդում իր երիտասարդության տարիներին բազում առաքինություններ գործեց, իսկ ծերության տարիներին հիվանդանալով՝ կուրացավ: Եղբայրները մեծապես սփոփում էին նրան և կերակրում իրենց ձեռքով պատրաստած փափուկ ուտելիքներով: Հարցրին հայր Սարիովին այս մասին. «Ի՞նչ հետևանք կունենա այս մխիթարությունը նրա համար»: Հայր Սարիովն ասաց նրանց. «Եթե նրա սիրտը ցանկանա և ախորժելով ուտի, թեկուզ մեկ արմավ էլ ճաշակի, Աստված նրա վարձը իր վաստակից կպակասեցնի, իսկ եթե մտքով չհեշտանա, այլ ակամա ընդունի այն՝ իր տկարության պատճառով, Աստված նրա վաստակը կպահի ամբողջությամբ և վարձը կտա լիուլի, քանի որ իր կամքով չէր, այլ բռնադատվեց: Իսկ նրանք, որ սպասավորում են նրան, լիուլի վարձ կստանան Աստծուց»:

11. Մի անգամ Սկյութիայում ուզում էին հայր Իսահակին քահանա ձեռնադրել, իսկ նա լսելով այդ՝ փախավ Եգիպտոս և գնալով դաշտը՝ թաքնվեց խոտերի մեջ: Եվ հայրերը գնացին նրա հետևից՝ գտնելու նրան, և հասնելով այնտեղ՝ կամեցան փոքր-ինչ հանգիստ առնել, որովհետև գիշեր էր, իսկ էշին արձակեցին, որ արածի: Եվ էշը գնաց-կանգնեց այն տեղում, ուր թաքնված էր հայր Իսահակը: Առավոտյան էշին փնտրելով՝ գտան հայր Իսահակին և զարմացան: Արդ, երբ ուզեցին կապել նրան, նա չթողեց՝ ասելով. «Չեմ փախչի, քանզի Աստծո կամքն է այս: Ուր էլ փախչեմ, կգտնվեմ, որովհետև այս ձեռնադրությունն Աստծուց է»: Եվ նրանց ասաց. «Եթե կամենում եք, որ հնազանդվեմ ձեր աղաչանքներին, այստեղ մի՛ բերեք երիտասարդների, քանզի չորս եկեղեցիներ Սկյութիայում քանդվեցին նրանց պատճառով»:

12. Երանելի Արսենիոսի աշակերտ հայր Դանիելը պատմեց և ասաց. «Մի անգամ նստած էի հայր Ալեքսանդրիոսի մոտ, և ինչ-որ ցավ համակեց նրան, և նա ցավի սաստկությունից ընկավ բերանքսիվայր: Այդ ժամանակ հայր Արսենիոսը եկավ նրա հետ խոսելու և հեռվից տեսնելով նրան այդպես պրկված՝ չճանաչեց: Եվ երբ սկսեց խոսել, ասաց նրան. «Ո՞վ էր այն աշխարհականը, որ տեսա այստեղ»: Հայր Ալեքսանդրիոսը հարցրեց. «Որտե՞ղ տեսար նրան»: Նա ասաց. «Մինչ

իջնում էի լեռից, նայեցի այս կողմ և տեսա մեկին, որ բերանքսիվայր պառկած էր»: Եվ ընկավ հայր Ալեքսանդրիոսը նրա առաջ և ասաց. «Ես էի, հա՛յր, որովհետև ցավը տիրել էր ինձ»: Ասաց նրան ծերը. "Ուրեմն այդ դո՞ւ էիր, իսկ ես կարծեցի որևէ աշխարհական է, դրա համար հարցրի քեզ"»:

13. Ասաց Հայր Դանիելը դարձյալ. «Երբ հայր Արսենիոսը ՍկյուԹիայում էր, այնտեղ մի մենակյաց կար, որ գողանում էր ծերերի կրասիները: Եվ հայր Արսենիոսը, կամենալով փրկել նրան և հանգստացնել ծերերին, տարավ նրան իր խուցը և ասաց նրան. «Ինչ էլ որ խնդրես, կտամ քեզ, միայն Թե մի՛ գողացի՛ր»: Եվ տվեց նրան ոսկի, հանդերձ, դրամ և այն ամենը՝ ինչ պետք էր նրան, իսկ նա այնտեղից գնալով՝ դարձյալ գողանում էր: Այնժամ ծերերը տեսնելով, որ չի դադարում գողանալ, արտաքսեցին նրան այնտեղից: Եվ ասացին ծերերը. "ԵԹե եղբայրների մեջ գտնվի մեկը, որ հիվանդուԹյան տկարուԹյուն ունենա, պետք է համբերուԹյամբ տանել նրան և շահել, իսկ եԹե գողանում է, պետք է արտաքսել այստեղից, քանի որ վնասում է իր հոգին և բոլոր նրանց, որ այստեղ են, գայԹակղեցնում է"»:

14. Պատմեց դարձյալ հայր Դանիելը. «Մի անգամ մի քանի եղբայրներ գնում էին Թեբայիդա՝ կտավի համար, և ասացին՝ այս առիԹով հայր Արսենիոսին էլ տեսնենք: Հայր Ալեքսանդրիոսը, մտնելով նրա մոտ, տեղեկացրեց նրան և ասաց. «Եղբայրներ են եկել Ալեքսանդրիայից և կամենում են քեզ տեսնել»: Ասաց նրան ծերը. «Իմացիր, Թե ի՛նչ նպատակով են եկել»: Եվ հարցնելով նրանց՝ լսեց, որ ասում էին. "Թեբայիդա ենք գնում՝ կտավի համար»: Եվ ծերն ասաց. «Նրանք չեն տեսնի Արսենիոսի երեսը, քանզի ոչ Թե ինձ համար են եկել, այլ՝ իրենց գործի: Թող հանգստանան, ապա արձակի՛ր նրանց խաղաղուԹյամբ և ասա՛, որ ծերը չի ուզում տեսնել ձեզ"»:

15. Սյուղիանոսի աշակերտ հայր Զենոնի մասին ասում էին. «Ի սկզբանե ոչ ոքից ոչ մի բան չէր կամենում վերցնել, և ովքեր բերում էին, տրտմած դարձյալ դուրս էին գալիս, քանի որ չէր ընդունում: Ուրիշներն էլ գալիս էին նրա մոտ և կամենում էին վերցնել նրանից՝ որպես մեծ ծերից, բայց ոչինչ չուներ նրանց տալու, նրանք նույնպես գնում էին տրտմած: Ծերն ասաց. «Այս ի՞նչ եմ անում, քանզի ովքեր բերում են՝ տրտմում են, և ովքեր խնդրում են՝ նրանք ևս տրտմում են: Ահա Թե ինչ պետք է անեմ. ով բերի՝ կվերցնեմ, և ով խնդրի՝ կտամ»: Եվ այսպես վարվելով՝ հանգստանում էր և բոլորի կամքն էլ կատարում էր»:

16. Ագաթոնի աշակերտ հայր Աբրահամը հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչո՞ւ են դևերը մշտապես կռվում ինձ հետ»: Ծերն ասաց. «Քեզ հետ կռվում են, բայց մեզ հետ չեն կռվում, որովհետև նրանց կամքն ենք կատարում: Մեր կամքերը դևեր են դարձել և նեղում են մեզ, որպեսզի այն կատարենք: Սակայն կամենո՞ւմ ես իմանալ, թե ում հետ են պատերազմում դևերը. նրանք պատերազմեցին Մովսեսի և նրա նմանների հետ, իսկ մեզ հետ մեր կամքն է պատերազմում»:

17. Մի անգամ Սկյութիայում ծերերը ճաշակում էին միասին: Հայր Հովհաննես Կարճահասակն էլ էր նրանց հետ: Երեցներից մեկը վեր կենալով կժով ջուր մատուցեց նրանց, որ խմեն, սակայն ոչ մեկը չկամեցավ նրանից ջուր վերցնել, բացի Հովհաննես Կարճահասակից: Եվ զարմացան նրա վրա և ասացին. «Ինչպե՞ս դու՝ ամենքից կրտսերագույնդ, համարձակվեցիր վերցնել երեցից ջուր և ըմպել»: Հայր Հովհաննեսն ասաց նրանց. «Երբ վեր եմ կենում մեկին ջուր տալու, ուրախանում եմ, որ բոլորն ըմպում են, որպեսզի վարձ ստանամ: Արդ, ես նրա համար վերցրի, որ նրան վարձք լինի, և չտրտմի՝ իրենից ջուր չվերցնելու պատճառով»: Երբ նա այս ասաց, բոլորը զարմացան նրա դատողության վրա և օգուտ քաղեցին դրանից:

18. Երկու եղբայրներից կրտսերն ավելի շուտ էր ստանձնել մենակեցության կարգը, քան ավագ եղբայրը, որ երեց էր: Երբ հայրերից մեկը եկավ նրանց մոտ, նրանք բերեցին ջրի կուժը, և կրտսերը մոտեցավ, որ լվանա ծերի ոտքերը: Ծերը, բռնելով նրա ձեռքից, հեռացրեց մի կողմ, և ավագը լցրեց ջուրը: Շուրջը գտնվող եղբայրներն ասացին ծերին. «Կարգի մեջ կրտսերն առաջինն է, հա՛յր»: Ծերը նրանց ասաց. «Ես վերցնում եմ կրտսերի ավագությունը և տալիս եմ երեց եղբորը»: Եվ ծերն այս արեց այն բանի համար, որ կրտսեր եղբայրը չհպարտանա ավագ եղբոր վրա և չկորչի:

19. Մի անգամ մենակյացները Եգիպտոսից իջան Սկյութիա: Գնալով ծերերի մոտ՝ տեսան, որ նրանք երկարաձիգ պահքից հետո արագարագ ուտում էին սովից, և գայթակղվեցին: Եվ երեցն իմանալով այդ՝ կամեցավ լուսավորել նրանց միտքը, եկեղեցում քարոզեց ժողովրդին և ասաց. «Պահեցողությո՛ւն արեք, եղբայրնե՛ր, և առավել երկարաձգե՛ք ձեր պահքն ու ճգնությունը»: Իսկ եգիպտացի եղբայրները ուզում էին գնալ, սակայն նրանց չարձակեց: Եվ երբ պահեցին առաջին օրը, ցնորվեցին, որովհետև նրանց պատվիրեց երկուական օր պահել, իսկ նրանք, որ բնակվում էին Սկյութիայում, պահում էին ողջ շաբաթը: Եվ երբ եկավ շաբաթը, եգիպտացիները նստեցին ճաշակելու

ծերերի հետ, և չափազանց շտապում էին ուտելու հացը: Ծերերից մեկը բռնեց նրանցից մեկի ձեռքը և ասաց. «Հանդա՛րտ կեր, ինչպես մենակյացներին է վայել»: Իսկ նա, ետ մղելով նրա ձեռքը, ասաց. «Թո՛ղ ինձ, սովից մեռնում եմ, քանզի ողջ շաբաթը տաք կերակուր չեմ կերել»: Ծերը նրանց ասաց. «Եթե դուք երկուական օր պահելով այդպես թուլացաք, ինչո՞ւ գայթակղվեցիք եղբայրներից, որոնք մշտապես այսպես երկարաձգում են պահքն ու ճգնությունը»: Այնժամ եգիպտացիներն ընկան նրանց առաջ և թողություն խնդրեցին, ապա ուրախությամբ լցված՝ գնացին իրենց սենյակները՝ նորոգված և հաստատված Աստծո կամքով:

20. Հարցրեց մի անգամ հայր Աղաթոնը հայր Աղոնին և ասաց. «Կամենում եմ լեզուս պահել, որ սուտ չխոսեմ»: Ասաց նրան հայր Աղոնը. «Եթե սուտ չխոսես, բազում մեղքեր կգործես»: Նա հարցրեց. «Այդ ինչպե՞ս»: Եվ ծերն ասաց. «Ահա երկու մարդ քո առաջ սպանություն գործեցին, և նրանցից մեկը փախավ և եկավ քո խուցը, իսկ իշխանը նրան է փնտրում և քեզ հարցնում է ու ասում. «Քո աչքի առջև մարդասպանությո՞ւն եղավ»: Եթե չես կամենում սուտ խոսել, մարդուն մահվան ես մատնում, սակայն դու քեզ առանց կապանքների թող Աստծո առաջ, քանզի Նա միայն գիտե ամեն ինչ»:

21. Հայր Սերինոս Դիողկացին իր աշակերտ Իսահակի հետ գնաց հայր Պիմենի մոտ և ասաց նրան. «Հա՛յր, ի՞նչ անեմ այս Իսահակին, որպեսզի սիրահոժարությամբ լսի ինձանից խոսքը»: Հայր Պիմենն ասաց նրան. «Եթե այդ ես ուզում, ավելի շատ գո՛րծ ցույց տուր նրան. գուցե միայն խոսքիդ նայելով՝ ունայնանա, բայց եթե գործով ուսուցանես նրան, այն կմնա նրա հետ»:

22. Պատմեց հայրերից մեկը, թե խցերից մեկում մի աշխատասեր ծեր կար, որի հագին արմավատերևից հյուսված զգեստ էր: Նա գնաց հայր Ամոնի մոտ, իսկ վերջինս տեսնելով ծերին այդպես հագնված՝ նրան ասաց. «Դա քեզ չի պաշտպանի. անօգուտ է»: Իսկ ծերը հարցրեց նրան և ասաց. «Հա՛յր, երեք խորհուրդներ են խռովեցնում ինձ. կամենում եմ գնալ և հանապազ շրջել անապատում, կամ՝ գնալ օտար տեղ, ուր ոչ ոք չի ճանաչում ինձ, կամ էլ՝ փակվել խուղի մեջ և ոչ ոքի չտեսնել, և ուտել օրումեջ»: Ամոնը նրան ասաց. «Այդ երեքից ոչ մեկն էլ չես կարող անել, այլ գնա՛, նստի՛ր քո խցում, ամեն օր կե՛ր քիչ-քիչ և ամեն ժամ մտաբերի՛ր մաքսավորի խոսքերը (Ղուկ. ԺԸ 10-14) *և կկարողանաս ապրել»:*

23. Մի հույժ ընտիր մենակյաց կար, որը կամենում էր ճգնել խցերից մեկում, սակայն որոշ ժամանակ առանձին խուղ չէր գտնում: Այնտեղ մի ծեր կար, որ առանձին սենյակ ուներ և խնդրեց նրան ու ասաց. «Արի՛ ինձ մոտ նստիր, մինչև քեզ համար խուղ գտնես և գնաս»: Եվ գալիս էին նրա մոտ ոմանք և պատվում էին որպես օտարականի, և բերում էին նրան՝ ով ինչ կարող էր, որպեսզի օգնած լինեն նրան, իսկ նա ընդունում էր նրանց օտարասիրությունը: Եվ ծերը սկսեց նախանձել նրան, չարախոսել նրա մասին և ասել. «Որքա՜ն ժամանակ է՝ ես այստեղ կրոնավոր եմ, և ոչ ոք ինձ մոտ չի գալիս, իսկ այս խաբեբան ընդամենը մի քանի օր է այստեղ, և այսքան բազմություն է գալիս սրա մոտ»: Եվ իր աշակերտին ասաց. «Գնա՛, ասա՛ նրան, որ տանից գնա, որովհետև ինձ պետք է»: Եվ աշակերտը գնալով նրա մոտ՝ ասաց. «Իմ հայրն ինձ ուղարկեց և հարցնում է. "Ինչպե՞ս ես ապրում"»: Նա ասաց.«Աղո՛թք արա ինձ համար, որովհետև ստամոքսիցս ծանրացել եմ»: Աշակերտը գնալով հոր մոտ՝ ասաց. «Նա ասաց, որ խուղ կգտնի ու կգնա»: Երկու օրից հետո դարձյալ ասաց աշակերտին. «Գնա՛, ասա՛ նրան, որ եթե չգնա, ես կգամ և գավազանով կհանեմ նրան»: Եվ աշակերտը դարձյալ գնալով ծերի մոտ՝ ասաց. «Իմ հայրը լսեց, որ հիվանդ ես, մեծապես խռովվեց ու տրտմեց և ինձ ուղարկեց տեսնելու քեզ»: Ծերն ասաց. «Ասա՛ նրան՝ քո աղոթքների շնորհիվ թեթևացավ իմ ցավը»: Վերադարձավ աշակերտը և իր հորն ասաց. «Նա ասաց՝ մինչև կիրակի օրը թույլ տո՛ւր ինձ մնալ, ապա կգնամ, եթե Աստված կամենա»: Երբ եկավ կիրակին, և նա չգնաց, ծերը վերցրեց գավազանը, որպեսզի նրան ծեծի և դուրս հանի: Նրա աշակերտն ասաց նրան. «Ես առաջ անցնեմ և գնամ, գուցե մեկնումեկը լինի այնտեղ՝ նրա մոտ, և դու գայթակղեցնես նրան»: Եվ առաջինը գալով ծերի մոտ՝ ասաց նրան. «Ահա իմ հայրը գալիս է քեզ աղաչելու, որպեսզի իր խուղը տանի քեզ»: Արդ, երբ նա լսեց ծերի սիրալիրության մասին, ելավ նրան ընդառաջ, հեռվից ընկավ նրա առաջ՝ ասելով. «Հոգնություն մի՛ քաշիր, տե՛ր իմ և հա՛յր իմ, ես կգամ դեպի քո սրբությունը, և թողություն շնորհի՛ր ինձ հանուն Քրիստոսի»: Տեսավ Աստված երիտասարդի գործը, զղջում գցեց նրա հոր սիրտը, և նա, վայր գցելով իր գավազանը, ընթացավ՝ ողջունելու նրան, և հասնելով նրան՝ համբուրեց և տարավ իր տուն, որպես թե ոչինչ չէր լսել նրանից: Այնուհետև հարցրեց իր աշակերտին և ասաց. «Ոչինչ չասացի՞ր նրան, ինչ որ ասել էի քեզ»: Եվ նա ասաց՝ ո՛չ: Սաստիկ ուրախացավ ծերը և նրան ներս տանելով՝ հանգստացրեց: Եվ հասկացավ, որ նախանձը սատանայից էր, և ընկնելով իր աշակերտի առջև՝ ասաց. «Այսուհետև դու

իմ հայրն ես, իսկ ես՝ քո աշակերտը, քանզի քո իմաստությամբ մեր երկուսի հոգիներն էլ ապրեցրիր»:

24. Խրճիթում ապրող մի հոր մասին ասում էին, թե մեծ ճգնասեր էր: Մի անգամ, մինչ աղոթք էր անում, պատահեց, որ մեկ այլ սուրբ ծեր գնաց նրա մոտ: Եվ դրսից լսեց նրա ձայնը, որ կռվում էր սեփական խորհուրդների դեմ և ասում. «Մինչև ե՞րբ պիտի մի խոսքի համար այդ ամենը կորցնեք»: Եվ նա, որ դրսում էր, կարծեց, թե ինչ որ մեկի հետ է խոսում: Բախեց դուռը, և նա բացեց նրա առաջ, և ներս մտնելով՝ ողջունեցին միմյանց: Տեսնելով, որ ուրիշ ոչ ոք չկա ներսում, և համարձակություն ունենալով ծերի մոտ՝ եկվորը հարցրեց նրան. «Ո՞ւմ հետ էիր կռվում, հա՛յր»: Եվ նա պատասխանեց. «Խորհուրդներիս հետ. բերանացի տասնչորս գրություններ գիտեմ, սակայն ինչ-որ բան լսեցի արտաքուստ, իսկ երբ կամեցա աղոթքներս կատարել, այն գիտեցածներս լռեցին, և միայն այդ լսածս էր գալիս աղոթքի ժամանակ. դրա համար էլ կռվում եմ»: Այցելած սուրբն սքանչացավ ծերի մաքրության և զգոնության վրա, որ համարձակ պատմում էր իր կռիվը:

25. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Հա՛յր, ահա երկու այրեր կային՝ մեկն աշխարհական, մյուսը՝ մենակյաց: Մենակյացը երեկոյան որոշեց, որ առավոտյան մերկանալու է իր իր կրոնավորական զգեստից: Աշխարհականն էլ որոշեց, որ վաղվանից առնելու է իր վրա կրոնավորական զգեստը, և երկուսն էլ այդ գիշեր վախճանվեցին: Ի՞նչ է պատրաստված նրանց համար»: Աբբա Պիմենը նրան ասաց. «Մենակյացը վախճանվեց որպես մենակյաց, իսկ աշխարհականը որպես աշխարհական. ով ինչի մեջ գտնվեց, նրանով էլ գնաց»:

26. Եկան մի քանիսը հայր Աղաթոնի մոտ՝ լսած լինելով նրա մասին, թե մեծ դատողություն ունի, և կամեցան փորձել նրան և տեսնել, թե կբարկանա՞: Ասացին նրան. «Աղաթո՛ն, լսել ենք քո մասին, թե պոռնիկ ես և ամբարտավան»: Եվ նա ասաց. «Այո՛, այդպես եմ որ կամ»: Դարձյալ ասացին նրան. «Դու, Աղաթո՛ն շատախոս ես ու բանսարկու»: Եվ նա ասաց՝ այո՛: Դարձյալ ասացին նրան. «Դու, Աղաթո՛ն, հերձվածող ես», իսկ նա ասաց. «Ո՛չ, հերձվածող չեմ»: Եվ աղաչեցին նրան ու ասացին. «Այդքան բան ասացինք քեզ և նախատեցինք, իսկ դու համաձայնեցիր, այդ մի բանին ինչո՞ւ չհամբերեցիր»: Ասաց նրանց հայր Աղաթոնը. «Առաջինները, որ ասացիք, նայելով ու քննելով ինքս ինձ՝ օգուտ քաղեցի, իսկ հերձվածողը բաժանումն է Աստծուց, իսկ ես չեմ կամենում բաժանվել Աստծուց»: Եվ նրանք զարմացան նրա դատողության վրա և հեռացան խնդությամբ:

27. Միաբանության եղբայրներից մի քանիսը գնալով հասան անապատ և մտնելով ոմն մենակյացի մոտ՝ նրա կողմից ցնծագին ընդունելություն գտան: Ըստ անապատականների սովորության՝ տեսնելով, որ նրանք հոգնատանջ են, իսկույն սեղան գցեց նրանց առաջ և ինչ ուներ հյուղում՝ նրանց առջև դրեց և հանգստացրեց նրանց: Եվ երբ երեկո եղավ, տասներկու սաղմոս կարդացին, նույնպես և՝ գիշերը: Եվ մինչդեռ ծերն արթուն էր, լսում էր նրանց խոսակցությունը, որ իրար ասում էին. «Անապատի մենակյացներն ավելի լավ են հանգստանում և ավելի պարարտ են ուտում, քան մենք, որ միաբանականներ ենք»: Եվ պատրաստվում էին հաջորդ օրը գնալ նրա դրացու մոտ: Ծերը նրանց ասաց. «Ողջո՛ւյն հաղորդեք նրան ինձանից և ասացե՛ք նրան. «Բանջարդ մի՛ ջրիր»: Եվ դրացին, լսելով այդ, հասկացավ ակնարկը և նրանց մինչև երեկո պահեց անոթի՝ գործ անել տալով: Երեկոյան երկար աղոթք արեցին, և նրանց ասաց. «Հանուն ձեզ դադար տանք, քանզի հոգնաբեկ եք»: Ասացին դարձյալ. «Սովորություն չունենք ամեն օր ուտելու, սակայն հանուն ձեզ կճաշակեմ մի փոքր»: Նրանց առաջ սեղան դնելով՝ աղ ու հաց, ասաց. «Այսօր ձեր պատվին արժե տոնական ճաշկերույթ անել»: Եվ աղի վրա մի քիչ քացախ լցրեց: Այնուհետև վեր կենալով պաշտամունք արեցին մինչև առավոտ, և առավոտյան ասաց. «Ձեր պատճառով չեմ կարող պաշտամունքի ամբողջ կարգը կատարել, որպեսզի մի փոքր հանգստանաք, քանզի եկվոր եք»: Եվ առավոտյան նրանք կամեցան փախչել, իսկ նա աղաչում էր նրանց և ասում. «Մնացե՛ք այստեղ ևս մի քանի օր, որովհետև ըստ անապատական սովորության, ձեզ չեմ կարող արձակել, եթե նույնիսկ հազար անգամ ընկնեք առջևս, երեք օր ևս մնացեք ըստ պատվիրանի»: Իսկ նրանք տեսնելով, որ չի արձակում, վեր կացան և գաղտնի փախան:

28. Ոմն եղբայր հարցրեց հայրերից մեկին և ասաց. «Երբ այնպես է պատահում, որ քնով ծանրանում եմ, և անցնում է աղոթքի ժամը, ամոթից չեմ ուզում աղոթք անել»: Ծերն ասաց. «Եթե պատահի, որ ննջես մինչև առավոտ, վե՛ր կաց, փակի՛ր քո դուռն ու պատուհանը և կատարի՛ր տվյալ ժամի պաշտամունքը, որովհետև գրված է. "Քոնն է ցերեկը, քոնն է գիշերը. և ամենայն ժամ է փառավորվում Աստված"» (Սաղմ. ՀԳ 16)*:*

29. Ոմն եղբայր հարցրեց հայրերից մեկին և ասաց. «Ենթադրենք՝ մի տեղ գնամ եղբայրների հետ, և իմ առաջ կերակուր դնեն, իսկ եղբայրները պահեցողության կամ հագեցած լինելու պատճառով՝ չկամենան ճաշակել, իսկ ես քաղցած լինեմ, ինչպե՞ս պետք է վարվեմ»:

Ծերը նրան ասաց. «Եթե դու քաղցած ես, նայիր՝ քեզ հետ նստողները քանիսն են, նաև՝ թե ինչ են դրել ձեր առջև: Որը կարծում ես՝ քո հասանելիք բաժինն է, կե՛ր. հանցանք գործած չես լինի, այլ քո կարիքը բավարարեցիր: Իսկ եթե հաղթվես քաղցից և ամբողջը ուտես՝ դա որկրամոլություն է»:

30. Ասաց մի անգամ հայր Դանիելը. «Նախքան հայր Արսենիոսի՝ իմ հայրերի մոտ գալը, նրանք հայր Աղաթոնի մոտ էին, և հայր Աղաթոնը սիրում էր Ալեքսանդրոսին, քանզի ճգնասեր էր և պարկեշտ: Մի անգամ նրա աշակերտները կտավ էին լվանում գետում, և հայր Ալեքսանդրոսը հանդարտությամբ էր լվանում, իսկ մյուս եղբայրները ասացին ծերին. «Տեսնո՞ւմ ես, հայր, Ալեքսանդրոսը հեղգաբար է լվանում: Եվ կամենալով հաճեցնել նրանց միտքը՝ ծերն Ալեքսանդրոսին ասաց. «Լա՛վ լվա, եղբա՛յր Ալեքսանդրոս, որովհետև դա կտավ է»: Եվ նա լսելով այդ՝ տրտմեց: Դրանից հետո ծերը մխիթարեց նրան և ասաց. "Մի՞թե չգիտեի, որ լավ ես լվանում, այլ դա ասացի նրանց առաջ, որպեսզի քո հնազանդությունը բարի օրինակ լինի նրանց"»:

31. Հայրերից մեկը հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Եթե իմ քույրը աղքատ է, և ես նրան ողորմություն անեմ, նույնը չէ՞, ինչ մեկ ուրիշ աղքատի տալը»: Ծերն ասաց՝ ո՛չ: Եղբայրը հարցրեց նրան. «Ինչո՞ւ, հա՛յր»: Ծերն ասաց. «Որովհետև արյունն է ձգում քեզ»:

32. Ծերն ասաց. «Մենակյացը չպետք է լինի ո՛չ ականջ դնող, ո՛չ չարախոս և ո՛չ էլ գայթակղեցնող»:

33. Երկու եղբայրներ գնացին հայր Պիմենի մոտ. այնտեղ նստած էր և հայր Անուբը: Հարցրին նրան և ասացին. «Հա՛յր, մեր միաբանությունում մեկը կա, որից ո՛չ շահում ենք, ո՛չ վնասվում»: Եվ ծերը լսելով՝ լուռ մնաց, քանզի Անուբի մոտ չէր խոսում, որովհետև իրենից մեծ էր: Հայր Անուբը ասաց նրանց. «Մեծ նեղություն է. մարդու ինչի՞ն է պետք մերձավորություն ունենալ մեկի հետ, ումից ոչինչ չի շահում»:

34. Մեկ այլ ծեր ասաց. «Ինչպես կրոնավորական կարգն է առավել պատվական, քան աշխարհական կարգը, այնպես էլ օտար մենակյացը պետք է հայելի լինի ամեն առումով, քան տեղում բնակված մենակյացները»:

35. Գնաց մի անգամ օտար մեկը Սինա լեռը՝ հայր Սյուղիանոսի մոտ, և տեսավ, որ աշխատում էին, ծերին ասաց. «Այս կորստական

կերակրով մի՛ զբաղվեք, որովհետև Մարիամը բարի մասն ընտրեց» (Ղուկ. Ժ 42)*: Ծերն իր աշակերտին ասաց. «Զաքարիա՛, տո՛ւր եղբորը Սբ. Գիրքը և տա՛ր մի սենյակ, ուր ոչինչ չլինի»: Արդ, երբ եղավ ժամը ինն, եկվոր եղբայրը նայում էր ճանապարհին՝ ակնկալելով, թե իր հետևից մարդ կուղարկեն, որ ճաշելու հրավիրի: Երբ չեկան, վեր կացավ, գնաց ծերի մոտ և հարցրեց. «Եղբայրներն այսօր ճաշակեցի՞ն, հա՛յր»: Եվ ծերը նրան ասաց. «Այո՛, սակայն դու հոգևոր մարդ ես և այս կերակուրների կարիքը չունես, իսկ մենք մարմնավոր ենք, դրա համար էլ կամենում ենք կերակրվել, ինչի համար և՛ աշխատում ենք: Դու բարի մասն ընտրեցիր և ամբողջ օրը կարդում ես և կամենում ես մարմնավո՞ր կերակուր ճաշակել»: Երբ լսեց այս, ընկավ նրա առաջ և ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ»: Ծերը նրան ասաց. «Ապա ուրեմն՝ Մարիամը Մարթայի կարիքն ունի, որովհետև Մարթայով գովաբանվեց Մարիամը»:*

36. Հայր Եսային հարցրեց հայր Պիմենին աղտեղի խորհուրդների մասին: Հայր Պիմենը նրան ասաց. «Ինչպես օրինակ՝ զգեստներով լի արկղը թողնես երկար ժամանակ, որոշ ժամանակ անց կփչանա, այնպես էլ խորհուրդները՝ եթե ֆիզիկապես չգործադրվեն, շատ ժամանակ անց կխաթարվեն»:

37. Հայր Հովսեփը հարցրեց հայր Պիմենին չար և ունայն խորհուրդների մասին, որ ծնվում են մարդու մեջ: Ծերը նրան ասաց. «Եթե մեկը վերցնի օձերին ու կարիճներին, գցի մի ամանի մեջ և ամուր փակի, որոշ ժամանակ անց բոլորը կսատկեն. նույնպես և դիվական չար խորհուրդները՝ համբերության միջոցով կսատակվեն և կանհետանան»:

38. Ասաց ծերը. «Եթե մեկը ընակվի մի տեղում և պտուղ չտա ըստ այդ տեղի, տեղն ինքը կհալածի նրան, որովհետև տեղին արժանի պտուղ չտվեց»:

39. Ասաց ծերը. «Եթե մեկն ասի, թե իր գործածը սեփական կամքով է եղել և ոչ թե՝ ըստ Աստծո կամքի, և դա եղել է անգիտությամբ, դրանից հետո նա պարտավոր է Աստծո ճանապարհով ընթանալ: Իսկ ով իր կամքն է կատարում, և ոչ թե՝ Աստծո, և չի ուզում լսել ոչ մեկին, որպես թե ինքը գիտե ամեն ինչ, այդպիսին դժվարությամբ կընթանա Աստծո ճանապարհով»:

40. Ասում էին, թե հայրերը ըստ խորհուրդների և ըստ մարդու էին խոսում:

41. Եկավ մեկը հայր Պիմենի մոտ և ասաց նրան. «Հա՛յր, սերմանեցի իմ անդաստանը և դրանից ողորմություն տվեցի»: Ծերը նրան ասաց. «Բարի գործ ես անում»: Եվ նա գնաց և առավել հոժարությամբ էր աշխատում՝ շատերին բաժին հանելով: Լսեց այդ մասին հայր Անուբը և Պիմենին ասաց. «Դու չե՞ս երկնչում Աստծուց, որ այդպես ես ասում եղբորը»: Եվ ծերը լուռ մնաց, ապա երկու օրից հետո մարդ ուղարկեց այն եղբոր հետևից և հայր Անուբի ներկայությամբ ասաց նրան. «Ի՞նչ ասացիր դու ինձ երեք օր առաջ, որովհետև մտքերս ուրիշ տեղ էին»: Եվ եղբայրն ասաց. «Ասացի՝ սերմանում եմ իմ անդաստանը և դրանից ողորմություն եմ տալիս»: Հայր Պիմենը նրան ասաց. «Ես այնպես կարծեցի, թե քո աշխարհական եղբոր մասին խոսեցիր ինձ հետ, սակայն, եթե դու ես անում այդ գործը, ապա դա մենակյացին վայել գործ չէ»: Իսկ նա լսելով՝ տրտմեց և ասաց. «Ես այլ գործ չունեմ և չգիտեմ՝ բացի սրանից, և ոչ էլ կարող եմ՝ բացի իմ անդաստանը սերմանելուց»: Այնժամ հայր Պիմենի առաջ ընկավ հայր Անուբն ու ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ»: Հայր Պիմենը եղբոր գնալուց հետո ասաց. «Ես ևս ի սկզբանե գիտեի, որ դա մենակյացի գործ չէ, բայց ըստ նրա կամքի և կարողության ասացի, որպեսզի նա առաջադիմի սիրո մեջ. և այժմ նա գնաց տրտմած և նույն գործն է անում»:

42. Հայր Պիմենն ասաց. «Եթե մարդը մեղանչի և ուրանա՝ ասելով, թե՝ չեմ մեղանչել, մի՛ հանդիմանիր նրան, այլապես նրա հույսը կկտրես, իսկ եթե ասես. «Մի՛ խռովվիր, եղբա՛յր, այլ զգույշ եղիր այսուհետև, որ չմեղանչես», նրա հոգին կմղես ապաշխարության»:

43. Մի անգամ հայր Մակարիոսն եղբայրների հետ անցնում էր Եգիպտոսով և լսեց մի մանուկի ձայն, որն իր մորն ասում էր. «Մի մեծահարուստ սիրում է ինձ, բայց ես նրան ատում եմ, իսկ մի աղքատ ատում է ինձ, բայց ես նրան սիրում եմ»: Եվ լսելով այս՝ հայր Մարկարիոսը զարմացավ: Եղբայրները հարցրին. «Ինչո՞ւ զարմացար այդ խոսքի վրա, հա՛յր»: Ծերը նրանց ասաց. «Առակ է այդ մանկան խոսքը, և մենք էլ մանուկներ ենք մտքով: Արդարև, մեր Տերն էլ է մեծատուն և սիրում է մեզ, բայց մենք չենք կամենում լսել Նրան և ատում ենք Նրան, իսկ բանսարկու թշնամին աղքատ է և ատում է մեզ, իսկ մենք սիրում ենք նրա պղծությունը»:

44. Եկան ոմանք հայր Փիլիկիոսի մոտ, որոնց հետ կային նաև աշխարհականներ, և խնդրեցին ծերին, որ խոսք ասի իրենց, իսկ ծերը լուռ էր: Եվ երբ շատ երկար աղաչեցին նրան, ասաց. «Խո՞սք եք ուզում լսել»: Ասացին նրան. «Այո՛, հա՛յր»: Ծերն ասաց. «Արդ այ-

լևս խոսք չկա: Նախկինում, երբ եղբայրները հարցնում էին ծերերին, անում էին՝ ինչ նրանք ասում էին, և Աստված էր առաջնորդում նրանց, թե ինչ խոսեն: Իսկ հիմա, որ հարցնում են և չեն անում՝ ինչոր լսում են, Աստված հեռացրեց շնորհները ծերերից, և չգիտեն՝ ինչ խոսեն, որովհետև չկա մեկը, որ կատարի»: Եվ լսելով այս՝ եղբայրները հոգոց հանեցին և ասացին. «Աղո՛թք արա մեզ համար, հա՛յր»: Եվ շահած՝ գնացին:

45. Մի անգամ հայր Սիսոն ելավ հայր Անտոնի լեռից և գնաց դեպի Թեբայեդոս լեռը և որոշ ժամանակ բնակվեց այնտեղ: Այնտեղ էին բնակվում մելիտիանոսականները: Հայր Այիոսը, հայր Սերինոսն և մյուսները բնակվում էին Արսենիոսի եղեգնուտում: Եվ երբ լսեցին, որ հայր Սիսոն եկել է լեռան արտաքին կողմը, ցանկացան տեսնել նրան, սակայն ասացին. «Ինչպե՞ս վարվենք, քանի որ լեռան վրա մելիտիանոսականներն են: Գիտենք, որ ծերը նրանցից չի վնասվի, բայց մենք, գուցե կամենալով ծերին տեսնել, ընկնենք հերձվածողների փորձության մեջ»: Եվ չգնացին տեսնելու ծերին:

46. Ծերն ասաց. «Հոգին, որ ունի խոսք, սակայն չունի գործ, նման է ծառի, որը ունի տերև, բայց չունի պտուղ: Օրինակ՝ եթե ծառը լի է պտղով, վայելուչ է նաև նրա տերևը. այդպես ներդաշնակ է նաև այն հոգին, որն ունի խոսք և գործ»:

47. Մի անգամ հայր Անտոնի մոտ եկավ մի մեծ ծեր, որը նստած էր վայրի էշի վրա: Հայր Անտոնը, տեսնելով նրան, ասաց. «Բեռդ շատ մեծ է, բայց թե կփրկի՞ դա քեզ՝ չգիտեմ»: Եղան դեպքեր, և կատարվեցին հայր Անտոնի ասածները:

48. Եղբայրներից մի քանիսը գնացին աբբա Անտոնիոսի մոտ՝ պատմելու նրան իրենց տեսած ցնորամիտ տեսիլքների մասին և նրանից պատասխան ստանալու, թե արդյո՞ք դրանք իսկապես դիվական են: Իրենց հետ ունեին մի մատղաշ ավանակ, որը սատկեց ճանապարհին: Եվ երբ եկան ծերի մոտ, վերջինս ընդառաջ ելավ նրանց և հարցրեց. «Ինչպե՞ս սատկեց մատղաշ ավանակը ճանապարհին»: Նրան հարցրին. «Որտեղի՞ց գիտես այդ, աբբա՛»: Նա պատասխանեց. «Դևերը ցույց տվեցին ինձ»: Եվ նրանք ասացին նրան. «Մենք էլ դրա մասին ենք եկել քեզ հարցնելու, որովհետև բազմաթիվ տեսիլքներ ենք տեսնում և երբեմն իսկապես լինում են, երբեմն՝ ոչ»: Եվ ավանակի օրինակով ծերը հավաստիացրեց նրանց, որ բոլոր գիշերային ցնորքները դևերից են:

49. Անապատում վայրի կենդանիների մի որսորդ կար, որը մի անգամ ականատես եղավ, թե ինչպես էր աբբա Անտոնիոսը ուրախանում եղբայրների հետ և գայթակղվեց: Իսկ ծերը, իմանալով այդ, կամեցավ հաստատել նրա միտքը, թե պետք է առժամանակ զիջման գնալ եղբայրներին, ասաց նրան. «Դի՛ր նետը աղեղի վրա և լարի՛ր»: Եվ նա լարեց աղեղը: Ասաց. «Էլի՛ ձգիր»: Որսորդը ձգեց: Դարձյալ ասաց. «Էլ ավելի՛ ձգիր»: Որսորդն ասաց. «Եթե չափից ավելի լարեմ և քաշեմ, աղեղը կկոտրվի»: Ծերն ասաց. «Այդպես է և Աստծո գործը. եթե եղբայրներին չափից ավելի լարենք, իսկույն կկոտրվեն. հարկավոր է երբեմն-երբեմն թուլացնել նրանց հոգևոր լարումը»: Այս լսելով և ըմբռնելով՝ մեծապես շահած գնաց որսորդը, իսկ եղբայրները մխիթարված՝ վերադարձան իրենց տեղերը:

50. Աբբա Ղոնգիանոսն հարցրեց իր երեք խորհուրդների մասին աբբա Լուկիոսին և ասաց. «Ուզում եմ մեկուսանալ»: Ծերը պատասխանեց. «Եթե լեզուդ չզսպես, չես կարող մեկուսանալ՝ որտեղ էլ որ լինես, իսկ այժմ զսպի՛ր քո լեզուն՝ և արդեն մեկուսի ես»: Աբբա Ղոնգիանոսը դարձյալ ասաց. «Կամենում եմ պահեցողություն անել»: Ծերն ասաց. «Եսայի մարգարեն ասաց. "Անգամ եթե քո պարանոցը կորացնես որպես լծողակ, այն չեմ կոչի ընդունելի պահք, այլ դու լուծարի՛ր անիրավության թնջուկներն ու քանդի՛ր չար մտայնությունը (Եսայի ԺԸ 5-6)*"»: Ասաց և երրորդը. «Կամենում եմ փախչել մարդկանցից»: Եվ ծերն ասաց. «Եթե նախապես չուղղվես մարդկանց մեջ, առանձնության մեջ նույնպես չես կարողանա ուղղվել»:*

51. Մի զինվոր հարցրեց աբբա Միովսին, թե իսկապես կա՞ ապաշխարություն, և ընդունո՞ւմ է Աստված դարձի եկածին: Աբբան նայեց նրան և ասաց. «Ասա՛ ինձ, սիրելի՛, եթե քո թիկնոցը պատռվի, դու կնետե՞ս այն»: Ասաց. «Ո՛չ, այլ կկարեմ այն և կհագնեմ»: Ծերն ասաց նրան. «Եթե դու քո զգեստն ես խնայում, Աստված իր ձեռքի գործը չի՞ խնայի»:

52. Ոմն եղբայր եկավ հայր Պիմենի մոտ և ասաց. «Հա՛յր, բազում չար խորհուրդներ չարչարում և խորտակում են ինձ»: Եվ ծերը կանգնեցրեց նրան քամու առաջ և ասաց. «Բա՛ց արա գիրկդ և բռնի՛ր դրան»: Նա ասաց. «Ձե՛մ կարող անել այդ»: Ծերն ասաց. «Եթե դա չես կարող անել, ապա խորհուրդներին էլ չես կարող արգելել, որ չգան. քո անելիքը դրանք անտեսելն է»:

53. Աբբա Հովսեփը հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչպե՞ս պետք է պահեցողություն անել, հա՛յր»: Հայր Պիմենն ասաց նրան. «Ես կամենում եմ ամեն օր կերակրվել քիչ-քիչ, որպեսզի երբեք չհագենամ»: Ասաց նրան հայր Հովսեփը. «Իսկ երբ երիտասարդ էիր, երկուական օրով չէի՞ր պահում, հա՛յր»: Ասաց ծերը. «Նաև երեքական, չորսական և անգամ շաբաթական»: Այս ամենը փորձեցին հայրերը, երբ կարողություն ունեին, և գտան, որ բարվոք է ամեն օր կերակրվել սակավ առ սակավ, և մեզ տվեցին Արքայություն տանող ճանապարհը, որպեսզի այն դյուրին լինի:

55. Մի ժամանակ մեր Քրիստոս Աստծո քաղաք Երուսաղեմի արքեպիսկոպոս եղավ Ամովս անունով մեկը: Եվ այս Ամովսը սատանայի ներգործությամբ կրոնավորատյաց էր, թեև ինքն էլ սուրբ սքեմ էր հագած, որին անարժան գտնվեց: Աստծո թողտվությամբ ոմն կրոնավոր ընկավ փորձության մեջ, և այս Ամովսը, հավելումն այլևայլ պատիժների, մերկացրեց կրոնավորին հրեշտակային զգեստից՝ փոխարենը հագցնելով խոզի, և այս տեսքով հանեց նրան քաղաքի փողոցները: Այդ գիշեր երևաց նրան սուրբ Հովհաննես Մկրտիչը և հանդիմանեց նրան՝ ասելով. «Այդպես արեցիր և անարգեցիր իմ զգեստը, ուստի իմ իրավունքը կպահանջեմ քեզնից դատաստանի օրը՝ Քրիստոսի ահավոր ատյանում»: Եվ նա զարթնելով՝ դողէրոցքի մեջ ընկավ, ապա գնաց և քաղաքից դուրս կանգնեցրեց տաճար՝ սուրբ Հովհաննես Մկրտիչի անունով՝ սուրբ Ստեփանոսի տաճարին դեմ հանդիման: Երբ ավարտեց տաճարի կառուցումը, զարդարեց ու հարդարեց այն ամբողջությամբ, ապա սուրբը սքեմը անարգելու մեղքի համար թողություն էր աղերսում՝ մեծամեծ հառաչանքներով, պահեցողությամբ և հսկումներով: Երկրորդ անգամ երևաց նրան սուրբը Հովհաննես Մկրտիչը և ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. եթե հինգ տաճար էլ կառուցես՝ ավելի լավը, քան սա, որ ինձ համար չինեցիր, չեն թողնվի քո մեղքերը, որ գործեցիր իմ հանդեպ, այլ դատաստան կտեսնեմ քեզ հետ այն զարհուրելի օրը»: Եվ նույն ժամին էլ հեռացավ նրանից: Դարձավ Ամովսը կրոնավորությունից դեպի մարդկային կենսակերպի, և ովքեր տեղյակ էին այս ամենին, պատմեցին աստվածակիր հայրերին, և նրա անունը ջնջեցին սուրբ պատարագից մեր Քրիստոս Աստծո քաղաքում:

56. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ չար խորհուրդների հետ, որոնք նեղում են ինձ»: Ծերն ասաց նրան. «Այս գործի մեջ, որդյա՛կ, մարդը պետք է հուրը դնի ձախ կողմը, իսկ անոթով ջուրը՝ աջ կողմը. երբ բորբոքվի հուրը, այն է՝ ցանկության

ախտը, վերցնի ամանով ջուրը՝ Աստծո ողորմությունը, և լցնի հրի վրա, և իսկույն կհանգչի: Այդպես էլ մենք պետք է ընկնենք Քրիստոսի առջև»:

57. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև մեղքի մեջ եմ ընկել»: Ծերը նրան ասաց. «Դարձյալ բարձրացի՛ր»: Եղբայրն ասաց. «Բարձրացա և դարձյալ ընկա»: Ծերն ասաց. «Նորի՛ց բարձրացիր»: Եղբայրն ասաց. «Մինչև ե՞րբ»: Ծերը պատասխանեց. «Եթե բյուր անգամ ընկես, բյուր անգամ էլ բարձրացիր՝ մինչև ի մահ, քանզի ինչի մեջ որ մարդը գտնվի, նույնի մեջ էլ հոգին կավանդի»:

58. Աբբա Հովհաննեսը հարցրեց աբբա Սիսոյին և ասաց. «Քանի՞ տարի է անհրաժեշտ, որպեսզի մարդը ազատվի ախտերից»: Ծերն ասաց նրան. «Տարինե՞րն ես ուզում իմանալ»: «Այո՛»,– ասաց աբբա Հովհաննեսը: Ծերն ասաց. «Երբ քեզ վրա ախտեր գան, իսկույն կտրի՛ր-հեռացրո՛ւ քեզանից, որպեսզի երկար մնալով քո մեջ՝ կորստյան չտանեն քեզ»: Ասաց դարձյալ. «Վա՜յ այն մարդուն, որի անունն ավելի է, քան գործը»:

59. Ասաց ծերը. «Զգո՛ւյշ եղիր, երբ քո մեջ առաջանա դատաստան անելու գայթակղություն, գարշի՛ր չար մտածումներից և ալեկոծություններից քեզ համար պսա՛կ հյուսիր»:

60. Ոմն ծեր ասաց. «Ատեցի երիտասարդների ամբարտավանությունը, որովհետև տքնում են և վարձ չեն ստանում, քանզի մարդկային փառքին են հետամուտ»: Մեկ այլ իմաստուն ծեր ասաց. «Ավելի լավ է երիտասարդը սնափառ լինի, քան հեղգ, քանզի սիրելով սնափառությունը՝ ակամա ստիպված է լինում ժուժկալել և հսկել, մերկ լինել և զրկել իրեն, ձգտում է սիրելի լինել այլոց և ողորմած, համբերել վշտերին և դիմակայել նեղություններին՝ հանուն մարդկանց գովեստի: Երբ սրանց մեջ հարատևում է, Աստծո շնորհը գալիս է նրան ասելու. «Ինչո՞ւ այդ վշտերը Ինձ համար չես կրում, այլ՝ մարդկանց»: Այնժամ զղջալով հնազանդվում է Նրան առաքինությունների մշակը և արհամարհում մարդկային փառքն ու գովեստները՝ հուսալով Աստծո ողորմությանը»: Եվ ովքեր լսեցին այս խոսքը՝ ասացին. «Այո՛, իսկապես դա այդպես է. հեղգը փրկության պատճառ չունի, ինչպես որ սնափառն ունի»:

61. Միաբանության մեջ մի հայր կար՝ ազնվագույն վարքով և բոլոր ճգնությունների մեջ՝ կատարյալ, մանավանդ՝ խոնարհության, սիրո

և հանդարտության, ողորմած էր, անհիշաչար և սիրառատ ամենքի հանդեպ: Նա ամեն ժամ և ամեն օր խնդրում էր Աստծուն և ասում. «Տեսնում եմ՝ որքան մեղավոր եմ, սակայն քո գթությանն ու ողորմությանն եմ ապավինում, որ Քո ողորմության շնորհիվ կփրկվեմ, ինչի համար և խնդրում եմ Քո ողորմած բարերարությունը: Տե՛ր, ինձ մի՛ հեռացրու քո ճանապարհներից այժմ և հավիտյանս, այլ ինձ հետ նաև մյուսներին արժանացրո՛ւ քո Արքայությանը՝ ըստ քո բազումողորմ գթության»: Եվ ճգնում էր ամեն օր՝ այս աղոթքն անելով, և մարդասերն Աստված կատարում էր նրա հայցվածներն՝ ըստ հետևյալ օրինակի: Մի օր սրբերի հիշատակը կատարելու համար վանականները գնում էին մեկ այլ վանք, և այս հորը նույնպես կանչեցին, սակայն նա հրաժարվեց: Տեսիլքի մեջ ձայն եկավ նրան. «Գնա՛, բայց սկզբում քո աշակերտների՛ն ուղարկիր, հետո դու մենա՛կ գնա»: Իսկ մեծատունը, որ մեզ համար աղքատացավ՝ Քրիստոս՝ մեր ճշմարիտ Աստվածը, որ ամեն ինչով եղավ ամենքի պես, որպեսզի ամենքին ապրեցնի, ընդունեց տառապյալ հիվանդի կերպարանք և նստեց ճանապարհի մեջտեղում: Եկան նրա աշակերտները ըստ հոր հրահանգի, տեսան նրան, որ կուրծքն էր ծեծում, հարցրին պատճառը, և նա ասաց. «Հիվանդ եմ, և իմ ուղեկիցները բերեցին ինձ մինչև այստեղ, և չունեմ մեկը, որ վերցնի ինձ»: Եվ այն հոր աշակերտներն ասացին նրան. «Մենք ինչպե՞ս վերցնենք քեզ, երբ ինքներս ոտքով ենք գնում»: Եվ թողեցին նրան ու գնացին: Քիչ անց եկավ և հայրը, գտավ անկյալին, որ հեծում էր, իմացավ պատճառը և ասաց. «Ինձանից առաջ կրոնավորներ չեկա՞ն և քեզ չտեսա՞ն»: Եվ նա ասաց. «Այո՛, սակայն իմացան պատճառը և գնացին՝ ասելով. "Մենք ոտքով ենք գնում, ի՞նչ կարող ենք անել քեզ"»: Աբբան նրան ասաց. «Կարո՞ղ ես փոքր-փոքր ոտնաքայլերով առաջ շարժվել»: Նա ասաց. «Չեմ կարող»: Եվ ծերը նրան ասաց. «Արի՛ քեզ շալակեմ, Աստված կօգնի, և կգնանք»: Իսկ նա ասաց. «Դու ինքդ ծեր լինելով՝ ինչպե՞ս կարող ես ինձ շալակել: Ավելի լավ է՝ դու գնաս և ինձ համար աղոթք անես»: Ծերն ասաց. «Երբե՛ք քեզ չեմ թողնի այստեղ այսպես տկարացած. այլ արի բարձրացի՛ր այս քարի վրա, ես քեզ կշալակեմ, և ընթացքում կօգնի մեզ Քրիստոս»: Եվ բարձրացնելով նրան՝ շալակեց: Սկզբում հիվանդը ծանր թվաց, բայց այնուհետև սկսեց թեթևանալ, և որքան առաջանում էին, այնքան ավելի թեթև էր դառնում: Ընթանում էր ծերը և զարմանում՝ չգիտենալով, որ իր ուսերի վրա ինքը կրում է Նրան, Ով բոլորին է կրում իր ուսերին: Եվ հանկարծակի նրա շալակած հիվանդը անհայտացավ և ասաց աբբային. «Դո՛ւ, որ աղաչում էիր ինձ քո աշակերտների համար, որպես-

զի քեզ հետ միասին նրանք էլ արժանանան երկնքի Արքայությանը, այժմ տե՛ս, որ այլ է քո չափը, և այլ է նրանց չափը: Այնպե՛ս արա, որ նրանք էլ ունենան քո վարքն ու վաստակը, և կկատարվի քո խնդրանքը, քանզի արդար դատավոր եմ և յուրաքանչյուրին տալիս եմ ըստ իր գործերի»:

62. Թեսաղոնիկեում մի արքեպիսկոպոս կար՝ Թալելեոս անունով, որ ո՛չ Աստծուց էր երկնչում, ո՛չ հատուցումից էր զգուշանում: Ոտնակոխ արեց քրիստոնեական ճշմարիտ վարքը և արժեզրկեց քահանայական կարգը, սուրբ և միասնական Երրորդությունն ուրացավ և կուռքերին էր երկրպագում: Եպիսկոպոսները ժողով գումարելով՝ աստիճանից զրկեցին նրան: Իսկ նա խաբեությամբ ջանում էր կրկին վերստանալ իր կարգը, և ըստ Սողոմոնի խոսքի, թե՝ ամեն ոք հնազանդվում է ոսկուն, պատրիարքից հրահանգ ստացավ վերադառնալու իր քաղաքը՝ խաբեությամբ արդարացածը: Սակայն Աստված չանտեսեց իր սուրբ եկեղեցին: Մինչ պատրաստվում էր ճանապարհ ընկնել դեպի իր քաղաք, բնական կարիքից դրդված՝ գնաց զուգարան: Եվ երբ այնտեղ երկար մնաց՝ մոտ երկու ժամ, յուրայիններից ոմանք եկան պատճառն իմանալու և գտան այն անարգին՝ գլխիվայր ընկած խողովակի մեջ՝ ոտքերը վեր: Հանեցին և մեռած գտան նրան հավիտենական մահով:

63. Փյունիկիայի Լիբանիսի քաղաքում ոմն մունետիկ՝ Գայիոս անունով, թատրոններում և ժողովատեղիներում հրապարակավ նախատում էր սուրբ և մշտակույս Տիրամորը: Երևաց նրան Աստվածածինն ու ասաց. «Ի՞նչ եմ արել քեզ, որ այդպես հավաքների մեջ ինձ նախատում ես»: Սակայն Գայիոսը չուզեց ուղղվել, այլ առավել սաստիկ էր հայհոյում: Երեք անգամ նույն ձևով Աստվածամայրը երևաց նրան և զգաստության կոչ արեց: Եվ քանի որ չուղղվեց, այլ ավելի սաստիկ շարունակեց հայհոյել, մի օր՝ կեսօրին, երևալով նրան՝ ոչինչ չասաց, այլ իր մի մատով խաչակնքեց նրա երկու ձեռքերն ու ոտքերը, և սա կոճղի պես փայտացած՝ վայր ընկավ: Դրանից հետո թշվառականը խոստովանեց և բոլորին պատմեց, թե ինչպես Տիրամորը պատվելու փոխարեն ընտրեց հայհոյելը, իսկ այժմ մարդասիրություն գտավ:

64. Մի անգամ հայր Անտոնը գնաց Նիտրա լեռը՝ հայր Ամոնի մոտ, և վերջինս ասաց. «Քանի որ Աստծո շնորհներով և քո աղոթքներով մեր եղբայրները շատացել են, և ոմանք կամենում են առանձին սենյակներ շինել, որպեսզի հանդարտվեն, ի՞նչ հեռավորությամբ կհրամայես կառուցել սենյակները»: Հայր Անտոնն ասաց. «Ճաշենք ժամը

իննին, ելնենք շրջելու անապատում և տեղ ընտրենք»: Եվ երբ կերան, վեր կեցան և շրջեցին անապատում, մինչև արևի մայր մտնելը, հայր Անտոնն ասաց. «Աղոթենք և խաչ կանգնեցնենք այստեղ, որպեսզի այստեղ չինեն նրանք, ովքեր կամենում են չինել. իսկ երբ կամենան այցելել միմյանց, յուրաքանչյուրն առանձին իր սենյակում թող ճաշակի իր կերակուրը, ապա նոր այցելեն միմյանց, որպեսզի դյուրությամբ շրջեն և անխռով մնան»: Իսկ միջակա տարածությունը, որ ընտրեց, տասներկու ասպարեզ էր:

65. Հայր Պետրոսը հարցրեց հայր Ղովտին. «Կամենում եմ միաբանների մոտ գնալ. ինչպե՞ս պահեմ ինձ այնտեղ»: Հայր Ղովտն ասաց. «Ինչպես առաջին օրը, որ մտար, այդպե՛ս ապրիր մինչև վերջին օրը՝ ամոթխած, խոնարհ և լուռ, հանդգնություն և համարձակություն բնավ ձեռք չբերես»:

66. Հարցրին հայր Աղաթոնին, թե ո՞րն է ավելի կարևոր՝ մարմի՞նը տքնավարժել, թե՞ մտքերը հստակ պահել: Նա ասաց. «Մարդը նման է ծառի. մարմնի վաստակը նրա ոստերն են, իսկ պտուղը՝ մտքի մաքրությունն է, և տնկիի վրա գործադրված ամեն ջանք՝ հանուն պտղի է, քանզի գրված է. «Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում և կրակն է գցվում (Մատթ. Է 19)*: Իսկ ճյուղերը պտուղը սնելու և պահելու համար են»:*

67. Մի անգամ Սկյութիայի ժողովում ի հակադարձումն հայր Աղաթոնի ասածին, թե՝ ուղիղ չէ դատը, նրան ասացին. «Իսկ դու ո՞վ ես»: Նա նրանց ասաց . «Մարդու որդի եմ, ինչպես և գրված է. «Եթե իրոք արդարություն խոսեիք, ուղիղ դատ կանեիք, մարդկա՛նց որդիներ (Սաղմ. ԺԷ, 2)» :

68. Հայր Աբրահամը պատմում էր ոմն ծերի մասին, թե հաց չէր ուտում և խիստ գեղեցիկ ձեռագիր ուներ: Եվ ահա բերին եղբայրները մագաղաթ և խնդրեցին նրան գրել, իսկ նա վերցրեց և գրեց. «Խուսափի՛ր չարից և բարի՛ք գործիր, խաղաղությո՛ւն փնտրիր և դրա՛ն հետևիր (Սաղմ. ԼԳ 15)*»: Նրան ասացին. «Գրի՛ր ամբողջ սաղմոսը»: Նա պատասխանեց. «Գնացե՛ք, եղբայրնե՛ր, և երբ գործով կատարեք այդ, այնժամ մնացածն էլ կգրեմ»:*

69. Հարց տրվեց հայր Եպիփանին, թե ինչո՞ւ պատվիրանները տասն են, իսկ Ավետարանի երանիները՝ ինը: Նա ասաց. «Որովհետև եգիպտացիներին հասցված հարվածները տասն են, իսկ հրեշտակների

դասերը ինն են, իսկ երեքը եռյակի մեջ սուրբ Երրորդություն է, որը և՛ գլուխը, և՛ պսակն է երանությունների»:

70. Հարց տրվեց Զենոնին, թե ի՞նչ է նշանակում Հոբի այն խոսքը, թե. «Անգամ երկինքը Նրա առաջ անարատ չէ (Հոբ ԺԵ 15)*»: Պատասխանեց ծերը. «Որովհետև միայն Աստված է կատարյալ և սուրբ, և արարածներից ոչ մեկը չի կարող հավասարվել Աստծո սրբությանը»:*

71. Հարցրեց հայր Պիմենը հայր Հովսեփին և ասաց. «Եթե չար խորհուրդ այցելի ինձ, ի՞նչ անեմ. ընդդիմանա՞մ՝ նախքան ներս մտնելը, թե՞ թույլ տամ ներս մտնի»: Ասաց ծերը նրան. «Թո՛ւյլ տուր նախ ներս մտնի, հետո պայքարի՛ր դրա դեմ»: Եվ երբ վերադարձավ Սկիտե և նստեց իր խցում, եկավ ոմն ծեր Թեբայեցի և ասաց եղբայրներին. «Հարցրի հայր Հովսեփին և ասացի՝ եթե աղտեղի խորհուրդ այցելի ինձ, թողնե՞մ ներս մտնի: Եվ նա ասաց. "Բնավ թույլ չտաս մերձենա քեզ և չթողնես ներս մտնի, այլ իսկույն հեռացրու քեզնից"»: Եվ երբ լսեց հայր Պիմենը, թե այսպես ասաց Հովսեփը այն Թեբայեցուն, իսկույն վեր կացավ և գնաց Պանեփուտ՝ հայր Հովսեփի մոտ, և ասաց նրան. «Հա՛յր, ես քեզ պատմեցի իմ խորհուրդները, և դու ինձ ուրիշ պատասխան տվեցիր, իսկ Թեբայեցի եղբորը՝ ուրիշ»: Ասաց նրան ծերը. «Դու գիտես, որ ես քեզ սիրում եմ»: Եվ նա ասաց. «Այո, այդպես է»: Եվ ծերն ասաց. «Դու ինքդ ասացիր՝ ինչպես քո անձին կասեիր՝ այդպես և ինձ ասա»: Պատասխանեց հայր Պիմենը և ասաց. «Արդարև այդպես է»: Ասաց ծերը. «Արդ, ես քեզ ասացի՝ ինչպես իմ անձին. եթե թողնես ներս մտնի այդ խորհուրդը և պատերազմես նրա դեմ, առավել զորավոր և հաղթող կլինես: Սա կատարյալների և փորձվածներին ուղին է: Իսկ անփորձներն ու տկարները բնավ չպետք է թույլ տան, որ աղտեղի խորհուրդները մոտ գան, այլ պետք է իսկույն փախուստ տան դրանցից և հեռու վանեն իրենցից»:

72. Հարցրեցին ծերին, թե ինչպե՞ս է, որ ոմանք այդքան հեշտությամբ են կատարում Աստծո գործերը, իսկ ոմանք չեն կարողանում: Նա պատասխանեց. «Ովքեր կարևոր են համարում Աստծո գործերը, իսկ աշխարհիկ գործերն՝ ավելորդ, նրանք հեշտությամբ են կատարում, իսկ ովքեր երկրավոր գործերն են կարևոր համարում, դժվարությամբ են կատարում Աստծո գործերը: Դրա համար ասաց Տերը. "Թերահավատնե՛ր, նախ խնդրե՛ք երկնքի Արքայությունն ու նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա" (Մատթ. Զ 33)*»:*

73. Հայր Հովսեփն ասաց. «Ողորմության տարբեր տեսակներ կան. ոմանք այն անում են տան բարգավաճման և զավակների ողջության համար, ոմանք էլ՝ Աստծո Արքայության համար, սակայն չպետք է վատ բաներից կամ վաչխից ողորմություն անեն, որից վարձք չեն ստանա: Եվ հետո ասաց. «Եթե ճշմարիտ ասացի, թո՛ղ ճեղքվի այս վեմը»: Եվ վեմը ճեղքվեց յոթ մասի:

74. Մեկը հարցրեց հայր Պիմենին. «Եթե ժառանգություն ստանամ, ինչպե՞ս վարվեմ»: Նա ասաց. «Եթե եկեղեցուն տաս, դարձյալ դու կուտես այն, եթե ազգատոհմիդ թողնես, վարձք չես ստանա. ավելի լավ է՝ վաճառես և տաս աղքատներին»:

75. «Եթե քեզ մոտ գա հայհոյության դևը»,– ասաց ծերը,– «դու ասա. «Ես այդ չեմ կամենում, թող քո գլխին գա, և քեզնից վրեժ առնի Տերը»: Ավելորդ ցավ մի՛ հավաքիր»:

76. Ասաց ծերը. «Եղբոր վրա բարկանալը դատապարտելի է՝ թեկուզ աչքդ էլ հանի, միայն թե չհեռացնի քեզ Աստծուց»:

77. Հարցրին ծերին, թե՝ ի՞նչ է նշանակում ատել չարը: Պատասխանեց. «Նշանակում է՝ ատել եղբոր մասին չարախոսելը և արդարացնել նրան»:

78. Ծերին հարցրին. «Ո՞վ է, որ ասում է. "Տերն է իմ բաժինը (Սաղմ. ԺԵ 5)*"»: Նա ասաց. «Սուրբը Հոգին է ասում, քանզի ով սուրբ է սրտով, նա միայն կարող է ասել»:*

79. Մի օտարական ասաց ծերին. «Կամենում եմ գնալ իմ երկիրը»: Ծերն ասաց. «Իմացի՛ր, եղբա՛յր, որ օտար երկիր գնալիս՝ Աստված քեզ առաջնորդ է, իսկ քո երկիրը գնալիս՝ հակառակը»:

80. Հարցրին ծերին. «Ինչպե՞ս կարող եմ Աստծո երկյուղն ունենալ»: Պատասխանեց. «Խոնարհությամբ և աղքատությամբ»:

81. Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացուն հարց տրվեց մենակյաց և բազմակյաց եղբայրների մասին, թե ո՞րն է ավելի լավ: Նա ասաց. «Մովսեսի և Եղիայի միջև տարբերություն չկա, քանզի երկուսն էլ հաճելի եղան Աստծուն»:

82. Մի կրոնավոր սուրբ Մինայի տոնին աշխատում էր: Մեկ այլ եղբայր նրան տեսնելով՝ ասաց. «Մի՞թե այսպիսի օրով կարելի է աշխատել»: Նա պատասխանեց. «Սուրբ վկան այս օրը չարչարանքներ

կրեց հանուն Քրիստոսի, արդյոք պատշաճ չէ՞, որ ես էլ այսօր ավելի շատ նեղություն կրեմ և վշտանամ»:

83. Հարցրին ծերին, թե ո՞րն է ապաշխարությունը: Պատասխանեց. «Նույն մեղքի մեջ այլևս չընկնելը. դրա համար էլ անբիծ կոչվեցին արդարները, որովհետև թողնելով մեղքը՝ արդարություն գործեցին»:

84. Մեղքի մեջ ընկած մի եղբայր ապաշխարում էր: Եվ այնպես պատահեց, որ նրա ոտքին մի մեծ քար ընկավ, և նա շատ արյուն կորցնելով՝ մեռավ: Դևերը եկան նրա հոգին առնելու, իսկ հրեշտակներն ասացին. «Տեսե՛ք այս արյունը, որ հանուն Քրիստոսի է»: Եվ նրանք թողեցին նրան:

85. Ծերին հարցրին. «Լա՞վ սովորություն է եղբայրների մոտ գնալը»: Պատասխանեց. «Ո՛չ, այլ Աստծո սերը ստանալը և նեղություն կրելն է բարի»:

86. Հարցրին ծերին, թե ինչպե՞ս կռվել բազմաթիվ չար խորհուրդների դեմ: Պատասխանեց. «Պետք է քննել, թե ո՛րն է մեծը, և դրա դեմ կռվել, իսկ երբ այն հաղթվի, փոքրերը կկորչեն»:

87. Ասաց ծերը. «Եթե կրոնավորը գտնի մի տեղ, որտեղ կարող է առաքինությունների մեջ առաջադիմել, և մարմնավոր կարիքների պատճառով չգնա այնտեղ, այնպիսին չի հավատում, որ Աստված կարող է կերակրել իրեն»:

88. Մի երիտասարդ ճգնավորի հարցրին, թե ո՞րն է լավ՝ խոսե՞լը, թե՞ լռելը: Ասաց. «Երկուսն էլ՝ չափով. չարի դեպքում իսպառ լռել, բարու դեպքում՝ սակավ խոսել»:

89. Երեք եղբայրներ գնացին Սկյութիա՝ մի ծերի մոտ: Մեկն ասաց. «Հա՛յր, ես անգիր գիտեմ Հին և Նոր Կտակարանները»: Ծերն ասաց. «Դու օդը լցրել ես խոսքով»: Մյուսն ասաց. «Ես այդ բոլորը գրած ունեմ»: Ծերն ասաց. «Դու քո պատուհանը լցրել ես թղթով»: Երրորդն ասաց. «Հա՛յր, ես այնչափ անփույթ վարվեցի մարմնիս հետ, որ մինչև անգամ ո՛չ ոտքերս էի լվանում, ո՛չ ամաններս, դրա համար էլ փուչ և տատասկ բուսեց մարմնիս վրա՝ խիստ անհանգստություն պատճառելով ինձ»: Ծերն ասաց. «Դու հեռու վանեցիր քեզնից օտարասիրությունը, քանզի օտար համարելով մարմինդ՝ ամեն ինչից զրկեցիր նրան. սակայն առավելագույնս հարկավոր է ունենալ ուղիղ հավատ և բարի գործեր»:

90. Ոմն եղբայր սովի ժամանակներում իր մորը հաց էր տանում: Եվ երկնքից ձայն եկավ, որ ասաց նրան. «Կամ դո՛ւ հոգ տար քո մոր մասին, կամ ե՛ս, որովհետև եթե դու պիտի հոգ տանես, ես չեմ հոգա»: Նա ճանաչեց, որ այդ ձայնն Աստծուց էր, և գետին ընկնելով՝ արտասուքներով ասաց. «Դո՛ւ հոգա, Տե՛ր, իմ և իմ մոր մասին»: Եվ վեր կենալով՝ դարձավ իր խուցը: Երեք օր անց նրա մոտ եկավ մայրը, հաց բերեց նրան և ասաց. «Ոմն ծեր եկավ և ինձ տվեց անհրաժեշտ ամեն բան, որ այս տարի ինձ ու քեզ բավական է»: Եվ նա գոհացավ Աստծուց և առավել ևս զգաստացավ:

91. Ծերն ասաց. «Եթե ոխակալը իր արյունն էլ հեղի հանուն Քրիստոսի, ընդունելի չէ»:

92. Մի կույս ծերին ասաց. «Շաբաթվա վեց օրը պահեցողություն եմ անում և բերանացի սովորել եմ Հին և Նոր կտակարանները: Էլ ի՞նչ է մնում, որ անեմ»: Ծերը նրան ասաց. «Կարո՞ղ ես անարգանքն իբրև պատիվ ընդունել, զրկանքը՝ իբրև շահ, սիրել օտարին՝ ինչպես արյունակցիդ»: Ասաց. «Ո՛չ, հա՛յր»: Ծերն ասաց. «Դա է կատարելությունը. իսկ դու ո՛չ վեց օրն ես պահել, ո՛չ Գրքերն ես սովորել, այլ դու միայն ինքդ քեզ ես խաբում: Գնա՛ և տքնի՛ր, քանզի դու դեռ չես տքնել, որովհետև՝ ով իր անձը կամավոր վշտերի է ենթարկում, հավատում եմ, որ նա վկաների հետ է դասվում, և արյան փոխարեն Աստված նրա արտասուքներն է ընդունում, որ կամովին նախատինքների մեջ ընկնելով և արհամարհանքների արժանանալով՝ արտասվում է աստվածահաճո արտասուքներով, որոնք հեզ և հանդարտ սրտից են բխում: Ա՛յդ արա և կապրեցնես քո անձը»: Եվ երբ այդ լսեց կույսը՝ մեծապես շահեց և ուրախությամբ գնաց:

93. Մի երիտասարդ եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Հա՛յր, նեղում են ինձ իմ խորհուրդները և ասում. "Շատ վաղ դարձար աբեղա, վերադարձի՛ր աշխարհ"»: Նա պատասխանեց. «Որդյա՛կ, եթե չհասնենք էլ Ավետյաց երկիր, մեզ համար ավելի լավ է, որ մեր ոսկորներն այստեղ՝ անապատում ընկնեն՝ մեր Տեր Աստծո ճանապարհին, քան դառնանք դեպի Եգիպտոս՝ Փարավոնի ծառայությանը: Գնա, որդյակ, ավելի լավ է առաքինության ճանապարհին մեռնենք, թեկուզ և չհասնենք նրա կատարին, քան թե վերադառնանք խավար աշխարհ և ծառայենք նրա գարշ ախտերին»: Երբ եղբայրը լսեց այդ, մեծապես շահեց և ուրախությամբ գնաց:

94. Մի երիտասարդ կրոնավոր ճգնեց քսան տարի՝ շաբաթական մի բուռ թրջած ոսպ ուտելով և հպարտացավ իր սրտում՝ իրեն մեծ մեկը կարծելով, և ուզում էր նշաններ գործել: Եվ գթաց նրան Տերը և նրա սիրտը գցեց Պողոսի խոսքը, որ ասում է. «Մենք մեր անձերից որևէ բանի կարող չենք, այլ Աստծուց է մեր կարողությունը (Բ Կորնթ. Գ 5)*»: Ինքն իր մեջ ասաց. «Եթե մեծն Պողոսն անգամ չէր համարձակվում որևէ բան խորհել իր անձից, որքա՜ն ես կարիք ունեմ սովորելու ուրիշներից: Գնամ այն անվանի մենակյացի մոտ, և ինչ որ ասի՝ կանեմ»: Գնաց մի նշանավոր ծերի մոտ, և մինչ մոտենում էր, ծերը տեսավ նրա ուսերին նստած երկու սև հնդիկների, որոնք չղթա էին գցել նրա պարանոցից, և յուրաքանչյուրը քաշում էր նրա գլուխը դեպի իրեն: Ծերն այս տեսնելով՝ հասկացավ պատճառը, քանզի հոգետես էր, ապա սկսեց հառաչել և լալ առանձին: Երբ եղբայրը ներս մտավ, ողջունեցին միմյանց և մոտ մեկ ժամ լուռ նստեցին, քանզի ծերն այդ սովորությունն ուներ: Ապա եղբայրն ասաց ծերին. «Հա՛յր, շահի՛ր ինձ և ուսուցանի՛ր փրկության ճանապարհը»: Պատասխանեց ծերը և ասաց. «Չեմ կարող, որդյա՛կ, քանզի ես ինքս կարիք ունեմ օգնականի և առաջնորդի»: Իսկ նա ասաց. «Մի՛ հրաժարվիր շահել ինձ, հայր իմ, քանզի քեզ եմ հուսացած և Աստծուն երդվել եմ անսալ քո խոսքին և կատարել այն»: Իսկ ծերն ասաց. «Ես հրաժարվում եմ քեզ որևէ խոսք ասել, որովհետև գիտեմ, որ չես կատարի»: Իսկ նա երդվեց նրան կատարել այն ամենը, ինչ որ լսի: Եվ ծերը տվեց նրան դահեկաններ և ասաց. «Գնա՛ քաղաք, գնի՛ր տասը հատ հաց, նույնքան գինի և նույնքան կիլոգրամ էլ միս և բեր՛ ինձ մոտ»: Երբ եղբայրը լսեց այս, տրտմեց, որ երդվել էր հնազանդվել նրան, և գնաց: Մինչ ճանապարհ էր գնում, ալեկոծվում էր բազում խորհուրդներից և ասում էր մտքում՝ ի՞նչ է կամենում սրանով անել ինձ ծերը, և ինչո՞ւ գնեմ այսքան ուտելիք և ձեռքս բռնելով՝ գայթակղեցնեմ տեսնողներին: Եվ ողբալով ընթանում էր այդ ճանապարհը, ապա հասնելով քաղաք՝ գնեց հացն ու գինին: Թեպետ խիստ տրտմում էր մսի համար, բայց գտնելով մի երկյուղած մարդու՝ խնդրեց նրան գնել միսը: Եվ մեծ ամոթով վերցնելով այդ ամենը՝ եկավ ծերի մոտ: Ծերը տեսավ, որ եղբոր մի ուսից հնդիկն անհետացել էր: Ասաց նրան ծերը. «Մի՛ մոռացիր, սիրելիս, որ Աստծուն ուխտել ես հնազանդվել այն ամենին, ինչ որ ասեմ քեզ: Արդ, վերցրո՛ւ այս բոլորը և տա՛՛ր քո սենյակ, և երբ կատարես աղոթական կարգը, ճաշի ժամին կուտես մեկ հաց, մեկ կիլոգրամ միս և կըմպես մեկ չիշ գինի: Այդպես կանես տասն օր և կգաս ինձ մոտ, և ես քեզ կասեմ այն, ինչ Աստված կտա խոսել ինձ»: Երբ եղբայրը լսեց*

այս, սոսկաց հույժ, բայց երդման պատճառով չկարողացավ ընդդիմանալ: Եվ վերցնելով այդ ամենը, գնաց ողբալով և խիստ տրտմությամբ, և տանը նստած՝ լալիս էր ու ասում. «Վայ ինձ՝ եղկելիս, որ պահքից զրկվելով՝ ընկա որկրամոլության մեջ. և ինչ անեմ՝ չգիտեմ՝ ուտե՞մ, թե՞ չուտեմ. եթե չուտեմ, Տերը կբարկանա ինձ վրա Իր անունով երդվելու համար, որ ուխտեցի, թե ծերն ինչ ասի, պիտի անեմ այն՝ որպես թե Աստծո բերանից է դուրս եկել, իսկ եթե ուտեմ, ի՞նչ կլինի իմ վաստակը: Արդ, Տե՛ր, նայի՛ր տառապանքներիս և ողորմի՛ր բռնադատվածիս, և թողությո՛ւն տուր մեղքերիս, քանզի բռնադատվում եմ գործելու ճգնությանս հակառակը»: Այսպես ողբալով՝ գնաց իր տուն և արեց այն ամենը, ինչ հրամայել էր ծերը, և ավելի շատ էր աղոթում. և ամեն անգամ, երբ մոտենում էր ուտելու ժամը, արտասուքներով թրջում էր սեղանը և ասում. «Տե՛ր, իսկապես թողեցի՞ր ինձ»: Երբ Տերը տեսավ նրա խոնարհությունն ու հնազանդությունը, մխիթարություն տվեց նրա սրտին և ճանաչեցրեց նրան գործի խորհուրդը, և թե ինչու նրա հետ պատահեց այս բանը: Արտասուքներով գոհացավ Աստծուց ու խոստովանեց մարգարեական խոսքը, թե՝ եթե Տերը չչինե տունը՝ զուր են ջանում շինողները, և եթե Տերը չպահպանի քաղաքը, զուր են արթուն մնում նրա պահապանները (Սաղմ. ՃԻԶ 1)*: Եվ երբ լրացան այդ օրերը, հընթացս որի կատարեց ծերի հրամանները հեզությամբ և արտասուքներով, գնաց նրա մոտ. և ավելի թորշոմած և մաշված էր մարմնով, քան այն ժամանակ, երբ շաբաթը մեկ անգամ ոսպ էր ճաշակում: Երբ ծերը տեսավ նրան այդպես խոնարհված, և սև հնդիկների փոխարեն՝ նրա աչ ու ձախ կողմերում՝ պայծառ երեսներով լուսո հրեշտակների, ընդառաջ գնաց նրան և ուրախությամբ ներս ընդունեց, ապա աղոթք անելով՝ լուռ նստեցին: Եվ ասաց ծերը նրան. «Որդյա՛կ, մարդասեր Աստված նայեց քեզ և թույլ չտվեց թշնամուն տիրելու քեզ, քանզի նա սովորություն ունի խաբելու առաքինիներին և գցելու ամբարհավաճության մեջ, և ներշնչում է անելու ավելին, քան կարող է, և անվանում է բարձրագույն չափ, որպեսզի դրանով հեշտությամբ որսա նրանց: Սակայն Աստված հեզերի և խոնարհների մեջ է բնակվում, և մեղքերից ոչ մեկը այնքան ատելի չէ Աստծուն, որքան ամբարտավանությունը, և չկա Աստծո առաջ ավելի պատվական առաքինություն, քան՝ հեզությունն ու խոնարհությունը, քննի՛ր և ուսանի՛ր այս խոսքերս փարիսեցու և մաքսավորի առակով* (Ղուկ. ԺԸ 9-14)*: Որովհետև չափազանցված ճգնությունները խիստ վտանգավոր են, քանզի հեշտ են կործանում, ինչպես հայրերից մեկն է ասում՝ ինչը չափից ավելի է՝ դևից է: Գնա՛, որդյա՛կ, կե՛ր քո հացը ամեն*

երեկո, և եթե հարկ լինի, առանց երկմտության և խղճմտության փոխի՛ր սահմանված ժամը: Եթե ստացվի, որ օրվա մեջ երկու անգամ ուտես, մի՛ տրտմիր, քանզի օրենքի բռնադատության տակ չենք, այլ՝ Հիսուս Քրիստոսի շնորհների: Իսկ երբ ուտելու լինես, մի՛ հագեցիր, այլ զսպիր քեզ՝ որքան կարող ես, և պարարտ կերակուրներից հոռին ընտրիր, բայց ամենից առավել սիրտդ պահիր և բոլոր առաքինություններից առավել խոնարհություն ստացիր, քանզի խոնարհ հոգին է պատարագն Աստծո, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում, և դարձյալ՝ խոնարհվեցի, և փրկեցիր ինձ, իսկ Եսայի մարգարեն Տիրոջ անունից ասում է՝ Ես որտեղ եմ բնակվում, եթե ոչ հեզերի և խոնարհների մեջ, որոնք դողում են իմ խոսքերից (Եսայի ԿԶ 2)*: Արդ, դու քո ողջ հույսը դիր Աստծո վրա և քո հոգսը գցիր նրա վրա, քանզի եթե Տերը չնայի քեզ, ընդունայն է քո վաստակը: Գնա՛ խաղաղությամբ քո ճանապարհը, որդյա՛կ, և թող Տերն ուղղորդի քեզ և որպես լույս ծագեցնի քո արդարությունը և քո իրավունքը՝ որպես միջօրե* (Սաղմ. ԼԶ 6)*»: Այսպես ծերը շահելով եղբորը՝ հաստատեց նրան և սիրալիր հյուրընկալելով՝ կերակրեց նրան և արձակեց գնալու իր սենյակը: Եվ նա գնաց խնդությամբ՝ ասելով. «Քո երկյուղածները թո՛ղ խրատեն ինձ, և նրանք, ովքեր ճանաչում են քո վկայությունները* (Սաղմ. ՃԺԸ 79)*»:*

95. Ծերն ասաց. «Ինչպես թագավորի համար պարծանք է՝ թողնել թագավորությունը և դառնալ կրոնավոր, նույնպես ամոթ է կրոնավորին՝ թողնել աբեղայությունը և ամբողջ երկրի թագավոր դառնալ, որովհետև անանց թագավորությունն անհամեմատելի է անցավորի հետ»:

96. Հարցրին ծերին, թե ինչպե՞ս պետք ապրի մենակյացը: Պատասխանեց. «Ինչպես ես՝ մեն-մենակ»:

97. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց «Ինչո՞ւ եմ վախենում, երբ անապատ եմ գնում»: Ծերը պատասխանեց. «Որովհետև դեռ կենդանի ես»:

98. Կրոնավորը, որ բաղնիքում մերկանում է, Աստծո շնորհներից է մերկանում:

99. Ոմն եղբայր, մենակեցության ուխտի մեջ մտնելով, նույն ժամին ևեթ փակվեց իր սենյակում՝ որպես թե արդեն հեռացել է աշխարհից: Ծերերը, իմանալով այդ, եկան հանեցին նրան սենյակից և հանձնարա-

րեցին շրջել եղբայրների խցերով, ընկնել նրանց առաջ և ասել. «Թողությո՛ւն շնորհեք ինձ, որովհետև մենակյաց չէի, այլ՝ տխմար»:

100. Մեկը հարցրեց ծերին. «Ի՞նչ պետք է անեմ, որ ապրեմ»: Իսկ ծերը՝ զբաղված իր գործով, ամենևին վերև չնայեց և չդադարեցրեց գործը, այլ պատասխանեց. «Ահա տեսնում ես»:

101. Ծերերն ասացին. «Եթե երիտասարդ տեսնես, որ իր կամքով երկինք է բարձրանում, բռնի՛ր նրան և վա՛յր գցիր, քանզի դա նրան օգուտ է»:

102. Հայր Սյուղիանոսի աշակերտ հայր Նատիրայի մասին պատմեցին, թե քանի դեռ բնակվում էր Սինա լեռան իր խուղում, չափավոր ճգնավորական կյանք էր վարում՝ ըստ իր մարմնավոր կարողության, սակայն երբ եպիսկոպոս դարձավ Փառանում, իրեն տվեց խիստ ճգնակեցության: Նրա աշակերտն ասաց նրան. «Հա՛յր, քանի դեռ անապատում էինք, այդպես չէիր ճգնում»: Ծերը նրան ասաց. «Այնտեղ անապատ էր, աղքատություն և լռություն, և կամենում էի մարմինս հանգիստ պահել, որպեսզի չհիվանդանամ, որովհետև խնամող չունեի, իսկ այստեղ եթե տկարանամ, խնամողներ շատ ունեմ»:

103. Ծերին հարցրին. «Ինչո՞ւ երբեք չես դադարում տքնել»: Նա ասաց. «Որովհետև ամեն ժամ մահն աչքիս առաջ է»:

104. Ոմն եղբայր եկավ հայր Պիմենի մոտ և ասաց. «Մեծ փորձություն պատահեց ինձ»: Հայր Պիմենն ասաց նրան. «Հեռացի՛ր այնտեղից՝ որքան կարող ես. գնա՛ երեք օրվա ճանապարհ և մի տարի պահեցողություն արա՛՝ մինչև երեկո»: Եղբայրն ասաց. «Եթե մեռնեմ և մի տարին չկարողանամ լրացնել, ի՞նչ կլինի ինձ հետ»: Հայր Պիմենն ասաց նրան. «Հավատում եմ Քրիստոսին, որ եթե այժմ դուրս գաս իմ մոտից՝ հոժարությունն ունենալով կատարելու ասածս և մեռնես, քո ապաշխարությունը ընդունելի կլինի Աստծո առաջ»:

105. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Մեծ մեղք գործեցի, հայր, և կամենում եմ երեք տարի ապաշխարել»: Հայր Պիմենն ասաց. «Զափազանց շատ է»: Եղբայրն ասաց. «Իսկ մեկ տարին բավա՞կան է»: Ծերն ասաց. «Դա էլ է շատ»: Եվ ովքեր այնտեղ էին, ասացին. «Քառասո՞ւն օր է հարկավոր այդ մեղքն ապաշխարելու համար», և Պիմենը դարձյալ ասաց՝ շատ է: Եվ եղբայրը հարցրեց. «Իսկ որքա՞ն ժամանակ է հարկավոր»: Հայր Պիմենն ասաց. «Ես հավատում եմ, որ եթե մարդ ամբողջ սրտով ապաշխարի և այդ մեղքի վրա նորերը չա-

վելացնի, Աստված երեք օրում կընդունի նրա ապաշխարությունը և թողություն կտա նրա մեղքերին»:

106. Ծերին հարցրին. «Ո՞րն է մենակյացի գործը»: Նա ասաց. «Ընտրության արվեստը»:

107. Ոմն եղբայր գնաց հայր Մակարիոս Եգիպտացու մոտ և ասաց նրան. «Հա՛յր, ինձ խո՛սք ասա, որով ապրեմ»: Հայրն ասաց նրան. «Գնա՛ գերեզմանոց և անարգի՛ր մեռելներին»: Եվ նա գնալով՝ անարգեց, հայհոյեց և քարկոծեց մեռելներին, և վերադառնալով՝ պատմեց ծերին: Ծերն ասաց. «Ոչ մի բան չխոսեցի՞ն քեզ հետ»: Պատասխանեց՝ ոչինչ: Ասաց դարձյալ ծերը. «Վաղը գնա՛ և փառաբանի՛ր նրանց»: Եվ եղբայրը գնալով՝ փառաբանեց նրանց և ասաց. «Ո՛վ առաքյալնե՛ր, մարգարենե՛ր և սրբե՛ր»: Եվ գալով ծերի մոտ՝ ասաց՝ փառաբանեցի: Ծերը հարցրեց. «Ոչ մի պատասխան չտվեցի՞ն»: Ասաց՝ ո՛չ: Ծերը նրան ասաց. «Տեսա՞ր՝ որքան պատիվ տվեցիր նրանց, և քեզ չլսեցին, և որքան անարգեցիր նրանց, բայց պատասխան չտվեցին: Այդպես էլ դու. եթե կամենում ես ապրել, եղի՛ր մեռելի պես, մարդկանց անարգանքին և փառաբանությանը վերաբերվիր՝ ինչպես մեռելը, և կկարողանաս ապրել»:

108. Մեկը հարցրեց ծերին. «Ինչո՞ւ եմ ստեպ-ստեպ ճանճրանում»: Նա պատասխանեց. «Որովհետև չես տեսնում առաջիկա ճանապարհի երկարությունը»:

109. Մի անգամ հայր Անտոնն ասաց, թե կգա ժամանակ, երբ մարդիկ կխելագարվեն, իսկ թե մեկին տեսնեն չխելագարված՝ կհարձակվեն նրա վրա՝ ասելով՝ դու խելագար ես, այն պատճառով, որ նա նման չէ իրենց:

110. Հարցրեցին ծերին. «Որտեղի՞ց են գալիս պոռնկության խորհուրդները»: Եվ նա ասաց. «Շատ ուտելուց և շատ քնելուց»:

111. Հայրերից ոմանք պատմեցին մի մեծ սրբի մասին, թե երբ որևէ մեկը գալիս էր նրան բան հարցնելու, մեծ հոժարությամբ ասում էր. «Ահա Աստծո կերպարանք եմ առնում և նստում եմ դատավորական աթոռին: Ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ համար: Եթե ասես՝ ողորմի՛ր ինձ, Աստված քեզ ասում է. «Եթե կամենում ես, որ քեզ ողորմեմ, դու էլ քո եղբո՛րը ողորմիր, և Ես քեզ կողորմեմ: Եթե կամենում ես ներում գտնել, դու էլ քո մերձավորի՛ն ներիր»: Մի՞թե անիրավու-

թյուն կա Աստծո մոտ. ընա՛վ, այլ մենք ենք անիրավ, որովհետև եթե կամենանք ապրել, կապրենք»:

112. Հարցրին ծերին, թե ի՞նչն է մենակյացին մենակյաց դարձնում: Եվ նա պատասխանեց. «Ամեն տեսակ բարի գործերի կատարումը և ամեն տեսակ չարից զատվելը»:

113. Մի անգամ հայր Իսահակը գնալով հայր Պիմենի մոտ և տեսնելով նրան ոտքերը լվանալիս՝ համարձակություն առավ և հարցրեց նրան. «Ինչո՞ւ հայրերից ոմանք անարգեցին ամեն տեսակ մարմնավոր մխիթարությունները և կամեցան խորտակել իրենց մարմինը խստակեցությամբ»: Հայր Պիմենն ասաց նրան. «Մենք ոչ մեկից չուսանեցինք սպանել մարմինը, այլ ուսանեցինք սպանել ախտերը»:

114. Հարցրեցին ծերին. «Ինչի՞ց է, որ երբ նստում եմ խցում, սիրտն իմ այլևայլ տեղերում է թափառում»: Նա ասաց. «Որովհետև մեր զգայարանները՝ տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, ճաշակելիքը և շոշափելիքը, արտաքին աշխարհի ազդեցությանն են ենթարկվում: Եթե սրանք ինքնին սուրբ պտուղներ են տալիս, ապա ներքինն էլ են պահում առողջ և խոնարհ»:

115. Հայր Աբրահամը հարցրեց հայր Թեոդորոսին. «Ո՞րն է ավելի բարի, հա՛յր, փա՞ռք որսամ անձիս, թե՞ անարգանք»: Հայրն ասաց նրան. «Նախընտրում եմ փառքը, քան անպատվությունը»: «Ինչպե՞ս».— հարցրեց հայր Աբրահամը: Ծերն ասաց. «Եթե բարի գործեր անեմ և փառաբանվեմ, կարող եմ ինքս ինձ դատել և միտքս խոնարհեցնել, թե արժանի չեմ այդ փառքին: Իսկ անարգանքը ժանտ գործերից է լինում, և ինչպե՞ս կարող եմ մխիթարել սիրտս, եթե բոլոր մարդիկ գայթակղվեն ինձնից: Ուրեմն՝ ավելի լավ է բարին գործել և փառավորվել, քան չարը գործել և անարգվել»: Հայր Աբրահամն ասաց. «Ճիշտ ասացիր, հա՛յր, արդարև դա այդպես է»:

116. Հարցրին ծերին. «Ինչպե՞ս է հոգին խոնարհություն ստանում»: Նա ասաց. «Երբ միայն իր չարիքների մասին է հոգում»:

117. Ասաց հայր Եղիասը. «Մեղքերն անզոր են այնտեղ, ուր ապաշխարությունն է: Օգուտ չկա սիրուց այնտեղ, ուր ամբարտավանությունն է»:

118. Ալեքսանդրիացի մի քահանա կրոնավոր դառնալու նպատակով գնաց անապատ՝ եպիսկոպոսապետի մոտ, որն այնտեղ լռության մեջ ճգնում էր: Ասաց նրան. «Հա՛յր, ուզում եմ կրոնավոր դառնալ

այստեղ, բայց ունեմ կին և որդիներ»: Նա ասաց. «Սրբանալու փոխարեն ուզում ես մեղանչե՞լ, որդյա՛կ»: Քահանան նրան ասաց. «Ուրիշներին ուսուցանում ես, սակայն քո անձը չե՞ս ուսուցանում: Դու այրի թողեցիր քո հարսին՝ սուրբ եկեղեցին, և հոգևոր որդիներին՝ որբ, և ինձ այդպիսի բանե՞ր ես ասում: Եվ կատարվեց քեզ վրա Տիրոջ խոսքը, թե՝ քո աչքում գերան ունենալով՝ ցանկանում ես ուրիշի աչքից շյուղը հանել (Ղուկ. Զ 41-42)*»:*

119. Հայր Անուբն ասաց. «Ես հավատում եմ, որ Աստված անիրավ չէ՝ թե՛ բանտից հանելիս , թե՛ բանտ գցելիս»:

120. Ասաց ծերը. «Այն չափին, որ երբևէ կարողացա հասնել, այլևս երբեք չկրկնեցի»:

121. Ասաց ծերը. «Թեպետ և տքնեցին սրբերը երկրի վրա, սակայն այստեղ նույնպես փոքր-ինչ հանգիստ գտան, այսինքն՝ ազատվեցին աշխարհիկ հոգսերից»:

122. Եթե կամենում ես հանդարտաբարո կյանքով ապրել, պետք է ո՛չ շաբաթական, ո՛չ էլ երկուական օրով պահեցողություն անել, այլ ամեն օր՝ իններորդ ժամին չափավոր ըմպել, կշռով ուտել և չափով խոսել, աղոթել, սաղմոսել, տքնել, պահքի պնդության հասնել, աշխարհի մեջ բնակվել և կին ունենալ, ողորմած լինել սրբերի և այրիների հանդեպ:

123. Ողորմություն, աղոթք և պահք. այս երեքը առաքինություններից մեծագույնն են: Ողորմությունն ավելի մեծ է, քան աղոթքը, և աղոթքը ավելի մեծ է, քան պահքը: Աղոթքը մաշում է մարմինը, պահքը ցամաքեցնում է ուղեղը, տքնությունը նվազեցնում է ոսկորը:

124. Հայր Պիմենն ասաց. «Կամապաշտությունը պղնձե պարիսպ է մարդու և Աստծո միջև. և երբ մարդը հրաժարվի իր կամքից հանուն Աստծո, նույն պահին Աստծուն կհայի, քանզի քանդեց պարիսպը»:

125. Ծերերն ասացին. «Ընտրության գիտությունը բոլոր առաքինություններից վեր է»:

126. Ծերն ասաց. «Եթե մեկը համբերի անարգանքների և նախատինքների, այնպիսին կարող է ապրել»:

127. Ծերերն ասացին. «Խորհուրդներիդ երբեք մի՛ վստահի՛ր»:

128. Ծերերն ասացին. «Կնգուղը կուսության նշանակն է»:

129. Հայր Հոբն ասաց. «Եթե մեկը Սուրբ Գրքից ընկնի տարակուսանքների մեջ և չգնա գիտունների մոտ՝ ուսանելու, կնմանվի հեղեղների բախումից փլուզված պարսպի, որովհետև կնեղվի և պատառ-պատառ կլինի հերձվածային ընկալումների պատճառով»:

130. Ծերերն ասացին, թե հայելի է հանդարտության մեջ իրեն արգելափակած մենակյացը:

131. Երբ Եվագրոսը գնաց Եգիպտոս և այնտեղի հայրերի վարքը տեսավ, զարմացավ և մի ծերի ասաց. «Ինչո՞ւ հունաց ազգի մեջ չկա այսպիսի ճգնություն և ընտրություն»: Ծերն ասաց. «Հպարտության պատճառով, քանզի այդ ախտը խլեց նրանցից տքնությունն ու նրանց մեջ դրեց բանակռվի մարմաջը»:

132. Ծերերն ասացին, թե մենակյացի պսակը խոնարհությունն է:

133. Ոմն եղբայր հարցրեց մի հոգետես ծերի, թե ի՞նչ է նշանակում այն խոսքը, որ ասվում է Մովսեսի մասին. «Նայեց այս կողմ, այն կողմ և ոչ ոքի չտեսավ, ապա սպանեց եգիպտացուն (Ելից Բ 12)*»: Տեսանողն ասաց. «Մովսեսը նախ Աստծո խորքերը նայեց, թե արդյոք հաճելի՞ է Աստծուն, թե՞ ոչ, նայեց ձախ, թե արդյոք սատանան չէ՞, որ գրգռում է իրեն, և չտեսավ նրան, նայեց աջ, թե արդյոք կա՞ արգելող հրեշտակներից մեկը, բայց չտեսավ: Ապա իմանալով, որ գործն առանց մեղքի է, սպանեց նրան»:*

134. Ծերերն ասացին, թե մարդու հոգին նման է աղբյուրի. եթե պեղես, կհստակվի, իսկ եթե խցանես, կկորչի:

135. Ոմն եղբայր հարցրեց ծերին. «Ինչի՞ց է, որ խորհուրդներս չեն օգնում իմ գործերին»: Ծերն ասաց. «Որովհետև կատարյալ գործ չունես. եթե ունենայիր, կօգներ դրան»:

136. Հայր Բեսարիոնն ասաց. «Քառասուն օր ժանտափչերի մեջ ոտքի վրա մնացի և չննջեցի»:

137. Ծերերն ասացին. «Քսան տարի պայքարեցինք մեկ խորհրդի դեմ, որպեսզի բոլորին որպես մեկ մարդ տեսնենք»:

138. Ծերերն ասացին. «Ոչինչ մի՛ արա, մինչև նախապես չքննես սիրտդ, թե արդյոք Աստծո համա՞ր է այն, ինչ կամենում ես անել»:

139. Երեք եղբայրներ ելան հնձի, երեքով մի արտ վերցրին և գնացին հնձելու, սակայն առաջին իսկ օրը եղբայրներից մեկը հիվանդացավ, գնաց իր խրճիթը և այլևս նրանց չտեսավ: Երկու եղբայր-

ներն ասացին. «Մեր եղբոր Տեր Աստվա՛ծ, նրա անձի փոխարեն՝ նրա աղոթքներով օգնի՛ր մեզ»: Եվ արագ ավարտեցին հունձը: Այն եղբայրն առողջացավ հիվանդությունից, սակայն հնձի ժամանակն անցել էր: Եվ երկու եղբայրները բերին նրա բաժինը և ասացին նրան. «Ստացի՛ր քո վարձը»: Եվ նա պատասխանեց. «Ես վարձ չունեմ, որովհետև չաշխատեցի»: Նրանք ասացին. «Քո աղոթքը մեզ հետ էր»: Երկար հակառակվելուց հետո գնացին մի ծերի մոտ՝ դատաստանի: Ծերը զարմացավ և մեկ ժամ մտածելու ժամանակ խնդրեց և ասաց. «Եկե՛ք ուղիղ դատաստանը լսելու»: Երբ եկան, հիվանդացած եղբայրն աղաչեց և ասաց. «Ես առաջին օրը հիվանդացա և չեմ կամենում այլոց վաստակն ուտել»: Իսկ եղբայրներն ասացին. «Եթե նրա աղոթքը չլիներ մեզ հետ, մենք չէինք կարողանա այն մեծ արտը հնձել, եթե նույնիսկ մեզ հետ վարձու աշխատողների էլ վերցնեինք»: Արդարացի համարեցին, որ եղբայրը բաժին առնի մյուս եղբայրների հետ, քանզի նրա աղոթքը նրանց հետ էր, և փառաբանեցին Աստծուն՝ եղբայրական կատարյալ և աննախանձ սիրո համար, որ ունեին հաստատահիմն հավատով այն զարմանալի և սքանչելի այրերը:

140. Հայր Իսիդորոսն ասաց. «Երբ ես երիտասարդ էի իմ արգելափակ խցում, ժամանակի չափ և զգացողություն չունեի պաշտամունք անելիս, այլ գիշերն ու ցերեկն ինձ համար աղոթքի ժամ էին»: Ասաց նաև՝ «Քառասուն տարի չեմ ընկողմանել»:

141. Անապատական հինգ եղբայրներ՝ արհեստավորներ, գնացին կրոնավորության մեջ կատարյալ մի ծերի մոտ՝ հոգևոր կյանքի մասին հարցեր տալու և նրանից շահեկան խոսք լսելու, և ծերն ընդունեց նրանց ուրախ սրտով՝ խաղաղության ողջույն տալով: Երբ նրանից շահեկան խրատներ խնդրեցին, նա մեկ առ մեկ սկսեց նրանց հարցնել իրենց արհեստների մասին: Նրանցից մեկն ասաց. «Ես զամբյուղ եմ հյուսում, հա՛յր»: Ծերն ասաց. «Աստված թո՛ղ պսակ հյուսի քեզ համար, որդյա՛կ»: Երկրորդն ասաց. «Ես խսիր եմ գործում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Աստված զորությո՛ւն տա քեզ, որդյա՛կ»: Երրորդն ասաց. «Ես մաղ եմ գործում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Աստված պահպան քեզ, որդյա՛կ»: Չորրորդն ասաց. «Ես գրագրություն եմ անում, հա՛յր»: Ծերն ասաց. «Դո՛ւ գիտես, որդյա՛կ»: Հինգերորդն ասաց. «Ես վուշ եմ գործում, հա՛յր»: Ծերն ասաց. «Ես այնտեղ չկամ, որդյա՛կ»: Զարմացան եղբայրները և աղաչեցին ծերին մեկնաբանել իր պատասխանները: Եվ ծերն ասաց. «Զամբյուղը արթուն ու ժիր է պահում գործողին, և այդպիսիներինն է պսակը: Խսիր գործողը ուժի

կարիք ունի, և նրա համար զորություն խնդրեցի: Մաղագործն Աստծո պահպանության կարիքն ունի, որովհետև շրջում է քաղաքներ և գյուղեր և վաճառում իր ապրանքը: Գրագիրն իրեն մեծ մարդ է կարծում և մյուսներին՝ փոքր, իսկ վուշագործը ելումուտ ունի արանց և կանանց մոտ: Մյուս արհեստներից էլ պարզ երևում է, թե որոնք են կրոնավորի գործ, և որոնք՝ աշխարհականի. վուշագործությունն աշխարհականի գործ է, իսկ գրողը հպարտանալու առիթ ունի, որովհետև նրա գործը մնայուն է, իսկ մյուսները խոնարհվում են, որովհետև նրանց գործն անցողիկ է, և հեշտությամբ են անում»:

142. Եղբայրներից մեկը մեղքի մեջ ընկավ, և քահանան նրան դուրս հանեց եկեղեցուց, իսկ հայր Բեսարիոնը, բարձրանալով իր տեղից, նրա հետ դուրս եկավ՝ ասելով. «Ես էլ եմ սրա նման մեղավոր»:

143. Ծերերն ասացին. «Աստված նորամուտ մենակյացից այլ բան չի պահանջում, այլ միայն հնազանդություն՝ մարմնավոր տքնության միջոցով»:

144. Հայր Աբրահամը լսեց, որ ծերերից մեկն ասաց. «Հիսուն տարի տքնեցի գիշեր ու ցերեկ և վերջապես կարողացա մեռցնել իմ մեջ պոռնկության, արծաթասիրության, սնափառության և մնացած այլ ախտերը»: Եվ գալով նրա մոտ՝ հարցրեց. «Դո՞ւ ես այդ բանն ասել, թե՝ ես մեռցրել եմ իմ ախտերը»: Նա ասաց՝ այո՛: Հայրը նրան հարցրեց. «Եթե գնաս քո խրճիթը և այնտեղ տեսնես, որ մի կին կա, կարո՞ղ ես համարել, որ նա կին չէ»: Նա ասաց. «Ո՛չ, սակայն կարող եմ կռվել իմ խորհուրդների դեմ, որպեսզի չմեղանչեմ»: Հայր Աբրահամն ասաց. «Ահա տեսնո՞ւմ ես, որ չես սպանել, տակավին կենդանի է այդ ախտը քո մեջ, միայն թե կապված է: Եվ դարձյալ. եթե անապատով գնաս և քարերի մեջ ոսկի տեսնես, քո միտքը կարո՞ղ է այդ ոսկին քարին ու հողին հավասար համարել»: «Ո՛չ,– պատասխանեց ծերը,– այլ կպատերազմեմ իմ խորհուրդների դեմ, որպեսզի չվերցնեմ այն»: Հայր Աբրահամն ասաց. «Ահա այդ ախտն էլ է կենդանի, միայն թե կապված է»: Դարձյալ հարցրեց հայր Աբրահամը. «Եթե դու լսես, որ եղբայրներից մեկը քեզ սիրում է, իսկ մյուսը ատում և բամբասում է, և երկուսն էլ քեզ հյուր գան, կարո՞ղ ես հավասար ընդունել նրանց»: Նա ասաց. «Ո՛չ, սակայն կմարտնչեմ իմ խորհուրդների դեմ, որպեսզի ինձ ատողին նույնքան բարի վերաբերվեմ, որքան որ ինձ սիրողին»: Հայր Աբրահամն ասաց նրան. «Ահա բացահայտեցիր, որ չես սպանել ախտերդ, այլ դրանք բոլորն էլ կենդանի են քո մեջ, միայն թե կապված են Աստծո սուրբ շնորհներով: Ուրեմն մի՛ պարծեցի՛ր»:

145. Ծերերն ասացին. «Երկրորդ անգամ քեզ վրա հասնող բոլոր խորհուրդներին երրորդ անգամ հարցրո՛ւ՝ մե՞րն ես, թե՞ թշնամիներինը, և ողջ իրողությունը կխոստովանի»:

146. Հայր Բեսարիոնը մեռնելիս ասաց, թե մենակյացը պետք է սերովբեների և քերովբեների նման ամբողջովին աչք լինի:

147. Մի ծեր կար Տերենութում, որը մի եղբայր ուներ: Մեռավ եղբայրը և մի տղա թողեց՝ երեք տարեկան: Ծերը գնաց, բերեց նրան անապատ և սնուցեց ընդեղենով և բանջարեղենով: Եվ երբ տղան դարձավ տասնութ տարեկան, մահացավ: Ծերը տեսիլքի մեջ տեսավ նրան մի խավարչտին վայրում: Դառնապես լաց եղավ ծերը և դատ արեց Աստծո առաջ. «Այդ ի՞նչ տեղ է. երիտասարդը մարդ չի տեսել, հաց չի ճաշակել և սրբությամբ է ապրել հանուն Քեզ: Թե արդար դատաստան անես՝ դա՛ չէ նրա տեղը. հայտնի՛ր ինձ, ապա թե ոչ՝ դառը տանջանքների կմատնեմ իմ ծերությունը»: Տեսիլքի մեջ հրեշտակը նրան ասաց. «Ծե՛ր, լի էր երիտասարդը ամեն տեսակ առաքինություններով, բայց հպարտ էր, դրա համար է խավարի մեջ»: Ծերն ասաց. «Առաքինությունները չկարողացա՞ն բժշկել հպարտությունը»: Հրեշտակն ասաց. «Ո՛չ, որովհետև չթողեց այդ ախտը, այլ իր հետ տարավ: Եթե մարդը իր կենդանության ժամանակ չի թողնում ամեն տեսակ մեղք, այլ իր հետ թաղում է գերեզմանում, նրա համար անբժշկելի կլինեն խավարն ու անշեջ հուրը: Դու նույնպես բարությամբ չգործեցիր, որովհետև, քանի դեռ նա մարմնի մեջ էր, չխրատեցիր և չբժշկեցիր»: Ծերն իր կյանքի բոլոր օրերը մինչև մահ լացով անցկացրեց:

148. Ոմն եղբայր հարցրեց ծերին. «Ո՞րն է հոգու մշակությունը, որպեսզի այն պտուղ բերի»: Ծերն ասաց. «Հոգու մշակությունը լռությունն է, ժուժկալությունը, տառապանքը, կարեկցանքը, մշտական աղոթքը և ուրիշների հանցանքներին չնայելը, այլ միայն իրենը տեսնելը. եթե սրանք կատարի և մնա սրանց մեջ, հոգու պտղաբերումը երկար սպասեցնել չի տա»:

149. Ասաց դարձյալ ծերը. «Երիտասարդը, որ խոսք է գցում իրենից ավագների մեջ, նման է նրան, ով կրակ է գցում իր եղբոր ծոցը»:

150. Ասացին ծերերը. «Խրատե՛ք երիտասարդներին, եղբայրնե՛ր, որպեսզի նրանք ձեզ չխրատեն»:

151. Մի անգամ մի պատկառելի ծեր եկավ տեսնելու խցերում բնակվողներին: Այնտեղ մի երիտասարդ կար, որ հեշտությամբ էր ընկալում

Սուրբ Գիրքը: Հարցրին նրա մասին հայրերը, թե ինչո՞ւ նա այսպես հեշտ է յուրացնում Սուրբ Գիրքը, իսկ ուրիշները, որ թեպետ ջանում են, դժվար են ընկալում այն: Պատասխանեց ծերը և ասաց. «Երկնքի տակի ջրերը մի տեղում են, սակայն ցամաքի վրա տեղեր կան, որ ցածրադիր են, կան նաև տեղեր, որ բարձրադիր են: Ով ջուր է որոնում ցածրադիր վայրում, շուտ կգտնի, իսկ բարձրադիր վայրում ջուր փնտրողը՝ դժվարությամբ կգտնի: Այդպես է նաև անձերի դեպքում, քանզի կան անձինք, ովքեր սակավ առնչություն ունեն չարության հետ, և երբ կամենում են գիտություն ձեռք բերել, շուտափույթ ստանում են, և կան անձինք, որ լծակից են չարին, նրանք դժվարությամբ են գիտություն ձեռք բերում»:

152. Սուրբ Մակարիոսն ասաց. «Եթե չարը չի կատարվում գործով՝ չար չէ, և եթե բարին չի կատարվում գործով՝ բարի չէ: Այն մարդը, ում մեջ չկան բարի և չար խորհուրդներ, նման է սոդոմացիների և գոմորացիների երկրին, որն աղի է, և ոչինչ չի բուսում այնտեղ, իսկ բարի երկիրը կարող է ցորեն բերել, հետն էլ՝ մոլախոտ և տատասկ»:

153. Մեկն Սկյութիայից եկավ Թեբայիս և այնտեղ բնակվեց: Եվ իր համար բաղում օրերի համար բավականաչափ հաց թխեց, ինչպես որ Սկյութիայի սովորությունն էր: Թեբայեցիները եկան նրա մոտ և ասացին. «Ինչպե՞ս եք դուք պահում Տիրոջ խոսքը, որ ասում է. "Վաղվա մասին հոգ մի՛ արեք"» (Մատթ. Զ 34): Նա նրանց ասաց. «Իսկ դուք ինչպե՞ս եք անում»: Նրանք ասացին. «Մեր ձեռագործով ամեն օր գնում ենք փողոցից»: Սկյութացին ասաց նրանց. «Իմ փողոցն ու խանութը իմ խուցն է, ես իմը ամեն օր այնտեղից եմ գնում իմ վաստակով»: Նրանք գովեցին նրան և ասացին. «Իսկապես, ավելի լավ է հնարագիտությունը, քան տառացի օրինապահությունը»:

154. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսին և ասաց. «Տանջվում եմ, հա՛յր, թե ինչ համեմատության օրինակով կարող եմ հասկանալ Սուրբ Երրորդությունը և չեմ կարողանում»: Հայր Սիսն ասաց. «Իմացի՛ր, արեգակը Հոր նշանակն է, ճառագայթը՝ Որդունը, երևումը՝ Սուրբ Հոգունը: Ինչպես չես կարող հասնել արեգակի բարձրությանը, չես կարող ճառագայթը շոշափել և չես կարող երևումը քննել, առավել ևս չես կարող հասու լինել Սուրբ Երրորդությանը, քանզի բերածս օրինակը նրա ծառան է և նրա արարչության մի փոքրիկ գործը»: Եվ եղբայրը լսելով՝ փառք տվեց Աստծուն և հանդարտվեց:

155. Մի անգամ հայր Ովրի աշակերտ Պողոսը գնաց արմավենու ոստեր գնելու: Սակայն ուրիշները նախապես էին գինը վճարել, իսկ հայր Ովրը երբեք ոչ մեկին նախապես չէր տալիս գրավ, այլ ժամանակին ուղարկում էր գինը և առնում էր: Պողոսը նաև այլ տեղեր գնաց արմավենու համար, և մի պարտիզպան նրան ասաց. «Մի մարդ ինձ կանխավճար է տվել, սակայն չի եկել. այժմ դո՛ւ վերցրու սրանք»: Եվ Պողոսը, վերցնելով դրանք, եկավ ծերի մոտ և նրան նույնությամբ պատմեց: Եվ երբ ծերը լսեց, ձեռքերը խփեց իրար և ասաց. «Ովրը սրանցով չի գործի»: Եվ ներս չթողեց, այլ այնտեղից կրկին ետ ուղարկեց:

156. Հայր Մակարիոսը երբեք չէր ժպտում: Մի օր հավաքվեցին բազում դևեր և կապեցին մի ճնճղուկի թևը երկար դերձանով և ուժգին քաշելով՝ բարձրաձայն աղաղակում էին. «Քաշե՛ք, երեխանե՛ր, քաշե՛ք», սակայն ամենևին չէին կարողանում տեղից շարժել փետուրն անգամ: Այս տեսնելով՝ անապատական ծերը ժպտաց: Եվ դևերն սկսեցին ծափ զարկել և գոչել. «Վա՜յ, Մակարիոսը ժպտաց»: Մակարիոսն ասաց. «Եղկելինե՛ր և թշվառականնե՛ր, ոչ թե ժպտացի, այլ ծիծաղեցի ձեր անկարողության վրա, որ այդքան դևերդ մի ճնճղուկի կրծքի փետուրն անգամ չեք կարողանում շարժել»: Ապա փչեց ճնճղուկի և դևերի վրա, և անհետացան:

157. Ոմն ծեր՝ Եգիպտոսի Սկյութիայի անապատից, ասաց. «Պոռնկության խորհուրդ է գալիս և խռովեցնում է ինձ, անգործ ու պարապ է դարձնում, սակայն չի կարողանում գործել տալ և ոչինչ չի շահում, այլ միայն խափանում է առաքինությունը. իսկ քաջ մարդը հաստատ է մնում աղոթքի մեջ»: Այս խորհրդի մասին մեկ այլ ծեր ասաց. «Եթե խորհուրդներ չունես՝ գործերն ունես, իսկ ով գործերն ունի՝ խորհուրդներ չունի և երբեք նրանցից չի նեղվում: Կանանց հետ խոսելու սովորություն մի՛ ունեցիր»: Եղբայրն ասաց. «Իմ խորհուրդներում հին և նոր մտապատկերներ են»: Իսկ ծերը նրան ասաց. «Մեռելներից մի՛ երկնչիր, այլ կենդանիների՛ց փախիր»: Այս խորհուրդների մասին մեկ այլ ծեր ասաց. «Եթե խորհուրդներ չունենք՝ գազաններ ենք, եթե խորհուրդներ չունենք՝ համարձակություն չունենք, եթե խորհուրդներ չունենք՝ հույս չունենք: Դրա համար էլ, ինչպես թշնամին իրենն է պահանջում, մենք էլ մե՛րն ասենք. աղոթքի՛ կանգնենք, և նա կփախչի, Աստծո մտածումների մեջ ջանադի՛ր լինենք և կհաղթենք, ժուժկալությունը հաղթություն է. մարտնչե՛նք և կհաղթենք»: Այս մասին մեկ այլ ծեր ասաց. «Ննջելո՞վ ես կամենում ապրել. գնա՛ աշխատիր, գնա՛ ճգնիր, գնա՛ փնտրիր և կգտնես, արթո՛ւն կաց և բախի՛ր, և կբացվի

քեզ: Ամո՛ւր կաց և ժուժկալի՛ր, և Աստված քեզ համար կպատերազմի քո թշնամու դեմ»: Դրա մասին մեկ այլ ծեր ասաց. «Թոթափի՛ր քեզ-նից մեղքերի գարշահոտությունը և աղոթի՛ր՝ ասելով. «Որդի՛ Աստծո, օգնի՛ր ինձ»: Այսպես աղոթիր դու քո խորհուրդների համար, քանզի մենք ախտեր արմատախիլ անողներ չենք, այլ՝ դրանց դեմ պատերազ-մողներ»: Այս մասին մեկ այլ ծեր ասաց. «Այդ բոլոր ցավերն ու վշտե-րը մենք կրում ենք մեր ծուլության պատճառով: Եթե հավատանք, թե Աստված բնակվում է մեր մեջ, ապա այլևայլ խորհուրդներ չենք լցնի մեր մեջ, քանզի մեր Տեր Հիսուս է բնակվում մեր մեջ և մեզ մոտ լինելով՝ տեսնում է մեր կյանքը: Ուստի մենք էլ, կրելով Նրան և տեսնելով Նրան, չպե՛տք է ծուլանանք և պարտվենք, այլ պետք է սրբենք մեզ, քանզի նա Սուրբ է: Սրա համար եկավ Աստծո Որդին, որ-պեսզի դու ապրես. մարդ եղավ, որովհետև Աստված էր. Գիր կարդա-ցող եղավ՝ առավ Գիրքը և կարդաց՝ ասելով. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, ինչի համար և օծեց ինձ, աղքատներին ավետարանելու առաքեց ինձ (Եսայի ԿԱ 1, Ղուկ. Դ 18)*»: Կիսասարկավագ լինելով՝ չվանից խա-րազան սարքեց և բոլորին վռնդեց տաճարից* (Մարկ. ԺԱ 15, Ղուկ ԺԹ 45), *սարկավագ լինելով՝ սրբիչը կապեց մեջքին և աշակերտների ոտքերը լվաց* (Հովհ. ԺԳ 4, 5), *երեց լինելով՝ վերցրեց հացը, օրհնեց և կտրելով՝ տվեց աշակերտներին* (Մատթ. ԻԶ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19, ԻԴ 30)*: Զար-չարվեց հանուն քեզ, խաչվեց հանուն քեզ, մեռավ հանուն քեզ. դու էլ հանուն Նրա թշնամանք մի՛ կրիր եղբորդ հանդեպ: Դադարեցրե՛ք չար գործերը, դադարեցրե՛ք անպատշաճ և անվայել մտածումներ-ը: Դուրս մի՛ ելիր փարախից և գավթից, որպեսզի քո դուրս գալով՝ գայլերի կեր չդառնաս: Նստի՛ր քո տանը, աբեղա՛, սնուցի՛ր քո անձը Աստվածաշնչի խոսքով, և քեզ վարդապետ կլինեն Աստծո բարեպաշտ խորհուրդները: Ով իր անձը հանձնեց Աստծուն, նա այլևս չունի իր կամքը, այլ ինքը Աստծո կամքին է հնազանդվում, ընդունում է այն և չի չարչարվում: Իսկ եթե քո կամքը կատարես, կչարչարվես՝ քեզ գործակից չունենալով Աստծուն: Ով Աստծո կամքով է ապրում, Աստ-ված նրա հետ է. «Կբնակվեմ նրանց մեջ, կշրջեմ նրանց հետ և Աստ-ված կլինեմ նրանց, իսկ նրանք ինձ ժողովուրդ կլինեն* (Զաք. Ը 8, Երեմ. ԻԴ 7, Բարուք Բ 35)*»: Աստված հարցնում է. «Սիրո՞ւմ ես ինձ, աբեղա՛»: «Այո՛, սիրում եմ քեզ»: «Եթե սիրում ես ինձ, արա՝ ինչ կամենում եմ, ինչ չեմ կամենում՝ մի՛ արա»: Աբեղայի կյանքն այս է՝ գործ, հնազան-դություն, Աստծո խոկում, ոչ ոքի չդատել, ոչ ոքից չչարախոսել և չհպարտանալ: Գրված է. «Դուք, որ սիրում եք Տիրոջը, ատե՛ք չարու-թյունը* (Սաղմ. ՂԶ 10)*»:*

158. Հարցրեցին ծերին. «Ինչպե՞ս պահենք մեր անձերը»: Նա ասաց. «Աղոթքների, պահքերի, գործերի, ճգնությունների, տքնությունների և ողորմածությունների մեջ, ինչպես նաև՝ ունենալ խորհուրդների զատորոշում: Ասեմ քեզ. շատերը բազում բաների մեջ նեղեցին իրենց անձերը՝ առանց խորհուրդները զատորոշելու, և ոչինչ չշահեցին իրենց անձերի համար և դատարկ դնացին: Մեր բերանները հոտեցին պահքերից, Ս. Գիրքը անգիր արեցինք, Դավթի սաղմոսները երգեցինք, սակայն այն, ինչ պահանջում է Աստված՝ սեր և խոնարհություն, չունե՛նք մեր մեջ: Ինչպես որ անհնար է որևէ մեկին տեսնել՝ դեմքով լինելով պղտոր ջրի մեջ, այնպես էլ անձը՝ եթե չսրբվի այլանդակ և չար խորհուրդներից, հստակ մտահայեցողությամբ չի կարողանա աղոթք մատուցել Աստծուն»:

159. Ոմն եղբայր նեղեց ծերին՝ հարցնելով. «Ի՞նչ անեմ իմ մեջ բնավորված խորհուրդների հետ»: Ծերը նրան ասաց. «Դու անձրևաջրի ջրհորի պես ես, որ երբեմն անձրևներից լցվում է, երբեմն հանվելով՝ պակասում է: Ինչո՞ւ ավելի շատ նման չես այն աղբյուրին, որը երբեք չի պակասում: Ժուժկալությունը հաղթություն է, հաղթությունը՝ համբերություն, իսկ համբերությունը կյանք է, կյանքն՝ արքայություն, իսկ արքայությունը՝ Աստված»:

160. Անապատում բնակվող աբեղային իր ազգականները լուր ուղարկեցին, թե. «Հայրդ ծանր հիվանդ է և մերձիմահ է, ե՛կ, որ նրա ժառանգությունն ստանաս»: Եղբայրը նրանց ասաց. «Ես նրանից առաջ մեռա աշխարհի համար: Մեռելը մեռելից ժառանգություն չի ստանում»:

161. Մի եղբայր հարցրեց ծերին. «Ասա՛ ինձ, հա՛յր, ինչպե՞ս ապրեմ»: Իսկ ծերն, իր ձեռքերը բարձրացնելով, ասաց. «Այսպես պետք է աբեղան ապրի՝ աշխարհի նյութից մերկ: Ըմբիշը նկրտում է մրցանակի, իսկ աբեղան չար խորհուրդների մեջ խաչում է իր ձեռքերը՝ աղաղակելով առ Աստված: Ըմբիշը մարտի մեջ մերկ է, մերկ և անինչ, և միայն ձեթով է օծված և իր մարզիչի կողմից՝ ուսանած, թե ինչպես պետք է կռվել: Գալիս է հակառակորդը և նրա դեմքին ավազ է շպրտում, որպեսզի հեշտությամբ բռնի նրան: Նույնի մեջ նաև քեզ տե՛ս, աբեղա՛. մեր վերակացուն Աստված ինքն է, որ մեզ հաղթություն է տալիս և Ինքն էլ հաղթում է մեզ հետ, որովհետև կռվողը մենք ենք, մարտնչողը՝ սատանան, իսկ ավազը աշխարհիկ հարստություններն են: Տեսնո՞ւմ ես թշնամու մարտարվեստը. մնա՛ անինչ և կհաղթես: Քանզի եթե միտքը նյութականի շնչով ծանրանա, իր մեջ չի կարող

ընդունել Աստծո սուրբ և աննյութական խոսքը: Ճանաչի՛ր ինքդ քեզ, աբեղա՛, խոնարհությո՛ւն ստացիր, և երբեք չես ընկնի»:

162. Ոմն եղբայր հարցրեց ծերին կյանքի մասին: Նա ասաց նրան. «Խո՛տ կեր և խո՛տ հագիր, սակայն սիրտդ երկաթյա՛ թող լինի: Աբեղան պարտավոր է ամեն երեկո և առավոտ քննել իր անձը և ասել. «Ի՞նչ գործեցի, որ հաճելի էր Աստծուն, կամ ի՞նչ գործեցի, որ հաճելի չէր Աստծուն», և այսպես պետք է խորհի իր կյանքի բոլոր օրերին: Այսպիսին պետք է լինի աբեղան. ամեն օր ջանա կանգնել Աստծո առաջ առանց մեղքերի և այնպես աղոթի առ Աստված, որպես թե Նա մերձ է, և արդարև Նա մոտ է: Մի՛ դիր քեզ վրա այլ օրենքներ և մի՛ դատիր երբեք որևէ մեկին, որովհետև օրենքի տակ չենք, այլ՝ շնորհի՛: Ով բոլոր եղբայրներին չընդունի հավասար, այլ խտրականություն դնի նրանց միջև, այդպիսին չի կարող կատարյալ լինել: Բոլոր առաքինությունների սկիզբը խոնարհությունն է, իսկ ախտերի սկիզբը՝ փառասիրությունը: Առաքինությունների գլուխն ու պսակը սերն է, իսկ ախտերի գլուխը՝ ինքնաարդարացումը»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

163. Ոմն եղբայր ասաց հայր Անտոնիոսին. «Աղոթի՛ր ինձ համար, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ո՛չ ես կողորմեմ քեզ, ո՛չ էլ Աստված, եթե դու ինքդ չջանաս և սիրով չխնդրես Աստծուն»:

164. Մի անգամ նամակ ստացավ հայր Անտոնիսը՝ Կոստանդիանոս արքայի կողմից, թե. «Ե՛կ ինձ մոտ՝ Կոստանդինուպոլիս, որպեսզի օրհնվեմ քեզանից»: Խորհում էր իր մտքում, թե ինչ անի, ապա հարցրեց իր աշակերտ Պողոսին, թե արդյոք պե՞տք է գնա: Պողոս Պարզամիտը նրան ասաց. «Եթե գնաս, Անտոնիոս կկոչվես, եթե չգնաս, հայր Անտոնիոս կկոչվես»:

165. Հարցրեց հայր Մարկոսը հայր Արսենիոսին և ասաց. «Ինչո՞ւ է այդպես, որ ոմանք թեև բարի մարդիկ են, սակայն մահվան ժամին նրանց հոգիները մեծամեծ վշտերով են դուրս գալիս մարմնից»: Պատասխանեց ծերը և ասաց. «Նրա համար, որ այստեղ աղացած աղի պես են լինում, իսկ այնտեղ գնում են իբրև կատարյալ սրբեր»:

166. Ասաց դարձյալ հայր Անտոնիոսը. «Բարկացողը եթե մեռելին անգամ հարություն տա, Աստծուն ընդունելի չէ: Եվ եթե մեկը սերտ

բարեկամս լինի և ինձ ձգտի ծուլության մեջ գցել, ինձնից կհեռացնեմ նրան»:

167. Երեք եղբայրներ մի անգամ գնացին հայր Աքիլայի մոտ, որոնցից մեկը բարի համբավ չուներ: Եղբայրներից մեկը հայր Աքիլային ասաց. «Հա՛յր, ինձ համար ուռկա՛ն գործիր»: Ծերն ասաց. «Ձե՛մ գործի»: Եվ երկրորդը դարձյալ ասաց. «Հա՛յր, մեզ համար ուռկա՛ն հյուսիր, որպեսզի այն պահենք մեր վանքում՝ ի հիշատակ քո սիրո»: Ծերն ասաց. «Պարապ չեմ այդ անելու համար»: Այնժամ նաև այն չարանուն եղբայրը խնդրեց. «Հա՛յր, չնո՛րհ արա և մեզ համար ուռկա՛ն հյուսիր, որպեսզի այն որպես օրհնություն վերցնենք քո ձեռքից»: Ծերն ասաց. «Ես քեզ համար ընտիր ուռկան կգործեմ»: Երբ առանձին մնացին, հարցրին նրան այն երկու եղբայրները և ասացին. «Ասա՛ մեզ, հա՛յր Աքիլա, ինչո՞ւ այդպես արեցիր: Մենք աղաչեցինք քեզ՝ մեզ համար ուռկան հյուսել, իսկ դու չկամեցար անել, իսկ երբ այս վատանուն եղբայրը խնդրեց քեզնից՝ դու ուրախությամբ խոստացար անել նրա համար»: Ծերը նրանց ասաց. «Ես ձեզ ասացի, թե չեմ անի, և դուք չտրտմեցիք, որովհետև անարատ եք, իսկ եթե նրան ասեի, որ չեմ անելու, մտքում կխորհեր, թե ծերը լսել է մեղքերիս մասին, դրա համար էլ չկամեցավ անել, և կտրտմեր: Եվ ես այդպիսով կկտրեի նրա երկայնամտության թելը, իսկ այժմ սրանով նրա հոգին վեր հանեցի, որպեսզի առավել տրտմության պատճառով չընկղմվի անհուսության խորքերը»:

168. Հայր Ամոնի մասին ասում էին, թե նրա աշակերտները մի անգամ հիսուն կիլոգրամի չափ ալյուր աղացին իրենց կարիքների համար: Դեռ չէին էլ ճաշակել դրանից, այլ՝ դռանն էր, հայրը տեսավ, որ շահեկան գործ չէր դա և աշակերտներին ասաց. «Եկե՛ք գնանք այստեղից»: Իսկ նրանք սաստիկ տրտմեցին: Եվ երբ տեսավ նրանց տրտմած, ասաց. «Դուք տրտմած եք այս ալյուրի համար, ճշմարիտ եմ ձեզ ասում, որ ես տեսա ոմանց, որ փախան և թողեցին ոսկեձեղուն տներ և հանդերձներով լի պահարաններ, հարստությամբ լի գանձարաններ և դռներն անգամ չկարողացան փակել, այլ մազապուրծ փախան, և նրանց տներն էլ մնացին հեռվում»:

169. Ոմն եղբայր իր սենյակն ու գյուղը թողեց հայր Գելասիոյին: Նա Պաղեստինի Նիկոպոլսից էր և մեռնելիս դրանք ավանդեց հայր Գելասիոյին: Այդ ժամանակ Նիկոպոլսում կար մի մեծ իշխան, որին կոչում էին Վակատոս: Իսկ ծերի մշակը, որ գյուղում էր, երբ լսեց ծերի վախճանը, պատմեց իշխան Վակատոսին ծերունու մահը և նրա

տան ու գյուղի մասին: Վակատոսը կամեցավ բռնությամբ հայր Գելասիոյից վերցնել այն տունն ու գյուղը, իսկ հայր Գելասիոն ընդդիմացավ նրան և ասաց. «Կրոնավորի տունն ու գյուղը հավիտյան չեմ տա որևէ աշխարհականի»: Վակատոսը հափշտակեց հայր Գելասիոսի ջորիները, որ գյուղից էին գալիս և բեռնված էին կտավատով, և ջորիները նորից ետ վերադարձրեց: Հայր Գելասիոսը, զանց առնելով բեռները, նրան չթողեց գյուղ մտնել: Եվ Վակատոսը, նեղացած դրանից, ճանապարհ ընկավ դեպի Կոստանդինուպոլիս՝ ցամաքային ճանապարհով: Երբ հասավ Անտիոքիա, լսեց հայր Սիմեոնի մասին, որ լեռանն էր բնակվում և սքանչելի այր էր ու փայլում էր արեգակի նման, և բարձրացավ լեռը՝ տեսնելու նրան և օրհնություն ստանալու նրանից: Երբ հասավ այնտեղ, մտավ վանքը, իսկ հայր Սիմեոնը սյունի վրայից հարցրեց նրան. «Որտեղի՞ց ես դու, մա՛րդ, որտեղի՞ց ես գալիս կամ ո՞ւր ես գնում»: Վակատոսը պատասխանեց սրբին և ասաց. «Պաղեստինից եմ գալիս, հա՛յր, և Կոստանդինուպոլիս եմ գնում»: Հայրը նրան ասաց. «Ի՞նչ պատճառով, եղբա՛յր»: Վակատոսը պատասխանեց. «Բազում պատճառներով, և հույս դնում եմ Ձեր սուրբ աղոթքների վրա, որ կրկին ետ եմ վերադառնալու՝ երկրպագելու Ձեզ»: Ասաց նրան հայր Սիմեոնը. «Անհո՛ւյս, ինչո՞ւ ճշմարիտը չես ասում ինձ: Դու Աստծո մարդուն մատնելու համար ես գնում, սակայն դա քեզ չի հաջողվի, և քո տունն էլ այլևս չես տեսնի: Լսի՛ր ինձ, դարձի՛ր այստեղից և գնա՛ Աստծո մարդու մոտ և նրա առջև ընկած՝ թողությո՛ւն խնդրիր նրանից, եթե այնտեղ կենդանի հասնես»: Նույն պահին մահացու ջերմություն տիրեց նրան, իսկ ովքեր նրա հետ էին, վերցրին նրան և նավը դնելով՝ հետը գնացին ըստ սրբի խոսքի, որպեսզի գյուղը թողնի հայր Գելասիին և թողություն խնդրի նրանից: Սակայն երբ հասան Բյուրիտ քաղաքը, Վակատոսը մեռավ և չտեսավ իր տունը՝ սրբի խոսքի համաձայն:

170. Հայր Դանիելի մասին ասում էին, թե երբ բարբարոսները եկան Սկյութիա, բոլոր եղբայրները փախան, իսկ ծերն ասաց. «Եթե Տերը չի հոգում իմ մասին, ինչո՞ւ եմ մնում այստեղ»: Եվ անցավ բարբարոսների միջով, ու նրան ոչ ոք տեսավ, և իր մտքում ասաց. «Ահա հոգաց Տերը, և չմեռար: Սակայն դու էլ ես մարդկային կերպով վարվում և փախչում ես, ինչպես որ մեր մյուս եղբայրները փախան»:

171. Հայր Դանիելն ասաց, թե որքան պարարտանա մարմինը, այնքան կնվազի հոգին, և որքան տկարանա մարմինը, այնքան կպարարտանա հոգին:

172. Հարցրին հայր Եպիփանին, թե բավական կլինի՞ մի արդարի աղաչանքը Աստծուն՝ մի հանցավորի համար: Եվ նա պատասխանեց. «Այո՛, ինչպես որ Աբրահամը Սոդոմի համար եղավ, քանզի Տերն ինքն է ասում. «Եթե գտնվի թեկուզ մի հոգի, որ դատաստան, ողորմություն և իրավունք անի, նրա համար կթողնեմ ողջ ժողովրդին» (հմմտ. Ծննդ. ԺԸ 23-32)*»:*

173. Հայր Զենոնի մասին ասում էին, թե փոքր-ինչ ուսանած էր Ս. Գիրքը և ցամաքած էր մարմնով, սակայն մտքով արագ էր, Աստծո սիրո մեջ՝ ջերմ և հոժարակամ. մարդկանց նկատմամբ նույնպես սեր և գութ ուներ, որի համար էլ ամեն կողմերից նրա մոտ էին գալիս մենակյացներ ու աշխարհիկ մարդիկ, քննում էին իրենց խորհուրդները, խոստովանություն էին անում և շինված գնում: Հայրերից մեկը հայր Զենոնին մոտ էր բնակվում, որի հետ մենք խոսեցինք, և նա մեզ բազում բաներ ասաց՝ հոգու համար շահեկան: Մենք նրան հարցրինք խորհուրդների մասին և ասացինք նրան. «Եթե մեկը մեղքերի չար խորհուրդներ ունենա և տեսնի, որ ինքը հաղթված է դրանցից, բազում անգամ կարդա հայրերի խոսքերը և լսի, թե ինչ են ասում նրանք սրբության մասին, կամենա դառնալ այդ մեղքերից և չկարողանա, ի՞նչ պետք է անի: Բարի՞ է, եթե այն պատմի հայրերից մեկնումեկին, կամ՝ բավական կլինե՞ն իրեն գրություններն ու իր խղճմտանքը»: Ծերն ասաց մեզ. «Խոստովանելն իսկապես անհրաժեշտ է, սակայն այնպիսի մեկին, ով կարող է օգնել նրան, որովհետև ամեն մեկին չէ, որ արժե վստահել անձը, հատկապես նրան, ով իր անձին իսկ չի կարողանում օգնել, առավել ևս երբ նա բռնված է ինչ-որ ախտով և ծառայում է դրան: Երիտասարդ տարիքից ինձ պատահեց այդպիսի փորձություն, և հաղթվում էի դրանից: Լսեցի հայր Զենոնի մասին, թե շատերին է բժշկել: Ես ևս կամեցա գնալ և պատմել նրան, սակայն դևը չէր թողնում ինձ և ասում էր. «Քանի որ դու գիտես այդ ամենը, ինչ որ ընթերցել ես, և դու գիտես, թե ինչ պետք է անել, այլևս մի՛ գնա, որպեսզի ծերին չգայթակղեցնես քեզանով»: Եվ երբ մտադրվում էի գնալ, դադարում էր իմ մեջ պատերազմը, և երբ մտադրվում էի չգնալ, դարձյալ խռովվում էի: Բազում անգամ գնացի ծերի մոտ, որպեսզի պատմեմ, սակայն թշնամին թույլ չէր տալիս, քանզի խիստ ամաչում էի և մտքումս ասում. «Ես ինքս էլ գիտեմ ինձ բժշկել, ի՞նչ շահ ունեմ որևէ մեկին ասելուց: Ես գիտեմ հայրերի խոսքը, միայն թե ծույլ եմ և հեղգ»: Այսպես խաղաց ինձ հետ ոսոխը բազում անգամ, որպեսզի չպատմեմ իմ մեղքը և չբուժվեմ: Այս բանը գիտեր և ծերը, որ ծածուկ

խորհուրդ ունեմ և չեմ կարողանում հայտնել նրան, և չէր հանդիմանում ինձ, քանզի սպասում էր, որ ինքս խոստովանեմ այն, և միշտ ինձ բարի կենցաղավարություն էր ուսուցանում և արձակում: Հետո արտասվելով՝ ասացի ինքս ինձ. «Զե՛ս կամենում բժշկվել. ուրիշները հեռվից են գալիս ծերի մոտ և բժշկվում են, իսկ դու չե՞ս ամաչում, որ քո կողքին է բժիշկը ու չես բժշկվում»: Եվ վեր կենալով գնացի նրա մոտ՝ ճանապարհին մտքումս ասելով, թե՝ եթե մենակ լինի, ամեն ինչ կպատմեմ նրան: Երբ գնացի, այնտեղ ոչ ոք չկար: Եվ երբ ծերը տեսավ ինձ, ուսուցանեց սովորականի պես և կամեցավ արձակել ինձ, հետո եկավ մինչև դուռը, իսկ ես դարձյալ ամաչում էի խոստովանել և խորհում էի մտքումս՝ ասե՞մ, թե՞ չասեմ: Եվ ծերը նայելով ինձ՝ բախեց սիրտս և ինձ ասաց. «Ինչո՞ւ ես վշտանում, ասա՛ ինձ՝ ինչ որ ունես մտքումդ, որովհետև ես էլ մարդ եմ՝ կրքերի ենթակա»: Ես, ընկնելով նրա ոտքերը, ասացի. «Ողորմի՛ր ինձ, տե՛ր իմ»: Նա ասաց. «Ի՞նչ կա, որդյա՛կ»: Ես ասացի. «Դու գիտես իմ նեղությունը»: Նա ասաց. «Դո՛ւ պետք է ասես, թե ինչ կա»: Իսկ ես ահով ու պատկառանքով պատմեցի իմ մեղքերը: Նա ասաց ինձ. «Ինչո՞ւ էիր ամաչում, ասա՛ ինձ: Ես ևս մարդ եմ՝ բազում մեղքերի պարտական, և եթե կամենում ես՝ կպատմեմ քեզ իմ բոլոր մեղքերը: Քոնը գիտեի ես նախապես և այժմ հարցնում եմ՝ երեք տարի չէ՞, որ այդ խորհուրդների մեջ ես, որ գալիս էիր ինձ մոտ և չէիր խոստովանում»: Այնժամ ես աղաչեցի նրան և ասացի. «Ողորմի՛ր ինձ»: Իսկ նա ինձ ասաց. «Գնա՛ և մի՛ ծուլացիր քո աղոթքների մեջ և ոչ ոքի մի՛ դատիր»: Եվ ես վերադարձա իմ խուցը, չծուլացա իմ աղոթքների մեջ, և Աստծո շնորհներով ու ծերի աղոթքներով այլևս չնեղվեցի այն ախտից: Մեկ տարի անց ինձ խորհուրդ եկավ և ասաց. «Աստվա՛ծ ինձ ողորմություն արեց Իր բազում գթությամբ, և ոչ թե ծերից օգուտ եղավ ինձ»: Գնացի նրա մոտ ու կամենում էի փորձել նրան: Առանձին մնալով նրա հետ՝ ծնրադրեցի ու ասացի. «Աղոթի՛ր ինձ համար առ Աստված, որպեսզի հեռացնի ինձանից այն խորհուրդը, որ երբևէ պատմեցի քեզ»: Իսկ նա, ընկած թողնելով ինձ, փոքր-ինչ լռեց և ասաց. «Արի՛ դու խոհեմություն ձեռք բեր»: Երբ լսեցի այդ, կամենում էի, որ երկիրը կուլ տար ինձ: Վեր կենալով՝ չէի համարձակվում ծերի երեսին նայել, և գնացի իմ խուցը»:

174. Եվ դարձյալ մեր օգտի համար ծերը պատմեց մեզ հետևյալը, թե երկու եղբայրներ կային. յուրաքանչյուրի սենյակն՝ առանձին, և երբեմն այցելում էին միմյանց: Մի օր մեկն ասաց մյուսին. «Կարիք ունեմ գնալու հայր Զենոնի մոտ և պատմելու նրան իմ խորհուրդնե-

ը», և վեր կենալով երկուսն էլ միասին գնացին հայր Զենոնի մոտ, և նրանցից յուրաքանչյուրը պատմեց իր խորհուրդները: Նրանցից մեկը արտասուքներով ընկավ նրա առջև և աղերսում էր նրան: Նա ասաց. «Գնա՛ և ոչ ոքի մի՛ դատիր և աղոթքների մեջ մի՛ ծուլացիր»: Եվ վերադառնալով՝ այդ եղբայրը բժշկվեց իր խորհուրդներից: Երկրորդ եղբայրը երբ խոստովանեց, ասաց. «Աղոթի՛ր ինձ համար, հա՛յր»: Նա չխնդրեց ջերմ արտասուքներով ու ցավագնած սրտով՝ ինչպես առաջինը: Մոտ մեկ ժամ անց հանդիպեցին միմյանց եղբայրները, և մեկը հարցրեց մյուսին. «Երբ գնացինք ծերի մոտ խոստովանության, դու պատմեցի՞ր նրան քո խորհուրդները»: Նա ասաց. «Այո՛, ամեն ինչ պատմեցի»: Եվ դարձյալ հարցրեց. «Եվ շահեկա՞ն եղավ քեզ համար»: Պատասխանեց. «Այո՛, ծերի աղոթքներով Տերը բժշկեց ինձ»: Նա ասաց. «Ես թեպետ և խոստովանեցի, սակայն ոչ մի օգուտ չստացա»: Բժշկված եղբայրը նրան հարցրեց. «Եվ ինչպե՞ս խնդրեցիր թողություն»: Նա ասաց. «Խոսքով և ոչ արտասուքներով»: Ասաց նրան մյուսը. «Ես իմ խոստովանության ժամանակ նրա ոտքերն արտասուքներով թրջեցի և ցավագնած սրտով խնդրեցի աղոթել ինձ համար, և նրա աղոթքներով բժշկվեցի»: Սա մեզ ասում էր ծերը, որպեսզի մեզ սովորեցնի, թե ով հորը հայտնում է իր խորհուրդները, պետք է ջերմեռանդ արտասուքներով և ցավագնած սրտով խոստովանի, և նրա աղոթքներով օգնություն խնդրի, իսկ ով հանդուգն ձևով և ծուլորեն խոստովանի՝ շահելու փոխարեն առավել ևս կտանջվի:

175. Հայր Եսայիասն ասաց. «Անմեղությունը և անձը ոչինչ համարելը սրբում են սիրտը չար խորհուրդներից: Ով եղբայրների հետ շրջում է նենգությամբ և խարդախությամբ, նրանից անպակաս են ցավն ու սրտի տրտմությունը: Ով բերանով ասի մի բան, բայց սրտում ունենա մեկ այլ բան, նրա ճգնություններն իզուր են: Այդպիսի մարդուն մոտ մի՛ եղիր, որպեսզի նրա մահաբեր թույնից վարակված՝ չծուլանաս: Փառքն ու հանգիստը մարդու հետ պատերազմում են մինչ ի մահ, սակայն չպետք է զիջել նրանց»:

176. Գնաց ծերերից մեկը հայր Թեոդորոսի մոտ և ասաց նրան. «Ահա այսինչ եղբայրը դարձյալ գնաց աշխարհ»: Իսկ ծերը պատասխանեց նրան. «Մի՛ զարմացիր դրա վրա, այլ զարմացի՛ր, եթե լսես, թե մեկը կարողացել է ազատվել շնության ցանկությունների չար վիշապի բերանից»:

177. Նույն այս հայր Թեոդորոսը գնաց մի անգամ հայր Հովհաննեսի մոտ, որը ներքինի էր իր մոր որովայնից: Մինչ խոսում էին միմյանց

հետ՝ ասաց. «Երբ ես Սկիտեում էի, հոգու մասին հոգ տանելն էր իմ գործը, իսկ ձեռագործն ավելորդ էի համարում: Այժմ հոգու գործը դարձել է երկրորդական, իսկ ձեռագործը կարևոր է դարձել, որովհետև չկա ավելի մեծ առաքինություն, քան ինքն իրեն արհամարհելը»:

178. Ոմն եղբայր հարցրեց հայր Հովսեփին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև չեմ կարողանում ճգնել, հսկել և չարչարել մարմինս, ոչ էլ կարողանում եմ գործել, որպեսզի դրանով ողորմություն տամ»: Ասաց նրան ծերը. «Եթե այդ երկուսից և ոչ մեկը չես կարողանում կատարել, ապա պահի՛ր քո միտքը ընկերոջդ դատելուց, մի՛ քննիր ոչ մեկին և ոչ մի գործ, և դրանով կփրկվես՝ Աստծո կամքով»:

179. Մեկ այլ եղբայր պատմում էր. «Գնացի ես Իրակլիա երկրի կողմերը՝ հայր Հովսեփի մոտ: Նա ընտիր թզենիներ ուներ տնկած և այլ բարիքներ՝ իր վանքում: Թզի ժամանակն էր, և առավոտյան ծերն ինձ ասաց. «Գնա՛ թզենիների պուրակը և թո՛ւզ կեր»: Քանի որ օրը ուրբաթ էր, ես պահքի պատճառով չգնացի և ընկնելով նրա առաջ՝ ասացի. «Հա՛յր, հանուն Տիրոջ սիրո հայտնի՛ր ինձ, թե ինչ մտքով ինձ ասացիր, որ առավոտյան գնամ թուզ ուտեմ: Ես պահքի պատճառով չգնացի, բայց վախենում եմ քո պատվիրանները լուծարելուց և խորհում եմ մտքումս, թե ինչո՞ւ համար պետք է ծերն ինձ պատվիրեր անել այդ, կամ ի՞նչպես պետք է վարվեի այդ պատվիրանի հետ»: Իսկ ծերն ինձ ասաց. «Հայրերը եղբայրներին երբեք հապճեպ ճիշտ բաներ չէին ասում, այլ՝ թյուր, իսկ երբ տեսնում էին, որ նրանք անմիջապես այդ սխալ բանը կատարում են, այլևս դրանից հետո սխալ բաներ չէին ասում, այլ միայն՝ ճշմարիտը, քանզի այդպես փորձելով՝ իմանում էին, թե ամեն ինչում հնազանդ են իրենց»: Ծերին ասացի. «Հա՛յր, կամենում եմ դուրս գալ եղբայրների միաբանությունից և մենակյաց դառնալ»: Ծերն ասաց ինձ. «Որտեղ տեսնես՝ անձդ հանդարտվում է և չի վնասվում՝ այնտեղ էլ ապրիր»: Ասացի. «Ե՛վ եղբայրների միաբանության մեջ է ինձ համար շահեկան, և՛ առանձին, իսկ դու ո՞րը խորհուրդ կտաս, որ անեմ»: Եթե, – ասաց ծերը,– և՛ եղբայրների միաբանության մեջ, և՛ առանձին՝ քո անձը շահում է՝ կշռադատի՛ր դու այդ երկու խորհուրդները, որ կողմը որ թեքվի քո միտքը, և այն համարես առավել շահեկան՝ այդպե՛ս արա:

180. Մի անգամ ես և Սոփրոնիոսը գնացինք հայր Հովսեփի մոտ, և նա ուրախությամբ ընդունեց մեզ: Հայրը բոլոր առաքինություններով զարդարված էր, գիտեր նաև օտար ուսմունքները: Մինչ նստած հոգեշահ բաներից էինք խոսում, այդ պահին եկավ ոմն քրիստոսասեր աշ-

խարհիկ մարդ՝ Իլայայից, և ծերին բերեց երեք դահեկան ու ասաց. «Վերցրո՛ւ սա, պատվակա՛ն հայր, և աղոթի՛ր իմ նավի համար, որովհետև արդեն բեռնել եմ և Եթովպիա եմ գնում»: Ծերը, սակայն, ընավ չնայեց նրան: Սոփրոնիոսն ասաց նրան. «Հա՛յր, վերցրո՛ւ այդ և կտաս եղբայրներից ում անհրաժեշտ է»: Ծերը նրան ասաց. «Կրկնակի ամոթ կլինի, որդյա՛կ, եթե վերցնեմ այդ. նախ՝ ի՛նձ հարկավոր չէ, երկրորդ՝ իմ ձեռքով հանած կլինեի ուրիշի փուշը: Մեծ բարիք կլիներ ինձ, եթե ես կարողանայի ի՛մ անձի փշերը մաքրել, որովհետև գրված է. «Եթե սերմանես, քո՛նը սերմանիր, քանզի օտարինը դառն է որոմի նման»: Հատկապես, որդյա՛կ, որ նա ոչ թե հոգու համար է խնդրում, այլ՝ նավի համար»: Սոփրոնիոսը նրան հարցրեց. «Մարդ ինչ էլ որ անի հանուն Աստծո, մի՞թե ողորմություն չի համարվի այն»: Ծերն ասաց նրան. «Ողորմությունները բազմատեսակ են, որովհետև մեկը ողորմություն է անում, որպեսզի իր տունը օրհնվի, մեկ ուրիշը ողորմություն է անում, որ իր նավը պահպանվի, և Աստված պահպանում է նրա նավը: Ուրիշ մեկը ողորմություն է անում իր որդիների խաղաղ կեցության համար, և Աստված շնորհում է դա նրան, մեկ ուրիշն էլ ողորմություն է անում, որ ինքը փառավորվի, և Աստված փառավորում է նրան, որովհետև Աստված ոչ մեկին չի մոռանում, այլ ամենքին էլ տալիս է խնդրածներն՝ ըստ հայցողների կամքի, եթե դրանից չի վնասվում նրանց հոգին: Արդ, սրանք բոլորն առձեռն ստացան իրենց արած ողորմության վարձքը և ոչինչ չտվեցին Աստծուն հանդերձյալ կյանքի համար: Դրա համար այնտեղ Նրանից ոչինչ չեն խնդրում, և ոչինչ էլ չեն ստանում, քանզի ողորմությունը, որ տվեցին, հանուն հոգու և հանդերձյալ կյանքի չէր, այլ՝ հանուն մարմնի և կենցաղի: Ուրեմն քննի՛ր խորագիտությամբ. մեկը ողորմություն արեց, որպեսզի իր տունը օրհնվի, և օրհնվեց ու բարիքով լցվեց, կամ նավի համար արեց, և նավը խաղաղությամբ վերադարձավ, կամ որդիների համար արեց, և Աստված առողջ կյանք տվեց, կամ փառքի համար ողորմություն արեց, և Աստված փառավորեց նրան: Ուրեմն էլ ի՞նչ է պարտք նրան Աստված: Սակայն եթե դու ապրել ես ուզում, ողորմություն արա քո հոգու փրկությա՛ն համար, և Աստված կապրեցնի քո անձը, որովհետև գրված է. «Աստված ըստ քո սրտի կտա քեզ» (Սաղմ. ԺԹ 5)*: Եվ բազում մեծահարուստ մարդիկ կան, որոնք կարծում են, թե ողորմություն են անում, սակայն ավելի են բարկացնում Աստծուն, քանզի հափշտակածն ու վաշխառությունից ստացածն են տալիս որպես ողորմություն: Չէ որ Աստծո օրենքում գրված է, որ պտուղներից առաջինները և լավագույնները ընծայաբերվեն Աստծուն՝ ցորենի, գինու, ձեթի*

և բոլոր սերմերի ու պտուղների ընտիրը: Այդպես և մարդկանց անդրանիկները, այդպես և ոչխարների հոտերից և անասուններից անբիծներն ու լավագույնները, որոնց ականջները կտրված չեն և կոտրված եղջյուրով չեն, ոտքերը խեղված չեն, այլ ամեն ինչով կատարյալը պետք է ընծայվի Աստծուն: Իսկ մեծահարուստներն այսպես չեն անում, այլ՝ հակառակը, քանզի լավագույնն իրենք են ուտում, իսկ խոտանն ու վատթարը տալիս են աղքատներին, ընտիր ու ծաղկահոտ գինին իրենք են ըմպում, իսկ քացախածը աղքատներին են բաժանում, այդպես նաև հագուստների հինն ու պատառոտվածն են տալիս նրանց, իսկ իրենք բազմագույն զգեստներով են պճնվում: Նեխած և հոտած միրգն աղքատներին են բաշխում, ընտիրն իրենք են ուտում, իսկ այսպիսի կայենական ամեն ընծա անընդունելի է Աստծուն: Նույնպես և վայելչատես որդիներին ու գեղեցկատես դուստրերին են պատրաստում ամուսնության, հաշվում են ծախսերը և ջանում են հարուստ ու գեղեցիկ փեսաների կնության տալ և նույնպիսի հարսներ բերել: Եթե որևէ մեկը միաչքանի է, խեղանդամ կամ չորչորուկ, տգեղ ու գարշելի, հենց նրան են Աստծուն բաժին հանում, և եթե արական սեռի է՝ վանք, իսկ եթե իգական սեռի է, կուսանոց են ուղարկում: Սակայն նրանք պարտավոր են մտածել, որ եթե մահկանացու մարդուն որևէ մեկը կամենում է ինչ-որ բան շնորհել և նրան պատվել, իր ունեցած ամենապատվականներից է ընծայում նրան, հապա ամենի արարիչ Աստծուն ինչո՞ւ չես անում այդ նույնը, որպեսզի լավագույնն ընծայես այն ամենից, որ Նա տվեց մեզ: Հայտնի է, որ այս օրինակով Աստված մեզանից մեր աղոթքների բանավոր պաշտամունքն է պահանջում. ոչ այն պատճառով, որ ինքը մեր գովեստի կարիքն ունի, այլ՝ որպեսզի մեզ սովորեցնի գոհանալ մեր փրկության համար և ողջ սրտով սիրել Աստծուն, որպեսզի ինչ էլ որ խոստանանք Աստծուն, դրա մեջ չստենք, այլ երկյուղածությամբ և փութով մատուցենք: Օրինակ՝ Նոյի ընծաները գոլորշի և ծուխ լինելով՝ ընդունելի եղան Աստծուն՝ նրա բարեմտության և սրտի անբծության համար: Իսկ չարամիտ մարդու ընծաները եթե պատվականագույն էլ լինեն՝ Աստված գարշելի կհամարի: Եվ լսի՛ր, թե ինչ է ասում մարգարեն հրեաներին. «Ձեր խունկերը գարշելի են ինձ համար»: Տեսնո՞ւմ եք, որ Աստված ընծայողի մտքին է նայում: Որովհետև այնտեղ մատուցողի միտքը ծուխն անուշահոտության փոխեց, իսկ այստեղ հրեաների մտքերի չարությունն ու պղծությունն անուշահոտ խունկերի ծխարձակումը գարշելի դարձրին Աստծո առաջ: Ուրեմն ամեն մարդ պարտավոր է սիրել իր կյանքը, որպեսզի իր ողորմությունն ու ճգնությունը ոչ միայն փութաջանու-

թյամբ անի, այլև ինչ ընծայում է Աստծուն՝ առավելագույնն ու պատվականագույնն ընծայի, որպեսզի մեր աղոթքներն ու ողորմություններըը ամոթով մեր գիրկը չվերադառնան, որպեսզի մեր պատարագը պիղծ և արատավոր չլինի, ինչպես Կայենինը»: Մենք այս խոսքերից հետո հարցրինք նրան, թե կվնասվի՞ անձը, եթե խորհուրդների հետևից գնա: Նա մեզ ասաց. «Եթե չար ու խենեշ խորհուրդներից չվնասվի անձը, ապա աստվածասեր և սուրբ խորհուրդներից ոչինչ չի շահի: Ինչպես որ բարի խորհուրդը շահ է, այնպես և չար խորհուրդը վնաս է, քանզի եթե մենք արտաքուստ բյուրապատիկ խաղաղություն ունենանք, սակայն ներքուստ խռովվենք պիղծ խորհուրդներից, մենք ոչ մի շահ չենք ունենա արտաքին խաղաղությունից և հանդարտությունից, ինչպես քաղաքը չի կարող օգուտ ունենալ ամրակուռ պարիսպներից, եթե բնակիչներն այն մատնել են թշնամուն: Եթե մեր սիրտը ետ պահենք չար խորհուրդների ետևից գնալուց, մեծամեծ պարգևներ կստանանք, որ խոստացավ մեզ մեր Տերը, որ մեր մտքից վեր է: Երկնքի արքայության փափկություն և անպատմելի բարիքներ կոչեմ, որ ստանալու են ընտրյալները Աստծո աջից, բնակություն երանելի հրեշտակների դասերի հետ և ազատում դառը տանջանքներից և սոսկալի հրից: Այսպիսի հանգիստ և վայելքներ և այլ բազում բարիքներ, որ ո՛չ աչքը տեսավ, ո՛չ ականջը լսեց, ո՛չ մարդկային սիրտը զգաց, որ պատրաստեց Աստված իր սիրելիների համար, ո՛չ վախճան կա, ո՛չ փոփոխում և ո՛չ նվազում, այլ ամենը կատարյալ է, հաստատուն և զորեղ՝ անբավ հավիտյանների մեջ»: Եվ նայելով մեզ՝ տեսավ մեր երկմտությունը իր վարդապետության նկատմամբ: Այնժամ մեր և բոլորի առաջ վեր կենալով՝ դեպի երկինք բարձրացրեց իր աչքերն ու ձեռքերը և ի լուր բոլորի՝ ասաց. «Հիսո՛ւս Քրիստոս, Բան և Որդի կենդանի Աստծու, որ արարեց երկինքը և երկիրը, ծովը և ամեն ինչ, որ կա նրանց մեջ, մեր հոգիների փրկիչ և ազատարար, եթե դատարկ և սուտ են իմ խոսքերը, որ ասացի ես այս իմ եղբայրներին, անվնաս թող մնա ժայռն այս, որ կանգնած է մեր առաջ: Եթե արդար են, հավատարիմ և ճշմարիտ՝ թո՛ղ պատռվի այս ժայռը»: Եվ նույն պահին, ըստ ծերի խոսքի, պատռվեց ժայռը հինգ մասի. և դեռևս այնտեղ է մարմարյա սյան մի կտորը՝ մի մարդու չափ: Մենք սոսկումով հիացանք այդ սքանչելի նշանով և մեծապես շահեցինք՝ գոհանալով Աստծուց: Եվ մինչ ճանապարհում էր ծերը մեզ՝ ասաց. «Առաջիկա շաբաթը դարձյալ եկե՛ք այստեղ՝ ինձ մոտ»: Եվ մյուս շաբաթ եկանք նրա մոտ՝ օրվա երրորդ ժամին և վախճանված գտանք սուրբ ծերունուն՝ հայր Հովսեփին: Թաղեցինք նրան պատվով և փառաբանեցինք Աստ-

ծուն, որ մեզ արժանի արեց տեսնելու այսպիսի հոր և խոսելու նրա հետ, այնուհետև թաղելու նրան և սպասավորելու:

181. Հայր Հակոբն ասաց. «Առավել է օտար լինելը, քան օտարին ընդունելը: Դատարկ բան է լոկ խոսքը, այլ խոսքի հետ պետք է նաև գործ լինի»:

182. Հայր Իսիդորոսն ասաց. «Եթե ըստ օրենքի ճգնում եք, մի՛ հպարտացեք ձեր ճգնություններին վրա, որպեսզի դրանք զուր չկորցնեք: Եթե պահքի վրա հպարտանում ես, ապա միս ուտելն այդպիսի պահքից լավ է: Եթե աղոթքի վրա հպարտանում ես, անպիտան ես դարձնում այն. այդպես է և ամեն տեսակ ճգնություն: Դարձյալ՝ պետք է սիրել վարդապետին՝ որպես ծնողի, պատվել նրան՝ որպես հոր և երկյուղել նրանից՝ որպես իշխանից, որպեսզի սիրո պատճառով երկյուղը չվերանա, և երկյուղի պատճառով սերը չնվազի, և այն ամենը, ինչ նա զգացնել կտա՝ կատարել հոժարությամբ և խնդությամբ, ոչ թե՝ հարկադրված և երկմտությամբ»:

183. Հայրերից մեկը հարցրեց Հովհաննես Պարսիկին և ասաց նրան. «Այսչափ չարչարանքներ ենք կրում հանուն Աստծո Արքայության, արդ՝ կհասնե՞նք դրան, թե՞ չենք հասնի»: Ծերը նրան ասաց. «Ես հավատում եմ, որ կբնակվեմ երկնային Երուսաղեմում, որ գրված է երկնքում և հաստատված է այնտեղ, քանի որ հավատարիմ է Նա, որ խոստացավ այն մեզ: Եվ կամ՝ ինչո՞ւ չպետք է հավատամ, որ կլինեմ Նրա մոտ, քանի որ օտարասեր եղա՝ ինչպես Աբրահամը, հեզ եղա՝ ինչպես Մովսեսը, սուրբ եղա՝ ինչպես Ահարոնը, համբերող եղա՝ ինչպես Հոբը, խոնարհ եղա՝ ինչպես Դավիթը, անապատական եղա՝ ինչպես Եղիան և Հովհաննեսը, ողբացող եղա՝ ինչպես Երեմիան, Վարդապետ եղա՝ ինչպես Պողոսը և հավատարիմ եղա՝ ինչպես Պետրոսը, իմաստուն եղա՝ ինչպես Սողոմոնը, խոստովանող եղա՝ ինչպես ավազակը: Եթե այս բոլոր առաքինություններին նմանող եղա, հավատում եմ Աստծո բազումողորմությանը, որ նրանց փառքին ևս հաղորդ կլինեմ: Իսկ եթե սրանց հակառակն եմ գործել, ինչպե՞ս ակնկալեմ երկնքի արքայությունը»:

184. Երկու եղբայրներ մոլորվեցին Սկյութիայում, և հայր Մակարիոս Քաղաքացին արգելափակեց նրանց: Ոմանք եկան և այդ մասին պատմեցին հայր Մակարիոս Մեծ Եգիպտացուն: Իսկ նա երբ լսեց՝ ասաց. «Այն եղբայրները չեն արգելափակված, այլ Մակարիոսն է արգելափակված, նա, որ նրանց արգելափակել է», քանզի նրան սիրում

էր Մակարիոս Մեծը: Հայր Մակարիոս Քաղաքացին, երբ լսեց, որ Մակար Մեծն արգելքի տակ է դրել իրեն, փախավ և գնաց շամբուտները: Մակարիոս Մեծը դուրս եկավ նրան փնտրելու և գտավ նրան շամբուտների դաշտում՝ ուռած և կծոտված թունավոր մժեղներից: Ասաց նրան. «Դու արգելափակեցիր եղբայրներին, որոնք կամենում էին դառնալ դեպի աշխարհ, իսկ ես քե՛զ արգելափակեցի, սակայն դու՝ որպես խոհեմ և պատվասեր հարս, դեպի ներքին անապատ՝ առագաստը փախար: Ես կանչեցի այն երկու եղբայրներին և իմացա, որ նրանք ոչ մի նման բան չեն արել: Տե՛ս, որ դու էլ, եղբա՛յր, դևերի ծաղրի առարկա չդառնաս, որովհետև չքննեցիր նրանց: Հիմա դու քո մեղքերի համար ապաշխարությո՛ւն վերցրու»: Նա ասաց նրան. «Հա՛յր, դո՛ւ տուր ինձ ապաշխարություն»: Եվ նա, տեսնելով նրա դարձը, նրան մեկ շաբաթյա պահք նշան ակեց:

185. Ասաց հայր Մակարիոսը. «Եթե հիշենք մեր մտքում մարդկանց տրտմությունը, մեր մեջ կշարժենք Աստծո հիշողությունների զորությունը, իսկ երբ մշտապես հիշենք դևերից մեր վրա եկած չարիքները, նրանց նետերից անխոցելի կմնանք»:

186. Մի անգամ հայր Մարկարիոսը գնաց հայր Պախումի մոտ և ասաց. «Եղբայրներն անկարգ ընթացք են բռնել, հա՛յր, կամենո՞ւմ ես, որ ես խրատեմ նրանց»: Մարկարիոսն ասաց. «Գթությամբ և արդարությամբ խրատիր նրանց, որ քո ձեռքի տակ են, իսկ մյուսներին, որ քո ենթակայությունից դուրս են, մի՛ դատիր, քանզի գրված է. «Բոլորի ներսն էլ Աստված է դատում (Ա Կորնթ. Ե 12-13)*»:*

187. Հայր Մատոյեն ասաց, թե դևերը նախապես չգիտեն՝ մինչև մարդու հանցանք գործելը, թե ինչ ախտով կհաղթվի անձը, այլ միայն սերմանում են, բայց չգիտեն՝ երբ կհնձեն: Եվ ոմանց մեջ սերմանում են պոռնկության խորհուրդ, ոմանց մեջ՝ ատելություն, ոմանց մեջ՝ բամբասանք և այլևայլ ախտեր, իսկ հետո տեսնելով, թե ով ինչի է ընդունակ, սկսում են ավելացնել, մինչև որ նրան կորստյան մատնեն:

188. Հայրերից ոմանք հարցրին հայր Մեգեթիոսին և ասացին. «Եթե եփված կերակուրից մնա, կամենո՞ւմ ես, որ այն հաջորդ օրը եղբայրների առջև դնենք»: Ծերն ասաց. «Եթե այրված և փչացած է՝ լավ է թափել, որպեսզի ուտելով չհիվանդանան, իսկ եթե լավ է պահպանված և գոռոզության պատճառով է թափվում՝ բարի չէ»:

189. Ոմն եղբայր՝ հայր Պիմենի բնակավայրի կողմերից, գնաց պանդխտության և իր պանդխտության մեջ հանդիպեց ոմն մենակ-

յացի, որը մեծանուն էր և հույժ հռչակված, և բազում մարդիկ էին գալիս նրա մոտ: Եղբայրը նրան պատմեց հայր Պիմենի մասին, իսկ երբ նա լսեց նրա մասին, ցանկացավ տեսնել նրան: Երբ եղբայրը վերադարձավ Եգիպտոս, ոչ շատ ժամանակ անց այն մենակյացը նույնպես եկավ Եգիպտոս և որոնելով գտավ եղբորը, քանի որ լսել էր, որ նա բնակվում է գետեզերքին: Երբ եղբայրը տեսավ մենակյացին, շատ զարմացավ, ուրախությամբ ընդառաջ ելավ և սիրով հյուրընկալեց նրան: Մենակյացն ասաց նրան. «Բարի՛ եղիր, եղբա՛յր, և տա՛ր ինձ Պիմենի մոտ»: Եվ եղբայրն առաջնորդելով՝ տարավ նրան հայր Պիմենի մոտ և նրան պատմեց մենակյացի մասին ամեն ինչ, թե մեծանուն մարդ է և խիստ հարգված ամենքի կողմից: «Եվ ես, – ասաց, – պատմեցի քեզ նրա մասին ամեն ինչ, և ահա նա սիրով եկել է այստեղ՝ տեսնելու քեզ»: Հայր Պիմենը նրան ուրախությամբ ընդունեց, և երբ ողջունեցին միմյանց ու նստեցին, եկվոր մենակյացը սկսեց խոսել հոգու փրկության մասին: Հայր Պիմենը, սակայն, ետ դարձրեց երեսը և ոչ մի պատասխան չտվեց նրան: Երբ մենակյացը տեսավ, որ Պիմենը ոչ մի բան չի խոսում իր հետ, տրտմեց և դուրս ելավ, ապա իրեն այնտեղ բերող եղբորն ասաց. «Իզուր հոգնություն քաշեցի՝ այսքան ճանապարհ անցնելով, քանզի եկա, որ Պիմենից հոգեշահ մի խոսք լսեմ, իսկ նա բնավ չկամեցավ խոսել ինձ հետ»: Մտավ եղբայրը հայր Պիմենի մոտ և ասաց նրան. «Հա՛յր, այս մեծանուն հայրն հանուն քեզ եկավ այստեղ, որ այսչափ փառք ու պատիվ ունի իր երկրում, դու ինչո՞ւ չես խոսում նրա հետ»: Պիմենը նրան ասաց. «Նա վերևում է՝ երկնքում, և երկնավոր բաներ է խոսում, իսկ ես երկրավոր լինելով՝ ինչպե՞ս երկնավոր բաներ խոսեմ: Եթե իր ախտերի մասին ասեր, մի բան կպատասխանեի, սակայն երկնավորների մասին ես ոչինչ չեմ կարող ասել»: Դուրս ելավ եղբայրը և այն մենակյացին ասաց. «Հայր Պիմենը սովորություն չունի հաճախակի խոսելու Սուրբ Գրքից, սակայն եթե մեկը հարցնի նրան իր ախտերի մասին, պատասխան կտանա»: Այս խոսքի վրա զղջաց այն մենակյացը, դարձյալ մտավ ծերի մոտ և ասաց նրան. «Ի՞նչ անեմ, հա՛յր, քանզի բռնադատվում եմ իմ ախտերից»: Նայեց նրան Պիմենն ու հեզաբար ասաց. «Այժմ բարո՛վ եկար և բացելով քո բերանը՝ սիրտդ լցրիր հոգևոր բարիքներով»: Եվ բազում բաներ խոսեց նրա հետ, իսկ վերջինս շատ ավելի շահեց, քան սպասում էր: Եվ ասաց. «Իսկապես, սա՛ է փրկության ճանապարհը»: Եվ գոհացավ Աստծուց, որ ինքն արժանի եղավ տեսնելու և խոսելու նրա հետ, և այսպես՝ ուրախությամբ լի, դարձավ իր տեղը:

190. Հայր Պիմենն ասաց. «Եթե երեք եղբայրներ բնակվում են միասին, և մեկը հանդարտաբարո է, մյուսը՝ հիվանդ և սիրահոժար դիմանում է ցավերին, իսկ երրորդը սպասարկում է հեզ սրտով՝ նրանք երեքն էլ առաքինության մեջ են»:

191. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց Նրան. «Եթե որևէ արարք տեսնեմ, պե՞տք է որ պատմեմ այդ մասին»: Ծերը նրան ասաց. «Գրված է՝ ով պատասխան տա՝ նախքան հարցնելը, ատելի է և անմիտ, իսկ եթե որևէ մեկը հարցնի, պետք է որ ասես, իսկ եթե ոչ՝ լռես»:

192. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Կարո՞ղ է մարդ բավարարվել լոկ մի առաքինությամբ»: Ծերը նրան ասաց. «Հայր Հովհաննես Կարճահասակն ասում էր, թե լավ է քիչ առ քիչ հավաքել բոլոր առաքինություններից, քան թե միայն մեկն ունենալ: Քանզի հայր Ամոնասն ասում էր, թե մարդ կա, որ բազում անգամ հարվածում է կացնով և չի կարողանում կտրել ծառը, իսկ մեկ ուրիշը, ով փորձ ունի, սակավ հարվածելով՝ կտրում է այն: Իսկ փայտահատ ասելով՝ նկատի ուներ իմաստուն և խելացի դատավորին»:

193. Ասաց դարձյալ, թե լրբությունը, աներկյուղությունը և հանդգնությունը բոլոր մեղքերի մայրն են:

194. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Հա՛յր, եթե մեկը որևէ հանցանքի մեջ ընկնի և ճշմարտապես դարձի գա, Աստված կնե՞ր նրան այդ մեղքը»: Ծերը նրան ասաց. «Եթե Աստված պատվիրեց մարդկանց անել այդ, մի՞թե առավել ևս ինքը չի անի այդպես: Որովհետև դրա համար պատվիրեց Պետրոսին ներել յոթանասունյոթ անգամ, որպեսզի մենք փրկության հույսն ունենանք» (Մատթ. ԺԸ 21-22)*:*

195. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Կարո՞ղ է մարդ իր բոլոր խորհուրդները պահել, որպեսզի դրանցից ոչ մեկը չտա թշնամուն»: Ծերն ասաց նրան. «Կա՞ մեկը, որ վերցնում է հազարը և տալիս մեկը»:

196. Հայր Պիեմենն ասաց. «Եթե մեկը հպարտ է՝ կրոնավոր չէ: Եթե մեկը կամենում է չարին չարով հատուցել՝ նա կրոնավոր չէ: Ով բարկացող է՝ նա ևս կրոնավոր չէ»:

197. Մեկը հարցրեց ծերին և ասաց. «Եթե տեսնեմ, որ եղբայրներից մեկը նիրհում է աղոթքի ժամանակ, կարելի՞ է, որ բոթելով արթնացնեմ նրան»: Ծերն ասաց. «Եթե ես տեսնեի, որ եղբայրս նիրհում է

հսկման ժամանակ, կդնեի նրա գլուխը իմ բարձին և կհանգստացնեի նրան»:

198. Ասում էին հայրերից մեկի մասին, թե հայհոյության խորհուրդների պայքարի մեջ էր և ամաչում էր պատմել որևէ մեկին: Որտեղ լսում էր ոմն մեծ ծերի մասին՝ գնում էր այնտեղ, որ խոստովանի, սակայն երբ գնում էր, ամաչում էր և չէր խոստովանում: Բազում անգամ գնաց նա հայր Պիմենի մոտ, և Պիմենը տեսնում էր, որ եղբայրը ինչ-որ ծածուկ խորհուրդ ունի, և նեղվում էր, որ եղբայրը չի խոստովանում, բայց ոչինչ չէր ասում նրան: Եվ մի օր, մինչ ծերը ճանապարհում էր նրան, ասաց. «Ահա այսքան ժամանակ գալիս ես այստեղ և կամենում ես խոստովանել քո խորհուրդները և չես կարողանում, այլ միշտ տրտմած գնում ես՝ ծանրացած ունենալով դրանք գլխումդ: Ասա՛ ինձ, որդյա՛կ, ի՞նչ է պատահել քեզ»: Նա ասաց. «Թշնամին ինձ հայհոյել է տալիս Աստծուն, և ամաչում եմ հայտնել»: Եվ երբ այդ ասաց, թեթևացավ եղբայրը: Ծերն ասաց նրան. «Եղբա՛յր իմ, մի՛ տրտմիր և մի՛ երկնչիր, այլ երբ քեզ կայցելեն այդ խորհուրդները, դու ասա՛. "Քո հայհոյությունը քո գլխին դառնա, չա՛ր դև, այդ հայհոյությունն իմ հոգին չի կամենում: Իսկ ինչը ես չեմ կամենում՝ այն իմ գործը չէ, այլ՝ քոնը, որ գործել ես տալիս իմ մտքում"»: Եվ այսպես եղբայրը բժշկվեց դրանից Քրիստոսի շնորհներով:

199. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչո՞ւ են դևերն ինձ գայթակղեցնում, որ լինեմ նրանց նման՝ ովքեր բարձր են ինձանից, և արհամարհեմ նրանց, ովքեր ցածր են ինձանից»: Ծերը նրան ասաց. «Դրա համար է առաքյալն ասում, թե մեծ տան մեջ ոչ միայն ոսկեղեն և արծաթեղեն անոթներ կան, այլև փայտեղեն և խեցեղեն անոթներ: Ով իր անձը սրբի վատթար գործերից, կլինի պատվական անոթ՝ սրբված և պիտանի իր Տիրոջը, պատրաստված բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. Բ 20-21)*: Հարցրեց եղբայրը. «Հա՛յր, մարդը կարո՞ղ է մեռած լինել աշխարհի համար»: Ծերն ասաց. «Եթե մեղքով բռնվի՝ մեռած է նա, իսկ եթե բարի գործերի մեջ բռնվի՝ կենդանի կլինի նա: Եղբայրներին ուսուցանելն արդարին է վայել, ապա եթե ոչ՝ ի՞նչ օգուտ՝ ուրիշներինը չինել և իրենն ավերել: Եվ ի՞նչ կշահի մարդը, եթե կամենա արվեստներ ուսանել, բայց չուսանի, քանզի ամեն բան, որ չափից ավելի է՝ դևերից է, իսկ քաղցը, ծարավը և աղքատությունը մեր մտքին թույլ չեն տալիս վատթար խորհուրդներ խորհել»:*

200. Մի եղբայր գնաց հայր Պիմենի մոտ՝ խոսելու նրա հետ: Այնտեղ նստած էին նաև ուրիշ հայրեր: Եվ այս եղբայրը գովեց մեկ այլ

եղբոր և ասաց՝ նա չարատյաց է: Ծերը նրան հարցրեց. «Ի՞նչ է չարն ատելը»: Զարմացավ եղբայրը և չկարողացավ որևէ պատասխան տալ, այլ վեր կենալով՝ ընկավ ծերի առաջ և խնդրեց նրան սովորեցնել իրեն, թե ինչ է չարն ատելը: Ծերը նրան ասաց. «Երբ մեկը ատում է իր մեղքը և արդարացնում է ընկերոջը»: Եղբայրը հարցրեց. «Ո՞րն է բարի, հա՛յր, լավը խոսե՞լը, թե՞ լռելը»: Ծերն ասաց. «Հանուն Աստծո որևէ բան խոսելը բարի է, իսկ հանուն Աստծու լռելը՝ բյուր անգամ բարի»: Եղբայրը հարցրեց. «Եվ ինչպե՞ս կարող է մեկն ազատվել ընկերոջը չարախոսելու գայթակղությունից»: Ծերն ասաց. «Մենք և մեր եղբայրները երկու պատկեր ենք: Երբ մարդ իր պատկերը տեսնի և գարշի նրանից, այնժամ ընկերոջ պատկերը պատվական կերևա, իսկ երբ իր պատկերի գարշությունը մոռանա, այնժամ կսկսի իր ընկերոջ պատկերը քննել»: Եղբայրը հարցրեց. «Ինչպե՞ս վարվեմ ճանճրույթիս հետ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ճանճրույթը դարան է մտնում ամեն բարի գործի մոտ, և նրանից ավելի չար ախտ չկա: Միայն Աստծո սերն ու երկյուղն են վանում նրան»: Եղբայրն ասաց. «Հա՛յր, կամենում եմ հասարակաց վանք մտնել և այնտեղ բնակվել»: Ծերը նրան ասաց. «Եթե դադար չառնես բոլոր գործերից և կատարելապես առանց հոգսերի չլինես, չես կարողանա եղբայրների մեջ մնալ, որովհետև այնտեղ դու ոչ մի իշխանություն չես ունենա քո անձի վրա»:

201. Հայր Պիմենին նրա եղբայրներն ասացին. «Արի՛ հեռանանք այս վայրից, քանզի մեզ անհանգստացնում են մեր շրջակայքում գտնվող վանքերը, այստեղ նույնիսկ մանուկների լացի ձայնն է լսվում և մեր անդորրը խանգարում, և մեր հոգիները վհատվում են»: Հայր Պիմենն ասաց. «Դուք հրեշտակների ձայներից եք ուզում փախչել և դրա համար եք ուզում հեռանալ այստեղից»:

202. Ոմն եղբայր ասաց հայր Պիմենին. «Մարմինն իմ տկարացավ, հա՛յր, և ախտերը զորացան իմ մեջ»: Ասաց ծերը նրան. «Ախտերը փշերի ու տատասկների նման են, որդյա՛կ. ուստի դու աստվածային սիրո հուրը նետի՛ր նրանց վրա և ամբողջովին բոցակեզ կանես նրանց»:

203. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Հա՛յր, ես այստեղ խռովք եմ ապրում և կամենում եմ թողնել իմ տեղն ու գնալ»: Ծերը նրան հարցրեց. «Ի՞նչ պատճառով»: Եղբայրն ասաց. «Որովհետև մի եղբորից բաներ եմ լսում, որ ինձ օգտակար չեն»: Ծերը նրան ասաց. «Ճշմարիտ չեն լսածներդ»: Եղբայրն ասաց. «Ո՛չ, հա՛յր, որովհետև ով որ ինձ ասաց՝ հավատարիմ անձնավորություն է»: Ծերը նրան ասաց.

«Նա հավատարիմ չէ, քանզի եթե հավատարիմ լիներ, այդ ամենը չէր պատմի քեզ: Ղովտն էլ էր լսում Սոդոմի ձայնը, սակայն չհավատաց, մինչև իր աչքերով չտեսավ, իսկ մենք ինչպե՞ս հավատանք, եղբա՛յր, ինչը մենք չենք տեսել»: Եղբայրն ասաց. «Ես ևս տեսա իմ աչքով»: Երբ այս լսեց ծերը, սկսեց գետնին նայել և այնտեղից մի շյուղ վերցնելով՝ ասաց. «Տեսնո՞ւմ ես այս շյուղը», ապա ցույց տվեց նրան ձեղունի գերանը և ասաց. «Տեսնո՞ւմ ես այս գերանը, եղբա՛յր»: Եվ նա ասաց՝ այո՛: Ծերն ասաց. «Դի՛ր այդ քո մտքում, եղբա՛յր, թե քո մեղքը այս գերանն է, իսկ այն եղբոր մեղքը այս շյուղն է, և նախ հանի՛ր գերանը քո աչքից՝ ըստ Տիրոջ խոսքի (Մատթ. Է 5)*»: Երբ այս խոսքը լսեց հայր Տիթոյին, սքանչացավ և ասաց. «Ինչ խոսքերով կկարողանամ երանի տալ քեզ, հա՛յր Պիմեն, որ պատվական քար ու անգին մարգարիտ ես, քանզի քո խոսքերը խնդությամբ լի են Աստծո շնորհով»:*

204. Ոմն եղբայր հարցրեց հայր Մովսեսին և ասաց. «Ինչպե՞ս կարող է կրոնավորը աշխարհի համար մեռած լինել»: Ծերն ասաց. «Եթե մեկը չհամարի, որ իր անձը երեք տարի գերեզմանում է, չի կարող մեռած լինել»:

205. Երկու եղբայրներ գնացին հայր Պամբոյի մոտ և ասացին նրան. «Մեզ ուսուցանի՛ր»: Նրանցից մեկն ասաց. «Ես երկու օր պահում եմ և երկու հաց եմ ուտում. արդ, սրանով կարո՞ղ եմ ապրել, թե՞ կխոտորվեմ»: Մյուսն ասաց. «Ես օրական երկու դանկ եմ առնում ձեռագործի դիմաց և իմ կարիքների համար ծախսում եմ երկու լումա, իսկ մնացածը ողորմություն եմ տալիս: Ես սրանով կփրկվե՞մ, թե՞ ոչ»: Ծերը նրանց ոչ մի պատասխան չտվեց, իսկ սրանք չորս օր հետո ուզում էին գնալ, որովհետև տրտմած էին ծերի կողմից պատասխան չստանալու պատճառով: Իսկ եկեղեցու սպասավորներն ասացին. «Մի՛ տրտմեք, եղբայրնե՛ր, որովհետև ծերը ոչ մեկի հապճեպ բան չի ասում, մինչև Աստծուց հրաման չստանա, ապա նոր խոսում է»: Այնժամ մտնելով նրա մոտ՝ եղբայրները ծերին ասացին. «Աղոթի՛ր մեր գնալու համար, հա՛յր»: Հայրն ասաց. «Գնա՞լ եք որոշել»: Եվ նրանք ասացին. «Այո՛, հա՛յր»: Նա վեր կենալով սկսեց նրանց կատարած գործերը գետնի վրա գրել և ասաց. «Պամբոն երկու օր պահեցողություն է անում և երկու հաց է ուտում, բայց կրոնավոր չէ սրանով: Պամբոն Պամբո չէ, քանզի երկու դանկ է վաստակում և ողորմություն է տալիս, բայց սրանով նա կրոնավոր չէ»: Եվ վերև նայելով՝ ասաց նրանց. «Այդ ձեր գործերը բարի են, սակայն եթե ուզում եք փրկվել, պահե՛ք ձեր մտքերը ընկերոջը դատելուց»: Այնժամ նրանք նորոգված գնացին իրենց տեղերը:

206. Հայր Պալատիոսն ասաց, թե ովքեր կամենում են ըստ Աստծո ճգնել, պարտավոր են կա՛մ հավատով ուսանել այն, ինչ իրենք չգիտեն, կա՛մ ուսուցանել այն, ինչ իրենք գիտեն: Իսկ ով սրանցից մեկնումեկը չի կամենում, նա կեղծավոր է, անիրավ և թունավոր, քանզի ապստամբության սկիզբը վարդապետության և անայլայլելի խոսքի հագեցումն է, որից միշտ երկյուղում է աստվածասեր անձը:

207. Ծերերից ոմանք ասում էին, թե հայր Պիմենի կրտսեր եղբայր Պայեսիոսը մի ման գտավ՝ դահեկաններով լի: Նա իր երեց եղբայր Պամբոյին ասաց. «Գիտե՞ս, եղբա՛յր, որ մեր եղբայր Պիմենի խոսքերը խիստ են և անտանելի ծանր: Արի՛ գնանք և մեզ համար վանք շինենք գետի այն կողմում և հանգիստ նստենք այնտեղ»: Հայր Պամբոն նրան հարցրեց. «Եվ ինչո՞վ կշինենք այն»: Նա ցույց տվեց նրան դահեկաններով լի անոթը: Երբ տեսավ հայր Անուբը, սաստիկ տրտմեց, քանզի այն հոգու խաթարում էր համարում և ասաց նրան. «Շատ բարի: Գնանք կացարան կառուցենք գետի այն կողմում»: Եվ վերցնելով ոսկով լի անոթը՝ հայր Անուբը դրեց այն իր կնգուղի մեջ: Մինչ անցնում էին գետը, գետի մեջտեղում հայր Անուբը ձեռացրեց, իբր ուշաթափվում է և գլուխը շարժելով՝ ետ գցեց: Կնգուղն ու անոթը միասին գետն ընկնելով՝ կորան: Երբ ցամաք ելան, սկսեց հոգոց հանել ու տրտմել դահեկանների համար: Պայեսիոսը նրան ասաց. «Մի՛ տրտմիր, հա՛յր, որ այսպես եղավ և կորավ ոսկին, ե՛կ վերադառնանք մեր եղբայրների մոտ»: Եվ վերադառնալով՝ ապրում էին լռությամբ:

208. Հայր Սիսոյի Թեբայեցին իր աշակերտին ասաց. «Ասա՛ ինձ՝ ինչ որ տեսնում ես իմ մեջ, ես էլ քեզ կասեմ՝ ինչ որ տեսնում եմ քո մեջ»: Աշակերտը հորն ասաց. «Դու, հա՛յր, մտքով բարի ես, սակայն փոքր-ինչ խստասիրտ ես»: Ծերն աշակերտին ասաց. «Դու ևս բարի ես մտքով, սակայն փոքր-ինչ ծույլ և հեղգ ես մտքով»:

209. Ծերերից մեկն ասում էր, թե աղաչեց հայր Սիսոյին, որ իրեն խոսք ասի, և նա ասաց. «Բոլոր այն մեղքերից, որից մարդ կարող է փախչել և չի փախչում, հանցավոր է այդպիսին»:

210. Պատմեց ծերը, թե ոմն եղբայր մի անգամ մեծ մեղքի մեջ ընկավ: Հետո զղջալով՝ եկավ ապաշխարության և գնաց մի ծերի մոտ, բայց չասաց նրան, թե ինչ էր գործել, այլ միայն հարցրեց և ասաց. «Եթե մեկը այսպիսի մեղք գործի, ինչպե՞ս կարող է ապաշխարել և ունի՞ արդյոք փրկության հույս»: Իսկ ծերը, քանի որ անփորձ էր քննելու մեջ, նրան ասաց. «Այդ ի՞նչ ես ասում, ո՛վ եղբայր, ինչո՞ւ ես քո հո-

գին կորցնում»: Երբ լսեց այս խոսքը եղբայրը, ասաց. «Եթե իմ հոգին կորչելու է, ապա կդառնամ դեպի աշխարհ»: Եվ մինչ պատրաստվում էր գնալ, խելքի եկավ և ասաց. «Գնամ պատմեմ հայր Սիլովանեին իմ մեղքերը և այս խորհուրդը ևս»: Հայր Սիլովանեն մեծ էր և խոհեմ՝ քննելու մեջ: Եվ երբ գնաց եղբայրը, նրան ևս չխոստովանեց իրողությունը, այլ պատմեց նույն կերպ, ինչպես որ առաջին ծերին: Հայրն իր բերանը բացելով՝ ուսուցանեց նրան Սուրբ Գրքից, թե մեղքեր չունեն նրանք, ովքեր ապաշխարում են: Երբ եղբայրը լսեց այս խոսքը, գոտեպնդվեց և պատմեց նրան իր գործը ստուգությամբ: Երբ լսեց այս բանը երանելի հայրը, չտխրեց, այլ իբրև հմուտ բժիշկ՝ դարմանեց հոգու վերքը և ցույց տվեց Սուրբ Գրքից, որ ովքեր ապաշխարում են, դյուրությամբ են ստանում մեղքերի թողություն: Երբ այն տգետ և անիմաստուն ծերը գնաց հայր Սիլովանեի մոտ, պատմեց այս գործը և ասաց. «Ահա այն կրոնավորը, որ հուսահատված կամենում էր աշխարհ վերադառնալ, որպես աստղ փայլում է եղբայրների մեջ: Այս պատմեցի այն բանի համար, որպեսզի գիտենանք, որ տգետ և անիմաստուն մարդկանց մեղքերը խոստովանելը մեծ չարիքների պատճառ կարող է դառնալ»:

211. Ծերն ասաց. «Ինչպես Հովսեփ Արեմաթացին, վերցնելով Տիրոջ մարմինը, պատանեց, խնկարկեց և դրեց գերեզմանի մեջ, այդպես էլ մենք պիտի ջանանք, որ մեղք չգործենք, որպեսզի մեր մեջ բնակված Աստծո շնորհները չարտաքսենք մեր միջից, քանզի Աստված Իսրայելին մանանա տվեց անապատում՝ որպես կերակուր, իսկ նոր Իսրայելին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինը տվեց՝ որպես մանանա»:

212. Ոմն եղբայր ասաց ծերին. «Ես ոչ մի պատերազմ չեմ տեսնում իմ սրտում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Քո մտքի չորս դռներն էլ բացված են, և ով կամենում է՝ մտնում է, ով կամենում է՝ ելնում է, և դու չես կարող իմանալ: Սակայն եթե դու դնես քո տան դուռը, փակես այն և թույլ չտաս, որ չար խորհուրդները ներս մտնեն, այնժամ կտեսնես նրանց դրսից գալն ու քո դեմ պատերազմելը»:

213. Հայր Անուբն ասաց. «Համարձակությունն ու ծաղրը նման են եղեգնուտն ընկած հրդեհի. իսկ ով հիմարանա հանուն Տիրոջ, Աստված իմաստուն կդարձնի նրան»:

214. Հայր Անուբն ասաց դարձյալ. «Ծերը պարտավոր է երկյուղել Աստծո օրենքներից, ատել մեղքը, սիրել առաքինությունը, միշտ

աղոթել Աստծուն և ունենալ սուրբ միտք, անբասիր խոսք և բարի գործ: Ով ինչով դատի իր եղբորը, նույն մեղքի մեջ կընկնի ինքը»:

215. Ոմն եղբայր իր ծերին ասաց. «Քո աղոթքները չնո՛րհ արա ինձ, որովհետև շտապում եմ գնալ քաղաք»: Ծերն ասաց. «Մի՛ շտապիր քաղաք գնալ, այլ շտապի՛ր քաղաքից փախչել և կապրես»:

216. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Մի՞թե կպղծվի մարդը, եթե չարը խորհի»: Եվ այս խոսքի վերաբերյալ հայրերի մեջ բանավեճ եղավ. «Ոմանք ասում էին, թե կպղծվի մարդը, ոմանք էլ ասում էին, թե չի պղծվի, իսկ եթե պղծվում է, ապա ոչ ոք չի կարող փրկվել, այլ բավական է միայն, որ մարմնով չգործի խորհածը»: Այս բանը հարցրին մի մեծ ծերի, և ծերը նրանց ասաց. «Ըստ յուրաքանչյուրի չափի պետք է քննվի այդ գործը. ինչպես օրինակ՝ մի մարդ տեսնի թագավորի ոսկյա անոթները, ցանկանա դրանք և չվերցնի, բայց չկարողանա հեռացնել հիշողությունից. այդպես էլ բոլոր խորհուրդներն են, քանզի ոչ թե զազիր խորհուրդների՝ մեր մեջ մտնելն է չար և դատում է մեզ, այլ խորհրդի ներգործությամբ չարը գործելն է կորստյան մատնում հոգին: Իսկ եթե այդ խորհուրդների ներգործությամբ մեկը բարին գործի, փառքի պսակի է արժանի այդպիսին»:

217. Ծերն ասաց. «Եթե մեկը կամենում է անապատում մենակ ապրել, պարտավոր է ինքը վարդապետ և ուսուցիչ լինել ուրիշներին, այլ ոչ թե ուրիշներից ուսանելու կարոտ լինի, որպեսզի առավելապես չվնասվի և չկորչի»:

218. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց նրան. «Ահա ես գնում եմ ծերերի մոտ և խրատ եմ խնդրում նրանցից: Նրանք հոգեշահ խոսքեր են ասում ինձ, սակայն իմ մտքում ոչինչ չի մնում նրանց խրատներից, այլ մտքիցս գնում են: Ի՞նչ անեմ՝ գնամ հոգս պատճառե՞մ նրանց, թե՞ չգնամ, քանի որ նրանց խոսքերը չեմ պահում, քանզի լի եմ ամեն տեսակ պղծությամբ»: Այնտեղ երկու դատարկ կժեր կային: Ծերը նրան ասաց. «Այդ կժերից մեկը վերցրո՛ւ, լվա՛, ձեթով օծի՛ր և դի՛ր մյուս դատարկի մոտ»: Նա այդպես արեց: Եվ ծերն ասաց. «Այստեղ բե՛ր երկու կուժն էլ». և բերեց: Ծերն ասաց. «Սրանք երկուսն էլ դատարկ են, սակայն դրանցից ո՞րն է սրբված և գեղեցիկ»: Նա պատասխանեց. «Լվացված և օծվածը»: Ծերն ասաց. «Սա մարդու անձի օրինակն է. եթե մեկը թեկուզ և չպահի սրբերից լսածը, ամեն տեսակ ախտերից կմաքրվի և կսրբվի, քան նա, որ ոչինչ չի հարցնում: Որովհետև ամանը, որի մեջ ձեթ է լցվում՝ ձեթի ման է, թեկուզ և դա-

տարկ լինի, իսկ որի մեջ գինի է լցվում՝ գինու ման է, ջրինը՝ ջրի: Եթե պարունակությունն էլ դատարկվի, հոտը, սակայն, չի անհետանա: Այդպես էլ անհնար է, որ սրբերի խրատներից լսողի մոտ առաքինությունների անուշահոտությունից չմնա»:

219. Ոմն եղբայր հանդարտությամբ բնակվում էր անապատում, և դևերն սկսեցին խաբել նրան և գայթակղեցնել հետևյալ ձևով. երևում էին նրան լույսի հրեշտակի տեսքով, արթնացնում էին նրան՝ աղոթելու և ցույց էին տալիս նրան ինչ-որ տարօրինակ լույս և պայծառություն: Եղբայրը վեր կենալով գնաց մի ծերի մոտ, պատմեց նրան և ասաց. «Հրեշտակներ են գալիս ինձ մոտ, հա՛յր, և պայծառությամբ ու բազում փառքերով երևում են ինձ և արթնացնում են՝ աղոթելու»: Ծերն ասաց. «Նրանց մի՛ լսիր, որովհետև դևեր են, այլ՝ երբ մյուս անգամ կգան քեզ արթնացնելու, նրանց ասա. "Ձեզ չե՛մ լսում, ինքս երբ կամենամ, կելնեմ"»: Եղբայրը, ծերի պատվերն առնելով, գնաց իր տեղը: Եվ դևերը, գիշերը գալով, նախկինի պես արթնացրին նրան: Նա ասաց. «Ձեզ չե՛մ լսում, գնացե՛ք, դուք դևեր եք. ես ինքս վեր կկենամ՝ երբ կամենամ»: Դևերը նրան ասացին. «Այն չար և ստախոս ծերը քեզ մոլորեցրեց, նա, որի մոտ մի անգամ մի եղբայր եկավ՝ պարտքով գումար խնդրելու, իսկ նա ունենալով՝ ասաց, թե՝ չունեմ, և չտվեց նրան: Ահա դու սրանից ճանաչի՛ր նրա ստախոսությունը»: Եղբայրը, գալով ծերի մոտ, պատմեց այս ամենը: Ծերն ասաց. «Փող ունեի՝ ճի՛շտ է, և երբ այն եղբայրը խնդրեց, չտվեցի. սակայն չտվեցի այն պատճառով, որ ուզում էր գնալ և դրանով վնասել իր հոգին, և ես նախընտրեցի մե՛կ պատվիրան զանց առնել (Մատթ. Ե 42), *քան շատերը: Իսկ դու, եղբա՛յր, հեռացի՛ր դևերի խաբեությունից, քանզի Տիրոջ հրեշտակները մարդկային ազգի բարեկամներն են, այլ ոչ թե՝ անգոսնողներ և նախատողներ»: Եվ եղբայրը հաստատված գնաց իր սենյակը և ազատվելով՝ ճանաչեց նրանց խաբեությունը:*

220. Ծերն ասաց. «Կա մարդ, որ շատ է ուտում և քաղցած է մնում, և կա մարդ, որ քիչ է ուտում և հագենում է: Սակայն նա, ով շատ է ուտում և քաղցած է մնում, ավելի շատ վարձ կստանա պահքի համար, քան նա, որ քիչ է ուտում և հագենում է դրանով»:

221. Հայրերից մեկն ասաց. «Դի՛ր քո սրտի մեջ Աստծո հիշատակն ու նրանո՛վ ապրիր, քանզի իսկույն կգա թշնամին, և տեսնելով Աստծո հիշատակը քո մտքում՝ տեղ չի գտնի մտնելու քո մեջ և կհեռանա: Նույնպես և՝ ով տեղ տա թշնամուն իր սրտում, փութով կգա Սուրբ

Հոգին և տեղ չգտնի այնտեղ, կփախչի նրանից և կհեռանա, քանզի տեղ չուներ այնտեղ՝ չարյաց բազմության պատճառով»:

222. Հայրերից մեկն ասաց. «Եթե ոմն մշակ բնակվի մի տեղ, որտեղ ուրիշ մշակ չկա, նրա գործերը չեն ուղղվի. բայց միայն թե պիտի ջանա, որ ետ չդառնա: Այդպես էլ ծերը՝ եթե մեկ այլ ծերի հետ չկենա, չի շահի»:

223. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Հա՛յր, ինչո՞ւ եմ ես իմ աղոթքն կարճամտությամբ անում»: Պատասխանեց ծերը և ասաց. «Այն ժամանակ է հայտնվում Աստծո սերը, երբ մեկը միամտությամբ է կատարում Աստծո գործերը»:

224. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ է չարախոսությունը և ի՞նչ է ընկերոջը դատելը»: Ծերը նրան ասաց. «Չարախոսությունը բամբասանքն է, իսկ ընկերոջը դատելն այն է, երբ ընկերոջ մասին ասում են՝ այսինչ մեղքն է գործել: Ուրեմն, ամեն խոսք, որ ընկերոջ երեսին չի ասվում, այլ՝ նրա հետևից, թեկուզ և բարի խոսք լինի՝ չարախոսություն է, իսկ որ ասի՝ պոռնիկ է, գող, արբեցող կամ արծաթասեր՝ դատել է նշանակում»:

225. Մի եղբայր կար, որի հետ պատերազմում էին խորհուրդները, թե՝ գնա՛ այսինչ ծերին տեսության, իսկ նա իր խորհուրդներին ամեն օր ասում էր, թե՝ վաղը կգնամ: Եվ նա այսպես մնաց երեք տարի և պատերազմեց իր խորհուրդների հետ: Ապա իր խորհուրդներին ասաց. «Ահա, իբր գնացել ենք ծերի մոտ, և նա մեզ ասում է. «Բարո՛վ եկաք, ո՞ղջ եք, եղբայրնե՛ր»: Մենք ասում ենք. «Ողջ-առողջ ենք, հա՛յր սուրբ, Ձեր աղոթքներով, և այսքան տարի փափագում էինք Ձեզ տեսնել»: Ապա վեր կացավ եղբայրը, մի տաշտ վերցրեց և իբրև թե ծերի կողմից՝ սկսեց իր ոտքերը լվանալ և ասել. «Բարո՛վ եկար, եղբա՛յր, թո՛ւյլ տուր ինձ, քանզի տքնեցիր ինձ համար, և Աստված վարձահատույց կլինի քեզ՝ ըստ քո վաստակի»: Ապա կերակուր պատրաստեց՝ իբրև մխիթարություն, կերավ, ըմպեց և ասաց. «Ահա այս է. գնացիր և մխիթարվեցիր ամեն ինչով: Ուրիշ ի՞նչ ես ուզում»: Եվ այդ պատերազմն արագ հեռացավ նրանից, և հանգստացավ, ու ոչ մի տեղ չգնաց իր սենյակից՝ իր խորհուրդների դրդմամբ, քանզի իմաստուն դատաստան արեց:

226. Ծերն ասաց. «Ոչ թե ինձ համար շահեկան և օգտակար է, որ նստում եմ այստեղ մենակ, այլ վշտերի և նեղությունների համար եմ կենում, իսկ զորավորները նրանք են, ովքեր եղբայրների մոտ են

բնակվում: Քանզի ուր որ բնակվում է ծերը, եթե այնտեղ ճգնելով՝ չի կարողանում բարին գործել, ուր էլ որ գնա՝ այնտեղ ևս չի կարող որևէ բան անել»:

227. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ կլինեն այն եղբայրները, ովքեր շրջում են ամենուրեք և եղբայրներից աղոթք են խնդրում, իսկ իրենք ծույլ են և բարի բան չեն անում»: Պատասխանեց ծերը և ասաց. «Արդարների աղոթքները զորեղ են օգնության համար, և կրոնավորը պետք է աղոթք խնդրի ուրիշներից, որպեսզի ինքն էլ ջանադիր լինի բոլոր բարի գործերի մեջ և զերծ մնա բոլոր անպատշաճ խորհուրդներից: Իսկ եթե ծույլ և անզգաստ լինի, նա ի՞նչ շահ կունենա ուրիշների աղոթքներից, քանի որ գրված է՝ եթե մեկը չինի, իսկ մյուսը քանդի՝ ի՞նչ կլինի, եթե ոչ՝ միայն զուր տքնանք»:

228. Մի ծեր սրբի մասին պատմում էին, թե նա բանտարկվել էր հալածանքների ժամանակ, սակայն ուղիղ դավանությամբ խոստովանել և վկայել էր ճշմարիտ Քրիստոսին: Այնչափ տանջանքների էր ենթարկվել, որ մինչև անգամ պղնձե եռացող դագաղի մեջ դրած՝ կիզել էին: Եվ երբ թագավորեց Մեծն Կոստանդիանոսը, և քրիստոնյաներն արձակվեցին բանտերից, ծերը նույնպես ապաքինված՝ վերադարձավ իր սենյակը: Եվ երբ հեռվից տեսավ իր սենյակը, հոգոց հանեց և ասաց. «Վա՜յ ինձ, քանզի դարձյալ եկա դեպի բազում տանջանքները»: Եվ այս ասում էր ճգնությունների և դևերի պատերազմների մասին:

229. Վերին Թեբայիդայի եպիսկոպոս հայր Պափնոտիոսը աստվածապաշտ էր և մեծ ճգնավոր, մինչև անգամ բազում հրաշքներ էր գործում: Նա էլ էր կռապաշտների կողմից կապանքների մեջ դրվել հալածանքների ժամանակ, և նրան բազմատեսակ տանջանքների էին ենթարկել, իսկ հետո փորել էին ձախ աչքը և ազատ արձակել: Սրա համար նրան սաստիկ սիրում էր մեծն թագավոր Կոստանդիանոսը և մեծապես պատվում էր նրան պալատում, ստեպ-ստեպ բարձրացնում էր նրան իր գահի վրա, սիրով համբուրում էր հանուն Քրիստոսի փորված աչքը: Նիկիայի ժողովում հավաքված երեք հարյուր տասնութ հայրերից մեկը այս սուրբ Պափնոտիոս եպիսկոպոսն էր, որ լի էր շնորհներով և սուրբ հայրերի շարքում դասվեց, հաստատելով սուրբ եկեղեցու խիստ կարգը: Այս ծերն ասաց. «Եթե մեկը գովում է որևէ ծերի երես առ երես, նրան գցում է սատանայի բերանը»:

230. Ոմն ծեր բնակվում էր Սկիտեում, իսկ նրա որդին՝ ինչ-որ մի գյուղում: Իշխանը, ձերբակալելով նրա որդուն, բանտ գցեց: Իսկ

երիտասարդի մայրը մարդ ուղարկեց հոր մոտ՝ պատվիրելով նամակ գրել իշխանին, որպեսզի որդուն բանտից հանի: Ծերն իր մոտ եկողին ասաց. «Եթե նրան արձակի, մեկ ուրիշին բանտ կգցի՞»: Սա էլ ասաց. «Մեկ ուրիշին կգցի»: Ծերն ասաց. «Եվ ի՞նչ շահ, եթե մեկի ծնողներն ուրախանան, իսկ մյուսինը՝ տրտմեն»: Այս ծերը ժրաջանորեն զբաղվում էր ձեռագործով, իսկ դրա վաճառքից եկած գումարը աղքատներին էր տալիս: Մի անգամ սով եղավ այդ երկրում, և մայրն իր որդուն ուղարկեց ծերի մոտ, որպեսզի փոքր-ինչ կերակուր տա նրան: Երբ այս լսեց ծերը, իր որդուն ասաց. «Ուրիշ մերձավորներ էլ կա՞ն ձեզ մոտ, որդի՛ս»: Երիտասարդն ասաց. «Այո՛, հա՛յր, բազում մարդիկ կան, որ չքավոր են մեզ նման, և կան, որ առավել չքավոր են, քան մենք»: Իսկ նա փակեց դուռը նրա երեսին և արտասվելով ասաց. «Գնա՛, որդյա՛կ, Նա, ով կերակրում է բոլորին, կկերակրի նաև ձեզ», և ոչինչ չտվեց նրան: Ոմն եղբայր հարցրեց նրան և ասաց. «Եվ քո աղիքները չգալարվեցի՞ն, որ այդպես դատարկ ետ դարձրիր քո որդուն»: Ծերն ասաց. «Եթե մեկը ամեն ինչում չնեղի իր անձը, Աստծուց վարձ չի ստանա, և քանի որ կամավոր գալարեցրի իմ աղիքները, դրա համար համարձակություն ստացա իմ Տիրոջ առաջ»:

231. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչո՞ւ այս սերունդը, հա՛յր, որ այժմ կա, չի կարողանում առաջին հայրերի ճգնություններին կատարել»: Պատասխանեց ծերը. «Այն պատճառով, որդյա՛կ, որ չեն սիրում Աստծուն և մարդկանցից չեն փախչում և չեն ատում աշխարհի նյութը, քանզի այն կրոնավորը, որ փախչում է մարդկանցից և ատում է աշխարհի նյութը, ինքնըստինքյան գալիս է դեպի ճգնություն և զղջում: Ինչպես օրինակ՝ մեկը, որ ուզում է հանգցնել հրդեհն իր ագարակում, նա եթե չշտապի և չհեռացնի առջևում հրաճարակության ենթակա եղածը, չի կարողանա հանգցնել հրդեհը: Նույնպես և ծերը. եթե վշտալից տեղ չգնա, ուր հացն անգամ դժվարությամբ է ճարվում, չի կարող ճգնակյաց լինել. և ով չի տեսնում, հաճախ չի էլ ցանկանում: Այս բանն էլ կրկին ասեմ և զգուշացնեմ. ովքեր գողանում են, ստում կամ այլ մեղք գործում, շուտափույթ զղջում են և արտասուքներով ապաշխարում, իսկ ով ոխ է պահում իր սրտում եղբոր դեմ, ըմպելիս, ուտելիս, ննջելիս, մշտահոլով աշխատելիս կամ որևէ այլ բան անելիս՝ մահաբեր թույնի նման մտքում է պահում ոխը: Ոխակալության ախտն ուտում է նրա սիրտը, և այդ մեղքը չի հեռանում նրա մտքից, դրա համար էլ նրա աղոթքն անեծք է համարվում: Այսպես անընդունելի են դառնում ոխակալի ճգնություններն ու աղոթք-

ները, եթե մինչև անգամ իր արյունը հեղի հանուն Քրիստոսի, ոչինչ չի շահի դրանից»:

232. Ծերն ասաց. «Թեկուզ դու տկար լինես մարմնով, տո՛ւր նրան անհրաժեշտը, ով կգա քեզ մոտ, և դարմանիր նրան, որպեսզի անմտությամբ չհիվանդացնես՝ նեղելով նրան»:

233. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ո՞ր մեկն է ավելի լավ, հա՛յր, գնա՞լ ծերի մոտ, թե՞ նստել սենյակում»: Ծերն ասաց. «Ծերերի մոտ գնալը նախնյաց կանոնն էր, իսկ սենյակում նստելը՝ ավելի բարի է, որ նրանց կողմից օրինադրվեց»:

234. Հարցրին ծերին և ասացին, թե բարի՞ է միջամտել եղբայրների վեճերին: Ծերն ասաց. «Փախի՛ր այդպիսիներից, քանզի գրված է՝ խցի՛ր քո ականջները, որպեսզի արյան դատ չլսես, փակի՛ր քո աչքերը, որպեսզի որևէ անիրավություն չտեսնես»:

235. «Գրգռումն ու նախանձը,– ասաց ծերը,– բարկացողություն են հարուցում մարդու մեջ, իսկ սրտմտությունը կուրություն է դնում նրա մեջ, իսկ կուրությունն էլ գցում է նրան բոլոր չարիքների խորքը»:

236. Ծերին հարցրին. «Ի՞նչ է կրոնավորի կյանքը»: Ծերը պատասխանեց. «Ճշմարտախոս բերան, սուրբ սիրտ և անբիծ մարմին»:

237. Ծերն ասաց. «Մեր հայրերը չարչարանքներ կրելով և խստակյաց վարքով մտան հավիտենական կյանք, իսկ մենք կամենում ենք ծուլությամբ և հեշտ ճանապարհով մտնել»:

238. Ծերն ասաց. «Այս է սաղմոսի խոսքի իմաստը, որ ասում է՝ «Դրեցի իմ ձեռքը ծովի վրա և իմ աչը՝ գետի վրա» (Սաղմ. ՁԸ 26)*: Ձեռքը ծովի վրա՝ մարգարեներն են, աչը՝ Աստծո խոսքն է, իսկ գետը՝ առաքյալները»:*

239. Հարցրեց եղբայրը և ասաց. «Ի՞նչ է ուսուցանում այն խոսքը, որ ասում է, թե՝ սա փրկություն չունի իր Աստծուց (Սաղմ. Գ 3)*»: Ծերն ասաց. «Զար խորհուրդներին է ասում այդ, որոնք Աստծո Հոգին հեռացնում են, երբ մարդն ընկնում է վշտերի մեջ»:*

240. Ծերն ասաց. «Պետք է փախչել նրանցից, ովքեր անօրենություն են գործում, թեկուզ բարեկամ լինի կամ ընտանիքի անդամ, թեկուզ քահանայական կամ թագավորական տոհմից լինի, քանզի չարագործներից փախչելը մեզ Աստծո սիրելին է դարձնում և մեզ համարձակություն է տալիս Նրա առաջ»:

241. Ծերն ասաց. «Ավելի լավ է բնակվել աստվածավախ մարդկանց հետ, քան հազարավորների, ովքեր չեն երկնչում Տիրոջից, քանզի վերջին օրերին հասարակաց վանքերում չի գտնվի մեկը, որ Աստծուց երկյուղի, այլ բոլորը կխոտորվեն, կսիրեն ճոխ սեղաններ, հղփություն, արբեցողություն և վաշխառություն: Այդ օրերին բոլորը իշխանություն և ոսկի սիրողներ կլինեն, սակայն՝ ո՛չ Աստծուն, որովհետև շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված»:

242. Դարձյալ ասաց. «Պետք չէ մոտենալ անօրեններին ո՛չ եկեղեցում, ո՛չ առևտրի մեջ, ո՛չ ճանապարհին, ո՛չ խորհուրդների մեջ: Առհավետ չպետք է մոտենալ այդպիսիներին՝ որտեղ էլ որ լինեն, այլ բնավ պետք է հեռանալ նրանցից, իսկ անօրեն է յուրաքանչյուր ոք, ով զանց է անում Աստծո պատվիրանները»:

243. Ասաց ծերը. «Չկա ոչինչ ավելի աղքատ, քան այն միտքը, որն իմաստասիրում է Աստծուն առանց Աստծո: Ով ուսուցանում է ուրիշներին, պարտավոր է նախ ինքը գործադրել այն, ինչ ուսուցանում է, քանզի գրված է, թե՝ նախ պետք է մշակը պտղից ճաշակի»:

244. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց նրան. «Ինչպե՞ս է լինում, հա՛յր, որ ոմանք տեսիլքներ են տեսնում և հրեշտակների հայտնություններ»: Իսկ ծերը նրան ասաց. «Երանի է նրա՛նց, որդյա՛կ, ովքեր միշտ իրենց մեղքերն են տեսնում, որովհետև այդպիսիք միշտ արթուն և զգաստ են»: Եղբայրն ասաց. «Ես տեսա, որ մի հայր դև հանեց մի այլ հոր միջից»: Ծերն ասաց. «Ինձ պետք չէ դև հանել որևէ մեկի միջից կամ հիվանդների բժշկել: Այլ այս եմ միայն աղաչում Աստծուն, որ դև չմտնի իմ մեջ, այլ սրբի ինձ պիղծ և գարշելի խորհուրդներից, և սրանով մեծ կլինեմ: Քանզի եթե մեկը սրբի իր անձը գարշելի ու անսուրբ խորհուրդներից և առանց հապաղելու կատարի իր աղոթքը, նա նշաններ գործող հայրերի դասում կլինի Երկնքի Արքայության մեջ»:

245. Ծերն ասաց. «Սրբերը, որոնց մեջ Քրիստոս է բնակվում, կժառանգեն և այս կյանքը, և հանդերձյալը, որովհետև այս իսկ կյանքը և հանդերձյալը՝ ամենը Քրիստոս է, և ով իր մեջ ունի Քրիստոս՝ ունի և նրան պատկանող ամեն ինչ: Իսկ ովքեր ախտեր ունեն իրենց մեջ, թեկուզ և ամբողջ երկիրն ունենան՝ բնավ ոչինչ չեն ունենա, բացի այս կյանքի ախտերից, որոնք տիրում են նրանց և ծառայեցնում»:

246. Ծերն ասաց. «Մարդը երբեք չի կարող բարի լինել, որքան էլ ջանա, եթե Աստված չբնակվի նրա մեջ, որովհետև ոչ ոք բարի և բարերար չէ, այլ միայն՝ Աստված»:

247. Դարձյալ ասաց. «Ով զրկանք կրի որևէ մեկից և հոժարությամբ համբերի և իրեն վնասողի համար աղոթի՝ այդպիսին Հիսուսին կնմանվի: Իսկ ով ո՛չ վնաս հասցնի և ո՛չ էլ վնաս կրի՝ նա Ադամին կնմանվի, իսկ ով ուրիշներին վնաս տա, վաշխառություն անի և ընկերոջը զրկի՝ նա դևերին է կնմանվի»:

248. Ծերն ասաց. «Սուրբ Գրքի ընթերցումը, տքնություններն ու աղոթքները մոլորված մտքերը դարձնում են առ Աստված, իսկ այրող ցանկությունները հանգցնում են պահքը, տքնությունները և տեսնելուց խուսափելը, իսկ բարկությունը հանդարտեցնում են սաղմոսերգությունը, երկայնամտությունը և ողորմությունը»:

249. Եղբայրներից ոմանք հարցրին հայրերից մեկին և ասացին նրան. «Ինչո՞ւ մարդը չի ընթանում դեպի այն խոստումը, որ Աստված խոստացավ իր սրբերին»: Ծերն ասաց. «Որովհետև դեռևս չգիտեն երկնավոր բարիքների քաղցրությունը, դրա համար էլ տգեղ խորհուրդների մեջ են թավալվում մարդկային հոգիները»:

250. Ծերն ասաց. «Եթե գնաս մի որևէ տեղ՝ բնակության, մի՛ նայիր նրանց, ովքեր այնտեղ հանգստի և փառքի մեջ են, այլ նայիր աղքատների՛ն և արհամարհվածների՛ն, ովքեր անգամ հաց չունեն ուտելու: Սրանց եթե նմանվես, դու ևս այնտեղ կհանդարտվես»:

251 Ծերն ասաց. «Սուտը հին մարդունն է, իսկ ճշմարտությունը՝ Նոր Ադամինը, քանզի բարի գործերի արմատը ճշմարտությունն է, իսկ սուտը հոգու մահն է»:

252. Ոմն եղբոր, ով հաճախ էր հանդիպում կրոնավորների և գեղջուկների հետ, ծերն ասաց. «Լույսը ուրիշներին է լուսավորում, բայց իր անձը այրում է»:

253. Ծերն ասաց. «Մի՛ բնակվիր այնտեղ, ուր մեկը քո դեմ նախանձ ունի, ապա թե ոչ՝ այնտեղ չի ուղղվի քո կյանքը»:

254. Ծերն ասաց. «Անհնարին է, որ չփրկվի այն մարդը, ով հաստատուն է մնում ուղիղ հավատի և բարի գործերի մեջ՝ շնորհներով մեր Քրիստոս Աստծո»:

255. Հայրերից ոմանք հարցրին Ալեքսանդրիայի սուրբ Աթանասիոս եպիսկոպոսին. «Ինչպե՞ս է Որդին հավասար Հորը»: Նա պատասխանեց և ասաց. «Ինչպես երկու աչքերի ակների լույսն է հավասար՝ տեսնելիս»:

256. Հարցրին ոմանք Գրիգոր Աստվածաբանին, թե. «Ինչպե՞ս են Որդին և Սուրբ Հոգին հավասար Հորը»: Պատասխանեց և ասաց. «Ինչպես արեգակը, շառավիղը և լույսը՝ մի աստվածություն, մի պայծառություն և մի լույս»:

257. Հայր Եսայիասն ասաց. «Երբ Աստված ուզում է ողորմել մեկին, իսկ ինքն այդ չի ուզում, այլ խոտորվում է Աստծուց՝ կատարելու իր կամքը, այնժամ Տերը թույլ է տալիս, որ նրա վրա ակամա փորձություններ գան, որպեսզի որոնի Աստծուն»: Դարձյալ ասաց. «Նորեկ կրոնավորը, որ շրջում է վանքից վանք, նման է արջառի, որը բոռերից կատաղած՝ այս ու այն կողմ է ընթանում»: Դարձյալ ասաց. «Եթե մեկը կամենում է չարին չարով հատուցել, այնպիսին կարողություն ունի նույնիսկ ակնարկելով միայն՝ գայթակղեցնել եղբայրներին»:

258. Նույն հորը հարցրին և ասացին. «Ի՞նչ է արծաթասիրությունը»: Պատասխանեց և ասաց. «Երբ մեկը չի հավատում, թե Տերը կհոգա իր մասին, և Աստծո ուխտից հուսահատությամբ հեռանալով՝ սկսում է արծաթ որոնել և կուտակել»:

259. Հարցրին նրան և ասացին. «Ի՞նչ է չարախոսությունը»: Նա պատասխանեց և ասաց. «Աստծո փառքը չճանաչելը և ընկերոջ նկատմամբ նախանձ ունենալը»: Դարձյալ հարցրին. «Ի՞նչ է բարկացկոտությունը»: Նա ասաց. «Հակառակություն, ստություն և տգիտություն է»:

260. Հայր Եղիան ասաց. «Երեք բանի շուրջ են պտտվում մարդկանց մտքերը. կա՛մ մեղքերի, կա՛մ Տեր Հիսուսի, կա՛մ մարդկանց: Մարդկանցից շատերն այստեղ են փնտրում հանգիստ, և ոչ թե այնտեղ՝ Աստծո մոտ»:

261. Հարցրին ծերին և ասացին. «Ինչպե՞ս է լինելու հարությունը»: Եվ նա ասաց. «Քրիստոսի՛ն հարցրեք այդ, որ հարություն առավ, այդպես հարություն կտա նաև ողջ ադամական ազգին»:

262. Մի անգամ եղբայրները հավաքված հայր Հովսեփի մոտ՝ նրանից կենաց խոսք էին հարցնում, իսկ նա խնդությամբ պատասխանում էր նրանց: Վերջում ասաց. «Ես ևս այսօր թագավոր եմ երկրի վրա, քանզի թագավորեցի ախտերի վրա, որովհետև բնավ չկամեցա աշխարհիկ որևէ խոսք ասել կամ լսել որևէ մեկից»:

263. Հայր Ղունկիանոսն ասաց. «Մարդ միայն այն ժամանակ կընդունի Սուրբ Հոգին, երբ վեր կանգնած լինի բոլոր ախտերից, միայն Աստծուն սիրի և միայն Աստծո մասին խորհի»:

264. Հայր Պիմենն ասաց. «Եթե մեկը իր կամքին կամ հանգստին միայն հետևի, հավիտենական կորստյամբ կկորչի, քանզի այս երկուսն այնքան բուռն են՝ կամքն ու հանգիստը, որ ավելի արագ, քան մյուս ախտերը՝ քաշում են դեպի կորուստ: Թեև շատերը զորավոր եղան, սակայն քչերը քննելով՝ ուղղեցին այս»: Ասաց դարձյալ. «Երրորդ սերնդից մինչև այսօր Սկիտեի եղբայրները չկարողացան գալ դեպի կատարելություն»: Դարձյալ ասաց. «Եթե չբերեր Մովսեսը իր ոչխարները դեպի Սինա լեռը, չէր կարողանա տեսնել Աստծո տեսիլքը մորենու մեջ, քանզի Սեմի որդիները նյութական են. և ով արդարացնում է իր անձը՝ սպանում է»:

265. Հայր Սիսոյեն ասաց. «Եթե մեկը հոգում է քո կարիքները, թո՛ղ նրանից բացի մեկ ուրիշը քեզ չհրամայի»:

266. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ի՞նչ անեմ, որովհետև ձեռագործ անելիս տրտմում եմ: Սիրում եմ արմավը, սակայն չեմ կարողանում հյուսել»: Ծերը նրան ասաց. «Գրված է, որ եղբայրը չպետք է հանգիստ փնտրի ձեռագործի մեջ, այլ պարտավոր է անդադար տքնել կրոնավորական գործերի մեջ»:

267. Ասաց դարձյալ. «Բազմիցս պատիվների արժանանալը և դրանից չերկնչելը մեղքերի մեջ է գցում»:

268. Ծերն ասաց. «Եթե կամենաս ըստ Աստծո օրենքների ապրել, քեզ օգնական և փրկիչ կլինի օրենսդիր Աստված, իսկ եթե չհնազանդվես Աստծո օրենքներին, քեզ դեպի կորուստ ուղեկցող ընթացակիցներդ չար դևերը կլինեն»:

268. Ծերն ասաց. «Հոգս չանելը, լռելն ու Աստծո օրենքների մասին խորհելը ծնում են անբծություն. ինչպես որ մեղուն՝ ուր էլ լինի՝ մեղր է պատրաստում, նույնպես և կրոնավորը՝ ուր էլ գնա՝ պարտավոր է Աստծո գործերը կատարել»:

269. Ծերն ասաց. «Սատանան կապանքներ ոլորող է, և որքան դու թույլ տաս, այնքան նա կարող է ոլորել»: Նա այս ասելով՝ նկատի ուներ սրտի խորհուրդները:

270. Ասաց դարձյալ. «Եթե մեկը լինի ծույլ, դատարկապորտ և անգործ, Աստված նրան չի կամենա՝ ով էլ լինի նա»:

271. Ծերն ասաց. «Տո՛ւր ողորմություն, և Աստծուց զորություն կստանաս»:

272. Դարձյալ ասաց. «Տկարության համար գոհությո՛ւն հայտնիր Աստծուն»:

273. Դարձյալ ասաց. «Ինչպես արծաթը՝ թեկուզ և սևանա, դարձյալ կճերմակի, այնպես և հավատացյալը՝ եթե նույնիսկ սևանա մեղքով, դարձյալ կսրբվի ապաշխարությամբ: Ահա սրանով հավատը նմանվում է արծաթի»:

274. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Մի քանի եղբայրներ ինձ հետ են բնակվում: Կամենո՞ւմ ես, որ ես հրահանգներ տվող լինեմ նրանց»: Ծերը նրան ասաց. «Ո՛չ, այլ դու բարին գործո՛վ կատարիր, և եթե նրանք իրենց անձերի փրկությունն են կամենում, կպահեն այդ՝ ի շահ իրենց»: Եղբայրը ծերին ասաց. «Նրանք ևս կամենում են, հա՛յր, որ ես հրամայեմ իրենց»: Ծերը նրան ասաց. «Զանե՛ս, այլ օրինա՛կ եղիր նրանց, և ո՛չ թե օրենսդիր»:

275. Հայր Պիմենին հարցրեց եղբայրը և ասաց նրան. «Ես գտա մի տեղ, ուր լիակատար հանգիստ կա եղբայրների համար: Կամենո՞ւմ ես, որ այնտեղ բնակվենք»: Ծերն ասաց. «Բնակվիր այնտեղ, որտեղ նեղություն չես պատճառի քո եղբորը»: Եվ դարձյալ եղբայրն ասաց. «Եթե իմ եղբայրը մի փոքր գումար ունենա, կարո՞ղ եմ փոքր-ինչ խնդրել նրանից»: Ծերն ասաց. «Միայն մեկ անգամ կխնդրես նրանից»: Եղբայրը դարձյալ ասաց. «Ի՞նչ անեմ, քանզի խորհուրդներիս չեմ կարողանում հաղթել»: Ծերը նրան ասաց. «Թո՛ւյլ տուր խորհուրդներիդ, միայն թե մի՛ տրտմեցրու եղբորդ»:

276. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Մեզ մոտ երկու եղբայրներ կան. մեկը հաճախ է պահեցողություն անում, վեց օրը մեկ է ճաշակում և սաստիկ տքնում է, իսկ մյուսը հիվանդներին է խնամարկում: Արդ, նրանցից որի՞ գործն է առավել ընդունելի Աստծուն»: Ծերն ասաց. «Նա, որ պահեցողություն է անում, թեկուզ իր բերանը առաստաղին կապի, չի կարող հավասարվել նրան, ով հիվանդներին է սպասարկում»:

ԳԼՈՒԽ ԺԱ

ԱՐԹՈՒՆ ԵՎ ՀԳԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Աբբա Անտոնիոսն ասաց. «Տեսա կրոնավորների, որ բազում տքնություններից և ճգնություններից հետո ընկան և հիմարացան, քանզի իրենց գործերի վրա էին դրել հույսը: Եվ մոռացան պատվիրանը, որ ասում է. «Հարցրո՛ւ քո հայրերին, և նրանք քեզ կպատմեն, հարցրո՛ւ քո ծերերին, և նրանք քեզ կասեն» (Բ Օրին. ԼԲ 7)*»: Դարձյալ ասաց. «Եթե հնարավոր է, ամեն մի երիտասարդ մենակյաց իր ամեն քայլափոխի և իր խցում ըմպած ամեն մի կաթիլ ջրի վերաբերյալ պետք է ասի ծերին, քանզի գիտեմ մենակյացների, ովքեր բազում տքնություններից հետո կործանվեցին, քանզի հույսը դրեցին իրենց գործերի վրա՝ իբրև թե հաճելի եղան Աստծուն»:*

2. Ոմն եղբայր, որ ծերի մոտ էր, անապատի հեռավոր խորքերում գտավ մի մեկուսի տեղ, ուր ոչ ոք ոտք չէր դրել: Իր հորն աղաչելով՝ ասաց. «Թո՛ւյլ տուր ինձ գնալ և բնակվել այնտեղ. հույսս դրել եմ Աստծո և քո սուրբ աղոթքների վրա, որ այնտեղ ավելի խիստ կճգնեմ»: Սակայն հայրը թույլ չտվեց նրան բնակվել այնտեղ. «Գիտեմ,— ասաց,— որդյա՛կ, որ բազում տքնություններով ես ընթանում, սակայն քո կողքին ծեր չունենալով՝ քո գործերին կնայես՝ կարծելով, թե դրանք հաճելի են Աստծուն, և կհաճոյանաս ինքդ քեզ, թե՝ մենակյացի գործ ես կատարում, որով և կկորցնես քո վաստակն ու իմաստությունը»:

3. Ծերն ասաց. «Եթե կրոնավորը իր սրտում չդնի, թե երկրի վրա միայն ինքն է և Աստված, չի կարողանա ապրել»:

4. Ծերն ասաց. «Ավազակը մի խոսքով արդարացավ (Ղուկ. ԻԳ 42-43)*, և Հուդան մի գիշերում կորավ* (Ղուկ. ԻԲ 47-48)*: Ուստի ոչ ոք թող չհուսահատվի և ոչ ոք թող վստահ չլինի իր անձի վրա»:*

5. Սիղվիանոս ծերը խրճիթից դուրս գալիս ծածկում էր իր երեսը, և երբ հարցնում էին, ասում էր. «Ծածկում եմ, որպեսզի չտեսնեմ ծառերը, և միտքս չթողնի իր ներքին մշակության գործը»:

6. Ծերերից մեկը պատմեց. «Մի անգամ ես և իմ ծերը գնում էինք Սկյութիա: Նա ընթանում էր լուռ և ստեպ-ստեպ աղոթքի էր կանգնում: Ես նրան ասացի. «Արա՛գ գնանք, հա՛յր»: Նա ասաց. «Չեմ լսում քեզ»: Ես ասացի. «Ինչո՞ւ, հա՛յր»: Եվ նա ինձ ասաց. «Որդյա՛կ իմ, լսում եմ, որ երկնքում Աստծո և հրեշտակների փառաբանությունն է հնչում ժամանակ առ ժամանակ, դրա համար էլ չեմ կարողանում առաջ շարժվել, քանզի մենք նույնպես պետք է հսկենք և աղոթենք ամենայն ժամ՝ գիշեր թե ցերեկ, տանը թե ճանապարհին, քանի որ հայր Անտոնիոսն էլ ասում էր, թե. "Ոչ մի բանի մասին չպետք է կրոնավորը հոգ տանի՝ իր հոգու օգտից բացի"»:

7. Ոմն սուրբ այր վախճանվելու վրա էր: Նույն պահին, երբ պետք է ավանդեր հոգին, սատանան կանգնեց նրա առաջ և ասաց. «Դու ճողոպրեցիր իմ ձեռքից»: Եվ ծերն ասաց. «Ես դեռևս չգիտեմ, Աստված գիտե»: Մինչև այդ պահն անգամ արթուն էին սուրբ հայրերը, որպեսզի երբեք չպարծենան:

8. Հայր Պիմենը մինչև աղոթքի գնալը մեկ ժամ քննում էր իր անձը, ապա գնում էր և ասում. «Եթե անգամ նոր երկինք ու նոր երկիր լինի, մարդը չի կարող առանց հոգսերի լինել»:

9. Ամոնը երեք բան դրեց իր մտքում՝ ուսանելու հայր Անտոնից, և գնաց նրա մոտ: Երբ հասավ Անտոնի մոտ, մոռացավ ասելիքը և դարձավ վերստին իր խուղը: Երբ բանալին մտցրեց սողնակի մեջ, հիշեց այն և բանալին թողնելով սողնակի մեջ՝ կրկին ետ դարձավ և գնաց Անտոնի մոտ, իսկ Անտոնի լեռը ճանապարհի կեսին էր: Եվ Անտոնն իմանալով այդ՝ ասաց. «Ո՛վ Ամոն, դու հրեշտակ ես, քո անունը կխոսվի ողջ Եգիպտոսում»:

10. Ժամանակին հայր Հովհան Կարճահասակի մասին ասում էին, թե երբ գալիս էր հնձից կամ գնում էր ծերերի մոտ, աղոթքների և սաղմոսների խոկման մեջ այնքան էր պարապում՝ մինչև խորհուրդները հանդարտվեին առաջվա պես:

11. Ոմն ծեր ասաց. «Մարդը պետք է իր գործերը պահպանի, որպեսզի դրանցից ոչինչ չկորչի: Եթե մեկը շատ գործեր անի և չպահի իր գործերը, հաստատուն չի մնա»: Եվ ահա այսպիսի բան պատմեց. «Մի

եղբոր հայրը մահացավ և ժառանգություն թողեց, իսկ նա, կամենալով ողորմություն անել վախճանվածի հիշատակին, որոշեց վաճառել այն: Մի օտար եղբայր եկավ նրա մոտ և արթնացրեց նրան գիշերով՝ ասելով. «Արի օգնիր ինձ»: Եղբայրն աղաչեց նրան և ասաց. «Հոգնաբեկ եմ, չեմ կարող օգնել»: Նա նրան ասաց. «Եթե չես օգնում, հեռո՛ւ գնա այստեղից»: Եվ օտար մարդը վեր կենալով՝ գնաց: Հաջորդ գիշեր նա տեսիլքում տեսավ, որ ցորենը տվեց հացթուխին, իսկ նա նրան հաց չտվեց: Այնժամ գնաց մի ծերի մոտ և ամեն ինչ պատմեց նրան: Ծերը նրան ասաց. «Բարի գործ արեցիր, բայց հակառակորդը չթողեց վարձն ստանալ»: Ուրեմն՝ մարդը պետք է արթուն լինի իր գործի մեջ»:

12. Ծերն ասաց. «Եթե մեկը կորցնի ոսկի և արծաթ, դրանց փոխարեն ուրիշը կգտնի, իսկ ով կորցնի իր ժամանակը, այլևս չի գտնի այն»:

13. Հայր Ամոնի մասին ասում էին. «Երբ եկեղեցի էր գալիս, թույլ չէր տալիս իր աշակերտին՝ մոտ գալ իրեն: Իսկ երբ մոտ էր գալիս՝ հարցնելու խորհուրդների մասին, անհապաղ հեռացնում էր իրենից՝ ասելով. "Միգուցե մինչդեռ օգտակար բաներ ենք խոսում՝ օտար խոսքեր մեջ ընկնեն, դրա համար էլ թույլ չեմ տալիս քեզ՝ ինձ մոտ գալ"»:

14. Մի անգամ հայր Ամոնը եկավ, որ գետն անցնի և տեսավ, որ մակույկը դեռ պատրաստում էին, և նստեց այդտեղ: Ահա մեկ այլ մակույկ եկավ և մարդկանց էր անցկացնում: Եվ նրան ասացին. «Դու էլ անցի՛ր մեզ հետ, հա՛յր»: Իսկ նա ասաց. «Ես միայն հարազատ արքունական նավակը կբարձրանամ, իսկ այդ մակույկը չեմ մտնի»: Նա արմավենու ճյուղերի խուրձ էր վերցրել և նստած՝ պարան էր հյուսում ու նորից քանդում էր այն, մինչև որ մակույկը պատրաստեցին, և ապա անցավ գետը: Եվ եղբայրները նրա առաջ ընկնելով՝ հարցրին, թե ինչու համար նա այդպես արեց: Ծերը նրանց ասաց. «Երկու պատճառով. առաջին՝ որ հատեմ իմ կամքը, որպեսզի երբեք այն չկատարեմ, և երկրորդ՝ որ հանդարտությամբ կատարեմ Աստծո կամքը և անզգուշաբար չգնամ Նրա ճանապարհը»:

15. Հայր Դանիելն ասաց. «Կանչեց ինձ հայր Արսենն ու ասաց. "Մխիթարի՛ր քո հորը, որպեսզի երբ գնա Տիրոջ մոտ, աղաչի Նրան քեզ համար, և բարի լինի քեզ համար"»:

16. Մի ծեր կար Սկյութիայում, որ խիստ տքնում էր մարմնով, սակայն մտքերով անհաստատ էր: Գնալով հայր Հովհաննես Կարճահասակի մոտ՝ նրան հարցրեց մոռացկոտության մասին, և լսելով ծերի

խոսքը՝ վերստին եկավ իր խուցը և դարձյալ մոռացավ, թե ինչ էր ասել իրեն ծերը: Դարձյալ գնաց այնտեղ, և ծերը դարձյալ խոսեց նույն բանը, սակայն վերադառնալով ծերի մոտից՝ դարձյալ մոռացավ: Եվ բազում անգամ այսպես անելով՝ մոռանում էր ասվածը: Դրանից հետո հանդիպելով ծերին՝ ասաց. «Գիտեմ, հա՛յր, որ դարձյալ մոռացա՝ ինչ որ ասացիր. և քեզ չձանձրացնելու համար այլևս հաճախակի չեմ գալիս»: Հայր Հովհաննեսն ասաց. «Գնա՛ և վառի՛ր ճրագը»: Եվ նա վառեց: Հայրն ասաց. «Այստե՛ղ բեր մյուս ճրագները և վառի՛ր դրանք»: Եվ նա վառեց բոլորը: Հայր Հովհաննեսն ասաց ծերին. «Մի՞թե վնասվեց այն ճրագը, որից վառեցիր մնացած ճրագները»: Եվ նա ասաց. «Ոչնչով չվնասվեց, տե՛ր»: Ծերն ասաց նրան. «Այդպես էլ Հովհաննեսը. եթե անգամ ողջ Սկյութիան գա ինձ մոտ, ինձ չեն կտրի Քրիստոսի շնորհներից: Ուստի, դու երբ կամենաս, ե՛կ ինձ մոտ և մի՛ վհատվիր ամենևին»: Եվ երկուսի համբերությամբ Աստված հեռացրեց նրանից մոռացկոտությունը: Որովհետև այս էր Սկյութիայում բնակվողների բուն գործը՝ հոժարամիտ լինել նրանց հանդեպ, ովքեր պատերազմում են թշնամու հետ, և իրենք իրենց բռնադատելով՝ շահել միմյանց ի բարին:

17. Հայր Մոյին ասաց իր աշակերտին. «Սկզբում ինչպե՞ս էիր տեսնում դու ինձ»: Եվ նա ասաց նրան. «Ինչպես Աստծուն, հա՛յր»: «Իսկ այժմ ինչպե՞ս ես տեսնում ինձ»,– հարցրեց նրան: Եվ նա ասաց. «Ինչպես սատանային. և երբ բարի խոսք ես ասում ինձ՝ որպես սուր եմ ընդունում»:

18. Երեկոյան կողմ Հովհաննես Կարճահասակի խուղը եկավ մի եղբայր, որը շտապում էր այնտեղից գնալ. սակայն առաքինության մասին նրանց զրույցը բազում ժամեր տևեց, եղավ առավոտ, բայց նրանք չիմացան: Եվ երբ Հովհաննեսը ելավ նրան ճանապարհելու, դարձյալ խոսելով ընկան՝ մինչև ժամը վեցը, և նա նորից նրան ներս տարավ՝ ճաշելու, ապա արձակեց:

19. Ոմն ծեր ասաց. «Բանսարկուն թշնամի է, իսկ դու՝ տաճար: Արդ, թշնամին չի դադարում քո տաճարը գցել՝ ինչ որ պատահի՝ հեղելով ամեն տեսակ պղծություն: Իսկ դու պարտավոր ես չծուլանալ, այլ այնտեղից դուրս նետել, իսկ եթե ծուլանաս, կլցնի քո տաճարը պղծությամբ, և դու, մտնելով այնտեղ, հանդարտություն չես գտնի: Սակայն եթե առաջինը նա գցի, դու քիչ առ քիչ դուրս նետի՛ր, և քո տաճարը սուրբ կլինի Քրիստոսի շնորհներով»:

20. Հայր Հովհաննես Կարճահասակն ասաց. «Պատվելով պատվենք Միակին, և բոլորը կպատվեն մեզ, իսկ եթե արհամարհենք Միակին, այսինքն՝ Աստծուն, բոլորը կարհամարհեն մեզ, և կորստյան կմատնվենք»:

21. Աղաչեց հայր Պիմենը բազում խոնարհությամբ հայր Մակարին և ասաց. «Ինձ խո՛սք ասա»: Եվ ծերն ասաց նրան. «Այդ խոսքը, որ խնդրում ես, այժմ վերացած է կրոնավորների միջից»:

22. Հայրերից մեկն ասաց. «Եթե գործունյան բնակվի մի տեղ, ուր կան նաև այլ գործունյաներ, չի կարող առաջադիմել, և ճգնավորի զորությունը չի կարող նվազել: Իսկ եթե դատարկապորտը լինի գործունյաների միջավայրում, եթե աչքաբաց է՝ կառաջադիմի, իսկ եթե ոչ՝ ցած կգլորվի»:

23. Մի անգամ հեթանոսների քուրմը եկավ Սկյութիա: Նա, երեկոյան տուն մտնելով, գիշերեց այնտեղ և տեսնելով ճգնավորի առաքինի վարքը՝ հիացավ և ասաց նրան. «Այդքան ճգնում եք և ոչինչ չե՞ք կարողանում տեսնել ձեր Աստծուց»: Ճգնավոր եղբայրն ասաց՝ ո՛չ: Քուրմը նրան ասաց. «Երբ մենք պաշտամունք ենք մատուցում մեր աստվածներին, մեզանից ոչինչ չեն թաքցնում, այլ մեզ հայտնում են իրենց խորհուրդները, իսկ դուք այդքան տքնությամբ ճգնում եք, այդքան հսկում և ճգնում եք լռությամբ, և ասում ես, թե ոչինչ չեք տեսնում: Ուրեմն, եթե չեք տեսնում, չար խորհուրդներ ունեք ձեր սրտերում, որոնք բաժանում են ձեզ ձեր Աստծուց, դրա համար էլ ձեզ չի հայտնում Իր խորհուրդները»: Եվ եղբայրը գնալով՝ ծերերին պատմեց քրմի խոսքերը: Նրանք զարմացան և ասացին. «Իրոք դա այդպես է, որովհետև պիղծ խորհուրդները մարդուն բաժանում են Աստծուց»:

24. Հայր Անտոնիոսն ասաց. «Ով կռում է երկաթը, նախ մտածում է, թե ինչ է կամենում պատրաստել՝ մանգա՞ղ, կացի՞ն, սո՞ւր, թե՞ տապար: Նույնպես և մենք՝ մենակյացներս, պետք է մտածենք, թե դեպի ո՛ր առաքինությունն ենք ընթանում, որպեսզի ապարդյուն չտքնենք»:

25. Հայր Թեոդորոս Փերմացին հայր Աքեղեայի մասին ասում էր, թե նա առյուծ էր Սկյութիայում՝ Աստծո երկյուղն ունենալով:

26. Մեկ այլ ծեր ասաց. «Առանց մոռացության գործենք այս ամենը, քանզի Աստծով լցվեցինք, որ բնակվում է մեր մեջ, որովհետև մեր մեջ Քրիստոս է բնակվում, և ոչ թե՝ մարդ, և Նա է մեր կյանքը ուղղորդում նավապետի նման, Ում և կրում ենք մեր մեջ: Իսկ եթե

անփույթ լինենք, ոչինչ չենք շահի: Ջանա՛նք ճանաչել Նրան, քանզի Ինքն անիմանալի է, կանգնե՛նք վեմի վրա և ոտնահարե՛նք թշնամուն: Մի՛ ծուլացեք մեղկությամբ, այլ զորությամբ սաղմոսե՛ք և ասե՛ք. «Ով հույսը դրել է Տիրոջ վրա, հավիտյան չի՛ սասանվի, ինչպես Սիոն լեռը» (Սաղմ. ՃԻԴ 1)»:

27. Ծերն ասաց երիտասարդին. «Որդյա՛կ, մի՛ ծիծաղիր, որպեսզի չհեռացնես քեզանից Աստծո երկյուղը»:

28. Աբբա Որսիսիոսն ասաց. «Եթե մարդն իր սիրտը պահի բարու և աստվածային խոսքի մեջ, թշնամին նրանից հեռու կմնա, իսկ եթե նրա մեջ բռնելու տեղ գտնի, կամաց-կամաց կհեռացնի Աստծուց: Ինչպես ճրագը, որ լույսի անոթ է և լույս է ծագեցնում, իսկ եթե ծուլանա յուղ վերցնել, կհանգչի, և խավարը կզորանա նրա վրա, և չի կարողանա մեզ համար լույս ծագեցնել, քանզի նախքան լույսի անհետացումն ու մարումը՝ սնուցման կարիքն ուներ: Արդ, եթե թշնամին տեսնի, որ ո՛չ լույս կա և ո՛չ էլ հրի ջերմություն, կհափշտակի ճրագը և ցած գցելով՝ կփշրի, իսկ եթե միայն թույլ առկայծի, հրահեղուկը չի հանգչի, այլ տանտերը դարձյալ կտնօրինի լույսը, մինչև որ բորբոքվի: Այդպես էլ մեղքով հեղգացած անձինք՝ եթե չջանան ոտքի կանգնել, կամաց-կամաց նրանցից կպակասի Սուրբ Հոգին, և մինչև վերջ կհանգչի նրանց ջերմությունը, ապա թշնամին իր տիրապետության տակ կառնի նրանց հոգին, իսկ մարմինը կնետի ախտերին ու մանրէներին: Իսկ եթե նա մտքով հակվի Աստծուն՝ ինքն իրեն հանդիմանվելով, հանկարծակի ոտքի կկանգնի հեղգությունից Աստվածային գթությամբ և կսկսի ճգնել, որն էլ կլցնի նրա սիրտը գիտության լույսով և կմաքրի այն գործերից, որ նախկինում գործել էր: Այնուհետև կպահի իր անձը ամենայն զգուշությամբ, մինչև իր՝ հավիտենական լույսի մեջ մտնելը, որին միայն այսպես են արժանի լինում»:

29. Աբբա Եվագրիոսն ասաց. «Ամեն ինչի մեջ հիշի՛ր քո վախճանը և հավիտենական դատաստանը մի՛ մոռացիր, և քո հոգու վրա պարապություն չի իջնի»:

30. Ծերերն ասացին. «Սատանան երեք զորություն ունի, որոնք բոլոր մեղքերի առջևից են ընթանում: Նախ՝ մոռացումը, երկրորդ՝ ծուլությունը, երրորդ՝ ցանկությունը: Երբ ցանկությունը գա, կծնի մոռացում և ծուլություն, և մարդը կտապալվի ցանկությունից, իսկ եթե միտքը արթուն լինի, մոռացման մեջ չի ընկնի: Եթե միտքը սթափ լինի

մոռացումից, չի հեղգանա, և եթե ցանկությունը չկատարի, չի գայթակղվի՝ Քրիստոսի շնորհով»:

31. Հայր Թեոփնասն ասաց. «Քանի որ մեր միտքը պակասել է Աստծո տեսությունից, գերի ենք դարձել մարմնական ախտերին»:

32. Ոմն ծեր, բազում տարիներ ճգնելով, Աստծո շնորհներով պաշտպանվում էր դևերի պատերազմներից, որի համար էլ ուրիշներին չէր հավատում և ասում էր. «Ի՞նչ կարող է անել դևը»: Տիրոջ թույլտվությամբ նրան երևաց դևը և ասաց. «Ինչո՞ւ ես հայհոյում ինձ, ի՞նչ մեղք եմ գործել քո հանդեպ: Ահա քառասուն տարի ես ժամանակ ունես ապրելու, կգտնեմ պահ, որպեսզի քեզ նեղեմ»: Այս ասելով՝ դևն անհետացավ: Իսկ նա ապշած՝ ասաց իր մտքում. «Ինչպե՞ս կարող եմ քառասուն տարի կռվել և կրել այս ամբողջ չարչարանքը»: Եվ մտածեց որոշ ժամանակով գնալ քաղաք և հանգիստ առնել եղբայրների և ընկերների հետ, ապա կրկին վերադառնալ և շարունակել ճգնությունը, իսկ հրեշտակը, որ պահպանում էր նրան՝ ասաց. «Ծե՛ր, դարձի՛ր քո խուղը և մի՛ հավատա սատանային»: Եվ նա, ուշքի գալով, ետ դարձավ և չորս օր հետո հոգին ավանդեց ի Տեր:

33. Ոմն եղբայր անցնում էր մի ծերի խրճիթի մոտով և լսում էր, որ ծերը մերթ ասում էր. «Հեռացի՛ր, ապականվա՛ծ, հեռացի՛ր, պի՛ղծ, հեռացի՛ր, գարշելի՛», իսկ երբեմն էլ ասում էր. «Ե՛կ, սիրելի՛, ե՛կ, բարեգործ, ե՛կ, բարեկա՛մ»: Եվ եղբայրը, ներս մտնելով, հարցրեց. «Ո՞ւմ էիր կանչում, հա՛յր, և ո՞ւմ էիր վռնդում»: Նա ասաց. «Բարի խորհուրդներին էի կանչում, իսկ չար խորհուրդներին հալածում էի, որ գալիս էին ինձ ապականելու»:

34. Ծերն ասաց. «Կրոնավորների լռությունը միայն հոգս չանելը չէ, այլ՝ Աստծո երկյուղի մեջ կրթվելը. ննջելիս թե վեր կենալիս՝ փառաբանի՛ր Աստծուն և ամբարիշտների հարձակումից չես երկնչի»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

35. Ոմն եղբայր աղաչում էր հայր Արսենիոսին, որ նրանից խոսք լսի: Ծերը նրան ասաց. «Բռնադատի՛ր քեզ քո ողջ զորությամբ և ճգնի՛ր, որպեսզի ներքին մարդու բոլոր գործերը աստվածային լինեն, քանզի ներքինը կհաղթի արտաքին ախտերին. եթե խնդրենք Աստծուն, կհայտնվի մեզ, և եթե պահենք Նրան, մեզ հետ կբնակվի»:

36. Հայր Աղաթոնն ասաց, թե կրոնավորը պարտավոր է թույլ չտալ իր մտքին, որ դատի ընկերոջը որևէ բանի համար, քանզի առանց Աստծո պատվիրանները պահելու մարդը չի կարող առաքինություններ ձեռք բերել, այլ պարտավոր է ամեն ժամ մշտապես միտքն առնել Աստծո դատաստանը:

37. Հայր Ամոնը, գնալով անապատի ներքին կողմերը, մնաց այնտեղ երկու ամիս, ապա բարձրացավ հայր Պիմենի մոտ և նրան ասաց. «Երբ գնում եմ ընկերոջ սենյակ, կամ նա է գալիս ինձ մոտ որևէ բանի համար, խորշում ենք խոսել միմյանց հետ, միգուցե օտար խոսք մեջտեղ ընկնի»: Ծերն ասաց. «Բարին եք կատարում, որովհետև պետք է երիտասարդ հասակից զսպել բերանը»: Ամոնն ասաց. «Ի՞նչ էին անում ծերերը»: Պիմենն ասաց. «Ծերերը մեծամեծ առաքինություններ հասան և իրենց անձերում օտար բան չունեին, որ խոսեին»: Ամոնը հարցրեց. «Իսկ եթե հարկ լինի խոսել ընկերոջ հետ, Սուրբ Գրքի՞ց է պետք խոսել, թե՞ հայրերի խոսքերից»: Ծերն ասաց. «Լավագույնը լռելն է, սակայն եթե չես կարող լռել, ծերերի խոսքերի՛ց ասա, իսկ Սուրբ Գրքից մի՛ խոսիր, քանզի Սուրբ Գրքի խոսքերը ծանր են և վիշտ են բերում»:

38. Հայր Դանիելն ու հայր Ամոնը գնում էին միասին: Հայր Ամոնը ասաց հայր Դանիելին. «Ե՞րբ նստենք սենյակում, հա՛յր»: Հայր Դանիելը նրան ասաց. «Ո՞վ հիմա մեր միջից վերցրեց Տիրոջը, իսկ սենյակում նույնպես Աստված ներկա է, որովհետև Տիրոջ աչքերը ամենուրեք ամեն ինչ տեսնում են»:

39. Հայր Եսայիասն ասաց. «Կարճամտությունն ու մտքում ընկերոջն ատելը չեն թողնում տեսնելու Աստծո լույսը, սակայն խնդրե՛նք Աստծուն, որ մեզ ողբ տա, որպեսզի մեր մեղքերը լացենք և որպեսզի չտապենք փախչել մարդկանցից, և համարձակություն չունենանք աշխարհականների մոտ, ունայն խոսքեր չխոսենք, որպեսզի մեր մտքերը մթագնելով չհեռանան աստվածճանաչողությունից, որովհետև անհնար է, որ նրանք, ովքեր խոսում կամ լսում են աշխարհիկ-կենցաղային խոսքեր, համարձակություն ունենան Աստծո առաջ: Իսկ նա, ով ասում է. «Ես չեմ վնասվի երկրավոր բաներ լսելուց և տեսնելուց», նման է կույրի, որ եթե մերձենա էլ վառված ճրագին, նրա լույսը չի կարող տեսնել: Այդ հայտնի է նաև արեգակից, որը ծագելիս լուսավորում է ողջ երկիրը, սակայն փոքրիկ ամպից ծածկվում է նրա լույսն ու ջերմությունը»: Դարձյալ ասաց. «Շտապի՛ր փախչել այս երեք ախտերից, որոնք խորտակում են հոգին. դրանք են՝ արծաթասիրություն,

պատվասիրություն և որկրամոլություն, որոնք եթե հաղթեն անձին, այլևս թույլ չեն տա ուղղվել»:

40. Հայր Պետրոսն ասաց. «Իմ ծերին հարցրի մի անգամ, թե ո՞վ է Աստծո ծառա: Եվ նա ասաց. «Եթե մարդ թեկուզ մեկ ախտի ծառա է, նա Աստծո ծառա չէ, այլ այն ախտի ծառան է, որով բռնված է: Եվ քանի դեռ նա այդ ախտի մեջ է, չի կարող ուսուցանել, քանզի ամոթ է նրան սովորել կամ սովորեցնել՝ նախքան ախտից ազատվելը, կամ թե՝ ուրիշների համար աղոթել, քանզի ինչպե՞ս նա ուրիշների համար ազատություն խնդրի, երբ ինքը ծառա է: Ուստի՝ նա ո՛չ ծառա է, ո՛չ էլ Աստծո սիրելի, որպեսզի Աստծուց որևէ բան խնդրի ուրիշների համար: Նա թող մշտապես խնդրի, որպեսզի իր ախտից ազատվի, քանզի որքան ժամանակ որ ախտի մեջ մնա, նրա բերանը փակված է, և ոչինչ չի կարող խնդրել Աստծուց, որովհետև որքան ախտի հնազանդության մեջ մնա մարդ, պարտավոր է լացել և ողբալ իր անձը, քանզի չունի իր մեջ այն մաքրությունը, որ Աստված պահանջում է մարդուց»: Դարձյալ ասաց. «Ամեն մարդու, ով ցավագնած սրտով է խնդրում, Աստված լսում է, և ինչ որ իմաստությամբ խնդրի նրանից՝ շնորհում է նրան: Միայն թե մարդը պետք է չկապվի երկրային որևէ բանի հետ, այլ միշտ հոգ տանի իր անձի մասին, թե ինչպես անդատապարտ կանգնի Աստծո աթոռի առաջ»:

41. Հայր Թեոդորոս Սկյութացին ասաց. «Իմ խորհուրդը նեղում և չփոթեցնում է ինձ, ու թեև գործով կատարել տալ չի կարողանում, սակայն կատարյալ առաքինությունից հեռացնում է ինձ: Իսկ ով իմաստուն է՝ կարթնանա, կզղջա և աղոթքի կկանգնի ու հեռու կվանի այն իր մտքերից»:

42. Ծերն ասաց. «Ոմն եղբայր բազմաթիվ փորձությունների պատճառով կամեցավ հեռանալ իր տեղից: Երբ հագավ իր հողաթափերը, տեսավ՝ այն եղբայրը, ումից գալիս էին իր փորձությունները, նույնպես հագավ իր հողաթափերը և սրան ասաց. «Իմ պատճառով ես չէ՞ գնում այստեղից. ահա ես քեզանից առաջ եմ գնում այն տեղը, ուր դու ես գնում»: Արդ, ուր չկա մտքի արթնություն, անձն ինքն իրեն փորձության է մատնում, որը և հետևում է նրան:

43. Եղբայրներից ոմանք մի անգամ գնացին փորձելու Հովհաննես Կարճահասակին, քանի որ նա իր բերանից երբեք ոչ մի կենցաղային խոսք դուրս չէր հանում: Նրան ասացին. «Գոհանում ենք Աստծուց, հա՛յր, քանզի այս տարի հորդառատ անձրևներ եկան, մաքրված ար-

մավենիները տերևախիտ ճյուղեր տվեցին, և եղբայրների համար դյուրին է ձեռագործ գտնելը»: Ծերը նրանց ասաց. «Այդպես է լինում նաև մարդու հոգին. երբ նրա վրա գալիս են Սուրբ Հոգու շնորհները՝ նորոգում և զորացնում են նրան, և առաքինությունների սիրո և Աստծո երկյուղի ոստերն են բուսցնում նրանում»:

44. Սրա մասին ասում էին, թե մի անգամ երկու կողովի համար պարան հյուսեց, սակայն միայն մեկ կողով գործեց և չգիտակցեց այդ՝ մինչև որ տան պատին հասավ, քանզի մտքով Աստծուն էր հայում:

45. Հայր Հովհաննես Կարճիկն ասաց. «Ես նման եմ մի մարդու, ով կանգնած է մեծ ծառի տակ և տեսնում է բազում գազանների և սողունների, որ իր վրա են գալիս, և նա, փախչելով նրանցից, բարձրանում է ծառը և փրկվում է նրանցից: Այդպես էլ ես՝ նստած եմ իմ սենյակում և տեսնում եմ՝ ինձ վրա են գալիս չար խորհուրդները, և ես աղոթքով դիմում եմ Աստծուն և փրկվում եմ նրանցից»:

46. Ոմն եղբայր հարցրեց հայր Հովհաննեսին և ասաց. «Ինչպե՞ս վարվեմ, հա՛յր, բազում անգամ եղբայրները գալիս են և ինձ տանում են իրենց հետ աշխատելու, սակայն ես տկար եմ և պատվիրանից էլ երկյուղում եմ»: Պատասխանեց նրան ծերը և ասաց. «Քաղեբը Հեսու Նավեին ասում էր. «Ես քառասուն տարեկան էի, երբ Մովսեսն ինձ քեզ հետ ուղարկեց այստեղ, և ահա ես ութսունհինգ տարեկան եմ, և ինչպես այն ժամանակ կարող էի, նույնպես և այժմ կարող եմ մտնել պատերազմի մեջ» (Հեսու ԺԴ 10-11)*: Այսպես և դու, եղբա՛յր, եթե կարող ես աշխատել, ուր էլ որ կանչեն՝ գնա՛, իսկ եթե չես կարող աշխատել, նստի՛ր քո սենյակում և քո մեղքե՛րը ողբա, և եթե տեսնեն քեզ ողբի մեջ՝ չեն պարտադրի որևէ աշխատանք կատարել»:*

47. Հայր Հովհաննեսի մասին պատմում էին, թե գնաց Սկիտեի եկեղեցին և լսեց եղբայրների հակառակությունների ու գժտությունների մասին, վերադարձավ իր սենյակը, սենյակի շուրջը պտտվեց երեք անգամ, ապա նոր միայն ներս մտավ: Իսկ երբ եղբայրներն այդ տեսան, չհասկացան, թե ինչ արեց, և այդ մասին հարցրին նրան: Եվ նա ասաց. «Պտտվեցի սենյակի շուրջը, որպեսզի դուրս թափեմ լսածս գժտությունները, որոնցով լի են իմ ականջները, մաքրեմ իմ լսելիքը և այդպես մտքով հանդարտված՝ մտնեմ իմ սենյակը»:

48. Մի անգամ ոմն եղբայր գնաց հայր Հովհաննեսի մոտ, որպեսզի վերցնի նրա զամբյուղները և տանի ծախելու: Ծերը, դուրս գալով, հարցրեց նրան. «Ի՞նչ է քեզ հարկավոր, հա՛յր»: Եվ նա ասաց.

«Տո՛ւր քո զամբյուղները, հա՛յր»: Ծերը ներս մտավ, որպեսզի բերի, և մոռացավ, ապա նստեց և սկսեց հյուսել: Դարձյալ բախեց եղբայրը, և նա դուրս եկավ նրան հարցնելու, և եղբայրը նույն բանն ասաց: Կրկին ներս մտավ, որ զամբյուղները բերի, և կրկին մոռացավ և նստեց հյուսելու: Եղբայրը երրորդ անգամ բախեց, և հայրը դուրս ելավ և հարցրեց նրան. «Ի՞նչ ես խնդրում»: Նա ասաց. «Քո զամբյուղները, հա՛յր»: Այնժամ նրան ներս տարավ և ասաց. «Եթե զամբյուղներն ես խնդրում, վերցրո՛ւ դրանք և գնա՛»:

49. Մի ուղտապան ևս գնաց Հովհաննեսի մոտ՝ նրա ձեռագործը վերցնելու և այլ տեղեր տանելու: Եվ երբ հայր Հովհաննեսը գնաց այն բերելու, մոռացավ, որովհետև նրա միտքը հափշտակված էր առ Աստված, իսկ ուղտապանն սպասում էր և բախեց դուռը, քանզի ուշանում էր: Հայրն ասաց. «Ի՞նչ ես կամենում, եղբա՛յր»: Իսկ նա ասաց. «Քո ձեռագործը, հա՛յր»: Եվ երբ խոստացավ տալ, դարձյալ մոռացավ, իսկ ուղտապանը երրորդ անգամ բախեց դուռը, և հայրը, դուրս գալով, նույն բանը լսեց նրանից: Եվ երբ հայր Հովհաննեսը կրկին ներս մտավ՝ բերելու, կրկնեց՝ պարան-ուղտ, պարան-ուղտ, որպեսզի չմոռանա մինչև բերելը»:

50. Հայր Իսիդորոսն ասաց. «Գնացի մի անգամ քաղաք՝ իմ ձեռագործը վաճառելու և զգացի, որ ինձ հանկարծակի զայրույթ տիրեց. և ես թողեցի իմ անոթներն ու այնտեղից փախա և ազատվեցի դրանից»:

51. Հայր Ապողոնի մասին ասում էին, թե նա մի աշակերտ ուներ, որին կոչում էին Իսահակ: Սա ուսանեց բոլոր բարի գործերը, ձեռք բերեց զարմանալի լռություն և հանդարտություն, և երբ եկեղեցի էր գնում, ոչ ոքի չէր թողնում, որ իր հետ խոսեն, այլ ասում էր. «Ամեն ինչ լավ է իր ժամանակին»: Եվ աղոթքն ավարտելուց հետո, կարծես հրից փախչելով՝ վազում էր իր սենյակը: Շատ անգամ աղոթքից հետո եղբայրներին տալիս էին պաքսիմատ և գինի, բայց նա չէր վերցնում: Նա ոչ թե եղբայրների օրհնությունից էր հրաժարվում, այլ լռություն էր պահպանում և աղոթքների հանդարտություն: Մի անգամ նա հիվանդացավ այն աստիճան, որ մինչև անգամ անկողին ընկավ, և այս լսելով՝ եղբայրները եկան նրան տեսնելու: Երբ նստեցին, հարցրին նրան ցավերի մասին և ասացին. «Հա՛յր Իսահակ, ինչո՞ւ ես փախչում եղբայրներից, երբ աղոթքը վերջանում է»: Իսկ նա ասաց. «Ես եղբայրներից չեմ փախչում, քավ լիցի, այլ փախչում եմ դևերի խարդավանքներից: Եթե մեկը ճրագ ունի ձեռքին ու հապաղում է դրսում, ճրագը կհանգչի: Այդպես էլ մենք. մտքով լուսավորվում ենք սուրբ պատա-

բագի ժամին, սակայն եթե մեր սենյակից դուրս երկար դեգերենք, մեր մտքերը կխավարեն»: Այսպիսին էր հայր Իսահակի կյանքը:

52. Հայր Կասիանեն մեզ պատմեց ոմն անապատաբնակ ծերի մասին, թե Աստծուց շնորհ խնդրեց, որպեսզի երբեք չնիրհի աղոթքի ժամին: Ստացավ խնդրածը, սակայն եթե աշխարհիկ խոսք էր մեջտեղ գալիս, անհապաղ ննջում էր և չէր թողնում, որ իր լսելիքը դատարկամիտ խոսք մտնի: Այս ծերն ասում էր, թե դևերը պատրաստ են աղոթքների մեջ ստախոսություն գցել, իսկ դա հոգևոր վարդապետության թշնամին է և հալածողը: Ասաց և այսպիսի օրինակ բերեց. «Մի անգամ ես հոգեշահ բաներ էի խոսում եղբայրների հետ, և նրանք այնքան խոր քնով բռնվեցին, որ մինչև անգամ կոպերը չէին կարողանում բարձրացնել, իսկ ես կամեցա թշնամու խաբեությունը ցույց տալ և դատարկ խոսք ասացի, նրանք բոլորը իսկույն զվարճությամբ արթնացան. «Մինչև հիմա երկնավոր բաներ էի խոսում ձեզ հետ, և ձեր բոլորի աչքերը ծանրացել էին, իսկ երբ ունայն խոսք մեջտեղ եկավ, բոլորդ արթնացաք»: Դրա համար, աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ճանաչե՛ք դևերի խաբեությունը և պահե՛ք ձեր հոգիները հեղգության թմբիրից, երբ հոգիների փրկության համար որևէ խոսք լսեք»:

53. Հայր Մովսեսն ասաց. «Չի կարող մարդը Քրիստոսի զինվոր լինել, եթե ամբողջովին հուր չլինի և չարհամարհի պատիվ և հանգիստ, չկտրի մարմնի կամքը և չպահի Աստծո բոլոր պատվիրանները»: Դարձյալ ասաց. «Զգուշությո՛ւն ձեռք բերեք, արդարություն, հեզություն, աստվածապաշտություն, բարի հույս և խաղաղություն ունեցեք մարդու հետ, որպեսզի ազատվեք բոլոր չարիքների մայր համարձակությունից, հանդուգն լրբությունից և անամոթությունից»:

54. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Ի՞նչ անեմ իմ հոգուն, հա՛յր, որովհետև Աստծուց չի երկնչում»: Ծերը նրան ասաց. «Գնա՛, միաբանվի՛ր Աստծո երկյուղն ունեցող մարդու հետ, և մինչ կբնակվես նրա մոտ՝ նա իր վարքով կսովորեցնի քեզ Աստծո երկյուղը»:

55. Մի անգամ հայր Իսահակը նստած էր հայր Պիմենի մոտ և լսեց թռչունի ձայն ու նրան ասաց. «Այս ի՞նչ է այստեղ, հա՛յր»: Իսկ նա նրան ասաց. «Իսահա՛կ, Իսահա՛կ, ինչո՞ւ ես ինձ ստիպում քեզ ասելու, որ դու և քո նմաններդ եք լսում այդպիսի ձայներ, սակայն ով արթուն և զգաստ է՝ չի լսում և ոչ մի աշխարհիկ ձայն»:

56. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Հա՛յր, ինձ խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Քանի դեռ հուրը բորբոքվում է կաթսայի տակ, նրան չեն կարող մոտենալ ճանճեր, մժեղներ կամ ինչ-որ սողուն, իսկ երբ հովանա, այնժամ հավաքված ճանճերն ու մնացածները կլցվեն մեջը: Այսպես էլ կրոնավորն է. քանի դեռ աստվածային գործերի ջերմությունն ունի իր սրտում, թշնամին չի կարող նրան տապալել, իսկ երբ այն պակասի հոգուց, զանազան ախտեր կտիրեն, և կկորի մարդը: Դրա համար էլ ծերին այլ բաներ պետք չեն, բացի սուրբ և արդար սիրտ ունենալուց և առ Տեր Աստված սիրուց»:

57. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիմեոնին և ասաց. «Երբ իմ սենյակից դուրս եմ գալիս և տեսնում եմ, որ մի եղբայր վրդովվում է, ես էլ եմ վրդովվում նրա հետ, և եթե տեսնում եմ, որ ծիծաղում է, ես էլ եմ ծիծաղում նրա հետ, իսկ երբ մտնում եմ իմ սենյակը, արդեն չեմ ունենում մտքերի հանդարտությունը, որ նախկինում ունեի»: Ծերը նրան ասաց. «Ինչպե՞ս կարող է նման բան լինել, որ դուրս գալով՝ վրդովվողի հետ վրդովվես, ծիծաղողի հետ ծիծաղես և հետո սենյակդ մտնելով՝ դարձյալ նույն հանգիստը գտնես, ինչպես մինչ այդ էր»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ պետք է անել, հա՛յր»: Ծերն ասաց. «Եվ ներքուստ զգուշացիր, և առավել ևս՝ արտաքուստ, քանզի բոլորից առավել պիտանի են այս երեքը՝ Աստծո երկյուղը, պահքով ամրացված աղոթքը և ընկերոջը բարին անելը: Որովհետև մարդը չի կարող արտաքուստ տեսնել, երբ ներքուստ են բարձրանում պատերազմները, իսկ ովքեր իմաստությամբ են պատերազմում, արտաքսում են նրանց, քանզի մեր՝ առաջադեմ գործը չտեսնելը՝ մեզ չի թողնում ուղղորդվելու դեպի մեր հոգու շահը»:

58. Հայր Պամբոն ասաց. «Խոնարհեցրո՛ւ քո հայացքը, որպեսզի ունայնություն չտեսնես, քանզի ազատությունն անձի սատակիչն է»:

59. Դարձյալ ասաց. «Եթե մեկը հրաժարվի բոլոր հակառակություններից ու մարդկային խռովքներից, Սուրբ Հոգին կգա և կբնակվի նրա մեջ»:

60. Դարձյալ ասաց. «Բարու սկիզբն ու ավարտն Աստծո երկյուղն է, որովհետև գրված է. «Զգոնության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Սաղմ. ՃԺ 10)*: Եվ Աբրահամն էլ, երբ զոհաբերություն արեց, լսեց Աստծո ձայնը, որ ասում էր. "Այժմ համոզվեցի, որ դու երկյուղ ունես Աստծու նկատմամբ"»* (Ծննդ. ԻԲ 12)*:*

61. Ասաց դարձյալ հայր Պամբոն. «Աստծո ողորմությամբ երբ կրոնավոր դարձա, չզղջացի ոչ մի խոսքի համար, որ բերանիցս դուրս եկավ»:

62. Հայր Ղովտի վարդապետ հայր Պետրեին մեկը հարցրեց և ասաց. «Երբ իմ սենյակում եմ նստում, իմ հոգին խաղաղության մեջ է, իսկ երբ ինձ մոտ գալիս է որևէ եղբայր և ներս է բերում օտար խոսքեր, այնժամ իմ հոգին խռովվում է»: Հայր Պետրոսը նրան ասաց. «Հայր Ղովտն ինձ ասում էր, թե քո բանալիներն իմ դուռը բացում են»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ է այդ խոսքի իմաստը, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Եթե մեկը գա քեզ մոտ, և դու նրան հարցնես՝ ինչպե՞ս ես, կամ՝ որտեղի՞ց ես գալիս, ինչպե՞ս են եղբայրները, արդյո՞ք նրանցից մեկնումեկը պակասեց, այսպես կբացես եղբոր դուռը և կլսես խոսքեր, որոնք չես կամենում լսել»: Եղբայրն ասաց. «Դա այդպես է, հա՛յր, իսկ ի՞նչ պետք է անել, երբ եղբայրը գա»: Ծերը նրան ասաց. «Ողբը վարդապետ է, և ուր չկա ողբ, այնտեղ միտքը պահպանելն անհնար է»: Եղբայրն ասաց. «Քանի դեռ նստում եմ սենյակում, ողբն ինձ հետ է, իսկ մինչ ելնում եմ խցից, կամ մեկը գալիս է ինձ մոտ, այլևս չեմ գտնում այն»: Ծերն ասաց նրան. «Նա քո հպատակը չէ, այլ երբեմն մնում է քո մոտ, երբեն էլ գնում է քեզանից, քանզի օրենքում գրված է. «Եթե հրեա ծառա վերցնես, վեց տարի ծառայի քեզ, յոթերորդ տարում ազատ կարձակես նրան, իսկ եթե նա չթողնի իր կնոջն ու զավակներին, որ քո տանը ունեցավ, չկամենա գնալ, կհանես նրան քո դռան սեմին և նրա ձախ ականջը կծակես, և նա քեզ ծառա կլինի հավիտյան» (Բ Օրին. ԺԵ 12, 16-17)*»: Եղբայրն ասաց. «Եվ ի՞նչ է խոսքիդ իմաստը, հա՛յր»: Ծերը նրան պատասխանեց. «Եթե մեկն իր կարողության չափով աշխատի որևէ գործի վրա, կարող է այն պահել և ունենալ՝ երբ կամենա, քանզի չորդեգրված որդին մնում է մարդու մոտ՝ ծառայելու նրան, իսկ նա, որ ճշմարիտ որդի է՝ իր հորը չի թողնի. այդպես էլ ողբն է: Այսպես էր ասում այս Երանելին»:*

63. Հայր Սիսոյեն իր սենյակում էր, երբ նրա աշակերտը բախեց դուռը, իսկ ծերը խցից ձայնեց և ասաց նրան. «Փախի՛ր, Աբրահա՛մ, փախի՛ր, քանզի իսկապես քեզ չեմ ուզում տեսնել»:

64. Ոմն եղբայր աղաչեց հայր Սիսոյին և ասաց. «Ինձ խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Նստի՛ր քո սենյակում և արտասուքներով հանձնի՛ր քեզ Աստծուն և կհանգստանաս»: Եղբայրն ասաց. «Հա՛յր, կամենում եմ պահել իմ խորհուրդները և չեմ կարողանում»: Ծերն ասաց.

«Ինչպե՞ս կկարողանանք պահել մեր մտքերն ու խորհուրդները, քանի դեռ մեր բերանն ու ականջները բաց ենք թողել»:

65. Ոմանք հարցրին հայր Սիլովանեին և ասացին. «Ի՞նչ ճգնություն արեցիր, հա՛յր, որ այդպիսի աստվածգիտություն ստացար»: Եվ նա ասաց նրանց. «Երբեք չթողեցի, որ իմ մտքի մեջ այնպիսի խորհուրդ մտնի, որը հաճո չէ Աստծուն»:

66. Հարցրեց հայր Մովսեսը հայր Սիլովանեին և ասաց նրան. «Մարդ կարո՞ղ է ամեն օր նորից սկսել»: Ծերն ասաց նրան. «Եթե ճգնավոր է՝ կարող է»:

67. Հայր Սրապիոնն ասաց. «Ինչպես թագավորի զինվորները չեն կարող այլ կողմ նայել, քանի դեռ նրա առջև են կանգնած, այդպես էլ մարդը, որ կանգնում է Աստծո առաջ, եթե միշտ Նրան տեսնի իր մտքում, թշնամին չի կարողանա որսալ նրան: Ուրեմն, զարթնե՛ք, եղբայրնե՛ր, և զգուշացե՛ք, որովհետև մեր զգայարաններից՝ որպես պատուհաններից, կմտնեն գողերը և կկողոպտեն մեզ, թեպետ և մենք չենք ուզում»:

68. Դարձյալ ասաց. «Մենք պետք է միշտ դիմադրենք մեր թշնամիներին, քանի որ արտաքուստ և ներքուստ կռվում են մեզ հետ: Եվ ինչպես օրինակ՝ նավը երբեմն դրսից է խորտակվում՝ ալիքներից, երբեմն էլ ներսից՝ բեռներից ծանրանալով, այսպես և մեզ հետ է պատահում՝ երբեմն արտաքին մեղքերից ենք կորչում, երբեմն ներքին խորհուրդներից ենք ավերվում: Մինչդեռ պետք է թե՛ արտաքին մեղքերից զգուշանալ, որ մարդկանցից են գալիս, և թե՛ ներսի կողմից ախտերն արտաքսել և մաքրել»: Եվ նրան ասաց. «Բոլորս էլ գիտենք, որդյա՛կ, թե ինչպես պետք է ապրել, սակայն ծուլությունից հաղթված՝ պակասում ենք կյանքից»:

69. Երանելի Սինկլիտիկոսն ասաց. «Սիրելինե՛ր, չենք կարող այստեղ անհոգս լինել, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Ովքեր կարծում են, թե կանգնած են, թո՛ղ զգուշանան, որ չընկնեն» (Ա Կորնթ. Ժ 12), *քանզի անհայտ լողում ենք այս աշխարհի ծովի մեջ, ինչպես Գիրքն է երկիրը ծով կոչում: Իսկ ծովի կողմերը բազմազան են. մեկը քարքարոտ է, մյուսը՝ գազանաբնակ, երրորդը՝ խաղաղ: Արդ, մենք, որ մենակյացներ ենք, ծովի հանդարտ կողմում ենք, իսկ աշխարհականները գիշերով ընթանում են աշխարհի խառնաշփոթի միջով: Սակայն նրանցից շատերն այդ խավարի մեջ և խռովահույզ ալիքներում արթուն են մնում և փրկում են իրենց նավը ընկղմվելուց, իսկ մենք այս կյանքի*

հանդարտության մեջ նիրհում ենք ծուլությամբ, օրը ցերեկով ընկղմում ենք մեր հոգիների նավը՝ թողնելով արդար վարքի թիակներն ու ղեկը»:

70. Ծերն ասաց. «Երբ ցած եմ դնում իմ մախաթը, այլևս չեմ վերցնում այն, այլ մահվան մասին եմ խորհում, քանզի ով մտքում պահում է մահը, նա հաղթում է ձանձրույթին»:

71. Ոմն ծեր գնաց մեկ այլ ծերի մոտ, և երբ միմյանց հետ խոսում էին, մեկն ասաց. «Ես մեռած եմ աշխարհի համար»: Մյուս ծերը նրան ասաց. «Մի՛ հավատա դրան, մինչև չելնես այս մարմնից դ, և ապա նոր միայն կասես այդ, թե՝ մեռած եմ:

72. Ծերն ասաց. «Երբ զինվորները մարտի են ելնում, չեն մտահոգվում մյուսների մասին, թե ով կխոցվի, այլ ամեն ոք իր անձի մասին է հոգ տանում. այդպես և կրոնավորը պետք է անի: Ինչպես օրինակ՝ չի խոցվում այն զինվորը, որը մերձ է արքային, այնպես էլ դևը չի կարող վնասել նրան, ով Աստծուն մոտ է կանգնած, քանզի ասում է. «Մերձեցե՛ք ինձ, և ես կմերձենամ ձեզ» (Հակոբ Դ 8)*: Սակայն քանի որ հեշտությամբ ենք մտքով ցրվում, հեշտությամբ էլ թշնամին մեզ ամեն տեսակ մեղքերի մեջ է գցում»:*

73. Ծերն ասաց. «Երբ առավոտյան վեր կենաս, ասա՛ քո անձին. "Մարմի՛ն, աշխատի՛ր, որ կերակրվես, հոգի՛, հսկի՛ր, որ ապրես"»:

74. Մի ծերի մասին ասում էին, թե երբ նրա խորհուրդները հորդորում էին, թե՝ այսօր թո՛ղ մնա, վաղը կապաշխարես, նա ասում էր. «Ո՛չ այդպես, այլ այսօր կապաշխարեմ, իսկ վաղվանը Աստված գիտե»:

75. Ծերն ասաց. «Ինչպես օրինակ՝ նախ կապում են եզների աչքերը, ապա նոր լծում են՝ դեմ տալով պատին, այդպես էլ դևերը՝ նախ խավարեցնում են մարդու մտքի աչքերը, հետո նոր նրան գցում են մեղքերի մեջ»:

76. Յոթ եղբայրներ նստում էին հայր Անտոնի լեռում, և արմավի ժամանակ նրանցից ամեն մեկը հերթով հսկում էր բերքը: Իսկ նրանցից մեկը, երբ հերթը իրեն էր հասնում, ձայնում էր և ասում. «Փախե՛ք և դո՛ւրս ելեք իմ սրտից, չա՛ր խորհուրդներ, և ծառի պտուղներից հեռո՛ւ գնացեք, երկնքի՛ թռչուններ, վնաս մի՛ տվեք»: Այս եղբայրը, հոգով արթուն լինելով, նախ և առաջ իր միտքն էր պահում չար

խորհուրդներից, քանզի այն ավելի կարևոր էր համարում, և ապա նոր՝ ծառերը:

77. Մի ծերի մասին ասում էին, թե մահամերձ էր: Նրա մահիճը շրջապատած եղբայրները հագցրին նրան սև աքեմ և սկսեցին ողբալ, իսկ ծերը բացեց իր աչքերը և ծիծաղեց, հետո դարձյալ ծիծաղեց, և այդպես երեք անգամ: Եղբայրները նրան ասացին. «Ասա՛ մեզ, հա՛յր, ինչո՞ւ մենք լալիս և ողբում ենք, իսկ դու երեք անգամ ծիծաղեցիր»: Ծերը նրանց ասաց. «Նախ՝ նրա համար ժպտացի, որ դուք մահվանից վախենում եք, երկրորդ՝ այն պատճառով, թե դուք ինչո՞ւ չեք պատրաստվում մահվան, և երրորդ՝ նրա համար ծիծաղեցի, որ վշտերից գնում եմ դեպի հանգիստ»: Եվ այս ասելով՝ նույն պահին էլ ննջեց:

78. Հայրերից մեկն ասաց. «Մի կրոնավոր կար՝ ուսյալ և խիստ ճգնավոր, որի վրա փոքր-ինչ ծուլություն եկավ, իսկ նա սկսեց իր անձը նախատել հեղգանալու համար և ասել. «Մինչև ե՞րբ պետք է հեղգանաս քո կյանքի հանդեպ, եղկելի՛ անձ իմ, և միտքդ չառնես Աստծո դատաստանի ահը: Ո՛վ գիտե, գուցե մեռնես քո ծուլության մեջ և մտնես հավիտենական տանջանքների մեջ»: Այս ասելով մեկուսի՝ արիանում էր Աստծո գործի մեջ: Օրերից մի օր, մինչ նա կատարում էր իր աղոթակարգը, դևերը եկան՝ խռովքի մեջ գցելու նրան: Իսկ նա նրանց ասաց. «Մինչև ե՞րբ եք նեղելու դուք ինձ, ո՛վ չարքեր, բավական է ձեզ անցած օրերի իմ հեղգությունը»: Դևերը նրան ասացին. «Երբ դու հեղգանում էիր մեզ հետ, մենք նույնպես քեզ հետ հեղգանում էինք, իսկ այժմ դու ելար կռվելու մեր դեմ, մենք նույնպես ելանք պատերազմելու քո դեմ»: Եղբայրը, երբ լսեց այս, առավել ժրացավ իր ճգնության մեջ»:

79. Ծերն ասաց. «Մի եղբայր կար Սկիտեում, որը շատ փութաջան էր իր խնամքի, կերակուրների և մարմնական հանգստի հարցում, իսկ մնացած ամեն ինչում չափազանց ծույլ էր: Մի օր դևը, երևալով ծերերից մեկին, ասաց. "Այսինչ եղբայրն ինձ խեղդում է և չի թողնում՝ գնամ իրենից և ամեն օր կանգնում է Աստծո առաջ և ասում՝ փրկի՛ր ինձ չարից: Եվ Աստված նրան ողորմելով՝ իր զորություններով նեղում է ինձ՝ հանելով դուրս, իսկ նա չի թողնում, որ դուրս գամ իր միջից՝ իր մարմնին խնամք տանելով"»:

80. Երկու իմաստասերներ գնացին ոմն ծերի մոտ և խնդրեցին նրան, որպեսզի կենաց խոսք ասի իրենց: Իսկ ծերը լուռ էր: Սակայն նրանք դարձյալ բռնադատում էին ծերին և ասում. «Ոչինչ չե՞ս ուզում խո-

սել մեզ հետ, հա՛յր»: Ծերը նրանց ասաց. «Որ դուք բանասերներ եք՝ գիտեմ, և որ ճշմարիտ իմաստասերներ չեք՝ վկայում եմ: Մինչև ե՞րբ եք սովորելու ասել, և չգիտե՞ք, որ պետք է ասածն անել: Գնացե՛ք և սովորե՛ք լռություն, մահվան խոկում, հանդարտություն և զգաստություն»: Երբ լսեցին իմաստասերները, ասացին. «Հիրավի, ա՛յս է աստվածային իմաստությունը, որ ասածը գործով կատարեն, որպեսզի մահվան խոկման միջոցով սպանվեն ախտերը, և նույն դանձը պահվի լռության և հանդարտ զգաստության միջոցով»: Եվ իրենց գլուխները խոնարհելով՝ երկրպագեցին և ամեն ինչում շահած՝ գնացին:

81. Ծերն ասաց. «Կրոնավորը, որ աշխարհից ելնելով՝ իր անձը գցում է խռովքների ու եղկելի կենցաղային հոգսերի և նրա տուրևառության մեջ, նման է մուրացիկ աղքատի, որ շրջում է, և բնավ չեն պակասում նրա կենսական կարիքները, և բազում հոգսերից ընդարմացած՝ ընկնում ու քնում է, և երազում իրեն տեսնում է հարուստ և թանկարժեք զգեստներով, ապա ուրախությունից զարթնում է և իրեն տեսնում հետին աղքատության և տառապանքների մեջ: Այդպես կլինի նաև կրոնավորի հետ՝ եթե չզգուշանա, այլ ընդունայն և զուր վատնի իր օրերը խռովքների ու հոգսերի մեջ, գերի դառնա խորհուրդներին և ծաղրուծանակ՝ դևերին, որոնք պատերազմում են նրա հետ, որովհետև հավատացնում են, թե իրենց անհանգստությունը, հոգսն ու խռովքները հանուն Աստծո է: Եվ այն ահավոր ժամին, երբ մարմնից բաժանվի հոգին, իրեն կտեսնի եղկելի, աղքատ և բոլոր առաքինություններից՝ պակասած, և այնժամ կհասկանա, թե որքա՛ն բարիքների պատճառ են խոնարհությունը, հանդարտությունը և ճգնավորական զգուշավորությունը, և թե որքա՛ն տանջանքների պատճառ են խռովքները, հոգսերն ու աշխարհիկ հարստության պատրանքները»:

82. Ծերն ասաց. «Միշտ մահվա՛ն մասին խորհիր, որպեսզի ի շահ գործադրես այն, քանզի մարդկանց մտածումներից ոչինչ չի կարող ծածուկ մնալ Աստծուց: Եվ քո մտքերը թո՛ղ մաքուր և արթուն լինեն ամեն տեսակ չարից»:

83. Ծերն ասաց. «Զգուշանա՛նք, եղբայրնե՛ր, և արթո՛ւն լինենք պատերազմելու ժամանակ, թողնե՛նք անցավորներն ու հոգ տանե՛նք անանցների մասին և թո՛ւյլ չտանք մեր մտքին՝ չարը խորհելու, որպեսզի չարությունն ու անօրենությունը բույն չդնեն մեր անձերի մեջ»:

84. Ծերերն ասացին. «Միշտ բարի՛ն խորհենք, որպեսզի բարին գործենք. և ճգնե՛նք, ո՛վ եղբայրներ, հսկե՛նք հանուն հանդերձյալ բարիքների, պատրաստե՛նք մեր անձերը այս երկրավոր կյանքից դուրս գալու համար և ունայնությամբ չվատնենք մեր կյանքի սակավ օրերը, այլ միշտ աղաչենք Աստծո առատաբաշխ ողորմությունը»:

85. Ծերերն ասացին. «Երբ մարդը նոր է գալիս կրոնավորության, Տերը դևերին թույլ չի տալիս, որ ուժգին պատերազմեն նրա դեմ, որպեսզի նրանցից վախեցած՝ իր ձեռնարկումն իրեն օտար չթվա և չդառնա դեպի աշխարհ: Իսկ երբ հարատևում է նրա մեջ, ուսանում և ուղղվում է, այնժամ վրա են հասնում դևերի պատերազմները, մարմնավոր ցանկությունների եռքը ու ախտերի ալիքները, իսկ երբ դրանցից ակամա վհատվում է, նրան ընդառաջ են գալիս խոնարհությունը, ողբերն ու արտասուքները, միայն ինքն իրեն մեղադրելն ու դատելը: Այս փորձություններից ինքը սովորում է և ուրիշներին էլ է սովորեցնում համբերություն, փորձ և դատաստան, և դրանից մղված դիմում է իր Փրկչին՝ բազում արտասուքներով: Բայց շատերին դժվարին թվաց այս բանը և խռովյալ մտքով ու մթագնած սրտով ինքնասպան եղան՝ սրով, ոմանք էլ այդչափ տրտմությունից դահավեժ լինելով՝ կորան, և այսպես հայհոյության դևից խոտորվելով՝ արեցին այդ: Ուրիշներն էլ մարմնի պատերազմի եռքից դրդված՝ կտրեցին իրենց անդամները, մյուսները դարձյալ պոռնկական ախտի գերառատությունից հիմարացան, և դևերից լլկված՝ կանանց բերեցին և բնակեցրին իրենց մոտ: Սակայն մենք կարճամիտ չլինենք և չհուսահատվենք, այլ ամրապնդենք մեզ՝ արիաբար դիմակայելու մեզ վրա եկող թշնամու բոլոր պատերազմներին: Մեզ վրա նեղություններ հասնելիս դոհանա՛նք Աստծուց և Նրան հանձնենք մեր բոլոր հոգսերը»:

ԺԲ

ԱՂՈԹՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Եկան երկու եղբայրներ հայր Անտոնի մոտ և հարցրին նրան Ղևտացիների գրքից: Ամոնն էլ նրա մոտ էր: Եվ Ամոնը լսեց, որ Անտոնն ասում է. «Աստվա՛ծ, ուղարկի՛ր Մովսեսին ինձ մոտ՝ մեկնելու այս խոսքերը»: Եվ Աստված ուղարկեց նրա մոտ՝ միայն Ամոնին և Անտոնին տեսանելի, ուսուցանեց նրան և մեկնեց խոսքերի իմաստը:

2. Հայր Թեոդորոսն ասաց. «Եթե Աստված հաշվի առնի մեր հեղգությունն աղոթքների ժամին և մեր մտքերի գերվածությունը պաշտամունքի ժամանակ՝ չենք կարողանա ապրել»:

3. Մի անգամ ոմն թեբացի ծեր եկավ Սինա լեռը. և մինչ գնում էր այնտեղ, ճանապարհին նրան հանդիպեց ոմն եղբայր և ծերին ասաց. «Երաշտի պատճառով նեղվում ենք, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Եվ ինչո՞ւ աղոթքի չեք կանգնում և Աստծուն չեք աղաչում»: Եղբայրը նրան ասաց. «Աղոթք էլ ենք անում,՛ ուխտ էլ, բայց անձրև չի գալիս»: Ծերն ասաց. «Ջերմ սրտով չեք կանգնում աղոթքի, և ուզո՞ւմ ես իմանալ, որ դա այդպես է»: Այնժամ աղոթքի կանգնեց և իր ձեռքերը բարձրացրեց վեր, նույն պահին էլ անձրև եկավ: Եվ եղբայրը, տեսնելով այդ, զարհուրեց և գետին ընկնելով՝ երկրպագեց նրան: Իսկ ծերը փախավ այնտեղից, իսկ եղբայրն ամենքին պատմեց տեղի ունեցածը, և ովքեր լսեցին՝ փառավորեցին Աստծուն:

4. Ծերն ասաց. «Աղոթքի մեջ մնալուց ավելի դժվար բան չկա, որովհետև ամեն առաքինություն իր հանգիստն ունի, իսկ աղոթքի դեմ դևերը պատերազմում են մինչև վերջին շունչը»:

5. Հայր Հակոբն ասաց. «Մի երիտասարդի տեսա, որ աղոթում էր և ասում. «Աստվա՛ծ, փրկի՛ր ինձ գազաններից»: Եվ դրանից հետո տեսա, որ այնտեղ կար մի ինձ՝ իր ձագերով, և երիտասարդը նրանց հետ կերակրվում էր ինձի կաթով: Մի ուրիշ անգամ էլ աղոթելով ասում

էր. «Փրկի՛ր ինձ կրակից, Տե՛ր»: Եվ հետո մտավ բորբոքված հրի մեջ և բնավ չվնասվեց»:

6. Ի պատասխան եղբայրներից ոմանց ասածին, թե իրենք միշտ աղոթում են, Ղունկիանոս ծերը հարցրեց. «Երբ ուտում կամ ննջում եք, ո՞վ է աղոթում ձեզ համար»: Եվ նրանք պատասխան չտվեցին: Եվ ծերն ասաց նրանց. «Ես սկսում եմ գործը և կանոնը կատարում եմ առանց հապաղելու, առնում եմ օրական տասնվեց դրամ և կեսը տալիս եմ ողորմություն, իսկ նրանք աղոթում են ինձ համար՝ եթե ես ննջում եմ կամ ուտում, և կատարվում է այն խոսքը, թե՝ անդադա՛ր աղոթեցեք (Ա Թեսաղ. Ե 17)*»:*

7. Հայր Մակարիոսը չորս ամիս ամեն օր գնում էր ոմն եղբոր մոտ, որպեսզի խոսի նրա հետ, բայց ոչ մի անգամ չէր գտնում նրան աղոթքներից ազատ: Եվ զարմանալով՝ հայր Մակարիոսն ասաց. «Ահավասիկ, երկրային հրեշտակ է»:

8. Հուլիանոս Ամբարիշտը, երբ կամենում էր Պարսկաստանի վրա հարձակվել, մի դև ուղարկեց արաբների երկիրը՝ իրեն տեղեկություններ բերելու Պարսկաստանի կողմերից: Դևը վերադարձավ տասնհինգ օր հետո, և Հուլիանոսը հարցրեց ուշանալու պատճառը: Եվ դևն ասաց. «Հապաղեցի, սակայն ոչինչ չքաղեցի, քանզի այն երկրում մի մենակյաց կար, որ աղոթքներով արգելեց ինձ որևէ բան իմանալ, իսկ ես տասնհինգ օր ջանացի շեղել նրան աղոթքներից, որպեսզի կարողանամ կատարել իմ գործը, բայց չկարողացա»: Եվ Հուլիանոսն ասաց. «Պարսկաստանից հաղթությամբ վերադառնալիս ես այդ վրեժը կառնեմ նրանից»: Լսեց այս ամենը Եվտիքես անունով մի իշխան, գնաց այն մենակյացի մոտ և դարձավ անվանի կրոնավոր: Իսկ Հուլիանոսը սպանվեց Պարսկաստանում, և նրա հետ խափանվեցին նրա բոլոր չար խորհուրդները:

9. Իմաստասերներից մեկն Անտոն Արդարի առաջ կանգնած՝ ասաց. «Ինչպե՞ս ես ժուժկալում, ո՛վ հայր, Սուրբ Գրքի մխիթարությունից զրկված»: «Իմ գիրքը, ո՛վ իմաստուն»,– ասաց Անտոնը,– «բնության իրողությունն է, և միշտ կողքիս է, երբ կամենում եմ Աստծո խոսքը կարդալ»:

10. Ոմն ծեր ասաց. «Եղբայրների գալստյան ժամանակ չթուլացնես քո սիրտը, այլ այդ ժամանակ ավելի շա՛տ աղոթիր և այն էլ՝ ծածուկ, որովհետև հենց այդ ժամանակ է գաղտնի թշնամուց եկող՝ չարախոսելու գայթակղության վտանգը»:

11. Աբբա Դանիել Սկյութացին պատմեց, թե մի եղբայր կար Եգիպտոսում, որը ճանապարհ գնալիս, երբ օրը տարաժամեց, ցրտի պատճառով մտավ գերեզմանոց և օթևանեց այնտեղ: Եվ երբ դևերն անցնում էին այդտեղով, մեկը մյուսին ասաց. «Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսի խիզախություն ունի այս մենակյացը, որ գերեզմանի մեջ է ննջում. ե՛կ տանջենք սրան»: Մյուսն ասաց. «Ինչո՞ւ ենք ուզում տանջել սրան. ամբողջովին մերն է և մեզ է ծառայում՝ կատարելով մեր կամքը, որովհետև ուտում է, խմում, չարախոսում և զլանում է աղոթել: Սրան տանջելու փոխարեն՝ գնանք խռովքի մեջ գցենք նրանց, ովքեր մեզ են խռովեցնում և աղոթքներով մեր դեմ են մարտնչում օր ու գիշեր»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

12. Երանելի Եպիփան Կիպրացի եպիսկոպոսին տեղեկացրեց նրա՝ Պաղեստինում եղած վանքերի վանահայրը և ասաց. «Թեև Ձեր աղոթքներով չհեղգացան եղբայրներն իրենց կանոնի մեջ, սակայն ստիպողաբար են անում երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերի աղոթքները»: Իսկ նա մեղադրեց նրան և այսպես պատասխանեց. «Հայտնի է, որ օրվա այլ ժամերի ևս ծուլանում եք աղոթել, մինչդեռ կրոնավորը պարտավոր է միշտ և անդադար աղոթել՝ սրտով և մտքով, կանգնած թե նստած, աշխատելիս թե ուտելիս, ննջած ժամանակ թե վեր կենալիս, թե գնալիս: Եվ Դավիթ մարգարեն էր ամեն ժամ աղոթում. երեկոյան թե վաղ առավոտյան, ցերեկը թե գիշերվա մեջ, օրը յոթ անգամ. ողջ օրը,– ասում է,– օրհներգում եմ Տիրոջը և Նրա օրհնությունն ամեն ժամ բերանումս է (Սաղմ. ԼԳ 2)»:

13. Ծերն ասաց. «Եթե մտքերիդ հետ պատերազմող խորհուրդ գա քեզ վրա, զգո՛ւյշ եղիր, որպեսզի ուրիշ բան չխնդրես աղոթքիդ մեջ, այլ թշնամու դեմ սրի՛ր քո աղոթքների սուրը՝ պատերազմելով նրա դեմ»:

14. Մի անգամ հայր Մովսեսը գնաց ջուր բերելու և հայր Զաքարիային գտավ ջրհորի վրա՝ աղոթելիս: Եվ տեսավ հայտնապես Աստծո Հոգին, որ հանգչում էր նրա գլխին, և ուրախությամբ լցվեց հայր Մովսեսը, որ այդպիսի շնորհներ տեսավ հայր Զաքարիայի վրա:

15. Հայր Եսայիասն ասաց. «Մի անգամ պիլիսացիների երեց հայր Իսիդորեն եղբայրների հետ գնաց եկեղեցի, և երբ ուտում ու խոսում էին միմյանց հետ, սաստեց նրանց և ասաց. "Լո՛ւռ եղեք, եղբայրնե՛ր,

որովհետև ես մի եղբոր գիտեմ, որ ուտում և ըմպում է մեզ հետ, և ուտելիս նրա աղոթքը՝ որպես հրե սյուն, ելնում է Աստծո առաջ՞՞»:

16. Հայր Ղովտը գնաց մի անգամ հայր Հովսեփի մոտ և ասաց. «Իմ կարողության չափով անում եմ իմ սակավ աղոթքները, պահքն ու հանդարտությունը, և արգելում եմ չար խորհուրդները՝ որքան կարող եմ. ուրիշ էլ ի՞նչ պետք է անեմ»: Իսկ ծերը վեր կենալով՝ բարձրացրեց իր ձեռքերը դեպի երկինք, և նրա տասը մատները դարձան իբրև վառվող լապտերներ, և ասաց նրան. «Եթե ապրել ես ուզում, եղի՛ր դու ամբողջովին որպես վառվող լապտեր»:

17. Ոմն եղբայր չէր կտրվում իր ձեռագործից, և նրա աղոթքներն անդադար ելնում էին Աստծո առաջ: Այս տեսնելով՝ ծերերը սաստիկ երկյուղեցին և փառք տվեցին սուրբ աղոթքներ ընդունող Աստծուն:

18. Հարցրին ոմանք հայր Մակարիոսին. «Ինչպե՞ս պետք է աղոթել»: Ծերը նրանց ասաց. «Պետք չէ շատ խոսել, այլ պետք է ձեռքերը բարձրացնել երկինք և ասել. «Տե՛ր, ինչպես գիտես և ինչպես կամենում ես՝ ողորմի՛ր ինձ»: Իսկ եթե պատերազմի մեջ ես, պետք է ասել. «Օգնի՛ր ինձ»: Նա գիտե քո բարին և ողորմություն կանի քեզ»:

19. Հայր Նեղոսն ասաց. «Քեզ չարիք պատճառողին որքան չարով հատուցես, քո աղոթքների մեջ դրանք բոլորը քեզ գայթակղություն կլինեն, քանզի աղոթքները հեզություն, անբարկություն և խոնարհություն են և ամեն տեսակ վիշտ ու տրտմություն ցրող հզոր դեղամիջոցներ»:

20. Ասաց դարձյալ. «Ամեն մի առաքինություն, որ մարդ գործում է, նրա արդյունքն աղոթքի ժամանակ կգտնի: Եթե ցանկանում ես աղոթել՝ ինչպես հարկն է, մի՛ տրտմեցրու քո եղբորը, և մի՛ կամեցիր լինել այնպիսին, ինչպիսին ինքդ ես փափագում, այլ ինչպես Աստված է կամենում քեզ համար՝ ա՛յն սիրիր, և դու հանգիստ կգտնես աղոթքներիդ ու խնդրանքներիդ մեջ»:

21. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Հա՛յր, բարի՞ է միշտ աղոթելը»: Ծերը նրան ասաց. «Հայր Անտոնն ասում էր, թե այս խոսքը Տիրոջ բերանից է ելնում. «Աղոթեցե՛ք, ի՛մ ժողովուրդ»,— ասում է Տերը»:

22. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ես ինչպե՞ս հաճո լինեմ Աստծուն»: Ծերը նրան ասաց. «Եթե իսկապես կամենում ես հաճո լինել Աստծուն, պետք է հրաժարվես աշխարհից և հեռանաս ամեն

ինչից, թողնես քո ագարակները և հետևես քո Արարչին: Աղոթքներով ու արտասուքներով գամի՛ր քո անձն Աստծուն և հանգիստ կգտնես այստեղ և հանդերձյալում»:

23. Հայր Տիթոյի մասին ասում էին, թե ստեպ-ստեպ ձեռքերը վայր էր իջեցնում, մինչդեռ աղոթքներում համբառնում էր, մտքով հափշտակվում էր երկինք և մնում էր անմռունչ: Եվ միայն նրա համար էր ձեռքերը շուտ-շուտ վայր իջեցնում, որ գուցե թե որևէ եղբայր տեսնի՝ աղոթքների մեջ նրա մտքերի հափշտակումը դեպի երկինք:

24. Ոմն եղբայր ժամանակ առ ժամանակ գնում էր հայր Տիթոյի մոտ՝ տեսակցության, և չորս ամիս գնալով՝ ոչ մի անգամ աղոթական վիճակից դուրս չգտավ նրան, որպեսզի խոսի նրա հետ: Եվ մի օր էլ երբ գնաց նրա մոտ և կանգնած դռան մոտ՝ հանգստանում էր, լսեց նրա ողբի ձայնը, որ ասում էր. «Տե՛ր, մեղավորիս աղոթքները չեն մտնում քո ականջը, որպեսզի ողորմես ինձ»: Եվ անընդհատ կրկնում էր այդ խոսքը և ողբում էր անդադար:

25. Ոմն ծեր մենակյաց տեսավ, որ մի դև հրաման էր տալիս մեկ այլ դևի՝ արթնացնել ննջած կրոնավորին: Պատասխանեց դևը և ասաց. «Ձե՛մ կարող դա անել, որովհետև արթնացրի նրան մեկ ուրիշ ժամի, իսկ նա վեր կացավ, աղոթեց և հալածեց ինձ այնտեղից»:

ԳԼՈՒԽ ԺԳ

ՕՏԱՐԱՍԵՐ ԵՎ ՈՂՈՐՄԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ոմն ծեր մի եղբոր հետ բնակվում էր խցում, և նա խիստ ողորմած էր: Սով եղավ, և շատերն սկսեցին քաղցել և գալիս էին նրա դուռը, որպեսզի ողորմություն անի իրենց, իսկ նա բոլորին հաց էր տալիս: Եղբայրը տեսնելով, որ շատ է դուրս տալիս, ասաց ծերին. «Տո՛ւր իմ բաժինը հացը»: Եվ նա ասաց. «Վերցրո՛ւ՝ ինչպես կամենում ես»: Եվ բաժանեցին հացը. վերցրեց եղբայրն իր բաժինն առանձին, իսկ ծերն իր բաժին հացից ողորմություն էր անում: Եվ շատերն էին լսում ու գալիս ծերի մոտ, իսկ նա բոլորին էլ հաց էր տալիս: Եվ Աստված, տեսնելով ծերի բարյացակամությունը, օրհնեց նրա հացը: Եղբայրը կերավ իր բաժին հացը, և ծերն ասաց. «Ահա ես էլի հաց ունեմ, ե՛կ վերստին համատեղ ապրենք»: Եվ նա ասաց՝ լավ, և երկրորդ անգամ միացրին հացերը: Եվ դարձյալ առատություն եղավ, դարձյալ գալիս էին ծերի մոտ, խնդրում էին նրանից, և նա տալիս էր նրանց: Պատահեց այնպես, որ հացը սպառվեց, և եղբայրը մտնելով՝ տեսավ, որ հացը վերջացել է: Եվ մի աղքատ եկավ, որ հաց խնդրի, ծերն ասաց. «Մտի՛ր և հա՛ց տուր նրան»: Եղբայրն ասաց. «Չկա, որովհետև հացն սպառվել է»: Եվ ծերը նրան ասաց. «Մտի՛ր և փնտրի՛ր»: Եվ նա մտնելով՝ գտավ հացի կողովը բերնեբերան լցված հացով և մեծ երկյուղածությամբ վերցնելով՝ տվեց աղքատին և ճանաչելով ծերի առաքինությունն ու հավատը՝ փառաբանեց Աստծուն:

2. Մի անգամ երկու եղբայր գնացին Ամոն ծերի մոտ, իսկ ծերը սովորություն չուներ ամեն օր ճաշակելու: Երբ տեսավ եղբայրներին, խնդաց և ասաց. «Ով պահեցողություն անի, վարձ կառնի, իսկ ով ճաշակի հանուն սիրո՝ երկու պատվիրան կկատարի, որովհետև իր կամքը չկատարեց և ըստ պատվիրանի՝ եղբայրներին մխիթարեց»:

3. Եգիպտոսի անապատում մի սուրբ էր բնակվում, որը երեց էր: Նրանից շատ հեռու բնակվում էր ոմն մանիքեցի, որն իրենց երեց կոչ-

վածներից էր, և կամենալով գնալ իր պաշտոնակիցներից մեկի մոտ՝ երեկոյան հայտնվեց այնտեղ, ուր ուղղափառ սուրբն էր: Վախենում ու զարհուրում էր մտնել նրա մոտ՝ դիշերելու, մտածում էր՝ կճանաչի ինձ, որ մանիքեցի եմ, և գուցե չընդունի ինձ: Ի վերջո ստիպված բախեց դուռը, իսկ ծերը, բացելով և ճանաչելով նրան, ուրախությամբ ընդունեց և ներս տարավ, սեղան դրեց և կերակրեց նրան, ապա հանգստացրեց բերկրյալ սրտով: Իսկ մանիքեցին, դիշերը առանձին մնալով, ասաց. «Ինչո՞ւ ոչ մի կարծիք չհայտնեց իմ մասին. իսկապես սա Աստծո ծառա է»: Եվ ընկավ նրա ոտքերը և ասաց. «Այսուհետև ես ուղղափառ եմ»: Եվ այսպես ասելով՝ բնակվեց այնտեղ՝ նրա մոտ:

4. Մի անգամ հայրերից ոմանք գնացին Պանեփոս՝ Հովսեփ ծերի մոտ, որպեսզի հարցնեն նրան, թե ինչպես պե՞տք է ընդունեն հյուր եկած օտար եղբայրներին, թե արդյոք պե՞տք է ուրախանան նրանց հետ՝ նրանց գալու կապակցությամբ և մխիթարեն նրանց: Նախքան նրանց հարցնելը՝ ծերն իր աշակերտին ասաց. «Տե՛ս, թե ինչ եմ անելու այսօր»: Եվ դրեց երկու աթոռներ՝ իր աջ և ձախ կողմերում, և նրանց ասաց՝ նստե՛ք: Եվ մտնելով իր խուղը՝ հագավ աղքատի հանդերձներ, ապա դուրս գալով՝ անցավ նրանց միջով լռելյայն: Ապա կրկին ներս մտնելով՝ հանեց մուրացկանի զգեստները, հագավ իր շորերը և նստեց նրանց միջև, իսկ նրանք զարմացած էին ծերի արարքների վրա: Եվ նա հարցրեց. «Տեսա՞ք՝ ես ինչ արեցի»: Նրանք ասացին՝ այո՛: Նրանց հարցրեց. «Ի՞նչ արեցի»: Նրանք ասացին. «Նախ հագար մուրացկանի շորեր, հետո՝ մենակյացի»: Եվ նրանց ասաց. «Մի՞թե ես փոխվեցի՝ հանդերձները փոխելուց»: Ասացին՝ ո՛չ: Ծերը նրանց ասաց. «Արդ, եթե ես նույնն եմ՝ երկու զգեստները փոխելուց հետո, ուրեմն դրանցից և ոչ մեկը ո՛չ վնասեց ինձ, ո՛չ էլ փոխեց ինձ: Այդպես և դուք պետք է արժանի ընդունելություն ցույց տաք օտար եղբայրներին, ինչպես Տերն է ասում. «Տվե՛ք կայսրինը՝ կայսեր, և Աստծունը՝ Աստծուն (Մատթ. ԻԲ 21, Մարկ. ԺԲ 17, Ղուկ. Ի 25)*: Երբ եղբայրները գան ձեզ մոտ, ուրախությա՛մբ ընդունեք նրանց, իսկ երբ մենակ լինեք, ողբը թող ձեր ընկերը լինի, որպեսզի միշտ Աստծո երկյուղի մեջ լինեք»: Եվ նրանք լսելով՝ զարմացան, որովհետև ինչ հարց որ ունեին իրենց մտքում, նա պատասխանեց՝ առանց հարցնելու: Փառավորեցին Աստծուն և գնացին խնդությամբ, և իբրև Աստծուց ընդունեցին այն խոսքը, որ ասվեց իրենց:*

5. Մի մենակյաց կար, որն ուներ աղքատ աշխարհիկ եղբայր, և ինչ վաստակում էր, տալիս էր այդ աշխարհիկ եղբորը, իսկ աշխարհիկն

ավելի էր աղքատանում: Եվ եղբայրը, գնալով մի ծերի մոտ, պատմեց եղելությունը: Ծերը նրան ասաց. «Եթե կամենում ես ինձ լսել, այլևս մի՛ տուր նրան, այլ ասա՛. «Եղբա՛յր, քանի դեռ կար՝ տալիս էի քեզ, իսկ հիմա ինչ որ դու վաստակես, բե՛ր ինձ քո վաստակից»: Եվ ինչ որ բերի քեզ, վերցրո՛ւ նրանից և որտեղ գիտես՝ մի օտարական կամ ծեր աղքատ կա, տո՛ւր նրան և աղաչի՛ր, որպեսզի աղոթք անի նրա համար»: Եվ եղբայրն այդպես էլ արեց. երբ եկավ աշխարհիկ եղբայրը, խոսեց նրա հետ՝ ինչպես ծերն էր իրեն ասել, և նա տրտմությամբ գնաց իր տուն: Առաջին օրը մի քիչ բանջար բերեց իր վաստակածից, և եղբայրը վերցնելով այն՝ տվեց ծերերին և աղաչեց նրանց՝ աղոթք անել նրա համար, և օրհնվելով նրանցից՝ գնաց: Այդպես դարձյալ բերեց բանջարեղեն և հաց, և եղբայրը վերցնելով՝ նույն կերպ վարվեց: Երրորդ այցին՝ շատ բան բերեց, նույնիսկ՝ ձուկ և գինի, և եղբայրը տեսնելով՝ զարմացավ, ապա կանչելով աղքատներին՝ կերակրեց նրանց: Եվ ասաց նրան եղբայրը. «Մի՞թե հացի կարիք ունես, եղբա՛յր»: Եվ նա ասաց. «Ո՛չ, տե՛ր, որովհետև երբ քեզանից որևէ բան էի առնում, որպես կրակ էր մտնում իմ տուն և լափում էր ամեն ինչ, իսկ դրանից հետո, ինչ քեզնից չեմ վերցնում, Աստված ողորմեց ինձ և օրհնեց»: Եղբայրը, գնալով ծերի մոտ, պատմեց այն ամենը, ինչ պատահեց իր հետ: Եվ ծերը նրան ասաց. «Զգիտե՞ս, որ մենակյացի վաստակը հուր է՝ ուր մտնում է՝ այրում է: Առավել ևս ա՛յս է օգտակար, որ մարդ իր վաստակածից ողորմություն անի, և սրբերի աղոթքը օգնական կլինի նրան, և այսպես կօրհնվի»:

6. Ոմն եղբայր տեսավ, որ հայր Նիտերոն երկու թիկնոց ունի, հարցրեց նրան և ասաց. «Եթե աղքատը գա և խնդրի քեզնից, ո՞րը կտաս նրան»: Եվ նա ասաց. «Լավագույնը կտամ»: Եվ եղբայրն ասաց. «Իսկ եթե մեկ այլ աղքատ գա և խնդրի, ի՞նչ կտաս նրան»: Նա ասաց. «Կեսն էլ կտամ մյուսին»: Եվ եղբայրն ասաց. «Եթե մեկ ուրիշն էլ գա և խնդրի քեզնի՞ց»: Ծերն ասաց. «Կկտրեմ և կեսը կտամ նրան, իսկ մյուս կեսը կգցեմ մեջքիս»: Եվ եղբայրն ասաց. «Եթե մի ուրիշ աղքատ էլ գա և խնդրի քեզնի՞ց»: Եվ ծերն ասաց. «Կտամ նրան մնացորդը, և ինքս մարդուց չեմ խնդրի, այլ կգնամ իմ տեղում կնստեմ, մինչև Աստված ուղարկի և հագցնի ինձ»:

7. Ոմն մագիստրոս թագավորի հրամանով ճամփա ընկավ և ճանապարհին ընկած մի մեռել տեսավ, որ մերկ էր, գթաց նրան և իր հետ եղողներին ասաց. «Վերցրե՛ք իմ երիվարը և փոքր-ինչ առաջացե՛ք»: Եվ իջնելով՝ իր ներքնազգեստը հագցրեց մեռելին և ծածկելով նրան՝

գնաց: Օրեր անց նույն մագիստրոսին մեկ այլ թագավոր ուղարկեց՝ որպես պատգամաբեր, որը, մեկ օրում հասնելով քաղաք, ընկավ երիվարից, ջարդվեցին ոտքերը, և ընկավ անկողին: Թագավորը տեղեկանալով պատահածի մասին՝ բժիշկներին հրամայեց շտապ մեկնել նրա մոտ, սակայն չկարողացան օգնել նրան: Հինգ օրից հետո նրա ոտքը սևացավ: Բժիշկները խորհրդակցեցին միմյանց հետ և որոշեցին կտրել նրա ոտքը, որպեսզի ամբողջ մարմինը չվարակվի, և չմեռնի, իսկ իրեն ասում էին. «Վաղը կգանք և կբուժենք քեզ»: Եվ նա հրաման տվեց երիտասարդին՝ գնալ բժիշկների հետևից և լսել, թե ինչ են խորհում իր մասին: Նրան ասացին. «Քո տիրոջ ոտքը սևացել է, եթե չկտրվի, մարդը կկորչի, սակայն կգանք առավոտյան, և ինչ կամենա՝ կանենք»: Գնալով իր տիրոջ մոտ՝ երիտասարդը ողբաց և ասաց. «Վա՜յ ինձ, տե՛ր իմ, որովհետև բժիշկները խորհում են վաղը կտրել քո վնասված ոտքը»: Եվ նա, լսելով և չդիմանալով սաստիկ ցավերին, ողջ գիշերը տնքում էր և դուրս հանելով ամենքին, ովքեր տանն էին, փակեց դռները և մի փոքր նիրհելով՝ տեսավ մի մարդու, որ դռնից ներս մտավ՝ ձեռքին ունենալով գավազան, որի գլխին խաչ էր փայլատակում: Սա նրան ասաց. «Մա՛րդ, ինչո՞ւ ես լալիս»: Եվ նա ասաց. «Զլա՞մ և չտրտմե՞մ, որ ոտքս կոտրվեց, իսկ բժիշկները ուզում են կտրել այն»: Իսկ տեսիլքի մեջ երևացողն ասաց նրան. «Ցո՛ւյց տուր ինձ քո ոտքը»: Եվ նա, հեռացնելով կտավը, ցույց տվեց նրան: Իսկ հայտնվածը խաչակնքեց նրան և ասաց. «Այժմ վե՛ր կաց և քայլի՛ր»: Հիվանդն ասաց. «Չեմ կարող, նեցո՛ւկ եղիր ինձ»: Նա ուժգին հարվածեց, և սա կաղում էր: Հայտնվածը նրան ասաց. «Այժմ է՞լ ես կաղում»: Եվ հիվանդն ասաց. «Տակավին կաղում եմ»: Ասաց նրան. «Ելի՛ր և շրջի՛ր ողջանդամ»: Եվ իսկույն վեր կենալով՝ շրջում էր առողջ: Եվ ասաց հայտնվածը. «Ահա այժմ առողջացար. չմոռանաս ողորմությունը, ինչպես և լսեցիր. «Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն (Մատթ. Ե, 7), որովհետև դատաստանն իմ ողորմած է նրանց հանդեպ, ովքեր ինձ ողորմություն արեցին»: Եվ դուրս գալիս նրան ասաց՝ կեցցե՛ս: Առողջացածն ասաց. «Գնո՞ւմ ես»: Եվ նա ասաց. «Ի՞նչ ես կամենում, երբ արդեն առողջացար»: Մագիստրոսն ասաց. «Աստծով՝ որ առաքեց քեզ, ասա՛՝ ո՞վ ես դու»: Եվ նա ասաց. «Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես ինձ երդվեցնում. նայի՛ր ինձ, չե՞ս ճանաչում այս ներքին զգեստները»: Ասաց. «Այո՛, տե՛ր իմ»: Եվ հայտնվածն ասաց. «Ես եմ, որ մեռած և ընկած էի ճանապարհին, և այս ներքնազգեստները գցեցիր ինձ վրա: Դրա համար Աստված ինձ ուղարկեց՝ առողջացնելու քեզ: Ամեն ինչում գոհացի՛ր Աստծուց և հեռացրո՛ւ քեզնից մարդկանց օգնու-

թյունը, որովհետև Աստված չի թողնում նրանց, ովքեր խնդրում են Իրեն»: Եվ դուրս եկավ այն դռնից, որից մտել էր: Եվ առողջացածը, քնից արթնացնելով, բոլորին պատմեց տեսածը և շրջում էր առողջ: Եվ մենք էլ տեսնելով՝ փառավորեցինք Աստծուն և գրեցինք ի օգուտ նրանց, որոնց կպատմվի:

8. Պատմեցին մեզ Ալեքսանդրիայի հայրապետ Ապողինարի մասին, թե ամեն ինչում ողորմած էր և անհիշաչար: Եվ ստուգապես ասվեց մեզ, թե Ալեքսանդրիայում մի երիտասարդ կար՝ քաղաքի իշխաններից մեկի որդին, որ արժանավայել ճոխության մեջ վախճանվելով՝ բազում ունեցվածք և ոսկի թողեց նրան: Անհրաժեշտ կարիքների համար ծախսվելով՝ նվազեց նրա հարստությունը, և նա ամեն ինչ կորցնելով՝ ի վերջո հասավ աղքատության՝ ոչ անառակության կամ շռայլության պատճառով, այլ նավարկության ժամանակ ենթարկվելով նավաբեկության՝ կորցրեց ապրանքը, ինչպես սաղմոսում է ասվում. «Բարձրացան երկինք և անդունդ իջան, և նրանց հոգիները մաշվեցին իրենց ներսում (Սաղմ. ՃԶ 26)*»: Այս պատահարից հետո այս երիտասարդը իր մեծությունից նվազեց և նավարկության ընթացքում բեռները կորցնելով՝ առավել ևս նվաստացավ: Երանելի Ապողինարիոսը լսելով այս մասին և տեսնելով նրա տառապանքները, մանավանդ ճանաչելով նրա ծնողներին՝ վշտանում էր, սակայն ամաչում էր նրան գեթ մի փոքր ողորմություն անել: Քանզի տեսնում էր նրան իր ատյանում աղքատ, և ճմլվում էր երանելու սիրտը այդ մարդու վրա, որ պատառոտուն շորեր էր հագնում և կորացած էր հետին աղքատությամբ: Եվ շարժվեց նրա միտքը Աստծուց, և սքանչելի միտք հղացավ, ինչպես վայել էր իր երանությանը. առանձին կանչեց մեծ և սուրբ եկեղեցու նոտարին և նրան ասաց. «Տե՛ր նոտար, կարո՞ղ ես իմ գաղտնիքը պահել»: Նոտարն ասաց. «Աստծո Որդուն եմ հուսացած, տե՛ր իմ, որ ինչ հրաման տա Ձերդ սրբությունը, ոչ մի մարդ չի գիտենա»: Հայրապետն ասաց. «Եկեղեցուն ուղղված՝ հիսուն լիտր ոսկու վստահագիր պատրաստիր՝ այս երիտասարդի հոր անունով, որ վախճանված է. վկաներով հաստատագրի՛ր, կնքի՛ր և բե՛ր այստեղ»: Եվ նոտարը իսկույն կատարեց պատվերը և թուղթը տվեց հայրապետին, և քանի որ այն մարդը ժամանակներ առաջ էր մահացել, իսկ թուղթը նոր էր, հայրապետն ասաց. «Գնա՛, պատվակա՛ն նոտար, գցի՛ր այս թուղթը ցորենի կամ գարու մեջ և մի քանի օր անց բե՛ր այստեղ»: Եվ նա պատվիրված օրը եկավ հայրապետի մոտ՝ թուղթը բերելով իր հետ: Եվ հայրապետն ասաց. «Այժմ գնա՛ և ասա՛ երիտասարդին. «Ի՞նչ կտաս ինձ, որ քեզ տամ*

այս օգտակար գրությունը»: Սակայն տե՛ս, պատվակա՛ն նոտար, որ նրանից երեք դահեկանից պակաս չվերցնես, և տո՛ւր նրան գրությունը»: Եվ նոտարն ասաց. «Թո՛ւյլ տուր, տե՛ր, որ այդ էլ չվերցնեմ»: Արդ, իր մոտ կանչելով երիտասարդին՝ նոտարն ասաց. «Ի՞նչ կտաս ինձ, որ ես քեզ շնորհեմ մի բան, որը կլցնի քո աղքատությունը»: Իսկ նա ուխտեց տալ՝ ինչ որ կամենա: Նոմիկոսը նրան ասաց. «Հինգ օր առաջ արկղում նամակներս էի քրքրում և այս գրությունը գտա, և այժմ հիշում եմ քո երանելի հորը, որ հարգանք ուներ իմ նկատմամբ և ինձ աղաչեց իր մահվան օրը և հանձնեց ինձ այս գրությունը, որ մինչ այժմ մնացել է ինձ մոտ. այժմ որոշեցի այն քեզ տալ»: Երիտասարդն ասաց. «Եվ ի՞նչ ես կամենում, որ տամ քեզ»: Նոտարն ասաց. «Երեք դահեկան»: Եվ երիտասարդն ասաց. «Տեսնում ես, որ իմ դեմքը ամոթահար է պարտքերի պատճառով»: Նոտարն ասաց նրան. «Այո՛, սակայն դու հրաժարվո՞ւմ ես վերցնել սա փոքրիկ հատուցման դիմաց»: Երիտասարդն ասաց դարձյալ. «Գիտե Տերը, որ ոչինչ չունեմ, սակայն եթե վերցնեմ այդ գրությունը, ինչ էլ որ կամենաս՝ կտամ քեզ»: Այնժամ տվեց նրան հիսուն լիտր ոսկու գրությունը: Իսկ երիտասարդը կտակով եկավ հայրապետի մոտ և ծունր իջնելով նրա առաջ՝ տվեց գրությունը: Եվ հայրապետը ընթերցելով՝ սկսեց նրան հանդիմանել՝ ասելով. «Ո՞ւր էիր մինչև հիմա. քո հայրը տասը տարուց ավելի է, որ վախճանվել է. գնա՛, քեզ պատասխան չեմ տա»: Եվ նա ասաց. «Տե՛ր իմ, ես այդ գրությունը չունեի, այլ նոտարն ինձ տվեց դա և ասաց, թե նամակները քրքրելիս է գտել. արդ. ների՛ր քո ծառային»: Հայրապետն ասաց. «Գնա՛ և թույլ տուր, որ ես մի շաբաթից հետո հայտնեմ իմ կամքը»: Գնաց երիտասարդը և սահմանված ժամանակից հետո եկավ վերստին: Երբ տեսավ նրան հայրապետը, պատճառներ էր հնարում՝ որպես թե չի ուզում տալ նրան. «Ինչո՞ւ»,— ասաց,— «ուշացրիր և ժամանակին չբերիր գրությունը»: Երիտասարդն ասաց. «Տե՛ր իմ, գիտե Աստված, որ հանապազօրյա ապրուստս չեմ կարողանում հոգալ: Աստված ինչ ողորմություն ծագեցնի քո սրտում՝ այն էլ արա ինձ համար»: Այնժամ Ապողինարիոս սրբազանն ասաց. «Ընդունում եմ քո աղաչանքները և կվերադարձնեմ քո կարողությունն ամբողջովին, բայց, եղբա՛յր, աղաչում եմ քեզ, սուրբ եկեղեցուց մի՛ պահանջիր քո տոկոսները, քանզի քեզանից եղավ ուշացումը»: Ծունր դրեց երիտասարդն ու ասաց. «Ինչ խորհի տերն իմ և հրամայի, թող այդպես լինի, դրամագլխից ինչ կամենա Ձերդ սրբությունը՝ թող այն թողնվի»: Հայրապետն ասաց. «Ո՛չ, բավական է մեզ, որ տոկոսները թողնես»: Այնժամ բերին և տվեցին նրան հիսուն լիտր ոսկի, իսկ հայրապետն

օրհնեց նրան՝ տոկոսները թողնելու համար և արձակեց: Աստվածային Ապողինարիոսի այս գաղտնի գործն ու գթությունը երիտասարդի հանդեպ հանեցին նրան աղքատությունից, որից հետո նա իր ծնողների բարեկեցության մակարդակին հասավ և բարի վարքով ապրելով՝ գոհացավ Աստծուց:

9. Երբ մենք Ալեքսանդրիայում էինք, Պենտապոլսից, որ Կեռինի մերձակայքում է, եկավ ոմն բարեպաշտ և քրիստոսասեր մարդ՝ Լեոնդիոս անունով: Նա այնտեղ էր ապրում բավական ժամանակ, և քաղաքի բնակիչները նրան բերին Ալեքսանդրիայի հայրապետի մոտ և եպիսկոպոս ձեռնադրեցին: Մեզ հետ խոսելիս նա պատմեց և ասաց, թե Ալեքսանդրիայի Թեոփիլոս հայրապետի ժամանակներում Կեռինում եպիսկոպոս եղավ Սինեսիոս իմաստասերը, որը եկավ Կեռին և այնտեղ գտավ Եվագրիոս անունով ոմն իմաստասերի, որը նրան սիրելի մերձավոր դարձավ, թեև վարքով հելլենացի էր: Բայց Սինեսիոս եպիսկոպոսը նախանձախնդրություն ուներ կռապաշտների նկատմամբ, և ոչ միայն այդպես մտածում էր, այլև ձգտում էր և բազում ջանքեր էր գործադրում՝ Եվագրիոսին բերելու դեպի քրիստոնեություն, սակայն վերջինս հին սովորույթներն ընդունելու պատճառով տեղի չէր տալիս վարդապետությանը: Եպիսկոպոսը, նրա հանդեպ մեծ սեր ունենալով, չէր վիրավորում և չէր բռնադատում նրան, չէր ձանձրանում ամեն օր աղաչել և ուսուցանել, այլ ջանում էր հոժարամտությամբ նրան բերել Քրիստոսի հավատին: Եվ մի օր, երբ նրանց միջև երկարեց հարց ու պատասխանը, նա եպիսկոպոսին ասաց. «Այսպես, տե՛ր իմ եպիսկոպոս, այս ամենից հետո ուզում ես ինձ համոզել, ինչպես դուք՝ քրիստոնյաներդ եք ասում, թե կլինի այս աշխարհի վախճանը: Վախճանից հետո բոլոր մարդիկ այս մարմնով հարություն կառնեն և անապականություն կհագնեն և անապական կյանքի մեջ անապական կապրեն: Նույնպես և նրանք, որ մարմնով մեղքեր գործեցին՝ կկորչեն, և ով ողորմում է աղքատին՝ փոխ է տալիս Աստծուն, ով տառապանքներով այստեղ կորցնում է՝ երկնքում է գանձում և այդ ամենը հարյուրապատիկ ստանում է Քրիստոսի մյուս գալստյանը: Անհավատալի է ինձ այս խորհուրդը, խռովեցուցիչ և ունայն»: Իսկ եպիսկոպոսը ապացուցեց նրան, որ քրիստոնյաների հույսը ճշմարիտ է: Եվ որոշ ժամանակ անց նա մկրտվեց իր ողջ ընտանիքով և հավատաց Քրիստոսին, և մեծ ուրախություն եղավ: Մկրտվելուց հետո եպիսկոպոսին բերեց երեք կենդանի ոսկի և ասաց. «Ընդունի՛ր սա, տո՛ւր աղքատներին և ինձ քո ձեռքով գրությո՛ւն տուր, որ Քրիստոս ինձ դա կտա հանդերձյալ

կյանքում»: Եպիսկոպոսն ընդունեց գանձը և տվեց աղքատներին, իսկ նրան տվեց իր ձեռքով գրված թուղթը: Մկրտությունից օրեր անց հիվանդությունից տկարանալով և իր վախճանին մոտենալով՝ որդիներին ասաց. «Երբ գերեզմանում ամփոփեք ինձ, այս թուղթը դրե՛ք ձեռքիս մեջ և այդպես թաղե՛ք»: Եվ մեռնելուց հետո ամփոփեցին նրան մարմինը և թուղթը տվեցին ձեռքը: Եվ վախճանվելուց երեք օր հետո երևաց եպիսկոպոսին և ասաց. «Արի՛ իմ գերեզմանը, որտեղ ամփոփված եմ, վերցրո՛ւ քո գրությունը, որովհետև լիովին փոխհատուցվեց այն, ինչ տվեցի ես քեզ: Քեզնից ոչ մի ուրիշ պահանջ չունեմ և քո հավատարմության համար քո գրության վրա իմ ձեռքով հավելագրել եմ»: Եպիսկոպոսը չգիտեր, որ իր գրությունը թաղված է նրա հետ: Առավոտյան մարդ ուղարկեց նրա որդիների մոտ և հարցրեց նրանց. «Մի՞թե որևէ մեկի գրությունը դրել եք ձեր հոր հետ»: Նրան ասացին. «Այո՛, տե՛ր, երբ վախճանվում էր, ինչ-որ թուղթ տվեց մեզ և ասաց. «Երբ վախճանվեմ, դրե՛ք այս թուղթը ձեռքիս մեջ՝ բնավ առանց որևէ մեկի գիտենալու»: Այնժամ եպիսկոպոսը վերցրեց նրանց, նրանց հետ նաև կղերիկոսներին և քարակոփներին, ովքեր չինում էին իմաստասերի գերեզմանը, և գնացին գերեզման: Երբ բացեցին այն, գտան եպիսկոպոսի գրությունը մեռելի ձեռքում, որը վերցնելով բացեցին և գտան իմաստասերի ձեռքով հավելագրված այսպես. «Ես՝ Եվագրիոս իմաստասերս, մաղթում եմ քեզ՝ սրբազան եպիսկոպոս Սինեսիոսիդ, ուրախ լինել: Ստացա իմ պարտքը և հատուցվեցի, ոչինչ չունեմ քո հանդեպ՝ ոսկու հետ կապված, որ տվեցի քեզ՝ զորությամբ մեր ճշմարիտ Քրիստոս Աստծո, որ անբավ սքանչելի է»: Եվ երբ բոլորը տեսան այս գրությունը, հույժ զարմացան կատարված հրաշքի վրա վրա և արտասուքներով փառավորեցին Աստծուն: Այն թուղթը մինչ այսօր Կեռինեի սուրբ եկեղեցու գանձատանն է և եկեղեցու այլ սպասքերի հետ ավանդվում է նրանց, ովքեր եկեղեցու սպասավորությունն են ժառանգում հաջորդաբար՝ ի փառս Քրիստոսի:

10. Պատմեց հայր Դանիելը, թե. «Ոմն քարահատ օրական վաստակում էր մի դանկ ոսկի: Մինչև երեկո ոչինչ չէր ուտում, ապա դրանով ուտելիք էր գնում և ուտում էր հյուրերի և աղքատների հետ, իսկ մնացորդներն ու փշրանքները գցում էր շներին և ոչինչ չէր պահում հաջորդ օրվա համար, բացի իր քարահատիչից: Նա ինձ հյուր ընդունեց, և երբ իմացա նրա կենսակերպը, երեք շաբաթ խնդրեցի Աստծուն՝ նրան ունեցվածք տալ, որպեսզի առավել շատ բարեգործություն անի: Տեսիլքի մեջ Տերը, որ կանգնած էր վեմի վրա թագավորի տեսքով, ինձ

ասաց. «Բավական է նրան այն, ինչ ունի»: Ես հանդգնորեն պնդում էի՝ ունեցվածք տալ նրան, բայց Տերն ինձ ասաց. «Դառնո՞ւմ ես նրան երաշխավոր, որ կպահի իմ պատվիրանները»: Եվ ես ասացի՝ այո՛: Ասաց իր մոտ եղած զորքերին. «Լսեցի՞ք դուք»: Եվ եղավ այնպես, որ քար հանելիս քարահատը գտավ ոսկով լի կարաս և չկամեցավ ի հայտ հանել տեղում, այլ գրաստներ վարձելով՝ գնաց Կոստանդնուպոլիս՝ Հուստիանոս թագավորի մոտ, և ապարանքներ ստացավ և վերցրեց քաղաքի եպարքոսությունը: Եվ ես վերստին տեսիլքի մեջ տեսա Տիրոջը. Նա ինձ խեթ նայեց: Եվ ես իմանալով, թե ինչի համար, գնացի այն գյուղը, ապա տեղեկանալով՝ մեկնեցի Կոստանդնուպոլիս և նրա դռան մոտ մնալով չորս ամիս՝ չկարողացա տեսնել նրան, մինչև որ նրա ծառաները ծեծեցին ինձ և թողին կիսամեռ: Ես ողբալով ընկա սուրբ Աստվածածնի առաջ՝ աղաչելով ազատել ինձ այն երաշխավորությունից, և տեսա, որ Սուրբ Աստվածածինը, գրկած Տիրոջ ոտքերը, աղաչում էր ինձ համար: Տերն ինձ ասաց. «Արձակեցի քեզ. արի՛ գնա քո տեղը, իսկ ես այն մարդուն կվերադարձնեմ իր չափի մեջ»: Մեռավ Հուստիանոս թագավորը, և կալանավորելով Եվլոժիոս քարահատին և նրա ուրիշ երեք ընկերներին՝ խլեցին նրանց ողջ ունեցվածքը և ուզում էին սպանել Եվլոժիոսին: Նա՝ մուրացիկի շորեր հագած, եկավ իր գյուղը, մուրճ մուրաց և վերսկսեց իր գործն ու հյուրասիրությունը: Եվ ես լսելով՝ գնացի նրա մոտ, երկար ժամեր լացեցինք միասին, և ես պատմեցի նրան ողջ եղելությունը: Եվ նա ինձ ասաց. «Հիմա՛ էլ խնդրիր, հա՛յր, փոքր-ինչ ունեցվածք, որ կարողանանք վայելել»: Ես ասացի նրան. «Քա՛վ լիցի, թե նման բան մտքովս անցկացնեմ և համարձակվեմ իմ Տիրոջն ասել, Ում գործերը մեծ են, և իմաստությունն՝ անբավ»:

11. Անապատականներից մեկը պատմեց մի մեծահարուստ մարդու մասին, թե ծանր հիվանդացավ և մահվանից վախենալով՝ իր հարստությունից աղքատներին բաժին հանեց երեսուն լիտր դահեկան, և երբ առողջացավ, ափսոսում էր իր գանձի համար: Եվ իր մտերիմներից մեկին ասաց. «Զղջացի, որ իմ գանձը բաժանեցի աղքատներին»: Եվ մտերիմն ասաց. «Ընդհակառակը, խնդա՛ և գոհացի՛ր Աստծուց, որ ընդունեց քո ողորմությունը և առողջացրեց քեզ»: Իսկ նա ասաց. «Իմ մահը դեռ չէր հասել, իզուր կորցրի երեսուն լիտր դահեկանը»: Մտերիմը նրան ասաց. «Ե՛կ միասին գնանք եկեղեցի և Աստծո առաջ ասա՛, թե ես չեմ նա, ով ողորմություն արեց, այլ սա էր: Աստծո առաջ ձեռքով ինձ ցո՛ւյց տուր և ինձնի՛ց վերցրու երեսուն լիտր դահեկա-

նը»: Եվ նա ուրախությամբ հանձն առավ, իսկ մտերիմը, վերցնելով երեսուն լիտր դահեկանը, միասին գնացին եկեղեցի: Անմիտ մեծատունը, մտերիմի ձեռքից բռնած, աչքերը բարձրացրեց դեպ երկինք՝ առ Աստված, և ասաց. «Ես չեմ, որ ողորմություն արեց, այլ՝ իմ այս մտերիմը» և ասաց անունը: Եվ երբ վերցրեց գանձը և դուրս ելան եկեղեցուց, ընկավ և մեռավ մեծահարուստը: Եվ ովքեր այնտեղ ներկա էին, ասացին. «Վերցրո՛ւ քո գանձը, որովհետև որպես ողորմություն շահեցիր այն»: Իսկ նա ասաց. «Քավ լիցի, թե ես նման բան անեմ. ես այն Աստծուն տվեցի, այլևս հետ չեմ վերցնի»: Եվ հենց տեղում պատվիրեց, և ամբողջը բաշխեցին աղքատներին, և խիստ գովեցին բոլոր հայրերը և օրհնեցին նրան, որ գնեց ողորմությունը:

12. Ոմն եղբայր գնաց մի մեծ մենակյացի մոտ, և երբ այնտեղից դուրս էր գալիս, ասաց մենակյացին. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, հա՛յր, որ կտրեցի քեզ քո կանոնական աղոթքներից»: Պատասխանեց ծերը և ասաց. «Իմ կանոնական աղոթքն այն է, որ մխիթարեմ քեզ և բարի խորհրդով արձակեմ»:

13. Մի մենակյաց ընակվում էր հասարակաց վանքի մոտ և կենցաղավարում էր բազմապիսի առաքինություններով: Այն վանք եկան օտար եղբայրներ, և բոլոր եղբայրները հավաքվեցին նրանց մոտ՝ հյուրասիրելու, և ստիպեցին ծերին, որ ուտի իրենց հետ՝ սահմանված ժամից շուտ: Դրանից հետո եղբայրները ասացին նրան. «Զտրտմեցի՞ր արդյոք, հա՛յր»: Իսկ նա ասաց. «Իմ տրտմությունն այն է, որ երբևէ կատարեմ իմ կամքը»:

14. Ոմն ծեր ասաց. «Հյուրի գալստյամբ կամավոր պահքը լուծարվում է, քանզի պահքը մեզանով է, իսկ սերն Աստծո պատվիրանն է: Պահքը միշտ մեզ հետ է, իսկ նրանք միշտ մեզ հետ չեն, և պետք չէ, որ երիտասարդները սուգ անեն առագաստում, քանզի հյուրի միջոցով Քրիստո՛ս է մեզ հետ, դրա համար էլ պարտավոր ենք սիրել նրան»:

15. Ասորիքում մի ծերի մասին ասում էին, թե ընակվում էր անապատի ճանապարհին, և նրա գործը այս էր. երբ անապատից գալիս էր որևէ մենակյաց, նրան կերակուր էր տալիս: Մի օր եկավ նրա մոտ մի մենակյաց, և նա կերակուր տվեց նրան ըստ սովորության, իսկ սա չէր ուզում ճաշակել՝ ասելով, թե պահքի մեջ է: Եվ ծերը տրտմած ասաց. «Հանապազ այս է իմ գործը, սակայն աղաչում եմ քեզ՝ ե՛կ աղոթքի կանգնենք, և ով ծառը խոնարհեցնի իր հետ, նրա խոսքով էլ կշարժվենք»: Ծունր դրեց մենակյացը, բայց ոչինչ տեղի չունեցավ,

իսկ օտարասերը ծունը դնելով՝ ծառն էլ խոնարհեցրեց իր հետ. և կատարեցին նրա կամքը և կատարվածի համար գոհացան Աստծուց:

16. Հովհան սրբասեր հայրապետի մասին ասում էին, թե նրա ողորմածությունը այնքա՛ն մեծ էր, որ մարդկային բնությունից վեր էր: Իսկ երբ լսում էր ողորմած մեկի մասին, կանչում էր իր մոտ և հարցնում. «Հանուն Աստծո՝ ինչպե՞ս դարձար ողորմած՝ բնությունի՞ց, թե՞ հնարամտությունից: Որովհետև,– ասում էր երանելին,– վարձքը մեծ չէ նրա, ով բնությամբ է ողորմած, լռակյաց, զգաստ կամ սակավապետ, քանզի դա Աստծո պարգևն է, ինչպես և՝ ամեն ինչ: Սակայն ովքեր ճնշում են իրենց սիրտը և կամքը և բռնությամբ են առաքինություն գործում, սրանց է վերաբերում Տիրոջ խոսքը, թե. «Բռնությամբ են հափշտակում երկնքի Արքայությունը (Մատթ. ԺԱ, 12)»: Եվ երբ հարցնում էր, ոմանք պատկառանքով թաքցնում էին, ոմանք էլ՝ պատասխանում: Մի անգամ երբ մեկին հարցրեց սրա մասին, նա ասաց. «Հավատա՛, տե՛ր, ոչ մեկին էլ ոչինչ չեմ տալիս և ոչ մի բարի բան չեմ անում, սակայն այդ ոչինչը, որ տալիս եմ, որը Աստծո և ձեր աղոթքների պարգևն է, այսպես սովորեցի տալ. առաջ խիստ անգութ և անկարեկից էի, սակայն հետագայում զրկվելով ունեցվածքից՝ սաստիկ նեղություններ կրեցի, և իմ խորհուրդներն ինձ ասացին. «Արդարև, եթե ողորմած լիներիր, Աստված չէր թողնի քեզ»: Եվ անձիս մեջ խորհելով՝ օրական հինգ լումա տալիս էի աղքատներին, և երբ գալիս էր տալու պահը՝ սատանան արգելում էր ինձ՝ ասելով. «Ո՛վ տառապյալ, այդ հինգ լուման իրոք բավական էր՝ տան համար բանջարեղեն գնելու կամ բաղնիք գնալու համար»: Եվ հետո կարծես զավակներիս բերանից էի կտրում՝ ինչ որ տալիս էի որևէ մեկին: Երբ տեսա, որ հաղթվում եմ այդ ախտից, իմ որդուն ասացի՝ գաղտնի գողացիր ինձնից հինգ լումա և ողորմություն տուր, քանզի լումայափոխներ էինք: Իսկ նա ավելի քան բարություն արեց. սկսեց տասը-տասը գողանալ, ժամանակ էր լինում՝ նույնիսկ դահեկանի կեսը: Եվ երբ տեսա, որ օրհնվում ենք, սկսեց դահեկանի երեք մասը գողանալ և տալ: Իսկ ես, զարմանալով Աստծո օրհնությունների վրա, ասացի նրան. «Արդարև, որդյա՛կ, հույժ օգտակար եղան այն հինգ լումաները, սակայն այսուհետև տասը-տասը տո՛ւր»: Իսկ երիտասարդը ժպտալով ասաց ինձ. «Գնա՛ և աղոթի՛ր իմ գողությունների համար, այլապես՝ այսօր հաց չէինք ունենա ուտելու: Եթե արդար գող կա, առաջինը ե՛ս եմ, որովհետև կես դահեկան և երրորդ մասը դահեկանի գողանում և տալիս էի կարոտյալներին»: Եվ նրա հավատից ոգեշնչված՝ ես ևս սովորեցի

տալ ամբողջ հոգով»: Իսկ հայրապետը զարմանքով ասաց. «Հավատա՛, եղբա՛յր, հայրերի բազում գրություններ եմ ընթերցել, սակայն նման դեպքի չեմ հանդիպել»: Եվ օրհնելով նրան՝ արձակեց:

17. Անտիոքցի ոմն մենակյաց գնաց սուրբ Երուսաղեմ՝ աղոթելու: Երբ հասավ այնտեղ, վերջացան ապրուստի միջոցները, և նստած տրտմում էր, թե ինչ անի: Սրտի հուզմունքից նիրհեց և տեսավ Հիսուսին, որ ասաց իրեն. «Գնա՛ սուրբ Հարություն եկեղեցու տնտեսի մոտ և նրան ասա՛, թե Հիսուսն ինձ ուղարկեց քեզ մոտ: Տո՛ւր ինձ մեկ դահեկան, և ես քեզ ստացագիր կտամ, որ երբ Տեր Հիսուսը գա, հատուցի քեզ»: Եվ մենակյացը զարթնելով՝ աղոթեց և հավատալով խոսքին՝ գնաց տնտեսի մոտ և ասաց նրան՝ ինչպես որ Հիսուսն էր ասել: Իսկ նա պատասխանեց. «Ե՞րբ կգա Հիսուսը՝ դահեկանը հատուցելու»: Եվ մենակյացն ասաց. «Ինչպես լսեցի՝ ասացի, դու վարվի՛ր՝ ինչպես կամենում ես: Այնժամ տնտեսն ասաց. «Գրի՛ր ստացագիրը»: Եվ մենակյացը նստեց ու այսպես գրեց. «Ես՝ Հովհաննես, Անտիոքի եկեղեցուց, քեզանից՝ Սուրբ Հարություն եկեղեցու եկեղեցական քահանա Ստեփանոսիցդ վերցրի ինձ անհրաժեշտ մեկ դահեկան: Գրեցի այս ստացագիրը, որ երբ Տեր Հիսուսը գա, քեզ հատուցի այս մեկ դահեկանը»: Եվ դահեկանը առնելով՝ գնաց: Եվ այդ գիշեր երազում տնտեսը տեսավ Հիսուսին, որ նրան ասաց. «Ա՛ռ դահեկանը և տո՛ւր մենակյացի ստացագիրը»: Իսկ նա դժվարանում էր այս բանն անել՝ ասելով. «Նա ինձ ասաց, թե Հիսուսը կգա և կհատուցի ինձ»: Դարձյալ ասաց. «Ես եմ Հիսուսը, ա՛ռ դահեկանը և տո՛ւր ստացագիրը, մի՞թե ավելին ես ուզում ստանալ. ահավասիկ քոնը»: Եվ դողալով արթնանալով՝ հապճեպ մարդիկ ուղարկեց՝ որոնելու մենակյացին և ասաց. «Որտեղ էլ գտնեք նրան, բերե՛ք այստեղ: Եվ գտնելով նրան՝ ասացին. «Ե՛կ, տնտեսը քեզ կանչում է»: Եվ նա իր մտքում ասաց. «Ուրեմն փոշմանեց և կամենում է ետ վերցնել դահեկանը»: Եվ մտավախությամբ գնաց նրա մոտ, իսկ երբ տնտեսը տեսավ նրան, ասաց. «Ո՛վ աբբա, այսօր ճաշի՛ր ինձ հետ»: Իսկ նա դահեկանի համար խիստ մտահոգ էր: Ճաշելու ընթացքում տնտեսն ասաց. «Տե՛ր աբբա, վերցրո՛ւ ինձանից ևս մի դահեկան և տո՛ւր ինձ ևս մի ստացագիր»: Իսկ նա ասաց. «Ների՛ր ինձ, բայց ավելինի կարիքը չունեմ, սա բավական է ինձ»: Եվ նա, պատմելով գիշերվա երազը, աղաչեց նրան և ասաց. «Վերցրո՛ւ տասը լիտր ոսկի և քո կողմից մի ստացագի՛ր գրիր»: Մենակյացն ասաց. «Իմ ձեռքից ուրիշ ստացագիր չես ստանա, որովհետև իմ Տերն ավելին առնելու մասին ինձ չի ասել, սակայն եթե հավատում ես Քրիստոսին, բազում

աղքատներ կան, որ քեզ ստացագիր կտան»: Եվ հիանալով անսուտ խոստման վրա՝ բոլորը փառք տվեցին Աստծո արդար դատաստանին:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

18. Եղբայրներին հյուրընկալելու մասին հայր Ապողոնն ասաց, թե պետք է եկվոր եղբայրներին ընդունել և երկրպագել, ինչպես և գրված է. «Եղբորդ տեսար՝ Աստծուն տեսար»: Սրանց վկա ունենք նաև Աբրահամին, որ ընդունում և երկրպագում էր եկվորներին (Ծննդ. ԺԸ 2-3), *նույնը և Ղովտն էր անում* (Ծննդ. ԺԹ 1-2), *երբ ընդունեց հրեշտակին:*

19. Երանելի Եպիփանն ասաց. «Աստված դյուրությամբ է առողջություն վաճառում նրանց, ովքեր կամենում են գնել այն փոքր-ինչ հացով, մի բաժակ սառը ջրով կամ սակավ փողով: Եվ մարդուն ծածուկ չի հատուցում փողը, այլ ծածուկ առնելով սակավ փողը՝ փոխարենը անպատում բարիքներ է հատուցում հրեշտակների, հրեշտակապետների և արդարների հոգիների առաջ»: Արդ, ո՞վ կպատմի Տիրոջ զորությունը և լսելի կդարձնի նրա գովաբանությունը:

20. Հայր Թեոդորոս Փերմացու մասին աշակերտներն ասում էին, թե երբ Սկիտեն ավերվեց, նա եկավ Փերմե՝ բնակվելու: Նա ծեր էր ու տկար, և նրան շատ կերակուր էին բերում: Ով առաջինն էր բերում, նրա բերածը տալիս էր երկրորդին և այսպես՝ նախորդի բերածը տալիս էր հաջորդին, իսկ որը համընկնում էր ուտելու ժամին, այն էր ճաշակում երեկոյան՝ առանց խտրություն դնելու:

21. Մի անգամ Սկիտեի երեցներին ողջ շաբաթը պատվիրվեց պահեցողություն անել: Եղբայրներից ոմանք Եգիպտոսից եկան հայր Մովսեսի մոտ, և նա նրանց համար փոքր-ինչ ուտելիք եփեց: Երբ նրան մոտիկ ապրողները տեսան ծուխը, պատմեցին երեցներին և ասացին. «Հայր Մովսեսը խախտեց ձեր հրամանը և իր համար կերակուր եփեց»: Իսկ նրանք ասացին. «Երբ եկեղեցի գա, մենք նրան կասենք»: Երբ եկավ շաբաթը, երեցներն տեսան ծերի մեծ քաղաքավարությունը, քանզի լսել էին նրա հյուրընկալության մասին, և եղբայրների ողջ հավաքի առաջ ասացին. «Հայր Մովսեսը լուծարեց մարդկանց օրենքը և կատարեց Աստծո օրենքը»:

22. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց նրան. «Եթե եղբայրներին մի փոքր հաց եմ տալիս կամ որևէ այլ բան, դևերը պղտո-

րում են միտքս և ինձ ասում են, թե ի ցույց մարդկանց արեցի այդ»: Ծերը նրան ասաց. «Թեկուզ և մարդահաճության համար անենք, չդադարե՛նք եղբայրներին տալ անհրաժեշտը, ինչի մասին ասում է հետևյալ առակը: Երկու մշակներ կային մի քաղաքում. մեկը սերմանեց և սակավ հնձեց, իսկ մյուսը հեղգանալով՝ բնավ ո՛չ սերմանեց և ո՛չ էլ հնձեց, և մեծ սով եկավ նրանց վրա. արդ, նրանցից ո՞ր մեկը կգտնի կերակուր»: Եղբայրն ասաց. «Նա, որ փոքր-ինչ աշխատեց»: Ծերն ասաց. «Այդպես էլ մենք՝ գեթ մի փոքր սերմանենք, որպեսզի սովից չսատկենք»:

23. Ոմն եղբայր պահքի երկրորդ շաբաթում գնաց հայր Պիմենի մոտ և պատմեց նրան իր խորհուրդները: Եվ դա համընկավ պահեցողության ընթացքին, ուստի նա ծերին ասաց. «Քիչ էր մնում՝ չգայի այստեղ»: Ծերը հարցրեց. «Ինչո՞ւ, եղբա՛յր»: Եղբայրն ասաց. «Կարծում էի, թե պահքի պատճառով դուռը չեք բացի»: Ծերը նրան ասաց. «Մենք չսովորեցինք փակել փայտյա դուռը, առավել ևս՝ լեզվի դուռը»:

24. Հայր Թեոդորոս Փերմացին հարցրեց հայր Պամբոյին և ասաց նրան. «Հա՛յր, ասա՛ ինձ՝ ի՞նչ անեմ»: Ծերը նրան ասաց. «Թեոդորե՛, գնա՛ և բոլորին ողորմությո՛ւն արա, քանզի ողորմությունը ամեն ինչում համարձակություն ունի Աստծո առաջ: Թեկուզ ի ցույց մարդկանց լինի ողորմությունը՝ բարի է և լավ, քանզի հետո այն կդառնա Աստծուն հաճելի, որովհետև աղքատները նրանից օգտվելով և իրենց պակասությունները նրա միջոցով լրացնելով՝ կմխիթարվեն, ինչն էլ կքաղցրացնի Աստծուն՝ ողորմություն անողի հանդեպ, և նրա գործերը հաճելի կդառնան Աստծուն»:

25. Հայր Սրապիոնի մասին պատմում էին, թե հանդիպեց Ալեքսանդրիայում նրան մի մերկ մարդ, որ սաստիկ մրսած էր, և նա խորհեց և ասաց. «Ինչո՞ւ ես, որ ճգնավոր եմ համարվում, հագնված եմ, իսկ այս աղքատը, որ նույն ինքը Քրիստոս է, այսպես մերկ և սառած շրջում է, և ես մարդասպան կկոչվեմ, եթե սա մեռնի»: Եվ նույն պահին մերկանալով՝ իր հանդերձները տվեց աղքատին և ինքը մերկ նստեց՝ Ավետարանը դնելով թևատակին: Եվ ծանոթներից մեկը նրան տեսնելով՝ ասաց. «Հա՛յր Սրապիոն, ո՞վ մերկացրեց քեզ»: Եվ նա, ցույց տալով Ավետարանը, ասաց. «Սա՛ մերկացրեց ինձ»: Եվ այնտեղից վեր կենալով՝ տեսավ մեկ ուրիշին, որին քարշ էին տալիս, քաշքշում էին և պարտքն էին պահանջում, իսկ նա չուներ, որ պարտքերը հատուցեր: Այնժամ գթալով նրան՝ տվեց Ավետարանը, որ պարտքերը հատուցի, և ինքը մերկ գնաց իր խուցը: Երբ աշակերտը տեսավ նրան այդպես,

հարցրեց. «Որտե՞ղ է, հա՛յր, քո պարեգոտը:» Ծերն ասաց. «Ուղարկեցի այնտեղ, ուր առավել անհրաժեշտ էր»: Եղբայրն ասաց. «Որտե՞ղ է այն փոքրիկ Ավետարանը»: Ծերն ասաց. «Թո՛ղ ինձ, որդյա՛կ, Այն, որ միշտ ասում էր ինձ, թե՝ վաճառեցեք ձեր ունեցվածքը և տվեք աղքատներին (Մատթ. ԺԹ 21, Մարկ. Ժ 21, Ղուկ. ԺԸ 22)*, հենց Իրեն վաճառեցի և տվեցի նրանց, որպեսզի դատաստանի օրը առավել համարձակություն ունենամ»:*

26. Ծերերից մեկը պատմում էր, թե մի կրոնավոր կար՝ աշխարհից հրաժարված, և գյուղում թողել էր իր կնոջն ու միամորիկ դստերը, որը երախա էր (նախամկրտական կարգի մեջ եղող) և տակավին քրիստոնյա չէր, և երախայության մեջ էլ մեռավ դուստրը: Եվ աղջկա հայրը երեք մասի բաժանեց իր ունեցվածքը. մի մասը բաժանեց աղքատներին՝ նրա հոգու փրկության համար, մյուս մասը տվեց կնոջը և իր բաժինը ամբողջությամբ դարձյալ տվեց աղքատներին՝ հանուն իր դստեր: Եվ ձայն եկավ նրան երկնքից, որ ասում էր. «Քո դստեր համար մի՛ տրտմիր, քանզի Աստված ընդունեց քո ողորմությունը և մկրտվածների հետ դասեց նրան»: Իսկ նա ձայնին չհավատաց: Ձայնը դարձյալ ասաց. «Ահա տե՛ս, որ նա չմկրտվածների տապանում չէ»: Այնժամ ձայնը ստուգելու համար գնաց դստեր գերեզմանը, բացեց տապանը և չգտավ նրան այնտեղ, քանզի Աստված փոխադրեց նրան իր հոր ողորմության համար: Եվ հավատաց ծերը, ապա գոհանալով Աստծուց՝ ասաց. «Տեսեք՝ որքա՜ն զորավոր է ողորմածությունը և հաճելի ու սիրելի՝ Աստծուն, և երանելի է դարձնում այն մարդուն, որն ունի ողորմածություն»:

27. Ոմն իշխան Ալեքսանդրիայից վերադառնում էր Կոստանդնուպոլիս և Տյուրոսի կողմերում հանդիպեց մի կույր մարդու, որն առաջնորդող չուներ. և երբ լսեց երիվարների ոտնաձայնը, գետնատարած ընկավ և ողորմություն խնդրեց: Իսկ մագիստրոսը չանտեսեց նրան, այլ տվեց մեկ դահեկան և գնաց: Կույրն ասաց նրան. «Հավատում եմ Աստծուն, որ այս ողորմությունը կփրկի քեզ մեծ փորձություններից»: Եվ կույրի օրհնությունն ստացած՝ գնաց իշխանը մեծ ուրախությամբ և մտավ Տյուրոս քաղաքը: Այնտեղ մեկ ուրիշ իշխան էլ կար, որ գնում էր Կոստանդնուպոլիս, և նա իրեն ուղեկից գտնելով՝ ուրախացավ, և երկուսով մտնելով նավը՝ գնում էին միասին: Այդ գիշեր սաստիկ հողմ փչեց, և խռովվեցին ծովն ու նավը, և մագիստրոսը նեղվելով մարմնական կարիքներից՝ գնաց դեպի նավակողը՝ ազատվելու համար որովայնի ավելորդություններից: Այդ պահին հողմը հարվածելով նրան՝

գցեց ծովը, և նավավարները լսեցին ընկնելու ձայնը, սակայն, քանի որ սաստիկ մութ էր, և նավն էլ սաստիկ քշվում էր, հնար չգտան և ոչնչով չկարողացան օգնել նրան և թողին նրան ու գնացին: Ալիքները ծովի վրա էին պահում իշխանին և տարուբերում էին, սակայն չընկղմեցին և չսպանեցին՝ մինչև առավոտ, իսկ նավորդները կարծում էին, թե նույն ժամին էլ կորսվեց, սակայն նա Աստծո ողորմությամբ կենդանի մնաց մինչև հաջորդ օրը: Երկրորդ օրն այնտեղով մի ուրիշ նավ անցավ, և նրան տեսան կենդանի՝ ալիքների վրա տարուբերվելիս, և իրենց մոտ վերցրին նրան, և այդ նավը նույն օրը մտավ այն նավահանգիստը, ուր առաջին նավն էր մտել, որի վրա իշխանի զինվորներն էին: Եվ երկու նավերի նավաստիները կրպակներից անհրաժեշտ բաներ գնելու համար ելան քաղաք և հանդիպեցին միմյանց, ապա նրանցից մեկը հիշելով իշխանին՝ հոգոց հանեց և ասաց. «Ի՞նչ եղավ կամ ի՞նչ պատահեց այն թշվառին, որ ծովն ընկավ»: Երբ լսեց երկրորդ նավի նավաստին այդ խոսքը, ասաց. «Մենք ողջ և անվնաս գտանք նրան և վերցրինք, այժմ մեզ հետ նավի մեջ է»: Այս դեպքը հայտնի դարձավ բոլորին և բոլորն էլ խիստ ուրախացան և եկան հանեցին նրան և տարան իրենց նավը: Եվ իշխանը պատմեց նրանց և ասաց. «Այն կույրը, ում տվեցի դահեկանը, նա էր բռնել ինձ և բարձրացրած՝ բերում էր ջրերի վրայով»: Եվ բոլորը, լսելով այս, փառավորեցին Աստծուն: Արդ, սրանից ուսանում ենք, որ ամբողջ սրտով արված ողորմությունը չի կորչում, այլ նեղության ժամանակ Աստված փոխհատուցում է նրանց, ովքեր անում են այն, ինչպես վկայում են Աստծո բոլոր Գրքերը:

28. Հայր Պիմենն ասաց. «Ով ողորմություն է տալիս, այնպիսի խնդությամբ պետք է տա, կարծես ինքն ստանալիս լինի, որովհետև այսպիսի ողորմությունը մարդուն մերձեցնում է Աստծուն»:

29. Ասաց ծերը. «Կան մարդիկ, ովքեր բազում բարություններ են անում, սակայն մի փոքր բանով ուրախացնում են թշնամուն և կատարած բոլոր բարի գործերի վարձը կորցնում են: Մի ժամանակ ես ապրում էի Օքսիրինտոս քահանայի մոտ, ով ողորմություն էր անում. եկավ նրա մոտ մի աղքատ և ցորեն խնդրեց նրանից: Քահանան նրան ասաց. «Բե՛ր քո պարկը, և կտամ քեզ»: Եվ երբ բերեց, սկսեց ձեռքով տնտղել պարկը, իբր թե՝ մեծ է, և ամաչեցրեց այն աղքատին: Իսկ ես նրան ասացի. «Ցորենը ծախեցի՞ր նրան»: Նա ասաց. «Ո՛չ, ողորմություն տվեցի նրան»: Եվ ես ասացի. «Եթե դու կամենում ես ողորմություն անել, մի՛ ամաչեցրու աղքատին, առավել ևս՝ Քրիստոսին»:

Նրա համար եմ ասում, որ ձեզնից ոչ մեկը դժկամությամբ ողորմություն չանի, ապա թե ոչ՝ կկորցնի իր վարձքը և ոչինչ չի շահի»:

30. Թեբայիդայում մի կրոնավոր կար, որ Աստծուց շնորհ էր ստացել, որպեսզի որքան ողորմություն աներ, ոչինչ չպակասեր նրա ունեցվածքից, այլ բավական լիներ ամենքին, ով գար նրա մոտ, քանզի լցնում էր մախաղը ոսկով, արծաթով, դրամով և ելնելով գյուղերը՝ բաշխում էր աղքատներին: Մի օր զարմանահրաշ մի դեպք եղավ: Ըստ սովորության՝ ծերը մի անգամ գնաց ոսկի և արծաթ բաժանելու աղքատներին, և պատառոտած և աղքատ հանդերձներով մի կին եկավ նրա մոտ՝ ողորմություն ստանալու: Երբ տեսավ նրան ծերը այնպես մերկ և գծուծ շորերով, շատ խղճաց և կամեցավ շատ դրամ տալ նրան: Երբ ձեռքը մտցրեց մախաղից հանելու՝ ձեռքը կապվեց, և չկարողացավ շատ հանել, այլ ակամա քիչ տվեց: Եվ ահա մեկ ուրիշ կին եկավ, որ վայելուչ հանդերձանք ուներ, իսկ նա ձեռքը մտցրեց և կամենում էր քիչ տալ նրան, սակայն ձեռքն, ինքնիրեն բացվելով, ակամա շատ տվեց նրան: Զարմանալով՝ այս ծերը հարցրեց այդ երկու կանանց մասին նրանց, ովքեր կային այդտեղ, և նրան տեղեկացրին, որ Աստված արդար դատաստան արեց, քանի որ նա, ով վայելուչ հանդերձանքով էր, ուրիշներից էր խնդրել և ամոթից էր հագել, քանզի մեծահարուստի դուստր էր եղել և աղքատացել էր: Իսկ նա, ով պատառոտուն հանդերձներ էր հագել, նույնպես ուրիշներից էր խնդրել և հագել էր՝ ողորմություն ստանալու համար, թեև իրեն անհրաժեշտ ամեն բան ուներ: Դրա համար էլ Աստված, որ ամենուրեք է և ամեն ինչ տեսնում է, ի հայտ բերեց երկուսի գործերն էլ՝ այն աղքատասեր մեծ ծերի միջոցով, ով սուրբ էր և ողորմած:

31. Հայր Սիսոյին ասաց. «Ով միշտ օտար է պահում իր անձը, կատարում է բոլոր Գրությունները»: Հարցրին նրան. «Եվ ի՞նչ է այդ օտարությունը, հա՛յր»: Եվ նա ասաց. «Որ իսպառ լռում են և աշխարհիկ ոչ մի բանի մասին հոգ չեն անում, դա է կատարյալ օտարությունը»:

32. Հայր Կասիանեն ասաց. «Գնացինք մեկ այլ ծերի մոտ, և նա հյուրընկալեց մեզ: Երբ հագեցանք կերակրով, դարձյալ ստիպեց մեզ ուտել, իսկ ես պատճառ էի բռնում կշտանալը, և ծերն ինձ ասաց. "Ես այսօր վեց անգամ սեղան եմ դնում և ուտում եղբայրների հետ, բայց դեռ սոված եմ, իսկ դու մի կերակրով այնպես հագեցար, որ ոչինչ չե՞ս կարող ուտել"»:

33. Հրեաստանում իսրայելցի սաստիկ մեծահարուստ մի մարդ կար, որի ողջ կարողությունը կուտակվել էր վաշխառությամբ, ստով, անիրավությամբ և սուտ վկայությամբ: Սրա միտքն ընկավ և հիշեց Աստծո դատաստանը և գնալով մի վարդապետի մոտ՝ ասաց նրան. «Աղաչում եմ քեզ, վարդապե՛տ, իմ միտքը աշխարհիկ հոգսերով է գերված, եթե հնար կա՝ բուժի՛ր ինձ, որ չկորչեմ»: Իսկ նա տվեց նրան Սողոմոնի գիրքը և ասաց. «Սա՛ ընթերցիր, և ինչ որ նա կասի՝ կատարի՛ր և կապրես»: Եվ երբ բացեց Գիրքը, գտավ այն տեղը, ուր գրված էր, թե՝ ով ողորմի աղքատին՝ փոխ է տալիս Աստծուն (Առակ. ԺԹ 17)*: Եվ փակելով գիրքը՝ տվեց դպիրին ու ասաց. «Ո՞վ է ավելի հավատարիմ, քան Աստված, ով բազմապատիկ և ավելիով է հատուցում ողորմածներին. ես իմ ունեցվածքը տալու եմ աղքատներին, որպեսզի բազմապատիկն ստանամ Տիրոջից»: Եվ գնաց վաճառեց՝ ինչ որ ուներ, տվեց աղքատներին և ոչինչ չթողեց իրեն, բացի չորս դահեկանից՝ այն էլ մահվան օրվա համար: Եվ սաստիկ աղքատացավ այդ մարդը, և ոչ ոք չէր ողորմում նրան. և երբ բավական ժամանակ անցավ, վշտանալով դժգոհեց աղքատությունից և վհատվելով ասաց իր մտքում. «Գնամ Երուսաղեմ՝ իմ Աստծո մոտ, և դատ անեմ Նրա հետ իմ աղքատության համար, որ խաբեց ինձ, և ես բաժանեցի իմ ունեցվածքը»: Եվ երբ գնում էր Երուսաղեմ, տեսավ երկու մարդու, որոնք մի պատվական ակ էին գտել Ահարոնի պատմուճանից, որը կորել էր: Սրանք չգիտեին, թե ինչ քար է, և կռվում էին իրար հետ և ուզում էին միմյանց ձեռքից խլել այն: Եվ տեսնելով նրանց այդպես գոտեմարտելիս՝ ասաց նրանց. «Ի՞նչ կա ձեր մեջ. ինչո՞ւ եք կռվում իրար հետ»: Եվ նրանք ասացին. «Գտել ենք այս քարը և չգիտենք, թե ինչ է: Սա բաժանել էլ հնարավոր չէ, և մեկս մյուսին չզիջելով՝ կռվում ենք»: Եվ նա նրանց ասաց. «Ի՛նձ տվեք այդ և առե՛ք այս չորս դահեկանը և առանց դժտության բաժանե՛ք ձեր միջև»: Նրանք ուրախությամբ տվեցին քարը, վերցրին ոսկին և իրենց մեջ բաժանելով՝ գնացին այնտեղից: Իսկ նա, վերցնելով ակը, գնաց Երուսաղեմ և այն ցույց տվեց ակնագործին: Ակնագործը երբ տեսավ, ասաց. «Որտե՞ղ ես գտել այս ակը. ահա երեք տարի է, ինչ մեծ խառնաշփոթ ու տրտմություն է տիրում տաճարում՝ քահանաների մեջ, սրա պատճառով, քանզի սա Ահարոնի պատմուճանի վրայից է կորել: Սակայն ե՛կ, լսի՛ր դու ինձ և տա՛ր սա քահանայապետի մոտ և խիստ կհարստանաս սրա շնորհիվ»: Եվ մարդը գնաց տաճար: Տիրոջ հրեշտակը երևաց քահանայապետին և ասաց նրան. «Ահա քեզ մոտ է գալիս մի մարդ, ով ունի այն ակը, որ կորել էր Ահարոնի պատմուճանից: Վերցրո՛ւ այն և տո՛ւր նրան ոսկի և արծաթ՝ որքան վայել է.*

և երբ տաս, կապտակես նրան և կասես. "Մի՛ երկմտիր քո սրտում և մի՛ կասկածիր Աստծուն, թե՝ ով ողորմի աղքատին՝ փոխ է տալիս Աստծուն"»: Այն մարդը գնաց քահանայապետի մոտ, տվեց նրան ակը և ասաց. «Ինչ-որ գավառական մարդկանցից վերցրի սա, որ գտել էին ինչ-որ տեղ»: Քահանայապետը նրան ասաց. «Այդ քեզ Աստծո՛ւց տրվեց՝ փոխը վճարելու համար, ուրեմն արի՛ և ես տամ քեզ»: Եվ տվեց նրան բազում ունեցվածք՝ որքան որ կամեցավ, և վերցրեց նրանից ակը, ապա ապտակեց նրան և ասաց. «Մի՛ երկմտիր քո սրտում և մի՛ կասկածիր Աստծուն, որովհետև ահա Աստված քեզ յոթնապատիկ շատ հարստություն տվեց այստեղ, և հավիտենության մեջ, որ գալու է, հավիտենական կյանք կստանաս՝ մեր Աստծո շնորհով»: Եվ ասաց մարդն արտասվելով. «Երանելիները նրանք են, որ փոխ են տալիս ճշմարիտ և հավատարիմ Աստծուն՝ ողորմելով աղքատներին՝ առանց երկմտանքի և առանց կասկածների»:

34. Աղքատները գալիս էին Տերենութ և եղբայրներից ողորմություն էին խնդրում. եկավ մի խաբեբա և ընկնելով ծերի առաջ՝ մեծ տառապանքով թախանձում էր, իսկ ծերը այլ բան չուներ՝ բացի երկու մազեղեն քուրձերից, և լավագույնը տվեց նրան, և նա գնաց: Եղավ այնպես, որ ծերը գնաց քաղաք և տեսավ խաբեբային, որ հավաքել էր իր նման ընկերներին, և գալով գինեվաճառի մոտ՝ ասաց նրան. «Խաբեցի մի անմիտ մենակյացի և առա այս մազեղեն քուրձը. վերցրո՛ւ քեզ և գինի՛ տուր, որ զվարճանանք»: Եվ երբ լսեց այս ծերը, խիստ տրտմեց և գալով անապատ՝ նեղվում էր հույժ և այսպես էր ասում. «Թեև մարմինս զրկեցի, սակայն առավել ևս՝ հոգիս կորցրի և արժանի չեղա կարոտյալներին տալու, այլ տվեցի այն խաբեբային, որ չարախնդորեն վաճառելով՝ իր մեղսակիցը դարձրեց ինձ»: Ապա երազում տեսավ սաստիկ պայծառությամբ մի լուսավոր մարդու, որ հագել էր մազեղեն պարեգոտը և ասաց իրեն. «Ինչո՞ւ ես տրտմած. ճանաչո՞ւմ ես այս մազեղեն քուրձը»: Ծերն ասաց. «Այո՛, Տե՛ր, իմն է»: Տերը նրան ասաց. «Դու ի՛նձ տվեցիր պարեգոտը, և ահա Ես եմ հագել, քանզի երբ դու սա տվեցիր Իմ անունով, Ե՛ս ընդունեցի սա: Արդ, եթե ուզում ես՝ վերցրո՛ւ պարգոտը, կամ եթե ուզում ես՝ վերցրո՛ւ անկապտելի փառքը»: Արթնանալով՝ ծերը փառք տվեց Աստծուն, շատ ուրախացավ և պատմեց մենակյացներին, և դրանից հետո աղքատների միջև խտրականություն չէին դնում:

35. Երանելի Հովհան Ողորմածը՝ Ալեքսանդրիայի հայրապետը, Կիպրոս կղզուց էր և որդին էր Կիպրոսի Եպիփան եպիսկոպոսապետի՝

ոչ Առաջինի, այլ մեկ ուրիշ Եպիփանի: Եվ երբ չափահաս դարձավ, հայրը նրան ամուսնացրեց: Սա զավակներ ունեցավ և անչափ խաղաղարար էր, բարի, հեզ և քաղցրաբարո, ողորմած, որի համար էլ Ողորմած անվանվեց: Մի օր մահացավ նրա կինը: Եվ լսեց Հերակլես բարեպաշտ թագավորը նրա աստվածահաճո վարքի մասին և հրամայեց Ալեքսանդրիայի պատրիարք ձեռնադրել Հովհաննեսին: Նա, նախքան գահակալելը, տեսիլքի մեջ տեսավ ողորմածությունը՝ հարսի պես զարդարված՝ ձեռքին ձիթենու պտղալից ճյուղ, և Հովհաննեսին ասաց. «Ես Թագավորի դուստրն եմ և իմ հոր մոտ համարձակություն ունեմ, և առանց ինձ ոչ ոք չի կարող մտնել և տեսնել նրան: Եթե ինձ բարեկամ համարես, ես քեզ սիրելի կդարձնեմ իմ թագավոր հորը, և երբ կամենաս, կմտցնեմ քեզ նրա մոտ, և մշտապես կտեսնես նրան»: Եվ արթնանալով՝ հասկացավ, որ իր տեսած հարսը ողորմածությունն էր: Եվ երբ գահակալեց, այն ժամանակ պատվիրեց անհապաղ հավաքել քաղաքի աղքատներին: Գտան յոթ հազար անձանց, որոնց ցուցակագրեց հայրապետական կոնդակի մեջ, և կերակրում ու հագցնում էր նրանց, և եթե նրանցից մեկը մեռնում էր, նրա փոխարեն մեկ ուրիշ աղքատի էր ներառում, և յոթ հազարի թիվը չնվազեցրեց, որքան ապրեց աշխարհում: Եվ այլևայլ ողորմածություններն ու արդարությունը, որ անում էր Հովհաննես Ողորմածը, գրված են նրա ամբողջական և ավարտուն վարքագրության մեջ: Եվ այսպես էր դիմում Հովհաննեսն Աստծուն՝ Դու տո՛ւր, իսկ ես բաշխեմ, և վերջինը չլինեմ քո պարգևների բաշխման մեջ, որովհետև առավել նրանց է տալիս Տերը և առատորեն լցնում է բարությամբ, ովքեր առատորեն և առանց խնայելու են տալիս տրված պարգևները, քանզի Տերն ինքն առատապարգև է և սիրում է առատորեն ողորմություն անողներին:

36. Ծերն ասաց. «Եթե կամենում ես ճանաչված լինել Աստծուց, ճանաչված մի՛ եղիր մարդկանցից»:

ԳԼՈՒԽ ԺԴ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մի անգամ չորս սկյութիացիներ գնացին Երանելի Հայր Պամբոյի մոտ: Նրանք կաշվե զգեստներ էին հագել, և նրանցից յուրաքանչյուրը պատմեց իր հետ այնտեղ եղող ընկերոջ առաքինությունները: Նրանցից մեկը անսասան էր պահքի մեջ, երկրորդն անինչ էր, երրորդը հույժ ողորմած էր, իսկ չորրորդի մասին ասացին, թե քսաներկու տարի է, ինչ հնազանդությամբ մնում է ծերի մոտ: Հայր Պամբոն նրանց ասաց. «Ահա ասում եմ ձեզ, որ սրա առաքինությունն ամենքինից բարձր է, որովհետև ձեզնից յուրաքանչյուրը, որ առաքինությունը կամեցավ, այն էլ գործադրեց, իսկ սա իր կամքը մերժեց և ուրիշների կամքը կատարեց: Այսպիսիները մարտիրոսներ են, եթե պահեն մինչև վերջ»:

2. Ոմն աշխարհական եղբայր եկավ հայր Սիսոյ Թեբայեցու մոտ և կամենում էր մենակյաց դառնալ: Եվ ծերը նրան հարցրեց, թե ունի՞ աշխարհում որևէ մեկը, պատասխանեց, թե մի միամորիկ որդի ունի: Ծերը պատվիրեց նրան և ասաց. «Գնա գե՛տը գցիր նրան և հետո կարող ես դառնալ մենակյաց»: Եվ երբ մարդը գնաց, որպեսզի գետը գցի իր որդուն, ծերը մի եղբոր ուղարկեց, որ արգելի նրան: Եվ երբ նա ուզում էր մանուկին գետը նետել, եղբայրը նրան ասաց. «Կա՛նգ առ և երեխային մի՛ գցիր»: Նա ասաց. «Հայրը պատվիրեց գցել նրան»: Եղբայրը նրան ասաց. «Ծերը պատվիրեց, որ նրան գետը չգցես»: Եվ թողնելով մանկանը՝ եկան ծերի մոտ, և ընտիր մենակյաց դարձավ իր հնազանդության շնորհիվ:

3. Մի անգամ հայր Արսենը հայր Ալեքսանդրոսին ասաց. «Երբ վերջացնես արմավենու տերևները հյուսելդ, ե՛կ միասին ճաշենք, իսկ եթե հյուրեր ունենաս, նրանց հետ կե՛ր»: Իսկ հայր Ալեքսանդրոսը դանդաղ և հանգիստ էր գործում: Արդ, երբ ճաշի ժամը հասավ, և դեռ

գործելու տերևներ կային, ուզեց կատարել խոսքը և ջանում էր ավարտել այն: Իսկ ծերը տեսնելով, որ ուշացավ, ճաշակեց՝ կարծելով, թե նա հյուրեր ունի իր մոտ: Եվ երբ երեկոյան ավարտեց Ալեքսանդրոսը, գնաց նրա մոտ: Ծերը հարցրեց. «Հյուրե՞ր ունեիր քեզ մոտ»: Նա ասաց՝ ո՛չ: Եվ ծերն ասաց. «Իսկ ինչո՞ւ չեկար այստեղ»: Եվ նա պատասխանեց. «Որովհետև դու ինձ ասացիր, թե՝ երբ հյուսելը վերջացնես՝ արի, և քո խոսքը պահելով՝ նոր ավարտեցի»: Զարմացավ ծերը նրա հաստատունության վրա և ասաց նրան. «Ավելի շո՛ւտ վերջացրու գործդ, որպեսզի և՛ պաշտամունքը կատարես, և՛ կերակուր ճաշակես, ապա թե ոչ՝ շատ շուտ կտկարանա մարմինդ»:

4. Սիղվիանեն Մարկոսին իր մյուս աշակերտներից շատ էր սիրում, և դրա պատճառով դժգոհություն եղավ: Մի օր հայրը կանչեց բոլորին, և առաջինը Մարկոսը եկավ: Քանի որ նա գրագիր էր, Սիղվիանեն մտավ նրա խուցը, որպեսզի տեսնի նրա գործը, և տեսավ, որ նա տառի կեսը գրել էր և կանչի վրա գցել էր գրիչն ու դուրս էր եկել: Մի անգամ էլ Մարկոսի մայրը եկավ՝ ընտիր սպասքով, և աղաչեց ծերին ցույց տալ իր որդուն, իսկ ծերը նրան ասաց. «Դո՛ւրս արի, և թո՛ղ մայրդ քեզ տեսնի»: Նա գնալով մոր մոտ՝ փակեց աչքերը և ասաց՝ ապրես, և ետ դարձավ: Ճանաչեց մայրը և վերստին աղերսեց ծերին ցույց տալ իր որդուն: Իսկ երբ ծերը հարցրեց, թե ինչու նա չգնաց մոր մոտ, ասաց. «Գնացի, հա՛յր, և, աղաչում եմ, այդքանն էլ բավական է»: Եվ Սիղվիանե ծերը համոզեց մորը՝ հեռանալ այնտեղից: Սրանից հետո բոլորն ասացին, թե Մարկոսն արժանի է սիրո, քանզի ում սիրում է Տերը, արժանի է, որ մենք ևս սիրենք:

5. Աստվածավախ կյանքով ապրող մի աշխարհական կար, և մի օր նա գնաց հայր Պիմենի մոտ: Պատահմամբ այնտեղ էին նաև եղբայրները և կամենում էին խոսք լսել ծերից: Հայր Պիմենն աշխարհական հավատացյալին ասաց. «Խոսի՛ր եղբայրների հետ»: Իսկ նա աղաչեց և ասաց. «Թողությո՛ւն շնորհիր, հա՛յր, ես չեկա ուսուցանելու, այլ ուսանելու»: Սակայն ծերը բռնադատեց նրան, և նա ստիպված ասաց. «Ես աշխարհիկ մարդ եմ՝ բանջարավաճառ. քանդում եմ մի կապը և դարձնում երկու, գնում եմ էժան, վաճառում թանկ և շահույթ եմ ստանում, և քանի որ Սուրբ Գրքից չեմ կարող ասել, առակ կասեմ: Մի մարդ իր սիրելիին ասաց. «Ե՛կ ինձ հետ, որովհետև փափագում եմ տեսնել թագավորին»: Իսկ նա ասաց. «Կգամ մինչև ճանապարհի կեսը»: Եվ դարձյալ ասաց մյուս սիրելիին. «Արի՛ ինձ տար թագավորի մոտ»: Սա ասաց նրան. «Կգամ քեզ հետ մինչև թագավորի պալատը, սա-

կայն ներս չեմ ուզում մտցնել քեզ»: Դարձյալ դիմեց երրորդին. «Ե՛կ ինձ հետ թագավորի մոտ»: Եվ նա ասաց. «Ես կգամ և քեզ կմտցնեմ պալատ կամ կբարեխոսեմ քեզ համար և կմտցնեմ թագավորի մոտ»: Եղբայրները, կամենալով հասկանալ առակի իմաստը, հարցրին նրան, և նա ասաց. «Առաջին սիրելին կրոնավորությունն է, որը տանում է մինչև ճանապարհի կեսը, երկրորդ սիրելին սրբությունն է, որը մինչև երկինքն է հասցնում, իսկ երրորդը՝ ողորմածությունն է, որը համարձակորեն մտցնում է Աստծո մոտ»: Եվ եղբայրները շահելով՝ գնացին:

6. Հայր Ռոփոսն ասաց. «Երկնքում չորս գնդեր տեսա. առաջինը հնազանդների դասն էր, որոնք մարտիրոսների հետ էին՝ ոսկե հանդերձներով, երկրորդն աշխարհից օտարվածներն էին, երրորդը օտարասերներն էին և չորրորդը՝ ովքեր փախչում էին անապատ: Եվ Տիրոջ հրեշտակն ինձ ասաց. "Տե՛ս՝ մյուս առաքինություններն իրենք են ընտրում՝ որն ուզում են, իսկ հնազանդներն ուրիշների ընտրությունն են կատարում, և այն բոլոր առաքինություններից բարձր է"»:

7. Մի անգամ հայր Աբրահամը եկավ հայր Արսենի մոտ, և մինչ նստած էին, եկավ մեկ ուրիշ եղբայր հայր Արսենի մոտ, հարցրեց նրան և ասաց. «Ի՞նչ անեմ, որպեսզի ապրեմ»: Եվ ծերն ասաց նրան. «Գնա՛ և մեկ տարի երեկոները ճաշակի՛ր աղ և հաց, ապա ե՛կ, և ես կխոսեմ քեզ հետ»: Եվ նա այդպես արեց: Երբ լսեց Հայր Աբրահամը՝ զարմացավ: Տարվա ավարտին եղբայրը դարձյալ եկավ ծերի մոտ, և կրկին հայր Աբրահամին հանդիպեց այնտեղ, և ծերը դարձյալ ասաց եղբորը. «Գնա՛ և այս տարի երկուական օր պա՛հք պահիր»: Եվ երբ եղբայրը գնաց, հայր Աբրահամն ասաց հայր Արսենին. «Ինչո՞ւ բոլոր եղբայրների վրա թեթև լուծ ես դնում, իսկ այս եղբոր վրա՝ ծանր բեռներ»: Ծերը նրան ասաց. «Եղբայրներն այդպես են խնդրում և այդպես էլ ընթանում են, իսկ սա հանուն Աստծո է գալիս և խոսք լսում, որովհետև ջանասեր է, և ինչ էլ ասեմ նրան՝ ջանադրաբար կատարում է»:

8. Ծերերից մեկն ասաց. «Եթե մեկի հանդեպ վստահություն ունենաս և կատարելապես հնազանդվես նրան, քեզ հարկավոր չի լինի նայել Աստծո պատվիրաններին: Քո հորը հանձնիր քո ամբողջ կամքը, և Աստծուց չես հանդիմանվի»:

9. Ոմն եղբայր եկավ Սկյութիա և հայր Ափովրին ասաց. «Երբ իմ հայրն ինձ սպասավորության է ուղարկում, վախենում եմ պոռնկությունից»: Ծերն ասաց. «Երբ քեզ վրա փորձություն գա, ասա՛՝ ի՛մ հոր Աստված, փրկի՛ր ինձ»: Մի օր, մինչ գյուղում իր հոր հանձնարա-

րությունն էր կատարում, մի կույս փակեց դռները և արգելեց նրան դուրս ելնել: Եվ նա մեծաձայն աղաղակելով ասաց. «Ի՛մ հոր Աստված, փրկի՛ր ինձ»: Եվ նույն պահին էլ հայտնվեց Սկյութիայի ճանապարհի վրա:

10. Միաբաններից երկու համախոհ եղբայրների մասին ասում էին, թե նրանցից մեկը կրոնավոր էր և անինչ, մյուսը հնազանդ էր և խոնարհ: Սրանք քննում էին միմյանց, թե որի՛ գործն է ավելի մեծ: Եվ եկան գետի եզերքը, իսկ այնտեղ բազում կոկորդիլոսներ կային, և հնազանդը մտավ նրանց մեջ, և կոկորդիլոսները երկրպագեցին նրան: Եվ նա կրոնավորին ասաց. «Դու էլ ե՛կ այստեղ»: Իսկ սա ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, եղբա՛յր, քանզի քո չափ հաստատված չեմ հավատքի մեջ»: Եվ երբ վերադարձան միաբանություն, ձայն եկավ նրանց հորը, որ ասում էր. «Ով հնազանդություն ունի՝ վեր է բոլոր երկրավորներից»:

11. Հայր Հովսեփ Թեբայեցին ասաց. «Երեք պատվականագույն կարգ կա Աստծո առաջ. երբ մարդը հիվանդության մեջ է և դարձյալ ապաշխարություն է դրվում նրա վրա, իսկ նա գոհանալով ընդունում է, սա առաջին կարգն է: Երկրորդը՝ եթե մեկն իր բոլոր գործերը սրբությամբ է կատարում Աստծո առաջ՝ չունենալով մարդկային ոչինչ: Երրորդը՝ երբ մեկը հնազանդվում է և լսում է իր հորը և թողնում է իր կամքը. այսպիսին ավելի մեծ պսակ ունի: Ես հնազանդությունը հավանեցի»:

12. Ալեքսանդրիայում՝ սուրբ Մարիամ Աստվածածնի տաճարի մոտ, քրիստոսասեր մարդիկ, որ մտնում և ելնում էին սաղմոսերգության ժամանակ, տեսան մի ծեր մենակյացի, որ նստել էր դրսի դռան մոտ և զամբյուղներ էր վաճառում, և միմյանց ասացին. «Որքան ժամանակ է՝ տեսնում ենք այս ծերին, և չլսեցինք, որ որևէ մեկի հետ վիճաբաներ ինչ-որ բանի համար. արի՛ փորձենք դրան»: Եվ մոտենալով նրան՝ ասացին. «Ասա՛, դու, ծե՛ր, վաճառո՞ւմ ես դրանք»: Եվ նա ասաց՝ այո՛: Եվ նրանք հարցրին. «Քանիսո՞վ»: Նրանց ասաց. «Տասն-տասն դանկով»: Նրան ասացին. «Խիստ թանկ է, հինգ-հինգո՛վ վերցրու»: Ծերն ասաց. «Առե՛ք՝ ինչպես կամենում եք»: Դարձյալ ասացին. «Շատ թանկ է, սակայն եթե կամենաս, մեկ-մեկ դանկով կառնենք»: Ծերն ասաց. «Վերցրե՛ք՝ ինչպես կամենում եք»: Եվ փողը տալով՝ բոլոր զամբյուղները վերցրին: Եվ ծերը, վերցնելով իր գավազանը, գնում էր դեպի իր խուցը, իսկ նրանք, տեսնելով ծերի առաքինությունը, հետևելով նրան՝ ասացին. «Աբբա՛, ի՞նչ արեցիր»: «Ի՞նչ արեցի»,– հարցրեց

ծերը: Նրան ասացին. «Զամբյուղներն ասացիր՝ տասն–տասն դանկով, ասացինք թանկ են, հինգ-հինգո՛վ տուր, և դու ասացիր՝ վերցրե՛ք՝ ինչպես կամենում եք, դարձյալ ասացինք քեզ, թե՝ եթե կամենաս մեկ-մեկ դանկով կառնենք, և դու համաձայն եղար»: Եվ ծունր դնելով նրա առաջ՝ ասացին. «Հանուն Աստծո, ասա՛ մեզ, ի՞նչ արեցիր»: Եվ նա ասաց. «Այդպիսի սովորություն ունեմ՝ ասել գինը, իսկ ինչ տալիս են՝ առնում եմ»: Եվ աղաչեցին նրան՝ գնալ նրա հետ իր խուցը, և երբ այնտեղ տեսան ջրով մի կուժ, պուտուկ և ափսե, նրան ասացին. «Թույլ կտա՞ս փոքր-ինչ կերակուր պատրաստենք քեզ համար, որպեսզի մենք էլ ճաշակենք քեզ հետ և օրհնվենք»: Նա ասաց՝ պատրաստե՛ք, և նրանք պատրաստեցին: Նրա խուցը մոտ էր Տետրապոլսին: Եվ երբ պատրաստեցին, ծերը նրանց ասաց. «Գնացե՛ք Թեոդոսի եկեղեցին և այնտեղ կգտնեք մի ծերի, որ զամբյուղներ է վաճառում, ասացե՛ք նրան. "Քո ծերակիցն ասում է՝ ե՛կ, որ եղբայրների հետ տաք կերակուր ուտես"»: Եվ նրանք գնացին ու գտան ծերին, ինչպես որ նա ասաց, և նրան ասացին. «Քո ծերակիցն ասաց՝ ե՛կ, որ տաք կերակուր ուտես եղբայրների հետ»: Եվ նա նրանց ասաց. «Ինչպե՞ս ասաց աբբան»: Եվ նրանք ասացին. «Ասաց՝ ե՛կ, որ տաք կերակուր ուտես եղբայրների հետ»: Եվ նա ասաց նրանց. «Իսկ չասա՞ց՝ ինչու համար ուտենք. ուրեմն վախճանվեց»: Նրանք, առնելով իրենց հետ ծերին և նրա զամբյուղները, խռովված լսածից՝ եկան և ծերին վախճանված գտան, ապա պատանելով նրան և սաստիկ ողբալով՝ թաղեցին և մյուս ծերին աղաչելով ասացին. «Նստի՛ր քո խցում, և մենք ամեն օր կբերենք քեզ անհրաժեշտը, որպեսզի աղոթես մեզ համար»: Եվ նա ասաց. «Եկե՛ք յոթերորդ օրը, և եթե ինձ կենդանի գտնեք, արե՛ք՝ ինչպես ասացիք, քանզի խոսք եմ կապել երանելի ծերի հետ, և նա էլ՝ ինձ հետ, որպեսզի մեզանից որ մեկը առաջինը մեկնի՝ աղաչի Աստծուն, որ ընկերոջը վերցնի իր մոտ յոթերորդ օրը»: Եվ այդպես անելով՝ քրիստոսասեր այրերը եկան յոթերորդ օրը և նրան վախճանված գտան: Թաղելով նրան առաջին ծերի մոտ՝ գնացին՝ գոհանալով Աստծուց, որ բացահայտեց այդքան ծածկված առաքինությունը:

13. Ծերերից մեկը պատմեց, թե ոմն սխոլաստիկ հնազանդ սպասավորում էր մի անապատականի և աղաչեց, որ մենակյաց դարձնի իրեն: Իսկ ծերն ասաց. «Գնա՛, վաճառի՛ր քո ունեցվածքը և տո՛ւր աղքատներին՝ ըստ Տիրոջ պատվիրանի, (Մատթ. ԺԸ 21, Մարկ. Ժ 21, Ղուկ. ԺԸ 22) *և ե՛կ ինձ մոտ»: Սխոլաստիկը գնաց և այդպես արեց: Երբ եկավ, ծերն ասաց. «Քեզ պատվիրան եմ տալիս՝ բնավ չխոսել»: Իսկ նա*

հանձն առավ և այլևս չխոսեց: Իսկ ոմանք սկսեցին գովեստներով պատվել նրան: Աբբան նրան ասաց. «Այստեղ ոչնչով չես աճում, ե՛կ քեզ ուղարկեմ Եգիպտոս՝ միաբանների վանքը»: Նա ոչինչ չհարցրեց նրան խոսելու կամ չխոսելու մասին: Եվ կատարելով պատվիրանը՝ մնաց անխոս: Աբբան, որ ընդունել էր նրան, կամեցավ փորձել, թե արդյոք կխոսի՞, և ուղարկեց նրան գետի այն կողմը՝ գարնանային վարարումի պահին, որպեսզի եթե չկարողանա անցնել, ստիպված լինի խոսել: Հետևից ուղարկեց մի եղբոր՝ լռելյայն հետևելու, թե ինչ է անելու նա: Եվ երբ եկան գետի մոտ, և չկարողացավ անցնել, ծնկի իջավ աղոթքով, և իսկույն կոկորդիլոսը գալով՝ նրան գետի մյուս կողմն անցկացրեց: Եղբայրը վերադառնալով՝ պատմեց հորը կատարվածը, և բոլորը զարմացան: Ոչ շատ օրեր անց վախճանվեց սխոլաստիկը, և աբբան անապատականին լուր ուղարկեց և ասաց. «Եղբա՛յր, թեպետ և մեզ մոտ ուղարկեցիր այս անխոս (համր) եղբորը, սակայն Աստծո հրեշտակ էր»: Իսկ անապատականը պատասխանեց. «Ոչ թե անխոս էր, այլ պատվիրանը կատարեց, իրականում՝ հունաց ճարտարախոս ատենադպիր էր»: Այս լսելով՝ զարմացան և փառք տվեցին Աստծուն:

14. Հայր Սիղվիանոսի մասին ասում էին, թե մի անգամ ծերերի հետ գնում էր Սկյութիա և կամենալով ցույց տալ իր աշակերտ Մարկոսի հնազանդությունը, ինչի համար և նրան սիրում էր, տեսավ անապատում մի խոճկոր և Մարկոսին ասաց. «Որդյա՛կ, տեսնո՞ւմ ես այս փոքրիկ խոճկորը»: Իսկ նա ասաց. «Այո՛, հա՛յր, և եղջյուրներն էլ ի՞նչ գեղեցիկ են»: Եվ զարմացան ծերերը նրա պատասխանի վրա և ազդվեցին նրա հնազանդությունից: Մի անգամ նրանք գնում էին Սկյութիա, և հասնելով այնտեղ՝ բնակվեցին Սինա լեռանը, և Մարկոսի մայրը երդմամբ և արտասուքներով աղերս ուղարկեց, որ Մարկոսը գնա և տեսնի իրեն, և ծերն արձակեց նրան: Մինչ կամենում էր գնալ, եկավ ծերին հրաժեշտ տալու և իսկույն սկսեց արտասվել և չուզեց գնալ: Իսկ երբ ծերը կամեցավ Ասորիք գնալ, Մարկոսն ասաց. «Ես այստեղից չեմ ուզում գնալ և ոչ էլ ուզում եմ՝ դու գնաս, այլ անսա՛ ինձ և մնա՛ ինձ հետ այստեղ երեք օր»: Եվ երեք օր հետո ծերը ննջեց խաղաղությամբ:

15. Պողոսի աշակերտ Հովհաննեսի մասին ասում էին, թե մեծ հնազանդություն ուներ: Նրանք բնակվում էին մի վայրում, ուր գերեզմաններ կային: Եվ այն տեղում բորենի կար, իսկ ծերն այնտեղ քակոր տեսավ ու Հովհաննեսին ասաց. «Գնա՛ գերեզմանները և այնտեղից բե՛ր

քակորը»: Նա ասաց. «Երկյուղում եմ բորենուց, հա՛յր»: Իսկ ծերը կատակով ասաց. «Եթե քեզ վրա գա՝ կապի՛ր նրան և այստեղ բե՛ր»: Հովհաննեսը երեկոյան գնաց, և բորենին եկավ նրա վրա, իսկ նա կամեցավ բռնել նրան, սակայն բորենին փախավ նրանից: Իսկ Հովհաննեսը, հետապնդելով նրան, ասաց. «Իմ հայրն ասաց, որ քեզ կապեմ»: Եվ բռնելով՝ կապեց նրան: Իսկ ծերը մտահոգ սպասում էր՝ դռանը նստած: Երբ Հովհաննեսը եկավ՝ բերելով կապված բորենուն, ծերը սաստիկ զարմացավ: Հովհաննեսն ասաց. «Հա՛յր, ինչպես պատվիրեցիր՝ բերեցի սրան»: Իսկ ծերը, կամենալով նրան խոնարհեցնել, խփեց նրան և ասաց. «Հիմա՛ր ես դու և հիմար չուն ես բերել»:

16. Ոմն ծեր մրգի ծառի մի չորացած փայտ տնկեց և իր աշակերտին ասաց. «Ամեն օր ջրի՛ր դա»: Ջուրը հեռու էր, և օրվա մեջ մեկ անգամ կարող էր գնալ և դառնալ: Եվ աշակերտը, առանց որևէ տրտունջի, երկու տարի տնկիի համար ամեն օր ջուր բերեց, իսկ տունկը դալարեց, ճյուղեր արձակեց և պտղաբերեց: Զարմացավ ծերն ու փառավորեց Աստծուն և վերցնելով պտղից՝ տարավ բաշխեց շատերին և ասաց. «Առե՛ք, կերե՛ք հնազանդության պտուղը և տեսե՛ք, թե որքա՛ն քաղցր է»:

17. Երուսաղեմի մոտակայքում՝ մի մեծ և խոր ձորի մեջ, ծովի եզերքին, որտեղ կրոնավորների վանքն էր, կար մի բարձր քարայր: Վանքի կրոնավորներից մի երիտասարդ ցանկացավ բարձրանալ այնտեղ և մենակ բնակվել: Սա աղաչեց վանահորը թույլ տալ իրեն այնտեղ բարձրանալ, իսկ վանահայրն արգելեց և ասաց նրան. «Որդյա՛կ, չես կարող մենակ բնակվել այնտեղ, որովհետև դեռևս ճգնավորական կյանքի մեջ չես ամրացել, քո մտքի չար խորհուրդները չես հնազանդեցրել և մյուս կրոնավորների չափին դեռ չես հասել, բայց մի գործ ես ուզում ձեռնարկել, որ քո կարողություններից չափազանց վեր է: Մի՞թե անտեղյակ ես սատանայի չար հնարքներին և խարդախությանը, թե ինչպես է մարտնչում Աստծո ծառաների դեմ: Ավելի լավ է, որդյա՛կ, եղբայրներիդ սպասավորելով՝ նրանց աղոթքները շահես և նրանց հետ սահմանված ժամերին աղոթքի կանգնես և Աստծուն փառաբանես, քան թե միայնակ՝ քարայրում բնակվես և մարտնչես չար խորհուրդների դեմ, որ չարը սերմանում է մարդկանց մտքերում: Քրիստոս ասաց. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ» (Մատթ. ԺԸ 20)*, սակայն վա՛յ միայնակին, քանզի եթե ընկնի նեղսրտության մեջ և ձանձրանա իր մտքում, չի լինի մեկը, որ մխիթարի և նեցուկ լինի նրան»: Եվ բազում այլ խրատներ էր տալիս երի-*

տասարդին, սակայն չկարողացավ արգելել այն գործը, որ նա կամենում էր իրագործել, և թույլ տվեց նրան կատարել իր կամքը: Եվ նա այլ կրոնավորների հետ գնաց, դրեցին սանդուղքը, և նա բարձրանալով՝ բնակվեց այնտեղ, և սանդուղքը վերցրին: Վանահայրը պատվիրեց եղբայրներից մեկին հաց ու ջուր տանել նրան՝ չափով, իսկ նա կախում էր զամբյուղն ու հանում վերև: Ոչ շատ ժամանակ անց բանսարկուն, որ ի սկզբանե մարդկանց թշնամին էր, սկսեց նեղել նրան չար խորհուրդներով և հպարտություն սերմանել նրա մտքում: Մի օր էլ սատանան այլակերպվեց որպես լուսեղեն հրեշտակ, երևաց նրան և ասաց. «Քո սուրբը ճգնության, անդադար աղոթքների և հրեշտակակրոն վարքի համար Տեր Աստված առաքեց ինձ, որ բնակվեմ քեզ հետ և սպասավորեմ քո սրբությանը»: Մենակյացն ասաց. «Ի՞նչ բարի գործ արեցի, որ հրեշտակն ինձ սպասավորի»: Բանսարկուն ասաց. «Ամեն ինչ, որ անում ես, մեծ է և ընդունելի՝ Աստծո առաջ, որ թողեցիր երկիրը և նրա բոլոր վայելչություններն ու փափկությունները և վերցրիր քո խաչը, պահքերով ու աղոթքներով գնացիր Քրիստոսի հետևից, և թողնելով վանքը՝ ելար և բնակվեցիր միայն հրեշտակների հետ՝ այս քարածերպ վեմի մեջ. ինչո՞ւ չծառայեն քեզ»: Այսպիսի պատիր խոսքերով տառապյալ մենակյացին գցեց սնափառության մեջ, և ամեն ժամ երևում էր նրան իբրև հրեշտակ և խոսում էր նրա հետ իբրև մարդ: Մի օր գողերը մտան մի մեծահարուստ մարդու տուն, բացում իրեր գողացան և թաքցրին մի ծածուկ տեղում: Այն կողոպտված մարդը տրտմած գնաց մենակյացի մոտ՝ պատմելու նրան եղելությունը: Մինչ գնում էր, դևն առաջ անցավ նրանից, հասավ քարայր և մենակյացին ասաց. «Մի մարդ է գալիս քեզ մոտ, որի անունը Մարուզան է, և որի տուն գողերը գիշերով մտան, բացում ունեցվածք գողացան և թաքցրին այսինչ տեղում»: Եվ երբ մոտեցավ այդ մարդը քարայրին, ներքևից վերև աղաղակեց և ասաց. «Օրհնի՛ր, հա՛յր սուրբ»: Նա խոնարհվելով՝ այրի անցքից ասաց. «Մի՛ տրտմիր, Մարուզա՛ն, քանզի գողերը, որ գողացան քո ունեցվածքը, թաքցրին այսինչ տեղում. հապշտապ գնա և կգտնես»: Մարդը զարմացավ՝ իրեն անունով դիմելու և գողության մասին գիտենալու վրա, արագ-արագ գնաց նշված տեղը և գտավ իր ունեցվածքն ամբողջովին: Եվ ողջ երկրով մեկ համբավեց այդ լուրը, թե այն մենակյացը, որ քարածերպ վեմի մեջ է, սուրբ մարգարե է, և պատմում էր, թե ինչպես նախօրոք ասաց իր անունը, գողերի մասին և թաքստոցի տեղը: Այդ գավառի բոլոր կողմերից կանայք ու տղամարդիկ էին գնում նրա մոտ և իբրև մարգարեից՝ խոսք էին լսում նրանից, և մեծապես փառավորվեց նրա անունը:

Եվ ամենայն ժամ դևերը նրան ասում էին այն, ինչ կատարվելու էր, իսկ նա այդ մասին ասում էր նրանց, ովքեր գալիս էին նրա մոտ: Իսկ վանահայրն ու կրոնավորները մեծապես սքանչանում էին և փառավորում էին Աստծուն, որ այդքան կարճ ժամանակում այդպիսի շնորհներ տվեց մենակյացին: Եվ Տիրոջ համբարձման տոնից երկու օր առաջ երևաց նրան սատանան՝ որպես հրեշտակ, և ասաց. «Իմացի՛ր, հա՛յր սուրբ, որ քո արժանավոր աղոթքների համար այլ հրեշտակներ ևս գալու են քեզ մոտ, որպեսզի քեզ մարմնով բարձրացնեն երկինք, և կտեսնես այն երկնային անպատմելի գեղեցկությունների փառքը, որ Աստված պատրաստել է քեզ համար»: Եվ այս ասելով՝ որպես թե բարձրացավ երկինք: Իսկ ողորմած և մարդասեր Աստված, որ չկամեցավ նրա այսպիսի ճգնությունների կորուստը, խորհուրդ գցեց նրա սիրտը, որ կանչի վանահորն իր մոտ և ամեն ինչ պատմի նրան: Եվ երբ սպասավոր աբեղան տարավ հացն ու ջուրը, նա խոնարհվեց անցքից և ասաց. «Կանչի՛ր ինձ մոտ վանահորն ու նրա հետևից բե՛ր սանդուղքը»: Եվ երբ նրանք եկան, բարձրացավ վանահայրը մենակյացի մոտ, և միմյանց ողջունելուց հետո վանահայրն ասաց. «Ինչո՞ւ ինձ վերև կանչեցիր»: Մենակյացն ասաց. «Ինչո՞վ հատուցեմ այն ամենի փոխարեն, պատվակա՛ն հայր, որ դու արեցիր իմ անարժանության հանդեպ»: Վանահայրն ասաց. «Ի՞նչ բարի բան եմ արել քեզ, որդյա՛կ»: Եվ նա ասաց. «Բազում և մեծամեծ բարություններ արեցիր մեղսավոր անձիս հանդեպ, քանզի քեզանով առա ճգնավորական հրեշտակակրոն կարգը, քեզանով բնակվեցի բարձր քարայրի մեջ, քեզանով արժանի եղա տեսնելու հրեշտակներին և հարաժամ խոսելու նրանց հետ, և Ձեր աղոթքների շնորհիվ ընկալեցի կանխագիտության և մարգարեության շնորհը»: Եվ լսելով այս խոսքերը՝ վանահայրը զարհուրանքով ապշեց և ասաց. «Վա՜յ ինձ, որդյա՛կ, ո՛վ դու գերի և թշվառական: Դո՞ւ արժանացար հրեշտակներ տեսնելու և մարգարեանալու: Վա՜յ քեզ, եղկելի՛ և չարաշնո՛րհ, քեզ չէ՞ի ասում՝ մի՛ել այս քարայրը, որպեսզի քո մտքերը չմոլորվեն չար դևերից: Վա՜յ քեզ, որ խաբվեցիր սատանայից»: Մենակյացն ասաց. «Այդպիսի բաներ մի՛ ասա ինձ, հա՛յր, որովհետև ես քո աղոթքներով հրեշտակներ եմ տեսնում, և Տիրոջ համբարձման օրը բազում հրեշտակներ են իջնելու և ինձ երկինք են բարձրացնելու մարմնով: Ես Քրիստոսին պիտի տեսնեմ և պիտի աղաչեմ նրան, որ քեզ ևս բարձրացնի այնտեղ, և ինձ հետ վայելես անսպառ ուրախությունները»: Հայրը հարվածեց իր երեսին և ասաց. Դիվահարվեցիր, որդյա՛կ, և ցնորվեց քո խելքը, սակայն ես այստեղից չեմ իջնի, մինչև չտեսնեմ, թե ինչ է լինելու: Ես պիղծ հրեշտակներին չեմ

տեսնում, սակայն երբ կգան քեզ մոտ, ասա՛ ինձ»: Եվ ցած խոնարհվելով՝ սպասավորին պատվիրեց՝ այնտեղից հեռացնել սանդուղքը: Այդ երկու օրը մնաց քարայրում՝ մենակյացի մոտ, և մեծագույն ճգնությամբ աղաչում էր Աստծուն խաբված աբեղայի փրկության համար: Եվ երկու օր հետո եկան դևերը՝ հրեշտակների տեսքով, և աբեղան ասաց. «Հրեշտակները եկան, հա՛յր»: Եվ նա, իր գիրկն առնելով մենակյացին և ձեռքերով պինդ գրկելով նրա պարանոցը, բարձրաձայն աղաղակեց. «Տե՛ր Հիսուս Քրիստոս և Բա՛ն Աստծո, օգնի՛ր քո մոլորյալ ծառային և մի տո՛ւր բանսարկուի ձեռքը»: Դևերը քաշքշում էին տառապյալ աբեղային և կամենում էին հափշտակել վանահոր գրկից, և նա Աստծո անունով սաստեց նրանց, իսկ նրանք, կորզելով թիկնոցը աբեղայի ուսից, բարձրացրին դեպի վեր և անհետացրին: Երկու ժամ հետո տեսան՝ այն թիկնոցը, որ վերևից էր գալիս, ընկավ և բազմաթիվ մասերի պատռվեց: Եվ վանահայրն ասաց խաբված աբեղային. «Տեսնո՞ւմ ես, ո՛վ տառապյալ, թե դևերն ինչ արին քո թիկնոցի հետ, և նույնը ուզում էին քե՛զ հետ անել, և Սիմոն մոգի պես (Գործք. Ը 9-11, 18-24) *ուզում էին քեզ բարձունքներից երկիր տապալել և չարաչար պահանջել քեզանից հոգիդ»: Այնուհետև կանչեց վանահայրը կրոնավորներին և դնելով սանդուղքը՝ իջեցրեց մենակյացին, տարավ վանք և ծառայության նշանակեց խոհանոցում, որպեսզի սպասավորի եղբայրներին սեղանատանը և թերևս այդպիսով խոնարհեցնի իր հպարտացած միտքը: Եվ պատվիրում էր եղբայրներին՝ երբեք մտովի չտրվել բանսարկու խաբեբայի պատրանքներին՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը, որովհետև նա երբեք չի դադարում պատերազմել նրանց դեմ, ովքեր կամենում են ապրեցնել իրենց հոգին:*

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

18. Հայր Անտոնն ասաց. «Հնազանդությունն ու պահքը գազաններին անգամ հնազանդեցնում են»:

19. Հայր Արսենիոսն ասաց. «Հնազանդությունն ու խոնարհությունը հնազանդեցնում են դևերին»:

20. Ոմն ծեր ասաց, թե գնաց մի անգամ մեծն Բարսեղ եպիսկոպոսը միաբանների վանքը և սովորականի պես վարդապետելուց հետո վանքի առաջնորդին ասաց. «Ունե՞ս այստեղ եղբայր, որ կամենում է ապրել»: Եվ նա ասաց. «Բոլորն են կամենում ապրել, հայր սուրբ»: Իսկ

նա դարձյալ ասաց. «Ունե՞ս մեկը, որ ճշմարիտ հնազանդություն է ձեռք բերել»: Նա բերեց մի եղբոր և նրան ընթրիքի ժամին սպասավորության կարգեց սրբի առաջ: Եվ ընթրիքի ավարտից հետո եղբայրը, վերցնելով ջուրը, լցրեց սրբի ձեռքերին, և նա լվացվեց, և Բարսեղն ասաց նրան. «Այժմ բե՛ր, ես էլ քո ձեռքերին ջուր լցնեմ, որ լվացվես»: Իսկ նա հնազանդության պատճառով չհամարձակվեց ո՛չ ասել, այլ ձեռքերը պահելով՝ լվացվեց: Եվ սուրբը հույժ սիրեց նրան՝ կատարյալ հնազանդության համար, և ձեռնադրեց նրան քահանա և տարավ իր հետ: Այսպես սիրելի է հնազանդությունը մարդկանց և Աստծուն:

21. Հայր Եսային ասաց. «Օրինակ՝ արքունական ծիրանիի գույնը չի թափվում»: Դարձյալ ասաց. «Ծառերի դալար ճյուղերը հեշտությամբ են թեքվում այն կողմ, որ կողմ թեքում են դրանք: Այսպես է նաև նրանց պարագային, ովքեր նոր են գալիս ճգնավորության. եթե հնազանդվեն հայրերին, հեշտ կընթանան դեպի կենաց ճանապարհը»:

22. Հայր Մեգեթայի մասին ասում էին, թե չափազանց խոնարհ էր, և քանի որ երկար ժամանակ աշակերտության մեջ էր եղել եգիպտացի մեծ ծերերի մոտ, տեսել էր և՛ հայր Սիսոյին, և՛ հայր Պիմենին: Սա բնակվում էր նա Սինայում: Եվ գնաց մի անգամ սուրբը հայրերից մեկը նրա մոտ և նրան ասաց. «Այս անապատում ինչպե՞ս ես ապրում, հա՛յր»: Պատասխանեց և ասաց. «Երկու օր պահեցողություն եմ անում, հա՛յր, և օրումեջ ուտում եմ մեկ հաց»: Ծերը նրան ասաց. «Լսի՛ր ինձ, որդյա՛կ, և ամեն օր կեր այդ հացի կեսը»: Եվ նա այդպես արեց՝ ըստ ծերի հրամանի, և հանուն հնազանդության լուծարեց իր պահեցողության սովորական կարգը:

23. Հայր Դիոսն ասաց. «Կատարյալ հնազանդությունը ապացույց է առ Աստված ունեցած հնազանդության, ինչպես որ գրված է. «Սիրի՛ր Աստծուն, և Աստված կսիրի քեզ»:

24. Հայր Մովսեսն ասաց մի եղբոր. «Ե՛կ հնազանդություն ստանանք, որովհետև նրանից է ծնվում խոնարհություն, համբերություն, երկայնամտություն, եղբայրասիրություն և սեր, և սրանք են մեր հոգու վահանները»: Եվ դարձյալ ասաց. «Ե՛կ, ո՛վ եղբայր, դեպի ճշմարիտ հնազանդությունը, որի մեջ են խոնարհությունը և զորությունը, ուրախությունը և համբերությունը, եղբայրասիրությունը, ողջախոհությունը, զղջումը և սերը, քանզի ով բարի և հաստատուն հնազանդություն ունի, նա կատարում է Աստծո բոլոր պատվիրանները»: Դարձյալ ասաց. «Կրոնավորը, ով հաճախ է պահում և աղոթում, սա-

կայն հնազանդ չէ իր ծերին, նա ոչ մի առաքինություն չունի և ամենևին չգիտե, թե ինչ է կրոնավորությունը կամ առաքինությունը»:

25. Մեկն աղաչեց հայր Սոպատրոսին և ասաց. «Հա՛յր, ինձ պատվիրա՛ն տուր, որպեսզի այն պահեմ»: Ծերը նրան ասաց. «Կտամ քեզ, որդյա՛կ, պատվիրան, ինչպես որ խնդրեցիր. ոչ մի կնոջ մի՛ թող քո սենյակը մտնի և մի բացի՛ր քո աչքերը նրան տեսնելու համար, մի՛ կարդա նրա ծածուկ թղթերը և մտովին մի՛ պատկերացրու նրա դեմքը, որովհետև թեև այս իրողությունը կատարյալ մեղքերից չէ, սակայն ծանր տքնության և մտքի կորստյան պատճառ է: Դրա համար էլ հեռու վանիր դրանք քո մտքից: Թեև Աստծո գործերի կատարելությանը հասնել անկարելի է մարդու համար, որդյա՛կ, սակայն կարևորը և գրավորն այն է, որ քո անձը հայրերի պատվիրանների հնազանդության մեջ հաստատ պահես և կապրես»: Եղբայրը գնաց շահած և մեծ օգուտ ստացած:

26. Սինկլիտիկոսն ասաց. «Ով եղբայրների մեջ է ապրում՝ նա պարտավոր է հնազանդություն ձեռք բերել, քանզի հնազանդությունն իր հետ բերում է ամեն տեսակ առաքինություն: Առաջնորդն էլ պարտավոր է հոգու իմաստությամբ առաջնորդել, հետամուտ չլինել իր անձին և չծառայել իր ախտերին, այլ հնազանդվել հոգևոր Հորը: Ուստի մենք, որ հեռացել ենք աշխարհից և նրա բոլոր հոգսերից, նորից չդառնանք դեպի աշխարհ և չասենք՝ այնտեղ փառք ունեի, իսկ այստեղ անարգ եմ, այնտեղ հարուստ էի, իսկ այստեղ՝ աղքատ. այլևս պետք չէ հիշել, այլ հնազանդվենք սուրբ հայրերին, նրանց կրոնին և պատվիրաններին»:

27. Ոմն ծեր մի աշակերտ ուներ և կամենում էր, որ նա մնա իր մոտ, մինչև որ կատարյալ հնազանդության հասնի: Ծերը նրան ասաց. «Վերցրո՛ւ մեր այս Սուրբ Գիրքը և գցի՛ր վառվող թոնրի մեջ»: Եղբայրը գնաց և կատարեց ծերի հրամանը՝ առանց երկմտելու: Եվ երբ Ավետարանը գցեց այնտեղ, իսկույն հանգեց կրակը և չվնասեց գիրքը: Արդ, ծերն այս արեց, որպեսզի մենք իմանանք, թե որքա՜ն բարի է հնազանդությունը, որովհետև նա է Երկնքի արքայության սանդուղքը:

28. Մի կրոնավոր կար, որ միաբանների վանքում էր բնակվում: Սրա հետ էր նաև իր որդին: Վանահայրը կամեցավ փորձել նրան և ասաց. «Բնավ մի՛ խոսիր քո որդու հետ և նրան էլ մի՛ թող՝ քեզ հետ խոսի, այլ համարի՛ր նրան որպես օտար մեկը»: Եվ նա խոստացավ կա-

տարել այդ և բազում տարիներ ապրելով նույն հարկի տակ՝ չխոսեց որդու հետ: Այնուհետև՝ տարիներ անց, երբ մերձեցավ որդու կանչվելու օրը, և նա մերձիմահ էր, ծերն ասաց նրա հորը. «Գնա՛ և խոսի՛ր քո որդու հետ»: Իսկ նա ասաց. «Եթե կամենում ես՝ կպահեմ քո պատվիրանը մինչև վերջ»: Ծերն ասաց. «Այդպե՛ս արա»: Ննջեց որդին, և հայրը չխոսեց նրա հետ. և զարմացան բոլորը, որովհետև հոժարությամբ կատարեց պատվիրանը՝ ի փառս Աստծո:

29. Ոմն եղբայր բնակվում էր Սկիտեում և կամենում էր հնձի գնալ: Գնաց մի ծերի մոտ և ասաց. «Ինձ խո՛սք ասա, հա՛յր, որովհետև հնձի եմ գնում»: Ծերը նրան ասաց. «Իսկ եթե քեզ խոսք ասեմ՝ կկատարե՞ս»: Պատասխանեց եղբայրը և ասաց. «Այո՛, կլսեմ քեզ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Գնա՛ հրաժարվիր հնձից և ե՛կ, և ես քեզ կասեմ, թե ինչ անես»: Եղբայրը գնաց և հրաժարվեց հնձից, ապա եկավ ծերի մոտ: Ծերը նրան ասաց. «Գնա՛, նստի՛ր քո սենյակում և պահի՛ր երեկոյից մինչև երեկո, աղ ու հաց ճաշակի՛ր միայն և եկ՝ ուրիշ բան կասեմ քեզ»: Եղբայրը գնաց և կատարեց այն, ապա գալով՝ պատմեց հորը: Հայրը տեսնելով, որ հնազանդության առաքինի մշակ է, նրան ուսուցանեց սենյակում նստելու կարգը: Եվ գնաց եղբայրն իր տունը և գետնատարած ընկնելով՝ երեք օր ողբում էր ջերմ արտասուքներով և զգաստ զղջումով: Դրանից հետո խորհուրդներն սկսեցին շփոթեցնել նրան և ասել. «Ահա մեծ և առաքինի մեկը եղար»: Իսկ նա իր առջև էր դնում իր մեղքերի բազմությունը և դրանով հույժ խոնարհվում էր: Իսկ նրա խորհուրդները դարձյալ ասում էին. «Սաստիկ մեղավոր ես դու և քեզ փրկության հույս չկա»: Իսկ նա դարձյալ ասում էր. «Թեպետ և սաստիկ մեղավոր եմ ես, սակայն կկատարեմ իմ սակավ աղոթքներն ու կարգը և, կհուսամ Աստծո անբավ ողորմությանը, որ թերևս կողորմի ինձ»: Եվ երբ երկու կողմերից էլ պարտվեց թշնամին, այնժամ նրան դեմ հանդիման երևաց դևը և ասաց. «Ո՛վ մարդ, ձանձրացա ես քեզ հետ»: Եղբայրն ասաց. «Ինչո՞ւ կամ ի՞նչ պատճառով»: Դևը նրան ասաց. «Երբ քեզ բարձրացնում եմ՝ փախչելով իջնում ես դեպի խոնարհություն, իսկ եթե խոնարհեցնում եմ, փութաջանորեն ելնում ես դեպի բարձունք»: Եղբայրը նրան ասաց. «Տերն է իմ զորությունը, և իմ հույսը նրա վրա է»: Եվ դևը հալածվելով՝ անհետացավ: Իսկ եղբայրը կրկին զգաստանալով Աստծո շնորհով և ծերի խրատներով՝ եղավ ընտիր կրոնավոր՝ հայրերին հնազանդ լինելու շնորհիվ, և փառավորեց Աստծուն:

30. Մի մարդ իր երեք որդիներին թողեց քաղաքում և գնաց վանք: Երբ այնտեղ մնաց երեք տարի, խորհուրդներն սկսեցին նեղել նրան և տրտմեցնել իր որդիների համար: Երբ վանահայրը տեսավ նրան այդպես տխուր, չիմանալով տրտմության պատճառը՝ հարցրեց նրան և ասաց. «Ինչո՞ւ ես տխուր»: Այնժամ պատմեց նրան եղբայրը և ասաց. «Երեք որդիներս քաղաքում են, և ուզում եմ նրանց էլ բերել այստեղ»: Եվ հրամայեց հայրը գնալ և նրանց բերել վանք: Եվ երբ նա գնաց քաղաք, երկու որդուն վախճանված գտավ: Մի տղային և իր ունեցվածքի մի մասը վերցնելով՝ եկավ վանք և հոր հրահանգով տղային տեղավորեց վանքի հացատանը՝ աշխատելու այնտեղ: Իսկ երբ վանահայրը եկավ հացատուն և տեսավ տղային, համբուրեց նրան և նրա հորն ասաց. «Դու սաստիկ սիրո՞ւմ ես սրան»: Իսկ նա պատասխանեց. «Այո՛, հա՛յր, սիրում եմ»: Հայրն ասաց. «Գիտեմ, որ սիրում ես, սակայն վերցրո՛ւ սրան և գցի՛ր վառվող փուռը»: Ո՛վ ողորմած Քրիստոս, քանզի հնազանդվելով սուրբ հոր հրահանգին՝ այն տղայի երանելի հայրը, նույն պահին վերցնելով տղային, գցեց այն բորբոքված կրակի մեջ, և մեծ հրաշք եղավ: Ինչպես երեք երիտասարդների հնոցը (Դան. Գ 19-50)*, այստեղ ևս նույնը եղավ, քանզի փռի բոցը ցողի վերածվեց և չայրեց տղային, և նրա գլխի մեկ մազն իսկ չվնասվեց: Սա եղավ իբրև Աբելի և նախահայր Աբրահամի պատարագը, որոնք, ինչպես և այս երիտասարդը, ողջությամբ պահպանվեցին Քրիստոս Աստծո շնորհով: Եվ ովքեր լսում էին, գոհանում էին Աստծուց, քանզի հանելով տղային փռից՝ կարմրադեմ գեղեցկությամբ և քրտինքների մեջ, տվեցին հորը, և վանահայրն ասաց. «Այսպես սքանչելի է հնազանդության պտուղը»: Եվ հիացած փառք էին տալիս Աստծուն:*

31. Ծերն ասաց. «Տիրոջ կողմից ասված է, թե՝ նախապես վշտեր և նեղություններ կունենաք, քանզի ամեն գործի սկիզբը տառապանքներով է լինում, և ամեն ոք, ով գործը սկսելիս փախչի վշտերից, նա կզրկվի Աստծո գիտությունից, քանզի աստվածային գրերի ուսման սկիզբը երիտասարդների մոտ առավել ևս չարչարանքով է լինում: Այսպես և կրոնավորն է տքնությամբ ձեռք բերում հնազանդություն և այդպիսով նա դառնում է Աստծո որդի և Քրիստոսի ժառանգակից: Քանզի այս է պահանջում Քրիստոս կրոնավորից և ամեն մի քրիստոնյայից, որ հետևենք Սուրբ Գրքին, և ինչ որ խոսքով ենք ասում՝ գործո՛վ կատարենք, որպեսզի հնազանդ լինենք մեր առաջնորդներին և հոգևոր հայրերին»:

32. Ոմն եղբայր նեղվեց մեկից և վեր կենալով գնաց մի ծերի մոտ և ասաց նրան. «Տրտում է հոգիս, հա՛յր»: «Ինչո՞ւ, եղբա՛յր», – հարցրեց նրան ծերը: Պատասխանեց նրան եղբայրը և ասաց. «Որովհետև ինձ խիստ տրտմեցրեց մեկը, և դևն ինձ գրգռում է՝ առավելապատիկը հատուցել նրան»: Ծերը նրան ասաց. «Եթե լսես ինձ և հնազանդվես՝ ինչ որ ասեմ, Աստված կփրկի քեզ քո այդ ախտից»: Իսկ նա ուխտեց անել՝ ինչ որ ասի: Ծերը նրան ասաց. «Գնա՛ քո սենյակը, աղոթի՛ր ամբողջ սրտով և քո աղոթքի մեջ օրհնի՛ր նրան»: Գնաց եղբայրը և արեց այնպես, ինչպես և ծերն ասաց՝ մի ամբողջ շաբաթ, և Աստված ջնջեց նրա սրտից տրտմությունը՝ իր հնազանդության համար:

33. Ոմն եղբայր հնազանդության մեջ էր մի մեծ ծերի մոտ: Սա հարցրեց նրան ու ասաց. «Հա՛յր, գրված է, թե բազում վշտեր պետք է կրենք Աստծո Արքայություն մտնելու համար, իսկ ես բոլորովին չեմ վշտանում Աստծո Արքայության համար և վախենում եմ, թե կորցրի իմ հոգին»: Ծերը նրան ասաց. «Մի՛ տրտմիր, որդյա՛կ, քանզի ամեն ոք, ով իր անձը հնազանդությամբ հանձնում է իր հոգևոր հորը, այնպիսին այլևս որևէ բանի համար հոգս չի անում, քանզի նա կարող է հասնել հավիտենական հանգստի, և նրա առաջ բացված է առագաստի դուռը, որդյա՛կ, որովհետև հնազանդների համար երկբայություն չկա այն հանգիստը մտնելու համար»:

34. Ոմն ծեր մի սուրբ աշակերտ ուներ, որը չափազանց հնազանդ էր, և որքան հակառակ և խոտորնակ բաներ ասեր ծերը՝ կատարում էր ամենայն ուրախությամբ, փութով, հավատով և սիրով: Երբ պետք էր լինում, ծերը նրան չուխա էր տալիս կարելու, և երբ կարում, վերջացնում էր, ծերը հարցնում էր և ասում. «Կարեցի՞ր, որդյա՛կ»: Եվ նա ասում էր. «Այո՛, կարեցի, հա՛յր»: Ծերը նրան ասում էր. «Տա՛ր և տո՛ւր այսինչ եղբորը»: Եվ նա նույն ուրախությամբ տանում էր, և ծերը էլի էր տալիս, և նա այս անում էր բազում անգամ: Եվ իր կյանքի բոլոր օրերին նա ո՛չ տրտմեց, ո՛չ ձանձրացավ, ո՛չ էլ անհնազանդության նշույլ ցույց տվեց հորը, և ինչ որ ասում էր նրան ծերը՝ լսում էր երանելի եղբայրը՝ որպես Աստծո բերանից:

35. Հովհաննես Սաբայիտացին հիշարժան պատմություն պատմեց մեզ. «Ասիայի իմ վանքում (քանզի արդարը այնտեղից էր եկել)»,– ասաց,– «հեռավոր կողմերից եկած մի ծեր էր բնակվում, որը շատ հեղգ և անհագուրդ մեկն էր: Այս ասելով՝ ոչ թե դատում եմ նրան»,– ասաց-, «այլ երևան եմ հանում ճշմարտությունը: Այսպիսի մեկը, չգիտեմ թե ինչպես, աշակերտ ստացավ մի երիտասարդ տղայի, որի

անունն էր Ակակիոս, ով մանկությունից ի վեր ընթանում էր մաքուր վարքով և իմաստուն խորհրդով: Հենց այդպիսին էր, որ այս ծերին համբերում և հնազանդվում էր, որովհետև բազում գործերի մեջ նա հավասար էր անհավատներին, քանզի ոչ միայն անարգանքներով և անպատվությամբ, այլև գանահարելով՝ ամեն օր տանջում էր Ակակիոսին, իսկ նա համբերում էր այս անարգ ծերին և նրա անողորմ բարքին, որովհետև տրտունջի մի խոսք անգամ չէր հանում իր բերանից: Իսկ ես ամեն օր տեսնում էի նրան՝ որպես մի գնված ծառայի՝ չարչարանքների մեջ: Մի օր հանդիպելով նրան՝ ասացի. «Ի՞նչ կա, եղբա՛յր Ակակիե, ինչպե՞ս ես այսօր»: Եվ նա, որպես թե Տիրոջից ստացած՝ ինձ ցույց տվեց աչքի կապտուկները, գանահարված ու վիրավորված գլուխն ու պարանոցը: Եվ ես հասկացա, որ վաստակաշատ է երիտասարդը, և ասացի նրան. «Բարի՛, բարի՛, համբերի՛ր և մեծապես կշահես»: Եվ ինը տարի մնաց նա այնտեղ՝ այն անողորմ ծերի մոտ, և չհեռացավ նրա մոտից և այդպիսի տանջանքների մեջ լինելով հանդերձ՝ երբեք անհնազանդ չեղավ»: Եվ ինը տարի հետո փոխվեց առ Տեր, և նրան թաղեցին հայրերի գերեզմանում: Եվ հինգ օր անց այս ծերը, որ Ակակիոսի վերակացուն էր, գնաց մեծ վերակացուի մոտ և ասաց նրան. «Հա՛յր, մեր եղբայր Ակակիոսը մեռավ»: Ծերն ասաց. «Հավատա՛, եղբա՛յր, չեմ հավատում, թե Ակակիոս եղբայրը մեռավ»: Սա նրան ասաց. «Ե՛կ և տե՛ս, հա՛յր, որ չեմ ստում»: Եվ վեր կենալով ծերը հապշտապ գնաց դեպի գերեզմանը և ասաց. «Ա՞յս է Ակակիոսի գերեզմանը, որին մեռած ես համարում»: Նա ասաց. «Այո՛, հա՛յր, այս է»: Իսկ մեծ վերակացու ծերը ձայնեց ճշմարիտ ննջեցյալին՝ որպես ողջի, և ասաց. «Եղբա՛յր Ակակիե, մեռա՞ր»: Իսկ նա, որ բարեմիտ էր և լսող, հետմահու ևս ցուցաբերեց իր հնազանդությունը և մեծին պատասխանեց. «Հա՛յր, ինչպե՞ս կարող են հնազանդություն ունեցող մարդիկ մեռնել»: Այնժամ մեծն ասաց այն ծերին. «Ո՛վ դու, տե՛ս, որ չի մեռել հնազանդության որդին, և ինչպե՞ս դու մեռած համարեցիր ճշմարիտ հնազանդության կենդանի նահատակ՝ երանելի երիտասարդ Ակակիոսին»: Այնժամ Ակակիոսի նախկին վերակացու ծերը, ահով բռնված, արտասուքներով ընկավ իր երեսի վրա, դառնապես լաց եղավ և ասաց հայրերին. «Ես սպանեցի նրան»: Եվ խուց կառուցեց նրա գերեզմանի մոտ և այնուհետև իմաստությամբ և զգաստությամբ իր բոլոր օրերին մեծ սուգով լացեց և ողբաց»:

36. Դարձյալ պատմեց նույն ծերը. «Հարցրեցի հոգու չինության վերաբերյալ եղբայրներից մեկին, որի անուն Անբակեռնե էր և որը

տասնհինգ տարի ապրել էր միաբաններով վանքում. մանավանդ որ բոլորի կողմից անարգվում և հալածվում էր թե՛ սեղան նստելիս և թե՛ վեր կենալիս, քանզի խիստ փոքրամարմին էր և անզուսպ լեզու ուներ: Եվ ես նրան ասացի. «Մի քեզ նայի՛ր, եղբա՛յր Անբակեռնե, ինչո՞ւ ամեն օր հալածվում ես սեղանակիցներից և շատ անգամ էլ անընթրել ես ննջում»: Իսկ նա ասաց. «Հավատա՛ ինձ, հա՛յր, եթե կրոնավորներին օրհնեմ, չեն համարձակվի ինձ այսպես տանջել, իսկ ես գիտեմ դրա մեծությունը, դրա համար էլ համբերում եմ, որովհետև ոսկին առանց փորձվելու չի կարող սրբվել»: Եվ այդպես Անբակեռնոսը մնում էր հալածանքների և ծաղրուծանակների մեջ: Եվ նույն տարի փոխվեց ի Տեր և վախճանի ժամին հայրերին ասաց. «Գոհանում եմ ձեզանից և Աստծուց, քանզի ես ձեր մեջ փորձվելով և ծաղրուծանակով հալածվելով իմ փրկության համար՝ փորձության չենթարկվեցի դևերից ահա արդեն տասնհինգ տարի»: Այսպես խոստովանեց այնտեղ գտնվող սուրբը հայրերի առաջ, և նրանք ասացին. "Արդարև՝ չեն փորձվում դևերից նրանք, ովքեր ուրացել են իրենց կամքը և հնազանդվել են ուրիշների կամքին, և ովքեր անարգ են եղել աշխարհի փառքից"»:

ԳԼՈՒԽ ԺԵ

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Աբբա Անտոնիոսը նայեց Աստծո դատաստանի խորքերը, խնդրեց և ասաց. «Տե՛ր, ինչպե՞ս է, որ ոմանք կարճատև կյանք են ունենում, իսկ ոմանք՝ ծերանում, ինչո՞ւ են ոմանք տառապյալներ, իսկ ոմանք՝ մեծատուններ, ինչո՞ւ արդարները տառապում են, իսկ անիրավները հանգստության մեջ են»: Ձայն եկավ նրան և ասաց. «Անտոնիո՛ս, զգուշացի՛ր անձիդ համար. քանզի Աստծո դատաստաններն անքննելի են, և քեզ անկարելի է ուսանել Աստծո խորությունները»:

2. Ասաց աբբա Անտոնիոսն աբբա Պիմենին. «Մարդու մեծագույն գործն այն է, երբ նա հանձն է առնում իր սխալներն Աստծո առաջ և փորձառություն է ձեռք բերում մինչև վերջին շունչը»: Ասաց դարձյալ աբբա Անտոնիոսը. «Տեսա սատանայի բոլոր որոգայթները՝ սփռված ամբողջ երկրի վրա, և հառաչելով ասացի. «Ո՞վ կարող է անցնել սրանց միջով»: Եվ ձայն լսեցի, որ ասաց՝ խոնարհությունը»:

3. Հայր Պիմենն ասաց. «Հայր Մովսեսը հարցրեց եղբայր Զաքարիային, երբ նա վախճանվելու վրա էր. «Ի՞նչ ես տեսնում»: Ասաց նրան Զաքարիան. «Զկա՛ ոչինչ ավելի լավ, քան լռությունը»: Եվ Մովսեսն ասաց. «Այո՛, որդյա՛կ, լո՛ւռ կաց»: Եվ երբ վախճանվեց, աբբա Իսիդորոսը, որ նստած էր այնտեղ, նայելով երկինք՝ ասաց. «Զվարճացի՛ր, զվարճացի՛ր, որդյա՛կ իմ Զաքարիա, քանզի բացվեցին քեզ համար Երկնքի Արքայության դռները»:

4. Աբբա Թեոդորոսի մասին ասում էին, թե սարկավագ ձեռնադրվեց Սկյութիայում և չէր կամենում ծառայել իր կոչման մեջ, դրա համար էլ բազում տեղեր էր փախուստ տալիս: Իսկ ծերերը նրան ասացին. «Մի՛ թող քո սարկավագությունը»: Եվ նա ասաց. «Կալանե՛ք ինձ՝ որպես հրաժարվածի, մինչև աղաչեմ Աստծուն, տեսնեմ՝ կընդունի՞ ինձ կանգնելու պատարագին՝ իմ տեղում»: Եվ աղաչելով Աստծուն՝ ասաց.

«Եթե Դու կամենում ես, որ կանգնեմ իմ տեղում և մնամ իմ կոչման մեջ, ցո՛ւյց տուր ինձ»: Եվ ցույց տրվեց նրան երկրից մինչ երկինք ձգվող մի հրե սյուն, ձայն եկավ նրան և ասաց. «Եթե կարող ես լինել՝ ինչպես այս սյունը, գնա՛ և կատարի՛ր սարկավագությանդ պաշտոնը»: Եվ նա, լսելով այս, իր մտքում կշռադատելով՝ որոշեց չընդունել կարգը, և գալով եկեղեցի՝ ծնրադրեց եղբայրների առաջ: Եղբայրներն ասացին. «Եթե չես կամենում սպասավորություն անել, ապա բարի եղիր գոնե սկիհն առնել ձեռքդ Հաղորդության ժամանակ: Իսկ նա հանձն չառավ և ասաց. «Եթե թույլ չտաք, կգնա՛մ այստեղից»: Եվ այսպես թողեցին նրան և այլևս չէին նեղում:

5. Եկան մի անգամ դևերը հայր Արսենիոսի սենյակը և նեղեցին նրան, իսկ սպասավորները գալով՝ դրսից լսեցին նրա ձայնը, որ ասում էր՝ առ Աստված գոչելով. «Մի՛ թող ինձ, քանզի երբեք քո առաջ բարի գործ չգործեցի, այլ հանուն քո քաղցրության թո՛ւյլ տուր սկզբից սկսել»:

6. Մի անգամ հայր Մակարը գնաց հայր Անտոնի մոտ և նրա հետ խոսելուց հետո վերադարձավ Սկյութիա, և հայրերն ընդառաջ ելան նրան: Եվ մինչ խոսում էին, ասաց նրանց ծերը. «Հարցրի հայր Անտոնին և ասացի. “Ինչո՞ւ այստեղ պատարագողներ չկան”»: Իսկ ընդառաջ եկած հայրերն սկսեցին խոսել այլ բաների մասին և չհարցրին, որ իմանան հայր Անտոնի պատասխանը հարցվածի մասին, և ծերն այլևս ոչինչ չասաց նրանց. քանզի եթե հայրերը տեսնում էին, որ մեկը շեղվել է հարցից, այլևս ոչինչ չէին ասում:

7. Երկու արյունակից եղբայրներ կային, որոնց սատանան կամեցավ գժտեցնել միմյանց հետ: Մի օր կրտսեր եղբայրը վառեց ճրագը և դրեց աշտանակի վրա, և սատանայի ազդմամբ աշտանակն ընկավ, և ճրագը հանգչեց. իսկ եղբայրը բարկանալով՝ խփեց նրան: Վերջինս ծունկի եկավ նրա առաջ՝ ասելով. «Համբերի՛ր, եղբա՛յր, և նորից կվառեմ»: Եվ ահա եկավ Տիրոջ զորությունը և տանջեց դևին մինչև առավոտ, և դևը գնալով՝ պատմեց ողջ եղելությունը դևերի իշխանին, որը կուռքերի մեհյանում էր: Հեթանոսների քուրմը, լսելով այս պատմությունը, որ պատմում էր դևն իր ընկերներին, գնաց մենակյացների մոտ և կրոնավոր դարձավ, և մեծ խոնարհություն հանձն առավ՝ ասելով. «Խոնարհությունը խորտակում է թշնամու ողջ զորությունը»: Ինչպես և ինքն իսկ լսել էր դևերից, որ ասում էին. «Երբ խռովություն ենք գցում մենակյացների մեջ, և նրանցից մեկը խոնարհվելով ընկնում է եղբոր առաջ՝ մեր ողջ զորությունը խափանվում է»:

8. Մեծն աբբա Մակարիոսն ասաց. «Որքան մարդը սիրի մարդկանց տված փառքը, այնքան նա հեռու է Աստծո փառքից, քանզի խոնարհություն չունի, այլապես գովեստ չէր փնտրի, որ եղծանելի է: Իսկ ուր խոնարհություն չկա, այնտեղ նաև Աստված չկա»:

9. Հորդանանում մի բուսակեր ծեր կար, և մի օր տոթից մտավ մի այր, որտեղ առյուծ կար, և առյուծը սկսեց մռնչալ: Եվ ծերը նրան ասաց. «Ինչո՞ւ ես նեղվում. ինձ էլ, քեզ էլ տեղ կա, իսկ եթե չես ուզում, ե՛լ և գնա՛ այստեղից»: Եվ առյուծը, չկարողանալով տանել, ելավ և գնաց:

10. Հայր Մակարիոս Եգիպտացու մասին ասում էին, թե մի անգամ Սկյութիայից ելնում էր դեպի Նիտրեա լեռը: Երբ մոտեցավ տեղին, աշակերտին ասաց. «Առա՛ջ անցիր մի փոքր»: Եվ երբ աշակերտն առաջ անցավ, պատահեց մի հեթանոս քրմի, որը՝ ձեռքին մի մեծ ձեռնափայտ, գնում էր ճանապարհով: Տեսնելով նրան՝ աշակերտը ձայն տվեց նրան և ասաց. «Ո՞ւր ես գնում, ա՜յ դև»: Իսկ նա, ետ դառնալով, չարաչար գանահարեց նրան և կիսամեռ թողնելով՝ վերցրեց ձեռնափայտն ու շարունակեց ճանապարհը: Քիչ անց, առաջ ընթանալով՝ պատահեց նրան հայր Մակարիոսը և ասաց. «Ապրի՛ր, տառապյալդ»: Իսկ նա սքանչացած եկավ դեպի հայր Մակարիոսն ու ասաց. «Ի՞նչ բարի բան տեսար իմ մեջ, որ ողջունեցիր ինձ»: Ասաց ծերը նրան. «Որովհետև տեսա քեզ հոգնաբեկ, սակայն չգիտես, որ իզուր ես ջանում»: Քուրմն ասաց. «Իսկ ես, քո ողջույնը լսելով, զղջացի և հասկացա, որ դու Աստծո մարդն ես, սակայն մի ուրիշ չար մենակյաց հանդիպեց և դառնացրեց ինձ, և ես մահու չափ գանահարեցի նրան»: Եվ ծերն իմացավ, որ դա իր աշակերտն է: Իսկ քուրմը նրա ոտքերը բռնելով՝ ասաց. «Քեզ բաց չեմ թողնի, մինչև ինձ մենակյաց չդարձնես»: Եվ գալով այն տեղը, ուր եղբայրն էր ընկած, վերցնելով նրան՝ բերին լեռան եկեղեցին, և եղբայրները, տեսնելով քուրմին նրանց հետ, նրան ևս մենակյաց դարձրին»:

11. Հրեշտակի կերպարանքով սատանան եկավ ծերերից մեկի մոտ և ասաց նրան. «Ես Գաբրիելն եմ՝ Տիրոջից առաքվեցի քեզ մոտ»: Եվ ծերն ասաց. «Գուցե մեկ ուրիշի մոտ ես առաքված, որովհետև ես մեղավոր մարդ եմ»: Եվ ծերի խոնարհ խոսքի շնորհիվ չարը չքվեց մեջտեղից:

12. Մի անգամ սատանան կամեցավ փորձել Արսենիոսին և մարդու կերպարանք առնելով՝ ասաց նրան. «Ես եմ Քրիստոսը, եկա տեսնելու մեծ վաստակավորիդ»: Եվ Արսենիոսը ծածկեց աչքերն ու ասաց. «Ես այս աշխարհում չեմ ուզում Քրիստոսին տեսնել»: Եվ զարմանալով՝

դևը փախավ՝ ասելով. «Որքա՜ն իմաստություն է տվել մարդկանց Մարիամի Որդին»:

13. Ոմն եղբայր տարակուսեց Սուրբ Գրքի խոսքերի մեջ և յոթ շաբաթ պահքով և աղոթքով խնդրեց Աստծուց, սակայն նրան չհայտնվեց խորհուրդը: Այնժամ խորհեց գնալ վարդապետի մոտ՝ նրանից խոսքը ուսանելու համար: Եվ երբ դռնից դուրս ելավ, նրան երևաց Տիրոջ հրեշտակը և ասաց նրան. «Ահա յոթ շաբաթ խնդրեցիր և չստացար, սակայն այժմ քանի որ խոնարհությամբ կամեցար գնալ եղբոր մոտ, դա գթասրտության մղեց Աստծուն և ինձ առաքեց՝ մեկնելու քեզ խոսքը»: Եվ մեկնեց նրան խորհուրդը:

14. Մեկ այլ եղբայր եկավ ոմն ծերի մոտ և տասնմեկ անգամ չարախոսեց իր խորհուրդներում ծերին: Եվ երբ ծերը խոսում էր այս եղբոր հետ՝ դևը փախչում էր, սակայն երբ վերադառնում էր իր խուցը, դևը դարձյալ գալիս էր: Սակայն եղբայրը համբերեց, և դադարեց այս պատերազմը:

15. Մենակյացների մեջ մի սքանչելի այր կար, որի անունն էր Ամոնիոս: Սա հանդարտաբարո էր և հաստատահավատ: Երբ սա Աթանասի հետ Հռոմում էր, քաղաքում ոչ մի արժանավայել բան չէր տեսնում, բացի Պողոսի և Պետրոսի մատուռից: Այս Ամոնիոսին կամեցան բռնի տանել եպիսկոպոսության, սակայն փախչելով՝ կտրեց իր աջ ականջը, որպեսզի այպանելի մարմնի շնորհիվ խույս տա ձեռնադրումից: Որոշ ժամանակ անց փախավ Եվագրիոսը, ում Ալեքսանդրիայի եպիսկոպոս Թեոփիլոսը եպիսկոպոս էր ձեռնադրել, սակայն՝ առանց մարմնի ծայրանդամները կտրելու: Եվ երբ հանդիպեց Եվագրիոսն Ամոնին, ողջույն տալով ասաց. «Որքան չար բան է լսելիքը կտրելը, և դրա համար պարտական կմնաս Աստծուն»: Իսկ Ամոնիոսը նրան ասաց. «Սակայն դու, ո՜վ Եվագրիոս, որ քեզ տրված շնորհը չգործադրեցիր ինքնասիրության պատճառով, այլ թաքցրիր այն, Աստծու ատյանում չես կարող պատասխան տալ՝ լեզուդ կտրելով»:

16. Աբբա Մովսեսն ասաց. «Ով ունի խոնարհություն՝ դևերին կխոնարհեցնի, իսկ ով չունի՝ ինքը կխոնարհվի դևերի առաջ»:

17. Ոմն եղբայր եկավ մի ծերի մոտ, հարցրեց նրան և ասաց. «Ինչպե՞ս ես ապրում, հա՜յր»: Եվ ծերն ասաց. «Չար են օրերս, որդյա՜կ»: Եղբայրը հարցրեց. «Այդ ինչպե՞ս, աբբա՜»: Ծերն ասաց. «Ահա տասնյոթ տարի է, որ կամ Աստծո առաջ և ամեն օր անիծում եմ ինձ և ասում. “Անիծյալ են նրանք, ովքեր խոտորվեցին քո պատվիրաններ-

րից"»: Լսելով այս՝ դուրս եկավ եղբայրը և նրա խոնարհությունից մեծ օգուտ քաղած՝ գնաց:

18. Հարցրեց դարձյալ ոմն եղբայր ծերին և ասաց. «Ո՞րն է հոգու առաջադիմությունը»: Եվ ծերն ասաց. «Խոնարհությունը. ուրիշ առաջադիմություն չկա՝ սրանից բացի, որովհետև ով իջնի դեպի խոնարհություն՝ նա կելնի վեր՝ դեպի բարձրություն»:

19. Աբբա Ղոնգինոսին հարցրին. «Ո՞րն է առաքինություններից մեծը, հա՛յր»: Եվ ծերն ասաց. «Կարծում եմ՝ ինչպես ամբարտավանությունը վատթարագույնն է բոլոր ախտերից, որ նույնիսկ ոմանց երկնքից վայր գցեց, այնպես էլ խոնարհությունը նույնիսկ անդունդներից կարող է մարդուն բարձրացնել երկինք, եթե նույնիսկ նա դև լինի մեղավոր, որովհետև Տերն էլ ամենից առաջ երանի է տալիս հոգով աղքատներին»: Ծերը դարձյալ ասաց. «Ինչպես մեռելը չի ուտում, այնպես էլ խոնարհը չի դատապարտում մարդուն, եթե նույնիսկ նրան տեսնի կուռքերին երկրպագելիս»:

20. Ոմն ծեր ասաց. «Խոնարհությունը բազմիցս առանց ջանադրության շատերին ապրեցրեց, որի վկաներն են մաքսավորը, պոռնիկը և անառակ որդին (Ղուկ. ԺԸ 10-14, Հեսու 17-25, Հակոբոս Բ 25, Ղուկ. 11-32)*: Սրանք մի խոսք ասացին և ապրեցին: Իսկ մարդու տքնաջանությունը՝ եթե խոնարհություն չունի, նրա իսկ կործանումն է, քանզի շատերը մեծամեծ ջանքեր գործադրելով՝ ընկնում են ամբարտավանության մեջ՝ ինչպես փարիսեցին* (Ղուկ. ԺԸ 11-12)*, և կորչում են»: Ծերն ասաց դարձյալ. «Հավատից խոսելն ու հավատի մասին կարդալը ցամաքեցնում են մարդու զղջումն ու եղծանում են այն, իսկ հայրերի վարքն ու նրանց խոսքերը լուսավորում են հոգին»:*

21. Ոմն եղբայր Սկյութիայից եկավ Թեբայիդ և մտնելով մի հասարակաց վանք՝ մնաց այնտեղ: Բոլորն այնտեղ սուրբ այրեր էին և կոչվում էին տաբենիսացիներ: Երբ որոշ ժամանակ մնաց այնտեղ, վանահորն ասաց. «Աբբա՛, աղո՛թք արա ինձ վրա և արձակի՛ր, քանզի չեմ կարողանում բնակվել այստեղ»: «Ինչո՞ւ, որդյա՛կ»,– հարցրեց նրան վանահայրը: Եղբայրը նրան ասաց. «Աբբա՛, այստեղ ոչ տառապանք կա, ոչ էլ վարձատրություն, քանզի բոլոր հայրերը ճգնողներ են, իսկ ես մեղավոր մարդ եմ: Գնամ այնտեղ, որտեղ կգտնեմ ծաղր և արհամարհանք, քանզի սրանք են, որ ապրեցնում են մեղավոր մարդուն»: Իսկ զարմացած վանահայրը՝ ճանաչելով, որ ջանադիր մշակ է, արձակեց նրան՝ ասելով. «Գնա՛, որդյա՛կ, և քաջալերվի՛ր, թո՛ղ զորանա քո սիրտը և համբերությամբ սպասի Տիրոջը»:

22. Երկու եպիսկոպոսներ պայքարում էին միմյանց դեմ, որոնցից մեկն աղքատ էր և խոնարհ, մյուսը՝ հարուստ և զորեղ: Աղքատ եպիսկոպոսն ասաց իր եկեղեցականներին. «Քրիստոսի շնորհներով կհաղթենք մենք հզորին և հարուստին»: Իսկ նրանք հարցրին. «Ո՞վ կարող է հաղթել նրան»: Իսկ նա, վերցնելով իր հետ իր եկեղեցականներին, գնաց հարուստի մոտ, այն օրը, երբ նա մեծ ժողով ուներ, և ընկավ նրա ոտքերը՝ յուրայինների հետ միասին: Իսկ հարուստը, տեսնելով նրան ընկած, ինքը ևս ընկավ գետնին և ասաց. «Այսուհետև՝ դու հայր և տեր, և ես՝ քո ծառան»: Եվ մեծ սեր եղավ նրանց միջև:

23. Հայր Ալոնիսը խիստ գովեստների արժանացավ եղբայրների կողմից, որովհետև հեզությամբ սպասավորեց ժողովի օրը, սակայն չպատասխանեց իրեն գովողներին: Եվ երբ նստած էր տանը, աշակերտը նրան ասաց. «Ինչո՞ւ պատասխան չտվեցիր քեզ գովողներին»: Եվ նա ասաց. «Եթե պատասխան տայի, հայտնի կդարձնեի, թե ախտերի մեջ ընկա իրենց խոսքերից»:

24. Խցերի երեց հայր Իսահակն ասաց. «Երբ երիտասարդ էի, ապրում էի հայր Կրոնիոսի մոտ, և նա ինձ երբեք չասաց. «Արա՛ այս բանը»: Նա դողդոջուն ծեր էր, բայց ինքն էր վերցնում հացը և տալիս ինձ, և այդպես՝ ամենքին: Նստեցի նաև հայր Թեոդորոս Փերմացու մոտ, և նա նույնպես ինձ երբեք չասաց որև գործ անելու մասին, այլ ինքն էր դնում սեղանը և ինձ ասում. «Եղբա՛յր, ճաշակի՛ր»: Մի անգամ ես նրան ասացի. «Հա՛յր, եկա քեզ մոտ, որպեսզի գեթ փոքր-ինչ օգնեմ քեզ, իսկ ինչո՞ւ չես ասում ինձ՝ ինչ անեմ»: Իսկ ծերը լուռ մնաց: Եվ ես գնացի և այս բանը պատմեցի ծերերին, և ծերերը, գալով նրա մոտ, ասացին. «Հա՛յր, քո եղբայրը եկել է քո սրբության մոտ, որպեսզի օգտակար լինի: Ինչո՞ւ դրան չես ասում, թե ինչ գործ անի»: Ծերը նրանց ասաց. «Մի՞թե ես միաբանների գլխավորն եմ, որ դրան հրամայեմ. ես դրան ի՞նչ ասեմ: Սակայն եթե իսկապես ուզում է, ինչ որ տեսնի՝ ես եմ անում՝ նույնը թող ինքն անի»: Այնուհետև ես փութով կատարում էի այն, ինչ պատրաստվում էր կատարել ծերը: Սակայն նա, ինչ էլ որ կատարում էր, ամեն ինչ կատարում էր լռությամբ. և այդպիսով ինձ կատարյալ լռություն սովորեցրեց»:

25. Մինչ նստում էր Զաքարիան Սկյութիայում, մի անգամ Աստծո տեսությունն ունեցավ, և գալով հայր Կյուրոնի մոտ՝ պատմեց նրան: Իսկ ծերն անհմուտ էր տեսիլքների հարցում, սակայն վարժ էր առաքինությունների գործում: Սա վեր կենալով՝ ապտակեց նրան՝ ասելով. «Սատանայի՛ց է այդ տեսլիքը»: Բայց քանի որ այդ խորհուրդները Զա-

քարիային տանջում էին, գիշերով վեր կացավ և գնաց հայր Պիմենի մոտ և պատմեց նրան կատարվածը, և թե ինչպես անդադար իր որովայնը այրվում է: Եվ ծերը գիտենալով, որ այն Աստծուց է, ասաց նրան. «Գնա՛ այսինչ ծերի մոտ, և ինչ որ քեզ ասի՝ կատարի՛ր»: Նա գնաց ու նախքան իր հարցնելը՝ ծերը կանխեց նրան և ամեն ինչ ասաց նրան. «Այդ տեսիլքդ Աստծուց է, սակայն դու գնա՛ և հնազանդվի՛ր քո հորը»:

26. Գնացին ոմանք հայր Սիսոյի մոտ՝ խոսք լսելու նրանից, իսկ նա ոչինչ չխոսեց նրանց հետ, այլ մշտապես կրկնում էր. «Թողությո՛ւն տվեք ինձ»: Եվ տեսնելով նրանց գործած զամբյուղները, հարցրին նրա աշակերտ Աբրահամին. «Ի՞նչ եք անում այդ զամբյուղները»: Եվ նա ասաց. «Այստեղ-այնտեղ վաճառում ենք»: Իսկ ծերը լսելով՝ ասաց. «Եվ Սիսոն այստեղ-այնտեղ ուտում է»: Եվ նրանք, տեսնելով նրա խոնարհությունը, մեծապես շահած՝ գնացին խնդությամբ:

27. Մի անգամ յոթ եղբայրներ գնալով հայր Սիսոյի մոտ՝ հոգեշահ խոսք խնդրեցին նրանից: Իսկ ծերը պատասխանեց նրանց և ասաց. «Երբ ես եկա և բնակվեցի այս վայրում, նախապես գնացի հայր Ովրի և Ատրեի մոտ և նրանցից խոսք խնդրեցի: Իսկ նրանք, պատասխանելով ինձ, հարցրին. «Հավատո՞ւմ ես մեզ»: Եվ ես ասացի՝ այո՛: Նրանք ինձ ասացին. «Ուրեմն՝ գնա՛ և ինչ որ տեսար՝ մեզ անելիս, նույնը և դո՛ւ արա»: Եվ եղբայրների հարցին. «Ի՞նչ էր նրանց գործը», պատասխանեց ծերը և ասաց. «Նրանցից մեկը խոնարհ էր, իսկ մյուսը մեծ հնազանդություն ուներ»: Պատասխանեցին եղբայրները և ասացին. «Ահա նրանք ցույց տվեցին քեզ իրենց գործը, դու էլ մե՛զ պատմիր քո գործերը»: Պատասխանեց ծերը և ասաց նրանց. «Ըստ իմ խորհրդի այսպես ասեմ. ամեն ինչից գլխավորագույնը այս է, որ մարդն ամեն ինչում իրեն մի բան չկարծի»: Եվ նրանք մեծապես շահած՝ գնացին:

28. Հայր Պիմենի մասին ասում էին, թե երբեք չէր կամենում ավել խոսք ասել կամ ավելին անել, քան մյուս ծերերը, այլ մանավանդ ամեն ինչում գովում էր նրանց:

29. Ոմն եղբայր ասաց մի մեծ ծերի. «Եթե իմ կամքին հարմար մի ծեր գտնեի, հաճույքով կմեռնեի նրա հետ»: Եվ ծերը ծիծաղելով՝ ասաց նրան. «Լավ ես ասում, տե՛ր իմ»: Իսկ նա առավել ևս հաստատվեց իր մտքի մեջ՝ կարծելով, թե ճիշտ է ասում, որովհետև չհասկացավ ծերի միտքը: Եվ երբ ծերը տեսավ, որ նա կարծում է, թե լավ բան է ասում, նրան ասաց. «Եթե քո կամքին համապատասխան ծեր գտնես, կկամենա՞ս նրա հետ բնակվել»: Եվ նա ասաց՝ այո՛: Եվ ծերն ասաց. «Որպես-

զի ոչ թե դու շարժվես նրա կամքով, այլ նա շարժվի քո կամքով. ահա սրան է հանգում քո միտքը»: Եվ եղբայրը վեր կենալով՝ ընկավ ծերի առաջն ու ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, քանզի պարծեցա՝ կարծելով թե լավ բան ասացի, մինչդեռ ամենևին դատարկ բան էր ասածս»:

30. Հայր Արսենիոսը քառասուն տարի չէր դադարում լաց լինել և ապրեց իններորդ տարի: Վախճանվելիս դողում էր և ասաց. «Տարե՛ք ինձ անապատ, որպեսզի գազաններն ուտեն ինձ»:

31. Հայր Դանիելն ասաց. «Երբ Արսենիոս երանելին մոտ էր վախճանին, մեզ պատվիրեց և ասաց. "Շատ հոգս մի՛ արեք բարի բան անելու իմ համար, այլ միայն՝ պատարագ. եթե ես ինչ-որ բարի բան եմ արել, կգտնեմ այն"»:

32. Դարձյալ հայր Դանիելն ասաց. «Հայր Արսենը երբեք չկամեցավ խոսել կամ ինչ-որ բան քննել Սուրբ Գրքից, որը և կարող էր, եթե կամենար: Եվ թուղթ էլ չէր գրում որևէ մեկին իր անչափ խոնարհության համար»:

33. Նույն հայր Արսենի մասին ասում էին. թե մինչ պալատում էր, ոչ ոք ավելի լավ չէր հագնվում, քան նա. այդպես և Սկյութիայում ջանում էր բոլորից վատ հագնվել, և երբ եկեղեցի էր գալիս՝ բազում ժամեր սյան մոտ էր նստում, որպեսզի ոչ ոք իր երեսը չտեսնի, և ինքն էլ ուրիշների երեսը չտեսնի»:

34. Նույն հայր Արսենի մասին հայր Դանիելն ասաց դարձյալ. «Նրա դեմքն ու կերպարանքը նման էին Հակոբին, և նա ամբողջովին սպիտակ էր ձյան պես, նրա ոսկորները ցամաքել էին՝ միայն մաշկ ունենալով իրենց վրա, նրա մորուքը իջնում էր մինչև կուրծքը՝ ամբողջովին սպիտակ, նրա արտևանունքները թափվել էին սաստիկ լալուց: Նա բարձրահասակ էր, սակայն ծերությունից կորացել էր և վախճանվեց իններորդ տարեկանում: Թեոդոս Մեծ կայսեր պալատից դուրս եկավ քառասունամյա հասակում. պալատի ավագն էր, Արկադիա և Ոնորիս թագավորների հայրը: Սկյութիայի անապատում եղավ քառասուն տարի, և տասը տարի՝ Բաբելոնի Տրոյանով վեմի վրա՝ Փերմեայի դիմաց, երեք տարի՝ Կապոնոսի ներքին կողմերում, և վերջին երկու տարին եկավ դարձյալ Տրոհի տաճար, ուր և ննջեց: Եվ ինձ թողեց իր մորթեղեն վերարկուն, սպիտակ բրդյա պարեգոտը և արմավենուց հողաթափերը, և ես՝ անարժանս, հագնում էի դրանք, որպեսզի օրհնվեի»:

35. Պատմում էին Սկյութիայում մի ծերի մասին, որ ծառա էր եղել և ամեն տարի գալիս էր Ալեքսանդրիա և բերում էր վարձն իր տերե-

րին: Իսկ նրանք ընդառաջ էին գնում և երկրպագում էին նրան, իսկ ծերը ջուր էր լցնում կուժը և մատուցում էր նրանց, որ լվացվեն: Իսկ նրանք ասացին. «Մի՛ արա այդ, հա՛յր, և մեր բեռը մի՛ ծանրացրու»: Իսկ ծերն ասաց. «Խոստովանում եմ, որ ձեր ծառան եմ, տիա՛րք, և գոհանում եմ ձեզանից, որ ինձ ազատեցիք՝ ծառայելու Աստծուն, սակայն ես ջուր եմ լցնում, որ լվացվեք, որպեսզի կատարեմ իմ ծառայողական պարտքը»: Սակայն նրանք հակառակում էին և հանձն չէին առնում: Ծերը նրանց ասաց. «Եթե չեք կամենում ընդունել, կմնամ այստեղ և կծառայեմ ձեզ»: Եվ նրանից վախենալով՝ թողնում էին, որ ինչ խնդրում է՝ անի, և ճանապարհում էին նրան պատվով և մեծամեծ նվերներով, որպեսզի նրանց համար ողորմություն անի: Եվ սրա համար նա անվանի մենակյաց եղավ Սկյութիայում:

36. Հայր Իսահակ Թեբայեցին ասաց. «Երբեք իմ խուղ չմտցրի չար խորհուրդ եղբոր մասին, ումից նեղացած էի, և ես էլ իմ հերթին ջանացի, որ եղբայրն իր խուղի մեջ չար խորհուրդ չունենա իմ մասին»:

37. Ոմն եղբայր հայրերից մեկին հարցրեց և ասաց. «Ինչո՞ւ խոնարհվեմ և ընկնեմ նրա առաջ, ով իմ հանդեպ թշնամություն ունի և չի մաքրում իր սիրտն իմ նկատմամբ»: Ծերն ասաց. «Ինձ ճշմարի՛տն ասա՝ դու քո սրտում քեզ արդար չե՞ս համարում, երբ քեզ խոնարհեցնում ես նրա առաջ, թե՝ նա՛ իմ հանդեպ հանցանք գործեց, իսկ ես հանուն պատվիրանի խոնարհվում եմ նրա առաջ»: Եղբայրն ասաց. «Այո՛, այդպես է»: Ծերը նրան ասաց. «Դրա համար էլ Աստված չի օգնում նրան՝ անսալու քեզ և մաքրելու իր սիրտը քո նկատմամբ, որովհետև դու չես գնում նրա մոտ իբրև հանցավոր, այլ քեզ արդար ես համարում և կարծում ես՝ մեղավորն ինքն է: Բայց եթե նա նույնիսկ հանցանք լինի քո հանդեպ, քո մտքում այսպես ասա՝ ե՛ս հանցանք գործեցի նրա նկատմամբ, և քո եղբորը արդարացրո՛ւ, այնժամ Աստված կկատարի քո կամքը, քանզի կմաքրվեն նրա խորհուրդները քո հանդեպ: Եվ ծերը այսպիսի մի օրինակ պատմեց. «Մի քանի երկյուղած աշխարհականներ կային, որոնք, միաձայն խորհուրդ անելով, գնացին և մենակյացներ դարձան: Եվ Աստծո նախանձախնդրությունից դրդված, Ավետարանական խոսքը չհասկանալով՝ ներքինացրին իրենց՝ կարծելով, թե դա հանուն երկնքի Արքայության է: Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, լսելով այդ, հեռացրեց նրանց սուրբ Հաղորդությունից: Իսկ նրանք, կարծելով, թե իրենք ազնիվ արարք են կատարել, զայրացան նրա վրա և ասացին. «Մենք հանուն երկնքի Արքայության ներքինացրինք մեզ, իսկ սա մեզ մերժում է: Եկե՛ք գնանք Երուսաղեմի

եպիսկոպոսապետի մոտ և ասենք դրա մասին»: Եվ գնացին ու ամեն ինչ պատմեցին նրան: Երուսաղեմի եպիսկոպոսապետն ասաց. «Ես էլ եմ ձեզ մերժում»: Խռովված ետ դարձան և գնացին Անտիոքի եպիսկոպոսապետի մոտ և պատմեցին ողջ եղելությունը, և նա էլ մերժեց նրանց: Միմյանց ասացին. «Եկե՛ք գնանք Հռոմի հայրապետի մոտ, և նա մեր վրեժը կառնի սրանցից»: Գնալով Հռոմի պապի մոտ՝ պատմեցին նրան, թե ինչ ասացին իրենց եպիսկոպոսապետերը, և ասացին. «Ահա քեզ մոտ եկանք, քանզի դու ես բոլորի գլուխը»: Եպիսկոպոսապետն ասաց. «Ես ևս մերժում եմ ձեզ, և դուք հեռացված եք (եկեղեցուց)»: Այնժամ վարանումի մեջ ընկնելով՝ ասացին. «Սրանք ընկերն ընկերոջը հաճոյանում են՝ սինոդոսում ժողովվելիս իրար պաշտպանելու համար. եկե՛ք գնանք Աստծո սուրբ Եպիփան Կիպրացու մոտ, որովհետև մարգարե է և աչառություն չի անում»: Եվ երբ մոտեցան սուրբի քաղաքին, նրան հայտնություն եղավ նրանց մասին, և մարդ ուղարկեց նրանց հանդիման, հալածեց նրանց և ասաց. «Իմ քաղաքը ևս մի՛ մտեք»: Այնժամ սկսեցին խոսել միմյանց հետ և ասել. «Արդարև մենք հանցանք գործեցինք, ինչո՞ւ ենք արդարացնում մեզ: Ասենք՝ նրա՛նք անիրավությամբ մերժեցին մեզ, մի՞թե և այս մարգարեն. չէ որ Աստված հայտնեց նրան մեր մասին»: Եվ սաստիկ մեղադրեցին իրենց՝ կատարած հանցանքի համար: Այնժամ սրտագետն Աստված, գիտենալով, որ իրենք իրենց ճշմարտապես դատապարտեցին, հայտնեց հայր Եպիփան Կիպրացուն և Ինքն իսկ ուղարկեց նրան՝ մխիթարելու նրանց: Եվ Եպիփանը նրանց հավաքելով մի տեղ՝ գրեց Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետին և ասաց. «Ընդունի՛ր քո որդիներին, որովհետև ճշմարտությամբ ապաշխարեցին»: Ահա այս է մարդու բժշկությունը, և այս է կամենում Աստված, որ մարդը հանձն առնի իր հանցանքներն Աստծու առաջ»:

38. Հայր Դանիելն ասաց. «Մի անգամ հայրերից ոմանք եկան Ալեքսանդրիա՝ հայր Արսենին տեսնելու: Նրանցից մեկն Ալեքսանդրիայի եպիսկոպոս երանելի Տիմոթեոսի հորեղբայրն էր, որն իր հետ բերել էր իր եղբորորդիներից մեկին: Հայր Արսենն այդ ժամանակ հիվանդ էր և չկամեցավ ընդունել նրանց, որպեսզի ուրիշներն էլ չգան և չանհանգստացնեն իրեն: Այդ ժամանակ նա Տրոյիսում էր, և եկվորները խռովված ետ գնացին: Դրանից հետո այնտեղ եկան բարբարոսները, և հայր Արսենը հեռանալով՝ եկավ Եգիպտոսի ներքին կողմը և այնտեղ էր մնում: Եվ դարձյալ նույն ծերերը, լսելով այդ մասին, եկան նրան տեսնելու, և նա խնդությամբ ընդունեց նրանց: Մի եղբայր, որ նրանց

հետ էր, ասաց նրան. «Իմացի՛ր, հա՛յր, որ մենք եկանք Տրոյիսում քեզ տեսնելու, և մեզ չընդունեցիր»: Ծերը նրան ասաց. «Դուք այն ժամանակ հաց ճաշակեցիք և ջուր խմեցիք, որդյա՛կ, իսկ ես նույնիսկ չնստեցի՝ տանջելով ինձ, մինչև որ տեղեկացա, թե հասել եք ձեր տեղը, որովհետև շատ էիք հոգնություն քաշել ինձ տեսնելու համար. թողությո՛ւն արեք ինձ, եղբայրնե՛ր»: Եվ նրանք հեռացան մխիթարված»:

38. Հայր Պետրոսի և հայր Եպիմաքոսի մասին ասում էին, թե նրանք Հռայիթում բնակվում էին միախորհուրդ: Մինչ նրանք ճաշակում էին եկեղեցում, նրանց բռնադատելով ստիպեցին գալ և սեղան նստել սրբերի հետ, և մեծ դժկամությամբ գնաց միայն հայր Պետրոսը: Եվ երբ վեր կացան, հայր Եպիմաքոսը նրան ասաց. «Ինչպե՞ս համարձակվեցիր ծերերի հետ սեղան նստել»: Հայր Պետրոսն ասաց նրան. «Եթե ես նստեի ձեզ հետ, ինձ՝ որպես ծերի, կպատվեին եղբայրները և առաջինն օրհնելու իրավունքն ինձ կտային, և ձեր մեջ կերևայի մեծագույնը, իսկ հիմա, գնալով հայրերի մոտ, բոլորից կրտսերագույնն եմ և իմ խորհուրդներով՝ խոնարհ»:

39. Դարձյալ պատմեց մեկ այլ եպիսկոպոսի՝ հայր Ափուայի մասին, թե երբ մենակյաց էր, բազում ճգնություններով էր կենցաղավարում, իսկ երբ եպիսկոպոս դարձավ, կամեցավ նույն խստակրոնությունը վարել, սակայն չկարողացավ և ինքն իրեն գցելով Տիրոջ առաջ՝ ասաց. «Մի՞թե եպիսկոպոսության պատճառով վերցվեց ինձանից Քո շնորհը»: Եվ հայտնություն եղավ նրան. «Ո՛չ, այլ այն ժամանակ անապատում էիր, և մարդ չկար, և Աստված էր քեզ օգնական, իսկ այժմ աշխարհում ես, և մարդիկ են քեզօգնական»:

40. Մի եգիպտացի մենակյաց կար Կոստանդնուպոլսում՝ երանելի Թեոդոս փոքրի օրոք, որը բնակվում էր մերձակա անապատի մի փոքրիկ խցում: Մի անգամ թագավորն այնտեղով անցնելիս, թողեց հեծելազորը և թագը թաքցնելով՝ մենակ մոտեցավ մենակյացի դռանը և բախեց այն: Նա բացեց դուռը և ճանաչեց, որ թագավորն է և լուռ մնաց, ընդունեց նրան որպես մի զինվորի, և աղոթելուց հետո նստեցին: Եվ թագավորը սկսեց հարցուփորձ անել, թե ինչպես են եգիպտացի հայրերը, և նա պատասխանեց. «Բոլորն էլ աղոթում են քո փրկության համար»: Եվ նայելով խուցը՝ Թեոդոսը ոչինչ չտեսավ այնտեղ, բացի մի փոքրիկ զամբյուղից, որի մեջ հաց կար: Մենակյացն ասաց. «Ճաշակի՛ր ինձ հետ մի փոքր»: Նա ասաց. «Ինչպես կկամենաս»: Թրջեց հացը, ձեթ և աղ լցրեց վրան, և կերան, ապա ջուր տվեց նրան, և նա խմեց: Եվ Թեոդոսը նրան ասաց. «Գիտե՞ս՝ ով եմ ես»; Մենակյացն ասաց.

«Աստված գիտե՝ ով ես դու»: Պատասխան տվեց և ասաց. «Ես Թեոդոս Թագավորն եմ»: Եվ ծերը երկրպագեց նրան: Ասաց արքան. «Երանի՜ ձեզ՝ ճշմարիտներիդ և աշխարհից հեռացածներիդ. Թագավորության մեջ եմ ծնվել, բայց երբեք հացով ու ջրով չեմ հագեցել, ինչպես այսօր. չափազանց հաճելի եղավ ինձ»: Եվ գնաց արքան և սկսեց այնուհետև պատվել նրան: Իսկ ծերը Թագավորի պատվելու պատճառով չկամեցավ մնալ այնտեղ, այլ փախավ և դարձյալ գնաց Եգիպտոս և ասաց. «Արժանի չեմ նունիսկ Թագավորների ստրուկների պատվին»:

41. Ծերերն ասացին. «Մի անգամ մեկը մեզ մի քիչ Թուզ տվեց, և քանի որ քիչ էր և անպիտան, չուղարկեցինք հայր Արսենին, որպեսզի անարգած չլինենք նրան: Իսկ ծերը լսելով՝ ժողովի չեկավ՝ ասելով. «Զրկեցիք ինձ և չտվիք այն օրհնությունից, որ Աստված ուղարկեց եղբայրներիդ, որն ընդունելու արժանի չեղա»: Եվ ամենքը լսելով՝ շահեցին ծերի խոնարհությունից, և երեցը տարավ նրան այդ Թզից և մեծ ուրախությամբ ժողովի բերեց նրան»:

42. Մի անգամ նստած էր հայր Հովհաննեսը ՍկյուԹիայում, և եղբայրները, շրջապատելով նրան, հարցեր էին տալիս իրենց խորհուրդների մասին, և նա ամեն մեկին պատասխանում էր: Ծերերից մեկը նրան ասաց. «Հովհաննե՛ս, դու կարծես պճնազարդ պոռնիկ լինես և հոմանիներդ էլ շուրջդ ես բազմեցրել»: Իսկ Հայր Հովհաննեսը գրկեց նրան և ասաց. «Ճշմարիտ ասացիր, հա՛յր, և Աստված է, որ քեզ հայտնեց այդ»: Դրանից հետո նրա ծանոԹներից մեկը ասաց նրան. «Ներքուստ չե՞ս վրդովվում, հա՛յր»: Եվ հայր Հովհաննեսը նրան ասաց. «Չեմ վրդովվում, այլ՝ ինչպես արտաքուստ եմ, նույնպես և ներքուստ եմ»:

43. Եկավ հայրերից մեկը հայր Անտոնի լեռը՝ հայր Սիսոյի մոտ, և մինչդեռ խոսում էին իրար հետ, հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Հասա՞ր արդյոք Երանելի Անտոնի մեծությանը, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ես որտեղի՞ց հասնեմ նրա մեծությանը, որովհետև եԹե գեԹ մեկն ունենայի հայր Անտոնի խորհուրդներից, ամբողջովին հրի նման կլինեի, սակայն գիտեմ մեկին, ով ապաշխարությամբ կարողանում է դիմակայել խորհուրդներին»: Դարձյալ հարցրեց նրան և ասաց. «Այսպե՞ս էր արդյոք հալածում սատանան առաջին մենակյացներին»: Հայր Սիսոն նրան ասաց. «Այժմ առավել ուժգին է հալածում, որովհետև նրա ժամանակը մոտեցել է, և խռովքների մեջ է»:

44. Հայր Թեոդորոս Փերմացին մի անգամ հայտնվեց մի վայրում, որտեղ եղբայրները ճաշակում էին. և երկյուղածության պատճառով

լռությամբ վերցնում էին բաժակը և չէին ասում. «Թողությո՛ւն շնորհիր»: Հայր Թեոդորոսն ասաց. «Թողությո՛ւն շնորհիր» չասելու պատճառով կորցրին եղբայրներն իրենց լռությունը:

45. Մեկ այլ ծեր ասաց. «Ազնիվ է միմյանց ասել՝ Թողությո՛ւն շնորհիր, և այդպես ճաշակել, որովհետև այս է մենակյացի կեցության ձևը»:

46. Հայր Արմատեսն ասաց. «Ավելի համակրում եմ այն մարդուն, ով մեղավոր է և գիտակցում է իր մեղավոր լինելը և ապաշխարում է, քան այն մարդուն, ով մեղավոր չէ և ինքն իր մասին այնպես է կարծում, թե իբր արդարություն է գործել»:

47. Հայր Փորտասն ասաց. «Եթե Աստված կամենում է իմ ապրելը, գիտե, թե ինչպես հոգա իմ մասին, իսկ եթե չի կամենում, ինչի՞ համար է իմ կյանքը»: Որովհետև նա ամեն մեկից չէ, որ որևէ բան էր ընդունում, այլ կողքից էր դիտում և ասում. «Եթե մեկը ինձ որև բան տա՝ ոչ հանուն Աստծո, ես նրան ոչինչ չունեմ տալու, և քանի որ հանուն Աստծո չտվեց այն, կզրկվի վարձից: Նրա՛նց նմանվեք, ովքեր միայն Աստծո հետ են և միմիայն նրանից ակնկալություն ունեն. այդպես երկյուղածությամբ ապրե՛ք: Մի՛ թշնամացեք, եթե բյուր անգամ իսկ անարգվեք, մարմնի փառք մի՛ փնտրեք, այլ ջանացե՛ք մարմնի ախտերը լուծարել. և եթե լավագույնը որոնեք, փառք կլինի: Առաքինությունը մարդկանցից փառք չի փնտրում և ոչ էլ պատիվ, որ չարիքի մայրն է և առաջնորդում է դեպի մարդահաճություն, քանզի ով աշխարհի փառքն է փնտրում, իր թշնամուն է փնտրում, ով սպանում է իր հոգին: Այդպիսին բազում ախտերի է ծառայում: Սակայն սիրուն է միայն հատուկ երկայնամտությունը և նրան հատուկ չեն բարկությունն ու զայրույթը: Սնափառությունը չի սիրում խոնարհվել մարդկանց առաջ և իրենից առաջ որևէ մեկին պատիվ տալ, ուստի հափշտակում է նախապատվությունը, որպեսզի չլինի թե անարգ երևա»:

48. Ոմանք ասում էին, որ եթե մեկը գալիս էր հայր Պիմենի մոտ, ծերը նրան ուղարկում էր հայր Անուբի մոտ, որովհետև տարիքով ավագը նա էր: Իսկ հայր Անուբն ասում էր. «Գնացե՛ք հայր Պիմենի մոտ, որովհետև նա այդ շնորհն ունի»: Սակայն երբ հայր Անուբը նստում էր նրա մոտ, նրա ներկայությամբ Պիմենը չէր խոսում:

49. Աշխարհիկ ամուսինները մի դուստր ունեին, և մի օր պիղծ դևերը սկսեցին չարչրկել նրան: Ծնողները դիմեցին մենակյացներին՝ խնդրելով աղոթք անել նրա վրա, սակայն չբժշկվեց: Այնուհետև նրանց մտերիմ մի մենակյաց ասաց. «Եթե կամենում եք, որ ձեր դուստրն

առողջանա, գնացե՛ք այսինչ անապատը, որովհետև այնտեղ սուրբեր են, և հավատում եմ, որ նրանց աղոթքով կբժշկվի»: Եվ նրանք, լսելով նրան, ճանապարհ ընկան դեպի անապատ: Եվ պատահեց այնպես, որ մոտակա վանքից մի երիտասարդ դուրս եկավ, և երբ տեսան նրան, սաստիկ ուրախացան՝ ասելով. «Ահավասիկ Աստված նրանցից մեկին ուղարկեց, որպեսզի այդքան ճանապարհ չկտրենք մինչև անապատ»: Եվ երբ մերձեցան, դստեր հետ մեկտեղ ընկան գետնին՝ նրան աղաչելով և ասելով. «Մեր դուստրը չարչարվում է դևից. հանուն Աստծո, աղոթի՛ր սրա վրա»: Իսկ նա ասաց. «Ես մեղավոր մարդ եմ»: Բայց նրանք աղաչում էին՝ ասելով. «Ի սեր Աստծո, այդպես մի՛ ասա, այլ վշտակի՛ց եղիր մեզ և աղոթի՛ր դրա վրա», քանզի կարծում էին, թե խոնարհության պատճառով էր այդպես ասում, իսկ նա դարձյալ նույնն էր ասում նրանց: Եվ երբ շատ նեղեցին նրան և ջերմեռանդ սրտով աղաչեցին, իր անութի տակից հանեց փոքրիկ մի գիրք և ասաց նրանց երդվելով. «Սա գողացա և փախա վանքից»: Եվ երբ ասաց այս խոսքը, դևը հեռացավ աղջկանից՝ չդիմանալով երիտասարդի խոնարհությանը և նրանց հավատին, որ չնվազեց և չգայթակղվեցին երիտասարդի խոսքերից, այլ որպես մեծի և սրբի աղաչում էին նրան և երկրպագում: Եվ նրանք վերցնելով իրենց բժշկված դստերը՝ գնացին՝ փառավորելով Աստծուն:

51. Մի անգամ Հռոմի մեծ պալատից մի հռոմեացի եկավ և բնակվեց Սկյութիայում՝ եկեղեցու մոտ: Նա իր հետ մի ալեհեր ծառա ուներ, որ սպասավորում էր իրեն: Եվ եկեղեցու երեցը, տեսնելով նրա տկարությունը և տեղյակ լինելով, թե ինչպիսի փարթամ կյանքից էր հրաժարվել, և ինչպիսի մեծությունից ինչպիսի աղքատության էր հասել, Աստված ինչ ուղարկում էր՝ տալիս էր նրան: Եվ այսպես նա մնաց Սկյութիայում քսանհինգ տարի և եղավ անվանի տեսանող: Եգիպտոսի կրոնավորներից մի ծեր, լսելով նրա մասին, եկավ տեսնելու նրան՝ ակնկալելով ավելի մեծ խստակենցաղության ականատես լինել: Մտնելով՝ ողջունեց նրան, աղոթք արեցին և նստեցին: Եվ եգիպտացին տեսավ, որ նա փափուկ հանդերձներ, կաշեծածկ անկողին և բարձեր ուներ, մաքուր էին ոտքերը և՝ հողաթափերը: Այս ամենը տեսնելով՝ հիասթափվեց և գայթակղվեց, քանզի իրենց մոտ այդպես չէր կարգը, այլ խստակրոն էին: Եվ քանի որ ծերը տեսանող էր, իմացավ, որ գայթակղվեց եգիպտացի ծերը, և իր սպասավոր ծերին ասաց. «Այսօր մեզ համար տոնական սեղա՛ն պատրաստիր՝ ի պատիվ այս հոր»: Պատահմամբ այդ օրը մի փոքր բանջարեղեն ունեին, եփեց, և ճաշի

ժամին ճաշակեցին: Եվ մի քիչ էլ գինի ունեին, դա էլ ըմպեցին իրենց տկարության պատճառով: Եվ երբ երեկո եղավ, տասներկու սաղմոս կարդացին և ննջեցին: Առավոտյան վեր կենալով եգիպտացին նրան ասաց. «Աղո՛թք արա ինձ համար»: Եվ առանց օգուտ քաղելու՝ գնաց նրա մոտից: Եվ երբ հասավ մի վայր, հռոմեացի ծերը, կամենալով շահել նրան, ուղարկեց սպասավորին և ետ կանչեց նրան: Երբ նա եկավ, խնդությամբ ընդունեց նրան և հարցնելով նրան՝ ասաց. «Ո՞ր գավառից ես»: Նա էլ ասաց. «Եգիպտացի եմ»: Եվ նա ասաց. «Եգիպտոսի ո՞ր քաղաքից»: Նա պատասխանեց. «Ես քաղաքացի չեմ, այլ գեղջուկ»: Եվ ծերը հարցրեց. «Ի՞նչն էր քո գործը քո գյուղում»: Նա էլ ասաց. «Նախրապան էի»: Եվ հարցրեց. «Իսկ ինչպե՞ս էիր քնում»: Նա ասաց. «Գետնի վրա»: «Եվ ի՞նչ էիր ուտում հանդում կամ ինչպիսի՞ գինի էիր խմում»: Եվ նա ասաց. «Զոր հաց ունեի, երբեմն նաև աղի ձուկ էր պատահում, և ջուրն էլ գետից էի խմում»: Եվ ծերն ասաց. «Մեծ է քո տքնանքը. իսկ քո գյուղում բաղնիք կա՞ր»: Եվ նա ասաց. «Չկար. գետում էի մաքրվում»: Եվ երբ այս ամենը հարցրեց ծերը, կամեցավ օգտակար լինել նրան և պատմեց նրան իր նախկին աշխարհիկ կեցության մասին և ասաց. «Ես՝ տառապյալս, որ տեսնում ես, մեծ քաղաքից եմ՝ Հռոմից, և թագավորի պալատում անվանի եմ եղել»: Եվ եգիպտացին երբ լսեց այս նախաբանը, զղջաց և կամեցավ հաստատապես լսել նրա պատմածը: Եվ նա շարունակեց. «Թողեցի Հռոմը և եկա բնակվեցի այս անապատում: Շքեղ տներ ունեի և հարուստ կահկարասի և դրանք արհամարհելով՝ եկա բնակվելու այս փոքրիկ խցում: Ոսկեհուռ կահույք ունեի, բազմաթիվ անկողիններ և այդ ամենը թողնելով՝ Աստված տվեց ինձ այս մահիճը և կաշվե ծածկոցը: Հանդերձներս պատվական և թանկարժեք էին, և դրանց փոխարեն այս անարդ հագուստն ունեմ, իմ ճաշատեսակները սաստիկ թանկ ու ընտիր էին, իսկ դրանց փոխարեն մի քիչ բանջարեղեն և փոքրիկ գինու բաժակ տվեց ինձ Աստված: Սպասավորներս, ծառաներս ու աղախիններս բազմաթիվ էին, և ահա նրանց փոխարեն Աստված գութ գցեց այս ծերի սիրտը՝ սպասավորելու ինձ: Եվ բաղնիքի փոխարեն, որտեղ ամեն օր անուշահոտ յուղերով լողանում էի, մի քիչ ջուր եմ լցնում ոտքերիս և այս նվաստ հողաթափերն եմ հագնում իմ տկարության համար, փողերի ու քնարների փոխարեն սաղմոսներ եմ ասում, և այն նյութական բարիքների փոխարեն, որ ունեի, հանդարտ կյանք եմ վարում: Այժմ, հա՛յր իմ, աղաչում եմ քո աստվածապաշտությանը, մի՛ դայթակղվիր իմ տկարության պատճառով»: Եգիպտացին, լսելով այս և զգաստանալով իր մեջ, աղաղակեց և ասաց. «Վա՜յ ինձ, որ աշխարհի մեծամեծ

նեղություններից եկա մեծ հանգստի մեջ, և ինչ չունեի այն ժամանակ՝ այժմ ունեմ, բայց դու, հա՛յր, մեծագույն հանգստությունից եկար դեպի նեղություն, և բազում փառքերից և մեծությունից՝ դեպի խոնարհություն և աղքատություն»: Եվ դրանից մեծապես շահելով՝ գնաց իր տեղը և նրա սիրելի մտերիմը եղավ և ժամանակ առ ժամանակ գալիս էր նրա մոտ՝ օգուտ քաղելու:

52. Մի եգիպտացի ծեր գնաց հայր Զենոն Ասորու մոտ և իր անձի մասին նախատինքի արժանի խոսքեր ասաց: Եվ Զենոնն ասաց. «Եգիպտացիներն իրենց բարի գործերը թաքցնում և միայն իրենց անարգ գործերն են հայտնում, իսկ հույներն ու ասորիները բարի գործերն են հայտնում և նախատինքի արժանիները՝ թաքցնում»:

53. Հայրերից մեկն ասաց. «Խցերում երկու եղբայրներ կային, որոնք խռովեցին միմյանցից, և նրանցից մեկը, գնալով իր խուցը, խռովության պատճառով չկարողացավ հանգիստ գտնել: Եվ գնաց, որ ընկնի նրա առաջ, սակայն նա չբացեց դուռը: Եվ այս եղբայրը, գնալով հայր Ապոլոնի մոտ, պատմեց նրան, և ծերն ասաց նրան. «Միգուցե դու քեզ արդար ես համարում քո մտքում և եղբորդ ես մեղավոր կարծում, դրա համար էլ դուռը չի բացում: Այլ դու արա այնպես, ինչպես ես քեզ կասեմ. թեպետ նա մեղանչեց քո հանդեպ, բայց դու համոզիր քեզ, թե իբր դու ես մեղանչել նրա հանդեպ և արդարացրու քո եղբորը: Այդպես գնա նրա մոտ, և Աստված նրա սրտում սեր կդնի քո հանդեպ»: Եվ եղբայրն արեց այնպես, ինչպես ասաց ծերը, և այդպես գնաց ու բախեց դուռը: Երբ եղբայրն իմացավ, ելավ նրան ընդառաջ՝ նախքան եղբոր՝ իրենից ներողություն խնդրելը: Եվ Աստծո սիրով խաղաղություն հաստատվեց նրանց միջև»:

54. Հայր Ամոնի մասին ասում էին, թե եկան ոմանք նրա մոտ՝ միմյանցից գանգատվելու, իսկ ծերը լուռ էր, և մի կին իր մերձավորին ասաց. «Այս ծերն անմիտ է»: Երբ ծերը լսեց այս, կանչեց կնոջն իր մոտ և ասաց. «Որքա՜ն տքնություններ քաշեցի այս անապատում, որ այս անմտությունն ստացա, և քեզ համա՞ր պիտի կորցնեմ այն»:

55. Հայր Կյուրիոն ասաց. «Մարմնով ավելի շատ տքնություններ կրեցի, քան իմ աշակերտ Զաքարիան, սակայն նրա չափին չհասա՝ նրա խոնարհության և հնազանդության առումով»:

56. Ոմն մեծ ծերի մոտ՝ Թեբայիդ, բերին մի դիվահարի և աղաչեցին նրան, որ դևը հանի, իսկ ծերը չէր կամենում: Երբ բազմիցս աղաչեցին նրան, գթաց ծերը և դևին ասաց. «Դո՛ւրս եկ Աստծո արարածի մի-

ջից»: Եվ դևն ասաց. «Ես դուրս կգամ, սակայն քեզ մի բան հարցնեմ. ի՞նչ է գրված Ավետարանում՝ ովքե՞ր են այծերը և ովքե՞ր՝ ոչխարները»: Եվ ծերն ասաց. «Այծը ես եմ, իսկ ոչխարներին՝ Աստված գիտե, թե ովքեր են»: Եվ դևը լսելով՝ բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ահա քո խոնարհության համար ելնում եմ»: Եվ նույն պահին էլ դուրս եկավ մարդուց:

57. Երկու արյունակից եղբայրներ գնացին եղբայրների մոտ՝ անապատ, և քանի որ առաքինությամբ էին ընթանում, գովեստի արժանացան եղբայրների կողմից: Եվ եղավ այնպես, որ նրանցից մեկը հիվանդացավ բազում տարիներ, իսկ մյուսը խնամում էր նրան: Եվ հայրերից ոմանք եկան նրան տեսնելու և սկսեցին խնամողին գովել և ասել. «Ձեր միաբանությունը մեր բոլոր եղբայրների ճգնակենցաղ և սուրբ վարքին շատ օգտակար եղավ»: Իսկ նա խոնարհությամբ ասաց. «Ես մինչ հիմա չեմ սկսել մենակյացի կյանք վարել, այլ իմ եղբայրն է ընթանում մենակյացի վարքով, սակայն որպեսզի ճանաչեք, եկե՛ք ինձ հետ»: Եվ մտցնելով նրանց խուցը՝ որտեղ եղբայրն էր, ասաց. «Հա՛յր, որտե՞ղ է կացինը, որ երեկ տվեցի քեզ»: Իսկ նա սկսեց որոնել իր անկողնու տակ և ասաց. «Երևի այստեղ դրեցի. նայի՛ր, եղբա՛յր, և խուզարկի՛ր ինձ հետ»: Եվ հանձն առավ մի բան, որն ինքը չէր արել: Եվ հայրերը շահած գնացին:

58. Աբբա Եվագրիոսը հարցրեց աբբա Արսենիոսին. «Ինչո՞ւ մենք չունենք այն կրթությունից և իմաստությունից, որն այս վայրենի եգիպտացիները ստացան»: Աբբա Արսենիոսն ասաց. «Մենք՝ աշխարհից խրատվածներս, չունենք այն, ինչ այս վայրենի եգիպտացիները ձեռք բերեցին իրենց չարչարանքով»:

59. Հարցրեց աբբա Արսենիոսը ոմն ծեր եգիպտացու իր մտածումների մասին, իսկ մեկ ուրիշը, տեսնելով այս, ասաց. «Արսենիո՛ս, այդչափ հունահռոմեական կրթություն ստանալուց հետո ինչպե՞ս ես քո մտածումների մասին հարցնում այս վայրենուն»: Եվ նա ասաց. «Հունահռոմեական կրթություն ստացա, սակայն այս վայրենու այբն ու բենը բնավ չուսանեցի»:

60. Հայր Եպիփանն ասաց. «Քանանացին աղաղակեց և լսելի եղավ (Մատթ. ԺԵ 22-28), *տեռատեսը լռեց և բժշկվեց* (Մատթ. Թ 20-22), *փարիսեցին պարծեցավ և դատապարտվեց, մաքսավորն աչքերը վերև չբարձրացրեց և արդարացավ* (Ղուկ. ԺԸ 10-14). *սրանցից ո՛րն ուզում ես՝ արա՛ և կապրես»:*

61. Հավաքվեցին մի անգամ Սկյութիայի հայրերը և քննարկում արեցին Մելքիսեդեկի վերաբերյալ, թե ով էր նա, իսկ հայր Կոպրեն այդտեղ չէր: Հետո կանչեցին նրան ևս և հարցրին այդ խորհրդի մասին: Իսկ նա, երբ լսեց, երեք անգամ խփեց իր երեսին և ասաց. «Վա՜յ քեզ, Կոպրե՛, վա՜յ քեզ, Կոպրե՛, վա՜յ քեզ, Կոպրե՛, որովհետև ինչ քեզ պատվիրեց Աստված, դա մի կողմ թողիր, իսկ ինչ չի պահանջում քեզնից Տերը, այն ես որոնում և քննում»: Եվ երբ լսեցին եղբայրներն ասվածը, ցրվեցին իրենց խցերը, և խոնարհության խոսքի շնորհիվ փակվեց այս ավելորդ քնարկումը:

62. Հարց տրվեց ծերին, թե լա՞վ է ծնրադրելը: Պատասխանեց. «Հեսու Նավեն երբ ծնրադրեց, տեսավ Աստծուն (Հեսու Ե 13-16)*»:*

63. Հայր Ովրն ու հայր Աթերիսը տարբեր երկրներից էին, սակայն համատեղ էին բնակվում և այն աստիճան հնազանդ էին միմյանց, որ մի օր Աթերիսը կամենում էր ձուկը մեջտեղից կտրել, սակայն Ովրի կանչի վրա թողեց դանակը ձկան մեջ և դուրս եկավ նրա մոտ՝ առանց ձուկը կտրելու կամ դանակը վերցնելու: Հետո պատրաստելիս, ձկան մի կեսը այրեց, իսկ մյուս կեսը՝ հաջող պատրաստեց: Խանձվածն ուտելիս հարցրեց. «Լա՞վն է, հա՛յր»: Եվ ընկերն ասաց. «Այո՛, հա՛յր, չափազանց լավն է»: Իսկ երբ ընտիր պատրաստածն էին ուտում, ասաց. «Խիստ զազրելի և փչացած է, հա՛յր»: Եվ նա ասաց. «Իրավացի ես, հա՛յր, լավը չէ»: Այսպիսի օրինակ պետք է պահեն բոլորը:

64. Հարցրին ծերին, թե լա՞վ բան է օտարությունը: Պատասխանեց. «Այո՛, լավ է. ահավասիկ մի եկեղեցում սեր էին ճաշակում եղբայրները (ագապե), և այնտեղ մի օտար կար, որին դուրս հանեցին, սակայն խղճմտանք զգալով՝ դարձյալ ետ կանչեցին և այնուհետև նրան հարցրին. «Ի՞նչ ապրումներ ունեցար հեռանալիս և վերադառնալիս»: Եվ նա ասաց. «Ես ինձ շուն եմ համարում. եթե վռնդում են, գնում եմ, և երբ կանչում են, գալիս եմ»: Եվ եղբայրներն ազդվեցին նրա խոնարհությունից»:

65. Ոմն եղբայր յոթ տարի Աստծուց բժշկության շնորհ խնդրեց, և Աստված տվեց նրան: Գնաց ոմն ծերի մոտ և պատմեց նրան: Իսկ նա լաց լինելով ասաց. «Դժվար բան ես խնդրել, որդյա՛կ. իսկ հիմա գնա՛ և ևս յոթ տարի խնդրի՛ր, որպեսզի վերցնի քեզնից այդ շնորհը»: Եվ նա այդպես արեց:

66. Հայր Դանիելը պատմեց. «Մի ոմն իշխանի դուստր դիվահարվեց: Սրան շատ տեղեր տարան, սակայն չկարողացան բժշկել: Դիպվածով

մի ծերի աչակերտ անցնում էր աղջկա մոտով, և դիվահարը ապտակեց նրան, իսկ նա, կատարելով Քրիստոսի պատվիրանը, մյուսն էլ դարձրեց (Մատթ. Ե 39)*: Դևը, չկարողանալով դիմանալ պատվիրանի կատարմանը, բարձրաձայն աղաղակեց և դուրս եկավ նրանից: Եվ երբ եկան ծերերը, պատմեց նրանց ողջ եղելությունը, և փառավորեցին Աստծուն»:*

67. Միաբանությունում մի եղբայր կար, որն իր վրա էր վերցնում բոլոր եղբայրների մեղանչումները, մինչև անգամ պոռնկության դեպքերը և ասում էր. «Ե՛ս կատարեցի»՝ ամբաստանելով իր անձը: Իսկ այլ եղբայրներ, քանի որ չգիտեին նրա իսկական գործերը, սկսեցին տրտնջալ նրանից և ասել. «Որքա՜ն չարիքներ է գործում սա այստեղ և դրա համար էլ ոչ մի գործ չի անում»: Իսկ հայրը գիտեր նրա գործերը և նրանց ասաց. «Նրա՝ խոնարհությամբ գործած մեկ խսիրն ինձ ավելի հաճելի է, քան ձեր ամենքինը՝ ամբարտավանությամբ. սակայն ուզո՞ւմ եք, որ Աստված կատարի ձեր կամքը»: Եվ բերեց բոլորի գործածն ու նաև այն եղբոր մի փսիաթը և խարույկ վառելով՝ դրանք բոլորը գցեց կրակի մեջ: Բռնկվելով՝ բոլորը վառվեցին, բացի այն եղբոր փսիաթից: Եվ նրանք սարսափահար ընկան նրա առաջ և դրանից հետո պատվում էին նրան իբրև հոր:

68. Հովհաննես կարճահասակն իր երեց եղբորն ասաց. «Կամենում եմ անհոգ լինել, ինչպես հրեշտակները, որոնք ոչինչ չեն անում, այլ անդադար Աստծուն են փառաբանում և պաշտում»: Եվ հանելով իր կրոնավորական հանդերձները՝ ելավ և գնաց անապատ և մնալով այնտեղ մի շաբաթ՝ դարձյալ վերադարձավ եղբոր մոտ՝ իր խուղը, բախեց դուռը գիշերով, իսկ եղբայրը չբացեց՝ ներսից հարցնելով. «Ո՞վ ես դու»: Պատասխանեց. «Ես Հովհաննեսն եմ»: Խուղից ասաց. «Հովհաննեսը հրեշտակ դարձավ և մարդկանց հետ չէ»: Եվ նա աղաչեց, որ բացի, սակայն եղբայրը չբացեց, այլ թողեց նրան տառապանքների մեջ մինչև առավոտ, իսկ այդաբացին նրան ասաց. «Ահա մարդ ես և քեզ աշխատել է պետք, որ ուտես»: Եվ Հովհաննեսը, ընկնելով նրա առաջ, ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ»:

69. Մի անգամ հայր Մակարն անտառով գնում էր դեպի իր խուղը և հետն արմավենու ոստեր ուներ: Եվ ահա նրան երևաց բանսարկուն, որը մանգաղ ուներ իր ձեռքին և կամենում էր հարվածել նրան, սակայն չկարողացավ և ասաց. «Դու ինձ կապում ես, Մակարիո՛ս, և չեմ կարողանում հակառակվել քեզ, ահա ինչ որ դու անում ես, նույնը անում եմ և ես: Դու պահք ես պահում՝ ես ամենևին չեմ ճաշակում, դու հսկում ես՝ ես ամենևին չեմ ննջում. միայն մի բանով ես ինձ հաղ-

թում»: Հայր Մակարիոսը հարցրեց. «Այդ ինչո՞վ եմ հաղթում»: Եվ նա ասաց. «Քո խոնարհությամբ, որովհետև քո խոնարհության պատճառով չեմ կարողանում քեզ հակառակվել»: Եվ Մակարիոսն աղոթքով վեր բարձրացրեց ձեռքերը, և բանսարկուն անհետացավ նրա մոտից:

70. Ոմն եղբայր իր մարմնավոր հոր հետ հրաժարվեց աշխարհից, սակայն չմնացին երկուսով մի վանքում, իսկ որոշ ժամանակ անց եղբայրն իմացավ իր հոր մասին, թե մի դիվահարի բժշկեց: Եվ գնալով ոմն մեծ ծերի մոտ՝ պատմեց այդ մասին և իր անձի համար տրտմելով՝ ասաց. «Աբբա՛, ահա իմ հայրը առաջադիմելով՝ մի եղբոր միջից դևը հալածեց, իսկ ես ծուլության մեջ եմ և ոչ մի առաջադիմություն չունեմ»: Ծերը նրան ասաց. «Իրականում, որդյա՛կ, դևեր հանելը կամ բժշկելը առաջադիմություն չէ, քանզի դրանք ոչ թե մարդն է անում, այլ՝ Աստծո զորությունը և կատարողի հավատքը, սակայն շատերը, չիմանալով այդ, բժշկության շնորհից ամբարտավանության մեջ ընկան և կորան: Իսկ ես ասում եմ. եթե մարդ ճշմարիտ խոնարհության գա՝ չկա՛ դրանից ավելի մեծ առաջադիմություն, քանի որ խոնարհը երբեք չի ընկնում. քանզի ով իրեն խոնարհեցնում է ներքև, ո՞ւր պիտի ընկնի կամ ինչպե՞ս պիտի ընկնի, եթե մինչև գետին է իջեցրել իրեն: Իսկ այսպիսի խոնարհության հասած մարդու նշանն այս է, որ ծիծաղում է թե՛ արհամարհանքների և թե՛ անարգանքների վրա»:

71. Մի տղայի ծնողները հանձնեցին վանք, և որոշ ժամանակ անց եկան նրան տեսնելու, իսկ ծերը եղբայրներից մեկին ասաց, որ կանչեն փոքրիկին: Երբ տղան մոտեցավ աբբային, նա ասաց. «Քեզ ո՞վ կանչեց»: Ապա ապտակելով նրան՝ ասաց. «Գնա՛ քո խուցը»: Եվ տրտմեցին նրա ծնողները, սակայն քիչ անց ասացին նրան. «Հրամայի՛ր, որ փոքրիկը գա և տեսնենք նրան»: Եվ աբբան կանչեց եղբայրներից մեկին և ասաց նրան. «Կանչի՛ր փոքրիկին»: Երբ տղան մոտեցավ ծերին, նա ապտակեց նրան և ասաց. «Քեզ ո՞վ կանչեց. գնա՛ քո խուցը»: Նրա ծնողները դարձյալ տրտմեցին և ասացին. «Երանի, թե մեր տղան այստեղ եկած չլիներ»: Սակայն քիչ անց դարձյալ, բնական սիրուց մղված, ասացին աբբային. «Հրամայի՛ր, հա՛յր, որ փոքրիկը գա»: Աբբան մի եղբոր ասաց. «Կանչի՛ր նրան»: Իսկ երբ տղան մոտեցավ ծերին, վերջինս ապտակեց նրան և ասաց. «Քեզ ո՞վ կանչեց. գնա՛ քո խուցը»: Եվ երբ տղան գնաց, աբբան հետ կանչեց նրան, բռնեց ձեռքից, տվեց նրան իր ծնողներին և ասաց նրանց. «Ահա ձեր որդին դարձավ մենակյաց»: Այնժամ ծնողները մեծ գոհունակություն ապրեցին և գոհացան Աստծուց՝ իրենց տղայի առաջադիմության համար, որ

վկայվեց աբբայի կողմից: Արդ, մենք ևս աղոթենք այսպիսի խոնարհության հասնելու համար Աստծո օգնությամբ:

72. Ծերն ասաց. «Քեզ պատահած ոչ մի փորձության համար ոչ մի մարդու մի՛ մեղադրիր, այլ ինքդ քեզ ասա՛. «Իմ մեղքերի պատճառով այս ամենն եկավ ինձ վրա»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

73. Հայրերից ոմանք գնացին հայր Անտոնիոսի մոտ, և հայր Հովսեփը նրա հետ էր: Հայր Անտոնը ուզեց փորձել նրանց. մեջբերում արեց Սուրբ Գրքից և ամենակրտսերից սկսեց հարցնել, թե որն է այդ խոսքի իմաստը, և նրանցից յուրաքանչյուրը պատասխանում էր ըստ իր կարողության: Իսկ ծերը նրանցից մեկին ասաց. «Դեռևս չգիտեք այն»: Հետո հարցնելով՝ հասավ ամենածերին: Ապա հարցրեց հայր Հովսեփին և ասաց. «Դու ինչպե՞ս ես հասկանում այս խոսքի իմաստը»: Իսկ նա ասաց. «Ես ևս չգիտեմ և ոչ էլ կարող եմ իմանալ այդ»: Ասաց հայր Անտոնը. «Արդարև միայն հայր Հովսեփն իմացավ այդ, քանի որ ասաց՝ չգիտեմ»:

74. Երեք հայրեր սովորություն ունեին՝ տարին մեկ անգամ այցելել հայր Անտոնիոսին, և երբ կրկին անգամ այցելեցին, նրանցից երկուսը հարցնում էին նրան իրենց խորհուրդների և հոգու փրկության մասին, իսկ մյուսը միշտ լուռ էր և ոչինչ չէր հարցնում: Շատ ժամանակ անց հայր Անտոնը նրան ասաց. «Ահա այսքան տարի է՝ գալիս ես այստեղ և ինձ ոչինչ չես հարցնում»: Նա պատասխանեց և ասաց. «Բավական է ինձ միայն տեսնել քեզ՝ և դա արդեն իսկ հոգեշահ է»: Այսպիսին է խոնարհությունը:

75. Հայր Դանիելն ասաց. «Երբ հայր Անտոնը պատրաստվում էր փոխադրվելու այստեղից, պատվիրեց մեզ և ասաց. «Հոգ մի՛ արեք՝ ինձ համար բարի բան անել, քանզի եթե որևէ բարի բան եմ արել երկրի վրա, այն գտնելու եմ»: Եվ երբ արդարների քնով ննջելու մոտ էր, հուզմունք ապրեցին նրա աշակերտները, իսկ նա ասաց. «Լռե՛ք, որովհետև ժամը դեռ չի մոտեցել, երբ գա, ես ձեզ կասեմ, սակայն ձեզանից դատաստան կպահանջվի Քրիստոսի աթոռի առաջ, եթե իմ մարմինը որևէ մեկին տաք»: Եվ նրանք էլ հարցրին. «Իսկ ի՞նչ անենք»: Ծերն ասաց. «Ձվանով ոտքերիցս կապեք և քաշելով գցեք անապատում»: Ահա այս Աստծո սուրբն ու երանելին այսպիսի խոնարհության էր

հասել, որ այսպիսի պատվեր էր տալիս սուրբ մարմնի վերաբերյալ: Ծերը միշտ ասում էր, թե՝ այն ժամանակից ի վեր, ինչ եկա այստեղ, բազմիցս զղջացել եմ ասածս խոսքերի համար, սակայն լռության համար՝ երբեք: Իսկ երբ մերձեցավ սրբի մահվան ժամը, սկսեց լաց լինել և ողբալ: Եղբայրներն ասացին. «Արդարև դո՞ւ էլ ես երկնչում մահվանից, հա՛յր»: Եվ նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում, եղբայրնե՛ր, և Տերը գիտե, որ այս երկյուղը, որն այժմ իմ սրտում է, միշտ ինձ հետ էր այն ժամանակից ի վեր, երբ եկա կրոնավորության»: Այս ասելով՝ արդարների քնով ննջեց Արսենիոս երանելին: Իսկ երբ հայր Պիմենը լսեց, թե ննջեց հայր Արսենիոսը, ողբաց և ասաց. "Երանի քեզ, հա՛յր Արսենիոս, քանզի քո անձն այս աշխարհում ողբացիր, որովհետև ով այստեղ չի ողբում իր անձը, հանդերձյալում կողբա: Կամ այստեղ կամավոր, կամ այնտեղ ակամա տանջանքների պատճառով պարտավոր ենք ողբալու"»:

76. Եվ պատմեց հայր Դանիելը, թե կանչեց մի անգամ հայր Արսենիոսը հայր Ալեքսանդրոսին և Զոյիլոսին և ասաց նրանց. «Գիտեմ, որ ինձ հետ պատերազմում են դևերը, սակայն չգիտեմ՝ կհափշտակվե՞մ քնով: Նեղությո՛ւն քաշեք ինձ հետ այս գիշեր և պահե՛ք ինձ, որպեսզի չննջեմ այս հսկման ընթացքում»: Եվ նստեցին երեկոյից լռելյայն՝ մեկը ձախ կողմում, մյուսը՝ աջ: Եվ ասացին. «Մենք ննջեցինք և արթնացանք, սակայն չիմացանք, թե ննջե՞ց արդյոք, իսկ առավոտյան չիմացանք, թե դիտմա՞մբ արեց այդ, թե՞ բնությունից դրդված ննջեց՝ Աստված գիտե, քանզի փակեց աչքերը, երեք անգամ շնչեց և բացելով աչքերը՝ հապշտապ վեր կացավ և դժգոհ ձայնով ասաց. «Ես ննջեցի, այո՛, ես ննջեցի»: Այսպիսին էր երանելի Արսենիոսը»:

77. Հայր Աղաթոնը, մինչ պատրաստվում էր մահվամբ փոխվելու, երեք օր բաց մնացին աչքերը, և բնավ չէր շարժում դրանք: Իսկ եղբայրները բոթեցին նրան և ասացին. «Որտե՞ղ ես արդյոք, հա՛յր Աղաթոն»: Իսկ նա նրանց ասաց. «Աստծո դատաստանի առաջ եմ ես, որդյակնե՛ր»: Ասացին նրան. «Դո՞ւ էլ ես երկնչում այդ ժամից, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Ես իմ կարողության չափով ջանացի պահել Աստծո պատվիրանները, սակայն, այնուամենայնիվ, մարդ եմ և չգիտեմ, թե իմ գործերը հաճո եղա՞ն Աստծուն, թե՞ ոչ»: Եղբայրներն ասացին նրան. «Ձե՞ս կարող գործերիդ վրա վստահ լինել, թե հաճո են Աստծուն»: Ասաց նրանց ծերը. «Ձեմ համարձակվում վստահ լինել, մինչև չկանգնեմ Աստծու առաջ, քանզի այլ է Աստծու դատաստանը, և այլ՝ մարդկային դատաստանը»: Եվ երբ եղբայրները կամենում էին

այլ բան ևս խոսել, ասաց. «Աղաչում եմ՝ ոչինչ մի՛ խոսեք ինձ հետ այս ժամին, որովհետև չեմ կարող լսել»: Եվ նույն պահին էլ վախճանվեց խնդությամբ՝ խոսելով հրեշտակների հետ, որոնք եկել էին նրա հոգին տանելու երկինք:

78. Հայր Ամոնին հարցրին. «Ի՞նչ է նեղ դուռն ու անձուկ ճանապարհը, որ գրված է (Մատթ. Է 13-14)*»: Նա պատասխանեց և ասաց. «Նեղ դուռն անձը բռնադատելն է և չար խորհուրդները հատելը, իր կամքը թողնելն ու Աստծո կամքին հետևելն է, որպեսզի կարող լինի ասելու. "Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք քո հետևից* (Մատթ. ԺԹ 27)*"»:*

79. Հայր Պիմենն ասաց, թե ոմն եղբայր գնաց հայր Ամոնի մոտ և նրան ասաց. «Հա՛յր, ինձ խոսք ասա՛»: Եվ մնաց նրա մոտ յոթ օր, և ծերը ոչինչ չխոսեց նրա հետ: Եվ երբ ճանապարհում էր նրան, ասաց. «Գնա՛ և զգո՛ւյշ եղի՛ր քո անձի նկատմամբ, քանզի այս օրերին իմ մեղքերը խավար պարիսպ եղան՝ բաժանելով ինձ իմ Աստծուց»: Սա եղբոր մասին էր ասում՝ իրենը համարելով նրա մեղքերը, քանզի խոնարհ են սրբերի հոգիները:

80. Հայր Հովհաննեսը մեզ պատմեց, թե հայր Անուբը, հայր Պիմենը և նրանց մյուս եղբայրները մի մոր ծնունդ էին և միասին կրոնավորներ դարձան Սկիտեում: Եվ երբ եկան մարգիկները (հավանաբար՝ մազքուԹները) և ավերեցին Սկիտեն, նրանք գնացին այն վայրը, որ ՏերենուԹ էր կոչվում, և մնացին այնտեղ մի քանի օր, մինչև որ բնակվելու տեղ գտնեն, և ապրում էին կուռքերի տաճարում: Հայր Անուբն ասաց հայր Պիմենին. «Շնո՛րհ արա, ես ու դու և մեր մյուս եղբայրները՝ յուրաքանչյուրս առանձին կենանք և հսկում անենք այս յոթ օրը և միմյանց չտեսնենք՝ մինչև Տերը ցույց տա, թե որտեղ պետք է ապրենք»: Հայր Պիմենն ասաց. «Անենք այնպես, ինչպես ասացիր»: Եվ յուրաքանչյուրն առանձին կեցավ՝ լռելյայն: Այդ տաճարում մի մեծ կուռքի արձան կար, և վեր էր կենում առավոտյան հայր Անուբը, քարեր էր հավաքում և առավոտից մինչև երեկո քարկոծում էր կուռքի երեսը, իսկ երեկոյան կուռքին ասում էր. «Թողությո՛ւն տուր ինձ, որ քեզ տրտմեցրի»: Լրացավ յոթ օրը, և նա այդ արեց ամեն օր: Իսկ շաբաթ օրը դարձյալ հավաքվեցին միասին: Հայր Պիմենն ասաց հայր Անուբին. «Այս յոթ օրը քեզ տեսնում էինք ողջ օրը կուռքին քարկոծելիս, իսկ երեկոյան՝ գետնին ընկած, սրանից թողություն խնդրելիս: Ինչպե՞ս է հավատացյալ մարդը, առավել ևս՝ կրոնավորը, ծնկի գալիս կուռքի առջև և նրանից թողություն խնդրում»: Ծերը նրան ասաց. «Ես ձեզ այդ իբրև օրինակ տվեցի, եղբայրնե՛ր. երբ քարկոծում

էի նրան, մի՞թե նա պատասխանեց կամ բարկացավ»: Պիմենն ասաց՝ ո՛չ: «Իսկ երբ ծնկի եկած՝ թողություն էի խնդրում, մի՞թե վրդովվեց թեկուզ դույզն-ինչ կամ ասաց՝ չի ների ինձ»: «Ո՛չ»,– ասաց Պիմենը: Ծերն ասաց. «Այսպես էլ մենք՝ յոթ եղբայրներս, եթե կամենում ենք միասին բնակվել, լինե՛նք ինչպես այս քարեղեն կուռքը, որը ո՛չ անարգանքներից խռովվեց, ո՛չ էլ՝ փառաբանումներից, և չբարկացավ թեկուզ փոքր-ինչ: Իսկ եթե չեք ուզում այդպիսին լինել, ահա տաճարը չորս դուռ ունի, և մեզնից յուրաքանչյուրը դուրս գալով թող գնա՛՝ ուր և կամենա»: Իսկ նրանք, երբ լսեցին այս, նրա ոտքերն ընկած՝ ասացին. «Ինչպես կամենաս՝ այնպես էլ կանենք, և կլսենք՝ ինչ էլ որ դու ասես»: Եվ ասաց հայր Պիմենը, թե՝ բնակվեցինք միասին՝ միմյանց նկատմամբ խոնարհությամբ, մեր կյանքի բոլոր օրերին, և անում էինք այն ամենը, ինչ ծերն էր ասում: Եվ մեզնից մեկին տնտես կարգեցինք, և ինչ որ դնում էր մեր առջև՝ այն էր մեր կերակուրը, և մեզնից ոչ մեկը չէր համարձակվում ուրիշ բան խնդրել, կամ խոսել, կամ առջևը դրվածը չուտել: Եվ միասին ապրեցինք մեր օրերը՝ խաղաղությամբ, հանգստությամբ և ուրախությամբ:

81. Հայր Գելասիոսն ասաց. «Մենք չենք կարող իջնել դեպի կենագործող խոնարհությունը, եթե նախ մեզանից չհեռացնենք հոգիներ սպանող ամբարտավանության ծանր բեռը, որովհետև եթե ճգնենք այս ուղղությամբ, խոնարհություն կգտնենք: Մի՛ ասեք, թե այսինչ բանը մեզ չի վնասում, քանզի ամեն բան, որ չի օգնում մեզ, դրան հակառակ՝ վնասում է, ինչպես և Տերն է ասում. «Ով ինձ հետ չի հավաքում՝ ցրում է (Մատթ. ԺԲ 30)*: Ինչպես որ կնիքը՝ պատկերում է այն, ինչ որ դրոշմված ունի, այդպես և գործերն են դրոշմվելով՝ պատկերվում հոգու վրա: Ուստի՝ քո տեսքը, հանդերձները, ընթացքը, նիստուկացը, կերակուրը, կենսակերպը, անկողինը, հողաթափերը, ողջ կահ-կարասին, տունը և ամանեղենը՝ թո՛ղ համեստ և հեզ լինեն: Մեծ-մեծ բաներ մի՛ խոսիր և հռետորական ու գոռոզ ձայնով մի՛ բարբառիր, մի՛ խոսիր և գործիր անպատեհ ժամի, երգելով մի՛ աղոթիր և հպարտությամբ մի՛ պատասխանիր, այլ ամեն ինչում գործից և խոսքից վերցրո՛ւ մեծը և տո՛ւր փոքրը: Եվ քաղցր եղի՛ր բարեկամների հանդեպ, հեզ՝ քեզ հնազանդվողի հանդեպ, անհիշաչար՝ հանդուգների նկատմամբ և մարդասեր՝ խոնարհների հանդեպ, մխիթարող եղի՛ր վշտացյալներին և խնամող՝ հիվանդներին, մարդկանցից ոչ մեկին մի՛ արհամարհիր, քա՛ղցր եղիր խոսելիս, ուրախ և մեղմ՝ պատասխանելիս, քաղցրախոս և դյուրընկալ եղիր բոլորի հետ»:*

82. Հայր Մովսեսն ասաց հայր Զաքարիային. «Ինձ մի խո՛սք ասա, որդյա՛կ»: Իսկ նա ընկավ նրա ոտքերն ու ասաց. «Եվ այդ դո՞ւ ես հարցնում ինձ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Հավատա՛ ինձ, որդյա՛կ, քանի որ տեսնում եմ Սուրբ Հոգու շնորհները քեզ վրա հանգչած, դրա համար եմ հարցնում»: Իսկ Զաքարիան՝ իբրև Աստծուց հրաման ստացած, վերցնելով կնգուղն իր գլխից՝ գցեց գետնին և ոտքերով կոխոտեց ու ասաց. «Եթե մեկն այսպես կոխոտելով չխորտակի իր անձն ամենահետին խոնարհությամբ և ցածրությամբ, երբեք չի կարող կրոնավոր լինել»:

83. Հայր Եսայիասն ասաց. «Երկրավոր մեծության և փառքի հանդեպ սերը ծնում է ստություն, իսկ խոնարհությունը՝ Աստծո երկյուղ է ծնում սրտում: Դու մի՛ կամեցիր աշխարհի մեծամեծներին և իշխաններին սիրելի լինել, որպեսզի չզրկվես Աստծո փառքից»: Ասաց դարձյալ. «Եթե աղոթքներդ խոնարհությամբ անես և անձդ անարժան համարես, ընդունելի կլինեն Աստծուն, իսկ եթե քո սիրտն ամբարտավան է, և մի ծույլ եղբոր հիշելով՝ դատես նրան՝ իզուր է քո աղոթքը»: Դարձյալ ասաց. «Ինչո՞ւ է երանելի խոնարհը. որովհետև լեզու չունի մեկին բամբասելու կամ ընդդիմանալու իրեն զրկողին, ոչ էլ աչքեր ունի՝ ընկերոջ թերությունը տեսնելու: Չունի ականջ, որպեսզի անօգուտ խոսքեր լսի, ոչ էլ բերան ունի՝ չարախոսելու մեկին կամ իր եղբորը, կամ քննելու այլոց հանցանքները, այլ՝ միայն իր մեղքերը, և խաղաղարար է բոլորի հանդեպ՝ ըստ Տիրոջ խոսքի (Մատթ. Ե 9)*: Այս անում է ոչ թե հանուն որևէ մեկի, այլ՝ հանուն Տիրոջ: Սակայն ճշմարտությունն այս է. եթե մեկը վեց օր պահեցողություն անի և բոլոր առաքինությունները ձեռք բերի, ոչինչ են և անօգուտ՝ առանց խոնարհության»: Դարձյալ ասաց. «Եթե մեկը խոնարհություն ձեռք բերի, նա կտեսնի իր բոլոր մեղքերը, և ով հետամուտ լինի խոնարհության և ողբի, դրանք կարտաքսեն իր սրտից բոլոր չար խորհուրդները և կսնուցեն նրա հոգին առաքինություններով: Եվ ով ունի ողբ և խոնարհություն՝ այլևս չի հաղթվի մարմնական ամոթալի ցանկություններից, այլ արհամարհանքը, որով կանարգվի մարդկանցից, նրա զենքը կլինի և կպահպանի նրան բարկությունից և չարին չարով հատուցելու դայթակղությունից և կուսուցանի համբերել բոլոր չարիքներին, և սրանցից ոչ մեկը չի մերձենա խոնարհին»: Ասաց դարձյալ. «Գիտակցաբար Աստծո առջև ընկնելը և պատվիրաններին խոնարհությամբ հնազանդվելը մարդուն բերում են աստվածային սեր և անախտություն, իսկ խոնարհությունն իր անձը բոլոր մարդկանցից առավել մեղավոր համա-*

ըելն է և ինքն իրեն արհամարհելը, որպես թե երբևէ որևէ բարի բան չի գործել: Եվ խոնարության գործերը սրանք են. միշտ լռել, ոչ մեկի դեմ չպայքարել և ոչ մեկին չհակառակվել, բոլորին հնազանդվել, միշտ խոնարհ հայացք ունենալ, մահը միշտ աչքի առաջ ունենալ, խոսքի մեջ անսուտ լինել, չընդդիմախոսել ավագներին, իր խոսքը չպնդել, մտքերի համբերություն ունենալ, ատել հանգիստը, անարգանքներին համբերել, արթուն և զգաստ լինել, իր կամքից հրաժարվել, ոչ մեկի վրա չբարկանալ, նախանձ կամ ոխ չունենալ և մշտապես ողբալ. այս է խոնարհության չափը: Եվ ով խոնարհություն ստանա, նա իր վրա կվերցնի եղբոր հանցանքները և կասի՝ ես եմ մեղավոր, իսկ ով ատի եղբորը՝ իր անձն իմաստուն և արդար կհամարի և եղբորն ամոթահար կանի: Իսկ ով իր անձը ամաչեցնի, նա այլոց չի վնասի»: Դարձյալ ասաց. «Թո՛ղ քո լեզուն չխոսի, այլ քո գործերը խոսեն, քո խոսքերն ավելի խոնարհ լինեն, քան քո գործերը, և մտքից դուրս բաներ մի՛ խորհիր, խոնարհությունից դուրս մի՛ վարդապետիր, որպեսզի հողը կարողանա ընդունել քո սերմը»: Դարձյալ ասաց. «Խոսելն իմաստություն չէ, այլ իմաստություն է խոսելու ժամանակը գիտենալը, թե երբ է խոսելու ժամը, և խոսքն էլ իմաստությամբ լսիր և իմաստությամբ խոսի՛ր, զգո՛ւյշ եղիր նախքան խոսելը և տուր պատշաճ պատասխան, և գիտության մեջ տգետ եղի՛ր, որպեսզի բազում վշտերից զերծ լինես, քանզի ով իր անձը իմաստուն է ցույց տալիս, ինքն իր վրա վշտեր է բարդում: Դրա համար էլ մի՛ պարծեցիր քո գիտության վրա, որովհետև ոչ ոք չգիտե՝ ինչն ինչպես է, այլապես դրա վերջն ամոթն է, իսկ ընկերոջ առաջ խոնարհվելը՝ Աստծո հետ է միավորում քեզ»:

84. Խոնարհության մասին դարձյալ հայր Եսայիասն ասաց. «Եղբայրնե՛ր, հիշենք Նրան, ով իր գլուխը դնելու տեղ չուներ: Հիշի՛ր, եղբա՛յր, և մի՛ մեծամտացիր: Տե՛ս, թե ով էր և կամ ինչ եղավ քեզ համար. թագավոր էր և օտարական ու պանդուխտ դարձավ քեզ համար: Անպատմելի՜ է քո մարդասիրությունը, Տե՛ր. ինչո՞ւ այդպես խոնարհվեցիր հանուն մեղսավոր ծառաներիս, մինչև իսկ գլուխդ դնելու տեղ չունեիր՝ ամեն ինչի Արարիչդ, իսկ մենք՝ ապերախտներս և ամենանվաստ ու անարգ խոնարհության արժանիներս, մեծություն ու պատիվ ենք ցանկանում անցավորներիս: Արդ, ինչո՞ւ ես խռովված, ո՜վ եղկելի մարդ, և ի՞նչ ես կուտակում, ինչո՞ւ ես կուրացել անառակությամբ կամ ինչո՞ւ ես հետևում աշխարհիկ պատրանքներին, ինչո՞ւ հետամուտ չես հանդերձյալ բարիքներին»: Ուրեմն, քննի՛ր այս ամենը և ընտրի՛ր լավագույնը:

85. Ոմն եղբայր ասաց հայր Թեոդորոսին. «Կամենում եմ Աստծո պատվիրանները կատարել»: Ծերն ասաց. «Հայր Թեովնեսը մի անգամ ասաց. «Ուզում եմ կատարել Աստծո պատվիրանները»: Եվ իր ալյուրը տանելով փուռը՝ հաց թխեց և այնտեղ փնտրելով ու գտնելով աղքատների՝ նրանց տվեց հացը: Ուրիշներ ևս խնդրեցին, և քանի որ հաց չմնաց, նրանց տվեց իր կողովը: Սակայն ուրիշ խնդրողներ ևս եղան, և նրանց տվեց այն, ինչ հագին էր, և ասաց, թե չկարողացավ Աստծո պատվիրանները կատարել»: Իսկ եթե դու էլ կարողանաս այդպես անել, դեռ պարտավոր ես ասել՝ չկարողացա կատարել Աստծո պատվիրանները, քանզի պատվիրանների կատարումը խոնարհությունն է, և Աստված հեզերի և խոնարհների մեջ է բնակվում, և ով խոնարհություն է անում, նա էլ կատարում է Աստծո բոլոր պատվիրանները, իսկ ով խոնարհություն չունի, նա չունի նաև մնացած բոլոր պատվիրանները, որովհետև առանց խոնարհության ոչ մի առաքինություն ընդունելի չէ ընդունող Քրիստոսի առաջ»: Եվ այն եղբայրը խոնարհվելով՝ երկրպագեց նրան և շահած՝ գնաց ուրախությամբ:

86. Գնաց մի անգամ Թեոփիլոս եպիսկոպոսը Նիտրիա լեռը, և լեռան վանահայրը եկավ նրա մոտ՝ տեսակցության: Եպիսկոպոսը հարցրեց ծերին. «Այս կրոնավորության մեջ ո՞րն ես ամենամեծ գործը համարում, հա՛յր»: Ծերը պատասխանեց. «Այն, որ մարդ իր մեղքերն իր միտը բերի և նախատի ու ամոթանք տա ինքն իրեն»: Թեոփիլոսն ասաց. «Դա է փրկության ճշմարիտ ուղին»:

87. Նույն ինքը՝ Թեոփիլոս եպիսկոպոսը, գնաց մի անգամ Սկիտե, և նրա մոտ հավաքվեցին հայրերն ու եղբայրները: Եղբայրները հայր Պամբոյին ասացին. «Հա՛յր, մի խո՛սք ասա եպիսկոպոսին, որպեսզի նա շահի քեզնից»: Ծերն ասաց. «Եթե նա իմ լռությունից չշահի, խոսքից ևս չի շահի»: Այնժամ ասացին. «Այո՛, լռությունը խոնարհության գործ է և բոլորին սիրելի է ու հոգեշահ»:

88. Մայր Թեոդորան ասում էր, թե ո՛չ ճգնություն, ո՛չ տքնություն և ո՛չ այլ որևէ առաքինության ջանք չեն կարող ապրեցնել մարդուն՝ ինչպես որ խոնարհությունը: Որովհետև մի տեղ մի մենակյաց կար, որ մարդկանց միջից դևեր էր հալածում. և նա մի օր դևերին հարցրեց. «Ո՞ր առաքինությամբ եք դուրս գալիս. մի՞թե պահքով եք ելնում»: Դևն ասաց. «Մենք բնավ չենք ուտում»: Իսկ ծերն ասաց. «Հսկմա՞մբ»: Եվ դևն ասաց. «Մենք բնավ չենք ննջում»: Եվ ծերն ասաց. «Հապա ո՞ր առաքինությամբ եք ելնում դուք»: Եվ դևն ասաց. «Ոչինչ այնպես չի հալածում և չի հաղթում մեզ, ինչպես խոնարհությունը, որովհետև

նրանով ենք մենք հալածվում, և նույն ինքը՝ խոնարհությունն է, որ մեզ իսպառ կործանում է»: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես դևերին հաղթող և կործանող է խոնարհությունը»:

89. Հայր Հովհաննես Կարճահասակն ասաց, թե խոնարհությունն է երկնքի դուռը, և մեր հայրերը բազում պատկառանքով ու նախատինքներով մտան կենդանի Աստծո քաղաքը, քանզի խոնարհությունն ու Աստծո երկյուղը բոլոր առաքինություններից բարձրագույնն են: Ասաց դարձյալ. «Ո՞վ վաճառեց Հովսեփին»: Եղբայրը պատասխանեց և ասաց. «Նրա եղբայրները վաճառեցին (Ծննդ. ԼԷ 28)*»: Մերն ասաց. «Ո՛չ, այլ խոնարհությունը վաճառեց նրան, որովհետև կարող էր ասել գնողներին. «Ես սրանց եղբայրն եմ», սակայն լռեց և խոնարհությամբ վաճառվեց, և նրա խոնարհության համար Աստված նրան իշխան դարձրեց եգիպտացիների երկրի վրա»: Ասաց դարձյալ. «Մի՛ թողեք թեթև բեռը, որ է՝ սեփական անձը մեղադրելը, և մի՛ շալակեք ծանր բեռը, այսինքն՝ սեփական անձն արդարացնելը»: Այս հայր Հովհաննեսը ջերմեռանդ էր հոգով: Մի անգամ մեկը գնաց նրա մոտ և տեսավ, որ նա պարան էր հյուսում, և գովեց նրա ձեռագործը, իսկ նա լռեց, և եղբայրը դարձյալ գովեց, և նա դարձյալ լռեց: Իսկ երբ երրորդ անգամ գովեց, ասաց նա եկվոր եղբորը. «Ո՛վ եղբայր, դու որտեղի՞ց ինձ պատահեցիր, որ եկար Աստծուն հանելու իմ միջից»: Այսպիսի խոնարհություն ուներ երանելին և գովասանքը թշնամություն էր համարում իրեն:*

90. Մեկը նրա մասին ասաց. «Ո՞վ է այս Հովհաննեսը, որ իր խոնարհությամբ ողջ Սկյութիան կապեց իր այն փոքրիկ ճկույթին»:

91. Հովհաննես Կարճիկը պատմեց, թե ոմն ծեր արգելափակեց իրեն խցում. նա չափազանց հարուստ էր և փառավորված՝ մարդկանցից: Իսկ հայրերը պատվիրեցին նրան և ասացին. «Ահա սրբերից մեկը փոխադրվելուն մոտ է. ե՛կ գնանք տեսնելու նրան՝ նախքան մահանալը»: Իսկ նա մտքում խորհեց և ասաց. «Եթե ես ցերեկը դուրս գամ, բոլորը դեպի ինձ կգան և կփառավորեն ինձ, և այլևս հանգիստ չեմ ունենա այստեղ, այլ կգնամ գիշերը՝ գաղտնի և ծածուկ բոլորից»: Եվ երբ գիշերը դուրս եկավ իր սենյակից, որպեսզի ծածուկ մնա բոլորից, այնժամ Աստված առաքեց երկու հրեշտակների, որոնք ձեռքին ճրագ ունեին, և վառած տանում էին նրա առջևից, և ահա ամբողջ քաղաքն ընթացավ նրան ընդառաջ: Եվ որքան նա ջանում էր փախչել փառքից, այնքան ավելի էր փառավորվում Աստծուց: Մարդկանց փառքից փախչելով՝ հասավ Աստծո փառքին՝ ըստ Տիրոջ խոսքի, որ ասում է. «Ով խոնարհեցնի իր անձը, կբարձրանա (Մատթ. ԻԳ 12, Ղուկ. ԺԴ 11, ԺԸ 14)*»:*

92. Հայր Հովհաննես Թեբայեցին ասաց. «Կրոնավորը բոլոր առաքինություններից առաջ պարտավոր է խոնարհություն ստանալ, որովհետև դա է Փրկչի առաջին պատվիրանը, որ ասում է. "Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը (Մատթ. Ե 3, Ղուկ. Զ 20)"»:

93. Հայր Պիմենը հայր Իսիդորի մասին ասաց, թե արմավենու ոստերը հյուսում էր ողջ գիշեր: Եղբայրները նրան ասացին՝ «Հանգստացի՛ր, հա՛յր, այդքան շատ մի՛ աշխատիր, որովհետև ծերացել ես»: Իսկ նա ասաց. «Եթե գործի մեջ վառեն ինձ և ոսկորներիս մոխիրները քամուն տան, այնժամ շնորհներ չեմ ունենա և գուցե թե թողնեմ աշխատանքը»: Ասաց նրա մասին դարձյալ, թե երբ նրա խորհուրդները ասում էին, թե՝ մեծ մեկն ես դու, նա ասում էր. «Մի՞թե ես հայր Անտոնի կամ հայր Պամբոյի, կամ մյուս հայրերի պես եմ», և այդպիսով խոնարհվում էր: Իսկ երբ խորհուրդները հակառակվելով ասում էին. «Այսքան վշտերից հետո տանջանքների մեջ ես գնալու», նա պատասխանում էր. «Թեպետ տանջանքների մեջ եմ գնալու, սակայն դուք իմ ներքևում եք գտնվելու հաստատ»: Նա ասաց դարձյալ. «Քանի որ այդչափ մեծ է խոնարհության բարձրությունը, և այդքան դժվար է հպարտությունից ընկնելը, ապա աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, մեկը բռնե՛ք և մյուսից փախե՛ք»:

94. Ոմն եղբայր հարցրեց հայր Կրոնոսին և ասաց. «Ինչպե՞ս կարող է մարդ ստանալ Աստծո երկյուղը»: Ծերն ասաց. «Ես կարծում եմ՝ այսպես կարող է մարդ ստանալ Աստծո երկյուղը, եթե փախչի մարմնի բոլոր ցանկություններից և հանգստից և տա իրեն ճգնությունների՝ որքան կարող է, և հիշի հոգին մարմնից բաժանվելու օրը, ինչպես նաև՝ Աստծո ահեղ դատաստանի օրն ու հատուցումը»:

95. Հայր Կարիոն պատմեց մեզ. «Երբ ես բնակվում էի Սինայում, այնտեղ մի ընտիր և խիստ ճգնակյաց եղբայր կար՝ գեղեցիկ տեսքով և կատարյալ հասակով: Երբ սա գալիս էր եկեղեցի, հագին ունենում էր պատառոտուն հանդերձներ և փոքրիկ պարեգոտ: Մի օր ես տեսա նրան եկեղեցում այդպես և ասացի նրան. «Եղբա՛յր, ինչպես մյուս եղբայրներն են հագնված գալիս եկեղեցի, այդպես էլ դո՛ւ հագնվիր և նմանվի՛ր նրանց»: Իսկ նա ինձ ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, հա՛յր, ուրիշ ոչինչ չունեմ հագնելու»: Եվ ես, տանելով նրան սենյակ, տվեցի նրան բոլոր անհրաժեշտ հանդերձները, և այնուհետև նա հագնվում էր եղբայրների նման և երևում էր իբրև Աստծո հրեշտակ: Մի անգամ պետք է թագավորի մոտ ուղարկեին տասը եղբայրների՝

ինչ-ինչ գործերի համար, և այդ եղբորը ևս հաշվեցին արքունիք գնացողների հետ: Երբ նա լսեց, եկավ հայրերի առջև, աղաչեց և ասաց. «Հանուն Աստծու սիրո՝ ինձ այնտեղ մի՛ ուղարկեք, որովհետև ես պալատական մի իշխանի ծառա էի և փախել-եկել եմ այստեղ, և եթե ինձ տեսնի, կհանի իմ վրայից այս զգեստներն ու կծառայեցնի ինձ»: Եվ հայրերը, անսալով նրա խոսքին, արձակեցին նրան: Իսկ հետո ճշմարտությունն իմացանք նրանցից, ովքեր ճանաչում էին նրան, թե նա արքունի եպարքոս է եղել, և որպեսզի չճանաչեն իրեն և փառքի չարժանանա մարդկանց կողմից, դրա համար ձևացնում էր, թե ծառա է եղել: Ահա այսպես ամենայն ժամ շտապում էին սրբերը փախչել մարդկային փառքից և հասնել Աստծո փառքին:

96. Սկիտեում մի ծեր կար, անունը՝ Կարիոն, որը գյուղում թողնելով կնոջն ու երկու երեխաներին՝ դարձել էր կրոնավոր: Եվ որոշ ժամանակ անց Եգիպտոսում սով եղավ, և նրա կինը սաստիկ նեղվելով՝ վերցրեց իր հետ երկու մանուկներին և ճանապարհ ընկավ դեպի Սկիտե: Մեկը տղա էր, որին կոչում էին Զաքարիա, մյուսն՝ աղջիկ: Եվ կինը գնաց նստեց հեռվում՝ մացառների շամբուտում, և հետևում էր՝ տեսնելու համար որևէ եղբոր կամ աշակերտի: Այնտեղ անտառային բացատ կար, կային նաև եկեղեցի, աղբյուր և եղեգնուտ, և տեսան այնտեղ միմյանց Կարիոնը և իր կինը: Կինը հայր Կարիոնին ասաց. «Դու մենակյաց դարձար, իսկ այժմ Եգիպտոսում սաստիկ սով է, ինչո՞վ սնուցեմ քո զավակներին»: Կարիոնն ասաց. «Ինձ մո՛տ ուղարկիր նրանց»: Եվ երբ կինը ուղարկեց, տղան մնաց հոր մոտ, իսկ աղջիկը վերադարձավ մոր մոտ, և գնացին Եգիպտոս՝ իրենց տունը: Ծերը սնուցում էր մանկանը իր սենյակում, և բոլորը գիտեին, որ նրա որդին է: Եվ երբ սնուցվեց մանուկը և մեծացավ, նրա պատճառով եղբայրների մեջ դժգոհություն եղավ: Երբ այդ լսեց հայր Կարիոնը, իր որդուն ասաց. «Զաքարիա՛, ե՛կ գնանք այստեղից, որովհետև քո պատճառով տրտունջ կա մեր մեջ»: Զաքարիան իր ծեր հորն ասաց. «Այստեղ գիտեն, որ քո որդին եմ, և որ այստեղ սնուցվեցի, և տրտնջում են. եթե այլ տեղ գնանք, որտեղ չգիտեն այս բանը, չես կարողանա ինձ քո որդին կոչել. գուցե այնտեղ առավել դժգոհեն»: Ծերն ասաց. «Արի՛ գնանք Թեբայիդա»: Եվ գնացին այնտեղ: Որոշ ժամանակ անց այնտեղ ևս դժգոհություն եղավ տղայի պատճառով: Հայրն ասաց Զաքարիային. «Գնա՛նք դարձյալ Սկիտե»: Եվ երբ եկան այնտեղ, դարձյալ դժգոհություն եղավ նրա պատճառով: Այնժամ գնաց Զաքարիան մի գյուղ, որտեղ բորակ կար, և մերկանալով նստեց բորակի լճակի մեջ՝

իրեն մինչև ռունգերը թաղելով, և բորակը լցնում էր երեսին և գլխին, և այնքան մնաց, մինչև այրվելով սևացավ մաշկն ու մարմինը, և կորցրեց մարմնի գեղեցկությունը և հնդիկի նման սևացավ, ապա դուրս եկավ այնտեղից, հագավ իր զգեստները և եկավ իր հոր մոտ, իսկ նա ձայնից հազիվ ճանաչեց իր որդուն: Իսկ երբ եկավ կիրակին, և նա գնաց եկեղեցի՝ հաղորդվելու սուրբ Խորհրդին, տղայի այդ արարքը հայտնի դարձավ Սկիտեի Իսիդորե քահանային, և տեսնելով նրան քահանան՝ զարմացած ասաց. «Զաքարիա մանուկն անցած կիրակի որպես մարդ եկավ հաղորդության, իսկ այսօր՝ իբրև Աստծո հրեշտակ, որովհետև այնպիսի գեղեցկությունից զրկելով մարմինը՝ անարդ սևության մատնեց իրեն՝ վասն սրտի խոնարհության»:

97. Պատմում էր մեզ հայր Մակարն իր մասին. «Երբ դեռ երիտասարդ էի և բնակվում էի Եգիպտոսի իմ խցում, ինձ կապած տարան քաղաք և քահանա օծեցին: Քանի որ չէի ուզում հանձն առնել այն, փախա գնացի այլ տեղ: Եվ մի աստվածասեր աշխարհական տանում և վաճառում էր իմ ձեռագործը և սպասավորում էր ինձ: Եվ այդ գյուղում փորձություն եկավ մի կույսի վրա, քանի որ մեկը պառկեց նրա հետ, և նա հղիացավ: Եվ երբ ծնողները հարցրին նրան, թե՝ ո՞վ այդ արեց քեզ հետ, նա ասաց. «Այն մենակյացը, որ նստում է խցում»: Եվ գյուղից գալով՝ տարան ինձ այնտեղ և պարանոցիցս կախեցին աղբով լի կճուճներ ու կժերի կանթեր և այդպես խայտառակելով՝ ման տվեցին փողոցներում, գանահարեցին ուժգին և ասացին «Այս չար մենակյաց ծերը պղծեց մեր կույսին. հարվածե՛ք»: Այդպես գանահարեցին իմ մարմինը մերձիմահ: Գյուղի ծերերն ասացին. «Մինչև ե՞րբ պիտի ծեծեք դրան. թույլ մի՛ տվեք, որ մեռնի»: Իմ սպասավորն էլ ամոթահար վիճակում էր, քանզի սաստիկ անարգում էին նրան: Իսկ աղջկա ծնողներն ասացին. «Դրան բաց չենք թողնի, մինչև երաշխավորի չունենա, որ կսնուցի իր կնոջը»: Իմ սպասավորը երաշխավոր կանգնեց, և ես գնացի իմ խուցն ու ամեն օր տալիս էի իմ կնոջ ծախսը: Եվ ինքս իմ անձին ասացի. «Մակարի՛, այժմ տքնի՛ր, որովհետև քեզ համար կին գտար, առավել ևս, որ պիտի խնամես նրան: Եվ գիշերցերեկ աշխատում էի և ուղարկում նրան: Իսկ երբ հասավ ծննդյան ժամանակը, երկունքի չարչարանքների մեջ մնաց բազում օրեր և չէր կարողանում ծնել: Հարցրին նրան իր ծնողներն ու ասացին. «Ի՞նչն է պատճառը, որ դու չես կարողանում ծնել»: Իսկ նա ասաց. «Այս բանն ինձ հետ պատահեց այն պատճառով, որ սուտ վկայություն տվեցի այն արդար ծեր մենակյացի մասին: Ես նրան չեմ ճանաչում, վա՜յ ինձ,

որովհետև անպարտին դատապարտեցի. մի երիտասարդ է արել սա»: Իսկ երբ լսեց իմ սպասավորը, հապճեպ ինձ մոտ եկավ խնդությամբ և ասաց. «Այն կույսը չկարողացավ ծնել, մինչև որ ճշմարիտը չխոստովանեց և չասաց՝ մենակյացին չեմ ճանաչում, և ոչ էլ նա՝ ինձ, այլ սուտ վկայեցի և զրպարտեցի նրան: Ահա ողջ գյուղը գալիս է այստեղ, մեծամեծ պատվով և փառքով կամենում է թողություն խնդրել քեզանից»: Իսկ ես երբ լսեցի այդ, մարդկանց անհարմար վիճակի մեջ չգցելու համար՝ փախա այնտեղից և եկա այստեղ՝ Սկիտե: Այս է իմ՝ Սկիտե գալու և բնակվելու առաջին պատճառը»:

98. Հայր Պևորեն ասաց, թե հայր Մակարիոսը հնազանդ, քաղցր և հեզ էր բոլորի հանդեպ, մինչև այն աստիճան, որ եղբայրներն ասացին, թե՝ ինչու ես այդքան սիրահոժար: Իսկ նա ասաց. «Տասներկու տարի աղաչեցի Տիրոջը, և Նա ինձ տվեց այս շնորհը, և դուք կամենում եք մերկացնե՞լ ինձ սրանից»:

99. Հայր Մակարիոսի մասին ասում էին, թե եթե որևէ եղբայր նրան դիմում էր՝ իբրև մեծ և առաքինի ծերի, ոչ մի պատասխան չէր տալիս, իսկ եթե եղբայրներից մեկն իբրև թե արհամարհանքով նրան ասեր, թե՝ երբ ուղտ էիր պահում և բորակը գողանում ու ծախում էիր, ուղտապանները քեզ չէի՞ն ծեծում, ուրախությամբ պատասխանում էր՝ ինչ էլ որ հարցնեին:

100. Մեկ ուրիշ անգամ դևը սրով հարձակվեց հայր Մակարի վրա, որպեսզի նրա ոտքերը կտրի, բայց չկարողացավ, այլ հաղթվեց նրա խոնարհությունից: Եվ դևն ասաց. «Այն պատճառով եք դուք մեզ հաղթում, որ մենք, թեև բոլոր առաքինություններն ունենք, սակայն խոնարհություն չունենք»:

101. Հայր Մակարն ասաց. «Երբ երիտասարդ էի, ճանճրացա սենյակում նստելուց և վեր կենալով դուրս եկա անապատ և մտքումս դրի, որ եթե մեկին տեսնեմ այնտեղ, հարցում անեմ ի շահ անձիս: Մի երիտասարդի հանդիպեցի, որ արջառներ էր արածեցնում, և նրան ասացի. «Ի՞նչ անեմ, երիտասա՛րդ, որովհետև քաղցած եմ»: Եվ նա ինձ ասաց՝ կե՛ր: Ես դարձյալ ասացի. «Կերա և դեռևս քաղցած եմ»: Եվ նա ինձ ասաց՝ էլի կե՛ր: Ես ասացի. «Բազում անգամ ճաշակեցի և դարձյալ քաղցած եմ»: Իսկ նա ինձ ասաց. «Մի՞թե էշ ես դու, որ միայն ուտել ես ուզում»: Եվ սա ինձ մեծ շահ և օգուտ եղավ»:

102. Հայր Մովսեսի մասին ասում էին, թե երբ սարկավագ ձեռնադրվեց, եպիսկոպոսը նրան ասաց. «Ահա դու ամենևին սպիտակ դարձար,

հա՛յր Մովսես»: Իսկ նա ասաց. «Արտաքո՞ւստ, թե՞ ներքուստ: Եվ որովհետև եպիսկոպոսը կամենում էր փորձել նրան, եկեղեցու սպասավորներին ասաց. «Երբ Մովսեսը գա եկեղեցի, արտաքսե՛ք նրան և տեսե՛ք, թե ինչ կասի»: Երբ եկավ ծերն ու մտավ խորան, բարկացան նրա վրա և վոնդելով ասացին. «Դո՛ւրս գնա այստեղից, դո՛ւ, հնդի՛կ և սևամորթ»: Իսկ նա ելավ դուրս և ինքն իրեն ասաց. «Տեղին և լավ արեցին քեզ, ով դո՛ւ՝ մոխրամորթ և դևանման սև, քանզի եթե մարդ չես, ինչո՞ւ ես մտնում մարդկանց մեջ»: Իսկ երբ փորձով ճանաչեցին նրա ճշմարիտ խոնարհությունը, որ Աստծո մարդն է, պատվելով՝ պատկառում էին նրանից:

103. Ոմն եղբայր հարցրեց հայր Մովսեսին և ասաց. «Մարդու բոլոր տքնություններից ո՞ր մեկն է առավել օգնում նրան»: Ծերը նրան ասաց. «Աստված է, որ օգնում է մարդուն, ինչպես և գրված է, թե Աստված մեր ապավենն ու զորությունն է, մեր օգնականը՝ մեզ վրա եկած խիստ նեղությունների մեջ (Սաղմ. ԽԵ 2)*»: Պատասխանեց եղբայրն ու ասաց. «Սրանք զորություններ են, որ խոնարհեցնում են հոգին, և ինչպես գրված է՝ տե՛ս իմ խոնարհությունն ու տառապանքը և թողություն տո՛ւր իմ բոլոր մեղքերին* (Սաղմ. ԻԴ 18)*: Եվ եթե սրանք անի մարդը, Տերը կգթա նրան»:*

104. Եղբայրն ասաց. «Ահա մի մարդ ծեծում էր իր ծառային՝ նրա գործած հանցանքների համար. ի՞նչ պետք է ասի կամ անի ծառան»: Ծերն ասաց. «Եթե ծառան իմաստուն է՝ պետք է ասի՝ ողորմեա՛ ինձ, մեղանչեցի»: Եղբայրն ասաց. «Եվ ոչ մի պատճառ չպե՞տք է բերի նա»: Ծերն ասաց. «Ո՛չ, քանզի երբ հանձն առնի իր հանցանքները և ասի՝ մեղա՛, տերը շուտափույթ կների նրա մեղքերը, որ գործել էր»:

105. Հայր Մատոյեն ասաց. «Որքան մարդ մոտենում է Աստծուն, այնքան մեղավոր է համարում իրեն, քանզի Եսայի մարգարեն, երբ տեսավ Աստծուն, այնժամ անարժան կոչեց իր անձը: Ահա և ես, մինչ երիտասարդ էի, կարծում էի, թե բարի գործեր եմ անում, իսկ այժմ, երբ ծերացել եմ, տեսնում եմ, որ ոչ մի բարի բան չկա իմ անձի մեջ»:

106. Ոմն եղբայր հարցրեց հայր Մատոյեին և ասաց. «Ինչպե՞ս են սկիտացիներն ավելին կատարում, քան գրված է օրենքում, որովհետև թշնամիներին իրենց անձից առավել են սիրում: Ծերը նրան ասաց. «Ես, որդյա՛կ, դեռևս իմ սիրելիին իմ անձից առավել չեմ սիրում»: Եվ եղբայրը, շահած ծերի խոսքից, իմացավ անձը խոնարհեցնելն ու առաքինությունը ծածկելը:

107. Հայր Հակոբն ասաց. «Մի անգամ գնացի հայր Մատոյեի մոտ, և երբ վեր կացա գնալու, նրան ասացի, թե գնում եմ խցերը: Եվ ծերն ինձ ասաց. «Հարցրո՛ւ ինձնից հայր Հովհաննեսին»: Եվ երբ գնացի այնտեղ, նրան ասացի, թե իրեն հարցնում էր հայր Մատոյեն: Ծերն ինձ ասաց. «Հայր Մատոյեն, արդարև, մի իսրայելցի այր է, որի մեջ նենգություն չկա (Հովհ. Ա 47)*: Եվ մի տարի անց դարձյալ գնացի հայր Մատոյեի մոտ և նրան ասացի Հովհաննեսի խոսքը: Ծերն ինձ ասաց. «Ես արժանի չեմ Հովհաննեսի խոսքին, սակայն իմացի՛ր, որ ով գովում է ընկերոջը և ոչ թե՝ իրեն, նա մեծ բարձրության է հասել, քանզի խոնարհության կատարելությունն այս է՝ պատվել ընկերոջը և ոչ թե իրեն:*

108. Մի անգամ հայր Մատոյեն Ռայիթայից գնաց Մակդաղայի կողմերը: Նրա հետ էր նաև իր աշակերտը: Եվ եպիսկոպոսը նրան բռնությամբ ձեռնադրեց քահանա: Երբ միասին ուտում էին, եպիսկոպոսը նրան ասաց. «Թողություն շնորհի՛ր ինձ, հա՛յր, գիտեմ, որ դու դա չէիր ուզում, սակայն նրա համար արեցի այդ, որ մենք ևս օրհնվենք քեզանից»: Ծերը հեզությամբ ասաց. «Այո՛, այո՛, սակայն փոքր-ինչ հասկացի՛ր ինձ. այս եղբորս համար եմ նեղվում, որ ինձ հետ է, որովհետև մենակ չեմ կարող աղոթել»: Եպիսկոպոսն ասաց. «Եթե նա արժանի է, նրան ևս կձեռնադրենք»: Պատասխանեց ծերը և ասաց. «Արժանի է, թե ոչ՝ չգիտեմ, սակայն գիտեմ, որ ավելի լավն է, քան ես»: Այնժամ նրան ևս ձեռնադրեց քահանա, սակայն չմերձեցան սուրբ սեղանին՝ պատարագ մատուցելու, և այդպես գնացին այնտեղից՝ իրենց մեծագույն խոնարհության համար: Եվ ծերն ասաց. «Հավատում եմ Աստծուն, որ ինձ չի մերժի Տերը, որովհետև ձեռնադրվելուս հարցում ես մեղք չունեմ, քանի որ պատարագ չեմ մատուցում, քանզի քահանայությունը անմեղների գործ է»:

109. Ոմն եղբայր դիմեց հայր Մատոյեին. «Հա՛յր, ինձ խո՛սք ասա»: Ծերը նրան ասաց. «Աղաչի՛ր Աստծուն, որ քո սրտին խոնարհություն և սուգ տա, որ միշտ տեսնես քո մեղքերը: Մի՛ դատիր երբեք ոչ մեկին, այլ բոլորից հետի՛նը քեզ համարիր: Երիտասարդների հետ բնակվելու և նրանց ընկեր լինելու սովորություն մի՛ ունեցիր, կնոջ հետ խոսակից մի՛ եղիր, նաև հերձվածողներին սիրելի մի՛ եղի՛ր, արմատապես կտրի՛ր քո միջից համարձակությունը, կապելով կապիր քո լեզուն, կոկորդդ և որովայնդ, զգուշացի՛ր գինուց: Եթե մեկը քեզ չար խոսք ասի, մի՛ կռվիր նրա հետ, իսկ եթե բարի խոսք ասի, ասա՝ այո՛, իսկ եթե չար բան ասի, ասա՛՝ դու գիտես՝ ինչ ես ասում, և մի՛ գժտվիր և մի՛ տխրիր, թե ինչ ասաց. այս է խոնարհությունը»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ

անեմ, հա՛յր, որովհետև իմ լեզուն ինձ հաղթում է: Երբ մարդկանց մեջ եմ մտնում, չեմ կարողանում զսպել այն, այլ դատում և բամբասում եմ ամենքի հետ ամեն ինչի մասին, արդ հիմա ի՞նչ անեմ»: Ծերը նրան ասաց. «Եթե չես կարող քո լեզուն զսպել, գնա՛ մենության մեջ ապրիր, որովհետև դա մեծ տկարություն է, իսկ ով եղբայրների մեջ է ապրում, նա պարտավոր է լեզուն զսպել, որովհետև ես նույնպես առաքինության համար չէ, որ մենակ եմ նստում, այլ՝ իմ տկարության պատճառով, քանզի զորավորներն են եղբայրների մեջ բնակվում»:

110. Հայր Նեղոսն ասաց. «Երանի այն կրոնավորին, ով բոլորի ոտքի կոխան կդարձնի իրեն»:

111. Հայր Քսանթոսն ասաց. «Շունն ինձնից լավն է, նախ՝ որ սաստիկ տիրասեր է, երկրորդ՝ որ դատաստանի պարտական չէ»:

112. Հայր Որսիսիոսն ասաց. «Աղյուսը, օրինակ, որը չունի ամուր և հաստատուն հիմք, գետափին շինվելով՝ մի օր էլ չի դիմանա, իսկ հրով թրծվածը քարից էլ լավ կդիմանա՝ և ջրում, և կրակի մեջ: Այդպես և մարդը, որն ունի կամք և մարմնավոր ախտեր, եթե չկիզվի, չթրծվի և չայրվի Աստծո երկյուղով՝ ինչպես Հովսեփը, արագ կխորտակվի և կկործանվի, իսկ եթե մարդկանց իշխան դառնա, առավել ևս կվնասվի՝ փորձությունների ավելացման պատճառով: Իսկ ովքեր հավատքի մեջ հաստատուն են՝ անբեկանելի կմնան, ինչպես գիտենք Հոբ երանելու մասին, որին եթե մեկը քննի՝ կասի՝ նա երկրային մարդ չէր: Նույնպես և Հովսեփը, որ քանիցս փորձվեց, և այն էլ այն երկրում, ուր աստվածպաշտություն չկար, սակայն Աստված նրա հետ էր և ամեն ինչից փրկում էր նրան: Այժմ էլ նա իր հարսի հետ է երկնքի Արքայության մեջ: Նույնպես և մենք, եթե մեր չափը ճանաչենք և ճգնենք մեր կարողության չափով, կկարողանանք ազատվել Աստծո դատաստանից»:

113. Գավառի իշխանը հայր Պիմենի գյուղից ձերբակալեց մեկին և բանտ գցեց: Եվ տեղի մարդիկ, գալով հայր Պիմենի մոտ, աղաչեցին նրան և ասացին. «Ե՛կ իշխանի մոտ և հանի՛ր նրան բանտից»: Իսկ ծերը նրանց ասաց. «Սպասե՛ք ինձ երեք օր, մինչև որ գամ ձեզ մոտ»: Աղոթքի կանգնեց Պիմենը և ասաց. «Տե՛ր, մի՛ շնորհիր ինձ կատարելու այս խնդրանքը, այլապես մարդիկ ինձ թույլ չեն տա նստել այստեղ»: Եվ սրանից հետո գնաց ծերը իշխանի մոտ և աղաչեց նրան բանտարկվածի համար, որպեսզի բաց թողնի նրան: Իշխանը նրան ասաց. «Մի ավազակի համար ես աղաչում ինձ, հա՛յր, դրա համար քեզ չեմ լսի»: Ծերն ուրախացավ, որ չհասավ իր խնդրածին:

114. Հայր Պիմենն ասաց, թե մի եղբայր հարցրեց հայր Ալոնին և ասաց. «Ի՞նչ է անձն արհամարհելը և որքա՞ն»: Ծերն ասաց. «Իրեն արհամարհելն այն է, որ մեկն իրեն անասուններից վատթար համարի, որովհետև նրանք դատաստան չեն մտնելու»:

115. Հայր Հովսեփն ասաց. «Նստեցինք մի անգամ հայր Պիմենի մոտ, և Պիմենն ասաց՝ հայր Աղաթոն: Իսկ մենք ասացինք. «Աղաթոնը դեռ երիտասարդ է, ինչո՞ւ ես նրան հայր կոչում»: Հայր Պիմենն ասաց. "Պատվական տեսքը, լեզվի լռությունն ու սրտի հեզությունը նրան հայր կոչեցին"»:

116. Հայր Պիմենն ասաց. «Այն պատճառով ենք մենք ընկնում փորձությունների մեջ, որ չենք պահում մեր կարգն ու տեսակը, ինչպես և գրված է սրանց մասին, և չենք նախանձում քանանացի կնոջը, որ Հիսուսի անունն ընդունեց, թե ինչպես նրան ընդունեց Փրկիչը և տվեց նրան իր խնդրածն ու հանգիստը» (Մատթ. ԺԵ 21-28, Մարկ. Է 24-30)*: Դարձյալ ասաց. «Քո անձն իմաստուն մի՛ համարիր, այլ միաբանվի՛ր ծերի հետ, ով բարի կենցաղավարություն ունի»:*

117. Հարցրեց եղբայրը և ասաց. «Ի՞նչ է մեծամտությունը»: Ծերն ասաց. «Իր անձն արդարացնելը. քանզի հայր Պափնոտիոսն էլ էր մեծ, սակայն գնում էր թեթև գործերի»:

118. Հայր Պիմենն ասաց, թե՝ մարդը թող ինքն իրեն հանդիմանանքի տա և ամեն ինչի համբերի և թող ճանաչի առաքյալի խոսքը, թե սրբի համար ամեն ինչ սուրբ է (Հռոմ. ԺԴ 20, Տիտ. Ա 15)*, և թող բոլոր արարածներից նվաստ համարի իր անձը: Եղբայրն ասաց. «Ինչպե՞ս պետք է իմ անձը մարդասպաններից ավելի նվաստ համարեմ»: Ծերը նրան ասաց. «Եթե իմաստությամբ քննես, այսպես կդատես և կասես. "Նա մարդու մարմինը սպանեց մեկ անգամ միայն, իսկ ես գիշեր ու ցերեկ ընկերոջս եմ սպանում իմ կամքով և իմ անձը՝ մեղքով"»: Եվ եղբայրը գնաց հայր Անուբի մոտ և խնդրեց նրան մեկնել այս խոսքը: Հայր Անուբն ասաց նրան. «Եթե մեկը քննի այդ խոսքը և տեսնի իր եղբոր թերությունը, իր արդարությունը կլանել կտա նրա մեղքերը»: Եղբայրն ասաց. «Իսկ ո՞րն է նրա արդարությունը»: Ծերն ասաց. «Իր անձն ամաչեցնելը»:*

119. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Երբ ընկնում եմ զազիր մեղքերի մեջ, խորհուրդներս ներքուստ խեղդում են ինձ, և ասում եմ՝ ինչո՞ւ ընկա»: Ծերը նրան ասաց. «Որ ժամին մարդ ընկ-

նի մեղքի մեջ և զղջա, նույն ժամին նրա մեղքերը կթողնվեն Աստծո շնորհներով»:

120. Ոմն եղբայր ապրում էր իր գյուղից ոչ շատ հեռու գտնվող խցում և ասում էր եղբայրներին. «Այս քանի տարի է՝ այստեղ եմ և երբեք գյուղ չգնացի, իսկ դուք ամեն օր գնում եք այնտեղ»: Եվ եղբայրները պատմեցին այդ հայր Պիմենին, և ծերն ասաց նրանց. «Ավելի լավ է՝ գնալ գյուղ և չպարծենալ մտքում, թե՝ չգնացի այնտեղ, և ուրիշներին էլ չդատել, թե՝ դուք գնացիք գյուղ: Որովհետև՝ ում մեջ խոնարհություն կա, նա չի կարող պարծենալ, և առանց խոնարհության չի կարող հոգին կենդանի լինել»:

121. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Ինչպե՞ս կենցաղավարեմ այնտեղ, ուր պիտի բնակվեմ»: Ծերը նրան ասաց. «Քո մտքում քեզ միշտ իբրև օտար համարիր, որտեղ էլ որ ապրես, և ուրիշների խոսքից առաջ մի՛ դցիր քո խոսքը և հանգիստ կգտնես: Հարկավոր է հույսը դնել Տիրոջ վրա, ոչինչ համարել իր անձը և թողնել սեփական կամքը: Եթե մեկը հոժարի սրան, ապա հոգին կկրթի»:

112. Հայր Պիմենը պատմում էր, թե հայր Անտոնիոսն ասաց. «Մարդու մեծությունն այն է, որ իր հանցանքները միշտ դնի Աստծո առաջ և մինչև վերջին շունչը պատրաստ լինի փորձությունների, որովհետև բոլորն էլ հառաչանքով են մտնում աշխարհ և հառաչանքով են ելնում աշխարհից: Եվ ասաց. «Բոլոր առաքինություններն անօգուտ են առանց մեն-մի առաքինության, այն է՝ միշտ իր անձը մեղադրելը, որից ծնվում է կենսատու խոնարհությունը»:

113. Հայր Պիմենն ասաց. «Եթե մի եղբայր գա քեզ մոտ և տեսնի, որ քեզ հոգեշահ չէ իր գալը, քննի՛ր դու քո մեջ, թե ինչ էիր խորհում քո մտքում՝ նախքան նրա գալը, և այնժամ կիմանաս նրա երկմտության պատճառը: Եթե դա անես խոնարհությամբ և արդար մտքով, քո ընկերոջ առաջ անմեղ կլինես, և նա կվերացնի իր թերությունը: Որովհետև եթե ծերը զգուշություն ունենա իր սենյակում նստելիս՝ չի մոլորվի, քանի որ Աստված նրա հետ է, և այսպիսի նստելուց՝ մարդն Աստծո երկյուղը կստանա»:

114. Հայր Պիմենն ասաց. «Այն պատճառով ենք այսքան նեղություններ կրում և չարչարվում, որ մեր եղբայրներին չենք հանդուրժում, ինչպես գրված և պատվիրված է մեզ Աստծուց: Կամ՝ չտեսա՞ք՝ ինչպես էր քանանացի կինը աղաչում Փրկչին իր դստեր համար (Մատթ. ԺԵ, 21-28)*:*

115. Ոմն եղբայր հարցրեց հայր Բեսարիոնին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Լռի՛ր, խոնարհվի՛ր և անձդ ոչինչ համարի՛ր. և եթե լսես ինձ և քեզ նվաստացնես, հանգիստ կգտնես՝ ուր էլ որ լինես»:

116. Հայր Թեովնան ասաց. «Եթե մեկը նույնիսկ իրենով առաքինություն ձեռք բերի, Աստված նրան շնորհներ չի տա, բայց եթե գնա ընկերոջ մոտ և պատմի նրան իր մասին ամեն ինչ և դատվի նրանից, այնժամ Աստված կտա նրան իր շնորհները»: Եվ դարձյալ ասաց. «Մի՛ կատարիր քո կամքը, քանի որ դու պարտավոր ես խոնարհվելու քո եղբոր առջև»: Դարձյալ ասաց. «Եթե մարդը չի պահում օրենքը, ինչպե՞ս կարող է այն ուսուցանել իր ընկերոջը»: Կրկին ասաց. «Ով կամենում է եղբայրների հետ ապրել, պարտավոր է քարե արձանի նման լինել, որ թեպետ և փառաբանվի կամ անարգվի՝ չհպարտանա և չբարկանա, այլ ամեն ինչ տանի անվրդով»:

117. Հայր Պափնոտիոսն ասաց. «Որքան ժամանակ դեռ կենդանի էր ծերը, ամիսը երկու անգամ գնում էի նրա մոտ, իսկ նա ինձնից հեռու էր տասներկու մղոն: Գնում և պատմում էի նրան իմ բոլոր խորհուրդները: Եվ ծերերը միայն այս էին ասում ինձ. «Ուր էլ որ գնաս ապրելու, մեծ բան մի՛ համարիր քո անձը և հանգիստ կգտնես»:

118. Ոմն եղբայր ասաց հայր Սիսոյին. «Տեսնում եմ, հա՛յր, որ Աստծո հիշատակը միշտ կա իմ մտքում»: Ծերը նրան ասաց. «Մի մեծ բան չէ դա, որ քո խորհուրդները միշտ առ Աստված են և հիշում ես Նրան, այլ այս է ճշմարիտ մեծությունը, եթե դու քեզ բոլոր արարածներից ամենավատը համարես, որովհետև այդպես իրեն համարելը և մարմնի ճգնություններն առաջնորդում են դեպի խոնարհություն»:

119. Երեք ծեր գնացին հայր Սիսոյի մոտ, որպեսզի խոսք լսեն նրանից: Առաջինն ասաց. «Հա՛յր, ինչպե՞ս կարող եմ կրակի գետից պրծնել»: Երկրորդն ասաց. «Իսկ ես ինչպե՞ս կարող եմ ատամների կրճտումից և անքուն որդերից ազատվել»: Երրորդն ասաց. «Ինձ հալումաշ է անում արտաքին խավարի մասին հիշելը»: Ծերը նրան պատասխանեց և ասաց. «Ես դրանցից ոչ մեկն էլ չեմ հիշում, սակայն ողորմած և բարերար է Աստված, և հուսամ, որ կողորմի ինձ»: Իսկ նրանք, լսելով ծերի խոսքը, գնացին տրտմած, իսկ ծերը չկամեցավ, որ նրանք տրտում գնան, դրա համար ետ դարձրեց նրանց և ասաց. «Երանի է ձեզ, եղբայրնե՛ր, հիացա ես ձեր առաքինության վրա, որովհետև ձեզնից առաջինը ինձ հիշեցրեց, որ մտահոգվեմ հրեղեն գետի

մասին, երկրորդը՝ տարտարոսի մասին, երրորդը՝ արտաքին խավարի մասին: Եթե սրանց մասին հիշողությունը տիրել է ձեր մտքերին, ապա անհնար է, որ դուք այլևս մեղք գործեք: Իսկ ի՞նչ անեմ ես՝ խստասիրտս ու արհամարհողս, որ երբեք չեմ հիշում, որ նման տանջանքները մարդկանց համար են, դրա համար էլ ամեն ժամ մեղանչում եմ»: Իսկ նրանք երկրպագեցին և ասացին. «Ինչպես լսեցինք, նույնպես և տեսանք»: Ծերի խոնարհությունից եղբայրները մեծապես շահեցին և ուրախությամբ գնացին:

120. Ոմն եղբայր ասաց հայր Սիսոյին. «Ինձ խո՛սք ասա, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Ի՞նչ ասեմ քեզ, որդյա՛կ, որովհետև ես Նոր Կտակարանն եմ ընթերցում, բայց միշտ Հնի մեջ եմ ընկնում»:

121. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Գործն այդ, որ դու փնտրում ես, կատարյալ լռությունն է և հաստատուն խոնարհությունը, քանզի գրված է. «Երանի՜ նրանց, որ քննում են պատվիրանները և պահում դրանք» (Սաղմ. ՃԺԸ 2)*: Այդ արա՛ և կապրես»:*

122. Հայր Սիսոն մի եղբոր հարցրեց. «Եղբա՛յր, ինչպե՞ս ես ապրում»: Եվ նա ասաց. «Օրերս եմ անցկացնում»: Ծերը նրան ասաց. «Ահ, թե ես էի լինեի, օրերս կանցկացնեի, ոչ թե օրերն ինձ կանցկացնեին»:

123. Հայր Սիսոյի մասին ասում էին, թե մի անգամ, երբ նստում էր, բարձրաձայն գոչեց և ասաց. «Ո՜վ իմ թշվառություն»: Նրա աշակերտը հարցրեց. «Ի՞նչի վրա ես վշտանում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Մի մարդ եմ փնտրում՝ հետը խոսելու և չեմ գտնում»:

124. Հայր Սիսոյի մասին ասում էին, թե հիվանդացավ մի անգամ: Նրա մոտ նստել էին ծերերը, իսկ նա ուրիշների հետ էր խոսում: Եվ ծերերը հարցրին նրան. «Ի՞նչ ես տեսնում, հա՛յր, և ինչ ես խոսում նրանց հետ»: Եվ ծերն ասաց. «Տեսնում եմ ոմանց, որ եկել և տանել են ուզում ինձ, և աղաչում եմ նրանց, որ թողնեն ինձ՝ մի փոքր ապաշխարելու»: Ծերերից մեկը նրան ասաց. «Եթե քեզ թողնեն, ի՞նչ ապաշխարություն կարող ես անել, քանզի ծեր ես»: Ծերն ասաց. «Ուրիշ բան էլ որ չկարողանամ անել, գոնե կհառաչեմ և իմ անձը կողբամ. դա բավական է ինձ»:

125. Ոմն եղբայր հարցրեց հայր Սիսոյին և ասաց. «Ո՞րն է ճանապարհը, հա՛յր, որ տանում է դեպի խոնարհություն»: Ծերն ասաց. «Դա ճգնությունն է, խիստ պահքը և անդադար աղոթքը, իրեն ամենքից վատթար համարելը և ամեն բարիքից իրեն զրկելը»:

126. Մայր Սինկլիտիկեն ասաց. «Ինչպես նավը չի կարող առանց գամերի լինել, այնպես էլ անձը չի կարող ապրել առանց խոնարհության»:

127. Հայր Սերենիոսն ասաց. «Ինչքան զորություն ունեի իմ ամբողջ կյանքում, ջանացի հնձել, հյուսել և կարել, և այս ամենով հանդերձ՝ եթե ինձ չկերակրեր ամենաբարձրյալ Աստծո հզոր աջը, հացով չէի կարող կշտանալ»:

128. Ոմն եղբայր հարցրեց հայր Տիթոյին և ասաց. «Ի՞նչ անեմ, հա՛յր»: Ծերն ասաց նրան. «Արա ա՛յն՝ ինչ տեսնում ես իմ մեջ»: Եղբայրն ասաց. «Եվ ի՞նչ եմ տեսնում քո մեջ»: Ծերն ասաց նրան. «Ես մտքով բոլորից խոնարհ եմ, ա՛յդ արա, որովհետև խոնարհությունը բարձրացնում է: Ով խոնարհություն ունի, հնազանդեցնում է դևերին, իսկ ով խոնարհություն չունի, ծաղրվում է դևերի կողմից: Միայն խոսքով մի՛ եղիր խոնարհ, այլև գործերով: Քանզի անհնար է բարձրանալ աստվածային գործերի մեջ՝ առանց խոնարհության»:

129. Ոմն մեծ ծեր մենակյաց դևին ասաց. «Դև՛, ինչո՞ւ ես դու այդքան պատերազմում իմ դեմ»: Իսկ դևն ասաց. «Այդ դու ես հզոր կերպով պատերազմում իմ դեմ, որ ամեն ինչի մեջ մեծապես խոնարհվում ես և նեղում ինձ»:

130. Ծերն ասաց. «Խոնարհությունը կրոնավորի պսակն է, որովհետև ինչպես լեռները երբեք չեն ընկնում, այնպես էլ խոնարհը չի ընկնում, քանզի խոնարհը երբեք չի բարկանում և ոչ ոքի չի բարկացնում»:

131. Ոմն մենակյացի ապտակեց ոմն դիվահար, իսկ նա մյուս երեսն էլ դեմ տվեց: Դևը երկյուղեց նրա խոնարհությունից և նույն պահին էլ դուրս եկավ մարդու միջից և փախավ:

132. Ծերն ասաց. «Եթե քո մեջ ամբարտավանության խորհուրդ մտնի, քննի՛ր քո միտքը և տե՛ս՝ արդյոք պահո՞ւմ ես բոլոր պատվիրանները, տե՛ս՝ արդյոք սիրո՞ւմ ես քո թշնամուն և թե՝ քեզ համարո՞ւմ ես անպիտան ծառա: Եվ եթե այս ամենը կատարած լինես, դարձյալ մի՛ հպարտացիր, իսկ եթե չես կատարել, ինչո՞ւ ես իզուր մեծամտանում, որովհետև ամբարտավանությունը դևերի ախտն է և մեղքերից՝ ամենաչարը»:

133. Ծերն ասաց. «Ով գովվի կամ մեծարվի առավել, քան իր արժանիքներն են, նա մեծապես կտուժի, իսկ ով մարդկանցից ոչ գովվի և ոչ էլ մեծարվի, նա Աստծուց կփառավորվի»:

134. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչո՞ւ ենք այսպես դիվային պատերազմների մեջ, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Նրա համար, որ դեն նետեցինք մեր զենքերը, որոնք են՝ արհամարհանքի արժանանալը, խոնարհությունը, աղքատությունը և համբերությունը»: Եղբայրն ասաց. «Եվ ո՞րն է խոնարհությունը»: Ծերն ասաց. «Այն է, որ եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ, թողություն չնորհես նրան՝ նախքան նրա՝ քեզնից խնդրելը»: Եղբայրն ասաց. «Ուրիշ ի՞նչ է խոնարհությունը»: Ծերն ասաց. «Բարին անել ընկերոջը և չարիք գործողին»: Եղբայրը հարցրեց. «Իսկ եթե մարդ չհասնի այդ չափին, ի՞նչ պետք է անի»: Ծերն ասաց. «Թո՛ղ փախչի չարից և լռի՛»:

135. Ոմն մենակյաց ծեր մոլորված շրջում էր անապատում և մտքում կարծում էր, թե ինքը կատարյալ է բոլոր առաքինությունների մեջ: Սա աղոթքներով խնդրեց Աստծուն և ասաց. «Ցո՛ւյց տուր ինձ, Տե՛ր, թե ինչ պակաս բան կա, որ կատարեմ»: Իսկ Աստված կամեցավ խոնարհեցնել նրա միտքը և ասաց նրան. «Գնա՛ այսինչ արքիմանտրիտի մոտ և արա՛ այն, ինչ նա կասի քեզ»: Ծերը եկավ արքիմանտրիտի մոտ, ողջունեցին միմյանց և նստեցին: Ծերն արքիմանտրիտին ասաց. «Ինձ խո՛սք ասա, հա՛յր, որ կատարեմ և ապրեմ»: Հայրը նրան ասաց. «Եվ ինչ էլ որ քեզ ասեմ, կկատարե՞ս այն»: Եվ նա խոստացավ անել: Նրան ասաց. «Վերցրո՛ւ այս խարազանն ու մահակը և գնա՛ արածեցրու խոզերին»: Եվ ծերը, հնազանդվելով նրա հրահանգին, գնաց և խոզերին էր արածեցնում: Իսկ ովքեր ճանաչում էին նրան, եկան նրան տեսնելու, և երբ տեսան, ասացին միմյանց. «Ո՛, այս մեծ մենակյացը հիմարացել է և խոզեր է արածեցնում, որովհետև նրա մեջ դև է մտել»: Եվ երբ Տերը տեսավ նրա խոնարհությունը, որ ուրախությամբ համբերում էր մարդկանց նախատինքներին, նրան տվեց անարգ, անպիտան և մարդկանցից ամենաստորինը իրեն համարելու շնորհը և վերստին ուղարկեց անապատ:

136. Ծերն ասաց. «Ընկերոջ մասին քո մտքում մի՛ ասա, թե ես ավելի արթուն, հսկող և ճգնող եմ, քան նա, այլ սիրով, հեզությամբ և հոգու աղքատությամբ խոնարհվի՛ր Քրիստոսի շնորհներին, որպեսզի պարծենկոտության ախտի մեջ չընկնես և չկորցնես քո վաստակը, որովհետև գրված է, թե ով պարծենում է, թե կանգնած է, թո՛ղ զգույշ լինի, որ չընկնի, այլ Տիրոջ աղով թո՛ղ աղի իրեն»:

137. Ոմն եղբայր ասաց ծերին. «Հա՛յր, ինձ կենաց խոսք ասա»: Ծերն ասաց. «Թեկուզ և ասեմ՝ ոչ ոք չի լսի, քանզի աղի է մեր հողը»:

138. Ծերն ասաց. «Երբ չենք ունենում պատերազմ, այնժամ ավելի պիտի խոնարհվենք, քանզի Աստված տեսավ մեր տկարությունը և թողեց մեզ առանց պատերազմի, իսկ եթե պարծենանք, մեզնից կվերցնի Իր օգնությունը, և կկորչենք»:

139. Դևերը մի ծերի ասացին. «Ծե՛ր, փափագո՞ւմ ես տեսնել Քրիստոսին»: Ծերն ասաց. «Անիծվե՛ք դուք ու ձեր քրիստոսը, որովհետև ես ի՛մ Քրիստոսին եմ հավատում, որ ասում է. "Եթե ասեն ձեզ՝ ահավասիկ Քրիստոսն այստեղ է կամ այնտեղ, մի՛ հավատացեք"»: Եվ այնժամ հալածվելով՝ դևերն անհետացան:

140. Ծերն ասաց. «Եթե դու խոնարհությամբ և Աստծո երկյուղով ինչ-որ բան խնդրես քո եղբորը և գործի դնես, քո խոսքն ու Աստծո շնորհները կհնազանդեցնեն եղբորը՝ քեզ, և նա կկատարի քո ասածը: Իսկ ով ամբարտավանությամբ և գոռոզությամբ ջանա խոնարհեցնել և այդպես պահանջի եղբորից գործը, Աստված, որ տեսնում է սրտում ծածկվածը, թույլ չի տա եղբորը հնազանդվել նրան և կատարել գործը, քանզի հայտնի են այն գործերը, որ Աստծո կամքով են լինում, ինչպես և հայտնի են նրանք, որոնք՝ ամբարտավանությամբ են: Որովհետև այն գործերը, որ Աստծո կամքով են կատարվում, խոնարհությամբ և աղաչանքով են լինում, իսկ որոնք՝ մեծամտությամբ՝ բարկությամբ և խռովքներով են լինում, քանի որ չարից են»:

141. Ծերն ասաց. «Կամենում եմ հաղթվել խոնարհությամբ, քան ուրիշներին հաղթել ամբարտավանությամբ»:

142. Ծերն ասաց. «Մի՛ արհամարհիր քո սպասավորին, որ քո առաջ կանգնած է, քանզի չգիտես, թե Աստծո Հոգին քեզ վրա է հանգչած, թե՝ նրա»:

143. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Եթե բնակվեմ մի եղբոր հետ և տեսնեմ նրան ինչ-որ անպատշաճ գործով մեղանչելիս, պե՞տք է, որ հանդիմանեմ նրան»: Ծերը նրան ասաց. «Եթե քեզնից ավագ է կամ քեզ հասակակից, լռի՛ր, որ հանգիստ ունենաս, դրանով դու քեզ ավելի վատ կանես և անհոգ կլինես»: Եղբայրն ասաց. «Եվ ի՞նչ անեմ, հա՛յր, որովհետև եղբայրներն ինձ վրդովեցնում են»: Ծերն ասաց. «Եթե չես համբերում, ասա՛ մի անգամ խոնարհությամբ, և եթե չեն լսի, լռի՛ր և քո գործը թո՛ղ Աստծո վրա: Սակայն զգո՛ւյշ եղիր, որ չիմանան, թե դու հանուն Աստծո լռեցիր, որովհետև լռելը բարի է, քանզի այն խոնարհություն է»:

144. Ծերն ասաց. «Եթե լռության հասնես, մի՛ համարիր քեզ առաքինություն գործող, այլ ասա՛. "Անարժան եմ և խոսելու համար՝ անպիտան, դրա համար եմ լռում"»:

145. Ծերն ասաց. «Ինչպես աղացքար պտտող եզան աչքերն են ծածկում, որ չուտի իր աղացած ալյուրը, այդպես էլ մեծ խորհրդով մեր մտքի աչքերը ծածկենք, որպեսզի չտեսնենք, թե բարիք ենք գործում և չկորցնենք մեր վարձը: Դրա համար էլ Աստծո թույլտվությամբ ընկնում ենք զազիր խորհուրդների մեջ, որպեսզի դրանք տեսնելով՝ դատենք մեր անձերը, թե բարի բան չունենք, և այդ զազիր խորհուրդները ծածկույթ են դառնում մեր փոքրիկ բարեգործություններին, որպեսզի չտեսնենք մեր բարի գործերը, այլ տեսնելով այդ զազիր խորհուրդները՝ արհամարհենք մեր անձերը, որովհետև երբ մարդը նախատում է իր անձը, իր վարձը չի կորցնում»:

146. Ծերին հարցրին և ասացին. «Ի՞նչ է խոնարհությունը»: Իսկ նա ասաց. «Խոնարհությունը աստվածային մեծ գործ է, իսկ խոնարհության ճանապարհը մարմնի տքնությունն է և սեփական անձը բոլորից ավելի անարգ և հանցավոր համարելը»: Եղբայրն ասաց. «Եվ ո՞րն է անձը անարգ համարելը»: Ծերն ասաց. «Այն, որ չի նայում ուրիշի մեղքերին, այլ՝ միայն իր անձի, և միշտ աղաչում է Տեր Աստծուն»:

147. Ոմն եղբայր ասաց ծերին. «Հա՛յր, ինձ խոսք ասա՛, որով ապրեմ»: Եվ ծերն ասաց. «Եթե անարգվես և համբերես, այդ ավելի մեծ է, քան ցանկացած առաքինություն, քանզի ով արհամարհանքները, անարգանքներն ու զրկանքները հոժարությամբ և սիրով հանձն առնի, նա կկարողանա ապրել»:

148. Ծերն ասաց. «Իշխանների հետ ծանոթություն մի՛ ունեցիր և հաճախակի մի՛ այցելիր նրանց, որպեսզի քո մեջ չառաջանա համարձակություն և առաջնորդելու ցանկություն»:

149. Ոմն եղբայր հարված ստանալով՝ խոցվեց եղբորից, և ձեռքով վերքը փակած, որ արյունը չհոսի, գնաց իր խոցողից թողություն խնդրելու:

150. Ծերն ասաց. «Երբեք մտքում մի՛ դատիր քո եղբորը և ոչ մի գործի համար»:

151. Ծերն ասաց. «Եթե խոնարհություն ստանալու համար ճգնենք, մեզ այլ ճգնություններ հարկավոր չեն լինի, որովհետև բոլոր չարիքները մեզ վրա գալիս են ամբարտավանությունից: Եթե մեծն Պողոսին

խրատելու համար Տերը սատանա հրեշտակ տվեց, որպեսզի չմեծամտանա (Բ Կորնթ. ԺԲ 7), *որչա՞փ առավել ևս մեզ՝ գոռոզացածներիս, սատանա կտա՝ կռփահարելու մեզ, մինչև որ խոնարհվենք»:*

152. Ոմն ծերի իր մեծ խոնարհության համար Աստված հոգետեսության շնորհ պարգևեց: Ով գալիս էր նրա մոտ, ծերը տեսնում էր նրա մտքերը: Իսկ ծերը, նեղվելով դրանից, աղաչեց Աստծուն վերցնել այդ շնորհն իրենից, բայց երբ խնդրածին չհասավ, գնաց մի մեծն ծերի մոտ և աղաչեց նրան ու ասաց. «Ճգնի՛ր ինձ հետ պահքով, որպեսզի վերցվի ինձնից այս տեսանողության շնորհը»: Նստեցին յուրաքանչյուրն առանձին իր սենյակում և աղաչեցին Աստծուն դրա համար: Երկնքից ձայն եկավ և ասաց ծերին. «Ահա վերցրի քեզանից այն, սակայն կունենաս այն՝ երբ ուզենաս և երբ պետք լինի քեզ»:

153. Անմեղ, քաղցրաբարո և բարերար ոմն ծեր, որ ոչ մեկի մասին չար բան չէր խորհել երբեք, այսպիսի փորձության մեջ ընկավ մի օր: Ոմն եղբայր գողացավ մեկ ուրիշի անոթները և տանելով այս ծերի մոտ՝ պահ տվեց նրա մոտ, բայց ծերը չգիտեր՝ ումն են կամ որտեղից են: Օրեր անց ճանաչեցին անոթները և ծերին բռնելով՝ պահանջեցին գողոնը: Իսկ նա ասաց. «Թողությո՛ւն տվեք ինձ, քանզի մեղանչեցի»: Իսկ շատ չանցած՝ եկավ նաև այն եղբայրը, որ գողացել էր, և նա նույնպես մեղադրեց ծերին և ասաց. «Դու ես գողացել այս անոթները»: Իսկ ծերը ընկավ նրա ոտքերը և ասաց. «Ների՛ր ինձ, քանզի հանցանք գործեցի»: Եվ այսպես, ինչում որ մեղանչում էին եղբայրները և ուրանում, նա իր վրա էր վերցնում և ասում. «Թողությո՛ւն շնորհեք ինձ, որովհետև մեղանչեցի», և այսպես խոնարհվում էր երանելին:

154. Ոմն մենակյաց եպիսկոպոս ձեռնադրվեց և իր բարձր կրթվածության և զգուշության պատճառով ոչ մեկի վրա չէր բարկանում, այլ երկայնամտորեն կրում էր բոլորի հանցանքները, իսկ նրա վանքի տնտեսվարը ոչ բարվոք կերպով էր վարում եկեղեցու գործերը: Եվ գալով ոմանք ընկան նրա առջև և ասացին. «Ինչո՞ւ չես սաստում տնտեսվարին, որ խաթարեց եկեղեցու բոլոր գործերը»: Եպիսկոպոսը հապաղում էր սաստել նրան, իսկ նրանք դարձյալ գրգռում էին նրան տնտեսվարի դեմ: Երբ եպիսկոպոսը տեղեկացավ, որ նրանք պատրաստվում են բռնադատել իրեն, գնաց թաքնվեց նրանցից, իսկ նրանք փնտրելով՝ հազիվ կարողացան գտնել նրան և ասացին. «Ինչո՞ւ թաքնվեցիր մեզանից»: Իսկ նա նրանց ասաց. «Այն, ինչ ստացա՝ վաթսուն տարի բազում ճգնություններով խնդրելով Աստծուց, դուք ուզում եք երկու օրում հանել ինձանից»:

155. Ծերն ասաց. «Խոնարհությունն այն չէ, երբ մեկը փոքրացնում է իր անձը, այլ՝ որ ուրախությամբ կրում է իր վրա թափվող նախատինքները, անարգանքներն ու վշտերը»:

156. Ոմն եղբայր բնակվում էր խցում և մեծ խոնարհությունից այսպես էր միշտ աղոթում Աստծուն. «Տե՛ր, առաքի՛ր ինձ վրա քո կայծակը, որովհետև եթե ողջ լինեմ, չեմ հնազանդվի քեզ»:

157. Ոմն օտար մեծահարուստ գնաց Ռայիթա և եղբայրներին ողորմություն բաժանեց՝ մի մի դահեկան, իսկ մոտերքում՝ խցում արգելափակված մի ծեր կար, նրան նույնպես տվեց մեկ դահեկան: Եվ այդ գիշեր ծերը տեսավ մի փշածածկ արտ, և մեկը սպառնագին նրան ասաց. «Արի՛, ծեր, արի՛ և մաքրի՛ր այս արտը փշերից, որից վերցրիր ողորմությունը»: Եվ երբ լսեց, ուղարկեց դահեկանը իրեն տվողին և ասաց. «Քե՛զ վերցրու, եղբա՛յր, քո ոսկին, քանզի ես չեմ կարող ուրիշների փուշը իմ ձեռքով քաղել. ուր էր թե կարողանայի իմ փշերը քաղել»:

158. Ծերն ասաց. «Եթե անապատում նստես հանդարտությամբ, մի՛ համարիր քեզ սուրբ և ճգնավոր, այլ առավել ևս համարի՛ր քեզ իբրև դուրս շպրտված շներից մեկը, որոնք ուտում և խածոտում են Աստծո ժողովրդին»:

159. Ծերն ասաց. «Եթե մարդ ճգնի և անարգվի ու պարսավվի բոլորից, պետք է հոժարությամբ ընդունի և իրեն ավելի անարգ կարծի, քան շունը, որ բարի է: Քանզի շունը չի ճանաչում իր Արարչին և ոչ էլ դատաստանի համար հարություն է առնելու, որովհետև ավելի լավ է բոլորովին չհառնել, քան հառնել դատաստանի համար և հավիտյան տանջվել»:

160. Ոմն եղբայր խեղդվում էր չար և զազիր խորհուրդներից, նեղվում էր և ահռելի խոնարհությունից ասում էր մտքում. «Ես այսպիսի մտածումներ ունենալով՝ փրկության հույս չունեմ»: Եվ գնալով ոմն ծերի մոտ՝ աղաչեց նրան, որպեսզի աղոթի իր համար, որ թեթևանան իր մտքից չար խորհուրդները: Ծերը նրան ասաց. «Դա քո բարին չէ, որդյա՛կ»: Իսկ նա աղաչում էր ծերին՝ անել այդ: Եվ նրա աղաչանքներից հարկադրված՝ ծերն աղոթեց Տիրոջը, և Աստված վերացրեց պատերազմն եղբորից: Եվ հանկարծակի եղբայրն ընկավ հպարտության և ամբարտավանության մեջ և դարձյալ գնաց ծերի մոտ և ասաց նրան. «Խնդրի՛ր Աստծուց, որպեսզի դարձյալ ինձ վրա դան այն ախտակիր խորհուրդները, որոնցով խոնարհություն ունեի»:

161. Ոմն եղբայր գնաց Երիքովին մոտ գտնվող Դադիուկիայի վանքը՝ մի աբբայի մոտ և ասաց նրան. «Ինչպե՞ս ես ապրում, հա՛յր»: Ծերը նրան ասաց. «Վատ, որդյա՛կ»: «Ինչո՞ւ, հա՛յր»,– հարցրեց եղբայրը: Ծերն ասաց նրան. «Արդեն երեսուն տարի է, որ Տիրոջ առաջ և աղոթքներիս մեջ անիծում եմ իմ անձը և երբեմն Տիրոջն ասում եմ. «Մի՛ ողորմիր բոլոր նրանց, որ անօրենություն են գործում» (Սաղմ. ԺԸ 6)*, և ինքս եմ անօրինանում: Ասում եմ. «Անիծյալ են նրանք, որ խոտորվեցին քո պատվիրաններից»* (Սաղմ. ՃԺԸ 21)*, և ինքս եմ խոտորվում: Ես ինքս միշտ ստում եմ Աստծո առաջ, սակայն ասում եմ. «Կորստյան կմատնես բոլորին, որ սուտ են խոսում»* (Սաղմ. Ե 7)*: Միշտ չարն եմ հիշում և մտքում պահում իմ եղբոր հանդեպ, սակայն Աստծուն ասում եմ. «Թո՛ղ մեզ մեր պարտքերը, որպես մենք ենք թողնում մեր պարտապաններին»* (Մատթ. Զ 12)*: Խորհուրդներով շարունակ որկրամոլության մեջ եմ, սակայն ասում եմ, թե՝ հաց ուտելն անգամ մոռացա* (Սաղմ. Ճ 5)*: Մինչև առավոտ ննջում եմ, սակայն ասում եմ. «Կեսգիշերին ելնում էի՝ խոստովան լինելու Տիրոջը»* (Սաղմ. ՃԺԸ 62)*: Բնավ զղջում չունեմ, սակայն ասում եմ՝ թալկացա իմ հեծեծանքներից, իմ արտասուքներն ինձ կերակուր եղան գիշեր և ցերեկ* (Սաղմ. Զ 7)*: Մտքում չարն եմ խորհում, սակայն Աստծուն ասում եմ. «Իմ սրտի խորհուրդները քո առաջ են ամեն ժամ»* (Սաղմ. ԺԸ 15)*. թեև պահեցողություն ամենևին չունեմ, բայց ասում եմ՝ ծնկներն իմ տկարացան ծոմապահությունից* (Սաղմ. ՃԸ 24)*: Ամբողջապես լի եմ ամբարտավանությամբ, սակայն, համոթ ինձ, երգում եմ. «Տե՛ս իմ խոնարհությունն ու տառապանքը և թողությո՛ւն տուր իմ բոլոր մեղքերին»* (Սաղմ. ԻԴ 18)*: Ամենևին պատրաստ չեմ, բայց ասում եմ՝ պատրաստ է սիրտն իմ, Աստվա՛ծ* (Սաղմ. ՃԷ 2)*: Ու թեև համառոտակի ասացի, բայց իմացի՛ր, որ իմ բոլոր աղոթքներն ու պաղատանքերը ինձ ամոթ և հանդիմանություն են»: Եղբայրն ասաց. «Հա՛յր, կարծեմ թե այս ամենը Դավիթ մարգարեն է ասում իր մասին»: Այնժամ հառաչեց ծերն ու ասաց նրան. «Ի՞նչ ես ասում, եղբա՛յր, լռի՛ր. եթե չենք պահում՝ ինչ ասում ենք Աստծո առջև, ամոթի և կորստյան ենք մատնվելու»: Եվ այս ամենից շահած և օգուտ քաղած՝ գնաց եղբայրը՝ գոհանալով Տիրոջից:*

162. Ծերերից մեկն ասաց, թե մի անգամ Սկիտեում հավաքվեցին հայրերը հոգեշահության համար: Ծերերից մեկը վեր կացավ, և նրա թիկունքին մաղեղեն քուրձ կար, որի մի մասը գցված էր աթոռին: Նա երկու ձեռքով բռնելով այն՝ կանգնեց բոլորի մեջ՝ արևելյան կողմից, և ամենքը նրան էին նայում, իսկ նա սկսեց աղոթել և ասել. «Աստ-

վա՛ծ, ողորմի՛ր ինձ»: Եվ ինքն էլ իրեն պատասխանելով՝ ասաց. «Եթե կամենում ես, որ ողորմեմ քեզ, թո՛ղ այդ, որ ունես քո թիկունքին, և ես կողորմեմ քեզ»: Եվ սա կրկնեց դարձյալ յոթ անգամ և ապա քուրձը տակը դնելով՝ նստեց նրա վրա: Հայրերը նրան ասացին. «Մեկնի՛ր մեզ՝ ի՞նչ էր, որ արեցիր»: Եվ նա նրանց ասաց. «Զորձը, որ ունեի թիկունքիս, իմ կամքն է, և Տիրոջն աղաչում էի, որ նրանով ողորմեր ինձ, և Նա ինձ ասաց. «Թո՛ղ այդ քո կամքը, որ բռնել ես, և կողորմեմ քեզ»: Ուստի մենք, եղբայրնե՛ր, եթե կամենում ենք, որ Աստված ողորմի մեզ, հեռացնենք մեզանից մեր կամքը և ողորմություն կգտնենք»: Եվ նրան ասացին. «Եվ ո՞րն է կամքը թողնելը»: Եվ նա ասաց. «Խոնարհություն ստանալը, որից ավելի բարձր առաքինություն չկա, որովհետև որքան իջնի մարդ դեպի խոնարհություն, այնքան առավել կբարձրանա վեր»: Այս լսելով՝ բոլորն էլ սաստիկ ուրախացան և հաստատվեցին խոնարհության մեջ՝ այն առավել սիրելով, քան մյուս առաքինությունները, և յուրաքանչյուրը գնաց իր տեղը:

163. Հայրերից մեկը խոնարհության մասին այս առակը պատմեց. «Մայրիներն ասացին եղեգներին. «Այդ ինչպե՞ս է, որ դուք, այդքան տկար և վտիտ լինելով, չեք փչրվում և արմատախիլ լինում ձմռան հողմերի ցնցումներից, իսկ մենք, որ այսքան զորավոր ու մեծ ենք, հողմերի հարվածներից արմատախիլ ենք լինում»: Պատասխանեցին եղեգներն ու ասացին. «Մենք ձմեռային հողմերի բախումից խոնարհվում և այս ու այն կողմ ենք ճկվում՝ նրանց առաջ դողալով և շրջվելով և այդպիսով չենք խորտակվում, իսկ դուք, քանի որ դեմ եք կենում հողմերի բախմանը, դրա համար ամեն տեսակ չարիք գալիս է ձեզ վրա»: Եվ ծերն ասաց. «Պետք է թույլ տալ, երբ ինչ-որ արհամարհական բան է ասվում, և տեղի չտալ բարկությանը, չընդդիմանալ և չընկնել տգեղ խորհուրդների և չար գործերի մեջ, այլ բարու մեջ հաստատուն մնալ՝ Քրիստոսի շնորհներով»:

ԳԼՈՒԽ ԺԶ

ԱՆՀԻՆԱԶԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Պատմեց մեկը, թե մի անգամ փիլիսոփաներից ոմանք կամենում էին փորձել մենակյացներին: Մինչ մենակյացներից մեկն անցնում էր՝ ազնվակերպ հագնված, նրան ասացին. «Ե՛կ այստեղ, մենակյա՛ց»: Իսկ նա, բարկացած և թշնամացած նրանց հանդեպ, անցավ-գնաց: Անցավ դարձյալ ոմն ծեր լիբիացի, որը հին զգեստներ էր հագած, և նրան ասացին. «Դո՛ւ, չա՛ր մենակյաց, ե՛կ այստեղ»: Երբ ծերը փութով մոտ գնաց, նրան ապտակեցին, իսկ սա մյուս այտը դեմ տվեց: Փիլիսոփաները, վեր կենալով, երկրպագեցին նրան՝ ասելով. «Ճշմարիտ մենակյացն ահա սա է»: Իրենց մեջ նստեցրին նրան և ասացին .«Դուք ի՞նչ եք անում մեզնից առավել. եթե դուք պահում եք, մենք էլ ենք պահում, եթե հսկում եք, մենք էլ ենք հսկում, և ինչ որ դուք եք անում՝ անում ենք և մենք: Արդ, ի՞նչ ունեք առավել, քան մենք»: Ծերն ասաց. «Մենք մեր միտքը պահում ենք»: Փիլիսոփաները նրան ասացին. «Մենք այդ չենք կարող անել»:

2. Եգիպտացի հայրերից մեկը պատմեց. «Մի օր որոշեցի օտար տեղ գնալ և նստելով նավ՝ այնպես եղավ, որ եկանք Աթենք: Կամենալով քաղաք մտնել՝ տեսա մի ծեր մենակյացի, որ թիկնոց էր կրում և մի զամբյուղ ուներ՝ բաբելոնյան փականով, և մարդիկ էին գնում նրա հետ: Եվ երբ քաղաք մտավ, նրան դիմավորեց մարդկանց մի մեծ բազմություն և նրան (ամֆի) թատրոն մտցրին, իսկ ես հարցրի մեկին, թե ով է սա: Եվ նա ասաց. «Սա հեթանոսների մեջ փիլիսոփաներից մեծագույնն էր, սակայն դարձավ քրիստոնյա, վանք մտավ և դարձավ մենակյաց: Ահա տասնհինգ տարի անց եկել է քաղաք, դրա համար էլ գնում ենք, որ լսենք, թե ինչ է խոսելու»: Ես ևս գնացի նրանց հետ, որ լսեմ, թե ինչ է ասում: Եվ երբ եկան իշխանները, աղաչեցին նրան, թե. «Ասա՛ մեզ՝ ինչ ունես ասելու»: Նա նրանց առջև բերեց ապակե անոթ ու բացեց, որը լեցուն էր աղբով, և բոլորն սկսեցին ասել. «Ասա՛ մեզ՝

ի՞նչ է այդ»: Եվ այսպես ասաց. «Երկնի ներքո չկա այլ ազգ՝ ինչպիսին որ քրիստոնյաներն են, ոչ էլ այլ կարգ՝ ինչպիսին որ մենակյացներինն է, սակայն նրանց միայն սա է վնասում, որ բանսարկուն նրանց մեջ ոխ է գցում միմյանց հանդեպ, և ասում են, թե՝ նա ինձ ասաց, և ես նրան ասացի, և իրենց անսրբությունն ակներև են դարձնում, բայց և այնպես իրենք այն չեն տեսնում»: Բազմաթիվ մարդիկ, լսելով այս, գովեցին նրան և հեռացան:

3. Լսեցի, որ մեկը պատմում էր հայր Մոտիի մասին, որի աշակերտն էր Իսահակը, և սրանք երկուսն էլ ընտիր հայրեր եղան: Հայր Մոտին Հերակլայում սկսեց իր առաջին վանքը կառուցել, սակայն այնտեղ դժվարին կացության մեջ ընկնելով՝ այլ տեղ գնաց և դարձյալ սկսեց կառուցել: Սակայն այնտեղ նույնպես բանսարկուի ազդմամբ մի թշնամի գտնվեց, որ նեղում էր նրան: Ծերը վեր կացավ գնաց իր գյուղը, իր համար վանք շինեց և այնտեղ փակվեց: Շատ ժամանակ անց հավաքվեցին այնտեղի ծերերը, որտեղից նա հեռացել էր, իրենց հետ վերցնելով նաև այն եղբորը, որ տրտմեցրել էր նրան, գնացին նրա մոտ, որ աղաչեն նրան և իրենց վանքը բերեն: Երբ մերձեցան այն տեղին, ուր հայրն էր, թողեցին իրենց մախաղները այնտեղ, ինչպես նաև այն եղբորը, որը տրտմեցրել էր նրան, մենակ թողեցին այնտեղ: Եվ երբ բախեցին, ծերը սանդուղքն իջեցրեց, նայելով՝ տեսավ նրանց և ճանաչեց, ապա հարցրեց. «Ո՞ւր են ձեր մախաղները»: «Այսինչ անունով եղբոր մոտ են»,– պատասխանեցին նրանք: Եվ ծերը, երբ լսեց այն եղբոր անունը, ցնծությունից վերցրեց կացինը, կոտրատեց դռները և դուրս գալով ընթացավ դեպի եղբայրն ու ընկնելով նրա առաջ՝ առաջինը նրան ողջունեց: Եվ նրանց բոլորին տանելով իր խուցը՝ երեք օր ուրախացրեց նրանց՝ ինքն էլ հետները ուրախանալով, ինչը բնավ սովոր չէր անել, այնուհետև վեր կենալով գնաց նրանց հետ: Սրանից հետո եպիսկոպոս ձեռնադրվեց և դարձավ սքանչելագործ այր: Եվ երանելի Կյուրեղը նրա աշակերտ Հայր Իսահակին եպիսկոպոս ձեռնադրեց:

4. Եգիպտոսում ոմն իշխանի մասին ասում էին, թե աշխատեցնում էր եղբայրներին և նրանց հնձի վարձը չէր տալիս, և բոլորը փախչում էին նրանից: Ոմն մեծ ծեր լսեց այդ մասին, վերցրեց իր աշակերտին և գնալով նրա մոտ՝ ասաց. «Ուզո՞ւմ ես՝ հնձենք քեզ համար»: Իսկ նա ուրախացած ասաց՝ այո՛: Եվ նրանց ուղարկեց դաշտ, որ հնձեն, բայց կերակուր չէր տալիս նրանց, այլ իրենց կերակուրը նրանք ուրիշներից էին փոխ վերցնում: Եվ երբ ավարտեցին հունձը, ծերը նրան ասաց.

«Տո՛ւր մեզ վարձը»: Իսկ նա սկսեց նեղել նրանց, և նրանք գնացին՝ ոչինչ չստանալով նրանից: Մյուս տարի դարձյալ եկան նրա մոտ, իսկ նա ծաղրանքով ասաց. «Ահա դարձյալ եկավ անմիտ ծերը»: Եվ նախորդ տարվա պես վարվեց նրա հետ. հինգ տարի այդպես հնձում էր ծերը և վարձ չէր ստանում: Եվ դրանից հետո Աստծո բարկությունը եկավ իշխանի տան վրա, և բոլորը հերթով մեռնում էին: Իր անձի վրա զգալով Աստծո բարկությունը՝ իշխանը հինգ տարվա վարձն ամբողջովին տարավ Սկյութիա և հանձնեց ծերին, աղաչեց նրան, որ աղոթի իր վրա, և դրանից հետո բժշկվեց նրա ողջ տունը:

5. Գողերը մտան հայր Մովսեսի խուցը, և նա աղաղակ բարձրացրեց. ելան եղբայրները, բռնեցին գողերին և ուղարկեցին Ալեքսանդրիա՝ իշխանի մոտ, և իշխանը նրանց բանտ գցեց: Եվ հայր Պիմենը թուղթ ուղարկեց հայր Մովսեսին՝ գրելով. «Հա՛յր Մովսես, հիշի՛ր առաջին մատնիչին»: Հայր Մովսեսը գնաց, աղաչեց իշխանին և ազատել տվեց գողերին:

6. Հայր Զենոնն ասաց. «Ով կամենում է, որ Աստված անհապաղ լսի իր աղոթքը, երբ վեր կենա և ձեռքերը տարածի առ Աստված, նախքան իր անձի համար աղոթելը՝ թո՛ղ լիասիրտ աղոթի իր թշնամիների համար և հանուն սրա՝ ինչ էլ որ հետո խնդրի Աստծուց՝ Աստված կտա նրան»:

7. Սկյութիայում ոմն ծեր վրա եկավ այն պահին, երբ ավազակները գողանում էին նրա խցում եղածը, և ասաց նրանց. «Շտապե՛ք, քանի դեռ չեն եկել եղբայրներն ու ինձ չեն արգելել կատարելու Քրիստոսի պատվիրանը, որ ասում է. «Ով վերցնում է քո ինչքը՝ մի՛ արգելիր» (Ղուկ. Զ 29-30)*:*

8. Լիբիացի ոմն եղբայր եկավ աբբա Սիղվիանոսի մոտ՝ Պանփեոս լեռը, և ասաց նրան. «Ինձ բազում չարիքներ պատճառած թշնամի ունեմ, քանզի երբ ես գյուղում էի, իմ ագարակը հափշտակեց և բազմիցս դավաճանեց ինձ, վերջերս էլ կախարդություններ կիրարկելով՝ ջանաց վնասել ինձ, ուստի կամենում եմ իշխանի ձեռքը մատնել նրան»: Ծերը նրան ասաց. «Արա՛, որդյա՛կ, ինչպես հաճո է թվում քեզ»: Եղբայրը նրան ասաց. «Այո, աբբա՛, արդարև եթե խրատվի, նրա անձին օգուտ կլինի»: Ծերը դարձյալ ասաց. «Ինչպես որ քեզ հաճո թվա, այնպես էլ արա՛, որդյա՛կ»: Եղբայրը ծերին ասաց. «Արի՛, հա՛յր, աղո՛թք արա, և ես գնամ իշխանի մոտ»; Վեր կացավ ծերը, և սկսեցին աղոթել. «Հայր մեր, որ յերկինս....»: Եվ երբ հասան ասելու «Թող մեզ

...», աբբա Սիղվիանոսն ասաց. «....Եվ մի՛ թող մեր պարտքերը, ինչպես որ մենք չենք թողնում մեր պարտապաններին»: Եղբայրն ասաց ծերին. «Այդպես մի՛ ասա, հա՛յր»: Ծերն ասաց. «Ինչո՞ւ, որդյա՛կ: Եթե կամենում ես գնալ իշխանի մոտ, որպեսզի քո վրեժը լուծի, Սիղվիանոսն այսօր ուրիշ աղոթք չի անի քեզ համար»: Եվ եղբայրը ծունկի գալով՝ ներեց իր թշնամուն:

9. Մի վայրում բնակվող երկու մենակյացներ կային: Մի մեծն ծեր, գնալով նրանց մոտ, կամեցավ փորձել նրանց: Սա վերցրեց գավազանը և սկսեց ավերել բանջարեղենը: Եղբայրը, տեսնելով նրան, թաքնվեց, և երբ մի բանջար էր մնացել ընդամենը, եղբայրն ասաց. «Հա՛յր, եթե կամենում ես՝ թո՛ղ դա, որպեսզի եփենք և միասին ճաշակենք»: Եվ ծերն ընկնելով եղբոր առաջ՝ ասաց. «Աստծո Հոգին հանգչում է քեզ վրա, եղբա՛յր»:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

1. Հայր Անտոնիոսն ասաց. «Եթե մեկը ծածկի ընկերոջ հանցանքները և մեղքերը, Աստված էլ նրա մեղքերը կծածկի»:

2. Մի անգամ գիշերով երեք ավազակներ հարձակվեցին հայր Թեոդորոսի վրա, երկուսը բռնեցին ծերին, իսկ մեկը նրա անոթներն ու գրքերն էր հավաքում, հանում էր նրա հանդերձներն ու պարեգոտը: Ծերը նրանց ասաց. «Այդ պարեգոտը թողե՛ք, որ ինքս ինձ ծածկեմ»: Իսկ նրանք չկամեցան թողնել: Այնժամ ծերը, շարժելով ձեռքերը՝ գետին տապալեց նրանց: Երբ այս տեսան, սաստիկ վախեցան և չկարողացան վեր կենալ: Ծերը նրանց ասաց. «Մի՛ վախեցե՛ք, այլ այդ ամբողջը չորս մասի բաժանե՛ք և տարե՛ք երեք մասը, իսկ մեկ մասն ինձ թողե՛ք»: Եվ սա արեց այն բանի համար, որ պարեգոտի՝ իր մասը մնա, որպեսզի դրանով ծածկվելով՝ գար եկեղեցի:

3. Հայր Հովհաննես Կարճահասակը նստած էր մի անգամ եկեղեցում, իսկ եղբայրները գալիս և հարցնում էին նրան իրենց խորհուրդների մասին, իսկ մեկը, տեսնելով նրա՝ այդպես պատվական լինելը, հաղթվեց նախանձից և ասաց նրան. «Քո սափորը, Հովհաննե՛ս, դեղորայքով լի է»: Հովհաննեսը նրան ասաց. «Այդպես է, քանզի դու միայն արտաքինն ես տեսնում, իսկ եթե նաև ներքինը տեսնել կարողանայիր, ի՞նչ պետք է ասեիր»:

4. Հայր Ղունկիանոսի մասին ասում էին, թե նրա մոտ զրպարտեցին նրա աշակերտին, որպեսզի վտարի նրան, քանի որ նրա մոտ եկան հայր Թեոդորոսի աշակերտները և ասացին նրան. «Հա՛յր, մենք լսել ենք, որ քո աշակերտը ոչ մի բարի գործ չի անում, և եթե կամենում ես, հանենք նրան քո մոտից և ուրիշ բարի եղբոր բերենք»: Ծերը նրանց ասաց. «Ես նրան չեմ արտաքսի, քանզի նա հույժ հանգստացնում է ինձ»: Եվ երբ ծերը լսեց եղբոր մասին ամբաստանությունները, ասաց. «Վա՜յ ինձ, քանզի գալիս ենք այստեղ որպեսզի հրեշտակներ դառնանք, սակայն դառնում ենք խենեշ ու անսուրբ»: Այնժամ եղբայրներն ամաչելով՝ զգաստացան և հասկացան, որ պետք է անհիշաչար լինել:

5. Հայր Մակարիոսը Եգիպտոսում էր, երբ մի անգամ եկավ իր սենյակը և այնտեղ գտավ մի մարդու, որ թալանում էր նրա սենյակը և նրա ունեցվածքը դուրս բերելով՝ բարձում էր գրաստի վրա: Իսկ երբ ծերը տեսավ այդ, սկսեց օգնել նրան իբրև օտար մեկը՝ բերելով ու բարձելով գրաստին: Երբ բարձեցին, խաղաղությամբ ճանապարհեց նրան և ասաց. «Ոչինչ չբերեցինք աշխարհ և ոչինչ չենք տանելու մեզ հետ այստեղից. Տերը տվեց և Տերն էլ առավ, գնաս խաղաղությամբ (Հոբ Ա 21, Ա Տիմոթ. Զ 7)»:

6. Հայր Պիմենի եղբայր Պայեսիոսը սիրալիր բարեկամություն էր պահպանում մեկի հետ՝ իր խցից դուրս, իսկ հայր Պիմենը չգիտեր և ոչ էլ կամենում էր այդ: Եվ վեր կացավ գնաց հայր Ամոնի մոտ ու ասաց նրան. «Իմ եղբայր Պայեսիոսը սիրալիր մտերմություն ունի մեկի հետ, և ես հանգիստ չեմ գտնում»: Ասաց նրան հայր Ամոնան. «Պիմե՛ն, մի՞թե դեռ կենդանի ես. գնա՛ նստիր քո սենյակում և մտքումդ դիր, թե՝ երեք տարի է՝ գերեզմանում եմ:

7. Հայր Պիմենն ասաց. «Բոլոր վշտերին, որ գալիս են քեզ վրա, կհաղթես խոնարհությամբ և լռությամբ, իսկ եթե մեկը քեզ չարիք անի, դու նրան բարի՛ք արա և բարիով հաղթի՛ր չարին»:

8. Երկու եղբայրներ՝ հայր Պողոսն ու հայր Տիմոթեոսը, միասին էին բնակվում Սկիտեում, և բազում անգամ վիճաբանություն եղավ նրանց միջև: Հայր Պողոսն իր եղբորն ասաց. «Մինչև ե՞րբ պիտի հիմարությամբ մնանք կռիվների մեջ»: Հայր Տիմոթեոսը նրան ասաց. «Բարի՛ եղիր, որ երբ ես զայրանամ քեզ վրա, դիմացիր ինձ և համբերի՛ր, և երբ դու բարկանաս, ես կդիմանամ և կհամբերեմ»: Եվ այսպես անելով՝ հանդարտվեցին իրենց մնացած օրերին:

9. Երանելի Սպիրիդոնն այնչափ հեզ ու խոնարհ էր, որ հոտի հովիվ լինելով՝ նրան դարձրին եպիսկոպոս Տրիմիթոն կոչված քաղաքում, սակայն իր մեծագույն խոնարհության պատճառով չթողեց խաչնարածությունը: Մի գիշեր եկան գողերը ոչխար գողանալու նրա հոտից, սակայն Աստված պահեց հովվին ու նրա հոտը, քանզի երբ գողերը մտան բակ, ուր ոչխարներն էին, Աստծո աներևույթ զորությունը կապեց նրանց: Եվ երբ դա եղավ, հովիվը մտավ բակ՝ հաշվելու ոչխարներին, գտավ գողերին՝ ձեռքերը հետևում կապված, իմացավ նրանց գալու պատճառը և աղոթքի կանգնելով առ Աստված՝ արձակեց գողերին և խրատեց նրանց, որ աշխատանքով ապրեն և չգողանան: Մի պարարտ ու փափուկ խոյ ընտրելով հոտից՝ կապեց և տվեց նրանց ուրախությամբ և ասաց. «Թող ձեր չարչարանքը իզուր չլինի, վերցրե՛ք սա և գնացե՛ք խաղաղությամբ»:

10. Ոմն եղբայր բանալու կրկնակը պատրաստեց և բացում էր ծերի դուռն ու գողանում էր նրա դրամները: Իսկ ծերն այսպիսի թուղթ գրեց. «Տե՛ր իմ և եղբա՛յր, ով էլ որ լինես, բարի՛ եղիր և տա՛ր դրամի կեսը, իսկ կեսը ինձ թող՝ ծախսերի համար»: Եվ փողը երկու մասի բաժանեց ու գրությունը դրեց վրան: Գողացողը, իր սովորության համաձայն, գալով և տեսնելով թուղթը՝ կարդաց, պատռելով դեն նետեց և ողջ դրամը տարավ: Եվ երկու տարի անց այդ եղբայրը մեռնում էր, սակայն բազում օրեր հոգին դուրս չէր գալիս մարմնից: Իսկ երբ փոքր-ինչ հանգստություն եկավ նրա վրա և ուշքի եկավ, հասկացավ իր չարչարանքների պատճառը, կանչեց ծերին և ասաց. «Ների՛ր ինձ, քանզի ես էի գողանում քո դրամները»: Եվ ծերն աղոթք անելով՝ թողություն խնդրեց նրա համար, և երբ ավարտեց, եղբայրն իսկույն արձակեց հոգին:

11. Մեկ այլ քրիստոնյայի տարան նահատակելու, քանզի իր աղախինը մատնեց նրան: Երբ նրան բերին վկայության տեղը, տեսավ իր աղախնին, որը մատնել էր իրեն և հանելով ոսկյա մատանին իր մատից՝ տվեց նրան և ասաց Քրիստոսի վկան. «Գոհանում եմ Աստծուց և քեզանից՝ առ Աստված, քանզի այսպիսի բարիքի պատճառ դարձար ինձ համար»: Եվ այսպես իր տիրոջ անհիշաչարությունը տեսնելով՝ ապաշխարելով արտասվեց աղախինը:

12. Ոմն ծերի մասին ասում էին, թե որչափ մեկը անարգում և արհամարհում էր նրան, այնքան նա ավելի շատ էր գնում նրա մոտ և ասում էր. «Սրանք են առաքինությունների պատճառները, իսկ մեզ

երանի տվողները խաբում են մեզ և խռովքի են մատնում մեր հոգիները, քանզի գրված է. «Ովքեր երանի են տալիս, խաբում են ձեզ»:

13. Ոմն եղբայր գնաց ծերի մոտ, որ անապատում էր բնակվում, և նրա խցի մերձակայքում հանդիպեց երիտասարդների, որոնք պարում և անպարկեշտ բաներ էին ասում: Սակայն եղբայրը, տեսնելով ծերին, պատմեց նրան իր խորհուրդներն ու բժշկություն ստացավ նրանից: Դրանից հետո եղբայրն ասաց ծերին. «Ինչպե՞ս ես կարողանում համբերել, հա՛յր, այս երիտասարդների աղտեղի պարերին ու երգերին կամ ինչո՞ւ նրանց չես պատվիրում չլկտիանալ»: Ծերն ասաց. «Վաղուց է մտքովս անցել այդ, սակայն զսպում եմ ինձ ու ասում՝ եթե այս փոքր բանին չես համբերում, ապա՝ եթե ինչ-որ մեծ փորձություն գա քեզ վրա, ինչպե՞ս կարող ես համբերել. և այսպես սովորեցի համբերել»:

14. Ծերերից մեկն ասաց. «Տեսա երիտասարդներից ոմանց, որ ծերերին դեպի կյանք էին առաջնորդում: Քանզի մի ծեր հարբեցող կար, որ օրական մի խսիր էր գործում և վաճառում ու այդ գնով գինի էր ըմպում: Հետո եկավ մի երիտասարդ եղբայր և բնակվեց նրա մոտ, որը նույնպես օրական մի խսիր էր գործում, իսկ ծերը երկուսն էլ տանում էր գյուղ, վաճառում, գինի էր գնում, ըմպում ու հարբած վերադառնում, իսկ եղբորը երեկոյան չորացած հաց էր տալիս: Այդպես վարվեց ծերը երեք տարի, իսկ եղբայրը համբերում էր և ոչինչ չէր ասում: Երեք տարի հետո եղբայրն իր մտքում ասաց. «Մերկ եմ ամբողջովին և հաց իսկ չունեմ. գնամ ուրիշ տեղ»: Եվ դարձյալ ասաց. «Ո՞ւր գնամ. մնամ այստեղ, որովհետև հանուն Աստծո եմ մնում և աշխատում»: Եվ երևաց նրան հրեշտակն ու ասաց. «Մի՛ գնա այստեղից, քանզի վաղը կգամ քեզ մոտ»: Իսկ եղբայրը, երբ լսեց այս, հասկացավ իր կանչվելը, աղաչեց ծերին և ասաց. «Այսօր գյուղ մի՛ գնա և ինձ մի՛ թող, որովհետև ահա գալու են վերցնելու ինձ»: Ծերն ասաց. «Այսօր չեն գա, քանզի ուշացան»: Իսկ եղբայրն ասաց. «Ահա եկան», և իսկույն ննջեց: Եվ ծերը տեսնելով՝ սկսեց ողբալ և ասել. «Վա՜յ ինձ, որդյա՛կ, քանզի ես բազում տարիներ հեղգությամբ վատնեցի, իսկ դու քիչ ժամանակում քո հոգին ապրեցրիր քո համբերությամբ»: Եվ դրանից հետո ծերը սկսեց բարեպաշտությամբ կենցաղավարել և ընտիր ճգնավոր դարձավ:

15. Ոմն ծեր իր հետ բնակվող մի երիտասարդի հանդիմանեց անպատշաճ արարքի համար, իսկ երիտասարդը նեղսրտեց և բարկացած կողպեց դուռն այն տան, ուր ծերի ուտելիքներն էին, գնաց ուրիշ տեղ և այնտեղ ուշացավ տասներկու օր՝ սոված թողնելով ծերին: Իսկ ծե-

րի խցին մոտ մի բարի եղբայր կար, որը, երբ իմացավ երիտասարդի ուշանալը, նրա համար կերակուր պատրաստեց և պատուհանի գոգին դրեց: Եվ ծերն այնքան խոնարհ էր ու անհիշաչար, որ երբեք չտրտնջաց երիտասարդից ո՛չ իր մտքում, ո՛չ ուրիշների մոտ: Իսկ երբ հարցնում էին, թե ուր է նա, պատասխանում էր, թե երբ գործը վերջացնի, կգա:

16. Մի քանի եղբայրներ ճանապարհ էին գնում և մոլորվեցին: Եվ հանդիպելով ոմանց՝ հարցրին ճանապարհը, իսկ նրանք ավազակներ լինելով՝ խաբեցին նրանց և ցույց տվեցին անկոխ ու ամայի տեղանքի ճանապարհը. և ավազակներից մի քանիսը նրանց հետևից գնացին՝ կողոպտելու նրանց: Երբ հասան մոտակա ձորը, որպեսզի այնտեղ կողոպտեն նրանց, հանկարծ հեղեղատից դուրս եկավ կոկորդիլոս և հարձակվեց ավազակների վրա: Իսկ ծերերը թույլ չտվեցին, այլ ձայն արձակելով՝ ազատեցին նրանց և բարիով հատուցեցին չարին: Եվ ավազակները, ապշած նրանց անհիշաչարության վրա, գոհացան Աստծուց, որ նրանց կողմից օգնություն ստացան:

17. Ծերն ասաց. «Եթե մեկը քեզ անարգի, դու օրհնի՛ր նրան. եթե ընդունի, երկուսիդ համար էլ բարի է, եթե չընդունի, դու կստանաս Աստծո օրհնությունը, իսկ նա՝ անեծքը»:

18. Ծերն ասաց. «Ալեքսանդրոս անունով մի պատրիարք կար՝ սաստիկ ողորմած և ներողամիտ, քաղցրաբարո, բարերար և մարդասեր: Սա մի երիտասարդ դպիր ուներ, որ նրանից ոսկի գողացավ և վախենալով, թե կբացահայտվի՝ փախավ-գնաց Թեբայիդա: Գնալիս հանդիպեց լեռան բարբարոս մարդկանց, և ինչ որ ուներ՝ տարան նրանից, իսկ իրեն գերի վերցրին ներքին անապատում: Երբ լսեց այս երանելի պատրիարքը, փնտրեց գերուն և գնեց նրան իննսուն դահեկանով: Եվ երբ այնտեղ եկավ գերին, այնչափ ողորմություն և մարդասիրություն ցույց տվեց նրան, որ շատերն ասացին. «Ոչինչ այնքան շահավետ չէ, որքան այս պատրիարքի դեմ մեղանչելը»: Այդչափ անմեղ ու անհիշաչար էր նա՝ Քրիստոսի շնորհով»:

ԳԼՈՒԽ ԺԷ

ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՋԸ ՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մեր սուրբ հայր Պափնոտիոսն ասաց. «Բոլոր առաքինություններից մեծագույնը սերն է: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր սիրելիների համար (Հովհ. ԺԵ 13): Եթե մեկն իր մերձավորից տրտմեցուցիչ խոսք լսի, բայց չարությամբ չբռնկվի թեև կարող է պատասխան տալ և ատելության արժանանալ, այդպիսին իր անձը դնում է իր սիրելիի համար»:

2. Ոմն եղբայր հարցրեց հայր Պիմենին և ասաց. «Արժե՞, որ ես բնակվեմ միաբանների մոտ»: Ծերն ասաց. «Ով կենա միաբանների մոտ, պարտավոր է բոլորին որպես մի մարդ տեսնել, պահել իր լեզուն ու աչքը, և ապա հանգիստ կգտնի անհոգությամբ»:

3. Ոմանք պատմեցին, թե հայր Պիմենն ու նրա եղբայրները առագաստապարաններ էին գործում և չէին կարողանում վաճառել. և նեղվում էին, որովհետև փող չէին գտնում կտավ գնելու համար, իսկ նրանց մտերիմ մեկը ոմն հավատացյալ վաճառականի պատմեց իրավիճակը: Հայր Պիմենը ոչ մեկից ոչինչ չէր կամենում վերցնել՝ խաղաղությունը պահելու համար: Իսկ վաճառականը, կամենալով օժանդակել ծերերի գործին, պատճառաբանեց, թե իրեն պետք են առագաստապարանները և ուղտերը բերելով՝ վերցրեց պարանները: Եվ այն եղբայրը, գալով Պիմենի մոտ և լսելով, թե ինչ արեց վաճառականը, գովեց նրան և ասաց. «Իսկապես, հա՛յր, կարիքը չունենալով՝ նա վերցրեց մեզնից առագաստապարանները»: Հայր Պիմենը լսելով, թե առանց անհրաժեշտության վերցրեց վաճառականը պարանները, իր եղբորն ասաց. «Ե՛կ ուղտ վարձի՛ր և այստեղ բե՛ր պարանները: Եթե չբերես, Պիմենն այստեղ ձեզ հետ չի բնակվի, որովհետև ես չեմ զրկի մարդուն, որին դրանք պետք չեն, ինչո՞ւ նա վնաս կրի ինձ համար, որ ես օգուտ ստանամ»: Եվ նրա եղբայրը գնաց և մեծ դժվարությամբ բերեց պարանները՝ կասկածելով, թե գուցե ծերը գնա իրենց մոտից:

Եվ երբ Պիմենը տեսավ պարանները, խնդություն ապրեց, կարծես թե մեծ գանձ էր գտել:

4. Միմյանց դրացի երկու եղբայրներ կային, և նրանցից մեկը թաքցնում էր թե փողը, թե հացը և գցում էր իր դրացու ամանի մեջ: Սա չգիտեր և զարմանում էր, թե որտեղից է իրենն այդքան ավելանում: Մի օր հանկարծակի տեսավ նրան այդպես անելիս և սկսեց վիճել նրա հետ և ասել. «Քո մարմնավորի համար գողացար իմ հոգևորը»: Եվ նրանից պահանջեց խոստանալ, որ այլևս այդ բանը չի անի, և այդպես ներեց նրան:

5. Հայր Պափնոտիոսի մասին ասում էին, թե երբեք գինի չէր խմում: Մի անգամ ճանապարհ գնալիս հանդիպեց ավազակների, որոնք գինի էին խմում, իսկ ավազակապետը ճանաչում էր նրան և գիտեր, որ նա գինի չի խմում: Եվ տեսնելով, որ նա շատ է հոգնած, լցրեց բաժակը գինով և սուսերը ձեռքին՝ ծերին ասաց. «Եթե չխմես, կսպանեմ քեզ»: Եվ ծերը գիտենալով, որ Աստծո պատվիրանն է կատարում (Մատթ. Ե 41)*, վերցրեց և խմեց գինին: Եվ ավազակապետն ընկավ նրա առաջ և ասաց. «Թողությո՛ւն տուր, հա՛յր, որ քեզ նեղացրի»: Եվ ծերն ասաց. «Հավատում եմ Աստծուն, որ այս բաժակի համար քեզ ողորմություն կանի հավիտյանս՝ այստեղ և հանդերձյալում»: Ավազակապետն ասաց նրան. «Հավատում եմ Աստծուն, որ ես սրանից հետո ոչ մեկին չարիք չեմ պատճառի»: Եվ ծերը շահեց բոլոր ավազակներին՝ ավազակապետով հանդերձ, քանզի իր կամքը չկատարեց, այլ շահեց նրանց՝ հանուն Աստծո:*

6. Հայր Աղաթոնի մասին պատմում էին, թե ջանում էր կատարել բոլոր պատվիրանները: Եթե անցնում էր գետը, ինքն էր շտապում և վերցնում մակույկի դեկը, իսկ երբ եղբայրները գնում էին նրա մոտ, աղոթքի սեղանն էր պատրաստում, քանզի լի էր Աստծո սիրով:

7. Սկյութիայում մեծն հայրերից մեկը ո՛չ հաց էր ճաշակում, ո՛չ գինի էր ըմպում: Եվ ծերերը հավաքելով՝ եկան Իսիդորոսի եկեղեցին, և երբ այնտեղ չգտան երեցին, այն մեծն ծերը, հուսալով նրա մոտ ունեցած իր համարձակությանը և իմանալով, թե ինչպիսի ծանր կրոնավորության ու տքնության մեջ են ծերերը, ներս մտնելով՝ բերեց անհրաժեշտ ուտելիքներ և մի փոքր գինի, և նախ ինքը սկսեց ուտել և ըմպել: Եվ ծերերը սքանչացան, թե ինչպես հանուն Աստծո մերժեց իր կամքը, որպեսզի ծերերին մխիթարություն պարգևի:

8. Հայրերից մեկն ասաց. «Եթե մեկը քեզանից որևէ իր խնդրի, և չտաս նրան քո կամքով, այլ նա բռնությամբ տանի, թո՛ղ քո խորհուրդները հաշտ լինեն դրա հետ, որպես թե տվել ես՝ համաձայն գրվածի. «Եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկո՛ւ էլ գնա» (Մատթ. Ե 41)*, այսինքն՝ եթե մեկը քեզանից որևէ իր խնդրի, սրտա՛նց տուր նրան»:*

9. Ոմն ծեր եկավ Հայր Ղովտի մոտ՝ Արսենիոսի եղեգնուտի փոքր անտառը, և խուց խնդրեց իր համար, իսկ նա տվեց նրան: Ծերը հիվանդոտ էր, և հայր Ղովտը խնամում էր նրան: Երբ ոմանք գալիս էին Ղովտին տեսնելու, նրանց ուղարկում էր նաև հիվանդին տեսնելու: Եվ նա նրանց հետ խոսում էր Որոգինեսի գրություններից, իսկ հայր Ղովտը նեղվում էր ու ասում. «Միգուցե հայրերը կարծեն, թե մենք այդպիսին ենք»: Եվ դուրս հանեց հայր Ղովտը նրան խցից և երկյուղում էր պատվիրանի պատճառով (Մատթ. ԻԵ 36)*, ապա վեր կենալով եկավ հայր Արսենի մոտ և պատմեց նրան ծերի մասին: Հայր Արսենն ասաց նրան. «Մի՛ հալածիր նրան, այլ ասա՛. «Ահա Աստծո շնորհները. կե՛ր, խմի՛ր և հագնվի՛ր՝ ինչպես կկամենաս, միայն թե այդ խոսքը մի՛ խոսիր»: Եվ եթե կամենա՝ կուղղվի, ապա թե ոչ՝ աղաչի՛ր, որ գնա այդտեղից, և դու պատճառ չես լինի»: Եվ հայր Ղովտը այդպես էլ արեց: Իսկ ծերը, լսելով այս, չէր կամենում ուղղվել, այլ աղաչում էր նրան և ասում. «Հանուն Տիրոջ՝ արձակի՛ր ինձ, որ գնամ այստեղից, ես անապատում էլ չեմ կարողանում համբերել»: Եվ գնաց այնտեղից:*

10. Ոմն ծեր ասաց. «Եթե տեսնես՝ մեկը ջուրն է ընկել, և դու կարող ես օգնել նրան, մեկնի՛ր նրան քո գավազանը և դուրս հանի՛ր նրան, իսկ եթե չես կարող դուրս քաշել, քո գավազանը թո՛ղ նրան, իսկ եթե քո ձեռքը տաս նրան և չկարողանաս հանել, ինքը քեզ կքաշի ցած, և երկուսդ էլ կխեղդվեք»: Այս ասում էր նրանց համար, ովքեր իրենց կարողությունից վեր գործի մեջ են գցում իրենց և գլորվում են: Յուրաքանչյուր ոք ըստ իր կարողության չափի պետք է օգտակար լինի եղբորը, որովհետև Աստված մարդուց չի պահանջում պատվիրանի կատարում՝ առավել, քան իր կարողությունն է:

11. Մի անգամ հայր Իլարիոնը Ասորիքից եկավ հայր Անտոնի մոտ՝ լեռը, և հայր Անտոնը նրան ասաց. «Բարի՛ եկար, աստվածակի՛ր, որ ծագում ես առավոտյան»: Եվ հայր Իլարիոնը պատասխանեց նրան. «Խաղաղությո՛ւն քեզ, այո՛ւնդ լուսո, որ աշխարհն ես լուսավորում»:

12. Ծերն ասաց. «Եթե մեկը որևէ բան խնդրի մյուսից, և նույն պահին տվողը մտադրվի տալ նրան խնդրածից ավելին՝ դա Աստծո շնորհն է խնդրողի համար: Լինում է նաև, որ մեկը խնդրում է, մյուսը, ունենալով Աստծո շնորհը, կամովին չի տալիս նրան, և դա նրան վարձ է համարվում, որովհետև հարկադրված տվեց»:

13. Հայր Անտոնն ասաց. «Քո մերձավորից է կյանքը և մահը. եթե շահենք մեր եղբորը, Աստծուն ենք շահում, իսկ եթե գայթակղենք մեր եղբորը, Աստծու դեմ ենք մեղանչում»:

14. Ոմն եղբայր սպասավորում էր հայրերից մեկին: Եղավ այնպես, որ ծերը հիվանդացավ, անդամալուծվեց, և նրա մարմնից թարախ էր հոսում, և հոտ էր գալիս: Եվ խորհուրդները եղբորն ասում էին՝ փախիր, քանի որ չես կարող հոգով այդ տանել: Իսկ եղբայրը, վերցնելով սափորը, հիվանդի լվացված ջուրը լցրեց նրա մեջ, և երբ ծարավում էր, դրանից էր ըմպում: Նրա խորհուրդներն սկսեցին այս անգամ էլ ասել նրան. «Մի՛ փախիր և մի՛ էլ ըմպիր այդ գարշահոտությունից»: Իսկ եղբայրը տքնում էր և ժուժկալում՝ ըմպելով լվացաջրերն ու սպասավորելով ծերին: Եվ Աստված տեսնելով եղբոր համբերությունը՝ լվացաջուրը վերածեց մաքուր ջրի, իսկ ծերին բժշկեց ցավերից:

15. Հայր Թեոդորոսն ասաց. «Մինչ երիտասարդ էի և բնակվում էի անապատում, գնացի հացատուն, որ ինձ համար հաց թխեմ և այնտեղ գտա մի եղբոր, որ իր համար հաց էր թխում և իրեն օգնող մեկը չուներ: Իսկ ես իմը թողեցի և օգնեցի եղբորը, և երբ ավարտեցի, եկավ մեկ այլ եղբայր, նրան ևս օգնեցի և թխեցի նրա հացը, և դարձյալ եկավ երրորդը, նույնը արեցի և նրա համար: Յուրաքանչյուրին օգնում էի, ով գալիս էր, և թխեցի վաթսուն փուռ, վերջում թխեցի իմ երկու փուռը և գնացի»:

16. Մի անգամ աբբա Աղաթոնը եկավ քաղաք՝ վաճառելու իր անոթները և ճանապարհին հանդիպեց մի տառապյալ անդամալույծի: Եվ սա հարցրեց. «Ո՞ւր ես գնում»: Աբբան նրան ասաց. «Քաղաք, որ վաճառեմ անոթներս»: Ասաց. «Բարի՛ եղիր և տա՛ր ինձ քեզ հետ»: Եվ շալակելով՝ բերեց նրան քաղաք: Դարձյալ ասաց. «Որտեղ վաճառելու ես անոթներդ՝ ինձ այնտեղ իջեցրու»: Եվ աբբան այդպես արեց: Եվ երբ վաճառում էր անոթները, անդամալույծը նրան հարցրեց. «Քանիսո՞վ վաճառեցիր դա»: Աբբան ասաց. «Այսքանով»: Անդամալույծն ասաց. «Գնի՛ր ինձ համար մեղրաբլիթ»: Եվ նա գնեց: Եվ նա ասաց. «Իսկ սա՝ ինչքանո՞վ»: Պատասխանեց. «Այսքանով»: Եվ

դարձյալ ասաց. «Գնի՛ր ինձ համար այսինչ բանը»: Եվ նա գնեց: Եվ երբ վաճառեց բոլոր անոթները և կամենում էր դուրս գալ քաղաքից, անդամալույծն ասաց. «Գնո՞ւմ ես»: Աբբան ասաց. «Այո՛»: Եվ նա ասաց. «Բարի՛ եղիր, տա՛ր ինձ մինչև այնտեղ, որտեղ գտար ինձ»: Եվ շալակեց-տարավ նրան մինչև իր տեղը: Եվ նա ասաց. «Օրհնված ես դու, Աղաթո՛ն, երկնքի և երկրի Տիրոջից»: Աբբան բարձրացրեց աչքերը և այլևս չտեսավ նրան, քանզի անդամալույծը Տիրոջ հրեշտակն էր և եկել էր փորձելու նրան:

17. Ոմն եղբոր մասին ասում էին, թե զամբյուղներ էր հյուսում և նրանց վրա կանթեր էր դնում: Լսեց, որ իր դրացին ասաց. «Ի՞նչ անեմ, քանի որ վաճառելու ժամանակն է, իսկ ես կանթեր չունեմ իմ զամբյուղների համար»: Եվ եղբայրը գնաց, հանեց իր զամբյուղների վրայից կանթերը, տվեց դրացի եղբորը և ասաց. «Սրանք ավելորդ են, դի՛ր քո զամբյուղների վրա»: Այդպիսով ավարտին հասցրեց իր եղբոր գործը՝ թողնելով իրենը:

18. Մի կրոնավոր հաց թխեց և կամեցավ հացի կանչել մի ծերի, որն իրենից հեռու էր տասը մղոն: Բայց հետո ասաց. «Նրան հոգնություն չպատճառեմ»: Եվ վերցնելով հացը՝ տարավ նրան և ճանապարհին ոտքը խփեց քարին, և շատ արյուն հոսեց: Եվ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ տրտմիր, քանզի ամեն քայլափոխի համար քո վարձը կստանաս, և ես այս արյունը կտանեմ Աստծո առաջ որպես մեծագույն ընծա»: Եվ երբ եկավ ծերի մոտ, պատմեց նրան այս դեպքը, և դա հայտնի դարձավ: Մեկ ուրիշը, նախանձախնդրությունից շարժված, ինքն էլ կամեցավ նույնն անել և հաց տանել ծերին: Սրանք հանդիպեցին միմյանց, և առաջինն ասաց. «Ինչո՞ւ խլեցիր իմ գանձը»: Եվ մյուսն ասաց. «Որքա՞ն է նեղ ճանապարհն ու դուռը, որ միայն դու ես կամենում մտնել»: Եվ Տիրոջ հրեշտակը երևալով նրանց՝ ասաց. «Ձեր վեճը անուշ բուրմունք է Աստծո առաջ»:

18. Մի եղբայր մեղքի մեջ ընկավ և պատմելով ոմն ծերի՝ ասաց. «Մեղանչեցի և չեմ կարող ապաշխարել, վերադառնա՞մ կրկին աշխարհ»: Եվ ծերն աղաչեց և ասաց. «Միայն թե դու մնա կարգիդ մեջ, ես կապաշխարեմ քեզ հետ»: Եվ ինքը վերցրեց եղբոր մեղքը և ապաշխարեց եղբոր համար, և տասն օր հետո Աստված թողություն տվեց եղբորը՝ ծերի տքնության և սիրո համար:

19. Մի անգամ հայր Պամբոն եղբայրների հետ գնում էր Եգիպտոսի կողմերը և ճանապարհին աշխարհականների տեսավ, որ նստած էին, և

ասաց նրանց. «Եկե՛ք ողջույն տվեք մենակյացներին, որպեսզի օրհնվեք, որովհետև նրանք հանապազ Աստծո հետ են խոսում, և նրանց բերանները սուրբ են»:

20. Ոմն ծերի մասին ասում էին, թե հիվանդացավ և կամենում էր փոքր-ինչ թարմ հաց ճաշակել: Ճգնավոր եղբայրներից մեկը լսելով այդ՝ վերցրեց իր մաղախը, դրեց չոր հացը, գնաց Եգիպտոս և փոխելով հացը՝ բերեց ծերին: Տեսնելով այն դեռ տաք՝ զարմացան, իսկ ծերը չէր ուզում ճաշակել՝ ասելով. «Դա եղբոր արյունն է»: Եվ ծերերն աղաչեցին նրան՝ ասելով. «Ի սեր Աստծո՝ կե՛ր այդ հացը, որ իզուր չլինի եղբոր զոհողությունը»: Եվ այդ թախանձանքներին տեղի տալով՝ ճաշակեց:

21. Ոմն ծեր աղաչեց մի երիտասարդի՝ բնակվել իր հետ, և երիտասարդն ասաց նրան. «Մի շաբաթ հետո կգամ»: Գնաց և ուշացավ: Հետո եկավ ծերի մոտ և փորձեց նրան՝ ասելով. «Պոռնկության մեջ ընկա, հա՛յր»: Եվ ծերն ասաց. «Ապաշխարողների համար հույս կա, որդյա՛կ, քո մեղքերի կեսը կվերցնեմ ինձ վրա, և միասին կապաշխարենք»: Եվ երիտասարդն ասաց. «Այժմ գիտեմ, որ կարող ենք բնակվել միասին»: Եվ մնացին մի խցի մեջ, և մինչ այսօր այն խուցն Սկյութիայում կոչվում է երկու եղբայրների խուց:

22. Հայրերից մեկը խնդրեց Աստծուն՝ ցույց տալ իրեն բոլոր վախճանված կրոնավորներին, և Աստված արժանացրեց նրան տեսնելու ամենքին փառավոր տեղում, բայց Անտոնը նրանց հետ չէր: Եվ հարցրեց. «Ո՞ւր է Անտոնը»: Եվ նրան ասացին. «Նրա տեղը Աստծո առաջ է»:

23. Ծերերից մեկն ասաց. «Սկզբի ժամանակներում, երբ նորեկներ էին գալիս անապատ, դևերը սաստիկ պատերազմում էին նրանց հետ, և ծերերից կատարյալները գալիս էին մխիթարելու նրանց: Եվ ոմանց գտնում էին դևերի հարվածներից կաղ դարձած, ոմանց՝ մի կողմն անդամալուծված, ոմանց էլ՝ մեջքները փայտացած, և վերցնելով բերում էին նրանց եկեղեցի և իսկույն բժշկում էին նրանց»:

25. Մի անգամ եղբայրները գնացին Դիոդկիոս լեռը՝ ճգնելու և լրացուցիչ սովորեցին առագաստապարան գործել և վարձկանությամբ հյուսում էին, սակայն, քանի որ արհեստավորներ չէին, ոչ ոք նրանց գործելու պատվեր չէր տալիս: Գնաց մի անգամ նրանց մոտ ծերերից մեկը և ասաց նրանց. «Ինչո՞ւ չեք գործում»: Իսկ եղբայրները, քանի որ երկյուղած էին, պատասխանեցին և ասացին. «Քանի որ շատ վատ

ենք գործում, դրա համար էլ մեզ ձեռագործի պատվեր չեն տալիս»: Իսկ ծերը գիտեր Աստծով գործարար մեկին և նրանց ասաց. «Գնացե՛ք այսինչ ծերի մոտ, և նա ձեզ գործ կտա»: Նրանք խնդությամբ գնացին, և նա նրանց գործ տվեց: Իսկ եղբայրները նրան ասացին. «Լավ չենք գործում»: Եվ ծերն ասաց. «Հավատում եմ Աստծուն, որ ուրիշներն էլ կկերակրվեն ձեր ձեռագործով»: Եվ սիրով առլեցուն՝ նրանց հոժարեցրեց գործել: Ահա իսկապես բռնությամբ են հափշտակում երկնքի Արքայությունը (Մատթ. ԺԱ 12)*:*

26. Մեկը կարասի բերեց մի ծերի համար և ասաց. «Վերցրո՛ւ քո կարիքների համար, քանզի ծերացել ես»: Եվ ծերն իրոք տկարացած էր: Սակայն ասաց. «Դու յոթանասուն տարի անց եկար ինձնից վերցնելու իմ դարմանողին: Վաթսուն տարի է՝ այս տկարության մեջ եմ, բայց ոչ մի բանի կարոտ չմնացի՝ Աստծո խնամարկության և դարմանման շնորհիվ»: Եվ չվերցրեց կարասին:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

27. Հայր Անտոնիոսն ասաց. «Ես Աստծուց չեմ երկնչում, այլ սիրում եմ նրան, քանզի սերը վանում է երկյուղը»:

28. Հայր Աղաթոնն ասաց. «Ես երբեք ոխը սիրտս՝ քուն չմտա, ոչ էլ թողեցի՝ մեկը քուն մտնի՝ ինձնից նեղացած»: Նույն ինքն ասաց. «Ես երբեք սեր չտվեցի, որովհետև ոչ թե սեր տալ և ստանալն էր ինձ սեր թվում կամ թե շահ էի համարում եղբոր համար, այլ եղբոր կյանքն է ինձ համար կարևոր և սիրելի»:

29. Հայր Հովսեփն ասաց. «Եղբայրներն ասում են, թե մենք չգիտենք սիրո գործերը, որովհետև մեկը մտավ հայր Աղաթոնի մոտ և տեսնելով մկրատը՝ գողեց այն, իսկ ծերը նրան չթողեց դուրս գալ՝ մինչև իր հետ չտարավ մկրատը»:

30. Հայր Աղաթոնն ասաց. «Եթե հնարավոր լիներ գտնել մի անկյալ բորոտի, իմ մարմինը կտայի նրան և սիրահոժար նրանը կվերցնեի ինձ». ահա սա՛ է սիրո չափը:

31. Նրա մասին ասում էին, թե գնաց մի անգամ քաղաք՝ վաճառելու իր ձեռագործը և գտավ փողոցում ընկած մի հիվանդ օտարականի, որ խնամակալ չուներ: Ծերը, տուն վարձելով, տարավ նրան այնտեղ

և չորս ամիս սպասավորեց նրան իր ծախսով, մինչև առողջացավ հիվանդը, և հետո միայն ծերը վերադարձավ իր սենյակը:

32. Հայր Ամոնաս Նիտրացին գնաց հայր Անտոնի մոտ, և երբ հասավ այնտեղ, ասաց նրան. «Ես անհամեմատ շատ եմ ճգնել, և ինչպե՞ս է, որ քո՛ անունը հռչակվեց մարդկանց մեջ»: Անտոնիոսն ասաց. «Որովհետև՝ ես Աստծուն անհամեմատ շատ եմ սիրում, քան դու»:

33. Խցերում մի ծեր կար՝ Ապողոն անունով. և եթե մեկը գալիս էր նրան գործի տանելու, ուրախությամբ գնում էր նրա հետ և այսպես էր ասում. «Այսօր պատրաստ եմ Աստծու հետ մշակություն անել՝ հանուն իմ հոգու, որովհետև այս է Աստծու սերը»:

34. Հայր Եսայիասն ասաց. «Սերն ուսուցանում է աննվազ գոհություն մատուցել Տիրոջը, և մեր գոհությունն ընդունում է Աստված. սա է հանգստության և անախտության նշանը»:

35. Մի անգամ Սկյութայից ելան հայր Հովհաննես Կարճիկն ու մի քանիսը՝ նրա հետ, և գիշերը ճանապարհին մոլորվեց նրանց առաջնորդ եղբայրը: Եղբայրներն ասացին հայր Հովհաննեսին. «Ի՞նչ անենք, քանի որ մեր առաջնորդը մոլորվել է»: Ծերն ասաց. «Եթե հանդիմանենք նրան, կամաչի և կտրտմի, այլ ես ինձ տկար ձևացնեմ, իբր չեմ կարող գնալ, և մնանք այստեղ մինչև առավոտ»: Այդպես արեցին և մնացին մինչև առավոտ՝ չգայթակղեցնելով եղբորը:

36. Հայր Հովհաննես Կարճահասակն ասաց. «Տունը, օրինակ, չի կարելի շինել վերևից ներքև, այլ հիմքից պետք է սկսել: Այդպես և հոգու տան շինության հիմքը ընկերոջ սերն է, քանզի նախ նրան ես շահում, որովհետև եղբոր սիրուց են կախված Քրիստոսի բոլոր պատվիրանները»:

37. Ասում էր հայր Պետրեն հայր Մակարի մասին, թե գնաց մի անգամ մի մենակյացի մոտ և տեսավ՝ հիվանդ է: Եվ երբ կերակուր չգտավ նրա տանը, հարցրեց նրան և ասաց. «Ի՞նչ կճաշակես, կամ ի՞նչ բերեմ քեզ»: Իսկ նա մեղրաբլիթ խնդրեց: Եվ գնաց ծերն Ալեքսանդրիա՝ մեղրաբլիթ բերելու նրան, և ոչ ոքի չասաց այդ մասին:

38. Եգիպտոսում մի ծեր կար՝ մեծ պատվի ու անվան տեր: Երբ Սկյութայից հայր Պիմենն այնտեղ գնաց, այդ երկրի մարդիկ, թողած այն ծերին, եկան հայր Պիմենի մոտ: Իսկ հայր Պիմենը, խիստ նեղված այս բանից, իր եղբայրներին ասաց. «Ի՞նչ անենք այն մեծ ծերին, քանզի ցավ պատճառեցին մեզ մարդիկ, որ թողեցին ծերին և դիմեցին

մեզ, իսկ այժմ ինչո՞վ կարող ենք բուժել ծերի հոգին»: Եվ եղբորն ասաց. «Պատրաստե՛ք մեզ կերակուր և առե՛ք ամանով գինի, գնա՛նք նրա մոտ և ճաշակե՛նք նրա հետ, գուցե այսպիսով բուժենք նրա սիրտը»: Վերցրին կերակուրն ու գինու կուժը իրենց հետ և գնացին ծերի մոտ: Եվ երբ բախեցին դուռը, դուրս եկավ նրա աշակերտը և ասաց. «Որտեղի՞ց եք»: Ասացին նրան. «Ասա՛ ծերին, թե Պիմենն է եկել, որ օրհնվի քեզանից»: Եվ նա գնաց և ասաց ծերին, իսկ նա պատվիրեց ասել. «Գնացե՛ք, որովհետև ես զբաղված եմ»: Իսկ նրանք տոթին կանգնած՝ ասացին. «Եթե ծերին չտեսնենք, չենք գնա այստեղից»: Երբ ծերը տեսավ նրանց խոնարհությունն ու համբերությունը, զղջաց և բացեց դուռը նրանց առաջ, և նրանք ներս մտնելով՝ սիրով ճաշակեցին միասին: Եվ երբ ուտում էին, ծերն ասաց. «Իսկապես, ոչ միայն լսել էի ձեր մասին, այլ առավել ևս տեսա ձեր գործերը, սերն ու խոնարհությունը»: Եվ սիրելիներ եղան միմյանց:

39. Հայր Պիմենն ասաց. «Եթե Հովհաննես Կարճիկի մոտ էր գնում որևէ եղբայր, նա գործով էր ցուցաբերում նրա հանդեպ առաքյալի սերը, որ ասում է՝ սերը երկայնամիտ է և քաղցր (Ա Կորնթ. ԺԳ 4)*, քանզի ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար* (Հովհ. 15 13)*, և այն, որ իր մասին չար խոսք լսի, փոխարենը ինքը չար խոսք չասի: Եվ դարձյալ այն, որ եթե ինչ-որ բանից զրկվի, փոխարենը չզրկի»:*

40. Հայր Պիմենի մասին ասում էին, թե բնակվում էր իր երկու աշակերտ եղբայրների հետ, իսկ երիտասարդներից կրտսերը նեղում էր նրանց: Հայր Պիմենը մյուս եղբորն ասաց. «Ինչպե՞ս վարվենք այս երիտասարդի հետ, որ մեզ նեղում է. ե՛կ գնանք այստեղից»: Եվ ելանգնացին՝ նրան թողնելով այնտեղ: Եվ երբ սա տեսավ, որ ուշացան, դուրս ելավ և տեսավ հեռվից, որ գնում էին. սկսեց կանչել և հետևներից գնալ: Պիմենը եղբորն ասաց. «Սպասենք երիտասարդին»: Եվ երբ նա հասավ նրանց, ասաց. «Դուք ո՞ւր եք գնում և ինձ մենակ եք թողնում»: Ծերն ասաց. «Որովհետև դու մեզ տրտմեցնում ես, թողեցինք քեզ և գնում ենք»: Եվ նա ասաց. «Գնանք միասին՝ ուր որ կամենաք»: Երբ տեսավ ծերը նրա անմեղությունը, մյուս եղբորն ասաց. «Ե՛կ դառնանք մեր սենյակը, որովհետև սա իր կամքով չի անում, այլ դևն է նրան անել տալիս, որ մեզ տրտմեցնի»: Եվ վերադարձան իրենց տուն:

41. Գնացին մի անգամ սարակինոսները Հայր Սիսոյի խուցը և կողոպտեցին նրան և նրա եղբորը, իսկ ծերերը երկուսով դուրս եկան անապատ, որպեսզի ուտելու մի բան գտնեն: Եվ մինչ գնում էին՝

գտավ ծերը ուղտի չորացած թրիք, փշրեց այն և նրա մեջ գտավ գարու երկու հատիկ, որից մեկը կերավ, մյուսը բռան մեջ պահեց: Եկավ եղբայրը և տեսնելով նրան ծամելիս՝ ասաց. «Ա՞յս է քո սերը, եղբա՛յր, որ ուտելու բան գտար, մենակ ճաշակեցիր և ինձ չկանչեցիր»: «Ես չար բան չեմ արել, ահա քո բաժինը պահել եմ բռիս մեջ, որովհետև երկու հատիկ գտա միայն»: Եղբայրն ասաց. «Ի՞նչ պետք էր դրանից բաժին հանել, սակայն դա ճշմարիտ սիրո արգասիք է»:

42. Հայր Սիլովանեի մասին ասում էին, թե նստեց իր սենյակում բազում օրեր և ուտելիք չուներ, բացի փոքր քանակությամբ սիսեռից: Նա մաղ էր գործում: Եվ ահա մեկը եկավ Եգիպտոսից, որն իր հետ հացով բարձած ավանակ էր բերել: Բախեց դուռը և բեռը արձակելով՝ տվեց ծերին, և նա, վերցնելով հացը, օրհնեց և փառավորեց Աստծուն և բեռնելով ավանակն իր գործած մաղերով՝ ճանապարհեց նրան:

43. Մեկը պատմում էր, թե մի մագիստրոս կար՝ երիտասարդ և հույժ գեղեցիկ տեսքով, որը թագավորի գործերով շրջում էր: Սա մի քաղաքում ուներ մի հավատարիմ բարեկամ՝ ազնիվ ու հարուստ, քանի որ երևելի մարդկանցից էր: Եվ երբ մագիստրոսը գալիս էր այնտեղ, մեծամեծ պատիվներով հյուրընկալում էր նրան իր տանը, իսկ ինքն ու իր կինը սպասավորում էին նրան: Եվ չարի ազդմամբ նրա կինը ցանկությամբ բռնկվեց մագիստրոսի նկատմամբ, իսկ նրա ամուսինն անտեղյակ էր: Կինն ամաչում էր, դրա համար էլ ոչինչ ցույց չտվեց, սակայն նրա սրտում բորբոքվում էր տոփանքի հուրը: Եվ երբ մագիստրոսը գնաց իր ճանապարհը, կինը ցանկության սաստկությունից հյուծվեց և ընդարմացած անկողին ընկավ: Իսկ նրա ամուսինը, հրավիրելով ճարտար բժիշկների, ցույց էր տալիս, իսկ նրանք զննելով ասացին. «Սա մարմնական ցավեր չունի, իսկ թե հոգու մեջ ինչ ծածուկ հիվանդություն ունի՝ չգիտենք»: Եվ ամուսինը, կողքը նստելով, երկար հեկեկանքներով աղաչում էր նրան ասել, թե ինչու է վշտանում: Իսկ նա երկնչում և ամաչում էր ասել, բայց հետո խոստովանեց և ասաց. «Իմացի՛ր, տե՛ր իմ, որ դու քո անբիծ սրտով այստեղ ես հավաքում միշտ գեղեցիկ տեսքով երիտասարդների, իսկ ես կին եմ՝ տկար բնությամբ և երիտասարդ հասակով, և խաթարվում եմ նրանց տեսքից: Ահա այն մագիստրոսի նկատմամբ իմ սիրտը մտան չար խորհուրդներ, որից կիզվելով՝ հիվանդացա և ահա ընդարմացած եմ մահճի մեջ»: Երբ լսեց այս բանն ամուսինը, լռեց: Իսկ օրեր անց կրկին այնտեղ եկավ այն մագիստրոսը, և ամուսինն ընդառաջ գնաց նրան: Եվ երբ տեսավ նրան, ասաց. «Դու գիտես, տե՛ր իմ իշխան, թե ինչպես էի

սիրում քեզ, և ես ու իմ կինը սեղանակից եղանք քեզ: Ահա իմ կնոջ սիրտն ընկավ քո հանդեպ տռփանքի չար խորհուրդը, և ահա անկար պառկած է»: Իսկ մագիստրոսը, երբ լսեց այս, սաստիկ տրտմեց դրա համար, քանի որ ինքն անպարտ էր այդ խորհուրդից և նրան ասաց. «Մի՛ տրտմիր, Աստված բազումողորմ է»: Եվ գնաց երիտասարդը, խուզեց իր մազերը, մորուքն ու հոնքերը, խոցոտելով վիրավորեց իր երեսն ու ամբողջ գլուխը և մի բորոտ ծերունի դարձավ այն գեղեցիկ երիտասարդը: Ապա հագնելով ժահահոտ և աղտեղի քուրձ՝ գնաց այդ տունը, ուր պառկած էր կինը, և ամուսինն էլ նստած էր կողքին: Նա, բացելով իր գլուխը, ցույց տվեց իր խոցոտված ու այլանդակված դեմքը և ասաց. «Ահա, մա՛յր, այսպես արեց ինձ Աստված»: Եվ երբ տեսավ կինը երիտասարդի անպատմելի գեղեցկությունն այդպես այլանդակված, տգեղացած և սևացած, սաստիկ զարմացավ: Եվ Աստված, տեսնելով երիտասարդի գործն ու խոնարհությունը, վերցրեց կնոջ սրտից պատերազմը, և նա իսկույն առողջացավ: Եվ մագիստրոսն առանձին ասաց նրա ամուսնուն. «Ահա Աստծո շնորհներով ողջացավ քո կինը, այսուհետև իմ երեսը չի տեսնի»: Ահա այս է անձը դնելը սիրելիի համար, և բարության դիմաց բարությամբ հատուցելը:

44. Երկու եղբայրներ կալանավորվեցին հավատի համար և վկայեցին Քրիստոսին, ապա տանջանքների ենթարկվեցին և գցվեցին բանտ, սակայն նրանք միմյանց հանդեպ սրտմտություն ունեին: Եվ երբ փակվեցին բանտի մեջ, նրանցից մեկը ծունկի եկավ մյուսի առջև և ասաց. «Առավոտյան մենք վախճանվելու ենք. թողնենք մեր թշնամությունն ու նախանձը»: Իսկ մյուսը չկամեցավ անել այդ: Եվ երկրորդ օրը դարձյալ տարան տանջելու, և նա, որ չթողեց ոխն ու չհաշտվեց եղբոր հետ, առաջին իսկ տանջանքից հաղթվեց և հավատից ընկավ: Իշխանը նրան ասաց. «Ինչո՞ւ երեկ ինձ չլսեցիր և այսքան հարվածների ենթարկվեցիր»: Իսկ նա պատասխանեց. «Այն պատճառով, որ չհաշտվեցի եղբորս հետ և ոխ պահեցի նրա հանդեպ՝ պակասեցի Աստծո օժանդակող շնորհից և հավատից ընկա»: Իսկ այն մյուս եղբայրը, որ հաշտությամբ խոնարհվեց, արժանի եղավ արյան վկայության և մահվան՝ հանուն Քրիստոսի: Ահա, ով չի սիրում իր եղբորը և նենգությամբ է ապրում, Աստված հեռացնում է նրանից իր օժանդակության շնորհը:

45. Մի քաղաքում ապրում էր ոմն Մեկրիստոն, և մի ոմն քաղաքացի կնքելով՝ պահ տվեց նրան հինգ հարյուր դահեկան և ասաց. «Պահի՛ր այս և քիչ առ քիչ կտաս ինձ՝ որքան որ հարկավոր լինի»: Իսկ այդ պահին, երբ պահ էր տալիս, այնտեղ ոչ ոք չկար, այլ միայն

քաղաքի իշխաններից մեկը հեռվից տեսնում և լսում էր, թե ինչ էր ասում, երբ հանձնում էր գանձը, իսկ նրանք նրան չէին տեսնում: Երբ մի քանի օր անց ոսկու տիրոջը ինչ-որ բան պետք եղավ, Մեկրիստոնեին ասաց. «Տո՛ւր իմ ոսկուց քսան դահեկան, քանզի պետք է ինձ»: Իսկ նա, քանի որ վստահ էր, որ ոչ ոք չի տեսել, վկա էլ չունի, ուրացավ և ասաց. «Ո՞ր ոսկուց տամ, որովհետև ո՛չ գիտեմ, ո՛չ երբևէ լսել եմ քեզնից, ո՛չ էլ դու երբևէ որևէ բան ես տվել ինձ»: Եվ այս մարդը ոչինչ չկարողացավ անել: Սակայն երբ տրտմած դուրս եկավ այնտեղից, պատահեց նրան այն իշխանը և նրան ասաց. «Ինչո՞ւ ես այդպես տրտմած»: Եվ այս մարդը նրան ասաց իր տրտմության պատճառը: Իշխանը նրան ասաց. «Ստո՞ւյդ տվել ես նրան գանձը»: Եվ նա ասաց. «Արդարև տվել եմ»: Իսկ իշխանն ասաց. «Նրան կասես՝ ե՛կ երդվիր և հավատացրո՛ւ ինձ սուրբ Անդրեաս եկեղեցում, և դա բավական է ինձ» (որովհետև այնտեղ մոտ էր սուրբ Անդրեաս առաքյալի տաճարը): Գնաց այս մարդը և ասաց այդ, և երբ գանձը վերցնողը մտավ տաճար, որպեսզի երդվի, այդժամ իշխանը գանձատուին ասաց. «Ես ինչ որ կանեմ՝ չերկնչես և ոչինչ չասես»: Եվ իշխանը, մերկ մտնելով տաճար, սկսեց մոլեգնել՝ ինչպես դիվահար, գոռում էր ու մոլեգնում սաստիկ, ապա բռնելով այդ մարդուն՝ մինչ նա կամենում էր երդվել, բազմության առաջ գոչեց և ասաց. «Սուրբ Անդրեասն ասում է. “Տո՛ւր սրան իր գանձը”»: Իսկ Մեկրիստոնեն սոսկալով վախեցավ հույժ, քանի որ այն իշխանը գորեղ մարդ էր: Եվ խոստովանելով ասաց. «Ես եմ պահել գանձը և հիմա կտամ, բա՛ց թող»: Եվ նա բաց թողեց: Այնժամ բերելով այն՝ տվեց տիրոջը: Եվ դիվահարն ասաց ոսկու տիրոջը. «Դի՛ր վեց դահեկան սեղանի վրա. սուրբ Անդրեասն է ասում»: Եվ նա ուրախությամբ դրեց և վերցնելով իր փողը՝ գնաց: Իսկ իշխանը, հագնելով իր հանդերձները, պայծառացած շրջում էր քաղաքում, և երբ եկավ այնտեղ, ուր այն Մեկրիստոնեն էր, վերջինս սկսեց վախեցած նայել նրան: Իսկ իշխանն ասաց. «Հավատա՛ ինձ, ես, Աստծո շնորհոք, դիվահար չեմ, այլ՝ երբ նա ոսկին քեզ էր տալիս, ես իմ աչքով տեսա: Եվ մինչ դու ուրանում էիր և կամենում էիր երդվել, հնարեցի այդ, որպեսզի ինձ չասեիր. «Դո՛ւ ես միակ սուտ վկան», նաև արեցի այդ, որպեսզի չկորչեր քո հոգին և ոչ էլ նրա ունեցվածքը՝ անիրավությամբ»: Ահա իշխանը գործով ցույց տվեց, թե ինչ է՝ անձը դնել ընկերոջ համար, քանզի այլոց շահի համար մոռացավ իր պատվականությունը ի փառս Աստծո:

46. Սաստիկ ճգնավոր և աստվածասեր մի կրոնավոր անապատում մենակյաց մի բարեկամ ուներ: Վախճանվեց այդ մենակյացը, և կրոնավոր բարեկամը, մտնելով նրա խուցը, հիսուն դահեկան գտավ և սկսեց տրտմել ու լաց լինել և մտավախություն ուներ, թե միգուցե այդ ոսկու պատճառով մենակյացը պակասի Աստծո ողորմությունից: Եվ երբ սաստիկ աղաչեց Տիրոջը դրա համար, տեսավ Տիրոջ հրեշտակին, որ նրան ասաց. «Ինչո՞ւ ես ցավագնում ու հոգոցներ քաշում այն մենակյացի համար, քանզի ով մարդասիրություն է կամենում՝ թող Աստծուն հանձնի նրան, քանզի եթե բոլորը կատարյալ լինեին, ինչպե՞ս կերևար Ատծո մարդասիրությունը»: Սրանով հավատաց եղբայրը, թե այն մենակյացին ողորմություն արեց Աստված, և գոհացավ Աստծուց:

48. Ոմն ծեր իր աշակերտին ուղարկեց Եգիպտոս՝ ուղտ բերելու, որպեսզի իրենց կողովները տանեն Եգիպտոս: Եվ երբ եղբայրը բերեց ուղտը Եգիպտոսից, նրան տեսավ մեկ ուրիշ եղբայր և ասաց. «Եթե ես տեղյակ լինեի քո գնալու մասին, ես էլ կգայի քեզ հետ, որովհետև մեզ էլ էր ուղտ պետք»: Եղբայրը գնաց և պատմեց ծերին: Ծերն ասաց. «Տանելով ուղտը՝ կտաս նրան և կասես. "Մեր գործը պատրաստ չէ, տա՛ր քո գործածը վաճառի՛ր և երբ գաս, ուղտը բե՛ր քեզ հետ, որպեսզի մենք էլ տանենք մեր ձեռագործը"»: Տարավ եղբայրը և ուղտը տվեց նրան, և նա, բարձելով իր կողովները, տարավ Եգիպտոս և վաճառելուց հետո բերեց իր հետ ուղտը, տվեց ծերին և ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, որովհետև քո մեծ սերը վերցրեց ինձնից իմ պտուղը, քանզի վերցրեց իմ անհամ սովորությունը, և բարի համը հաստատեց»:

49. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Հա՛յր, արդարև, ինչո՞ւ շատերը բազում ճգնություններով տքնում են և չեն ստանում շնորհներ, ինչպես ստանում էին առաջին հայրերը»: Ծերն ասաց. «Այն ժամանակ սեր ունեին նրանք և սիրով շահում էին ընկերոջը և վեր բարձրացնում, իսկ այժմ սերը ցամաքել է. ցած են գլորում ընկերոջը, դրա համար էլ շնորհներ չունեն»:

50. Ծերն ասաց. «Երբեք իմ սիրտը չփնտրեց իմ շահի համար մի գործ, որից վնասվեր իմ եղբայրը, որովհետև եղբոր շահը իմ հոգու պտուղն եմ համարել ես»:

51. Ոմն ծեր ճգնավոր հանդիպեց մի դիվահարի, որը կարկամած էր և չէր կարողանում խոսել: Նա, Աստծո սիրո վրա վստահ լինելով,

աղոթքով խնդրեց Տիրոջից, որպեսզի դևը գա իր վրա, և ազատվի դիվահարը: Լսեց Աստված նրա աղոթքը, և եկավ դևը նրա վրա, և ծերը սաստիկ նեղվեց դևից: Այնժամ ավելացրեց սաստիկ պահքերը, աղոթքներն ու ճգնությունները: Եվ այն սիրո համար, որ ուներ առ Աստված և ընկերոջ հանդեպ, որոշ ժամանակ անց դևը հալածվեց նրանից:

52. Երկու ծերեր միասին էին բնակվում բազում տարիներ և երբեք չէին վիճել իրար հետ: Մի օր մեկը մյուսին ասաց. «Ե՛կ մենք էլ կռվենք իրար հետ, ինչպես մարդիկ»: Եվ մյուսն ասաց. «Չգիտեմ, թե ինչպես է լինում կռիվը»: Այս մեկն ասաց. «Ահա ես մեջտեղում մի աղյուս կդնեմ և կասեմ. «Սա իմն է», իսկ դու կասես. «Ո՛չ, իմն է»: Սրանից կսկսվի խառնակություն և կռիվ»: Եվ վերցնելով կավե աղյուսը՝ դրեց մեջտեղում, և մեկն ասաց. «Սա իմն է», երկրորդն ասաց. «Ո՛չ, իմն է», և առաջինը բարկությամբ ասաց. «Ո՛չ, իմն է», իսկ երկրորդը հեզությամբ ասաց. «Եթե քոնն է, վերցրո՛ւ և գնա՛ այստեղից»: Եվ չկարողացան կռվել միմյանց հետ, այդպես հեռացան և չխռովեցին իրարից, որովհետև ընկերասիրություն էին սերտել և խաղաղություն սովորել, և օրինակի համար անգամ չկարողացան կռվել, գեթ ճանաչելու համար՝ ինչպես է լինում և ինչպիսին է այն:

53. Հայրերից մեկը գնաց քաղաք՝ վաճառելու իր ձեռագործը, և մի մերկ աղքատի տեսավ, և իր պատմուճանը հանելով՝ հագցրեց նրան, իսկ աղքատը տարավ այն և վաճառեց: Երբ ծերը իմացավ իր հանդերձը վաճառելու մասին, տրտմեց ու զղջաց տալու համար: Իսկ գիշերը տեսիլքում հայտնվեց նրան Քրիստոս՝ հագին նրա պատմուճանը, և ասաց ծերին. «Մի՛ տրտմիր, ահա ես եմ հագել քո պատմուճանը, որ տվեցիր ինձ»: Եվ ծերը մխիթարված՝ փառավորեց Աստծուն:

53. Ծերն ասաց. «Մենք պարտավոր ենք մեր անձից չբաժանել մեր ընկերոջը, խնդալ նրա խնդությամբ և տրտմել նրա տրտմությամբ և մեր անձի պես հոգ տանել նրա մասին, իսկ եթե տկարանա, պետք է վարվել ըստ գրվածի. «Մի մարմին ենք ի Քրիստոս» (Հռոմ. ԺԲ 5), *և «Հավատացյալների բազմությունը մեկ սիրտ ու մեկ հոգի էր, և նրանցից ոչ ոք չէր ասում, թե իր ինչքերն իրենն են, այլ ամեն ինչ նրանց համար հասարակաց էր»* (Գործք Դ 32):

54. Երկու եղբայրներ բնակվում էին միասին, մեկը արգելական (մեկուսացած) էր, իսկ մյուսը սպասարկում էր իրենց երկուսին: Մի անգամ եղբայրը տարավ իրենց երկուսի ձեռագործը վաճառելու և գումարը խիստ սակավ բերեց: Բազում անգամ այդպես արեց, մինչև որ

արգելական եղբայրը խորհեց և ասաց. «Կա՛մ չարաչար վատնում է, կա՛մ մեկը նրան խաբում է վաճառելիս. գնամ տեսնեմ այդ»: Եվ նրա հետևից ծածուկ դուրս գալով՝ սկսեց հետևել նրան: Իսկ այն եղբայրը գնաց վաճառեց ձեռագործը ու դարձավ մտավ մի տեղ, ուր չպետք է մտներ: Եվ երբ տեսան միմյանց, արգելականը ձևացրեց, թե ինքն էլ է այդպես արել: Երբ քաղաքից դուրս եկան միասին, արգելականը, ընկնելով եղբոր ոտքերը, թողություն էր խնդրում. բազմիցս այդպես արեց և եղբոր հանցանքներն իր վրա վերցրեց: Եվ երբ պատրաստվում էր դուրս գալու այս աշխարհից, իր ընկած եղբորն ասաց. «Ես անպարտ էի այն մեղքերից, որոնց համար քեզնից թողություն էի խնդրում, այլ նրա համար էի անում, որպեսզի թերևս դու ապաշխարես: Արդ, աղոթի՛ր ինձ համար և որքան կարող ես՝ փախի՛ր մեղքերից, որովհետև դու էլ ես շուտով ելնելու»: Իսկ եղբայրը ավելացրեց ճգնությունները և հաճելի եղավ Աստծուն:

55. Երկու կրոնավոր եղբայրներ կային, որոնցից մեկը հանեց կրոնավորի զգեստներն ու դարձավ աշխարհական, իսկ մյուսը աղաչեց չանել այդ հանուն իրեն: Եվ մի եղբոր համբերությամբ Տերը գթաց նաև մյուսին, և դարձան իրենց սենյակը և ավելացրին ճգնությունները:

56. Ոմն եղբայր հարցրեց ծերին և ասաց. «Ինչո՞ւ, հա՛յր, երբ կատարում եմ իմ աղոթքները, լինում է՝ երբեմն ունենում եմ և երբեմն էլ չեմ ունենում մտքիս մեջ հոժարություն և զղջում»: Ծերն ասաց. «Հապա որտեղի՞ց երևա, թե մարդն ունի Աստծո սերը, քանզի Աստծո սերը զղջում է բերում»:

57. Ոմն եղբայր գնաց Եգիպտոս՝ վուշ գնելու, և գնեց այն մի այրի կնոջից. և երբ այն այրին վուշը տալիս էր եղբորը, հոգոց հանեց և ասաց նրան. «Աստվա՛ծ ուղարկեց քեզ, եղբա՛յր, կերակրելու իմ որբերին»: Երբ եղբայրը լսեց այս, ուրախացավ և վուշի գնի կրկնակին տվեց, և գոհացավ Աստծուց՝ որբերին իրեն հայտնելու համար, որոնց՝ իբրև կարոտյալ եղբայրների, արժանացավ տալու անհրաժեշտը:

58. Մի ծաղրածու ճանապարհ էր գնում և հանդիպեց մի կրոնավորի, որը ճգնում էր իր սենյակում և հիվանդ էր: Ծաղրածուն սկսեց աղոթել ծերի համար և ասել. «Աստվա՛ծ, ողորմի՛ր այս աղքատ ու խոնարհ մարդուն», քանզի չէր ճանաչում, թե ով է: Եվ երբ նույն ճանապարհով ետ եկավ նորից, դարձյալ այդպես արեց, և իսկույն առողջացավ ծերը: Իսկ իր մոտ եկողներին ծերն այսպես էր ասում. «Ովքեր

գան ծերերի մոտ և աղոթեն նրանց համար և ասեն՝ Տերը պահի ձեզ հանուն մեզ՝ մեղավորներիս, նրանք մեծամեծ վարձք կստանան»:

59. Ծերն ասաց. «Սիրո դիմաց ընկերոջից սեր մի՛ պահանջիր, որովհետև խռովվում է մարդը, եթե ոչ ոք փոխարենը չի տալիս, այլ դու սե՛ր ցուցաբերիր ընկերոջդ հանդեպ և կհանդարտվես, և այսպես քո ընկերոջը կձգես դեպի քո սերը»:

60. Դարձյալ ասաց. «Եղբոր հանդեպ սերը նվազում է, երբ նրա նկատմամբ տարակույսների խորհուրդներ են գալիս, և դրանց տեղի են տալիս, և երկրորդ՝ երբ հավատում են իրենց սրտին և հավանություն են տալիս իրենց կամքին: Եթե կամենում ես ամեն բանում օգնական ունենալ Քրիստոսին, մի՛ վստահի՛ր քո մտածումներին, այլ ողջ հոգով փութա՛ խոնարհվել քո եղբոր առաջ և հեռացրո՛ւ քեզնից քո կամքը. այսպես կապրես Քրիստոսի զորությամբ»:

61. Դարձյալ ասաց. «Սերը, որ ըստ Աստծո է, չափազանց բարձր է՝ միմյանց հանդեպ տածած բնական սիրուց, որը մարմնավոր-ազգակցականն է, քանզի Աստված Ինքը սեր է կոչվում»:

ԳԼՈՒԽ ԺԸ

ՀՈԳԵՏԵՍ ԵՎ ՍՐԱՆՁԵԼԱԳՈՐԾ ՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Եղբայրներից ոմանք նեղություն ունեցան իրենց տեղում և կամենալով թողնել տեղը՝ գնացին հայր Ամոնի մոտ, իսկ ծերն այդ ժամանակ նավակի մեջ էր: Տեսնելով նրանց գետի եզերքով ընթանալիս՝ նավորդներին ասաց. «Հանե՛ք ինձ ցամաք»: Եվ կանչելով նրանց իր մոտ՝ ասաց. «Ես եմ Ամոնը, որի մոտ դուք կամենում եք գնալ»: Եվ մխիթարելով նրանց՝ դարձրեց նորից իրենց տեղը, որովհետև նրանց հոգուն վնասող ոչինչ չկար, այլ զուտ մարդկային նեղություն էր:

2. Ասաց մի անգամ հայր Դանիելը. «Հայր Արսենը մեզ պատմեց, թե ծերերից մեկը, որ նստած էր իր սենյակում, ձայն լսեց, որ ասում էր. «Դո՛ւրս եկ, և քեզ ցույց կտամ մարդկանց գործերը»: Երբ դուրս եկավ, տարավ նրան մի տեղ և ցույց տվեց մի մարդու, որ ջրհորից ջուր էր հանում և լցնում մի լայն փողրակի մեջ, բայց ջուրը դարձյալ իջնում էր ջրհորը: Եվ փոքր-ինչ առաջ տանելով՝ ցույց տվեց նրան մի եթովպացու, որ փայտ էր կտրում և մեծ բեռ կապում և փորձելով շալակել՝ չէր կարողանում շարժել, սակայն դարձյալ փայտեր էր կտրում և բեռի վրա ավելացնում: Բազում անգամ այդպես անելով՝ մեծացրեց բեռը: Եվ փոքր-ինչ ևս առաջ շարժելով՝ հասան մի քաղաքի դռան մոտ: Ահա երկու մարդ էին գալիս՝ ձիեր հեծած, որոնք մի փայտ էին լայնակի բռնել և կամենում էին քաղաք մտնել, բայց չէին կարողանում, որովհետև փայտը հորիզոնական էին բռնել: Սրանք չթեքեցին փայտը մեկի կամ մյուսի կողմը, և երբ եկավ սրանց հետևից, տեսավ, որ երկուսն էլ մնացին քաղաքից դուրս: Եվ ձայնն ասաց. “Արդ, սրանք, որ տեսնում ես, ամբարտավանության լուծն են կրում և չխոնարհվեցին, որ իրենց ուղղեն և Քրիստոսի խոնարհ ճանապարհով ընթանան, դրա համար էլ դուրս մնացին Աստծո արքայությունից: Եվ այն մարդը, որ փայտ էր կտրում, բազում մեղքերի մեջ էր ընկած, որը փոխանակ ապաշխարելու՝ նորերն էր գործում և մեղքերի վրա մեղքեր ավելացնում: Իսկ որ

ջուր էր հանում, այն մարդն էր, որ ողորմություն էր անում, սակայն մնացած բոլոր բաներում անիրավություն էր գործում և չար գործերի պատճառով կորցնում էր և այն սակավ բարին: Արդ, մարդ պետք է միշտ արթուն լինի իր գործի մեջ, որպեսզի ապարդյուն չաշխատի՞»:

3. Սկյութիայի ծերերից մեկը գնաց Տերենութ, որտեղ նրա վանքերն էին, և ճգնավորական տքնություններից հանգստացնելու համար մի փոքր գինի բերեցին նրան: Այդ ժամանակ ոմանք, լսած լինելով նրա մասին, մի դիվահարի բերեցին նրա մոտ, իսկ դևն սկսեց անարգել ծերին և ասաց. «Այս հարբեցողի մո՞տ եք ինձ բերել»: Ծերը չէր կամենում հանել նրան, բայց լուտանքների պատճառով ասաց նրան. «Հավատում եմ Քրիստոսին, որ նախքան այս բաժակն ըմպելս, դուրս կելնես դրանից»: Եվ երբ ծերն սկսեց ըմպել գինին, դևն աղաղակեց և ասաց. «Այրո՛ւմ ես, այրո՛ւմ ես ինձ»: Եվ դեռ գինին չէր ըմպել մինչև վերջ՝ Քրիստոսի շնորհով դևը դուրս եկավ նրանից:

4. Ոմն կույս իր կյանքի բոլոր օրերն ապրեց իր մոր մոտ, և նրա վարքն այսպիսին էր. ողջ օրը պահեցողություն էր անում և կտավ գործում: Եվ սա արժանի եղավ ընդունելու Աստծո շնորհները: Նեղոս գետի մոտ երկու գյուղեր կային, և ուզում էին պատերազմել միմյանց հետ ջրաբաշխության համար, և շատերն էին մեռնում այս ջրաբաշխության պատճառով: Մի գյուղն ավելի հզոր էր, քան մյուսը, և կամեցան երկու գյուղերը իրար դեմ դուրս գալ՝ սրանք այս կողմից, նրանք՝ այն՝ կոտորելու միմյանց: Երանելի կույսին հայտնվեց Աստծո հրեշտակը և ասաց նրան. «Կանչե՛լ տուր երկու գյուղերի ծերերին և ասա՛ նրանց. "Ելե՛ք նրանց դեմ և պայքարե՛ք, որպեսզի բոլորը չկոտորվեն"»: Երբ լսեցին այդ գյուղի ծերերը, մեծ երկյուղով ահաբեկվեցին, ընկան կույսի ոտքերը, աղաչեցին նրան և ասացին. «Մենք չենք համարձակվում նրանց դեմ կանգնել, քանզի գիտենք նրանց կատաղությունը, փրկի՛ր մեզ մահվանից և բարի անուն կունենաս ողջ Եգիպտոսում»: Իսկ սուրբ կույսը չկամեցավ ընդառաջ դուրս գալ նրանց, այլ բարձրացավ իր տան կտուրը, կանգնեց աղոթքի առ Աստված և ասաց. «Տե՛ր ամենակալ, լսի՛ր քո աղախնի ձայնը, թո՛ղ ելնեն իմ աղերսանքները Քո առջև, Քո զորությամբ ե՛տ դարձրու նրանց այնտեղից, որտեղից դեռ գալիս են»: Եվ մինչ սուրբ կույսը աղոթքի էր կանգնած, գյուղից երեք մղոն հեռավորության վրա նրանք կանգ առան, ինչպես որ խնդրեց սուրբ կույսն Աստծուց: Եվ հայտնություն եղավ նրանց և ասվեց. «Կույսի աղոթքները արգելեցին ձեզ»: Եվ հավատացին Աստծուն և եկան ու մկրտվեցին սուրբ կույսի ձեռքով:

5. Հայրերից մեկն ասաց. «Նստել էին մի անգամ ծերերը և օգտակար բաներ էին խոսում, և նրանց մեջ մի տեսանող կար: Մինչ խոսում էին, նա տեսավ հրեշտակների, որ շարժվում էին նրանց վրա. և երբ օտար բաներ էին խոսում, հրեշտակները հեռանում էին, և գալիս էին դևերը՝ տիղմի մեջ թավալվող խոզերի նման, և նրանց մեջ էին ընկնում, իսկ երբ օգտակար բաներ էին խոսում, դարձյալ գալիս էին հրեշտակները և գովում էին նրանց»:

6. Ոմն ծերի մասին ասում էին, թե ցերեկն ու գիշերը նույնն էր նրա խցում. գիշերը նույնպես գործում ու կարդում էր՝ ինչպես որ ցերեկը»:

7. Ոմն ծեր եկավ Հովհաննես Կարճահասակի խուցը և տեսավ, որ նա ննջում է, իսկ նրա կողքին հրեշտակ կար և հով էր անում նրա երեսին. և երբ այս տեսավ ծերը, դուրս եկավ այնտեղից: Իսկ երբ Հովհաննեսը զարթնեց քնից, իր աշակերտին ասաց. «Եկա՞վ մեկն այստեղ, մինչ ես քնած էի»: Եվ աշակերտն ասաց. «Այսինչ ծերը եկավ»: Եվ հայր Հովհաննեսն իմացավ, որ ծերը իր հոգևոր չափին էր, որ տեսավ հրեշտակին:

8. Մեկ այլ սկյութացի ծեր բնակվում էր Պայեսիոսի լեռանը, և նրա մոտ Պաղեստինից մի դիվահարի բերեցին, և նա բժշկեց, իսկ նա նրան մատուցեց քուրձով լի ոսկի, սակայն ծերը չէր կամենում ընդունել, բայց տեսնելով, որ նա տրտմեց, դատարկեց քուրձը և ոսկին տվեց նրան և միայն դատարկ քուրձը վերցնելով իրեն՝ ասաց նրան. «Ոսկին տո՛ւր աղքատներին»: Քուրձն անթև զգեստ դարձրեց և երկար ժամանակ հագնում էր այն, որպեսզի հարվեր մարմինը, քանզի խիստ կոշտ էր այն:

9. Ոմն եղբայր մի անգամ գնաց Սկյութիա՝ հայր Արսենի խուղը, և պատուհանից ներս նայելով՝ տեսավ ծերին՝ ամբողջովին իբրև հուր. այս եղբայրն արժանի էր տեսնելու: Եվ երբ բախեց դուռը, ծերը դուրս եկավ և տեսավ եղբորը զարհուրած և նրան ասաց. «Մի՞թե երկար ժամանակ է՝ այստեղ ես կամ ի՞նչ տեսար»: Իսկ եղբայրն ասաց՝ ո՛չ: Եվ նրա հետ խոսելով՝ արձակեց նրան, իսկ ինքը կրկին ներս մտավ՝ իր գործին:

10. Եգիպտոսի հայրերը ասում էին հայր Եղիային հայր Աղաթոնի մասին, թե մեծ այր է: Ասաց նրանց ծերը. «Այս սերնդի համեմատությամբ՝ մեծ եղբայր է, իսկ ըստ նախկիններին՝ ես մի մարդու եմ տեսել Սկյութիայում, որ կարող էր արեգակը կանգնեցնել երկնքում, ինչպես Նավեի որդի Հեսուն (Հեսու Ժ 12-14)*»: Եվ այս լսելով՝ զարմացան և փառավորեցին Աստծուն:*

11. Եգիպտոսի ներքին կողմերում բնակվող հայրերից մեկը պատմեց հայր Պողոսի մասին, որ բնակվում էր Թեբայիդում. «Բռնում էր եղջյուրավոր օձերին և կարիճներին և մեջտեղից կտրում էր նրանց: Եվ եղբայրներն ընկան նրա առջև և ասացին. «Ասա՛ մեզ, ի՞նչ գործ կատարեցիր, որ այդպիսի շնորհ ստացար»: Եվ նա ասաց. «Թողությո՛ւն տվեք ինձ, հայրե՛ր, քանզի եթե մեկը սրբություն ձեռք բերի, ամեն ինչ նրան կհնազանդվի, ինչպես Ադամին՝ դրախտում, նախքան Աստծո պատվիրանների զանցառումը»:

12. Հայր Ամոնի մասին ոմանք ասում էին, թե արքայօձիկ է սպանել, քանի որ գնաց անապատի ջրհորից ջուր հանելու և տեսնելով արքայօձիկին՝ գետնին ընկավ և ասաց. «Տե՛ր, կա՛մ ես մեռնեմ, կա՛մ սա», և իսկույն արքայօձիկը պատռվեց Քրիստոսի զորությունից»:

13. Ոմանք հայր Անտոնի մասին ասում էին, թե նա հոգետես էր, սակայն ոչին չէր կամենում հայտնել մարդկանց, քանզի ինչ լինում էր աշխարհում և ինչ որ պիտի լիներ՝ հայտնի էր:

14. Հայր Դանիելը պատմեց Եգիպտոսի ներքին կողմերում բնակվող մի մեծն ծերի մասին, որը պարզամտորեն ասում էր, թե՝ Մելքիսեդեկն ինքն է Աստծո որդին: Եվ պատմեցին այդ Ալեքսանդրիայի Կյուրեղ հայրապետին, և նա մարդ ուղարկեց՝ կանչելու նրան իր մոտ, և քանի որ գիտեր ծերի մասին, թե հրաշագործ է և ինչ էլ որ խնդրի Աստծուց՝ կհայտնի նրան, այլ անմեղությամբ է այդ ասում, իր իմաստությամբ բռնեց նրան և ասաց. «Հա՛յր, աղաչում եմ քեզ. իմ խորհուրդներն ինձ ասում են՝ Մելքիսեդեկն ինքն է Աստծո որդին, իսկ իմ մյուս խորհուրդներն ասում են՝ ո՛չ, այլ մարդ է՝ Աստծո քահանայապետ: Ուստի, քանի որ այսպիսի երկմտության մեջ եմ, քեզ կանչել եմ, որ աղաչես Աստծուն, և Նա հայտնի քեզ, թե ով է Մելքիսեդեկը»: Եվ ծերը, լսելով այս խնդրանքը և վստահ լինելով, որ ինչ էլ խնդրի Աստծուց՝ Աստված կտա իրեն, համարձակորեն ասաց. «Տո՛ւր ինձ երեք օր, որ հարցնեմ Աստծուն դրա մասին և ասեմ քեզ, թե ով է»: Եվ գնալով՝ սկսեց պաղատել Աստծու առաջ: Եվ գիտեր երանելի Կյուրեղ Ալեքսանդրացին, որ մեծ է այն ծերը, և Աստված կհայտնի նրան: Եվ երեք օր հետո ծերը գալով՝ ասաց. «Մելքիսեդեկը մարդ է»: Եպիսկոպոսապետը հարցրեց. «Որտեղի՞ց գիտես»: Եվ նա ասաց. «Աստված հայտնաբար ցույց տվեց ինձ բոլոր հայրապետներին այսպես. ամեն մեկին անցկացրեց իմ առջևով՝ Ադամից մինչև Մելքիսեդեկ, և հրեշտակն ինձ ասաց՝ սա է Մելքիսեդեկը»: Եվ ծերը վերադառնալով՝ քարոզեց, որ Մելքիսեդեկը մարդ է: Եվ հույժ ուրախացավ երանելի Կյուրեղ Ալեքսանդրացին»:

15. Հայր Բեսարիոնի աշակերտ հայր Դուլասը պատմում էր, թե՝ մի անգամ գնում էինք ծովեզերքով, խիստ ծարավ զգացի և հայր Բեսարիոնին ասացի. «Սաստիկ ծարավ եմ, հա՛յր»: Եվ ծերն աղոթելով՝ ինձ ասաց. «Ծովից ջո՛ւր վերցրու և խմի՛ր»: Ես գնացի և խմեցի. ջուրը քաղցրահամ էր, ուստի կուժը լցրի ջրով՝ մտածելով, թե գուցե նորից ծարավեմ: Եվ ծերը տեսնելով այդ՝ ասաց. «Ինչո՞ւ լցրիր կուժը»: Ես նրան ասացի. «Թողությո՛ւն տուր ինձ, հա՛յր, միգուցե դարձյալ ծարավեմ»: Եվ ծերն ինձ ասաց. «Մի՛ արա այդ, քանզի Աստված, որ այստեղ է, նաև ամենուրեք է և այնտեղ էլ կարող է քեզ ջուր տալ»: Մի անգամ նա պետք է անցներ Նեղոս գետը և աղոթքի կանգնեց, ապա սկսեց քայլել ջրի վրայով: Եվ ես ապշած ընկա նրա առաջ և ասացի. «Ինչպե՞ս էիր զգում քո ոտքերը, երբ գնում էիր ջրերի վրայով»: Եվ ծերն ասաց. «Մինչև կոճերս կարծում էի, թե ջուր է, իսկ ոտքերիցս ներքև՝ հաստատուն երկիր»: Դարձյալ՝ մինչ գնում էինք ծերերից մեկի մոտ, արևն արդեն մոտ էր մայր մտնելուն, և ծերն աղոթք անելով ասաց. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, թող արեգակը կանգնի իր տեղում, մինչև ժամանենք քո ծառայի մոտ»: Եվ այդպես եղավ: Դարձյալ մի անգամ գնացի նրա խուցը, որպեսզի խոսեմ նրա հետ և տեսա, որ աղոթքի էր կանգնած՝ ձեռքերը դեպի երկինք պարզած, և այդպես մնաց տասնչորս օր ու տասնչորս գիշեր: Եվ դրանից հետո գալով ինձ մոտ՝ ասաց. «Ե՛կ ինձ հետ»: Եվ երբ գնում էինք, ճանապարհին ծարավեցի ու ասացի նրան. «Հա՛յր, ծարավ եմ»: Եվ ծերը, վերցնելով իր մախաղը, հեռացավ ինձնից մի քարընկեցի չափ, աղոթք արեց և այն բերեց ինձ ջրով լի, և ես խմեցի: Եվ դարձյալ գնացինք, մինչև որ լույսով հասանք հայր Հովհաննեսի մոտ, և ողջունելով միմյանց՝ աղոթք արեցին և նստեցին խոսելու իրար հետ այն տեսիլքի մասին, որ տեսել էր: Եվ ասաց հայր Բեսարիոն, թե հրաման եկավ Տիրոջից, որ ամենուրեք ավերվեն մեհյանները. և այդպես եղավ:

16. Հայրերից մեկն ուղարկեց իր աշակերտին՝ ջուր բերելու. ջրհորը շատ հեռու էր նրանց խուղից: Նա մոռացավ վերցնել պարանը և գալով ջրհորի մոտ՝ տեսավ, որ պարանը չի բերել, աղոթք անելով՝ աղաղակեց և ասաց. «Ջրհո՛ր, իմ հայրն ասաց՝ լցրո՛ւ սափորը ջրով»: Եվ իսկույն ջրհորը վեր բարձրացավ և լցնելով եղբոր սափորը ջրով՝ վերստին իջավ իր տեղը:

17. Ոմն եղբայր, բարկությամբ լցված իր եղբոր հանդեպ, աղոթքով խնդրում էր Աստծուն, որ եղբորը ների, սակայն փորձությունն ավելի

էր ուժգնանում, և այդ պահին տեսավ, որ ծուխ է դուրս գալիս իր բերանից: Եվ երբ այդ եղավ, դադարեց բարկությունը:

18. Թեբայեցիների ծերերից մեկն ասաց. «Ես կուռքերի տաճարապետի որդին էի, և երբ փոքր էի, նստում էի տաճարում և բազմիցս տեսնում էի իմ հորը՝ կուռքերին պատարագներ ու զոհեր մատուցելիս: Մի անգամ ծածուկ եկա նրա հետևից և տեսա՝ սատանան նստած, իսկ նրա առաջ՝ նրա ողջ զորքը, և ահա մի իշխան առաջ գալով՝ երկրպագեց նրան, իսկ սատանան հարցրեց նրան. «Որտեղի՞ց ես գալիս»: Եվ նա ասաց. «Այսինչ երկրում կռիվ գցեցի, խռովություններ և արյունահեղություններ հրահրեցի և այժմ եկա քեզ պատմելու»: Սատանան հարցրեց. «Եվ որքա՞ն ժամանակում կատարեցիր այդ»: Ասաց. «Երեք օրում»: Հրամայեց գանահարել նրան և ասաց. «Այդքան ժամանակում ա՞յդ է քո վաստակը»: Եվ ահա մեկ ուրիշը եկավ և երկրպագեց: Հարցրեց. «Դո՞ւ որտեղից ես գալիս»: Եվ դևն ասաց. «Ծովում էի. մրրիկներ և ալեկոծություններ հարուցեցի, նավերը խորտակեցի և բազում մարդկանց սպանելով՝ եկա պատմելու քեզ»: Հարցրեց նրան. «Որքա՞ն ժամանակում արեցիր այդ»: Եվ դևն ասաց. «Քսան օրում»: Նրան ևս հրամայեց գանահարել և ասաց. «Ինչո՞ւ այդքան օրում միայն դա ես արել»: Ահա երրորդը ևս եկավ և երկրպագեց նրան, և սրան նույնպես հարցրեց. «Դո՞ւ որտեղից ես գալիս»: Եվ դևն ասաց. «Այսինչ քաղաքում հարսանիք կար, հարս ու փեսայի ձեռքով մեծ արյունահեղություն և պատերազմ սարքեցի, և եկա քեզ պատմելու»: Եվ նա ասաց. «Քանի՞ օրում արեցիր այդ»: Ասաց. «Տասն օրում»: Եվ հրամայեց սաստիկ ծեծել նրան: Սրանցից հետո եկավ մեկ ուրիշը և երկրպագեց նրան: Նրան էլ հարցրեց. «Որտեղի՞ց ես գալիս»: Եվ նա ասաց. «Այս քառասուն տարի է՝ անապատում էի, մարտնչում էի մի կրոնավորի դեմ, և այս գիշեր գցեցի նրան պոռնկության մեջ»: Այս լսելով՝ վեր կենալով համբուրեց նրան և վերցնելով իր պսակը՝ դրեց նրա գլխին և իր աթոռի կողքը նստեցնելով՝ ասաց. «Որովհետև այս գործը կարողացար գլուխ բերել, արժանի ես սրան»: Այս տեսա և ասացի. «Այսպե՜ս մեծ է կրոնավորների դասը, և հաճությամբ Աստծո, որ կամեցավ իմ փրկությունը, դուրս ելա և դարձա մենակյաց»:

19. Անտիոքի պատրիարք՝ երանելի Եփրեմի մասին հայրերից մեկը պատմում էր, թե խիստ նախանձախնդիր էր ուղղափառ հավատի պահպանման հարցում: Նա մի օր լսեց Հերապոլսի կողմերից ոմն սյունակյացի մասին, թե Սևերիոսի աղանդից է և հաղորդակից է նրան: Եվ գնալով նրա մոտ՝ ուզեց համոզել նրան և վարդապետությամբ աղա-

չեց սյունակյացին կանգնել առաքելական աթոռի առաջ և երկրպագությամբ հաղորդվել կաթողիկե եկեղեցում: Եվ սյունակյացն ասաց. «Ես ձեզ հետ չեմ հաղորդվի»: Եվ սուրբ Եփրեմն ասաց. «Ինչպե՞ս կարող ես համոզել ինքդ քեզ, եթե մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ եկեղեցին մաքուր և ազատ է հերձվածական ամեն տեսակ աղտեղություններից»: Եվ սյունակյացն ասաց. «Կրակ վառենք, ո՛վ տե՛ր իմ պատրիարք, և միասին մտնենք նրա մեջ, ով անվնաս դուրս գա՝ նա է ուղղափառ և նրան պետք է հետևել»: Սա ասում էր պատրիարքին վախեցնելու համար: Իսկ սուրբ Եփրեմն ասաց սյունակյացին. «Պարտավոր ես, որդյա՛կ, որպես քո հորը՝ լսել ինձ և ավելին չպահանջել ինձանից, որովհետև այն, ինչ դու պահանջում ես՝ վեր է մեր տկարությունից, սակայն հույս ունեմ առ Որդին Աստծո, որ հանուն քո հոգու փրկության՝ այդ էլ կարող եմ անել»: Այնժամ երանելին իր մոտ եղողներին ասաց. «Փայտե՛ր ածեք այստեղ»: Երբ մեծաքանակ փայտ բերեցին, պատրիարքը պատվիրեց վառել այն առջև և սյունակյացին ասաց. «Ահա, խնդրեմ, իջի՛ր, և ըստ քո դատի՝ մտնենք միասին»: Իսկ նա, զարմացած պատրիարքի հաստատուն հույսի վրա առ Աստված, չկամեցավ իջնել: Պատրիարքը նրան ասաց. «Քեզանից դուրս չեկա՞վ այս պայմանը, իսկ ինչո՞ւ չես կամենում կատարել»: Ապա հանելով եպիսկոպոսական ուրարը, որ հագին էր, և մոտիկ գալով կրակին՝ աղոթքի կանգնեց և ասաց. «Աստված՝ Հա՛յր մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Քո Միածնի, որ մարմնացավ անարատ Կույս Մարիամից հանուն մեր փրկության, այժմ փառքիդ ողորմությամբ ցո՛ւյց տուր Քո հրաշքը մեղսավոր ու անարժան քո ծառաներին»: Եվ դցեց ուրարը կրակի մեջ, և կրակն այդպես բորբոքված՝ երեք ժամ մնում էր այնտեղ: Եվ կրակը հանգչելուց հետո հանեցին ուրարը այնտեղից ամբողջական և անվնաս, ինչպիսին որ էր: Այնժամ սյունակյացը, տեսնելով հրաշքը, զարմացավ և նզովեց Սևերիոսին և նրա ողջ հերձվածը և ներառվելով սուրբ եկեղեցու մեջ՝ Հաղորդություն վերցրեց երանելի Եփրեմի ձեռքով՝ գոհությամբ փառավորելով Աստծուն»:

20. Հայրերից մեկն ասաց. «Երեք գործ ունեն մենակյացները. մեկի պտուղն ի Տեր ուրախությունն է, մյուսինը՝ երկյուղը, երրորդինը՝ անբան սովորությունը»: Եվ այսպիսի օրինակ բերեց: «Մի ոմն ծեր՝ մեծ և երևելի, ճաշում էր եղբայրների հետ: Հանկարծ տեսիլքի մեջ հափշտակվելով՝ ծերը տեսավ, որ ոմանք մեղր էին ճաշակում, մյուսները՝ հաց, իսկ ոմանք էլ՝ կղկղանք: Ինքն իր մեջ ապշած՝ աղաչեց Աստծուն հայտնել խորհուրդը, թե ինչու կերակուրը, որ դրված է սեղանին,

ճաշակելիս այլակերպվում է: Ձայն եկավ ի վերուստ և ասաց նրան. «Ովքեր մեղը են ճաշակում՝ սրանք իրենց անձերի մեջ առլեցուն են հոգևոր ուրախությամբ՝ աննվազ աղոթքներով, ովքեր հաց են ուտում՝ միայն Տիրոջ տվածներով են գոհանում, իսկ ովքեր կղկղանք՝ տրտնջացողներն ու դատողներն են, թե այս լավ է և այն՝ վատ, այս բարի է և այն՝ չար՝ որը պետք չէ մտածել, այլ փառավորել Աստծուն և օրհնություն մատուցել տվողներին՝ ըստ գրվածի. "Ուտեք թե խմեք, կամ ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար (Ա. Կորնթ. Ժ. 31)"»:

21. Երկու հոգի՝ աշխարհից մեկուսացած, բնակվում էին բարձր Արասսոյում՝ Փտեռիոն կոչվող լեռանը, որ գետով մերձ է սուրբ Թեոդոսի վանքերին: Ծերը մեռավ, և աշակերտը, աղոթք անելով, թաղեց նրան: Եվ որոշ ժամանակ անց գնալով աշխարհ՝ գտավ մեկին, որ հող էր մշակում, և ասաց նրան. «Բարի՛ եղիր, եղբա՛յր, վերցրո՛ւ քեզ հետ բրիչ և թի և ե՛կ ինձ հետ»: Եվ երբ եկան լեռը, անապատականը ցույց տվեց չինականին ծերի գերեզմանը և ասաց. «Փորի՛ր այս տեղը, եղբա՛յր»: Եվ մինչ նա փորում էր, ինքը մտավ աղոթելու, իսկ աղոթքը ավարտելուց հետո աշխատավորին ասաց. «Աղո՛թք արա ինձ վրա, եղբա՛յր»: Եվ համբուրելով նրան՝ իսկույն ընկավ ծերի վրա և հոգին ավանդեց Տիրոջ ձեռքը: Եվ աշխարհականը, տեսնելով այս, փառավորեց Աստծուն և գերեզմանը ծածկելով՝ գնաց դեպի իր տուն: Երբ մի քարընկեցի չափ հեռացել էր գերեզմանից, ինքն իրեն ասաց. «Լավ չարեցի, որ սրբերից օրհնություն չառա»: Դարձավ ետ և չկարողացավ գտնել գերեզմանը:

22. Աբբա Մարկելիոս Թեբայիդացու մասին ոմանք ասում էին, թե երբ կամենում էր կիրակի օրը գնալ եկեղեցի, պատրաստում էր իրեն և Սուրբ Գրքից խոսք էր վերցնում և խոկում էր դրա մասին, մինչև հասնում էր եկեղեցի, և նրա շրթունքները չէին շարժվում, որպեսզի ոչ ոք չլսեր: Իսկ երբ կանգնում էր եկեղեցում, կուրծքը թրջվում էր արտասուքներից, և ասում էր. «Պատարագի ժամանակ տեսնում եմ ողջ եկեղեցին իբրև հուր, իսկ երբ ավարտվում է, հուրը դարձյալ հեռանում է»:

23. Աբբա Հովհաննեսը Մարկիանոսի կողմից աքսորվելով՝ ասաց. «Գնացինք մի անգամ Սիրիա՝ աբբա Պիմենի մոտ, և կամեցանք հարցնել խստասրտության մասին: Ծերը հունարեն չգիտեր, և թարգմանիչ չգտանք: Եվ երբ ծերը տեսավ մեզ տրտմած, սկսեց բարբառել հունարեն խոսքերով այսպես. «Իր բնույթով ջուրը կակուղ է, սակայն կաթելով՝ կարծրագույն քարեր և ժայռեր է ծակում: Այսպես և մեր սրտերը

*խստացան ախտերից, սակայն աստվածային խոսքի հաճախակի կարդալուց փափկում են և ընդարձակվում և սուրբ խոսքեր լսելով՝ սկսում են երկնչել Աստծուց: Ինչպես եղջերուն է փափագում աղբյուրների ջրերին, այնպես մեր հոգիներն են փափագում Աստծուն (*Սաղմ. ԽԱ 2)*, քանզի ինչպես անապատում սողուններից խայթված եղջերուները այրվելով նետվում են դեպի աղբյուրները, ըմպում են և զովանում, նույնպես և մենք՝ մենակյացներս, որ նստած ենք անապատում, խոցոտվում ենք չար դևերի որդերից և փափագում ենք ամեն շաբաթվա կիրակի օրը գնալ եկեղեցի՝ այսինքն գնալ աղբյուրի մոտ, որտեղ և ըմպելով Տիրոջ մարմնից ու արյունից՝ սրբվում ենք չարի թույներից և զմայլվելով զովանում ենք»:*

24. Աստծով մեծ՝ մի մենակյաց կար անապատում՝ Լեոն անունով, որն ազգությամբ կապադովկացի էր: Սրա մասին բազում հրաշքներ պատմեցին մեզ, և այս մարդու բազմապատիկ փորձությունների պատմությունից մեծ օգուտ քաղեցինք, ինչպես նաև՝ նրա խոնարհությունից, լռությունից, անընչությունից և սիրուց, որ ուներ ամենքի հանդեպ: Այս ժուժկալ ծերն ասում էր մեզ միշտ. «Հավատացե՛ք ինձ, որդյակնե՛ր, պիտի թագավորեմ»: Իսկ մենք նրան ասում էինք. «Դու էլ մեզ հավատա, աբբա՛ Լեոն, կապադովկացիներից ոչ ոք չթագավորեց. անարա՛տ պահիր քո միտքը»: Իսկ նա ավելի հաճախ էր կրկնում. «Ես կթագավորեմ, որդյակնե՛ր»: Երբ եկան մագքութները և ամբողջ ազգը գերեվարեցին, հասան Ռասան և բազում կրոնավորների սպանեցին և շատերին գերի վերցրին սուրբ Հովհաննեսի համայնքից, որը Կոստանդնուպոլսի մայր եկեղեցու Ս. Գրոց ընթերցող-մեկնիչ էր, վերցրին աբբա Եվստաթեոս Հռոմեացուն և աբբա Թեոդորոսին, և երեքն էլ տկարացած էին: Երբ տանում էին նրանց, աբբա Հովհաննեսը գերեվարողներին ասաց. «Տարե՛ք ինձ քաղաք, և ես այնպես կանեմ, որ եպիսկոպոսը ձեզ քսանչորս դահեկան տա»: Բարբարոսներից մեկը վերցրեց նրան և բերեց քաղաքի մերձակայքը: Եվ աբբա Հովհաննեսը գտավ եպիսկոպոսին, ինչպես նաև աբբա Լեոն(դիոս)ին, որ քաղաք էր եկել, և հայրերից ոմանց, որոնք չէին գերեվարվել: Ապա հայր Հովհաննեսը աղաչեց եպիսկոպոսին վճարել գումարը և փրկագնել նրանց: Իսկ եպիսկոպոսի մոտ ութ դահեկանից բացի ուրիշ գումար չգտնվեց. և բարբարոսը չուզեց վերցնել, այլ ասաց. «Կա՛մ տվեք սահմանված քսանչորս դահեկանը, կա՛մ տվեք կրոնավորին»: Եվ քաղաքում գտնվողները ճարահատյալ վերցրին աբբա Հովհաննեսին և հանձնեցին բարբարոսին, իսկ նա լալիս ու կոծում էր գնալիս. բարբարոս-

ները նրան տարան իրենց վրանը: Իսկ երեք օր հետո վերցրեց աբբա Լեոնը այն ութ դահեկանը, գնաց բարբարոսների ճամբարը, աղաչեց և ասաց. «Առե՛ք այս դահեկանները և արձակե՛ք հիվանդներին, քանի որ ձեզ համար ոչ մի գործ չեն կարող անել, իսկ ես առողջ եմ և կծառայեմ ձեզ»: Եվ բարբարոսները վերցնելով՝ ազատ արձակեցին երեք հայրերին, որ գերեվարված էին: Եվ մինչ աբբա Լեոնը բարբարոսներից մեկի հետ գնում էր ծառայության, սա գլխատեց նրան, և նրա վրա կատարվեց գրվածը. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամի համար» (Հովհ. ԺԵ 13)*: Եվ մենք իմացանք, որ թագավորել ասելով՝ նկատի ուներ, որ թագավորելու էր՝ իր անձը դնելով բարեկամի համար:*

25. Եվսեբիոս քահանա Հռայիթացին մեզ ասաց. «Մի անգամ դևը անցնում էր ծերի սենյակի մոտով՝ կրոնավորի զգեստներով, և բախեց դուռը: Բացեց ծերը և ասաց. «Աղոթի՛ր»: Եվ դևն ասաց. «Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից»: Դարձյալ ասաց ծերը. «Աղոթի՛ր»: Եվ նա կրկնեց նույն բանը: Այնժամ ծերն ասաց. «Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից»: Եվ իսկույն փախավ դևը՝ ինչպես հրից, ու անհայտացավ»:

26. Գնացինք Սինա՝ աբբա Զոսիմոս Ցիլիկիացու մոտ, ով թողնելով եպիսկոպոսությունը՝ եկել և բնակվում էր սինեական կենցաղավարությամբ և բարի գործով: Պատմեց մեզ և ասաց, թե՝ երբ երիտասարդ էի, ելա Սինա լեռը և մտա մի այր, որտեղ մի ծեր կար՝ սեբենից փիլոն հագած: Երբ ինձ տեսավ, նախքան ողջունելը՝ ասաց. «Ինչի՞ համար եկար այստեղ, Զոսիմե՛, այստեղ չես կարող նստել»: Ծունր դրեցի և ասացի. «Ողորմությո՛ւն արա, աբբա՛, և ասա՝ որտեղի՞ց ես ճանաչում ինձ»: Եվ նա ասաց. «Երկու օր առաջ երևաց ինձ մեկը և ասաց. «Ահա քեզ մոտ է գալիս մի կրոնավոր՝ Զոսիմե անունով, թույլ մի՛ տուր նրան բնակվել այստեղ. ուզում եմ նրան հանձնել Բաբելոնի եկեղեցին, որ Եգիպտոսում է»: Հետո ծերը, հեռանալով ինձնից մի քարընկեցի չափ, մոտ երկու ժամի չափ լուռ աղոթեց: Հետո եկավ ինձ մոտ, համբուրեց իմ ճակատն ու ասաց. «Կեցցե՛ս, որդյա՛կ, բարով եկար, Աստված բերեց քեզ այստեղ, որ իմ մարմինն ամփոփես»: Եվ հարցրեց. «Քանի՞ տարի է՝ այստեղ ես, աբբա՛»: Եվ նա ասաց. «Քառասունյոթն այժմ լրացավ, որդյա՛կ»: Եվ նրա տեսքը հրի նման էր, և ինձ ասաց. «Խաղաղությո՛ւն քեզ, որդյա՛կ, և աղոթի՛ր ինձ համար»: Եվ այս ասելով՝ հոգին տվեց և հանգավ Աստծո ծառան, իսկ ես փորեցի ու ամփոփեցի նրան և երկու օր անց վերադարձա իմ տեղը՝ փառավորելով Աստծուն»:

27. Ես և Սոփրոնիոս եղբայրը գնացինք ներքինիների վանքերը՝ սուրբ Հորդանան, և այդ վանքերի քահանա աբբա Նիկողայոսը մեզ պատմեց, թե իր երկրում մի կուսանոց կա, ուր քառասուն հոգի կա: Այդ վանքում հինգ կույսեր խորհուրդ արեցին գիշերով փախչել վանքից և իրենց համար մարդ առնել: Եվ մինչ նստած էին, այսահարվեցին բոլորը և վանքից դուրս չեկան, այլ գոհացան Աստծուց՝ խոստովանելով իրենց մեղքերը՝ ասելով. «Գոհանում ենք Աստծուց, որ այս մեծ խրատը բերեց մեզ վրա, որպեսզի մեր հոգիները չկորչեն»:

28. Թեբայիդայից գնացինք Նիկոպոլիս քաղաքը և այնտեղ խոսեցինք սոփեստ Փիմամնոնի հետ հոգեշահ շնորհի մասին: Եվ նա պատմեց մեզ և ասաց. «Երմո քաղաքում մի ավազակ կար՝ Դավիթ անունով, որը շատերին կողոպտեց, շատերին սպանեց և բազում չարիքներ գործեց, որ ուրիշ մեկը երբևէ չէր գործել: Մի անգամ լեռան վրա, երբ ավազակության էր դուրս եկել և իր հետ ուներ երեսուն մարդ, իր գործած հանցանքների համար սրտի մեջ զղջում եկավ, և թողնելով իր հետ եկած զինված մարդկանց՝ գնաց վանք: Եվ երբ բախեց դուռը, դռնապանը դուրս եկավ և ասաց նրան. «Այստեղ ի՞նչ ես փնտրում, ավազակապե՛տ»: Ասաց նրան. «Ուզում եմ մենակյաց դառնալ»: Եվ դռնապանը գնաց և պատմեց վանահորը նրա մասին: Աբբան գնաց և տեսավ նրան, որ արդեն ծերացել էր, ապա ասաց. «Այստեղ չես կարող լինել, որովհետև եղբայրներն այստեղ խիստ ճգնակյաց են, նրանց վաստակը մեծ է, իսկ դու, անընտել լինելով վանքի կանոներին, չես կարող վարժվել»: Իսկ նա ասաց. «Այո՛, անընտել եմ, սակայն արա՛ ինձ համար այդ՝ ընդունի՛ր ինձ, և ես կջանամ ամեն ինչում»: Եվ աբբան ասաց. «Չես կարող»: Այնժամ նա ասաց. «Իմացի՛ր, որ ես Դավիթ ավազակապետն եմ, և այստեղ եկա նրա համար, որ իմ մեղքերի վրա լամ. եթե չես կամենում ինձ ընդունել, երդվեցրո՛ւ ինձ, և ես կկատարեմ, իսկ եթե ոչ՝ երդվում եմ Նրանով, որ երկնքում է, որ կվերադառնամ իմ նախկին գործին, այստեղ կբերեմ նրանց, ովքեր ինձ հետ էին, ձեզ բոլորիդ կսպանեմ և ձեր վանքը կկործանեմ»: Այս լսելով՝ աբբան ընդունեց նրան, կտրեց մազերը և սուրբ սքեմը տվեց նրան: Եվ նա սկսեց առաջադիմել ճգնությունների և վարքի մեջ, խոնարհության և հնազանդության մեջ, ամենքի հանդեպ պատրաստակամ էր և շատերից առաջ անցավ: Մի անգամ իր սենյակում նստած ժամանակ նրա առջև կանգնեց Տիրոջ հրեշտակը և ասաց. «Դավի՛թ, Դավի՛թ, Աստված ներեց քո բոլոր անօրենությունները, այսուհետև կարող ես հրաշքներ գործել»: Եվ նա հրեշտակին ասաց. «Չեմ կարող քեզ հավատալ, քանզի մեղքե-

ը, որ գործել եմ, ավելի ծանր են, քան ծովի ավազը, և հիմա Աստված այսքան կարճ ժամանակում ինձ թողութիյո՞ւն տվեց»: Եվ հրեշտակն ասաց. «Զաքարիա քահանան ինձ չհավատաց, երբ ասացի որդի է ունենալու, և ես չխնայեցի նրան, այլ որպես խրատ՝ կապեցի նրա լեզուն (Ղուկ. Ա 18-22), *դու նույնպես իմ խոսքերի հանդեպ անհավատ մի՛ եղիր, այլապես քեզ էլ չեմ խնայի և ամենևին չես կարողանա խոսել»: Եվ աբբա Դավիթը, ծունր դնելով նրա առաջ, ասաց. «Երբ աշխարհում էի, անպատշաճ գործեր էի կատարում և արյուն հեղելով էի խոսում, իսկ այժմ, որ Աստծո ծառայության մեջ եմ, օրհնություն կմատուցեմ Նրան, եթե լեզվիս վրա խոսելու արգելք դնես»: Եվ հրեշտակն ասաց. «Կմնաս օրինավոր խոսքի մեջ, իսկ դատարկաբանության մեջ իսպառ կլռես»: Եվ այդպես եղավ: Բազում հրաշքներ գործեց Աստված նրանով. և նա կարողանում էր սաղմոսել, բայց այլ բաների՝ մեծ կամ փոքր, չէր կարողանում պատասխանել»: Այս ամենը մեզ պատմեց Փիմամոն սոփեստը և ասաց. «Բազմիցս տեսա նրան և փառավորեցի Աստծուն»:*

29. Աբբա Թեովնիոսի վանքի վանահայր Պողոսը մեզ պատմեց, թե՝ մի անգամ նստած էի իմ սենյակում և շարականներից հատվածներ էի ասում՝ ձեռագործ անելով: Եվ հանկարծ պատուհանին մոտեցավ մի երիտասարդ, որ սարակինոսի վերարկու էր հագել, և իմ առջև կանգնելով՝ սկսեց պարել և երգել, ապա ասաց ինձ. «Ծե՛ր, գեղեցի՞կ եմ պարում»: Իսկ ես ոչինչ չպատասխանեցի: Նա դարձյալ հարցրեց. «Հավանո՞ւմ ես պարս»: Երբ տեսավ՝ չեմ պատասխանում, իմ լռությունից գրգռված՝ ասաց. «Այդ ի՞նչ է, չա՛ր ծեր, կարծում ես մե՞ծ գործ ես անում. ասում եմ քեզ՝ ինչպես վաթսունհինգ տարեկանում, այնպես էլ վաթսունյոթում խաբվեցիր»: Այնժամ վեր կացա և ծնրադրեցի Աստծուն, և նույն պահին էլ նա անհետացավ»:

30. Եղեգնուտի մենակյաց աբա Ալեքսանդրոսն ասաց. «Մի անգամ ես աբբա Պողոս Հելենացու մոտ էի: Մեր՝ նրա սենյակում նստած ժամանակ, մեկը եկավ և բախեց դուռը: Ծերը վեր կացավ, բացեց դուռը և թրջած հաց դրեց նրա առաջ, որով ինքն էր կերակրվում: Ես կարծեցի, թե օտարական է, կռացա դեպի պատուհանը, տեսնեմ՝ առյուծ է, և ասացի նրան. «Կրոնավոր, ինչո՞ւ դրան ուտելիք տվեցիր»: Նա ինձ մեկնեց պատճառը և ասաց. «Նրան խրատեցի՝ չվնասել մարդկանց և անասուններին, այլ ինձ մոտ գալ՝ կերակրվելու, և ահա երեք ամիս է՝ երկու օրը մեկ գալիս է ինձ մոտ և կերակուր ստանում»: Ոչ շատ օրեր անց դարձյալ գնացի նրա մոտ՝ ամաններ գնելու նրանից, և հարցրի. «Բարի՛ ծեր, ինչպե՞ս է առյուծը»: Եվ նա ասաց. Վատ. անցյալ օրը

եկավ ինձ մոտ՝ կերակրվելու, և տեսա, որ ամբողջ բերանը արյունով լի էր, և ասացի նրան. «Ահա ինձ չլսեցիր և մարմին կերար. գնա՛ այստեղից, այլևս կերակուր չեմ տա քեզ»: Այնժամ վերցրի չվանը, երեք տակ արեցի և երեք անգամ խփեցի նրան, և այդպես գնաց»:

31. Աբբա Դանիել Սկյութացին մանկությունից ի վեր բնակվում էր Սկյութիայում: Հարձակվեցին բարբարոսները և գերեցին նրան. և նրանց հետ գնալիս ոմն քրիստոսասեր նավապետ փրկեց նրան բարբարոսներից: Երկու տարի անց կրկին եկան և հետ տարան նրան: Վեց ամիս մնաց նրանց մոտ և փախավ, դրանից հետո երեք անգամ բարբարոսները հարձակվեցին և գերի տարան նրան: Գերեվարող բարբարոսներից մեկը նստած էր ջրի մոտ, և աբբա Դանիելը վերցրեց քարն ու հարվածեց այլազգուն, և նա մեռավ այդ հարվածից: Սաստիկ զղջաց աբբան և փախստական դարձավ. եկավ Ալեքսանդրիա, ընկավ Տիմոթեոս եպիսկոպոսի առաջ, իսկ արքեպիսկոպոսը, տեղեկանալով գործին, ասաց ծերին. «Ով ազատեց քեզ նրանց ձեռքից, նույն Ինքը կազատի քեզ այս մեղքից, քանզի մարդու սպանություն չգործեցիր, այլ՝ գազանի»: Ծերը նավով գնաց Հռոմ և անկեղծորեն ամենը պատմեց Հռոմի պապին: Պապն էլ նույն բանն ասաց, ինչ նա լսել էր Ալեքսանդրիայի արքեպիսկոպոսից: Գնաց նաև Կոստանդինուպոլիս, Երուսաղեմ և Անտիոք. ամենքին պատմեց, և բոլոր արքեպիսկոպոսներից նույն պատասխանը լսեց: Դարձյալ գնաց Ալեքսանդրիա և ինքն իրեն ասաց. «Դանիել մարդասպանը թող սպանվի»: Եվ գնալով դատավորի ապարանքը՝ հանձնեց իրեն դահիճներին՝ ասելով. «Մաղձեցի մեկի դեմ և չարով բռնված՝ քարով խփեցի նրան և սպանեցի: Աղաչում եմ՝ հանձնե՛ք ինձ իշխանի ձեռքը, որպեսզի մեռնեմ այն սպանության փոխարեն, որ գործեցի, որպեսզի վերանա իմ հանդերձյալ դատապարտությունը»: Լսելով նրանից այս՝ դահիճը նրան երեսուն օր բանտ գցեց, ապա տեղեկացրեց իշխանին: Իշխանը, նրան բերել տալով իր առաջ, քննեց ամբողջ գործը իրապես: Եվ զարմանալով ծերի ինքնադատաստանի վրա՝ արձակեց նրան և ասաց. «Գնա՛ և աղոթի՛ր ինձ համար, աբբա՛, որ նրանցից ուրիշ յոթին էլ ես սպանեմ»: Եվ ծերը նրան ասաց. «Հուսամ առ մարդասիրությունն Աստծո, որ ինձնից այլևս պատասխան չի պահանջվի այս սպանության համար՝ Նրա բարերարությամբ: Այսուհետև ինձ հանձնում եմ Քրիստոսի ձեռքը իմ կյանքի բոլոր օրերին՝ դատելու ինձ որևէ անդամալույծի ձեռքով, այն սպանության փոխարեն, որ գործեցի»: Եվ ծերը վերցրեց մի անդամալույծի և ծառայեց նրան, մինչև ավարտեց իր կյանքի օրերը:

Ամենքը, որ Սկյութիայում էին, լսում էին, որ ծերն ունի մեկին, ում խնամարկում է. սակայն ոչ ոք չէր կարողանում տեսնել անդամալույծին՝ բացի ծերից: Օրերից մի օր, ըստ աստվածային տեսչության ծերը հնչեցրեց զանգակը, որպեսզի գա աշակերտը և պատասխան տա՝ պաշտամունքի հետ կապված: Բացեց գավիթի դուռը և իսկույն մոռացավ, որ հնչեցրել է զանգակը: Գրկեց անդամալույծին, հանեց արևի ջերմությանը և այդպես գրկին՝ շրջում էր, քանզի բազում վերքերից հյուծված էր: Քիչ անց եկավ աշակերտը և ետևում կանգնած՝ տեսավ նրա գործը. ծերն այնտեղից խյուս բերելով՝ կերակրում էր անդամալույծ եղբորը, քանի որ վերջինս ձեռք չուներ և չէր կարող իր կերակուրն ինքը վերցնել, քանզի շատ էր քայքայված, և ծերը նրա բերանն իր ձեռքով մաքրելով՝ դնում էր իր բերանը: Տեսնելով այս սքանչելի գործը՝ աշակերտը սաստիկ զարմանքով փառաբանում էր Աստծուն, որ ծերին այսպիսի համբերատարություն էր շնորհել, որով սպասավորում էր անդամալույծին:

32. Աբբա Եվստոգրիոսի վանքում մի ծեր կար, որի անունը Հովհաննես էր: Երուսաղեմի արքեպիսկոպոս հայր Եղիան կամեցավ նրան վանահայր կարգել, իսկ նա չհամաձայնեց՝ ասելով. «Ես Սինա լեռն եմ գնում. աղոթի՛ր ինձ համար»: Արքեպիսկոպոսը բռնադատելով էլ չկարողացավ արգելել ծերին, և նա գնաց: Պատվիրեց նրան՝ արժանի լինել Վերին հայրապետությանն, և ծերը հրաժեշտ տալով՝ ճանապարհ ընկավ դեպի Սինա լեռը: Նա իր հետ վերցրեց նաև իր աշակերտին, և երբ անցան Հորդանան գետը, ծերն սկսեց ջերմությունից դողալ, և քանի որ չէր կարողանում գնալ, այնտեղ մի փոքրիկ այր գտան և այնտեղ հանգրվանեցին, որովհետև տենդի մեջ էր ծերը, և այնտեղ մնացին երեք օր: Ծերը տենդի մեջ լսում էր, որ իրեն հարցնում են. «Ասա՛, ծե՛ր, ո՞ւր ես կամենում գնալ»: Պատասխանեց. «Սինա լեռը»: «Մի՛, աղաչում եմ քեզ, մի՛ գնա»: Եվ երբ չկարողացավ համոզել՝ գնաց նրա մոտից, իսկ տապն առավել ևս սաստկացավ ծերի վրա: Եվ հաջորդ գիշեր դարձյալ նույն այրը նույն զգեստով կանգնեց նրա առաջ և ասաց. «Ինչո՞ւ ես կամենում զուր տանջվել, բարի՛ ծեր, լսի՛ր ինձ և մի՛ գնա ամենևին»: «Իսկ դու ո՞վ ես»,– հարցրեց նրան ծերը: «Ես Հովհաննես Մկրտիչն եմ»,– ասաց հայտնվածը,– «և ահա քեզ ասում եմ՝ այստեղից ամենևին մի՛ գնա, որովհետև այս փոքրիկ այրը առավել է, քան Սինա լեռը, քանզի այստեղ բազում անգամ մեր Տեր Հիսուս Քրիստոս տեսության է եկել ինձ: Խոստացի՛ր, որ այստեղ կընակվես, և քեզ կյանք կտրվի»: Ծերն իսկույն ընդունեց և խոստացավ մնալ

այրում, և անմիջապես առողջանալով՝ մնաց այնտեղ իր կյանքի բոլոր օրերին: Այն դարձրեց եկեղեցի և այնտեղ հավաքեց եղբայրներին. դա այն տեղն է, որ կոչվում է Սափսափաս:

33. Մեկ այլ ծեր կար այս Սափսափաս այրի տեղանքում, որն այնպիսի վարք ունեցավ, որ մինչև անգամ առյուծներն էին գալիս նրա մոտ, և ընդունում էր նրանց և իր գիրկն էր լցնում նրանց կերակուրը:

34. Գնացինք մեր սուրբ հայր Սաբայի վանքը՝ աբբա Աթանասիոսի մոտ, և ծերը մեզ պատմեց ու ասաց. «Երբ ես Պենթուկլայի միաբաններրի մեջ էի, Կոնոն անունով մեկը կար՝ ծնունդով Կիլիկիայից, մկրտության քահանա (կատիչիտիտ), որովհետև որպես մեծ ծերի՝ պատվիրեցին նրան մկրտություն կատարել: Եվ նա օծում և մկրտում էր ամենքին, ով գալիս էր հավատքի, իսկ կանանց օծելիս գայթակղվում էր, ուստի մտածեց հեռանալ վանքից: Եվ երևալով նրան սուրբ Հովհաննեսը՝ ասաց. «Համբերի՛ր, և ես կթեթևացնեմ քո պատերազմը»: Եվ մի պարսիկ աղջիկ պատահեց՝ գեղեցիկ տեսքով, որ եկավ մկրտության, և այդպիսի գեղեցկությունից խույս տալով՝ քահանան չկամեցավ նրան մերկ վիճակում օծել սուրբ յուղով և երկու օր հապաղում էր: Լսեց այդ Պետրոս արքեպիսկոպոսը և դրա վրա ապշած՝ կամեցավ նրան մի սարկավագուհի կցել: Իսկ քահանան հրաժարվեց և ասաց. «Չեմ կարող այլևս այս տեղում համբերել»: Եվ մինչ գնում էր դեպի լեռը, հայտնվեց նրան սուրբ Հովհաննես Մկրտիչն ու հեզ ձայնով ասաց. «Դարձի՛ր, դարձի՛ր նորից քո վանքը, և ես կվերցնեմ քեզնից պատերազմը»: Այնժամ հայր Կոնոնը զարմացած ասաց նրան. «Բազում անգամ ինձ խոստացար և չկատարեցիր»: Սուրբ Հովհաննեսը, բռնելով նրան, նստեցրեց իր կողքին և հանդերձի տակից խաչակնքելով նրա կուրծքը՝ ասաց. «Հավատա՛ ինձ, քահանա՛, սիրով կամենում էի, որ դու քո վարձն ստանայիր այդ պատերազմից, բայց քանի որ չես կամենում՝ ահա վերցրի քեզնից այդ պատերազմը, և այս գործից վարձ չունես այլևս»: Եվ վերադառնալով միաբանություն՝ ծերը երրորդ օրը օծեց և մկրտեց պարսկուհուն և ամենևին չզգաց, թե կին է: Այնուհետև օծում էր ու մկրտում, և այլևս ցանկություն չէր առաջանում նրա մեջ: Այսպես վախճանվեց խաղաղությամբ»:

35. Աբբա Ղևոնդիոսը՝ մեր սուրբ հայր Թեոդոսի միաբանությունից, մեզ պատմեց և ասաց. «Երբ հրաժարվեցի աշխարհից, եկա և նստեցի այս վանքում և մի կիրակի գնացի եկեղեցի՝ սուրբ հաղորդություն առնելու և տեսա հրեշտակի, որ կանգնած էր զոհասեղանի աջ կողմում: Մեծ երկյուղ եկավ ինձ վրա, և հրաժարվելով՝ գնացի իմ

սենյակը: Այնժամ ձայն լսեցի, որ ինձ ասաց. «Այժմվանից սրբվեց այս ընծայարանը»: Եվ ես հավատացի նրան»:

36. Աբբա Պոլիքրոնիոսը՝ այս նոր վանքի քահանան, պատմեց մեզ և ասաց. «Մի ժամանակ նստում էի Պերգիոսի վանքում, որ Հորդանանում է: Տեսա այնտեղ մի եղբոր, որ հանդուգն էր և չէր կատարում սուրբ կիրակիի կարգը: Սա, որ ամեն ինչի մեջ փութաջան և զվարթ էր, տարիներ անց տեսա հանդարտության մեջ և ասացի նրան. «Այժմ բարի ես, եղբա՛յր, որ հոգում ես քո անձի մասին»: Եվ նա ասաց. «Տե՛ր հայր, շուտով մեռնելու եմ»: Եվ երեք օր անց ննջեց»:

37. Դարձյալ նույն աբբա Պոլիքրոնիոսը պատմեց մեզ և ասաց. «Նույն Պերգիոսի վանքում մի եղբայր վախճանվեց, և տնտեսվարն ինձ ասաց. «Բարի՛ եղիր և ե՛կ այս մեր եղբոր ամանները տանենք խոհանոց»: Եվ երբ եղբոր ամաններն էինք տանում, տեսա, որ նա լալիս է, և ասացի. «Տե՛ր աբբա, ինչո՞ւ ես այդպես լաց լինում»: Ասաց. «Որովհետև այսօր ես իմ եղբոր ամաններն եմ վերցրել, իսկ երկու օր հետո ուրիշները կվերցնեն իմը»: Եվ երկու օր հետո նա ննջեց»:

38. Դարձյալ պատմեց աբբա Պոլիքրոնիոս քահանան, թե՝ ոմն ծեր բնակվում էր աբբա Պետրոսի այս միաբանությունում և բազմիցս գնում էր Հորդանանի քարանձավ՝ խոկալու, և որտեղ առյուծների անձավներ էր գտնում, այնտեղ էր նստում: Մի օր թիկնոցի մեջ առյուծի երկու կորյուններ բերեց, դրեց եկեղեցու մեջ և ասաց. «Եթե պահեինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրանները, սրանք չէին կարող մեզ վախեցնել, սակայն մեղքերի պատճառով ծառաներ դարձանք»: Եվ մեզ խրատելով՝ գնաց իր սենյակը:

39. Աբբա Պոլիքրոնիոսը դարձյալ պատմեց մեզ աբբա Կոստանդինից լսածը, որը սուրբ Աստվածածին նորավանքի վանահայրն էր. «Հայրերից մեկը վախճանվեց Նիսոկոմիոյում՝ եղբայրների միաբանությունում, որոնք Երիքովից էին: Վերցրինք նրան և տարանք Պերգամոս՝ թաղելու: Երբ դուրս եկանք և գնացինք Նիսոկոմիոյից մինչև Պերգամոս, մի աստղ երևաց մեռելի գլխավերևում և չհեռացավ նրանից, և ողջ ճանապարհին ուղեկցեց նրան՝ մինչև այն տեղը, ուր նրան հանձնեցինք հողին»:

40. Մեկ այլ ծեր բնակվում էր Պերգամոսի միաբանությունում, և այն վանքում սրբակրոն վարքով մեծամեծ հայրեր կային: Սրանք ուզում էին ծերին վանահայր կարգել: Իսկ ծերն աղաչեց և ասաց. «Թողությո՛ւն տվեք, եղբայրնե՛ր, կամենում եմ իմ մեղքերը սգալ. բավա-

կանաչափ ուժ չունեմ այլ անձանց մասին հոգալու: Այդ գործը մեծ հայրերինն է և աստվածակիրներինը, ինչպիսիք էին աբբա Անտոնիոսը և Պաքմիոսը, ինչպես նաև սրբակրոն Թեոդորոսը, Թեոդոսը և Սաբան, որոնք վանահայրեր էին»: Սակայն նրանք չէին դադարում աղաչել նրան ամեն օր: Եվ երբ ծերը տեսավ, որ բռնադատում են իրեն, ասաց նրանց. «Ինձ երեք օր ժամանա՛կ տվեք, որպեսզի աղոթք անեմ, և ինչպես կամենա Աստված՝ այնպես էլ կանեմ»: Օրը ուրբաթ էր, իսկ կիրակի օրը ծերը ննջեց ի Քրիստոս»:

41. Հորդանանի քարանձավում Բառնաբաս անունով մի անապատական կար: Սա մի օր եկավ Հորդանանից ջուր խմելու և ոտքերը եղեգներին խփելով՝ վերքեր ստացավ, և վերքերը մնացին, իսկ ինքը դրանք բուժելու համար բնավ հոգս չէր անում և իր մոտ եկողներին ասում էր. «Որքան մարդ արտաքուստ չարչարվում է՝ այնքան ներքուստ հրճվում է»: Եվ այս հայր Բառնաբասը իր այրից եկավ Պերգամոս և այնտեղ մնաց մի տարի, իսկ նրա այրում բնակվեց մի ուրիշ անապատական, որը տեսավ Աստծո հրեշտակին՝ կանգնած ընծայման սեղանի վրա, որ ծերն էր հաստատել և օրհնությամբ սրբագործել: Անապատականը հարցրեց հրեշտակին. «Ի՞նչ ես անում այստեղ»: Եվ նա ասաց. «Ես Տիրոջ հրեշտակն եմ. երբ սրբագործվեց այս, ինձ հանձնվեց»:

42. Մի սուրբ հայր Սաբայի աշակերտը՝ աբբա Պետրոս քահանան, մեզ պատմեց սուրբ հոր մասին և ասաց. «Երբ աբբան սուրբ Մակարիոսի և Գերասիմի միաբանությունում էր, այնտեղ մի եղբայր վախճանվեց. և չլսեց ծերը՝ մինչև որ եկեղեցու սպասավորը հնչեցրեց զանգերը, որպեսզի բոլորը հավաքվեն՝ տանելու մեռելին: Եկավ ծերը և տեսավ եղբոր դին՝ դրված եկեղեցում, տրտմեց՝ «քանզի»,– ասաց,– «չողջունեցի նրան՝ նախքան այս կյանքից դուրս գալը»: Մոտեցավ մեռելի մահճին և ասաց. «Արի՛, եղբա՛յր, և ինձ ողջո՛ւյն տուր»: Եվ մեռելը նույն պահին հարություն առավ և ողջունեց ծերին: Եվ ծերը նրան ասաց. «Այժմ ննջի՛ր և հանգչի՛ր, մինչև գա Քրիստոս՝ Աստծո Որդին, և քեզ հարություն տա»:

43. Աբբա Դանիելն իր աշակերտների հետ եկավ Ալեքսանդրիա և մի կույրի տեսավ, որ մերկ նստած էր փողոցում և ասում էր. «Տվե՛ք ինձ և ողորմացե՛ք»: Եվ ծերն իր աշակերտներին ասաց. «Տեսնո՞ւմ եք սրան, որ աչքեր չունի. մեծ չափի է հասել, և կամենում եմ ցույց տալ նրա վարքը»: Եվ գնալով կույրի մոտ՝ ասաց. «Ողորմությո՛ւն արա ինձ, որովհետև փող չունեմ, որ արմավենու ոստեր գնեմ և դրանով կերակրվեմ»: Եվ կույրն ասաց. «Այդ ի՞նչ ես ասում, աբբա՛. տեսնում

ես, որ մերկ եմ և մուրում եմ, իսկ դու ինձ ասում ես. «Փո՛ղ տուր, որ գնեմ արմավենի և կերակրվեմ, սակայն փոքր-ինչ սպասի՛ր»: Եվ աբբան նշան արեց իր աշակերտներին, և (կույրի հետ) եկան քաղաքից դուրս՝ սուրբ Մարկոս եկեղեցին: Կույրն այնտեղ խուց ուներ, և ծերին ասաց. «Սպասի՛ր ինձ այստեղ, աբբա՛»: Եվ գնալով իր խուցը՝ ծերին մի զամբյուղ բերեց, որի մեջ կար չամիչ, թուզ, նուռ և երեք ոսկի և իր բերանից էլ արծաթ հանելով՝ տվեց աբբային և ասաց նրան. «Աղոթքի՛ր ինձ համար»: Եվ աբբա Դանիելը, գալով աշակերտների մոտ, լաց եղավ և ասաց. «Քանի՞ գաղտնի ծառաներ ունի Աստված. կենդանի է Տերը, որ չեմ կարողանա վերադարձնել այդ օրհնությունից դույզն-ինչ»: Եվ գնացին: Նույն օրը հիվանդացավ մեծ եկեղեցու տնտեսը: Սաստիկ ցավում էր որովայնը, և ընկած էր սուրբ Մարկոսի տաճարում: Նրան երևաց սուրբ Մարկոս առաքյալը և ասաց. «Բերե՛ք կույրին, թո՛ղ ձեռքը դնի, և կառողջանաս»: Ուղարկեց տնտեսը իր ծառաներին, և բերին նրան բռնությամբ, դրեց ձեռքը, և անմիջապես առողջացավ: Այս հրաշքը հայտնի դարձավ ողջ քաղաքին, և հայրապետը լսելով՝ եկավ կույրին փնտրելու, և նրան գտավ ննջած ի Տեր: Լուրը տարածվեց Սկյութիայում, և Դանիել աբբան իր աշակերտի հետ եկավ, նրանց հետից եկան նաև բազում հայրեր՝ ծերի օրհնությունն ստանալու: Ողջ քաղաքը հավաքվեց այնտեղ՝ մեծ գոհությամբ, և նրան թաղեցին հայր Մարկոսի մոտ, որ խենթ էր հանուն Քրիստոսի: Եվ նրա վարքն այսպիսին էր. ովքեր ողորմություն էին խնդրում իրենից՝ գնում էր հանցավորներից և ուրիշներից և տալիս էր հիվանդներին: Երեսունութ տարի անց ավարտեց իր ընթացքը:

44. Պենթուկլայի վանահայր աբբա Կոնոմոսի մասին պատմեցին, թե՝ մի անգամ գնում էր Սամարիա. նրան ընդառաջ դուրս եկան եբրայեցիները և ուզում էին սպանել: Մերկացնելով իրենց սրերը՝ հարձակվեցին ծերի վրա, և երբ մեկնեցին սրերը՝ նրան հարվածելու, նրանց ձեռքերը մի ժամի չափ մնացին անշարժ: Եվ ծերը աղոթք անելով՝ արձակեց նրանց, և նրանք գոհանալով Աստծուց՝ գնացին»:

45. Աբբա Պետրոսի վանքում՝ Սուրբ Հորդանանին մոտ, մի ծեր էր բնակվում՝ Նիկողայոս անունով, որը պատմեց մեզ հետևյալը. «Երբ Հռայիթում էի բնակվում, մի անգամ երեք եղբայրներով ուղևորվեցինք դեպի Թեբայիդ, և անապատով ընթանալիս մոլորվեցինք ճանապարհին և շեղվեցինք դեպի անբնակ վայրեր: Սաստիկ ծարավելով՝ մի ամբողջ օր ջուր չգտանք. սկսեցինք պապակել այն աստիճան, որ ծարավից ու խորշակից խեղդվելով՝ չէինք կարողանում քայլել: Անա-

պատում մի մոչի թուփ գտանք, և մեզնից յուրաքանչյուրը ապաստանեց նրա ստվերի տակ, և կարծում էինք՝ կմեռնենք: Եվ երբ ննջեցինք, հրաշք կատարվեց մեզ հետ: Տեսա մի ջրհոր՝ ջրով լի, որից ջուրը հորդում էր, և ջրհորի կողքին երկու հոգի կային՝ փայտյա բաժակներով: Ես սկսեցի աղաչել նրանցից մեկին և ասացի. «Գթասի՛ր եղիր, տե՛ր իմ, մի քիչ ջո՛ւր տուր ինձ»: Եվ մյուսին նույնպես սկսեցի աղաչել ու ասել. «Գթասի՛ր եղիր, տե՛ր իմ, ինձ ջո՛ւր տուր մի քիչ, քանզի նվաղած եմ ծարավից»: Իսկ նա չէր կամենում շնորհել: Ասաց նրան մյուսը. «Տո՛ւր նրան մի փոքր»: Իսկ նա ասաց. «Զե՛նք տա նրան, քանզի շատ ծույլ է, բայց միայն օտարական լինելու համար կտանք նրան»: Այդպես ինձ ջուր տվեցին, և ես էլ տվեցի նրանց, որ ինձ հետ էին: Եվ իսկույն զորացանք և գնացինք երեք օր ու այլևս չխմեցինք՝ մինչև տեղ հասանք»:

46. Սուրբ հայր Մեթուրիոսի միաբանության վանքից պատմեցին, թե՝ մեր ժամանակներից առաջ այստեղ մի ծեր է եղել, անունը՝ Անթուս. սա իր ողջ կյանքում պահքի օրերին լինում էր Կուտելայում: Մի անգամ երբ անապատում էր՝ տաճիկներ երևացին այդ կողմերում, և նրանցից մեկը, տեսնելով ծերին, մերկացրեց սուրը և կամենում էր սպանել նրան: Եվ ծերը, տեսնելով սարակինոսին, նայեց երկինք և ասաց. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, թո՛ղ Քո կամքը լինի»: Եվ իսկույն երկիրը պատռվելով՝ կուլ տվեց տաճիկին, և ծերը փրկվեց ու եկավ իր վանքը՝ փառավորելով Աստծուն:

47. Այս վանքի հայրերը մեզ պատմեցին մեկ այլ ծերի մասին և ասացին, թե մի մենակյաց կար՝ Պողոս անունով, հռոմեացի. սա մի անգամ գրաստներով բեռ տարավ, և իջևանատանը նրա ջորին՝ սատանայի ազդմամբ՝ կոխոտեց ու սպանեց մի փոքրիկ տղայի: Հույժ տրտմեց այս դեպքի վրա հայր Պողոսը և առանձնացավ անապատի մի վայրում, որ կոչվում է Հարոնան, և այնտեղ լռության մեջ ճգնում էր անապատականն ու ողբում էր մանուկի համար՝ ասելով. «Ես սպանեցի մանկանը, և իբրև մարդասպան՝ պիտի դատապարտվեմ»: Մերձակայքում մի առյուծ կար, և Պողոսը միշտ գնալով առյուծի որջը՝ գրգռում ու զայրացնում էր նրան, որպեսզի ուտեր իրեն: Երբ տեսավ՝ չի լինում, ինքն իրեն ասաց. «Ննջեմ առյուծի արահետի վրա, և երբ գնա գետը՝ ջուր խմելու, գտնի ինձ և ուտի»: Երբ պառկեց, ոչ շատ ժամանակ անց եկավ առյուծը՝ կատարելապես անմռունչ, մարդու նման, առանց կոխելու, ցատկեց նրա վրայով և ամենևին չմերձեցավ նրան: Այնժամ ծերը հասկացավ, որ Աստված թողություն շնորհեց իր

մեղքերին, և դառնալով՝ եկավ մեր վանքը և ամեն ինչ պատմեց՝ ի շահ և ի հաստատություն:

48. Ալեքսանդրիայում գնացինք աբբա Թեոդորի մոտ, որ Փարոնում էր՝ սուրբ Սոֆիայի մոտ: Եվ ծերը պատմեց մեզ ու ասաց. «Հրաման ստացա մեր սուրբ հայր Թեոդոս Անապատականից՝ մեր Քրիստոս Աստծո սուրբ քաղաքը գնալու, և այնտեղ գտա մի ծերի, որի անունն էր Քրիստափոր, ազգությամբ՝ հռոմեացի: Ծունր դրի նրա առաջ և ասացի. «Շնո՛ր հարա, հա՛յր, և պատմի՛ր քո երիտասարդության գործերը»: Եվ մեծ սփոփանք արեց ծերը, պատմեց ինձ և ասաց. «Երբ մեծագույն կրոնական ջերմեռանդության հասա, սահմանված կարգով ցերեկները փակվում էի, իսկ գիշերները գնում էի սուրբ Թեոդոսի այրը: Այնտեղ էին գալիս և ուրիշ հայրեր և գիշերային աղոթք էին կատարում, և ովքեր գալիս էին այս այրը՝ հարյուր անգամ ծնրադրում էին Աստծուն: Այրն ուներ տասնութ աստիճան, և այնտեղ իջնող եղբայրները մնում էին այնքան, մինչև ժամհարի կոչնակը չէր ազդարարում օրհներգության ժամը, ապա գնում էինք հասարակաց վանք: Աղոթքի համար այս այրն իջնելը կատարում էինք մեծ ժուժկալությամբ և հոժարակամությամբ: Մի օր զարմանալի տեսիլք երևաց ինձ. իբր թե այրի ողջ հատակին կանթեղներ էին դրված, և նրանցից մի մասը վառվում էր, իսկ մյուսները չէին վառվում: Եվ երկու մարդու տեսա՝ քղամիդ հագած և գոտևորված, որոնք պատրաստում էին կանթեղները: Այնժամ նրանց ասացի. «Ինչո՞ւ դրեցիք կանթեղներն այստեղ, քանզի այրում տեղ չի լինի նրանց, որոնք գալու են աղոթքի»: Եվ նրանք ասացին. «Այս կանթեղները հայրերինն են»: Ես դարձյալ ասացի. «Ինչո՞ւ ոմանք վառվում են, իսկ ոմանք՝ ոչ»: Եվ նրանք պատասխանեցին. «Եթե կամենան՝ մնացածներն էլ կվառվեն»: Այնժամ ասացի. «Ի սեր Աստծո, ասացե՛ք, իմ կանթեղը վառվո՞ւմ է, թե՞ ոչ»: Եվ նրանք ասացին. «Աղոթի՛ր, և մենք կվառենք այն»: Ասացի. «Դեռ էլի՞ պետք է աղոթեմ, իսկ մինչև այժմ ի՞նչ էի անում»: Եվ այս խոսքի վրա սթափվեցի և ոչ ոքի չտեսա ինձ մոտ: Այնժամ ինքս ինձ ասացի. «Քրիստափո՛ր, եթե կամենում ես ապրել, առավել պետք է ճգնես»: Եվ հաջորդ օրը հեռացա վանքից, գնացի Սինա լեռը՝ ոչինչ չվերցնելով ինձ հետ՝ բացի նրանից, ինչ հագել էի: Եվ այնտեղ հիսուն տարի ճգնելուց հետո ինձ ձայն եկավ և ասաց. «Քրիստափո՛ր, գնա՛ քո միաբանությունը, որտեղ բարվոք ճգնել ես, որպեսզի այնտեղ փոխվես քո հայրերի մոտ»: Եվ ահա եկա այստեղ»: Եվ երբ այս ամենը պատմեց ինձ, քիչ անց ննջեց ի Տեր»:

49. Ոմն ծեր բնակվում էր եղեգնուտի վանքում, որ սուրբ Հորդանանի գետի մոտ է: Նրա անունը Կիրակոս էր, և նա Աստծո մեծ այր էր: Նրա մոտ եկավ Տարա երկրից մի եղբայր՝ Թեոփանոս անունով: Սա կամենում էր ծերին հարցնել պոռնկության խորհուրդի մասին, և ծերն սկսեց պարկեշտ խոսքերով նրա մեջ իմաստություն սերմանել: Եվ եղբայրը, մեծ օգուտ քաղելով նրանից, այսպես ասաց նրան. «Տե՛ր աբբա, ես իմ երկրում հաղորդվում էի նեստորականների հետ և այդ պատճառով եկա բնակվելու քեզ մոտ»: Եվ երբ լսեց ծերը նեստորականների մասին, տրտմեց եղբոր կորստական լինելու համար: Ապա սկսեց իմաստության կոչ անել նրան և աղաչում էր, որ հեռու մնա այդպիսի վտանգավոր հերձվածից և գա կաթողիկե և առաքելական սուրբ եկեղեցի: Այս ևս ասաց նրան. «Չկա այլ փրկություն, բացի ուղիղ իմաստությունից և ճշմարիտ հավատից, թե՝ Սուրբ Կույս Մարիամը Աստվածածին է»: Եվ եղբայրն ասաց. «Այդպես, տե՛ր աբբա, ովքեր հերձվածի մեջ էին, ասում էին՝ եթե մեզ հետ չհաղորդվես, չես ապրի: Եվ ես՝ ողորմելիս, ինչ անեի՝ չգիտեի: Աղաչենք Տիրոջը, որ ինձ համար բացահայտի՝ ո՛րն է ճշնարիտ հավատը»: Ծերն ուրախությամբ ընդունեց եղբոր խոսքերը և ասաց նրան. «Նստի՛ր քո այրում, և հուսանք առ Աստված, որ մեզ կհայտնի ճշմարտությունը»: Ապա ծերը խնդրեց եղբորը, որ իր այրը գա: Իսկ ինքը ելավ-գնաց Մեռյալ ծովի եզերքը և եղբոր համար աղաչում էր Աստծուն: Եվ երկուշաբթի օրը՝ իններորդ ժամին, եղբայրը տեսավ ահազդու կերպարանքով մեկին, որն ասում էր իրեն. «Ե՛կ և տե՛ս ճշմարտությունը»: Վերցրեց նրան և բերեց մի խավար տեղ, ուր զարհուրելի կրակ էր, իսկ կրակի մեջ էին Նեստորը, Եվտիքեսը, Ապողինարը և այլոք: Եվ նրան երևացողն ասաց. «Այս տեղը պատրաստված է հերետիկոսների և նրանց խոսքերին հետևողների համար: Եթե քեզ հաճելի է մնալ այդ տեղում, մնա՛ այդ քո հավատին, իսկ եթե չես կամենում այդ փորձն ունենալ, գնա՛ սուրբ կաթողիկե և առաքելական եկեղեցի, որ ծերն է քարոզում, քանզի եթե նույնիսկ բոլոր առաքինությունները ստանա մարդ, բայց ուղիղ չդավանի, այս տեղում կմնա»: Այս խոսքերի վրա եղբայրն սթափվեց, և երբ ծերը եկավ, պատմեց նրան՝ ինչ որ տեսավ, և եկավ հաղորդվելու սուրբ կաթողիկե եկեղեցում: Նա եղեգնուտում՝ ծերի մոտ մնաց չորս տարի և ննջեց խաղաղությամբ:

50. Կիլիկիացիների քաղաքից՝ երեսուն և միմյանցից վեց ասպարեզ հեռավորությամբ երկու սյունակյացներ կային, որոնցից մեկը հաղորդվում էր սուրբ կաթողիկե առաքելական եկեղեցում, իսկ մյուսը, որ

ավելի շատ տարիներ էր անցկացրել սյան վրա, որը մոտ էր Կասիդորա կոչվող գյուղին, Սևերիանոսի հերձվածից էր: Եվ հաճախակի էր դատապարտում հերետիկոսը ուղղադավաններին՝ կամենալով ամենքին իր հերձվածի մեջ ներքաշել, և շատերին էր իր ցանցը գցում: Սա դատապարտում էր նաև ուղղափառ սյունակյացին: Եվ նա, Աստծուց ներշնչված, ուղարկեց նրան իր հաղորդության մի մասը, իսկ նա գոհությամբ ընդունեց և իսկույն ինքն էլ իր հաղորդությունից ուղարկեց նրան: Իսկ ուղղափառը, ընդունելով սևերիանոսականի հաղորդության մասը, իր առջև դրեց եռացրած ջրով լի աման և նրա մեջ գցեց հերձվածողի հաղորդությունը. այն անմիջապես տարրալուծվեց ջերմությունից: Ապա վերցրեց ուղղափառ եկեղեցու հաղորդությունը, գցեց նրա մեջ, և եռացող ջուրը սառեց, իսկ սուրբ հացը մնաց անարատ և չթրջվեց: Եվ ամենքը, որ տեսան, փառք տվեցին մեր Քրիստոս Աստծուն:

51. Մի եպիսկոպոս ժողովրդին հաղորդություն տալու ժամանակ տեսավ՝ ոմանց՝ սև երեսներով, ոմանց՝ հրով այրված, մի մասին՝ արյունռուշտ աչքերով, իսկ երկու կանանց, որոնց մասին բամբասանքներ էին պտտվում՝ սպիտակ զգեստներով, ոմանց էլ՝ լույսով վառված: Եվ զարմացած՝ հարցրեց Տիրոջ հրեշտակին, որ իր կողքին էր: Հրեշտակն ասաց՝ նրան. «Սևերը, այրվածները և արյունռուշտները՝ զանազան մեղքերով խոցվածներն են, որոնք հստակ չխոստովանեցին իրենց մեղքերը, իսկ կանայք, որոնց բամբասում էին, չքմեղացան ապաշխարությամբ և սխալներից հիմնովին հեռացան՝ մաքուր խոստովանությամբ և վարքով»:

52. Հայր Մովսեսն ասաց. «Եթե պահենք մեր հայրերի պատվիրանները, բարբարոսներն այստեղ չեն գա, երաշխավորում եմ. իսկ եթե ոչ՝ կավերեն, ինչպես որ եղավ»:

53. Հայր Պաքմեոսը մի մեռել տեսավ, որին տանում էին թաղելու, իսկ նրա կողքից երկու հրեշտակներ էին ընթանում: Սա խնդրեց Տիրոջից, որ հրեշտակներն իր մոտ գան. և եկան: Հարցրեց. «Ինչո՞ւ եք մեռելի հետ գնում»: Եվ նրանք ասացին. «Ես ուրբաթի հրեշտակն եմ, իսկ սա՝ չորեքշաբթիի, մեռյալը երբեք չլուծարեց այդ օրերի պահքը, մենք պատվում ենք սրան՝ մարմինը գերեզմանին հանձնելով, իսկ հոգին հանում ենք Աստծո մոտ՝ լի ուրախությամբ և աներկյուղ՝ դևերի պատերազմներից»:

54. Հայր Պողոս Պարզամիտն ասաց. «Իմ աշակերտն ընկավ մեղքերի մեջ և դրանց մեջ էլ մեռավ: Ես Տիրոջն աղաչեցի ցույց տալ նրան,

և ահա տեսա նրան անլույս խավարի մեջ և անշարժ՝ ինչպես քար, և հիշեցի Տիրոջ խոսքը, որ ասում է. «Կապե՛ք դրա ձեռքերն ու ոտքերը» (Մատթ. ԻԲ, 13): Եվ ուշքի եկա, իմ ծերությունը տվեցի պահքերի ու արտասուքների և բարեխոս բռնեցի սուրբ Աստվածածնին: Եվ երևաց ինձ սուրբ Կույսը և ասաց. «Մի՛ տրտմիր, ես նրան ուղարկեցի քո առջև»: Եվ աչակերտս եկավ ինձ մոտ՝ լի խնդությամբ և շնորհակալությամբ. «Հանուն քեզ, հա՛յր, ինձ ազատեց սուրբ Աստվածածինը»: Եվ ասաց ինձ սուրբ Տիրուհին. «Ահա տեսար. ուրա՛խ եղիր և միշտ հիշի՛ր նրան պատարագներով, աղոթքներով և ողորմությամբ, քանզի դրանք հույժ օգտակար են բոլոր ննջեցյալներին»:

55. Ծերն ասաց. «Երբ սարկավագն ասում է. «Ողջո՛ւյն տվեք միմյանց» (պատարագի ժամանակ), տեսնում եմ Սուրբ Հոգին՝ եղբայրների շրթունքներին»:

56. Հայր Հովհաննեսը՝ Տեսանող կոչվողը, հափշտակվեց հոգով դեպի Երուսաղեմ, ուր Հարության տոնի մեծ հավաք էր, և ասում էին «Տեր ողորմեա»-ն: Քրիստոս կանգնած էր գերեզմանի վրա և երեսը դարձրել էր նրանցից, իսկ սուրբ Կույս Աստվածածինն աղերսում էր նրան... Եվ լսեց. «Դրանց բնավ չեմ ողորմի, որովհետև պղծեցին Իմ անունը»: Գնաց հայրը նաև խաչգյուտի վայրը (Գողգոթա), և այն ևս լի էր աղբով, և ասում էին. «Սեղանի անարժան սպասավորները արեցին այդ, և դա չի սրբվի այլ կերպ, եթե ոչ՝ հրով»:

57. Հայր Սքիրիոնն ասաց. «Առաջին կրոնավորները ճգնում էին առավել, քան մարդկային կարողությունն է, մենք՝ ըստ կարողության, այնուհետև կգան ուրիշները, որ մեր գործածի կեսի չափ կգործեն, ապա կգան ուրիշները, որ բնավ ոչինչ չեն անի, և եթե նրանց մեջ առաքինի մեկը գտնվի, մեզանից և մեր հայրերից էլ առաջ կանցնի»:

58. Մի նավապետ հայր Իլիգիոսին ոսկի բերեց: Եվ հայրը ասաց նրան. «Նստի՛ր երիվարը և գնա՛ Պետրոսի ճանապարհով և կհանդիպես մի երիտասարդի՝ երկնագույն զգեստ հագած, խոսի՛ր նրա հետ և ոսկին տո՛ւր նրան»: Սա գնաց և գտավ երիտասարդին, որը, պարանն առած, գնում էր իր հոր պարտքերի պատճառով կախվելու, և տվեց նրան ոսկին ու վերադարձավ քաղաք:

59. Սկյութիայի ավերման մասին հայր Մակարն ասաց. «Երբ տեսնեք մացառուտին մոտ չինված խուց՝ մոտ է նրա ավերումը, իսկ երբ այնտեղ տեսնեք երիտասարդների, վերցրե՛ք ձեր մախաղները և փախե՛ք, քանզի հասել է նրա կործանումը»:

60. Նույն հայր Մակարը տեսավ սատանային՝ բազում դդումներ շալակած ներքին անապատ գնալիս, և ասաց. «Ո՞ւր ես գնում»: Եվ նա ասաց. «Գինի եմ տանում եղբայրներին, թեև գիտեմ՝ չեն հնազանդվելու ինձ»: Եվ վերադարձին դարձյալ հարցրեց. «Հնազանդվե՞ց մեկնումեկը»: Եվ սատանան ասաց. «Այո՛, ոմն Թեոպեմտոս հնազանդվեց ինձ»: Հայր Մակարը գնաց այնտեղ, և նրան ընդառաջ ելան արմավենու ճյուղերով, և ամեն մեկը խնդրում էր, որ իր մոտ մտնի: Սակայն նա գնաց հիշված եղբոր խուցը և իմացավ, որ ծույլ է, և ասաց նրան. «Պահեցողություն արա՛ մինչև երեկո և կարդա՛ Ավետարանը, փոքրինչ կե՛ր, չափավոր քնի՛ր և մշտապես աղոթի՛ր»: Հետ այսու նա ընտիր անոթ դարձավ, մինչև դարձյալ տեսավ հայր Մակարը սատանային և հարցրեց, իսկ նա ասաց. «Ապստամբեց իմ դեմ այն մարդը»:

61. Նույն հայր Մակարը տեսավ մի աբեղայի՝ շրջապատված կանացի կերպարանք առած դևերով, որովհետև ծույլ էր: Գնաց նրա մոտ ու սկսեց չարախոսել իր անձի մասին, թե՝ ծույլ եմ և այս ծերությանս մեջ դևերի խաղալիք եմ դարձել: Եվ աբեղան ասաց. «Աստված է ճարը»: Իսկ հայր Մակարն ասաց. «Քեզ չեմ թողնի, մինչև ինձ երաշխիք չտաս, որ կաղոթես ինձ համար ամեն գիշեր»: Եվ լսելով ծերի աղաչանքները՝ եղբայրը խոստացավ անել այդ: Երբ գիշերը վեր կացավ աղոթելու ծերի համար, զղջաց և ասաց. «Ա՛նձ իմ եղկելի, ինչո՞ւ ծերի համար աղոթում ես, բայց քեզ համար չես աղոթում», և մի աղոթք էլ իր համար արեց: Այդպես շարունակեց մեկ շաբաթ՝ մի աղոթք ծերի համար էր անում, մի աղոթք՝ իր: Կիրակի օրը հայր Մակարը եկավ եկեղեցի և տեսավ, որ դևերը հեռու էին եղբոր խցից և խիստ տխուր էին, և հասկացավ ծերը, որ եղբոր աղոթքների պատճառով էին տխրել դևերը, իսկ ինքը խիստ ուրախացավ: Երբ աղոթքը ավարտեցին, գնաց դարձյալ եղբոր սենյակը և ասաց. «Քո աղոթքները հույժ օգտակար եղան ինձ, արդ խնդրում եմ, այսուհետև երկուական աղո՛թք արա ինձ համար»: Եղբայրը սկսեց երկուական աղոթք անել ծերի համար և ասաց. «Ո՛վ եղկելի անձ իմ, քեզ համար էլ երկուական աղո՛թք արա»: Այդպես էլ արեց. հաջորդ շաբաթ գիշերները չորսը աղոթք էր անում իր և ծերի համար: Երբ ծերը դարձյալ եկավ եկեղեցի, տեսավ դևերին առավել տրտում և հեռու, և գոհություն հայտնելով եղբորը՝ խնդրեց հավելել աղոթքները և երեք աղոթք անել իր համար: Եվ ավելացրեց եղբայրն աղոթքները իր և ծերի համար, և հաջորդ շաբաթ գիշերները վեց աղոթք էր անում: Երբ երրորդ անգամ հայր Մակարը եկավ նրա սենյակ, տեսավ դևերին խիստ բարկացած, և ատամ էին կրճատցնում

իր վրա և անարգում էին, քանզի տրտմել էին եղբոր կենցաղավարության վրա: Իսկ ծերը մտնելով սենյակ՝ պատմեց այս ամենը աբեղային և պատվիրեց զգույշ լինել աղոթքներում: Եվ եղբայրը Աստծու շնորհով և ծերի աղոթքներով դարձավ փութաջան և խիստ ճգնակյաց, իսկ դևերը տեսնելով նրա դարձը՝ փախան ամոթահար:

62. Մի անգամ սուրբ հայր Մակարը գնում էր անապատով և տեսավ Բելիարին՝ ծերի կերպարանքով, սև հանդերձներով, որն իր մարմնի բոլոր անդամներից կախել էր բժժաթուրմով լի պարկիկներ: Աղոթքի կանգնեց սուրբ Մակարն առ Աստված և Տիրոջ անվան զորությամբ հարցրեց Բելիարին, թե այդ ի՞նչ է տանում և ինչպե՞ս է խաբում մարդկանց: Եվ Բելիարը, հրեշտակից բռնադատված, ասաց ճշմարտությունը. «Այս թուրմերը իմ խաբեության զենքերն են, և ամեն ամանում խաբեությանը համապատասխան նյութ կա, որոնցով օծում եմ մարդկանց. օրինապահներին՝ այն ամանից, որ գլխիս վրա է, ցավերի մեջ եմ գցում, աղոթքի մեջ ժրաջաններին՝ այն անոթից, որ հոնքերիս վրա է, քուն եմ տալիս, այն թուրմից, որ ականջներիս վրա է, անլսողություն եմ տալիս, ռունգերիս վրա եղող ամանից պոռնկության անուշահոտություն եմ տալիս, և որ կա բերանումս, սրանից տալիս եմ որկրամոլություն, շատախոսություն, ստախոսություն, խաբեություն և բոլոր չարիքները, որ մարդու բերանից են դուրս գալիս: Պարանոցիս անոթից տալիս եմ հպարտություն և սնափառություն, կրծքիս անոթից՝ հավիտենական կյանքը մոռանալու դեղ, իսկ որ որովայնիս է, սրանից էլ վերցնում և տալիս եմ անասնականություն և գազանություն, պորտիցս՝ գարշելի պղծություններ և խառնակություններ, իսկ ոտքերիս թուրմից՝ գողություն եմ գրգռում, ուսերիցս, բազուկներիցս և թիկունքիցս և մեջքիցս՝ կռիվ, ոխակալություն և ընչասիրություն եմ հրահրում, սակայն դու երբեք իմ ազդեցության տակ չընկար»: Եվ սուրբ Մակարն ասաց. «Թո՛ղ սաստի քեզ իմ Քրիստոս Աստված, որ օրհնյալ է հավիտյան»: Եվ Բելիարը չքացավ, իսկ սուրբ Մակարը փառք տվեց Աստծուն:

63. Մի ծեր գնում էր, և երկու հրեշտակներ՝ նրա հետ: Մի լեշի պատահելով՝ ծերը բռնեց քիթը, հրեշտակները՝ նույնպես: Եվ ծերի հարցին, թե՝ դուք է՞լ եք հոտ առնում, պատասխանեցին ծերերը. «Ո՛չ, այլ հանուն քեզ արեցինք, մենք հոտ առնում ենք միայն մեղավորի հոգուց, որ հոտել է նրա մեջ»:

64. Մի ընտիր մենակյաց մինչև երեկո միմիայն աղոթում էր, իսկ երեկոյան թարմ հաց էր հայտնվում նրա մոտ, և նա ճաշակում էր: Հե-

տո եկավ մի եղբայր և նրան գործ տվեց աղաչանքով: Հանձն առավ այդ գործը կատարելու, իսկ երեկոյան հացը չհայտնվեց, և նա տրտմած քնեց: Եվ Տերը նրան ասաց. «Երբ մենակ ինձ համար էիր աշխատում, Ես էի հոգում քո մասին, իսկ երբ ուրիշի համար ես գործում, նրանից էլ սնունդ ստացի՛ր»:

65. Հայրերից մի կուսակրոն ծերունու հարցրին, թե ինչպես դուրս եկավ աշխարհից: Եվ նա պատմեց, որ ուներ հեզ, բարի, հիվանդոտ և աշխատասեր մի հայր, որի մահվան ժամանակ այնքան խառնված էր երկինքը, որ չորս օր հետո հազիվ հանձնեցին հողին, և մայր ուներ՝ լի ամեն տեսակ չարությամբ, սակայն մեռավ մի խաղաղ օր՝ իր կյանքի բոլոր օրերն ապրած: Եվ այս կույս երիտասարդը տագնապալի երկընտրանքի մեջ էր՝ որի՞ ճանապարհն ընտրի՝ հոր, թե՞ մոր: Եվ տեսիլքի մեջ տեսավ մի մեծ ծերի, որն ասաց նրան. «Ե՛կ քեզ տանեմ քո ծնողներին տեսնելու»: Եվ տարավ հոր մոտ, որ դրախտում էր, և մոր մոտ, որ գեհենում էր: Եվ նա զարթնելով՝ իրեն նվիրեց սուրբ կուսակրոնության:

66. Թագավորի հարկահանները գնացին աբեղաներից ևս հարկեր վերցնելու, որոնց մեջ էր նաև հայր Ամոնը, որն ասաց. «Մի՛ երկնչեք, պա՛հք պահեք և աղոթեցե՛ք, իսկ ես գնամ թագավորի մոտ և տասներկու օրից կվերադառնամ»: Եվ մտնելով իր սենյակը՝ աղոթում էր, և ովքեր գիտեին՝ սենյակում է, տրտնջում էին, մինչև որ տասնհինգ օր անց եկավ, և իր հետ բերեց թագավորի մատանիով կնքված գրություն՝ ուղղված Ալեքսանդրիայի իշխանին, և դա վերցրել էր մի գիշերում՝ հրաշքով:

67. Սուրբ Պափնոտիոսը ցանկացավ շրջել անապատով և տեսնել Տիրոջ ծառաներին: Չորս օր ու գիշեր ընթանալով՝ թուլացավ հոգնությունից և քաղցից: Եվ երևաց նրան մի փառավոր այր և զորացրեց նրան՝ օծելով շրթունքները: Գնաց ևս չորս օր ու գիշեր և մի քարայր գտավ՝ դռները փակ, և ներս մտնելով՝ մի ծերի տեսավ նստած, և երբ իր ողջույնը չառավ, մոտեցավ ձեռք տվեց, իսկ ծերը փոշիացավ, և արտասուքներով նրան հողին հանձնեց: Գնաց օրեր շարունակ և տեսնելով ոտնահետքեր՝ նստեց այնտեղ մինչև երեկո, ապա տեսավ գոմեշների մի նախիր և մի ծեր՝ նրանց մեջ՝ մազերով ծածկված. և աղոթելով՝ նրանք մոտեցան միմյանց: Եվ ծերը պատմեց. «Իմ անունը Տիմոթեոս է. ընակվում էի միաբանների մեջ և կտավ էի գործում, սակայն չարի ազդեցությամբ ուրիշ ճանապարհ ընտրեցի. չինեցի հյուրանոց և այնտեղ հյուրեր էի ընդունում, սակայն սատանայի պատրանքով

կնոջ մեղքի մեջ ընկա վեց ամիս: Խղճմտանքից մաշված՝ եկա այս անապատը, սակայն մեծամեծ տագնապներից չէի կարողանում ոտքի վրա մնալ, այլ գետնին թավալվելով էի աղոթք անում: Եվ ինձ լյարդի ցավ բռնեց, բայց հայտնվեց մի փառավոր այր և հարցրեց. «Ի՞նչ է պատահել քեզ»: Ես ասացի. «Տե՛ր, լյարդս է ցավում»: Նա ուժգին հարվածելով՝ պատռեց իմ կողը, հանելով ցույց տվեց իմ լյարդը, և ցավը սրբելով՝ տեղը դրեց և ասաց. «Ահա առողջացար, այլևս մի՛ մեղանչիր» (Հովհ. Ե, 14)*: Եվ ես լիովին նորոգվեցի, հնացած հանդերձն ընկավ, և ահա այստեղ եմ երեսուն տարի»: Տիմոթեոսը թույլ չտվեց այդ գիշեր Պափնոտիոսին մնալ իր մոտ և ասաց. «Չես կարող դիմանալ դևերի պատերազմին»: «Եվ գնացի տասնհինգ օր»,– ասաց Պափնոտիոս սուրբը,– «և գտա մեծն Ոնոփրիոսին, որի գլխի մազերը ծածկում էին ողջ մարմինը, և բանջարով ծածկել էր գոտկատեղը: Սա պատմեց իր մասին և ասաց. «Երիտասարդ ժամանակ բնակվում էի հարյուր սրբագույն միաբան եղբայրների հետ, և քանի որ նրանք գովում էին առանձնակեցությունը, որը Եղիայի և Հովհաննեսի նման է դարձնում, քանզի միայն Աստծուն են ունենում ապավեն բոլոր պատահած վշտերի ժամանակ, և ոչ թե՝ մարդկանց, ապա մի գիշեր ելա ու գնացի, և իմ առջև լույս երևաց: Երկյուղեցի և կամենում էի ետ դառնալ, բայց եկավ ինձ մոտ Աստծո հրեշտակը և ասաց. «Մի՛ երկնչիր, Տիրոջից առաքվեցի՝ պահպանելու քեզ»: Եվ անապատով գնացինք յոթ մղոն ու հասանք մի փակված այրի, և երբ բախեցինք, փառահեղ դեմքով մի ծեր դուրս ելավ և ասաց. «Բարի՛ եկար, եղբա՛յր Ոնոփրիոս»: Եվ ողջագուրելով ինձ՝ հյուրընկալեց իր մոտ մի քանի օր, ապա բերեց այս հեռագույն այրը. մնաց ինձ հետ երեսուն օր, ուսուցանեց դևերի պատերազմների որպիսությունը, համբերության խրատներ տվեց և գնաց ինձ մոտից: Տարին մեկ անգամ այցելում էր ինձ՝ մինչև փոխվեց առ Քրիստոս: Ես նրա սուրբ նշխարները դրեցի ինձ մոտ և այստեղ եմ ահա վաթսունհինգ տարի: Եվ այդ արմավենին, որ ինձ մոտ է, տարեկան պտղաբերում է տասներկու բազուկ*[1]*, և ամեն մեկը ինձ բավականացնում է մեկ ամիս: Տիրոջ հրեշտակը մխիթարում է ինձ և բոլոր նրանց, որ անապատում են, և Տիրոջ Մարմինն ու Արյունն է բերում: Եվ երբ մեկը մարդու տեսքի կարոտ է լինում, բարձրացնում է երկինք և ցույց է տալիս արդարներին ու սրբերի հոգիները, և մենք մոռանում ենք ամեն տեսակ տքնություն ու հոգնություն»: Եվ այս խոսքերն ասելիս նրա երեսը լուսավորվեց՝ ինչպես արեգակ, և Պափնոտիոսին*

[1] Բազուկ – արմավենու ողկույզ

ասաց. «Որդյա՛կ, ես այսօր ավարտում եմ կյանքիս ընթացքը. եթե մեկը հանուն ինձ պատարագ մատուցի Տիրոջը կամ «Հա՛յր մեր, որ յերկինս...» ասի, կամ եղբայրներին կերակրի, կամ խունկ ծխի Տիրոջը, ես կհիշեմ նրան իմ աղոթքներում, և Տերը նրան առաջին եկածների հետ կդասի»: Եվ օրհնեց Պափնոտիոսին և ասաց. «Թո՛ղ թշնամին քո մեջ արատ չգտնի՝ Քրիստոսի ահեղ ատյանին քեզ մեղադրելու համար, այլ պատասխան տաս քո ողջ վարքի համար»: Եվ այս ասելով՝ ննջեց: Պափնոտիոսը, պատելով նրա սուրբ նշխարները, դրեց հողը, իսկ ինքը խնդրեց Աստծուն՝ մնալ այդ տեղում, սակայն նույն պահին փլվեց ապաստանը, և արմավենին տապալվեց: Եվ Պափնոտիոսը գիտակցելով, որ Տիրոջը հաճո չէր բնակվելն այդտեղ, վեր կացավ և գնաց, իսկ Տիրոջ հրեշտակը երևալով՝ զորացրեց նրան և առաջնորդեց: Չորս օր անց հանդիպեց չորս ծերունիների, որոնք ասացին. «Բարով եկար, եղբայր և գործակից Պափնոտիոս, որ ամփոփեցիր սուրբ Ոնոփրիոսին. Տերը մեզ ցույց տվեց քո այսօրվա գալուստը, քանզի վաթսուն տարի մարդու երես չտեսանք՝ բացի քեզանից»: Եվ աղոթքի կանգնելուց հետո բազմեցին, և նրանց առջև հինգ նկանակ հայտնվեց՝ սպիտակ և փափուկ, կարծես թոնրից նոր հանված, և ուտելով գոհացան և ասացին. «Վաթսուն տարի է՝ Աստված չորս նկանակ է տալիս մեզ, իսկ այսօր ողորմածն Աստված հինգ նկանակ առաքեց»: Եվ գիշերը հսկում արեցին, որովհետև հաջորդ օրը կիրակի էր, և ասացին. «Գնա՛, եղբա՛յր, Եգիպտոս, պատմի՛ր մեծի մահը և մեր մասին, որպեսզի հիշեն՝ ի օգուտ իրենց»: Եվ երբ Պափնոտիոսը հարցրեց նրանց անունները, չհայտնեցին՝ ասելով. «Աստված գիտե մեր անունները, այլ դու աղոթի՛ր, որ տեսնենք իրար Աստծո գավթում»: Դուրս գալով՝ գնաց Պափնոտիոսը մի օրվա ճանապարհ և հանդիպեց մի դրախտի՝ լի ամեն տեսակ մրգերով՝ արմավ, թութ, դեղձ, փշատ, խաղող, թուզ, մուրտ և այլևայլ անուշահոտ գեղեցիկ ծառեր: Նրան թվաց, թե դա Աստծո դրախտն է, քանզի անպատմելի բույր էր տարածվում, և մի վճիտ աղբյուր ոռոգում էր այն: Հրեշտակների նման գեղեցիկ մանուկներ եկան և անունով դիմելով՝ ողջունեցին Պափնոտիոսին, և նա պատմեց, թե որտեղից էր գալիս, և նրանց մոտ եղավ յոթ օր՝ վայելելով այնտեղի մրգերը: Եվ հարցումին ի պատասխան՝ տղաները պատմեցին. «Որդիներն ենք Ոքսիրինքոս քաղաքի նախարարների, որոնք մեզ աշխարհիկ կրթության տվեցին, ինչպես նաև ուսանեցինք մեր Քրիստոս Աստծո մասին, և հասկացանք, որ այս սուտ կյանքը ոչինչ է, և փոքր-ինչ հաց ու ջուր վերցնելով, որ կբավականացներ յոթ օր, գաղտնի փախանք անապատ, և աղոթելով շրջում էինք, որ Աստված մեզ այցելի. և այցե-

լեց իսկ, քանզի հայտնվեց մեզ մի փառավոր այր և բռնելով մեր ձեռքից՝ բերեց այստեղ, ուր մի սուրբ ծեր կար: Նա նրան հանձնարարեց ուսուցանել մեզ, և նա մի տարի ուսուցանելուց հետո վախճանվեց: Եվ մենք մնացինք այստեղ արդեն վեց տարի: Շաբաթվա հինգ օրը ցրվում ենք և առանձին աղոթում, իսկ շաբաթ և կիրակի հավաքվում ենք՝ հսկումի: Տիրոջ հրեշտակը գալիս և մեզ Հաղորդություն է բաժանում, և մխիթարվելով՝ համբերում ենք բոլոր նեղություններին և փորձություններին»: Այդ խոսքն ասելու պահին նոր, անծանոթ և հրաշալի բույր տարածվեց, և Տիրոջ հրեշտակը գալով՝ հաղորդեցրեց նրանց Տիրոջ սուրբ Մարմնին և Արյանը. նույնպես և հաջորդ օրը: «Եվ հրաման ստացա երկնքից,– ասաց սուրբ Պափնոտիոսը,– գնացի Եգիպտոս և պատմեցի եղբայրներին այս ամենն ի փառս Աստծո»:

68. Երանելի Պաքմեոսը պատմեց մեզ սուրբ Մակարիոսի և սուրբ Մարկոսի մասին, թե նստում էին գավթում և խոսում էին Աստծո հետ: Ահա մի օր գավթի դուռը բախեց մի էգ առյուծ, որ վաղուց ի վեր մի կույր կորյուն ուներ և գցելով նրան դռների առջև՝ գնաց իր տեղը: Իսկ երանելի Մարկոսը, վերցնելով կորյունին իր գիրկը, տարավ ներս՝ Մակարիոսի մոտ: Աղոթք անելով՝ ձեռքերը դրին նրա վրա, և աչքերը բուժված՝ հանեց դուրս և տվեց առյուծին: Վեց օր անց առյուծը բերեց վայրի ցուլի կաշի, որ հափշտակել էր որսորդներից: Եվ Մարկոսը տվեց այն Մակարին, իսկ Մակարը տվեց սուրբ Աթանաս եպիսկոպոսին, իսկ նա՝ Ալեքսանդրի մորը՝ Մելիտինեին: Այս Մարկոսը մինչև մահ չտեսավ իր մարմինը»:

69. Մեծ հայրերից մեկը տեսանող էր. սա վկայեց և ասաց. «Զորությունը, որ տեսա կնքվողների վրա մկրտության ժամանակ, տեսա նաև մենակյացների վրա, երբ ստանձնում էին այդ կարգը»:

70. Ոմն աշխարհական իր որդու հետ գնաց հայր Սիսոյի մոտ՝ սուրբ Անտոնի լեռը, և ճանապարհին մեռավ նրա որդին, սակայն նա ամենևին չխռովվեց, այլ հավատով տարավ ծերի մոտ և որդու մարմնով հանդերձ ընկավ նրա առաջ, որպեսզի օրհնվեն նրանից, և մանկան հայրը, վեր կենալով, թողեց որդուն ծերի ոտքերի մոտ և խուզից դուրս եկավ: Ծերը, կարծելով, թե պաղատանքի մեջ է մանուկը, խոնարհվելով նրա վրա՝ ասաց. «Է՛լ և դո՛ւրս գնա», քանզի չգիտեր, թե մեռած է: Մանուկը նույն պահին վեր կենալով՝ գնաց: Եվ հայրը, տեսնելով նրան, ապշեց, ներս մտնելով՝ երկրպագեց ծերին և ամեն ինչ պատմեց: Եվ ծերը տրտմեց, քանզի չէր կամենում իրերի այդպիսի ընթացք, և պատվիրեց աշակերտին ոչ ոքի չպատմել՝ մինչև իր վախճանը:

72. Հայրերից մեկն ասաց. «Դրացի երկու եղբայրներ կային, որոնցից մեկն օտար էր, մյուսը՝ բնիկ: Օտարը վարքով խիստ ծույլ էր, իսկ բնիկը՝ հույժ առաքինի: Օտարը վախճանվեց, իսկ ծերը, քանի որ տեսանող էր, տեսավ, որ բազում հրեշտակներ էին սպասավորում նրան: Եվ երբ ուզեց երկինք մտնել, վիճաբանություն եղավ նրա համար: Ձայն եկավ երկնքից, որ ասաց. «Դրա ծուլության մասին գիտենք, որ այդպես է, սակայն օտարության համար բացե՛ք դրա առաջ»: Սրանից հետո ննջեց և բնիկը, և եկան նրա բոլոր ազգականները, և ծերը տեսավ, որ ոչ մի տեղ հրեշտակ չի երևում: Զարմացավ և երեսի վրա ընկնելով՝ պաղատում էր Աստծուն, թե ինչու օտարը հեղգ էր և այնպիսի փառքի արժանացավ, իսկ սա, առաքինի լինելով, ոչինչ չեղավ սրա համար: Եվ ձայն լսեց, որ ասաց. «Այս առաքինին, երբ վախճանվում էր, բացեց աչքերը, տեսավ ազգականներին, որ լաց էին լինում, և նրա հոգին մխիթարվեց, իսկ օտարը, թեև հեղգ էր, յուրայիններից ոչ ոքի չտեսավ և հոգոց հանելով՝ լացեց, և Աստված մխիթարեց նրան»:

72. Պատմեց հայրերից մեկը և ասաց. «Նիկոպոլսի անապատում կար ոմն մենակյաց, որին մի աշխարհական էր սպասավորում: Քաղաքում մի մեծահարուստ և ամբարիշտ մարդ կար, որը մեռավ, և նրան հուղարկավորում էին եպիսկոպոսներն ու ողջ քաղաքը՝ ջահերով ու մոմերով: Իսկ մենակյացի աշակերտը սովորականի պես հաց տանելով՝ գտավ մենակյացին վախճանված, քանզի բորենին կերել էր նրան: Երեսի վրա ընկավ Տիրոջ առաջ և ասաց. «Վեր չեմ կենա, մինչև պատասխան չստանամ, թե ինչո՞ւ է այսպես, որ այն ամբարտավանն այդքան փառքով թաղվեց, իսկ սա, որ օր ու գիշեր Քեզ էր ծառայում՝ նման վախճան ունեցավ»: Եկավ հրեշտակը և ասաց նրան. «Այն ամբարիշտը մի բարի գործ արեց և ստացավ իր պարգևն այստեղ, քանզի այնտեղ ոչ մի հանգիստ չի գտնելու, իսկ այս սուրբ մենակյացը, որ լի էր առաքինությամբ, մարդկորեն փոքր-ինչ հանցանքներ ուներ, դրանց դիմաց հատուցեց այստեղ, որպեսզի այնտեղ սրբված կանգնի Աստծո առաջ»: Հավատաց եղբայրը և փառավորեց Աստծուն՝ Նրա դատաստանների համար, որ ճշմարիտ են»:

73. Մի հիվանդոտ ծեր կար, որին խնամում էր կույսերից մեկը, իսկ մարդիկ ասում էին, թե սուրբը չեն միմյանց հանդեպ: Եվ ծերը լսեց: Երբ վախճանվում էր, հայրերին ասաց. «Երբ ես կվախճանվեմ, տնկե՛ք իմ գավազանն իմ գերեզմանի վրա, և եթե դալարի և պտուղ բերի, այնժամ կիմանաք, որ ես սուրբ եմ այդ մեղքից, իսկ եթե չբուսնի, կիմանաք, որ սուրբ չեմ»: Եվ երբ վախճանվեց, տնկեցին գավազանը

գերեզմանի վրա, և այն բուսնեց և պտուղ բերեց, և ամենքը տեսնելով՝ փառք տվեցին Աստծուն:

74. Երանելի հայր Արսենի աշակերտ հայր Դանիել Փարանացին պատմեց և ասաց. «Մեր հայր Արսենը պատմեց մեզ ոմն սկյութացու մասին և ասաց. «Բարեգործության մեծ վաստակ ուներ, սակայն հավատքի մեջ խորացած չէր և տգիտության պատճառով հանցանքի մեջ էր ընկնում և ասում էր. «Հացը, որ ընդունում ենք, բնությամբ Քրիստոսի մարմինը չէ»: Այս բանը լսեցին երկու ծերեր, որոնք գիտեին նրա բարի վարքն ու գործերը, և հասկացան, որ անմեղությամբ է ասում այդ խոսքը, գնացին նրա մոտ և ասացին. «Հա՛յր, մեկի մասին մի անհավատալի բան լսեցինք, որ ասում է, թե հացը, որ ընդունում ենք, ոչ թե բնությամբ Քրիստոսի մարմինն է, այլ՝ Քրիստոսի մարմնի օրինակը»: Իսկ ծերն ասաց. «Ե՛ս եմ, որ ասում եմ այդ»: Եվ աղաչեցին նրան ու ասացին. «Այդպես մի՛ մտածիր, հա՛յր, այլ այնպես, ինչպես մեզ ավանդեց Սուրբ Ընդհանրական Եկեղեցին. «Հավատում ենք, որ այս հացը, որ ընդունում ենք, Քրիստոսի մարմինն է ճշմարիտ և ոչ՝ օրինակը», ինչպես, օրինակ, հողը, վերցնելով երկրից, Աստված ստեղծեց մարդուն՝ ըստ Իր պատկերի, և ոչ ոք չի կարող ասել, թե ըստ Աստծո պատկերի չէ, նույնպես և անհասանելի է խորհուրդը, որ ասաց. «Հացն իմ մարմինն է և բաժակը՝ իմ արյունը (Մատթ. ԻԶ, 26-27, Մարկ. ԺԴ, 22-23, Ղուկ. ԻԲ, 19-20, Հովհ. Զ, 52-56)*», և մենք ճշմարտապես հավատում ենք, որ Քրիստոսի մարմինն ու արյունն է»: Իսկ ծերն ասաց. «Եթե ճշմարիտ հայտնություն չստանամ, չեմ հավատա դրան»: Նրանք ասացին. «Պաղատենք այս շաբաթ Աստծուն այս խորհրդի համար, և, հուսանք առ Աստված, որ կհայտնի մեզ»: Ծերը խնդությամբ ընդունեց այս խոսքերը, և յուրաքանչյուրը գնաց իր խուցը: Ծերը պաղատում էր Աստծուն և ասում. «Տե՛ր, դու գիտես, որ չարամտությամբ չէ, որ թերամտեցի. որպեսզի տգիտությամբ չմոլորվեմ, հայտնի՛ր ինձ, Տե՛ր Հիսուս Քրիստոս»: Իսկ մյուս ծերերը աղաչում էին Աստծուն և ասում. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, հայտնի՛ր ծերին այս խորհուրդը, որ հավատա և չկորցնի իր վաստակը»: Եվ Աստված լսեց երեքի պաղատանքն էլ: Երբ շաբաթը լրացավ, կիրակի օրը եկան եկեղեցի, և բացվեցին նրանց իմացական աչքերը. երբ նշխարները դրեցին սուրբ սեղանի վրա, երեքին էլ այն իբրև մանուկ երևաց: Երբ երեցը կամենում էր բեկանել հացը, ահա Տիրոջ հրեշտակը՝ սուրը ձեռքին, իջնելով երկնքից՝ մորթեց մանկանը, արյունը հեղեց բաժակի մեջ, և երբ երեցը բեկանում էր հացը և մանրում, հրեշտակը ևս կտրատում և մանրում էր մանկանը: Երբ*

եկան հաղորդություն առնելու սուրբ նշխարներից, ծերին տվեց միայն արյունոտ հում միս: Եվ երբ տեսավ ծերը, զարհուրեց, բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Հավատում եմ, Տե՛ր, որ այս հացը Քո մարմինն է և բաժակը՝ Քո արյունը»: Եվ նույն պահին միսը նրա ձեռքին հաց դարձավ՝ ըստ խորհրդի, և հաղորդվելով՝ գոհացան Աստծուց: Եվ ծերերն ասացին սկյութացուն. «Աստված գիտե մարդկանց բնությունը, որ հում միս չեն կարող ճաշակել. դրա համար իր մարմինը փոխարկեց հացի, արյունը՝ գինու, իսկ ովքեր հավատով են ընդունում՝ դառնում են Աստծո որդիներ»: Եվ գոհացան Աստծուց ծերի համար, որ չթողեց կորսվի նրա վաստակը»:

75. Ոմն եղբայր հարցրեց մի ծերի և ասաց. «Աստծո առաջ անո՞ւնն է մեծ՝ մյուսների չինության համար, թե՞ ծածուկ գործերը»: Եվ ծերը նրան ասաց. «Ես մի եղբոր գիտեմ, որը միշտ խնդրում էր Տիրոջը՝ ցույց տալ մի արժանավոր հոգի, երբ այն դուրս է գալիս մարմնից և նրա դուրս գալու կերպը: Լսեց նրա խնդրանքը Տերը և ուղարկեց իր շնորհը՝ ցույց տալու հետևյալը. տարավ նրան մի քաղաքի մոտ, իսկ քաղաքի եզրին մի վանք կար, իսկ վանքում՝ մի անվանի ծեր, որին մահվան ցավն էր տիրել: Նա լսեց, որ ողջ քաղաքն ասում էր. «Վա՜յ մեզ, եթե մեռնի այն սուրբը, որի շնորհիվ Աստված մեզ պահում ու կերակրում էր. նրանից հետո ի՞նչ կլինի մեզ հետ»: Եվ տեսավ եղբայրն Աստծո հրեշտակին՝ կանգնած այն անվանի մարդու կողքին՝ երեքսայրի սուրը ձեռքին, և Աստված նրան ասաց. «Խփի՛ր դրան անխնա, որովհետև մեկ ժամ անգամ չկարողացա հանգչել դրա մեջ»: Հրեշտակը հարվածեց նրա սրտին, և երեք օր հետո մեռավ բազում տանջանքներով: Ապա եղբայրը մտավ քաղաք և տեսավ այնտեղ մի օտարական աղքատի՝ փողոցում ընկած, իսկ Գաբրիելն ու Միքայելը նստած էին նրա աջ ու ձախ կողներում և ուզում էին առնել նրա հոգին, բայց հոգին առանց ցավերի չէր թողնում մարմինը: Եվ Միքայելն ասաց Գաբրիելին. «Ի՞նչ անենք, որովհետև հրաման չունենք սրա հոգին տանջանքներով վերցնելու»: Եվ Գաբրիելը գոչեց առ Աստված, թե ինչ կհրամայի: Եվ Աստված ասաց. «Հիմա կառաքեմ Դավթին և իմ բոլոր երգողներին, որպեսզի նրանց ձայների քաղցրությամբ թողնի մարմինը»: Եվ իսկույն իջան բազում զորություններ՝ անճառելի երգերով, և աղքատն ավանդեց հոգին»:

76. Պիմենի եղբայր Հոբը հանդիպեց մի հիվանդ մեծահարուստի, որը հոգին ավանդելու վրա էր և ասում էր. «Ողորմեա՛ ինձ, Տե՛ր»: Եվ եկավ սև զորքերի մի գունդ՝ սրերով, անողորմաբար հարվածեցին

նրան և առան հոգին՝ ասելով. «Արեգակի մայր մտնելու ժամանա՞կ ես խնդրում օգնություն Տիրոջից»:

77. Եղբայրներից մեկը՝ Սիմոն անունով, գնաց Անտոնի մոտ և ասաց նրան. «Հա՛յր, երազ տեսա, որում ասվում էր ինձ. "Բնակվի՛ր մարդու հետ, որը քեզանից կրկնակի ջանացող լինի"»: Անտոնն ասաց. «Երևացողը դև է, որովհետև գովեց քեզ և ջանացող անվանեց»: Եղբայրը նրան ասաց. «Լույս էր հագած»: Անտոնն ասաց. «Կարող է լույսի հրեշտակի կերպարանք առնել»: Եղբայրը մտքում ասաց. «Անտոնը ծածուկները չի տեսնում»: Անտոնը կարդաց նրա միտքը և ասաց. «Անմի՛տ, իմացի՛ր՝ երբ չարը եկավ քեզ մոտ, ողջույն չտվեց քեզ. գոնե դրանով չճանաչեցի՞ր նրան, քանզի ողջույն չկար նրա բերանում»:

78. Հայր Պրուտոսն և իր աշակերտը մի արջ տեսան, որ թաթով ավազն էր քանդում և բարձր մռնչում էր: Աշակերտը վախեցավ և ասաց. «Այդ ի՞նչ է, հա՛յր»: Պրուտոսն ասաց. «Բելիարն է, որդյա՛կ, օդի իշխանը»: Աշակերտն ասաց. «Զէ՞ որ նրան սպանեց Քրիստոս»: Հայրն ասաց. «Կատարյալներին սպանել է նա, որդյա՛կ, սակայն անկատարը կենդանի է և գոչում է, որը ավազ է թարգմանվում»:

80. Հայր Օտավը տեսավ, որ մի վիշապ եկավ-մտավ անապատ, և սև մեկը հեծնել էր նրան, և մի ձայն լսեց, որ ասաց. «Խավարը եկավ անապատ, և արդարության արեգակը գնաց»: Եվ հասկացավ, որ անապատից պակասելու են ընտիր գործերը:

81. Ոմն ծեր խնդրեց Աստծուց և ասաց. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց արա իմ աչքերը, որ տեսնեմ, թե ինչ են գործում դևերը»: Բացեց Տերը նրա աչքերը, և նա տեսավ, որ ճանճերի պարսի նման պատել էին մենակյացներին և իրենց ատամներն էին կրճտացնում, իսկ Աստծո հրեշտակները սաստում և հալածում էին նրանց:

82. Մի անգամ եղբայրներն առանց աղոթելու հաց էին ճաշակում և անհոգաբար զրուցում, և հայր Հովսեփն էլ՝ նրանց հետ: Հայր Հովսեփը տեսավ, որ դևերի բազմությունը՝ իբրև հեծյալների գնդեր, սրերով ու աղեղներով եկան իրենց վրա: Եվ լռեցրեց հայր Հովսեփը եղբայրներին ու ասաց. «Եկե՛ք, եկե՛ք աղոթենք», իսկ ինքը սկսեց այս սաղմոսները. «Թող նրանց սրերը մխրճվեն իրենց սրտերը, և նրանց աղեղները փշրվեն» (Սաղմ. ԼԶ 15), *«Թող ելնի Աստված, և ցրվեն նրա բոլոր թշնամիները»* (Սաղմ. ԿԷ 2). *«Անօրեն հզորն ինչո՞ւ է պարծենում չարությամբ* (Սաղմ. ԾԱ 3)*: Եվ եղբայրներին ասաց. «Նայե՛ք վերև՝ օդի մեջ»:*

Նայեցին և նույն տեսիլքը տեսան և լսում էին ձայներ, որ ասում էին. «Ջնջե՛նք և սպանե՛նք այս ապականիչ կրոնավորներին, քանզի քանի դեռ դրանք այստեղ՝ անապատում են, ողջ աշխարհում մենք հանգիստ չենք ունենա»: Խաչակնքեց հայր Հովսեփը ընդդեմ նրանց, և նրանք չքացան, և ասաց եղբայրներին. «Տեսե՛ք, եղբայրնե՛ր, որ մեր ծուլությունն ու դատարկաբանությունը դուռ բացեցին չարի առաջ, ուստի արիանա՛նք, քաջալերվե՛նք և գնա՛նք անապատի առավել խորքերը, որտեղ թերևս մարմնի հանգիստ չգտնենք»: Եվ այրեց խրճիթները հայր Հովսեփը և եղբայրներին տարավ անապատի խորագույն վայրերը. այնտեղ բնակվեցին և վայրը կոչեցին Սկիտ, որ թարգմանվում է խորհուրդների ցանկության ծարավ:

83. Հայր Սիսոն մի սպասավոր ուներ, որը սրտնեղած գնաց նրա մոտից մոտակա անապատը: Ծերը գնում աղաչում էր նրան, որ այնտեղից ետ դառնա, բայց չէր լսում ծերին: Երեք տարի տանջվեց ծերը գնալով և եղբորը ետ կանչելով և հազիվ կարողացավ հոժարեցնել նրան, որ նա վերադառնա իր տեղը: Օրեր անց ծերն ուղարկեց նրան ճյուղեր կտրելու, և երբ կտրում էր ճյուղերը, փայտը դիպավ նրա երեսին և հանեց ձախ աչքը, և նա խնդությամբ եկավ ու հորն ասաց. «Մի՛ տրտմիր. սա իմ հատուցումն էր՝ քեզ այդքան հոգնություն պատճառելուս համար»: Եվ օրեր անց դարձյալ արմավենիների չորացած ճյուղերը կտրելիս թափվեց նաև մյուս աչքը, և հայրը սաստիկ տրտմեց: Արդեն ինքն էր սպասավորում նրան տրտմությամբ և արտասուքներով, և իրեն էր մեղադրում պատահածի համար: Այդ օրերին մահացու հիվանդացավ հայր Սիսոն և կանչելով եղբորը՝ օրհնեց նրան և ասաց. «Հավատում եմ Աստծուն, որ իմ մահից հետո, երբ գա առաջին կիրակին, քո աչքերը կբացվեն, միայն թե աղոթի՛ր ինձ համար»: Եվ այսպես եղավ. հոր թաղումից հետո գնաց եկեղեցի՝ նրա ձեռքից բռնած, օրվա երրորդ ժամին անմիջապես բացվեցին նրա երկու աչքերն էլ, և առողջացած՝ փառավորեց Աստծուն:

84. Հայր Պիմենն իր աշակերտների մոտ միշտ ասում էր. «Հեռո՛ւ գնացեք»: Եվ մի անգամ աղաչեցին նրան և ասացին. «Ի՞նչ ես տեսնում, հա՛յր»: Եվ նա նրանց ասաց. «Դևերը տեսանելի կերպով պատերազմում են ինձ հետ և ո՛չ՝ իմ խորհուրդների, քանզի երբ ձեզ հետ էի, խորհուրդներիս մեջ էին կռվում, իսկ այժմ, զորությունից տկարացած, դեմ հանդիման են պատերազմում. այդպես են վարվում նաև յուրաքանչյուրի հետ»:

85. Հայր Ամոնը կամեցավ գնալ մեծն Անտոնի մոտ, և տեսավ երկնային ձեռքը, որ Անտոնի այրն էր ցույց էր տալիս իրեն: Եվ Ամոնը, մտնելով Անտոնի մոտ, մարգարեացավ նրա մասին. «Մեծ գործի համար է Աստված պահել քեզ», և դուրս հանելով նրան՝ ցույց տվեց նրան մի ապառաժ քար և ասաց. «Այս քարի պես ծանր բեռ պիտի բառնաս. զգո՛ւյշ եղիր»: Եվ դրանից հետո Անտոնը Տիրոջ շնորհով եպիսկոպոս դարձավ և շատ շատերին լուսավորեց:

86. Հովհաննես Կարճահասակն ասաց. «Իմ վարդապետը տեսիլք տեսավ և ինձ պատվիրեց գրել: «Տեսնում եմ,– ասաց,– ծովեզերքին երեք մարդու, և ծովի մյուս կողմից ձայն է գալիս. «Հրեղեն թևեր առե՛ք և եկե՛ք ինձ մոտ»: Եվ երկուսն առան սրաթռիչ հրեղեն թևեր և սրընթաց անցան ծովի վրայով, իսկ մեկը տեղում մնաց բավական ժամանակ, ապա մարմնավոր տկար թևեր առավ և սկսեց մեծ դժվարությամբ գնալ ծովի վրայով. երբեմն ընկղմվում էր, երբեմն դուրս էր գալիս ջրից և հազիվհազ անցնում էր»: Տեսիլքը նշանակում էր, որ ոչ շատ ժամանակ անց կլինեն կրոնավորներ՝ տկար վարքով, և հազիվ կանցնեն կենցաղի ծովով դեպի Տերը:

87. Անապատի մի այրում բնակվում էր մեկը, ով հարատև աղոթքի մեջ էր. այնտեղ մոտակա այրում կար նաև բորենու որջ: Եվ մի օր մինչ նա աղոթում էր՝ բորենին գալով բռնեց նրա ոտքից և քղանցքներից քաշելով՝ դեպի իր որջը տարավ, իսկ նա գնաց նրա հետ և ասաց. «Դո՛ւ, գազա՛նդ, ի՞նչ ես ուզում անել ինձ հետ»: Իսկ նա տարավ նրան մինչև իր որջը, և այնտեղից դուրս բերելով իր կույր ձագերին՝ դրեց նրա առջև: Եվ նա անմիջապես աղոթքի կանգնեց և ձեռքը դնելով փոքրիկ բորենիների վրա՝ բժշկեց և նրանց աչքերը բացելով՝ տվեց իրենց մորը: Մայրը՝ ինչպես մի զգայուն էակ, մեծ խնդությամբ վերցնելով՝ տարավ ներս:

88. Ոմն ծեր տեսավ մի աշխարհականի, որի մարմնին հրե բևեռներ էին գամված: Սա կանչեց նրան ու հարցրեց. «Ի՞նչ ես գործել»: Եվ երբ նա սկսեց պատմել, բևեռներն ընկան, և երբ վերջացրեց պատմելը, բևեռներն սպառվեցին: Եվ ծերը պատմեց նրան իր տեսիլքը և ասաց. «Դադարի՛ր չարիք գործել, ապա թե ոչ՝ անշեջ հուրը կայրի քեզ»:

89. Տերենութում կիրակի օրը գալիս էին եղբայրները և հաղորդվում սուրբ Խորհրդին, իսկ ոմն ծեր տեսնում էր, որ գալիս էին հրեշտակները և ոմանց պատկառանքով սպասարկում էին, իսկ ոմանց հաղորդություն չէին տալիս, իրենք էին առնում սուրբ խորհուրդը: Եվ

ծերը, զարմացած տեսիլքի վրա, քննեց նրանց, ում հաղորդություն չէր տրվել, սակայն ոչ մի մեղանչական արարք չգտավ, այլ միայն՝ մեղանչական խորհուրդներ և խոսքեր և ասաց. «Զգույշ եղե՛ք այն խորհուրդներից, որոնք հաճո չեն Աստծուն»:

89. Գնաց մի անգամ հայր Ամոնը հայր Անտոնի մոտ՝ անապատ, և ճանապարհին մոլորվելով՝ նստեց և փոքր-ինչ ննջեց, ապա քնից զարթնելով՝ աղոթքի կանգնեց և ասաց. «Տե՛ր Աստված, մի՛ կորցրու քո արարածներին»: Եվ նրան երևաց ասես մարդու ձեռք՝ երկնքից կախված, որ ցույց էր տալիս նրան ճանապարհը, մինչև եկավ կանգնեց Անտոնի այրի վրա:

90. Սիսո մենակյացի մասին պատմում էին, թե երբ մոտ էր մահվան, և հայրերը նստած էին նրա մոտ, նրա դեմքը փայլատակեց արեգակի նման, և ասաց նրանց. «Ահա երանելի Անտոնիոսն եկավ»: Եվ քիչ անց ասաց. «Ահա մարգարեների դասերը եկան»: Եվ նրա դեմքն ավելի պայծառացավ, և ասաց. «Ահա առաքյալների դասերը եկան»: Ապա նրա դեմքը կրկնապատիկ պայծառացավ, և կարծես ինքը խոսում էր ոմանց հետ: Եվ ծերերն աղաչեցին նրան և ասացին. «Ի՞նչ ես խոսում, հա՛յր»: Իսկ նա ասաց. «Ահա հրեշտակները եկան ինձ տանելու, և աղաչում եմ, որ թույլ տան՝ մի փոքր ապաշխարեմ»: Ծերերը նրան ասացին. «Դու ապաշխարության կարիք չունես, հա՛յր»: Հայր Սիսոն ասաց նրանց. «Զգիտեմ՝ երբևէ ապաշխարության սկիզբ դրե՞լ եմ»: Եվ ամենքը հասկացան, որ կատարյալ էր: Հանկարծակի դարձյալ նրա դեմքը փայլատակեց՝ ինչպես արեգակը, և ամենքը զարհուրեցին, և նրանց ասաց. «Ահա Տերը եկավ»: Եվ Տերն ասաց. «Ինձ մոտ բերե՛ք անապատի ընտիր անոթին»: Եվ իսկույն ավանդեց հոգին հայր Սիսոն, ապա փայլատակումներ եղան, և ամենուրեք լցվեց անուշահոտությամբ:

91. Ագռավները թռչում էին Ալեքսանդրիայում մի մեհյանի վրայով և կռնչում էին. «Կրա՛ս, կրա՛ս», որը յասոնական լեզվով նշանակում է՝ վաղը կտեսնես Աստծո փառքը: Եվ հաջորդ օրը լուր տարածվեց, թե մեռավ Հուլիանոսը, և քանդեցին մեհյանը՝ ասելով. «Քո հմայությունը՝ քո գլխին»:

92. Մարիամ անունով այրի կնոջ որդին ձիարշավի ժամանակ ձիուց ընկավ, սակայն վեր կենալով՝ դարձյալ հաղթեց: Եվ բազմությունն սկսեց աղաղակել. «Մարիամի որդին ընկավ և վեր կենալով՝ հաղթեց»: Այդ ձայնից ավերվեցին մեհյանները Ալեքսանդրիա քաղաքի կողմերում:

93. Գնացինք մի անգամ Ալեքսանդրիա՝ Սաղամայի միաբանություն, և այնտեղ գտանք երկու ծերի, որոնք մեզ պատմեցին Կոստանդնուպոլսի եկեղեցու պատրիարք Գենադիի մասին, թե շատերի համար էր տրտմում: Ոմն կղերիկոս՝ Քարիտոն անունով, բացարձակ չարությամբ էր կենցաղավարում, և պատրիարքը մարդ ուղարկեց նրա մոտ՝ իմանալու համար նրա մտադրությունները: Բայց նա բնավ չէր ուղղվում և ականջալուր չէր լինում հայրական խրատներին, քանզի մոգություններ և սպանություններ էր գործում: Եվ երբ պատրիարքը տեսավ, որ սա բնավ չի սթափվում, ուղարկեց մի պատվական կղերիկոսի և ասաց. «Գնա՛ սուրբ Ելևթերիի տաճարը, որտեղ պաշտոնավարում է այն անզգամը, և ծնրադրելով սուրբ սեղանի առաջ այսպես ասա. «Քեզանից՝ Քրիստոսի սուրբ վկայիցդ, խնդրում է պատրիարքը լսել մեղավորիս, քանզի քո զինվորը բազում բաների մեջ է մեղանչում. կա՛մ ուղղի՛ր նրան, կա՛մ հատուցի՛ր»: Եկավ պատվիրակը սուրբ տաճարը, ասաց՝ ինչպես պատվիրել էր իրեն, և երկու օր հետո մեռած գտան այն չարագործին:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

94. Հայր Անտոնիոսը, մինչ անապատում էր, հայտնություն ունեցավ մի անգամ, թե. «Քաղաքում քեզ հավասար մի բժիշկ կա, որն իր ողջ վաստակը, ինչ որ ավելանում է իր կերակրի ծախսից, աղքատներին և որբերին է բաժանում և միշտ երգում է Երեքսրբյան օրհնությունը՝ Աստծո հրեշտակների հետ»:

95. Հայր Եփրեմը, երբ դեռ երիտասարդ էր, այսպիսի տեսիլք տեսավ. իբր մի որթ ծլեց իր լեզվից և աճելով՝ բազմացավ ու լցրեց երկիրը: Սա անչափ պտուղ ուներ, և ամեն կողմից թռչունները գալիս և ուտում էին նրա պտուղը, և որքան նրանք ուտում էին, այնքան ավելի էր բազմանում նրա պտուղը:

96. Սրբերից մեկը տեսիլքի մեջ տեսավ հրեշտակների դասեր, որոնք իջնում էին երկնքից և իրենց ձեռքին երկու կողմից գրված թուղթ ունեին: Եվ կեսն ասում էր. «Ո՞վ կարող է կարդալ այս թուղթը», իսկ մյուս կեսն ասում էր. «Ոչ ոք չի կարող սա կարդալ՝ բացի Եփրեմ Ասորուց»: Եվ ծերը տեսիլքի մեջ տեսավ, որ թուղթը տվեցին Եփրեմին: Երբ առավոտյան վեր կացավ, տեսավ՝ Եփրեմը ուսուցանում էր եկեղեցում, և խոսքը՝ ինչպես աղբյուրից՝ հորդում էր նրա բերանից

և ոռոգում էր երկիրը: Եվ այս տեսանող ծերը գնաց Ուռհա քաղաքն ու բոլոր անապատները և ամենքին ասաց. «Ինչ ասի Եփրեմը, ամենը Սուրբը Հոգուց է»:

97. Հայր Ղունկիանոսի աշակերտները պատմեցին հետևյալը. «Երբ ծերը մեզ Ալեքսանդրիա էր ուղարկում՝ վաճառելու ձեռագործը, մեզ պատվիրում էր երեք օրից ավել չուշանալ, և ասում էր մեզ. «Եթե երեք օրից ավել մնաք այնտեղ, ձեր արյունից անպարտ եմ»: Մենք հարցնում էինք. «Իսկ ինչպե՞ս են կրոնավորները գյուղերում ու քաղաքներում օր ու գիշեր մարդկանց հետ մնում և չեն վնասվում»: Եվ նա, բացելով իր բերանը, մեզ ասաց. «Հավատացե՛ք ինձ, որդյակնե՛ր, ինչ կրոնավոր եմ դարձել՝ երեսունվեց տարի սենյակում եմ և այնտեղից ընավ դուրս չեմ եկել: Երեսունվեց տարի անց ես և հայր Դանիելը ինչ-ինչ գործերով գնացինք Ալեքսանդրիա՝ Եվսեբիոս պապի մոտ, և երբ մտա քաղաք, բազում կրոնավորների տեսա: Տեսնում էի, որ ագռավները թռչում էին նրանցից ոմանց երեսներին և թևերով ծածկելով՝ կտցահարում էին նրանց ծնոտները, մյուսները՝ մերկ կանանց իրենց գիրկն առած՝ փարվում էին նրանց և ականջներին շշնջում, ոմանք մանուկների հետ անարժան գործեր էին անում, իսկ ոմանք էլ սուր ունեին ձեռքին և մարդկանց մարմինները կտրատում և տալիս էին կրոնավորներին՝ ուտելու: Եվ սրանից հասկացա, որ յուրաքանչյուր կրոնավոր մի որևէ աղտից հաղթված է, և այդ ախտերի դևերը շրջում են նրանց հետ և այդ են խոսում նրանց մտքերի մեջ: Այդ պատճառով էլ չեմ ուզում, որդյակնե՛ր, որ ձեր ոտքը կախ գցեք քաղաքներում ու գյուղերում, որպեսզի այդպիսի խորհուրդների և դևերի ցանցերի մեջ չընկնեք»:

98. Հայր Զենոնի մասին պատմում էին, թե մինչ նա Սկիտեում էր, գիշերով դուրս եկավ իր սենյակից և գնալով շամբուտները՝ երեք օր ու գիշեր մոլորված շրջում էր: Երբ հոգնաբեկ ընկավ և խպառ ուժասպառ եղավ, ահա մի մանուկ եկավ նրա առաջ, որ հաց ուներ և ամանով ջուր, և նրան ասաց. «Արի կե՛ր և խմի՛ր»: Իսկ նա կարծում էր, թե աչքին ցնորք է երևում, և սկսեց աղոթել: Մանուկն ասաց. «Լավ ես անում»: Իսկ ծերը երկրորդ անգամ աղոթեց, և նա ասաց. «Լավ է»: Այնժամ վերցրեց ծերը, կերավ և զորացավ: Մանուկն ասաց. «Քանի օր որ եկել ես, այդքան հեռու ես սենյակից. բայց ե՛կ իմ հետևից»: Եվ վայրկենական բերեց նրան իր սենյակի դռան մոտ: Եվ երբ մտավ տուն, մանուկն ասաց. «Աղոթի՛ր ինձ համար»: Եվ անհետացավ:

99. Հայր Ղունկիանոսը նստած էր իր սենյակում, և հայրերից ոմանք եկել էին նրա մոտ: Եվ նա ոչ մեկի հետ չխոսեց, այլ շուտափույթ վեր

կացավ և գնաց ծովեզը: Երբ հասավ այնտեղ, տեսավ՝ մի նավ է գալիս Եգիպտոսից, ապա նավից իջավ մի սուրբ և հոգետես այր և մոտեցավ ծերին, քանզի նրան տեսնելու էր եկել: Եվ, միմյանց սուրբը համբույրով ողջունելով, աղոթքի կանգնեցին: Ծեր եգիպտացին ասաց Աստծուն. «Տե՛ր, ես քեզ աղաչեցի՝ չհայտնել ծերին իմ մասին, որպեսզի հոգնություն չքաշեր ինձ դիմավորելու համար»: Եվ եկան հայր Ղունկիանոսի սենյակը, իսկ հաջորդ օրը ծեր եգիպտացին վախճանվեց այնտեղ:

100. Եղբայրներին զգուշացնելու համար հայր Մակարը պատմեց, թե՝ Սկիտե եկավ մի կին և իր հետ բերեց դիվահար որդուն, և որդին ստիպում էր մորը և ասում. «Գնա՛նք այստեղից»: Իսկ մայրն ասում էր. «Հոգնած եմ և ուժ չունեմ գնալու»: Որդին ասում էր. «Ես շալակած կտանեմ քեզ»: Եվ ես զարմացա դևի վրա, թե ինչո՞ւ էր ստիպում նրանց»:

101. Արդ, որովհետև հավիտյանների Տերն ու բոլորի Աստվածն առատապես տալիս է պարգևներ իր արժանավորներին՝ ի փառս իր անվան և ի փրկություն իրեն հուսացողների, հարկավոր է շատերի օգտի համար պատմել սուրբ Մակարիոսի գործերի մասին: Այս երանելին մեծամեծ առաքինությունների մեջ մեծ կատարելության հասավ և վեր եղավ բոլոր ախտերից, տեսանող եղավ անտեսանելիների և երկնային խորհուրդները հայտնեց, հրեշտակներին հավասար եղավ և հասավ՝ ուր կարող էր հասնել մարդկային բնությունը, մինչև իսկ հրեշտակներին և դևերին էր տեսնում դեմ հանդիման, ինչպես պատմեցին մեզ նրա աշակերտները, որ նրանից լսեցին, և այսպես էին ասում. «Մտավ նա մի անգամ Հանեսի և Համբեսի պարտեզը (Բ Տիմ. Գ 8)*, և մտնելիս նրա դեմ սաստիկ պատերազմ մղեցին չար դևերը: Եվ որովհետև Աստծո շնորհներով ի դերև ելան սատանայի պատերազմական բոլոր հնարները, և նա հաղթվեց սրբից Քրիստոսի զորությամբ, հայտնեց ծերին իր անձը և իր ողջ անառակությունը, խաբեություններն ու նենգությունները, քանզի Աստված Ինքը բռնադատեց նրան՝ խոստովանելու այդ»:*

102. Մի անգամ եղբայրները հայր Մովսեսի մոտ ճաշում էին, և նա ասաց. «Ահա այսօր բարբարոսները գալիս են Սկիտե. ելե՛ք և փախե՛ք այստեղից»: Եղբայրներն ասացին նրան. «Իսկ դու չե՞ս փախչում, հա՛յր»: Նա ասաց նրանց. «Բազում տարիներ ի վեր ես սպասում էին այս օրվան, որպեսզի ինձ վրա կատարվի Տիրոջ խոսքը, որ ասում է. «Ով սուր վերցնի, սրով կմեռնի» (Մատթ. ԻԶ 52)*»: Եվ նրանք ասացին. «Մենք ևս չենք փախչի, այլ կմեռնենք քեզ հետ»: Մովսեսն ասաց. «Ես դա չգիտեմ, դո՛ւք ընտրեք»: Եղբայրները յոթն էին, և նույն պահին*

բարբարոսները, պաշարելով դուռը, մտան ներս և կոտորեցին նրանց, իսկ եղբայրներից մեկը թաքնվեց դռան հետևում: Եվ երբ սպանեցին նրանց, թաքնված եղբայրը տեսավ յոթ պսակներ, որ երկնքից իջնելով՝ նստեցին երանելիների գլուխներին:

103. Մի անգամ հայր Սիլովանեի աշակերտ Զաքարիան առավոտյան մտավ նրա մոտ և տեսավ նրան զմայլված և ձեռքերը տարածած դեպի երկինք: Եվ դուրս գալով՝ փակեց դուռը, ապա դարձյալ մտավ վեցերորդ և իններորդ ժամերին և գտավ նույն վիճակում: Իսկ տասներկուերորդ ժամին մտնելով՝ խաղաղված տեսավ նրան և ասաց. «Ի՞նչ է եղել քեզ այսօր, հա՛յր, ինչպե՞ս ես»: Իսկ նա ասաց. «Հիվանդացա այսօր, որդյա՛կ»: Իսկ նա, գրկելով նրա ոտքերը, ասաց. «Զեմ թողնի քեզ, մինչև չպատմես ինձ այն ամենը, ինչ տեսար»: Ծերն ասաց. «Քո թախանձանքի ու փափագի համար, որդյա՛կ, կասեմ քեզ: Առավոտից, որդյա՛կ, հափշտակվեցի երկինք և այնտեղ տեսա Աստծո փառքը և Աստծո առաջ էի մինչ հիմա, իսկ այժմ ահա վերադարձա այնտեղից»:

104. Հայր Թեովնա Ելեմելացու աշակերտ հայր Փոկասը պատմեց, թե. «Մինչ Սկիտեում էի, սենյակներից մեկում մի երիտասարդ կրոնավոր կար՝ Հակոբ անունով, նրա հետ էր նաև իր մարմնավոր ծեր հայրը, և երկուսն էլ սուրբ էին և չափազանց առաքինի: Այն խցերում երկու եկեղեցիներ կային՝ մեկը ուղղափառների, մյուսը՝ հերետիկոսների, և Հակոբը հաղորդվում էր ուղղափառ եկեղեցում, իսկ նրա հայրը՝ չարափառների եկեղեցում: Հակոբի խոնարհության ու հեզության համար նրան սաստիկ սիրում էին թե՛ ուղղափառները, թե՛ չարափառները: Եվ նրա հորն ուղղափառներն ասում էին. «Հա՛յր, թող քեզ չխաբեն հերձվածողներն իրենց հաղորդությամբ, քանզի նրանք Եվտիքեսի և Սևերիոսի հավատն ու աղանդն ունեն»: Նույնը և իրենց հերթին չարափառներն էին ասում. «Ծե՛ր, դու և քո որդին եթե հաղորդվեք ուղղափառների հետ, հոգով կկորչեք, քանզի նրանք Նեստորին և Արիոսին են հետևում»: Իսկ ծերը, քանի որ անմեղ և պարզամիտ էր, երկու կողմից էլ նեղվեց և չգիտեր, թե ում արհամարհի կամ ում լսի: Սկսեց աղաչել Աստծուն, որ ցույց տա իրեն ճշմարտությունը. փակվեց սենյակում և հագավ մեռելի զգեստը, որովհետև եգիպտացիների մոտ սովորություն կար՝ որ հանդերձով ձեռնադրվում էին՝ այդ սքեմը պահում էին որպես իրենց մահվան պատանք, և միայն կիրակի օրերին էին հագնում այն՝ հաղորդության ժամին, և նորից հապշտապ հանում էին: Իսկ ծերը հագնելով այն՝ բազում օրեր վշտերի մեջ փակվեց իր խցում և սրա համար աղաչում էր Տիրոջը, և վհատվեց պահքերից,

դևերից ու խորհուրդներից: Քառասուն օր անց հափշտակման մեջ ընկավ և տեսավ հրճվալից մի երիտասարդի, որ զվարթ դեմքով մտավ իր մոտ և ասաց. «Ծե՛ր, ի՞նչ ես անում այստեղ»: Իսկ ծերը, լուսավորված և զորացած, ճանաչեց նրան և ասաց. «Տե՛ր, դու գիտես՝ ինչ եմ անում և ինչ եմ խնդրում. մի կողմն ասում է՝ մի՛ թող այս եկեղեցին, որ չկորչես, երկրորդ կողմում ասում են՝ քեզ մոլորեցնում են նրանք, իսկ ես, քանի որ երկուսին էլ սիրում եմ, ընկել եմ անելանելի վիճակի մեջ՝ չգիտեմ՝ ինչ անեմ, եկա այստեղ՝ քեզանից խնդրելու և ստուգելու ճշմարտությունը»: Ասաց նրան Տերը. «Ուր որ գտնվում ես՝ այնտեղ է ճշմարտությունը. այնտեղ էլ մնա»: Եվ երբ լսեց այս, հայտնվեց ուղղափառների եկեղեցում՝ այն պահին, երբ քահանաները ընծաներն էին բերում, և քերովբեների բազմությունը օրհնաբանում էր»:

105. Ծերերը պատմում էին նաև հետևյալը. «Երբ Սկիտեում քահանաներն ընծաներն էին մատուցում, Սուրբ Հոգին արծվի տեսքով իջնում էր ընծաների վրա, և միայն քահանաներն էին տեսնում այն, ուրիշ ոչ ոք: Մի օր մեկն ինչ-որ բան խնդրեց սարկավագից, և վերջինս մերժեց նրան: Եվ երբ խորան ելան՝ կատարելու խորհուրդը, արծիվը չերևաց ընծաների վրա: Քահանան սարկավագին ասաց. «Այս ի՞նչ բան է, որ այստեղ չեկավ Աստծո նշանը: Ուստի՝ կա՛մ ես մեղանչեցի, կա՛մ դու. այժմ դու դրսում կանգնի՛ր, որպեսզի իմանանք, թե ով հանցանք գործեց»: Եվ երբ հեռացավ սարկավագը, արծիվն ըստ սովորության իջավ ընծաների վրա: Եվ երբ ավարտեցին պատարագի խորհուրդը, քահանան սարկավագին ասաց. «Ասա՛ ինձ, ի՞նչ գործեցիր»: Եվ նա ասաց. «Ուրիշ մեղք չգիտեմ, որ գործած լինեմ, բացի այն, որ եղբայրներից մեկը եկավ և խնդրեց այսինչ բանը, իսկ ես պարապ չէի, որ տայի, և նա տրտմած գնաց»: Քահանան ասաց. «Հիրավի քո պատճառով հեռացավ Աստծո շնորհը, որովհետև տրտմեցրիր եղբորը»: Եվ սարկավագը գնաց և թողություն խնդրեց»:

106. Հայրերից մեկն ասաց. «Երբ նահատակությամբ վախճանվեց Ալեքսանդրիայի Պետրոս հայրապետը, մի կույս հափշտակման մեջ լսեց, որ հրեշտակներն ասում էին. «Պետրոսը առաքյալների սկիզբն է, և Պետրոսը Աստծո մարտիրոսների լրումն ու ավարտն է»:

107. Մի մեծ ծերի մասին Սկիտեում ասում էին, թե երբ եղբայրները խցեր էին շինում, նա մեծ ուրախությամբ ելնում էր և ինքն էր հիմքը դնում և այնտեղից չէր հեռանում մինչև շինության ավարտը: Մի օր եղբայրները խուց էին շինում, և ծերը դուրս ելավ և սաստիկ տխուր էր: Եղբայրները նրան հարցրին. «Ինչո՞ւ ես այդպես տխուր, հա՛յր»:

Ծերն ասաց. «Նրա համար, որ այս վայրը ավերվելու է, որովհետև տեսա՝ երկնքից հուր ընկավ Սկիտե, և եղբայրները արմավենու ճյուղեր առած՝ հարվածում, ցրում էին հուրը և հանգցնում էին այն. երկրորդ անգամ դարձյալ բորբոքվեց այն, և հանգցրին նույն կերպով, սակայն երրորդ անգամ դարձյալ բորբոքվեց, և բռնկվեց ողջ Սկիտեն, այլևս չկարողացան հանգցնել, և ամեն ինչ հրո ճարակ եղավ. ահա այս է իմ տրտմության պատճառը: Եվ տեսիլքի խորհուրդն այս է. գրված է. «Արդարները որպես արմավենիներ կծաղկեն» (Սաղմ. ՂԱ 13)*: Եվ սա ուսուցանում է արդարության և քաղցրության բարձրությունը, որ են՝ առաքինությունը, սրբությունը և բարի գործերը: Արմավն ունի մեկ սպիտակ կորիզ և երեքը՝ արտաքուստ. սա նշանն է արդար հայրերի բոլոր առաքինությունների, քանզի մի էր նրանց սիրտն ու խորհուրդը, որ հայում էր Աստծուն, այն պարզ էր ու սպիտակ և մեղքերից սևացած չէր, այլ սպիտակ էր հավատի լույսով: Եվ արդարությունը առաքինությունների մեջ բարձրություն ունի և բոլոր բարի գործերի մեջ՝ քաղցրություն: Ուրեմն, այն հուրը, որ իջավ, Աստծո բարկությունն էր, և առաջին հայրերը, այնպիսի ճյուղեր ունենալով, հանգցրին նաև երկրորդը: Իսկ այժմ, որ գալու է, չենք կարող հանգցնել, որովհետև այդպիսին չենք»:*

108. Ծերն ասաց. «Քանի որ սոմնացի կինը այլ հոգսեր չուներ, դրա համար ընդունեց Եղիսե մարգարեին (Դ Թագ. Դ 8-18)*. Նույնպես և մարդու հոգին՝ երբ դատարկվի աշխարհիկ բոլոր հոգսերից, այնժամ կընդունի Աստծո Հոգու շնորհները»:*

109. Ծերն ասաց. «Մի եղբոր տեսա, որ սենյակում սաղմոս էր ուսանում: Եվ դևը եկավ դռան մոտ, որ ներս մտնի, և որքան ժամանակ եղբոր բերանը սաղմոսում էր՝ չկարողացավ մտնել, իսկ երբ լռեց սաղմոսելուց, ներս մտավ և սկսեց պատերազմել նրա հետ»:

110. Հայրերից մեկի մասին ծերն ասում էր, թե ամենևին որևէ մեկից չուսանեց Սուրբ Գիրքը, սաղմոսները և աղոթքները, կամ որևէ այլ բան, սակայն քահանա դարձավ Աստծո շնորհներով և սիրով, ինչպես ուսյալ՝ ամեն ինչ գիտեր, քանզի լի էր առաքինությամբ, հրաշքներ ու մեծամեծ բժշկություններ էր անում, և իր կյանքի վաթսուն տարիներին կինարմատ չտեսավ, իր մազերը չկտրեց, նաև՝ երեք օր առաջ իմացավ իր մահը: Այսպիսին էին այն ծերերը, որոնք հիշվելու արժանի են և սրտի համար քաջալերանք են:

111. Մի եղբոր մասին ասում էին, թե կիրակի օրը, երբ հնչեցրին եկեղեցու զանգերը, ըստ սովորության վեր կացավ գնալու եկեղեցի: Դևից մտախռով՝ խորհում էր իր մտքում և ասում. «Ո՞ւր ես գնում և հանուն ինչի, նրա համար ես գնում եկեղեցի, որ հաց ուտես և գինի ըմպես, և մարդիկ էլ քեզ ասեն, թե սա Քրիստոսի Մարմինն ու Արյունն է և խաբեն քեզ. դրա համար մի՛ գնա, մի՛ խաբվիր և մի՛ հավատա, որովհետև դա այդպես չէ»: Հնազանդվեց եղբայրն այս խորհրդին և չգնաց եկեղեցի: Իսկ եղբայրները նրան էին սպասում, որովհետև այսպես էր կարգը. բոլորը հավաքվում էին եկեղեցում, ապա սկսվում էր աղոթքը: Եվ երբ երկար սպասեցին, բայց նա չեկավ, գնացին նրան տեսնելու, որովհետև կարծում էին, թե հիվանդ է կամ մեռած: Եվ երբ հասան խրճիթը, տեսան, որ ողջ է, հարցրին. «Ինչո՞ւ չեկար աղոթքի»: Իսկ եղբայրն ամաչում էր նրանց պատմել թշնամու խորհուրդը և զանազան պատճառներ էր բերում, սակայն եղբայրները հասկացան, որ թշնամու խաբեությունից է, ուստի աղաչում էին նրան և ասում. «Խոստովանի՛ր մեզ ճշմարտությունը»: Եվ նա ասաց. «Ներեցե՛ք ինձ, եղբայրնե՛ր, որովհետև վեր կացա և ուզում էի գալ եկեղեցի, իմ խորհուրդն ինձ ասաց. «Քրիստոսի Մարմինն ու Արյունը չէ, որ գնում ես հաղորդվելու, այլ լոկ հաց և գինի է»: Ուստի, եթե կամենում եք, որ ձեզ հետ գամ եկեղեցի, հավատ ներշնչեք իմ խորհուրդներին»: Իսկ նրանք ասացին. «Վե՛ր կաց, եղբա՛յր, ե՛կ մեզ հետ եկեղեցի, և մենք կաղաչենք Աստծուն, և նա երկնային զորությամբ կհավատացնի քեզ»: Գնաց եղբայրը նրանց հետ եկեղեցի, և եղբայրները նրա համար բազում պաղատանքներ մատուցեցին Աստծուն, և այդպես սկսվեց պատարագը: Կանգնեցրին այն եղբորը եկեղեցու մեջտեղում, և նա մինչև աղոթքների ավարտը այնտեղ կանգնած էր և չէր դադարում երեսն ու կուրծքը արտասուքներով թրջել: Իսկ աղոթքներն ավարտելուց հետո եղբայրները եկան նրա մոտ և ասացին. «Պատմի՛ր մեզ՝ ինչ որ տեսար, և ոչ մի բան բնավ մի՛ թաքցրու մեզանից՝ ինչ որ քեզ ցույց տվեց Աստված, որպեսզի մենք ևս շահենք»: Իսկ նա երկյուղով և արտասուքներով ասաց. «Երբ ընթերցվեց Պողոս առաքյալի թուղթը, և սարկավագը եկավ ամբիոն՝ ընթերցելու Ավետարանը, տեսա, որ բացվեցին եկեղեցու ձեղունները, և երևաց երկինքը, հրեշտակները եկան լսելու Ավետարանի խոսքը, իսկ սարկավագը, որ Ավետարանն էր ընթերցում, դարձավ իբրև հրե սյուն, և խոսքերը ելնում էին նրա բերանից՝ ինչպես հրեղեն կայծակներ: Եվ տեսա, որ սուրբ սեղանի շուրջը երկիրը բացվեց մինչև խորքերը, իսկ քահանաներն ահով ու դողով մոտ էին կանգնած: Տեսա երկինքը բացված, և հրե սյուն էր իջնում երկնքից,

հրի հետևից գալիս էին հրեշտակների բազմություններ, իսկ նրանց մեջ՝ մարդկային երկու դեմք՝ անչափ գեղեցիկ, որոնց գեղեցկությունը անպատմելի է մարդկային լեզվով. նրանց դեմքի գեղեցկությունը նման էր արեգակի: Եվ այն երկու դեմքերի մեջտեղում կար մի փոքրիկ մանուկ, իսկ հրեշտակները նրա շուրջն էին: Հրեշտակները եկան կանգնեցին սեղանի շուրջը, իսկ երկու հրեշտակներն ու մանուկը ելնելով՝ նստեցին սեղանի վրա՝ խորհուրդին մերձ: Եվ երբ քահանան վերցրեց սուրբ հացը՝ բեկանելու, այն երկու այրերը բռնեցին մանկան ոտքերն ու ձեռքերը և իրենց հետ ունեցած սրով մորթելով մանուկին՝ լցրին նրա արյունը սկիհի մեջ, իսկ մարմինը մանր կտրատելով՝ դրին սուրբ հացի վրա, և այն սուրբ հացը դարձավ արյունաթաթախ միս: Ես հիշեցի առաքյալի խոսքը, որ ասում է. «Քրիստոս՝ մեր զատիկը, մորթվեց» (Ա Կորնթ. Ե 7)*: Իսկ երբ եղբայրները գնում էին սուրբ Հաղորդություն առնելու, քահանան նրանց տալիս էր արյան մեջ թաթախված միս, և երբ գոհանում էին և տանում էին բերանները, հաց էր դառնում, և այդպես ճաշակում էին: Եվ երբ ես մոտեցա հաղորդվելու, քահանան ինձ արյունախառն միս տվեց, իսկ ես չէի կարողանում ճաշակել, և ինձ ձայն եկավ սեղանից, որ ասում էր. «Դո՛ւ, ո՛վ մարդ, ինչո՞ւ չես հաղորդվում, ահա այս է, որ դու խնդրում էիր»: Եվ ես ասում եմ. «Ների՛ր ինձ, Տե՛ր, քանի որ ես միս չեմ կարող ճաշակել»: Եվ նա ասում է. «Եթե մարդը կարողանար միս ուտել, Տերը իր մարմնի միսը կտար մեզ, ինչպես հիմա դու ունես, սակայն քանի որ ի զորու չեն ուտելու, դրա համար հացը տվեց՝ որպես խորհուրդ, և հացն այդ իր մարմինն է: Եվ ինչպես առաջին Ադամն Աստծո ձեռքով հողից մարմին դարձավ, նրա վրա փչեց կենդանության հոգին, իսկ հետո հողը դեպի հողը դարձավ, իսկ հոգին մնաց, այդպես և մեզ հացը տվեց՝ որպես իր սուրբ մարմինը՝ Սուրբ Հոգով, և մարմինն ընծայվում է երկնքին, իսկ Սուրբ Հոգին բնակվում է մեր սրտերում: Այժմ, եթե հավատում ես սրանց, ընդունի՛ր այս Հաղորդությունը»: Եվ ես ասացի. «Հավատո՛ւմ եմ, Տե՛ր»: Երբ այս ասացի, միսը, որ իմ ձեռքում էր, դարձավ սուրբ հաց, և ես գոհությամբ հաղորդվեցի: Իսկ երբ խորհուրդն ավարտելով քահանաներն եկան սարկավագանոց, դարձյալ տեսա եկեղեցու ձեղունները բացված, և երկնքի բոլոր զորքերը, այն երկու այրերը և մանուկը ելան երկինք»: Այս լսելով՝ եղբայրներն ավելի հաստատվեցին Սուրբ Հաղորդության խորհրդի հանդեպ հավատի մեջ և իրենց խցերը գնալով՝ օրհնում էին Աստծուն:*

112. Ոմն դիվահար եղբայր եկավ Սկիտե, և նրա համար եկեղեցում աղոթք արեցին, սակայն դևը չելավ նրա միջից, որովհետև սաստիկ չար էր: Եվ եղբայրներն ասացին. «Հայր Բեսարիոնից բացի ոչ ոք չի կարող դրան հանել, սակայն եթե նրան ասենք սրա մասին, հանձն չի առնի և եկեղեցի չի գա, բայց այսպես կանենք. սրան կտանենք և կդնենք եկեղեցում՝ նրա տեղը, որ ննջի. և առավոտյան, քանի որ նա ամենքից շուտ է գալիս եկեղեցի, երբ դրան գտնի այնտեղ, կարթնացնի, իսկ նրա սուրբ ձայնից ու հպվելուց՝ դևը կելնի դրա միջից»: Այդպես էլ արեցին և դիվահարին դրեցին նրա տեղը: Առավոտյան ծերը եկավ մենակ և նրան գտավ այնտեղ ու չիմացավ, թե ով է, բոթեց նրան և ասաց. «Դո՛ւրս ել»: Եվ նույն պահին դևը դուրս եկավ նրանից, և այդ պահին բժշկվեց եղբայրը՝ սուրբի խոսքից պատկառելով, թեև սուրբ հայրն ինքը չգիտեր:

113. Հայր Գելասիի աշակերտները մեզ պատմեցին, թե մեկը ձուկ բերեց նրա համար, և տնտեսը վերցնելով այն՝ խորովեց, դրեց սկուտեղի վրա և իր օգնական պատանուն ասաց՝ պահի՛ր այն, իսկ ինքը գնաց ծառայության: Պատանին տնտեսի դուրս գալուց հետո սկսեց ուտել այն: Եվ երբ տնտեսը վերադարձավ ու տեսավ, որ նա դեռ ուտում է, ուժգին գայրանալով՝ ոտքով հարվածեց նրա սրտին, և պատանին ընկնելով՝ մեռավ: Մեծ ահ ու զարհուրանք պատեց տնտեսին, և վերցնելով մեռելին՝ դրեց մահճի վրա և թաքցրեց, որովհետև ճաշի ժամ էր: Հետո գնաց ընկավ հայր Գելասի ոտքերը և կատարվածը պատմեց նրան: Իսկ հայր Գելասն ասաց. «Ոչ մեկին մի՛ ասա այդ մասին, այլ, մինչ երեկոյան կհանգստանան եղբայրները, վերցրո՛ւ մեռած մանկանն ու տա՛ր, դի՛ր եկեղեցու սարկավագանոցի սեղանի առջև: Եվ տնտեսն այդպես էլ արեց. դրեց այնտեղ և հեռացավ: Եվ ծերը գիշերը մտնելով սարկավագանոց՝ սկսեց աղոթել մինչև գիշերվա կեսը: Երբ եղբայրները հավաքվեցին եկեղեցում, ծերը դուրս եկավ սարկավագանոցից՝ կենդանի մանուկն էլ իր հետ, և մինչև ծերի մահվան օրը եղելությունը ոչ ոք չիմացավ, բացի տնտեսից: Ապա տնտեսը հռչակեց այն, քանզի այդպես ծերն էր պատվիրել՝ մինչև իր մահվան օրը չասել ոչ մեկին»:

114. Մի կին կրծքի քաղցկեղ ուներ և, լսելով հայր Ղունկիանոսի մասին, գնաց նրան տեսնելու, որպեսզի բժշկվի, իսկ հայր Ղունկիանոսն այդ ժամանակ բնակվում էր Ենատասում գտնվող Ինն վանքում, որն Ալեքսանդրիայի արևմտյան կողմում է: Երբ կինը փնտրում էր ծերին, հանդիպեց նրան այն պահին, երբ նա ճյուղեր էր հավաքում: Եվ կինը տեսնելով նրան՝ հարցրեց. «Եղբա՛յր, որտե՞ղ է բնակվում Աստծո

ծառա Ղունկիանոսը», որովհետև չգիտեր, թե նա է: Ծերը նրան ասաց. «Եվ ի՞նչ ես սպասում նրանից, քանի որ նա հիմար է և մոլագար. մի՛ գնա նրա մոտ, քանզի նա խելագար է, այլ ինձ ասա՝ ի՞նչ ես խնդրում նրանից»: Կինը ցույց տվեց նրան իր ցավը, իսկ ծերը խաչակնքեց այտուցը, արձակեց նրան և ասաց. «Աստված թող առողջացնի քեզ, Ղունկիանոսը ոչինչ չի կարող անել»: Կինն անմիջապես բժշկվելով՝ վերադարձավ տուն և պատմեց կատարվածը, թե ինչպես չգտավ հայր Ղունկիանոսին, և մեկ ուրիշ ծեր բժշկեց իրեն: Եվ երբ նկարագրեց ծերին, լսողները ճանաչեցին, որ նա հենց հայր Ղունկիանոսն էր:

115. Մեկ ուրիշ անգամ դարձյալ հայր Ղունկիանոսի մոտ բերին մի դիվահարի, և նա նրանց ասաց. «Ի՞նչ կարող եմ անել դրան, քանզի ես մեղավոր մարդ եմ: Տարե՛ք դրան հայր Զենոնի մոտ»: Եվ երբ տարան դիվահարին Զենոնի մոտ, նա սկսեց հալածել դևին: Իսկ դևն սկսեց գոչել և ասել. «Ես քո խոսքով չէ, որ ելնում եմ, Զենո՛ն, այլ այս պահին հայր Ղունկիանոսն է աղոթում, և նրա աղոթքը հալածեց ինձ»:

116. Դարձյալ մի անգամ հայր Ղունկիանոսի մոտ բերին մի կնոջ, որն իր աջ ձեռքի վրա անբուժելի վերք ուներ: Նա լռելյայն կանգնեց խցից դուրս՝ պատուհանի առաջ, և մեկ այլ կին՝ նրա կողքին: Եվ ծերը, մինչ զամբյուղ էր հյուսում, նայեց պատուհանին, տեսավ նրան, սաստեց և ասաց. «Գնա՛ քո տունը, ո՛վ կին»: Եվ կինը առողջացած՝ վերադարձավ իր տունը:

117. Դարձյալ, մի անգամ ոմն ծեր հայր Ղունկիանոսի կնգուղը տարավ մի դիվահարի տուն, և երբ բացեց դուռը, որ ներս մտնի, դևն սկսեց գոռալ և ասել. «Ինչո՞ւ բերիր այստեղ հայր Ղունկիանոսին, որ հալածի ինձ»: Եվ իսկույն դևը ելավ մարդու միջից և փախավ, և այդ մարդը բժշկեց:

118. Հայր Սիսոն պատմում էր, թե՝ մինչ Սկիտեում էի՝ հայր Մակարիոսի մոտ, յոթ եղբայրներով հնձի ելանք, իսկ մի այրի կին հետևում էր մեզ հնձի ժամանակ, հասկեր էր քաղում և ամբողջ օրը չէր դադարում ողբալուց: Հանդի տերը հարցրեց նրան և ասաց. «Ի՞նչ է պատահել քեզ, կի՛ն, որ անդադար ողբում ես»: Եվ նա ասաց. «Իմ ամուսինը մեկից ինչք էր վերցրել որպես ավանդ և թաքցրել. ինքը մեռավ՝ առանց խոսք ասելու և ինձ չասաց, թե ուր դրեց, և ահա ինչքի տերը պատրաստվում է գերի վերցնել ինձ և իմ զավակներին ու վաճառել»: Երբ այս լսեց հայր Մակարը, նրան ասաց. «Կգաս ինձ մոտ՝ այնտեղ, ուր միջօրեի տոթին հանգստանում ենք»: Կեսօրին կինը եկավ

նրա մոտ և ամեն ինչ պատմեց նրան: Ծերը նրան ասաց. «Գնա՛նք ինձ հետ և ցո՛ւյց տուր ինձ քո մարդու գերեզմանը»: Եվ վերցնելով իր հետ յոթ եղբայրներիս՝ կինը տարավ իր հետ, և երբ տեղ հասանք, ծերը կնոջն ասաց. «Գնա՛ դու քո տուն»: Երբ կինը գնաց, ծերն աղոթք արեց և ասաց. «Դո՛ւ, այսինչ անունով մա՛րդ, ո՞ւր դրիր այն ավանդը, որ վերցրիր այսինչ մարդուց»: Իսկ մեռելը պատասխանեց և ասաց. «Թաղված է իմ տանը՝ անոտ մահճակալիս տակ»: Եվ ծերն ասաց. «Ննջի՛ր դարձյալ մինչև հարության օրը»: Երբ այս տեսան եղբայրները, վախեցան և ընկան նրա ոտքերը, իսկ նա վեր կացրեց նրանց և ասաց. «Ինձ համար չէ, որ եղավ այս գործը, որովհետև ես մեղավոր մարդ եմ, այլ այն այրի կնոջ և նրա որբերի համար Տերն այս ողորմություն արեց նրանց»: Եվ գալով՝ այրուն ասաց պահուստի տեղը, և նա վերցնելով այն՝ տվեց տիրոջը և ազատվեց նրա ծառայությունից: Եվ այրին փառավորելով երկրպագում էր ծերին և հռչակում էր այս բանը, և ովքեր լսում էին՝ փառավորում էին Աստծուն:

119. Հայր Մակարի մասին ասում էին, թե մի անգամ ելավ Սկիտեից և ճանապարհվեց դեպի քաղաք՝ կողովները շալակած, և երբ հոգնաբեկ նստեց, աղոթելով ասաց. «Տե՛ր, դու գիտես, որ այլևս ուժ չունեմ տանելու»: Եվ այս ասելիս հայտնվեց գետի ափին, ուր պատրաստվում էր գնալ. և վեր կենալով՝ վաճառեց կողովները և վերադարձավ Սկիտե:

120. Ոմն եգիպտացու որդին ջրդողություն ուներ, և նա նրան բերեց հայր Մակարի մոտ, դրեց նրա խրճիթի դռան մոտ, իսկ ինքը հեռացավ և հեռվում սպասում էր: Ծերը, պատուհանից նայելով, տեսավ մանկանը, որը լաց էր լինում, և նրան հարցրեց. «Քեզ ո՞վ բերեց այստեղ»: Մանուկն ասաց. «Իմ հայրը ինձ դրեց այստեղ ու ինքը գնաց»: Ծերն ասաց նրան. «Շուտ վե՛ր կաց և գնա՛, հասի՛ր նրան»: Եվ իսկույն առողջանալով՝ վեր կացավ և հասավ իր հոր ետևից: Երբ հայրը տեսավ որդուն առողջացած, փառավորեց Աստծուն, որ փառավորում է իր սրբերին: Եվ ողջ-առողջ վերադարձան իրենց տուն:

121. Հայր Մելին մի անգամ գնում էր մի տեղ և տեսավ ոմն կրոնավորի, ում ոմանք մեղադրում էին մարդասպանության մեջ: Ծերը մոտեցավ նրան ու հարցրեց. «Ճշմարի՞տ է՝ ինչ որ ասում են»: Եվ լսեց ու իմացավ, որ սուտ էին վկայում, և նրան բռնողներին ասաց. «Որտե՞ղ է սպանվածը»: Եվ նրանք ցույց տվեցին մեռելին, և երբ մոտեցավ նրան, ասաց. «Դուք ևս աղոթքի կանգնե՛ք»: Նա ձեռքերը կարկառեց առ Աստված, և նույն պահին մեռելը ոտքի կանգնեց: Ծերը նրան ասաց. «Սրանց բոլորին ի լուր ասա՛՝ ո՞վ սպանեց քեզ»: Եվ նա ասաց. «Ես

բազում ինչքեր դրեցի եկեղեցում ի պահուստ, և քահանան, որ այն վերցրեց ի պահ, սպանեց ինձ և գցեց այստեղ՝ այս ծերի սենյակում: Աղաչում եմ ձեզ, առե՛ք իմ ունեցվածքը նրանից և տվեք աղքատներին և իմ որդիներին»: Ծերը նրան ասաց. «Ննջի՛ր դարձյալ, մինչև Տերը գա և հարություն տա քեզ»: Եվ եղավ այնպես, ինչպես ասաց, և եղբայրն ազատվեց զրպարտության պատճառով սպառնացող մահվանից:

122. Եկան մի անգամ հայր Պիմենի մոտ բազում եղբայրներ, և ահա մեկը՝ հայր Պիմենի ազգականներից, իր հետ մի դիվահար մանուկի էր բերել, որի դեմքը հետաճած էր: Երբ այս բարեկամը տեսավ հայրերի բազմությունը, մանուկը գրկին՝ եկավ նստեց վանքի դռանը և լաց էր լինում: Ծերերից մեկը երբ տեսավ նրան լաց լինելիս, հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես լալիս, մա՛րդ»: Իսկ նա ասաց. «Հայր Պիմենի ազգականն եմ. մանկանս այս փորձությունը պատահեց, և ուզում էի բերել նրա մոտ, բայց վախեցա, քանզի ամենևին չի ուզում տեսնել իր հարազատներին, և եթե այժմ լսի, որ ես այստեղ եմ, կուղարկի և ինձ վռնդել կտա այստեղից, իսկ ես ձեր գալը տեսնելով՝ համարձակվեցի գալ այստեղ: Սակայն դու ինչպես կամենում ես՝ ողորմի՛ր ինձ՝ տա՛ր սրան քեզ հետ ծերերի մոտ, և աղոթե՛ք սրա համար, որ բժշկվի»: Այնժան ծերը վերցնելով մանկանը՝ մտավ հայրերի մոտ և իմաստությամբ վարվեց, քանզի սկսելով հետին հայրերից՝ հերթով մոտեցնում էր երեխային և ասում. «Աղոթի՛ր սրա համար և խաչով կնքի՛ր»: Հետո ամենավերջում բերեց հայր Պիմենի մոտ, իսկ նա չէր ուզում դա անել: Եվ ամենքը խնդրեցին նրան և ասացին. «Ինչպես մենք բոլորս արեցինք, այնպես էլ դու արա, հա՛յր»: Եվ նա, աղոթքի կանգնելով, ասաց. «Տե՛ր, քո արարածներին թող չտիրեն դևերը»: Ապա խաչակնքեց, և մանուկն առողջացավ նույն պահին, և հանձնեցին նրան իր հորը ողջառողջ, և նա, գոհանալով Աստծուց, գնաց իր տունը, իսկ հայր Պիմենն անգամ չիմացավ, թե ով էր նա:

123. Հայր Սպիրիդոնի մասին ասում էին, թե նա մի դուստր ուներ՝ Իրինա անունով, որին ծանոթներից մեկը մեծագին զարդեր պահ տվեց՝ որպես ավանդ: Իսկ նա, երբ ավանդը վերցրեց, առավել զգուշության համար թաղեց այն հողի տակ: Որոշ ժամանակ անց ննջեց Իրինան՝ ոչ մեկին չասելով թաքցրածի մասին: Մի քանի օր անց եկավ ավանդատուն, և երբ կույսին չգտավ կենդանի, իր ավանդը նրա հորից պահանջեց և սկսեց սաստիկ նեղել նրան. երբեմն աղաչում էր, երբեմն սպառնում և հաճախակի պահանջում: Իսկ երբ սուրբ Սպիրիդոնը ստուգեց վստահելի վկաների միջոցով, որ դա ճիշտ է, գնաց

դստեր գերեզմանին, հիշատակեց անունները բոլոր նրանց, որ հավատում են ընդհանրական հարությանը և ասաց. «Իրինա՛, ո՞ւր դրեցիր սրա ավանդը»: Եվ նա, հարություն առնելով գերեզմանից, պատմեց իր հորը այդ մասին, ցույց տվեց ճշգրիտ տեղը և դարձյալ ննջեց գերեզմանում: Եվ վերցնելով իրերը՝ տվեց տիրոջը, և բոլորը միաբան փառավորեցին Աստծուն»:

124. Երկու եղբայրներ կային Սկիտեում, որոնցից մեկը հիվանդացավ, և նրա եղբայրը գնաց եկեղեցի՝ քահանայի մոտ՝ բերելու նրան սուրբ խորհուրդը: Երբ այս լսեց քահանան, եղբայրներին ասաց. «Գնացե՛ք տեսակցության այն եղբորը»: Եվ ամենքը գնացին, աղոթք արեցին և մխիթարեցին: Հաջորդ կիրակի քահանան հարցրեց այդ եղբորը. «Ինչպե՞ս է քո եղբայրը»: Իսկ նա պատասխանեց. «Ծանր է»: Եվ քահանան ու եղբայրները դարձյալ գնացին տեսակցության հիվանդ եղբորը: Երբ գնացին և նստեցին մոտը, հիվանդը մոտ էր վախճանվելու և մերձիմահ էր: Իսկ ովքեր նստած էին՝ ասացին. «Արդյոք սա արժանի՞ է Սուրբ Հոգուն, թե՞ ոչ»: Ոմանք ասացին՝ այո՛, ոմանք ասացին՝ ո՛չ, և հակառակվում էին միմյանց: Երբ այս տեսավ հիվանդ եղբայրը, նրանց ասաց. «Ինչո՞ւ եք վիճում միմյանց հետ. ուզո՞ւմ եք իմանալ, թե ո՛ւմն է Հոգու զորությունը»: Եվ դառնալով իր եղբորը՝ ասաց. «Դու գնո՞ւմ ես, եղբա՛յր իմ»: Եվ նա ասաց. «Այո՛, գնում եմ, սակայն աղոթի՛ր ինձ համար, որպեսզի չթողնեմ քեզ՝ նախքան գնալս»: Եվ դառնալով նստած եղբայրներին՝ ասաց. «Տվե՛ք ինձ այդ խսիրե բարձը»: Եվ գլխատակին դնելով՝ ընկողմանեց և ավանդեց իր հոգին ի Տեր՝ առաջ, քան իր հիվանդ եղբայրը, ապա ննջեց նաև նա: Եվ այս տեսնելով՝ հիացումը համակեց ամենքին, փառք էին վերառաքում Աստծուն, որ բազում ծածուկ ծառաներ ունի: Այնժամ արտասուքներով և ուրախությամբ նրանց երկուսին միասին դրին հայրերի գերեզմանում՝ մեծարելով ու պատվելով՝ ինչպես նրանց, ովքեր և այս կյանքում արժանի եղան տեսնելու մեր Քրիստոս Աստծո իմանալի լույսը:

125. Ոմն եղբայր մի վարդապետ ուներ, որ բոլոր մեռելներին գեղեցիկ պատանում էր: Մի անգամ եղբայրը նրան ասաց. «Հա՛յր, եթե ես մեռնեմ, ինձ էլ նույնքան գեղեցիկ կպատանե՞ս՝ ինչպես նրանց»: Ասաց նրան ծերը. «Երբ մեռնես, այնպես կպատանեմ քեզ, մինչև որ ինքդ ասես՝ բավական է: Եվ ոչ շատ ժամանակ անց մեռավ այդ եղբայրը, և ծերը նրան պատանեց՝ ինչպես հարկն էր և ամենքի առաջ հարցրեց նրան. «Լավ պատանեցի՞ քեզ, որդյա՛կ, թե՞ ոչ»: Եվ եղբայրը խոսեց ծերի հետ և ասաց. «Շատ լավ է, հա՛յր իմ, Աստված վարձատրի

քեզ, որովհետև քո խոստումը դու գործով կատարեցիր իմ հանդեպ»: Եվ ամենքը տեսնելով այս՝ փառք մատուցեցին Քրիստոս Աստծուն:

126. Սկիտեում բնակվող մի ծերի մասին ասում էին, թե գնաց մի անգամ դևը նրա մոտ և ուզում էր ներս մտնել, բայց չկարողացավ, քանզի ծերը, իմանալով դևի գալուստը, դրսից կապեց նրան խրճիթի դռանը: Ապա եկավ մեկ ուրիշ դև, իսկ ծերը նրան ևս կապեց ընկերոջ մոտ, հետո եկավ մեկ ուրիշը, և նրանց տեսնելով այնտեղ՝ հարցրեց. «Ինչո՞ւ չեք մտնում ներս»: Եվ նրանք ասացին. «Ներս չենք մտնում, քանի որ այնտեղ մեզնից զորավորը կա և թույլ չի տալիս ներս մտնել»: Իսկ սա շտապեց մտնել: Այնժամ սուրբը ծերը սրան ևս կապեց դռանը, և սա էլ չկարողացավ մտնել: Երբ այս ամենը տեսան մնացած դևերը, սկսեցին դողալ՝ ծերից երկյուղած: Այնժամ դևերն սկսեցին աղաչել ծերին, որ իրենց արձակի՝ գնան: Եվ անսալով աղաչանքներին՝ արձակեց նրանց և հրամայեց գնալ, և նրանք հապճեպ փախան ու անմիջապես կորան»:

127. Մի անգամ ծերն ու իր աշակերտը գնացին ջուր բերելու, և աշակերտն, առաջ անցնելով, տեսավ ջրհորի վրա մի մեծ վիշապ և վախեցավ: Ծերն ասաց նրան. «Ե՛լ նրա վրա, կոխի՛ր գլուխը, և կփախչի»: Իսկ աշակերտը գիտեր և ճանաչում էր ծերի մեջ Սուրբ Հոգու զորությունը, ուստի վստահելով նրա աղոթքին՝ կատարեց ծերի հրամանը, և ելավ վիշապի վրա: Իսկ վիշապը, նախքան աշակերտի կոխելը, հապճեպ փախավ անապատ. և տեսնելով վիշապի փախուստը՝ օրհնում էին Աստծուն, Ով օրհնյալ է Հավիտյան:

ԳԼՈՒԽ ԺԹ

ՀԱՅՐԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մի անգամ հայր Անտոնն աղոթում էր իր խցում, և ձայն լսեց, որ ասում էր. «Անտո՛ն, դու քո ողջ ճգնություններով չես հասել ալեքսանդրացի մի կոշկակար մարդու չափին»: Անտոնը լսելով այս՝ գնաց նրա մոտ, գտավ նրան և երդմամբ քննեց նրա վարքը: Եվ կոշկակարն ասաց նրան. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ զուրկ եմ բարի գործերից, բայց այսպիսի սովորություն ունեմ ամեն օր. երբ առավոտյան արթնանում եմ քնից, օրհնում և փառաբանում եմ Աստծուն, ապա դնում եմ իմ առջև իմ մեղքերը և ինքս ինձ ասում. վա՜յ քեզ, ա՜նձ իմ բազմամեղ, քանզի այս մեծ մայրաքաղաքի բոլոր բնակիչները, ողորմության արժանանալով, կմտնեն Արքայություն, և միայն դու կժառանգես դժոխքը»: Անտոնն ասաց. «Ասեմ քեզ, որ ես իմ գործերով ու խորհուրդներով չհասա քո խորհուրդներին»:

2. Այսպիսի ձայն եկավ նաև սուրբ Մակարիոսին, թե՝ չես հասել երկու կանանց առաքինության չափին, որ Եգիպտոսում են: Եվ նա վերցնելով գավազանը՝ գնաց նրանց տեսնելու՝ հրեշտակից գիտենալով նրանց անունն ու տունը: Եվ երբ մտավ նրանց տուն, սիրով ու պատկառանքով ընդունեցին նրան: Եվ ասաց նրանց. «Այս ամբողջ չարչարանքը հանձն առա ձեր վարքը ուսանելու համար. հանուն Քրիստոսի՝ պատմե՛ք ինձ»: Նրանք ասացին. «Երկրներով և գավառներով միմյանց օտար ենք. եկանք, դարձանք երկու եղբոր կանայք, և առաջինը, որ խորհեցինք միասին, աղաչանքն էր մեր ամուսիններին՝ պահել մեր կուսությունը, սակայն մեզ չլսեցին: Ապա Տիրոջ սիրով ուխտեցինք միասին լինել և մեր բերանները սուրբ և կույս պահել կատակներից ու տրտունջներից, իսկ մեր խորհուրդները՝ սին ու դատարկ մտածումներից: Եվ ահա տասնհինգ տարի է՝ իրար հետ ենք և միմյանց չտրտմեցրինք»: Եվ Մակարիոսը, լսելով այս, ասաց. «Ճշմա-

ըիտ եմ ասում ի Տեր, որ ո՛չ մարմնի կուսությունը, ո՛չ հանպազօրյա ճգնությունը չեն կարող հասնել այդպիսի վարքի»:

3. Երկու հայրեր աղաչեցին Աստծուն, որ ցույց տա իրենց, թե ո՛ր չափին են հասել առաքինության մեջ: Եվ ձայն եկավ երկնքից և ասաց նրանց. «Եգիպտոսի այսինչ գյուղում Քրիստոսատուր անունով մի աշխարհական կա, կնոջ անունն էլ՝ Մարիամ՝ ձեզանից լավն են»: Լսելով այս՝ զարմացան հայրերը և վեր կենալով գնացին այն գյուղը և հարցնելով գտան նրանց տունը: Երբ հարցրին կնոջը, թե ուր է նրա ամուսինը, կինն ասաց. «Հովիվ է և ոչխարներ է արածեցնում»: Եվ նրանց տուն հրավիրեց, իսկ երեկոյան եկավ նրա ամուսինը և ուրախացավ՝ տեսնելով հայրերին, և լվաց նրանց ոտքերը: Հայրերն ասացին. «Այստեղ հաց չենք ուտի, եթե չհայտնես մեզ քո գործերը»: Իսկ նա ուզում էր թաքցնել, սակայն հայրերն ասացին. «Աստվա՛ծ մեզ ուղարկեց քեզ մոտ»: Եվ նա զարհուրած ասաց. «Այս ոչխարները, որ ունենք, մեր ծնողներն են թողել, և ինչ որ Աստված մեզ հաջողեցնում է դրանց գնից՝ երեք մասի ենք բաժանում. մի մասը աղքատասիրության, մի մասը օտարասիրության և մի մասը մեր կարիքների համար: Երբ առա այս կնոջս, մեզանից ոչ մեկը չապականվեց մարմնական ցանկություններով, և երկուսս էլ կույս ենք, և մեզնից յուրաքանչյուրը առանձին է քնում. գիշերը քուրձ ենք հագնում, իսկ ցերեկը՝ յուրաքանչյուրս իր հանդերձները, և մարդկանցից ոչ ոք չգիտե այս բանը՝ մինչև այսօր»: Լսելով այս՝ սքանչացան երկու ծերերը, փառավորեցին Աստծուն և վերադարձան իրենց տեղերը:

4. Հայրերից մեկն ասաց, թե Տյուրոսում բնակվող մի մարդ այսպիսի դեպք է պատմել, թե Ալեքսանդրիայի արվարձաներից մեկում մի կանանց վանք կար, որտեղ բնակվում էին հարյուր վաթսուն կույսեր, և վանքը պարսպապատված էր: Տասներկու ավազակներ՝ ավազակապետով հանդերձ, որոշեցին հարձակվել նրանց վրա: Եվ ավազակապետը նրանցից յուրաքանչյուրին հարցրեց. «Ինչպե՞ս կարող ենք մտնել ներս». երբ առաջինն ասաց, թե՝ շրջանցենք պարիսպը, գուցե ջրատար անցք կամ նման մի բան գտնենք, որտեղից հարմար կլինի ներս մտնել, նրան ասաց. «Ոչինչ չգիտես»: Նույնպես և իր մյուս ընկերներին հարցնելուց հետո ասաց. «Ոչ մեկդ ոչինչ չգիտե»: Նրան հարցրին. «Իսկ դու ի՞նչ կասես»: Նա ասաց. «Կհագնեմ միջագետքցու տարազ, կնգուղ կդնեմ և մազերս նրա տակ կթաքցնեմ, վրայից կհագնեմ փիլոն՝ սուրս թաքցնելով տակը, և երեկոյան կողմ կգնամ՝ որպես օտար մենակյաց և դռնապանին կասեմ, թե օտար եմ և ամաչում

եմ քաղաք մտնել, կանանց պատճառով էլ չեմ ուզում որևէ մատուռ գնալ, բա՛ց արա, բարի՛ մարդ, ի սեր Աստծո, և տո՛ւր ինձ մի կարպետ և ինձ փակի՛ր դռան ներսում, որպեսզի հանգստանամ և առավոտյան իմ ճանապարհը գնամ»: Այսպես խորհելով իր ընկերների հետ և հագնելով մենակյացի զգեստներ՝ գնաց և բախելով դուռը՝ դռնապանին ասաց՝ ինչ որ մտածել էր: Իսկ դռնապանը մեծ ուրախությամբ գնաց և հայտնեց վանամորը՝ կարծելով, թե սրբերից մեկն է, վերջինս էլ թույլ տվեց նրան ներս թողնել: Եվ հավաքելով իր ողջ կուսանոցը՝ նրանց հետ եկավ օրհնվելու նրանից. պատվիրեց ջուր բերել և երկու կողմից կանգնեցնելով՝ լվացին նրա ոտքերը և ջուրը որպես օրհնություն ցողեցին իրենց վրա և օրհնվեցին նրանից: Իսկ քույրերից մեկը սպասավորում էր մեկ ուրիշ քրոջ, որը մեկ տարի անդամալույծ վիճակում վերնատանն էր գտնվում, և ոտնլվայի ջրից վերցնելով՝ սպասավորող քույրը տարավ նրան՝ հիվանդին ասելով, թե՝ ոմն մեծ սուրբ է եկել մեր վանքը, և մենք լվացինք նրա ոտքերը և ամենքս օրհնվեցինք նրանից, և ահա քեզ համար էլ բերեցի, որպեսզի դու ևս օրհնվես սրբությունից: Իսկ անդամալույծը երբ ջուրը լցրեց իր վրա, անմիջապես առողջացավ: Երբ սպասավոր քույրը կամեցավ իջնել ներքև, հիվանդը նրան ասաց. «Լսի՛ր ինձ և արի՛ միասին իջնենք, որպեսզի ես ևս օրհնվեմ սուրբ ծերից»: Եվ վեր կենալով նրա հետ իջավ ներքև. և քույրը բերեց նրան ավագակապետի մոտ և պատմեց հրաշքը, և բոլոր քույրերը, տեսնելով անդամալույծին քայլելիս, փառավորեցին Աստծուն այդ հրաշքի համար: Երբ ավազակապետը լսեց և տեսավ այս ամենը, ապշեց և զղջման գալով՝ նրանց ասաց. «Աստված գիտե, որ մեղավոր եմ և ավազակապետ, և այս գիշեր այստեղ են գալու տասներկու ավազակներ ևս, սակայն մի՛ երկնչեք, քանզի Աստված իմ փրկության համար տնօրինեց այսպես»: Եվ հանելով սուրը՝ գցեց վայր: Իսկ կույսերը, լսելով այս և տեսնելով սուրը, գետին ընկան և զարհուրեցին, և երեկոյից մինչև այգաբաց սաղմոսում էին ահուդողի մեջ: Եվ երբ եկան մյուս ավազակները, ավազակապետը պատմեց նրանց բոլոր անցքերը, որ անցան իր գլխով, և թե դրանից հետո ուզում է մենակյաց դառնալ և երկնչել Աստծուց: Իսկ ընկերները ասացին նրան. «Եթե դու, հիրավի, այդպես հզոր լինելով՝ ուզում ես մենակյաց դառնալ, մենք ևս մենակյաց կդառնանք»: Եվ նույն պահին հրաժարվելով ավազակությունից՝ բոլորը մենակյաց դարձան: Եվ հավատացրեց մեզ տյուրոսցին, որն այս ամենը պատմեց, թե՝ գնացի Անտիոք, գտա վանքը և հենց իրենցից էլ լսեցի այս ամենը: Արդ, պետք է այսուհետև ամեն ինչում փառք տալ Աստծուն, քանզի մենք շատ հաճախ չենք երկնչում

Աստծուց, սակայն Նա իր գործերի միջոցով որսում է մեր անձերը ի փրկություն:

5. Ոմն մենակյաց մի քանի օր շրջում էր մի մանկամարդ կնոջ հետ Ալեքսանդրիա քաղաքում և ողորմություն էր խնդրում, իսկ ոմանք տեսնելով նրան՝ գայթակղվեցին՝ կարծելով, թե ամուսնացած է նրա հետ և հայտնեցին նրանց մասին երանելի Հովհան հայրապետին, տրտնջացին՝ ասելով, թե հրեշտակային տեսքի տակ ամոթալի արատներ է թաքցնում, քանզի դեռատի աղջկա հետ է ամուսնացել: Եվ Աստծո ծառան կարծելով, թե Տիրոջ առաջ արգելում է մեղք գործել, և այդ արգելքն Աստծուց է ներշնչված, իսկույն հրամայեց գանահարել կնոջը և առանձնացնել նրանից, և նրան նույնպես գանահարել և առանձին բանտ գցել: Երբ հրամանն անմիջապես կատարվեց, հայրապետին երազում երևաց մենակյացը և ցույց տվեց նրան ամբողջովին թարախակալած իր թիկունքը, քանզի քորեպիսկոպոսներն անխնա ծեծել էին նրան, և ասաց. «Այսպես, տե՛ր, հաճո՞ է քեզ. հավատա՛, այս անգամ մոլորվեցիր որպես մարդ»: Եվ այս ասելով՝ հեռացավ նրա մոտից: Երբ այդ եղավ, երանելին, քնից արթնանալով, նստեց անկողնու մեջ, հիշեց գիշերային երազը և մտատանջության մեջ ընկնելով՝ իր մտերիմ սենեկապետին ուղարկեց, որ բանտարկված տեղից իր մոտ բերի մենակյացին՝ պատվիրելով նրան՝ ոչ ոքի չասել: Մտածեց՝ եթե գիշերն ինձ երևացածի նման լինի և նույն վերքերն ունենա, որ տեսա նրա թիկունքին, այդ նշանները բավական են հաստատելու, որ անպարտ է այն ամենից, ինչ ասացին նրա մասին: Երբ մենակյացը մեծ դժվարությամբ եկավ՝ կոթնած սենեկապետի ձեռքին, քանզի չէր կարողանում ինքնուրույն գնալ՝ աներևակայելի գանահարության պատճառով, աստվածասեր հայրապետը ընդունեց նրան իր առանձնասենյակը, իսկ այնտեղ ոչ ոք չկար, բացի տեր Հովհաննեսից ու տեր Սոփորոնից, որը հետագայում դարձավ սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի հայրապետը: Երբ հայրապետը տեսավ նրա դեմքը, ընկավ մտքերի մեջ՝ չկարողանալով զարմանքից որևէ բան ասել, այլ միայն ձեռքով նշան արեց նրան, որ նստելի ճյուղերից հյուսված աթոռի վրա: Երկար ժամանակ մնալով ապշահար վիճակում՝ ի վերջո ինքն իրեն զորացրեց կենարար խաչի նշանով և չարախոսված մենակյացին աղաչեց հանել իր վրայից սփածանին և մերկանալ առանց ամաչելու, որպեսզի տեսնի նրա թիկունքը, թե արդյոք այնպիսի՞ն է, ինչպիսին որ տեսել էր երազում: Իսկ նա, պարեգոտը իջեցնելով գոտկատեղից ներքև, որպեսզի ծածկի իր ամոթույքը, սկսեց մերկանալ և հանելով թիկնոցը՝ ցույց տվեց թիկունքը

հայրապետին, և աստվածային հրաշքով քանդվեց սփածանին, որ կապել էր իր գոտկատեղին, և վայր ընկավ, ու ամենքը տեսան, որ ներքինի էր, սակայն քանի որ դեռ շատ երիտասարդ էր՝ չգիտեր, որ ինքը ներքինի է: Տեսնելով այս՝ մանավանդ թիկունքի վերքերը, սրբասեր հայրապետը մարդ ուղարկեց և կանչեց նրանց, ովքեր առանց քննության չարախոսեցին նրան, և իր առաջից վտարելով նրանց՝ երեք տարով հեռացրեց եկեղեցուց և սուրբ Հաղորդությունից: Իսկ մենակյացին զղջալով ասում էր ու խոստովանում, թե անգիտաբար մեղանչեց նրա դեմ և մանավանդ՝ Աստծո դեմ: Սակայն նաև խրատում էր և ասում. «Պետք չէ, որ որևէ մեկը, որդյա՛կ, անզգուշաբար շրջի քաղաքում, մանավանդ ովքեր ձեզ պես սուրբ և հրեշտականման զգեստներ են կրում. և ոչ միայն այդ, այլև կանանց հետ շրջելը՝ հայհոյության առիթ է դառնում տեսնողների համար»: Այնժամ մենակյացը վայելուչ պարկեշտությամբ և խոնարհությամբ քահանայապետին ասաց. «Աստված, որ հաստատեց քեզ այդ սուրբ աթոռի վրա, գիտե, որ չեմ ստում: Որոշ ժամանակ առաջ Գազայում էի և այնտեղից դուրս գալով՝ ճանապարհ ընկա, որպեսզի գամ այստեղ՝ երկրպագելու սուրբ աբբա Կյուրոսին, և պատահեց ինձ այս աղջիկը, որը բարեսրտորեն օթևան տվեց ինձ՝ երեկոն վրա հասնելուն պես, և իմ ոտքերն ընկած աղաչում էր, որ ինձ հետ ճանապարհ ընկնի, և իր մասին ասում էր, թե եբրայեցի է և կամենում է քրիստոնյա դառնալ: Եվ սկսեց դատապարտել ինձ խոսքերով, որպեսզի չթողնեմ իրեն գնալու դեպի կորուստ: Աստծո դատաստանից երկյուղելով՝ վերցրի ինձ հետ, կարծելով, որ Փրկիչը ներքինուս փորձություն չի ուղարկի և չգիտեի, թե ոչ մեկին չի խնայում: Եվ երբ եկանք և կատարեցինք մեր աղոթքը, աբբա Կյուրոսի մոտ մկրտեցի նրան և պարզամտությամբ շրջում էի նրա հետ՝ փոքր-ինչ ողորմություն խնդրելով մեր կարիքների համար, որպեսզի նրան կուսանոց ուղարկեմ»: Երբ այս ամենը լսեց հայրապետը, Սոփոնիոսին ասաց. «Աստվա՛ծ իմ, որքա՛ն գաղտնի ծառաներ ունի Քրիստոս, որ մենք՝ տառապյալներս, չգիտենք»: Այնժամ պատմեց նրան իր տեսած երազը և հարյուր դահեկան տվեց նրան, իսկ աստվածասեր մենակյացը չկամեցավ վերցնել և հետևյալ հիշարժան խոսքն ասաց. «Ես սրա կարիքը չունեմ, տե՛ր, քանզի մենակյացը եթե հավատ ունի, սրա կարիքը չունի, իսկ եթե սրա կարիքն ունի՝ հավատ չունի»: Այս խոսքով բոլորը համոզվեցին, որ Աստծո ծառա է, և նա խոնարհվելով հայրապետի առաջ՝ գնաց խաղաղությամբ: Այդ օրվանից հայրապետն առավել պատվում և սիրով էր ընդունում մենակյացներին և նրանց, ում վատթար բարքի տեր էին համարում:

6. Նույն երանելի Հովհաննես հայրապետը նաև ասում էր, թե պետք է ննջեցյալների հոգիների համար պատարագ մատուցել, քանզի դա մեծ մխիթարություն է նրանց հոգիների համար, և հարկավոր է առանց երկմտության կատարել. և ասածը հիմնավորեց հետևյալ պատմությամբ: Ոչ շատ ժամանակ առաջ մի պարսիկի դերի տարան Պարսկաստան և փակեցին Անհուշ կոչվող բանտում: Ոմանք ազատվելով այդ բանտից՝ եկան Կիպրոս, և այն պարսիկի տոհմակիցները հարցրին նրանց, թե արդյոք տեսե՞լ են նրան: Նրանք ասացին. «Մեռավ, և մենք մեր ձեռքով թաղեցինք նրան»: Սակայն թաղվածն իրականում նա չէր, այլ նման էր նրան. նույնիսկ նրա մահվան ամիսն ու օրն էին ասում: Եվ նրանք, իբրև մեռելի վրա, տարին երեք անգամ պատարագ էին մատուցում: Իսկ չորրորդ տարում այդ մարդը Պարսկաստանից փախչելով՝ եկավ Կիպրոս: Նրա ընտանիքն ասաց նրան. «Մենք լսեցինք քո մահվան մասին և քո հիշատակին տարին երեք անգամ պատարագ էինք մատուցում»: Երբ լսեց, որ տարին երեք անգամ իր հիշատակն էին կատարում, հարցրեց, թե ո՞ր օրը և ո՞ր ամսին էին այն կատարում: Եվ նրանք ասացին. «Մի անգամ Հայտնության օրը, մի անգամ Զատիկին և մյուսը՝ Պենտեկոստեին»: Եվ նա երդմամբ ասաց, թե այդ երեք օրերին սպիտակազգեստ մեկն էր գալիս՝ արեգականման, և ինձ անտեսանելիորեն արձակում էր բանտի շղթաներից, և ես ազատ շրջում էի ողջ օրը, և ոչ ոք չէր ճանաչում ինձ, իսկ հաջորդ օրը դարձյալ հայտնվում էի շղթաների մեջ: Այստեղից իմանում ենք, որ ննջեցյալները ներում ունեն, որոնց համար պատարագ է մատուցվում:

7. Զիթենյաց լեռան վրա մի վանք կար, որի անունն էր Փարախ: Այստեղ բնակվում էին չորս հարյուր կանայք, իսկ երբ պարսիկները եկան Երուսաղեմ և պաշարեցին քաղաքը, այն ժամանակ դուրս հանեցին այն չորս հարյուր կույսերին և բաժանեցին՝ պղծելու համար: Երբ նրանցից ամենաստահակն ու լպիրշը կամեցավ ապականել Քրիստոսի գառնուկին, այդ անսանձը և նրա հետ նաև սատանան՝ խաբվեցին կույսից հետևյալ կերպ. երբ եկավ նրան ապականելու, Քրիստոսի հարսն ասաց նրան. «Շնորհի՛ր ինձ իմ կուսությունը և ես քեզ կշնորհեմ մի օծանելիք, որ որքան նետ ու սուր գա քեզ վրա՝ մնաս անխոցելի»: Եվ նա զարմացած ասաց սրբուհուն. «Բե՛ր ինձ այդ օծանելիքը, և ես չեմ մերձենա քեզ», մտքում ունենալով, թե կվերցնեմ այն, հետո կանեմ այն, ինչ կամենում եմ: Սակայն այդ ամբարտավանի հույսերն ի դերև ելան, քանզի ծոցից հանելով սուրբ յուղի շիշը՝ իմաստուն կույսն ասաց. «Վերցրո՛ւ այս և օծի՛ր քո պարանոցը, և ես սրով կհար-

վածեմ քո պարանոցին, և դու այն ժամանակ կտեսնես, թե ինչ ընծա եմ մատուցել քեզ»: Իսկ նա ասաց. «Ո՛չ իմ, այլ քո պարանոցի վրա փորձենք այն». հենց դրա համար էր աղոթում սրբուհին, դա էր ակնկալում և դրան էր փափագում, որի համար էլ իմաստությամբ խորամանկեց, որպեսզի բանսարկուի այդ որոգայթին որս չդառնա: Սա նախընտրեց մարմնավոր մահն ընդունել, քան՝ հոգևոր. դրա համար էլ, հուրախություն անօրենի, զվարթ դեմքով, մեծ սիրահոժարությամբ օծեց իր պարանոցն այն կենարար յուղով և խոնարհվելով՝ ասաց հիմար պարսիկին. «Հարվածի՛ր ողջ ուժով և տե՛ս, թե ինչ զորություն ունի այս յուղը»: Իսկ նա, տեսնելով սրբուհու ջերմեռանդ պատրաստակամությունը, հավատալով, թե ճշմարտությունը լսեց և չհասկանալով, որ իր ժանտահոտ գոյությունից կույսը փախչում է և շտապում դեպի Քրիստոս, արդարության այս թշնամին ողջ ուժով հարվածեց՝ հուսալով, թե սուրը չի մերձենա պարանոցին. իսկ երբ տեսավ նրա պատվական գլուխը կտրված և գետնին ընկած, հասկացավ, որ ինքը՝ ժանտատեսն ու անամոթը, պարտվեց կնոջից: Ո՛վ բարի խորամանկություն, ո՛վ բարի սուտ, ո՛վ գովելի նենգություն: Լսե՛ք այս, կանա՛յք, և նմանվե՛ք նրա պարկեշտությանը, որ արհամարհելով այստեղի կյանքը՝ ժառանգեց Երկնքի Արքայությունը՝ անձկալով իր անմահ փեսա Քրիստոսին:

8. Նույն պարսկական գերության մեջ էր Քրիստոս Աստծո սուրբ Հարության վանքի սարկավագ ոմն Եվսեբիոսը, որն ուներ երկու փոքր աղջիկ՝ մեկը ութ և մյուսը տասը տարեկան՝ շատ շատերից գեղեցիկ ու կայտառ: Անօրենը, սրանց տեսնելով այսպես գեղեցիկ, դիվական ներգործությունից դրդված ստիպում էր երկրպագել կրակին և շտապում էր հեռացնել նրանց Քրիստոսի հավատից: Եվ բերել տալով իր առաջ՝ կրակ վառեց և սկսեց շողոմել, շողոքորթել աղջիկներին և համոզել, որպեսզի իր հետ միասին երկրպագեն: Իսկ հայրը սաստում էր՝ չանել այդ: Հետո փոխելով կարգը՝ բարբարոսն սկսեց սպառնալիքներ տեղալ, իսկ հայրը քաղցրախոսությամբ հորդորում էր, և Քրիստոսի զավակները տատանվում էին նրանց երկուսի միջև: Հետո բարկացավ անօրենը և մերկացրեց սուրը ավագի վրա և ճոճելով՝ զարհուրեցնում էր նրան: Հայրը նրան ասաց. «Մի՛ երկնչիր, զավա՛կս, կապի՛ր քո ձեռքերը հետևդ և սիրահոժար ընդունի՛ր նահատակությունդ հանուն Քրիստոսի, Ով քեզ համար ընդունեց գեղարդի խոցումն իր կողի մեջ»: Եվ աղջիկը մնաց հաստատուն և զանց չարեց հոր պատվիրանը, այլ մինչև ի մահ համբերեց, հանուն Քրիստոսի ընդունեց իր նահատա-

կությունը՝ ինչպես ծարավ մեկը կպապակի զովասուն ջրի. ընթացավ, հաղթեց և պսակ ստացավ: Լսե՛ք և երկրորդ զավակի նահատակությունը հանուն Քրիստոսի: Դարձավ ամբարիշտը երկրորդ աղջնակին. ամեն ինչ արեց, ամեն տեսակ տանջանք կիրառեց, սակայն ոչինչ չօգնեց, մինչդեռ դժնդակ անօրենը կարծում էր, թե առաջինի մորթվելը տեսնելով՝ երկրորդը հեշտությամբ տեղի կտա, սակայն այն անսանձը հուսախաբ եղավ, քանզի աղջնակի բարեհորդոր հայրը Աստծո զորությամբ խրատեց նրան, և նա, հայրական գորովով խրատված, Վերին զորությամբ պարսպված, որպես Աստծո գառն առյուծի բերանից՝ փրկվեց անբիծ և անվնաս: Եվ հայրն այսպես էր ասում կրտսերին. «Մի՛ երկնչիր, զավա՛կ իմ և պտուղ իմ, պատարագ իմ և պարծանք իմ. մի՛ ընդունիր և մի վայրկյան իսկ ետ մի՛ մնա քո քրոջից. ահավասիկ ես էլ ձեզ հետ անհապաղ գալիս եմ առ Քրիստոս»: Աստծո թշնամին երբ լսեց այս, սրով հարվածելով՝ սպանեց նաև մյուս աղջկան: Հայրը, տեսնելով այս, լցվեց մեծ ուրախությամբ, որ իր զավակները ի Քրիստոս փոխվեցին, և ինքն իր պտղից պատարագ մատուցեց Աստծուն, սակայն տրտմում էր, թե գուցե ետ մնա իր զավակներից և չստանա մարտիրոսության պսակ: Դրա համար էլ անօրենին գրգռելով և նրա բարկությունը շարժելով՝ ասաց նրան. «Ո՛վ թշվառական, ի՞նչ մի մեծ բան արիր, որ երեխաների վրա քաջացար. ես էլ կարող էի այդ անել, սակայն եթե ուզում ես քաջությամբ պարծենալ՝ փորձիր ի՛նձ ստիպել երկրպագելու քո պիղծ ու զազիր կրակին»: Երբ այս խոսքերը լսեց այն չարանենգ գազանը, վեր թռավ և կրճտացրեց իր ատամները նրա վրա, խփեց նրան քարերով ու գանահարեց, դալար ճյուղերով արնաթաթախ արեց նրա կողերը, մինչև որ այս ամենից սաստիկ հոգնեց: Ապա մեծ խարույկ վառեց և կապելով տեր Եվսեբիոսին՝ գցեց խարույկի մեջ՝ որպես ողջակեզ պատարագ՝ ոչ թե իր բարքի համար, այլ՝ իր հավատի ու հաստատակամության: Ո՛վ զարմանալի և հրաշափառ գործ. ժամանակին Աբրահամը իր որդուն մատուցելով՝ իր պատրաստակամությունը ցույց տվեց, իսկ սա գործո՛վ կատարեց. նա իր անձը չմատնեց, իսկ սա իր անձը չխնայեց: Թող լսեն այս ամենը հայրերն ու մայրերը և շտապեն այսպիսի ընծա մատուցել Աստծուն:

9. Այն Հռայիթում, որտեղ յոթանասուն արմավենիներն ու ջրի տասներկու աղբյուրներն են, ուր մտավ Մովսեսը ժողովրդի հետ Եգիպտոսից դուրս գալուց հետո (Ելից ԺԱ 27), *Հռայիթում բնակվող մի եղբայր պատմեց մեզ և ասաց. «Խորհեցի մի օր առանձնության մեջ, որ գնամ ներքին անապատ, տեսնեմ՝ կգտնեմ մեկին՝ ավելի խորը անապատում,*

որ ծառայում է մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Եվ չորս օր ու գիշեր գնալով՝ մի այր գտա և դուռը բախելով մտա ներս ու մի եղբոր տեսա՝ ձեռքերը տարածած: Կարծեցի, թե աղոթք է մատուցում, բայց երբ շատ երկարեց, մերձեցա նրա հանդերձին, և այն իմ ձեռքում փոշու վերածվեց: Տեսնելով, որ նա վաղուց վախճանվել է, հանեցի վերարկուս և դրա կեսով պատեցի սրբի մարմինը և դարձա իմ խուղը՝ փառավորելով Աստծուն:

10. Այդ կողմերում մեկն էլ կար՝ Ղոգինոս անունով, որը բազում ողորմություններ էր անում, և հայրերից մեկը, գալով նրա մոտ, աղաչեց նրան, որ իրեն տանի հայր Ովրի մոտ: Եվ Ղոգինոս ծերը, գալով հայր Ովրի մոտ, սկսեց գովել այն ծերին, թե բարի է և շատ ողորմություններ է անում: Հայր Ովրն ասաց. «Այո՛, բարի է»: Դրանից հետո Ղոգինոսն աղաչեց նրան և ասաց. «Թո՛ւյլ տուր, որ նա գա և տեսնի քեզ»: Հայր Ովրն ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, նա այս ձորը չի անցնի և ինձ չի տեսնի»:

11. Մի անգամ հայր Մակարիոսն եկավ Եղբեռն՝ հայր Միովսի մոտ: Սրանք իրար չէին ճանաչում, իսկ հայր Միովսը արդեն շատ երկար պարան էր հյուսել: Հայր Մակարիոսը նրան ասաց. «Հրամայի՛ր, որ ես էլ հյուսեմ»: Վերջում պարզվեց, որ հայր Մակարիոսի հյուսած պարանը շատ ավելի երկար է, քան հայր Միովսինը: Եվ հայր Միովսը նրան ասաց. «Դու Մակարն ես, բարով եկար, վաղուց ի վեր փափագում էի քեզ տեսնել»: Եվ երկուստեք ուրախացան միմյանց համար, և Մակարիոսն այնտեղից վերադարձավ Սկյութիա:

12. Հայր Պիմենն ասաց. «Հայրերից շատերը մեծ եղան և քաջ՝ կրոնավորության մեջ, սակայն խորագետ՝ նրբագույն հարցերում՝ շատ քչերը»:

13. Սկյութիայից երկու ծեր գնում էին անապատի ճանապարհով և այրերի խորքերից լսեցին հիվանդի հառաչանքներ: Լսելով այդ իջան մացառները, որոնեցին և գտան մի սուրբ կույսի և նրան ասացին. «Ե՞րբ եկար այստեղ, մա՛յր, և կամ ո՞վ է քեզ սպասավորում», որովհետև այրում ոչինչ չտեսան, բացի գետնատարած կույսից: Եվ նա ասաց. «Երեսունութ տարի այս այրում եմ, բանջար եմ ճաշակում և Քրիստոսին եմ ծառայում, և մարդ չեմ տեսել մինչ օրս, որովհետև Աստված ուղարկեց ձեզ, որպեսզի թաղե՛ք իմ ոսկորները»: Եվ այս ասելով՝ ննջեց: Իսկ հայրերը փառաբանեցին Աստծուն, թաղեցին նրան և աղոթք անելով՝ գնացին:

14. Ծերերից մեկը պատմեց մեզ մի հրաշքի մասին, որը կատարվել էր մի գրագրի հետ՝ Կոստանդնուպոլսում: Ուրեմն, Կոստանդնուպոլսում, Մորիկ կայսրի օրոք, ոմն անարժան մեսիդ[1] կար, որը մոգության արվեստով շատերին էր հավիտենական մահվան մեջ ընկղմում, իսկ ինքը մեծամեծ պատիվների էր արժանանում՝ ծածուկ դյութություններ անելով: Սա մի գրագիր ուներ, որը քրիստոնյա էր և Աստծո հանդեպ՝ խիստ երկյուղած: Սրան նույնպես խորհում էր այլոց հետ իր մահաբեր թույնի մեջ ընկղմել և այսպիսի մարդուն խաբեությամբ դյութության արվեստի մեջ ներքաշել: Մի գիշեր անիծյալն իր այս գրագրին առաջարկեց ուղեկցել իրեն, և երկուսով արագընթաց երիվարներով կեսգիշերին հասան մի ընդարձակ ամայի դաշտ, ուր ո՛չ շինություն կար և ո՛չ էլ օթևան: Հանկարծակի նրանց առջև հայտնվեց մի քաղաք: Երբ երկուսն էլ վայր իջան երիվարներից և կապեցին ձիերը, միջնորդը բախեց դուռը, և բացվեց նրա առաջ: Նրանց դիմավորողները՝ բոլորն էլ խափշիկներ էին, ողջունեցին նրան և մոտենալով՝ անիծյալ միջնորդի երեսը համբուրեցին և առաջնորդեցին նրանց մի ստրոգետնյա սրահ, ուր ածաթյա և ոսկյա աշտանակների վրա ջահեր էին վառվում, և աջից ու ձախից աթոռներ էին շարված, իսկ մեջտեղում մի բարձր աթոռ կար, որին բազմել էր մի ոմն խափշիկ, որի աջ ու ձախ կողմերում բազում խափշիկներ էին նստած: Եվ եկավ այն անիծյալ մեսոնը, ընկավ բարձր աթոռին բազմածի առջև, իսկ նա փափագով ընդունեց նրան և հարցրեց. «Ի՞նչ է, տե՛ր միջնորդ, կատարվե՞ց քո կամքն ամբողջությամբ, թե՞ ոչ»: Եվ միջնորդն ասաց. «Այո՛, տե՛ր, և այդ շնորհի համար եկա քեզ երկրպագելու և գոհանալու քեզանից»: Բարձր աթոռին բազմողն ասաց. «Առավել մեծ շնորհներ կտամ քեզ»: Հետո մեսոնը գնաց և նստեց նրա աթոռի առջև: Իսկ գրագիրը, տեսնելով իրեն խափշիկների բազմության մեջ և գարշելով նրանց մերձավորությունից, գնաց և կանգնեց մեսոնի հետևում: Բարձր աթոռին բազմողը, տեսնելով նրան, մեսոնին հարցրեց. «Այս մարդը, որ քեզ հետ է, տե՛ր մեսոն, ո՞վ է կամ ո՞ւմ շնորհիվ եկավ այստեղ»: Մեսոնն ասաց. «Քո ծառան է, տե՛ր»: Եվ խափշիկը դառնալով նրան՝ ասաց. «Ասա՛, երիտասա՛րդ, ծառա՞ ես»: Գրագիրն ասաց. «Ծառա եմ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն»: Եվ խաչի նշանով կնքեց իրեն, և հենց նույն պահին աթոռին բազմողը տապալվեց, աթոռը կործանվեց, լապտերներն հանգան, դևերը աղաղակ բարձրացրին, և ամենքն էլ անհետացան, սրահը չքացավ, քաղաքն անէացավ, մեսոնն ընկավ, և ամեն ինչ փոշու վերածվեց: Ոչ մի ձայն այլևս... համատարած լռություն... և չկար

[1] Մեսիդ կամ մեսոն՝ հունարեն բառ է, որ նշանակում է միջնորդ:

ոչ ոք, բացի դպիրից և կապված երիվարներից: Դարձյալ կնքեց իրեն դպիրը՝ խաչով պատվական, և ո՛չ ձախում, ո՛չ աջում ոչ ոքի չտեսավ, հեծավ իր երիվարը, եկավ տուն և իր մեջ թաքցնելով՝ ոչ ոքի չէր կամենում պատմել պատահածը: Որոշ ժամանակ անց գնաց մի պատրիկի մոտ, որը խիստ ողորմած, կատարյալ գեղեցիկ և Քրիստոսին սիրելի մարդ էր, և քանի որ միմյանց բարեկամ ու դրացի էին, նստեցին իրար հետ հոգևոր բաներից խոսելու: Երբ հասավ գիշերվա ժամը, երկուսով եկան Փրկչի Պլեորոն կոչվող տաճարը՝ աղոթելու, և կանգնեցին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի պատկերի առջև: Այնժամ պատկերը դարձավ և նայեց գրագրին. գրագիրը կանգնեց պատկերի մյուս կողմում, իսկ պատկերը դարձյալ շրջվեց նրա կողմը: Երբ պատրիկը տեսավ այս, երեսնիվայր ընկավ և առատաբուխ արտասուքներով աղաչեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ ասելով. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, գիտեմ, որ մեղավոր եմ, սակայն քո երեսը մի՛ դարձրու ինձնից. նայի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ, քանզի թեև մեղավոր եմ, սակայն քո ստեղծածն եմ, և չեմ տեսնում իմ մեջ, Տե՛ր, այնքան չարություն կամ խորամանկություն, որ Քո սուրբ երեսն ինձնից դարձնես»: Մինչ այսպիսի մորմոքումով լաց էր լինում պատրիկն ու խոստովանում, այսպիսի խոսք հնչեց սուրբ և անարատ պատկերից. «Քեզանից, ո՛վ պատրիկ, միայն գոհ եմ, որովհետև չարժում ես իմ ողորմածությունը նրանց հանդեպ, ովքեր աղաչում են, սակայն այս գրագրին պարտական եմ, քանզի նեղության ժամին և բազում վշտերի մեջ չուրացավ ինձ, այլ Հայր, Որդի և Սուրբ Հոգի խոստովանեց, և ըստ ամենայնի՝ Ես նրա վարձը կտամ՝ ի տրիտուր նրա վաստակի»: Երբ այս լսեց պատրիկը, հարցուփորձ արեց գրագրին և ստուգությամբ իմացավ նրանից ամեն ինչ և փառք տվեց արդարակշիռ վարձատրող Քրիստոսին: Նույնպես և մենք, եղբայրնե՛ր, հիանա՛նք՝ լսելով այս պատմությունը, որ Աստված իրեն պարտական է համարում նրանց, ովքեր անարատ, ուղիղ և անխախտ հավատը պահում են առ Նա: Արդարև, արհամարհե՛նք բյուրավոր մահերը՝ հանուն Քրիստոսի, նաև գրկաբաց ընդունենք տառապյալներին, որ Աստված է շնորհում մեզ, որպեսզի Քրիստոս մեզ իր բարեկամը համարելով՝ ինչպես այս պատրիկին՝ գոհանա, և ինչպես այն գրագիրը՝ արժանի լինենք լսելու, թե՝ պարտական եմ քեզ և պատասխան կտամ Դատաստանի օրը, երբ յուրաքանչյուրին կհատուցեմ՝ ըստ իրենց գործերի:

15. Պատմեց ծերերից մեկը և ասաց. «Գնացինք մի անգամ ես և իմաստասեր Սոփրոնիոսն Ալեքսանդրիա՝ աբբա Պողոսի մոտ, որ վանք

ուներ Քարկոծում կոչվող վայրում, և վայելուչ ընդունելության արժանանալով ծերի կողմից՝ գոհացանք Աստծուց: Ես նրան հարցրի. «Հանուն Տիրոջ, ասա՛ մեզ, հա՛յր, ինչպե՞ս դարձար մենակյաց»: Եվ ծերը հոգոց հանելով՝ ասաց. «Հավատացե՛ք ինձ, որդյակնե՛ր, ոչինչ չեմ թաքցնի ձեզանից. երբ աշխարհական էի, մեծ անձկություն և հավատ ունեի դեպի մենակյացները, և որտեղ հանդիպում էի նրանց, որոնք քաղաք էին գալիս, տանում էի իմ տուն և պատիվ էի տալիս նրանց, և ինչի կարիք ունենում էին՝ նվիրում էի նրանց: Մի օր դուստրս հիվանդացավ, և բժիշկներից տեղեկանալով՝ մեր դրացիները, մերձավորներն ու հարազատները եկան և մեզ հետ լաց էին լինում ու մխիթարում: Իմ եղբայրն ինձ ասաց. «Գնա՛, կանչի՛ր քահանային, թող այցելություն անի քո դստերը, որպեսզի շուտ արձակի հոգին և չտառապի»: Երբ գնում էի, ինձ հանդիպեց աբբա Զաքեոսը և արտասվալից աչքերս տեսնելով՝ հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, որդյա՛կ»: Ասացի նրան. «Դուստր ունեի միածին, որն այժմ վախճանվում է. գնում եմ քահանային կանչելու, որպեսզի այցելություն անի նրան՝ հոգին շուտ ավանդելու համար»: Եվ ծերն ինձ ասաց. «Ե՛տ դառնանք, որպեսզի տեսնեմ նրան»: Տուն մտնելով՝ ասաց. «Դո՛ւրս հանիր այստեղ եղողներին»: Եվ ես հավաքվածներին ուղարկեցի մյուս հարկ: Ծերը բռնեց աղջկաս ձեռքը և ինձ ասաց. «Խոստանում ես պահե՞լ խորհուրդը, որ քեզ կասեմ, և Քրիստոս կշնորհի դրա կյանքը քեզ»: Երեսս դրի նրա ոտքերին ու ասացի. «Ոչ մեկին չեմ ասի»: Ծերն աղոթքի կանգնեց, և երբ ավարտեց աղոթքը, վերցրեց ջուրը, կնքեց երեք անգամ և ցանեց աղջկա երեսին: Այնժամ, որպես Տիրոջ փառքից՝ աղջիկն անմիջապես նստեց՝ տկարության հետք անգամ չունենալով: Եվ հայր Զաքեոսն ինձ ասաց. «Ահա Աստված սուրբ հայրերի աղոթքների շնորհիվ քո օտարասիրության համար դրան շնորհեց քեզ. մարդու հետ չամուսնացնես դրան, այլ հարսնացրու Երկնավոր Փեսային՝ մեր Քրիստոս Աստծուն»: Եվ դուրս գալով՝ գնաց ծերը: Մայրը, ես և բոլոր նրանք, ովքեր լսեցին, փառաբանեցինք Աստծուն: Իսկ աղջիկը ութ տարեկան էր: Այնժամ ես ստիպեցի իմ կնոջը՝ ընծայել նրան կուսության: Եվ նա ասաց ինձ. «Թող նրան, մինչև հասունության տարիքի հասնի»: Երբ դարձավ տասնհինգ տարեկան, իմ լծակցին ասացի. «Ահա օրինավոր չափի հասավ, ինչո՞ւ ենք պահում նրան»: Կինս ինձ ասաց. «Ես չեմ թողնի՝ դա կրոնավոր դառնա, այլ մարդու հետ կամուսնացնեմ»: Ես հակառակվում էի նրան և հաճախ նախատում էի, մինչև որ եկա ծերակույտի (սինկղիտոս) մոտ, և նրանք հրամայեցին՝ հարցնել աղջկան՝ երկուսից որն ընտրի՝ այն էլ կլինի: Իսկ մայրն ու մյուս կանայք աղջ-

կան խրատում էին ամուսնությունն ընտրել. և այդպես էլ եղավ: Այնժամ քահանան ինձ ասաց. «Գնա՛ և մի կույս աղջի՛կ գնիր և դրա փոխարեն մտցրո՛ւ վանք, և Աստված կընդունի նրան»: Ես սրտի ողջ փափագով ընդունեցի նրա խրատը և գնեցի մի տասնամյա աղջիկ, նրա ընտանիքին նվիրեցի քսան դահեկան և նրան վանք մտցրի: Վանամայր Պրոկոպիային ասացի. «Ընդունի՛ր այս աղջկան, մա՛յր, և ինձնից կստանաս կյանքի բոլոր օրերի համար նրա զգեստներն ու կերակուրը, իսկ իմ մահվանից առաջ նրան բաժին կհանեմ ութսուն դահեկան»: Վանամայրը վերցրեց նրան, կտրեց մազերը, իսկ ես վերադարձա իմ տունը, պատրաստվեցինք հարսանիքի, և իմ դուստրն ամուսնացավ: Իսկ հարսանիքից ութ օր հետո տեսիլք տեսա, որ լուսազգեստ մեկի հետ գնում էի մի ճանապարհով, որով երբևէ չէի ընթացել: Եկանք հասանք մի դաշտ, և ինձ հետ եղողն ասաց. «Այստեղ վաճառատուն է, գնանք, որպեսզի տեսնես, թե ինչ շահեցիր կամ ինչ կորցրիր»: Հասանք և մտանք մի վերնատուն. ամբողջ քաղաքը լցված էր եթովպացիներով, և մոտ հիսուն եթովպացիներ թակարդներ էին սարքում, ոմանք անիվներ էին շինում և մարդկանց դնում էին անիվների վրա, ուրիշները խորխորատներ էին փորում և մարդկանց այնտեղ գցում, այլոց էլ տեսնում էի, որ մարդկանց ոտնահարում ու խփում էին, ոմանք էլ մարդկանց քարշ էին տալիս ու խոր լճի մեջ էին գլորում և իմ աչքի առաջ կանանց հետ էին անառականում: Բոլորը միակամ ուրախանում էին չարիքների վրա, ընթանում էին դևերի հետ և ասում, թե մարդ չի կարող թվել նրանց բոլոր հնարքներն ու անամոթությունները, որ ցուցադրում են նրանք: Եվ այն եթովպացիներից ոմանք գալիս էին ու համբուրում ինձ, ես էլ նրանց էի համբուրում, քանզի ինձ յուրային էին համարում: Հարցնում էին. «Ե՞րբ ես անելու հարսանիքը, որպեսզի մեզ ևս ուրախացնես»: Եվ ես ասում էի. «Ահա տեսնում եք, որ ջանում եմ դրա համար»: Տեսնում էի փեսայի կողքը բազմություն հավաքված, որ խորտիկներ ունեին: Եկանք ես և իմ կինը և մատուցեցինք մեր դստերը, և նրա երեսին, պարանոցին, թևերին ու կրծքին՝ մինչև գոտկատեղը, մեծ ու փոքր օձեր էին փաթաթված, և այդպես նրան մտցրինք առագաստ: Եվ ահա մի փոքրամարմին եթովպացի նստեց նրա ձախ կողմում ու սկսեց համբուրել նրան, և դռնից դուրս ևս բազում եթովպացիների տեսա, որ փողեր էին փչում, պարում և երգով ձայնում էին դեպի մեզ: Ուրիշ էլ ի՞նչ հավելեմ. տեսա ինձ դարձյալ նրա հետ, որ լուսազգեստ էր, և երկուսով գնում էինք միասին, և ինձ ուրախություն էր պարգևում նրանից բուրող անուշահոտությունը, որին մինչ այդ անսովոր էի: Նա ինձ ասաց. «Կանգնի՛ր այստեղ, քան-

զի արժանի չես ներս մտնելու»: Կանգնեցի ես այդ տեղում և տեսա մի քաղաք՝ պայծառ վայելչությամբ ու գեղեցկությամբ, և նրա վեհությունը անկար է պատմելու մարդկային լեզուն: Մեկնեց իր աջը այն բարի այրը, որ իմ ուղեկիցն էր, և ցույց տվեց ինձ քաղաքի պայծառությունը: «Տեսնո՞ւմ ես, – ասաց, – որտեղից զրկեցիր քո դստերը և այսպիսի քաղաքից ընդմիշտ հեռացրիր նրան՝ ընկղմելով նեղությունների ու վշտերի տղմուտ խորխորատը»: Եվ նույն պահին արթնացա: Պատմեցի այս ամենը կնոջս, և նա ինձ ասաց. «Այդպիսի մարդու ես էս տեսա, սակայն ինչ եղավ՝ եղավ, ահա երեք գիշեր է՝ եթովպացիների եմ տեսնում, որոնք փաթաթվում են ինձ, տաք-տաք համբուրում են և ասում. «Անչափ շնորհակալ ենք, որ մեզ առավել սիրեցիր և քո դստերը մեզ հարս պատրաստեցիր, այլ ոչ թե՝ Հիսուսին, իսկ ես վախենում էի քեզ պատմել այդ»: Եվ ես ասացի. «Եթե կամենում ես՝ ե՛կ բաժանվենք միմյանցից և արտասուքներով լացենք մեր մեղքերը, և Տերը կների մեզ»: Իսկ նա ասաց. «Այդ չեմ կարող անել, քանզի որոշել եմ իմ դստեր հետ ապրել»: Եվ ես՝ հետինս, որ թշվառական իմ դստերը խորխորատին մատնեցի, առավոտյան վեր կացա, գնացի աբբա Զաքեոսի մոտ, որ առողջություն էր պարգևել իմ աղջկան: Իսկ նա չէր կամենում ընդունել ինձ և տախտակի վրա այսպես գրեց. «Թողությո՛ւն տուր ինձ, եղբա՛յր, ես չեմ կարող քեզ ընդունել, քանզի Աստված երես թեքեց քեզանից»: Այնժամ գնացի սուրբ Եվթիմիայի վանքը և հայր Պողոսին պատմեցի ինձ հետ ողջ կատարվածը: Եվ ծերն ինձ ասաց. «Խաբվեցի՛ր, որդյա՛կ, քո դստերը կնության տալով. իսկ ով քեզ նման խորհուրդ տվեց՝ նա քո փրկությունը չէր կամենում: Մի՞թե Աբրահամը չէր կարող, երբ Աստված նրան ասաց. «Զոհի՛ր քո որդուն»՝ որդու փոխարեն տասը ծառա տալ (Ծննդ. ԻԲ 1-12)*, և Հեփթայեն նույնպես գիտակցեց, որ Աստված չի ընդունի այդ, ապա թե ոչ՝ իր դստեր փոխարեն տասը ծառա կսպաներ* (Դատ. ԺԱ 30-39)*, և Հակոբն էլ Հռաքելին ցանկացավ, սակայն առագաստում Լիային գտնելով՝ չամաչեցրեց նրան, այլ կնության առավ նրան* (Ծննդ. ԻԹ 22-24)*, և Հռաքելին էլ չամաչեցրեց և չթողեց նրան* (Ծննդ. ԻԹ 27-30)*: Թեև Աստված քեզանից ընդունեց այն աղջկան, սակայն նա քո դստերն է պահանջում քեզանից, իսկ դու և քո կինը կամենում եք նրան հավիտենական կրակի դատապարտել. հանցանքի մեջ եք ընկնում, հավատացե՛ք ինձ, և Աստված չի անտեսում, քանզի գրված է. «Զեմ արհամարհի այն, ինչ դուրս է գալիս իմ շրթունքներից»* (Սաղմ. ՁԸ 35)*: Ուրեմն գնա՛, որդյա՛կ, լա՛ց եղիր քո մեղքերի վրա, և Աստված մեծ է, իր անբավ շնորհներով կողորմի և կմխիթարի քեզ»: Այնժամ դարձա իմ տունը, հավաքեցի՝ ինչ ունեի, և*

բաժանեցի աղքատներին, հետո մենակյացների գտա, ովքեր գնում էին Սինա լեռը, և նրանց ուղեկից դարձա: Ապա՝ Աստծո շնորհով կրոնավոր դարձա: Եվ արդեն երեսուներկու տարի է՝ աղաչում եմ Տեր Քրիստոսին, որ թողություն տա իմ մեղքերին»: Այս ամենը լսեցինք՝ փառավորելով Աստծուն և գրի առանք, որպեսզի խոսվի և օգտակար լինի:

16. Աբբա Ամովսը եկավ Երուսաղեմ, ուր և պատրիարք ձեռնադրվեց: Այս լսելով՝ բոլոր վանքերի վանահայրերը եկան երկրպագելու նրան, որոնց հետ էի նաև ես՝ իմ հոր աշակերտը լինելու բերումով: Պատրիարքն ասաց հայրերին. «Աղո՛թք արեք ինձ համար, հայրե՛ր, քանզի մեծ բեռի տակ մտա և անտանելին ձեռնարկեցի. անչափ վախեցնում է ինձ պատրիարքության պաշտոնը, որը Պետրոսինը, Պողոսինը և նրանցից հետո եկած ընտրյալ հովիվներինն է: Առավել ևս զարհուրում եմ ձեռնադրության ծանրությունից, քանզի գրություն գտա, թե երանելի Ղևոնդիոսը՝ հռոմեացիների եկեղեցու արթուն առաջնորդը, քառասուն օր մնաց սուրբ Պետրոսի տապանում՝ սուրբ առաքյալից թախանձագին խնդրելով՝ աղաչել Աստծուն իր համար: Եվ երբ լրացան օրերը, երևաց նրան սուրբ առաքյալն ու ասաց. «Աղաչեցի քեզ համար Աստծուն, և թողեց քո մեղքերը, բացի հապճեպ ձեռնադրվելուց և անփորձ լինելու պատճառով՝ ուրիշների մեղքերին հաղորդակից լինելուց»: [Քանզի թույլ չի տալիս սրբազան կարգը, որ որևէ մեկը անխտրաբար սրբությունը տա խոզերին և շներին, որոնք առնելով՝ ոտնակոխ անեն այն և անբարկանալին ցասումի վերածեն աշխարհի վրա: Դրա համար թողություն չունեն ամենագութ Տիրոջից, քանզի վաճառական դառնալով՝ վատնեցին իրենց Տիրոջ գանձերը՝ դրանք տալով նրա ատելիներին: Սրա պատճառով, հայրե՛ր, եղբայրնե՛ր և որդինե՛ր իմ, երկյուղի մեջ եմ, և իմ խռովված սիրտը դողում է այդ սարսափից, որի համար աղաչում եմ ձեզ՝ ամենքիդ, օգնե՛ք ինձ ձեր մաքուր աղոթքներով՝ պատահելիք նեղությունների վտանգի ժամին, որպեսզի հապճեպ և անփութորեն չձեռնադրեմ որևէ մեկին և մարդկանց հաճո լինելու համար՝ Աստծո սիրուց չզրկվեմ»: Ի պատասխան՝ բոլոր հայրերը, որ հավաքված էին այնտեղ, ասացին. «Օգնական լինի քեզ Տեր Աստվածն ամենակալ, ո՛վ հայր պատվական և արժանավոր պատրիարքդ առաքելական սուրբ աթոռիդ: Դո՛ւ ևս աղոթքներով օգնական եղիր մեզ՝ քո որդիներին, ինչպես որ պարտավոր իսկ ես»: Այս ասելով՝ գնաց յուրաքանչյուրն իր տեղը[1]]:

[1] Այս հատվածը բերվում է ըստ Ա թարգմանության՝ իբրև պատումի իմաստը պարզաբանող լրացում:

17. Աբբա Սևերիանոսի վանքի վանահայր աբբա Մինասը հայր Սոփրոնիոսի մասին ասում էր, թե յոթանասուն տարի բնակվեց Մեռյալ ծովի մոտ՝ բոլորովին մերկ, կերավ միայն արմատիք և այնտեղից ուրիշ ոչ մի տեղ չգնաց:

18. Ոմն եղբայր գնալով Իփիմե լեռը՝ մի մեծն ծերի մոտ, ասաց նրան. «Ի՞նչ անեմ, աբբա՛, քանզի կորչում է իմ անձը»: Եվ ծերը նրան հարցրեց. «Ինչո՞ւ, որդյա՛կ»: Եղբայրն ասաց. «Երբ աշխարհի մեջ էի, շարունակ պահքերի ու հսկումների մեջ էի, և մտքի մեծ արթնություն ու սրտի ջերմություն կար իմ մեջ, իսկ այժմ մենակյաց եմ և բարության ոչ մի նշույլ չեմ տեսնում իմ մեջ»: Ծերն ասաց. «Հավատա՛ ինձ, որդյա՛կ, բարությունը, որ անում էիր աշխարհում, սնափառությունից էր՝ ի ցույց մարդկանց, սակայն խոհեմությունից զուրկ էր Աստծո առաջ, դրա համար էլ սատանան չէր շտապում մարտնչել քո դեմ կամ հատել քո փափագը: Այժմ դևերը տեսան քեզ զինվորագրված և սկսեցին պատերազմել քո դեմ, որովհետև սաղմոսերգությամբ, աղոթքներով և պահքերով վերքեր ես հասցնում նրանց, և նույն սատանան սպառազինվել է քո դեմ, քանի որ Աստծո արժանավորն ես: Որդյա՛կ, այժմ, որ խոնարհությամբ սաղմոսում ես՝ ավելի ընդունելի է, քան այն հազարավորները, որ սաղմոսում էիր աշխարհում, և այժմյան քո փոքր պահքերն ավելի ընդունելի են, քան այն ժամանակվա շաբաթականը»: Եղբայրն ասաց. «Լսի՛ր, աբբա՛, այժմ ամենևին պահեցողություն չեմ անում, և բոլոր բարի գործերը, որ անում էի աշխարհում, վերացան ինձանից»: Ծերն ասաց. «Ընդունելի է՝ ինչ որ ունես, միայն թե համբերի՛ր, և քեզ համար բարի է մնալ այն ժուժկալության մեջ, որ եղբայրներն ունեին»: Եվ տեսնելով եղբոր տկարությունը՝ ծերն ավելացրեց. «Հավատա՛, եղբա՛յր, չէի կամենում քեզ ասել, բայց տեսնում եմ քեզ՝ սատանայի տիղմի մեջ ընկած: Լսի՛ր, դո՛ւ, որ կարծում ես, թե բարի գործեր ունեիր, երբ աշխարհի մեջ էիր, նախ՝ մեծամտանում ես՝ ինչպես փարիսեցին, որ կարծում էր, թե բարություն է անում, որի պատճառով էլ կորսվեց (Ղուկ. ԺԸ 10-14)*: Իսկ այժմ, որ կարծում ես, թե բարի գործեր չունես, դա իսկ բավական է քո փրկության համար, քանզի ով խոնարհեցրեց իր անձը, նա էլ արդարացավ, ինչպես մաքսավորը, որը թեև ոչ մի բարի չգործեց, սակայն Աստծուն հաճելի եղավ մեղավորն ու հեղգացածը* (Ղուկ. ԺԸ 13)*, քանզի սրտի դողով ու խոնարհությամբ մարդն առավել է, քան նրանք, ովքեր շատ են տքնում և իրենց մեջ կարծում են, թե բարիք գործեցին: Երկրորդ՝ երբ աշխարհի մեջ էիր և բարիք էիր գործում, մարդիկ տեսնում էին քեզ և պատվի էին արժա-*

նացնում, և տառապյալները, որոնք կերակրվում էին քո բաշխածից, գովում էին քեզ քո երեսին, և դու լսում էիր ու առավել ջերմեռանդորեն էիր գալիս եկեղեցի, տեսնում էիր աշխարհականներին և փափագով սաղմոսում էիր: Այժմ քո սենյակում մարդիկ չկան, որ քեզ տեսնեն, այլ հրեշտակները, տեսնելով քո վարքը, աղոթակից են լինում քեզ, իսկ դևերը նետերի թիրախ են դարձնում քո միտքը չար ու անսուրբ մտածումներով, որպեսզի հեղգությամբ ու անզգոյությամբ կործանեն քեզ. քա՛ջ եղիր և ամո՛ւր կանգնիր քո մարտում»: Եվ շահեց եղբայրը, ծունր դրեց ծերի առջև և ասաց. «Այսօր, աբբա՛, փրկվեց իմ անձը»:

19. Վանահայր աբբա Գերոնդիոսը մեր սուրբ հորը՝ Եվթիմիոսին և Սոփրոնիոս Իմաստասերին պատմեց և ասաց. «Մեռյալ ծովի այն կողմում երեք հովիվներ էինք. երբ դուրս գալով շրջում էինք լեռներում, մեզնից ներքև ուրիշ հովիվներ ևս շրջում էին ծովի ափին: Եվ մի օր նրանց պատահեցին հագարացիները, որոնք նույնպես այդ վայրերն էին գալիս: Երբ անցնում էին մեր կողքով, հագարացիներից մեկը դարձավ և կտրեց մի անապատականի գլուխը: Մենք լաց եղանք անապատականի համար, և ահա մի թռչուն հանկարծակի հարձակվեց այն սարակինոսի վրա, հափշտակեց նրան, բերեց մեր առջև և բաց թողեց, և նա ընկնելով՝ կտոր-կտոր եղավ»:

20. Ոմն Հովհան՝ Ղոկիոն քաղաքից, մանկությունից հյուսնություն սովորեց, և երբ լրացավ նրա քսանհինգ տարին, մտավ վանքի միաբանություն և նրանց հետ մնաց հինգ տարի: Հետո մենակյաց դարձավ Ղոկիոնի լեռներում և իր համար երեք խրճիթ կառուցեց: Մեջտեղի խրճիթում աղոթքի էր կանգնում, մյուսում մարմնական կարիքներն էր հոգում, իսկ երրորդում նստում և գործում էր: Սա երեսուն տարի արգելական եղավ և միայն պատուհանից էր վերցնում անհրաժեշտ բաները: Եվ արժանի եղավ ստանալու աստվածագիտության շնորհները: Սա հանդիմանեց Մաքսիմիանոս Հալածիչին, թե նա չի կարող հաղթել նրանց, ովքեր Գալիլիացու հավատքի մեջ են: Եվ նրա անունը հռչակվեց ողջ երկրով մեկ, թե երանելի Հովհանը Աստծո շնորհների գիտակ է:

21. Տաբենոսում բնակվում էր ոմն մենակյաց՝ սաստիկ առաքինի, հրաշագործ և իր ողջ վարքով՝ խիստ հաճելի Աստծուն, որտեղ և դարձավ Պաքմեոս սքանչելագործ, որովհետև իր կյանքի ողջ ընթացքում ուղիղ ճանապարհով ընթացավ և մարգարեության շնորհի արժանացավ: Սա աղքատասեր էր և առավելագույնս մարդասեր: Եվ

մինչ նստում էր նա իր այրում, հայտնվեց նրան Աստծո հրեշտակը և ասաց. «Պաքմե՛»: Եվ նա ասաց. «Ահավասիկ ես եմ, Տե՛ր»: Հրեշտակն ասաց. «Քո ճանապարհներն ուղղեցիր, այժմ ե՛լ այրից դ, հավաքի՛ր մենակյացներին և բնակվի՛ր նրանց հետ, և ինչպես կուսուցանեմ քեզ, այնպես խրատի՛ր նրանց»: Եվ մի տախտակի վրա գրեց հրեշտակն ու տվեց ծերին, և գրության սկզբունքները հետևյալն էին. «Թույլ կտաս յուրաքանչյուրին ըստ իր կարիքների ուտել և խմել, յուրաքանչյուրին ըստ իր կարողությունների գործի կդնես, չարգելես նրանց, ովքեր պահում են, և ոչ էլ նրանց, ովքեր ուտում են: Օրնիբուն նրանց դաստիարակությամբ զբաղվի՛ր, և նրանց աղոթքները թող անձանձրույթ լինեն: Իսկ ավագների համար, ովքեր ծեր են, խցեր կշինես և նրանց երեք-երեք բնակեցնես, և կտաս նրանց ուտելու՝ ինչ որ խնդրեն: Նրանց ուտելը, նստելը, բազմելն ու աղոթելը թող լինեն անձանձրույթ, իսկ նրանց հագնելիքը՝ ցերեկը՝ կաշվեղեն, գիշերը՝ մազեղեն: Ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին թող մասնակցեն արարողություններին, արարողությունների ժամանակ գոտևորված լինեն, իսկ կնգուղները՝ այս նշաններով. խավոտ չլինեն և աջակողմում ունենան ծիրանագույն խաչ»: Եվ Պաքմեոսն արեց այնպես, ինչպես պատվիրեց Տիրոջ հրեշտակը. վանք կառուցեց և այնտեղ հավաքեց յոթ հազար եղբայրների, որտեղ և նրանք մնում են ցայսօր, և որտեղ էլ մեռավ Պաքմեոս երանելին:

22. Կար և մեկ այլ վանք, որտեղ հազար երեք հարյուր մարդ էր բնակվում, որոնք մինչև օրս էլ կան, և այս վանքում տեսա ես հենց իրեն՝ Մակարիոսին: Վանքում կային տասնհինգ դերձակներ, քսան կարկատողներ և հիսունհինգ լվացարարներ, տասը դարբին, յոթ ուղտապան, և ևս քառասունը, որոնք վաստակելով՝ և իրենց կարիքներն էին բավարարում, և բանտարկյալներին ու աղքատներին էին բաշխում:

23. Հայր Մակարիոսն Ալեքսանդրիայում մեզ պատմեց, թե՝ երբ ես դեռ Սկյութիայում էի նստում, այնտեղ եկան երկու օտարական պատանիներ՝ մեկն արդեն մորուքավոր, մյուսի մորուքը դեռ նոր էր սկսում աճել: Երբ ինձ տեսան, հարցրին. «Որտե՞ղ է հայր Մակարիոսի խուղը»: Իսկ ես ասացի. «Ես եմ Մակարիոսը»: Եվ նրանք, ընկնելով իմ առջև, ասացին. «Մենք կամենում ենք այստեղ մնալ»: Տեսնելով նրանց այդպես փափկակենցաղ՝ քանզի մեծություն ու հարստություն էին թողել, նրանց ասացի. «Դուք այստեղ չեք կարող մնալ»: Ասաց ինձ ավագը. «Եթե այստեղ չենք կարող մնալ, ուրիշ տեղ կգնանք»:

Եվ ես մտքում ասացի. «Ինչո՞ւ հեռացնեմ սրանց, որ գայթակղվեն. անապատի դժվարություններն իրենք կհալածեն սրանց»: Եվ ասացի նրանց. «Եկե՛ք ձեզ համար խրճիթ չինեք»: Նրանք ասացին. «Ցո՛ւյց տուր մեզ տեղը»: Ես նրանց տվեցի կացին, բրիչ ու մի տոպրակ հաց ու ցույց տվեցի ժեռուտը, որտեղից պետք է քարը կտրեին: Եվ ասացի նրանց. «Փա՛յտ բերեք անտառից և ծածկե՛ք ձեր կտուրն ու այդպե՛ս բնակվեք»: Կարծում էի, թե շուտով կփախչեն անապատից դժվարությունների պատճառով: Ինձ նաև հարցրին, թե ի՞նչ գործ են անում այստեղ: Ես ասացի. «Պարան են հյուսում», և վերցնելով արմավենու ոստեր՝ նրանց ցույց տվեցի գործելու ձևը և ասացի. «Այսպես կողովնե՛ր հյուսեք և տվե՛ք ուղտապաններին, և նրանք ձեզ հաց կբերեն»: Եվ այս ասելով նրանց՝ գնացի իմ խուցը: Իսկ նրանք ամեն ինչ համբերությամբ կատարեցին և ինձ մոտ չեկան երեք տարի: Իսկ ես մտատանջությունների մեջ էի, թե արդյոք ինչպե՞ս են նրանք կենցաղավարում, քանզի ուրիշները հեռվից գալիս են ինձ մոտ, իսկ սրանք, որ այսքան մերձ են, չեն գալիս, այլ միայն լռությամբ գնում են եկեղեցի՝ Հաղորդություն առնելու: Եվ աղոթելով առ Աստված՝ պահքի մեջ մնացի մեկ շաբաթ, որպեսզի ցույց տա ինձ նրանց գործերը, ապա վեր կացա և գնացի նրանց մոտ՝ տեսնելու, թե ինչպես են ապրում: Երբ դուռը բախեցի, բացեցին իմ առաջ, լռելյայն ողջունեցին ինձ, ավագն ակնարկ արեց կրտսերին, և սա, դուրս ելնելով, նստեց դրսում, իսկ մյուսը՝ կողքիս նստած, պարան էր հյուսում՝ առանց գեթ մի բառ խոսելու: Իններորդ ժամին եկավ կրտսերը, ավագը նրան դարձյալ ակնարկ արեց, և նա, դուրս գալով, մի քիչ ոսպապուր եփեց և դարձյալ մեծի ակնարկով՝ լռելյայն սեղանին դրեց երեք պաքսիմատ: Ես ասացի. «Եկե՛ք ճաշենք»: Եվ սեղան նստելով՝ ճաշեցինք, ապա բերին կուժը, և ջուր խմեցինք: Երեկոյան ինձ ասացին. «Հա՛յր, գնալո՞ւ ես քո խուցը»: Ես ասացի. «Ո՛չ, այլ այստեղ եմ ննջելու այսօր»: Եվ ինձ համար փսիաթից անկողին պատրաստեցին, իսկ մյուսի վրա իրենք մեկնվեցին՝ հանելով թիկնոցները և արձակելով գոտիները, իսկ ես աղաչեցի Աստծուն՝ ցույց տալ ինձ նրանց գործերը: Եվ տանիքը բացվեց ու պայծառ մի լույս հայտնվեց, որը նրանք չէին տեսնում, իսկ իմ առումով գիտեին, թե քնած եմ: Զարթնեցրեց ավագ եղբայրը կրտսերին, վեր կենալով՝ կապեցին գոտիները և ձեռքերը դեպի երկինք բարձրացրին, իսկ ինձ քնած էին կարծում: Եվ ահա տեսնում էի դևերին, որոնք ճանճերի պես գալիս էին կրտսեր եղբոր վրա և կամենում էին նստել նրա աչքերին ու բերանին, և տեսնում էի Աստծո հրեշտակին, որ հրեղեն սուր ուներ և հալածում էր դևերին ու պաշտպանում էր նրան, իսկ

ավագին չէին համարձակվում մերձենալ: Տեսնելով այս՝ փառաբանեցի Աստծուն և հասկացա, որ ավագը կատարելության է հասել, իսկ կրտսերի դեմ դեռ պատերազմում էին դևերը:

24. Բոմբոսը՝ ոչ գրագետ լինելով, մտավ մեկի մոտ՝ սաղմոս ուսանելու և լսելով քսանութերորդ սաղմոսի առաջին տողը, որ ասում է. «Զգուշանամ իմ ճանապարհին, [որ լեզվովս չմեղանչեմ]» (Սաղմ. ԼԸ 2)*, երկրորդն առանց լսելու՝ գնաց՝ բավականանալով ասված այս մի խոսքով, որ եթե կարողանա՝ գործով ուսանի այն: Իսկ երբ ուսուցանողը դժգոհեց, թե ինչու այս վեցամսյա ժամանակահատվածում չտեսավ նրան, պատասխանեց, թե սաղմոսի խոսքը գործով դեռ չի ուսանել: Այս Բոմբոսին մեկը ոսկի տվեց՝ աղքատներին բաժանելու համար և պատվիրեց հաշվառում անել, ում որ տալիս է, իսկ նա պատասխանեց. «Աստծուն հաշվառում պետք չէ»: Այս Բոմբոսը Աթանաս եպիսկոպոսի խնդրանքով անապատից իջավ Ալեքսանդրիա և այնտեղ մի կնոջ տեսնելով՝ սկսեց արտասվել: Ովքեր մոտ էին, հարցրին, թե ինչո՞ւ արտասվեց, պատասխանեց. «Երկու բան ինձ հուզեցին. մեկը՝ նրա կորուստը, մյուսը, որ ես այդքան փութաջան չեմ Աստծուն հաճոյանալու մեջ, որքան նա՝ զազրելի մարդկանց հաճոյանալու մեջ»:*

25. Իսկ մեկ ուրիշը նույն երանելի Բոմբոսի մասին ասում էր, թե նա բազում տարիներ աղոթում էր՝ ասելով. «Տե՛ր, մի՛ փառավորիր ինձ երկրի վրա»: Եվ Աստված այնքան պատվեց և փառավորեց նրան՝ ինչպես Մովսեսին, քանզի ինչպես նրա երեսին հնարավոր չէր նայել՝ դեմքից ճառագող փառքի պատճառով, որ Աստված էր տվել նրան, այնպես էլ սա ստացավ նույն շնորհը, և ոչ ոք չէր կարող նայել նրան՝ նրա կյանքի վերջին օրերին:

26. Ոմն մենակյաց՝ Ամոն անունով, երբեք իրեն մերկ չէր տեսել և ասում էր. «Վայել չէ մենակյացին իր մարմինը տեսնել»: Մի անգամ գետն անցնելու անհրաժեշտությունն ունեցավ, բայց չէր ուզում մերկանալ: Աղոթեց առ Աստված՝ խնդրելով անցկացնել իրեն՝ առանց հատելու իր կամքը, և հրեշտակը նրան փոխադրեց գետի այն կողմը: Սա երիտասարդ տարիքում հրաժարվում էր ամուսնանալ, սակայն երբ խրախուսողներից ոմանք հորդորեցին չհակառակվել ամուսնությանը, այլ կին առնել, հոժարեց և ամուսնացավ: Երբ սովորական հանդեսով մտցրին սենյակ, նա վերցնելով Առաքելական թուղթը առ Կորնթացիս՝ կարդաց կնոջ համար և սկսեց մեկնել առաքյալի՝ ամուսնացածներին ուղղված պատվիրանները (Ա Կորնթ. Ժ 1-40)*, շատ բաներ էլ թղթից դուրս՝ իր գիտելիքներից էր ուսուցանում, թե որքան մեծ բեռ է ամուս-*

նությունը, և ինչպիսի չարչարանքներ կան տղամարդու և կնոջ համատեղ կյանքում, ինչպիսի երկունք է սպասվում հղիներին, ինչպես նաև՝ սնվելու և ապրուստի դժվարությունները, ապա ներկայացնում էր սրբության պարգևած քաղցրությունները, թե կուսությունը որքան ազատ, անշաղախ և ամեն տեսակ արտաքին աղտեղություններից զերծ վարք է, և որ այն Աստծո առաջ կանգնելու համարձակություն է տալիս: Այսպիսի և սրանց նման բազում բաներ ասելով իր կույս զուգակցին՝ հոժարեցնում էր նրան իր հետ՝ նախքան միմյանց մերձենալը՝ հրաժարվել աշխարհիկ վարքից: Եվ երկուսով ուխտելով այդ՝ գնացին Նիտրիա կոչվող լեռը և այնտեղ որոշ ժամանակ նույն հարկի տակ անցկացնելով՝ ճգնում էին միասին՝ առանց արու և էգ հասկացության խղճմտանք ունենալու, այլ՝ ինչպես առաքյալն է ասում՝ Տիրոջով: Որոշ ժամանակ անց Քրիստոսի նոր հարսն ու անխառն կույսն Ամոնին ասաց. «Վայել չէ, որ զգաստ ճգնավորն իր բնակարանում էգի տեսնի»: Ուստի անհրաժեշտ համարեց առանձին ճգնել, և այդ ուխտին երկուսն էլ հավանություն տվին և հեռանալով միմյանցից՝ այդպես էին կենցաղավարում այդուհետ, և հրաժարվեցին ձեթից ու գինուց, այլ միայն չոր հաց էին ուտում, այն էլ՝ երբեմն օրումեջ, երբեմն՝ երկու օրը մեկ, երբեմն էլ՝ շատ ավելի ուշ: Այս Ամոնի հոգին հրեշտակները հետմահու բարձրացրին երկինք, որին ականատես եղավ Անտոնիոսը, որը նման կենցաղավարություն ուներ, ինչպես ասվում է նրա վարքագրության մեջ՝ Ալեքսանդրիայի եպիսկոպոս Աթանասիոսի կողմից գրառված: Շատերը նախանձախնդիր եղան Ամոնի վարքին, և Սկյութիայի ու Նիտրիա լեռան կողմերը լցվեցին մենակյացների բազմությամբ:

27. Աբբա Պամբոնի հորդորով մի անգամ աբբա Մակարիոսը եկավ Նիտրա լեռը: Եվ ծերերը նրան ասացին. «Եղբայրներին խո՛սք ասա, հա՛յր»: Նա ասաց. «Ես երբեք մենակյաց չեմ եղել, սակայն տեսել եմ մենակյացների, երբ նստում էի անապատում՝ Սկյութիայի իմ խցում: Բռնադատում էին ինձ իմ մտածմունքներն և ասում էին, թե՝ գնա՛ այսինչ անապատը և տե՛ս, թե ինչ կտեսնես այնտեղ: Եվ այս մտածումներից բռնադատված՝ հինգ տարի համբերեցի, կարծելով, թե դևերից է: Եվ երբ այս մտածումները դադարեցին, գնացի այդ անապատը և այնտեղ գտա մի լիճ՝ մեջտեղում կղզի. անապատի անասունները գալիս և խմում էին այդ լճից: Եվ ահա անասունների մեջ երկու մերկ մարդու տեսա, և ինքս իմ մեջ զարհուրելով՝ կարծում էի, թե դիվական ոգիներ են: Երբ նրանք ինձ տեսան զարհուրած, խոսեցին և ասացին.

«Մի՛ երկնչի՛ր, մենք ևս մարդիկ ենք»: Ես նրանց հարցրի. «Որտեղի՞ց եկաք այս անապատը»: Նրանք ասացին. «Միաբանությունից ենք. մեզ ձայն եկավ ազդմամբ, և եկանք այստեղ և ահա արդեն քառասուն տարի այստեղ ենք. մեկս եգիպտացի է, մյուսս՝ լիբիացի»: Եվ ինձ հարցրին ու ասացին. «Ինչպե՞ս է ապրում աշխարհը. ջուրը գալի՞ս է իր ժամին, և ունի՞ աշխարհն իր առատությունը»: Ես նրանց ասացի՝ այո՛ և հարցրի. «Ինչպե՞ս կարող եմ դառնալ մենակյաց»: Եվ նրանք ասացին. «Եթե չհրաժարվես բովանդակ աշխարհից, չես կարող մենակյաց դառնալ»: Ես ասացի. «Տկար եմ և չեմ կարող ձեզ նման լինել»: Նրանք ասացին. «Եթե չես կարող մեզ նման լինել, հանդարտվի՛ր քո սենյակում և լա՛ց եղիր քո մեղքերի վրա»: Հարցրի նրանց. «Եթե ձմեռ է լինում, չե՞ք մրսում, և երբ տոթ է լինում, խորշակահար չե՞ն լինում ձեր մարմինները»: Եվ նրանք ասացին. «Աստված իր տնօրինությամբ այնպես արեց, որ ո՛չ մրսում ենք և ո՛չ էլ տոթակիզվում»: Արդ, նրա համար պատմեցի ձեզ սա, որ իմանաք՝ մենակյաց չեմ ամենևին. թողությո՛ւն տվեք ինձ»:

28. Մեկ այլ ծեր, որ արժանի եղավ եպիսկոպոսության, ասում էր, թե իբր իր ընկերն է պատմել իրեն, սակայն ինքն էր արել այն. «Կամեցա մի օր,— ասաց,— մտնել Նավասեի անապատի խորքը, տեսնելու՝ կգտնվի՞ այնտեղ ոմն մենակյաց, որ ծառայում է Քրիստոսին: Վերցրի մի քիչ պաքսիմատ և ջուր ու ընկա ճանապարհ: Երբ չորս օր ընթացա դեպի անապատի խորքը, և կերակուրը վերջացավ, ընկա վարանման մեջ, թե այս ինչ արեցի, սակայն ինքս ինձ քաջալերելով՝ փոքր-ինչ զորացա և անսվաղ գնացի ևս չորս օր, և արդեն քաղցից և ճանապարհից սաստիկ հոգնատանջ՝ փոքր-ինչ սրտնեղեցի և ընկա գետնին: Այդժամ մոտեցավ մեկը և մատներով հպվեց իմ շուրթերին՝ ինչպես բժիշկը, որ դեղ է տալիս, և անմիջապես այնպես զորացրեց ինձ, որ նույնիսկ մոռացա, թե հոգնաբեկ եմ եղել: Արդ, երբ տեսա ինձ օգնության հասած զորությունը, վեր կենալով գնացի դեպի անապատը: Երբ անցավ ևս չորս օր, դարձյալ տկարացա. երբ ձեռքերս դեպի երկինք բարձացրի, այն առաջին այրը, որ զորացրեց ինձ, դարձյալ եկավ և մատներով օծեց իմ շրթունքները. նույն պահին զորացա և անապատով գնացի ևս տասնութ օր, որից հետո գտա մի տաղավար, արմավենի և ջուր: Եվ ահա գալիս էր մի այր, որի գլխի մազերն իր հանդերձանքն էր, ամբողջովին ծերացած էր, իսկ դեմքով՝ ահավոր: Երբ տեսավ ինձ, սկսեց աղոթել, իսկ աղոթքը վերջացնելուց ու «ամեն» ասելուց հետո՝ իմացավ, որ մարդ եմ: Բռնելով ձեռքս՝ հարցրեց ինձ

և ասաց. «Ինչպե՞ս եկար այստեղ, տակավին կենդանի՞ է մարդկային ցեղը, քրիստոնյաների հալածանքները հիմա՞ էլ են ուժգին»: Եվ ես ասացի. «Հանուն ձեզ՝ սուրբ ողջակեզնե՛րիդ, որ ծառայում եք Հիսուս Քրիստոսին, դադարեցին քրիստոնյաների հալածանքները Քրիստոսի շնորհներով, բայց դու ինձ ասա՞ ինչպե՞ս եկար այստեղ»: Եվ նա հեծեծալով ու արտասվելով՝ պատմեց ինձ հետևյալը. «Ես եպիսկոպոս էի, և երբ հալածանքները սաստկացան, ու ինձ վրա եկան բազում տանջանքներ, չկարողանալով դիմանալ դժնդակ չարչարանքներին՝ առերևույթ և ակամա զոհ մատուցեցի կուռքերին: Իսկ երբ ինքս իմ մեջ զգացի և գիտակցեցի իմ կատարած անօրենությունը, մատնեցի իմ անձը այս անապատին ի մահ, և ահա արդեն քառասունհինգ տարի է՝ բնակվում եմ այստեղ՝ խոստովանելով ու աղաչելով Աստծուն, որպեսզի թողություն շնորհի ինձ, իսկ որպես ապրելու միջոց՝ այս արմավենին տվեց ինձ Աստված: Սակայն թողության մխիթարություն չունեցա՝ մինչև քառասունութ տարի, իսկ այս տարի մխիթարվեցի»: Մինչ ասում էր այս, հանկարծակի վեր կենալով՝ դուրս գնաց և աղոթքի կանգնեց: Երբ աղոթքն ավարտեց, եկավ ինձ մոտ, և ես զարհուրեցի՝ տեսնելով նրա երեսը և նվաղեցի, քանզի նրա երեսը հրի պես էր: Եվ նա դարձյալ ասաց ինձ. «Մի՛ երկնչիր, քանզի Տե՛րն առաքեց քեզ՝ պատանելու իմ մարմինը»: Երբ դադարեց խոսել, պարզեց ձեռքերն ու ոտքերը և հանգչեց: Հանելով վերարկուս՝ կեսը թողեցի ինձ և մյուս կեսով պատանեցի սրբի մարմինը, և հողը վերադարձրի հողին: Եվ երբ թաղեցի նրան, նույն պահին ցամաքեց աղբյուրը, արմավենին չորացավ, և տաղավարն ավերվեց, իսկ ես լալով աղաչեցի Տիրոջը, որ բուսցնի արմավենին, որպեսզի այդտեղ ավարտեմ իմ կյանքը, բայց Նա չնայեց: Խորհեցի իմ մեջ և ասացի. «Աստծո կամքը չէ»: Դարձյալ աղոթեցի և ընկա ճանապարհ, և ահա այն այրը դարձյալ եկավ ինձ մոտ և իր մատը մոտեցրեց իմ շրթունքներին և զորացրեց ինձ, մինչև որ եկա եղբայրների մոտ և պատմեցի նրանց այս ամենը և աղաչեցի, որ չհուսահատվեն, այլ համբերությամբ գտնեն Աստծուն»:

29. Զափազանց պատվական մի ծեր՝ այր տեսանող, բնակվում էր Հայոց աշխարհում գտնվող լեռան ստորոտում, որ կոչվում է Մասիս, այն տեղում, ուր սուրբ Հակոբի աղբյուրն է: Այնտեղ եկավ մի իշխան և աղաչում էր նրան բժշկել իրեն, քանզի բազմամեղ մարդ էր և սատանայի կամակատար: Երբ պատմեց իր գործերը, ծերը զարմացավ և վեր կենալով ծնրադրեց արտասվաթոր աչքերով ու ասաց. «Օրհնյա՛լ ես դու, Քրիստո՛ս, որ մեռար մեզ համար. անչափ է ողորմությունը Քո

և անբավ է առատ մարդասիրությունը Քո, որ սատանայից գերվածներին ազատում ես և ընդունում»: Այսպես գոհություն էր մատուցում Աստծուն: Եվ իշխանին ասաց. «Ուրա՛խ եղիր, որդյա՛կ, քանզի խոստովանությանդ միջոցով մաքրվեցիր բազում չարագործություններից: Արդ, եթե կամենում ես սիրելի լինել Քրիստոսին, փոքր-ինչ տանջի՛ր մարմինդ, որպեսզի մոռացվեն չարագործություններդ»: Իշխանն ասաց. «Թեկուզ և հրի մեջ այրվեմ, թող Իր հավատացյալների մեջ ընդունի ինձ»: Ծերն ասաց. «Ես Աստծո ողորմության երաշխավորն եմ, որ քեզ բարեգործ քրիստոնյաների հետ ընդունի: Արդ օրհնյալ լինես դու Աստծուց, որ մեծ ավետիսով լցրիր իմ սիրտը, քանի որ լալով խոստովանեցիր բովանդակ չարիքներդ և ամոթով թողեցիր սատանային. նաև երկնավորներն ուրախացան քո փրկության համար»: Իշխանն ասաց. «Քանի որ արժանի եղա տեսնելու Քրիստոսի պատկերդ և բժշկություն գտնելու անբուժելի ցավերիս, ինչ էլ հրամայես՝ կկատարեմ»: Ծերը հարցրեց. «Ի՞նչ ես կամենում»: Իշխանն ասաց. «Անքանակ գանձեր ունեմ, կշինեմ վանքեր, կտամ աղքատներին և քրիստոնյաներին կազատեմ այլադավաններից»: Ծերն ասաց. «Այդ գանձը չարից է կուտակված. եթե բաշխես՝ այդ չարիքը կմաքրես. քո ժամանակը հասել է, քանզի քեզ տեսնում եմ սպիտակահեր: Քո մնացած օրերը տո՛ւր Աստծուն և Երկնավոր Թագավորի իշխա՛նը եղիր»: Իշխանն ասաց. «Ինչպես կամենում ես. ինձ մոտ վանքեր կան, կգնամ կճգնեմ»: Ծերն ասաց. «Ամեն վանք չէ, որ ապաշխարության վայր է, որովհետև՝ ովքեր միաբաններ չեն՝ աշխարհականներ են, քանզի Աստծո գործի համար չէ, որ եկել են, այլ դու գնա՛ միաբանների մեջ, քանի որ մեղքերի բազմությունը հնազանդության մեջ հեշտությամբ է ջնջվում: Գնա՛ դու Սուկավ կամ Սուրբ Ոսկի, Երաշխավորների կամ Մաքենացիների մոտ»: Իշխանն ասաց. «Մնամ այստեղ՝ քեզ մոտ, և ճգնությամբ անցկացնեմ իմ օրերը»: Ծերն ասաց. «Միաբանների մոտ հեշտությամբ կազատվես»: Իշխանն ասաց. «Եթե շուտ վախճանվեմ, Աստծուց ողորմություն կգտնե՞մ»: Ծերն ասաց. «Եթե թողնես քո կամքը և միաբանների մեջ հնազանդվես ու մնաս նրանց հետ քառասուն օր՝ ավել կամ պակաս, և վախճանվես, ես մեծ փառք եմ երաշխավորում քեզ՝ Քրիստոսից: Իսկ եթե չթողնես քո կամքը, թեկուզ և հարյուր տարի խոտերով սնվես՝ հնազանդության փառքը չես կարող ստանալ»: Եվ ծերը պարեգոտ հագցրեց նրան և ասաց. «Գնա՛ Մաքենացիների մոտ»: Եվ իշխանը բաշխեց իր գանձերը կարոտյալներին ու գնաց Մաքենացիների մոտ, մնաց նրանց մոտ երկու տարի և մեծաջան առաքինությամբ վախճանվեց: Ծերը երբ լսեց, աղաչեց Աստ-

ծուն հայտնել իրեն, թե այդպիսի չարիքներով լցված անձը ինչ-որ օգուտ քաղե՞ց ապաշխարությունից: Հրեշտակն ասաց. «Չարիքներից ազատվեց և մեծ փառքի արժանացավ. այժմ ուրա՛խ եղիր, քանզի քո վաստակն ու ջանքն է, որովհետև Քրիստոսի բարերարությունը ցուցաբերեցիր գերյալի հանդեպ: Արդ, պատրա՛ստ եղիր, որովհետև մի քանի օր հետո քեզ ընդառաջ կգան սուրբ հայրերը և կտանեն քեզ Երկնային Հարսանիք, և բոլոր սրբերի հետ կփառավորվես լուսեղեն օթևաններում, որ պատրաստեց իրեն սիրողների համար մեր Քրիստոս Աստված, Ով օրհնյալ է հավիտյանս հավիտենից. ամեն:

Պահպանված հատվածներ երկրորդ թարգմանությունից

30. Հայր Պիմենն ասաց. «Բոլոր ճգնություններից առավել՝ այս երեք գործն ուներ հայր Պամբոն. քաղցած մնալ մինչև երեկո՝ կյանքի բոլոր օրերին, անսահման լռություն և անդադար ձեռագործ»:

31. Հայր Պիմենի մասին ասում էին, թե երբ ծերերը նստում էին նրա մոտ՝ խոսելու և որևէ բան էին հիշում հայր Սիսոյից, նա ասում էր. «Թո՛ւյլ տվեք հիշել Հայր Սիսոյին, քանզի մարդկային լեզուն ի զորու չէ նկարագրել նրա գործերի մեծությունը»:

32. Հայր Պամբոյի մասին ասում էին, թե ինչպես որ Մովսեսի երեսը փառավորվեց, երբ տեսավ Աստծուն, նույնպես և փայլակատակեց հայր Պամբոյի երեսը, երբ հայրերի մեջ՝ աթոռին նստած, խրատում էր նրանց: Նույն շնորհներին հաղորդ էին նաև փայլակնատեսիլ այրեր հայր Սիլովանեն և հայր Սիսոն:

33. Երբ հայր Ռոմանոսի վախճանը մոտ էր, շուրջը հավաքվեցին եղբայրներն ու ասացին. «Ինչպե՞ս պետք է ապրենք, հա՛յր»: Եվ նա ասաց. «Ձեմ հիշում, թե երբևէ ձեզնից մեկին ասած լինեմ, թե՝ արա՛ այսինչ գործը, եթե նախապես մտքումս չեմ դրել, թե՝ չպիտի բարկանամ, եթե նա չկատարի այդ գործը: Այդպես ապրեցի ես, և դուք էլ ինձ հետ՝ ամբողջ ժամանակ խաղաղությամբ և անխռով. այդպես արե՛ք և դուք՝ միմյանց հետ կենալով խաղաղությամբ, սիրով և հնազանդությամբ»:

34. Մի ժամանակ հայր Սիսոն հայր Անտոնի լեռանն էր բնակվում: Եվ նրա սպասավորը տասն ամիս ուշացավ գալ իր մոտ, և այդ ընթացքում նա բնավ մարդ չտեսավ, հետո դուրս եկավ սպասավորին

փնտրելու: Եվ մինչ ճանապարհ էր գնում, անապատում տեսավ մի փարանացի որսորդի, որ վայրի այծեր էր որսում, և նրան հարցրեց. «Որտեղի՞ց ես և որքա՞ն ժամանակ է՝ այս վայրերում ես»: Իսկ նա ասաց. «Հավատա՛, հա՛յր, որ տասներկու ամիս է՝ ինչ այստեղ եմ, և քեզանից բացի՝ ուրիշ մարդու երես չտեսա»: Երբ ծերը լսեց այս, դարձավ ու գնաց իր սենյակը և ներս մտնելով՝ ասաց. «Վա՜յ քեզ, Սի՛սո, կարծեցիր, թե բավականին համբերել ես, այնինչ մի աշխարհական որսորդի չափ էլ չհամբերեցիր»:

35. Նույն այս հայր Սիսոն, երբ մտնում էր խուցը, դռները փակում էր, իսկ երբ մեկը որևէ բան էր հարցնում նրան հայր Պամբոյի մասին, ասում էր. «Պամբոն բավականին մեծ էր իր գործերի մեջ»:

36. Հայրերից մեկը պատմեց, թե մեկը խոսում էր հայր Սիլվանեի հետ և տեսավ, որ նրա երեսը պայծառացավ, և նա հրեշտակի պես դարձավ: Եղբայրը երեսի վրա ընկավ նրա առաջ և երկրպագեց նրան, քանզի սաստիկ վախեցավ: Հայր Սիլվանեն ասաց նրան. «Որդյա՛կ, ոչ թե ինձ, այլ Աստծո՛ւն երկրպագենք, Ում և պարտական ենք»: Եվ եղբոր հետ միասին ծերը երկրպագեց Աստծուն: Այդպես ահի մեջ լինելով՝ եղբայրը օրհնություն ստացավ նրանից և գնաց շահած և ուրախացած:

37. Հայր Սարմատի մասին ասում էին, թե բազում անգամ հայր Պիմենի հրամանով քառասնօրյա պահք պահեց՝ մեկ օրվա պես: Եվ հայր Պիմենը, գալով նրա մոտ, հարցրեց նրան. «Ասա՛ ինձ. ի՞նչ տեսար այդչափ տքնությունների արդյունքում»: Իսկ նա ասաց. « Չե՛մ տեսել ոչինչ»: Ասաց նրան հայր Պիմենը. «Քեզ չե՛մ թողնի, մինչև չասես ինձ, թե ինչ տեսար»: Եվ նա ասաց. «Միայն այս տեսա, որ եթե քնին ասեմ՝ ե՛կ ինձ վրա՝ կգա, իսկ եթե ասեմ՝ մի՛ արի՝ չի գա»: Եվ փառավորեցին Աստծուն:

38. Հայր Փիլիրոմոսն ասաց. «Զրից և Սուրբ Հոգուց ծնվելուցս ի վեր առ այսօր ուրիշ մեկի հացը չկերա, այլ սնվեցի իմ աշխատանքով ու ձեռագործով միայն: Երկու հարյուր դահեկան— ասաց,— տվեցի հիվանդներին ու աղքատներին և իմ վաստակածից ոչինչ չպահեցի»: Նա խոհեմ և պատվական գրագիր էր և միշտ գրում էր այդպես՝ մինչև մահ. դարձավ ութսուն տարեկան, և չպակասեց նրա աչքերի լույսը:

39. Փեսենթասիոս, Սորոս և Փսոյիոս հայրերն ասացին, թե՝ լսեցինք հայր Պախումի խոսքերը և մեծապես շահեցինք, քանզի նախանձախնդրություն արթնացրեց մեր մեջ դեպի բարին, որովհետև թե՛ նրա

խոսքը, թե՛ նրան լսելն արդեն իսկ կատարյալ գործ էր, քանզի ոմանք կարծում էին, թե բոլոր սրբերին ի սկզբանե այդպես էր ստեղծել Աստված՝ մոր որովայնից սուրբ և չարից՝ զերծ: Նույնպես և մեղավորների մասին կարծում էին, թե պատահմամբ են դառնում մեղավոր կամ արդար և ոչ թե՝ կամովին: Սակայն դա այդպես չէ, այլ մեր կամքով ենք դառնում արդար կամ մեղավոր, ինչպես շատերի օրինակով տեսանք ի սկզբանե: Նույնը տեսնում ենք նաև հայր Պախումի օրինակով, քանզի նա հեթանոս ծնողների որդի էր, սակայն այդուհանդերձ առաջադիմեց աստվածապաշտության և սրբության մեջ՝ զարդարվելով ամենայն առաքինությամբ: Այստեղից էլ հայտնի է, որ մենք և բոլորս Աստծուց ստեղծվել ենք բարի և հանուն բարու, և մեր կամքով ենք հետևում բարուն կամ չարին՝ ըստ Տիրոջ խոսքի, որ ասում է. «Դեպի ի՛նձ եկեք, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես կհանգստացնեմ ձեզ. վերցրե՛ք իմ լուծը ձեզ վրա» (Մատթ. ԺԱ 29-30)*: Ուրեմն, հանձնենք մեր կյանքը և մահը այսպիսի հայրերին, որպեսզի ուղիղ առաջնորդեն մեզ Աստծո ճանապարհով, և մեղքերի պատճառը չդնե՛նք Աստծո վրա, Ումից միմիայն բարություն, ճշմարիտ ողորմություն, գթություն ու սեր ենք ակնկալում իբրև պարգև:*

40. Հայր Ովրի մասին հայրերն ասում էին, թե բնավ սուտ խոսք դուրս չեկավ նրա բերանից, երբեք չերդվեց և աշխարհում ոչ մեկին չանիծեց և ոչ մեկի հետ ոչինչ չխոսեց՝ բացի կարևոր բաներից:

41. Սկիտեում մի մենակյաց կար, որ գոմեշների հետ խոտ էր ճարակում վայրի անասունների պես և աղոթում էր առ Աստված ու ասում. «Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ, թե ինչով եմ պակաս»: Ձայն եկավ առ նա, որ ասաց. «Գնա՛ եղբայրների այսինչ անունով վանքը, և ինչ-որ հրամայեն քեզ՝ կանես»: Եվ գնաց, բնակվեց այնտեղ, սակայն ոչ մի սպասավորություն չէր կարողանում անել եղբայրներին: Ոմանք ասում էին. «Դո՛ւ, հիմա՛ր, արա՛ այս բանը», ուրիշներն ասում էին. «Ասա՛ այս բանը, տիմա՛ր և անո՛ւս»: Եվ սաստիկ տանջում էին նրան: Եվ նա, սաստիկ ձանձրացած, աղոթեց առ Աստված և ասաց. «Տե՛ր, մարդկանց սպասավորել չգիտեմ, ուղարկի՛ր ինձ դարձյալ իմ արոտատեղին»: Եվ Աստված ուղարկեց նրան իր նախկին տեղը՝ անապատի գոմեշների հետ արածելու անասունի նման:

42. Սաստիկ ճգնակյաց մի կրոնավոր կար Սկիտեի անապատում: Նա բազում տարիներ խնդրում էր Աստծուն և ասում. «Տե՛ր, հայտնի՛ր ինձ, թե արդյոք հաճո՞ եղա Քեզ»: Եվ Տիրոջ հրեշտակի ձայնը հասավ նրան, որ ասաց, թե՝ քաղաքի մի պարտիզպանի չափին չհասար: Իսկ

ծերը զարմացած՝ իր մտքում ասաց. «Գնամ քաղաք՝ տեսնեմ նրան, թե ո՛րն է նրա գործը, որ առավել է, քան իմ այսքան տարիների վշտերը, տառապանքներն ու ճգնությունները»: Եվ վեր կենալով եկավ այն տեղը, որ նրան ասաց հրեշտակը, գտավ այն մարդուն, որ փողոցում նստած՝ իր բանջարեղենն էր վաճառում, և նստեց նրա մոտ մինչև օրվա ութերորդ ժամը: Երբ պարտիզպանը վերջացրեց և վեր կացավ գնալու, ծերն ասաց նրան. «Կարո՞ղ ես, եղբա՛յր, այս գիշեր հյուրընկալել ինձ քո տանը»: Իսկ նա ցնծաց և մեծ ուրախությամբ ընդունեց: Երբ տուն մտան, այդ մարդը հանգստատեղ և սեղան պատրաստեց ծերի համար: Իսկ ծերն ասաց. «Բարի՛ եղիր, եղբա՛յր, և պատմի՛ր ինձ քո ապրելակերպը, որովհետև ոչինչ չեմ ճաշակի, մինչև չպատմես, քանզի դրա համար առաքվեցի Տիրոջից»: Իսկ մարդը ոչինչ չկամեցավ ասել: Սակայն ծերը համառում էր իր աղաչանքների մեջ՝ ասելով. «Պատմի՛ր ինձ, քանզի բարի չէ ընդդիմանալ բարուն»: Այնժամ պարտիզպանն ասաց ծերին. «Ես, հա՛յր, մեղավոր և աղքատ մարդ եմ և ընավ բարի բան չկա ինձանում, սակայն մտքի փոքր-ինչ հոժարությամբ երեկոյից երեկո եմ ճաշակում իմ հացը և իմ չարչարանքի գնով եմ առնում իմ կերակուրը, իսկ ավելացածը բաշխում եմ աղքատներին կամ ծախսում եմ հյուր եկած կրոնավորների վրա և գիշեր ու ցերեկ իմ մտքում այս եմ խորհում, թե այս բովանդակ քաղաքը իրենց արդարության համար ժառանգելու են Երկնքի Արքայությունը, և միայն ես եմ դժոխք իջնելու՝ իմ մեղքերի պատճառով»: Ծերը երբ լսեց այս, ասաց. «Այս ամենը շատ բարի է, սակայն ինչո՞վ է սա առավել այսքան տարիների իմ վշտից»: Այս ասելիս՝ ծերը լսեց երգերի, թմբուկների ու պարերի ձայն նրա դրացիների կողմից և հարցրեց նրան. «Եթե կամենում ես Աստծով ապրել, եղբա՛յր, ինչպե՞ս կարող ես մշտապես այս լկտի ձայները լսել և չվրդովվել քո մտքերի մեջ»: Մարդն ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, հա՛յր, այս երգերի ու պարերի ձայնից երբեք չեմ գայթակղվել և երբեք չեմ վրդովվել»: Ծերը հարցրեց. «Եվ ի՞նչ ես համարում դրանք քո մտքում, երբ լսում ես»: Իսկ նա ասաց. «Աղոթք և օրհներգություն եմ համարում այդ և ամեն մի կենդանի ձայն, և զղջումի գալով՝ արտասվում և գոհանում եմ Աստծուց»: Երբ այս պատասխանը լսեց ծերը, զղջաց և ասաց. «Ա՛յս է, որ առավել է, քան իմ ճգնությունները»: Եվ ասաց. «Թողությո՛ւն տուր ինձ, եղբա՛յր, ես այդ չափին չհասա»: Եվ մեկնեց այնտեղից ու գնաց իր սովորական կյանքին:

43. Հայրերից մեկը մեզ պատմեց, թե երկու ամմիացի վաճառական ընկերներ կային, որ միասին շրջում էին և օտար երկրներում վա-

ճառականությամբ էին զբաղվում: Նրանցից մեկը անթիվ ունեցվածք ուներ, իսկ մյուսը՝ չափավոր, և մեծահարուստն ուներ շատ գեղեցիկ և սրբասեր մի կին, ինչը և կհաստատվի մեր պատմության շարունակությունից, քանի որ մեռավ այս գեղեցիկ կնոջ ամուսինը, և սիրեց նրա գեղեցկությունը այն երկրորդ վաճառականը, որ նրա ամուսնու ընկերն էր, սիրեց և նրա իմաստությունն ու ունեցվածքը և կամենում էր կին առնել իրեն, սակայն ամաչում էր ասել՝ գիտենալով, որ երկյուղած է և չի հավանի իրեն: Իսկ համեստ տիկինը, քանի որ իմաստուն էր, հասկացավ այդ և նրան ասաց. «Տե՛ր իմ Սիմեոն (որովհետև այս էր նրա անունը), տեսնում եմ, որ դու չփոթ մտքերի մեջ ես. ասա՛ ինձ քո խորհուրդները, և ես կհանդարտեցնեմ քո մտքերը»: Իսկ նա նախ վախեցավ ասել, սակայն հետո խոստովանելով ասաց. «Կամենում եմ, տիկի՛ն, լծակցել քեզ և հետևել քո կամքին և իմաստությանը»: Կինն ասաց. «Եթե անես այն, ինչ կպատվիրեմ քեզ, ես քո կամքը կկատարեմ»: Նա պատասխանեց. «Այն ամենն՝ ինչ հրամայես, առանց հապաղելու կկատարեմ»: Կինն ասաց. «Գնա՛ քո առևտրին և բնավ ոչինչ չճաշակես, մինչև կանչեմ քեզ, և, Տերը վկա մեր մեջ՝ ես ևս ոչինչ չեմ ճաշակի՝ մինչև որ դու գաս»: Եվ նա ուխտեց երդմամբ՝ կատարել պայմանը և կարծում էր՝ նույն օրը կկանչի իրեն, քանի որ հրավիրելու ժամկետ չէր դրել: Անցավ մեկ օր, երկու, երեք, և չկանչեց նրան, բայց նա համբերում էր՝ երդման և հեշտալի սիրո պատճառով, և Աստված զորացնում էր նրա համբերությունը, որովհետև կամենում էր նրա փրկությունը, քանզի հետագայում նա ընտրյալ անոթ դարձավ: Չորրորդ օրը կանչեց նրան, երբ վհատված ու նվաղած էր սովից այնչափ, որ անգամ քայլել չէր կարողանում, ուստի դնելով երիվարի վրա՝ տարան նրա մոտ: Իսկ կինը, մինչ Սիմեոն վաճառականի ժամանելը, ով գալիս էր սովահար, բազում խորտիկներով սեղան էր գցել և անկողին էր պատրաստել: Երբ Սիմեոնը տուն մտավ, կինը նրան մեկուսի ու ծածուկ ասաց. «Ահա ե՛կ և տե՛ս, որ սեղան ու անկողին պատրաստեցի»: Սիմեոնը երբ տեսավ, սաստիկ ուրախացավ: Իմաստուն կինն ասաց նրան. «Ահա՛ սեղանը և ահա՛ մահիճը՝ ըստ քո կամքի. ո՞ւր ես կամենում, որ գնանք առաջինը»: Սիմեոնն ասաց. «Աղաչում եմ քեզ, կերակուր տուր ինձ, քանզի արդեն իմ հոգին մարում է, և սովից ու ուժասպառությունից չեմ էլ հիշում, թե ինչ բան է կինը»: Այնժամ կինն ասաց նրան. «Ահա երբ քաղցեցիր, իմ սիրուց և բոլոր կանանցից առավել՝ կերակուրը ցանկացար: Ուստի, երբ այդպիսի խորհուրդները կնեղեն քեզ, այդպիսի դեղ ունեցի՛ր քեզ հետ և կազատվես մարմնի բոլոր ախտակիր խորհուրդներից: Եվ արդարև հավատա՛ ինձ, որ իմ

ամուսնու վախճանից հետո ո՛չ քեզ և ո՛չ էլ մեկ ուրիշ տղամարդու չեմ մերձենա, այլ այրիության մեջ կմնամ Քրիստոսի հովանու ներքո»: Սեղանից հագենալուց հետո իբրև խրատ՝ այս մտադրությունը հայտնեց Սիմեոն վաճառականին հոգևոր գիտության մեջ իմաստուն և հոգևոր տիկինն: Իսկ Սիմեոնը, երբ լսեց այս, սաստիկ զղջաց՝ տեսնելով կնոջ բարեպաշտությունն ու աստվածասիրությունը: Եվ վաճառեց իր ունեցվածքը, բաժանեց աղքատներին, դարձավ կրոնավոր և բնակվեց Ապամիայում գտնվող վանքում ու դարձավ Աստծուն հաճելի այր: Նույնպես և կինը՝ մտավ կույսերի վանքը և սուրբ ու պատվական վարքով ապրեց՝ գոհանալով Աստծուց:

44. Երկու կրոնավորներ ուխտեցին խիստ ճգնությունների տրվել միասին, բայց հավասար անել բոլոր ճգնությունները, և ոչ մեկը մյուսից առավել ջանք չգործադրի: Այդպես էլ արեցին և ապրում էին Աստծուն հաճելի կյանքով ու ընտիր կենցաղավարությամբ: Սակայն եղավ այնպես, որ մեկը ընդհանրական վանքի վանահայր դարձավ, իսկ մյուսը մնաց իր մենակեցության մեջ և այդպես կատարեց իր ընթացքը, մինչև հասավ այն աստիճանին, որ մեծամեծ հրաշքներ էր գործում, քանզի դևեր էր հալածում, հիվանդներին բժշկում և գալիք դեպքերն էր մարգարեանում: Երբ այս ամենը տեսավ և լսեց նա, որ վանահայր էր դարձել, թե իր հետ ուխտադիր եղբայրն այդպիսի շնորհների է արժանացել, զարմացած մտածում էր, թե՝ երկուսս էլ միանման ենք տքնում և մեկս մյուսից առավել ոչինչ չենք անում. ինչպե՞ս նա դարձավ հրաշագործ, իսկ ինքը՝ ոչ: Այնժամ հանդարտվեց մի քանի օր, մեկուսացավ մարդկանցից և ի խորոց սրտի աղաչեց Աստծուն և ասաց. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, հայտնի՛ր ինձ, թե ինչո՞ւ իմ ընկերը հրաշքներ է գործում, իսկ ես ոչ մի այդպիսի շնորհ չստացա»: Այնժամ երևաց նրան Տիրոջ հրեշտակն ու ասաց. «Նրա համար այդ եղավ, որ նա հանուն Աստծո սիրո՝ համբերությամբ նստում է միայնակ և հառաչանքներով ու հեծությամբ է անցկացնում իր կյանքի օրերը, գիշեր ու ցերեկ ողբում է և միշտ քաղցի ու ծարավի մեջ է Աստծո սիրո համար, իսկ դու բազում հոգսերի ու խառնաշփոթի մեջ ես և բազում մխիթարություն ունես բազմաթիվ մարդկանցից: Այն ամենը, որ մարդկանց կողմից արվում է քեզ համար, բավական է քեզ փառքի ու պատվի համար և այլ բան հարկավոր չէ»:

45. Սկիտեցիների մասին ասում էին, թե նրանց մեջ չկար ամբարհավաճություն, քանի որ մեկը մյուսից առավել չէր առաքինությամբ: Իսկ նրանցից ոմանք պահում էին երկու օր, ոմանք՝ երեք, ոմանք էլ՝

չորս, և կային, որ շաբաթը մեկ անգամ էին ճաշակում, ոմանք բնավ հաց չէին ուտում, իսկ ոմանք էլ գինի չէին խմում: Եվ որպեսզի կարճառոտ ասեմ՝ ամենքն էլ զարդարված էին ամեն տեսակ առաքինություններով և միապես փառավորում էին Աստծուն:

46. Երկու արյունակից եղբայրներ ուխտեցին կրոնավոր դառնալ: Երբ ելան աշխարհից, բնակվեցին միասին և բարվոք ճգնեցին, ապա որոշեցին առանձին խցեր շինել՝ միմյանցից հեռու, և բնակվել որպես մենակյացներ. այդպես էլ արեցին, և բազում տարիներ երբեք դուրս չեկան խցերից ու միմյանց չտեսան: Նրանցից մեկը հիվանդացավ, և եղբայրներն եկան տեսնելու նրան, քանզի վախճանը մոտ էր: Երբ նստած էին նրա շուրջը, նա նվաղելով՝ ավանդեց հոգին: Երբ շատ ժամեր անցան, հոգին դարձյալ վերադարձավ անդրաշխարհից, և հայրերը հարցրին, թե՝ ի՞նչ տեսար: Իսկ նա ասաց. «Տեսա Աստծո հրեշտակներին, որ եկել-տանում էին ինձ ու իմ եղբորը և երկինք էին հանում. և օդում մեզ հանդիպեցին դևերի բանակները և ուզեցին արգելել, սակայն մեր բարձրանալը չկարողացան խափանել, և երբ վեր բարձրացանք նրանցից, սկսեցին գոչել. «Մեծ է սրբության և համբերության համարձակությունը»: Երբ այս ասաց, նույն պահին դարձյալ ննջեց: Երբ հայրերն այս տեսան, մարդ ուղարկեցին մյուս եղբոր մոտ՝ նրան տեղեկացնելու, որ դա այնտեղ: Երբ ուղարկվածները մտան, տեսան, որ նա ևս նույն ժամին փոխվել էր առ Աստված, սաստիկ զարմացան և այս կատարված հրաշքի համար փառավորեցին Աստծուն:

47. Քաղաքներից մեկի եպիսկոպոսը վախճանվեց, և այդ կողմերի մարդիկ հավաքվելով՝ գնացին արքեպիսկոպոսի մոտ և աղաչեցին նրան, որպեսզի ննջածի փոխարեն նոր եպիսկոպոս ձեռնադրի իրենց համար: Արքեպիսկոպոսն ասաց նրանց. «Տվե՛ք ինձ մի մարդու, որի մասին դուք կվկայեք, թե ունի զորություն՝ հովվելու Քրիստոսի հոտը իմաստությամբ, և ձեզ համար եպիսկոպոս կձեռնադրեմ»: Իսկ նրանք ասացին. «Մենք ոչ ոք չունենք, այլ դո՛ւ տուր մեզ՝ ում կերաշխավորի Աստծո հրեշտակը»: Արքեպիսկոպոսն ասաց նրանց. «Դուք ամե՞նքդ եք այստեղ»: Նրանք ասացին՝ ո՛չ: Ասաց նրանց. «Գնացե՛ք, հավաքե՛ք ամենքին և եկե՛ք այստեղ, որպեսզի հասարակական հարցմամբ և վկայմամբ ընտրեք՝ ում ձեռնադրենք եպիսկոպոս»: Եվ նրանք գնացին, ամենքին հավաքեցին և եկան նրա մոտ: Արքեպիսկոպոսը դարձյալ հարցրեց. «Այժմ ամե՞նքդ եք այստեղ»: Նրանք պատասխանեցին. «Փոքրերից մեկը օթևանատեղում նստած՝ մեր ավանակներն է պահում, իսկ մնացած ամենքս այստեղ ենք»: Արքեպիսկոպոսն ասաց.

«Հիմա ինչ որ ասեմ ձեզ՝ կհնազանդվե՞ք»: Եվ նրանք ասացին. «Այո՛, հոժարությամբ կհնազանդվենք»: Այնժամ պատվիրեց կանչել նրան, որ ավանակներն էր պահում: Երբ նա եկավ, նրան եպիսկոպոս ձեռնադրեց և տվեց նրանց, իսկ նրանք խնդությամբ ու մեծ պատվով ընդունելով՝ գնացին իրենց տեղը, ինչպես որ խոստացել էին պատվել նրան որպես Աստծո սրբի: Եվ մի անգամ սաստիկ երաշտ եղավ այդ երկրում, և այն եպիսկոպոսը երաշտը վերացնելու համար աղաչեց Աստծուն: Աստված ասաց նրան. «Քո միաբանության հետ գնա՛ կանգնիր քաղաքի դռների մոտ, և ով առաջինը մտնի քաղաք՝ բռնի՛ր նրան, որ աղոթք մատուցի Ինձ, և անձրև կտամ ձեզ»: Լսելով այս խոսքը՝ իր միաբանության հետ շուտափույթ գնաց ու նստեց քաղաքի դռան մոտ: Եվ ահա տեսավ՝ մի սև հնդիկ կրոնավոր էր գալիս՝ աղքատ, և փայտը ուսին բարձած՝ բերում էր քաղաք՝ վաճառելու: Եպիսկոպոսը հապշտապ վեր կենալով՝ կանգնեցրեց նրան և բեռը ուսից ցած առավ ու ասաց նրան. «Ո՛վ որդյա՛կ, հակառակ մի՛ կենա, Աստծուց է հրամայված քեզ՝ աղոթել ու աղաչել Տիրոջը, որպեսզի անձրև տա երկրին, քանզի փչացավ նրա ողջ բերքը»: Իսկ նա թեև չէր կամենում՝ պատկառելով իր ողջ խոնարհությամբ, սակայն հրամանին հակառակ չկանգնեց, և երբ սկսեց աղոթել, բացվեցին երկնքի դռները, և սաստիկ անձրև եկավ՝ մինչև որ դաշտերն ամբողջ ողողվեցին, ապա կրկին աղոթելով՝ դադարեցրեց անձրևը, որպեսզի երկիրը չհեղեղվի: Եվ եպիսկոպոսը, բռնելով այդ ծերին, աղաչեց նրան և ասաց. «Ի սեր Աստծո, բարի եղի՛ր, պատմի՛ր ինձ քո կենցաղավարության մասին՝ հօգուտ բազմաց, գուցե շատերը նախանձախնդիր լինեն քո բազում գործերի հանդեպ»: Ասաց նրան ծերը. «Թողությո՛ւն շնորհիր ինձ, տե՛ր, ահա ինչպես տեսնում ես՝ ամեն օր ելնում եմ և մի քիչ փայտ շալակելով՝ բերում եմ այստեղ և վաճառում, և այդ գումարով իմ կարիքներն եմ հոգում, իսկ երեկոյան գնում եմ եկեղեցի և մնում եմ այնտեղ՝ ողջ գիշեր սգալով իմ մեղքերը: Իսկ եթե ձմռանը օրեր են լինում, որ փայտ բերել չեմ կարողանում, ոչինչ չեմ ճաշակում այդ օրերին. ահա այսպիսին է իմ կյանքն արդեն քառասունյոթ տարի»: Եվ եպիսկոպոսն ու ողջ միաբանությունը լսելով այս՝ մեծապես շահեցին և փառք մատուցեցին Աստծուն:

48. Ծերերից մեկն աղաչեց Աստծուն, որ ցույց տա իրեն, թե ինքն ո՞ւմ չափին է հասել: Եվ Տերն ասաց նրան. «Այսինչ վանքում մի եղբայր կա. նա քեզնից առավել է»: Եվ ծերը վեր կացավ ու գնաց այդ վանքը: Երբ ծերի գալուստն իմացան այնտեղ, ընդառաջ ելան նրան

վանահայրն ու բոլոր եղբայրները, քանզի մեծանուն և չափազանց հռչակավոր էր այդ ծերը: Ծերն ասաց վանահորը. «Կամենում եմ բոլոր եղբայրներին տեսնել և ողջունել»: Վանահայրը հրահանգեց, և բոլոր եղբայրները եկան, սակայն այն եղբայրը չեկավ, որին կամենում էր տեսնել ծերը: Նա ասաց. «Կա՞ մեկ այլ եղբայր, որ այստեղ չէ»: Նրան ասացին. «Մեկ ուրիշն էլ կա, սակայն հիմար և կատաղի է նա. դրսում է և պարտեզն է մաքրում փշերից ու խոտերից»: Ծերն ասաց. «Կանչե՛ք նրան», և կանչեցին: Երբ ծերը տեսավ նրան՝ գալիս, վեր կացավ և ընդառաջ գնաց նրան, համբուրեց և մի կողմ տանելով՝ ասաց. «Պատմի՛ր ինձ, որդյա՛կ, քո գործը Տիրոջ հրամանով, որի համար և եկել եմ»: Նա ասաց. «Ո՛վ հայր իմ, ես մեղավոր և հիմար մարդ եմ, և քեզ ասելու ոչինչ չունեմ»: Իսկ ծերը երդմամբ բռնադատեց նրան: Այնժամ ասաց. «Մի բան կա, որ անում եմ. վանահայրը միշտ իմ սենյակի պատի տակ է կապում եզը, և նա ամեն օր ուտում է իմ հյուսած պարանը, որ տքնությամբ գործում եմ, և արդեն երեսուն տարի է՝ համբերում եմ դրան, և երբեք բերանիցս չար խոսք կամ խորհուրդներիցս բարկության խորհուրդ դուրս չելավ իմ հոր մասին, եզին էլ երբեք չխփեցի կամ չճանձրացա, այլ երկայնամտորեն դարձյալ հյուսում եմ կոխկրտված ու ծամծմված պարանս ու գոհանում եմ Աստծուց»: Երբ այս լսեց ծերը, սաստիկ զարմացավ, որ այդչափ համբերության ունի, և նրա մեջ կան բոլոր առաքինությունները:

49. Հայրերից մեկը ճգնում էր իր սենյակում, և դևը, մտնելով նրա մահճակալի տակ, սկսեց ընթերցել Թվոց գիրքը. իսկ ծերը լռում էր: Եվ դևը ճանճրանալով՝ ընդունեց աղքատի կերպարանք ու կանգնեց ծերի պատուհանի առջև. նա կաղ էր և ձեռքին ուներ գավազան և մախաղ: Ծերն ասաց նրան. «Դու գիտե՞ս, թե ինչ էիր կարդում»: Դևը պատասխանեց. «Այո՛, գիտեմ. Հին Օրենքն էի կարդում»: Ծերն ասաց. «Իսկ Նոր Կտակարանից ի՞նչ գիտես»: Երբ դևը լսեց Նոր Կտակարանի անունը, կորավ և անհետացավ:

50. Ոմանք մեզ պատմեցին մի եպիսկոպոսի մասին, թե մի անգամ կիրակի օրով նա գնաց գյուղ և իր ընկերներին ասաց. «Կանչե՛ք այս գյուղի երեցին, որ գա և պատարագ մատուցի»: Եվ գտնելով քահանային՝ բերեցին նրա մոտ, որը գեղջուկ էր՝ անբիծ ու ուղղամիտ: Եպիսկոպոսն ասաց նրան. «Մատուցի՛ր մեզ այսօր Քրիստոսի խորհուրդը», և նա իսկույն պատրաստվեց կատարել պատարագը: Եվ եպիսկոպոսը տեսավ, որ երբ քահանան կանգնեց սուրբ սեղանի մոտ, ամբողջովին հուր դարձավ, և հրի մեջ կանգնած էր ու չէր բոցակիզվում: Երբ

քահանան կատարեց անարյուն խորհուրդը, եպիսկոպոսը, վերցնելով նրան, մտավ սարկավագանոցը և ասաց նրան. «Աստծո արժանի՛ ծառա, օրհնի՛ր ինձ»: Իսկ նա ասաց. «Դո՛ւ օրհնիր ինձ, որովհետև քոնն է իշխանությունն ինձ օրհնելու, օրհնո՛ղդ իմ»: Եպիսկոպոսն ասաց. «Ես չեմ կարող օրհնել մի մարդու, ով հուր է և ընծայման ժամին հրի մեջ է կանգնում, քանզի «օրհնողն ավելի բարձր է, քան օրհնվողը», ինչպես գրված է (Եբր. Է 7)*»: Քահանան եպիսկոպոսին հեզաբար ասաց. «Թողությո՛ւն տուր, տե՛ր, մի՞թե հնարավոր է, որ քահանան Քրիստոսի Մարմինն ու Արյունը ընծայաբերելիս, աստվածային հրի մեջ չկանգնի»: Երբ այս լսեց եպիսկոպոսը, զարմացավ նրա սրբության և արդարության վրա:*

51. Ծերն ասաց. «Ոչ մի բանի մասին չպետք է հոգալ, բացի Աստծո երկյուղից, քանզի որքան էլ մարդը հոգս անի մարմնավոր կարիքների համար, դրանից ոչինչ չի շահի»:

52. Ծերն ասաց. «Ինչպես հուրն է լափում փայտը, այնպես կրոնավորի գործը պետք է լինի, որ այրի նրա մտքի ախտերը»:

53. Ոմն ծեր բնակվում էր խցում և այսպիսի կանոնակարգ ուներ. գիշերը՝ չորս ժամ ննջում էր, չորս ժամ աղոթում էր, չորս ժամ գործում էր և աղոթում էր բերանացի, իսկ ցերեկը վեց ժամ աշխատում էր, երեք ժամ ընթերցում էր Սուրբ Գիրքը և իններորդ ժամից հետո սնունդ էր ընդունում: Այսպես ապրեց նա իր կյանքի բոլոր օրերը և միշտ փառավորում էր Աստծուն:

54. Ոմն հոգետես ծեր մի աշակերտ ուներ, որին բնակեցրել էր իրենից երեք մղոն հեռու և հանձնարարություն էր տվել՝ գիտենալ և ճանաչել սատանայի բազմադիմի խարդախությունները, ինչպես որ տեսել և ուսանել էր ծերից չարի խորամանկության բոլոր հնարքները: Սակայն օրերից մի օր սատանան եպիսկոպոսի կերպարանք առած եկավ ծերի աշակերտի մոտ և նստեց նրա դիմաց՝ բավական հեռու՝ իբր հոգնած էր ճանապարհից: Իսկ եղբայրը երբ տեսավ, չճանաչեց, որ դա չարի երևմունք է, այլ նրան ընդառաջ գնաց և երկրպագեց որպես եպիսկոպոսի: Եվ սատանան ասաց. «Եղբա՛յր և որդի՛, ողջ տեսա քեզ, սակայն ողորմությո՛ւն արա և ընդունի՛ր ինձ, քանզի վշտացա քաղաքից, նրա ամբոխից և խստապարանոց ժողովրդից, ովքեր առավել սատանային են անսում, քան թե Աստծուն, փախա նրանցից և եկա անապատում հանդարտությամբ բնակվելու, ինչին փափագում էի իմ մանկությունից ի վեր: Բայց նաև այս եմ խնդրում քեզնից, որ ոչ ոք

չգիտենա իմ մասին, ոչ էլ անգամ քո մեծն ծեր հայրը, որպեսզի քաղաքացիներն իմանալով՝ չգան թախանձելու ինձ»: Եվ եղբայրը հավատաց չարին՝ իբրև եպիսկոպոսի և կատարեց նրա բոլոր ցանկությունները, քանզի նրա համար բնակարան չինեց քարայրի մեջ՝ իրեն մոտիկ, և օրը մեկ անգամ տեսնում էր նրան և լսում նրա թուլությամբ խառն խրատները: Եվ գնալով խռովությամբ ու բարկությամբ էր լցվում եղբայրը, սակայն չէր գիտակցում, քանի որ ծածկվել էր նրանից գիտությունը, քանզի առանց հոր թույլտվության էր: Ահա այսպես չար է փոքրերի և երիտասարդների ինքնակամ հոժարությունը: Եվ Աստված հայտնեց մեծն ծերին այդ ամենը, և նա աղերսագին աղոթեց եղբոր փրկության համար, որպեսզի իսպառ չկորչի: Իսկ եպիսկոպոսը՝ սատանան, չկարողացավ ծածկել իր խորամանկությունը, այլ եղբորն ասաց. «Որդյա՛կ, ո՞ւմն է այս կացինը»: Եղբայրն ասաց. «Իմ հոր կացինն է, տե՛ր»: Եպիսկոպոսն ասաց. «Տե՛ս, որդյա՛կ, քո հոր սերը, որ մի կացնի անգամ քեզ արժանի չհամարեց, այլապես կասեիր՝ իմն է»: Եղբայրն ասաց. «Ինչը նրանն է՝ իմն է, տե՛ր, և չկա ոչինչ, որ նա չկամենա ինձ»: Եպիսկոպոսն ասաց. «Այդպես չէ, որդյա՛կ, այլ եթե կամենում ես քո հոր ճշմարիտ մտածումներն իմանալ, գնա՛ նրա մոտ և իշխանաբար ասա՛, թե՝ այն կացինն իմն է, ոչ թե քոնը, և դրանով փորձի՛ր նրա ճշմարիտ վերաբերմունքը քո հանդեպ»: Եվ սատանան չիմացավ, որ դրանով բացահայտվելու էր իր խարդախությունը: Իսկ եղբայրը, տգիտությամբ ապուշացած, դարձյալ չճանաչեց եպիսկոպոսի խառնակչական խրատը, այլ նրա հոգին խռովվելով՝ զայրույթով լցվեց ընդդեմ աստվածատես ծերի: Այդ գիշեր նրա միտքը պղտորված էր, սակայն դրանից էլ գլխի չընկավ, այլ առավոտյան նույն խռովահույզ մտքերով գնաց ծերի մոտ, երկրպագեց և ասաց. «Եկա, հա՛յր, որպեսզի գիտենաս և ճանաչես, որ այդ կացինն իմն է, ոչ թե քոնը, և այլևս այն չեմ տա քեզ»: Սուրբ ծերն ասաց. «Այո՛, որդյա՛կ, քոնն է և ոչ թե իմը. և ոչ միայն այդ, այլև՝ ինչ որ գտնես ինձ մոտ՝ վերցրո՛ւ և տա՛ր քեզ հետ և այլևս չվերադարձնե՛ս ինձ, քանզի ես էլ եմ քոնը՝ հնազանդ քո իշխանությանը»: Լսելով այս՝ մոլորյալ եղբայրը սթափվեց ծերի աղոթքով և զղջումով ընկավ ծերի ոտքերն ու ասաց. «Թողությո՛ւն շնորհիր ինձ՝ մոլորյալիս, քանզի չհասկացա, թե ինչ խոսեցի»: Ասաց սուրբ ծերը. «Օրհնյալ է Տեր Աստված, որ դարձյալ ինձ տվեց իմ մոլորյալ որդուն»: Եվ եղբորն ասաց. «Ով որդյա՛կ, մի՞թե եպիսկոպոս տեսար և քեզ մոտ պահեցիր, որ այսպես խոսեցիր»: Եվ եղբայրն ասաց. «Այո՛, հա՛յր, եպիսկոպոս տեսա և այժմ էլ ինձ մոտ է առանց քո հրամանի, դրա համար էլ այս մոլորությունը պատահեց

ինձ»: Ասաց նրան ծերը. «Ով որդյա՛կ, որքան ջանք թափեցի՝ ուսուցանելով քեզ չարի բոլոր խարդախությունները, դու էլի չճանաչեցիր: Արդ, չար սատանային ճանաչելու համար բավակա՞ն չէր միայն այն, որ քեզ ողջույն չտվեց. դրա համար էլ քեզ մոտ չեկավ, այլ հեռու նստեց, որպեսզի դու գնայիր իր մոտ: Նա ինքը սատանան է, և նրա խրատից չճանաչեցի՞ր, որ քեզ չփոթմունքով լցրեց»: Երբ եղբայրը տեսավ, որ հայրը մեկ առ մեկ պատմեց իր հետ կատարվածը, և քանի որ ճանաչում էր իր հոր հոգետեսությունը, գոչեց՝ նրա առջև ընկնելով և ասաց. «Ողորմի՛ր մոլորյալիս և աղոթի՛ր առ Տեր Աստված, որպեսզի նենգավորի այլ փորձություններից մեջ չընկնեմ»: Քանզի մինչև հայրը չպատմեց, չիմացավ, որ այն եպիսկոպոսը սատանա է: Եվ հոր աղոթքից հետո միասին գնացին եղբոր խրճիթը և այրում չգտան այն եպիսկոպոս ներկայացածին, քանզի հայտնի դարձավ նրա նենգությունը, և հալածվեց այնտեղի սահմաններից սուրբ ծերի աղոթքներով, իսկ եղբայրը զգաստացավ և փրկվեց:

55. Սուրբ լեռանը հավաքվեցին թվով տասներկու սուրբ, իմաստուն և հոգևոր մենակյացներ, և միմյանց հետ խոսեցին առաքինությունների մասին, որոնք ի սկզբանե կային սրբերի մեջ, և թե իրենցից ով ո՛րն էր դրանցից ստացել ճգնությամբ, և թե ինչպես են անցկացնում իրենց օրը խցում: Նրանցից առաջինը և ավագն ասաց. «Ես, եղբայրնե՛ր, երբվանից սկսեցի հանդարտությամբ նստել խցում, ամբողջովին խաչեցի իմ մարմինը՝ կտրելով ամեն տեսակ արտաքին գործերից և միշտ մտքումս ունեմ Սուրբ Գրքի խոսքերը, որ ասում է. «Քանդենք նրանց կապանքները և թոթափենք նրանց լուծը մեզանից (Սաղմ. Բ 3)*»: Եվ ամուր պարիսպ կանգնեցրի իմ հոգու և մարմնի միջև և մտքումս ասացի. «Ինչպես միմյանց չեն տեսնում պարսպի դրսում և ներսում գտնվողները, նույնպես և դո՛ւ, մի՛տք, բնավ մի՛ տես մարմնի արտաքին գործերը, այլ միայն քե՛զ նայի՛ր և սպասի՛ր քո ելքին ու Աստծո դատաստանին: Իսկ չար խորհուրդներս այսպես եմ տեսնում՝ իբրև օձեր և իժերի ծնունդներ, և երբ զգում եմ դրանց՝ իմ մտքում գալը, բարկությամբ ոչնչացնում եմ դրանց և երբեք չեմ դադարում բարկանալ մարմնիս և մտքերիս վրա, որպեսզի անպատշաճ բաներ չգործեմ»: Երկրորդն ասաց. «Այն ժամանակից ի վեր, ինչ հրաժարվեցի աշխարհից, իմ անձին ասացի. «Այսօր վերստին ծնվեցիր, այսօր սկսեցիր այստեղ բնակվել և պանդխտել. ուստի բնակվի՛ր այստեղ՝ որպես օտարական՝ իբր վաղը գնալու ես այստեղից՝ թողած քո տեղը. այս խորհի՛ր օր ու գիշեր»: Երրորդն ասաց. «Ես առավոտից վեր եմ կենում՝*

մտքով Տիրոջս հետ, երկրպագում եմ նրան և ընկնելով նրա առաջ՝ խոստովանում եմ հանցանքներս, այսպես խոնարհվում և երկրպագում եմ նրա հրեշտակներին և խնդրում նրանցից, որպեսզի աղաչեն Տիրոջը ինձ և Իր բոլոր արարածների համար: Ապա իջնում եմ անդունդը և դիտում եմ այնտեղ եղողների տանջանքները: Հիշում եմ նաև հրեաների տառապանքներն ու նրանց ողբերը՝ երբ բաբելոնյան գերության մեջ էին: Նույնը և ես եմ անում՝ մտքով անցնում եմ դժոխքի բոլոր տանջանքների միջով և իմ բոլոր անդամները տեսնում եմ տանջանքների դատապարտված և այսպես օր ու գիշեր լաց եմ լինում լաց լինողների հետ»: Չորրորդն ասաց. «Ես մտքով այսպես եմ միշտ պատկերացնում. երբ թե նստած եմ Զիթենյաց լեռանը՝ Տիրոջ և Նրա սուրբ առաքյալների հետ, և իմ անձին ասում եմ. «Այսուհետև բնավ մարմնավոր բաների մասին չխորհես, այլ սրանց հետ կմնաս մշտապես և սրանց հետ կաղոթես և սրանց կյանքին նախանձախնդիր կլինես՝ ինչպես Մարիամը, որ նստեց Տիրոջ ոտքերի մոտ և լսեց Տիրոջ խոսքերը, որ ասում էր. «Սո՛ւրբ եղեք, քանզի Ես՝ ձեր Տեր Աստվածը, սուրբ եմ (Ղևտ. ԺԹ 2)*», «Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է* (Ղուկ. Զ 36)*, «Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով՝ խոնարհ, և ձեզ համար պիտի հանգիստ գտնեք* (Մատթ. ԺԱ 29)*». և այսպես եմ վարում իմ կյանքը»: Հինգերորդն ասաց. «Ես մտքով ամեն ժամ տեսնում եմ հրեշտակներին, որոնք ելնում և իջնում են՝ կանչելու և տանելու համար հոգիս, և ես միշտ ասում եմ. «Պատրաստ է սիրտն իմ առ քեզ, Աստվա՛ծ իմ, պատրաստ է սիրտն իմ* (Սաղմ. ԺԶ 8, ՃԷ 2)*»: Վեցերորդն ասաց. «Ես օր ու գիշեր նստած խորհում եմ իմ մտքում, թե այս եմ լսելու Տիրոջից. «Դուք չարչարվեցիք Ինձ համար, և Ես կհանգստացնեմ ձեզ»: Եվ այս. «Ճգնե՛ք մի փոքր, և Ես ձեզ ցույց կտամ Իմ փրկությունը», նաև՝ «Իմ որդիներն եք դուք, որպես հորից՝ պատկառե՛ք Ինձնից», և թե՝ «Իմ եղբայրներն եք դուք, պատվե՛ք Ինձ՝ ձեզ համար բազում բաների համբերելու համար», և թե՝ «Իմ ոչխարներն եք, լսե՛ք ձեր հովվի ձայնը», նաև՝ «Ծառանե՛ր, վախեցե՛ք գանահարվելուց և հետևե՛ք ինձ»: Յոթերորդն ասաց. «Ես այս երեքի վրա եմ մշտապես խորհում և անդադար խրատում եմ իմ անձին՝ ունենալ սրանք, այսինքն՝ հավատ, հույս, սեր, որպեսզի հույսով խնդամ, հավատով հաստատվեմ և սիրով ոչ մեկին չտրտմեցնեմ բնավ կյանքիս բոլոր օրերին»: Ութերորդն ասաց. «Ես մտքով միշտ թռչող դևեր եմ տեսնում, որ փնտրում են, թե ո՞ւմ կլանեն, և որտեղ էլ նրանք շրջում են՝ ես ներքին աչքով տեսնում եմ և աղաչում Քրիստոսին, որպեսզի խափանի նրանց հնարքները, որ Աստծո երկյուղածներից ոչ*

մեկին չկարողանան հաղթել և ոչ մեկին չգայթակղեցնեն»: Իններորդն ասաց. «Ես մտքով միշտ տեսնում եմ իմանալի զորությունները և Փառաց Տիրոջը, որ նրանց մեջ է և առավել փայլում է պայծառությամբ, և երբ ձանձրանում եմ, միտքս առաքում եմ երկինք և տեսնում եմ հրեշտակների աքանչելի գեղեցկությունը, լսում նրանց անլռելի երգերը, որ անդադար մատուցում են Աստծուն, և լսելով նրանց ձայնը՝ ցնծում և քաղցրանում է հոգիս՝ հիշելով Սուրբ Գրքի խոսքերը, որ ասում է. «Երկինքները պատմում են Աստծո փառքը (Սաղմ. ԺԸ 2)*», և «Երկրային ամեն ինչ հող ու մոխիր եմ համարում»: Տասներորդն ասաց. «Ես միշտ տեսնում եմ իմ պահապան հրեշտակին, քանզի միշտ ինձ մոտ է և պահպանում է ինձ, և հիշում եմ Սուրբ Գրքի խոսքը, որ ասում է. «Նախապես տեսնում էի Տիրոջն իմ աջակողմում, որպեսզի չսասանվեմ* (Սաղմ. ԺԵ 8, Գործք Բ 25)*». և նրանից երկյուղելով՝ իմ անձը սուրբ եմ պահում, որովհետև նա տեսնում է իմ ճանապարհը, և տեսնում եմ, որ նա ամեն օր բարձրանում է Տիրոջ մոտ՝ պատմելու իմ գործերը»: Տասնմեկերորդն ասաց. «Ես օր ու գիշեր խորհում եմ, թե ի՞նչ են առաքինությունները, ինչպիսի՞ն են պահքը, սրբությունը, սերը, երկայնամտությունը, և քննում եմ, թե սրանցից ո՛րի մեջ եմ պակաս, և իմ անձին ասում եմ. «Ո՞ւր են քո առաքինությունները. մի՛ ձանձրացիր, մի՛ երկմտիր, ահա դրանք մոտ են քեզ. ո՛ր առաքինությունն ուզում ես՝ կատարի՛ր, և քեզ մեծապես կգովեն Աստծո մոտ և կվկայեն, թե քեզ մոտ հանգիստ են գտնում»: Տասներկուերորդն ասաց. «Դո՛ւք, ո՛վ հայրեր և եղբայրներ, երկնային թևեր ունեք, երկնային կենցաղավարություն եք ստացել, և ինչ էլ որ ասեք՝ զարմանալի չէ, քանզի տեսնում եմ ձեզ՝ երկրային գործերով երկինք բարձրացած, որովհետև վերին զորությամբ բարձրացած եք երկրից և օտարացած՝ մարմնավոր գործերից, և ես չգիտեմ՝ ի՛նչ ասեմ ձեզ և կամ ի՛նչ անվանեմ ձեզ: Իսկ ես ի՞նչ անեմ՝ եղկելիս, որ պատմելու արժանի ոչ մի խորհուրդ չունեմ և նույնիսկ այս կյանքին արժանի չեմ: Ոչ մի բարի բան չեմ տեսնում իմ մեջ՝ բացի մեղքերի բազմությունից, և ուր նայում եմ մտքով՝ դրանք եմ տեսնում՝ ծանր բեռների նման դրված իմ առջև: Դրա համար էլ կարծում եմ՝ դժոխքի անդունդներին է արժանի իմ հոգին, և ասում եմ՝ մի փոքր ժամանակ հետո այնտեղին եմ դատապարտվելու: Միշտ տեսնում եմ այնտեղ լացուկոծ, արտասուք անդադար ու լաց անմխիթար, տեսնում եմ ատամների կրճտում և անտանելի սարսուռ. դրա համար էլ միշտ քուրձով ու մոխիրով, զղջումով ու խոնարհությամբ ընկնում եմ Աստծո առաջ, որ գուցե ողորմելով՝ չուղարկի ինձ այնտեղ: Քանզի տեսնում եմ այնտեղ սաստիկ եռացող հրեղեն մի ծով,*

որի բոցերի ալիքները մինչ երկինք են հասնում, տեսնում եմ նաև այդ հուրն ընկած մարդկանց անթիվ բազմություն, իսկ նրանց վերևում՝ անողորմ հրեղեն հրեշտակներ, որոնք վառվում են միշտ և չեն մեռնում, որոնցից վայրերի ու կոծերի միանվագ ձայներ են ելնում, որոնք ցախի պես այրվում են ու չեն բոցակիզվում: Եվ տեսնում եմ, որ Աստծո քաղցրությունն ու ողորմածությունը այնժամ ետ է դարձած և պակասած է նրանցից: Միշտ մտառում եմ այս ամենն ու ողբում եմ ողջ մարդկային ցեղը. և զարմանում եմ, թե ինչպես են համարձակվում երկինք նայել կամ մարմնավոր ինչ-որ բան ասել, որովհետև այսպիսի անցքեր և ահ ու դող է պատրաստված նրանց համար՝ այս աշխարհից ելնելուց հետո: Խորհում եմ այս ամենը գիշեր ու ցերեկ և անարժան եմ համարում իմ անձը երկնքին ու երկրին, և որքան հնարավոր է՝ կատարում եմ Սուրբ Գրքի խոսքերը, որ ասում է. «Իմ արտասուքներն ինձ կերակուր եղան գիշեր ու ցերեկ (Սաղմ. ԽԱ 4)*»:*

Սրա՛նք են այն իմաստունների հոգևոր առաքինությունները, խորհուրդները, և ա՛յս է նրանց կենցաղավարության խոսքը: Իսկ մենք, արժանի լինելով նրանց հիշատակին, կյանք ստանանք, որպեսզի հաճելի լինենք Տեր Հիսուս Քրիստոսին:

ՎԵՐՋԱՀԱՏՈՐԻ

ՅԱՆԿԵՐ*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբրահամ *հայր* – 40, 85, 118, 131, 143, 204, 239, 242, 267, 309, 323, 337, 346, 419, 440, 562
Աբրահամ *նահապետ* – 15, 30, 40, 107, 117, 247, 271, 346, 385, 409, 430, 568
Աբրահամ *հայրապետ* – 199
Ագաթոն – 309
Ադամ – 18, 103, 108, 109, 133, 138, 161, 369, 508, 548
Ադելփիոս – 282
Աթանաս Ալեքսանդրացի – 7, 9, 28, 120, 369, 437, 533, 574, 575
Աթանասիա – 269, 270, 271, 272, 273, 274
Աթանասիոս – 519
Աթերիս – 141, 451
Ալեքսանդրոս – 86, 240, 314, 417, 418, 455, 488, 516
Ալոն, Ալոնիս – 439, 469
Ակակիոս – 432
Աղաթոնիոս – 134
Աղոն – 310
Ամաղեգե – 185
Ամոն, Ամոնաս – 10, 63, 92, 105, 116, 169, 250, 296, 297, 306, 310, 322, 344, 356, 374, 375, 380, 392, 397, 437, 449, 456, 485, 505, 508, 530, 539, 540, 574, 575
Ամոն Արաբացի – 30
Ամոն Նիտրացի – 30, 496
Ամոն Ռայիթացի – 279
Ամոն Քերենիտացի – 30
Ամովս – 319, 569
Այիոս – 91, 317
Անաստասիա – 248
Անբակեռնե – 432, 433
Անդրոնիկե – 269, 270, 271, 272, 273, 274
Անթուս – 523
Անուբ – 137, 314, 316, 334, 360, 361, 446, 456, 469
Անտոնիոս – 15, 28, 30, 84, 88, 89, 99, 100, 108, 127, 151, 225, 249, 251, 258, 275, 283, 289, 296, 305, 317, 318, 343, 373, 374, 377, 434, 454, 470, 484, 495, 496, 521, 540, 541, 575
Ապոլոն, Ապողոնիոս – 104, 174, 449
Ապողինարիոս – 401-403
Ատրե – 440
Արեթաս – 101
Արես – 28
Արկադիա – 441
Արմատես – 446
Արսեն – 450, 455, 491, 505, 507, 535
Ափովր – 419
Ափուա – 444
Ափրոդիտե – 28
Աքեղեա – 377
Աքիլա, Աքիլաս– 84, 127, 134, 306, 344
Աքիլա Թեբայիդացի – 203
Աքիտոբել – 161

Բառնաբաս – 521
Բելիար – 176, 301, 529, 537
Բենիամին – 137, 252
Բեսարիոն – 19, 29, 141, 240, 251, 335, 337, 338, 471, 509, 549
Բիկտոր – 252
Բիտիմ – 84, 306
Բոմբոս – 574

Գայիոս – 322
Գելասիոս – 231, 232, 345, 457
Գենադի – 541
Գերասիմ – 240, 521
Գերոնդիոս – 571
Գրիգոր – 17, 22
Գրիգոր Աստվածաբան – 240, 370

Դանիել *մարգարե* – 15, 36, 72
Դանիել *հայր* – 26, 43, 111, 132, 137, 143, 188, 191, 203, 223, 226, 246, 247, 252, 272–274, 276–277, 285, 295, 307, 308, 314, 345, 375, 380, 394, 404, 441, 443, 451, 454–455, 505, 508, 522, 542
Դանիել Սկյութացի – 517
Դանիել Փարանացի – 535
Դավիթ – 15, 16, 30, 42, 44, 70, 72, 135, 170, 181, 353, 394, 479, 516
Դավիթ *ավազակ* – 515
Դեոսկորոս – 133
Դիմակրատոս – 29
Դիոս – 427
Դուլաս – 87, 89, 252, 509

Եդեմոն – 170
Ելադիոս – 130
Ելեգեոս – 191
Ելեթերի – 541
Ելոս – 191
Եղիա Բանիկտացի – 158
Եղիա *մարգարե* – 15, 325, 353, 531
Եղիա *մենակյաց*, Եղիաս – 39, 69, 99, 100, 117, 178, 240, 291, 333, 370, 507, 518,
Եղիութ – 289
Եղիսե – 546
Եղպիդորոս – 111
Եպիմաքոս – 444
Եպիփան Կիպրացի – 130, 131, 394, 409, 443
Եպիփան *հայր* – 30, 323, 346, 415, 416, 450
Եպրեպիոս – 30, 31
Եպրեսիոս – 232
Եսայի *հայր* – 31–32, 91, 107, 115, 129, 134, 138, 160, 255, 256, 286, 291, 315, 318, 348, 370, 380, 394, 427, 458–459, 466, 496
Եսայի *մարգարե* – 141, 330
Եսթերինոս – 284, 298
Եվագրիոս – 61, 378, 403, 404, 437, 450
Եվգենիոս – 31
Եվթիմիոս – 571
Եվլոժիոս – 405
Եվսեբիոս – 514, 562
Եվսեբիոս Հռայիթացի – 541
Եվսեբիոս *պապ* – 542

* *Ցանկերը կազմեցին Ղևոնդ ավ. քահանա Մայիլյանը և Նանա Գրիգորյանը:*

Եվսեբիոս *սարկավագ* – 561
Եվստաթեոս – 513
Եվստիքիոս – 264
Եվստոգրիոս – 518
Եվտիքես – 525, 544
Երենիոս – 23
Երիմ – 276
Երոնտիոս Վիմացի – 151
Եփրեմ – 157, 158, 511, 541, 542

Զաքարիա – 31, 315, 394, 434, 439, 449, 458, 463, 464, 516, 544
Զաքարե Կրտսեր – 246
Զենոն – 18, 138, 308, 324, 346, 347, 348, 483, 542, 550
Զենոն Ասորի – 449
Զոյիլոս – 86, 134, 234, 455
Զոսիմոս – 58, 60
Զոսիմոս Ցիլիկիացի – 514

Թալելեոս – 322
Թեոդոս – 132, 140, 307, 421, 512, 519, 521, 524
Թեոդոս Մեծ *կայսր* – 441, 444-445
Թեոդորա – 460
Թեոդորե *կամ* Թեոդորոս– 18, 82, 90, 102, 108, 111, 138, 257, 283, 348, 381, 392, 410, 434, 446, 460, 484, 485, 492, 513, 521
Թեոդորոս Սկյութացի – 381
Թեոդորոս Փերմացի – 17, 39, 89, 225, 237, 279, 377, 409, 410, 439, 445
Թեոպեմտոս – 528
Թեոփա, Թեոփես– 134, 261, 262, 379, 460, 471, 516
Թեոփա Ելեմելացի – 544
Թեովրոդիոս – 333
Թեոփանոս – 525
Թեոփիլոս – 39, 83, 89, 117, 118, 460
Թեոփիլոս Ալեքսանդրիացի – 403, 437

Իգիլիոս – 115
Իլակրե – 256
Իլարիոն – 491
Իլիգիոս – 136, 527
Իով *տես* Հոբ
Իսահակ *հայր* – 17, 44, 104, 118, 139, 170, 227, 291, 307, 310, 333, 384, 439
Իսահակ *աշակերտ Ապողոնի* – 383
Իսահակ *աշակերտ Մոտիի* – 482
Իսահակ Թեբայեցի – 442
Իսահակ *նահապետ* – 161
Իսիդորե *կամ* Իսիդորոս – 18, 138, 170, 176, 179, 230, 232, 249, 257, 263, 336, 353, 383, 394, 434, 464, 490
Լեոն – 403, 513, 514
Լիա – 568
Լուկիա – 257
Լուկիոս – 318

Կայեն – 161, 352
Կապոնոս – 441
Կասիանոս – 40, 139, 173, 232
Կարիոն – 462, 463
Կյուրակոս – 187, 188, 189, 190, 191
Կյուրոն – 170, 439
Կյուրոս – 74, 175, 559
Կոզմաս – 88
Կոնոմոս – 522
Կոնոն – 140, 519
Կոպրե – 451, 595
Կոպրիոս – 258
Կոստանդիանոս Մեծ – 8, 182, 343, 365
Կոստանդին *աբբա* – 520
Կրոնոս – 41, 42, 462

Հաթր – 19
Հակոբ, Հակոբոս – 104, 206, 228, 229, 353, 392, 467, 544
Հակոբ *նահապետ* – 141, 161, 264, 441, 568, 577
Հակոբ *սարկավագ* – 195, 199,
Հակոբոս *առաքյալ* – 35
Հանպիսով – 294
Հելիարոն – 130, 131
Հեսու – 382, 451, 507
Հերակլես – 416
Հերմես – 29
Հեփթայե – 568
Հիերաքսոս – 41
Հիպերիքսոս – 121, 145
Հիսուս, *նաև* Քրիստոս, Գալիլեացի – 23, 29, 34, 42, 45, 61, 67, 68, 71, 73, 76, 80, 110, 118, 143, 145, 150, 157, 172, 187, 190, 198, 200, 201, 203, 204, 220, 240, 241, 242, 260, 288, 302, 330, 341, 361, 369, 370, 408, 426, 469, 511, 520, 523, 535, 563, 565, 568, 577, 593
Հոբ – 249, 250, 335, 536
Հոբ *Երանելի* – 15, 18, 56, 57, 62, 161, 324, 353, 468
Հովաբ – 44
Հովհան Կասիանոս – 9
Հովհան Կրտսեր *Ամոնի աշակերտ* – 250
Հովհան *հայրապետ* – 181, 182, 184, 407, 416, 558, 560
Հովհան Ղոկիոն *քաղաքից* – 571
Հովհան *Ողորմած* – 415, 416
Հովհան Ոսկեբերան – 22, 27, 280
Հովհան *վանահայր* – 40
Հովհաննես – 90-92, 107, 139, 165, 185, 204, 269, 271, 295, 306, 309, 320, 348, 376, 382-383, 408, 445, 456, 461, 467, 509, 512, 513, 518, 527, 531, 558
Հովհաննես *Առաքյալ* – 35, 97, 353
Հովհաննես *եպիսկոպոս* – 150
Հովհաննես Թեբայեցի – 462
Հովհաննես Կարճահասակ – 23, 90, 132, 138, 173, 204, 250, 257–258, 282, 295, 306, 309, 356, 374–377, 381-382, 452, 461, 484, 496-497, 507, 539
Հովհաննես Կիլիկեցի – 40
Հովհաննես Կոզիկեցի – 40
Հովհաննես Մկրտիչ – 68, 319, 518-519
Հոհաննես *Մոյիի աշակերտ* – 127
Հովհաննես Պարսիկ – 228, 353
Հովհաննես *Պողոսի աշակերտ* – 422-423
Հովհաննես Սաբայիտացի – 431
Հովսեփ – 18, 41, 82, 104, 139, 280-281, 290, 315, 319, 324-325, 349, 352,

370, 395, 398, 454, 469, 495, 537-538
Հովսեփ Արեմաթացի – 361
Հովսեփ Թեբայեցի – 420
Հովսեփ *նահապետ* – 176, 264, 461, 468
Հուդա – 36, 161, 200, 373
Հուլիանոս Անօրեն, Ամբարիշտ – 145, 393, 540
Հուլիանոս *վկա* – 232, 269, 270
Հուստիանոս – 247, 405
Հռաքել – 568
Հռովմինա – 199, 200, 201

Ղազարոս – 263
Ղևոնդիոս – 519
Ղևոնդիոս *Երանելի* – 569
Ղոգինոս – 563
Ղոնգիանոս – 318
Ղոնգինոս – 103, 115, 180, 294, 438
Ղովտ *հայր* – 169, 323, 386, 395, 491
Ղովտ *նահապետ* – 139, 359, 409
Ղունկիանոս – 140, 371, 393, 485, 542, 543, 549, 550

Մաթուսաղա – 63
Մակարիոս – 17, 31, 32, 39, 42, 85, 86, 91, 119, 133, 177, 225, 229, 232, 258, 297, 316, 332, 339, 340, 393, 453, 465, 485, 521, 533, 543, 550, 555, 563, 572, 575
Մակարիոս Ալեքսանդրացի – 30
Մակարիոս Եգիպտացի – 115, 136
Մակարիոս Երանելի – 24–25, 74, 77, 104, 176
Մակարիոս Մեծ – 353-354, 436
Մակարիոս Քաղաքացի – 140, 353–354
Մանգիս – 177
Մատոյե – 43, 203, 354, 466, 467
Մարգարիտ – 200
Մարթա – 315
Մարիամ – 104, 269, 315, 420, 437, 511, 525, 540, 556, 591
Մարկել – 261, 262, 512
Մարկիանոս – 512
Մարկոս – 20, 43, 225, 343, 418, 422, 522, 533
Մարկոս *առաքյալ* – 522
Մարկոս Եգիպտացի – 292
Մարկոս *Իպպացի, Սալոն (Հիմար)* – 223, 224
Մարուզան – 424
Մաքսիմիանոս – 249, 571
Մեգեթա – 427
Մեգեթիոս, Մեգեթոն– 232, 354
Մեթուրիոս – 523
Մելիսի – 259, 260
Մելիտինե – 533
Մելքիսեդեկ – 30, 451, 508
Մեկրիստոնե – 500
Մերույժենի – 264
Մինա – 150, 271, 272, 273, 325
Մինաս *հայր* – 140, 570
Միովս – 318, 563
Մոյի – 127, 239, 376
Մովսես *հայր* – 8, 26, 62, 69, 70, 76, 85, 88, 91, 103, 111, 119, 137, 154, 170, 173, 176, 177, 283, 284, 291, 297, 309, 353, 359, 384, 387, 392, 394, 409, 427, 434, 437, 458, 465, 466, 483, 526, 543, 562, 574, 579
Մովսես *ավազակապետ* – 87
Մովսես Թեբայիտացի – 30
Մովսես *մարգարե* – 18, 42, 325, 335, 371, 382
Մովսես Սկյութացի – 227
Մովտոյիս – 84
Մոտա, Մոտի– 279, 482
Մորիկ – 564

Նաբուգոդոնոսոր – 24, 217
Նաբուզարդան – 130
Նատիրա – 331
Նեղոս – 91, 152, 395, 468, 506, 509
Նեսթերինոս – 15
Նեստոր – 525, 544
Նիկոն – 153
Նիտերո – 399
Նոյ – 15, 87, 351
Նոնոս – 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202

Շարուհի – 245

Ոնորիս – 441
Ոնոփրիոս – 282, 531, 532
Ովր – 19, 92, 108, 295, 340, 440, 451, 563, 581
Որսիսիոս – 378, 468
Որսիսիոս *Իթիղոնեցի* – 30

Պայեսիոս, Պայիսիոս, Պայեսո, Պայեսիա – 17, 19, 139, 141, 205, 360, 485, 507
Պալատիոն, Պալատիոս– 141, 44, 45, 360
Պախոմիոս, Պախումեոս – 8, 46, 59, 231
Պամբո – 8, 20, 28, 46, 108, 120, 132, 141, 227, 230, 298, 359, 360, 385, 386, 410, 417, 460, 462, 493, 575, 579, 580
Պատրիկիա – 247
Պարասկևա – 187, 188, 189, 190, 191
Պափնոտիոս – 19, 92, 104, 170, 179, 205, 206, 297, 300, 365, 469, 471, 489, 490, 530, 531, 532, 533
Պափնոտիոս Կեփալա – 43
Պափնոտիոս Թեբայիդիացի՝ *Նիկիայի ժողովի մասնակից* – 365
Պաքմեոս – 177, 526, 533, 571, 572
Պաքմոն – 177
Պելագեա – 200, 201, 202
Պետրոս –134, 323, 381, 386, 437, 444, 520, 521, 522, 527
Պետրոս *առաքյալ* – 68, 259, 353, 356, 545, 569
Պետրոս արքեպիսկոպոս – 519
Պետրոս հայրապետ Ալեքսանդրիայի – 545
Պետրոս Պիոնացի – 130
Պերգիոս – 520
Պևորե – 465
Պիլիգիոս – 202
Պիմեն – 17, 18, 19, 22, 25, 26, 43, 44, 49, 72, 77, 78, 104, 105, 111, 116, 117, 120, 129, 130, 131, 140, 152, 165, 169, 170, 173, 175, 205, 215, 221, 249, 250, 257, 258, 263, 264, 283, 284, 290, 291, 293, 297, 298, 299, 305, 306, 309, 310, 312, 314, 315, 316, 318, 319, 324, 331,

333, 334, 354, 355, 356, 357, 358, 360, 371, 372, 374, 377, 380, 384, 385, 395, 409, 410, 412, 418, 427, 434, 440, 446, 455, 456, 457, 462, 468, 469, 470, 483, 485, 489, 490, 496, 497, 512, 536, 538, 552, 563, 579, 580
Պիոր – 141
Պղզո – 290
Պյուռիոս – 192
Պոլիքրոնիոս – 154, 520
Պողոս *հայր* – 84, 141, 276, 295, 340, 422, 437, 485, 508, 516, 523, 565, 568
Պողոս *առաքյալ* – 36, 38, 148, 264, 265, 301, 328, 353, 476, 547, 569
Պողոս Գաղատացի – 263
Պողոս Հելենացի – 515
Պողոս *Ողի աշակերտ* – 340, 343
Պողոս Պարզամիտ – 108, 343, 526
Պողոս *Սկյութիայի մենակյաց* – 177
Պողոս Փոտեցի – 30
Պոտամինեա – 249
Պորփյուրա – 185
Պրոկոպիա – 567
Պրուտոս – 537

Ռոմանոս – 579
Ռոփոս – 419

Սաբա, Սաբբա – 39, 519, 521
Սադայել – 28
Սաղամա – 541
Սառա – 245
Սառա *Աբրահամի կինը* – 271
Սառռա *հայր* – 144, 206
Սավուղ – 72
Սարիով – 307
Սարմատ, Սարմատա – 93, 580
Սեմ – 371
Սերապիոն – 7, 10, 134
Սերգի, Սերգիոս– 75, 76, 192, 195, 223
Սերինոս, Սերենիոս – 128, 310, 317, 473
Սևերիոս – 510, 511, 544
Սիղվիանոս, Սյուղիանոս *կամ* Սիլովանե – 18, 20, 99, 107, 135, 233, 285, 286, 308, 314, 331, 361, 374, 387, 422, 483, 484, 498, 544, 579, 580
Սիմոն, Սիմեոն – 239, 275, 285, 345, 385, 426, 537, 583, 584
Սինեսիոս – 403, 404
Սինկլիտիկե – 144, 473
Սիսո – 46, 85, 92, 93, 122, 129, 131, 135, 143, 144, 204, 239, 265, 266, 279, 282, 314, 317, 320, 360, 371, 386, 395, 413, 417, 427, 440, 445, 471, 472, 497, 533, 538, 540, 550, 579, 580
Սողոմոն – 10, 148, 322, 353, 414
Սոպատրոս – 428
Սորոս – 580
Սոփորոն, Սոփրոնիոս – 349, 350, 515, 558, 565, 570, 571
Սպիրիդոն – 486, 552
Սրապիոն – 120, 162, 163, 233, 387, 410
Սքիրիոն – 527

Վակատոս – 344, 345
Վիտալիոս – 181, 182, 183, 184
Վստիոն – 205

Տայիս – 239
Տիթո – 93, 144, 145, 285, 359, 396, 473
Տիթոնիոս – 132
Տիմոթեոս – 84, 165, 297, 298, 443, 485, 517, 530, 531

Փեսենթասիոս – 580
Փիլիկիոս – 108, 316
Փիլիրոմոս – 580
Փիմամնոն – 515, 516
Փոկաս – 206, 544
Փորտաս – 446
Փսոյիոս – 580

Քաղեբ – 382
Քարիտոն – 541
Քերեմոն – 239
Քսանթոս – 468
Քրիստափոր – 524
Քրիստոսատուր – 556

Օլիմպոս – 240
Օտավ – 537
Օքսիրինտոս – 412

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աթենք – 160, 481
Ալեքսանդրիա – 6, 7, 20, 21, 28, 32, 57, 97, 102, 120, 128, 129, 147, 150, 180, 181, 182, 183, 184, 187, 188, 192, 193, 217, 223, 224, 247, 248, 249, 271, 272, 284, 308, 333, 369, 401, 403, 410, 411, 415, 416, 420, 437, 441, 443, 483, 496, 508, 517, 521, 524, 530, 540, 541, 542, 545, 556, 558, 565, 572, 574, 575
Անհուշ – 560
Անտեոն – 180
Ապամիա – 584
Առնիա – 124
Ասորիք – 406, 422, 491
Արաբիա – 228
Արասսո – 512
Արսենոյիտ – 129
Բաբելոն – 61, 441, 514
Բյուրիտ – 345
Գազա – 184, 559
Գեթսեմանի – 40
Գելասիմե – 77
Դադիուկիա – 479
Դիոդկիոս – 494
Եգիպտոս – 6, 7, 8, 94, 105, 123, 134, 146, 151, 154, 162, 165, 176, 177, 206, 209, 212, 228, 229, 238, 264, 272, 282, 284, 291, 306, 307, 309, 316, 327, 335, 340, 355, 374, 394, 397, 409, 422, 443, 445, 447, 448, 463, 464, 482, 485, 493, 494, 496, 501, 503, 506, 507, 508, 514, 532, 533, 543, 555, 556, 562
Եդեսիա – 157
Եթովպիա – 350

Ելիոն – 98
Ելյուզո – 252
Եղբեռն – 563
Ենատաս – 549
Եվթիմիայի *վանք* – 568
Եվրակիա – 249
Երիմուպոլիս – 276
Երիքով – 124, 154, 202, 479, 520
Երմո – 515
Երուսաղեմ – 47, 68, 114, 150, 160, 201, 202, 226, 264, 271, 272, 319, 353, 408, 414, 423, 442, 443, 517, 518, 527, 558, 560, 569
Եփրատ – 164

Թեբայիդա – 92, 203, 272, 276, 308, 365, 413, 463, 488, 512, 515
Թեբայիս – 339
Թեսաղոնիկե – 166, 322

Իլայա – 350
Իսրայել – 41, 44, 94, 109, 122, 141, 361
Իրակլիա – 349
Իփիմե – 570

Լիբանան – 261
Լիբանիսի – 322
Լիբիա – 162, 483

Կանոպոն – 102
Կանոպոս – 83
Կասիդորա – 526
Կեռին – 403, 404
Կիպրոս – 130, 415, 560
Կյուրոս – 74, 175, 559
Կոլիզմա – 92, 93
Կոստանդնուպոլիս – 247, 280, 405, 411 444, 513, 541, 564
Կուտելա – 523

Հայոց աշխարհ – 577
Հարոնան – 523
Հելիոպոլիս – 200
Հերակլա – 482
Հնդկաստան – 177
Հորդանան – 24, 75, 150, 158, 202, 240, 436, 515, 518, 520, 521, 522, 525
Հռայիթ – 444, 514, 522, 562
Հռոմ – 83, 84, 437, 443, 447, 448, 517
(սուրբ) Հուլիանոսի վանք – 195, 198

Ձիթենյաց լեռ – 40, 114, 202, 560, 591

Ղոկիոն – 571

Մակդաղա – 467
Մասիս – 577
Մեռյալ ծով – 525, 570, 571
Մետեմիր – 112

Նավասե – 576
Նեղոս – 6, 7, 8, 10, 152, 506, 509
Նիկոպոլիս – 515
Նիսոկոմիո – 520
Նիտրիա – 6, 19, 77, 113, 123, 460, 575
Նիտրիո – 224

Ոքսիրինքոս – 532

Պաղեստին – 138, 285, 344, 345, 394, 507
Պանեփոս – 280, 398
Պանեփուտ – 324
Պանփեոս – 483
Պարսկաստան – 259, 393, 560
Պեդիադա, Պեդիատո – 79, 75
Պեմպոյի *վանք* – 224
Պենթուկլա – 133, 154, 519, 522
Պենտապոլիս – 403
Պերգամոս – 520, 521
Պիլուզ – 280
Պիրզո – 150

Ռայիթա – 40, 92, 106, 279, 467, 478
Ռասան – 513

Սափսափաս – 519
Սերիդոն – 181, 184
Սինա – 42, 111, 114, 150, 153, 314, 331, 371, 392, 422, 427, 462, 514, 518, 524, 569
Սիոն – 47, 378
Սկիտե – 57, 58, 91, 92, 119, 137, 138, 141, 146, 204, 205, 206, 209, 217, 222, 223, 224, 226, 232, 234, 256, 263, 266, 271, 272, 273, 274, 283, 297, 324, 349, 365, 371, 382, 389, 409, 429, 456, 460, 463, 464, 465, 479, 485, 542, 543, 544, 545, 546, 549, 550, 551, 553, 554, 581, 584
Սկյութապոլիս – 111
Սկյութիա – 18, 84, 85, 87, 100, 104, 128, 129, 131, 133, 134, 135, 136, 154, 170, 171, 176, 177, 188, 191, 225, 226, 239, 246, 247, 250, 280, 282, 294, 307, 308, 309, 323, 326, 339, 340, 345, 353, 374, 375, 376, 377, 419, 420, 422, 434, 435, 436, 438, 439, 441, 442, 445, 447, 451, 461, 483, 490, 494, 506, 507, 517, 518, 522, 527, 563, 572, 575
Սոդոմ – 346, 359
Սուկավ – 578
Սուրբ Ոսկի – 578

Վերին Թեբայիդա – 276, 365

Տաբենոս – 571
Տամիաթիա – 234
Տարա – 166, 525
Տետրապոլ – 421
Տերենութ – 239, 295, 338, 415, 456, 506, 539
Տյուրոս – 184, 185, 411, 556
Տրիմիթոն – 486
Տրոյիս – 443, 444

Ուռհա – 542

Փառան – 331
Փարոն – 524
Փերմե, Փերմիա– 18, 409, 441
Փիլագրիոս – 226
Փյունիկիա – 322
Փտեռիոն – 512

Քաղկաս – 103
Քարկոծում – 566

Օքսիրինքոս – 245

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

15 Գլուխ Ա – Կատարյալ առաքինության մասին
81 Գլուխ Բ – Հանդարտության մասին
99 Գլուխ Գ – Մտքի արթնության կամ զղջման և արտասուքների մասին
127 Գլուխ Դ – Ժուժկալության մասին
151 Գլուխ Ե – Օգտակար խրատներ Պոռնկությունից զգուշանալու մասին
225 Գլուխ Զ – Անընչության մասին
237 Գլուխ Է – Արիության և համբերության մասին
275 Գլուխ Ը – Ոչինչ ի ցույց մարդկանց չանելու մասին
289 Գլուխ Թ – Դատելու մասին
305 Գլուխ Ժ – Աստվածային և ուղիղ դատաստանի մասին
373 Գլուխ ԺԱ – Արթուն և զգաստ լինելու մասին
392 Գլուխ ԺԲ – Աղոթքների մասին
397 Գլուխ ԺԳ – Օտարասեր և ողորմած լինելու մասին
417 Գլուխ ԺԴ – Հնազանդության մասին
434 Գլուխ ԺԵ – Խոնարհության մասին
481 Գլուխ ԺԶ – Անհիշաչարության մասին
489 Գլուխ ԺԷ – Աստծուն և ընկերոջը սիրելու մասին
505 Գլուխ ԺԸ – Հոգետես և սքանչելագործ հայրերի մասին
555 Գլուխ ԺԹ – Հայրերի կենցաղավարության մասին

594 Անձնանունների ցանկ
597 Տեղանունների ցանկ

ՎԱՐՔԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ՀԱՐԱՆՑ

(ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ)

Թարգմանիչներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ (Նանա) Գրիգորյան, Վաղարշակ Թանգամյան
Խմբագիրներ՝ Շահե Ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ (Նանա) Գրիգորյան
Լեզվաոճական խմբագիր և սրբագրիչ՝ Արմինե Սահակյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2016

Հրատարակչական բաժնի տնօրեն՝	Շահե Ծ. վրդ. Անանյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Գևորգ եպս. Սարոյան, Գարեգին վրդ. Համբարձումյան, Զաքարիա վրդ. Բաղումյան, Ա. Մադոյան, Գ. Տեր-Վարդանյան
Ցանկերը կազմեցին՝	Ղևոնդ ավ. քահանա Մայիլյան, Նանա Գրիգորյան
Էջադրումը՝	Ղևոնդ ավ. քին Մայիլյանի

Թուղթ՝ օֆսեթ 80 գր., չափսը՝ 70x100 1/16,
ծավալը՝ 600 էջ, տպաքանակը՝ 1000:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ